LGn
2228

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

1999



ՔԱՌԱՍՆՈՐԴԱԿԱՆՔ

ԿԱՄ

ՀԱՏԸՆՏԻՐ ՔԱՐՈԶՔ

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

ՔԱՌԱՍՆՈՐԴԱԿԱՆՔ

ԿԱՄ

ՀԱՏԸՆՏԻՐ ՔԱՐՈԶՔ

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՐ ՅՕՐԻՆԵԱԼՔ

Ի Հ. ԵՂԻԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԹՈՄԱՅԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ



848

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՎԵՆԵՏԻԿ Ի ՎԱՆՍ Ս. ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1852 ԹՎԻՆ

digitised by A.R.A.R.@

ՅԻՇԱՏԱԿ

ՄԱԳԱՔԵԱՆ

ՏՈՀՄԻՆ

4 2228-ա
ՀՖ 2232
digitised by A.R.A.R.@

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Զոր 'ի բազում ժամանակաց բազում անգամ խնդրեցին մերազնեայք, զկրս ինն լիակատար քարոզից, ահաւասիկ ըստ յաջողել ժամանակիս ընծայեմք նոցա 'ի լրումն կարևորագունին 'ի պարտս պաշտաման Աւետիս, 'ի մեծաշահ փարթամութիւն հոգւոց հաւատացելոց, և 'ի զօրավիգն՝ փոքու երկասիրութեամբս՝ վարդապետութեան բեմբասաց քարոզչաց ազգիս, որ միանգամ ատուածայնումն վառեսցին նախանձու, զոգի քրիստոնէութեան և զիմաստութիւն զաւետարանին արծարծել 'ի հովացեալ ժամանակիս։

Հովացեալ յորս ըստ հոգւոյն էն բարեմանութիւնք, վառեալ գոլով յայլն ամենայն՝ 'ի կենցաղոգուստս և 'ի կարևորս քաղաքի և ընկերութեան։ Վանդի և դպրութիւնք լաւ էն և գեղեցիկք և պիտանիք՝ դիմակ դիմակ գիտութեանց, արուեստից, բանասիրութեանց, լեզուագիտութեանց, յորս բորբոքեալ է դարս մեր յընդհանուրս, յորս և գամ քան զգամ՝ մեծապէս մերով խնդութեամբ՝ բարգաւաճել և մերն նկրտի ազգ։ Լաւ

digitised by A.R.A.R.@

են, ասեմ, այդոքիկ և պատուականք, սակայն եթէ նո-
քոքք հանդերձ պաշտօն առաջին՝ ըստ իրաւանց անդ-
ամանկութեանն՝ հարցի տիրական մասին, այն է՝ փոյթ
բարգաւաճութեան հոգւոյն։ Ինանզի որպէս վեհա-
գոյնն այն և պարագլուխն քարոզչաց՝ աստուածայինն
Պօղոսեբեան միշտ ազդողաբանէր առ ժողովուրդն, "Ի-
մեանոյն պատուականքն յաշխարհի առ հոգեկանոքն է-
բազքեն, ասէ, և ստուերք։ Այլ պէտք են քրիստոնէին՝
թէպէտ և ընդ մարմին կապեալ իցէ, հոգի լինել բոլորո-
վին, և յաւիտենականին՝ առաւել քան զամենայն՝ պատ-
կառ կալ. զի չեն 'ի խաղոյ իրքս մեր ,,։ Այլ թէ ոչ՝
ըստ տէրունական պատգամին, "Պէտք և զաշխար-
հայինսն զամենայն շահեսցի ոք, եթէ զանձն իւր կորուս-
ցէ, զինչ օգտիցի ,,. մանաւանդ եթէ քանիցն տուժեսցի։

Այսն որոյ և մեք ընուլ զայս իմաստ աստուածային
ըղձի մերազնեայց պարտ համարեցաք։ Սակայն ու-
նիմք և մեք 'ի մասին յայսմիկ զընդդիմադրացն բանս։
Այթէ զհամառօտն տեսանեն նոքա հիւսուած քարոզի,
երկայնագունից փափաքեն բանից. ապա եթէ երկայ-
նիցն հանդիպեսցին, նոքա զկարճն յարգեն և գովեն։
Իսկ ապա մեք զմիջինն այսոցիկ տեսութեանց ընտ-
րեալ, ընծայեսցուք քարոզ՝ ոչինչ երկայնաձիգս քան
զպահանջեալ նիւթ բանին, զի ձանձրալի է. դարձեալ
և ոչ զեղչեալս՝ անտես զբոլորութեամբ նիւթոյն ապա-
րեալ, զի և այն անգոնելի է։ Այլ այս կանոն՝ իբրու
արդարադատ ինձ թուի և ողջունիս համբուրելի մերազ-
նեայց. որոց միշտ փափաքելի եղև մատեան ունել մի-
անգամ՝ զլիակատար քարոզից յամենայն իսկ 'ի նիւթս
բարոյականին. իսկ յետ այնորիկ ապա 'ի կամն ապա-
տութեան թողեալ լիցի բեմբասաց քարոզչին, զիւր
քարոզն ըստ հանգամանաց ժամանակին և տեղւոյն և
անձանցն պատշաճել. առնուլ որչափ և կամեսցին 'ի քա-
րոզից ասել, զեղչել և կամ յաւելուլ որչափ ինչ 'ի շնոր-
հաց հոգւոյն ազդեսցի նոցա 'ի խօսել։

digitised by A.R.A.R.@

Աստ թէպէտ և նիւթ քարոզին բանն Աստուծոյ՝ մի է, սակայն և տարաղ քարոզութեան զանազանութիւն է ըստ ազգաց ազգաց քրիստոնէիցն ախտաժակաց. ուստի և մերն՝ ըստ մերոյն յերիւրեցաւ։ Այլ սակայն աստուածայինն ախտաժակ աւետարանական ոգւոյն մի է, և մի պարտի լինել յամենայն քարոզիչս ամենայն ազգաց քրիստոնէից։ Քարոզիչ՝ որ քան զբանն Աստուծոյ՝ զանձն իւր քարոզեսցէ, որպէս աստուածայինն զգուշացոյց Պաւղոս, և որ նախ անձին քարոզիչ լեալ ոչ իցէ, և զՀոգին Քրիստոսի ոչ ունիցի, և որ անարատ քաղաքավարութեամբն զօծութիւն Հոգւոյն սրբոյ՝ ի քարոզս իւր չիցէ ընկալեալ, և որ միայն սիրով փրկութեան ընկերին ոչ վառեսցի, մի՛ ակնկալցի՝ թէպէտ և շատ ինչ Ճարտարաբանեսցէ՝ պտղաբերել ինչ մի՛ ի Ժողովրդեան. քանզի բանք լոկ առանց վերոյգրելոցդ ոչինչ աղդեսցեն՝ ի սիրտ. և՝ ի վեր քան զամենայն՝ քարոզչին վարք առաւել քարոզեսցեն քան զլեզուն։

Լոկ ընտրութիւն առաջիկայ քարոզիչն՝ զոր ընծայեմք, քաջիկ պատրաստեցան մերովանն՝ ՝ի քարոզիչ աստուածամերձիչ արանց և առաքելաշնորհ քարոզչաց, որք ըստ սրբութեան վարուցն և ըստ անարատ քաղաքավարութեան անձանց՝ նաև զայլոցն գիտացին կշռել դատել և հրահանդել. և ըստ աստուածիմաստ գիտութեան՝ ի գիրս սուրբս և՝ ի մատեանս Հայոց՝ ընտրութիւն յաջողեցան առնել՝ ի մէջ աստուածային հոգւոյն, յորում միայն հաստատեալ կայ ոգի քրիստոնէութեանն և իմաստութիւն աւետարանին, և՝ ի մէջ մարդկային և աշխարհային հոգւոյն, որ աղբիւրն է ամենայն մոլութեանց և ախտից քրիստոնէից. միանգամայն պատկառ կացեալ առաքելական պատուիրանին, եթէ «Մի՛ Ճարտարութեամբ բանից, զի մի ընդունայն լիցի խաչն Քրիստոսի .,. այլ և քաջապէս խորագիտութեամբ ըստ պիտոյս ունկնդրաց ժամանակին իւրեանց՝ պարագլուխ անձանց առեալ զաբանչելի Աստուծոյն ոսկի՝

digitised by A.R.A.R.@

առաջնորդ առ Հասարակ՝ի քարոզս Իւրեանց, նմին իսկ Ճարտարաբանութեան վայելչապէս նմանողք եղեն առ տուածայնոյն Պաւղոսի։ Զոյն որ նաև՝ի քարոզութեան անդ աւետարանին, զոր յիմարութիւն հեթանոսաց կոչեաց, լի է և պատարուն և անզուգական յարուեստին յայնմիկ. որպէս զի և՝ի նմին իսկ՝ի հերքել իւրում զՃարտասանութիւն մարդկեղէն՝ ինքն վեհագոյնս Ճարտարասանէ, և՝ի վանել անդ իւրում զիմաստութիւն աշխարհիս, ինքն զերագոյնս իմաստնաբանէ։

Զայսօրինակ ապա պատրաստեալ զԲարոզչիս՝ նիւթ և պատճառք ոչ միայն յաւիտենիցն երջանկութեան, այլ և ստատր և առիթ ժամանակէիցս բարոյութեան և խաղաղութեան, որ՝ի քաղաքս, որ՝ի գերդաստանս, որ՝ի տունս քրիստոնէից, իբրու չէ բարի քաղաքացի, որ ոչն է բարի քրիստոնեայ. շատ ինչ փոխարինեալ համարիմք զանձինս՝ի դուզնաքեայ վաստակս, եթէ առ Հասարակ՝ի մեզ տէրունեանն պտղաբերցի երանութիւն՝ի գրոց ասի եթէ "Երանի այնոցիկ, որ զբանն Աստուծոյ լսե՛ն և առնեն"։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ Ա.

ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ

"Որ սերմանեմ, է որդին մարդոյ" և "Սերմն, բանն Աստուծոյ է":

Արդեւ և կարեւոր քան զամենայն բեմնասացութիւնս թուի ինձ այն որ զքարոզութիւնն բանին Աստուծոյ Յանձիցէ։ Օ՛ի եթէ այս քարոզ ցանգ չկայցէ յակաստանի հանդերձ պտղաբերութեամբն, ընդունայն այնուհետեւ այլ ամենայն քարոզքն եղիցին։ Այլ արդեօք հնար էր ձեզ ակնկալել այսօր, սիրելիք, լսել ինչ մի յանկարծելեացն, զոր ոմն յարդեաց համբաւեալ մատենագրաց գրեաց այսպէս, եթէ՝ "Զիք ինչ յաշխարհի այլ առաւել անպիտան՝ քան զքարոզս։ Լասիկ, ասէ, յԶատնայ մինչեւ 'ի Մովսէս չարակասեցին քարոզք բանին, և 'ի Մովսիսէ մինչեւ 'ի Քրիստոս և 'ի Քրիստոսէ մինչեւ առ մեզ ծովացաւ աւազիկ Եկեղեցի 'ի բեմնասացութիւնս, և աշխարհ միշտ նոյն է և անցեալի 'ի չարիս։ Մատեան մի օրինաց զրեալ հանձարով՝ լաւ եւս էր, քան զամենայն քարոզս, և կենցաղօգուտ եւս լինէր քան զամենայն բեմնասացութիւնս՝ 'ի վերանոլոգել զընթացս աշխարհի..."

Այլ աղէ, այր դու, եթէ հանապազօր քարոզութեամբ մարդիկ 'ի չարութեան կան մնան, ո՞ զի երբեք

digitised by A.R.A.R.@

երաշխաւորեր քեզ՝ եթէ չարագոյն ևս չլինիցին, եթէ երբէք ինչ մի չէր քարոզեալ նոցա։ Ո՞ բաւական իցէ ժխտել՝ եթէ քարոզք պողոքեր լեալ իցեն յաշխարհի, փոփոխութիւնս մեծամեծս հրաշագործելով 'ի զանազան ազգս և 'ի թագաւորութիւնս՝ նաև յինդ հանուրս տիեզերաց։ Այլ ո՞չ արդեօք վկայութիւնք կան մեզ անառուտք՝ քարոզութիւնք առաքելոցն սրբոց, և որ ինչ միանգամ՝ հրաշալուքք յառաջին 'ի դարս եկեղեցւոյ Ք.րիստոսի։ Այլ ո՞ երբէք մարթասցի անպիտանալ եթէ, և այսօր քանիս ոչ պողոքերեն քարոզք արդասիս մեծամեծս, սանձելով զմարդիկ մի 'ի վատթարսն յօրանալ, և դաստիարակելով զայր այր դառնալ 'ի չարութենէ՝ և նորոգել 'ի վարս բարեպաշտութեան։ Զանց քարոզից քանիք սմանք անդէտք և անտեղեակք մնասցեն հաւատոցն և պարտուց իւրեանց, և քանիք դարձեալ և ոչ զմնաւ անգամ ածցեն փութալ 'ի կատարումն նոցին։ Այս այնպէս անխիղճ կեցեալք մինչև 'ի կէտ վախճանին՝ մեռանիցին յուսահատք անապաշխարք։ Այլ ո՞չ արդեօք իցէ որ և 'ի ձէնջ վկայել ինձ այսօր անկեղծութեամբ, եթէ թէպէտ և 'ի լրոյ անտի քարոզիցն եղ և ինքն արտաքս յեկեղեցւոյն բաղում անգամ՝ ոչ ինչ լաւացեալ 'ի վարս, սակայն և եղ արտաքս գոգցես միշտ իղձ 'ի սրտի ունելով ուղղել զանձն։ Ո՞չ ապաքէն և այս՝ եթէ կանուխ եթէ անագան՝ 'ի բարեաց մնասին և յարգասեաց քարոզին հանարեսցի մեզ։

Ո՞ ժխտեսցէ, տեսցք, եթէ պողոքերութիւն աստուածաբուր բանից նուազեալ յոյժ է այսօր քան ըզչափ յաճախութեան քարոզից և քան զչափ բազմութեան ունկնդրացն և քան զչափ բրտանց և փութոց քարոզչաց բանին. այլ այսր ամենայնի պատճառք՝ ոչ ապաքէն թերութիւն քարոզչին է, և թերութիւն ունկնդրացն։ Զանգի զիարդ մարթ իցէ՝ օրհնութեանն Աստուծոյ արդասաւոր գործել զբերան քարոզչին, եթէ երբէք քարոզեսցէ նա առ 'ի հաճոյ ելեթ լինել մարդկան և առ 'ի շահ միայն գաւազանապաղոյն իւրոց։ Այլ սակայն և զայն գիտել արժան է, զի և օրհնութիւն Աստուծոյ ոչ երբէք արդիւնաբեր լիցի 'ի սիրտ ունկնդրացն որ յայլ ինչ պատճառս քան թէ, 'ի

digitised by A.R.A.R.@

շահ հոգւոց եկեալ նստիցին 'ի լուր քարոզին։ Բայց, չեն ինձ կամք և չէ ինձ անկ, "Գնել յերկինս զբերան իմ, և զլեզուս ածել զերկրաւ", և դատակնիք 'ի վերայ կապել քարոզչաց Ժամանակիս. քանզի և քաջիկ յայն հաստատեալ եմ եթէ, քան զիս չիք որ 'ի քարոզչաց առաւել նշանակ դատակնքոյ և անձնանախատ դարմանաց արժանաւոր։ Սակայն ոչ զանձնէ՛ ինչ խօսել առաջի կայ ինձ, այլ առ ձեզ և զձեզնէ. հրահանգ ըստ պարտականս 'ի նեբբս բերել ձեզ և ցուցանել. եթէ, զիարդ պարտ իցէ, ձեզ շահել 'ի լրոյ քարոզիչ, զի մի անպտղաբեր կամ թէ, վնասաբեր և կարդեսցի ձեզ անզուգականս այս միջնորդ և պարգև՝ զոր եթող Աստուած յեկեղեցւոջ իւրում 'ի սատար յաւիտենական փրկութեան մերոյ։

Այս արդ ասեմ, եթէ առ 'ի շահաբեր գործել զքարոզս, Աւաջին՝ պարտ է լսել զքարոզն սրտիւ։ Երկրորդ անգամ՝ պարտ է զքարոզն մերձեցուցանել 'ի սիրտ։ Այս է ծայրալիր կատար քրիստոնէական հրահանգաց, և այս է ողջոյն խնամատարութեանս խնդ առ ձեզ։

ՄԱՍՆ Ա.

Օ քառեակ ազգ սրտից, որ ունին զնեն աստուածային բանիցն, 'ի դէմս ածել մեզ ինքնին տեղն 'ի զեղեցիկ յառակին իւրում՝ որ զքառից տարբերութեանց գեանոցն, որ 'ի ձեռաց սերմանացանին ընկալան իւրաքանչիւր զերծին ցորենոյն. այս է՝ Միրտ կանուխ զրաւեալ. Միրտ խոտացեալ. Միրտ բազմաղբաղ և Միրտ բարի, հլու և լի հաւատով։

Օ սիրան առաջին օրինակն յերկիր՝ որ առ Ճանապարհաւ կոխան լինի յոտից անցաւորաց, ուր և բաց յանապատաբեր մնալոյ սերմանն, չիք նորա և ոչ տեղի և վայր բուսանելոյ և առնելոյ։ Օ երկրորդ սիրան օրինակ յերկիր ապառաժ, ուր այն ինչ բուսեալ բարւոյ սերմանն՝ ինքնին ցամաքի. քանզի առ 'ի չգոյն թանձրութեան հողոյն և հիւթոյն՝ չմարթի արմատս 'ի խորս

տալ և տարածել։ Օ երրորդ սիրան առակէ յանդաստան փշաբեր և մոլախոտեալ. ուստի և այն ինչ բուսեալ սերմանն՝ հեղձանի 'ի փշոցն, և պտուղ ոչ տայ։ Իսկ ապա վերջինն է երկիրն այն բարի և պարարտ, որ տայ 'ի ժամու զպտուղն բազմապատիկ։ Այս է, ասէ, սերմն "Աստուծոյ.,. և այս քառեակ ազգք երկրի են այլ և այլ սիրտք մարդկան՝ որք ընդունին զնա։

Հասեալ գան առադիկ առ մեզ ասա ոմանք 'ի լսել զքարոզն. այլ կանուխ հաստատեալ ունին 'ի միտս եթէ չունին պէտս լսելոյ, և արդէն իսկ գիտեն նոքա քաջ զպարտս իւրեանց. և թէ՝ բաւական իսկ են նոքա անձանց իւրեանց լինել քարոզիչ, և արդէն իսկ գիտեն՝ զինչ ունիցին խօսել քարոզիչքն. ուստի և գան ասա յեկեղեցիս զբօսնուլ առ ժամն իբրու 'ի թատրոն կրօնի՝ ընուլ զսովորոյթ քաղաքին։ Այս գան ասա բազում անգամ յորդորեալք 'ի սիրոյ նմանողութեան՝ յերևան գալ աչաց իշխանաւորաց և մեծամեծաց, ուրոց ցանկան հաճոյ լինել առաւել քան Աստուծոյ. ուստի և գան սոքա 'ի քարոզս սիրտ ունելով յինքեանս զբաւեալ կանուխ 'ի կրից. վասն այնորիկ և անընդունակք են 'ի պտղաբերել։ Այս է սերմն անկեալ առ Ճանապարհաւն և կոխան եղեալ 'ի մարդկանէ։

Գան և այլք առ մեզ 'ի լուր քարոզի, և հաստատեալ են 'ի միտս իւրեանց տեղի ամենևին չտալ 'ի սրտի՝ ոչ 'ի զղջումն և ոչ 'ի դարձ ապաշաւանաց. և այնպէս վայրապար և յանդգնութք ժոմն սոքա լսել զբանն Աստուծոյ, ցուրտք և անտաք իբրև զսալ դարբնաց. լսել իբրև արդարև անզգայք ոմանք զահագին Ճշմարտութիւնն՝ որք բաւական էին անհնարինս շարժել և ահաբեկել զնոսա. Ճշմարտութիւնք՝ որք և զօրացան երբեմն վանել և առնքել զանդրդուելի պինդութիւն մտաց զիմաստնոց աշխարհի և զմեծաց ևս իմաստասիրաց, և յաղթանակ ևս 'ի վերայ կանգնել բռնութեան թագաւորաց ահաւորաց։

Զոմի իմն այնպէս սոցա՝ եթէ չնորհս խնդրեսցեն 'ի նոցանէ քարոզիչք 'ի յորդորելն զնոսա գալ յուղղութիւն՝ չնորհս՝ զոր նոքա 'ի միտս հաստատեալ են զլանալ նոցա։ Իբրու եթէ յաջողութիւն յաւիտենական փրկութեան նոցա շահանդրութիւն ինչ իցէ քարոզչին՝

digitised by A.R.A.R.@

որ խօսի, քան թէ մեղաւորին՝ որ լսէ։ Միրտ խստացեալ և խեղաթիւր է այսպիսեացն, և դառնան 'ի քարոզէն այնպէս՝ որպէս և եկին 'ի լսել։ Այս է սերմն անկեալ յապառաժին։

Իսկ և բազումք դան մերձենան առ մեզ 'ի լսել, ընդ իւրեանս բարձեալ բերելով միանգամայն զամենայն հոգս իւրեանց և զզբօսանս աշխարհականս և ըշահախնդրութիւնս և զամբոխմունս և զամենայն իսկ զիսուժան կենցաղական ցանկութեանց. և է սիրտ սոցա բազմաղբաղ և շաղեալ և լի փշովք ընչաքաղց մեծութեանց։ Այս այնուհետև զսերմանեալ բանն Աստուծոյ "Հոգք աշխարհիս, ասէ, և պատրանք մեծութեան և ցանկութիւնք հեղձուցանեն և անպտուղ լինին"։ Այս է սերմն անկեալ 'ի մէջ փշոց։

Իսկ դան 'ի վերջէ առ մեզ և նուազունք ոմանք 'ի լուր քարոզի. և հաստատեալ են սոքա 'ի միտս եթէ հիւանդք են և դարմանոյ կարօտք. և մեծապէս ըղձան քաջողջութեան հոգւոց։ Դան սոքա լրութեամբ սրտի ակն ածեալք երկնաւոր վարդապետութեանցն, գուն գործելով ուղղել զվարս և նորոգիլ 'ի հոգիս։ Այս սիրտ՝ է երկիրն այն բարի և պարարտ, զոր ասաց տէրն. յորում աստուածային բանն սերմանեալ՝ արմատս 'ի խոր արձակէ, և շառաւիղս 'ի վեր ամբառնայ, և պտղաբերէ բազմապատիկ. "Որոց բարւոք և զուարթագին սրտիւ ընկալեալ զբանն, և տան պտուղ համբերութեամբ"։ Միրտ բարի և զուարթագին. այս է՝ սիրտ լի հաւատով, որ գիտէ մեկնել և որոշել զբանն Աստուծոյ 'ի բանէն մարդոյ. որ տայ լսել զառաջինն՝ փոյթ ինչ չտարեալ երկրորդին։

Այս անշուշտ աւադիկ, սիրելիք, առ նուազութեան բարիոք և զուարթագին սրտիս այսորիկ՝ յումպէտս և յանշահս վասնին ամենայն քարոզութիւնք մեր և ամենայն քրտնավաստակ երկք մտաց և ձայնից մերոց։ Դան յեկեղեցի՝ ոչ զաւետարանն լսել, այլ զաւետարանչին. ոչ 'ի լուր կալ քարոզին, այլ 'ի զնին քարոզչին. ոչ ընդունել զշնմարտութիւնն՝ զոր խօսիմք, այլ 'ի հետազօտել զեղանակն՝ որով խօսիմք։ Այս եթէ ողջ կամիք գիտել, դան ոչ զբանն Աստուծոյ լսել, այլ զբան մարդոյ։

digitised by A.R.A.R.@

Լաստիկ ձեզ ճշգրտիւ պատմեաց, զոր աղագաւ 'ի մէջ բազմահոյլ քարոզչաց և 'ի մէջ բազմամբոխ ունկընդրաց, ոչ միայն 'ի լաւագոյնս չգառնամք, այլ և յոռեգոյնսն ընկրկիմք։

Այո՛, անշուշտ գան նոքա 'ի լուր քարոզին՝ առ 'ի լսել զբան մարգոյ. և վասն այնորիկ է, տեսանել այսօր զոգին զայն հետաքնին զվայրապարն և զաշխարհային. զոր աղագաւ և անպատճառ բացատրութիւն առեւտրականին՝ ձանձրոյթ մեզ և տաղտուկ արկանէն։

Խնդրեն 'ի մէնջ զբարոյականին զանօսր և զնրբին հրահանգս, և զարտայայտութիւնս իմն խնաստասիրական զմարդկեղէն սրտի, 'ի ձեռս տալ ունկնդրացն հայելի իմն ջինջ՝ ոչ առ զանձինս զննելոց, այլ առ 'ի կրկտել զախտս և զմոլութիւնս օտարին։ Ո՞չ ասպաքէն առ 'ի զբան մարգոյ լսել ժողովին նոքա այսր։ Աստուածխնաստն այն յաձախեալ առած մարգարէիցն, "Վարձարուք, դարձարուք առ Աստուած.,. այն նախաբարոյ բան Մարգրէին, "Ապաշխարեցէք.,. Յորդորք բառնալոյ զիրաչն, ուրանալոյ զանձն, մոռանելոյ ընդ անձուկ դուռանն փրկութեան, բռնաբարելոյ զարքայութիւն, էն իսկ այդոքիկ առ նոսա խնաստք հինօրեայք. և եթէ ասել մարթ իցէ, զառանցելոյց բանք և 'ի կարի շատ յեղյեղելոյն իբրու ձայնք անազդակք։ Լորութիւն խնդրեն նոքա զիսորհրդոց մնաց, նրբութիւն խնաստից, ազնուականութիւն յարտայայտութիւնս, փափկութիւն ասացուածոց, արհեստ ճարտարախօսութեան։

Սակայն դուք աւաղիկ 'ի տկարութենէս պահանջէք, Տեարք, հանճար և ուշիմութիւն՝ զոր ես չունիմ. և եթէ այլք 'ի պաշտօնէիս բանին մեծապէս ճոխացեալ են յայդոսիկ, այլ ես ինքն անշուշտ թափուր եմ յայդցանէ և չէք յիս զօրութիւն 'ի հաձել զմիտս ձեր։ Ա՛ռ աւագագ և առ սոսկականագ խօսիմ՝ ես, սակայն և ոչ այլ ինչ գիտեմ ասել, բայց զպարտուց ձերոց բարբառել պարզ և մեկին ասացուածովք առանց ճոխարարկեալ ճոռոմութեանց, որպէս և գտանեմ իսկ պատուիրեալ յաստուածային մատեանս և յօրինակս աւանդիս եկեղեցւոյ։

Բայց աղէ ասացէք ինձ, իցէ՞ արդեօք կարեւոր՝ ճո-

digitised by A.R.A.R.@

խաբան Ճարտարաբան լինել առ խնայուցանել ձեզ զպարտս ձեր։ Իսկ՝ արդեօք կարելոր հանձար մեծ և ուշիմութիւն՝ առ ասել ձեզ յաւետարանէն, զի Եթէ ոչ ապաշխարիցէք, Եթէ ոչ զվարսդ փոխիցէք, Եթէ ոչ զկիրսդ մեռուցանիցէք, Եթէ ոչ զՀետս շաւղաց զԱրիստոսին կոխիցէք, 'ի սուգ, յարտասուս, 'ի համբերութիւն, 'ի սէր եղբայրութեան, ամենեքին առ հասարակ կորնչիջիք։ Իսկ կամ թուեսցի ինչ ձեզ վայելուչ և 'ի դէպ՝ գունակ գունակ ծաղկօք առնուլ զարդարել զառաջոդ զայդոսիկ՝ զերկնաւորսն և զգեբաշխարհիկսն. առաջք լուրջք և ծանունք. առաջք 'ի սուգ և 'ի թուխ հանակեալք։ Ի դէպ թուեսցի՞ ձեզ յուզել ինդրել փայլս և ՀանՀանչս 'ի հող և 'ի մոխիր, և զարդս և պանՀանՀանս 'ի խարտաղն և 'ի քուրձ։...

Օ ինչ. միթէ վարժոց և ՀեմարանՀ սարտաքնոցն մնասեալ իցէ՞ եկեղեցիս այս, Եթէ դպրոց ՀՀմարտութեան։ Ա՛ռ ինչ հասեալ դայք դուք այսր առ իս, զարՀեաս ուսանել զՀարտարասանութեան, Եթէ զօրինաՀն ուսանել զբարիոք կենաց։ Ա՛ռ միթէ պՀնութիւն և մեղայր բանից, որ զմիտսն յափշտակէ, իցէ՞ բաւական և 'ի շարժել և յամոքել զսիրտ։ Բա՛ր է, լի եմք վիրօք և բժշկութիւն ոչ կամիք և տակաւին զՀետ մնասեալս կրթիք։ Ա՛յլ սակայն և Ա՛ստուծոյ արդարութիւնն ցանզ սրթուն կայ. և ո՞ գիտէ Եթէ և մնասալուտ առ դուրս հասեալ չիցէ՞ մեզ, եղբարք, կէտ սպառուածոյ ողորմութեանն Ա՛ստուծոյ։ Ի՞նչդեռ ժամանակս 'ի ձեռս է, միայն աստուածային բանին լուր փրկաւէտ բաւական իցէ՞ բուժել զմեզ և յարժանաՀաս պատուՀասէն սպրեցուցանել։

Ա՛ռ սակայն մեր անՀոգացեալք 'ի մէջ արՀաւրաց վախՀանին, ժողովիմք ասա և յաստուածային բանիցն ինդրեմք ոչ զշահ հոգւոյն, քան Եթէ գեղս և հոտարատս մանկականս զմնոտիսպատուաստ Ճարտարասանութեան։ Ա՛ռ ուր զայսոսիկ դասնեմք, գովեմք զքարոզիչն, դրուատեմք զքարոզն. իսկ շահ և ոչ մի ինչ կՀեմք 'ի փրկութիւն հոգւոց մերոց։ Բանի՞ ընդունայն և վայրապար խոՀուրդքն. առ ինչ ուրեմն ժողովել մեր այսր։

Ա՛յլ աղէ ասացէք, մեզ քարոզչացս զո՞ր օգուտ

digitised by A.R.A.R.@

պտղաբերեսցէ մեր Հարտաբ սասացուածն՝ 'ի հաձել զլսելիս ձեր. յորժամ ոչ յաջողեսցի մեզ մեծապէս խնդութեամբ դարձուցանել զսիրտ ձեր և զհոգիս առ Աստուած։ Հաւասիկ վկայութիւն դնեմք յանդիման սեղանոյս սրբութեան, որ անմատոյցն է 'ի ստութենէ. Զեն մեզ պէտք հաձութեան լսելեաց 'ի սրբազան Հարտարախօսութեանս, յորժամ դուք ոչ ինչ նորոգեալք 'ի հոգիս՝ տակաւին 'ի յոռութեան կայք։ Ան-զի զինչ շահ կթեսցուք մեք 'ի ձերոց գովութեանց, յորժամ դուք ոչինչ օգտիք 'ի մերոց հրահանգացս։

Կալարուք առ ձեզ զգովութիւնսդ ձեր, չեն մեզ պէտք. գովեցէք զմեզ ձերովդ ապտասուօք։ "Ցուք տեղի, աղաղակեր Աստուծոյ ասէի, տուք տեղի, դադարեցէք 'ի ծափահարութեանցդ ձերոց, և փոխանակ այնր՝ սկիզբն արարէք դուք լինել քրիստոնեայս։ Գովեցէք դուք զաստուն, խնդրեմ ես զանձնոյն..։

Իսկ և կէսք, յորժամ ուրեք 'ի լուր քարոզին ոչ զնրբութիւն արհեստին զացեն, ոչ զշնորհս ինչ զարտայայտութեանցն, դժգոհին և դժուարին, և ոգի իմն յայնժամ ընդմտանէ 'ի նեբրս՝ ոգի չարութեան և բամբասանաց. և սկսանին այնուհետև առաւել քան զամենայն մարդ համբաւել գովութեամբ զմարդն՝ որ քաջալերին և խորամուխ 'ի դուրս բերեալ առակեսցէ զթերութիւն և զարատ և զիսամութիւն զքարոզչին և զքարոզին։ Թուի իմն՝ եթէ դան դոքա առ մեզ 'ի լսել իբրու արդարև զլրտեսան Լոգիստոսի՝ միայն առ 'ի զլինել զիտել զանպատասպար կողմն զաշխարհին. "Լրտեսք էք դուք, ասէր, և զիտել զել և զմուտ երկրիս եկեալ էք..։

Իսկ, քրիստոնեայք, մինչև ցերբ այդօրինակ լսելութեամբ բանիցն Աստուծոյ ոչ միայն անպէտ և անարգասաւոր գործէք ձեզ զայն, այլ և զմեզ զսպասաւորս ինքնին զաւետարանին յահագինն արկանէք վտանգ՝ մասն լինել գեղեցիկ սպասաւորութեան մերոյ՝ առ 'ի հաձել զձեզ։ Մնդրեմք դուք ուրեմն զբան մարդոյ և ոչ զԱստուծոյ. և եթէ երբեք մեղկասցուք մեք խօթամտութեամբ հաձել զձեզ, ահա և մեք և դուք միանգամայն 'ի կորուստ յուղարկեցաք։ Զի խնայեցէք վայր մի; ամն ածէք դուք մերոց տքնու-

digitised by A.R.A.R.@

թեանց, մերոց քրիստոնց և վաստակոց մնաց և լեզուի՝ որով Հնչիմք փրկել և ապրեցուցանել զձեզ։ Զեր հաւատքդ լցցեն զմեզ ուրախութեան մերոյ, և 'ի սրտի ձերում գոցէ Հնազանդութիւնն զկորով իւր և զզօրութիւն, զոր կորուսեալ է 'ի լեզուի մերում։ Այլ մի եղբարք իմ, մի 'ի վտանգ արկանէք զմեզ՝ նշուակել զաւետարանն Քրիստոսի և ձերոց յետաձիգ խոստմանդ զնոյն արբանեկել։

Եւ արդ վայրիկ մի, սիրելիք, խեղճուած լինել աղաչեմ անսուտ Հնազանդութեանն, յորում հաստատեալ կայ բովանդակ շահ և պտուղ քարոզիչն։ Յորժամ 'ի բեմն ասի աւետարան 'ի ձեռին խօսին առ ձեզ, ոչ եւ է այնուհետև մնալ որ խօսի ընդ ձեզ. ինքնին Աստուած զկամն իւր յայտ առնէ 'ի ձեռն պաշտօնէիցս իւրոց։ Աղքատք եմք, անուսք եմք, և անշուք զարմիս, և նրբին կենցաղի աշխարհայնոցն չեմք ինչ ներկուռք. սակայն եմք խակ հրեշտակք և դեսպանք Յիսուսի Քրիստոսի. "Ցեր տէր առաքեաց զիս և հոգի նորա,,. և "Ես ան Քրիստոսի, ասէ, ստուածային Աստուածն, վասն Քրիստոսի պատգամնորիմք,,։ Եթէ երբէք այր թագաւոր պատգամ առաքէ առ ձեզ, դուք ոչ 'ի վիճակ, ոչ 'ի հանդգնանս ինչ, զանին յառէք պատգամաբերին, այլ 'ի դերաշուք գահ անդր առաքողին լինիք ակնկառոյց։ Նոյն իշխան թագաւորացն էր յարքունիս. Ամենս հովիւ էր խաշանց և թուի քաղէր. Յովհաննէս քաղցր և համբոյր. Պօղոս անաչառ և խոստովանող. Երեմիա մանուկ, այլ փայլատակունս արձակէր։ Սակայն յամենեսին առ հասարակ Աստուած ինքնին էր որ խօսէր. "Ուերան Ցեառն, ասէ, խօսեցաւ զայս,,։

Ուրեմն մինչ դիք, աղաչեմ. եթէ երբէք ելեալ էր իմ յայս բեմ՝ պարզապէս զիմ բանս առաջի առնել ձեզ, զիարդ երբէք մարթ էր ինձ քաջալերութիւն այնչափ զանձամբ առնուլ, և այսչափ սաստկագոյնս և բարձրագոյնս բարբառել յանդիման՝ որ ասա էն 'ի ձեզ՝ աւագաց և մեծամեծաց և իշխանաց ազգին, ես՝ այր սոսկական և տրուպ, ես որ այլուր 'ի լինելն երբէք ընդ մեծամեծսդ ընդ այդոսիկ՝ միշտ զանգիտեալ՝ ելանեմ արտաքս յերեսաց դոցա, եթէ զուցէ ձանձրա-

digitised by A.R.A.R.@

ցուցաք ինչ շտիսօսութեամբս։ Այս զի է, զի միայն 'ի բեմն սատի, միայն 'ի բեմն սատի ինքանեմ ես խիղճ 'ի մոի, եթէ թերևս սակաւ խօսեցայ, թերևս ոչ ազատ օրէն ինչ խօսեցայ։

Օ խաղդ երբէք մարթ իցէ ինձ քաջալերութիւն այնչափ զգենուլ, ինձ՝ որ չեմ որ 'ի մեծատանց կամ յիշխանաց, այլ անձն ապիկար, և այսպէս միայնակ և անզէն նահատակեալ 'ի դիմի հարկանիմ մեծաւորս ընդդէմ բազմամբոխ հրապարակիս, խօսել և վանել բանիւ բերանոյ զսովորոյթս և զբարս անբարիս զարդոյ արանցն և զաւագաց և զիշխանաց, յանդիմանել սատել՝ եթէ հարստահարութիւնք ինչ իցեն 'ի նոսա. խօսել և նշաւակել զմեծատանցն և զՀոխիցն զփսաիկութիւնն, զընչաքաղցութիւնն, զդժպատեհ կիրսն, զաղահութիւնն, և զանողորմութիւնն։ Օ խաղդ մարթ իցէ այսմ լինել, եթէ ոչ Աստուած ինքնին հովանացեալ կայցէ և քաջալերութիւն ինձ զգեցուցցէ. "Այս եղէց, ասէ, բան 'ի բերանի քում,, և "Ա՛յ դուք էք որ խօսիցիքն, այլ Հոգին սուրբ,,։ Ուստի և արձակ արձակ և աներկիւղ խօսիմ. քանզի խօսիմ յանուն Աստուծոյ։ "Թերան Տեառն, ասէ, խօսեցաւ զայս,. և Այսպէս ասէ Տէր զօրութեանց,,։

Սակայն և 'ի բարեպաշտութիւն նոցուն իսկ աւագացն և մեծամեծացն՝ որ ինձ ունկն դնեն այսօր՝ մեծապէս վստահ եմ Տերամբ. զի այնպէս կամին՝ նաև հրամայեն ևս ասել ինձ ազատութեամբ զՀնարտութիւնն, և ասել զայն յանուն Աստուծոյ։ Այլ դուք եղբարք, գալով ձեր այսր 'ի լսել զբան մարդոյ, անշահ և անպտուղ յարդարէք ձեզ զբանն Աստուծոյ։

Չէ բան մարդոյ՝ որ շրջէ և դարձուցանէ զսիրտ. է նոյն ինքն բանն Աստուծոյ՝ եթէ լսիցէք երկիւղածութեամբ որպէս պարտն է։ Բանն մարդոյ պղինձ է՝ որ հնչէ, և իբրև զծնծղայ՝ որ զողանջէ։ Բանն Աստուծոյ սուր է երկսայրի. ընդմտանէ մինչև ցորոշումն ոգւոյ և ընչոյ և ուղղոյ։ Ուրն անվանելի. վանէ փշրէ զխստութիւն սրտի. հրաբորբոք բոց է, այրէ ծախէ զամենայն զկիրս։ Բանն Աստուծոյ էր և ոչ բան մարդոյ, որ վանեաց զիմաստութիւն Յունաց, ընդոտնեաց զգոռոզացեալն Հռոմ, իմաստնացոյց զիսուժադուժ ազգ-

digitised by A.R.A.R.@

նրս. Հեզացոյց զվայրենամիտսն, կապեաց առ պատուանդանի խաչին զբռունս սոսկալիս և զթագաւորս ահաւորս, արկ տապալեաց զաղանդ խնամատասիրացն հեթանոսաց և յիմաստութիւն երկնաւոր զնոսա վերափոխեաց։

Իսկ եթէ այսօր այս բան Աստուծոյ ոչ ներդործէ յայնպիսեաց անտի, մեր էն ողջոյն յանցանքն, զի լաւմբ զքարոզն իբրև զբան մարդոյ և ոչ իբրև զբան Աստուծոյ։ Աւասիկ ձեզ միակ միջնորդ և առիթ պրտղաբերել 'ի քարոզից։ Օ երկնաւորին 'ի նոսա լուսաբուք զբան, և զպատգամն ընկալարուք նոքօք զաստուածային մերոյ օրէնսդրին։ Լուարուք զքարոզն իբրև զբան Աստուծոյ. այս է՝ զոր կանխեցաք ասացաք՝ լսել զքարոզն սրտիւ։ Այլ սակայն և այս չէ շատ, պարտ է և մերձեցուցանել զքարոզն 'ի սիրտ։ Ցուք վայր մի հանգստեան, և ունկն դիք լրջմտութեամբ։

ՄԱՍՆ Բ.

Աստուածային մատեանք 'ի կերակուր օրինակեն զբանն Աստուծոյ. և ըստ նմանէն՝ Հարքն սուրբք գեղեցիկս վարդապետեցին, եթէ միանգամայն զամենայն քաջողջութեանն արդասիս զոր զգալի կերակուրս ազդէ 'ի մարմին, զնոյն պէտք էն և բանին Աստուծոյ զիւրն ներդործել 'ի հոգիս մեր։

Այս արդ՝ ասեն՝ առ 'ի ամենազարար կերակրոյն լինելոյ, չէ բաւական իղձ ունել այնմ՝, չէ բաւական և ուտելն իսկ, այլ պարտ է կերակրոյն հալիլ և լուծանել, և իւրաքանչիւր մասանց մարմնոյն երթալ բաշխել զկենարար հիւթոյն զօրութիւն, 'ի կազդուրել զտկարութիւն մարմնոյն և նորաստեղծուլ զանսուաղ և զնրբութեալ ոգիսն։

Օ նոյն օրինակ ապա չէ բաւական քաղց ունել բանին Աստուծոյ, չէ բաւական և լսել սիրով և ընդունել մտադիւր. այլ պարտ է առնուլ և մինչև 'ի սիրտ անդր անցուցանել զնոյն. զի անդանօր իբրև 'ի գահու և 'ի սեպհական իւրում տաճարի մտեալ բնակեսցէ։ Ինա-

digitised by A.R.A.R.@

նիլ պարտ է երկնաւոր հայրենի ճշմարտութեան, և 'ի խորհուրդս մտաց զնոյն որոնել և 'ի վերս քան զամենայն՝ ամենակատար հլութեամբ զանձն հպատակել պատուիրանաց նորա։

Այս է զոր ասեմք՝ մնանիլ բանիւն Աստուծոյ։ Եւ մնանի մարդ՝ յորժամ 'ի խախտացոյն միայն ինքանէ կերակուրն. այլ յորժամ խառնի և հալի և գնացեալ ընդ մտանէ կենագործ հիւթութիւն ընդ ամենայն մասունս մարմնոյն։ Այսպէս և Աստուծոյ բանն յայնժամ դառնայ 'ի կերակուր և 'ի սնունդ հոգւոյն, յորժամ գնայ և խառնի ընդ ամենայն շարժմունս հոգւոյն, ընդ ամենայն գործս նորա, ընդ ամենայն խորհուրդս նորա. և դառնայ լինի առաջնորդ և լուսաւորիչ ամենայն խորհրդոց նորա, և կանոնադիր ամենայն գործոց նորա։ Այս է զոր ասեմք՝ մերձեցուցանել զքարոզն 'ի սիրտ։

Այլ սակայն աղէտք անհնարինք այն են սիրելիք, յորժամ լսեմք զքարոզս, և ոչինչ ամենևին մերձեցուցանեմք 'ի մեզ ինքեանս. լսեմք, և ինչ մի ոչ զբաստանեմք 'ի քարոզն վասն մեր։ Եւ զվիճակ կենաց մերոց տեսանեմք 'ի նոսա. ոչ զքաղաքավարութիւնս վարուց. ոչ զպէտս ինչ մեր զհոգւոյ, և ոչ ինչ մի 'ի թերութեանց և 'ի յանցաւորութեանց մերոց գտանեմք 'ի քարոզն։

Այլ երբեմն զի յանդիման Աւետի յանցուցելոյ՝ աղատախօսն այն Աթան մարգարէ արձանացեալ քարոզէր, և հանձարագիտ առակաւն բռնաւորութեան առն ուրուք մեծատան և հարստահարութեան առն աղքատի՝ 'ի փողոտել երնջոյն նորա, յերեսս հարկանէր արքային զանհնարին զմեղն՝ զանպարտ սպանութեան Ուրիայ և զինութեանն ընդ Աբրսաբեայ։ Եւ զի միանգամ յաւադանւոյն զառակն լուան զԱթանայ, քաջ իսկ ծանեան առ հասարակ եթէ վասն Աւետի է յանդիմանութիւնն, մինչև հիացեալք ընդ աղատութիւն մարգարէին միանգամայն և զանդիտեալ կային ընդ ձախողակ ինչ պատահար սրբոյ քարոզչին։ Այլ՝ իսկ Աւետի անդամոր, միայն նա լսէր և ոչ խմնայր. նա և 'ի սրտմտութիւն բարկութեան բերեալ՝ վճիռ ևս զմահուն հատանէր ընդդէմ հարստահարող յանցաւորին։ Սակայն յանցաւոր ոք այլ չէր ուրեք 'ի

digitised by A.R.A.R.@

միջի, բայց 'ի նմանէ։ Ի վերջէ ապա ստիպեալ ունա-
գարէին 'ի վեր գբոցն առնուլ զառակաւոր, մեկին բար-
քաւէր, թող անդր 'ի բաց, ազբայ, զսրտմտութիւնդ
ընդդէմ առնն, "Դու ես այրն այն ,, ։

Օ խաղդ 'ի դէպ է մեզ օրինակդ։ Դէք ահա քա-
րոզեմք ընդդէմ ախտից, և ակն ածեալ ախտակրելոյն՝
յականէ յանուանէ չասեմք ինչ զուտերէ. և այս ապա
շատ է՝ զի և ոչ մի ոք յունկնդրաց մերոց առցէ զքա-
րոզն մեր վասն իւր։ Դա իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ
յայնժամ սրբեալ զանձն իւր՝ ասէ ընդ միտս. "Զեմ
ես այրն այն՝ զորմէ խօսի քարոզն ,, ։

Դաև սկսանի այնուհետև զայլ ոք ընդ միտ ածել, և
իբրու գեղեցիկ նախանձաւորութեամբ վառի յուղղու-
թիւն միայն վարուց ընկերին. իսկ ուղղել զանձն՝ ոչ
նկրտի ոք 'ի ձէնջ և ոչ խորհի ոք անգամ։

Դ' զի մեք բոլոք հարեալ 'ի բեմէ ասէ մեծապէս
սրտցաւութեամբ ողբամք՝ զի անհոգացեալ են մարդիկ
'ի կատարումն պարտուց իւրաքանչիւր։ Դսկ անդուստ
լուեալ զայս անհոգացեալն այն այր և խոպան յուլա-
ցեալն, չզգայ ինչ յանձին ամենևին. կայ և լսէ զա-
մենայն՝ իբրու զայլմէ բոլոք հարեալ քարոզչին։

Դ' դարձեալ զի մեք սաստկապէս 'ի քարոզս խօսիմք
և վանեմք զմոլեգնութիւն փառամոլ ախտին, զամբար-
տաւանութիւն, զարհամարհութիւն այլոց, և անդուստ
այրն այն գուռոյ, փառախնդիր, և արհամարհոտ լսէ,
և չզգայ ինչ յանձին իւրում։ Զոհպէտ և կենդանա-
տիպ ևս դունոյք նկարագրեացուք մեք զնա, նա յայլ
ոք տարեալ հանէ զնկարագիրն։ Դակայն թուի թէն
այնպէս՝ եթէ առ հասարակ ժողովուրդք՝ որ լսեն՝ զնա
ինքն մատնցոյց առնեն. և ժողն ևս ասել նմա զայն
ինչ՝ զոր քարոզիչն ոչ կամի և ոչ մարթի և ոչ պարտի
երբէք ասել. "Դու ես այրն այն ,, ։ Դայց նա միայն՝
չունի աչս 'ի տեսանել զանձն, չունի սիրտ 'ի խոստո-
վանել՝ եթէ վասն իւր էն բանքն. և ցանդ խոյս տայ
'ի նկարագրէն ասելով, եթէ կուտակաբան է քարո-
զիչն, ուստի և չէ վասն իւր քարոզն. և թէ՝ այդ քա-
րոզիչ կրթի առաւել յերկիւղ մնոտի զլեալ զլսողս
իւր, ուստի և չէ պարտ այնչափ ուշ ունել ձգձիմ բա-
նիցն։

digitised by A.R.A.R.@

Իսկ զինչ ապա. կուտակաբանն իսկ քարոզիչն և 'ի խղճահարութիւն խնդրիցէ արկանել ձեզ ինքեանս։ Դարձեալ, նա՝ մինչ յաւուր միում հասանիցէ թերևս յահեղ դատաստանին պատուհասակոծ ևս լինել, զի այնպէս տարապայման ներողութեամբ թեթև և փոքրոգի երևեցուցաք մեք ձեզ զմեծ զարհուրան զյաւիտենական ձեր դատաստանաց. և վերը 'ի վերոյ բանիւք անցաք զահագին սպառնալեօքն։

Այլ արդ՝ եթէ շատ ինչ կուրացեալ է մեր՝ չառնուլ յանձինս մեր զձշմարտութիւնն՝ զոր լսեմք 'ի բեմէ աստի, սակայն և անշուշտ լի եմք լուսաւորութեամբ վասն ընկերին, և սրակնագոյնք եմք 'ի չարութեան, 'ի կծել, յերգիծանել և յառակ կարգել, յայլս ոմանս ձկտեցուցանելով զքարոզսն, զոր լսեմք։

"Լկայ, ասէին որդիքն Իսրայելի առ Յեզեկիել մարգարէին, եկայք երթիցուք առ տեսանողն, 'ի լսել զբանս նորա"։ Խուռներթաց լինէր ժողովն, մի զմիով ելանէին, կային առ նմա, դէտակն կալեալ առնուին ժողովէին զամենայն զբանս մարգարէին. մինչդեռ նա անդուստ փայլատակումս ահագինս հատանէր յաստուածարեալ բերանոյն։ Այլ զինչ ապա, ստրջանայցին ինչ թերևս յանձինս՝ 'ի զիղջ, և յապաշաւ, և 'ի դարձ։ Այլ բնաւ իսկ ոչ։ Այլ այր 'ի լսողացն զահագին պատգամսն զոր պարտ էր յանձն իւր առնուլ և 'ի նոսին խելամտել, յանձն ընկերին արկեալ ծանրացուցանէր։ Սուրբ և անպարտ կարծեցուցեալ իւրաքանչիւր զիւր անձն, այլակերպէին զլուեալսն, մեկնութիւնս և թարգմանութիւնս բանիցն 'ի ներքս բերէին այնչափ, որչափ և ոչ վասն նոցուն պատգամացն աստուծոյ գործէր ինքնին մարգարէն։ Այլ այնուհետև կայր մնայր անդ նոյնպէս Յեզեկիել իւրով քարոզիւն, և կայր մնայր և ողջ լսարանն նոյնպէս յիւր անուղղայ վարսն։ "Արդի մարդոյ, ասէր Աստուած, որդի մարդոյ տեսանէ՞ս, լսէն դոքա զբանս քո և ոչ առնեն զնոսա"։

Վասնի՞ հանգէտս ժամանակացն այնոցիկ՝ և այսօր ասեն առ մեզ բազումք, եկայք երթիցուք յայն ինչ եկեղեցի լսել զքարոզ։ Այլ ահա խուռներթացք աստի և անտի, ողջ լի է եկեղեցիս. անշշունչք կան, խոր է

digitised by A.R.A.R.@

լուութիւնն, և իւրաքանչիւր գէտ ունկն կալեալ 'ի լսել։ Զ.ԱԼ քանիք ոմանք միտ դնեն քարոզին՝ միայն առ 'ի դիտել զնոսա զպատկեր կենդանի ախտից ինչ և ըղձալութեանց, և ապա առ պատուանդանի պատկերին առեալ զդիշմեն զանուն սորա և նորա։ Զ՝ամբէ, ասեն, բամբէ, զիմարդ քաջիկ, զիմարդ Ճշգրիտն խօսեցաւ այսօր քարոզիչն վասն այս անուն առն։ Զ.ու ինքը չէին նա այսօր 'ի քարոզն տեսանել զկենդանագիր իւր։ Զամ թէ՝ և այն ոք իցիւ թէ այսօր եկեալ էր յեկեղեցիս, և լսէր զքարոզն, և անշուշտ յայլ մարդ փոխէր հիւրացեալն։

Զ՝այս իցէ մերձեցուցանել զքարոզն 'ի սիրտ։ Զ՝ով, քանիսն մեք ինքնին եմք հիւրացեալք, մեք՝ որ բազմանչեայք իբրև զ՝ոգոս կարծեմք զանձինս 'ի տեսանել զայլս. իսկ զայն զմին չտեսանեմք և չիմանամք, եթէ յորժամ զմի ոք մեք աչօք ակնարկի առնեմք, անդուստ թերևս հարիւրք ոմանք մատնանիշ զմեզ ցուցանեն։

Զ՝ինչև ցերբ, մինչև ցերբ այս ոգի չարութեան զայրս դատակնքելոյ 'ի քարոզից՝ տիրասցի 'ի մեզ։ Զ՝ի թէ զչարութիւն զայս միակ, այլ դու, արժան իցէ քեզ պաղաբերել 'ի քարոզից։ Զ.ու կամիցիս թերևս զի միայն 'ի փրկութիւն հոգւոյ ընկերիդ տացին ամենայն քարոզք, և ոչ քոյդ։ Զ՝աշ եղբայրսիրութեանն. այլ զիմարդ եղբայրասէր իցէ՝ որ անձնամատն իցէ. և զինչ օգտիցի՝ եթէ զանձն տուժեսցէ։

Զ.ԱԼ աղէ, դու զձեռն քո արկ 'ի ծոց քո, զի վասն քո է քարոզն։ "Զ՝ուրկ զձեռնդ, ասէր Զ՝աստուած ցՍ՝ովսէս, արկ 'ի ծոց քո, և սրբեսցիս 'ի բորոտութենէդ.,։ Զ՝ոչ անդր 'ի բաց մատնցոյց առնել մերթ զայս ոք և մերթ զայն ոք. դադարեա կարկեա, զինչ շահիցես՝ եթէ զանմահութեան քո կերակուր, զքարոզն, թոյն մահացու գործեսցես անձինդ՝ցանդ դատելով զեղբայրն 'ի քարոզին։ "Զ՝ու ես այրն.,. վասն քո է քարոզն. դու արկ զձեռն 'ի ծոց քո, զի բժշկեսցիս։ Զ՝ամենեան առակն վասն քո է, "Զ՝ու ես այրն, Զ՝ու ես այրն այն.,։ Զ.ու եթէ յայս խելամտեսցիս՝ յայնժամ մերձեցուցես զքարոզն 'ի սիրտ։

Զ.ԱԼ են դարձեալ և սոցուն ներհակակիրք ոմանք, որք ուշով միտ դնեն քարոզին, նաև յանձինս իւրեանց մերձեցուցանեն ողջոյն, այլ ոչ 'ի պաղաբերել ինչ

digitised by A.R.A.R.@

յաստուածային բանէն, քան թէ 'ի սրտմտութիւն դրդեալ զանձինս ընդդէմ քարոզչին և քարոզին։ Այլ զի սրտմտին՝ կարծելով կշռակի և տիրապէս զինքեանս նկարեալ և առակեալ 'ի բանից քարոզչին. 'ի դէպ է կեալ փարիսեցւոցն սրտմտութեան ընդ առակաբանութիւն տեառն մերոյ. "Գնացէք՝ ասէ, զի վասն նոցա ասաց զառակն.."։ Գնացէք, այլ ոչ միայն չպտղաբերեցին, այլ և հնարեցան այնուհետև խարդ կարձել զքարոզն, կարձելով 'ի կենաց զքարոզիչն։

Դժուարակ է, դժուարակ է, սիրելիք, բարբառել 'ի բեմ ասել։ Եթէ ծածկեմք զձշմարտութիւնն և լռեմք, ո՜հ, յանցաւորք եմք առաջի աստենին Քրիստոսի, զի մատն եղաք աւետարանին նորա։ Այլ եթէ ազատութեամբ խօսիմք, ասեն՝ եթէ կարի բացերևակի էն խօսք մեր. և իբրև անակնածութեամբ բամբասիմք, իբրու ընդ անձին ունկնդրին ընդ հարկանիլ մեզ և զախտակիրն նշաւակել կենդանի նկարագրութեամբք մերովք, քան թէ զախտն գլխովին։ Այլ՝ ա՛յ, և զիարդ մարթ իցէ մեզ լինել այնչափ ժպիրհ՝ և ամբարիշտ, մեզ սպասաւորաց աւետարանին, զի և զեղծանել մեզ սուրբ և աստուածային սպասաւորութեամբն, և խնդրել բամբասել և նշաւակել և թշնամանել զայս ոք և զայն։

Դարձեալ և զիարդ մարթ իցէ այնչափ մոռախաբս լինել և յետսամիտս, զի և կարծել մեզ ընդ այս ձև նապարհ թիւր և մոլար՝ շահել զհոգիս և մերձեցուցանել առ Աստուած։ Այլ ո՞չ մանաւանդ այսօրինակ ընթացիւք չար և սոսկացուցիչ մեք զնոսա. նաև թշնամիս և 'ի գայ ածցուք մեք մեզն, և ոխերիմն յաձախեսցուք անձանց մերոյ. զինչ շահ կայցէ մեզ յայն մանել։

Խօսիմք մեք առհասարակ, և չխօսիմք երբեք առ այս ոք և առ այն. "Ի մէջ անդր անցեալ եղեալ կայ լոյսն, ասէր մեծն Գրիգորիոս, եղեալ կայ 'ի լուսաւորել և 'ի զուարթացուցանել զամենեսին. այլ թէ իցէ ոք որ սաստիկ խոցեալ 'ի լուսոյն՝ վնասեսցի յաչս իւր, ոչ լուսոյն է մեղն, այլ ցաւոտ և բժոտ աչացն էն յանցանք.."։ Այսպէս և մեք առաջի արկեալ տարածեմք զձշմարտութիւնն, և առանց մերձեցուցանելոյ յայս ոք և յայն խրատեմք և յորդորեմք զամենեսին

digitised by A.R.A.R.@

առ հասարակ, զի առցեն 'ի նմանէ իւրաքանչիւր զիւր բաժին, որում կարօտին անհրաժեշտ, կամ որ գեղեցիկ 'ի Ճահ պատահէ նոցա։ Այլ եթէ երբեք զանձն քո նկարագրեալ գտանիցես դու 'ի քարոզիդ՝ զոր ասես, ոչ քարոզիչն է՝ որ ասէ ցքեզ կամ զքէն, այլ խայթ խղճին քոյ՝ որ նեղբին գիտակցութեամբն զամենայն լուեալսն գտանէ և Ճշգրտէ յանձն իւր։

Մի՝էք զաստուածային գիրսն, Ճշգրտաբանէր Սկեբերան, մեք զաստուածային գիրսն պարզեմք առաջի 'ի շահ համբրէն եկեղեցւոյ. և չուզեմք մեք զմեր բանսն առանձին առ ոք 'ի մարդկանէ. միայն ընդ ախտից և ընդ մոլութեանց առաջի կայ մեզ մարանչել։ Այլ եթէ երբեք արեղակինս այս լուսաւորեսցէ զքեզ 'ի տեսանել և 'ի Ճանաչել զանձն քո, մեծապէս է խնդութիւնս մեր։ Այլ զի՞ քեզ, այր դու, զիշատութիւն զանձինդ մերսումն ընծայել ջարութեան. իբրու եթէ նպատակ ըզքեզ առեալ բանից առակիցեմք։

Վասն է մեղն, եթէ յանցաւոր իցես. մեր չէք ինչ յանցանք՝ եթէ տամք քեզ Ճանաչել՝ որ ինչ եսդ. ուզ զեա զքեզ, և մեր քարոզն չեղիցի այնուհետև վասն քո։ Ամն մեղաց և ախտից են առ հասարակ բանքս. յակամն, յանտանել չկարդամք և ոչ զոք։

Այն դարձեալ և որք ամբաստանեն զմէնջ, իբրու զի մեծապէս ազատութեամբ քարոզեմք։ Այլ կարի խակ քաջ։ Զայն ոչ միայն աստուած հրամայէ մեզ, "Զոտչեա զօրութեամբ և մի խնայեր, բարձրացո իբրև փողոյ զբարբառ քո"., այլ և առաջնորդք եկեղեցւոյ, այլ և որ յաշխարհի իշխանք մեր և աւագք ժողովրդեան բարեպաշտք և աստուածասէրք՝ պահանջեն 'ի մէնջ ազատութեամբ քարոզել։

Այլ զի՞նդ ոչ. իցէ՞ թէ մարդիկ իցեն ազատք և աբձակերատանք 'ի մեղանչել. և պաշտօնեայք աւետարանին չունիցին ազատութիւն և ոչ քաջալերեսցին 'ի յանդիմանել զնոսա։ Մի՝եղիցեն նոքա և հրապարակաւ՝ և իբրու յաղթողք և մեծագործք ոմանք պարծեսցին, և մեզ պարտք իցեն խօսել իբրև անտաւադս, իբրև ապիկարս, իբրև վատասիրտս և աչառուս։ Զադարեցէք դուք 'ի մեղանչելոյ ազատութեամբ, և մեք դադարեսցուք 'ի յանդիմանել զձեզ ազատութեամբ։

digitised by A.R.A.R.@

Յորժամ մեք զարդիս աւետարանական աղատութեամբն քարոզեմք, և այսչափ սակաւ պտղաբերեմք, աղէ՛ ասա, զինչ կամ քանիսն էր պտղաբերութիւնն, եթէ իբրև բարեմարդիկ փաղաքուշք շողոմէաք մեք զձեզ, և զգուանօք ձերոց կրիցդ արբանեկէաք։

Հապա վայրիկ մի, եղբարք, դադարեալ 'ի դժպատեհ և յումպէտ խորհրդոց, և 'ի լուր աստուածային բանիցն անաչառ քննեսցուք զանձինս. զի արկեալ սերմն բանին Աստուծոյ պտղաբերեսցէ 'ի մեզ. քանզի և միջնորդք այսչափ մեծամեծք և առիթք զօրաւորք զօրհանապազ կան մեզ 'ի միջի 'ի լինել բարեպարիշտս և առաքինիս։ Դադարեսցուք վայր մի 'ի զեղծանելոյ աստուածային բանիւքն, անշահ և անպտուղ յարդարելով մեզ զնա վայրապար ընելութեամբն։ "Ոսկե՛ղք ցամաքեալք, գոչէր Եզեկիել, ոսկերք ցամաքեալք լուարուք զպատգամն Տեառն"։ Յողովո՛ւրդք որ միանգամ մեռեալքդ էք 'ի հնորհացն Քրիստոսի, կամ՝՝ ցամաքեալք ծիւրեալք ծնգեալք, մերկք յառաքինութեանց աւետարանին Քրիստոսի, արի՛ք 'ի մեռելութենէն՝ լուարուք զբանն Աստուծոյ. Աստուծոյ՝ և ոչ զմարդոյ. լուարուք սրտիւ, մերձեցուցէք 'ի սիրտ։ Այս ձեզ միջնորդք զօրաւորք կրկին, որով միայն մարթառնիք պտղաբերել 'ի քարոզիչս, որպէս լուայք ցայս վայր։

Այս դուք առաջինք քան զամենեսեան, առ ձեզ այժմ են բանք իմ՝ առաջնորդք ժողովրդեան՝ որ յեկեղեցւոյ, և որ յաշխարհէ իշխանք և աւագք։ Որչափ 'ի բարձու կացեալ էք՝ այնչափ և ամենեքին տեսանեն զձեզ. աչք ամենեցուն 'ի ձեզ հային, և զինի երթան հետոցդ ձերոց։ Եթէ երբէք յուլասիրք դուք 'ի լուր բանիցն Աստուծոյ, և օրինակ բարեաց՝ մանաւանդ 'ի մասին յայսմիկ՝ չտայցէք ժողովրդեանն Քրիստոսի, լինել առաջինք գալ ժողովիլ յեկեղեցիս, և ոչ նոքա յորդորեսցին ջերմապէս յայս առաջին պատճառ փրկութեան. նա զի դիտէք իսկ քաջ, զի "Հաւատք 'ի լսելոյ են, և լուր 'ի բանէն Քրիստոսի"։

Այլ իմ բանք ցայսվայր զինչ զօրեսցեն երբէք, ով տէր, եթէ ոչ քոյ հնորհդ ձայնակից լիցին բանիցս։ Խօսիմ ես ընդ ունկն, դու միայն բաւական ես խօսել 'ի սիրտ։ Դու հնչնին խօսեաց միշտ, տէր, երկ

digitised by A.R.A.R.@

նաւոր վարդապետ, առ գինս պատուական արեանդ քոյ սրբոյ։ Տպաւորեա 'ի միտս սոցա զահագինն զայն Հնամարտութիւն, եթէ լսել յանդ զքոյ բանդ և ոչ ինչ պղտաբերել, զահագինն սպառնայ զպատուհաս զքոյ լռութիւնդ։

Բաբէ, եղբարք, սարսափելի լռութեանն Աստուծոյ, քանզի ծայր է սաստկապահանջ արդարութեանն. "Աղաքեցից, ասէ, առ ձեզ ոչ սով հացի և ոչ ծարաւ ջրոյ, այլ սով լսելոյ զբանն Աստուծոյ"։

Այլ քաւ, մի լիցի տէր. "Խօսեաց տէր, զի լուիցեն ծառայք քո"։ Խօսեաց ընդ մեզ և 'ի մեզ. և զօրասցուք մեք յայնժամ լսել զքոյ բանն սրտիւ, և մեր ձեռուսանել գնայն 'ի սիրտս մեր։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐՈՅ Ը

ԽՈԿՈՒՄՆ ՄԱՀՈՒ

ՅԱՌԱՋԻՆ ԱՒՈՒՐ ՄԵԾՈՒ ՊԱՀՈՑՆ

«Մինչև դարձցիս յերկիր, ուստի առար. զի հող էիր և
'ի հող դարձցիս»։ Ծննդ. Յ։

Զայն իմն հնչէր երբեմն յականջս մեծին Դասկայեայ. և անդէն ծանեաւ մարդարէն, զի ոչ 'ի մարդկայնոց ինչ այլ աստուածային էր բարբառն։ Պատուէր կարդայր՝ ոչ որպէս միշտն սովոր էր՝ խօսել, այլ գոչել. «Զայն՝ որ ասէ, գոչեա»։ Վերևէն մարդարէն, զի ոչ 'ի բերև զայլոց նուազաց էր պատուէրն, այլ կարի տարբերնակ. «Գոչեա», ասէ միայն։ Օ մինչ, և կամ՝ զիրն 'ի քոց պատգամացդ գոչեցիս տէր։ Դրեթ, ասէ, առ ժողովուրդն, և զամենայն պատգամաստուութիւնս քո ըստ սովորականն 'ի բաց թողեալ այսօր՝ զայս միայն «Գոչ. ջիր. ամենայն մարմին խոտ է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ»։ Խոտ է մարմինդ այդ զոր զրդէր, և այդ մեծութիւնն և շուք՝ որ դիւթէ զձեզ՝ ծաղիկ է դաշտոյ, որ 'ի տապոյ արևուն հարեալ խամրեսցի։ «Յանդգնեցար խոսան և թոթափեցար ծաղիկն. արդարև խոտ է ժողովուրդս այս»։ Այս էզիցի քո, ով մարդարէ, այսօր դուն տիեզերական քարոզութեանդ, և այս մեծ աստուածահրաւէրն առաքելութեան առ ժողովուրդ։ Հ. ստ է, յայս միայն պատ-

digitised by A.R.A.R.@

բասաեսցին նոքա, թող յայս միայն զգոնասցին և ըզ-
դասասցին նոքա 'ի փրկութիւն։

Բայց զօրութեան քարոզութեանն։ Լու զիարդ՝ զոր յայնժամ ազդեաց մարդարէին, ոչ զնոյն ազդեսցէն այսօր որդւոց եկեղեցւոյ նովին զօրութեամբ քարոզք աւետարանին։

Նոցին աւադիկ աւուրք կենցաղական զբօսանաց, տեղի ետուն ընկերշակութիւնք ակմբից, խնձոյք բարեկենդանութեան սեղանոց, վայելք տիրութեանց խաղաց, (և երանի թէ ամենայնին պարկեշտութեամբ)։ Նոցին աւադիկ, և ահա քարոզք բանին ասուածոյ ձայն արձակէն Ժողովել յեկեղեցի վարաստելոյն որդւոց։ Ձայն արձակէն. զինչ։ Օ չասատանալ յասպաշխարութիւն, յեռանդն ասուածպաշտութեան, յուշ միանգամ՝ ածել զանհկանացս զկեանս իւրեանց, յուշ միանգամ՝ ածել զանասա վէճիսն։ "Զինչև դարձցիս յերկիր՝ ուստի առար։ զի հող եիր և 'ի հող դարձցիս"։ Այս յուշ և այս խոկումն՝ սիրելն և վախճան ամենայն աստաբելական քարոզութեան։ և այս ձայն մեհոյ՝ անեարկեան զօրծն և սաղրիչ յաւիտենական փրկութեան։ "Ձայն՝ որ ասէ, զոգջիր ամենայն մարմին խոտ է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ"։

Օ ձայն զայս ազդոյ լուիցէն մանաւանդ երիտասարդք կենցաղասէրք՝ հանգոյց անձին և վայելից աշխարհի միջա ապատարկուք։ թող առաքինութեամբ ոգժանն և վարձու 'ի բաց կացցէն կամաւ 'ի հեշտասէացն, զոր դատապարտութեամբ օր մի կամոյ և ակամայ ստիպեսցին թողուլ էրանել։ Օ ձայն զայս ազդոյ լուիցէ պանդասէրք ազգն, և զաւուրս ծաղկընկէց կենացն մի ընդ վայրք ծախեսցէ 'ի հոպտանս և յանցանութիւնս, յուշ ածեալ՝ զի խոտ է մարմինն զոր գրդէ, և ամենայն վայելչութիւն նորա իբրև զծաղիկ խոտոյ։ Օ ձայն զայս ազդոյ լուիցէն աւագք և իշխանք, և զզուռոզութիւնն 'ի բաց դիցէն, զոր մեծութիւն և երջանկութիւն անցաւոր կենցաղս ստրեսցէ 'ի նոսա։ Օ ձայն զայս ազդոյ լուիցէն ճոխք և մեծատունք՝ և զայն դանձ իսկ լիցին 'ի Ժողովել՝ զոր ոչ գողք կապտեն և ոչ ցեց և ուտիճ ապականեն։ Օ ձայն զայս ազդոյ

digitised by A.R.A.R.@

լուիցեն և աղքատք, և 'ի վերջմբեր սիրոս իւրեանց մխիթարեսցին տառապեալքն 'ի յոյս երանութեան կենացն հանդերձելոց։ Լաւ առ հասարակ ամենեքին, որ 'ի հողոյ առեալք և 'ի նոյն լուծանիցին, լուիցեն զձայն զայս աստուծոյ. "Հող եիր, և 'ի հող դարձցիս"։ Եվ ձայն ահաւոր, սակայն և ձայն փրկաւէտ յոյժ, սիրելիք։

Օ հետ ապա կենաւէտ ձայնիս ընթացեալ այսօր՝ յաւետարանական բեմիս քարոզ զայս կարդասցուք յունկն բարեպաշտութեան ձերոյ, եթէ խոկումն մահու Ճանապարհ միակ և միջնորդ միակ է փրկութեան մերոյ, և սա միայն տայ մեզ աստէն սրբութեամբ քաղաքավարիլ, և անդ 'ի յաւիտեան երանութիւնն յաւէժանալ։

Այս յոյս խնամատ՝ երրակի զանհրաժեշտ մահուն զպատկեր նկատեսցուք. այս է՝ զհարկաւորութիւն նորա, զանխուսափելիութիւն, և զմերձաւորութիւն։ Առաջին՝ եթէ խոկումն մահու իբրև հարկաւոր և անխուսափելի՝ պատրաստել զմեզ յապաշխարութիւն, մտադիւրագոյնս 'ի բաց քեցել մեզ 'ի զգալեաց կենցաղիս։ Երկրորդ անգամ՝ եթէ խոկումն մահու իբրու անստոյգ եթէ երբ գայցէ, ուժգնակի դրդէ զմեզ յապաշխարութիւն, ցաւել մեզ Ճշմարտապէս ընդ յանցաւոր կեանս մեր։ Երրորդ անգամ՝ եթէ խոկումն մահու իբրու մնտալուտ առ դուրս, յաւելուցանէ յապաշխարութիւն, եռանդագինս պատկառ կալ գործոց առաքինութեան։ Երրակի այս խնամատք, Պատրաստութիւն, Հոգի, և Պտուղ ապաշխարութեան, եղիցին մեզ բովանդակ սրբութիւն մեր և փրկութիւն սաղբեալ 'ի խոկմանէ մահու։

ՄԱՍՆ Ա.

Ոչիք ինչ որ այնպէս յապաշխարութենէ և յառաստուած մերձաւորութենէն 'ի բաց քեցեսցէ զմարդ, իբրու յարգ և վարկ և սէր երկրաւորացս՝ յորոց ըմբռնեալ գերիմք։ Լոկ զՃշմարտութեանս այսորիկ մեք

digitised by A.R.A.R.@

ինքնին առնումք 'ի մեզ զփորձ. վասն որոյ և դանդաչեմք 'ի փրկութեան մերում և յապաղեմք զառնալ առաստուած, և օր յօրէ ձգեմք զապաշխարութիւնն. քանզի ծանր է մեզ թողուլ զերկրաւորս և զկապ սիրոյն՝ որով կապեալ կամք ընդ սուտս, խզել և 'ի բաց զընկենուլ։ Այլ արդ ասեմ, եթէ միայն խոկումն մահու իբրու որ անխուսափելի իցէ յիւրաքանչիւրոցս 'ի մէնջ, զամենայն կապ միանգամայն՝ որ ընդ աշխարհի՝ զիսոկ քակել, և յապաշխարութիւն և 'ի դարձ ճշմարիտ առաստուած ածել զմեզ։ Զանգի վայր մի խոկացեալ մեր զմահ, եթէ իբրև կատարած ժամանակի, և եթէ իբրև սկիզբն անժամանակ յաւիտենականութեան, երկոքումքեր միանգամայն՝ նա բացերևակի նշանակեալ ապակի զանայնութիւն կենցաղականացս։ Այլ ոչ սուտ կէ միայն, այլ և զօրութեամբ ճշմարտութեանն զեռադիմակ կուռն զայն՝ որ բնաւ իսկ ապաստարկուս ինքեան գերեալ է զմարդիկ, զարծաթասիրութեանն ասեմ և զփառասիրութեան և զկեշտասիրութեան՝ ջախեալ մանր խորտակէ։

Այս արդ՝ նկատեալ զմահն իբրու կատարած ժամանակի՝ իմաստութեամբ միտ դիր սիրելիք ճշմարտութեան ձերոց իսկ դատաստանացս, որպէս խրատէ աստուածխնամն Աղոտինոս. Դիր, ասէ, այր դու, 'ի կշիռ զդատաստան քո զոր դատելոց ես դու 'ի մահուն քում վասն կենցաղականացս. դիր ասեմ 'ի կշիռ ընդ դատաստանին՝ զոր այժմ դատես վասն նոցա 'ի խոկալ քում զմահն։ Արկոքին դատաստանքն, ասէ, ճշմարիտք են և ուղիղք. այլ առաջինն անշահ և անպտուղ. իսկ երկրորդն լի շայեկանութեամբ։

Յորժամ դու անկեալ կայցես 'ի մահճի մահուդ և 'ի դժարս ես հասեալ՝ յուսահատ այնուհետև 'ի կենացդ իսկ լինիցիս, ազէ ասա, զինչ խորհուրդ իցէ քո (սակայն եթէ յաջողեսցի քեզ յերկիւղագին պահուն 'ի զգաստութեան զմիտդ ունել). ասա զինչ խորհուրդ, որ կարծիք եղիցին քո վասն զգալեացս այսոցիկ, որոց այնչափ անձկանօք զհետ պնդեալ ես աշխարհասէրդ. եթէ հեշտութիւնք մարմնոյ, եթէ բազմահարուստ մեծութիւն, եթէ աւագութիւն բարձից, եթէ շուք պաշտամանց, եթէ գործառնութիւնք աշխարհա-

digitised by A.R.A.R.@

քարոզք, եթէ փառք և պերճութիւնք, եթէ համբաւք տիեզերաալուրք. ասա զինչ յայնժամ կարծեսցես դու զայդոսիկ 'ի վերջին պահուդ։ Յայտ' է, եթէ զոր ի մնաստուն կանուխ ասաց անձամբ վայելեալ յամենայնին, եթէ "Անցաւորութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է"։ Զոր առաղիկ ամենայնն իբրև երազք զարթուցելոց, անց իբրև ստուեր, իբրու զհետս նաւու սահելոյ ընդ ջուր, իբրու նետ թռուցիկ յաղեղանէ։ Թաբէ ունայնութեանն, բաբէ ծաղկընկէց բարեացն։

Այս պատկերք են ՀՀղբիտք, եղբարք. այս կարծիք անպատիրք, այս դատաստան ուղիղ, զոր կալցուք մեք անշուշտ յաղագս զգալեացս 'ի մահՀի մահուն։ Դատաստանք սրչափ ուղիղք, այնչափ և ահընկէցք յայնժամ 'ի հոգիս աշխարհասիրաց. քանզի զինչ շահ օգտի 'ի վայրապար զգաստութենէն. զի չիք այլ ժամանակ՝ էանց ամենայնն. ժամանակ չիք պտղաբերութեան 'ի գեղեցիկ խորհրդոցն. հեծութիւնք միայն և սրտառուչ հառաչանք և յուսահատութեան կիրք. "Որոբեցաք ուրեմն, ասասցեն, մոլորեցաք 'ի Ճշմարտութեան Ճանապարհէն"։ Աւաղ, զի անագան յոյժ ծանեաք զՀշմարտութիւն. զիարդ՝ մինչև հասեալ յայս պահ սոսկալի, ոչ ինչ մտաբերեցաք մեք։ Այս Ճանաչումն ունայնութեանց 'ի ժամ մահուն։

Իսկ ապա խոկումն մահու մինչև հասեալ մահու, ներհակաբար ամենևին, որպէս ասաց նոյն սատուածխնասան վարդապետ՝ այնպիսի իմն Ճանաչումն փրկաւէտ յաղագս զգալեացս գործեսցէ 'ի մեզ, զի և կեցցուք յաշխարհի, այլ ոչ կապեալ ընդ աշխարհի. զի և 'ի գործ վարեսցուք զկենցաղականքս, այլ իբրու սատարս՝ այլ իբրու գործիս յաւիտենից երջանկութեանն։ Զանզի յոյժամ նստեալ այժմէն խոկամ երբեք զմահն, ասեմ ցանձն իմ. Վ՛ անձն տես քաջ, ամենայն ցանկալիք մարդկան անցաւորք են, ծաղկընկէց են մեծութիւնք, ուիք են՝ որ յորդեալք և ցամաքեսցին. սակաւօրեայք են բերկրանքն, արագավախՃան են փառքն. ոչ կան և մնան, այլ անցանեն իբրու չէզեալք։ Զ՛Թէ անցաւորք են, չեն ուրեմն այնչափ ցանկալիք. զի է քեզ անձն իմ՝ այնչափ անդուլ քրտամբք,

digitised by A.R.A.R.@

այնչափ տառապանօք, այնչափ անհոգացեալ քո զհոգւոյն, զանանցականն, այնչափ տուժիւք յաւխտեանական փրկութեանդ զհետ մնանել անցաւորացն, ոչնչիցն և ունայն ստուերաց։

Լցեալ անցաւոր են աստիքս, հայեաց ուրեմն դու 'ի դոսա՝ իբրու ոչ 'ի քոյս սեպհականս. լեր ուրեմն ասա՝ն իբրև զպանդուխտ խնաստուն, որ զեմ 'ի հայրենիսն եղեալ, այնչափ ինչ թարթափի յուղևորութեանն, այնչափ ինչ համարի, այնչափ ինչ 'ի գործ վարի, որչափ ինչ կարևորք, որչափ ինչ պիտանիք իցեն նմա ողջ հասանել 'ի ցանկացեալ հայրենիսն։ Լցեալ անցաւորք են աստիքս, միտ դիր ուրեմն ճշմարտութեանցն, զոր 'ի նեղքս բերի աստուածխնաստ առաքեալն. "Լանգի անցեալ է, ասէ, վայելչութիւն աշխարհիս. ասա ուրեմն որք ունին կանայս, որպէս թէ չունիցին'.. կանամբիքն ասէ 'ի միասին և ամուրիքն՝ յոչինչ այլ այնպէս զբաղեալ կայցեն, որպէս յաստուծոյ ծառայութիւնն և 'ի յաւխտեանական փրկութիւնն. "Լ։ որք խնդանն ասէ, որպէս թէ ոչ խնդացեն. և որք լանն՝ որպէս թէ ոչ լացցեն.. Կարձեսցեն, ասէ, երջանիկք աշխարհիս զսանձարձակ զբօսանսն. և սանձեսցեն տառապեալքն զարտասուս. զի երկոքեան և անցաւորք են։ "Լ։ որք ունիցին, ասէ, որպէս թէ չունիցին. և որք վարեն զաշխարհ, որպէս թէ ոչ վայելեսցեն.. Ոչք ինչ, ասէ, մթերեն և զտուն 'ի տուն յարեն, և զաղարակ առ ագարակ մերձեցուցանեն, մի ինչ աւելի քան զանպայաւորսն համարեսցին զանձինս. քանզի ունեն ինչ և յամենայն վայրկենի սպասել անհրաժեշտ կոստեանն, զինչ 'ունել իցէ։ Ոմանք վարեսցեն զոր ունին. այլ որպէս վասն կարօտութեանն վարեսցին նոքաք, նոյնպէս և վասն անցաւորութեանն մի ընդ այնոսիկ զսիրտն կապեսցեն։ Լ.այ խնաստ է և այս տրամախոհութիւն ճշգրիտ մեծի առաքելոյն վասն անցաւորութեան կենցաղականացս 'ի խոկմանն մնոյ։

Հապա ուրեմն արծարծեցէք 'ի ձեզ, իբրատ 'ի նեղքս բերի աստուածայինն Լ.ուգոստինոս, արծարծեցէք

1 ա. Կոր. 7.

digitised by A.R.A.R.@

'ի ձեզ, եղբարք, զխոկումն զայս զմահու զփրկաւէան, զկենագործն. այս խոկումն իբրու որդն ծախիչ անկեալ 'ի տունկ ծաղկաւէտ՝ ուստ և մաշէ 'ի ձեզ զամենայն իղձ զհեշտալեացն, և զերկրաբարշ ցանկութեանց զարմատն չորացուցանէ, և զտենչ փոփաքանացն յանցանցական վայելչութիւնս բարձրացուցանէ։ "Օ արդիս „ մինչ կեանքս՝ պտղաբերագոյնս ասասցուք, եթէ անցանեն ամենայնքն. զի մի յայնժամ 'ի մահուն յանպտուղս ասասցուք. բա՛ռ, զիարդ անցին ամենայնքն „։

Այս արդ՝ եթէ իբրև սպառուած ժամանակի նկատեալ մեր զմահ, այնչափ զօրութեամբն ածէ զմեզ յապաշխարութիւն, քանիպատիկ ևս կարծեսցես, յորժամ և իբրև սկիզբն յաւիտենականութեան զնոյն նկատեսցես։ Մ՛մբարիշտք և անաստուածք՝ զորս 'ի մէջ առեալ նշանակէ խնաստունն, իբրև ստուեր զհանդերձեալն կարծելով յաւիտենականութիւն, 'ի խոկմանէ մահուն բնաւ իսկ զգայազիրկք լեալք, այր այր ընկերի իւրում հրապոյր կարդայ. "Կերիցուք արբցուք „. էր վասն. " քանզի վաղիւ մեռանիմք „. զի իբրև ստուեր են կեանք մեր, և անուշս մեր մոռացի ժամանակաւ. եկայք վայելեսցուք 'ի բարութիւնս՝ որ կան. բոլորիւք վարդիւք պսակեսցուք, մինչ չև թառամեալ խցեն. կեանք մեր իբրև շունչ է յանդունս մեր, մոխիր լիցի մարմինն, և հոգին ցնդեսցի իբրև զօդ թոյլ։ " Եկայք, կերիցուք արբցուք, քանզի վաղիւ մեռանիմք „։ Օ այս 'ի նեղբս բերեն 'ի խոկմանէ մահու ամբարիշտք և անաստուածք. քանզի նկատեն զմահն ոչ միայն իբրև սպառուած ժամանակի, այլ և սպառուած բոլոր մարդոյն և սպառուած հոգւոյն։

Խոկ Հնմարտութեանն աշակերտք, ասէր աստուածայինն Գրիգորիոս, ընդ հակառակս մարմնամոլիցն զայս ինչ խնաստասիրեն 'ի խոկմանէ մահուն. "Եկայք պահեսցուք, Հգնեսցուք, աղօթեսցուք. էր վասն. քանզի վաղիւն մեռանիմք։ Ա՛ զիտասցէ զվաղուեանն կեանս։ Անձահարեսցուք ուրեմն այսօր զաչս, սանձահարեսցուք զլեզուս, սանձահարեսցուք զմարմին. մահս մեր ոչ եղբ է միայն ժամանակին, այլ և սկիզբն յաւիտենականութեան, կամ երջանկութեանն կամ թը-

digitised by A.R.A.R.@

շուառութեանն ,, ։ Օ այս խնամասիրէն նոքա , և ան-
արատ քաղաքավարութեամբ պատրաստին 'ի մահ ։
Զկնք զէն զօրաւոր 'ի վանել զթշնամին փրկութեան՝
զեռազլխեանն զայն վիշապ աշխարհակուլ՝ քան զիսո-
կումն մահու իբրև սկիզբն յաւիտենականութեան ։
Կամ արծաթն վանել զմեզ , սիրելիք . կամ , փառք ,
կամ մարմին ։ Այլ արդ միտ դիք աղաչեմ խնամսու-
թեամբ ։

Զերեալ

Զվիցուք եթէ 'ի կրից արծաթասիրութեան գերեալ
է քո այր դու , զոր արմատ ամենայն չարեաց ասաց ա-
ռաքեալն ։ Օ էն զօրաւոր՝ զոր այլ առցես 'ի ձեռն փրը-
կել զհոգիդ 'ի գերութենէն ։ Այր մի խոկաս դու
զմահն զանխուսափելին , և ասես ցանձն քո . հայեաց
դու միանգամ խնամսութեամբ ով անձն իմ . յինչ
վաստակեալ է քո , և վասն ոյր ։ Ահա աւուրք քո ,
որպէս համբերատարն ասէր Յովբ , ահա աւուրք քո
համառօտեսցին , և գերեզման միայն մնասցէ քեզ , ար-
դեօք այսօր , արդեօք վաղիւ , ո պատմեսցէ քեզ ։ Այ-
արդ յայնչափ մթերիցդ զինչ մնասցէ քեզ . բայց գե-
րեզման քո ։ Այսպա եթէ և անօրէնութեամբ և հարըս-
տահարութեամբ և խաբէութեամբք մթերեցան գանձ
քքն , զինչ հանդիպեսցի քեզ յարդար դատաւորէն .
զի մահ մեղաւորին չար է , ասէ . և սկիզբն է յաւի-
տենականութեան չարեաց ։ Այս անդ յաւիտենական
'ի տանջանսդ քեզ զինչ դիւր իցէ , զի բազմահարուստ
թողեր զհետ քո զժառանգ քո ։ Օ այս իսկ դու ընդ
անձինդ , և 'ի զգաստութիւն մտաբերես 'ի խոկմանէ
մահուն ։

Այլ դիցուք եթէ ոչ արծաթասիրութիւն գերեաց
զքեզ , քան թէ փառասիրութեան կիրք և պատուոյն և
համբաւոյն ։ Այս կիրք զխաղաղաւէտ կեանս քո վեր 'ի
վայր գործէ , նախանձու խնդրես բազմել ամենեցուն .
նախանձու տուայտիս ընդ փառաւորսն , հետամուտ ես
ճանապարհին՝ եթէ բարի եթէ անբարի՝ առ որսալոյ
զփառս . մոռացեալ է քո զամենայնն , մոռացեալ զհո-
գիդ , մոռացեալ զՍտուած , միայն փառքն են քո ուշ
նպատակի ։ Այս արդ զէն զօրաւոր՝ յաղթական անհնա-
բին կրիցն՝ զոր այլ առցես դու 'ի ձեռն . բայց յուշ
միանգամ ածեալ խնամսութեամբ , հայեաց դու ասես ,

digitised by A.R.A.R.@

անձն իմ. և զինչ ասա ի բեռն ամենայն փառք աշխարհի, և 'ի վերջ յինչ յանդիմանեն նոքա. "Ահա աւուրք իմ հանդուցեալեցին, և գերեզման միայն կացցէ ինձ ..." Իսկ 'ի գերեզման ինչեալ քո, ով անձն իմ, և ի՞նչ արդեօք անդանօր խորհիր և անջրպետ ընդ անաւուցն և ընդ փառաւորս, ընդ սոսկականն և ընդ ազնուականն. ընդ տիեզերականն և ընդ տառապեալ գերին. ոչ նայն հող հաւասարեսցէ զնոսա. ոչ առաքինութիւն միայն և կամ մեղութիւն խորհեսցէ առ աստուծոյ ընդ մարդ և ընդ մարդ. թերևս անարդ քո ծառայ կամ մուրիկ զրդլեակ զանձամբ՝ զնացեալ թաղ կապեսցէ յերկինս, և դու շղթայակապ գերի 'ի գեհենի։ Օ՜այս խօսիս դու ընդ անձինդ, և 'ի զգաստութիւն մտաբերես 'ի խոկմանէ մահու։

Բ. Յլ արդեօք ոչ արծաթասիրութիւն գերեաց զքեզ և ոչ փառասիրութիւն. այլ որ 'ի քեզ թշնամին տրն կակից, մարմին եղծանելի. մարմին հրապուրիչ մոգեալ է զքեզ և դիւթեալ զհոգիդ. փափկացեալ միայն՝ յանձնդիւրութիւն զլիսովին հատեալ է քո. զրդիս, հեշտանաս հանապազ, որ 'ի խորհուրդս, որ 'ի բանս, որ 'ի գործս. միայն 'ի մարմնաւորսն բերանաբացեալ է քո. զհոգւոյն ոչ մոռացեալ միայն, այլ և 'ի գարշելիս հանարեալ։

Եւ արդ զիարդ յաջողեսցի քեզ վանել զանսատն, զբռնաւորն։ Օ՜խարդ, բայց եթէ, երթեալ ապաւինեալ քո վայր մի 'ի խոկումն մահացու մարմնոյն։ Հայեաց, ասես, ով անձն իմ, միանգամ 'ի վախճան մարմնոյդ. "Ահա աւուրք իմ կարճեսցին, և մնասցէ ինձ ոչ այլ՝ բայց գերեզման ..." Ընդանօր իմ գեղեցիկ շինուածն քակտեսցի, մարմին իմ ուակաւ տրորեսցի, և որդունք ուռասցին 'ի նմա. իսկ որ յետ այնորիկ մնասցեն քեզ 'ի յաւիտենականն, կամ 'ի վարձ կամ 'ի պատուհաս, կիրք մարմնոյդ հեշտացեալք կամ կիրք սանձահարեալք։

Բ. Յլ դուցէ՞ ինչ զուգակշռութիւն ընդ վաղանցուկ հեշտութիւնն և ընդ անապատ հուրն։ Օ՜այս խօսիս ընդ անձինդ, և սիրտ քո յայնժամ հարեալ խոցեսցի յերկկիւղ սուրբ. խնայարհեսցի թախծեսցի հոգին, և փափաք երկրաքարշ ցանկութեանցն շիջցի։

Բ. Հաւասիկ ձեզ, սիրելիք իմ, զոր խոկումն մահու

digitised by A.R.A.R.@

գործեսցէ, 'ի մեզ. մահ անխուսափելի, մահ եղը ժամանակի, մահ սկիզբն յաւիտենականութեան։

Լաւբէ պաղատէա քարոզութեան մահուն։ Ո՞ տայր իմ առաքելութեանս՝ ըստ երեմեան եռանդանն՝ յանել առ հասարակ գնալ ընդ փողոց ամենայն, մոտանել 'ի տունս ամենայն, միով 'ի պալատս, միով ամենայն ուրեք, 'ի խանութս, 'ի գործատունս. ձայն կարդալ առ հասարակ. "Երկիր, երկիր, երկիր, լուր զպատգամ տեառն.,, "Դարձցիս յերկիր՝ ուստի առար. զի հող էիր և 'ի հող դարձցիս.,։

Ո՞ տայր ինձ, զպատգամ զայս փրկաւէտ իբրև կնիք անջինջ տպաւորել 'ի միտս ձեր. զիսկումն զայս իբրև նեռ սուր թափ անցուցանել 'ի սիրտս ձեր. զի այնպէս վարսեալ անդերծանելի՝ միշտ ընդ ձեզ կացցէ մնասցէ, ուր և նստիցիք, ուր և գնայցէք, ուր և գործիցէք, ուր և խօսիցիք։ Պատկեր մահուն ճշգրտիւ երևութասցի ձեզ, յորժամ երբէք աշխարհ ամբարտաւանութեամբն շլացուսցէ զձեզ, յորժամ երբէք մարմին հեշտաբերն գրգռեսցէ զձեզ. յորժամ երբէք սատանայ խաբէութեամբն հրապուրեսցէ զձեզ։ Պատկեր մահուն ճշգրտիւ երևութասցի ձեզ, յարթնութեան ձերում, 'ի հանգստեան ձերում, 'ի քաջողջութեան ձերում, 'ի հիւանդութեան ձերում։ Պատկեր մահուն ճշգրտիւ երևութասցի ձեզ 'ի տան և արտաքոյ, առանձինն և յակումբս, յորժամ 'ի կենակցութիւնս փարելիս բերկրեալ իցէք, յորժամ զբօսանաց և սիրոյութեանց զհետ ելեալ իցէք, յորժամ սեղանոց և խնճոյից պարսպեալ իցէք։ Այս ամենայն ուրեք և յամենայնի այս պատկեր մահու երևութասցի ձեզ. պատկեր ազգոյ, պատկեր հարազատ հողածին բնութեանս. որ զամենայն իրաց տարապայման առ զգալիս մաքրեսցէ, ուղղեսցէ, և 'ի չափս կացուսցէ. և յապաշխարութիւն ճշմարիտ հանդերձեսցէ զձեզ։

Այս արդ՝ որչափ ինչ 'ի ստուգութենէ, մահուն, այնչափ և առաւել յանստուգութենէ ժամանակի մահուն պաղաբերեսցաք մեք։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆ Բ.

Անստուգութիւն կրկին նկատեմք 'ի մահուն. մի՝ անստուգութիւն ժամանակին եթէ երբ գայցէ. միւս ևս՝ անստուգութիւն վիճակի կենացն՝ յորում գտցէ զմեզ մահ։ Եւ անստուգութիւնք ահաւորք։ Զառաջին անստուգութիւն յորդորէ զմեզ յապաշխարութիւն արագ և անդադար. երկրորդն յապաշխարութիւն հաստատուն։

Զրդ ոչ միայն օր մահուն անստոյգ է, եղբարք, այլ և ժամն։ Աստուծոյ բերանն կնքեաց. "Եւ զիտէք զօրն և ոչ զժամն"։ Կէաք 'ի հասակէ 'ի հասակ 'ի վեր եղեալք՝ լի աւուրքք մեռանին 'ի ծերութեան պարարտութեան. կէաք 'ի ծաղկաւէտ հասակին ապաժամանք լիութեան աւուրց՝ առաջի իւրեանց տեսանեն բացեալ զխաւարային գուբ գերեզմանին։ Եւ կէաք դարձեալ՝ յայդուէ մինչև ցերեկոյ՝ իբրև ծաղիկք դաշտաց չև՛ փթթեալք՝ անդէն թառամին։

Իսկ ապա զքոյդ զօրն կամ զժամն ո՞ պատմեսցէ քեզ։ Եւ հասակն զքեզ աներկեան գործէ. ոչ կորովութիւնդ վստահացուցանէ. ոչ զգուշութիւնն երաշխաւորէ. ոչ այլ ինչ 'ի մարդկայնոց աստի խնամոց՝ զքեզ ոչ ազատեցուցէ 'ի մահհրաւէրն անստուգութենէ։ Այ՛ անշուշտ է, եթէ հասցէ 'ի վերայ քո մահն, "Յաւուր յորում ոչ ակն ունիցիս, և 'ի ժամու յորում ոչ գիտիցես"։ Իբրև ձկունք ապուշք ըստ աստուածային գրոյն՝ 'ի կռածագ կարթին ըմբռնեալք, յորժամ յապահովի դիմեսցեն նոքա 'ի պատրաստեալն իւրեանց ախորժելին խայծ. և իբրու թռչունք անհանդարտք յաներևոյթ վարմէն ցանցեալք, յորժամ յանդորրու 'ի հեշտալին իւրեանց յանտառին՝ ոստոց յոսաբս կայթեսցեն, այնպէս մարդիկ յանակնկալ մահուանէն ըմբռնեսցին՝. "Ելոյկս ձկունք, ասէ, որսա-

1 Մատթ. 25։ 2 Սիր. 3։

digitised by A.R.A.R.@

ցեալք 'ի կարգ, և որպէս թռչունք ըմբռնեալք 'ի վարմ, այսպէս յեղակարծումն ըմբռնին մարդիկ ,, ։

Ոչն ինչ պէտք, եթէ յանկարծ հրացան բարկութիւն շանթեալ յաձիւն դարձուցէ, կամ ծով և երկիր պատառեալ սուղեսցէ, կամ թշնամի դարանակալ յանակնկալս հարցէ. կամ անդամալուծութիւն անդէն զոգին քաղեսցէ. չէն ինչ պէտք այսոցիկ. նոքին իսկ մահունք՝ զոր բնաւորականս կոչեմք և նախատեսեալք իսկ են՝ անկարծելիք հանդիպեսցին. քանզի 'ի հիւանդութիւն դժուարին անկեալ քո և տակաւ ապաքինեալ՝ մինչդեռ ամենայն յուսով խնդասցես, յանակնկալ ժամուն մեռանիցիս. զի զանսուտն լցցես զպատգամ, եթէ "Ի ժամու յորում ոչ գիտիցէ, ընդ մէջ կտրեսցէ զնս ,, ։

Յայս պատկեր ահաւոր անստուգութեան երևութացեալ մեզ մահն՝ տայ մեզ անդանդաղ գործել զանձին փրկութիւն, դառնալ առ աստուած Ճշմարիտ սրտիւ։ Ամբէ քանիցս իցէ զօրութիւն անստուգութեանն. և քանիք 'ի սանձարձակ և յանապաշտ մեղաւորաց՝ յանստուգութենէ աստի յոգի հարեալ խոցեցան և դարձան առ աստուած։ Ամենզի և անշուշտ՝ այր մեղաւոր միանգամ խելամուտ եղեալ Ճշմարտութեանս՝ անշուշտ զայս խօսեսցի ընդ անձին իւրում. Ոչ և քոյ ինդ գիտակցութիւն մնաց վկայէ Ճշմարտութեանս, ով անձն իմ. ոչ նա զօրհանապազ դատապարտէ զքեզ 'ի մեղս քո, և ոչ նա անդուլ բողոք բառնայ յապահովել զփրկութիւնդ։ Ամենայն դու ինքնին գիտես իսկ զանձին՝ ուր մեղայ, զժամանակն՝ յորում մեղայ, զդրդիչսն՝ ընդ որոց մեղայ. եթէ յանկարծ այսօր կամ 'ի ժամուս յայսմիկ ըմբռնեսցէ զքեզ մահն, ուրանօր գտանիցես դու զքեզ. և թերևս չիցէ՞ մարթ պատահել՝ յորմէ խիթասդ։ Ամենցէ՞ քո թերևս մնանաւոր յայտնութիւն վստահութեան առ յաստուծոյ. նա՝ ինքնին աստուած նախաձայնեաց զանստուգութիւնն, եթէ յորում ժամու ոչ ակն ունիցիս։ Օ՛ի՜ քեզ ուրեմն դանդաղել. թերևս քան զփրկութիւնդ առաւել կամիցիս զդատապարտութիւնդ։ Ամենայն՝ եթէ յանկարծ քո յանդիպս դեղ մահու արբեալ էր, թերևս դանդաղէիր վայրկեան մի առնուլ զանդեղեայն. կամ թէ էր

քէք քո ձախողակի ծովեալ և յանկարծ նաւակոծեալ՝ ծփայիր յանդունդս, ոչ դու զամենայն Ինչն Թափիլիր ունել ընթանել զառաջին տախտակն ըստ գեղեցիկ բախտիդ հանդիպեալ քեզ 'ի ծովուն. և զինչ, Թէրևս մահ մարմնոյդ գԺնդակաղոյն ևս իցէ քեզ քան զյաւիտենական դատապարտութիւն հոգւոյն և մարմնոյն։ Օ՞ի է քեզ ուրեմն յանսասոյդն ձգել ժամանակ, մինչդեռ սերկեւան ժամդ ստուգապէս 'ի ձեռին կայ։ Ամենայն վայրկեան նեռկայ՝ անկին է մարդոյ, որ զյեռասգայն չմարթի խոստանալ անձին։

Օ՞այս այսպէս անշուշտ խօսեսցի ընդ անձին այր մեղաւոր, այր խմասանախորհ՝ խելամուտ Ինմարտութեան անստուգութեանն՝ յորժամ և հանապազօրեայ փորձառութեամբն յայլս տեսցէ և կամ լուիցէ արդիւնացեալ զՆմարտութիւնն։ Օ՞այս և 'ի մէնջ, սիրելիք, այր այր զօրհանապազ ընդ անձին իւրում խմասանաբանեսցէ. մաղթեսցէ զլոյս Ճշորհացն, խոնարհեսցի առաջի հօր խոստովանութեան իւրոյ. ասասցէ ընդ երանելոյն Դաւթի. "Յացի՝ խոստովան եղէց ես ինձէն զանօրէնութիւնս իմ՝ տեառն"։ Եւ այնպէս սրբեալ ապաշխարութեամբ, արթնութեամբ այնուհետև դէտակն կայցի անստուգութեան ժամանակին. "Յրթուն կացէք, զի ոչ գիտէք, ոչ զօրն և ոչ զժամն"։

Իսկ արդ եթէ յանստուգութենէ ժամանակին այսչափ, քանիցն կարծեսցես՝ եթէ սրտաբերեսցուք մեք յանստուգութենէ վիճակին՝ յորում ընթանեսցէ զմեզ մահն։ Յաբէ, մեռայց ես արդեօք 'ի բարեբախտ ժամանն, եթէ 'ի տարաբախտիկ. արդեօք յաստուծոյ 'ի ձեռս, եթէ սատանային, աւանդեցիս զՀոգիս։ Ով խորք ծածկութեան խորհրդոյն Յաստուծոյ. ո՛վ անդունդք ահաւոր անստուգութեանս։ Յ.Լ քաջալերեցարուք, եղբարք. նախախնամութիւն աստուծոյ է փրկաւէտ անստուգութիւնս. քանզի կամի աստուած գործել մեզ զփրկութիւն 'ի մէջ յուսոյ և երկիւղի. "Յհիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք"։ Յ՞նստուգութիւնս այս հաստատեալ է 'ի մե-

1 Սղ. 31.

ծութեանն Աստուծոյ, և 'ի փոքրկութեան մարդոյ. զի որչափ և բարի իցես այժմ, ով մարդ, որչափ և արդար, որչափ և սուրբ, չնարեթիցես երբեք խոստանալ քեզ զանխոտոտութիւնն, և զցանկորդութիւնդ 'ի բարին. երեթեալ ուրեմն ապաւինիս դու յայնժամ միայն 'ի մեծութիւն շնորհացն, 'ի մեծութիւն ողորմութեանն Աստուծոյ, և գործես այնուհետև զփրկութիւն անձինդ. այս է ասացեալն. "Զանձանց փրկութիւն գործեցէք, սակայն ահիւ և դողութեամբ"։ Յոյս մարդոյ և բարութիւն նորա. ոչ յոյս միայնակ փրկեսցէ, և ոչ բարութիւն միայն զօրեսցէ. այլ թէ՝ "Յուսա 'ի տէր, և արա զբարի, և հովուեսցիս 'ի մեծութեան նորա"։ որպէս հրահանգեաց մարգարէն։

— Ոչ գիտեմ, մեռայց ես 'ի շնորհս, եթէ 'ի մեղս։

— Նշուշտ 'ի մեղս, եթէ անյոյս 'ի տեառնէ, և չարասցես զբարի։ Նշուշտ 'ի շնորհս, եթէ յուսացեալ յԱստուած, և արասցես զբարի. եթէ մարմնոյդ ընդդէմ կքրեսցիս, եթէ զտկարութիւն կամացդ զօրացուսցես, եթէ զհնացեալ սովորութիւնդ զանբարին հատցես։

— Ոչ գիտեմ, մեռայց 'ի շնորհս, եթէ 'ի մեղս։

— Նշուշտ 'ի շնորհս, եթէ միանգամ կանգնեալ ի պաշխարութեամբ, զգոյշ և արթուն լիցիս մինչև ի կոնալ 'ի փոխանակն, մի արհամարհել զնեռելոյն Աստուծոյ, զքաղցրութեամբն, զերկայնմտութեամբն. զանսուտն յուշ արարեալ պատգամ, եթէ "Ի վերայ երկուց և երից ամբարշտութեանցն լուեցից, ասէ Աստուած. թէպէտ 'ի չորրորդումն ոչ"։

Այլ սակայն մեծ և յոյժ մեծ է պարգև հանապազորդութեանն 'ի շնորհս յորմէ փրկութիւն. և արժանի անշուշտ լինիցիս այնմ, եթէ ստէպ եռանդեամբ խնդրեսցես զնոյն յԱստուծոյ. մեծապէս խոնարհութեան սրտի անհրաժեշտ պէտք են քեզ առ 'ի ընդունել զպարգև զայս յԱստուծոյ. խոնարհութեամբն միայն՝ զյարատևութիւն, և յարատևութեամբն միայն՝ զփրկութիւն։ Հաւասիկ մեզ տոհմականօք պատգաբերութիւնք 'ի խոկմանէ անստուգութեան վիճակին՝ յորում մեռանիցիմք։

Այս եթէ երրորդ անգամ և զմօտալուտ մերձաւո-

digitised by A.R.A.R.@

բութիւն մահուն խոկասցուք մեք, քանիցն շահեսցուք, սրբել անդէն զհոգիս մեր ահիւն Աստուծոյ, զհետ լինել եռանդեամբ գործոց բարութեան՝ յուշ արարեալ զսակաւօրեայ պանդխտութիւնս. յորում որչափ յաջողիցուք, այնչափ և օտարանամք 'ի տեառնէ և 'ի մերոց հայրենեաց։ Զեմ ես տեսանող՝ չեմ մարգարէ, ասել ձեզ մեռանել այսօր կամ վաղիւ կամ 'ի ժամուս. սակայն զառաքելականն համարձակաձայն կարող եմ բարբառել եթէ "Արդեալ է այսուհետև ժամանակս՝,,։

Մոռեալք անդր 'ի բաց վայր մի զպատահարս պէսպէս, զարկածս ձախողակս անկարծելիս, որ մահաւիթք ի ցեղս մեզ կամ այսօր կամ վաղիւ կամ 'ի պահուս գլխոսվին։ Զինք դուք 'ի կշիռ զամս պարարտութեան զհինօրեայ ծերունեացն հանդէպ հանդերձեալ ամաց յաւիտենականութեան, ոչ օր մի կամ ժամ մի և վայրկեան մի համարեսցին նոքա. նա անհամեմատք իսկ գլխովին առաջինքն առ վերջնովքդ։ Կամ թէ քո տասն ամք և քսան և երեսուն և յիսուն զոր կեցեալ է քո, ոչ իբրու օր մի երևեսցին քեզ այժմ. իսկ և 'ի վերջին շունչ հասեալ քո, իբրև փայլակն մի անցաւոր թռուցին քեզ ամենայն կեանք քո. "Զուրբք իմ որպէս հովանի անցին, ասասցես, և ես որպէս խոտ ցամաքեցայ,,։ Զի համարեսցիս դու զքեզ ինքնին ընդ երանելոյն Յովբայ, իբրև այն ինչ ծնեալ մանուկ՝ որ յարգանդէ մօրն 'ի գերեզման անդր յուղարկեսցի։ Զհասասիկ ձեզ 'ի սկզբունս Աշմարտութեանս մերոյ, ընդ կարձութեան կենացս և մօտալուտ մերձաւորութիւն մահու։ Աշգրտագոյնս ուրեմն ասաց աստուածայնն առաքեալն, եթէ "Ժամանակս կարձեալ է այսուհետև,,։

Իսկ զինչ ապա 'ի Աշմարտութենէ աստի, սիրելիք. լուարուք, զոր ինքնին տէրն բաղմադիմակս պարզեաց եղ առաջի յիւրում աւետարանին։ Զի Կարապետին իւրոյ ձայնիւն զտապարն առ արմին ծառոց դնէ 'ի հատանել զբուն մահկանացու կենաց ձերոց։ Հապա ուրեմն արարէք այսուհետև պտուղ արժանի ապաշխարութեան։ Զի տայ ձեզ իւրաքանչիւր 'ի ձեռս ըզ-

1 ա. կոր. 7.

քանքար ժամանակին՝ 'ի յարդել և 'ի շահեցուցանել, և ինքն գնայ. յարդեցէք ասէ զայդ, մինչև եկիցէ ես միւսանգամ. այլ թէ երբ, ոչ գիտեմ։ Եւ՝ զի նմանութեամբ փեսային և հարսանեաց ժիրս 'ն պատրաստս գործէ զմեզ. ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա։ Հապա ընդ խնամտուն կուսանացն պատրաստագոյն ձի թոմն այժմէն վառեսցին լապտերքը հոգւոց՝ գործովք բարութեան ընդունել զնա։ Եւ՝ դարձեալ զի 'ի տիւ ապագավախճան և 'ի լոյս անցաւոր նմանաբերեալ զկեանս մեր, "Գնացէք, ասէ, մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք, զի մի խաւար մահուն յանկարծ ձեզ հասցէ. զի որ գնայ 'ի տունջեան, ոչ գայթագղի, զի զլոյս աշխարհիս տեսանէ,,։ Եւ է դարձեալ՝ զի յանկարծակի անկմամբ աշտարակին Սելոամայ 'ի վերայ ութուտասանիցն, զմեռելոտ և զանակնուն զմահն նշանակէ, և 'ի զգաստութիւն պատրաստագոյնս յարդարէ. "Եթէ ոչ ապաշխարիցէք, ասէ, ամենեքին նոյնպէս կորնչիջիք,,։

Եւ այսպէս ապա յամենայնի զմերձաւորութիւն մահուն տայ մեզ տէրն զօրհանապազ յուշի ունել. և միշտ արթունք՝ ժամանակեայ կենօքս զանժամանակն զբռամբ ածել։ Զանգի մարդ որ հաւատայ եթէ յաւիտենականութիւն անվախճան նմա սպասեալ մնայ, կամ երանաւէտն, կամ որ լինի է թշուառութեամբ, զիաղդ այնպիսին 'ի վերջին անմտայ ոչ իցէ, եթէ ըղսակաւօրեայ կեանսն 'ի տուրեաւիկ վաճառ չհանցէ 'ի գնել կեանս իմն անանց և մշտնջենաւոր։

Այլ արդ 'ի մէնջ ո՞ իցէ, եղբարք, որ զհնմարտութիւն արդեամբք յանձն իւր յանդուցեալ ընդ սատուածայնոյն Պաւղոսի խնդագլխս համարձակեսցի զուգաձայնել, եթէ "Ես այսուհետև նուիրեալ եմ, և ժամանակ դարձի իմոյ հասեալ է. զբարուրս սատերազմն պատարագմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի. այսուհետև կայ և մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ տէր արդարն դատաւոր,,։ Ո՞, ասեմ, 'ի մէնջ համարձակեսցի։ Սակայն և մեք ինքնին անշուշտ համարձակեսցուք, սիրելիք, զնոյն բարբառել ընդ Պաւղոսի, եթէ որպէս նա Քրիստոսի, նոյնպէս և մեք նմանողք եղիցուք

digitised by A.R.A.R.@

Պաւղոսի. ըստ որում զանձն 'ի նեղքս բերեալ խրա-
խուսէ զմեզ։

Լեթէ ըստ նորա խրատուն, "Մինչդեռ ժամանա-
կըս 'ի ձեռս է, գործեսցուք զբարիս,,. Մինչդեռ կեամ-
քըս, մեռցուք աշխարհի, մեռցուք ամբարտաւանու-
թեան նորա, մեռցուք ցանկութեանց մարմնոյ. ընդ
Պաւղոսի "Յամենայն ժամ զմահն Յիսուսի 'ի մար-
մինս մեր կրելով,,։ Մինչդեռ կեամքս, մի ապախտ
զյարդ ժամանակի կենացս այսորիկ արասցուք, այլ յան-
ցաւորաց աստի զանանցականսն ապաղաբերեսցուք։ Ա-
տուածային հոգւոյն Պաւղոսի լուիցուք խրատուցն.
"Ի փոյթ, ասէ, մի վհերոտք,,. 'ի սէրն Աստուծոյ,
ասէ, 'ի սէրն ընկերին, յողորմութիւնս աղքատաց, 'ի
լրումն պարտուց իւրաքանչիւր առանձին, ժիրք և գո-
տեպինդք՝ 'ի փոյթն մի վհերոտք։ "Հոգւով եռա-
ցէք, ասէ, տեառն ծառայեցէք,,. յամենայն գնացս
ձեր, ասէ, ցուցէք եթէ զմեծութիւն Ճանաչէք զտեառն
որում ծառայէքն, գործք ձեր բարիք՝ թէպէտ և դուշ-
նաքեայք ևս՝ եռանդեամբ փառացն նորա մեծասցին.
և 'ի նուէր սիրոյ սրտից ձերոց հոտոտեսցի Աստուած 'ի
հոտ անուշից։ "Յուսով, ասէ, խնդացէք. նեղու-
թեան համբերեցէք,,. մի ընկալջիք, ասէ, երբէք
յանձինս ձեր մխիթարութիւն, որ ոչ ծնունդն իցէ
քրիստոնէական յուսոյն ձերոյ. և ժամանակեայ վրշ-
տացդ քաջաբար համբերեցէք վասն յուսոյն այնորիկ.
և զգեղեցիկ զայն մեծանձնութիւն՝ որ 'ի հաւատոյ
հանդերձելոյ յաւիտենականութեանն, յայտ յանդի-
մանութեամբ ցուցէք թուլահաւատ և անհաւատ մարդ-
կանն։ "Աղօթից, ասէ, ստէպ կացէք. 'ի պէտս սրբոյ
հաղորդեցարուք,,. Երմեռանդն աղօթք և աս-
տուածային հոգեշահ մտածութիւնք, ասէ, յաւուրն
մի վրիպեսցին 'ի ձէնջ. սակայն և մի այդոքիկ խոչ ընդ
ոտն ինչ լինիցին 'ի պէտս կարեաց քրիստոնէական սի-
րոյն. այլ ընկերին պէտք և կարօտութիւնք իբրև ըզ-
ձերն համարեսցին ձեզ։

"Զբարիս գործեցէք, ասէ, մի միայն առաջի Աս-
տուծոյ, այլ և առաջի ամենայն մարդկան,,։ Զամ-
նայն պաշտամունս, ասէ, և զամենայն գործս զսակաւ-
օրեայ պանդխտութեան ձերոյ աստէն այնպէս իմն

digitised by A.R.A.R.@

յարդարեցէք, զի հաճոյք իցեն Աստուծոյ, և հաճոյք մարդկան 'ի շինութիւն. զի ձեզ ամենեցունս և զեղունս գործեսցեն սատէն զգանձս արդեանց, և անդէն զվարձուցն հատուցումն։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ Գ.

ՓԱԽՈՒՍՏ ՅԱՌԹԻՑ ՄԵՂԱՑ

« Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ 'ի հոգւոյն փորձիլ 'ի սատանայէ ,, . Մտթ . Դ .

Բաբէ նորասքանչ օրինակին պատերազմի . յաղթել՝ փախչելով, և յաղթիլ՝ դիմագրաւ լինելով։ Մարտ հանապազօրեայ է կեանքս մեր , գիտեմք սանշուշտ . « Ոչ սպաքէն պատերազմ է կեանք մարդոյ 'ի վերայ երկրի ,, ։ Գիտեմք և զայն , եթէ զինուորագրութիւն ընդ դրօշակաւ խաչելոյն , է դիմագրաւութիւն 'ի վտանգ ընդ բազմահոյլս թշնամեաց ։ Սակայն զինուորութեան արհեստ քրիստոսեան՝ քանիցս ընդհատ իցէ 'ի զինուորականէն աշխարհի ։ Սորա չիք այլ առաւել նշաւակ կիրք և գործ , քան զթիկնադարձոյցն փախուստ . վասն սորա կապտին զինուորական կամարք փառաց , և զինուորաց փախստէից խարանք հարկանին դրոշմաւորք անջնջելի վատահամբաւութեամբ ։ Բայց ով զարմանացն, չիք այլ փառաւորագոյն հանդէս քրիստոսեան զինուորութեան քան զփախուստն գլխովին . վասն սորա 'ի նուագս հրաշալիս առնուն յաղթանակք նահատակաց եկեղեցւոյ . վասն սորա և մրցանակ և քրաբիոն շնորհին նոցա 'ի զարդ ։ Այս զի մի ոք երբեք ամենի համարեսցի զփախուստս զայս , ինքնին զօրագլուխն հաւատոյ մերոյ տայ մեզ 'ի բնաբանիս զաս-

digitised by A.R.A.R.@

տուաձայնն օրինակ՝ լի խորհրդով։ Յորժամ հան-
դերձեալ էր մարտ ընդ թշնամւոյն գնել, խնդրէ զինչ-
տեղի անապատ. և իբրու վարեալ վտարեալ խոյս տայ
յամայիս. "Ապրեցաս, ասէ, Յիսուս'ի հոգւոյն յա-
նապատ"։ Ոկամի ընդ հոյլս բազմաց խառնամուխ 'ի
մարտն լինել, այլ ընդ միում միայնոյ. "Ապրեցաս,
ասէ, փորձիլ'ի սատանայէ"։ Իսկ արդ զիարդ ոչ յա-
պուշ կրթեսցին միտք, յորժամ տէրն անձառելին
քաջաղէն զօրութեամբն ամուր ասպաւնի իւր խնդրէ
զանապատ 'ի փորձութեանն և միայնակ 'ի դիմի հար-
կանի թշնամւոյն. իսկ մարդ ապիկար բնութեամբ վայ-
բասպար զինու ժտի կռուել, ուր. 'ի տունս բազմամ
բոխս, 'ի համախմբութիւնս կենակից որերոյն, 'ի ցայ-
գանուագ ակումբս գիշերականս, 'ի պարս կայթից կա-
քաւչաց. և անդանօր ձայն կարդայ ասպարիսի ոչ միայ,
այլ բազմահոյլ առթից պատերազմաց'ի կռիւ։ Անիծն
իցէ յանդգնութիւնն։

Այլ բացէք միանգամ զաչս՝ որ կամաւոր կուրա-
ցեալդ էք. և զգերագոյն զայն առած զփրկութեան
ուսարուք ինքնին յօրինակէ փրկչին։ Օ՜ինչ իցէ ա-
ռաձն. այն "Լթէ'ի հոգևոր պատերազմին՝ որ առա-
ւել բացագոյնս փախչի, առաւել'ի յաղթանակն մեր-
ձի. և որ առաւել միայնութիւն խնդրէ, առաւել սուրբ
է"։ Ո՞չ ահա դուք ինքնին զօրհանապազ տրտունջ'ի
բերանս քանքարտաչք յաղագս բազմահոյլ փորձու-
թեանց և առթից. զի և վայրիկ մի մեզ, ասէք, ոգի
առնուլ չիք հնար։ — Ա՜խ, և ընդէր ապա դուք
անձամբք զանձինս փորձէք. և զօր ամենայն անձնա-
գրաւ այնչափ առթից մեղաց ընծայէք։ Ո՞չ դուք ինքնին
հնարիք տածէք ձեզ անդուլ զոլոզս, ընկերշակու-
թիւնս, բարեկամութիւնս, սիրելութիւնս, տուրևառս
թղթոց անչափս, զբօսանս խաղալեաց, ակումբս խեղ-
կատակաց, աղակատանս և ժողովս գինեբբուաց։ Այ-
զիարդ երբէք, ասացէք ինձ, զիարդ հնար իցէ 'ի մէջ
այնչափ վտանգաց հաստատուն զոտս ունել. և իբր
արդեօք յայնչափ գայթակղութեանց միջի կայցէ ինչ
երբէք աներկևանութիւն։

Ունկն դիք ինձ, աղաչեմ, վայրիկ մի. և ես առ'ի
սանձ փրկաւէտ արձակերասան ազատութեանն և 'ի

digitised by A.R.A.R.@

լուսաւորութիւն կամաւոր կուրութեան, յայտ յան-
դիմանութեամբ ցուցից ձեզ, եթէ Աստուածակազմն
'ի վտանգս փորձութեանց է դիմադրաւիչն առաթից։
Այս եղիցի մեզ առաջին գլուխ քարոզին։ Այլ թէ
Օրաւորագոյն դարման ընդդէմ փորձութեանց է
փախուստն 'ի յառաթից. և այս եղիցի երկրորդն։
Զանգի անշուշտ, որ ոչն փախչի, յաղթի. և որ փախ-
չի՝ յաղթէ։

ՄԱՄՆ Ա.

Բազմ անսուտ է վարդապետացն աստուածաբանից
առ հասարակ, եթէ առ յաղթական հանդիսանալ 'ի փոր-
ձութիւնս մեծամեծս՝ պէտք անհրաժեշտ են առանձին
օգնականութեան հնարքացն Աստուծոյ։ "Ընձնիշխան
ազատութիւնն, ասէն, մերկ յառանձին հնարքացն զօ-
րութենէ, անշուշտ 'ի փորձութիւնս ծանուցս նկուն
եղեալ պարտեսցի.,։ Այլ է մեզ զայս ճշդրտել հաւաս-
տի նաև 'ի բարոյական խնամատարութեան վարժից, որ
ասեն՝ Լթէ ամենայն առարկայ յորժամ դէմ յանդի-
մանն տեսանի, մեծապէս է զօրութիւն նորա 'ի շարժել
զկամն, քան յորժամ բացական իցէ։ Բազաւէ շարժէ
կենդանագիր պատկերաւն, զոր նոքա "Տիպ սեպհա-
կան.,, կոչեն, քան եկամուտ գունովն՝ զոր "Տիպ ա-
ծանցական.,, անուանեն։ Զհա ինքնին և սատանայ 'ի
շարժել փորձութեամբ զանէն, ոչ եթէ յաշխարհա-
գրական ինչ պիտակի գծագրեալ զաշխարհ ցուցանէր,
այլ 'ի բարձուն լերինն հանդէպ աչացն զնոցն յերևան
ածէր. "Այցոյց նմա, ասէ, զամենայն թագաւորու-
թիւնս աշխարհի 'ի վայրկեան ժամանակի.,։

Այլ զինչ այլ բազմաց ցուցակութեանց պէտք իցեն
սիրելիք. այլ այլ 'ի ձէնջ անձամբ անձին զփորձն առ-
նու՝ յորժամ ինքն 'ի ծարաւոյն պապակէ և կամ սա-
վատանջ քաղցնու, առաւել վառի փափաք ծարաւոյն
և առաւել զրգռի ախորժակ ուտելոյն՝ 'ի տեսանել աղ-
բիւր կենդանի ջրոյ և կամ սեղան զարդարեալ փափուկ
կերակրովք՝ այն ինչ ջերաջերմ շոգիքն անոյշք արձա-

digitised by A.R.A.R.@

կեսցին 'ի համադամոցն, քան եթէ յոլովամ զայնոսիկ յանկն արկանիցէ նկարակերտեալ գունով 'ի քարտէ կամ 'ի կտաւի։ Վասնզի հանդիսական առարկայքն սեպհական է յաչշտակել զզգայութիւնն, կախարդել զմիտս, և 'ի քարշ ձգել զկամն։

Այլ արդ 'ի վերայ կրկին հիմանցս, աստուածաբանութեան ասեմ և խնամատարութեան, 'ի քնին առցուք զնաւս հանձարով բանին։ Այնթէ հոգիս մեր այս այնչափ 'ի տկարութեան կայ, զի յընդառաջել ծանուցեալ փորձութեան՝ չունելով զառանձին օգնականութիւնն Աստուծոյ, անկանի անշուշտ՝ քանզի վատեալ է, քանզի հիւանդ է. քաջ միտ դիր աղաչեմ. հիւանդ է՝ խոցեալ անդատին 'ի սկզբնական մեղացն, որ զլոյս բանին մեծացոյց, որ 'ի խնամն չարին զկամն յանկոյց և զկիրս մարդոյն այնչափ ինն յապատամբութիւն զբարդուեցոյց, մինչ զի յընդառաջել մեծի փորձութեան նաև առանց հանդիսական պատկերին նաև առանց մինչ առթի՝ նա յերերի կայ. "Տեսանես աւադիկ, տեսանես, ասէր մեծն Աստուածաբան, զինչ 'ի նեբրս անդ մնաւոր 'ի քեզ, գրէն, և ընդդէմ քո..."։

Այլ արդ եթէ 'ի նեբրս անդ 'ի մեզ ունիմք՝ որ ընդ մեզ մնար եղեալ կուսի, թէպէտ և ոք յանապատ յանայի գնացեալ մենացեալ կայցէ, չէ անվտանգ 'ի փորձութեանց և չկայ յապահովի. զինչ ապա ասել պարտ իցէ զմարդոյ՝ որ այնպէս ապիկար և հիւանդ և որ արդէն բեռինս ծանունս զանցելոց մեղացն զիւրն բարձեալ կրիցէ և գայթ 'ի գայթն յառին կայցէ, առատի վատութիւն ուժոյ և անտուստ բռնութիւն կրիցէ. 'ի վերայ այսր ամենայնի նաև յառիթս անդր դիմանգրաւեսցէ զանձն, զինչ պարտ իցէ, աղէ ասա, զինչ պարտ իցէ ասել վասն մարդոյն այսորիկ։ Ոչ ահա գահավէժ խարդաւանել ակներև կայ առաջի։ Այլ արդ տեսէք, տեսարք իմ, եթէ ճշմարիտ իցէ զոր ունիմն ցուցանել ձեզ այսօր, եթէ դժնդակագոյնն 'ի վտանգս փորձութեանց, նա մնան լինելն յամենայն իսկ 'ի փորձութիւնս, է դիմադրաւելն առթից. մինչ զի որ ոչն փախչի, անշուշտ անկանի։

Այլ ես նախ առաջին կամիմ գիտել, յինչ արդեօք ապատան դիմադրաւեն անհանձարաբար զանձինս առ-

digitised by A.R.A.R.@

թիս մեղաց, և 'ի մեռ զնեն ոչ մեղանչել. զի գիտաս-
ցուք միանգամ, եթէ արդեօք հաստատուն ինչ իցէ ա-
պաստանդ, եթէ գլխովին յանձնապատանութիւն
յանդուգն իցէ բանդ։

Ինձ թուի, եթէ յերիս յայտսիկ ապաստանեալ
կան, այլ երեքին միանգամայն սուտք և խաբուսիկք։
Հանարին նախ եթէ ոյժ այնչափ չունիցի առիթն առ 'ի
խարդաւանել զնոսա։ Երկրորդ անգամ, եթէ արու-
թիւն բաւական ունիցին նոքա առ 'ի դիմի հարկանել։
Եւ երրորդ եթէ Աստուած ինքնին հովանի լիցի նոցա
ընդհօք իւրովք։ Բաբէ, տարապայման վստահին յա-
ռիթն. տարապայման վստահին յանձինս. տարապայ-
ման վստահին յԱստուած։

Եթէ զառիթն ասիցես, ո՞ ոչ գիտէ եթէ սա ինքն
է ժայռն ահեղ և անպարտելի, ուր բազմութիւք յա-
բանց քաջաց և 'ի սրբոց ընդհարեալք նաւակոծեցան.
յաւիտենից արք անուանիք՝ նմանեալք հաստահարուստ
մայրից Իբանանու, որք և ընդդէմ ահագին մրրկաց
դիւաշունչ փոթռութեանց բնաւորեալքն իսկ էին մարտ
դնել կռուել, և դիմադրաւեալք միանգամ յառիթս
տապաստ անկան։

"Բանին ոմանս, որքայր երբեմն մեծն Աղոստի-
նոս, քանին ոմանս իմովք իսկ աչօք տեսի, որ կործան
անկան յառիթից անտի, այն՝ որք հովիւք քաջք էին
ժողովրդոց, որ վարժապետք էին աշխարհի, որ նա-
խատիպ օրինակք էին սրբութեան. զորոց անկմանէն
երբէք ոչինչ առաւել կասկածէի, քան զԱմբրոսիոսին
կամ զՀերոնիմոսին. և սակայն անկան հիքաբար։"

Բանզի առիթք կիրս իմն հեշտակաս յանդիման
ասնեն մարդոյն, և այնպէս իմն կախարդեն զզգայու-
թիւնս, զի և զբանականութիւնն ինքնին զառաձա-
նեալ, դիւրեաւ այնուհետև գերեն զկամն և խարդա-
ւանեն 'ի չարիս։ Հաւասիկ քեզ խաբկանքն՝ որոց
միանգամ հանարին յանձինս, եթէ մարթ իցէ 'ի հեշ-
տական կրից անտի առթիցն պտուղ միայն քաղել զան-
մեղանչական իմն բարեկրութեան առանց հակամիտե-
լոյ 'ի չարն։

Երթայց, ասէ մի ոմն 'ի ձէնջ, յարուցեալ երթայց
'ի տեսարանն յայն թատերաց՝ թէպէտ և ոչ բարեհամ

digitised by A.R.A.R.@

բաւական. քան զ ոչ վասն չարի, այլ 'ի միտ առնուլ զգիւտ հանձարոյ քերթուածոյն, զհնարտար շարժուածս զկենդանատիպ դերասանիցն, զքաղցրութիւն պարանոցիկ երգոցն։ Այլ ընթերցայց, ասէ մի ոմն 'ի ձէնջ, զայն ինչ զիրս՝ թէպէտ և ոչ ողջամիտ, սակայն զհամբաւական քաղաքագիտի առն. զայն ինչ մատեան՝ թէպէտ և զժանտ չարախառի և զանկրօնի, այլ զդիտականի առն. և զի է ինձ չառնուլ չընթեռնուլ և զվէպս զառասպելարկութիւն այնոցիկ։ Այս զայս ամենայն, քան զ վասն չարի, այլ 'ի վարժել և ներկուռ լինել ազնուութեան խնամոց մանանոցդրին, վսեմութեան խորհրդոցն, հնարտարախօսութեան բարբառոցն և մաքրութեան ոճոցն և յստակութեան լեզուին։ Յարուցեալ և այլ ոք 'ի ձէնջ, երթայց, ասէ, յակումբ անդր կենաց կիւց կենցաղասէր մարդկանն, իբրև բարեմարդիկ քաղաքավարեցայց անդանօր աղատօրէն անխտիր. քան զ վասն չարի. այլ զերեկոյին զժամ անցուցանել 'ի սիրուութիւնս անմեղանչականս և 'ի սիրելութիւնս պղատանականս։ . . . .

Կարձեցէք զլեզուս, աղաչեմ, կարձեցէք միանգամ. քանզի ոչ խնամանաբանել ինչ է ձերդ, այլ բանդադուշել. չէ վատահութիւն բանդ, այլ յանձնապատասխանութիւն յանդուգն. վասն որոյ և խարդաւանեսջիք 'ի չարն զոր ժխտէք՝ կամաւ խաբեալք զանձինս, խարդաւանեսջիք անշուշտ. որովհետև զժուարինս յոյժ խնդրեալք յանձնապատասխանութեան ձերում, այս է՝ անքաջեալ զմեզս 'ի կամաւոր առթէ մեղայն։ Բանզի խնդրեալք զեզերիլ բերկրիլ ազատօրէն անխտիր կամ տեսութեամբ կամ զրուցատրութեամբք կամ ընթերցանութեամբ։

Այլ անսա, հայր, վայրիկ մի. ընթերցանութեան գրոցն այնմիկ միտ դնեմ և տեսարանին կամ 'ի գնին՝ ոչ յայլ ինչ պատճառս, այլ զի միայն հնարակ մի տայ մնացս, հնարակ մի և աւայս տեսութեան։ — Բաջ է. սակայն և ոչ նախազգայց լինիս դու 'ի բանիդ շղթայ շար կարգի կոծանմանդ, ուր առեալ ձգէ զքեզ ընթերցանութիւնդ և կամ տեսութիւնդ այդ. քանզի դոցա, քաջ միտ դիր, սովորաբար յաջորդէ խորհուրդ մնացն, խորհրդոցն՝ բերկրութիւն. բերկրութեանն՝

digitised by A.R.A.R.@

հաւանութիւն. հաւանութեանն՝ գործադրութիւն. գործադրութեանն՝ սովորութիւն. սովորութեանն՝ հարկ բարոյական. բարոյական հարկին՝ անկարութիւն. անկարութեանն՝ յանցանք, յուսահատութիւն և դատապարտութիւն։

Այլ աւադիկ որ 'ի կենցաղասէր որերոյն անչուշտ ընդ միտս իւր ընդդէմ մեր բան տայցէ. — Օ՜ինչ այն իցէ, ասասցէ, սերկեւանդ քարոզ, որ ողջոյն զմեզ խուսվեալ ամբոխէ, և զմիտս մեր վայրապար խղճահարութեամբք լնու։ Օ՜ինչ երկիւղ իցէ, առիմ այդչափ արհաւիրքդ։ Պարտ ուրեմն իցէ մեզ ամենեցուն՝ կամ երթալ փակիլ ուրեք 'ի մենաստանի և անապատատուն վարել կեանս, կամ թէ մնալ իսկ 'ի սպասս ողջոյն հրաժարական տալ աշխարհութեան երկնից։ Այանպի եթէ այնչափ իցէ չարութիւն առթիցն՝ յուսահատութիւն ուրեմն տիրեաց աւադիկ՝ որոց կեանքս յաշխարհի. և որ առաքինիս և զգուշաւորս խնդրէիր զմեզ, յուսաբեկս գործեցեր։ Ոչ՝ Ճշմարիտ, եթէ այնչափ չար բռնեալ կայցէ յառիթս, որչափ և ասեն։ Շատ է դիմադրաւել առթից առողջ խորհրդով՝ տեղի՝ չտալ հրապուրիչ նոցա. քանզի և ոյժ և զօրութիւն բաւական չարչարսի մեզ ընդոստնել զայնոսիկ. ուստի և ձախողակի անուամբ յանձնապատանութիւն կոչեն բարոյիչք զայն ինչ, որ արիական քաջութիւն է ոգւոյն։

Այասիկ մեզ դրութիւնդ երկրորդ ոչ ինչ նուազ սուտ քան զառաջինն։ Այլ՝ չիցէ Ճշմարիտ, եթէ այնչափ չար բռնեալ կայցէ յառիթսն, որչափ և ասեն։ Լոկ դուք որոմ հաստատութեամբ 'ի մէջ բերէք զառաջարկութիւնդ զայդ։ Այլ զինչ ապա. զօրութիւն բաւական հանարիցիք ունել ձեզ 'ի դիմի հարկանելոյ. ոչ այդ իցէ ապաստանն ձեր։ Այլ ինձ վայր մի ասացէք աղաչեմ. իցէն ձեր կիրքդ այնչափ անձնակոծեալք և նկուանք, որպէս յոգնաթիւ արանց քաջաց որոց. և սակայն յահի մեծի կեցին նոքա հանապազ. և սակայն թողեալ զսպասն՝ յանապատ յանցի գնացեալ մեկնեցան, 'ի գերծ վայրս և յանմարդիս և 'ի գերեզմանս. նաև զայն շատ Ճանարեալ յասպահովի կալ, կեանս վարեցին անկենդանս, տրտմաղգեացք զօրհանապազ, մնախորհք 'ի խորհանս, կանաւորապէս վարեալք ի-

digitised by A.R.A.R.@

բրև աղբ անկածք, զրպլեակք զանձամբ, խաշոբակերք, վշտամբերք 'ի սրտու թիւնս և 'ի չարչարանս։

Հիացեալ իմն եմ, քանիցս անգամ յուշ ածեմ ես զպատասխանին՝ զոր մեծն Հերոնիմոս ետ Ալիկիանոսի, որ հարցանէր. Օ՛ի է քեզ, մեծդ, երկիւղ այդ և ուստի. և առիմ զոմ ոչ 'ի բազարս, այլ յանապատս յանոյշ գնացեալ նստիս։ Նա պատասխանի երանելին. Փոխցէս ուստի իսկ երկիւղն. երկնչիմ 'ի բազում վանդագաղ՝ յորոց միջի թաղթափեալ է քո. երկնչիմ 'ի յաստուր բանակուութեանդ, երկնչիմ 'ի զշուտ և յայրատս հայեցուածոցն։ Նա իբրու թէ, ոչ շատ ինչ տակաւին ատաց և զկիրսն առակեաց, ոչ ամենի հանդերձեալ յա ւելու 'ի վերայ յայտնաբարբառ և զայն ինչ, որ է թէ չէր 'ի բերանոց երեալ երանելոյն, և ես ոչինչ ժամի յառաջ բերել. Նրկնչիմ, ասէ, է թէ ընդառաջ ինձ հրապարակագոյժք ելցեն կանայք, հրապարակագոյժ շունք. "Նրկնչիմ, մի յափշտակեսցէ զիս ամն ենոջ պոռնիկ.,,։

Իբրև անդուստ Ալիկիանոսս զիւր բանն պնդէր, է թէ թիկնադարձոյց փախուստ է այդ վատի առն, և ոչ յաղթութիւն դիմադրաւ նահատակի. կրկնեաց երանելին. "Նա զինչ ապա. թող այդպէս եղիցի. ինձ զիմոյ անձին զանկակիոյ վատութիւն արժան է դատանել. չէր իմ վստահութիւն յառնել զօտեկոխ ընդ յաղթահարուստ թշնամեաց, և այնչափ կրիցս զդէմ ունելոյ չէր իմ զօրութիւն.,,։

Նա արդ դուք զինչ ասէք. իցէն այդոքիկ խղճահարութիւնք վայրապարք, է թէ ճշմարտութիւնք անխաբք։ Ա՝եծն այն Հերոնիմոս, խաչակիր անձն, զօր ամենայն մնչեալն մարմին 'ի խոտամբերութեանց, 'ի վերայ այսր՝ խոտոված լինի է թէ չէր նորա զօրութիւն զդէմ ունելոյ նաև յեղակարծ իմն և ակամայացեալ ընդառաջութեան վանդի։ Ասկ դուք կիրս ունելով 'ի ձեզ այնչափ կենդանիս, դուք զգայարանս այնչափ արձակերասանս, դուք մարմին այնչափ փափկակեաց, և հոգի քնքուշ և մեղկաղէտ, և խնդրեք ինձ հաւատարմացուցանել, է թէ զգայակոյ ձեր այնչափ իմն նուաճեալ 'ի նեբբոյ կայցէ բանականին, զի և մարթ իցէ ձեզ ամենայն ազատութեամբ յառիլ դիտել յա-

digitised by A.R.A.R.@

ուրկայսդ յայդոսիկ՝ առանց վառելոյ 'ի ցանկութիւնս. ըսել զպագշտութեան խօսան, առանց զգալոյ զիսայթսն. թարթափիլ ընդ այնմ՝ և 'ի սէրն հարկանիլ՝ առանց մեռաս ինչ տալոյ 'ի ձեզ վատթար խորհրդոց. յաձախել ստէպ ընտանութեամբ 'ի տունն յայն՝ առանց անցանելոյ ըստ սահմանն բարեկամութեան. զայն ինչ գիրս առնուլ վերծանել հեռաքննաբար զթուլահաւատ քրիստոնէի, զանկրօնիցն, զմարմնապաշտիցն, զչարափառացն, և ինչ մի չառնուլ 'ի ձեզ 'ի սերմանացն ժանտութեան, և բնաւ իսկ անարատ ունել զկամն և ողջախոհութիւդ զմիտն։ Պարձեալ՝ ունել միշտ 'ի տան հանդէպ աչաց ձերոց նկարս պատկերաց պագշոտս և լկտիս, և իբրու թէ անասունք իսկբ դուք անզգայք 'ի տեսութենէն՝ ոչինչ ամենևին զգածիլ։

Պանիծօն իսկ խօսութիւնն. քանի կուրութիւն յանձնապատանութեանն։ Նմանիլ նորատաբանչ բանին, զոչէր աստուածայինն Պսկերբերան, բան, որ ամենայն ապշութեան արժանի է։ Օ ինչ ընդ հատ իսկ ասէին. ընթացայց 'ի վերայ ջրոցդ և ոչ ընկղայց. մօտ կացիս առ հրոմն, և ոչ ջերայց. քայլեցիս 'ի վերայ կայծականց բորբոքելոց և ոչ այրեցայց. "Արիթէ ծրարիցն՝ որ հուր 'ի գոգ իւր, և զհանդերձն ոչ այրիցն,, ։ "Տեսի, ասէ խնամատանն, զյանդգնութիւն սրտից նոցա. տեսի զի չար է. և ահա գիտացի զկործանումն նոցա,, ։

— Պակայն անասա, ո՛ Հայր. չէն այնպէս իրքդ, չէն այնպէս և առ մեզ. ձեզ ինքնին վարդապետացդ՝ որ առաւել մեծացեալդ էք յաշխարհէ, իցեն եւ բազումք՝ որ յարաժամ փակեալք իցեն 'ի մեծաստանս, անտեսք և անլուրք յամենայնէն, ձեզ այնուհետև ամենայն տեսիլ որ երևութանայ՝ սատակապէս տարանայ, և ամենայն ստուերք անկայուն՝ մարմին ձևանայ. և ամենայն խայթ փոքրիկ՝ վերս գործէ. իսկ առ մեզ՝ որ զօր ամենայն թարթափիմք յաշխարհի և լսեմք և տեսանեմք, կոշտացեալ բրատացեալ է ամենայնն. և ոչ խուն մի, հաւատս Հայր, զգացմանք մեր։

Խնդակիս ուրեմն եմ ձեզ մեծապէս.... Ա. Ա. թերևս իսկ արդեօք նաև վասն ձեր հրեշտակ ունի իջեալ յերկնից 'ի յերկիր, և զմեջս ձեր սիրեալ իսկ.

digitised by A.R.A.R.@

և զմիջս ձեր շուրջ պատեալ իսկ ձիւնափայլ կանգնաւն անմեղութեան, իբրու զմանիւաղ հրեշտակին Աստուծոյ։ Կամ թէ իսկ ձեր երբեք սպրասուք փշովք զցանկականդ խոցոտեալ, որպէս արարին ծառայքն Աստուծոյ։ Կամ թէ զտասն նոցա և զվեցտասն 'ի մէջ ձիւնախառնեալ սառնամանեացն շիջուցեալ, բան որում և ասէր 'ի սրբոյ։ Զի տակաւն նոցա յարաժամ յահի կացին և յերկիւղի. իսկ դուք ելերկնչիք ինչ։

— Այո, մեք ոչ այնչափ ինչ ելերկնչիմք. զի և ոչ ընդ այնչափ խիստ Ճնոտպարհ է ուղին մեր. և ոչ այնչափ ինչ չարակրութեամբ կամիմք գնալ ընդ անձինս մեր. քանզի և բազում անգամ տարապայման ըմբռնումն է մնաց, որ երևեցուցանէ զչարն անդ՝ ուր չիք ինչ չար։ "Զնդ երկիցեն երկիւղ, ուր չիք երկիւղ..։ — Այաջ է. մի այդչափ ուրեմն չարակրութեամբ վարեսջիք ընդ անձինս ձեր։ Այլ զիարդ հնար իցէ, առայսդ ինձ վայր մի, այդչափ բարեկեցիկս գնալ ընդ մարմնոյ ձերում, ուստեղ միշտ կշտամբիմք, ընդեղ միշտ ցյաղ և առաւել քան զպէտս, 'ի մահիճս ընկողմանիլ 'ի փափուկս և յակուսիս փետրալիցս. և ապա առանց գնելոյ ոչ սանձս լեզուի, ոչ արգելանս յաչս, ոչ շարաւանդս յոտս՝ գնալ, խօսել, տեսանել, ըմբռել անխտիր և վարել ամենայն ազատութեամբ։ Այլ 'ի վերայ այսր ամենայնի միշտ առյդանմիմք, քաջադարմանք, բարեհանդերձք, երթալ զիմանդրաւիլ յատիթս մեղաց, յաճախել յաշխարհաւանդ կապելանոցս, զծաղու գալ, 'ի սէրն հարկանիլ, զբօանալ՝ որ 'ի նմանէ հանդուցեալ է՝ ընդ սատանայի, այլովքն հանդերձ։ Զ Խնդ հնար իցէ, ասեմ, զայս ամենայն առնել և միանգամայն ընալ՝ ասեմ զկատարելութիւն սրբոյն՝ այլ ընալ զբրիստոնէութեան զպարտսն և 'ի մէջ առեալ իցս անկարծան մնալ։

Այթէ միով միայն ակնարկութեամբն մեծն այն սուրբ անկաւ Դաւիթ, եթէ անզգուշութեամբն յաւթից՝ մեծն այն խնամատուն անկաւ Սողոմոն, եթէ պեան այն առաքելոյ անկաւ Պետրոս. որ խոչընդոտն այլ չունէր՝ բայց զվայրապարն զայն ակնածութիւն մարդկային։ Այլ զիարդ մեք չերկիցուք, տիարքս, ապիկարքս, հիւանդքս։ Մինչև ցնրբ իցէ բանդագուշելդ իբրև զանխորհուրդս. և հաստատմունցուցանել և կամիք զմեզ,

digitised by A.R.A.R.@

և ասէք եթէ բարիոք կամք և չգգաւք ինչ։ Ողգայք ինչ արդեօք, եթէ չնանաչէք զչարն, և տապացեալ զնիք ծածուկ ջերմանմէն։ Յորչափ 'ի անկակից հիւանդութենէս, ասէր զանկարծելին բան ումն 'ի սրբոց, զորչափ տուայտեալ է բնութիւնս, և զորչափ այսպէս վաստեալ է մեր յուժոյ, "Զան զմեռեալս յարուցանելոյ մեծագոյն ևս հրաշագործութեան պէտք են, երթալ միով 'ի մէջ բուռն առթիւ և անկործան մնալ։" Զի եթէ մեռեալ իցէ մարմինն. միթէ աշխարհ չիցէ 'ի միջի, միթէ 'ի քուն կացցէ սատանայ։

Զի զիարդ իցէ ձեզ զիտել, որպէս ասէք, և չնանաչել զչափ և զժամանակ վտանգին ձերոյ յառիթս, և թէ՝ ձեզ զօրութիւն չարակասի առ 'ի զդէմ ունելոյ։ Ողիք ձեզ 'ի չքմեղս լինել և գունագեղել զանհանձար խորհուրդդ. քանզի յորժամ դիմագրաւ ընծայէք ըզձեզ առթին, կամ նախատես էք վտանգին մեղանչելոյ, կամ ոչ։ Զթէ նախատես չէք, ձեր է անխոհեմութիւնն, և անկանիք մոռախաբութեամբ։ Զթէ նախատես էք, ձեր է յանձնապատանութիւնն, և անկանիք յանդգնութեամբ։ Զի եթէ այսպէս և եթէ այնպէս, արժանի էք պատուհասին. և ոչ ինքնին Աստուած հովանի կացցէ ձեզ հնորհօքն իւրովք։ Զի է այս աւասիկ վերջին ենթադրութիւնդ ձեր և վերջին ապաւէն։

Աբդ ուրեմն եկեալ ժամանեցաք յանձուկն։ — Ասէք դուք ինձ. Ընդկանութիւնք հնորհացն կամ դոն և կամ ոչ։ Զթէ դոն, զի ուրեմն այդչափ երկրնչել և այդչափ ընդ վայր խմաստասիրել. քանզի ուր մերն պակասին զօրութիւնք, լցցեն զթերին հնորհքն Աստուծոյ։ — Այ՜ հ. . . այլ հնորհեմ ես ձեզ, եթէ զուցեն օգնականութիւնք առ յԱստուծոյ։ Այլ զիարդ թուի ձեզ. արժան իցէ մարդոյ վստահել ունել զԱստուծոյ օգնականութիւնն՝ զմեծն և զառատագոյն, յորժամ ինքն ընդդէմ կանայն Աստուծոյ յանդգնեալ դիմագրաւեսցի առթին առ 'ի մեղանչել. և իսկամ մեծապէս կալցի Աստուած մարդոյն, որ ինքն անձամբ զանձն անխնամ թողուցու. և պարարիցի Աստուած մեծաւ հնորհիւ հովանի կալ մարդոյն, որ զօր ամենայն 'ի վրատանգ եղեալ կորուանելոյ զհնորհն, յայտ առնէ եթէ

digitised by A.R.A.R.@

առ ոչինչ ուրեմն համարի զՏնորհն Աստուծոյ։ Խաբէ, պահանջէք դուք ուրեմն յԱստուծոյ հրաշս նեղոգործել և պահել զձեզ անարատս 'ի մէջ առեթիցն այնոցիկ, յորս բիւրք բիւրուց յարանց և 'ի կանանց նաւակոծեցան. իցեն ևս և 'ի սրբոց արանց և 'ի հրաշագործից. և ոչ անհնարին ժպրհութիւն իցէ բանդ. "Աստուկա պէս գահավիժէ, որ ժամի անցանել, ուր գիտաց խարդաւանեալ զբազումս ,,. ասէր երանելին Խրիսոստոմոս։

Բ. Արդ դուք յինչ հաստատեալ էք զդրութիւնդ զայդ. եթէ Աստուած ինքնին հովանի կայցէ ձեզ յառիթս ընդհօր իւրովք, ասացէք մեզ։ Ի գիրս սուրբս. և ոչ բնաւ երբէք. նա գտանիցէք 'ի նմա բիւրս իմն յօրինակաց. զի ուր հաստատակ կարգաւ յանջողեսցին իրք, անդ երբէք չասվորեցան հրաշագործել Աստուած։ Յարոյց ձայնիւ զչորեքօրեայ զմեռեալն, և բնաւ իսկ մարթէր բանիւ լոկով զհագին զմիմն դամբանին թռուցանել ընդ օդս, այլ 'ի բազուկս որերոյն ապրապարեաց զայն. "Ի բաց առէք զմիմդ ,,. քանզի առանց հրաշից մարթ էր յանջողել գործոյն։ Խզեաց հրեշտակն զշղթայսն Պետրոսի, խզեաց և զաղխս դռնափակաց բանտին. և այլ ինչ ոչ։ Օ՜ալեկոծեալ զնաւն Պաւղոսի փրկէ հրեշտակ Աստուծոյ և Տնորհ նմա զնաւորդսն, այլ չօգնէ ելանել ունել զլանքն։ Ուր հնարք են՝ չեն պէտք հրաշից։ Բ. Արդ դուք որ քաջ իսկ մարթիք ինքնին անձնապահ լինել 'ի փորձութեանց, տեղի տալ մի յանձախել 'ի տունն յայն, զառնուլ չընթեռնուլ զգիրսն զայն, թողուլ լքանել զընկերշակութիւնն զայն, չերթալ չդեղերիլ յաչխարհանդսն. և առ իմն ապա պահանջէք յԱստուծոյ հրաշագործել՝ անարատ պահել զձեզ 'ի մէջ հրապուրիչն այնոցիկ, յորս կամաւոր միջամուխ լինիք։

Ո՞ անձամբ անձին ընդ առաջ գնասցէ վտանգին, և յուսասցի հովանաւորութիւն գտանել յԱստուծոյ. գիտիցէք ո՞։ Բա միայն որ 'ի պարտուց պաշտամանն, որ 'ի հրամանէ առաքչորդին, որ յօրինաց սիրոյն զիմագրաւեսցի յառիթն. "Հրեշտակաց իւրոց, ասէ, պատուիրեալ է վասն քո՝ 'ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո ,,։ Ուստի, ուր գտանիցէք զպահպանութիւն հրեշտակացն, ուր զհովանին Աստուծոյ. ոչ

digitised by A.R.A.R.@

'ի վախս, այլ 'ի Հանապարհս, ասէ. և Հանապարհ՝ որ քեզն անկ իցէ. "Յամենայն Հանապարհս քո ,, : Լ. պա եթէ դուք զարտուղեալք կամիք՝ ընթանայք 'ի մէջ դահաւանդից, 'ի մէջ առապարաց և ափափայից, հրեշ տակք ընդէր պահեսցեն զձեզ : "ԼՀա յոյս նորա նանրացի, ահագինս ձայնեն զկիրք, ահա յոյս նորա նանրացի, և տեսցեն ամենեքին զկործանումն նորա' ,, :

— Լա՛ որ հաւատքիք իցեն բանիդ : — Լէ 'ի բանից, այլ յարդեանց. լուեալ իսկ է և ձեր զկերահամբաւեալն զայն Հնաւոր Յակոբ, զանձաւանուն, զբոկոն, զխուսացեալ զաղերն խոտամբերութեամբ, զՀրաշագործ խարանազգեացն, զայսահալածն բանիլոկով : Լա՛ ասա զինչ. անզգուշացեալ 'ի մերձաւոր յաւելիս՝ ունել յանձաւին իւրում առ ժամանակ մի՝ ըստ աղաչանաց ծնողին՝ զդուստրն զլկեալն 'ի գիւէն և զբժշկեալն 'ի Հնաւորէն, և ասպաւնեալ 'ի զօրութիւն Հնարհայն՝ զի թէպէտ և առ հրոփն նատիցի ոչ ջերմեսցու, դեռն եղեալ յաղջկանէն եռմուտ 'ի միտս Հնաւորին : Լա՛ զի ևս յերկարել. աղերն, անապատականն, սքանչելագործն, այսահալածն, նախ զպատիւն եբարձ յաղջկանէն՝ և ասա զկեանսն : Լանի՛ ահագին անկարծելի իցեն դէպքն. այլ քանի՛ և Հշմարիտ ուրեմն իցէ բանն, եթէ որ փախչի յաւելիէն՝ յաղթէ. և որ դիմադրաւի՝ յաղթի : Լա՛ զիարդ ոչ պահեաց Լաստուած զՀնաւորն : Ղհաւատայք տակաւին, մինչև զփորձն առնուցուք (եթէ չիցէք ևս առեալ). այլ քան մի երբէք առնուցուք : Վտեսջիք դարձեալ՝ ասել եթէ, զինչ այդչափ երկիւղ, այդչափ զարհուրել յաւելիս. լայր Լաստուած զթերին ընդհանրն իւրովք :

— Լեթէ քաջակորովքն հոգւով սուրբք և անապատականք անկան յաւելիս, ձեզ զինչ լինիցի : — ԼԽնդ հաւատն է, հայր, զլխովին ամենայնն, ընդ հակառակն, ասասցէ՝ որ 'ի ձէնջ : Օ՛ի և անշուշտ վասն այնորիկ անկանին քաջակորովքդ այդոքիկ, քանզի տարապայման է երկիւղ դոցա, և սակաւ է փորձաւութիւն դոցա : Պատահէ նոցա այն ինչ, որ ինչ մարդոյ՝ որ անցանելն կամիցի ընդ անձկադոյն փայտ եղեալ 'ի հուն մի

digitised by A.R.A.R.@

յորդահոսան ուղիսկից։ Եր որ սովորեալն է յանցանել՝ ընթանայ անվեհեր և անցանել անվտանգ. իսկ որ սովորեալն չէ, գնայ երկիւղիւ, դողդոջայ, դեղեւի գլուխն և կործան անկանի։ Լու զինչ զարմանք իցեն, թէ այր անսովորական սովորեալն 'ի կենսակցութիւն միայն կոչեղայ անտառայն, 'ի պատահել առթին անկանիցի։ Զ.յլ չեն իրրդ այնպէս և ընդ մարդոյ արիականի և ընդ փորձառու առն. որ յայնչափ առիթս անկործան մնայցեալ, մարթի յուսալ յօգնութիւնն Աստուծոյ՝ եթէ և առ յասպայն ջանկանիցի...։

— Իսկ արդ՝ և ո՞չ արդեօք յանձնապաստանութիւն անխորհուրդ թուիցի բանդ։ Ո՞չ սա այս կորոյս զԱմփման, և սա այս կորուսանել արդ և զամբաւս 'ի քրիստոնէից։ Զ'փառէք իսկ դուք, քանիցս անգամ յաղթական մրցեցաւ Ամփման, ուստի և 'ի վերս վազեալ ընդ միտս իւր ասէր՝ փրկեցից զարձեալ զանձն իմ, յորժամ զնա Զալիլա 'ի ծոցոյն իւրմէ վարեալ 'ի ձեռս տայ Փղշտացւոցն. "Լուիցս, ասէ, որպէս արարի միանգամ և միւսանգամ, և թափեցից զանձն իմ"։ Ո՞չ ծնօտք իշոյն 'ի ձեռս իմ շանթք են, և դռնափակք դրանց քաղաքին 'ի վերայ ուսոց իմոց՝ յարդք, և կարք ամրապինդք 'ի բազուկս իմ՝ սատարաց ոստայնք։ Ո՞ է որ ընդ իս մրցեսցի. "Լուիցս արարիցս որպէս միանգամն և միւսանգամն"։ Լու արդեօք էլ. ըմբռնեցաւ կապեցաւ, և 'ի տան բանտին յաղօրիս զանարդ գրաստուն հարկանէր զպաշտօն։

Ո՛վ, քանիցս Ամփման յանձնապաստանք 'ի միանգամ յաղթութեանն և 'ի միւսանգամն՝ անխորհուրդք 'ի գլուխս անկան Զալիլայց. դեղեցիկ անուամբք՝ իբրու քծնութիւն անմեղ, իբրու քաղաքավար բարեմասնութիւն, իբրու նորատուա սովորութիւն, յորջորջելով զվախան և զվտանգն. որք և 'ի վերջէ առեալ թաղեցին զնոսա ընդ փլածոյիւն, քանի դժնդակագոյն քան զԱմփմանն։

Լու արդ դուք, զինչ և կամիք, ասայէք ինձ։ — Ասէք, եթէ փորձառութիւնն 'ի հակառակին է. եթէ կամիցիս հաւատալ, հայր, և եթէ ոչ, այս այսպէս է, և այսպէս առնումք մեք զփորձ իրայն։ — Լաւ, այդպէս լիցի։ Լու զի արասցուք մեք ասա, կամ ո՞ր թող

digitised by A.R.A.R.@

ցուք զ'Աստուծոյ պատգամն, որ ասէ. «Որ սիրէ զվրտանդ, 'ի նմին և կորիցէ.»։ — Օ բան գրոցն ձեզ ինքնին վարդապետացդ անկանի խորհել և մեկնել. մեք 'ի հակառակն ունիմք զփորձառութիւնն։ — Զի՞նչ ուրեմն փորձառութեանդ ձերում և մեք այլով փորձառութեամբ արասցուք պատասխանի։

Հապա, արդ ասացէք ինձ եթէ ողջոյն ընդ թաղս քաղաքիդ չպատահեսցէ երբէք աղջիկ որ չիասցի և գաղտ զօրն ողջոյն ասակաքաւ ասա և անդ մերթ ցուցցէ զանձն և մերթ ծածկեսցէ՝ մերթ ընդ դուրս տանն և մերթ ընդ պատուհանն. դարձեալ և պատանի որ անդ ընդ նոյն թաղ 'ի վեր և 'ի վայր գեգերեալ և պատահեալ «Օ մտաւ զգործն ածցէ խաւարին.»։ Զ՞չ փորձառութիւնդ երբէք պատահեալ իցէ։

Դարձեալ և յաշխարհաւանդ կապելայս, 'ի գիւղերս բուս անառակս, 'ի զբօսանս լկտի խաղալկաց, 'ի պարս անպարկեշտ կայթից, 'ի լուրս վայրախօսից երկայնաձիգ անբարի բանահիւսութեանցն, և որ այլ ևս. զոր չէր արժան ոչ տեսանել և ոչ լսել, և զոր չէ մարթ աստանօր հրապարակագոյժ առնել, չիցէն երբէք անդանօր փորձառութիւնք լի վտանգօք։ Պասեալ մնայցէք առ վայր մի առ դուրս վայրացն՝ ուր փորձառութիւնքդ այդ պատահէն. զնեցէք զելեալսն և տեսանիցէք ողջոյն փոփոխեալ զմտեալսն։

Իսկ ապա և պատանիդ այդ 'ի ձեռս առեալ զառասպելայօդ զգիրսն զայն, կամ զհրապուրիչ զքերթածն զայն, նախ առ հետաքրքրութեանն միայն առնու ընթեռնու, ապա ախորժէ, ապա իբրև զկարևոր ինչ գիրս առ իւր խնամով պահէ. չխորհի ինչ անբարի, միայն սկիզբն առնէ այցելութեանց 'ի տունս և ընտանութեանց, գնայ առ որ Ճարտար հարկանէ և քաղցր նուագէ, կայ 'ի լուրն և գեգերի և ջերանի։ — Զ՞ող 'ի բաց, վարդապետդ, և դու միշտ խնդրես կծանել. մեք գիտեմք և Ճանաչեմք զի պատանիդ այդ բարի՝ անտխեղծ կայ և անարատ է իբրև զշուշան։ — Լդիցի այդպէս. այլ յետ աւուրց ինչ ոչ բաղմաց լուր հնչի, եթէ անբարի գնայցէ զհետ ընթացեալ է պատանիդ, անկուշէ ընդդէմ հօրն և մօր, վեր 'ի վայր զընտանիսն գործէ, . . . զինչ ասէք։ — Ա՛հ. անշուշտ ուրեմն թո-

digitised by A.R.A.R.@

վեաց դիւթեաց որ զպատանիդ բարի։ — Եւ կարի իսկ քաջ. դիւթեցաւ թողեցաւ պատանիդ. այլ ուստի՝ 'ի հրապուրից անտի անառակ քերթածոյն, 'ի յանձնէ վերծանութենէ անբարի առասպելեացն, յանդգոյշ ընտանութեանց անտի և յանխորհուրդ այցելութեանցն։ Եւ ոչ փոխառութիւնքդ այդոքիկ պատահէն երբէք։

— Դաջ իսկ ողջոյն իրաւունքն 'ի քո կողմն յանկէն, հայր. մի դադարեսցիս խրատել յանդիմանել զպատանիդ զայդոսիկ զհամարձակս և յանձնապաստանս, որոց երակունք լի են ծծմբով և խնդրեն խաղալ առ հրովս. զինչ զարմանք իցեն եթէ բոցակիզեսցին։ Իսկ ես աւադիկ՝ զոր տեսանեիդ, հայր, 'ի ծերութիւն յեցեալ և ձիւնաբատակ 'ի գլուխս, չեմ ես այլ բաւական հուր 'ի ներքս իմ բուծանել. և թէ երբէք 'ի խնդիր եկանեմ սիրութեանց ինչ, կարծեմ ոչ ինչ յանձնապատանութիւն գրեսցի ինձ այդ։

— Ի ծերութիւն յեցեալ է քո, տեսանեմ աւադիկ, ալեորդ։ Այց ոչ ուսեալ է քո, եթէ ալեորն լինել՝ իցէ անմեղանչական լինել։ Սակս զքեզ այսուհետև անբաւական 'ի հուր. և որ հուր առաւել ումպէտ, ապիկար և թոյլ քան զԱկաբեան անջուր ջրհորոյն հուր՝ թաղեալն 'ի քահանայից "Ի խորչս կողմանցն անջուր ջրհորոյն"։ Զոքա 'ի յանայր պանդխտութենէն դարձ արարեալ՝ ոչ ևս գտանէին անդ հուր, այլ աղտիւր ջրոյ սկահառն, "Այ, հուր ինչ անդր, ասէ, ոչ գտին. բայց գտին անդ ջուր դանդաղամած թանձրացեալ"։ Եւ սակայն այն ինչ Ճառագայթից արևուն յանդիմանեալ նոյն ջուր՝ 'ի դանդաղ մածուածոյն պարզեալ՝ 'ի հուր դառնայր և փայլակեր, և նշոյլ արձակեր և բոց և հուր ոչ վայրապար, այլ հրատ մեծ. "Փոքր մի ժամանակ, ասէ, անց 'ի վերայ, և ապեգային շող ամ պագոյն 'ի վերայ ծագեաց, բորբոքեցաւ բոց հրոյն. և երբև բոցոյն նշոյլք եղեն՝ դարձեալ միւսանգամ վառեցաւ բորբոքեցաւ"։

Ի ծերութիւն յեցեալ է քո և 'ի ներքս 'ի քեզ չիք այլ հուր, ջնորհեսցուք քեզ, այլ ջուր միայն դանդաղամած։ Սակայն լուր և յաստուածխնամ մեկնչացն. "Ի՜, ասէն, վստահիր 'ի ջուրդ յայդ, մի վստահիր. սերմն հրոյ է ջուրդ այդ"։ Նշոյլ մի արեգական ցոյց

digitised by A.R.A.R.@

դու նախ . ով, քանիցն իցէ բոցն և քանի տասն ։ Ով ծերունիդ դու , չգիտեմ եթէ զայս ասելով իցեմ ես պուշակ գիտող պատահելոյն կրից . չգիտեմ ես . գիտես դու ինքնին ։

Իսկ զոր գիտեմն , ասեմ ձեզ առ հասարակ ։ Փորձառութիւն է անասուտ , զոր չկարէք ժխտել . և է այս ։ Կրկին ինչ իրք պատահէն 'ի բանիս . առաջինն է զգուշանալ 'ի մեղանչելոյ յետ դիմագրաւելոյ առթին , երկրորդն է զգուշանալ 'ի դիմագրաւելոյ առթին ։ Իսկ յերկուց աստի որն իցէ դժուարին . յայտ է թէ առաջինն . իսկ երկրորդն է առաւել դիւրին ։ Զի եթէ զառաւել հեշտինն չառնես դու , թէպէտ և շատ ինչ խոստացար հոր խոստովանութեան քո , օրինակ իմն՝ ոչ ևս գնալ 'ի տունն յայն , մի ևս ընտանենալ ընդ մարդոյն ընդ այնմիկ , ոչ ևս երևիլ յայն ակուսք որերոյն կենակցութեան , և տակաւին առաջադրութիւնդ չել 'ի գլուխ . և արդէն իսկ զատիկք բազումք անցին 'ի վերայ , և զնոյն խոստանաս հանապազ և կատարես ոչ . և զիարդ կամիցիս հաւատարմացուցանել ինձ , եթէ զառաւել դժուարինն յաջողեսցիս գործել , այս է՝ ոչ մեղանչել յետ դիմագրաւելոյ առթին ։ Թող անդր 'ի բաց զվայրապար բանդ . թէպէտ և երդնուցուս ևս , ոչ կարացից հաւատալ . " Որ 'ի նուազն տկարացար , ասէր Աստուծոյն , յառաւելն զիարդ հաւատացից քեզ .. ։ Զի այս ամենայն , ասա , չիցէն փորձառութիւնք առաւել յանձինքս , առաւել հիմնացեալք , առաւել ստուգագոյնք քան զձերդ . . . ։

Զ.ԱԼ մինչև կնքեալ զայս մասն բանի , ընորհեցից ձեզ՝ եթէ 'ի ժամանակի անդ դիմագրաւելոյ առթիցս մեղայն՝ ոչ մեղանչիցէք . այլ յետ դադարելոյ նոցան՝ զի արասջիք դուք զներդործութիւն առթիցն՝ յորս կամաւոր մխեցայք ։ Զ.ս եթէ ընդ անդունդս ծովուն անցէք անվտանգ երբու զԱդան և զԶբիրոն , միթէ և 'ի ցամաքի չիցէ նաւակոծութիւն ։ Զեղեցիկս արձանացոյց Թէոդորեանս 'ի բերան վէրին նոցա զայս տասպանագիր . " Որք ընդ խորս ամենի ծովուն ընթացան և եղին , նոքա 'ի ցամաքի անդնդասոյզ եղեն .. ։ Զ.ս դուք յանդգնիցիս անցեալք ընդ անդունդս առթիցն , և ապա 'ի մեռանեալ ձերում և 'ի հանդարտել 'ի տան՝ յայդք

digitised by A.R.A.R.@

խորհրդոց և երևոյթք և պատկերք որոց տեսիցդ և ո-
րոց լուայցդ, որպէս ասէր Աստուծոն ոսկի, անջինջ տպա-
ւորեալք 'ի նեբբս 'ի միտս, և այդ առանձինն մնասնջք,
ոչ արդեօք մրրկեալք փլուզցին զծով խորհրդոց ձե-
րոց, ոչ և նաւաբեկութիւն ողբալի գործեսցին ձեզ 'ի
ցամաքի։

Այլ եթէ ոչ յետ առթին անցանելոյ նաւակոծես-
ջիք ինչ՝ ցորչափ կեայք, հնարհեցիս ձեզ և զայս։ Այլ
աղէ, խեղանուտ լիցուք, աղաչեմ, (զի չեմք իսկ ան-
տեղեակք խորհրդոց սատանայի), որ իցեն գաղտնորո-
գայթ գարանքն լարեալք մեզ 'ի նմանէ 'ի դժուարին
յայն և յահագին անցան 'ի վայրկենի մահուն։ Այդ
առիթքդ մեզայ բաղմագիմիք՝ որոց 'ի խնդիր խնամով
եղեալ է ձեր, այդ իղձք անբարիք և տարփանք՝ զոր
տածեալ մնացեալ է ձեր ընդ ամն յոլովս՝ բաղմապա-
տիկ այցելութեամբքդ, յիշատակօքն, ողջունիւքն,
զրուցատրութեամբքն, նամակագրութեամբքն, դես-
պանութեամբքն, որք զարդիս մինչդեռ տակաւին կեն-
դանի էք, լուռք կան, և ոչինչ նեղգործեն 'ի ձեզ՝ որպէս
ասէիք, յայնմ տսկալի պահու՝ յորում անապատ և
արդար, և հանճարով կշռէ մարդ զամենայնն՝ զլուխս մեր
բարձցեն, ձայն արձակեսցեն առ հասարակ։ Անդուստ
և ոսոխն հոգւոց մերոց 'ի վերջին յայնմ պահու զվերջին
Ճիգն թափեալ հզօրագոյնս կռուեսցի. բաբէ, քանիօն
անձկութիւնք 'ի պահուն յայնմիկ պաշարեսցեն զհի-
քացեալ հոգին։ Այլ յայնժամ՝ իբրու շշաւիեսջիք
դուք ձեռամբք, և յայնժամ Ճշգրտիւ խոստովան լինի-
ջիք, եթէ դժնդակագոյնն 'ի վտանգս փորձութեանց,
նա անշուշտ կործանումն հոգւոյն է դիմաղրաւէին առ-
թին։ Զի ուրեմն, աղաչեմ սիրելիք, մի այժմէն,
քանզի յայնժամ անապան է դարմանն, մի մուռացօնք
լիցին ձեզ բանքս, եթէ որ ոչն փափաչի, յաղթի։ Զոքբ
մի արդ քննեցէք զանձինս՝ եթէ արդեօք արդեամբք
ստուգեցա՞ն երբեք 'ի ձեզ առաջն, մինչև վայր մի և
մեք հանգիցուք։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆ Բ.

Լրեմ արդարև այդ այդպէս իցէ, 'ի յուսահատութիւն ուրեմն կրթեցան իրքս։ Անդի 'ի դիմադրաւել առեալ՝ մեղանչելոյ, չօգնէ ինչ 'ի փորձութեանն ոչ վստահութիւն յանձն, և ոչ վստահութիւնն յԱստուած ինքնին։ Օ ինչ ուրեմն առնել պարտ իցէ, և դարման դեղոյն որ իցէ։—Հաւասիկ, "Փախիր 'ի յառաջէն ..։ Ոչիք այլ դարման։ Մի դիմադրաւեր առեալ զանձն քո։ Օ որ 'ի ժամանակի ժանտախտին առ հասարակ սրածութեանն առնէն, զնոյն գործել արժան է. փախուստ, հուր, և սուր։ "Լրեմ Հնմարիտ է ապաշխարութիւնդ, ազդէր ոմն 'ի սրբոց, եթէ Հնմարիտ էն արտասուքդ, արի եղ արտաքս ..։ ԼՀ արտաքս և 'ի տանէն յայնմանէ, փախիր յառաջդ, եղ արտաքս 'ի կենակցութենէդ յայդմանէ։ Մշնուական օրինակին նմանող եղերուք զոր ողջախոհն Եցոյց Յովսէփ. նա զպատմուհանն գլխովին թողեալ անդ 'ի ձեռս պադշոսին, վաղվաղեաց փախեաւ եղ արտաքս։ Ոչ ինչ այլ զնուաւ ած, ոչ ժամ էտ լինելոյ կնոջն, միայն արագ արագ վազէ արտաքս իբրու որ հրդեհ հարեալ պատեալ իցէ զուռնն՝ այնպէս 'ի շտապ տագնապի Հողոսրեր զանձն. "Թող, ասէ, զՀանդերձն 'ի ձեռս կնոջն, փախեաւ և եղ արտաքս 'ի տանէն..։ Այս է միակ դեղ դարմանոյն, փախուստ։

ԼՀ զիարդ. ոչ խիստ իցէ բանդ. "Խստութիւն ուրեմն, որպէս ասաց մարգարէն, պատմեցաւ մեզ ..։ Ո՞ լուիցէ, և կամ ո՞ հանդարտեսցէ քարոզութեանդ այդ-միկ։ Յառաջ ուրեմն անցցէ աւետարանն Քրիստոսի։ Ոչ նա ինքնին զնոյն ազդեաց յաստուածային բերանոյն. "Լրեմ ակն քո աջ, ասէ, գայթակղեցուցանէ զքեզ, հան զնա և խլեա 'ի քէն։ ԼՀ եթէ ձեռն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա 'ի քէն ..։ ԼՀ ահա սուր։ Անսի կորովութիւն է պատգամին, և քանի արիութեան պէտք իցէն 'ի կատարել։ Խիստ ասէք զբանն, այլ յանհնարիցն չէ։ Անիքք արա-

digitised by A.R.A.R.@

դեամբք ցուցին զպատուիրանն . զսիրելիսն իբրև զանձն աջոյ , զպոծծոնսն և զնպաստամատոյցսն իբրև զձեռն աջոյ , սեռեալ անձանց իւրեանց 'ի գայթակղութիւն և 'ի հրապոյր մեղայ , հանին խլեցին , հատին և ընկեցին , այս է հրաժեշտ ետուն , 'ի բաց մերկնեցան և փախեան յառաքէն ։

Զեզ աւասիկ , ո՛ հաւատացեալք , զպատուէր զայս ինքնին Վրկիչն բարբառի 'ի խաչէս , " Հան , խլեա , հատ և ընկեա ,, ։ Պատուածային է հրաման , չէ խորհուրդ . հրաման է . հատ և ընկեա 'ի քէն ։ Սակայն մի՛ ինձ դու դեղերեսցիս ասել եթէ ոչ ևս էս զնոյն օրինակ իբրու զառաջինն՝ վարեցայց ընդ նմա . զդուշաւորս և պարկեշտազոյնս զնացից ընդ նմա ։ — Այլ , մի՛ բնաւ ։ Պայլ հան ասէ , և հատ . կամ հան զնա կամ դու էլ արտաքս . խլեա և ընկեա ։ Պյդ պիտակքդ տենչալիք՝ զոր ունիս և խնամով պահես առ քեզ . 'ի հուր ։ Պյդ նարօտք և զարդք անպարկեշտք և հիւսք ցանկալիք՝ քեզ 'ի գայթակղութիւն և այլոց , և այդ կենդանագիր , 'ի հուր ։ Պյդ գրեան անկրօն՝ որ առ քեզ , և այդ վէպք հրապուրիչք , ապականագործք , 'ի հուր 'ի հուր ։ Պյդ նըկարք անարժանք , և այդ պատկերքք լկտիք , վայրիկ մի դու էլ և խուզեա եթէ իցէն ուրեք 'ի տան քում կախեալք , կորզեա 'ի բաց , արկ 'ի հուր և ասա . " Պյրեմ զձեզ , զի մի՛ այրեցայց 'ի ձէնջ ,, ։

Այս եթէ յառաքէն փախչել պարտ իցէ , զինչ ապա 'ի մերձաւոր առթէն ։ Ո՛վ , քանիսն յայնժամ առ դուրս կայցէ նաւաբեկութիւն ։ Այլ ինչ օգնեսցեն քեզ յայնժամ , ոչ եկեղեցի , ոչ աղօթք , ոչ խորհուրդք եկեղեցւոյ , մինչև ոչ հրաժեշտ տացես 'ի մերձաւոր առթէն ։

Այս արդ , սիրելիք իմ , ո՞ր պտուղ ապա քաղեսցի այսուհետև 'ի քարոզէս յայսմանէ , ո՞ր արդեօք ։ Ո՛վ , զինչ ձայն հնչէ 'ի լսելիս իմ . Քարոզ , ասէ , որ քան զամենայն քարոզ առաւել կարևոր առն քրիստոնէի յամենայն 'ի կեանս իւր , նուազ շահաբեր եղիցի քան զամենայնն . և յորոց միանգամ քարոզեցաւ , գոգցես ոչ ինչ կատարեսցի արդեամբք ։ Ոչ ինչ . . . և զիարդ այս . . . ։

Ոչ ինչ դադարեսցի անարժան ընտանութիւնդ այդ 'ի մէջ երկոցունց սեռիցդ . ոչ ինչ ։ Ոչ ինչ կարձեսցին

digitised by A.R.A.R.@

յայնչափ յայրատութիւնէ աչայն և ակնարկութեանցն. ոչ ինչ։ Այլ ինչ լաւացեն այնչափ հրապոյրք և խնդրք շրջեալ թանցն, որովք գերեցան այնչափ հոգիք. ոչ ինչ։ Կա խեսցեն ուրեմն տակաւին լիութեան նկարքդ 'ի տունս. կախեսցեն։ Ընթերցցեն դարձեալ անյաղաբար զնոյն տարկանողոց զրեանն. ընթերցցեն։ Երգեսցեն դարձեալ հանարձակ զնուագսն զայն անմանրաբարբ երգեսցեն։ Յաճախեսցեն դարձեալ 'ի նոյն կենդանկցութիւն լինելոյն և շփացելոյն. յաճախեսցեն։ Իսկ և դարձեալ նոյն մեղկութիւնք և տարփանք և նոյն կապելայք, և նոյն գինեբուք. նոյնք դարձեալ...։

Խնդրեմ ուրեմն, Վրկիչ, վերստին և բազում անգամ 'ի խաչ հանեալ. և առ իմ ապա այնչափ քիրսն քոյին պաշտօնեիցս հիքացելոց. յինչ պիտանացու այնչափ քարոզք, և հրահանգք պէսպէս. առ իմ, տէր, առ իմ...։ Այլ մի, տէր, մի 'ի բացեայ առներ զնորհս զդ. մի թողուր մնալատակ զքոյ պաշտօնեայս, և մի անպտղաբեր զքոյ հաւատացեալդ. հեղ զնորհսդ, լից զթերութիւն լսելեացն, լից զթերութիւն սանելեացն...։ Ահա նորհք 'ի խաչելոյն, եղբարք, գոչեմ ընդ առաքելոյն. "Գործակից լերուք, աղաչեմ, գործակից նորհացն Աստուծոյ"։ Սակաւ մի արտօսր առ ոտս խաչելոյս վասն անցելոյն թերութեանց։ Յաւելցի ձեզ ձիմարտապէս, զի քան զԱստուած առաւել սիրեցիք զոք զառիթն մեղաց։ Եւ նորհօք խաչելոյն զօրացեալք այսուհետև հաստատուն լիցի առաջադրութիւն կամացն 'ի զգուշաւոր պահպանութիւն յառաջակայիցն առթից, մի միւսանգամ 'ի խաչ հանել անձանց զորդին Աստուծոյ։

Վայրիկ մի, աղաչեմ, խուզել զխորշս սրտից. "Ատիցէ այր 'ի խորութիւն սրտի իւրոյ, և բարձր եղիցի Աստուած"։ Խուզել, որ այն առիթն իցէ, որ զձեզն կարկանդեալ ունի գերի առնել սատանայի. որ այն իցէ. գտեր զու զայն, հանար խղեա զկարպանն, խորտակեա զլուծն. հան և խղեա, հատ և ընկեա 'ի քէն, որպէս պատուիրեաց տէրն։ Օ ինչ ձեզ արժէսցէ, աղէ ատացէք. ոչ կամք միայն, և շատ է։ Պնդեցէք զանձինս. տուք զերասանն զդայութեանց ձերոց 'ի ձեռս տիրական մասինդ. ձայն տացէ առաքինութիւն

digitised by A.R.A.R.@

ապիսութեանն. “Մի՛ և ես ես ընդ մարդոյն ընդ այնմիկ. մի՛ և ես ես ընդ պչրողին ընդ այնմիկ. մի՛ և ես ես ընդ մատնագրին ընդ այնմիկ. մի՛ և ես...։

Խաբէ զեղեցիկ յաղթութեանն, բաբէ ցանկացեալ պտղոյն. քանիսն իցէ ախոյեանն, քանիսն բրաբիոնն։ Այլ թէ ոչ, առ ինչ պիտանացու իցէ այնու հետև մեր քիրան և ձեր աշխատութիւնն դալ խռնել ձեզ հանապազ 'ի սուրբ եկեղեցիս. եթէ հանապազ 'ի նոյն ժամանակ իբրու 'ի վէգ զմիմեանսիք եանիցեն 'ի ձեզ միանգամայն՝ ասա լուր քարոզից բանիցն Աստուծոյ, և անդ ունկնդրութիւնք հրապուրից առասպելարկուացն. միանգամայն և ասա աղօթարանք, և անդ ժողովարանք կենակցութեան շամբշելոցն. միանգամայն, ասա խոստովանութիւնք մեղաց, և անդ առիթք մեղանչելոց։ Մի՛, եղբարք իմ, մի. այլ առ հասարակ նուիրեցէք զանձինս 'ի բարձումն ամենայն առաթից մեղաց 'ի ձեզ։

Իսկ առ 'ի հեշտագոյնս նահատակել 'ի նոյն քաջութիւն՝ յուշ միանգամ ածէք զոր բազում անգամ լուայք, եթէ վասնզ մեծ, նա անշուշտ կործանումն հոգւոյն՝ է դիմադրաւել առաթին. և միակ դարման՝ փախուստն է յառաթէն։ Այլ յորժամ ասասի 'ի տունս ձեր դարձջիք, զնոյն բան կրկնեցէք և երեքկնեցէք, եթէ Որ ոչն փախչի, յաղթի. և որ փախչի յաղթէ։

digitised by A.R.A.R.@

ԹՈՒՐԱՅ Դ.

ԲԱՄԲԱՍԱՆՔ

"Ոչ է այրն այն յԱստուծոյ, զի զշաբաթս ոչ պահէ". Յովհ. 9.

Եթէ զգործս հանճարեղ բնութեանն զննեալ, ի մաստասիրել ինչ վայելչապէս արժան իցէ, հայեաց ինձ միանգամ, քանի խնամութեամբ նախատես է ղեալ բնութիւնն մեծի կոտորածին զոր լեզու չարախօս բաւական է հասուցանել աշխարհի, առեալ փակեաց զնա զգուշութեամբ իբրև զգազան 'ի գառագղի կրկին կապանօք. զի 'ի շղթայաշար ատամանցն արգելեալ և 'ի փակարանէ շրթանցն բանտեալ, ոչ ինչ այնպէս հեշտեաւ ելցէ արտաքս՝ խզեալ զկապանսն։

Բ. Յլ աղէ առ ինչ օժանդակեաց ամրապինդ պահպանութիւնն. թուի իմն այնպէս, եթէ առ 'ի կապակոտոր առաւել գործել զնա, առաւել ապերասան, առաւել անկուն։ Ո՞չ զօր ամենայն պատահեմք լեզուաց, լեզուք անսանձք, յանդգունք. որ ոչ երկնի և ոչ երկրի ակն ածեալ՝ ձգին անդր և մինչև յաստեղս մեծամեծանչս, և շունչս իմն մահահոտս փչեն 'ի նոսա՝ զի աղօտացուցանել մարթասցին զլոյսն նոցա։ Այլ ո՞չ զնոյն սակներև տեսէք դուք այսօր, սիրելիք, և 'ի սերկեան բնաբանիս. "Ոչ է այրն այն յԱստուծոյ, զի զշաբաթս ոչ պահէ".

Օ՜ցանկացեալն տեսութիւն 'ի ծնէ կուրին պարգևէ տէրն. և առ 'ի հրաշագոյն ևս յարդարել զբժշկութիւնն, զհող դուզնաքեայ աստուածային մատամբքն

digitised by A.R.A.R.@

լմեալ՝ կաւ գործէ. և նորին աղագաւ զԹունալից լեզուն յինքն ձգեալ, ահա բամբասեն զնա իբրև լուծիչ շաբաթուն, իբրև աղարտիչ սրբութեան օրինացն, ի բրև Թշնամի Աստուծոյ. "Եւ է այրն այն Աստուծոյ, զի զշաբաթս ոչ պահէ.,, Նշուշտ ուրեմն լեզու չարախօս նաև 'ի կենսաւէտ ծաղկանցն Թոյնս դառնութեան զիտէ հաւաքել։ Այ ժանտք, և առաւել ժանտք, դասք դպրաց և փարիսեցւոց, պակասեցան Թերեւս գայթակղութիւնք յԱրուսաղէմ. զի դուք ըզ ժահր լեզուիդ չԹափէք 'ի նոսա։ Օ՜ի է ձեզ այնչափ սրել զատամունս ընդդէմ սրբոյն սրբոց, զի և զամենայն գործ նորա սքանչելի գձնել, և զամենայն բան նորա խմաստուն եպերել, և զամենայն զմարդասէր գնացս նորա Թիւրել և կամակոտել։ Լա, ով քանիսն է լեզու, նա և զՀրաշն ինքնին գլխովին գործի Թշնամանաց առնուլ հրաշագործին. "Եւ է այրն այն Աստուծոյ, զի զշաբաթս ոչ պահէ.,, Յաչափ Թոյն 'ի լեզուն, այսչափ ժպրհութիւն, այսչափ սրածութիւն լեզուապարութեանն. մինչև 'ի հրաշագործութիւնն բամբասանք, և մինչև 'ի մարդասիրութիւնն գձձանք։ Լաւ այս յայնժամ։

Իսկ և այսօր ո՞ր այն հրապարակ իցէ, ո՞ր այն փողոց, ո՞ր այն ակումբ աղատաց, ո՞ր ժողովարան պարապորդ մարդկանն, ո՞ր սենեակ, ո՞ր գործատուն. (մի արասցէ Աստուած), ո՞ր մեծատան կամ ո՞ր Ճգնարան, յորս ոչք 'ի նոսա լեզուք բամբասողք՝ ոչ իբրև կեղծաւորութիւն համբաւեսցեն զբարեպաշտութիւն, իբրև մնոտի երկչոտութիւն՝ զխոնարհութիւն, իբրև ապշութիւն՝ զամՀխածութիւն. նա՝ է՛ զի և զՀրաշն գլխովին՝ զդիցազնական զառաքինութիւնն ասեմ՝ զծառայիցն Աստուծոյ՝ նիւթ 'ի ձեռս առնուցուն ծաղուս առ 'ի զզուել զառաքինին։

Ո՛վ նզովիչ լեզուացն բորբոքելոց, որ թէ չայրէ, սակայն և խանձէ, որ ինչ պատուականագոյն ևս է 'ի կեանս մարդկան և 'ի կարգի բնութեանս մերոյ առաւել սիրելի քան զամենայն. և ո՞ր այն իցէ. անուն բարի, համբաւ զեղեցիկ, յարգ զերդաստանին, պատիւ անձին իւրաքանչիւր, վարկ համեստութեան, կարծիք բարութեան. զոյս միանգամայն խանձէ և աղարտէ

digitised by A.R.A.R.@

բամբասող լեզու, և առ հասարակ մարդկութեանս զեան մեծապէս գործէ։

Եւ արդ ժուժկալել աղաչեմ, եթէ վայր մի առաւել սաստիկ հանդիսացեալ այսօր՝ Ձիգն վերջին զիրաւացի արտաքութեան՝ ողջոյն թափեցից ընդդէմ բամբասող լեզուի. և առ 'ի արմատաքի խլել զախտ աշխարհակուլ բամբասանացն, խելամուտ ապարիւ զձեզ խովսանն, եթէ յամենայն չարիս զոր միանգամ ձեռնհաս է մարդ 'ի գործել, բամբասանքն է դիւրագոյնն 'ի գործել. և եղիցի այս առաջին գլուխ քարոզիս։ Բամբասանքն է չար դժուարագոյնն 'ի դարմանել. և այս է երկրորդն։ Բամբասանքն է չար առաւել արժանին 'ի պատուհասել. և այս եղիցի երրորդն։ Արդէս զի 'ի բամբասանացն ախտէ՝ յոր այնչափ հեշտեաւ ըմբռնի մարդ, և այնչափ դժուարաւ դարմանի, և այնչափ արժանահաս պատուհասին անվրէպ ներքոյ անկանի, մեծապէս գարշէսցին առ հասարակ և նզովս բերանալիր զհետ արձակեսցին։

Ամէն դիտեմ քաջ, զի 'ի հարուած սաստիկ գանիցն ընդդէմ ինձ բամբասողք զլեզուն սրեսցեն. չէ ինձ ինչ փոյթ, թող թափեսցեն զլեզոյնն ընդդէմ մարդոյ, որ արժանին է ամենայն թշնամանաց. շատ է ինձ զի ուղղեսցին նոքա, և կալ և կապ դիցեն միանգամ բերանոցն, բերանք ապականագործք հոգւոյ իւրեանց, ապականագործք ընկերացն, ապականագործք պատուոյն Աստուծոյ։ Արդ սկիզբն արասցուք բանիս։

ՄԱՄՆ Ա.

Օ որ ամենայն քանքարտան մարդիկ ընդ մահկանացու բնութիւն իւրեանց, քանքարտան 'ի նոցն և ընդ յաւիտենութիւն գործիական զինուցն, որ երագեն զմահն իւրեանց։ Անիծն իցեն ասեն հանապազօրեայ գիւաք հնարից 'ի դրդել զմահ ընդդէմ մեր. քանի կապարաց կոյաք ձուլեալք 'ի հալոցս, և քանի երկաթք յեսանեալ սրին, քանի պղպատք ապրատուր կապին 'ի նրանս, 'ի տեգս, 'ի նետս, 'ի յաշտակս, 'ի

digitised by A.R.A.R.@

տեսեալս, 'ի դաշոյնս. խոցել 'ի մեջս, հարկանել 'ի բացուստ, վիրաւորել սպրասցի, մահ ածել կշռակի։ Իսկ և մահաշշուկ հրապիտուցն մենքենայիս պէտսութիւնք յոր խժդժական կատարելութիւն ելեալ ամբարձան յաւուրս մեր։ Ո՞ր բացաստութիւնք արձակին 'ի թնդանօթիս, ո՞ր դժոխք զգայուեալք 'ի դուրս գան 'ի հրալից ռմբաց։ Լուսազեցան արդեօք շանթք հրացան բարկութեան 'ի զինարանս երկնից, ուստի և խրժդժութիւն մարդկան հնարեցաւ շանթել նաև ընդ սարդ երկնաւ։ Ա՛ռ 'ի մէջ այնչափ ճարտարութիւնք, քանքարտան մարդիկ, առ 'ի հեշտին գործել մեզ մահ կանացուցս զմեռս մահուն։

Շատ է, շատ է արդ, դադարեցէք աղաչեմ. և է թէ ձեզ կամք իցեն առաւելագոյն ևս իրաւամբք գանգատել, վայրիկ մի հայեցարուք ընդ միւս այլ զուգաւորութիւն երկուց հակառակացն՝ ոչ ինչ նուազ զարմանալի և նոր և օտար։ Անիծեալ իցէ աչալուրջ զգուշաւորութիւն 'ի մարդիկ առ 'ի պահպանել զբաղաքական կեանս իւրեանց. զգեղեցիկ համբաւն ասեմ, զվարկ զարմին, զբարի անունն, զառ ամենեսին զյարգն, զպարտուպատշաճ պատիւ անձինն, զանխարդախութենն, զհաւատարմութեան զկարծիսն յինկերշակութիւնս 'ի շահախնամութիւնս, 'ի դաշնադրութիւնս. և ընդ այսոսիկ դարձեալ, զիք 'ի միւս կողմն, տեսէք զզուգաւորութիւն բիւրապատիկ հնարից և յեղանակաց, զորս ղէն 'ի ձեռին առնուն բառնքասողք, տապալել աղարտել զայնոսիկ, և ողբմելի ևս մահ ածել մեզ 'ի քաղաքական կեանս մեր։

Բարեկ, զիարդ լեզու մի չարախօս ողջ զգինարանն յինքն բարձեալ բերիցէ զամենայն հրապիտուցն զառնութեան՝ մարտ դնել իբրև ճակատամարտ մեծի բանակի և կռուել ընդ մեզ։ Օ՜նեցէք աղաչեմ՝ և տեսանիցէք 'ի մի միայն լեզու աղէտնս՝ հարկանել 'ի հեռատանէ, դաշոյնս՝ 'ի խոցել 'ի մեջս, տեգս՝ 'ի վանել, վբենս՝ թասի յայնկոյս անցուցանել, տեսէք՝ 'ի վիրաւորել, ճայթիւնս հրացանից, որոտս թնդանօթից, շանթս ռմբաձիգս արկածից, որովք միանգամայն սպառազինեալ է լեզու մի չարախօս։ Ո՞ երբէք հաւատայր զայս, եթէ և անտուտ վկայութիւն չէր 'ի միջի բանին

digitised by A.R.A.R.@

Աստուծոյ. «Լարեցէք, ասէ, զլեզուս իւրեանց իբրև զաղեղունս. ատամունք նոցա զէնք, ատամունք նոցա նետք. և լեզուք նոցա սուր սրեալ.,։ Եւ զինչ զարմանք այնուհետև, սիրելիք, եթէ այնչափ դիւրեաւ լինիցի բամբասել. նա այնչափ դիւրին է, որչափ դիւրին է խօսել. և այնչափ առաւել, զի և բոյս բարուց բամբասողին չէ 'ի վար առնուլ զզէնսն Ճակատ առ Ճակատ, այլ 'ի Թիկանց մարտ եղեալ կռուի, արդարև որպէս և է իսկ՝ իբրև մասնիչ անարգ։ Եւ ստի և արժանապէս կոչեցաւ բամբասանք՝ ախտ ծառայական, խայթ օձական. քանզի զոր օրինակ ծառայ ոչ ժամի չարախօսել զտէառնէն յանդիմանն նորա և օձ նեղնգաւոր խածանել լռիկ, այսպէս և բամբասողն վէրս դնէ 'ի ծածուկ և 'ի բացականսն Թափէ զԹոյնն։

Այլ մի ինձ դու, բամբասող լեզու, ասասցես երբէք, եթէ բամբասեմ 'ի չինութիւն, 'ի գեղեցիկ նախանձաւորութենէ բերեալ։ — Որ նախանձաւորութիւն, աղէ ասա, որ նախանձաւորութիւն իցէ։ Եթէ նախանձաւորութիւն է, եթէ սէր է, երթ խօսեաց ընդ յանցաւորին զոր կալծես՝ երես առ երես. լեր անվեհեր ազատադէմ ընդ աստուածային մարդարէին, և ասա. «Յանդիմանեցից զքեզ, կշտամբեցից կացեալ քո դէմ յանդիմանն.,։

Այրա, զոր հաճբաւեալն այն արար հէնն ծովու Ղոնիդէս անուն։ Յորժամ սա շղթայակապ առաջի Աղեքսանդրի մանկեդմնացոյ՝ մեծասաստ առեալ զսպառնալիսն զի հինաբար նաւարկէր ընդ ծով՝ աւազակեալ զանցաւորս, քաջասիրտս 'ի շղթայից անտի խրոց փաստաբանեալ բարբառեցաւ, և յետս զկշտամբանսն անդրէն առ Թագաւորն դարձուցանէր. «Լուր, արքայ, ,, ասէ. աղքատութիւնն աւազակ ծովու փոքր և նկուն ,, եղ զիս. այլ քո փառահիանդրութիւնդ աւազակ տիե- ,, զերաց գործեաց զքեզ։ Հէնն կոչիմ ես, քանզի սա- ,, կաւուք նաւարկեմ լաստիւք. եթէ և ընդ իմ ձեռամբ ,, էին նաւատորմիղք, ոչ ես հէնն՝ այլ իբրև զքեզ տիե- ,, զերակալ կոչէի.,։ Այսպէս խօսի, որոյ սիրտ չէ նուաղեալ քան զլեզու. այլ բամբասողք՝ որոց առաւել է լեզուն քան զսիրտ, այնչափ իմն խուսեն 'ի դէմ յանդիմանն լինելոյն, զի և զգուշեալ անգամ կէղծաւորին

digitised by A.R.A.R.@

զ յանցաւորն յանդիման նորա և գովել, զի ապա առաւել ևս ձեռնարձակ նեռաեալ 'ի նա՝ լեզուաւ իւրեանց խոցեսցեն զբացականն։ Այս ո՞ որ ոչ առեսցէ սաստկապէս զանարդ մատնտուդ։ Զէն, չէն Թիկունք ձեր ապերկեանք 'ի դոցանէ, և զնոցն արասցեն ընդ ձեզ, զոր ընդ երանելին ընդ Յոբ. "Յորժամ 'ի բացեայ, ասէ, 'ի նոցանէն լինէի, բամբասէին զիս"։

Այլ խելամուտ բուսոց բարուց եղեալ բամբասողացն, զի 'ի Թիկանց և 'ի ծածուկ և 'ի բացուստ էն նեռտաձգութիւնք դոցա, վայր մի և զայն 'ի քնին առցուք, քանի հեշտեաւ կշռեսցեն դոքա զհարուածն։ Նշուշտ 'ի հրեշ անդր ահագին օրինակեցան բամբասողք, զոր մարգարէն ետես Դանիէլ՝ գազան ահեղ և երևելի եռակարգեան զինուորեալ ժանեօք, քանզի ամենայն բամբասող ոչ ժանիս միայն ունի սայրատուրս, զոր սուսերս կոչեն գիրք. "Գնուեղ չար, ասէ, իբրև զսուսեր ունի զատամունս իւր, և զժանիս իւր իբրև զկտրոցս"։ այլ և եռակարգեանս ունի ժանիս առ 'ի հեշտեաւ հարկանել, և 'ի մի հարուած կոտորած բազում գործել։ Այլ զինչ ասեմ եռակարգեան. ապէ գուք 'ի գլխոյն մինչև ցոտն յակն միանգամ արկէք զբամբասողն, և քաջ խակ տեսանէք, զի և յամենայն անդամն ունի նա ժանիս, վերս զնել նոքօք և ապականել զհամբաւ ընկերին։ Այս եթէ ըստ օրինաց դատաստանին կամիջիք քաջ 'ի վերայ կալ իրացն, արկէք գուք և 'ի կոտանս խոստովանութեան արկէք միանգամ զմի ոք 'ի բամբասողացն. և ահա մի ըստ միոջէ ամենայն անդամք նորա խոստովան լինիցին, հարուածս քանի գործեցին նոքա բազմադիմակ տարազս։

Հապա գու առաջին մատիր, լեզու, լեր խոստովան քանիցս անգամ աղաղակեցեր զանուն բարի եղբօր քո։ — Այանիս այնչափ արկի ես, պատասխանէ լեզուն, 'ի բարեհամբաւութիւն ընկերին, որչափ միանգամ յանցանս սուտ իբրև ճշմարիտ պատմեցի զնմանէ. առակեցի զնորա թէպէտ և զճշմարիտն, այլ զծածուկն. կամ թէ զհրապարակեալ զյանցանսն քան զարժանն աճեցուցի զնորա։ Խոստովան լինիմ եթէ զժանիս իմ

digitised by A.R.A.R.@

արկի 'ի բազումն, զուն զորձեալ ստուերածս ածել առաքինի գործոց քաջնափայլ արանց, կամ ժխտելով զայնս կամ լռելով, և կամ ձախողակի մեկնաբանելով, կամ զառաքինութիւնսն գլխովին իբրու յանցաւորութիւն երևեցուցանելով։ Խոստովան լինիմ եթէ առ 'ի Ճարտար ևս զվէրն դնել, ստէպ ես զձևս հռետորականին 'ի գործ առի. ըստ որում յեռանդն պատահեցաւ ինձ յակմբի պարապորդ մարդկանն. մինչդեռ անդ խօսք 'ի մէջ անկան վասն առն միոյ իշխանի և վասն մեծահամբաւ ուրուք վարդապետի, զձև բանին՝ զոր բացագանչութիւն կոչեն, վարեցի ես, քանզի գովեստ դուզնաբեայ յառաջաբանեալ վասն իշխանին։ Իբրու որ „ կենցաղագէտ այր և յամենայնի վայելուչ կայ 'ի վի„ ճակի իւրում, այլ աւաղ, զի այդպիսի քաջնափայլ „ իշխան՝ տարփաւոր գտաւ. աւաղ, զի հազիւ երբեք „ տեսանես զդա յեկեղեցւոջ, և ահա ամբ 'ի վերայ „ բարդեցան ամաց՝ և նա չմերձենայ 'ի խորհուրդս „։ Այնպէս և վասն առն վարդապետի նախ բարեբանեալ, եթէ։ Օ իարդ բազմագէտ այր և այնչափ քաջուսումն „ և այնչափ համբաւեալն յամենայնի, աւաղ, զի այն„ պէս յամառ է նա և կամակոր, աւաղ, զի այնչափ „ անհանդարտ է նա 'ի բարսն, զի և չիք նմա ժողո„ վուրդ գտանել՝ որ զառաքինորդութիւն նորա կամեսցի „։ Այս են ինձ 'ի խօսս և այլ ձևք հռետորականին 'ի վարել. և եթէ զամենայն զիմ զխորագէտ Ճարտարութիւն կամիցիս գիտել, որովք վարիմ ես 'ի բամբասել, 'ի դատաբանել, 'ի գձձել, հարց միանգամ և զայլ անդամն. զոքա առ հասարակ են իմ հաւատարիմ պաշտօնեայք 'ի գործս յայս։

Նապա ուրեմն և դուք, աչք, 'ի խոշտանգանս։ Ասացէք մեզ։ — Այսպէս մեք ինքնին, խոստովան լինին աչք, եղծաք ապականեցաք զհամբաւ ընկերին. և դէպք քաջադէպք ետուն ուրեք 'ի կրպակի. ուր 'ի զրուցել անդ վասն զեղեցիկ համեստութեան արդոյ ուրումն տիկնոջ, հայեցեալ ընդ այլս 'ի ծածուկ նշանացի արարի աչօքս՝ իբրու անհաւան ընդ գովութիւնն։

Իսկ և դուք, անդամք ոտից, զինչ ասէք։ — Այսպէս մեր ինքնին են ժանիք 'ի խածանել զընկերն. և քաջ իսկ ցուցաք մեք զնոյն յաւուր միում 'ի կենակցութեան,

digitised by A.R.A.R.@

յորժամ գովութիւնք 'ի մէջ ընծայեցան վասն ականաւորի ուրումն առն՝ յուշ բերեալ զուղղութիւն նորա յամենայն 'ի գործս, զարդարակրօնութիւնն 'ի դատի, զանշահաստեր բարն 'ի պաշտամանն. լուեալ զայսոսիկ Ճմլեցի զոմն որ կայր ինձ առընթեր, իբրու անարժան լսելեաց իցեն գովութիւնքդ այդոքիկ։

Զէ՞ 'ի պրկոցս և դուք, բաղուկք. զինչ ունիք ասել և դուք։ — Յա՛ ոչ մեք ինքնին, ասեն, անմեղանչականք եմք, և քաջիկ յայտ արարաք մեք զնոյն յերեկոյի միում 'ի զրուցատրութեան, յորժամ բանք լինէին մեծաց գովութեանց յաղագս ջերմեռանդն մենակեցութեան աստուածահաճոյ քահանային այնորիկ, և ես խթեցի ընդ արմունկն որ կայր ինձ առընթեր, յայտ առնել՝ եթէ գովութիւնքդ այդոքիկ անհաստատիք են։

Զստանօր ապա զկայ առյ, ատենական քննութիւնն. ապա թէ ոչ, յաղագս բամբասանացն անվախճան է փուրշիշն ամբաստանութեան. և ընդ խմաստոյն կնքել պարտ է, եթէ չիք ինչ առաւել հեշտին՝ քան կապտել գողանալ զպատիւ ընկերին. զի ահաւասիկ՝ որ բամբասելն կամի՝ բամբասէ աչօք, բամբասէ ոտամբք, բամբասէ ձեռօք, բամբասէ միանգամայն ամենայն անդամօք մարմնոյն. "Զկնարիկէ աչօք, և դոփէ ոտիւք, և խօսի նշանացի մատամբ, և թիւրեալ սրտիւ հնարի զչարիս „։

Զայլ է, խելամուտ ամենայնին, ասասցէ՝ որ 'ի ձէնջ, առ 'ի անձնապահ ուրեմն լինել ինձ 'ի վտանգէ բամբասելոյն շարժութեամբք անդամոցս, և առաւել սանձարձակութեամբ լեզուին. խորհուրդ քաջ և ամենաքաջ եղիցի ինձ միակ՝ լռելն ողջոյն։ — Զնոսա վայր մի, չև է քո եղեալ յանդորր լռութեամբդ այդուիկ։ Զամբէ, նաև լռութեանն ինքնին քանիսն իցեն ժանիք. և է երբեմն՝ զի լռելն քան զիսօսելն առաւել ևս զգեղեցիկ համբաւն եղծանէ։ Զէ՞ դու խօսեաց միանգամ առաջի բամբասասէր լեզուաց վասն մարդոյ՝ զորմէ նոքա 'ի ձախողակ կարծիս իցեն. ասա նոցա, արժանի է այրդ առ 'ի ձէնջ մեծապէս սիրոյ և յարգանաց, գովեա զիմաստութիւն զառնն, զանարատութիւն վարուցն, զյաջողակութիւն 'ի ձեռնարկս և զայլն ևս.

digitised by A.R.A.R.@

նոքա անպատասխանիք՝ ինչ մի չժտեսցին ասել քեզ ընդդիմանալոյ, զի մի իբրև չարախօսք երևեսցին առաջի ատենին. այնպէս անձայնք պատասխանի արասցեն քեզ լուութեամբ միայն քահանայ՝ շարժելով զգլուխս, իբրու զգրեալն, եթէ "Ոչք անցանելին՝ հայհոյելին շարժելով զգլուխս իւրեանց.,։

Այսու 'ի խօսել քում զառնէն զայնմանէ, նոքա սկըսանիցին պշնուլ հայել 'ի վեր ընդ գեղայօրէն առաստաղն, դիտել զպրշական և զզարդն. դարձեալ և վայրապկեալ զարտեանուն զնեսցեն զծաղկազարդ գրիչսն և զանկուածոյ պատառակաղն։ Ոչ խօսիս, և նոքա 'ի խոնարհ կալցեն զաչս, պնդեսցեն զշրթունս, զսպեսցին 'ի յուսս. և խորհրդաւոր իմն լուութեամբն աղարտեսցեն զհամբաւ առնն՝ զոր ինքեանք չարբեցին, առաւել լուութեամբն այնուհիկ՝ քան խօսելովն։ Ի դէպ եկեալ համրանալոյն Օ՛աքարիայ, ըստ որում Հնգրիա խորհրդածեալ Ոսկիաբանն, բացագանչեաց. "Ո՛վ, քահանայ ձայն 'ի լուութենէն արձակեր.,. Համբացեալն Օ՛աքարիա առաւել բարձրագոչ խօսեցաւ ոչ խօսելովն, և ժողովրդեան ազգ առնէր՝ եթէ ընդ քաղաքս համբուութեանն խորհուրդք խորինք ծածկեալ կան։ Ոչապէս և այդ բամբասող համբրք՝ լուութեամբն զառնէն զայնմանէ խօսեսցին չար առաւել քան զամենայն բարի զգովչայն նորա։ Ի՛.յր այր յատենի 'ի մերձաւորացն հիասցի ընդ դժպատեհ լուութիւնն. այր այր ասասցէ ընդ միտս, առ ինչ լռեալ կայ դա այժմ, որ յառաջն խօսեր. զինչ խորհուրդ խոր կացցէ 'ի բանիդ վասն առնն՝ զոր առ հասարակ գովէ քաղաքն. զինչ իցէ խորհուրդն, զինչ. "Ո՛վ, քահանայ ձայն 'ի լուութենէն արձակի.,։ Լչ արդ դու զլուռ բամբասողդ մի կոչեսցես վաղերս կամ առիւծունս կեղեքիչս, այլ իբրև շունս համբացեալս՝ որ չհաչեն և անմունչք խածանեն. նաև ընդ խնամանոյն կոչեա զնոսա օձս դարանակալս, որ խայթեն և ոչ շշնեն։

Ի՛.յլ ես գոհանամ զի՛.ստուծոյ, ասասցէ որ, զի չեմ յայսպիսեացս ասասի. գովեմ՝ զոր գովեն. և թէպէտ ցուրտ և անոձն, սակայն և գովեմ։ — Ի՛.յլ ես ասեմ քեզ, եթէ և այդօրինակ գովութեդ են ժանիք յեղծանել զհամբաւ ընկերին. զի որ լսի՝ խելամուտ է քաջ,

digitised by A.R.A.R.@

եթէ գովէս այդչափ ցուրտ, զի մի՛ ամենևին լու՛ռ կա-
ցիցէ երևեսցիս իբրև արհամարհող. և նոյն է ասել
ոչ կամիս յայտնի անպոռնել, և անպոռնես այդ օրինակ
գովութեամբդ. և ահա վերք թշնամւոյն լաւ իցեն,
ըստ իմաստնոյն, քան զկատակոր համբոյրդ բարեկամիդ։
Լաւ կարծեսցիս թերևս չիմանալ այլոց զծածկաբանու-
թիւնն զայն զհամբաւեանն՝ զոր իմաստասէրն արտայայ-
տեաց Փանտոնիոս. "Գովութիւն առնուլ, ասէ, դուշ
նաքեայ վերք 'ի վերոյ և ցուրտ, վատթար ևս է քան
զսաստիկ և զթշնամանալից նախատինս"։ Լաւ արդ
տեսէք քանի՞ հեշտին իցէ եղծանել զանուն բարի և
մահ ածել ընկերին 'ի բարեհամբաւութեան նորա,
յորժամ բամբասասէրն նաև ըստ օրինակի օձից ոմանց
առանց խածուածոյ ժանեաց՝ զրդաբար 'ի փրփուր մի-
այն բերանոյն և 'ի թուքն՝ թափէ 'ի գովութեան անդ
զթոյնն իւր։

Լաւ կարի քաջ իրաւացի են ամենայն բանք վարդապե-
տիդ, ասասցէ ոք, և արդար կշտամբեսցես զմատնուսդ
զայդոսիկ, Հշդրտիւ նմանեալք կարձաց, որ իբրու գիրկս
ածեալ Ճիրանօքն՝ 'ի նմին գրկախառնութեանն մահ
առթեն։ Ա՛յլ ես ոչ այնպէս եմ հայր. գովեմ որ
միանգամ արժանի է գովութեան. և գովեմ շատ, և
գովեմ ջերմապէս և ոչ ցուրտս, բայց և . . . . — Շատ
է, 'ի միտ առի զբանն. իցես դու ուրեմն իբրև զվհուկս
ապականագործս, որ գդուելով և գրգռելով զաղայս՝ 'ի
նոյն և գիւթեալ կախարդեն զնոսա։ Ա՛յս այդ իսկ է
բամբասողայն արուեստ նուրբ և անօսար։ Մինչդեռ գո-
զանալ զհամբաւ բարի զեղբօրն, զինչ գործեն. սկիզբն
առնեն մահացու լեզուին՝ նախ ընծայելով եղբօրն
գովութիւնս և ներբողս. ապա ըստ նմանէ 'ի վերայ
բերեալ զբայցն, աղարտեն զամենայնն։ Ո՛վ, զիարդ
քաջ և պատուական է, ասէ, պատանիդ այդ, քանի՞
մտավարժ և ակնածու, քանի՞ ուշիմ և բարեհամբոյր,
բայց . . . . Ա՛յս "բայցդ" այդ տապալիչ ամենայնի։
Ուշիմ է, ասէն, բայց այդ յաձախեալ դորա 'ի կապելս
և յակուտիս խաղալիկաց առաւել քան 'ի խորհուրդս
եկեղեցւոյ. . . . . Լաւ այդ տիկինդ, ասէ, արդարև ար-
գոյ է յոյժ և պարկեշտ, քանի՞ տնակալուչ է, քանի՞
զրդեսէր, բայց . . . . Իսկ և ծերունիդ այդ պատուա-

digitised by A.R.A.R.@

կան ժամասէր է յոյժ, կանխապարոյց է և աղօթասէր, բայց .... ։ Ա՛վ նզովեալ երկմտութեանցն. առաւել յոյժ բարդէք կուտէք դուք 'ի վերայ եղբօրն չարիս՝ քան զամենայն ճարտարաբանութիւն առակիչ յանցաւորութեանց ընկերին։ Ա՛վ լեզու, լեզու նենգաւոր, լեզու բանսարկու. քո քանիցն են արուեստք չարաբանելոյ. լաւ էր քեզ յայտնաբարբառ բամբասել, քան զբայցն 'ի վերայ բերելով և լռելով՝ 'ի ծուփս անհնարինս և 'ի կարծիս մեծեղեռն յանցանաց յածեցուցանել զմիտս լսելեացն 'ի վերայ եղբօրն։

Հանպա դուք այսուհետև, քրիստոնեայք, արիք 'ի խնդիր. եթէ գտանիցէք ախտ մի՝ յոր առաւել ևս հեշտեաւ անկանիցի մարդ, որպէս 'ի բամբասանս։ Ղանզի և բիւրապատիկք են տարաղքն. բամբասեն ճշմարտութեամբ, բամբասեն ստութեամբ, բամբասեն խօսելով, բամբասեն լռելով, բամբասեն գովութեամբք, բամբասեն նախատանօք, բամբասեն առ հպարտութեան, առ նախանձու, առ բարկութեան. զինչ ևս. բամբասեն նաև 'ի սիրոյ և 'ի բարեպաշտութենէ։

Ա՞ւր ինձ գտանիցես դու վայր, յորում չգուցեն բամբասանք։ Իսկ որ առաւել ևս, 'ի կոչունս սեղանոց հրաւիրեալ բամբասողք, "Ուտեն զժողովուրդն իբրև կերակուր հացի ,,։ Օ՛ի թէպէտ և կարդ իցէ կերակրոցն 'ի սեղանի, իբրու որ առաջին նախաճաշն իցէ երկրորդ՝ ճաշերորդ՝ յետաճաշ. այլ հացն 'ի սկզբանէ անտի մինչև ցվերջ հանապազ կայ անդանօր. քանզի և 'ի սկզբանէ մինչև ցվերջ ցանգ են բամբասանք, "Ա՛յք ուտեին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի ,,։ Զոր զեցիկս զայս խորհրդածեաց աստուածայինն Լուկասիանոս. Ի սեղանի, ասէ, բամբասողաց "Ոչն իսկ համադամբ զանազանեալք՝ մերթ այս և մերթ այն, այլ նոյն հաց հանապազ կայ անդանօր ,,, հանապազ հաց ուտեն, զի հանապազ բամբասեն։

Ա՛ բամբասողք ժողովրդավայնք. այսպէս ուրեմն ուտէք դուք հեշտեաւ զպատիւ համբաւոյ զեղբօրն իբրև կերակուր հացի։ Ա՛մբէ, զպատիւն ասեմ համբաւոյն որ աղագաւ բանասէրքն և մատենագիրքն մեծամեծք այնչափ քիրտն թափեն, զպատիւն՝ որ աղագաւ այն-

digitised by A.R.A.R.@

չափ աղատանձնեալք և արդոյք արեամբ չափ նահատակին, զպատիւ համբաւոյն՝ ոչ աղագաւ այնչափ ծնգաս-սելոք առաւել ընտրեն ապրանուտք սենեկամուտք լինել, առաւել սիրեն զանշքութիւն, առաւել խնդրեն կրծել պատառս մուրացածոյս, ասելով ընդ խնամանոյն, "Լաւ է անուն բարի քան զմեծութիւն բազում,,. իսկ դուք այնչափ հեշտեաւ ուտէք և ծախէք զայն իբրև զհաց. "Ոչք ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի,,. Ո՛ բամբասողացն անագորոյն կիրք.

Բ. ՍԼ մի, մի միայն բամբասողացն, այլ և որոց խիղճ և ոչ մի դնեն 'ի միտս կալ և ունկնդիր բամբասողացն լինել. Ո՞ոք երբէք, աղէ ասացէք, ժամէր 'ի բամբասել, եթէ առ հասարակ միաբան խորհրդով՝ 'ի բանալ բամբասողին զբերան՝ իբրև 'ի հրապարակագոյժ նղովվելոյ 'ի բաց գարշելին, ոչ ունկն մատուցեալ և ոչ բան մի պատասխանի տուեալ. Յոգւոց հանէր երբեմն երանելին Պաւղինոս. "Օ՜ի է զի այս ախտ, ասէ, յերանդն սատիկ հարեալ է 'ի հոգիս բազմաց. առիմ արդեօք. քանզի գոգցես առ հասարակ, ասէ, մտադիւրագոյնս և հեշտաբար լսին բամբասանք,,. Այս այնպէս ասա իբրև 'ի կրկին փքոց փչմանէն զայրացեալ է բորբոքումն ախտին. Բամբասողն բերկրի 'ի բամբասելն և 'ի կրկտխելն, զի իբրև աչալուրջ այր և արթնամիտ և նրբաղնին ընդմտող մինչև 'ի մանրաթելս ուղղոյ և ճնչոյ և գործոց մարդկան պանծացուցանէ զանձն. Բերկրի անդուստ և ունկնդիրն բամբասանաց՝ իբրու խնամտակեալ զրուցաց և աղատաբերան լեզուաց սիրող և հետախնդիր.

Կամ առաքինիք են լսողք բամբասանաց, կամ մոլիք. Եթէ մոլիք, և ախտակիրք՝ կամակար լսեն զայլոց ըզչարիս, սիոփեալք յանձինս՝ զի չեն միայն. Եթէ առաքինիք, մտադիւրս լսեն և նոքա. Էր աղագաւ. զի որպէս ստուերն 'ի նկարուն յերևան առաւել բերէ զգեղափայլ գոյնն, այսպէս և թերութիւնք ընկերին առաւել ցայտեցուցանեն զփայլ առաքինութեանն. ըստ որում առ Խափշիկս նաև խուն մի սպիտակութիւն իբրև զձիւն համարեալ է.

Օ՜ինչ այսուհետև զարմանք, քրիստոնեայք, եթէ բամբասանք ընթացեալք հեղեղեցին զաշխարհ, և յընդ-

digitised by A.R.A.R.@

հանուրս առ հասարակ ածին զդատապարտութիւն։ Եվ, զիարդ Ճշգրիտ վարդապետեաց երանելին մեր Անդամ կունի հայրապետն. «Խատ չար, ասէ, և ահեղ ա„ նօրէնութիւն մոռեալ յեկեղեցի առ հասարակ զամե„ նեսեան կորուսանել. զի մինն հնայ և մինն բամբասէ, „ և երկոքեան հաւասար անօրինին. մինն գողանայ և „ միւսն բամբասէ, և միապէս պատուհասին. մինն արբենայ և միւսն զարբեցողն բամբասէ, և համանման „ դատապարտին։ Այլ ամենայն իսկ զամենայն բնու„ թիւն մեղացն մինն գործէ, և միւսն բամբասէ, և „ միահաւասար դատին և տանջին. քանզի... ոչ գողք „ և ոչ պոռնիկք և ոչ արբեցողք և ոչ բամբասողք „ զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն„։ Հնուտ է վՃիռ առաքելոյն. «Բամբասողք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն„։

Իսկ ապա մեք ուրանօր գտցուք ուղիսից բամբասանացն թուսբս ընթադրել և փակարանս, ուրանօր արդեօք։ Ա՛ռ քեզ միայն, ով սէր սուրբ, առ քեզ միայն կան դարանք փրկաւէտ դեղոց դարմանոց դժուարաբուժելի ախտին։ Զոյ ամենազօր հրոյդ է ծախել վատնել զաշխարհակուլ ուղիս բամբասանացն։ Եկեր ծածկէ զբազմութիւն մեղաց և ընդ քօղով արկանէ. իսկ բամբասողն զամենայն զչար զեղբօրն յերևանի առակէ։ Ցտարացեալքդ ուրեմն 'ի մեծ պատուիրանէն սիրոյ, բամբասողք առ հասարակ և անկնդիրք բամբասանացն, զահ բարկութեանն Աստուծոյ՝ որ աղբիւրն է սիրոյ, զիք միանգամ 'ի սրտի։

Ա՛յլ էս, ով հայր, ազատ զանձն կարծեմ՝ յատուածասատ սպառնալեացն. ոչ աղարտեմ էս զհամբաւ ընկերին, այլ զարդէն զառակեալն յայլոց՝ յայտնեմ միայն. չարդռեմ 'ի բամբասել, միայն պատմեմ զլուեալն յայլոց, և պատմեմ խորհրդապահ մարդոյ, թողեալ զՃշմարտութիւնն՝ յաղատութեան իւրում։

Օ՛ինչ ասես, այր դու. յայտնեա՛ զարդէն զառակեալն յայլոց. գործակից ուրեմն էս յանցաւորութեանն։ Ա՛ստ ամենայն իրաւանց արդարութեան և սիրոյ պատուիրանին՝ պարտ էր քեզ զայն 'ի ծածուկ պահել։ Օ՛ Աստուծոյ պատգամն ոչ լուար. «Ան մի, ասէ, ընդդէմ ընկերին քո լուար, մեռցի 'ի քեզ„։

digitised by A.R.A.R.@

Մի պատմեր և ոչ խորհրդապահին քում. չիք ծած-կութիւն զգուշացոյն՝ քան զչհանելն միանգամ բան շրթունսն։

Այս ուրեմն մեք, հայր, երկիւղիւն Աստուծոյ ըզ-գուշացեալք սանձահարեսցուք այսուհետև զլեզուս, ոչ ևս յապայս զեան հասուցանել և մահ ընկերին՝ 'ի պատիւ համբաւոյն նորա։ — Վաղ է և ամենաքաջ. այլ չէ շատ. իսկ արդ երբ հատուսցուք մեք գողու-թեանցն գործեցելոց. երբ զտուեալ զեանն տուժես-ցուք. երբ զմահունս անցեալս զբարի անուան եղբար-ցըն, երբ և կամ զիարդ 'ի կենդանութիւն փոխեսցուք։ Զաղաղակէ արդարութիւն, բողոքէ ատեանն, պահան-ջէ Աստուած. հատո զոր պարտիս. ոչ ջնջին մեղք, մինչև ոչ տացես զառեալն։

ՄԱՄՆ Բ.

Խաբէ, հասաք աւադիկ յանձուկս անհնարինս. կիրճ նեղ, անանց և դժոխըմբեր. զիարդ անցանել, զիարդ ելանել մեզ յանդորր։ Արդ աւասիկ, եղբարք, տեսանէք յստակ, շօշափեք ձեռամբ զոր ասացիս, քա-նի հեշտին է բամբասելն, և քանի դժուարին դար-մանելն։ Այս անձկութիւնք արտաքինք, անձկութիւնք ներքինք, մարտք 'ի ներքոյ և արհաւիրք արտաքոյ։ — Փութրիցս անշուշտ երջանիկ էի ես, զոչեսցէ բամբա-սողն, թէ չէր իմ երբեք սրեալ զլեզուս 'ի պատիւ, 'ի վարկ, 'ի բարի համբաւ ընկերին։

Անձկութիւնք ներքինք, քանզի անշուշտ՝ են իսկ բամբասանք զողութիւն մեծագին գանձու անուան և համբաւոյ եղբօրն. ոչ քաւեսցի առանց արժանահաս հատուցման։ Այսմ բամբասեալ առակեցեր զՀնմարիան՝ այլ զծածուկն, և կամ զսուտն։ Այթէ զսուտ, պարտք են քո ահա անհրաժեշտ յետս կոչել զբանդ, և զքեզ ինքն առակել իբրև ստախօս, իբրև չարարուեստ, ի-բրև նախանձոտ. կամ զէթ դաւանել զքեզ իբրև ան-խոհեմ, իբրև անխորհուրդ, անզգոյշ 'ի բանսդ։

Այս եթէ զՀնմարիան առակեցեր այլ զծածուկն,

digitised by A.R.A.R.@

քեզ ահա անձկութիւնք նորք. զիարդ կարկատել նո-
րոգել միանգամ զհամբաւն առանց ստահօսութեան,
Իրան քանիցն թափեսցեն աստանօր քո հարք խոս-
տովանութեան, հնարել գտանել քեզ խնամատա-
թեամբ ոչ բանի և հնար. զի մարթասցիս միան-
գամ բարեհամբաւել զընկերն առանց ստութեան։ Իսկ
առ այս քեզ աստուածաբանիցն բարոյականաց հրա-
հանգ այս եղիցի արդեօք. զի յայլ ինչ նիւթ բանի և
յայլ ինչ դէպս գովեսցես դու զընկերն և բարեբանես-
ցես, զի այսօրինակ պայծառութեամբ նորա՝ փարա-
տեսցին ստուերք վատահամբաւութեան նորա։—Իաջ
է հրահանգն և ՀՀմարիտ. այլ սակայն դուն ուրեք պա-
տահեսցէ, եթէ վէրք համբաւոյն 'ի սպառ բուժեսցի.
'ի դէպ եկեալ աստանօր Պլուտարքեայ առածին.
"Լաւէպտ և վէրն, ասէ, ապաքինեսցի, սպին մնաս-
ցէ.,։ Այլ զիարդ և կամեսցիս, կամ այսպէս կամ
այնպէս, պարտ է քեզ նահանջել զբանսդ։

Ինձ նհանջել զիմ բանն. և ո՞ ոք ասէ ինձ զայդ։
Ա՛ռ հասարակ ամենեքեան. և աւասիկ որք միանգամ
եթէ աստուածաբանք, եթէ վարդապետք, եթէ հարք
սուրբք, որչափ ինչ և քանիցս անգամ գրեցին վասն բա-
նիս այսորիկ, ոչ ոք 'ի նոցանէն, ոչ ոք ազատ զքեզ կա-
ցուսցէ 'ի պարտուց այսի։—Ա՛յլ ո՞վ զպարտդ զայդ
պատուիրանաւ հրամայէ ինձ։—Ինքնին պատիւ ըն-
կերիդ՝ զոր վատահամբաւեցեր. ինքնին իրաւունք գեր-
դաստանին այնորիկ, որ 'ի քէն արատեցաւ, և կայ
դեռ այնպէս. ինքնին Աստուած հրամայէ քեզ զայդ.
ինքնին բնութիւնն գլխովին, և ինքնին ամենայն օրի-
նաց մատեանք ազգաց և ազանց դատակնիք տան.
"Ոչ քաւին մեղք, եթէ ոչ հատուցցես զոր բար-
ձերն.,։

Զիք միջնաշաւիղ աստանօր, ո՛ քրիստոնեայ. կամ
նահանջել զսասցեալդ կամ դատապարտիլ, կամ վայր
մի աստէն առակել զքեզ կամ անդէն հիքանալ 'ի յա-
ւիտեան։—Իսկ զինչ ասա պատիւ անձինս....։—
Իսկ զինչ ասա և պատիւ ընկերիդ. իսկ զինչ ասա և
անմահ հոգիդ...։ Զիք մէջ աստանօր. անդարձ է
վճիռն. կամ նահանջել զասացեալդ, կամ դատապար-
տութիւն։ Ո՛վ քանի իցեն անձկութիւնքն.. բա՛ռք..։

digitised by A.R.A.R.@

Բ.յո՛, հայր. նահանջեցիս մոռադիր։ — Բ.յո՛ նահանջեսցես Ձնմարտիւ, գիտեմ քաջ։ Բ.յլ քանի՛ դը-ժուարին իցէ վերատին հաստատել 'ի բարի համբաւն՝ զոր կապտեցեր յեղբօրէդ բամբասանօքդ. քանի՛ դը-ժոխմբեր առնուլ ժողովել միանգամայն 'ի մի խուրձ զամենայն չարախօսութիւնդ, զոր ասա և անդ սփռեցեր որոմնացանութեամբդ։ Զոր բամբասեցեր, և այն ոք լուաւ. այլ ոչ զկայ առին իրքդ. 'ի միոյն յայլ և 'ի սմանէն 'ի միւսն անցին կարգառութեամբ բամբասանքն և սփռեցան. աղէ՛ դու ժողովեա միանգամ զնոսա, է-թէ կարես։

Բ.ար մի արկեալ քո 'ի լիճ՝ ջրոյն և ծփեալ զջուրն, ոչ նախ բոլորագիծ մի փոքրիկ գործեսցէ, յետ այնորիկ զմեծն, ապա զմեծագոյնն. մինչև ապա մի զհետ միոյ լայնածիր և բոլորակքն գնացեալ պարագրեսցեն ողջոյն զլիճն։ Ապէս և դու նստեալ ուրեք յակմբի, զուարճաբանեալ և կամ ծաղրեալ՝ բան մի պարսաքարեա՝ որ գնացեալ ընդհարցի 'ի պատիւ ընկերին. և ապա նոյն բան սկսանիցի գործել զշրջանակս իւր, և կուռ միմեանց զկնի շրջանակք բանին մեծամեծք, առձեցունք, և լայնածաւալք տարածեսցեն առ հասարակ զանուանարկութիւն զեղբօրն տուն 'ի տանէ ընդ թաղս, ընդ քաղաքն, ապա և ընդ գաւառն ողջոյն։ Բ.ըդ դարձիր դու եթէ ձեռնհաս ինչ իցես՝ առ քեզ յետս առնուլ զպարսաքարն, և զշրջանակն զամենայն եղծուլ ջնջել՝ յորս ընթացեալ ծաւալեցաւ անարգութիւն եղբօրն։ Բ.անիցն իցէ դժուարութիւնն։

Բ.պա եթէ բամբասանքն, որ մեծաքայլք ևս բնաւորեցան և երկայնասրունք, և Ձանապահ արարեալ ընդ օթևանս օթևանս սուրհանդակաց՝ միջնորդաւ նամակաց տարածեալ քարոզեալ իցեն 'ի հեռաւոր աշխարհս, զիարդ յայնժամ դարմանել մարթ իցէ։ "Բ.ա լեզու, սակաւ մի հուր զորպիսի անտառս հրդեհեսցէ..։

Բ.սես դու ինձ, եթէ նահանջես զբանդ և ընուս ըզպարտս և 'ի գործ ևս վարես զամենայն խնամն, զի տուեալ վերքն ապաքինեալ կցեսցին. այնուհետև այլ ինչ պարտք չմնան քեզ։ — Բ.աջ է. սակայն և անձկութիւն այլ 'ի կեանսդ, և առաւել ևս 'ի ժամուանդ մահուան քո. ո՛վ ժամ սոսկալի մահուն՝ յորում

digitised by A.R.A.R.@

յստակ և անաղօտ տեսցես զամենայն խակ զվարս և զգործս քո, և թէ արդեօք Հնազանդութեամբ 'ի գործ վարեցեր զամենայն զիմաստն հաստատեալոյ զպարտս արդ վատահամբաւութեան ընկերիդ։

Այս ես տակաւին ողջոյն չասացի քեզ. զիարդ դարմանել և զամենայն զվնասն՝ որ զՀետ գայցէն բամբասանացդ. քանզի բամբասանք ոչ զՀամբաւն բարի միայն գողանայ՝ որ գանձ մեծ է քան զմեծութիւնս, "Լաւ է անուն բարի քան զմեծութիւնս բազումս..." այլ և որ շահավաճառն է և աւելի 'ի ստացումն մեծութեանց։ Օ՛ի այր բարեհամբաւ 'ի բազմաց յայլոց յանձնարարութեանց 'ի վաճառս պտղաբերեալ, նաև ժամանակէիցս հարստութեամբ ընդ. արդ եթէ դու բանսարկու լեզուաւ վատահամբաւեցեր զայրն, ոչ ահա զեան մեծապէս հասուցեր ոչ համբաւոյն միայն, այլ և քսակի հիքացելոյն։

Արձեալ՝ օրիորդդ այդ աւադիկ պատրաստեալ կազմ կայ 'ի հարմանալ մեծապատիւ իշխանին այնմիկ։ Հաւաստիս խնդրեն զազգատոհմէն, զօժտէն և զվարուց կենացն և զբարուց, և դու բանսարկուդ գնացեալ և հծծես ընդ ականջս՝ պարգև առեալ 'ի միւս այլ ազգատոհմէ։ Լաւ այնուհետև Լաստուծոյ է գիտելի, արդեօք ընդ համեստուհիս համարեսցի ազգիկն։ Լաւ ապա լուր հնչի ընդ քաղաքն՝ եթէ քակեցան դաշինքն. և հիքացեալ օրիորդն անտեսեալ այնուհետև գետնաքարշ կայ իբրև ուռ որթոյ անեղուկ անպատրաստ։ Լարդ՝ հաշուեա զամենայն զգեանն՝ զոր հաստուցեր բանսարկութեամբդ դերդաստանին այնմիկ։

Խակ և վարդապետդ այդ առաքելաշնորհ հայր հոգևոր ժողովրդոց, ապաւէն մեղաւորաց, դարձուցիչ է մոլորելոց աստուածխնամ քարոզութեամբն, զի և մեծամեծս բարեբանեն զնա առ Հասարակ։ Խակ դու բամբասէր լեզու, կամ 'ի նախանձուէդ զրդեալ և կամ որ զինչ և իցէ, գնաս եղծանես ողջոյն զՀաւատարակշռութիւնն. ասես՝ ո՞ գիտէ. եթէ 'ի հոգևորաց կեղծաւորաց ոչ իցէ վարդապետդ այդ, պարզամտաց մոլորեցուցիչ. խաբող տիեզերաց։ Լ՝ինչպէս իմն ասես և բարբանջես, զի և կարօտեալ հոգիքն և մեղաւորք ուծանան 'ի քաջ հոլուէն և դադարեցուցանես զնա

digitised by A.R.A.R.@

յաստուածային գործոյն։ Լաւ վայր մի զմտաւ ած, քանիսն իցեն զոր ածեր վնասքն, ոչ միոյ՝ այլ հոգւոյ բազմաց։ Լաւ դու երբ և կամ զիսրդ դարմանեսցես։ Երկինք բարձունք են դժուարութեանցն և խորք անհնարինք դարմանոցն. և սակայն հարկ է հատուցանել՝ առ 'ի փրկիչ. ինքնին տէրն Հայաստանեայ՝ «Ի ելանիցես, մինչև հատուցանիցես զյետին նաբարակիսն»։

Լաւ զի անշուշտ այս այսպէս, 'ի գութ մեծապէս սիրոյն՝ զոր պարտիմ յաւիտենական փրկութեան ձերոյ՝ աղաչեմ եղբարք, մի մինչև ցժամ մահուն պարտապան մնասջիք վնասու օտարին։ Մի՛ եղբարք իմ, մի՛ մինչև ցժամանակ մահուն. զի եթէ արդ 'ի կեանս՝ որ ձեռնհասդ էք, այնչափ դժուարին է հատուցումն պարտուցդ այդոցիկ, 'ի մահուն զինչ լինիցի։

Լապա եթէ յետ այսր ամենայնի շահեցայց ես և ոչ ինչ, ունին զիք ինձ աղաչեմ և գիտացէք, զի եթէ հեշտին յոյժ եղև ձեզ բամբասելն, և դժուարին յոյժ դարմանն, գիտացէք ճշգրիտ զի ստուգապէս և արագ արժանահան 'ի վերայ հասցէ պատուհաս։ — Լայլ հանգիստք վայր մի։

ՄԱՍՆ Գ.

— Ո՛վ բոյ անհնարին. բաբէ, քանիսն է տասն... Օ ինչ տանջանք իցեն... Լաւ, եղբա՛կ եմ ես։ — Ո՛վ իցէ որ ողբայն. զինչ ձայն իցէ՝ որ գուժայ։ — Ձայն գուժի է և արտասուաց դատապարտելոյ ուրումն։ — Հարցէք, ո՞ իցէ։ — Խորտակաձայն եմ մեծատունն։ — Լաւ զինչ կամիս, զինչ է խնդիրդ։ — Խնդրեմ զի աղաչես. «Օ՛ի Թացցէ զծաղ մատին իւրոյ 'ի ջուր և զովացուսցէ զլեզու իմ, զի սպակիմ 'ի տապոյ սատի»։ — Ա՜հ, եթէ խորտակաձայն շուայտութիւն՝ քաղցրն է պատուհասն, և զի դու ընդելի խնդրես 'ի զովացումն։ — Պաղատիմ զքոյ՝ քանզի տանջանքս են 'ի հրոյ. «Ի՛ ջուր 'ի ջուր, աղաչեմ, Թացցէ և զովացուսցէ»։ — Լայլ ասա ինձ հիբացեալդ դու, զի է զի հուրդ

digitised by A.R.A.R.@

զլեզուդ միայն բոցակիզէ. և որ զքեզն ունին 'ի վեր հաստատանք ոտիցդ՝ չիցեն խանձողք 'ի հրոյ. և որք զմկանունսդ գանալից գործեն չիցեն խարազանք հրեղէնք. և որք 'ի լանջսդ թափ վարսեալ կան՝ չիցեն աչտեք հրաշեկք. և որք զսիրտ քո ուտեն և կրծեն՝ չիցեն որդունք և ճիւաղք հրաբունք։ Այս առ իմ՝ ապա լեզուին միայնոյ խնդրեսցես զզովացումն։ — Այո, քանզի լեզուի միայնոյ են ամենայն յանցանքն. ուստի և զամենայն զտապ բոցոյն լեզուն միայն յինքն տանի. լեզու միայն՝ ամենակատար գործարան ամենայն անօրէնութեանց. "Լեզու հուր զարդ անիրաւութեան, „ լեզու որ զամենայն մարմինն ապականէ և վառէ „ հրով զանիւ ծննդեանն, և բորբոքեալ տոչորի 'ի գեհենի „։ Այս ահա լեզուի միայնոյ ընդդէմ զինին զայրացեալ դժոխք և գեհեան ամենայն տանջանարանօքն. "Օ՛ի զովացուցէ, աղաչեմ, զլեզու իմ „։

Անշուշտ ուրեմն, որպէս խնամատութեամբ խորհրդածեաց Սկիւթացին, առաւել չարատանջեալն 'ի լեզուին բողոքարկու խորտկաճաշն և պապակեալն, անշուշտ ուրեմն 'ի կեանս իւր մեծապէս յանցեալ էր լեզուաւ իւրոյ զմի 'ի չարաթոյն բամբասողացն. "Որոյ այն „ թէ, ողջոյն մարմինն, ասէ, ազատացեալ 'ի հրակիզ „ մանէն իցէ. նա զհրդեհել լեզուին միայն աղաղակէ, „ քանզի լեզուաւն չարախօսեաց „։ Անի՛ ուրեմն բոցք մեծաբորբոք, ո՛ բամբասողք, հրով գանձեալ պահին վասն ձեր խանձել մաքրել անշիջանելի զժահր լեզուին, որով վարակեցեք զաշխարհ։ Այս թէ չդադարիք թափել զթոյն լեզուին, ահա արագ արագ ձեզ առ դուրս արժանահատն հասեալ կայ պատուհաս, "Օ՛ի տացի քեզ, ասէ, կամ զի յաւելցի քեզ, լեզու նենգաւոր. ահա սիրեցեր զբանս չարութեան, լեզու նենգաւոր. վասն այնորիկ Աստուած եղծցէ զքեզ 'ի կատարածի „։ — Այո, 'ի կատարածի կենաց քոց, անդ աստուածայինն քեզ սպասեալ մնայ արդարութիւն, անդ 'ի մահՁի մահուն քո տացէ քեզ Աստուած կանուխ ճաշակել զդառնութիւն դժոխոցն, յորժամ յուսահատ 'ի սոսկալի պահուն զուրկ 'ի խորհրդոց՝ արձակեսցես զոգիդ յաշխարհն խաւարին։ Այլ քաւ մի, մի լիցի ոչ տեր։

digitised by A.R.A.R.@

Սակայն զահի հարեալ եմ և դողամ սիրելիք, մի արդեօք պատուհաս մեծ՝ իբրու մահ իմն յանկարծամահ՝ 'ի մի հարուած առցէ տարցի զբամբասողն. պատուհաս՝ զոր սովորեցաւ Աստուած շանթել 'ի նոսա։ Սարսափիմ յաստուածային պատգամէն. «Երկիր, ասէ, 'ի տեառնէ որդեակ իմ, և ընդ բամբասողս մի հաղորդիր. քանզի յանկարծակի, ասէ, հասցէ սատակումն նոցա»։ Այո, յանկարծակի յեղակարծումն ժամու, յորում ոչ կարծիցեն, անկցին ընչասպառ բամբասողք։ Ո՛վ չարեացն։ Իսկ արդեօք արժանահան իցէ պատուհասն։ Այս կարի քաջ իրաւամբք. զի որպէս մնանիչք անարգք եղեն բամբասողք 'ի Թիկանց հարկանելով զեղբայրն, այնպէս և արդարութիւնն պահանջէ, զի մնանտու դարանակալութեամբ տարցի գնոսա մահ յանկարծ. մահ՝ որ միայն է բաւական կարձել զչարաթոյն լեզու։

Այլ բա՛ւական, սիրելիք. զինչ պատճառք սոսկալի ձեզոյն. առիմ՞ ընդդէմ բամբասողացն այդչափ խստութիւն արդարութեանն Աստուծոյ։ Ո՛վ արդարութիւն անվանելի։ Ա՛ռիմ՞. քանզի էն իսկ բամբասողք խոչք սաստիկ ընդհարեալք ընդ բիբ ականն Աստուծոյ. չիք ինչ զոր ատեայ Աստուած առաւել քան զբամբասողն. ընդէ՞ր. զի սիրտ է նորա բնաւին ներհակակիր սրտին Աստուծոյ։ Աստուած սէր է բոլորովին, աղաղակէն գիրք. բամբասողն չար է ողջոյն, թոյն համբուն։ Աստուած բնաւին քաղցր և բարի՝ անտես առնէ, քօղ մերոցս ինդրէ արկանել յանցանաց ցորչափ կեամք. բամբասողն նմին դիմամարտ ձգնի ողջոյն լրտեսել և զծածուկ թերութիւնս եղբօրն առակել։ Աստուած բոլորովին գթած և ամենողորմ. բամբասողն սիրտ անդութ, անագորոյն. չինայէ, և ոչ խուն մի թերութեան եղբօրն կարեկցեալ ողորմի։

Ո՛հ, սատանօր յանհնարին մորմոքել սրտին, և աչք ինդրեն արտասուս։ Օ իմ՞ դու, աղէ ասա, դու բամբասող, պղնձի աղիք, զիարդ դու հիբացեալդ, յանձկութեան մահուն որով դիմաք կամ յինչ ապատան 'ի խշտին դառնութեան ինդրեացես զողորմութիւն Աստուծոյ, որ և ոչ խուն մի 'ի կեանս քո ողորմեցար տկար եղբօրն. քօղ զսիրոյդ երբէք չարկեր նմա.

digitised by A.R.A.R.@

առակեցեր զծածուկս նորա, մահացուցեր զնա 'ի համբաւն, 'ի պատիւն, 'ի վարկն. և զիարդ ժառեացեալ օգնութիւն Յ[ստուծոյ կարօտեալդ 'ի վերջին պահուն,

Եվ, միասնագամ զահի հարեալ եմ և դողամ, եղբարք, եթէ անշուշտ ուրեմն՝ թէպէտ և յանկարծամահք ևս չլինիցին բամբասողք, սակայն և յուսահատք մեռցին. քանզի և այլ պատգամ աստուածայինն եհատ զվճիռն. "Յ[նողորմ դատաստան լինիցի այնոցիկ, որ ոչն առնիցեն զողորմութիւն.,. քանզի և զամենայն պտմնութիւն իւր թափեացէ 'ի նոսա Յ[ստուած, և յիւրմէն 'ի սպառ հալածեսցէ, որպէս ինքնին վկայեաց անսուտն. "Եր շինջէր, ասէ, գաղտ զընկերէն իւրմէ, զնա բացէ 'ի բաց հալածելի.,. Յ[ս զսոյն ահա քաջայայտ եղոյց աշխարհի անուանին այն և համբաւեալն բամբասող, որ 'ի վերջինս հասեալ կենացն 'ի հոգեվարսն, և յորդորակս բազումս գեղեցիկս առեալ 'ի խոստովանել և խնդրել զողորմութիւնն Յ[ստուծոյ, ետ պատասխանի. "Օ՜ինչ ողորմութիւն, որ իցէ ողորմութիւնն Յ[ստուծոյ. կամիք թերևս եթէ ինքնին Յ[ստուած ծածկեսցէ զբազմութիւն մեղայ իմոց, և քօղ զգթութեանն իւրոյ արկցէ 'ի վերայ անօրէնութեանց իմոց, որ իմ արուեստ 'ի կեանս՝ այն եղև ողջոյն չներել չողորմիլ գթելոյն՝ այլ առակել միայն զյանցանս, իբրու զանիծեալն Յ[ստուծոյ և 'ի հօրէն զԲ[ամ.,. Օ՜այս ասաց, և վայր մի 'ի դուրս զլեզուն հանեալ և մատնցոյց զնա արարեալ իբրու պատճառք յաւիտենական կորստեանն, ասէ. "Յ[յս ահա իմ լեզու չարալեզու զու դատապարտեաց զիս 'ի դժոխս.,. Օ՜այս ինչ ասաց, և իբրու դիւաբախ խածատելով զլեզուն՝ չարամահ արձակեաց զանիծակուռ հոգին 'ի վայրն անիծիչ. Զանզի անսուտ է վճիռն եթէ "Խամբասողք զարքայութիւն Յ[ստուծոյ ոչ ժառանգեն.,.

Յ[ս զիարդ ոչ, սիրելիք. յորժամ "Մահ լեզուի, որպէս վկայեաց Հնմարտութիւնն, մահ լեզուի՝ մահ դատնութեան. և լաւ են դժոխք քան զնա.,. Ղայրեն դժոխք, բայց զյանցաւորն. լեզու չար և զանցանցն այրէ. Ղայրեն դժոխք, բայց զԲ[ռիատոմի թշնամին. լեզու չար զնոյն ինքն 'ի խաչ հանել զԲ[ռիատոս, որպէս Հնգրատաբանեաց Յ[գոստինոս. Լաւ են դժոխք քան

digitised by A.R.A.R.@

զնա. քանզի հանդէս արդարութեան Աստուծոյ են դը-
ժոխք, լեզու բամբասող՝ հանդէս չարութեան մարդոյ՝
բնաւին իսկ անիրաւ։ Ցեսեալ զոք 'ի բարեպաշտից,
զնացեալ համբաւ իբրև կեղծաւոր. գտեալ զոք յողջ-
խախտից, ծաղրէ իբրև զանզգայ. տեսեալ զոք հեղա-
համբոյր, ընդ վայր հարկանէ իբրև վատասիրտ. զայր
առատաձեռն՝ իբրև շռայլ. զայր արդարակրօնի՝ իբրև
զմի յանագրպոյն բռնաւորաց։ Վա՛ւ լեզու, լեզու, ո՞չ
գ'ժոխք լաւ ևս իցէն քան զքեզ։ Այս այնուհետև ո՞չ լաւ
ևս էր բամբասողին, եթէ և բնաւ իսկ ծնեալ չէր կամ
թէ ծնեալ անլեզու։

Այլ զինչ պէտք իցէն բռնադատութեան բանակա-
նին. զառաքինութիւնն կամաւոր արասցուք, սիրելիք.
որ փեսաս իցէ լեզուին, բնաւ իսկ մեր է փեսան. նա ոչ
շարժի, եթէ չշարժեմք. և եթէ բաղումք իցէն ան-
կեալքն 'ի լեզուէ քան 'ի սրոյ, սակայն և 'ի լեզուէն
բիւրապատիկ են բարիքն. "Մա՛հ և կեանք 'ի ձեռս լե-
զուի". կործանէ զաշխարհ և շինէ զաշխարհ, եթէ
միայն կամեսցուք. թէպէտ և անդամ ևս իցէ դարձա-
դարձ և արագահոլով և բուռն և սանձակոտոր, սակայն
և երասանն 'ի ձեռս կայ բանին. սանձահարեսցուք ըզ-
բանն, և մեք մեզէն տացուք սանձանց կանոն խստու-
թեան սաստիկ պատուիրանաւ, եթէ "Այսցի պահել
զբերանս քո, զի մի մեղայցէ լեզուաւ իմով։ Մի՛, մի խօ-
սեսցի բերան իմ զգործս արդեաց մարդկան"։ Զինչ
խաբանք իցէն, որ կուրութիւն, սիրելիք. առիմ՞ զմեր
գործոց բիւրապատիկ մեք չխօսիմք, չքննեմք, չգա-
տիմք. և քանիսն իցէ շահն 'ի խօսելոյ զմերն, և քա-
նիսն իցէն տուգանքն 'ի խօսելոյ զօտարին։

Այլ զիարդ այս. եռայ արիւնն, ասէ, պայթի սիր-
տն, խլրտի լեզուն, խնդրէ թափել զթոյնն։ — Այլ
ուրեմն զզօրաւորն առցուք մեզ զդարմանն. և որ այն
իցէ։ Այս քանզի օձ խարամանոյ է հրակէզ այրիչ՝ լե-
զու չար, կոտորիչ ժողովրդոց, որպէս անդ երբեմն Իս-
րայելի, չիք հնար ապրանաց յօձէ աստի, բայց ակնկա-
ռոյց 'ի հրաշագործն յայն լինելով յօձն պղնձի։

Հաւասիկ ձեզ, եղբարք, բարձրացեալն 'ի ձող խա-
չի. ծն արիք ասա՝ եթէ արդեօք իցէն 'ի ձեզ բամբա-
սողք, ամբարձէք միանգամ զաչս. և եթէ կամիք զի

digitised by A.R.A.R.@

թալասցի օձդ հրակէզ և թոյնն հեղեալ շնչեսցի, տեսէք՝ զինչ ձեզ աստուածայինն ազդէ կերպարան 'ի խաչափայտին։ Զինչ աստուածային այս աչք անհշոյլ փակեալք 'ի սեր քո, բայց զի կոփուսցես դու զքոյ աչս 'ի յանցաւորութիւնս եղբօր քոյ։ Զինչ այդ վիրալից խոցուած կենարար կողին՝ գեղարդեամբն բացեալ 'ի սեր քո, բայց զի դու ընդարձակեսցես զսիրտ քո, և ներողամիտ գտեալ հանգուսցես 'ի ներքս սիրով զեղբայր քո։ Զինչ քեզ ապա ազդեսցին շրթունք ձնարտարանք բանին Աստուծոյ՝ համբացեալք 'ի լուութեան մահուն վասն քո, բայց զի դու 'ի լուութեան եղբայրական սիրոյն՝ կարձեսցես զչարախօս լեզուն։ Ամենի և անշուշտ լեզու ինքնին եղև անգութ գործարան չարչարանաց տերունւոյն՝ առաւել քան զամենայն տանջանարանս և զձեռս. "Ով չարաշուք զինուորայն ,, ձեռք, աղաղակեր Աստուծոյ՝ ոչ, այլ Հրեից լեզուն ,, սպան զտէրն ,,։ Ո՞ զայրասուր փուշն վարսեաց. ո՞ զլեղին դառնութեան արբոյց. ո՞ զդժնդակ բևեռն մի խեաց. և ո՞ յոտից մինչև ցգլուխ գանակոծ վիրալից զտերունի մարմինն մաշեաց. հեռ, նախանձ, զրպարտութիւն, լեզու չարաբոյն բամբասող ազգին։

Արդ եթէ յառաջն 'ի չարն վարեցեր զլեզուդ ո՛ բամբասող, յանուանարկութիւն ընկերին և յանարգութիւն Աստուծոյ, աղէ դու այսօր շարժեա զայդ լեզու 'ի խնդրել թողութիւն յԱստուծոյ, թողութիւն յեղբօրէն։ Զէ շատ, հատո զպարտս, տուր ընկերին ըզհամբաւն զոր աղարտեցեր. դարձո զպատիւն զոր բարձեր, զվարկն զոր գողացար։ Եթէ ստութեամբ բամբասեցեր, յետս ա՛ռ զասացեալն. եթէ ճշմարտութիւնք զծածուկն առակեցեր, յայլ ինչ դէպս խմնստնաբար զուլութեամբ եղբօրն լից զթերին։ Եւ այսօր անսուտ առաքաղրութեամբ առ ոտս խաչելոյս՝ զգեղեցիկ խոստումն կռեա. "Ի խօսեսցի բերան իմ զգործս արդարոց մարդկան ,, . սակայն դու տեր, "Որ պահապան ,, բերանոյ իմոյ և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի ,, խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան ,,։

Արդ եթէ անդորրաւէտ վիճակի խղճի մտաց փափաքէք, եղբարք, 'ի կեանս ձեր ողջոյն և առաւել ևս 'ի մահու, արդոյ և պատուական խրատու հարցն զհետ

digitised by A.R.A.R.@

եկայք. “Օ՛ օտարին չարեաց դու մի երբեք խօսեցիս, ոչ շատ և ոչ սակաւ ,,։ Այս ձեզ, սիրելիք, շահավաճառ մեծ 'ի կեանս, շահավաճառ 'ի մահուն, շահավաճառ մեծ ընդ ամենայն յաւիտեանս. “Օ՛ օտարին չարեաց դու մի խօսեցիս բնաւ, մի խուն մի և մի կարի ,,։ Անզի և անշուշտ անպատիւ է առածն. Եթէ “Այս միայն 'ի խաղաղութեան վայելէ, որ լսէ, տեսանէ, և լռէ ,,։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ Ե.

ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆ

"Վա՜յ աշխարհի՛ գայթակղութեանց. հարկ է զայ գայթակղութիւն, բայց վա՜յ մարդոյն, յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն. լաւ էր թէ չէր իսկ ծնեալ մարդն այն,,: Մտթ. ժբ:

Յորժամ երկինք մեծացեալք ձայն տան պրոտմանց՝ արհաւրօք լի է երկիր, գուցէ յանկարծ կամ դիւաշունչ մրրիկ առցէ զաշխարհ, կամ կարկուտ ապականագործ, կամ սահանք երկնից ողողիչք, կամ հրացան բարկութիւնք փայլատականց։ Ա.յլ քան զօրինակս ահագին եւս է, սիրելիք, կերպարան պրոտաղոյ բանից տերունեայն եւ լի մեծամեծ եւս սպառնալեօք։ Վասնզի վայք երկուք յաստուածային էլեալք բերանոյն՝ ոչ շանթս իմն մեռուցիչս մարմնոյ կամ այլ ինչ յայսպիսեաց ասոյ սպառնայ, քան թէ վայս անանցական աղէտիցն, նաեւ յանհեռութիւն գլխովին դարձուցանել զգայթակղեցուցիչ զարարածն. "Լաւ էր թէ չէր իսկ ծնեալ մարդն այն,,։ Յորժամ զահագինս զայսոսիկ բարբառեսցի մարդ վասն մարդոյ, արհաւրօք լի են բանքն. իսկ զինչ ասա յորժամ Աստուած վասն մարդոյ։ Ղիք օրինակ, սիրելիք, զահագնութիւնն՝ի դէմս բերել։ Յորժամ Աստուած բարբառի, լեզուք ամենայն լռեսցեն։ Իսկ արդ ո՞րչափ ուրեմն ահագին իցեն մեղք գայթակղութեան, այր աղաչաւ այնչափ սրտմտութիւն եւ այնչափ վայք, միանգամայն եւ այնչափ սրտառուչ գութ արարչական սիրոյն յուզեսցի՝ի վերայ կորստեան գայթակ-

digitised by A.R.A.R.@

զեցուցիչ սրարածոյն . “Այ՛, իցիւ թէ կացեալ մնացեալ էր նա յանդոյութեան իրաւմ.,,։

Ժոխրմբեր արդեաք էր տեսարան, որ 'ի նախնումն առ վայրենաթիա հեթանոս սուսերամնարտիցն հանդէս։ Օ՞ինչ հնարքք իցեն կերպարանեին, զինչ վայելչութիւն զնոսա թեան ասաց՝ խոցել և հարաւածս ածել բնութենակից մարդկանն, կալ և պարծիլ, և խնդալ և ծիծաղիլ և ելթէ և զմահաբերն կշռեաց հարաւած։ Անսիօն էր վայրենութիւնն, քանիօն և աղէտք տեսանելեաց խնամատուն մարդկանն առ հեթանոս։ Այլ տեսարան վայրենեացն այնոցիկ սուսերամնարտից, թող գոչեսցէ աստուածայինն Անգերեբան, ասա՛ղ, ոչ բարձաւ, քան թէ փոխեցաւ։ Այ՛ր տեսարան, առաւել սրանութեան և արտասուաց արժանի. ոչ մարդ զմարդ հարկանէ և սպանանէ 'ի մարմնի, այլ քրիստոնեայ ըզքրիստոնեայ՝ զկն և սուսեր 'ի ձեռին առեալ զմահաբերթի կեանս իւր զանբարիս դիակնացուցանէ 'ի հոգի։ Անգի “Զրինակ չար քրիստոնէի, զայս առաղեցին միշտ հարքն սուրբք, օրինակ չար քրիստոնէին մեռուցանէ զքրիստոնեայն,,։

Այ՛ զինչ այլ պէտք իցեն այնուհետև դիւաց շրջել 'ի վերայ երկրի և խոտորեցուցանել զմարդիկ։ Այն իսկ նոցա արբանեակք գործեսցեք 'ի վերայ երկրի բաւականք՝ յամենայն 'ի ժամանակս և 'ի դարս, պաշտօնեայք ժիրք կամակատարք նոցա, միանգամայն իսկ յամենայն դասուց և 'ի կարգաց զայթակղեցուցիչք, արք և կանայք, եկեղեցականք և աշխարհականք, աղնուականք և ռամիկք, մեծամեծք և փոքունք։

Ո՛վ զայթակղութիւն, մեծապէս անարգութիւն կրօնի. ո՛վ զայթագղութիւն, խաղաղութեան եկեղեցոյ դառնացուցիչ, հակառակորդ հանդիսացեալ աբեանն Աբրահամայ. ախա՜ որ իբրև զբաղցկեղ ճարակ դատանէ, սրածութիւն հանաշխարհական, անդուլ, անվանելի։ Ո՞ր բան բաւական իցէ, սիրելիք, զանհնարին աղէտն որ 'ի նմանէն ներգործեալ յեկեղեցի՝ 'ի դէմն բերել։ Այնչափ սովորեցաւ բնութիւնս 'ի գործել, աչք 'ի տեսանել, ականջք 'ի լսել, զի և զօր ամենայն տեսանեմք և չզգամք. զօր ամենայն լսեմք, և չլսելոյն առնեմք. զօր ամենայն գործեմք՝ և չհամարիմք ինչ։

digitised by A.R.A.R.@

Այն զի կրկին կնիքք յոյժ ահագինք յաստուա-
ծային բերանոյն տպաւորեցան 'ի մեզս յայս. Նարկ, և
Նէնծք. "Նարկ է զալ գայթագղութեան,, և "Ա այ
մարդոյն յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն,, ։ Այս
յերկուց աստի աստուածային Ճշմարտութեանց նիւթ
առցէ այսօր բան քարոզիս։ Ի հարկէն՝ իմաստասիրեա-
ցուք եթէ հեշտին յոյժ է ուրեմն մեզք գայթագղու-
թեան, որչափ ինչ չխորհին մարդիկ. այս է առաջին
գլուխ քարոզիս։ Իսկ յանիծիցն՝ իմաստասիրեացուք
եթէ մեծ է յոյժ ուրեմն չարութիւն գայթագղու-
թեանն, այնչափ՝ որչափ ինչ չկարծեն մարդիկ. այս է
երկրորդն։

Այլ դու, ո՛վ տէր, սիրող հոգւոց, դու խօսեաց 'ի
հոգիս ունկնդրացս, պտղաբեր առնելով զբան քոց պաշ-
տօնէից։ Լանխեա, աղաչեմ, ողորմութեամբ զայն ինչ,
զոր սպառնացար արդարութեամբ. առաքել զհրեշտա-
կըս քո և ժողովել յարքայութենէ քումմէ զամենայն
գայթագղութիւնս և արկանել 'ի հնոց անշէջ հրոյն.
զի մինչչև արկեալ 'ի հնոց այն, մեք չնորհօք ողորմու-
թեան քո բարձցուք զգայթագղութիւնսն, կամ՝ գէթ
նուազ արասցուք, կանուխ արկեալ 'ի հնոց հրոյն ա-
պաշխարութեան մերոյ. զի մերովսանն այժմէն մաք-
րեսցի արքայութիւն քո՝ եկեղեցի սուրբ։

ՄԱՍՆ Ա.

Զարմանալի է, սիրելիք, զի յորժամ զգայթագ-
ղութենէն լսեմք, անդէն մեք 'ի միտս մեր չափ մի և
սահման մի վայրապիակ կարգեմք մեղացս այսորիկ։ Ա-
կայն վայրապար գործեմք զայն. քանզի գայթագղեցու-
ցիչս համարիմք մեք հասարակ կարգաւ՝ զանհնարին
զեղեռնագործսն 'ի մարդկանէ, օրինակ իմն որք ամբա-
րիշտ սեղանակապուտքն իցեն, որ սոսկալի յիշոցնա-
տուքն իցեն, որ անլուր հայհոյիչքն ամենասուրբ անուանն
Աստուծոյ, որ յայտնի վարժապետք անաստուածու-
թեանն իցեն, որ ողջոյն 'ի մարմին թաղեալք, և որք
բռնաբարիչք յայտնիք պարկեշտութեան, և որ այլ և

digitised by A.R.A.R.@

հրեշք սակալիք անբանականք, ոչ միայն 'ի հաւատոյն անբանք, այլ և 'ի պատուոյն և 'ի հաղորդութեան և 'ի խելաց միանգամայն։

Այլ արդ եթէ այսոքիկ միայն իցեն գայթագղութիւնքն, և չիցեն 'ի միջի և այլ ևս գայթագղութիւնք յարբայութեան Աստուծոյ, զի ևս մեզ այնուհետև պէտք ինչ էին ելանել յայս բեմ, և 'ի բարձուէ աստի բողոք բառնալ ընդդէմ գայթագղութեան, և վասն կարևորագունի խնդրոյս 'ի հրահանգս քրիստոնէութեան քարոզ մնասուր կարգել։ Զանգի 'ի վերոյգրեալոյդ այսի ամբարիշտ եղեռնագործացդ գտանիցի արդեօք և ոչ ոք յունկնդրաց աստի խմոց։ Այլ ոչ դարձեալ ումեք 'ի քրիստոնէից բարեաց այնչափ ինչ ինչ սաբերքը իցեն ամբարշտութեան հրեշքդ այդոքիկ. քանզի մոլութիւն որ առաւելագունց է և սանձակոտոր ամենի և հրապարակագոյժ, նողոկալի է և ատելի, և չգրտանէ իւր այնչափ սիրողս և հետևողս։

Բայց են են սիրելիք և գայթագղութիւնք այլք առաւել Ճարակեալք և սովորականք և քօղարկեալք, նուազ դժնդակք քան զվերոյգրեալդ, ուստի և առաւել հեշտինք 'ի գործել, որչափ ինչ չխորհին մարդիկ։ Զանպա, դուք սիրելիք 'ի կատարեալ հրահանգութիւն ձեր 'ի մասին յայսմիկ, ունկն դիք և խելամուտ լերուք՝ որ այն իցէ զոր մեզք գայթագղութեան կոչեմք յընդհանուրս։

Ի արդապետութիւն անասուտ է հարց սրբոց առ հասարակ և ամենայն աստուածաբանից, եթէ այն ամենայն որ զեան ինչ հոգևոր առնէ ընկերին, կամ 'ի բաց 'ի բարւոյն քեցելով գնա, կամ 'ի չար անդր դրդելով գնա, թէպէտ և խօսք մի միայն իցէ, թէպէտ և շարժումն, թէպէտ և գործ մի միայն, թէպէտ թոյլտուութիւն մի անարժան և զանցառութիւն մի կարգաց և կանոնաց ընկերութեանն, ծիծաղ մի ևս անպարկեշտ, և թէպէտ և որ այլ զինչ և իցէ հանդէս և ցոյց աշխարհայնոյն ազատութեան՝ հակառակ հոգւոյ աւետարանին և քրիստոնէական զգօնութեան, յորմէ մարթ իցէ ընկերին փնասիլ ինչ մի 'ի հոգին, այն ամենայն է գայթագղութիւն, յոր աստուածայինն բերան կուտեաց զահագին անէծն և զվայս։ Այլ կատարի գայ-

digitised by A.R.A.R.@

թագաւորութիւնն կրկին Հանապարհաւ՝ մի քան զմի չար և թիւր։ Կամ ուղղակի դիտմամբ տալով զթել և անկանել ընկերին, կամ անուղղակի դիտմամբ, յորժամ 'ի գործոց ինչ և 'ի բանէ առթեացի կործանումն ընկերին։

Ընդ առաջինն՝ հարկ իցէ մեզ սիրելիք այսօր զողբն նորոգել զԵրեմիային, որ ցաւագին հեծէր՝ ամբարիշտս կոչելով զայնպիսի գայթագղեցուցիչսն, որք իբրև որսորդք նենգաւորք խաբուսիկք՝ բազմադիմ հնարիմացութեամբք շաղեն զանմեղս 'ի վարմին։ "Զտան, ասէ, 'ի մէջ ժողովրդեան իմոյ ամբարիշտք. և որոգայթս իբրև զվարսն հաւորսաց կանգնեցին ապականել զմարդիկ. և ընթռնէին իբրև զորոգայթս անկեալս լի թռչնովք. և այնպէս լի են տունք նոցա նենգութեամբք"։

Իսկ ուղղակի գայթակղութեանն՝ հանդէպս քառեակ առաջի առնէ մեզ աշխարհս հրապուրիչ։ Ընդ առաջինն է խորհուրդ, երկրորդն հրաման, երրորդն վարժութիւն, չորրորդն փորձութիւն։ Զբնակաւոր 'ի դէմս ածցուք զվարդապետութիւնս։

Սախ՝ գայթագղութիւն տայք խորհրդով դուք, ո՛ արք չարանիւթք և հետաքրքիրք. յորժամ գնայք մեծիք առ իշխանս աշխարհի, կամ առ առաջնորդս եկեղեցւոյ, և բիւրուք ոմանքք հնարիմացութեամբք և շողոմութեամբք վստահացուցանէք առ նոսա զանձինս ձեր իբրև անխարդախս ամենեին. և այնպէս ընդունիս գտեալ առաջի նոցա, յետ այնորիկ և զիշխանութիւն նոցա շրջէք դարձուցանէք՝ յոր կողմն և կամիք. և ըստ անիրաւ խորհրդոց ձերոց թելադիր լինիք առաջնորդացն, և տայք նոցա գործել զոր և կամիք, քօղ գեղեցիկ 'ի վերայ արկեալ չարութեան մնաց ձերոց։

Դարձեալ գայթագղութիւն տայք խորհրդով դուք, ո՛ քրիստոնեայք թուլահաւատք և խառնակրօնք և բարիատեացք, յորժամ կամ անկրօն կատակաբանութեամբք զբարեպաշտութիւնն գձձէք և ընդ վայր հարկանէք, կամ ապականագործ սկզբամբք նուազեցուցանէք զարհաւիրս և զգարշութիւն մեղացն. և այնպէս

1 Երեմ. 5.

digitised by A.R.A.R.@

զան գործեալ խոտորեցուցանէք զոգիս և ապականէք զսիրտս անմեղաց։

Պարձեալ գայթագղութիւն տայք խորհրդով դուք հոգիք վատք և անառագք, յորժամ զձեր մտերիմսն, զբարեկամսն և զընկերսն՝ բազմագէտս հրապուրէք գործակից, կամակից և խորհրդակից ձեզ լինել 'ի շահախնդրութիւնս ձեր՝ և 'ի կիրս թէպէտ և անբարիս և հակառակս խղճի մտաց և լուսոյ բանին։

Այս են ահա ապականագործ գայթագղութիւնք՝ որ խորհրդով։ Այր այր 'ի ձէնջ սիրելիք յուշ անձին ա բասցէ, եթէ երբէք յանցաւոր լեալ իցէ 'ի մասին յայսմիկ, և ուղղեսցէ զանձն և զգայթագղեցուցեալսն կանգնեսցէ։

Իսկ ապա երկրորդ՝ որ հրամանաւն է գայթագղութիւն, այն է՝ զոր դուք տայք ո՛ տանուտերաբք և տանտիկնայք. յորժամ զտանուտերական զիշխանութիւն ձեր և զզօրութիւն, զոր ետ ձեզ Աստուած 'ի պահպանել և 'ի փրկել զոգիս ծառայից ձերոց և զաղախնեայց և զընտանեաց, առեալ 'ի վար արկանէք մանաւանդ 'ի կործանել և յապականել զնոսա. զէն և գործի 'ի ձեռս ձեր առեալ եթէ զահ և զերկիւղ նոցա, և եթէ զյոյս ակնկալութեան նոցա, առ 'ի աջակիցս և գործօնս և սատարս յարդարել զնոսա ինչ ինչ գաղտնածածուկ անիրաւութեան գործոց ձերոց։ Այս այնպէս հիւրացեալ ծառայքն, առա՛ջ, 'ի նմին իսկ 'ի ծառայութեան իւրեանց մեղօք վարակին՝ գայթագղեալք 'ի տէրանց, և կորուսանեն զոգիս։ Սաբէ անգթութեանն 'ի ծառայս՝ յայնպիսի ապառուամ տերանց և տիկնայց. որ քան 'ի պէտս անձանց՝ 'ի մեղս իւրեանց ծառայեցուցին զնոսա։

Իսկ երրորդ՝ որ 'ի վարժութենէն է գայթագղութիւն, զայն դուք տայք ո՛ հարք և մարք և վարժապետք և դաստիարակք. յորժամ առ 'ի յարդարել զուստերս ձեր և զդստերս և զաշակերտս և զսանս ձեր ըստ ախորժակի և ըստ քմաց և ըստ սովորութեաց շնչաւոր իմաստից աշխարհիս, ինքնին դուք ազդէք և շնչէք 'ի նոսա վարժս իմն և սկզբունս կորստականս զապականութեան կենցաղոյս։ Լէ զգուշանայք, և առեալ տանիք զնոսա 'ի ժողովս և 'ի կենակցութիւնս դժպատեհս և անձահս տակաւին հասակի նոցա՝ յեղծումն անկա-

digitised by A.R.A.R.@

տար տիոյն և յեռանդն գԺպատեհ կրիցն։ Ոչ զգուշանայք, և տայք նոցա 'ի ձեռս անընտրողաբար զիրս իմն վնասակարս՝ ունել առ իւրեանս և ընթեռնուլ անխտիր, ոչ 'ի հրահանգ քան թէ յապականութիւն վարուց նոցա։ Ոչ զգուշանայք, ո՛ մարք, ծնողասէր պարկեշտութեան դատերացն, և ոչ տընկիք 'ի վերայ պարտուպատշաՃ ամենիսածութեան նոցա։ Ի՞նչ սոքիկ ամենեքեան, և որ ինչ այսպիսիք, գայթագղութիւն գնէք ոտից անմեղացն, և կորուսանէք զոգիս որդւոց։

Իսկ որ վերջին գայթագղութիւն է 'ի փորձութենէն, գայթագղութիւն զայս յանցանէք և տայք՝ ո՛ դուք միանգամայն յերկոցուն սեռիցն հրապուրիչք և բնաւ իսկ աշխարհասէրք, խեղդս իմն շրթանց բազմահնար կցկցելով, և հրապոյրս պղտորս արբուցանելով անմեղաց և լաւաց յապականութիւն և 'ի գայթագղութիւն. 'ի կերպարանս կերպարանս, եթէ երևելի հանդերձիք իցէ, եթէ հոպտանաց պՃնութեամբք, շնորհաշուք պչրանօքն, նազելի ՃեմիքՃ, եթէ պարզևօք ընծայիցն, եթէ հնարագէտ զրուցիւք տոմնակացն, եթէ նշանացի ժպտելոնն, ակնարկի յօնիւքն, խորհրդաւոր շարժմանքն, և որ ինչ այլ յայսպիսեաց աստի. որովք առաքելոյն սրբոյ կատարումն միանգամայն առնու բանն, եթէ "Որ ինչ յաշխարհի է, ցանկութիւն է մարմնոյ, ցանկութիւն է աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենաց"։

Ո՛վ աշխարհ խոտորնակ և խոտորեցուցիչ. բա՛րեկ, քո քանիսն են հնարքք և արուեստք 'ի պատրել և 'ի կորուսանել զհոգիս. այնչափ են արուեստքն, որչափ ինչ արդեօք չմարթացան հնարագիտ լինել նաև ջերմագոյնքն յառաքելոց և 'ի քարոզչաց 'ի փրկել զհոգիս։ Ո՞ զաչս իմ, սրտառուչ յոգւոց հաներ Եւրեմիաս, ո՞ զաչս իմ գնացուցաներ 'ի կրկին աղբերակս արտասուաց, լալ միշտ զհարուածեալսն, զիսոցեալսն, զսպանեալսն ժողովրդեան իմոյ. "Ո՞ տայր զգլուխս իմ 'ի ջուր, և զաչս իմ յաղբիւրս արտասուաց. և լայի զԺողովուրդս զայս զտիւ և զգիշեր, և զվիրաւորեալս դստեր ժողովրդեան իմոյ"։ Ի՞նչ ոչ զմարմնոյ ինչ, ասէ, դիտապատանկելոյն ողբամ, կամ զուրոյն թշնամեաց. այլ վասն քաղաքին ուխտադրժութեանն և վասն կործանման

digitised by A.R.A.R.@

հոգւոյն հառաչեմ և հեծեմ. “Օ՛ի ամենեքեան, ասէ, առ հասարակ ժողովուրդք արհամարհողաց. ստուգիւն և ոչ հաւատք զօրացան 'ի վերայ երկրի. 'ի չարեաց 'ի չարիս, ասէ, ելին։ Խրաքանչիւր յընկերէ իւրմէ զգոյշ լերուք. զի ամենայն եղբայր խաբելով խաբէ, և ամենայն բարեկամ նենգութեամբ գնայ ,,։

Այս ահա մեղք գայթագղութեանն, եղբարք. “Ի չարեաց, ասէ, 'ի չարիս ,,։ Գայթագղութիւն ոչ կայ մնայ 'ի միում. 'ի միոյն անցանէ 'ի միւսն, և 'ի նմանէն յայլ. և այնպէս անապատ տողի և անսահման անձէ. քանզի և բարեկամ բարեկամի և եղբայր եղբօր դարանակալ է, ասէ, և մատնտու և կործանիչ. վասն որոյ և ցանկայ թողուլ զքաղաք, թողուլ զժողովուրդն. “Ո՞տայր ինձ, գոչէ ցաւագին, ո՞ տայր ինձ յանապատի դոյզն օթեվանս, և թողուի զժողովուրդն իմ և գնայի 'ի դոցանէ. զի 'ի չարեաց 'ի չարիս ելին ,,։ Օ՛այս ողբայր յայնժամ Երեմիաս, և 'ի շուրջ պատեալ գայթագղութեանց ժողովրդեանն՝ միայնութեան անապատին իղձ լինէր։ Եթէ հանամիտք լինձ խորհիք տեարք իմ 'ի բանիս յայսմիկ, քաջ իսկ իրաւացուցանէք դուք զցաւալից զողբ և զարդար դանգատ զմարգարէին. դուք ինքնին՝ որ գիտութիւն ունիք զաշխարհի առաւել բացարձակ և առաւել փորձառական քան զմեզ։

Բանզի եթէ քառեակք են ճնանապարհք մեղաց գայթագղութեանն՝ որ ուղղակի կործանեն զհոգիս, բիւրք են, սիրելիք, սատանք և ճնանապարհք և ծնողք այնմ՝ զոր անուղղակի գայթագղութիւնս կոչեմք. իբրու այն՝ որ թէպէտ և կշռակի ուշ նպատակի չունի զհոգևորական կործանումն ընկերին, սակայն և կործանէ։ Այս գայթակղութիւն է իբրև արմատ մի, այլ յոգնաբաղուկ, հաստամուր, անեցուն 'ի խորս. և իբրև ծառ մի, այլ բազմոստեան, անմնանձիւղ տարածեալ յանբաւս. այն է բազմագլխեանն գայթագղութիւն չար օրինակին։ Օ՛այս գայթագղութիւն 'ի չար օրինակէ՝ կէսք առնուն և կործանին 'ի պատճառս տգիտութեան, և կէսք դարձեալ 'ի պատճառս տկարութեան։ Սակայն և յերկոսին դիպուածն միանգամայն յանցաւորք են և ապականագործք՝ որ միանգամ զայն գայթագղութիւն տան եղբօրն։

digitised by A.R.A.R.@

Արդ առաջին խօսելով վասն այնոցիկ՝ որ տգիտութեամբ գայթագղին և կործանին, ոչ դուք ինքնին որ հարբդ էք և մարբ, և մանկածուք և վարժապետք և դատիարակք, բազում անգամ ողբայք և գանգատէք, զի հաղիւ երբէք դուք այժմ առ ձեօք գտանէք հետս իմն երևելիս զոսկեղէն զայն զբարուցն և զվարուց և զանարատութեան գնացիցն և զանմեղ պարզութեան սրտին, որ առ ժամանակաւ հարց մերոց առաջնոց, ասէք, էին իսկ այնոքիկ կնիք զեղեցիկ նորածադիկ պատանեաց ժամանակին, բազում անգամ նաև մինչև յարբունս լիութեան հասակին նոցա։ Արդ ոչ անշուշտ ցաւոց և արտասուաց արժանի իցէ, ասէք, յորժամ տեսանեմք՝ զի զարդիս նենգաւորութիւն մտաց և անօսար չարութիւն կամաց կանուխ 'ի ծաղկին խառնեն և ապականեն զնորաբողբոջ հասակն։ Արդ այժմ մանկունք և աղջկունք այն ինչ ելեալք ըստ տիս մանկութեանն, այն ինչ վայր մի յարբունս վայելեալք լուսոյ բանին, բիւրուք ամամբք յուցակութեամբք՝ արդէն իսկ իբրու վատթարեալս և ապականեալս առակեն զանձինս։

Զ. Զի աղէ, առ ինչ է հիացումդ, մանաւանդ եթէ, սրտցաւութիւնդ ձեր։ Յորժամ այնչափ ազատութիւն խօսելոյ գրաւեաց այժմ զաշխարհ, և այնչափ համարձակութիւն 'ի կենակցութիւնս՝ անխորհուրդ և անընտրողաբար՝ անխտիր առաջի ամենայն հասակաց եթէ խօսք զազիրք, կամ բան յիմարութեան կամ զրոյց տգեղ կամ քքքիջ բերանալիք, կամ անհամեստ, ասա ցուածոյ կամ խեղկատակութիւն, ամենայնն անվայել և անձահ՝ արգոյ և պատկառելի քրիստոնէական անուանն, յորոց ասուածայինն զգուշացուցանէ առաքեալ ըզքրիստոնեայս. յորժամ, ասեմ, այս ամենայն զօրացաւ 'ի մեզ այսօր, զինչ զարմանք իցեն այնու հետև։ Զարձեալ զինչ զարմանք իցեն կանուխ յոռանալոյ մատաղերամ բազմութեանն յայնչափ օրինական գայթագղութեան. յորժամ ծառայք բերանալոյնք են առ նոքօք և ցոփաբանք, յորժամ և ընտանիք անզգուշացեալք, յորժամ և կատարելահասակքն արձակերանք։ Օ՛ի ևս յաւելուլ 'ի չարն. յորժամ նոքին իսկ ծնողք հարք և մարք և դատիարակք և վարժապետք, զոգցես 'ի մոռացմանս դարձուցեալ են այսօր զզեղեցիկ

զգուշութիւնն զբարեպաշտութեան կրօնիցն, զոր պարտական էնոքա ցուցանել առաջի անկատար և ան-ածելի հասակի պատանեկացն։ Օ որ տեսանէն, զնոցն առնէն և նոքա. զոր լսէն՝ զնոցն ասէն և նոքա. և լսէն զայնպիսի բանսն, որ 'ի փակ և 'ի թերակատար միտս պատանեկացն առնուն մուծանեն յառաջ քան զժամանակն՝ զգիտութիւն չարի։ Գիտութիւն՝ որ յատակ պարզութեան տղայական խելացն՝ մթարս 'ի վերայ ածէ։ Գիտութիւն՝ որ յառաջ քան զժամանակն զարթուցանէ զբնաւորեալն 'ի նոսա զիղձ և զկիրս դժպատեհս։ Գիտութիւն՝ որ ոչ ուց բարեաց և ընտրելոց՝ խեղդս իմն և վարսն պատրաստէ, շաղիլ 'ի զգայութիւն. և 'ի տիս հասակին այնոքիկ՝ յորում պարտ էր յապահովի առնուլ նստուցանել զնոսա ընդ պահպանութեամբ անմեղութեանն, յայնժամ 'ի մեղս ընտելացուցանէ զնոսա։

Ահա դուք, ո՛վ հարք և մարք, և առ հասարակ դուք մանկածուք և վարժապետք և դաստիարակք, որ ունիցն զնէք ինձ այսօր, խելամուտ լերուք միանգամ՝ քանիսն մեծի զգուշաւոր ակնածութեան ձեզ պէտք իցեն 'ի վարել ձեր ընդ թերակատար հասակին՝ զոր տակաւին ոչ զբաւեաց չարութիւնն։ Խելամուտ լերուք, զի գործ մի և զրուցատրութիւն մի, բան մի երկդիմի և բազմանշան, շարժումն և խօսք մի միայն, որ 'ի լուր ականջաց հաստատելոցն 'ի բարիս կամ՝ ծրդելոցն 'ի չարիս՝ չաղդէ ինչ ամենևին, այն դուշնաքեաց բան և իր՝ մնհաւրեթ խոչ ընդ ոտն է դեռահասակ պատանեկացն։ Այդ պատանեակք անդստին իսկ 'ի խայթել հետաքրքրութեանն և յեռանդուն խանդից նմանողութեանն վաղվաղակի վառին և զարթնուն, կամ՝ 'ի հետախուզել իմանալ զայն՝ զոր չիմացան, կամ՝ 'ի գործել զայն զոր ոչ զգիտացին դիտեցին յերիցագոյնս իւրեանց։ Այս այսպէս անմեղքն զայթաղղեալք կործանեսցին։

Այթէ աստուածային առաքեալն յառաջին քրիստոնէից անտի պահանջէր պահել և զգուշանալ յիրաց՝ որ պարզապէս անմեղանչականք էին, յորժամ երբէք անդուստ գայթաղղութիւն ծնանէր 'ի ոգէտս յեղբարց, նաև 'ի կերակրոց՝ որ արգելեալք չէին, և յայտ յանդիմանութեամբ վկայութիւն դնէր՝ եթէ չէ մարթ ու-

digitised by A.R.A.R.@

տել յանդիման այնոցիկ՝ որ մեղրո

առ ամենամացեալս. որոց ոչ ինչ նոր ապրելոց հանդիպելոց՝ առ նոսա 'ի ձեր խօսելն կամ 'ի գործելն. իբրու զի ապրէին իսկ զիտեն նոքա զամենայնն։

Բայլ ես զընդդէմն ասեմ, եթէ և հանայն՝ անշուշտ մեղանչէք դուք միշտ մեղօք գայթագղուիեան. քան զի եթէ եղբայր ձեր օրինակաւն զոր տայք նմա, ոչ գթէ առ ապիսուիեան, սակայն հեշտեաւ գթեացէ նա և անկցի առ տկարուիեանն։ Բայցէք ինձ անաչառ, եթէ որ տիպար մի կամ պատկեր մի լի ամենայն յայրատուիեամբ և անառակուիեամբ նկարեալ յանգիման արասցէ ձեզ 'ի տեսանել, ասիցէք թերևս անմեղ զնարդն. իբրու զի ոչ նոր ինչ տեսանելեացդ ձերոց պատկերն այն իցէ և հրապուրիչ 'ի մեզս։

Զիտեմ զի խնամատունքն 'ի ձէնջ առասցեն, եթէ յանդիմանել տեսանելեացդ զդարշուիիւնդ զայդ՝ անշուշտ 'ի մեզս գայթագղուիեան հանարեսցի։ Զանազի որք միանգամ յայս գիւրագայթ մնալին յանցաւոր շաղեալ կան, 'ի չար անպէտ հակամիտեալք են առ սկզբնական տկարուիեան. "Զիտք մարդոց, ասէ, 'ի խնամն չարին հատատեալ են 'ի մանկուիենէ իւրմէ,,. և տեսիլ հրապուրիչ պատկերիդ զդրդէ զնարդ և շարժէ զնարմին, և զոգցես բանի ձգէ 'ի մեղանչել։

Բայդ նմանատիպ օրինակիդ ասեմ և զվարել ձեր և զիսօսել և զգործել։ Զիտունք են մարդիկ ժամանակիս, լիցի այնպէս. փորձք են՝ ընդ որոց վարէիդ, քաղաքաքաղաք են, ամենամացեալք են. սակայն ամենէքեան մարդիկ են։ Զոյս զինչ օգուտ իցէ յայնցանէ, յորժամ դուք բանիւք ձերովք, կամ թէ գնացիւք, կամ թէ հրապուրիչ ինչ օրինակաւ կերպարանս իմն անբարիս արկանէք 'ի միտս նոցա. յորժամ զարթուցանէք 'ի սիրտս նոցա իզձս անարժանս, յորժամ շրջէք զկանն հաւանել 'ի չարիս, յորժամ 'ի մտերմութիւնս մեղանչականս և յընտանութիւնս անձնահս ամբէք զնոսա։ Բայց, ոչ մեղանչեն նոքա առ տգիտուիեանն, սակայն մեղանչեն առ տկարուիեանն. և զինչ օգուտ յայնմանէ, յորժամ արդարև մեղանչեն իսկ. և դուք էք որ 'ի մեղանչել գնէք նոցա քար ընդ ոտն՝ զոր չունէին նոքա։

Զարձեալ, զինչ. հանարիցիք թերևս եթէ ոչ ինչ ներգործեսջիք 'ի փորձ մարդիկդ և յամենամացեալդ։

digitised by A.R.A.R.@

Ա.յլ իցէ թէ, զփոքձն առեալ չիցէ, ձեր հակառակ ձերոցդ բանից։ Ա՝ն ձեր գիտեմք քաջ, զի կարդ ամենանման 'ի քաղաքական դաշնաւորութենէ, 'ի խորհուրդ սուրբ եկեղեցւոյ վերառեալ 'ի Աբրիատոսէ, այնուհետև որ միանգամ հոգւով սրբութեան կապին յայն խորհուրդ, շնորհս իմն մնանաւոր առնուն ամենայնքն 'ի սէր սուրբ անբակ միաբանութեան, և ողջախոհ հաւատարմութեան ընդ միմեանս։ Ա.յլ ո՞ր զբեալ կայ, կամ երբ լուաւ որ ասել, եթէ շնորհք խորհրդոյս այսորիկ զբնաւորական կիրսն բառնան 'ի մարդկանէ, և անմեղանչականս գործեալ գնոսա՝ չառն երբէք գթել նոցա յիղձս անարժանս և արգելեալս։

Ա.յլ ինձ թուի շատ ինչ առացեալս յաղագս առաջին մասին գայթագղութեան. անցցուք յերկրորդն, վայրիկ մի հանգիստ առեալ։

Մ Ա Մ Ն Բ.

Որչափ հեշտին իցէ գայթագղութիւնն 'ի գործել, որպէս լուայք ցայս վայր, այնչափ մեծ է և չարութիւն նորա՝ զոր չկարծեն մարդիկ։

Պատճառս կրկին մարթի է ինձ յառաջ բերել ձեզ, սիրելիք, վասն առաջարկութեան բանիս։ Ա՝նզի առաջին՝ մեղք գայթագղութեանն զերազանցէ չարութեամբ և քան զմեղս մեծամեծս և զանհնարին՝ որ գործին ընդդէմ ընկերին։ Այ՝ երկրորդ՝ քանզի պարարտէ յինքեանս նաև զչարութիւն ամենայն մեղայ զոս միանգամ գործէ ընկերն գայթագղեալ 'ի մերոց պատճառաց։

Այ՝ արդ քաջ միտ դիր, աղաչեմ. մեծ են անշուշտ մեղք առն գողոյ և աւազակի, որ բռնաբար մերկացուցանէ զմարդ 'ի գոյնէն զոր ժառանգէ։ Ա՝ՀԵՏ և սեն մեղք առն չարի, որ թշնամանագիր բամբասանօքն և կամ նիւթեալ զրպարտութեամբքն կողոպտէ զմարդ 'ի պատուոյն և 'ի հանքաւոյն, և առակ նշանակի կացուցանէ, ոչխարէի։ Ասկ առաւել ևս մեծ և անհնարինք են մեղք առն մարդասպանի, որ չարաղուկ տանջեալ

digitised by A.R.A.R.@

զնոյգ, նաև յարևել, և ա հասանել, գնա, իրաւունս և ոչ մի ունելով 'ի վերայ նորա զգաստաւորի և զիշխանի։

Սակայն զեան գնասուն որ յաւազակէն և որ 'ի բամբասողէն և որ 'ի մնրդասպանէն, ոչ փակէ առաջի մնրդոյ զդուռն երջանկութեան։ Այլ ինքն վկայութիւն անարատ խղճի մնայն շատ ինչ սիրտքանք են մնրդոյ յամենայն թշուառութիւնս կենցաղոյս և 'ի կորստեան ժամանակէիցս. և քաջ իսկ 'ի ձեռս է մնրդոյ Աշնարիս և միակ երջանկութիւնն՝ որ հաստատեալն է 'ի կեանս հոգւոյն և 'ի փրկութեան նորա։ Ասսի և Ցերն ինքնին զահ և զերկիւղ աշակերտացն փարատէր, "Մի երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, և յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել,,։ Կապտեն յընչից, կապտեն 'ի պատուոյն, կապտեն 'ի կենաց մնրմնոյն. այլ հոգին անդրժելի կայ 'ի նոցանէ։

Հաւասիկ ձեզ սիրելիք անհնարին չարութիւն գայթագղութեան. այս ձեռնարկ նորա, այս ուշ նպատակի նորա, զզեան գնասուն հասուցանել մինչ 'ի հոգին. հոգւոյն դրժել, զհոգին վիրաւորել, զհոգին սպանանել. յորդիութենէն Աստուծոյ կապտել. զրկել զի մի այլ ևս կեցցէ հոգին 'ի կեանս ընդհանուր։ Աչնու զգինս արեանն Քրիստոսի և գերի 'ի ծառայութիւն սատանայի. Ինչն թափել զի կացցէ մնասցէ նա այնպէս ցանց յանդերձ թշուառութեան, և 'ի վերջի առեալ յանգիտ կորուստն յուզարկէ 'ի դեհենն. "Ընդ, ասէ, իշխանութիւն արկանել 'ի դեհենն,,։ Բանիսն իցեն ազատն. բաբել անհնարին չարութեանն. զինչ կոչել պարտ իցէ զգայթագղեցուցիչն. զինչ այլ բայց զվերջինն. ոգի բերիարաց, շունչ սատանայի՝ առաջին մնրդասպանին։ Այսպիսի ինչ է գայթագղութիւն. և զիարդ այնուհետև ոչ սատանիկ վարեալ ընդդէմ սորա բաղդ հարցէ, ասասուածայինն Սոկերերան. Ի մի է, ասէ, չարութիւնն, այլ բառեակք են չարութիւնք անհնարին մեղայն գայթագղութեան։ Բանցի 'ի քնին առեալ Սոկերերան զՊաւղոսին, եթէ, "Ամն կերպարդոյ կորնչիցի տկար եղբայրն 'ի քում գիտութեան, վասն որոյ Քրիստոսն մեռաւ,,։ 'ի բառից սատանայական չարութեանն ժամանացուցանել զանսուն. "Յանցանք, ասէ, բառեակք և յանցանք յոյժ մեծամեծք զատակնքեցան

digitised by A.R.A.R.@

„'ի գայթագղութիւն։ Զոչիւն զի եղբայր, երկրորդ զի „տկար, երրորդ զի այնչափ սիրեաց զնա Քրիստոս, „մինչև զմահ Ճաշակել. և չորրորդ յետ այսր ամենայ„նի՝ զի կոմչի այն եղբայրն վասն կերակրոյ „։ Զոր դու ոչ մարդ, սպանանես քոյ գայթագղութեամբ ոչ զայլ ինչ, բայց զՀոգի. զքոյ, զՀոգի եղբօրն, զՀոգի տկարին, զՀոգի փրկելոյն. և 'ի վերջ՝ սպանանես զնա զիմբդ. իբրու վայրապար, իբրու 'ի խաղոյ, վասն դուզ նաբեայ կերակրոյ։ Հոգի եղբօր է զոր սպանանես. եղբայր քո է, զի հասարակ ունի ընդ քեզ զբնութիւնդ, զՀաւատդ, զՀայրենիսն, բազում անգամ և զզարմն և զարիւնդ. և դու զեղբայրութեան սէրն՝ զեն 'ի ձեռն առնուս յոգի հարկանել զնա իբրու զմի զբ 'ի խժդժից։

Հոգի տկարի է, այն և քեզ զինչ շահ օգտի կայցէ 'ի կոծանելն և 'ի սպանանելն զտկարն։ Զհա տկարութիւն նորա, ահա տգիտութիւն նորա, ահա պարզմտութիւնն. և դու այդոքիւք զեղծանիս 'ի կոծանել զնա. զի եթէ գիտուն լեալ էր նա և հզօր, արդեօք չէր ինչ նա չարակրեալ 'ի քոց հնարիցդ։ Զոր ոչ ա զաղաւ առաւել պարտ էր քեզ կարեկից լինել նմա և ակն ածել և ողորմել. դու վասն այնորիկ առաւել մի լեզին չարութեանդ նպաստակ առնուս զնա։

Զոր սակայն 'ի փրկել զքոյ զայն եղբայր, ահաւասիկ քեզ երկրորդն չարութիւն. 'ի փրկել զնա տէրն փառաց յերկնից յերկիր խոնարհեալ մարդ եղև, և խրատամբեր վարեալ կեանս՝ 'ի վերջ մահ դժնդակ զխաչի անարգաբար կրեաց լի ցաւոքք և դառնութեամբք. իսկ դու, անագորոյն անձն, կամիցես զի անշահ և ընդ վայր լինիցին այնչափ դութք սիրոյն Քրիստոսի, և 'ի նանիր այնչափ վաստակք և քիրան և արիւն նորա, և անսահման արդասիք մահուն 'ի դերեւն ելցեն։

Իսկ ասա այդչափ ապառուամ սիրտ վասն էր արդեօք. ահա քեզ վերջինն 'ի չարութեանց, վասն ընչեղոյն, ասէ, վասն ունկնդ բանին, "Զ սան կերակրոյ „։ Զայս վայր Աստուծոյ։

Զայդ դու, քրիստոնեայ, յորժամ վասն ունկնդ կերակրոյ լսես գայթագղեալ զեղբայրն և 'ի կորուստ մատնեալ, մի միայն անդ կացցես, խնամատարեսցես

դու և վասն այլոյն ընչեռոց պրպէս կարծես. վասն առ-
նելոյ քո և պահելոյ առ քեզ՝ ի տան զնկարդ զայդ անա-
ռակութեան հրապուրիչ, որով գայթագղի եղբայրն.
վասն չկամելոյ քո՝ ի բաց հանել՝ ի տանէդ զվատա-
նունդ զայդ, զիսպտառակն զայն, որ աղագաւ գայ-
թագղի եղբայրն. վասն ցանկալոյդ քո յիւրոյդ յայդ
անարժան յորմէ գայթագղեալ է եղբայրն. վասն չը-
դադարելոյ քո յանձնացոյց կրկնայտի, յորում գժդմնի
և գայթագղի եղբայրն. վասն կուսակիս կողմնակիս
զգածելոյ քոյ յայս ոք և յայն ոք միայն՝ զանց զայլսվքն
արարեալ ընկերօք և արհամարհեալ, որով տրամի և
գայթագղի եղբայրն. վասն սովորական քո հնարագէտ
երգիծաբանութեանցդ այդոցիկ, յորոց սրանի և գայ-
թագղի եղբայրն. վասն ջարհելոյ քո՝ որ յառաջնոր-
դութեան կացեալդ ես, զարդար չարին հաւատար առ
ամենայնան և զխոհականն՝ եթէ՝ ի բանս, եթէ՝ ի
գնացս, այլովք բազմօք հանդերձ, յորոց յամենայնէն
գայթագղեցաւ եղբայրն։

Ասան այսոցիկ ընչեռոց զոր կարծես՝ ընտրես դու
գայթագղեցուցանել և՝ ի կորուստ մնանել զեղբայրն,
զակարն, զգին արեանն Քրիստոսի. և զիմարդ ապա ոչ
կուտեսցին՝ ի քո դլուխ վայք և անէծք յաստուածային
բերանոյն. "Ա՛յ մարդոյն յորմէ ձեռն գայցէ գայթագ-
ղութիւն. լաւ էր թէ չէր իսկ ծնեալ մարդն այն. լաւ
էր երկանաբարաւ իշոյ ընկղմել նմա՝ ի խորս ծովու"։
Երջին է պատուհասն, սիրելիք, վերջին ուրեմն է և
չարութիւնն. զի ոչ միայն չար առանձին գործէ գայ-
թագղեցուցիչն, այլ և ամենայն իսկ չարութեանց՝
յորս խորդաւանէ զեղբայրն գայթագղութեամբն՝ ինքն
լինի այնուհետև պարտական ամենայնին. որպէս տես-
ջիք վաղվաղակի։

Աստուածային է պատգամն, եթէ մեղանչել գայ-
թագղութեամբ է սերմնացան լինել անզգամութի.
իսկ սերմնտուին մնայ ժողովել և զարդիւնն. "Ի
սերմանել, ասէ, զանզգամութիւն, հնձեսցէ զչարիս"։
Այս արդ ընդ ահագին դատակնիքդ խելամուտ լերուք
չարութեան գայթագղութեանն՝ ի նմին՝ իսկ՝ ի բեղմ-
նաւորութենէ արդեանցն։ Մերիս դուք, ո՞ քրիստո-
նեայք, համարեսջիք ձեզ՝ ի մեզ ոչ զայլ ինչ՝ բայց միայն

digitised by A.R.A.R.@

զգործս զձեր զանբարիս՝ որք պատճառք և խոչընդոտն եղեն կործանման ընկերին։ Այո՛ չէ այդպէս. քանզի գործք ձեր այդոքիկ նմանութիւն զգեցան զսերմանն, զոր արկէք դուք և թաղեցէք 'ի միտս և 'ի սիրտ տկար եղբօրն. և բուսաւ ապա սերմն, և աճեաց ապա 'ի հունձս բարդ 'ի բարդ։ Այլ արդ ոչ էր հունձքն. իրաւունքն պահանջէն և բանն ցուցանէ՝ եթէ ձեր էն ամենայն պտուղք արդեանցն, և դուք ինքնին էք տեարքն հնձոցն, զի դուք սերմանեցէք։ Արդ սերմանք անզգամութեան եղեն, որպէս լուայք յառաջ, ձեր հրամանքդ, ձեր վարժութիւնքն, ձեր խորհուրդքդ թիւրք և խոտորեցուցիչք, ձեր բազմադէմ փորձութիւնքդ հրապուրիչք։ Արդ ձեր ուրեմն եղիցին և ամենայն արդիւնք և ամենայն հունձք գործոց չարեաց և անիրաւութեանց, որ 'ի սերմանց անտի ձերոց արդիւնաւորեցան։ Սերմանք անզգամութեան եղեն ձեր այդ զրոյցքդ և խօսք, այդ ձեր օրինակքդ դիմակ դիմակ, ձեր սկզբունքդ այդոքիկ և առածք թիւրք և մոլորեցուցիչք, և արդ ձեր ապա եղիցին և ամենայն հունձք բիւրուց ապականութեանց սրտից և անառակութեանց վարուց՝ որովք վարակեցան այլք։

Ո՛վ հունձք դատութեան, ո՛վ հունձք անապատելիք. արտասուօք հնձեսջիք, զոր խնծղանօք սերմանեցէք։ Այլ հնձեսջիք միանգամայն զամենայնն և ժողովեսջիք զամենայնն. երբ, 'ի նմին իսկ 'ի վայրկենին, յորում սերմանեցիք։ Այլ միտ դիք ազաչեմ, քանզի թէպէտև վայր մի ժամանակ թերևս անապանեացի ընկերն տալ զպտուղն անիրաւութեան, սակայն դուք եղէք իսկ արդէն յանցաւորք և պարտապանք բանին վասն առաջիկայ պատճառին՝ զոր ետուք նմա։

Այլ այս մեծապէս իրաւամբք և փոստիս. քանզի լսիցէք յարդար դատաւորէն զայն ինչ՝ որով զամենայն չքմեղութիւն բարձցէ 'ի ձէնջ և զիւր դատաստանն իրաւացուցցէ 'ի ձեզ։ Այնքան առացէ ձեզ Աստուած. նախատես արդեաք եղէք դուք, զի ձեր այդ անբարի գնացքդ, այդ յիշոցքդ և հայհոյութիւնքդ, այդ երդմնահարութիւնքդ և բամբասանքդ, այդ անժուժկալ կիրքդ և անխիղճ ազատութիւնքդ ձեր, այլովքն հանդերձ, հրապարակագոյժք և առակեալք, մարթէին արդեաք ճարակ մնհատիթ դատանել յօրինակէն ձերմէ։

digitised by A.R.A.R.@

Լաւ եթէ տպիտութիւն մի եւս անսեռելի և յանցաւոր՝ երարձ 'ի ձէնջ զնախատեսութիւնդ զայդ, սակայն և զանպիտել և խիթալ պարտ էր ձեզ, եթէ թերեւս պատահեսցէ այլում 'ի տուեալ գայթակղութեանցդ այն ինչ՝ զոր փորձիս անձանց ձերոց գիտացէք պատահեալ ձեզ ինքնին 'ի գայթագղութենէն զոր առէք դուք յայլոց։ Յանցաւորքդ ուրեմն էք և պարտականք հաւատարակէս միանգամայն ձեր մեղացդ և օտարին։

Եղիցէ անշուշտ և կորնչիցի եղբայրն ձեր, սակայն, հիբայեալն՝ զոր գթեցուցէք. մեղիցէ անշուշտ. քանզի թէպէտ և արդարև գայթագղութիւնքն զոր ընկալաք՝ զրգեցին զնա անկանել, սակայն և զէն զօրաւոր յօրինաց խնոց և 'ի պատուիրանաց կայր 'ի ձեռս նորա 'ի պատերազմել, նաև հանձար բնաւորութ էր նորա 'ի խուսափել, նաև զօրութիւն 'ի յաղթանակել. ուստի և կամաց նորա և չարութեանն համարեսցին յանցանքքն։ Այո՛, "Ինքն անօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի" ասէ Աստուած, սակայն 'ի քէն, ո՞ ապառում անձն և մոլորեցուցիչ, 'ի քէն պահանջեմ համարս զնոցանն մեղացն և զկործանմանն. քանզի դու ինքն եղեր ամենայնին պատճառ։ Այո՛, "Անօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի, այլ զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից"։

Եվ իրաւ դատաստանին, ո՛վ արդար պատուհասին. "Զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից"։ Խաբէ քրիստոնեայքդ, և զիմարդ ապա ձողոպրիլ յահագին դատակնքոյն. զիմարդ, բայց թէ կանուխ զառաջս առնլով պատուհասին. և ի՞նչ ի՞նչ. ոչինչ այլ, բայց ձշմարիտ ապաշխարութեամբ 'ի շինութիւն գայթակղելոցն և յօրինակ բարեաց։ Խաղում և մեծամեծ մեղաց անշուշտ պարտապանք էք եղբարք. և ինքնին Աստուած միայն գիտէ՝ հոգիք քանիսն արդեօք 'ի մերոց գայթագղութեանց գթեալք և անկեալք, թերեւս և դատապարտեալք՝ այժմ 'ի դժոխոց անտի բողոք հարեալ առ Աստուած ժամեսցին և թափանձեսցին, "Մինչև յերբ տէր, սուրբ և ձշմարիտ, մինչև յերբ ոչ դատես և խնդրես զվրէժ արեան մերոց"։ Արդար է վրէժխնդրութիւնն

1 · Յայտ · 6 ·

digitised by A.R.A.R.@

և ահագին. սակայն և մեք, որպէս ասացի, զառաջս առցուք զվրիժուն Աշնարիտ ապաշխարութեամբ։ Զի թէպէտ և արիւնքն զարիւն խնդրեն, սակայն և աստանօր, ուր անձնաւ գթութեանն, որ բան բաւական իցէ յայտնել աստանօր և այլ արիւն պատուական, կենագործ և աստուածային տեառն Յիսուսի որ ընդ հակառակն գոչէ, և առաւել ևս խօսի քան զՀաբելին. այս է՝ ոչ վրէժինդրութիւն խնդրէ և ոչ մահ, այլ նեղումն և թողութիւն և փրկութիւն։ Լաւ անշուշտ լսելի լիցի առ լաւութեանն 'ի յաւիտենական հօրէն, եթէ և մեք Աշնարտապէս գործակից լիցուք Հնարհացն Աստուծոյ. զի մի թերևս մեզ ընդունայն լիցի խաչն Քրիստոսի։

Վասն որոյ և մեզ 'ի ժամուս պարտ է և հարկ է, յուշ ածել ձեզ, եղբարք, յետ տուելոցն գայթագղութեանց, և զպարտսն որ յարակիցք են Աշնարիտ ապաշխարութեան ձերոյ։ Լաւ են իսկ այսոքիկ պարտք անհրաժեշտք կրկին. Առաջին բառնալ 'ի միջոյ զգայթագղութիւնն՝ որ տակաւին զօրացեալք իցեն 'ի մեզ։ Երկրորդ դարման տանել և ընդդէմ գայթագղութեանցն՝ որ 'ի մեր պատճառս տակաւին զօրացեալք իցեն յայլս։ Լաւ արդ յետ Աշնարիտ և Ջերմեռանդն խոստովանութեամբ քաւելոյ զմեղս և վերստին նորոգելոյ 'ի սրբութեան սրտի և յերջանիկ անդորրութեան խղճի մտացն, պարտ է ձեզ առաջին փոյթ ունել բառնալ 'ի միջոյ զգայթագղութիւնն։

Օրինակ սքանչելի 'ի սքանչելին Յովսիա՝ եռուն մեզ աստուածային մատեանքն, որք և 'ի խրատ մեզ գրեցան յամենայնի։ Զի է, զի այնչափ գովութիւս անզուգականս տողեաց նմա աստուածային գիրն. "Զմանն նմա, ասէ, ոչ եղև յառաջ քան զնա թագաւոր, որ դարձաւ առ տէր յամենայն սրտէ իւրմէ և յամենայն յանձնէ իւրմէ և յամենայն զօրութենէ իւրմէ. և յետ նորա ոչ եկաց նման նմա"։ Զի՞նչ ևս այլ գովութիւն առաւել քան զայն. և էր վասն. քանզի յետ միանգամ ուխտս դնելոյ հանդերձ ժողովրդեամբն անվթար պահպանութեան օրինացն Աստուծոյ, նա ձեռն 'ի գործ այնուհետև սկսաւ սրբել զՀրէաստան յամենայն գայթագղութեանց. երարձ զբուրմն, խորտա-

digitised by A.R.A.R.@

կեաց զդրօշեալսն , յատակեաց զսեղանսն , եհատ զան-
տառսն , փշրեաց զպատկերսն , զվհուկսն զդուեաց , ըզ-
գետսն նշաւակեաց , զթերափիսմսն պղծեաց , զկուռսն
խայտառակեաց , և զամենայն գարշելիսն , ասէ , միան-
գամայն եբարձ ։

Օ ինչ և այլ Ճշգրտագոյն օրինակ դարձի առ Աս-
տուած յանկեղծաւոր սրտէ . և զինչ այլ ապացոյց
Ճշգրիտ առն գայթագղեցուցչի , եթէ 'ի բոլոր սրտէ ա-
պաշաւեալ իցէ 'ի հաշտ առնել զԱստուած և քաւել
զգայթագղութիւնսն ։ Եթէ Յովսիա 'ի ստուերին այն-
չափ առաքինացաւ , ձեզ սիրելիք 'ի լոյս աւետարանին
քանիպատիկ և առաւել ըստ նորա առաքինութեանն
պէտք իցեն նահատակել ։ Եթէ արդարև Ճշմարիտ իցէ
ապաշխարութիւնդ ձեր , անհետ ուրեմն առնել պարտ
է զամենայն գայթագղութիւնսն՝ որ տակաւին կայցեն
'ի ձեզ , որ 'ի բանիցս , որ 'ի գործոցս , որ 'ի զնացիցս ,
որ 'ի լկտի նկարուցս , որ 'ի չար և յապականագործ
գրոցս ընթերցմանէ , այլովքն հանդերձ ։ Քանիսիկ էն
գարշելիքն , այսոքիկ դրօշեալքն , այսոքիկ թերափիսքն
առ ձեզ ։ Այն են և կուռք , որ յանժուժկալ կրիցն իցեն
գայթագղութիւնք և յանարժան բարեկամութեանցն .
զորս միանգամայն բառնալ պարտ է . թէպէտ և ակն
աջոյ իցէ , լուր Քրիստոսի , հան և խլեա 'ի քէն . թէ-
պէտ և ձեռն աջոյ , հատ ընկեա 'ի քէն ։ Այս է ապա-
ցոյց Ճշմարիտ ապաշխարութեանդ 'ի վերայ մեղացն
գայթագղութեան , եթէ 'ի գեհենէն ապրել կամիցիս .
« Լաւ է քեզ , ասէ , միականի և միաձեռանի մտա-
նել 'ի կեանս , քան երկաչեայ և երկձեռն անկանել 'ի
գեհեն »։

Իսկ ապա երկրորդ պարտք անհրաժեշտ , զոր ինքնին
մեղքն գործեալք դնեն 'ի վերայ ապաշխարութեանդ ձերոյ ,
է դարման տանել ընդդէմ գայթագղութեանց , որ 'ի
ձեր պատճառս զօրացեալ են տակաւին յայլս ։ Աստանօր
մեզ արտասուաց պէտք են սիրելիք , քան բանիցս . բա՛ռք ,
զիա՞րդ այնպէս ցրտացաւ այսօր եռանդն այն գերաշ-
խարհիկ և աստուածային՝ երջանիկ դարուցն առաջնոց .
յորժամ հրապարակագոյժ մեղաւորք զանձամբ առ-
նուին զհրապարակաւ զապաշխարութիւնսն . նաև ինք-
նին աշխարհակալք անգամ և կայսերք և թագաւորք

digitised by A.R.A.R.@

քրիստոնեայք և խարազնագլեայք և մոխիր ապաշխարութեան զգլխովք ցանեալք՝ այնպէս յայնժամ առ դուռն եկեղեցւոյն արգելեալք կային առ 'ի շինութիւն գայթագղութեանցն զոր ետուն. և 'ի նեղբս երբէք ընկալեալք չլինէին նոքա 'ի հաղորդութիւն խորհրդոյն սրբութեան, մինչչև կատարեալ և անցեալ ընդ ամենայն աստիճանս հրապարակաւոր ապաշխարութեան։

Արդ թէպէտ և այսօր եկեղեցի Աստուծոյ 'ի մեծամեծ պատճառաց բերեալ նեղողութեամբ թոյլ ալար 'ի մասին յայսմիկ խստութեան իւրոց օրինացն, սակայն և հոգի նորա նոյն է տակաւին. հոգի արդարութեան, հոգի շինութեան, հոգի՝ որով պարտի մարդ փոխարինել ըստ կարի ինքսուն զոր ետ այլում։

Այս արդ աղէ ասացէք ինձ. եթէ պարտք անհրաժեշտք էն հատուցանել տեառն զգոյն, եթէ պարտք անհրաժեշտք էն դարձուցանել յեղբայրն զպատիւն և զհամբաւն. եթէ պարտք անհրաժեշտք էն փոխարինել որ զինչ և իցէ ինքսուն՝ զոր հասոյց ոք ընկերին, չիցեն արդեօք պարտք անհրաժեշտք դարման տանել և չարին, զոր հասոյց ոք հոգւոյ ընկերին. չար՝ որ քան զամենայն չար առաւել է և դժնդակ։

Այս զիարդ՞ ասա դարմանեսցուք չարիս այսմիկ. զինչ առնել պարտ իցէ։ Այո՛, չկարեմք զկորուսեալ անմեղութիւնն դարձուցանել յեղբայրն՝ զոր կործանեցաք և յանցուցաք. սակայն կարող եմք մեծապէս ջանիւ փոյթ ունել դարձուցանել զնա 'ի շնորհս, և 'ի ճանապարհն փրկութեան վերածել զնա։

Ունք այլ հնար սիրելիք 'ի բանիս յայսմիկ առ 'ի խաղաղել զխիղճ մնաց և անդորրանալ 'ի հոգի, բայց եթէ նորոգաստուր վարելով մեր կեանս, վարս ընծայելով առաքինիս զՋերմեռանդն աստուածպաշտութեան, զգուշացեալք յամենայնի երկիւղիւն Աստուծոյ, 'ի շինութիւն և յօրինակ բարի՝ տեսանելեացն և լսելեաց. որպէս զի որոց միանգամ զեան հոգևորապէս հատուցաք չար օրինակաւն, նոցուն պիտանիք և օգտակարք եղիցուք բարեաւն. և զոր քակեցաքն զնոյն մեք միանգամ շինեսցուք. և որք միանգամ սատանային առաքեալք, դարձցուք լինել առաքեալք Քրիստոսի, աստուածայնոյն նմանեալք Պաւղոսի։

digitised by A.R.A.R.@

Ո՛վ քանիցս էր զկղջն երանելոյն, յորժամ յուշ միանգամ ածէր, զի էր երբեմն ինքն հայհոյիչ և թշնամանիչ և հալածիչ եկեղեցւոյն Աստուծոյ, և աւար հարկանէր զհաւատացեալս Քրիստոսի։ Ասէ զինչ. 'ի քիրան, ասէ, և 'ի հսկմունս, 'ի պահս, 'ի գանս, 'ի բանտս, 'ի հալածանս, 'ի նեղութիւնս, վիշտք 'ի ցանկի, վիշտք 'ի ծովու, վիշտք յաւազակաց, վիշտք 'ի սուտ եղբարց, յարտասուս զցայգ և զցերեկ։ Ո՞հ, ասպանայ, ասէ, և ես ոչ հիւանդանամ. ո՞ գայթագղի, և ես ոչ տապանամ։ Զաւառել քան զամենեսեան, ասէ, վաստակեցի. որպէս ինձ յԱստուածէ մէ և շուրջ մինչև 'ի կողմանս Իլիրիկացւոց ընուլ զաւետարանն Քրիստոսի։

Զհաւասիկ մեզ եղբարք աստուածայնոյն օրինակ Պաւղոսի, որով միայն մարթիմբ յանդուգնու և յապահովի կացուցանել զմեզ 'ի վերայ Աստուծոյ և անկեղծաւոր դարձին մերոյ առ Աստուած. այս է՝ 'Ազատանձ հոգւոյն փրկութեան. 'Ազատանձ աստուածային՝ որպիսի ինչ վայելուչ պատահեսցէ առն առն 'ի ձէնջ ըստ իւրաքանչիւր վիճակի. 'Ազատանձ աղօթասիրութեան. 'Ազատանձ քրիստոնէական կատարելութեանց. 'Ազատանձ ողորմածութեան. 'Ազատանձ առաքինի խորհրդածութեան. 'Ազատանձ անսասերիւր առաջնորդութեան։ Զաւառ հասարակ յամենայնի՝ 'Ազատանձ փութոյ սնդղութեան 'ի շինութիւն և յօրինակ բարի ամենեցուն։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ Զ.

ԶԲՕՍԱՆՔ ԵՒ ԽԱՂՔ

"Երբ ուտիցէք, երբ ըմպիցէք, երբ զգենիցէք, զամենայն յանուն Յիսուսի արասջիք"։

Պատուակելոյ անձին քաղցր է հանգիստն, և տկարացեալ բնութեան պէտք են նորոգատուր զօրութեան։ Այս քանզի երբէք երբէք սփոփութիւն հարկ է ունել մարդոյ, և 'ի հանապազորդեան աշխատութենէն անդորրանալ՝ որ 'ի կենցաղումն ըստ վիճակի անձին և ըստ պարտուց իւրաքանչիւր անանձնատելիք են 'ի նմանէ, յոյժ ցանկալի էր զի սփոփութիւն ճշմարիտ և զբօսանս զեղեցիկս համարեսցի մարդ անձին իւրում՝ զնոյն ինքն ըզկատարումն գործոց բարեվարութեանն՝ որ ըստ պարտուցն իցէն, և որ ըստ պատշաճի բնութեանս, և որ ըստ սրբութեան կրօնիցս մերոց։

Այս արդեօք, սիրելիք, մարդոյ սոսկականի նաև իշխանի առն որ զբօսանք և զուարճութիւն կայցէ երբէք գերագոյն, քան յորժամ մեծապէս օգտիւ նահատակեսցի նա բարի առնել ամենեցուն, ձեռն տալ աղքատաց, պատսպարան լինել տկարաց, մխիթար վշտացելոց։ և թէ երբէք արդեամբք գործոյն ոչ յաջողեսցի, գոնեա զբաղցրութիւն բանից բերանոյն 'ի գործ առեալ՝ զուարթացուցել զտառապեալն։ Այս ուրեք՝ հաշտարար խաղաղարար 'ի մէջ մնանել, սանձ արկեալ բռնաւորութեան զօրաւորագունէն 'ի վերայ անաւագին, և է ու-

digitised by A.R.A.R.@

ըեք՝ իրաւացուցանել զանմեղն, և յարդել զարժանաւորն. մերթ քաղցրացուցանել զդառնութիւն նախանձուն և մերթ ամբել զդաժանութիւն զառելութենն. մերթ չափ տալ բամբասող բերանոյն և մերթ կարգել զլեզու յիշոցնատուին։ Եւ այսպէս առաքինացեալ նա յայսոսիկ 'ի տունջեան, դառնալ ապա ընդ երեկս 'ի տուն իւր լի արդեամբք. քանիցն իցէ յայնժամ միթարութիւն սրտի նորա. քան զոր սիրութիւն, քան զոր զբօսանս քաղցրագոյն չիցէ այն նմա, զի զօրն և զժամն աւուրն ոչ ընդ վայր ծախեաց. կեանս եկեաց զմարդոյ, և գոլծ գործեաց զբրիատնեի։

Եւ յոգիկ, սիրելիք իմ, պարտ է մեզ լինել զբօսանք մարդոյ բանաւորի. այսոքիկ սիրութիւնք և անդորրութիւնք առեստրանին դաւանողի։ Եւ յլ վա՛շ, զի եթէ 'ի պատճառաց ախտակրեալ բնութեանս մերոյ, և եթէ յանբարի դասուիարակութենէ անդատին յառաջին հասակէն, իբրու բեռինք ծանրաբեռինք համարեալ էն պարտք պաշտաման իւրաքանչիւր։ Եւ յետ 'ի գլուխ հանելոյ զայնոսիկ՝ բաղում անգամ այնպէս հարեւանցի և վեր 'ի վերոյ, խոնջեալ և վաստակաբեկեալ գտանեմք զմեզ. ուստի և իբրև կարօտեալք 'ի ինդիր ելանեմք զբօսանաց և անդորրութեան։ Եւ կարի իսկ քաջ, պարտ է մեզ և երբեմն զբօսնուլ և սփոփիլ. զնոյն և տկարութիւն բնութեանս մերոյ պահանջէ։

Հապա զբօսցուք մեք 'ի ժամուն. չեմ ես այնչափ գժիսեմ և խստամբեր. չեմ այնչափ յետասամիտ՝ դատապարտ առնել և արգելուլ միանգամայն զամենայն սփոփութիւս ընկերութեան և զբօսանս։ Եւ ոչ դարձեալ, զի եկեղեցւոյ կարգին վիճակեալ իցեմ, և վարդապետական ծանրութեան պարտք 'ի վերայ կայցեն, համարիցիք դուք զիս իբրև զվիճնամի զբօսանացդ ձերոց պարկեշտից և կարևորաց։ Եւ մանաւանդ 'ի համբոյր բարոյից բնաւորեալ բերիմ՝ ոչ միայն ձեռն տալ հաւանութեան ամենայն բանաւոր և համեստ սփոփութեանց ձերոց, այլ և մտադիր բազոյնս ձեզ պաշտպան կացեալ եմ։

Եւ՝ իսկ 'ի պայման մի՝ անհրաժեշտ իրաւամբք հրաւիրեմ միանգամայն և զբարեպաշտութիւն կրօնիցդ ձերոց, և զլոյս բանին ձերոց. զի յամենայն զբօսանս ձեր

digitised by A.R.A.R.@

և 'ի սիրտս թիւնս առ ընթեր կացցէ, անմեղութիւն, առընթեր կացցէ չարութիւն։ Անմեղութիւնն անդադարապար գործեսցէ զնոսա. չարութիւնն 'ի կարգի պահեսցէ զնոսա։ Այս այսպէս 'ի քարոզել, ասի առջիք գոբ զեղանակ զբօսանացդ ձերոց։ Այս՝ ողջիկ պահելով զպարտս զիրդն մնացդ. երկրորդ անգամ՝ ողջիկ և զիրաւունս բանականութեան ձերոյ։

ՄԱՄՆ Ա.

Զանդը կրկին միմեանց դիմամարտը այլազգաբար կալան կարծիս յաղագս զբօսանաց մարդկային կենաց, Աստիկեանք և Չպիկուրեանք։ Պայքարելոյն սկզբան առաջինքն, եթէ չար են միանգամայն ամենայն զբօսանք և սիրտս թիւնք. նոցա ընդդէմ Չպիկուրեանք՝ եթէ անխտրաբար ամենայն սիրտս թիւնք միանգամայն բարիք են։ Այս երկոքին նորա ծայրայեղք՝ հանդգնամայն վրիպեցան 'ի ճշմարտութենէ։ Զանգի որպէս 'ի բնութեան իրաց գոյ հանգիստ ինչ բնական, որ բարի է, քանզի բնութեանն 'ի ձահ է. դարձեալ և հանգիստ անբնական՝ որ չար է, քանզի դիմամարտի բնութեան. սապէս և 'ի բարոյականս գոյ մեզ անդորրութիւն և սիրտս թիւն՝ որ բարի է, յորժամ՝ իրձ մարդոյն յանկչի յառարկայն՝ որ լուսոյ բանին վայելուչ իցէ. գոյ և սիրտս թիւն անբարի, յորժամ ընդձայեալ առարկայն հակառակ է բանին և աստուածային օրինաց։ Զդդ ասել եթէ երբէք չիցէ մեզ սիրտիկ առանց յանցանելոյ, այդ խորհուրդ է յաչագիտս և մոլեգին և գառն դատաւորաց մարդկային բնութեանս։ Դարձեալ և ասել՝ եթէ 'ի սիրտս թիւնս անբարիս և մեղանչականս՝ անյանցք իցեմք, այդ թուլամնաց անբանից և մոլորելոյ էն կարծիք, որ 'ի բանաւոր մարդկանէ խնդրիցեն ջնկս ինն տաւաղել զպաճարաց անառանց՝ քան եթէ ընկերութիւն բարեկիրթ և պարկեշտ որեբոյ։

Ունիմք մեք աւետարան քաջալայելուչ յարմարեալ միանգամայն և լուսոյ բանին և տկարութեան մարդոյն. արդեալ մեզ սիրտս թիւնս անարժանս, և մնադիր

digitised by A.R.A.R.@

շնարհէ մեզ զօրինաւորութեան։ Զի՝ ուրեմն լինելոյն մեզ զբօսանքս վայրապարք և անտիսանք. այսինքն՝ իբրու որ անձնահք իցեն հասակին, անձնահք վիճակի կենացն, անձնահք և կարգի աստիճանին։

Զարձեալ մի և անբանաւորք, իբրու որ փոխանակ սիրելոյ և յանդգնիլ հանելոյ՝ խանջս և վատաղոյ գործեացեն։ Զի՝ և անիրաւք, իբրու որ հանդերձ փառաւ և անարդութեամբ կամ վատահամբաւութեամբ ընկերին զբօսեցուցցեն զմեզ։ Իցեն միշտ ըստ թեքղութեան ըստ բանին և ըստ ընարութեան խղճի մերոյն։ Այլ ոչ արդեօք այս պայմանքս և այս խնդիրքս ի բաւացիք գլխավին թուեցին մարդոյ բանաւորի և առն քրիստոնէի։

Այլ էս 'ի քնին առեալ դիրսդ, ասեմ. եթէ նուազունք են 'ի սիրութեանց և 'ի զբօսանաց, որ ըստ բնութեան իւրեանց և պարզապէս իցեն ցաւք՝ շատք 'ի նոցանէն մեղանչականք են ոչ ըստ բնութեան իւրեանց, այլ ըստ պարագայիցն, ըստ եղանակին, ըստ առանձին ախորժակաց առն առն իւրաքանչիւր։ Այլ նորին աղագաւ պարտ է մեզ յընդարձակութեան անդ զբօսանացս մերոց նախ քաջիկ 'ի քնին առնուլ անձամբ զանձինս, զնեալ խուզել զմեր կիրս, յինչ վախճանաց արդեօք բերիցիմք 'ի նոյն. իցէ՞ արդեօք բանաւորութիւն ինչ առ 'ի նոյն հակառիսութիւն. քննել զառեղիսն, զժամանակն, զպարագայսն, զբոլոր բարուց անձանցն ընդ որս զբօսանալն կամիցիմք։

Զուազունք խորհրդածեն յայսոսիկ. նուազունք այսօր զիտեն կեալ՝ առանց զիտելոյ զբօսանալ. և սակայն նուազունք բերին ախորժանօք 'ի սիրութիւնն՝ ուր միանգամ ոչն իցեն յանցաւորութիւնք։ Սաբէ, Հնարիա արդեօք իցեն բանքն. ժուժկալել աղաչեմ վայր մի և դատել անաչառ։ Կենակցութիւնք պարկեշտք ոչ արդեօք ախորժելի սիրութիւնք են առն բանաւորի, և կարի խակ քաջ։ Այլ սակ Հնդրիա խուզեալ՝ բազում անգամ որ կենակցութիւնք իցեն առաւել սիրելիք. ոչ ահա այնպիսի ուր հանձնարարեալ իմն ծաղրածութիւնք արհամարհութեան անաւագին ընդ մեջ մրատնիցեն, և առակաբանութիւնք իմն երգիծականք 'ի փառս և 'ի նշանակութիւն ընկերին։ Ուր համբաւ բա-

digitised by A.R.A.R.@

րի եղբօրն բամբասանօք 'ի չարսեթոյն լեզուայն եղծա-
նիցի։ Եւ զառողութիւն, փառախնդրութիւն, և սէր
անմաքուր, նախանձու բազմեսցին։ Զի ոչ ահա իբրու
անհոգի է կենակցութիւնն, յորժամ առընթեր չկայ-
ցեն կուռքն պաշտեցեալք 'ի սրտէն։ Զեմք և շրջա-
գայութիւնք չեն ինչ ախորժելիք առանց ընթացակցու-
թեան նոցա։ Զի ոչ արդեօք ժամք մենակեաց հան-
դարտութեանն՝ երկայնք թուեսցին և տաղտկալիք, ե-
թէ նա մերձ ոչ իցէ։ Զի յեռ այսոյիկ ասա ժտիցիք
և ասել՝ եթէ անմեղք իցեն կենակցութիւնք այդ-
պիսիք. և թէ զբան ձեր նա միայն ժխտեսցէ՝ որ ընդ
փորձ աշխարհիս անցեալ ոչ իցէ։

Զ.յլ ես, եղբարք, չեմ պարտական ունել զփորձառու-
թիւնդ զայդ աշխարհի. ուստի և յերկուացեալ յոյժ
եմ ընդ անմեղութիւն այնպիսի կենակցութեանց ձե-
րոց. զձեզ ինքնին, զձեզ դատաւորս կարդամ ձերոց
անձանց և ձերումդ գիտակցութեան մտաց։ Զնդ 'ի
ժամու այդչափ սիրատարփ կենակից խօսակցութեանց
ձերոց, աղէ ասացէք, որպիսի ինչ արդեօք խորհուրդք
յուզիցին 'ի միտս ձեր. որ այն իղձք բորբոքեսցեն ըզ-
սիրտս ձեր. և զինչպիսի բարբառք ելանիցեն 'ի բերա-
նոց ձերոց։ Զթէ այդ ամենայն անմեղք իցեն, երջա-
նիկք ուրեմն դուք 'ի կեանս ձեր, և երջանիկք 'ի մա-
հուան ձերում։

Զնթերցումն ողջամիտ և պիտանի գրոցն՝ ոչ ասա-
քէն՝ հանդերձ սփոփութեամբ մարդոյ, օգուտ ևս մե-
ծաշահ իցէ 'ի կրթութիւն անձին և 'ի հրահանգ բա-
րեկարգութեան վարուց և 'ի շինութիւն ընկերու-
թեան։ Զ.յլ վա՜յ, գիրք ողջամիտք առ բազումն այսօր
չեն ինչ այնչափ ընդունելիք 'ի սփոփութիւնս. խնդրեն
'ի զբօսանս գիրս ընդ վայրաթօսս առաւել, առասպե-
լահիւս սիրատարփս, անշահս 'ի բարեկրթութիւն
այլոցքն հանդերձ։

Զ.Զ բօսանք վայելուչք մարդկան են և խաղք աղգի
աղգիք և նարտք և տապելայք. այլ քանիք ոմանք
նատիցին 'ի խաղալ, ոչ 'ի պատճառս ինչ զբօսելոյ, այլ
սակս նկուն զոսոին առնելոյ և կապուտ կողպուտ գնա
'ի քսակէն թողլոյ, 'ի վատնդ ևս արկեալ և զանձինս
բազում անգամ մերկացուն ևս քան զանդիտուն դտա-

digitised by A.R.A.R.@

նելոյ 'ի վախճան խաղուն։ Իսկ ապա յետ այնորիկ քա-
նիցն իցէն աղէտքն, զոր ինքնին քաջ իսկ գիտէք քան
զմեզ. հիւծեալք մարեալ կան առադիկ զերդաստանք
'ի տնանկութեան, կարօտեալք, աղքատք, տանջին
յանտուաղութենէն. պարտք 'ի պարտուց վերայ առն-
ցեալ բարդին, և յուսահատք էն 'ի հատուցանելոյ։
Անանկացեալ կան վաճառականքն, և թաքթաքուր շրջ-
ին. և ծառայք հիքացեալք անվարձք ստիպին թողուլ
զտունն 'ի պատճառս յանցաւոր զբօսանացդ այդոցիկ։
Հայրենի ժառանգութիւն վատնեալ և ապառեալ, և
տեսանելիք ողորմելի զզաւակն զրանք 'ի դուռն 'ի մոյր
անկեալ գտանել զկեանս իւրեանց յօրապահիկն. և
ընդէր արդեօք. քանզի հայր նոցա ցանգ թարթա-
փեալ զբօսնոյր 'ի խաղս։

Իցէ՞ն այդոքիկ, աղէ՜ ասացէք, իցէ՞ն այդոքիկ սիս-
փութիւնք և զբօսանք. և ո՞չ առաւել ողբք և արտա-
սուք։ Եւ ապա յետ դժպատեհ և անարժան գործոցն,
ժամին ևս ասել եթէ վա՜յ, զի զբօսեցաք մեք առադիկ,
ոգի առեալ սփոփեցաք վայր մի 'ի հոգոց և յաշխա-
տութեանց։

Զոր զքեզ ինքնին խաբէս, ո՞վ մարդ, աղաղակէ
Աստուծոն ոսկի, զոր ես քո գառաձանն. չէն զորքս սիս-
փութիւնք, չէն զբօսանք այլ յանցաւորութիւնք։ Զի՞
որ երբէք արժան համարեցար զբօսնուլ հանդերձ անի-
բաւութեամբ։ Զի՞ որ երբէք անուն խաղոց կարդաց
սեղանակատութեանցն։ Զի՞ որ երբէք զմեծեղեան
զանօրէնութիւնս գունագեղեաց ընդ հովանեաւ հեշ-
տութեան ծաղս։ Զի՞ երևեաս անշահ գլխովին և վայրա-
պար համարիցիմք զուրախութիւնն վայելուչ տուեալ
քնութեանս. և չիցէ՞ հնար երբէք խնդալ և սիսիկ և
զուարճանալ առանց մեղաց։ Ո՜ այսոսիկ Աստուծոն ոսկի։

Բայց ես, սիրելիք, չգիտեմ՞ ասել՝ եթէ արդեօք
զոր ժամանակիս մերոյ իցէ՞ առաւել գովելի 'ի պատ-
ճառս բարգաւաճելոյ գիտութեանց և արուեստից, ե-
թէ առաւել պարսաւելի 'ի պատճառս յօրանալոյ 'ի
փափկութեան, և հանապազորդելոյ յանտեղի և յան-
արժան զբօսանս։

Ի դարսն յայնոսիկ՝ զոր մեք բարբարոսական սովո-
րիմք կոչել դարս, էին իսկ սփոփութիւնք և զբօսանք՝

digitised by A.R.A.R.@

թէպէտ և լի էրտամբք և վստահակօր, սակայն էին բանաւորք առաւել և անմեղք առաւել քան զմեզ։ Որքա առաւել պարկեշտացեալ էին 'ի կենսակցութիւնս, 'ի ժողովս և 'ի հանդիսաւորութիւնս իւրեանց, որպէս ընթեռնումք 'ի հնոց պատմութիւնս։ Որքա ըստ մեծ մասն գիշերոյն, կամ թէ երբէք զոգջոյն, ոչ ծախէին 'ի տասպելայս խաղուց։ Որոցա սիրտքն և զբօսանքն էին առաւել մարմնոյ կրթութիւնք, տէգրն, կէսք, ձիրնթացք, արդնընկէսք, գօտեմարտք, մսկանք, այլովքն հանդերձ, առ 'ի կորովիս առաւել յարդարել զմարդիկ և արիացուցանել առաւել գբաղաքացիս. և որք միանգամ քաջանային յայսոսիկ, առնուին զմրցանակն, 'ի նախանձ բարեբաւութեան վառել զայլս և նահատակել 'ի պաշտպանութիւն քաղաքին։

Սակայն 'ի մեծամեծ հոլովմունս ժամանակաց է տեսանել և փոփոխութիւնս մեծամեծս և նորութիւնս, այլ իցէ թէ լաւագոյնս քան զհնոցն։ Եւ եթէ մեք 'ի հարցն մերոց 'ի պիտեան սովորութեանցն յոռացաք, մեր յետինքն զմեզ անցանիցեն։

Այլ կամիք ասասնոր քաջախոհութեամբ խորհուրդ հարցանել մեզ 'ի լուսոյ բանին՝ միանգամայն և 'ի կրօնիցս մերոց։ Ո՞ որ 'ի մարդկանէ առաւել ապերջանիկ իցէ քան զայն, որ յետասամիտ խորհրդով և անխորաբար անձնագրաւ լինիցի 'ի սիրտս թիւնս սխոտակիրս։ Անգի բերկրութիւնն որ 'ի նոցանէ՝ տարապայման դեգերմամբն ինքնին չքանայ և 'ի հեշտութենէն անկանի. սակայն և զցանկութիւնն նորագտակս միտ 'ի նոսին դեգերելոյ՝ ոչ երբէք կորուսանէ։ Ասասի և է իսկ տեսանել՝ զի այնպիսին չէ յանդգնելու և ոչ վայրկեան մի ժամանակի. քանզի այն ինչ մեկնեալ 'ի պատկերէ յանցաւոր սիրտս թեանն այնորիկ, կիրս իմն յայնժամ կրէ նա դժոխրմբերս, իբրու պատուհաս կամաւոր զանձամբ առեալ զեղեռնագործ դատապարտելոյն։ Զնացեալ մեռանայ ընդ երեկս 'ի տուն իւր, այլ դառնացեալ սրտիւ՝ զի այնպէս չարաչար ծախեաց զերկայնութիւն աւուրն։ Օ արթնու ընդ առաւօտն դառնութեամբ, ոչինչ ամենևին հաշակ առեալ զբաղդութեան գիշերոյն յանդգնրամիտ հնձելոյն։ Ա՞սասիր դու յայնժամ առնա, և խօսեաց ինչ մի, կամ խորհուրդ

digitised by A.R.A.R.@

մի առնուլ եթէ վասն քո, կամ մաղթել ինչ 'ի նմանէ վասն պիտոյիցդ, և գտանիցես դու զնա իբրև անզգայացեալ ոմն և տարտամ։ Այսրա ողջոյն միտք և խորհուրդք այլուր են, յածին անձնամատն 'ի յոյզս յետսամիտ սիրոփութեանց իւրոց և խաղուց։

Իսկ արդ զինչ ասա պտղաբերեսցէ նա յանձին իւրում յայնցանէ. ոչ ինչ այլ, բայց խայթ խղճի, և դառնութիւն սրտի, և տրտմութիւն ոգւոյ և ասպաշաւ մտաց։ Այս իցեն այսոքիկ ողջոյն նշաւակութիւնք և առակումն հասակի պատանեկութեան նորա, և յաւուր միում եղիցին և անարգութիւն ծերութեան նորա։

Իսկ որ չար և ս է, այր այդպիսի թշնամացեալ է ընդ Աստուծոյ, և նշաւակ է ահագին արդարութեան նորա։ "Վայ ձեզ, ասէ Աստուած, որ զաւուրս ձեր 'ի սիրոփութիւնս անցուցանէք և 'ի փափկութիւնս, և զանցանէք անարգութեամբ զուխտիս խնամ.,,։ Յանցաւորութեան փափկութեանցդ մահն միայն արասցէ կատարած, և սկիզբն յայնժամ եղիցի անանցական տուժիցն։ Արչաւի միանգամ փափկացայք յամբարշտութեան, նովին չափով կայ մնայ և պատուհաս և դառնութիւն անվախճան. "Հատուցէք դմա, ասէ, երկապատիկ ըստ գործոց նորա. որչափ փառաւորեաց զինքն և խայտաց, այնչափ հատուցէք դմա սուգ '.,. "Այս ըզբաժակն զոր խառնեաց, խառնեցէք դմա կրկին.,։ Զարբ, և զիարդ երբէք հնար իցէ քրիստոնէի սիրոփիլ և բերկրիլ 'ի թշնամութեանն ընդ Աստուծոյ և 'ի տուժի հոգւոյն։ Ո՞վ որ այնպէս խօթամիտ, որ զբաժակն զմայլման արբցէ բերկրանօք, յորում դեղ մահու խառնեալ իցէ։ Այս չիցէ՞ մեզ մարթ երբէք քաղցրանալ 'ի սիրոփութիւնս առանց դառնացուցանելոյ զԱստուած, որպէս ասաց Յերեմն ոսկի։

Հապա ուրեմն, քրիստոնեայք, զբօսեցարուք քաջ իսկ, սակայն ազատ 'ի մեղաց։ Անմեղութիւնն ինքնին անդատապարտ գործեսցէ զզբօսանսն, որպէս ասացի. սակայն չէ շատ. պէտք են և չափաւորութեան 'ի կարգի դնել զայնոսիկ, որպէս տեսջիք վաղվաղակի։

1 Յայտ. ԺԸ.

digitised by A.R.A.R.@

ՄԱՍ Բ.

Պոլութիւնս կրկին ներհակակիրս ակնարկեն վարդապետք 'ի սիրուութիւնս զբօսանաց, Յստուութիւն և Անչափութիւն։ Յստուութիւնն չտայ թոյլ ճաշակ ինչ առնուլ նաև զօրինաւոր զբօսանաց. անչափութիւնն եղծանէ ողջոյն զսահման նոցա։ Առաջինն էր Վիսնի. կեան անուանեալ մարդատեցիցն վայրենեաց՝ թշնամեաց ընկերութեան. սոքա միշտ բնաւորեալք 'ի յողբ և 'ի լալ՝ կամ 'ի պատճառս կարի ծերացեալ հասակի կամ թէ 'ի մելամաղձային խառնուածոյն, չկամէին տեսանել յայլս՝ բայց կերպարանս իմն լուրջս, անժպիտս, սեամաղձայինս և սգաւորս։ Իսկ երկրորդ մոլութիւն հաստատեալ է 'ի տարապայման սիրութիւնն՝ թէպէտ և օրինաւորք ևս իցեն։

Երկոքեանն ևս են յանցաւորութիւնք. առաջինն՝ իբրև դիմամարտեալ կանոնաց լուսոյ բանին, երկրորդն՝ իբրու զանցեալ զկանոնօք բանին։ Անզի անընդել և վայրագ դժնէութեամբ ծանրանալ 'ի վերայ այլոց, արգելուլ նաև զբանաւոր զբօսանսն, ընդդէմ է կանոնաց բանին։ Իսկ և սաստիկ ըղձմամբ անձնագրաւ զակատիլ 'ի զբօսանս, չէ առն բանաւորի, ևս առաւել առն քրիստոնէի։

Եւ արդ աղէ, ո՞չ իբրու դեղք են սիրութիւնք բնութեանս դարմանիչք, և իբրև արդարև կերակուր՝ զօրութեանն կազդուրիչ. և ո՞ ոչ գիտէ եթէ տարապայման դեղրմպութիւք յանձախեն հիւանդութիւնս, և շուայտութիւն կերակրոյ պատճառք են ախտից բազմաց։ Եւ պարտ է մեզ զզբօսանսն և զխաղսն 'ի վար առնուլ՝ իբրու հանդիսատ իմն զքնոյ և զայլոց ևս անդորրութեանց։ Եւ պարտ է 'ի նոսա միջոց ժամանակի թողուլ կենսական ոգւոյն, ոչ զի զլխովին լուծցի և թօշնեսցի, այլ զի կորովացի և զմեզ 'ի գործս մեր ժրացուսցէ։

Աստի և յոյժ փափաքելի էր օրէնս մի հաստատել յընկերութեան մարդկան, զի արք պարապորդք և դա-

digitised by A.R.A.R.@

տարկակեացք մի երբէք վայելեսցեն 'ի սիրտս թիւնս և 'ի զբօսանս, որք գործել ինչ մի ոչ կամին ոչ վասն անձանց և ոչ վասն այլոց։ Բայց մեք և ընդ այլոց ևս բազում անտեղութեանց 'ի մարդիկ, նաև դժպատեհ կրեցս պարտիք տանել լուութեամբ. տեսեալ զի առաւել պարապորդ և դատարկապոյտ որեարն՝ առաւել անձնամանան է 'ի զբօսանս. հանդստեան չեն նորա ամենևին արժանի, զի չունին աշխատութիւն 'ի քաղաքի։

Իսկ որ առաւել սրտնութեան արժանի է, նոյն ինքն դատարկաստուն պարապորդութիւն նոցա որ պատժոց պատուհասից արժանի էր, է առ նոսա իբրև իրաւունք համարեալ վայելելոյ 'ի սիրտս թիւնս և 'ի բերկրութիւնս և 'ի խաղս՝ և նոքա են որք և հանապազ քանքարտան ընդ նուազութիւն զբօսանաց ժամանակիս։ Լուսի իմն այնպէս եթէ չեն նոքա եկեալ յաշխարհ՝ բայց 'ի զբօսնուլ, բերկրիլ և զուարճանալ. և իբրու ամենայն աղնուականութիւն ոգւոյ և քաջութիւն նոցա իցէ ծախել զօրն ողջոյն 'ի դատարկութիւնս զբօսանաց և խաղոց։ Հաշուեն զաւուրս եօթնեկին, որ աւուրք իցեն 'ի նոսա խաղոց և սիրտս թեանց հասարակաց 'ի քաղաքին. և ամենայն հանդէսք տօնախմբութեանց նոցա են տօնք աշխարհականք։ Բ. յսօր 'ի տան միոյն դեգերեալք 'ի դատարկել զբսակս իւրեանց՝ թէ ունին, վաղիւն 'ի տան միւսոյն՝ 'ի կորուսանել ժամանակս իւրեանց, բազում անգամ ևս՝ զշուք և զյարգ անձանց եթէ կայցէ ինչ նոցա տակաւին։ Լթէ օր մի ոչ զբօսնուցուն, համարին եթէ և օր մի ոչ կեցին։ Սակայն և մի երբէք անդորրացեալ և միսիթարեալ համարեսցիս զնոսա։ Լոյն իսկ տարապայման սիրտս թիւն նոցա է պատուհաս տանջանաց վասն նոցա. և 'ի մէջ այնչափ վայելչութեանց, և ոչ զմիոյն ձաշակ առնուն նոքա ձիգրիտ։ Բանզի սիրտս թիւնք ստէպ յաձախեալք՝ չեն այնուհետև սիրտս թիւն. և փոխանակ բերկրեցուցանելոյ՝ տաղտուկս ածեն և նոցա կանս։ Որ այն իցէ համեմիչ սեղանոյն, ոչ ապաքէն քաղցն. և իցէ՞ երբէք ըմպելի այնչափ ազնիւ, այնչափ զմայլեցուցիչ, որպէս յորժամ ծարաւեալ իցեն քիմք։ Լ՝ և իցէ՞ յաշխարհի հանգիստ և անդորրութիւն առաւել քաղցր, քան յորժամ զգաստութեամբ և չափա-

digitised by A.R.A.R.@

ւորութեամբ առնուցումք մեք զայն յետ երկար և բազմարդիւն վաստակոց, և յետ անվթար կատարման պարտուց իւրաքանչիւր։ Լայլ թող 'ի տաղտուկս յափրացեալք ընկալցին նոքա. որովհետև և ամենայն իրաւ անկանոն և անբնաւոր միշտ պատիժ պատուհասի է անձին իւրում։

Լու արդ վայր մի խելամուտ լերուք սիրելիք. ի ցեն երբեք իրաւք դժպատեհք, անբանաւորք և անչափք, արժանիք վսեմութեան բանական բնութեանս։ Օ՜ինչ քան զայն առաւել ընդդիմամարտ և խրթնացուցիչ մարդոյ՝ մեծի այն պատկերի և նմանութեանն Աստուծոյ. և զինչ առաւել ընդդիմակ կամաց ամենիմնատ սկզբնատպին։ Ի դէպ ինչ իցէ, եթէ հոգի անմահ տուեալ մեզ յԱստուծոյ, և միտք և հանճար, և ազատութիւն անձնիշխան՝ նմանութիւն աստուածեղէն, թարթափեսցին անդուլ ոչ յայլ ինչ՝ բայց 'ի զբօսանս երկրաքարշս և 'ի բարեկրութիւնս աղցաւորս։ Անաւանդ եթէ զիարդ 'ի ճահ պատահեսցեն այնչափ ստորնաքարշ կիրք՝ աստուածային կրօնիցս սրբութեան։

Ա՛վ, քանիսն միմեանց ներհակակիրք իցեն հոգի աւետարանին, և հոգի բերկրութեան՝ որ տիրացեալ է յաշխարհի։ Օ՜ինչ ասէ աւետարանն. ապաշխարել, ողբալ զմեղս, բառնալ զխաչ, արթուն կալ, յաղօթից չձանձրանալ, կեանս վարել աշխատութեամբ ժուժկալութեամբ, ջանալ մտանել ընդ դուռն նեղ, գնալ ընդ անձուկ ճանապարհն՝ որ տանի 'ի կեանս, այս է աւետարան։ Լու արդ բեր 'ի կշիռ արկ ընդ աւետարանիս ընդ այսմիկ և զկեանս իմն և քաղաքավարութիւն՝ որ լի իցէ դատարկութեամբ, լի և սփոփանօք և հանապազօրեայ բերկրութեամբք։ Քանիսն իցէ անջըրպետն, և քանի՞ այլակերպութիւնն։

Սակայն մեք 'ի խաբանս եմք սիրելիք. և ահա ակնարև կան խաբանքն։ Քանզի կարգս երիս մարդկան և վիճակս երիս հնարեալ մուծաք մեք յեկեղեցի։ Մի զբրբոցն, որ 'ի սփոփութեանց զբօսանաց աշխարհի ողջոյն 'ի բաց կան, որպիսի ինչ և իցեն բերկրութիւնքն։ Երկրորդ զամբարիշտ մարդկանն, որ զՀետ ընթանան մեղանչականացն։ Լու երրորդ՝ զմիջասահման քրիստոնէի. որ 'ի մեղանչականացն հրաժեշտ տայ, սակայն

digitised by A.R.A.R.@

և միշտ հետամուտ է սիրոփութեանց ըստ կարի։ Ինդ սուրբն հիանալք՝ որք ոչն երբէք խնդրեն զբօսանիլ. զամբարշտացն ատեալք՝ որք 'ի չարիս զբօսնուն. զմի-ջասահման քրիստոնէին ընդդրկեալք մեք զկեանս, և յանդորրու և յապահովի կարծեալք զմեզ։

Բ. Լ. ես և կարի իսկ քաջ համարձակեցայց ասել ձեզ, եթէ այդ միջասահմանութիւն քրիստոնէական առ աչօք է և անպոյ, չէ ճշմարտութիւն։ Բանզի ճա-նապարհս երկուս միայն գտանեմ ես 'ի սուրբ աւետա-րանին. ճանապարհ նեղ և անձուկ՝ որ տանի 'ի կեանս, և ճանապարհ լայն և ընդարձակ՝ որ տանի 'ի կորուստ. իսկ այդ ճանապարհ միջասահման՝ գիւտ է թուլութեան և փափկութեան մերոյ։

Լ. ասդ եթէ կեանս վարեսցես դու՝ մեծապէս անձ-կանօք այնպէս միշտ 'ի խնդիր ելեալ բերկրութեանց և զբօսանաց և խաղուց, զիարդ մարթիցիս դու ասել ինձ եթէ իցես 'ի նեղ և յանձուկ ճանապարհին որ տանի 'ի կեանս. ընդարձակին ուրեմն զհետ ելեալ է քո՝ որ տանի 'ի կորուստ։

Բ. Լ. զիարդ. եթէ այդ այդպէս իցէ, ուրեմն և սիրոփութիւնք մեր և զբօսանք և խաղք օրինաւորք և բա-նաւորք մեզ իցեն։ — Բա՛ւ, ես ոչ ասեմ զայդ, և ոչ զօրինաւորն երբէք դատապարտ առնեմ։ Ս. անչա-փութիւնն միայն նաև յօրինաւոր և 'ի բանաւոր զբօ-սանն դատապարտեմ. բայց յառաջ քան զիս՝ տերն ինքնին զայն դատապարտ արար։ Բանզի անչափու-թիւնդ այդ, զեթ 'ի հետևանս իւր, զերծ 'ի մեղաց եր-բէք լինել ոչ ունի։

Բանզի եթէ այդչափ զակատել 'ի բերկրութիւնս զբօսանացն, թէպէտ և օրինաւորաց, տկարագոյնս յար-դարէ զմեզ ընդդէմ ոսոխին մերոյ, և դիւրագայթս յառիթս փորձութեանց, և անհոգացեալս 'ի կատա-ղումն պարտուց պաշտամանց իւրաքանչիւր, նաև դիւրա-պատրաստս 'ի թողուլ 'ի բաց զնոսա, զիարդ ապա այ-նուհետև ժուռեսցիս դու անմեղանչական ասել զանչա-փութիւնդ զայդ։

Ինքեսցուք ապա, սիրելիք, զբանս. չարգելումք մեք զամենայն ազգ սիրոփութեանց և զբօսանաց, այլ ըն-տրութիւն առնեմք բարեացն. և զի իցեն բարի՝ ա-

digitised by A.R.A.R.@

սեմք եթէ պէտք են անմեղութեան, որ անդատապարտ զործեսցէ զնոսա. պէտք են և զդատութեան և ժուժկալութեան և չափաւորութեան, որ 'ի կարգի պահեսցէ զնոսա։ Այլ առաջնորդն հաւատոց մերոց և զօրաղլուխն՝ որ զամենայն աւուրս 'ի վիշտս եկաց յաշխարհի և 'ի խաչակրութեան՝ մեծ ինչ արդեօք պահանջեսցէ 'ի հեռուստաց իւրոց, խնդրելով 'ի սփոփութիւնս տկարութեան մերոյ զամենութիւն և զչափաւորութիւն։ Այլ որոյ ողջոյն զբօսանք և բերկրութիւնք իւր՝ ցորչափ եկեաց յաշխարհի, էր ձեռն տալ կարօտելոց, միխիթարել զվշտացեալս, խրախուսել յառաքինութիւնս, բարի առնել ամենեցուն, մարթասցի՞ նա երբէք նուազ ինչ քան զայս խնդրել առ 'ի մէնք։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐՈՅ Լ.

Ա. ՆԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ

" Բարժամ այսն պիտի եղանէ 'ի մարդոյն, խնդրէ հանգիստ և ոչ գտանէ . . . յայնժամ երթայ և ասէսու ընդ իւր ասելն այս յարագոյնս քան զինքն, և մտեալ բնակէ անդ . և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն ,, . Մատ . 12 .

Լեթէ Հշդրտիւ որ 'ի քնին առցէ զախտիցն զհոյլս, կնքեսցէ անվեհեր՝ եթէ չիք ինչ 'ի չարեաց զոր ոչ 'ի նեղբս ածցէ 'ի բնութիւնս մեր սխտ անժուժկալութեն, և չիք ինչ 'ի բարեաց՝ յորմէ վրէպ չկացուսցէ նա զբնութիւնս ։ Զանսի նրբագոյնս նկարագրեաց զախտն՝ լուսաւորեալն յԱստուծոյ աստուածխնամ մերն Յուսուրէ 'ի վարդապետութեան իւրում. " Լսեցուք, ասէ, ,, զանառակութիւնս, որ զբնութիւնն շարժէ և պղտորէ, և յանժուժկալութիւն հակամիտէ ։ Օ յ անժուժկալութիւն ստերիւրէ 'ի պէտսպէս անարժան հրապոյրս վնասուց, և վրիպեցուցանէ 'ի հաւատոց և 'ի սուրբ վարուց . . . ։ Օ բազումն կորոյս ջրով և հրով և այլ և այլ ազգ պատուհասիւք . զկոյս ապականէ և զամուսնութիւնս քակէ և ընդ բազում չարեօք առնէ ։ Զ ասն անժուժկալութեան զկախարդս յօգնութիւն պղծութեան ըստ հրապուրանաց ստանայի առնուն կաշառօք ։ Զ ասն անժուժկալութեան ոխութիւնք և այլանդակութիւնք 'ի կորուստ արանց և կանանց լինին ։ Զ ասն անժուժկալութեան դժպհութիւնք և երդմնահարութիւնք և ատութիւնք և դո-

digitised by A.R.A.R.@

,, զութիւնք։ Զ՝ան անժուժկալութեան հեղգութիւն
,, աղօթից և պահոց և պղերգութիւն առ 'ի գործ։
,, Զ՝ան անժուժկալութեան բազմակնանենդութիւնք
,, նիւթին, և քէնք առ օտարս և ընտանիս։ Զ՝ան
,, անժուժկալութեան խորամանկութիւնք և պէսպէս
,, մահքն յայտնիք և գաղտնիք ,,։ Զ՝ս իրրև թէ ոչ
շատ ինչ ասաց սուրբ Զ՝ուսաւորիչն, յաւելու. "Զ՝մե-
,, նայն չարեաց պատճառ անժուժկալութիւն է և մայր
,, մեղաց և դուռն ամենայն չարեաց նստելոց 'ի մեզ։
,, Զ՝ի վասն այսորիկ գայ բարկութիւն Զ՝աստուծոյ 'ի վե-
,, րայ երկրի, սովոյ և սրոյ և գերութեանց և պէսպէս
,, ախտից, խռովութեանց՝ ընտանեաց և օտարաց, ծնո-
,, ղաց և ծննդոց, ծառայից և տերանց. յորս կապք և
,, կռիւք և մահք ,,։ Զ՝այս վայր սուրբ հայրն մեր։

Զ՝ս աւասիկ, սիրելիք, այսն պիղծ զոր տէրն ասաց
բնակեալ 'ի մարդն՝ հանդերձ եօթն այսինքն բազում
այլ այսոքք չարագունիք։ Զ՝ինչափ ինն բուռն են ան-
կարգութիւնքն, որոք անդուլ այս մեր դրացի դև վա-
րակէ զաշխարհ, և վերբ 'ի վայր առ հասարակ զամենայն
օրէնս առաթուր հարեալ, նաև զամենեսեանն զհա-
ւատն մատնէ, և իրաւանց արեանառութեանն դրժէ,
և զսրբութիւն քրիստոնէութեանն աղարտէ. և բողոք
ևս բառնայ ոչ գտանել անձին իւր հանգիստ, մինչև
ոչ զնահաթոյնն փչեալ առ հասարակ և 'ի ցանց հրա-
պուրիչն շաղեսցէ զամենայնն։ "Զ՝ինդրէ հանգիստ, և
ոչ գտանէ ,,։ Զ՝ս զի մեծ է տնկակից չարութիւնն,
չասէ շատ, նաև 'ի զօրավիգն իւր կարդայ և այլ ևս
եօթն այսս չարագոյնս, այսինքն՝ զամենայն մեղաց ըզ-
հոյսն, զոր Զ՝ուսաւորիչն ասաց։

Զ՝ամբէ, քանիցն իցէ ապականութիւնն զոր ապակա-
նեաց և ապականէ միշտ առ հասարակ զազգ մարդկան
այս Զ՝ցմոգեան անմաքրութեան։ Զ՝նոցն արդեօք մանն
առողջ ընդ տիեզերս, և իցէ՞ քայլ ոտին՝ յորում ընդ
առաջ չելցեն հոտեալ մօրք գայրից և ժախից. քանզի
առ հասարակ ամենայն ուրեք արձակ արձակ գտցես ըն-
թացեալ ինծղագլին իրրև զաստուածապարարկս Զ՝իո-
նիսեայ զայս դև հանդերձ եօթն այլ այսոքք պղծու-
թեան՝ վարակել, դեղել առ հասարակ։

Զ՝ակ որ չար ևս, կիրք անհանդուրժելիք։ Զ՝ան մակ-

digitised by A.R.A.R.@

դիր գեղեցիկ առնուն նորա յանմիտ մնրմնասիրացն, մանկիկիր՝ իբրև սրտեռանդն աշխուժից ոգւոյ. և թէ պէտ և յայրատուութիւնքն անհնարինք ևս իցեն, իբրև եռանդուն կենդանութիւն շարժմանց սրտի հանարեսցին 'ի նոցանէ։ Բանիցն իցէ կարութիւնն, և քանի բռնակալութիւն ախտին. և ո՞ր հանդուրժել բաւական իցէ 'ի քարոզչաց բանին, որում՝ փոյն աւետարանական յանձն եղեալ իցէ. "Լու վայ իցէ նմա, եթէ ոչ աւետարանեսցէ"։ և թէ երբեք "Համբերեսցէ, դժոխք է տուն նորա"։ "Լա մանաւանդ եթէ առաւելագոյն ևս սասակութեան ոգւոյ պէտք իցեն 'ի խօսել և 'ի վանել զախտ մի, ահա ախտ որ այրեսցաւեր գործեաց զաշխարհ և գործէ։ Բանզի և մեծապէս յոյժ է կարեկցութիւնն և սրտառուչ առաւել ընդ շլացութեամբ հարեալն 'ի կրից ասաի, որ զարշ կոչին անժուժկալութեան սպաշտօն հարեալ, և ձակաձան ախտին գունագեղեալ անուն կարդան 'ի չքմեղս՝ իբրու որ թեթևութիւն ոգւոյ իցէ և եռանդանն, և տկարութիւն մարմնոյ իցէ, և երիտասարդութեան զեղումն։

Լու, Հոգի սուրբ Լյսուած, դու ամենամանրաբար սրբութիւն, էութեամբ ինքնութեամբ ներհակակիր այսոցս այսորիկ, աղէ դու տէր, բաց զաչս մտաց՝ որ միանգամ ինձ ունին զնէ. և դու ինքնին խնայեսուտ ա՛ր որ միայն կարողդ ես, եթէ չարն որ յանժուժկալութենէն՝ չէ ինչ չար վայրապար և թեթև, այլ ծանր յոյժ ամենայն մնասամբք. և իցէ այս առաջին գլուխ քարոզիս։ Լու զի չար է, միանգամայն ամենայն բարեաց աղարտիչ. և իցէ այս երկրորդն։ Լու զի չար է անբուժելի՝ ապստամբ գոգցես 'ի հնարից դեղոց. և իցէ այս երրորդ մնան քարոզիս։ Լու տացուք սիրիցն բանիս։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆԱ.

Բրտասուաց պէտք են առաւել քան բանից այսօր, սիրելիք, զկուրութիւն ողբալ զմարմնասիրացն, որ ի բրու բարեմարդկութիւն իբրու քաջալայելչութի ինն բարուց, կամ թէ իբրու հարկ բնութեան հանարեացին զայն մեղս, որում ընդդէմ զինեցան ամենայն ուրեք յամենայն իսկ ժամանակս ամենայն հարք և աստուածաբանք և վարդապետք եկեղեցւոյ. ընդդէմ զինեցան և զինին իբրու ընդդէմ Հիւրեան վիշապին դժոխայնոյ, հրեշ մահաթոյն բազմագլխեան ապականիչ աշխարհի։ Ընդդէմ զինեցան, նոյն և առ յերեւանի ածել զդժընդակութիւն ախտին, անուն զամենայն անարգութեանց լիաբերան կարդացին նմա։ Վրածութիւն մահաշշուկ, արբեցութիւն գարշ և զազիր կոչեաց զնա մեծն Բասիլիոս. իսկ և այլք 'ի սրբոց, ժահր և ժախ աշխարհի, և մօրատ դայռից, օդք մահաշունչք, և անարգութիւն բանականին, անդամալուծութիւն հոգւոյ. և բնաւ իսկ "ամենայն չար", կոչեաց զնա Սողոմոն. իբրու որ չէ միայնակ իբրև զայլս յախտից, այլ իշխանացեալ ինքնին՝ զուգահետս և ընթացակիցս և յուղարկաւորս յառաջոյ և զկնի ունի նա զոգցեա զամենայն չարիս, որպէս Հշդրտեաց սուրբ Ռուսաւորիչն։

Եւ արդ աղէ դու վայր մի անց ընդ դիրս, և սկիզբն 'ի Սողոմոնէն արասջիր։ Յորժամ՝ նա յաւանեալ այն չափ անարգեաց զԱստուած 'ի տաճարին. և յորժամ զինկանոցն սրբութեանց առեալ պղծեաց յերկրպագութեան պատկերացն գարշելեաց, և նշաւակութիւն այնչափ հասոյց աստուածային մեծվայելչութեան, զինչ էին պատճառքն։ Պատճառքն՝ իգաստէր անժուժկալութիւնն, որով անկդիտացաւ յանհնարին չարիսն։

Իսկ և յորժամ անպատկառ վկայք ստութեան ամբարձան կացին ընդդէմ անմեղութեան ողջախոհիցն ամենանց, "լրբեցաւ յայնժամ առ աթոռ զարդարութիւնն հարկանել։ Անժուժկալ պագշտութիւն ծերոցն ընդ սարկեշան Շուշան։

digitised by A.R.A.R.@

Եւ յորժամ Աստուծոյ 'ի մահ վարեցաւ անմեղն և հաւատարիմ, և 'ի վարձ լաւութեանն զդառն զայն բաժակ ընդունէր անպարտակիր անձն, ո՞ որ աղէ ասա, զանհնարին զայն անօրէնութիւնն հասոյց արդարութեան։ Անժուժկալութիւնն Դաւթի 'ի Սերբարէն։

Իսկ և նշանակութիւնն չէր արդեօք աշխարհապոյժ, յորժամ գերեալն յախտէն հիւծացեալն Դաւդաղենացի ոչ յառանձին կրիցն անուանակոչէր, այլ պարզապէս 'ի մեզաւոր անուանէն. "Այն մի էր, ասէ, 'ի քաղաքին մեզաւոր"։ Իբրու որ զամենայն մեղս միանգամայն յինքն բարձեալ բերիցէ յանժուժկալութենէն գերեալն, որպէս ասայ Սուսաւորիչն։ Աստի և տէրն ոչ միայն զախտն զայն փարատէր 'ի նմանէն, այլ և զամենայն իսկ զմեղսն՝ որք յեօթն դեւսն օրինակեցան։ "Յորմէ, ասէ, եօթն դեւն ելեալ էր"։ քանզի եօթամբն ընտաւորեցան զկրքն զբազմութիւնն նշանակել։ Սակայն դժնդակութեան միոյ ախտին, որ զամենայնն յինքն պարագրեալ ունիցի։ Զկնք, չկնք հնար, սիրելիք, եթէ միանգամ գերեալն 'ի մարմնոյն, զհոգւոյն ինչ երբեք մարթասցի եթէ խորհել և եթէ ունել։

"Ոսաբինութիւն և ոչ մի, աղաղակէր մեծն Գրիգոր, տենոս, հարցն սրբոց առհասարակ ձայնակից, առաքինութիւն և ոչ մի բարութիւն և ոչ մի, խնայութիւն և ոչ մի, անհնար է՝ եթէ կայցէ 'ի միասին ընդ ախտին անժուժկալութեան։ Այլ 'ի սմա միայնում տիրացեալ թագաւորեն միանգամայն ամենայն ախտք"։

Եւ արդ՝ որք զակատեալքն իցեն զհետ ախտին, և մոտիապատուասար անուանակոչութեամբք քօղ արկցեն նշանակութեան կրիցն, աղէ ասասցեն մեզ՝ ո՞ր այն մարութիւն իցէ՝ որ ամենայն առաքինութեանցն թշնամի ընդդէմ կբրեսցի իբրու զանժուժկալութիւն. "Ոսաքինութիւն, ասէ, և ոչ մի"։

Ա՞ր այն չարութիւնն իցէ՝ որ զամենայն բարութիւն միանգամայն 'ի միջոց բարձցէ իբրու զանժուժկալութիւն. "Չարութիւն, ասէ, և ոչ մի"։ — Ա՞ր այն տգիտութիւն իցէ, որ զամենայն խնայութիւն առհասարակ աղարտեսցէ իբրու զանժուժկալութիւն. "Խնայութիւն, ասէ, և ոչ մի"։ Իսկ ասա հանքուն՝ ո՞ր

digitised by A.R.A.R.@

այն ախտ որ զինչ և իցէ, որ այնպէս իմն ողջոյն սպա-
կանեսցէ զհոգին. "Յանժուժկալութեան, ասէ, մի-
այնում՝ տիրացեալ թագաւորէն ամենայն ախտք ,, ։

Ա՛վ չարեացն։ Իցէ՞ ոք անժուժկալ, իցէ նա ուրեմն
և յախտ վարակեալ հպարտութեան կրիցն, նախան-
ձուն, բարկութեան, ոխակալութեան, անիրաւու-
թեան, չարարուեստութեան. և զինչ ևս. մարդասպա-
նութեանն գլխովին. իցէ և ինքնին ողջոյն սատանայ,
ըստ որում զբեր մեծն Ամբրոսիոս առ նուիրական ոմն
անձն՝ գերեալ 'ի յախտէն. "Ամբէ, որ երբեմն հո-
գիդ տաճար կենդանի նուիրեալ Հոգւոյն սրբոյ, արդ
զոհարան դիւաց և դարան գոտաւ սատանայի ,, ։

Ա՛յլ զինչ ասեմք զհոգւոյն, նաև զմարմինն գլխովին
սպականեալ եղծանէ ախտն. "Յապականեալ գեղեցիկ
ողջախոհութեանն, քանիսն իցէ դարշութիւնն ,, ։ Այ-
զիարդ ոք հանդուրժեսցէ տեսանել զհնացեալն յան-
ժուժկալութեան. գտանել զնա այնչափ անմաքուր 'ի
խորհուրդս, տեսանել զնա այնչափ անամօթ և յայրատ
'ի հայեցուածս, այնչափ անմաքուր 'ի խօսս, այնչափ
ցոփացեալ 'ի վարս, այնչափ անհամացեալ 'ի գործս։
Օ՛ի և չէ իսկ նոյն անժուժկալն. "Ամբաքս յիւրմէն
է ելեալ, ոսկիաքաներ երանելին Պետրոս, և 'ի մարդ
գոլոյն ողջոյն փոխակերպեալ յանասուն ,, ։

Ա՛յլ իցէ՞ թէ շատանայր զմարդ մի յանասուն փո-
խակերպել, և ոչ հարուած առ հասարակ ածել 'ի մար-
դիկ։ Այնիսն իցեն աղէտքն. Մի՞ յախտէս յայսմա-
նէ, քարոզ կարդայր աստուածային Աւետարանն ոսկի, ո՞չ
'ի սմանէ՝ յառաջ եկին և գան այնչափ հեռք և կագք,
այնչափ ատելութիւնք, այնչափ 'ի վեգ գալ և ձայն
միմեանց տալ, այնչափ մատնութիւնք, այնչափ նախանձ
ընդդէմ և ոգետանջ կիրք, այնչափ յուսահատութիւնք,
այնչափ հրատապ բանակռուութիւնք. մնայ ինչ ասել,
այնչափ և արիւնք և սպանութիւնք. "Անզի մար-
մնապաշտութիւնն, ասէ, չկայ 'ի սահմանին, մարմնա-
պաշտութիւնն նաև մարմնասպանս գործէ ,, ։

Տեսէք ինձ միանգամ, զէն 'ի գործ վարեալ զամենար-
կութիւնսն, զպչրանսն, զհտպտանսն, իբրու նետս իմն
և փրինս մահահոտս, գտանէ զԱմենիսն զայր հուժկու
և կորովի, և զնա խոնջ և թօշնեալ ընդարմացուցանէ։

digitised by A.R.A.R.@

Պատանէ զԱստուծ զայր հեզ և համբոյր, և զնա այր անագորոյն գործէ և արեանարբու։ Պատանէ զՍողոմոն զայր իմաստուն և լիահանճար, և զնա գլխովին 'ի խելացն թափէ։ Դաւթ, յամենայն իսկ 'ի սերս, յամենայն 'ի ախս, յամենայն իսկ 'ի վիճակ կենաց հեղու զթոյնն, է զի և ակն ջաղէ ոչ մեռնասցուցաց, ոչ վայրաց սրբութեան, ոչ ուխտից հաստատութեան. առ հասարակ այրէ, առ հասարակ ծախէ. և իբրև այնպէս 'ի տարտարոս յանցանաց փոխակերպէ զտիեզերս, ոչ ասէ շատ, մինչև ոչ և 'ի տարտարոս պատուհասին սուզեսցէ զտիեզերս։

"Ո՛վ անժուժկալութիւն տարտարոսական, գոչէր ,, երանելին Յովհաննես, ո՛վ ցանկութիւն դժոխական. ,, քև, գոգցես ամենայն չարիք, քև գործեցան ,,։ Յս զիարդ ապա, սիրելիք, որ զամենայն չարիս գործէ, նեղողանութիւն երբէք գոցէ քօղ 'ի չքմեղս արկանելով ախտին՝ իբրև տկար և դիւրաբեկ մարմնոյ վիճակեալք։ Օ՜ինչ ասես, տկար և դիւրաբեկ. "Յս զինչ այլ կորովի, ասէր, մեծն Յերտուղիանոս, զինչ այլ կորովի քան զմարմին, որ և ընդդէմ զինեալ վանէ զԿոզին ,,։ Որ լեզու բաւական իցէ ուրեմն՝ ընդ թիւ արկանել զչարիս ախտին, որ զամենայն չարիսն գործիցէ։

Իսկ արդ եթէ լեզուք մարդկան անբաւականք իցեն, թող յառաջ անցցեն լեզուք Աստուծոյ. խօսեսցին որոտընդոստ ամբահաստութիւնք, հրացան բարկութիւք, աշխարհակուլ ջուրք, երկնասաստ տեղ ծծմբոյն, և հեղեղք բոցոյն։ Ո՞ զհինգ քաղաքն յաձիւն փոխարկեաց նորօրինակ անձրևովն. և որ ահաւոր ևս՝ ո՞ զտիեզերս ողջոյն համայնաջինջ 'ի ջուր ողողեաց. ո՞ զերկնից սահման եբաց, և ո՞ զխորս անդնդոց պատառեաց։ Որքան մեղք այլք և անօրէնութիւնք պակասեցան յաշխարհի առ ջրհեղեղաւն. նա բաց 'ի կռապաշտութենէն, որպէս ասէն վարդապետք, այլ ամենայն ախտք հեղեղեալ իսկ էին զաշխարհ։ Այլ ախտ անժուժկալութեան ած զջրհեղեղն. և նոյն ահագինս պատուհասեաց զաշխարհ. "Որ ինասցէ, ասէ, հոգի իմ 'ի մարդիկդ յայդ, վասն լինելոյ դոցա մարմին ,,։

Այդ զկիրս ուղղութեան 'ի ձեռս առեալ, սիրելիք, զմեծութիւն ախտին ծանեարուք. "Աստ չափս մեղացն

digitised by A.R.A.R.@

լինիցի և չափ պատուհասին ,, , օրինադրեն գիրք։ Եւ արդ գտէք ինձ դուք մեղս իմն այնչափ ահագինս և համաչխարհականս պատուհասեալ յԱստուծոյ իբրու զմարմնականն։ Ասացէք ինձ, երբ այնչափ սրտնեցաւ աստուածային հոգին, երբ զոչնացաւ անզոչնական բնութիւնն զի արար զմարդն. բայց յորժամ տիրեաց մարմինն, և զպատկերն Աստուծոյ եղծ և անբանից նմանեցոյց. "Արդ 'ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասունոց անմտից և նմանեաց նոցա ,,։ Այնչափ են աղէտք ախտին, մինչ զի որպէս հպարտութիւնն ելից այսոքիք զանդունդս, նոյնպէս մարմնապաշտութիւնն լցցէ մարդկամբ զդժոխս։

ՄԱՍՆ Բ.

Իսկ ըստ մեծութեան ախտին՝ մեծապէս յոյժ է և զեանն զոր հասուցանէ նա զակատելոցն իւրոց։ Կապտէ 'ի գոյիցն, կապտէ 'ի քաջողութենէն, կապտէ 'ի պատուոյն, և յամենայն բարեաց միանգամայն կապուտ կողոպուտ թողու զմարդ՝ 'ի ժամանակիցս և 'ի յաւիտենականացն։

Ասատիցուք 'ի փորձն։ Պատանիդ այդ ժառանգ թողաւ բազմահարուստ գոյից և ստացուածոց. և ահա յետ ամաց ոչ բազմաց լուր հնչի, եթէ 'ի վաճառ հանան պատուականագոյնքն 'ի գոյից նորա. 'ի գրաւի է դան ծանրագինքն 'ի կահուց կարասեացն, և մեծապէս թշուառացաւ տունն։ Եւ ապա տեսանես դու յետ այնորիկ զպատանիդ զայդ, զի անկած և անպատճոյտ, երիթայեալ թաքթաքուր դեղերի 'ի փողոցս։ Ո՞ւր իցեն նորա պայծառ պատմուճանք. ո՞ւր նորա յերևանի սիգաձեւ գնացքն։ Ընդուստ 'ի բարեկամացն ոք աւաղէ, վա՜հ զի այն դատ կործանեաց զպատուական պատանիդ։ — Ո՞ր այն դատն իցէ, աղէ ասա։ Ա՛յ դատն, այլ կապկելոյն այն կործանեաց զպատանիդ։ Իսկ և այլ ոք աւաղէ զնա. վա՜հ, զի նուաղութիւն վաճառացն 'ի քաղաքիս կործանեաց զնա։ — Ա՛յ. այլ անարժան նորա և

digitised by A.R.A.R.@

անառակ սիրութիւնք հանապազօրեայք՝ կործանեցին զնա։

Իսկ և այլ ոմն անդուստ աւաղ, ասէ, զի հրկիզութիւնն այն անանկացոյց զպատանիդ զայդ։ — Եւ հրկիզութիւնն միոյ մասին 'ի գոյից նորա, այլ ընդ Ճանապարհս թիւրս և անբարիս գնային նորա, այլ անժուժկալ կիրք նորա, այլ յաճախս այն թարթափել նորա 'ի տունն յայն՝ թշուառացոյց զնա։ Եւ և աստուածային հոգին հնքեաց զՀնարտութիւնն, յասելն. "Որ արածէ զշունս, ցրուեսցէ զմեծութիւնս"։ Գինեպիսին և 'ի գեղեցիկ համբաւոյն գլխովին մերկացեալ ընդ անմարդիս համարեսցի, և առ ամենայն գործ քաղաքին անբաւական, և առ շինութիւն հասարակութեան անպիտան յանկեան ուրեք լքեալ թողցի։

Իսկ եթէ և առաքելականն կատարեսցի պատուիրանն, քանիսն է յայնժամ նշաւակութիւնն, յորժամ իբրև 'ի հրապարակագոյժ նղովելոյ 'ի նմանէ 'ի բաց սարտնուալ պարտ իցէ և 'ի սեղանակցութեանն անգամ, թէպէտ և 'ի կարևոր ազգականաց ոք իցէ. "Եթէ եղբայր ոք, ասէ, անուանեալ և պոռնիկ իցէ, ընդ այնպիսումն և հաց մի ուտել"։ Քանիսն իցէ և ամօթն, յորժամ ըստ սրբոց կանոնաց եկեղեցւոյ՝ նաև իբրև անարժան ժողովոյն հաւատացելոց և աստուածային սեղանոյն՝ յեկեղեցւոյն արտաքս վարեսցի 'ի բարձրագոչ քարոզել անդ սարկաւագին, եթէ "Ի՞նչ ոք յերեխայից, և յապաշխարողաց, և մի՞ ոք յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս"։

Կապտեաց աւադիկ անժուժկալութիւն զմարդ 'ի գոյից, կապտեաց 'ի պատուոյն և 'ի համբաւոյն. կապտէ և 'ի քաջողջութենէն։ Եւ մնայ ինչ այլ ևս, կապտէ գլխովին և 'ի տիրական մասնէն. զի ուր անժուժկալութիւն է, անդանօր լուեալ է բանն. չիք հոգի, ամենայնն է մարմին. զուշ և զուրուշ մոգէ, բութ և գուլ գործէ զմիտս, և ստրուկ և գերի զկամն։

Մարդ եթէ մարդ բանիւ է մարդ, և բանիւն առաջնորդ է ամենայնին, որ ապա այլ չար՝ չարագոյն ևս կայցէ քան զայս, որ զառաջնորդական զբանն իբրև տառամբ զհետ իւր քարշեալ, և ինքն առաջնորդ մնեալ՝ առեալ տարցի զմարդ։ Իսկ ուր արդեօք տարցի. աւաղ՝

digitised by A.R.A.R.@

միշտ տարադէմ յարարչէն զարարածն, և 'ի սպառ 'ի մ-
ռացօնս Աստուծոյ դարձուցեալ զանժուժկանն։ Բան-
զի որչափ ահագին, այնչափ և անսուտ է պատգամ
մարգարէին վասն զակատելոցն ախտիւս. "Ոչ տացեն,
ասէ Վսէէ, զխորհուրդս իւրեանց, ոչ տացեն դառ-
նալ առ Աստուած իւրեանց,,. և ընդէր այս կիրք դժբն-
դակք ոմ ստուածայինդ մարգարէ. զինչ քաղցրագոյն
մարդոյ քան զդառնալ առ Աստուած իւր. "Ոչ տացեն,
ասէ, ոչ. քանզի ոգի պոռնկութեան է, ասէ, 'ի մէջ
նոցա,,։ Աւաղ կրիցն. չիք նոցա ուրեմն խորհուրդ մի-
տաց երբէք ոչ վասն Աստուծոյ, ոչ վասն սրբոց, ոչ
վասն յաւիտենականութեան. միշտ շաղեալ 'ի մար-
մին. որ եթէ ուտեն և եթէ ըմպեն և եթէ գործեն և
եթէ զբօսանուն, միշտ ուշով յառեալ կան՝ ոչ յայլ
բայց 'ի միտս պագշտեալս և 'ի խորհուրդս անժուժ-
կալս։ Եթէ հայեն՝ վասն կրիցն այնորիկ միայն են նո-
ցա բիրք աչաց. "Աչս ունին հանգոյնս պոռնկաց, ան-
դադարս 'ի մեղաց,,։ Եթէ խօսին, վասն նորա միայն
են նոցա խօսք զրուցաց։ Եթէ ննջեն, յայն միայն
յանկչին նոցա խաւարային անուրջք և երազք։ Աս-
տուածայինքն և հոգևորքն գլխովին շիջեալ են 'ի նո-
սա, և փոխանակ՝ այս մոլորութեան մտեալ 'ի նոսա.
զի "Ոգի պոռնկութեան, ասէ, է 'ի մէջ նոցա,,։
Նա՛ւբէ, թուի ինն այնպէս, եթէ և բնաւին հոգի նո-
ցա՝ ախտն է, և այն է փոխանակ հոգւոյն կենսաւորիչ
նոցա. իբրև ուշ նպատակի ամենայն խորհրդոց նոցա.
իբրու կենդրոն ամենայն գնացից նոցա, և իբրու սիրտ
ամենայն ըղձից նոցա. զի "Ոգի պոռնկութեան է, ա-
սէ, 'ի մէջ նոցա,,։

Ասկ արդեօք յետ այդչափ արտայայտութեան դժբն-
դակութեան ախտիս, ժուժկալել զիսրդ հնար իցէ և
ոչ սրտառուչ յոգի հարեալ դառնապէս գոչել. "Ո՛
անմիտք անժուժկալք, ո՞ նախանձ արար զձեզ, ո՞ դիւ-
թեաց ո՞ թովեաց զձեզ ոչ հաւատալ ճշմարտութեան..։
Եթէ ոչ վատնել ընչիցն, և ոչ վատել քաջողջու-
թեանն շարժեսցեն ինչ զձեզ, ոչ կորնչել պատուոյն և
ոչ խաթարել զկայութեան բանին, շարժեսցեն զձեզ
գոնեա որ 'ի ծածուկ վէրքս հարեալք 'ի խորս սրտի և
անդադարելի ահագին խայթ խղճի, երկմտութիւնն

digitised by A.R.A.R.@

ձեր առ Ք՝ստուած, օտարութիւն ձեր յՔ՝ստուծոյ, յաս-
սահատութիւն փրկութեան, և անդարմանելի հե-
տևանք յանկարծանահ վախճանին։ Հնարաւոր ինչ
իցէ այդչափ խստասրտութիւն, և իցէ՞ երբէք գտա-
նել այդչափ կուրութիւն։

— Ք՝.յլ ներել վայր մի, աղաչեմ զվարդապետդ։
Պատանի եմ, երիտասարդ եմ. առոյգ են տիրն, աշխոյժ
է հասակն. թող յառաջ անցցեն վայր մի բերկրեցու-
ցիչք հասակին. ապա 'ի նուազել աշխուժից տիոցն,
հեշտին է ապաշխարութիւնն։ Ք՝.ւ եթէ անժուժկա-
լութիւնն երարձ լինէն զգոյս, երարձ զբաջողջու-
թիւն, կապտեաց 'ի սատուոյն, բեթացոյց զբանն, բարձ
լինէն զանդորրութիւն սրտի, սակայն ոչ բառնայ եր-
բէք լինէն զանձնիշխանութիւն կամացս. և միթէ յա-
պաշխարութիւն սպասեսցի ժամանակ . . . . ։

Վա՜շ, պատանիդ խորհրդակորոյս. չերարձ 'ի քէն
զանձնիշխանութիւն, արդար է. այլ այնպէս իմն կա-
պեալ կաշկանդեաց և շաղեաց 'ի վարմին և գերեաց
բնաւին, զի և զախան զայն ոչ ծանրագոյն միայն յար-
դարեաց և վնասաբեր յոյժ՝ որպէս և լուար, այլ և
զոգցես ապստամբ 'ի հնարից դեղոց։ Վայր մի ինձ
թոյլ տուր հանգչել, և տեսցես ահնեբև։

ՄԱՄՆ Գ.

Ի հուր, 'ի հուր, սիրելիք իմ, առ հասարակ արձա-
նագրութիւնք՝ զոր միանգամ գրեցին և քարոզեցին
հայհոյութեամբ հերետիկոսքը, և 'ի վերջնումն առա-
ւել ժանտքն և առաւել ժանտքն Լութեր և Կալվին
գրեցին և քարոզեցին եթէ յանձնիշխան ազատու-
թենէն կապտեն մեզք զմարդն։ Օ այնոսիկ 'ի հուր
արկեալ, և դուք ՀՀմարիտ դաւանութեամբ հպատակ
կացէք վարդապետութեան կաթողիկէ եկեղեցւոյ, որ
զմարդ՝ թէպէտ և անհնարին մեղաւոր՝ միշտ անվթար
պահէ յանձնիշխանութեան իւրում։

Սակայն և քաջ միտ դիք աղաչեմ, զոր ասասուածայինն
քարոզեր Ներսէս ասէր, եթէ հեշտախտութիւնն թէ-

digitised by A.R.A.R.@

պէտ և զաղատութիւն չքառնայ զկամայն հետևել ախտին. սակայն զորս միանգամ որսայ 'ի վարմին, այն պէս իմն շաղէ և կաշկանդէ, զի և դժուարին յոյժ ի ցէ զերծանելն։ Որեղաւոր անժուժկալ նախ ազատութեամբն սկսանի մեղանչել, ապա սովորութեամբն ցանկորդէ 'ի մեղանչել, և ապա իբրու բարոյական իմն հարկաւորութեամբ անկարանայ 'ի չմեղանչել։

Օ Իսրդ Աշդրատազոյնս յաստուածիմաստ առակին յանդիման եցոյց ինքնին տէրն։ Որաբէ տանուտէրն զծառայս կոչել զՏրաւիրեալսն 'ի մեծահաց հարսանիսն, և սկսան մի ըստ միոջէ ամենեքեան հրաժարել։ Պատասխանէր առաջինն, եթէ "Որդարակ գնեցի, և հարկ է երանել և տեսանել զնա..., — Որ.յլ աղէ ասա, և բնաւ իսկ չկարէս գալ. — Որարթ է. այլ աղաչեմ զքեզ, կալ զիս հրաժարեալ։ Երկրորդն՝ եթէ լուծս հինգ եզանց գնեցի, և երթամ փորձել զնոսա։ — Որ.յլ չիցէ ինչ հնար թողուլ այսօր զփորձդ և գալ 'ի հրաւէրն։ — Որ.յո՛, չէ անհնար. այլ աղաչեմ զքեզ կալ զիս այսօր հրաժարեալ։ Իսկ ապա երրորդն այլօրինակ իմն տայր պատասխանի. քանզի առանց ինչ քաղաքավրութիւնք հրաժեշտ խնդրելոյ իբրու զառաջինսն, անդէն ինքէ և պարզապէս զանկարութիւնն առաջի դնէ. "Կին, ասէ, ածի. և վասն այնորիկ ոչ կարեմ գալ..., ոչ կարեմ, ոչ. Որ.ա՛ղ. քանզի պարապէն 'ի հեշտալիս, որպէս ասայ ոմն 'ի սրբոց, ոչ եթէ զտարատամութիւնն ծնանի և զանհոգութիւնն, յառնել գնալ 'ի հարսանիսն, իբրու զաղարակն և իբրու զլուծ զեզանցն, այլ զանկարութիւնն ծնանի։ "Կին ածի, և վասն այնորիկ ոչ կարեմ գալ..։

Որ.ս արդ քանիցս անգամ կոչեաց և զքեզ Որ.ստուած, ո՛ անժուժկալ անձն, է՛ զի ներքին ազդեցութեամբք հնորհացն, է զի թեղադրութեամբ խղճի մտացն, է զի 'ի ձեռն քարոզչաց բանին։ Իսկ քո ո՞ր եղև պատասխանին. — Որ.յո՛, կամէի իսկ քաջ, և պարտ իսկ էր երթալ զհետ կոչողին. բայց... բայց...։

Որնցանէն աւուրբ, հոգովին ամիսք, յառաջ գան աւուրբ սրբութեան, մեծահանդէս տօնախմբութիւնք սրբազանք, բարեկամք առ հասարակ և ընտանիք և ծանօթք դաս դաս ընթացեալք խռնին յեկեղեցիս, և խոստովան լինին զմեղս և քաւեալք հաղորդին աս-

digitised by A.R.A.R.@

տուածային սեղանոյն։ — Գիտեմ և ես, և տեսանեմ և ես աւադիկ. կամէի, և պարտ իսկ էր և ինձ զգեղեցիկ օրինակն առնուլ և տալ և ես. այլ աւաղ, ոչ կարեմ, ոչ։ Թէպէտ և 'ի զատկին սրբութեան՝ գիտեմ զպարտս քրիստոնէութեանս, զոր ընուն այլք և բարւոք առնեն. կամէի և ես ինքնին, և պարտ էր. այլ զի՞ գործեցից. զիա՞րդ ժուժկալել, զիա՞րդ անջատել 'ի բաց. զիա՞րդ ողջոյն հրաժարական տալ խսպառ . . . ։ Ա՛հ, ոչ կարեմ, ոչ։

Օ՜ինչ ասես, ո՛ հիքացեալ անձն։ Ծանեաւր ուրեմն, տեսէր ակնեարև զախտն. քանիցն իցեն կապանքն. զիա՞րդ անբուժելի մնաց ախտն և ապաստամբ 'ի հնարից դեղոյն։

Ա՛յլ ընդէր այս, սիրելիք. վայր մի աղաչեմ զխորս յուզել զձշմարտութեանն. ընդէր իցէ անդարմանելի։ Հաւասիկ աստուածային առաքեալն, որ 'ի յուսահատութեան կիրս, աւաղ, ըմբռնեալ առակէ զանժուժկալն. "Հատին, ասէ, զյոյս յանձանց փրկութեան և մատնեցին զանձինս գիձութեան.,։ Հաւասիկ քեզ անժուժկալութեանն չար, որ բնաւին իսկ գիտաց տապալել զշինուած արդարութեան մարդոյն և զփրկութեան հոգւոյն։ Յուսահատութիւնն։

Բայց աղէ, յումմէ՞ յուսահատ լինի հիքացեալն, հարցանէ Ասկեբերան. Յուսահատ է, ասէ, 'ի դարձէն իւրմէ. յուսահատ է էթէ հանապազորդեսցէ արդեօք յուղղութեանն. յուսահատ է և 'ի թողութենէն մեղացն, յուսահատ է յիւրոց կամացն, յուսահատ է Յ՚ստուծոյ, յուսահատ է յանձնէն զլխովին։

Բա՛ռէ, թուի ինն ձայն լսել զանժուժկալ մեղաւորին ընդ անձին ողորելոյ և յոգւոյ հանելոյ. — Ո՛վ, զիա՞րդ երբեք կարացից խզել զշղթայսն, զիա՞րդ ելս գտանել 'ի հեշտալի բաւղէն յոր անկայ միանգամ, զիա՞րդ զերծանել 'ի հաղթիչն յոր շաղեցայ. զիա՞րդ, զիա՞րդ արդեօք . . . ։ Խղուկ եմ ես, և թէպէտ և մի անգամ 'ի զգաստութիւն դարձեալ, մանրթ իցէ ինձ արդեօք հանապազորդել 'ի զգաստութեանն։ Ա՜յ ահա բաղում անգամ ուխտ եդի ընդ անձին իմոյ 'ի զգաստնալ, և դարձեալ բաղում անգամ պակասեցայ 'ի հաւատոյն, և չար ևս շաղախեցի զանձն իմ. և զիա՞րդ

թողցէ ինձ Աստուած · չիք թողութիւն , չիք · քանզի չիք և զգաստութիւն ։ Այսպէս ընդ անձին ոգորի հիքացեալն , և ապա յուսակտուր անձնապրաւ լինի 'ի մեղս · " Հատին զ յոյս յանձանց և մատնեցին զանձինս գիջութեան .,։

Լաստի և է իսկ տեսանել 'ի քրիստոնեայս՝ մահուանս բազումս զյուսահատելոց անձանց , տեսարանս ահագինս և օրինակս արտասուելիս ։ Ասա որում և զմեծի զայն մեղաւորին՝ որ 'ի վախճան մահուն հասեալ , և անդ յորդորակս բազումս գեղեցիկս 'ի բարեկամացն լուեալ՝ բառնալ զգայթակղութիւն ախտին , նա և 'ի սուրկալի անդ պահուն 'ի ցասումն բրդեալ տայր պատասխանի · — Այ կարեմ։ — Ասել գոնեա , բարեկամ , 'ի սէրն Աստուծոյ՝ վայրիկ մի բուռն արա անձինդ 'ի կարևոր ժամուս ։ — Այ կարեմ։ — Ասել ահա հատանի թել կենացդ այր դու , և դատապարտութիւն ուրեմն խընդրես հոգւոյդ և ոչ փրկութիւն ։ — Այ կարեմ՝ ոչ ։ Այ այն ինչ յուսահատութեան վերջին բանն 'ի բերանին , և փչէր զոգին ։

Ասել մի ինչ զարմանալ , եղբարք · քանզի կրկնակի անդարմանելի է ախտն · մի 'ի մեղաւորին կոչմանէ , որ յուսահատ է 'ի յաւիտենական փրկութենէն · և միւս ևս յաստուածակոչմանէն որ զերեսս դարձուցեալ է 'ի նմանէ ։ " Արպէս վիրաւորք որ հնչէն 'ի գերեզմանս՝ են անժուժկալք , ասէ մարգարէն · զորս դու Աստուած ոչ յիշեցեր , նոքա 'ի ձեռանէ քումմէ մերժեցան .,։ Ի մուռացանս դարձուցեալ է զնոսա Աստուած , որպէս և նոքա մուռացան զԱստուած · ոչ յիշեցին նոքա զԱստուած 'ի կեանս իւրեանց , և ոչ Աստուած յիշեաց զնոսա 'ի մահուն իւրեանց ։ Չիք նոցա լոյս , չիք նոցա յոյս , չիք նոցա և ոչ ուշ մտաց ։ Փորձ փորձեա դու միանգամ , խօսեաց ինչ մի ընդ անժուժկալ զակատելոյն՝ վասն յաւիտենականութեան , չիք նորա յոյս · նա ծիծաղի՝ զոր ասես ։ Ասաց առաջի նորա զդժոխս , չիք նորա լոյս , առասպել համարի զոր ասես ։ Ծառ նա վարդապետ և հայր խոստովանութեան , թողլուսիցէ ինչ մի խրատ յաստուածայնոցն , չիք նորա ուշ մտաց · անդէն փոխէ նա զզրոյցն ։ Ոչ ասել է խիղճ մտացն · չիք ինչ նորա 'ի հոգւոյն · վիճակ նորա

այնպիսի՝ զոր առաւել արտասուէցին հարքն սուրբք քան եթէ գրեցին. խստութիւն սրտի, ափշութիւն ոգւոյ, անզգայութիւն կորստեանն։ Եւ զվերջինն ասել. կորուսեալ է զհաւատն. որպէս կանխեաց ասաց սուրբ Յուսաւորիչն, և ուրացեալ Յիսուծոյ։

— Իսկ արդ եթէ այնչափ չար է ախտն, որպէս լաւաք, և այնչափ ՀԱՍԱՍԱԲԵՐ որպէս ծանեաք, և անդարմանելի՝ որպէս ասեաղ. զինչ ապա գործել պարտ իցէ։

— Անդարմանելի չէ, եթէ կամեսցիս. բուռն է ախտն և առաւել բուռն. Ճշմարիտ է. այլ սակայն ոչ բառնայ զանձնիշխանութիւն կանոնն։ Եւ քանզի "Վերջին չարեացն, վերջին էն դարմանք,, պէտք էն, սիրելիք, ընդդէմ բռնութեանն մեծապէս արիութիւն անձնիշխան կանոնն, նախ բոլորովին ապաւինել Յիսուծոյ, և ապա զօրանալ 'ի հնարհացն Յիսուծոյ։ Այս է միակ դարման։ Եթէ գերեցար յախտէն, մի կամիր 'ի նոյն յարանալ. արի զօրութեամբ, թօթափեա ըզլուծն. "Սղեսցուք զկապանս նորա և ընկեսցուք 'ի մէջ զլուծ նորա,,։ Զայնչափ զԱստուած, խնդրեա զօրութիւն. վասն անցելոյն հայցեա 'ի նմանէ թողութիւն առ ոտս հօր խոստովանութեան քո. զարշիր յախտէն, լուա, ջնջեա արտասուօք զաղտ հոգւոյն. փախիր յառաքիցն, անձամբ անձին զփորձն առեալ միանգամ՝ զբռնութեան և զՀրապուրանաց ախտին յայն ինչ աւիթս, յայն ինչ հայեցուածս, յայն ինչ կենակցութիւնս, յայն ինչ ընթերցուածս ապականագործ դրոցն, զի և յառաջակայիցն զգուշասցիս խնամութեամբ և ժուժկալեսցես։

Այլ քանզի յոյժ մերձաւոր է ախտն, և անկակիցս մեզ, և փաղաքուշ է դաւաճանն, քև երբէք չմոռանասցիս ոչ մարդ ապրել 'ի հաղթիցն։ Այլ սակայն և միշտ յանդգնիցս կացցես, եթէ միշտ ապաւինեալ Յիսուծոյ՝ խնայարհութեամբ ստէպ խոստովան լիցիս 'ի բոլոր սրտէ և կրկնեսցես և երբեկնեսցես 'ի փորձութիւնն զհոգեշունչ իրձն, եթէ "Լէ կարեմ այլազգ ժուժկալ լինել, բայց եթէ Յիսուծոյ տացէ,,։ Եւ արդեօք անշուշտ Յիսուծոյ միայն վանեսցես զախտն, և ոչ այլ իւիք և այնպէս ապա Յիսուծոյ ժուժկալ լիցիս, և դարմանելի լինիցի քեզ ախտն։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ Ա.

ԳԻՐՔ ԱՆԲԱՐԻՔ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐՔ

“Եւ բազումք 'ի կախարդասարացն բերէին զգիրսն, և այրէին առաջի ամենեցուն„ : Գործք. ԺԹ. 19 :

Այլ մեծամարմին այս աշխարհ, որպէս ասաց ոմն 'ի նախնումն, պատկեր է խորհրդոց մտացն Աստուծոյ, իցէն ուրեմն և մատենագրութիւնք՝ տիպք խորհրդոց մտաց մարդոյն։ Վասնզի յարարչագործութեան էիցս երևեցոյց զինքն արարիչն, “Օ՛ի աներևոյթքն Աստուծոյ, ասէ, արարածովքս իմացեալ տեսանին„. իսկ մարդ դրոշմամբ գրոցն նկարեալ առակէ զիմաստս մտացն և զշարժմունս սրտին, և գլխովին իսկ զանձն իւր, յաւերժացուցեալ զնոցն գեղեցիկ արուեստիւն տպագրութեան. զի և 'ի մեռանել իւրում և 'ի հողանալ, կեանք նորա յաղագս յաղագս՝ իցէն մատեանք նորա, և լեզու նորա՝ վերծանութիւն գրոց նորա։ Այս էն իսկ արդարև զիրք՝ իբրև մարդասիրութեան կտակք և հրիտակք յարանց քաջաց և յիմաստնոց թողեալք ազգի մարդկութեանս, որ 'ի հազար ազգս գտանեն իւրեանց ժառանգս։

Կիսրք և արձանագրութիւնք և դրօշուածք սրատկերաց բազմադէմք երևեցան յաշխարհի, սակայն և հեշտեաւ բազումք 'ի նոցանէ բարձան 'ի միջոց. զգիւտ գրութեան և զտպագրութեանն քան զամենայն արուեստից գիւտս նախապատիւ ասեմք և առաւել պի-

digitised by A.R.A.R.@

տեսան, որ ամբաւս իմն 'ի նախագիծ մատենիցն օրի-նակս յառաջ ածէ, և զոգցեսս միանգամայն անմահս զմատենագիրն գործէ և զմատեանն, և արգիւնաբար և շահաբեր զկնի եկեղեցւոյն 'ի գեղեցիկ գրեալն դարուց 'ի դարս։ Օ՜ինչ քան զայս պատուական կայցէ։

Լ.ՍԼ բաբէ, սիրելիք, և ո՞ր այն իցէ 'ի բնութեանս առաւել պիտեան, և ո՞ր այն առաւել արդոյ և պատուական, որով ոչ զեղծանիցի ոգի մարդկային. և 'ի գործ չարաչար վարեալ ոչ յեղծումն և յապականութիւն անձին իւրոյ և այլոց դարձուսցէ զնոսն։ Այն ինքն կենցաղօգուտ արուեստ գրութեան և տպագրութեան, որ գունակ գունակ կերպարանս սիրունս զառաքինութեան և զիմաստութեան մեզ 'ի նեբքս բերէ, նոսն ինքն միանգամայն և թոյն մահաբեր զմոլորութեան և զմոլութեան ախտից մեզ ջամբէ։

Այն են մատենագիրքն բազումք՝ իմաստունք և առաքինիք. են և ամբարիշտք և մոլիք, որք և արդարև ի բրև ժանտախտք համարեսցին ընկերութեան և թշնամիք ոխերիմք ազգի մարդկութեան։ Այս է իսկ ասել զգրոց նոցա, զոր ինչ և յաղագս հիքացելոցն մեռելոց 'ի տարափոխիկ ախտէ, որ հոտ դառնութեան զհետ իւրեանց թողուցուն և ժահր ապականագործ։

Ծովացեալ են աւադիկ այնպիսի գրեան յայլ ազգս և 'ի բարբառս։ Սակայն առ նոքօք սուրբ և անարատ և երջանիկ 'ի մասինս յայսմիկ ասեմ՝ զմերն հայ բարբառ։ Լուսոյ և առաջարկութիւն քարոզիս թէպէտ և տիրապէս առաջնոցն 'ի Ձահ պատահեալ, սակայն և մերոցն այսօր 'ի կարևորագունից մասին է։ Վանգի և 'ի մերազնեայց յոլովք 'ի դարուս՝ արդարև իբրև կարևոր և կենցաղաշահ վարժից՝ լեզուագիտութեան փոյթ կալեալ կրթին 'ի զանազան բարբառս ազգաց, և թերևս՝ առաւել քան 'ի բնիկ բարբառն։ Լուսոյ և որչափ ինչ 'ի բարեաց մասին քաղեսցեն նոքա 'ի գրոց օտարաց՝ նոյնչափ և 'ի չարեաց, եթէ ոչ զգօնասցին յընտրել զգիրս բարիս և զանբարիս, և զգուշասցին յընթերցմանէ չարաթունիցն։

Վանգի և անշուշտ իբրև թունիւք լի են գրեանն զեղծագործ մատենագրացն, եթէ ըստ սուտանուն գիտութեան, եթէ՝ ըստ հաւատոցն թուլութեան, և է-

digitised by A.R.A.R.@

թէ ըստ վարուցն ապականութեան, մանաւանդ եթէ գլխովին ըստ ամբարիշտ անկրօնութեան։ Եւ այնչափ ինն ծայրայեղք 'ի չարութեան էն գրեանն, մինչև ասես՝ եթէ ոչ մարդ, այլ բեղիսար զոսոին շարագրեաց։ Լաստի և հարկ է զմեծապէս զեանն՝ որով մեծապէս թշուառացաւ Երոպէ յընթերցմանէ ամբարիշտ գրեանցն՝ 'ի դէմն ածել այսօր և ձեզ մերազնեայ սիրելեայդ՝ իբրև նախապահեստ դարմանն պատուական ազգիս, զի յօտարին փնասուց ինքնին դուք զգօնացեալք զբարիս պտղաբերեսջիք անձանց։

Զի եթէ էր ժամանակ յոր առաւելապէս վարակեաց ամբարշտութիւնն զտահմանս Երոպայ, ահաւասիկ ժամանակ անցելոյ դարուն, յորում 'ի գիտնականն և յուսումնական ազինս՝ անխտրաբար ազատութեամբ և խորհեցան և խօսեցան և գրեցին և տպագրեցին և առ հասարակ 'ի վերծանութիւն առին։ Եւ եկաց այդ օրինակ գրութիւն և տիպ և ընթերցումն, աւաղ, արձանագրութիւն և պատմութիւն ամենայն մարդկութեանս՝ լի խելայեղ բանդագուշանօք անկրօնութեան և արձակերասան կենաց ազատութեան։

Զան որոյ և պարտ անհրաժեշտ համարիմ առաքելական պաշտամանս բողոք ընդդէմ բառնալ այսօր, վերծանութեան ամբարիշտ գրեանցն, և առաջի ատենի աշխարհի և առաջի ատենի ողջախոհ ձերում դիտակցութեան մնաց կնքել, եթէ էն իսկ այդ գրեանդ արժանի ձերոյ ատելութեանդ։ Զախ զի գրեանդ այդոքիկ մահաբերք էն կրօնից աստուածապաշտութեան։ Եւ երկրորդ անգամ՝ զի էն ապականագործք նա և քաղաքաց և կարգի ընկերութեան մարդկան։ Զարբաւիմ առ քրիստոնեայս, բարբաւիմ առ քաղաքացիս։ Եւ արասցուք սկիզբն քարոզիս։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆԱ.

Եթէ սիրեմք զաւետարանն, որպէս և սիրեմք իսկ, գաղջեսցուք յայնցանէ՝ որ մարտ եղեալ կուսին ընդ աւետարանին։ Եթէ սիրեմք զգեղեցիկ կարգ ընկերութեան և զխաղաղութիւն անձանց և զքաղաքի, 'ի բաց ընկեսցուք զդիրսն անբարեաս՝ որ տապալէն զայնոսիկ։

Չ արդ, աղէ սիրելիք, 'ի բարեացն սկիզբն առեալ, վայր մի քննեցէք, և տեսանէք քաջիկ քանիսն բարիք և գարձք սքանչելիք 'ի շնորհացն Աստուծոյ գործեցան յաշխարհի յետ 'ի լոյս ընծայելոյ կրօնիս քրիստոնէութեան՝ 'ի լրոյ կամ 'ի վերծանութենէ գրոց բարեաց։

Եթէ Կոստանիոս մեծն բազմանարդացոյց զանչէնն, և յարկս սրբութեան և առաքինութեան յարդարեաց զանայութիւն վայրաց անապատին, և եթէ իմաստասէրքն աշխարհի գերահամբաւք յանկարծակի իմն 'ի խաւարէն 'ի լոյս դարձան աւետարանին Ճշմարտութեան, և եթէ աշխարհիկք բազումք 'ի կարգաց կարգաց երկրի փոխեցան եղեն երկնաքաղաքացիք և սրբութեամբ հանդիսացան իբրև ինկելիք և տօնելիք յեկեղեցւոջ Աստուծոյ, և զինչ ևս ասել զբիւրս 'ի բարեաց, առ հասարակ ամենեքեան նոքա պարտական զանձինս դաւանեցին գրոց սրբոց և բարեաց. քանզի կամ լուան 'ի նոցանէ և կամ ընթերցան։

Իսկ մանաւանդ՝ զինչ ասա ասել պարտ իցէ վասն գերահռչակեալ առն այնորիկ, որ յաշխարհայինս և 'ի մարմին թաթաւեալ ողջոյն, և ապա առաւել սուրբ քան զբազումն 'ի սրբոց, և վարդապետ Ճշմարտութեան համբաւատենչ քան զյոլովս, զմեծին ասեմ զԱգոստինոսի։

Զայն աստուածային յաւուր միում հնչէ յանկարծակի յականջս նորա կրկին և երեքկին. "Ագոստինէ, առ և ընթերցիր"։ Զայս լուաւ, և գտանէր առաջի իւր գիրս իմն բարեպաշտութեան կրօնից գրեալ լի աստուածային հոգւով։ Զոր և ընթերցաւ ուշով. և աշխարհագոյժ մեղաւորն երևեցաւ սուրբ աշ-

digitised by A.R.A.R.@

խարհաբարոզ, և վարդապետն մոլութեան՝ հայելի սրբութեան։

Բաբէ, քանիցն իցէ աղդեցութիւն զօրութեան գրոց բարեաց 'ի միտս մարդոյ և 'ի սիրտ նորա. զառաջինն խելամտեցուցանէ 'ի ծանօթութիւն Աշխարհութեան, և ապա շարժէ 'ի սէր առաքինութեան։ Այս է թէ ընթերցումն այդպիսի գրենոյն օժանդակեսցի և 'ի վերուստ յաստուածային ներշնչեսցի, զոր և է իսկ տեսանել հասարակ կարգաւ, չիք այնուհետև ոք թուլահաւատ. չիք և անկրօն, չիք և մեղաւոր մեծ՝ թէպէտ և յամառ յոյժ, թէպէտ և ողջոյն փոխեալ 'ի մարմին, որ ոչ հաստատեսցի 'ի հաւատս, և ոչ զգաստացեալ պարկեշտասցի 'ի վարս։

Այլ արդ զոր օրինակ ընթերցումն գրոց բարեաց մայր եղև զգաստութեան և աղբիւր մեծամեծ ուղղութեց, նոյնպէս և ընթերցումն գրոց չարաց միշտ խոչընդոտն եկաց քրիստոնէից և հրապոյրք պղտորք մոլութեանց և մոլորութեանց։ Ոչ ինձ բաւական ժամանակս, տեառք իմ, պատմելոյ ձեզ զպատմութեան անցս զհնոց գրուց, և ակներև ձեզ 'ի դէմս ածելոյ զամբաւս ոմանս 'ի քրիստոնէիցս, որ հրապուրեալք յանբարի գրոց ընթերցմանէ գահավէժ անկան 'ի մոլորութիւն՝ միանգամայն և յամբարշտութիւն։ Այլ զինչ պէտք իցեն 'ի պատմութիւնս հնոցն դիմել, ոչ ահա մեզ ժամանակ մերձաւոր դարուց պատմութիւն է կենդանի և խօսուն առաջարկութեան բանիցս՝ զոր ասեմ։ Այլ իցէ՞ ոք, իցէ՞ ոք արդեօք յունկնդրաց աստի խնոց, որ կամ յայլս զփորձ իրացն տեսեալ, և որ կամ յանձին իսկ իւրում զփորձ առեալ, վկայութիւն անվեհեր ոչ ընծայեսցէ Աշխարհութեան զոր քարոզեմ այսօր։

Ա՛հ. չհանդուրժեմ ես սիրելիք, առնուլ կրկնել զնոյն առանց արտասուաց և առանց զարհուրանաց։ Բանիք ոմանք 'ի պատանեաց՝ զորոց լուաք և ընթերցաք, և զորս մեք ինքնին տեսաք, որ անդստին 'ի մատաղ տիոցն դաստիարակեցան 'ի հաւատս և 'ի բարեպաշտութեան, որ լի էին երկիւղիւն Աստուծոյ, հանապազորդեալք 'ի կրթութիւնս, հպատակեալք աառաջնորդաց, պարկեշտացեալք 'ի գնացս, անարատք 'ի վարս, անվթարք 'ի պարտս պաշտամանն, որ օրինակք

digitised by A.R.A.R.@

բարեաց էին համատիոյն, յոյս բարի զարմին իւրեանց, և պարծանք առաքինութեան։ Զ.յլ աւաղ բախտին. զիրք իմն անբարի 'ի ձեռս անկաւ նոցա. առին ընթերցան. քաստնեցան իմն զառաջինն, այլ անդէն փոյթ ընդ փոյթ թօթափեցին զամենայն խէթ և զերկիւղ. յառաջեցին յընթերցումն, արբին զմահացու թոյնն. զիարդ այնպէս փոխեցան վաղվաղակի յիմաստից մեծաց իւրեանց. քանիցն և փոփոխութիւն տեսաւ յանկարծակի 'ի բարոյական գնացս նոցա։ Զ'արթասցիս դու այնուհետև զիտել և ասել ինձ, զինչ արդեօք հաւատան նոքա կամ ոչպէս. և սակայն զիտես քաջ և տեսանես և ակներև, զի վարք դոցա յետ այնորիկ վարք են արձակերասան մարդոց։ Օ՞ր այնուհետև 'ի գործոց բարեպաշտութեան կրօնից ցուցցեն նոքա յանձինս իւրեանց, բայց եթէ զայն միայն՝ զոր չմարթիցին նոքա զանց առնել առանց իբրև հրապարակագոյժ անկրօն առակելոց զանձինս իւրեանց։ Յարկութիւն զրուցաց նոցա և ամբարտաւանութիւն նոցա՝ քաջիկ յերևանի կացուցցեն զմոլորութիւնս զմտաց նոցա և զապականութիւն սրտից նոցա։ Ամրողք հեշտալեաց և դատարկութեան, թշնամիք առաքինութեան և աշխատութեան. անհնազանդք առաջնորդաց, անսակնածուք աւագաց, անձնմատն յազատութիւն, սոնքացեալք յանձինս, անարգուք զպատից, ունչս առնողք առաքինեաց, արհամարհողք իշխանութեանց, գայթակղութիւն հասակակցաց, կործանումն զարմին, ժանտախտք քաղաքին, անարգութիւն եկեղեցւոյ։ Զ.յսչափ է, սիրելիք, պտուղ չարեաց յընթերցմանէ չար գրեանցն. և իցէ թէ, մինչդեռ խօսիմ, չիցէ ոք 'ի ձէնջ որ մատնցոյց ևս արասցէ մեզ յայնպիսեաց անտի։

Զ.յլ թողեալ զմանաւորացն կիրս, զհասարակացն 'ի քնին առցուք։ Զ'ասցէք ինձ աղաչեմ՝ անկեղծութեամբ որ միանգամ զիտեքդ. Զ՞ր այն եկայց թուականն թուլահաւատութեան, կամ բնաւ իսկ անհաւատութե և անկրօնութեան որ այնչափ իմն՝ մանաւանդ յանցեալ դարուն Ճարակեցաւ 'ի քրիստոնեայս. զիտիցէք, ո՞ր. նոյն ինքն թուականն ամբարիշտ գրեանցն որ 'ի լոյս ընծայեցան։ Իսկ և երբ արդեօք յանէն զիտութեանց

digitised by A.R.A.R@

յԱՐՔոպէ, 'ի հանալատանս արանց քաջաց և ուսումնականաց, նաև 'ի հանախորհրդութիւնս ռամիկ որերոյն, Երբ արդեօք սկսան լսելի լինել առաջարկութիւնք ոմանք և նախադասութիւնք կշռակի ընդդիմանաքաք վարդապետութեանց հաւատոյ և աստուածային աւանդից, և վարուց քրիստոնէութեան։ Զ-խոտիցէք, Երբ. յորժամ սկսան 'ի ձեռս յածել քրիստոնէից Ռուսաստանն և Զ-ոլգեռք, և այլ ևս ամբարշտութեան և ապականութեան գրեանն, որ 'ի վերին երեսս շնորհս իմն ունելով և հոգոտանս Ճարտարասանութեան, նեբբոյ ըզմահացու թոյնն ծաւալեցին 'ի հոգիս բազմանց։

Զ-ս յայնժամ, աւաղ արտասուաց պատմութեանն, և յայնժամ սկսան բազմութիւք ոմանք յերկբայս լինել և թերահաւատել յաղագս աստուածային յայտնութեանցն, յաղագս Ճշմարտութեան գրոց սրբոց. զինչ ևս ասել, նա յաղագս գոյութեան կենդանոյն հանդերձելոց։ Զ-ս յայնժամ Ճշմարիտն աստուածապաշտութիւն համարեցաւ իբրև տկարութիւն ոգւոյ։ Զ-ևս այլ երեսս առնէին յայնժամ օրինաւոր հեղինակութեան եկեղեցւոյ. գոռոզութեամբ և ազատութեամբ առ ոտն հարեալ զպատուիրանս նորա, 'ի ծաղր ևս հատանէին ընդ մեծվայելչութիւն նուիրական արարողութեանց նորա, և առ անարգս ունէին զպաշտօնեայս նորա։ Յայնժամ և բազումք խորհեցան և խօսեցան և գրեցին վասն կրօնիցս սրբութեան հաւատոյն, իբրու որ ոչ այլ ինչ իցէ՝ քան թէ առասպել անգոյ, կամ գլխովին մոլացածին գիւտ մարդկան։

Զ-ս քանզի կրօնն ցանգ անբաժին միասնական է ընդ բարոյականին, ասացէք ինձ պարզ, տեսարք, եթէ եղև երբէք ժամանակ այլ, յորում առաւել ապականեալ տեսան վարք քրիստոնէից. յորում այնչափ յերևանի և անպատրուակ եկաց ամբարշտութիւնն, և յորում առաւել իմն նազելի կերպարանաւ փերևերտեալ ընծայեցաւ յանցաւորութիւնն ինքնին գլխովին։ Զ-ևս ասացէք ինձ, եկաց երբէք ժամանակ այլ, յորում անառակութեան քերթուածք և բանահիւսութիւք պատմութեանց լկտիք կամ վտանգաւորք, և արձակերասան սկզբունք ազատութեան խղճի, ազատութեան խորհելոյ, ազատութեան խօսելոյ, ազատութեան գրելոյ

digitised by A.R.A.R.@

այնչափ հեղեղեցին, կամ թէ այնչափ անցագուութեամբ յընթերցումն առան այդոքիկ։

Եւ որ յերկուասցի երբեք, եթէ ոչ և յամենայն իսկ 'ի դարս ժամանակաց զօրացաւ յանցաւորութիւն. և ցորչափ կեան մարդիկ, մեղք են յաշխարհի։ Բայց սակայն յորժամ որ հաւատայ և մեղանչէ, զմնեա հանդերձ քսամնեալումն մեղանչէ, Ճանաչէ՝ եթէ մեղանչէ, և խիղճ մնացն տանջէ, և հեշտին այնուհետև առաւել յապաշխարութիւն Ճանապարհ հորդէ։ Իսկ 'ի դասս միարակութեան յընթերցմունս ամբարիշտ դրոցն, մեղանչեն՝ իբրու եթէ ոչ մեղիցեն. անխիղճ են միաբն, լուեալ է ամօթն. "Եւ է երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նոցա..։ Ուղէր. քանզի այն գիրք փաստս ինն և ջատագովութիւնս եւ 'ի վերին երեսս տան ընթերցողացն՝ 'ի չքմեղս հանելով զազգ ամենայն ամբարշտութեան. նաև զանհնարին պաշտօնութեան և զանժուժկալութեան կիրս և զգործս իբրև տկարութիւնս ինն ներելիս կոչեն նոքա, լուեցուցանեն զիսայթ խղճին, և յանապաշխարութիւն գլխովին կրթեն զհոգին։

Ուանզի մանր 'ի քնին առեալ վայրիկ մի գիրսդ, զինչ այլ ապա պտուղ երբեք քաղել մարթ իցէ յայդպիսեաց մատենից, եթէ միանգամ զմտաւ ածցես դու զտգիտութիւն և զմեծ տկարութիւն ընթերցողացդ։

Եւ ինձ բաւական իցէ խոստանալ, եթէ պատանիք կենցաղասէրք զակատեալք յընթերցումդ յայդ՝ ունիցին մտածութիւնս ողջախոհս և դատումն բաւական առ 'ի զգէմ ունել չարահնար մենքենայիցն և պղտոր հրապուրիցն, զոր սատանայամիտ գրեանդ այդոքիկ արբուցանեն պատանեացն 'ի հասակի անդ, յորում կիրք բռնացեալ են յերասանակն բանին. 'ի հասակի՝ յորում խնդրեն պատանիք անկակից թեթևամտութեան միշտ բարեմարդիկն լինել առ ամենեսեան և նազելի. 'ի հասակի՝ յորում հողմակոծեալ են միաբ պատանեաց, 'ի հասակի յորում ամենայն որ փայլէ, ոսկի համարի։

Իսկ և որ առաւել անցագ ընթերցողքն են 'ի նոսա այդ գրեանցդ, նոքա են որ և պանծանօք պարծին յանձինս՝ զի չեն աստուածաբանք. կամին ասել՝ եթէ վասն կրօնից հաւատոյն չունին այլ ծանօթութիւն՝ բայց զոր ուսանն նոքա 'ի մատաղ տիսն 'ի քրիստոնեա-

digitised by A.R.A.R.@

կան վարդապետութենէն, և զոր թերևս գլխովին մոռացեալ իսկ իցեն։ Այլ արդ եթէ չգիտեն ինչ զկրօնից հաւատոյն, զիարդ ապա բաւական իցեն նոքա ըզդէմ ունել այնչափ անօսր և Ճարտար խնամատակութեց և խաբուսիկ ցուցակութեանց՝ որովք զենուորին նոքա ընդդէմ հաւատոյն։ Բ. սասցեն թերևս, եթէ արմատացեալն 'ի նոսա սէրն ընդաբոյս առ կրօնն՝ յորում ծնան, անսասանելիս պահեսցէ զնոսա։ Գ. յլ բարի, եթէ արդարև սիրեն զկրօնն՝ յորում ծնան, և առ ինչ ապա ընթեռնուն նոքա զգիրսն զայն՝ որ անարդանօք ընդ վայր հարկանէ զկրօնն։ Որ որդի երբեք յանձին կալցի ընթեռնուլ ախորժանօք յերդիծական ինչ քերթուածի զարհամարհութիւն զիւրոյ մօրն, թէպէտ և Ճարտարահիւս առաւել և վսեմ ոճով գրեալ իցէ քերթուածն։

Իսկ և զինչ ապա ասել պարտ իցէ, տեարք իմ, եթէ միանգամ զենեսցուք և զդաւառանութիւն խաբանայն՝ որ զօղեալ կան 'ի գիրսդ յայդոսիկ, զոր և հազիւ երբեք արք բազմիմաստք և ուշիմք և նրբամիտք բաւական իցեն յերևան հանել և խայտառակել։ Յանդ յաղագս պարկեշտութեան խօսին գրեանդ այդոքիկ, յաղագս նախախնամութեան, յաղագս մեծապէս յարգի և սրբութեան աւետարանին Քրիստոսի, յաղագս փութաջան սիրոյ առ բարոյականն։ Գ. յլ ապա տակաւ տակաւ ընդ շաւիղս մոլորաշաւիղս, մութս և խոտորնակս, տապալեն զամենայն պարկեշտութիւն, զամենայն նախախնամութիւն, զյարգ աւետարանին, և հանգամանայն քանդեն զհիմունս բարոյականին։ Այլ 'ի վերջ ուրեմն հիքացեալ ընթերցողն առանց զգալոյ յանձին գտանէ զինքն շաղեալ 'ի վարմին. և դառնայ հայի յանձն և ինքնին և զարմանայ եթէ զիարդ այնպէս կապտեցաւ ինքն 'ի հաւատոյն, զիարդ և երբ այնպէս յանկարծ եղև ինքն անկրօն։ Այլ գտանէ իւր առաջի այնուհետև Ճանապարհ բաց և արձակ՝ կեանս վարել ապերասան և անխիղճ՝ իբրու գլխովին առն անառակի։

Ո՛վ նեղվիցն աղատութեանն այնորիկ. այս աղատութիւն է սիրելիք, այս աղատութիւն՝ գիւտ և արուեստ մեծ և Ճարտարահնար ամբարշտացն այնոցիկ մատնագրաց՝ իբրու անպէտ խայծիւ թափել զաղգ ամենայն

digitised by A.R.A.R.@

զԹունից 'ի սիրտ մարդոյ. քանզի և անշուշտ որ հեշտակամաւն հրապուրէ՝ դիւրեաւ համոզէ, և մոլորութիւնն ջատագով կրից առաւել յանկուցանէ՝ քան զՀնմարտութիւնն սանձահար ախտից։

Այլ մի՛ ոք ընդդէմ բանս դիցէ, եԹէ փաստաբան և կուսակից հանդիսացեալ է իմ այսօր քարոզիւս՝ որ զիտութեան և անուսումնութեան. որովհետև 'ի բազմահոյլ մատենից գրոցդ այդոցիկ, է իսկ արդարև ուսանել բազում ինչ։ — Այո՛ լինէն ջատագով լինել տգիտութիւ, սիրեմ զուսումն, սիրեմ զգիտութի. բարեկամ եմ հմտութի և կենցաղագուտ արուեստից և գիտից։ Այլ թող գրեանդ այդոքիկ ամենայն ազատութիւ 'ի ձեռս տացին մարդոց որ իմաստունքն իցեն՝ և գիտնականք և փորձք, որք և բաւական իցեն յերևան հանել և առակել զիսաբանսն և զմոլորութիւնս՝ որ 'ի նոսա, և յաղԹահարեսցեն զամբարշտութիւնսն։ Այլ անխտրաբար 'ի ձեռս ամենեցուն և 'ի դատաստանս ամենեցուն ապսպարել զայդոսիկ, այդ անշուշտ մահաբեր է կրօնիցն հաւատոյ, մահաբեր է և բարոյականին։

Այլ աղէ և Հնգրիտ խուզեալ, իցէ՞ արդեօք բազում ինչ ուսանել յայդպիսի գրենոյդ. և զո՞ր, ասա ինձ, զո՞ր ուսումն դաս տացեն դոքա։ Օ՜ինչպիսի՞ գիտութիւն կոչել պարտ իցէ զգիտութիւն՝ որ ուսուցանէ չունել մեզ ինչ մի հաստատուն գիտութիւն, այլ յերկբայս կալ ընդ ամենայն. որ ուսուցանէ հանարել զստեղծուած մարդոյս իբրև լոկ մեքենայ շարժուն. որ ուսուցանէ շփոթել զախտն ընդ մոլութեան. որ ուսուցանէ յինչայ քերել զվարձ զառաքինեացն և զպատիժ զամբարշտացն 'ի հանդերձեալ կեանս, այլովք բազմաք հանդերձ։ Այլ ո՞չ արդեօք չար ևս իցէ այդպիսի գիտութիւն քան զամենայն տգիտութիւն։ Այլ սակայն այդոքիկ են ամբարշտեալքն յանբարի գրեանդ, որ զարդք են դարանաց գրոց և Թանգարանաց Թուլահաւատ մարդկան։

Այլ եԹէ ոչ սանձ միանգամ, առ ձեզ է այսուհետև դարձ բանիս, իշխանք ժողովրդոց և առաջնորդք եկեղեցւոյ, եԹէ ոչ սանձ միանգամ արկանիցէք իշխանութեամբդ ձերով չարիս այսմիկ՝ որ գիւրեաւ իբրև ըզքաղցկեղ գիտէ Հնարակել, յետ սակաւուց զինչպիսի՞ արդեօք տեսանիցէք զվիՀակ կենաց զառն առն և զազ-

digitised by A.R.A.R.@

գին ողջոյն, զինչափսի և զգօրութիւն իշխանութեան ձերոյ։ Ամենի գիրք անբարիք և անուրբք ոչ կրօնի միայն են մահաւիթք՝ որպէս լուայք, այլ և քաղաքին ընկերութեան քակտիչք են և ապականագործք, որպէս տեսջիք 'ի մօտոյ։

ՄԱՍՆ Բ.

Այթէ արժան իցէ առ 'ի շահ օգտի զաղնուական մեր դար զբրիստոնէութեանս առնուլ խառնել ընդ սկզբունս վարդապետութեան և ընդ օրինակս դարուց հեթանոսացն և նոցուն օրէնսդրացն, աղէ ինձ վայր մի ասացէք, որ միանգամ գիտակդ էք պատմութեանց ազգաց։ Ո՞ր հասարակապետութիւն բարեկարգ, ո՞ր կառավարութիւն ազգի և քաղաքի քաջախորհուրդ երբէք եկաց յաշխարհի, որ ոչ 'ի բաց մերժեաց և արգել կարձեաց ամենայն զօրութեամբ զգիրս և զմտեանս հակառակամարտս և քակտիչս կրօնից և ապականիչս բարեկարգութեան ժողովրդեան 'ի քաղաքական կարգի։

Ո՞չ ահա Աթենացւոց խնամատուն ժողովրդապետք հանդերձ մեծասասս պատուհասիւք վտարեցին 'ի քաղաքէն զգիրսն Պրոտագորայ։ Ո՞չ և Մասեենացիք առ հասարակ, ո՞չ և արդոյ Հռովմայեցիք զգուեցին և 'ի բաց վարեցին 'ի միջոյ իւրեանց զգիրս և զվարդապետութիւնս Էպիկուրոսի։

Ո՞չ և հանձարեղին այնմիկ և մեծին Պատոնի հռովմայեցւոյ այս էր հիմն վարդապետութեանն, սրով ասէպ ասենաբանէր նա 'ի համախումբ ծերակուտին, և մրցանակ ևս զքաջութեան փաստաբանութեանն ընդունէր մեծապէս փառաք. "Այդ գրեան, ասէր նա "բողոք մեծագոչ բարձեալ յասենի, այդ գրեան՝ որ "քակտիչք են ամենայն կրօնից, այդ գրեան՝ որ կրօնս "հին օտարոտիս մուծանեն 'ի մեզ, այդ գրեան՝ որ "մարտ եղեալ ինդրեն տապալել զպարկեշտութիւն "վարուց ժողովրդեան, են են իսկ միանգամայն քակ-

digitised by A.R.A.R.@

„ տիչք , և ընկերութեան քաղաքին և հիմն 'ի վեր
„ տապալիչք հասարակապետութեան մերոյ „ ։

Այսպէս զինու վարդապետութեան նահատակեալ և մեծն Վիկերոն քաղաքագէտ անուանեան՝ 'ի դիմի հարկանէր յատենի բազմամբոխ ժողովրդոց ընդդէմ ապականագործ զրոցն վարդապետութեան , որ պայքարեալ ժխտէին զանմահութիւն հոգւոյն , որ յուրատ լինէին զվարձուց հատուցումն և զպատիժ պատուհասին 'ի հանդերձեալ կեանս։ Ա՛ա այս իմաստուն իբրև արդարև հայր հայրենեացն և սիրող Աշմարիտ բարւոյն հասարակաց՝ ձայն բարձեալ գոչէր այսպէս . " Զի դուք թոյլ միանգամ արարէք , ո՛ Հռոմայեցիք . տուք տեղի առ վայրս մի՝ զի անպատուհաս և արձակաբայլ ընթացցին զբերանդ այդ ամբարշտութեան 'ի քաղաքիս մերում և 'ի գաւառս մեր , և արագ արագ տեսանիցէք դուք այնուհետև զՀիւպատոսդ ձեր՝ մերկացեալս ողջոյն յիշխանութենէ . տեսանիցէք զծերակոյտդ ձեր անկեալ վատեալ ողջոյն 'ի զօրութենէ . տեսանիցէք զօրէնս ձեր՝ զի կան , այլ հպատակող չիք 'ի միջի . տեսանիցէք լուծեալ խզեալ և զամենայն կապ ընկերութեան ձերոյ . համաշխարհականդ այդ տերութիւն ձեր տապալեսցի , և տիեզերաց արքայս Հռոմ՝ հիմնայատակ քանդեսցի „ ։

Ո՛այս օրինակ խորհէին և զայս օրինակ խօսէին քաջախորհուրդ հեթանոսքդ յաղագս ամբարշտութեան զրենոյն ։ Իսկ ապա մեք դաստիարակեալքս 'ի կրօնս անարատութեան և Աշմարտութեան , մեք մնեալքս երկնաւոր վարդապետութեամբք և առաջնորդեալքս յաստուածային յայտնութենէն՝ զիարդ խորհեսցուք վասն այդոցիկ , զինչ խօսեսցուք ։

Ա՛նշուշտ են բանքս , սիրելիք , եթէ տնկակից և անմեկնելի է զուգաւորութիւնն՝ որ ընդ կրօնն և ընդ ընկերութիւն քաղաքին , որ ընդ բարեզգեաց վարսն և ընդ երջանկաւէտ խաղաղութիւն տերութեանց . և առանց եղծանելոյ զմին և զմիւսն՝ չիք հնար անջատել 'ի միմեանց զտիրական նոցա զարդիւնս բարեաց ։ Ա՛նդ մարդկային երջանկութեան՝ միասնական են փառքն Ա՛ստուծոյ . մարդիկ ցայնվայր են երջանիկ , յորվայր Աստուածն զԱ՛ստուած , սիրեն զԱ՛ստուած և երկնչին յԱ՛ստու-

digitised by A.R.A.R.@

ծոյ, ուստի և յորդորեալք գործեն զբարիս։ Զմենայն ընկերութիւն անբաժ 'ի գեղեցիկ սկզբանց ասսի, մահ կրէ 'ի ծոցի իւրում. մարթ է նմա փայլիլ վայր մի 'ի վերին երեսս, այլ յերկարաձգել չիք հնար։

Զնիրոնութեանն լրբութեան որ 'ի չար գրենայն, զհետ ընթանայ և վարուցն լրբութիւն. սա ապականէ զանդամն քաղաքին, և զիարդ այնուհետև դու զոգ ջոյն մարմինն տեսցես յոտին կացեալ։ Զբքայութիւն և խաղաղութիւն ամբարշտաց մի կացցէ, ասէ Զսուտած։ 'Զկուն եղեալ 'ի նմին իսկ յամբարշտութենէն՝ անկանգնելի կործանեսցի. " Զանարատցի, ասէ, 'ի վերայ նորա անիրաւութիւն նորա, և զնա անդէն ձնշեսցէ.. '

Զանց կրօնի զօրութիւն և ոչ մի ունին օրէնք քաղաքին 'ի վերայ քաղաքացւոյն 'ի յորդորել զվարս նորա. քանզի շատ է յայնժամ մեղանչել անխիղճ. միայն եթէ հրապարակագոյժ մի լիցի։ Զանիծն իցեն զարհուրանք ողջամիտ քաղաքացւոյն 'ի գտանել զմահաբեր զայս վարդապետութիւն, և որ ինչ նման նորին, 'ի գրեանն յայն զորոց բողոք հարեալս եմ այսօր։ Զսկ ապա 'ի մէջ այնչափ ապականութեան վարուց քաղաքացեացն զակատելոց յուսումն ամբարիշտ սկզբանց մատենիցն այնոցիկ, որ անփոյթ ապահովութիւն կայցէ երբեք նաև աթոռոց առաջնորդաց և իշխանաց քաղաքին յամենայն կարգի։

Զսկ զիարդ, միթէ ընդ օդս ինչ խօսիցիմք սիրելիք. միթէ և ոչ աչք մեր ինքնին տեսին զաղէտսն. և ոչ առ մեօք դարձեալ կան առաջի բողոքարկուք սրտառուչք՝ վասն որոց խօսիմքս և ազդեմք և աւաղեմք. " Զսկ ցո՛ր " վայր հասեալ ժամանեցաք մեք, (գրէր և բողոքէր " յաւուրս մեր 'ի Հոլուականին իւրում Զդամենոս " Զիսրսն երևելին եպիսկոպոս Զանդնի), ցո՛ր վայր " ասէ հասեալ ժամանեցաք մեք, եղբարք իմ, 'ի պատ- " ճառս ապերասան ազատութեան խորհելոյ, և ա- " զատութեան գրելոյ, և ազատութեան 'ի տիպ գրոշ- " մելոյ, և ազատութեան վերծանելոյ։ Օ ինչ գիրք " իցեն այդոքիկ անբարիք, խայտառակք և պիղծք, " որոց և անունն միայն արհաւիրս ածէ և սոսկումն։ " Զանի որոգայթք լարեալ կան 'ի դոսա ընդդէմ ան-

digitised by A.R.A.R.@

,, մեղութեան , քանի հայհոյութիւնք ընդդէմ աս-
,, տուածութեան . և քանիսն ծաղր և խաղ գտանեմք
,, մեք 'ի դոսա սփռեալ նաև ընդդէմ աստուածային
,, յայտնութեան ։ Զի մեք 'ի ժամուս քօղ 'ի վերայ
,, արկցուք ապականութեանցն այնոցիկ՝ որք առթեցան
,, 'ի զրոց այսի ։ Զոսի իսն այնպէս , եթէ մեծ և բաղ-
,, մաժողով այս մեր քաղաք ընդոն գերազանցեալ
,, գտաւ քան զայլ քաղաքս յանբարի յաւուրս
,, վաճառաց զրենոյդ այդոցիկ . և իբրև շահաստան
,, հասարակաց անկրօնութեան եղև մեզ քաղաքս , ուր
,, բազում ոսկւոյ և արծաթոյ գնեն զնչովելին արուեստ
,, ապականելոյ զբարեզգեաց վարս առն քաղաքացւոյ .
,, աւաղ , զի աւադիկ և մեծապէս աջողութեամբ յա-
,, ջողեցաք մեք 'ի նոցն ։ Զաչ , տեսանեմք իսկ քաջիկ
,, փորձառութեամբ , զի կորեաւ աւադիկ ամենայն ակն-
,, ածութիւն առ մարդիկ . և զիարդ ոչ , յորժամ յայն
,, սահման հասեալ ժամանեցաք մեք , զի չիք այլ ակն-
,, ածութիւն և առ Աստուած ։ Զի շատ մարդոյ այսօր
,, ապականել զանձն իւր . Ձգնի նա եղծանել խանդա-
,, րել և զայլս . յերեւանի առնուլ հանել և զյոյժ ան-
,, գոնելի տեսարանս զանժուժկալութեան , քանդել
,, տապալել զթուտիս զամօթխածութեան , եպերել
,, անդոնել գոռոզութեամբ զօրէնս և զսահմանադրու-
,, թիւնս տերութեան ։ Զաւադիկ ձեզ պտուղք մահա-
,, ռիւք բազմահոյլ զրենոյդ այդոցիկ , որ տապազրին և
,, վաճառին և ընթերցեալ լինին անխտիր ։ Զաւադիկ և
,, վիճակ և սահման , յորում գտանեմք մեք այսօր ըզ-
,, տարաբախտիկ զայս կղզի 'ի պատճառս զրոցդ այ-
,, դոցիկ ,, ։ Զայս վայր այս եպիսկոպոս ընդոնի ։

Զու արդեօք քաջադէպ թուեսցի , սիրելիք , և շա-
հաբեր զվկայութիւն 'ի մէջ առնուլ 'ի բանիս զառն
զայլակրօնի . զի ուսցուք մեք 'ի չարեաց օտարին զա-
ռաջս առնուլ զմերոց վտանգաց ։ Զու եթէ այդչափ իսն
յողբ սրտառուչ և 'ի բողբ հատեալ է այդ եպիսկո-
պոս այլափառ , քանիսն ապա պարտիցին հեծել և հա-
ուաչել և բողբ յերկինս բառնալ հովիւք խնամատունք
և աստուածասէրք կաթուղիկէ եկեղեցւոյ ։ Իսկ զոր
Ձարտարութիւն , զոր Ձիգն , զոր խնամակալութիւն էր
բէք բաւական ասիցես դու 'ի Ջնջել և 'ի միջոյ 'ի բաց

digitised by A.R.A.R.@

բառնալ զայդ գրեանդ, որ ապականիչքն են ամենայն բարւոյ։

Եւ սակայն չէ և շատ քաջ հովուացն հսկել 'ի վրայ հօտին, պէտք են և հլութեան ոչխարացն։ Եւ զելք բազմապատիկք և սաստք՝ են իսկ օրինադրեալք 'ի Աշնարտախնդիր և յաստուածխնամ առաջնորդաց եկեղեցւոյ, մի առնուլ, մի ընթեռնուլ, մի պահել առ իւրեանս զամբարշտութեան գրեանդ, որ ծովացան յաղգս քրիստոնէից. զինչ օգուտ 'ի հրամայելոյն, եթէ և հպատակելն մերձ ոչ իցէ։

Ո՛վ գեղեցիկ և նախանձելի ժամանակին առաջին քրիստոնէիցն, զորոց Պրակքն առաքելոյ ունին զմեծապէս գովութիւնն. որք զամենայն գիրս ամբարիշտս առնուին բերէին առ ոտս առաքելոցն և 'ի հուր դատէին հրապարակաւ։ Այնչարք երջանիկ ժամանակին լսէին ձայնի հովուաց իւրեանց, և հպատակեալք արածէին յարօտս քաջառողջս, և ըստ նոցուն ակնարկութեանն փախչէին 'ի մահաթոյն ձարակացն։ Եւ զաւաղ, ոչ խարք ժամանակիս ձայն ևս բառնան ընդդէմ հովուաց. կամին անձամբ զանձինս արածել. իցիւ թէ դոքա ոչ ժոեսցին ևս օր մի կամել արածել և զհովիւսն։

Եւ աղէ, թէպէտ և ոչ սահմանադրութիւնք առաջնորդաց եկեղեցւոյ էին 'ի միջի ընդդէմ ամբարշտութեան մատենիցդ, ո՞չ իսկ պարտ և արժան էր 'ի բաց փախչել 'ի նոցանէ ըստ թելադրութեան օրինաց բնութեանն։ Ո՞ որ զմահաթոյնն անձին ջամբեսցէ. և ոչ որ ըստ պատուիրանաց բնութեանն։

Եւ ո՞չ արդեօք այր իւրաքանչիւր 'ի ձէնջ, սիրելիք, 'ի փորձոյ իսկ անձինն վկայութիւն դիցէ, եթէ երբեք յայդպիսի գրենդ ընթերցեալ՝ քանիսն զխիղճ մտացն արատեալ իցէ, և որչափ ինչ զապականութեան 'ի կրնացս իւր և 'ի վարս ինքնին զդժպատեհ փորձն առեալ իցէ։ Շատ իցէ արդեօք 'ի զգաստութիւն վկայութիւնն անխաբ՝ որ 'ի փորձառութենէ իրացն, որ և առաւել ևս ազդեսցէ քան զամենայն քարոզս։

Եւ սակայն ոչ այս և ոչ այն շատ իցէ 'ի լուսաւորութիւն հոգւոց մերոց, ո՛վ անմահ Աստուած, եթէ ոչ դու ինքնին՝ որ Դաւիթ ևս կենաց և Աստեան Ճշմարտութեան՝ խօսեսցիս 'ի սիրտ քոյ հաւատացելոց,

digitised by A.R.A.R.@

որ ունկնդիրքն էն ինձ ասասնօր, զՀետ քո ընթանալ անխոտոր աստուածային վարդապետութեանդ, 'ի բաց փախչելով 'ի սուտանուն վարդապետութեանց, որ մինգամ ապականիչք էն պտղոյ արդեանց ամենասուրբ արեանդ և կենսադործ մահուան։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ Թ.

Ա.ԻԵՏԱՐԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

" Որ զնոգին Քրիստոսի ոչ ունի , սա չէ նորա " ;

Ոչ ինչ զարմանք են զի խնամատութիւնն զոր երկրաւոր և հնչաւոր կոչեաց աստուածային առաքեալն , ցանգ երկնաւորին հակառակ ամբարձցի խնամատութեան։ Օ ի եթէ վարժք և խնամաք՝ որ առ մեզ յաստուածային յայտնութեանց՝ յամենայնի ձայնակից և հաւասար հանդիպեսցին որ 'ի մեզ կրիցս շարժմանց , անշուշտ նուազունք կամ թէ և ոչ մի որ այնուհետև յերկրայս լիցի ընդ ձգնարտութիւնս աւետարանին և ընդ աստուածայնութիւն քրիստոսական կրօնիցս ։

Սակայն յաւերժականն այն մարտ հակառակութեան ապերասան մերոցս ըղձից ընդ պատուիրանս Աստուծոյ , այս է՝ որ զբազմահոյլ ջոկ զանհաւատ մարդկանն 'ի վեր բուսուցանել , և 'ի մէջ քրիստոնէից խումբ յոգնաթիւ զարձակերասան և զխառնակեցիկ որբոյն մեզ երևեցուցանել ։ Կամ ինն թերևս սոքա կեանս վարել առանց օրինաց , զի մեղանչել մարթասցին առանց խղճի ։ Այլ սակայն աւետարանին հրահանգք և պատուիրանք այնչափ մեկինք են և լուսաւորագոյնք , զի և խիղճ մնասցն՝ եթէ որ միանգամ զանց զնոքիսինքք արասցէ , ցանգ բոզոք բառնայ և անդուլ խայթիւն տանջէ զմարդ ։

digitised by A.R.A.R.@

Իսկ ասա՝ ի սոպհոսպես յայսմիկ զմի հնարս ելիցն պատմիցեն ամենարիշտ զմի այլ, բայց թէ միանգամայն զամենայն լուծ զկրօնիցն նոքա՝ ի բաց սատանեցուցանեն յանձանց և զամենայն կապ խզեն. և իբրև ընդ խաղոյ իրս ծաղր ածեն ընդ ահագին Աշնարտութիւնն. կեան այնուհետև և գործեն զամենայն առանց Աստուծոյ։ Իսկ որ առաւել նրբամիտքն են յանկրօնադ յայդոսիկ և արտաքնայարդարք ամենք, նաղաբանեն եթէ միայն ուսումն փիլիսոփայութեան իբրեանց պտուղ է անհաւատութեան իբրեանց։ Ա՛մ, նա պարտէին մանաւանդ Աշղբիտ խնամանաբանել՝ յուզելով անսաստ զիսորս արտիցն, եթէ վասն այնորիկ անկրօնք ոմանք և անհաւատք եղեն նոքա, քանզի յառաջն խառնակեցիկք էին և արձակերատանք։

Ա՛նուտ է արդարև Աշնարտութիւնս այս և ընդ ամն զանկրօնից հոյլն խոցէ, և յառակ նշաւակի զնոսա կացուցանէ։ Ա՛նզի, ասէ, ասասցեն մեզ, զի է զի և ոչ որ՝ ի բարեաց քրիստոնէից երբէք լինի անկրօն՝ մինչև իցէ նոքա առ ոսն հարեալ զանուտ խնամատս բարոյականին։ Ա՛նհաւատութիւնն՝ հառարակ կարգաւ նախ սկիզբն առնու՝ ի արտի. և եթէ սիրան ոչ ուղղի և մաքրի, անպարտելի է այնուհետև անհաւատութիւն։ Ա՛ծ բեր դա նոցա՝ ի ներքս ցոյցս անսխանելիս՝ ի յայտ յանդիմանութիւն կրօնիցս արքութեան որչափ և մարթիս, խօսեաց և դարձեալ խօսեաց, բայց յանհնարիցն է՝ չիք հնար ամենեւ զնոսա, եթէ ոչ նախ ուղի հեշտին հոգեւոցս առաջի նոցա ակն ածել առաքինութեան և հրահանգաց միտ դնել բարոյականին։

Ա՛յլ ես արդ զամենարիշտ զանհաւատիցդ ջոկ՝ ի բաց տարեալ՝ յորոց և ոչ զմի որ յունկնդրաց ասասի խոց դիտեմ՝ երբէք, առ ձեզ, սիրելիք, որ քրիստոնէի կենսաւէտ անուամբն պարծիք, և պարծանաք ամենայաղթ նշանաւն աւետարանին զՀակատ կնքեալ հաւատով, կամիմ բարբառել զայս ինչ, եթէ մեք ցայն վայր եմք քրիստոնեայք, ցորչափ կեսամք իբրև քրիստոնեայս։ Հանապա վայր մի անաչառ՝ ի քնին առցուք զՀաւատս մեր և զգործս միանգամայն. քանզի՝ ի քրիստոնէութիւն և՝ ի փրկութիւն չեն բաւական հաւատք միայն՝ ի Ա՛ստուծոյ, պէտք են և պահպանութեան պատուիրանացն Ա՛ստուծ-

digitised by A.R.A.R.@

տոսի։ Այս յայս առաջարկութիւն ապա վախճան կըրկին հանդերձիմ առաջի առնել ձեզ։ Բաջինն՝ զի զիրքս կաւէան ամենի զարթուսցուք 'ի մեզ ինքեանս, եթէ երբէք գոցուք զմեր վարս կշռակի հակառակս հաստատոյն մերոյ։ Երկրորդ անգամ՝ զի զառաջինն զայն արմատ զանհաւատութեանն, զապերասանութիւն ասեմ կրկից, խլեսցուք 'ի սրտից մերոց։

ՄԱՄՆ Ա.

Մարդ ահաւասիկ խաչն Քրիստոսի, ահաւասիկ աւետարանն նորա։ Հաւատամք մեք 'ի խաչն, հաւատամք յաւետարանն. քանզի։ Այլ սակայն բառնամք զխաչն. հնազանդիմք աւետարանին . . . . Հապա առցուք զայն 'ի քնին։

Իցէ՞ ոք արդեօք որ համարեսցի 'ի միտս, եթէ զկրօնն պարզևեաց մեզ Աստուած միայն 'ի հրահանգել զմեր միտս 'ի հաւատս անձառելեացն խորհրդոց, առանց մշակելոյ և զմեր սիրտս 'ի կրթութեան առաքինութեանց։ Այլ եթէ իցէ ոք այնպիսի, մեծապէս է մոլորութիւնն, այլ և մահաբեր յոյժ։ Կրօնք պարզևեցան մեզ վասն բարոյականի. և առանց բարոյականին խարխուլ և անկայուն են կրօնքն։

Այլ սակայն բազմագոյնք 'ի քրիստոնէից ստերիւրեալք են յուղղութենէ 'ի մասինս յայսմիկ. քանզի զհետ են ամենայն փութոյ սնդութեամբ հաւատալ սերտիւ և անեղկմիտ խորհրդով, որչափ ինչ 'ի բարձրագունիցն առաջի արկանէ նոցա աւետարանն. իսկ ապա փոյթ և ոչ մի ինչ տանին նոքա՝ բան 'ի գործ առնել, որչափ ինչ հրամայէ աւետարանն։

Այս քանզի ճշմարտութիւնս կրկնակի գտանեմք մեք յաստուածային մատեանս յայսմիկ, կէսք 'ի նոցանէ առաջի ընծային մտաց, և կէսք դարձեալ ընծային սրտի։ Որչափ նախանձաւորք են նոքա յառաջինն, այնչափ և դիւրապատրաստք են ակն չածել յերկրորդն։ Պատրաստք են ամենայն կամակարութեամբ մինչև 'ի մահ մատնել զանձինս մանաւանդ՝ քան թէ յերկմիտս լի-

digitised by A.R.A.R.@

նել ընդ մի ինչ 'ի խորհրդոյն հաւատոյ. սակայն և պատրաստք են 'ի պատճառս դուշնաքեայ ինչ հաճոյից կամաց զանց զտամանաբանելիսն առնել։

Հարց դու ցնոսա, եթէ հաւատոն յԱրարդութիւնն սուրբ, 'ի հաղորդութիւն սեղանոյն, 'ի մարդեղութիւն բանին. նոքա անդեղեալք ամենեքին՝ անդէն և անդ դաւանութի տայեն քեզ զկատարեալ հաւատոյն իւրեանց։ Հարց միւսանգամ. իսկ նոյնպէս հաւատոյն դուք եթէ առ փրկութեն հասանել պարտ է ապաշխարել, պարտ է սիրել զԹշնամիս, մեռուցանել զկիրս, պարտ է բառնալ զխաչն, հեզ ըստ օրինակին Քրիստոսի լինել և խոնարհ սրտիւ, պարտ է ողորմել աղքատաց, բարեգործել առ կարօտեալս։ Նաբէ, դեղեալն յայնժամ, և կան անմոռունչք իբրու յերկուացեալք. ա՜հ, մի դուցէ զի և ապականեալք ոմանք իցեն 'ի սպառ։ Օ՜ի եղև քեզ այր դու. ո՞չ դու անսասանելի մնացեր 'ի հաւատս աւետարանին, և պատուիրանաց խրատուցն նորա դեղեալցես. բայց դու յետ այնորիկ դէտ կաց և զնեսա՛ զիմաստուն զայնոսիկ, զորս 'ի կանոնս առեալ են նոքա վարուց իւրեանց, և հակառակամարտս դոցեա սկզբանց աւետարանին հրահանգաց։ Այլ ո՞ր այն իցեն սկզբունքն դոցա. այն եթէ քաղցր են օրէնքն Աստուծոյ, սակայն ոչ 'ի պատճառս շնորհացն՝ որ առընթեր ընկերեն նոցա, այլ 'ի պատճառս հաճոյից կրիցն՝ եթէ երբէք թոյլ լիցի 'ի գլուխ հանել զկամն իւրեանց։ Այլ թէ մարթ է լինել բարի քրիստոնեայ, և միանգամայն սպասս երբեմն հարկանել զգայութեանն, որ թախանձէ և խրդրէ միշտ բերկրութիւնս նորանորս։ Ա՜ման որոյ և ան շքութիւն անձին և նկուն մնայ գործ հանարին դոքա զնեերեն և զբարեգործելն առ Թշնամիս. և իբրև բանդագուշեալս ոմանս և մնախաբս հանարին զայնոսիկ՝ որք ձշմարիտ նախանձախնդիրքն իցեն փառացն Աստուծոյ։ Օ՜ առաքինութիւն խոնարհութեան սրտի զաւետարանականն՝ առանց որոյ չիք փրկութիւն, նոքա անաւագութիւն սրտի և գձձութիւն կոչեն և խօթամտութիւն։ Օ՜ պահս և զծոմանջանութիւն յուսկեստս դասեն՝ իբրև աւելապաշտութիւնս։ Այսպէս և ես ինքն քաջ 'ի վերայ հասեալ գիտեմ՝ զի 'ի մեռելութիւնս յայսոսիկ պահոց, և որ ինչ այնպիսի, չէ հաս-

digitised by A.R.A.R.@

տատեալ ուղեղն և բունն կրծնից մերոց. սակայն և որ պատապարտ զՏրահանգող զայդոսիկ սանխյեն զկաթուղիկէ եկեղեցւոյն, ոչ զուղեղն ունի այնպիսին զկրծնից և ոչ զկեղեն։ Դարձեալ յաւելուն 'ի բանս իւրեանց և ասեն, եթէ քանզի մարդիկ եմք մեք, եթէ առաւել սուրբս զմեզ կամէր Աստուած, պարտէր ինչ ինչ իմաստս աղատութեան խղճի շնորհել մեզ, և նուազ առնել զդժուարին պատուիրանն. քանզի աստուածային պատուիրանքն 'ի վեր են քան զակար և զդիւրագայթ բնութիւնս մեր, և լուծք են այնոքիկ ծանրացուցիչք։

Արդ այս ամենայն իմաստք զինչ իցեն, աղէ ասա. ոչ ապաքէն ցուցակութիւնք քաջայայտք, եթէ մարտ եղեալ կռուին նոքա ընդ սկզբունս վարուց՝ զոր ուսուցանէ աւետարանն։ Այլ ես հարցանեմ. ասացէք ինձ վայր մի, եթէ նոքն Աստուած իցէ՝ որ զխորհուրդսն հաւատոյ յայտնեաց մեզ, և նոքն որ զսկզբունս վարուց։ Նոքն Աստուած իցէ, որ ուսոյց հաւատալ յԱրարողութիւնն, և նոքն դարձեալ որ ուսոյց հաւատալ եթէ առ փրկութիւն պէտք են ապաշխարութեան։ Նոքն Աստուած որ յայտնեաց զանձառելի խորհուրդ սեղանոյն, և նոքն դարձեալ որ յայտնեաց եթէ պարտ է սիրել զթշնամին։ Իսկ արդ եթէ զխորհուրդսն և եթէ զՏրահանգս վարուց՝ նոքն Ճշմարտութիւնն քարոզէ, նոքն յայտնութիւնն ուսուցանէ, նոքն պատգամախօսքն հաստատեն, և ընդէր ապա այնչափ նախանձու և այնչափ ջերմեռանդն հաւատալ 'ի խորհուրդսն, և ապա այնչափ ջանիւ պայքարել ընդ իմաստից աւետարանին։ Պիտիցէ՞ք, ընդէր. քանզի հաւատալն 'ի խորհուրդս չառնէ ինչ անհանգիստ զմեր կիրսն և աշխատութիւն մեզ չհասուցանէ. իսկ հաւատալ սկզբանցն վարուց՝ Ճգնէ զմեր կողմն, Ճնշէ զկիրսն, մարտ դնէ և սանձ արկանէ նոցա։ Հաւասիկ արմատ ապստամբութեանն մարդոյ. սիրտ աւերեալ և ապականեալ՝ որ սիրէ կեալ յանկարգութեան իւրում։ Համառօտ ասել. կամին դոքա հաւատալ աւետարանին, և ոչ կամին հնազանդել աւետարանին։

Այլ սակայն առանց հնազանդութեանս այսոքիկ զինչ օգտեսցեն հաւատք միայն 'ի յաւիտենականն փրկու-

digitised by A.R.A.R.@

թիւն . “ Օ՜ինչ օգուտ իցէ , եղբարք իմ , հարցաքանէ առաքեալն սուրբ Յակոբոս , եթէ ասիցէք հաւատս ունել զաւետարանին , և գործս ոչ ունել ըստ աւետարանին . միթէ հաւատք միայն կարիցեն փրկել . զի հաւատք առանց գործոց մեռեալ են . քանզի և դիք հաւատան և սարսին ,, . այլ զինչ շահ յայնպիսի հաւատոյն , զի զգործս բարիս ոչ ունին , քանզի 'ի գործոց բարեաց՝ միացեալ ընդ հաւատոյն՝ արդարանայ ամբարիշտն ։ Դարձեալ և առաքելական Պաւղոս անդադար էր 'ի գրել առ քրիստոնեայս , “ Մի՛ մոռանալ զգործս հաւատոյն իւրեանց , զի մի թերևս 'ի զուր լինչ հաւատաջիք ,, ասէ ։ Այսպէս ուրեմն մասն է հաւատոյ , եթէ և հնազանդել պարտ է աւետարանին , և թէ առանց հնազանդութեանս ոչ լինչ օգտեսցէն լոկ հաւատք ։

Ընծայիցեմք մեք հաւատս այսոցիկ ։ Այո՛ և կարի իսկ քաջ ։ Իսկ հնազանդիցիմք ևս աւետարանին ։ Հապա ածցուք և զայն 'ի քնին ։

Հրամայէ մեզ աւետարանն զհոգին ունել զՔրիստոսի . և թէ՝ որ զայն չունի , Քրիստոսի նա ոչ է , չէ քրիստոնեայ , չունի հաւատս որով փրկութեան ժամանն լինել կայր նմա առաջի ։

“ Որ զհոգին Քրիստոսի ոչ ունի , ասէ , սա չէ նորա ,, ։ Այս արդ ունիցիմք մեք զհոգին Քրիստոսի . ան առեալ և զայն արկանիցեմք 'ի հարց և 'ի փորձ ։ Հոգի Քրիստոսի է հոգի խոնարհութեան , հոգի հեզութեան , հոգի սիրոյ , հոգի անոխակալութեան ։ Այս հոգի վարժէ և ուսուցանէ զմեզ ներել թշնամւոյն , բառնալ զխաչն , ընդդէմ մարտ դնել կրից ։ Իսկ հոգին՝ որ թագաւորէ 'ի սրտի մերում՝ ունիցի արդեօք զկերպարանս նմանութեան հոգւոյն Քրիստոսի ։ Օ՜ինչ հոգին այն իցէ հպարտութեան , որով արհամարհեմք զփոքրունսն . որով զփառաց և զգովութեանց թեկն ածեմք ։ Օ՜ինչ հոգին այն վրէժխնդրութեան , որ թոյլ չտայ մեզ ներել անիրաւութեանց 'ի սէրն Աստուծոյ՝ որ այնչափ մարդասիրէն առ մեզ ։ Օ՜ինչ հոգին այն ոխակալութեան և ատելութեան առ եղբարս , որով եթէ չար չհասուցանեմք մարմնոյ նորա , մեծ ևս չար հասուցանեմք սրտին նորա՝ բամբասելով և անուանարկ առնելով զնա ։ Օ՜ինչ հոգին այն փափկութեան , ո-

digitised by A.R.A.R.@

բով ցանգ 'ի ինդիր եմք սփոփութեանց՝ որ առաւել բերկրարարքն իցեն, թէպէտ և արգելեալք։ Օ այս ուսուցանիցէ հոգին Քրիստոսի. այս իցէ քրիստոնէութիւն։ Իսկ ատելութիւն աշխարհի, սէր խաչի, բռնութիւն ընդդէմ կրից, զինչ իցեն առ մեզ. անուանք ոմանք սինք և օտարախորթք, և բառք և ձայնք դժոխալուրք։ Ոչ ահա հոգի աշխարհի է որ տիրացեալ է սրտից մերոց. և ոչ հոգւոյն այսուիկ՝ որ ոսկերիմ թշնամի է Քրիստոսի, համարիմք մեք յանձինս՝ եթէ հնազանդք եմք աւետարանին, եթէ աշակերտք եմք Քրիստոսի, եթէ ունիմք մեք հաւատս ճշմարիտ 'ի փրկութիւն։ Իսկ, քանիցս իցեն խաբանքն, և քանի՞ հեռի կամք 'ի ճշմարտութենէ. "Որ զհոգին Քրիստոսի չունի, ասէ, սա չէ նորա"։

Ինաւ իսկ ամենևին խելամտել ոչ կարեմ, սիրելիք, և զանբաւականութիւն անձինս խոստովան լինիմ 'ի գիտել։ Օ խորդ որ մարթասցի ասել հաւատալ, և ապա չհնազանդել աւետարանին։ Ոչ նրբաբանեմ ինչ առ ձեզ, ոչ առեղծուածս ինչ առաջի արկանեմ ձեզ. պատասխանի մի լոկ պարզապէս խնդրեմ առ 'ի ձէնջ, յորում հռետորականն չունի արհեստ զտեղի. և է իսկ նոյն այն պատասխանի, զոր տէրն ինքնին Քրիստոս խընդրեաց 'ի Հրէից 'ի քարոզել իւրում։ Ասացէք ինձ աղաչեմ. կամ ճշմարիտ ասէ աւետարանն, կամ սուտ։ Եթէ սուտ. ընդէր է ձեզ ինքեալ զնակատ յանուն Քրիստոսի՝ որ զաւետարանն քարոզեաց. ընդէր է ձեզ գալ ժողովել յեկեղեցիս, և լսել զաւետարանն. ընդէր և յընթեռնուլ դորա՝ դուք պատկառ կացեալ յոտին կանգնիք, իբրու կազմք և պատրաստք ախոյեան կալ նմա. ընդէր է և երդնուն ձեր 'ի վերայ աւետարանին։ Եւ ապա ցուցէք դուք ինձ, եթէ սուտ ասէ. ցուցէք ինձ՝ եթէ պատուիրանք նորա չեն ճայնակիցք և զուգահեռք ընդ լուսոյ բանին. չեն պատճառք բարեաց ընկերութեան մարդկան. չեն և բնաւ իսկ շահաբերք և փրկաւէտք մարդոյ։ Ասա ուրեմն ճշմարիտ ասէ։ Արդ եթէ ճշմարիտ ասէ, ընդէր իցէ ապա ոչ հաւատալ ճշմարտին. "Եթէ զճշմարտութիւն ասեմ ձեզ, հարցանէր ինքնին տէրն ցհրեայս, եթէ զճշմարտութիւն ասեմ, ընդէր ոչ հաւատայք ինձ"։ Սակայն մեք,

digitised by A.R.A.R.@

ասէք դուք, խոստովանիմք և հաւատամք։ Այ՝ն, ընդ խաղոց են բանքդ։ Դուք գեղեցիկս ասէք, թէ հաւատայք. այլ ես ձերոց բանիցդ, ներեցէք ինձ զայս մի նուազ, չեմ պարտական ընծայել հաւատս. չտեսա՝ նեմ ես զսիրան ձեր։ Բայց գործք միայն բարիք և հնազանդութիւն աւետարանին՝ մարթին ինձ վկայութիւն տալ զհաւատոցն ձերոց։

Արդ ո՞ր իցեն գործքդ, ո՞ր իցէ հնազանդութիւնդ։ Այ՝ զիարդ ապա կամիցիս դու հաւատարմացուցանել ինձ եթէ հաւատաս աւետարանին. Ցոյց ինձ զհաւատս քո առանց գործոց. Ցնոյ ինձ զհաւատս քո առանց գործոց. Ցնոյ զքո կողմն, տարկնապէ զքեզ առաքեալն։ Բայ՝ւ, դու երբէք չկարասցես ցուցանել, յորժամ գործք մերձ ոչ իցեն։

Այլ մի մտատերութ, սիրելիք, 'ի խորութիւն սրտից ձերոց, և բարձր եղիցի Աստուած։ Զիարդ երբէք հնար իցէ հաւատալ Ճշմարտիւ, և ապա առնել և ոչ ինչ՝ յորոց հաւատայն, և կեանս վարել այնպէս պարապարդ և բնաւ իսկ ամուլ 'ի գործոց բարեաց։ Հաւատալ՝ եթէ անձուկ է դուռն և նեղ Ճանապարհն արքայութեան, և ընդարձակ է դուռն և լայն Ճանապարհ կորստեան. և ապա ընթանալ գնալ ընդ վերջինն, խոյս տուեալ և հեռացեալ յառաջնոյն։ Հաւատալ եթէ առ 'ի զբռամբ զերկինս ածել, գօտեպնդութեան հոգւոյն պէտք են, մարտ դնել կռուել և յաղթական ելանել, լուեալ եթէ "Արքայութիւն երկնից բռնաբարի, և բռունք յափշտակեն զնա..." և հաւատալ զայս ամենայն, և ապա կալ մնալ ձեռն զձեռամբ՝ իբրու սպասեալ, եթէ ինքնին Աստուած առեալ ամբարձցէ զքեզ 'ի վեր 'ի բարձունս, որպէս երբեմն հրեշտակն զմարգարէն։ Հաւատալ եթէ չէ բաւական կոչել զանուն տեառն և ասել տէր տէր և մնանել յարքայութիւն երկնից. Հաւատալ եթէ պարտ է և նմանող լինել նմա. և ապա կալ անջան և անգործ զամենայն աւուրս, և ոչ խորհել ինչ, ոչ գործել, ոչ զհոգւոյն, ոչ զԱստուծոյ, ոչ զանանց հանդերձելոցն, և ոչ քայլ մի շարժել զոտին առ 'ի կոխել զհետս խաչելոյն։ Զ՞ինչ իցէ անլուր պատահումն, որ միաբանութիւն կայցէ յայսոսիկ։

Ասէ՛ք, և ո՞ր իցեն երջանկաւէտ աւուրք ժամանա-

digitised by A.R.A.R.@

կայն և ամէն բարօրութեան եկեղեցւոյ, յորս կենդանի և գործն հաւատք՝ այնչափ նախանձաւորս և նմանողս Քրիստոսի՝ի վեր ընծայեցին, որչափ և լոգս աւետարանին. յամենայն խակ հասակի, յամենայն վիճակի, յամենայն սեռի, ՝ի քաղաքացոց, յազնուականաց, յարուեստագիտաց, յատենակալաց և ՝ի կանանց, ՝ի տիկնայց, և յաղքայից ՝ի կայսերաց և ՝ի դշխոյից։ Յուշ լինիմ զան եղբարք իմ, յուշ զան երջանիկ այն զաղքն, և աւանդս լինիմ ձայնից յորդէն անդադար։

Այս զիմաստ արդեօք. ոչ նոյն աւետարան ինչ և մերն, ոչ նոյն և հաւատ որ նոցայն, ոչ նոյն բարոյական, որով և վարժեցան նոքա։ Այս զի է, զի այն աւետարան որ հրաշս նեղգործեաց ՝ի նոսա զգերակատար հնազանդութեան, չնարթիցի այժմ գործել ՝ի մեզ ինչ մի ՝ի բարեաց մասին։ Քիտէք խակ զուք և լուեալ է ձեր, զի առ սէր աւետարանիս այսորիկ ոչ սոսկականք միայն, այլ և թագաւորք ինքնին զլխոփն ՝ի բաց առ ժամն զպատկան եղեալ և զծիրանին, խոնարհեալ առ աղքատս և առ հիւանդս՝ ապաս հարկանէին. պահս կամաւորս ստէպ յանձն առնուին, և գեռնախշտիք զցայգն ենջէին. նաև ընդ արքունի պատմուճանաւ քուրձ և խարազն զգենուին։ Այս նոյն այս աւետարան՝ զիմաստ ոչ զօրանայ ՝ի մեզ այս օր, ոչ հրահանգ, ոչ հաւանեցուցանէ պարէն մի դուինաբեայ ջամբեալ աղքատին, հրաման մի յանձն առնուլ զպահոց, վայրիկ մի կարձել զլեզու ՝ի բամբասանաց, ՝ի թշնամանաց, ՝ի զրպարտութեանց, ՝ի ստութեանց, սանձ մի արկանել անժուժկալ կրկին, վայր մի խոյս տալ ՝ի մեղանչական հրապուրանացն։ Կորոյս լինչ արդեօք աւետարանն ՝ի շնորհացն, վատեցաւ այժմ ՝ի վաղեմի ուժոյն. կամ թէ այնչափ հինաւրեայ վաղնջուց գոլով լինքն, զարդիս ոչ յօժարեսցին ընդ նա աւուրքս մեր վերջնոցս և յետնելոցս։ Զ ինչ ասէք, զիմաստ թուեսցին ձեզ իբրդ...։

Դաւ, ոչ ինչ զրդուեցան հրահանգք աւետարանին։ Այլ քանզի յառաջինն յայնոսիկ և ՝ի սուրբն կենդանի էին հաւատք, և ըստ նմանէն կենդանի և Հրշդրիտ էր հնազանդութիւն աւետարանին, իսկ այսօր ՝ի մեզ իբրև զի անկենդան մեռեալ են հաւատք։ Զ ինչ

digitised by A.R.A.R.@

առ այս ունիցիք պատասխանի առնել։ Ո՛հ, սուրբ է, սակայն, աւետարանն և խրատք նորա և վարդապետութիւնք ամենասուրբ. այլ կենդանի են կիրք. տկար է բնութիւնն, դժուարին են պատուիրանքն. վասն այնորիկ և դժուարին իմն թուի մեզ հնազանդել աւետարանին։ Այլ ուրեմն հնազանդութիւնն զոր հրամայէ աւետարանն, և կարդեալ պատուիրանք նորա իցէ՞ն դժուարին. ոչ զայդ ասիցէք։ Այլ զի է, զի ոչ և զհնորհացն ինչ երբեք առնէք յիշատակ. ոչ լուայք զմեծ ձայնն. "Զատ են քեզ հնորհք իմ, զի զօրութիւն իմ 'ի տկարութեան կատարի"։ Այս հնորհ է հաւատոցն. այս հնորհ ամենայն ուրեք յաղթանակ կանգնեաց, այս հնորհ և մեզ ինքնին առընթեր կայ եղբարք, այս հնորհք զիշխան աշխարհիս ընդոստնեաց, այս հնորհք զմնարմինն՝ անմարմին գործեաց։

Չէ՞ երբեմն, զի այս աւետարան դժուարինս յոյժ առաւել հրամայեր. ոյց արդեօք. փափկասուն օրիորդաց, նորածագիկ պատանեաց, զիրդ տիկնայց։ Իսկ զինչ արդեօք հրամայեր. կամ դաւանել զաւետարանն 'ի մէջ դառն տանջանաց, կամ դատապարտ լինել։ Այլ սակայն նորա աւետարան 'ի ձեռս և հնորհք 'ի սրբոյն, քաջութեամբ և խնդութեամբ տարան ամենայն դժնդակաց, նաև փափուկքն յօրիորդաց, նաև զրդասունքն յերիտասարդաց։ Կէսք ծաղու և նախատանաց, կէսք զտանջանաց զիսրձ առին, զկապանաց և զբանտից, քարկոծեցան, փորձեցան, անդամ անդամ յօշեցան, սպանմամբ սրոյ մեռան, արտասահմանք և թափառականք, յամայութեան շրջեցան, 'ի ծերպս ծածկեցան և յայրս և 'ի փապարս. և առ հասարակ վկայեցան 'ի հաւատոցն։

Իսկ այսօր ինչ մի յայնպիսեաց անտի ոչ հրամայէ մեզ աւետարանն. հանայն և այնպէս դժուարին թուեսցի մեզ հնազանդել աւետարանին։ Այլ աղէ եղբարք, անաչառ քննեցէք. թուեսցի՞ ձեզ դժուարին՝ յոյժամ վասն այլոց իցէն բանքն։ Ո՞վ որ 'ի մէնջ պատրաստագոյն ոչ իցէ 'ի դատել և 'ի յանդիմանել զայլոց զյանցանս. ո՞ որ 'ի մէնջ 'ի հարց և 'ի մարց երբեք դժուարին ասասցէ զհնազանդութիւն որդւոց իւրոց. և ո՞ որ արդեօք 'ի մէնջ 'ի տանուտերաց և 'ի տանտի-

digitised by A.R.A.R.@

կնայց դժուարին երբէք հանարեսցի զպարտս հաւատարմութեան և զժիր սպասարկութեան զծառայից իւրոց և զնաժշտաց։ Ոչ մեք ինքնին զօր ամենայն յեղյեղեմք 'ի բերանի զոսկեղէնն զայն առած, եթէ "Ուր բանքն են զպարտուց, ոչ ինչ անդանօր պարտի մեզ երևել դժուարին.,։ Այլ՝ իայն յորժամ վասն մեր են բանքն, միայն յորժամ վասն հնազանդութեան աւետարանին են ձառքն, դժուարին են յայնժամ պատուիրանքն, անհնարին և հնազանդութիւնն։

Այնչափ ցերը կայցեն խաբանքն, մինչև ցերը սրտակտուր միջաբեկք իցեմք։ Ոչ ապաքէն, եթէ 'ի վեր քան զբնութիւնս դժուարին իցէ հնազանդութիւն աւետարանին՝ որպէս ասէք, 'ի վեր քան զբնութիւնս իցեն արդեաւրքք և անտես ակամ և անլուր ունկամ և անքնին սրտի՝ նաև խոստմունք աւետեացն, զոր պատրաստեաց Աստուած հնազանդելոցն աւետարանին։ Այնպէս և ահագին և սարսափելի 'ի վեր քան զօրինակ՝ իցեն նաև սպառնալիք տանջանաց՝ անսատեալոցն աւետարանին։

Ամենի ամենայնն գեղապատշաճ համեմատեալ է եղբարք 'ի մատենին յայնմիկ. պատուիրանք դժուարինք, ճանապարհ նեղ և անձուկ. սակայն և շնորհք առընթեր միշտ զօրավիգն, և աւետիք բարեաց անձառելիք և յաւերժականք, և չարիքն անվախճան։ Այս սակայն 'ի լուր անձառ խոստմանց որոց յուսով ակն ունիմք, և 'ի ձառ ահագին սպառնալեացն՝ յորոց զարհուրիմք, զոր հնազանդութիւն երբէք երևեցուցանեմք մեք աւետարանին....։ Հապա և զայն մնատուցուք 'ի քնին։

ՄԱՍՆ Բ.

Այս զինչ ասեմ, հնազանդութիւն։ Օ որ անհնազանդութիւն ոչ երևեցուցանեմք մեք. յորժամ և հրապարակաւոյժ և սանձակոտոր անհնազանդութիւն՝ թուի թէ այսօր կնիք դրոշմեալ իցէ բազմաց 'ի քրիստոնէից... Ոչ՝ վասն, քանի զարհուրանք իցեն ընդդիմա-

digitised by A.R.A.R.@

մարտութեանս. զինչ հրեշք իցեն. զինչ այս ահագին խառնումն մեղայ և կրօնից, ամբարշտութեան և օրինապահութեան, ընչաւոր խնամատութեանն և ոգւոյ աւետարանին։

Պատուեա և սիրեա զԱստուած քո, այս է աւետարանն։ Ինդ վայր առնուլ զամենատուրբ անունն, ունչս առնել խորհրդոցն սրբութեան, ձաղածանակ զպաշտօնեայն առնել սրբութեան, այս է սովորութիւնն։ Սիրեա զեղբայր քո, այս է յայտնապէս աւետարանն. այս է կնիք քրիստոնէի, "Այս է պատուէր իմ զի սիրեսջիք զմիմեանս"։ Իսկ դատել և բամբասել զեղբայրն և ոխակալել, այս է սովորութիւնն։ Մի կալցիս առ քեզ զգոյս օտարին, այս է աւետարան։ Պարտս 'ի վերայ բարդել պարտուց, և ապա զլանալ զպարտսն, նա և հնարս նիւթել 'ի պատրել զանգէտս. այս հնարիմացութիւնք են և պարծանք մերոցս։ Զգոյշ կալ և յաբատ հայեցուածոյ. այս է յայտնապէս աւետարանն։ Տեղի տալ հրապուրիչն, թուլացուցանել զսանձ անժուժկալ կրիչն, անհոգանալ յառիթսն. այս է արդեան սովորոյթ։ Լաւ ապա զայս օրինակ վարելով քո կեանս, զիարդ մարթիցիս ասել եթէ հաւատացեալ եմ, և պատրել զանձն քո՝ եթէ քրիստոնեայ եմ։ "Մի լիցի. չես քրիստոնեայ, բաղաք հարկանէր երանելին Յուստինոս, չես քրիստոնեայ, որ այդպէս անկարգ քաղաքավարիս"։

Ո՞ր մեր օրէնք հաւատոցն, սիրելիք, զոր ասեմք դաւանել. ո՞ւր պատուիրանք և հրահանգք աստուածպաշտութեան յոր վարժեցաք 'ի մանկութենէ։ Ինթեռնուլ զաւետարանն, և կեանս վարել զսանձարձակ հեթանոսի. լսել զառաքեալն զօրհնասպաղ, և առաքինութեանց ինչ երբեք հոգ չածել. ասել հետևիլ Քրիստոսի, և զՀանապարհ նորա անպոռնել. օրինօք սրբոցն՝ կեանս վարել զամբարշտի. և ապա պարծել եւ 'ի կրօնս սրբութեան, և ասել չեմ ես յանկրօնիցն, այլ զսրբազանն դաւանիմ զկրօնս քրիստոնէից։ Ո՞ր այն կրօնք իցեն քո, աղէ ասա։ Կրօնք անմանն 'ի բարոյականէն. և զինչ այն իցէ, բայց կրօնք բնաւ իսկ ամենևին ընդունայն, և առ յաւիտենականն փրկութիւն անպիտան։

digitised by A.R.A.R.@

Եւ ապա յետ այսր ամենայնի ոչ երկնչել ինչ պարտ իցէ, սիրելիք, յարդարադատ կշռողէն։ Ոչ ահա անշուշտ իցեն սպառնալիքն. «Լուռեք բարձեալ 'ի յոյլ և յանհաւատ ծառայեդ զքանքարն». Եւ մեկնեցեք որոշեցեք զխաչնն զախտակրեալն, զմահահոտն 'ի սուրբ փարախէն. Եւ առեալ բարձեալ զաւետարանն 'ի մարդոյ, որ ոչն հնազանդեցաւ աւետարանին՝ որում աշակերտեցաւ։

Դիտեալք իսկ դուք, սիրելիք, զի աւետարանական կրօնիցն բարբառ ընդ ամենայն երկիր եղ, և մինչև 'ի ծագս աշխարհի սփռեցաւ։ Եւ ընդեր արդեօք։ Ի պատճառս անարատ մաքրութեան և անվկանդ զօրութեան բարոյականին նորա։ Իսկ սպասպանութիւն անվրէպ բարոյականիս այսորիկ՝ նշան յաղթութեան կանգնեաց աւետարանին, և ընդ իւրև առեալ գրաւեաց ողջոյն զիմաստունն զՅունադա, զմեծասանծ գահն Հռոմոց, զարքայից հզօրաց արևելեայց, նա և զտերութիւն զողջոյն իսկ տիեզերաց։

Այլ աղէ, հաւատացեալք ինձ եղբարք, զի ոչ ընդ ժամանակս յոլովս յերկարաձգեսցի միանգամայն և հաւատալն բարւոք և կեալն չարեօք։ Մանզի այր սանձարձակ 'ի վարս՝ կամ յանհաւատութի և յանկրօնութի գահավիժէ, կամ 'ի նորակրօնութի խարդաւանի։ Մանզի միանգամ թողացուցեալ զերասանակն կրից, դիւրեաւ այնուհետև յանդգնի այնպիսին նաև զամենայն սամետս միանգամայն խզել զկրօնին, և յաւակնեալ ձանկատ և ամբառնալ ընդդէմ հաստչին, իբրև յանէութիւն կամելով արկանել զոր էնն. այդ է աւադիկ զոր անաստուածութիւն անուանեալ կոչեմք։ Իսկ եթէ ոչ յայդ լրբուի ժամանիցէ, գէթ ջանահնար լինի զուգել 'ի միասին զբարեպաշտութիւնն ընդ սանձարձակ կեանսն, զաւետարանն ընդ կրից, զՔրիստոս ընդ Բելիարայ. այն ինքն է՝ նորակրօնութիւն նորա. որոյ բազումք են պրտուղք դառնարմատք և առաւել վնասաբերք քաղաքաժողով ընկերութե մարդկան։ Եւ 'ի հաւատիս բանից իմոց քանիս ոմանս մարթ էր ինձ առակել ձեզ այսօր, որոց կամելով լինել սանձակոտորք և անառակք 'ի վարս, կամ կեցին անհաւատք, կամ մեռան մեսպաշտք։ Եւ զինչ այլ իցէ այս, սիրելիք, բայց ահագին իրաւունք

digitised by A.R.A.R.@

արդարադատն Աստուծոյ, որ առնու բառնայ՝ որպէս ասացի՝ զաւետարանն 'ի մարդոյ, որ ոչն հնազանդեցաւ աւետարանին, որում նուիրեցաւ անդատին յանտիսական հասակէն։

Այլ հնորհեսցուք ձեզ, եթէ որ առ այլս արդարադատն գտաւ Աստուած, 'ի մեզ ինայեսցէ մարդասիրութեամբն զաւուրս կենաց մերոց։ Իսկ զայն զի՞ ասասցուք, յորժամ այս աւետարան, եկեսցէ օր, յորում դարձցի եղիցի նա մատեան մեծ ամբաստանութեան մերոյ, և ինքնին դատախազ և դատակնքող յաւիտենական կորստեան մերոյ. "Ամէն զոր խօսեցայ, նա դատի զնա յաւուրն յետնում. և "Որ ոչն հաւատայ արդէն իսկ դատապարտեալ է..., իսկ որ հաւատայն և չգործէ ըստ հաւատոցն, յաստուածային մատենիս յայսմիկ գտցէ և նա զվճիռ դատաստանին իւրոյ։ Ահանգի մեծապէս է անբանութիւնն, հաւատալ եթէ սուրբ են կրօնք, սուրբ են օրէնքն, և աստուածատուր լուսոյ ևս բանին վայելուչք. և ապա ոչ ինչ հնազանդօրէն ընծայել զանձն առաքինի կարգացն՝ զոր ուսուցանէ։ Ուշնաքեայ է պատուհասն որ անգիտութեամբ ոչ պատրաստեսցի ըստ կամաց տեառն իւրոյ. "Իսկ որ գիտիցէ և ոչ արասցէ, արբցէ գան բազում..։ Այր է գիտութիւնն, եղբարք իմ, երկնչիմ եթէ մեր եղիցի և գանն բազում։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ Ժ.

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԻ

“Ամէն ասեմ ձեզ, զի և ոչ յԻսրայելի այսչափ հաւատս գտի,,։

Եւ ուստ ուստեք ապա այս անհաւատութիւն, զոր Իսրայելի յերեսս հարկանէ տէրն այսօր։ Եւ որ պատճառք էին նոցա յերկեայս տակաւին լինելոյ վասն սրբութեան վարդապետութեան նորա և վասն աստուածային առաքելութեան նորա։ Նշանս խնդրէին, և հրաշագործեաց ակնարկս նոցա, այնչափ ճշգրիտ, որ չափ ոչ ոք նմանօրինակ յառաջ քան զնա։ Կամէին զի վկայութեամբ հաստատեսցի առաքելութիւն նորա. զնոյն վկայութիւն ընձեռեցին նմա Մովսէս և մարգարէքն։ Իսկ և կարապետն Յովհաննէս բարձրագոյնս քարոզեաց, “Հաւասիկ Քրիստոս գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի,,։ Հաւասիկ և 'ի հեթանոսաց այսօր ոմն փառս ընծայէ ամենակալ աջոյն նորա. “Այս բանիս, և բժշկեսցի մանուկն իմ,,։ Հաւասիկ և Հայր 'ի վերուստ սիրելի որդի իւր դաւանէ զնա։ Եւ 'ի վերջէ ուրեմն և դևք ինքնին զարհուրեալք 'ի սրբութենէն ելանէին 'ի մարմնոց, խոստովանելով զնա սուրբ և որդի Աստուծոյ կենդանւոյ։ Եւ զիաւրդ ապա անհաւատութիւնն Իսրայելի ուժէր այնուհետև ընդդէմ կքրել այնչափ հաւաստեաց և այնչափ հրաշիցն։

Հարցումն մի այսպիսի ահաւասիկ, եղբարք, առաւելագոյն ևս հիացմամբ մարթ էր հարցանել նաև յա-

digitised by A.R.A.R.@

ուր յայտիկ առ Թերահաւատ մարդիկն։ Որք յետ 'ի գլուխ ելանելոյ ամենայն նախադուշակութեանցն, յետ կատարելոյ խորհրդոցն Քրիստոսի Աստուծոյ, յետ յընդհանուրս հռչակելոյ անուան նորա, յետ յերևան գալոյ պարգևացն նորա, յետ կոչմանն հեթանոսաց և կռոցն կործանելոյ, յետ 'ի Քրիստոս դարձին կայսերաց և արքայից, տակաւին երկմտեալ Թերահաւատից, յաւակնեալք ձգնիլն տապալել՝ որչափ ինչ վաստակ և քիրտն առաքելաշնորհ մարդկանն, և արիւն բազմահոյլ մարտիրոսացն, որչափ ինչ հրաշից ներգործութիւնք ծառայիցն Քրիստոսի, և արձանագրութիւնք բանից հանձարեղ և համբաւատենչ վարդապետաց, և խստակերութիւնք այնչափ անապատաւորացն, և կրօն հաւատոյս դարուց ինուանց և տասանց, այնչափ յընդհանուրս և այնչափ աստուածայնագոյնս հաստատեցին սնդեցին 'ի միտս և 'ի սիրտս այնչափ ժողովրդոց։

Քանզի և անշուշտ սիրելիք, և այսօր 'ի մէջ մեծասանձ յաղթանակաց հաւատոյս տակաւին գլուխ ամբառնան 'ի մեզ գաղտաբար որդիք Թերահաւատք սրտիւ. լքեալք Աստուծոյ յունայնութեան մտաց իւրեանց, "Որք զոր ինչ ոչն իմանան, հայհոյեն. ամբարիշտք, որպէս ասաց առաքեալն, որք զԱստուծոյ մերոյ զշնորհսն դարձուցին յանկարգութիւնս, աներկիւղ զանձինս ձարակեն և բերանք նոցա զամբարտաւանս բարբառին"։

Այս արդ եթէ 'ի մէջ բազմահոյլ հաւատացելոցդ, զորս յայս վայր ժողովեաց կրօնս ճշմարտութեան, եթէ ոք անձն այնպիսի Թերահաւատ գտանիցի, թոյլ տուք ինձ դուք հաւատացեալ եղբարք իմ, որք զանդ վարդապետութեան զնախնեացն ձերոց և զհարց պահէք անսասանելի հաւատով, թոյլ տուք ինձ՝ ես այսօր ձեռն 'ի գործ կամ 'ի խաբանացն զերծուցից զնոսա, կամ թէ նշաւակեալ պարտեցից, ջատագով մնեալ քրիստոսական կրօնին ընդդէմ Թերահաւատութեանն։ Այս իցէ այս մեծապէս մխիթարութիւն ճշմարիտ հաւատացելոցդ գիտել քաջիկ, քանզի բանաւոր և արդար իցէ ձերդ հնազանդութիւն առ հաւատս. գիտել քաջիկ՝ զիարդ նոյն ինքն հաւատք՝ որ ժայռ իմն թուի խոչընդոտն լուսոյ բանին՝ նոյն ինքն մանաւանդ

digitised by A.R.A.R.@

միակ քաջալերութիւն է նորա, միակ առաջնորդ, միակ աղբիւր և ծագումն։

Լաւիկ ձեզ ողջոյն առաջարկութիւն քարոզիս։ Հրաժարէ Թերահաւատն հնազանդել որպէս արժանն է՝ ճշմարտութեանցն յայտնելոց, կամ վայրապար ինն փաստաբանութեամբ, կամ պատիր խորհրդով ամբարտաւանութեան, կամ դժպատեհ ինն սիրով անկախութեան։ Արդ կամիմ ցուցանել այսօր, Առաջին՝ եթէ անհնազանդութիւնն այն՝ վայրապար փաստաբանութեամբն, է նոյն ինքն անհանձար կիրառութիւն լուսոյ բանին։ Երկրորդ անգամ՝ եթէ հնազանդութիւնն՝ յորմէ Թերահաւատն հրաժարէ ամբարտաւանութիւնն, է նոյն ինքն հանդէս մարդոյ յոյժ փառաւոր։ Երրորդ անգամ՝ եթէ հնազանդութիւնն զոր ժխտէ նա դրժպատեհ սիրոյն անկախութեան, է նոյն ինքն նուէրն անհրաժեշտ հարկի։ Եւ ահաւասիկ ձեզ երրակի կընիք դրոշմաւորք կրօնին. Անանաւոր է կրօնն, Փառաւոր է կրօնն, Հարկաւոր է կրօնն։

Այլ դու Աստուած իմ և փրկիչ իմ, զօրագլուխդ և կատարիչ հաւատոյս մերոյ. դու ինքնին հովանի կացցես քոյին վարդապետութեանդ։ Մի թոյլ տացես, եթէ խաչ քո որ զտիեզերս ենթադրեաց, յիմարութիւն լիցի և գայթակղութիւն ոգւոց ամբարտաւանից։ Զշան յաղթութեան կանգնեա և այսօր ծածուկ սքանչելեօք քոց ընդհաց 'ի վերայ ոգւոցն Թերահաւատութեան. հար ցրուեա՝ ազգողագոյն ևս քան զամենայն փաստաբանութիւն մարդկային՝ միանգամայն զամենայն բարձրութիւն հպարտացեալ և այսօր 'ի վերայ գիտութեան խորհրդոց քոց։

ՄԱՍՆ Ա.

Եւ արդ յառաջ քան զամենայն, խոստովանիմ և ես եղբարք իմ, եթէ մեք ոչ բանիւ, այլ հաւատովք եմք քրիստոնեայք։ Եւ առաջին հանդէս՝ զոր խնդրեն հաւատք յաշակերտէն Քրիստոսի, է գերել զմիտս իւր, և հաւատալ յայն ինչ՝ զոր չմարթի ըմբռնել։

digitised by A.R.A.R.@

Համայն և այնպէս ասեմ, եթէ և ինքնին բանն ա-
ծէ առաջնորդէ մեզ յայս գերութիւն հնազանդու-
թեան. թէ, որչափ առաւել թափանցիկ իցեն մեր
միտք, այնչափ առաւել ցուցանեն մեզ զանհրաժեշտ
զայս հարկ հնազանդութեան հաւատոյ. ուստի և
հանդէս թերահաւատութեան՝ ոչ միայն խորհմաց մը-
տաց և նրբութեան հանճարոյ հանդէս չէ, այլ և ցոյց
է մաքրութեան, միանգամայն և խոնարհութեան հա-
ւատքիս։

Արդ մարդկային բանն՝ թէպէտ և կրթի հրահան-
գի 'ի հաւատս, սակայն և միանգամայն կայ 'ի սահմա-
նին իւրում. և զոր օրինակ օրէնքն բարի և սուրբ և ար-
դար ըստ ինքեան՝ նպաստամատոյցք եղեն առաջնորդել
մարդկան առ Քրիստոս և 'ի նմա դադարեցան իբրև
յիւրեանց վախճանի, սապէս և մարդկային բանն ար-
դար և սուրբ ըստ ինքեան՝ որոմհետև պարգև է Աս-
տուծոյ և հաղորդութիւն աստուածեղէն բանին,
չպարտի յայլ ինչ նպաստել. և յայս պէտս միայն պար-
գևեցաւ մեզ առ 'ի հորդել մեզ ճանապարհ 'ի հաւատս
առ Քրիստոս։ Այլ թէ երբէք անցցէ նա ըստ նուի-
րական սահմանին, վաղվաղակի 'ի ժպրհութիւն հա-
տանի և խոտորի 'ի շաւղաց բուն և տիրական սահմա-
նադրութեան իւրոյ։

Արդ եղեալ զայսոսիկ, տեսցուք այժմ թէ ո՞ յերկո-
ցունց՝ առաւել մնայի իցէ 'ի կիրառութեան լուսոյ բա-
նին. արդեօք մարդ որ հաւատայ, եթէ որ թերա-
հաւատէ։

Հնազանդութիւն յինչ ինչ իրս հաւատալեաց,
մարթի լինել խիթալի իբրու դիւրահաւատութիւն.
կամ 'ի կողմանէ այնր որ զայն հրամայէ, եթէ թեթև
է հրամանատուութիւնն, հաւատալ նմա՝ տկարութիւն
է. կամ 'ի կողմանէ իրացն՝ զոր հրամայէ, եթէ իրքդ
այդ դիմամարտք են սկզբանց արդարութեան, համեստ-
ութեան, ընկերութեան, խղճի մտացն, ընդունել
զայնոսիկ իբրև ճշմարիտս, տգիտութիւն է։ Այլ կամ
'ի կողմանէ շարժիչ առթիցն՝ յոյց պատճառս հրա-
մային. եթէ մտոտիք են առիթքն և անբաւականք 'ի
համոզել զիմաստուն միտս, հաւանել այնոցիկ՝ անխո-
հեմութիւն է։

digitised by A.R.A.R.@

Եւ արդ զորձ մի հեշտին է ապացուցանել, եթէ հրամանատուն որ պահանջէ զՀնազանդութիւն հաւատացելոյն, է բնաւից գերապոյին, արդոյն առաւել, հաստատիմն առաւել, որչափ ինչ գոյն յաշխարհի։ Եւ թէ Ճշմարտութիւնքն զոր 'ի ներքս մատուցանէ մեզ, են բնաւ իսկ համաբուռնք ընդ սկզբանց արդարութեան, համեստութեան, ընկերութեան, խղճի մտաց։ Եւ թէ շարժիչ սոիթքն՝ ոյց աղագաւ հրամային, են առաւել սիրականք, առաւել յաղթականք, առնել ազդոյք, 'ի հպատակել զանհաւան զմիտս։

Զ.ԱՐ ես ասասանօր յորժամ հրամանատուութիւն ասեմ՝ քրիստոսական կրօնիս, չիմանամ միայն զսրբոց սիւնհոդոսացն, յորս եկեղեցի կաթողիկէ 'ի ձեռն հովուաց սահմանէ հաւատացելոց զանխոսք կանոնսն զաստուածային պաշտամանն և զվարդապետութեան։

Զանզի որովհետև 'ի քարոզիս չէ մեզ նպատակ հերետիկոսութիւնն, այլ թերահաւատութիւնն. ուստի և կրօն ասելով չիմանամ միայն զՃշմարիտն զայն՝ զդիմամարտեալն կրօնից հերետիկոսաց, որ մոլորութեամբք իւրեանց հերձեալ են 'ի միութենէ կաթուղիկէ եկեղեցւոյ, այլ մանաւանդ որ անդստին 'ի ստեղծմանէ աշխարհի զկրօն աստուածապաշտ մարդկանն՝ որ միշտ կացին աւանդապահք աստուածածանութեանն և աւետեաց խոստման միջնորդի միոյ. զկրօնն զայն՝ որ միշտ հակառակ եկաց ամենայն կրօնից, որ յետ այնորիկ 'ի վեր ելին յաշխարհի. և որ միշտ հակառակութիւնս կրեաց, սակայն և միշտ նոյն եկաց մնաց։ Եւ ասեմ՝ եթէ հեղինակութիւն նորա այնպիսի իմն էնիքս անջնջելիս լուսափայլս զՃշմարտութենէ յինքն բարձեալ բերէ, զի և անմարթ է առանց խելայեղութեան տեղի տալ 'ի հպատակութենէն նորա։

Եւ նախ առաջին, հնութիւն 'ի բան կրօնի կնիք է այնպիսի՝ որում յարգ մեծապէս ընծայէ ինքնին բանն։ Եւ անշուշտ հաւատք մի՝ պաշտեցեալ 'ի կրօնէ նախաստեղծ մարդոյն և վաղնջուց մարդկանն, և դաստնեալ յանենգ պարզութենէ առաջին ժամանակացն, հաւանութիւն տայ մտաց անվանելի։

Եւ եթէ և ստութիւնն չունիցի հնութիւն, և չիցեն ևս 'ի մարդիկ մոլորութիւնք հինք. այլ զի որ միան-

digitised by A.R.A.R.@

գամ կամիցի հետախուզել զպատմութիւն նոցա, հեշտեաւ գտցէ յայն ինչ ժամանակ պատահեալ զծագումն նոցա, և այնպէս առ նախասկիզբն հնութեամբ առաջնոյն, նորք համարեսցին յետինքն։ Իսկ նորութիւնն միշտ էնիք անանցեալ է 'ի մոլորութենէն։ Իսկ առ ամենայն նորութիւնս մարթ է զկշտամբանսն յարել զմարդարէին, եթէ "Որք և առժամայնք եկեալք, զորս ոչ գիտէին հարքն ձեր,,։

Իսկ արդարև եթէ իցեն յաշխարհի կրօնք Ճշմարիտ, պարտ է այնմ հնագոյն լինել քան զամենայն. քանզի եթէ կրօնք Ճշմարիտ էն, պարտի լինել և առաջին և տիրագոյն պարտք մարդոյ առ Աստուած, որ խնդրէ պաշտօն և երկրպագութիւն առ 'ի մարդոյ։

Պարտ է ուրեմն պարտուցս այսոցիկ լինել այնչափ հին, որչափ հին է մարդ. և քանզի պարտքս այս է զուգակից ընդ բնութեան նորա, պարտի ուրեմն, զի այսպէս ասացից, և ծննդակից լինել ընդ նմա։ Իսկ ասասիկ առաջին էնիք, որով նախ քրիստոսական կրօնն զանազանի 'ի նորակրօն հեթանոսութենէն և յաղանդաւորաց հերձուածոցն։ Օ՛ի այս է կրօնն հնագոյն՝ որ իցէ յաշխարհի։

Առաջին մարդիկն, մինչ չև մուտ գտեալ ամբարիշտ պաշտամանն հեթանոսաց 'ի փայտից և 'ի քարանց քանդակելոց աստուածս, երկրպագութեամբ պաշտէին զնոյն ինքն զԱստուած, զոր մեքս պաշտեմք. նմա կանգնեցին սեղանս, նմա մատուցին զոհս, 'ի նորա բարութենէն ակն ունէին վարձուց հատուցման վասն առաքինութեան, և 'ի նորուն արդարութենէն՝ պատուհասին վասն անհնազանդութեան։

Պատմութիւն ծագման կրօնիս այսորիկ է նոյն ինքն պատմութիւն ծագման աշխարհիս։ Որք աստուածաշունչք՝ որ զայն ողջիկ մեզ պահեցին, և մինչև ցաւուրս մեր փոխանցեալ աւանդեցին, ունին զվաղնջուց յիշատակարանսն զծագման իրացն։ Իսկ են այն գիրք հնագոյնք քան զամենայն առասպելեաց քերթուածսն մարդկային մտաց, որք հնաբարբ առեալ զբաղեցուցին ապա զդիւրահաւատ ժամանակն զկնի եկելոց դարուցն։

Իսկ քանզի մոլորութիւնն միշտ ծագումն ունի 'ի Ճշմարտութենէ խեղեմեէ, և է իսկ նա թերակատար իմն և

խաթարեալ նմանողութեան անմարտութեան, վասն այսորիկ զամենայն առասպելս հեթանոսութեան գտանեմք մեք հիմնեալ յանցս ինչ և 'ի դէպս աստուածաշունչ պատմութեանն։ Զինչ զի և մարթ է ասել, եթէ և նոյն ինքն մոլորութիւնն պաշտօնատար երախտապարտ է հնութեան և ստուգութեան աստուածաշունչ մատենիցն մերոց։

Եւ արդ ոչ արգոյ ձեզ թուեսցի այս միայն կնիք։ Զանգի և որ այլք 'ի կրօնից պարծին հնագոյն ևս լինել, ոչ այլ ինչ հաւաստիս տան մեզ զիւրեանց հնութեանն, բայց զհիւսուած պատմութեանն՝ որ անձամբ անձին մատն լինի։ Զանգի անձոռնի իմն և անոռ յետ բազմահարուստ դարուց առաջի արարին զվէպս աշխարհիս կցկցելով ըստ մտի վիհ իմն ահագին խառնափնդրութեամբ՝ զմնացածին և զանթուեալեաց դարուց և ժամանակաց։ Որ և բնաւ իսկ անծանօթք պատմութեան ծագման աշխարհի, քմնազարդ բանիւքն ոչ կարացին երբեք հաստատել զիւրեանցն։ Զանգի ստեղծուածք բանաստեղծութեան նոցա՝ հիմունք կացին կրօնից նոցա։ Այլ վասն մերոցս ունիմք մեք շարայարութիւն անցից և գործոց, բանաւոր, բնական, համակցողդ միութեամբ։ Այս է պատմութիւն ազգատոհմի միոյ՝ ցան կորդեալ անդստին յառաջին արմատոյ զարմին մինչև յայրն որ գրեաց զայն, ունելի յամենայն 'ի դէպսն։ Այս է ազգաբանութիւն՝ յորում իւրաքանչիւր նահապետ զարմին որոշեալ է առանձին սեպհական կրնքով 'ի դիպաց ինչ և յանցից, և 'ի յիշատակարանաց՝ որ կային տակաւին յայն վայրսն՝ յորս բնակեցան նոքա։ Այս է կենդանի իմն աւանդութիւն հաւաստագոյն քան որչափ ինչ յայն ժամանակս կային յաշխարհի. քանզի և Մովսէս հայր պատմագրաց գրեաց զոր միանգամ լուեալ իսկ էր 'ի պատմելոյ որդւոց նահապետացն։ և որդիք նահապետացն պատմէին զտեսեալսն յիւրեանցն հարանց։ Զորդ զորդ, և անցք զանցս հաստատեն։

Յառաջ քան զՄովսէս ժողովուրդն Աստուծոյ չունէր ինչ մի գրաւոր. նա եթող զկնիք եկեղցոյն՝ զոր միանգամ ամ ինքն ժողովեաց կենդանի ձայնիւ իւրոց նախնեաց, այս է՝ ողջոյն զաւանդութիւն զմարդկային ազգի, և արձանագրեաց 'ի մի մտրմին զպատմութիւն զաքանչելեացն

digitised by A.R.A.R.@

Աստուծոյ, զայսմանութեանց նոցա առ մարդիկ, որոց և ՃՇմարտութիւնն եկաց միշտ. զի 'ի նմա բովանդակեին և կրօնք և գիտութիւն, և միութիւն ազգատոհմին Աբրահամու։ Իսկ անկեղծութիւն մատենագրութեանն այնորիկ քաջ իսկ երևի 'ի սքանչելի պարզութենէ պատմութեանն։

Հաւասիկ եղբարք, եթէ զիարդ կրօնք քրիստոսեանք հաւատարիմ ընծային 'ի միտս մարդկան։ Քրիստոս դարձուցէք զաչս վայր մի ուր և կամիք. ընթերցարուք զպատմութիւնս ժողովրդոց և զազգաց. ոչ գտջիք պատմութիւն յաշխարհի հաստատիւն քան զայս։ Թողում ասել, եթէ չգանիցէք և ոչ մի զոր արժանի իւրում խորհրդածութեան համարիցի այր ոք մտաւոր։ Եթէ դոյ էակ գերագոյն անսկիզբն, որ զՃՇմարտութիւնն յայտնեալ ետէ մարդկան անշուշտ, այս միակ է արժանաւորն Աստուծոյ, արժանաւորն մարդկան։ Այլս առհասարակ սկիզբն առասպելահիւս է. աստանօր այնչափ հաւաստի է սկիզբն, որպէս և զկնի պատահեալքն. և տարեգիրք վերջին դարուց, ցուցակութիւնք էն ստուգութեան առաջնոցն։ Այս ուրեմն եթէ դոյ յաշխարհի ստուգութիւն որում հպատակել պարտ ետէ բանին, այն է ստուգութիւն քրիստոսական կրօնիցս։ Այսչափ ինչ է հնութիւն նորա։

Այս եթէ 'ի պատկառելին յայն երիցութիւն՝ յաբեսցուք մեք և զմտատև շարայարութիւն նորա, զինչ յայնժամ։ Յուշ միանգամ լիցին ձեզ եթէ արչափ ինչ կրօնք և աղանդք, զմիմեանց կնի ելեալ տիրացան յաշխարհի։ Հնեցէք զպատմութիւն նորակրօն պաշտամանց ազգաց և ժողովրդոց, և տեսանիցէք զի առհասարակ ձգեցան նոքա ընդ բոլորմունս ինչ ամաց կամ դարուց, և շինան տպա ընդ շինանել զօրութեան աղանդապետաց իւրեանց։ Ո՞ւր իցեն այժմ, որպէս ասաց, ո՞ւր աստուածքն Լամեթայ, և աստուածքն Աստարտայ, և աստուածքն Սեփարուիմայ։ Յիշեցէք և զպատմութիւն զառաջին աշխարհակալացն. նոքա յաղթանակ կանգնեալ 'ի վերայ ազգաց և աղանց՝ 'ի պարտութիւն վատթարեին միանգամայն և զաստուածս նոցա. և 'ի քակել անդ զտերութիւն նոցա՝ 'ի միջոց բառնային և զպաշտամունս նոցա։

digitised by A.R.A.R.@

Բանիսն իսկեն սփոփանքն, տեսեալ զի միայն մերոց հարց կրօնք անդրժելի մնացին անդստին 'ի սկզբանէ. քակեցան այլք, ինքն եկաց միշտ յակառատանի։ Եւ թէպէտ բազմապատիկս կրեցին աւանդապահք նորա, 'ի վերայ այսր միշտ 'ի հարց առ որդիս անցանէր անդուլութեամբ, և երբէք ոչ ջնջեցաւ 'ի սրտէ մարդկան։ Արդեօք բազո՞ւկ մարմնեղէն պաշտպանեաց նմա. այլ զի՞՝ այս. յորժամ միշտ ապիկար գտաւ ժողովուրդ հաւատացելոց, միշտ նկուն և հարստահարեալ, միշտ հալածեալ. "Եւ թէ հարքն մեր, ասէր աստուածային մարգարէն, սրով իւրեանց ժառանգեցին զերկիր, և ոչ բազուկ նոցա թէ փրկեաց զնոսա. այլ աջ քո և բազուկ քո և լոյս երեսաց քոց..։ Երթ 'ի գերութիւն վարեալք, մերթ վտարանդիք փախստեայք, մերթ հալածեալք աղգաց։ Տեսին նոքա՝ ոչ միանգամ զԱղդէացւոց տերութիւնն, զՄորոյն, զԱբելացւոցն, տերութիւնք ահեղք, ընդդիմամարտս դաշնակիցս 'ի վանել զնոսա, և համայնաջինջ առնել զկրօնս պաշտաման նոցա. այլ այն ժողովուրդ անաւագեալ, հարստահարեալ Յունգիպտոս, աստանդական յանապատին, և ապա 'ի գերութիւն վարեալ յերկիր յօտար, չքարձաւ 'ի միջոց, և պաշտօն կրօնին նորա միշտ մնաց ընդ նմա։

Արդ ո՞ր պատճառք իցեն, զի կրօնս մեր, այնչափ հակառակութիւն կրեալ 'ի թշնամեաց, այնչափ խրստամբեր 'ի պահպանութիւնն, այնչափ անաչառ 'ի պատուհաս յանցաւորաց, և զինչ ևս ասել, նաև այնչափ գայթ 'ի գայթի և հեշտընկալ եթէ 'ի հաստատել և եթէ 'ի կործան անկանել 'ի պատճառս յեղանութեանէ և բրտութեանէ ժողովրդեանն, որ նախ առաջին եկաց այնմ աւանդապահ։ Ո՞ր իցեն պատճառքն, ասէ՞ ասա. զի այն միայն յաւերժացաւ յաշխարհի 'ի մէջ այնչափ բազմաչարչարով սասանութեանց. իսկ այն նորակրօն պաշտամունք՝ որոց զօրավիգն էին ինքնակալութիւնք բռնաւորաց և թագք արքայից ահաւորաց՝ դարձեալ միանգամ անկան 'ի չքութիւն անդր իւրեանց, յորմէ 'ի վեր եղեալն էին։

Բա՞՝ Աստուած ինքնին է ուրեմն և ոչ մարդ որ գործեաց զայն ամենայն, և աջ և բազուկ ամենակալին պահեաց զգործն իւր։ Եւ քանզի ամենայն արուեստք

digitised by A.R.A.R.@

և հնարագիտութիւնք մարդկան ոչ զօրեցին ընդդէմ նորա, գործ ուրեմն միայն աստուածային իմաստութիւն եկաց այս կրօն, զի այնպէս անջնջելի մնաց յաշխարհի։

Ա. Յլ արդ՝ եթէ և 'ի մշտատև կարգաւորութիւնն սորա յաւելցուք և զանփոփոխ նորա գոյութիւնն, զինչ այլ պատրուակ մնասցէ լուսոյ բանին 'ի պաշտպանութիւն անհնազանդութեանն։ Ա. Մենայնն փոփոխութեան ներքոյ անկեալ է յաշխարհի. քանզի և ամենայնն զհետ երթայ փոփոխականութեան իւրոյ սկզբանն։ Ա. Դէպք և առիթք, տարբերութիւնք դարուց, բարեխառնութիւն զանազան կլիմայից, հարկ ժամանակաց, բիւրս ինն այլայլութիւնս առին մուծին միանգամայն յամենայն օրէնս մարդկայինս։ Ա. Ի՝նչ հաւատք անդրժելի յայնմ ամենայնէ միշտ մնաց անսայլայլելի. որպիսի ինչ երբեմն մեր նախնիք ընկալան զնա, այնպիսի ունիմք և մեք զարդիս, այնպիսի և մեր զկնի եկեալքն ընկալցին յաւուր միում։

Յայսց ապա երբակի հաստատուն կնքոց կրօնիցս, հնութեանն ասեմ և մշտատև կարգաւորութեանն և անայլայլակ գոյութեանն, անվեհեր զհետ բերցես, եթէ միայն հեղինակութիւն նորա ուրեմն յաշխարհի բաւական է 'ի խոնարհել յանկուցանել զայր մտաւոր։

Ա. Դ արդ եթէ հնազանդութիւն հաւատացելոյն է բանաւոր առ 'ի մասնէ հեղինակութեանն՝ որ զայն պահանջէ, չէ ինչ նուազ և 'ի կողմանէ նոցուն իսկ իրացն, զոր ընծայէ նմա 'ի հաւատալ։

Ա. Դ ահա աստանօր սիրելիք միմիք մեք 'ի խորս անդ քրիստոսական պաշտամանս։ Ա. Ա այս պաշտօն միայն, թէպէտ և միջամուխ ոք զննեսցէ ճշգրիտ զիտորս նորա, ոչինչ զանգիտէ որպէս 'ի ծածուկս գաղտնեաց գարշելիս հեթանոսական պաշտամանցն, որոց քօղ խաւարին 'ի վերայ արկեալ կայ 'ի ծածկել զառակաս մոլորութեանցն։ Ա. Կրօն՝ որ յանձն առնու զհետաքննութիւն զիւրոյ խորոցն, չէ անկասկածելի. "Ա. Կասկածելի էն օրէնք, կնքեաց մեծն Տերտուղիանոս, որ ոչն կամի մատչիլ 'ի փորձ քննութեան"։ Ա. Ա այսպէս էն պաշտամունք քրիստոնէից. որչափ առաւել 'ի խորս միեսցիս նորա, միշտ գեղեցկութիւնս նոր և չքնաղ, միշտ սքանչելիս նորոգածինս ծածկեալս յերևան բերցես զնորա։

digitised by A.R.A.R.@

Հեթանոսականն պաշտօն խմաստս անիմաստս ազգէր վասն աստուածութեան. խմաստասիրութիւնն խմաստս անբանաւորս վասն անձին. ցանկութիւնն խմաստս ա-նիրաւս առ այլս 'ի մարդկանէ։ Եւ արդ հայեաց ինձ և զարմացիր դու ընդ խմաստութիւն կրօնիս, որ սպե-ղանիս դարմանոյ մատուցանէ երբակի վիրացս այսոցիկ. զոր լոյս բանին յամենայն իսկ 'ի դարս ոչ ինչ կարաց ապաքինել, նա և ոչ ճանաչել անգամ։

Եւ առաջին՝ ո՞ այլ ոք յօրէնսդրաց երբեք խօսեցաւ այնպէս յաղագս աստուածութեանն, որպէս օրէնս-դիրն քրիստոնէից։ Զէ դու գիտ ինձ, եթէ կարես, յայլում պաշտաման խմաստս և տիպս զկարողութեանն Աստուծոյ, զիմաստութեանն, զանչափութեանն, զբա-րութեանն, զարդարութեանն, խմաստս բարձրագոյնս առաւել քան զմերոց գրոցն։

Եթէ 'ի վերոյ քան զմեզ գոյ էակ գերագոյն և յա-ւիտենական, յորում կեան ամենայն գոյքս, պարտ է զի այնպիսի իցէ նա, որպիսի մեզ առաջի ընծայեն քրիս-տոսական կրօնք։ Մեք եմք միայն՝ որ ոչ նմանատիպ մար-դոյ ընծայեցուցանեմք զնա. մեք միայն երկիրպագա-նեմք հանգուցելոյն 'ի քերովբէս, իբրու այն՝ որ ընդ զամենայն՝ զերկին և զերկիր անչափութեամբ իւրով. իբրու այն՝ որ զամենայն վարէ տեսչութեամբ՝ ան-սահման խմաստութեամբ իւրով. հաստիչ լուսոյ և խաւարի, պատճառք բարեաց, արդար վրէժխնդիր չարեաց։ Մեք եմք միայն՝ որ պատուեմք զնա ըստ օրինակին զոր ինքն կամի. այս է՝ ոչ համարիմք ար-ժանի նմին պաշտօն զբազմահոյլս սպանդից և զո-հից, կամ 'ի հանդերձանս արտաքնայարդարս մերոյ հպատակութեանս. այլ յերկրպագութեան ճշմար-տութեան, 'ի սէր անկեղծական, 'ի գովութեան փա-ռաբանութեան, 'ի գոհութեան հնորհակալութեան։ Եւ 'ի սրտէ վերընծայեմք մեք զամենայն բարի՝ զոր ունիմք՝ իբրու սկզբնաւրիթ պատճառի նոցա. և մեզ ինքնին վերապրեմք զմտութիւն, որ ծագումն ունի յապա-կանութեան մերում։ Նմանել յուսամք ընդունել ըզ-փոխարէնն հաւատարիմ ծառայութեանս, որ պարգև իսկ է հորայն հնորհաց. 'ի նմանել ճշմամբ պատուհասի յանցանացս, արդասիք չարք չարաչար կիրառութեան

digitised by A.R.A.R.@

ազատութեանս մերոյ։ Եւ արդ զոր այլ խնամաս բաւական իցէ, զոր զմտաւ ածել առաւել քան զայդոսիկ արժանիս գերագոյ էակի։

Իսկ երկրորդ անգամ, մնոտիապատուաստ խնամասիրութիւն՝ կամ գձձեաց զբանաւորն և զմարդն նկուն հաւատարեաց 'ի վիճակ անասնոց անբանից, և զրդեաց զնա խնդրել զերջանկութիւն իւր 'ի հեշտալից զգայութեանց, կամ թէ անմտութեամբ եւ նմա ամբարտաւանել մինչև 'ի նմանութիւն Աստուծոյ. և ուստի նմա եթէ բաւական է ինքն յիմաստութեան իւրում գտանել զիւրն երջանկութիւն։

Ասայ զբրիստոնէիցն բարոյական յերկուց աստի ծայրայեղ անչափութեանց տեղի տուեալ, 'ի բաց տանի զմարդ բանաւոր 'ի մարմնաւոր հեշտութեանցն, զմտութեանն զաշխատանութիւն ցուցանելով նմա, և զբարութիւն նախասահման վախճանի նորա։ Արատէ ընդոտնել զամբարտաւանութիւն, և յանդիման աչաց նորա առակէ զհիւթութիւն և զանարգութիւն անձին։

Յանկութիւնն ապա երրորդ անգամ տայր մարդոյ անիրաւել առ այլս 'ի մարդկանէ։ Իսկ որ այլ վարդապետութիւն երբէք լաւ ևս վարժեաց զմեզ 'ի լրումն պարտուց մերոց առ այլս, իբրու զբրիստոնէից։

Ամ այս վարդապետութիւն ուսուցանէ մեզ հպատակ կալ իշխանութեանց՝ որ յաշխարհի, իբրու որ յԱստուծոյ ինքնին կարգեալ իցեն. և զայն՝ ոչ առ ա հի իշխանութեան, այլ վասն մնացն խղճի. վարժէ շուք ընծայել աւագաց, համբերել հաւատարից, քաղցրանալ կրսերաց, սիրել զամենայն մարդ իբրև զանձն։ Ամ միայն գիտէ կրթութեամբ 'ի վեր հանել քաղաքացիս բարիս, հպատակս հաւատարիմս, ծառայս համբերատարս, տեարս խոնարհս, ատենակալս անկաշառս, թագաւորս գթածս, բարեկամս ձշմարիտս։ Ամ միայն անդրժելի պահէ զհաւատարմութիւն ամուսնացն, ապահովէ զիսաղաղութիւն գերդաստանաց, պահպանէ զանդորրութիւն տերութեանց։ Ոչ միայն սանձակոծէ զդաւաճանութիւն, զյափշտակութիւն, այլ և արգելու զյանկալն ընչից օտարին. ոչ միայն ոչ կամի չարակենութեամբ հայել 'ի յաջողութիւն ընկերին, այլ և պատուիրէ սեպհական գոյից բաժանակից առնել զնա 'ի

digitised by A.R.A.R.@

պիտոյս նորա. ոչ միայն կարձն, զձեռս կենախոյզ լինել այլոց, այլ և պահանջել բարի առնել չարաբարոց, օրհնել զանիծիչս. և զի ամենեցուն մեր մի միայն սիրտ իցէ և մի միայն հոգի։

Ցուք ինձ, ասէր աստուածայինն Գրիգորիոս և Թախանձէր զՀեթանոս ժամանակին, տուք ինձ 'ի ձեռս Թագաւորութիւն մի պատրաստեալ կազմեալ յայսոքինակ քաղաքացեաց։ Զարմ. որ խաղաղաւէտ անդորրութիւն, քանի երջանկութիւն, որ պատկեր Հոգւոյս երկնի 'ի վերայ երկրի։

Սակ արդ մնրդկայինս իմաստասիրութիւն այնչափ ինն ունելով յինքեան իմաստս և խորհուրդս բարձունս, զիարդ ոչ մնրթացաւ երբեք կարդ մի այսպիսի զերկնաւոր հասարակաբարեւութեան երևեցուցանել յաշխարհի։ Զոչ արդեօք, եթէ Զաստուած խօսեցաւ երբեք ընդ մնրդկան ցուցանել նոցա զնմանապարհն փրկութեան, անշուշտ 'ի սոյն յայս լեզու միայն խօսեցաւ ընդ նոսա։

Զոչ թէպէտ և ընդ արդար և հանճարիմաստ առաջս արժանընկալս լուսոյ բանին, յաւել մեզ կրօնս քրիստոնական նաև խորհուրդս ինն անճառս գերազանցեալս քան զմեր միտս, այլ սակայն թող զայն զի այր ոք այր ողջամիտ յանձին կալցի մտադիր հպատակ կալ յամենայնի կրօնից, որ այնչափ արդար և պատկառելի է վասն հնութեանն, այնչափ աստուածայինն վասն բարոյականին իւրոյ, այնչափ գերազոյն քան զայլ պաշտամունս 'ի պատճառս հեղինակութեան, ուստի և միայն արժանի հաւատս ընծայել նմա, թող ասեմ՝ զայս, նորին աւադիկ շարժիչ առիթքն՝ զոր զնն 'ի ձեռին առնու կրօնն հաւատարմացուցանել զմեզ՝ հարատաւ զվերջինն ածէ 'ի վերայ թերահաւատութեանն։

Զոչ առաջին՝ այս խորհուրդք բարձրագոյնք կրօնի նախասարատեալք եղեն բաղում՝ դարուք յառաջ քան զլրումն նոցա, և նախաձայնեալք ամենայն հանդանեաւք ժամանակաց և տեղեաց և մնրդակտիս մնասանց։ Զոչ չէին այս նախաձայնութիւնք իբրու զմարգարէութիւնսն զայնոսիկ, որ բնաւորեցան հոչակ հարկանել դաղտաբար 'ի խուժանին և հրապարակիլ յանկեան ուրեք երկրի. այլ մնրդարէութիւնք կացին սոքա վաղնջուցք, որ ան-

digitised by A.R.A.R.@

դրատին 'ի սկզբանէ աշխարհի կրան եկայ հանդուցանոր ազգի, զոր հարը աւանդէին որդւոց իբրու ժառանգութիւն պատուական, որոց պահարան էր ինքնին տաճարն սրբութեան իբրու սրբաշնաստրբ առհաւատչէից աստուածային աւետեացն. և զորոց ինքնին ազգն ոմերիմ Յիսուսի Քրիստոսի՝ առաջին աւանդապահն այնոցիկ՝ նաև յառուր յայսմիկ զՀնարտութիւնն վկայէ յանդիման աշխարհի։

Ել և քօղաճածուկ ինչ էին այսոքիկ 'ի հանդերձոր ժողովրդենէն խորհրդաբար, իբրու զխաբուսիկ պատգամն հեթանոսաց՝ զոր ոչնաբար խնամով պահէին քուրմք 'ի ծածուկ խորշս մեհենաց, 'ի Ճարակ գուռզութեան կամաց ազգայից, յայտնիք միայն քրմապետացն, և երբեք երբեք ըստ ժամուն պիտոյից պատասխանի յայնց պատգամաց 'ի դուրս ելանէր առ 'ի գրաւականել զսիրտ ժողովրդեան կամ 'ի ձեռնարկ ինչ վտանգաւոր կամ 'ի պատերազմ ինչ անիրաւ։

Իսկ առ մերովքս, մարգարէական մատեանքն էին ընթերցուած հանապազօրեայ հանդուցանոր ազգին։ Աբրահամայրդք և ծերք, կանայք և մանկունք, քահանայք և աշխարհիկք, թագաւորք և հպատակք պարտէին անդուլութեամբ ունել զայնոսիկ 'ի ձեռին։ Այլ այր իշխան էր ուսանել վարժել նորօք 'ի պարտս անձին առանձին, և զայս ակնկալութեան իւրոց գտանել 'ի նոսա։ Այս մատեանք ոչ եթէ փաղաքուշք գրգէին զփառասիրութիւն ընթերցանելեացն և զանձնասիրութիւն, նա մանաւանդ հանարձակ բարբառէին նոցա յաղագս ապաշնորհութեան ապարուստ սրտից հարց իւրեանց. զոգցեա յամենայն թերթս մատեանին նախաբարոյ գուժէին զաղէտս նոցա իբրև արդար պատուհաս յանցանաց նոցա։ Օ թագաւորայն կշտամբէին զփափկութիւնն, զբահանայապետաց նոցա զանիրաւութիւնն, զմեծամեծաց նոցա զղեղութիւնն, զժողովրդոյն ըզյեղյեղուկ միտն և զանհաւատութիւնն։

Եւ 'ի վերայ այսր՝ սիրունք և փարելիք էին մատեանքս այս սրբութեան. և 'ի նոցունն իսկ պատգամացն, զորոց կուռ զհետ միմեանց տեսանէին զկատարումն, անելիմիաք էին 'ի տեսանել յաղագս և զայլոցն լրումն. որոց և այսօր վկայք են անսուտ տիեզերք ամենայն։

digitised by A.R.A.R.@

Այլ արդ անշուշտ գիտութիւն ապագայիցն՝ կնիք անկասկածելի է աստուածութեան։ Այրկրորդ՝ զի և ոչ գործք դուշնաքեայք հաստատիմն գործեցին զխորհուրդսն զայնոսիկ զբարձրագոյնսն, այլ նշանք սքանչելագործք, այնչափ իմն հանդիսացեալք և հրապարակեալք ընդ ամենայն Հրէաստան, այնչափ իմն անժխտելիք անդստին 'ի ժամանակէ դիպացն, նաև առ նոսա՝ որոց մեծապէս էր շահն 'ի ժխտելն զնոսա, այնչափ իմն մանրամասն հանգամանօք ներգործեալք, որոց բովանդակ ազգն ձեռն տայր հաւանութեան, այնչափ իմն կրկնեալք և երեքկնեալք 'ի քաղաքս, 'ի շէնս, արտաքոյ շինին, 'ի տաճարին, 'ի հասարակաց հրապարակս, մինչ զի յերկրայս ինչ լինել զնոցանէն՝ էր քաջ քաջ ուրանալ զարեգակն հանդէպ նշուլից նորա։

Բ. Դաքեալք ինքնին քարոզեցին զնոսա, 'ի գիր եւ արձանացուցին զնոսա 'ի Հրէաստանի յետ սակաւուց ժամանակաց, այս է՝ առ կենդանութեամբ նոցուն իսկ քահանայապետացն՝ որ դատապարտ արարին զտէր Քրիստոս. և մարթ իսկ էր նոցա առակել նշաւակել զքարոզիչսն, և բողոք ընդդէմ բառնալ պատիր խաբէութեանն, եթէ երբեք ժտեալ ինչ էր նոցա՝ հրամանատար կալ ողջոյն ազգի մարդկան։

Իսկ տեսին մեր ըստ անսուտ խոստմանն յարուցեալ ապա 'ի մեռելոց, հաստատիմն գործեաց զամենայն վարդապետութիւնն։ Այլ ի՞նչ արդեօք տեղի յերկուանաց, եթէ խաբեցան ինչ թերևս առաքեալք 'ի գործ մի այնչափ սահմանական և այնչափ տիրական վասն նոցա. 'ի գործ մի այնչափ անգամ նախաձայնեալ նոցա, որում՝ և ակնկալեալ մնային իբրու տիրական մասին և ողջոյն հաւատոյն հիմանն. գործ որ այնչափ անկասկածելի հիմ նեցաւ բազմահոյլ վկայիւք։

Այլ ի՞նչ դարձեալ տեղի յերկուանաց, եթէ զմեզ թերևս խաբել կամեցան առաքեալք, գնալով յընդհանուրս քարոզել ստութիւն մի, ինքնագրաւք 'ի տոյժ անձանց, 'ի տոյժ հանգստեան իւրեանց, 'ի տոյժ պատուոյն իւրեանց, և 'ի տոյժ կենաց իւրեանց։ Քանզի և որոց իմիք վարձուց հատուցման էր նոցա ակն ունել յայնպիսի աշխարհագոյժ խաբէութենէ։ Այլ արդեօք այն որեար որ այնչափ վարժս, հրահանգս թողին մեզ

digitised by A.R.A.R.@

լի սրբութեամբ և բարեպաշտութեամբ, մինչեւ էր զօրինակն զայն զչար յոյժ և զանլուր տալ աշխարհի առ հասարակ։ Այլ այնպիսի որեւար ոչ իմիք ուշ եղեալ 'ի վայելչականաց կենցաղոյս, ոչ 'ի շահ անձին, ոչ 'ի լոյս բանին, այնպէս ապուշք, անզգայք, անպատճառք, մասնեին արդեօք զանձինս այնչափ չարաչար և դառն տանջանաց, անձնանուէրքք 'ի մահ դժնդակ և տարեալք այնչափ դիւցազնական արիութեամբ, միայն 'ի պատճառս հաստատիմն առնելոյ զգործ մի, զորոյ և ինքեանք իսկ գիտէին զատութիւնն։ Զ'եռան ուրեմն այն մարդիկն 'ի վերայ միոյ մարդոյ՝ որ խաբեայն զնոսա, և ոչ յարուցեալ 'ի մեռելոց ըստ բաղում անգամ խոստմանն՝ իբրև ընդ խօթամիտս խաղաց ընդ նոսա։

Զ'ի ևս այլ թերահաւատ ոք կամ ամբարիշտ ոք յանդիմանեսցէ զմեզ իբրև դիւրահաւատ պարզամիտս՝ զի հաւատամք խորհրդոցս այսոցիկ։ Այս մանաւանդ մեք ասասցուք զնա կարի դիւրահաւատ և խօթամիտ, եթէ երբեք յանկչիցին միտք նորա 'ի դրութիւն մի այնչափ անհաւատալի։

Իսկ ապա երրորդ՝ 'ի հաւատս խորհրդոցս այսոցիկ բարձրագունից խոնարհեցան զիջան տիեզերքք ամենայն։ Այսերքք և արքայք ինքնակալք, թէպէտ և 'ի տիեզերական պատուոյն իւրեանց և 'ի կարգէն կապտէր զնոսա այս հաւատ։ Իմաստասէրքք խորամուխք, բարձրամիտք. թէպէտ և իբրև տգէտս և իբրև սնոքացեալս նշաւակէր զնոսա այս հաւատ։ Յանկասէրքք, մարմնասպաշտք. թէպէտ և խաչս և չարչարանս քարոզէր նոցա այս հաւատ։ Բաղմահարուստ մեծատունք. թէպէտ և յաղքատութիւն և յընչատեցութիւն կրթէր զնոսա այս հաւատ։ Զքաջք և տառապեալք. թէպէտ և սիրել զնուաստութիւն և զկարօտութիւն պատուիրէր նոցա այս հաւատ։ Այլ միանգամայն ամենայն մարդ. թէպէտ և մարտ եղեալ կռուէր ընդ ամենայն կիրս նոցա այս հաւատ։

Սա այս հաւատ՝ զոր երկոտասանքն քարոզէցին, աղքատք, անուսք, առանց զպրութեան, առանց հանձարոյ, առանց զօրավիգն պաշտպանութեան, ընթադրեալ նկուն արար միանգամայն զբռնակալս, զգիտունս, զոլորգէտս, զքաղաքս, զտէրութիւնս, զարքայութիւնս։

digitised by A.R.A.R.@

Այս խորհուրդք 'ի վերին երեսս գլխովին յիմարականք, տապալեցին միանգամայն զամենայն աղանդս, զամենայն վարժարանս, զամենայն յիշատակարանս զգոռոզամիտ հանճարոյ բանին. և յիմարութիւն խաչին գտաւ առաւել իմաստուն քան զամենայն իմաստութիւն աշխարհի։

Օ՜ինչ ևս։ Եւ ամենայն տիեզերք դաշնակիցք երդուան ընդդիմամարտք սմա, և սակայն ձիգն՝ զոր թափեցին թշնամիքն նորա՝ սաստիկ ևս հաստատիմն գործեաց զնա։

Լինել հաւատացեալ և լինել դատակնքեալ 'ի մահ, անանջատք էին 'ի միմեանց. և սակայն նոյն ինքն վրատանգն յանկուցանէր 'ի նոյն հաւատ. որչափ առաւել բուռն էին հալածանք, այնչափ առաւել մեծ էր աճելութիւն հաւատոյն. և ինքնին արիւն մարտիրոսաց՝ սերմն էր քրիստոնէից։

Դարձ, Աստուած, և ո՞ ոչ նկատիցէ աստանօր զմատն քո. ո՞ ոչ ծանիցէ 'ի հանդէս գործոյս տպաւորեալ զկնիք աջոյ ձեռին քո։ Այլ ո՞ր այն միտք գոռոզ և բարձրայօն չիմասցի տակաւին զնանրութիւն տարակուսի թերեհաւատութեան իւրոյ, 'ի նոյն և զշառաչնութիւն իւր՝ եթէ երբէք առնթ համարեսցի հնազանդել վարդապետութեանն՝ որում հնազանդեցան ամենայն տիեզերք։

Այլ հնազանդութիւն մեր այս՝ որպէս կանխեցի ասացի՝ ոչ միայն է բանաւոր, այլ և փառաւոր։ Զուիցես վաղվաղակի։

ՄԱՍՆ Բ.

Մերարտաւանութիւնն է աղբիւր գաղտնի թերահաւատութեան։ Յանձնացոյց պարծանս հանճարոյ բանին, որ զրդէ զթերեհաւատն արհամարհել զհասարակաց հաւատն, հաստատեալ կայ հրապուրիչն այն եղականութիւն՝ որ թակարթէ զմարդ, և կարծեցուցանէ զթերահաւատն իբրև խորամիտ և հանճարեղ առաւել քան զամենայն մարդ, իբրու այն թէ այնպէս արիացաւ

digitised by A.R.A.R.@

թօթափել զլուծն, լուծ՝ որ նկուն արար զամենեսին։ Եւ սկսանի յաւակնագոյնս ընդդէմ բարբառել խորհրդոցն, որոց որ յառաջ քան զինքն մարդիկ՝ խոնարհեցան յերկրպագութիւն։

Իսկ արդ առ 'ի կապտել զամբարիշտ զայս մխիթարութիւն 'ի Թերահաւատէն, թէ իմիք պէտք իցեն։ Շատ է յայտ յանդիմանութեամբ ցուցանել նմա, եթէ չիք այլ հանդէս փառաւոր լուսոյ բանին առաւել քան զՀաւատն։ Փառաւոր՝ ըստ անպատում խոստմանց հանդերձելոցն. փառաւոր՝ ըստ առաջիկայ վիճակի հաւատացելոյ առն. փառաւոր դարձեալ՝ յօրինակէ հոյակապիցն արանց, որոց նմանող է հաւատացեալն։

Փառաւոր է, ասեմ, ըստ անպատում խոստմանց հաւատոցն։ Եւ ո՞ր իցեն այդոքիկ։ Արդեգրութիւն Աստուծոյ, կենակցութիւն անմահական ընդ Աստուծոյ, գերակատարն վիճակ մարմնոյ մերոյ, յաւերժականն երջանկութիւն հոգւոյ մերոյ, ազատութիւն 'ի կրից և յաղցից, անդորրութիւն սրտից մերոց 'ի ժառանգել զՀշմարիտ բարի, լուսաւորութիւն մտաց մերոց յանձառելի նշուլից գերագոյն բանին, երանութիւն նորա յանաղօտ տեսութենէ անտի Ճշմարտութեան։ Աստ ամենայն են անպատում աւետիք խոստմանց հաւատոցն. սա ուսուցանէ եթէ աստուածային է մեր ծագումն, և աստուածանմանութիւն է մեր յաւիտենական յոյսն։

Եւ արդ հարցանեմ։ Ոչ՞ թերևս ամենայնի ինչ լուսոյ բանին՝ հաւատալ Ճշմարտութեանց՝ որ այնչափ շուք յաւելուն անմահական բնութեան նորա։ Եւ զիա՞րդ։ Ոչ՞ թերևս շուք և փառք մարդոյ, կարծել զինքն իբրև համաբուն անանցոց անքանից, և 'ի վախճանին վիճակակից ընդ նոսա. անբաժ ամենևին յակընկալութենէ իմեքէ երջանկութեան 'ի հանդերձեալ կեանսն։ Աստ իցէ ուրեմն արտասուելին վախճան տեսչութեանն, որ այնչափ փաղաքուշ յանկուցանէ զամբարտաւանութիւն Թերահաւատին։

Վասնի իմաստութիւն 'ի դէմս ածէր Թերահաւատից ժամանակին աստուածայինն Աստուածաբանն. "Փառս մեծապէս, ասէ, գրեմ ես անձին իմում՝ հաւատալ Ճշմարտութեանցն, որ այնչափ շուք դնեն բնութեան մարդոյ. և յուսամ ակն ունիմ գեղեցիկ աւետեացն։

digitised by A.R.A.R.@

„ Եթէ չհաւատամ, այն զինչ մխիթարութիւն իցէ
„ ինձ. իսկ եթէ սխալեմ 'ի խորհրդեան իմում յայսմիկ,
„ իբրև զի առաւել կամիցիմ դասակից հրեշտակաց լի-
„ նել ինձ յետ մահուս, քան անանմոցն անբանից, մնա-
„ դիւրագոյնս սխալեմ ես յայսմիկ. և չառնում երբէք
„ յանձն՝ ցորչափ կեամ՝ 'ի բաց կալ 'ի կարծեաց առ-
„ տի „ :

Արդ եթէ փառաւոր են հաւատք ըստ անպատում խոստմանցն 'ի հանդերձեալն, ոչինչ նուազ փառաւոր է և ըստ առաջիկայ կենաց հաւատացելոյ առն :

Այսպա դուք սիրելիք, յառաջ ածէք մեզ զայր մի ճշմարիտ և արդար՝ որ կեայ հաւատով. և խելամուտ լինիջիք, եթէ չիք ինչ յաշխարհի մեծ առաւել քան զնա : Ցեր և իշխան 'ի վերայ ցանկութեանց իւրոց, և ամենայն շարժմանց սրտի իւրոյ, հրամանատար փառաւոր 'ի վերայ անձին իւրոյ, զհոգին իւր պահէ միշտ յանդորրութեան, 'ի համբերութեան, յերկայնմտութեան. ուղղէ վարէ զամենայն զկիրս անձին ժուժկալութեան. խնայէ 'ի յաջողական, արի 'ի ձախողական, ուրախ 'ի չարչարանսն. խաղաղարար՝ որոց ատեան զխաղաղութիւն. անախտակիր, անցաւ յանիրաւութիւնս 'ի թշնամանս, կարեկից հարստահարողացն, հաւատարիմ 'ի խոստմունս, երկիւղած ուխտապահ 'ի բարեկամութիւնս, անվրէպ 'ի պարտս, ոչ ինչ անձնագրաւ 'ի հարստութիւնս, անպերճ 'ի շուք փառացն, մեծ առաւել քան զաշխարհ ամենայն. քանզի կոյտ փոշւոյ և կարկառ հողոյ համարի զնա : Աստ, քանիցն է վսեմութիւնն :

Իսկ անդուստ իմաստասիրութիւն 'ի պայքար մտեալ՝ տապալել մոլութեամբ զմոլութիւնսն : Արժէ հրահանգէ գոռոզութեամբ առ ոսն կոխել զաշխարհ, զի գոլութիւն և ծաղիկարս առցէ յաշխարհէ. և 'ի ինդիր ելեալ է մանաւանդ փառաց իմաստութեան, քան եթէ իմաստութեանն ինքնին գլխովին : Աւ յորժամ զայլն 'ի կրից վանեալ ընդոստնէ, 'ի վերայ աւերակաց նոցուն կանգնէ հանապազ կիրս իմն այլ անհնարինս՝ ամենայն վտանգաւոր լի, զամբարտաւանութիւնն ասեմ : Ի դէպ ճշգրիտ եկեալ օրինակի բռնաւորին բաբելացւոց, որ քակեաց զսեղանս զաստուածոց ազ-

digitised by A.R.A.R.@

գայ, զի յաւերական նոցա կանգնեսցէ զամբարշտութիւն իւրոյ զպատկերն, և զայլանդակն զայն կոթող զամբարտաւանութեանն տացէ յերկրպագութիւն ամենայն երկրի։

Այլ հաւատք բարձրացուցանեն զարդարն 'ի վերոյ քան զառաքինութիւն իւր գլխովին, և մեծ ևս գործեն զնա 'ի գաղանիս սրտի իւրոյ և յաչս Աստուծոյ, քան յանդիման մարդկան։ Այս ներումն տայ առանց գոռոզութեան, անշահախնդիր է առանց փառասիրութեան, կրէ չարչարի՝ բայց ոչ 'ի ցոյցս անձնասիրութեան իբրու ճանաչիլ յաշխարհէ որպէս վշտալիք։ սահման կարգէ կրիցն՝ այլ 'ի ծածուկ։ անգիտանայ միայն զանձին իւրոյ փառս և զարդիւնսն, ոչ միայն անձնահաճ չէ և ծափահարութիւնս չինդրէ, այլ և քօղ արկանէ լուսոյ փառացն։ Սէր միայն պարտուցն է՝ հոգի առաքինութեան նորա։ գործէ միշտ և միայն 'ի փառս Աստուծոյ, իբրու եթէ չիցեն մարդիկ յաշխարհի։

Ո՞րչափ ինչ իցէ բարձրութիւն նորա։ Լցէք դուք 'ի խնդիր, եթէ գտանիցէք ինձ ընդ տիեզերս ինչ մի առաւել հոյակապ, առաւել վսեմական։ Դիւք 'ի կրիս զամենայն ազգ փառաց և պատուոյ, որով աշխարհ շուք դնէ ունայնութեան մարդկան, եթէ հաւասարեսցի մեծութեանն, յորում զայր բարի առեալ բարձրացուցանեն հաւատք։

Լաւ ապա ասացէք ինձ, որ այլ վիճակ կենաց շուք առաւել յաւելցէ մնաց առաւել քան զայս։ Մուտեսցի թերևս առաւել արգոյ, յորժամ զհետ անբանական շարժութեանցն գնացեալ բանաւոր արարածն՝ դարձցի և ինքն իբրև զմի յերկրաքարշիցն։ յորժամ նշաւակ գերի վարեսցի մարդ գաղանական կրիցն, ատելութեանն, վրէժխնդրութեանն, բարկութեանն, նախանձուն, և այլ ամենայն բազմահոյլ հրեշիցն, որ կուռ զմիմանց կնի մնռեալ թագաւորեսցեն 'ի սրտի նորա։

Դանդի և որք պարծանս համարին անձանց չհաւատալ ինչ մի, բաբէ, գիտիցեն արդեօք զինչ այն իցէ զոր ասեն՝ անձն ոք անհաւատ կամ թերահաւատ։ Մարդ է նա անկենցաղ 'ի կեանս, մարդ անբաժ 'ի բարութենէ, անբաժ 'ի հաւատարմութենէ, մարդ յեղյեղուկ։ չունի այլ կանոն՝ բայց զկրիցն, ոչ այլ օրէնս՝

digitised by A.R.A.R.@

քան զանիրաւ խորհուրդս մտացն. չափ և կարգ չիք նորա, բայց ցանկութիւնք իւր. չիք նորա սանձ այլ՝ քան զահ երկիւղի Իշխանաց աշխարհի, և ոչ այլ Աստուած է նորա՝ բաց յիւրմէն։ Արդի օտարախորհ բնութեան, քանզի և ոչ որպէս արժանն է ճանաչէ զարարիչն. բարեկամ անհաւատարիմ՝ քանզի և իբրև զանձն ճանաչէ զայլս, տանուտէր անգութ անագորոյն, քանզի և օրինադրութիւն՝ միշտ զբռնութիւնն համարի։

Այլ արդ աղէ՞ ոք երբէք մարթասցի վստահ լինել 'ի նա։ Ընդէրկնչի ինչ Աստուծոյ, չյարդէ ինչ զմարդիկ, դեղեւեալ է 'ի յոյս ակնկալութեան յետ աստի կենաց. առաքինութիւն և մեղութիւն թուի նմա իբրև կանխակալ խէթ մտաց անդատին 'ի մանկութենէ, և ծնունդ խակամիտ դիւրահաւատութեան ժողովրդոց։

Այլ արդ իրաւապէս ոք 'ի դէմն հարցէ թերահաւատ փքացելոյն՝ այսպէս. Ո՞չ դու ինքնին, այր դու, զթերահաւատութիւն քո զայդ 'ի բան կրօնի՝ արդասիս ասես քաջուշիմութեան մտաց քոց. բայց դու արի մինչև յակն աղբերդ և զննեա վայր մի, ո՞վ զքեզ ած ձրգեաց 'ի թերահաւատութիւնդ յայդ։ Ո՞չ ահա ապականութիւն սրտիդ։ Հաստատեալ ինչ էր քո արդեօք 'ի միտս լինել ամբարիշտ, եթէ արդեօք յաջողեալ էր քեզ առնուլ զկրօնն զուգորդել 'ի մի ընդ սանձարձակ կենացդ։ Եկար դու առաջին երկմտիլ ընդ վարդապետութիւն մի հաւատոյ, քանզի բուռն առնէր կրիցդ. և ասա 'ի սպառ ժխտեցեր զայն իբրև սուտ, քանզի անհնարին տանջէր զքեզ։ Այլ 'ի խնդիր ելեր հաւատարմացուցանել քեզ զայն ինչ, որոյ ճշմարտութիւնն շահ էր քեզ մեծապէս. այս է՝ անստուգութի հանդերձելոցն, և թէ հակամիտութիւնք որ մեզ համածինք են՝ մեղանչական լինել ոչ ունին։ Այլպաքէն հեշտեաւ իսկ հաւատս ընծայեսցէ ոք այնմ՝ որում ցանկայ. Ողորմն ինքնին երկրպագութիւն մատուցանէր աստուածոց կանանցն. առ ինչ. 'ի յագուրդ անժուժկալութեանն։ Այլ արդ աղէ ասա, եթէ գլխովին անբաժ 'ի կրից լեալ էր մարդկան, կամ թէ կրօնն ինքնին ձեռն հաւանութեան տայր կրիցն, երբէք յաշխարհի երևէին արդեօք թերահաւատք։

Այդ եթէ փառաւոր է հաւատն ըստ խոստմանցն

digitised by A.R.A.R.@

հանդերձելոց, և ըստ ասոյ կենացս միանգամայն, փառաւոր է երրորդ անգամ, որպէս ասացի, և յօրինակէ անսի հոյակապիցն սրանց, որոց զնմանողութիւնն առաջի առնեն հաւատք։ Յիշեցէք, ասէին երբեմն Ի բրայեցիք որդւոց իւրեանց, յիշեցէք զԱբրահամ, և զԻսահակ, և զՅակոբ։ Ասէ դուք յուշ միանգամ ածէք, զրէր և աստուածայինն Պաւղոս առ հաւատացեալս, յուշ ածէք զարս սուրբս հոյակապս՝ որ յառաջ եղեն քան զձեզ, և որք փորձեցան և ընտիրք գտան վկայութեամբ հաւատոյն. զրէր և 'ի թիւ ևս արկանէր 'ի դարուց 'ի դարս 'ի նշանաւոր յայն գլուխ առ Ի բրայեցիս թղթոյն, զրէր և կնքէր զանուանս իւրաքանչիւր նոցա, և զնահատակութիւն հաւատոյն, և զարդասիս հրաշապայծառ գործոց պատմութեան նոցա։

Իսկ ահաւասիկ ձեզ, սիրելիք, մեծապանծ ևս առաւելութի դարուց քրիստոսական հաւատոյն, եթէ յուշ միանգամ ածցին ձեզ առ հասարակ արք անուանիք և սքանչելիք, որ 'ի դարս իւրաքանչիւր ընդ լծով խոնարհեցան աւետարանին. թագաւորք մեծանձինք, աշխարհակալք բարեկրօնք, հովիւք և հովուապետք ազգաց պատկառելիք, իմաստասէրք քաջուշիմք և բազմագէտք, իմաստունք համբաւատենչք, արք աւագ առ իւրեանց ժամանակօքն գերահռչակք, մարտիրոսք արիք և անվանելիք, կուսանք մաքրակրօնք գերաշխարհիկք, անապատաւորք ճգնասունք անմարմնացեալք 'ի մարմնի. առաքինեաց բազմահոյլք յամենայն ազգ կրօնից և կարգաց առաքինութեան։

Այս և իմաստասիրութիւնն ինքնին քարոզէր շքով զիմաստութիւն իմն բազմահանդէս, այլ իմաստունն նորա չերևէր ուրեք 'ի միջի։ Իսկ աստանօր քանիօն իցեն իմաստնոցն Աստուծոյ հոյլք, որպիսի աւանդութիւն հաստատիմն յաւերժացեալ անդստին յարենէն Աբելի մինչև առ մեզ։

Այս արդ հարցանեմ, որ ամօթ իցէ կոխել զհետս շաւղաց այնչափ իմն հնաշխարհիկ որերոյն։ Զիր դու 'ի մի նժար զամենայն զհոյակապն յաշխարհի երևեալս 'ի կրօնէ 'ի դարս իւրաքանչիւր. և 'ի միւս նժար որչափ ինչ 'ի սանձարձակ և 'ի թերահաւատ կարգաց 'ի վեր երևեցան յաշխարհի անձինք տարտամեալք և յու-

digitised by A.R.A.R.@

սահատք։ Թուեսցի ինչ քեզ առաւել փառաւոր դասել զքեզ 'ի կարգի վերջնոցդ։ Ուրաջնորդ քեզ արդեօք ունել զնոկ մի մարդկան, զոյց և զանուանն չըմարթիմք յիշել առանց արհաւրաց. եթէ արդեօք զՀրաշալիսն, զաբրահամեանսն, զյովսեփեանսն, ըզմովսիսեանսն, զդաւթեանսն, զառաքելական զաւագուրեարն, առ հասարակ զարդարոց զդասս։ Ազէ դու համարձակեաց 'ի զուգակշռութիւնդ։ Բաբէ, զոչէր երբեմն յայլ ինչ դէպս աստուածայինն Հերոնիմոս. "Եթէ արդարև սիալեալ համարին զիս, թոյլ տուք ինձ աղաչեմ, թոյլ տուք սիսալել ինձ ընդ այսպիսեաց աւագ որերոց ,,։

Եւ արդ եթէ բանաւոր են հաւատք, փառաւոր են հաւատք, միթէ իցէն և հարկաւոր. ժուժկալել աղաչեմ և 'ի սոյն դարձեալ առ վայր մի ունկնդրութիւն ուշով շնորհել ինձ։

ՄԱՄՆ Գ.

Ի կնիքս հաստատութեան հաւատոցն, կնիք հարկաւորութեան նորա գլխովին ասի 'ի բերան առնել զթերահաւատսն և զանձարձակսն։ Վանզի այլք 'ի պատճառաց և 'ի հաւատեաց ճշմարտութեան հաւատոցն, զի այսպէս ասացից, Էրբու օտարք և արտաքինք են մարդոյ. իսկ այս կնիք անդատին 'ի բնէն անջնջելի տըպաւորեալ է 'ի լոյս բանին նորա։

Եւ արդ ասեմ, եթէ անհրաժեշտ հարկաւոր էն մարդոյ հաւատք 'ի խաւարային ճանապարհի աստի կենաց։ Վանզի առաջին՝ տկար է մարդկային բանս, պարտ է ուրեմն զօրավիգն տալ նմա։ Երկրորդ՝ քանզի ապականեալ ևս է մարդկային բանս, պարտ է ապաքինել զնա։ Երրորդ՝ քանզի յեղյեղուկ է մարդկային բանն, պարտ է ուրեմն հաստատիմն գործել զնա։ Զդ էն հաւատք միակ զօրավիգն, միակ դեղ դարմանոյ, միակ սանձ անսասանելի։ Ուրաջին՝ տկար ասեմ զբանն և օգնականութեան կարօտ։ Եւ զիարդ ոչ, սիրելիք.

digitised by A.R.A.R.@

քանզի բաբէ , ոչ և զմեզ ինքեանս անդամ ճանաչէմք. Բէր և որ ինչ արտաքոյ մեր ։ Ոչ գիտեմք զիարդ բնաւ հաստատեալ կերպացաք , զիարդ և հետ զՀետ այնպէս բարդաւաճեալ մարմինս կազմ գտաւ և կենդանակ. ոչք իցեն անհամար գործարանք նորա , որ այն իցէ աստուածայինն արուեստ խնամատութեան , որ 'ի շարժումն ածեալ պահէ ողջոյն զմեքենայն ։ Ոչ գիտեմ, ասէր երբեմն դիւցազնուհին այն մայր մակաբեանցն առ մանկունսն , զինչ օրինակ եկաց ծնանդեան ձերոյ յիս . շունչ և հոգի երբ ետու ես ձեզ , և զանդամոց ձերոց կազմած աքանչելի որ ձեռն աներևոյթ եղ այնպէս յիւրաքանչիւր պատշաճեալ կարգի . " Ոչ գիտեմ որպէս բնաւ դուք յարգանդի երևեցարուք . և ոչ ես ինչ զոգիսդ կամ զկեանսդ ձեր ընտրեցի , և ոչ զկերպարանսդ ձեր զիւրաքանչիւր ես նկարեցի , և ոչ զՀասակսդ ձեր ծնեալ և մեծացեալ. այսուհետև ես իմ ինչ ոչ համարեցայց , այլ որ աշխարհի արարիչն է , որ ստեղծ զծնունդս մարդկան .. ։ Մի այս մեր մարմին խորհուրդ անհաս է մեզ սիրելիք . յորում մարդկային բանն տաղնապի 'ի խորսն և ելի աղագս երբէք չգտանէ՝ խորամուխ լինել յամենայն գաղտնիս նորա . միայն որ հաստեացն , նա միայն գիտէ զբուն ։

Այսև այն շունչ աստուածութեանն՝ որ կենագործէ զմեզ , այն մանն զօրութեան՝ որ 'ի մեզ բաւական գործէ զմեզ 'ի ճանաչել և 'ի սիրել՝ չէ ինչ նուազ անծանօթ առ 'ի մէնջ ։ Ոչ գիտեմք բնաւ զիարդ 'ի վեր երևին ցանկութիւնք նորա , երկիւղ նորա , յոյս նորա . զիարդ ծնանի զգաղափարս իւր , զիարդ և զերևակայութիւնս իւր ։ Ներևեցաւ ոք ցայս վայր քաջիկ խելամուտ պատմել մեզ ճշգրիտ , զիարդ այս որ 'ի մեզ էակ հոգեղէն՝ այնչափ այլաբուն 'ի նիւթոյ՝ մարթացաւ այնպէս ինն միաւորիլ 'ի մեզ ընդ նիւթոյ մարմնոյս այնչափ անլոյծ կապանօք , զի և երկոցուն նոցա կազմել մի միայն բոլոր , և չարեաց և բարեաց նոցա իւրաքանչիւր միամտական լինել միմեանց ։

Մեզ ինքնին մեք ուրեմն եմք խորհուրդ անհաս , որպէս գեղեցիկս ասէր աստուածայինն Գէոատինոս ։ Այսև զայն մեր զվայրապար հետաքրքրութիւն՝ որ խնդրէ գիտել զամենայն , բաբէ և ոչ իսկ զայս գիտեմք

digitised by A.R.A.R.@

ինչ ասել, զինչ այն իցէ, և զիարդ 'ի մեզ ծնանիցի այն և կերպասցի։

Իսկ ապա արտաքոյ մեր չգտանեմք մեք այլ ինչ, բայց առէղծուածս իմն անիմանալիս։ Կեանքն 'ի վերայ երկրի իբրև օտարականք ոմանք, դեգերեալք 'ի զգալիս՝ որ և բնաւ իսկ անծանօթք էն առ 'ի մէնջ։ Զատեան իմն փակեալ առաջի կայ մարդոյ բնութիւնս համօրէն. և արարչագործն ինքնին առ 'ի նշաւակել զմարդկան հպարտութիւն՝ հաճեցաւ խառարաւ թանձու քօղաձիգ լինել 'ի վերայ անդնդոցս այսոցիկ։

Զի դու ո՛վ մարդ ամբարձ զաչս քո 'ի վեր. հայեաց 'ի մեծամեծ մարմինս լուսաւորս, որ կախեալ կան 'ի վերոյ գլխոյդ, և գնան 'ի լիւղ՝ զի այսպէս ասացից՝ յանսահման վայրսն, վայրք անբաւք՝ որ խելաց ծփումն առնեն։ Ո՞ կերպացոյց զակն զայն արևուն զաքանչելին, և ո՞ զանբաւութիւն բուլից աստեղացն, որպէս հրաշաբաւնեցաւ առ Յովք. ո՞ յանուանէ կոչէ զնոսա։ Խելամուտ լեր, թէ կարես, բնութեան դոցա, պիտոյից դոցա, հանդերձանացն, կայանիցն, տարադիմութեանն, երևմանցն, հաւասարութեանն, անհաւասարութեան, շարժմանցն։

Պարքէն պանծալի է մեր դարս, որ խելամտութիւնս գեղեցիկս 'ի վեր եհան վասն նոցա և երևոյթս. այլ զինչ, լաւագոյնս արդեօք քան զանցելոց դարուցն ինչ ինչ գուշակեաց զնոցանէ. սակայն և զոր զարդիս գիտեմք զնոցանէ, քանիսն արդեօք իցեն առ համեմատութեամբ բազմագունիցն, որ տակաւին ծածկեալ կան առ 'ի մէնջ։

Լա՜ ապա յերկնից 'ի յերկիր էջ դու միանգամ՝, և ասա ինձ՝ եթէ զիտիցես՝ ո՞ զհողմունսն ամիսոփեալ ունիցի 'ի շտեմարանսն ուր գանձեալ կան նոքա, ո՞ զերասանն 'ի ձեռին կալցի զշանթիս փայլատականց և զամպրոպաց և զմրրկաց. ո՞ եդ օրէնս ամեհի ծովուն, ո՞ կարգեաց սահման ալէծուփ կոհակաց. և ուստի իցէ այնչափ սքանչելի կարգաւորութիւն շարժմանց ծովուն։

Զ՞առեա՛ ինձ զարգասիս հրաշալիս զտնկոցն, զհանքացն, զտարերայն։ Զ՞ատիր 'ի քննութիւն, զիարդ կղկղեալ զտեսցի ոսկի յարգանդս հողոյ. ո՞ր իցէ աբուեստ դիմակ դիմակ հրաշից կերպաւորութեան զեռ-

digitised by A.R.A.R.@

նոցն անբաւից, սողնոցն, ակատիցն, միջատացն, ժրժ-
մակացն. տուր ինձ համար զբաղմնագունակ զաղդեցու-
թեանց բնութեան բազմահոյլ կենդանեացն. հայեաց
ընդ բնութիւնս ամենայն, առ հասարակ յամենայն 'ի
վայրս, զիարդ յանդիման քեզ ընծայէ բնութիւնն ոչ
այլ, բայց քննութիւնս անքննիս, առեղծուածս ան-
թարգմանելիս։

Զգիտես ինչ դու ճշգրիտ ով մարդ 'ի զգալեաց աս-
տի, զոր տեսանես և յորոց շուրջ պատեալ կաս, և կա-
միցիս ապա յառիլ յստակ ակնեալ զիորհուրդս խո-
ւրինս, զանտեսս, զյաւիտենականս, զհաւատոցն քոց։
Ինքնին բնութիւնն քաջ իսկ խորհուրդ խորին է վասն
քո, և կամիցիս դու թերևս կրօն մի, որ անբաժ իցէ
'ի խորհրդոց։ Որ անբաւականդ ես 'ի գիտել զգաղա-
նիս մարդոյ, և ճգնիցիս ճանաչել զգաղանիս Աստուծոյ։
Դու ինքնին քեզ չես խելամուտ, և կամիցիս խորա-
մուխս ըմբռնել զգեր 'ի վերոյն քան զքեզ։ Տիեզերք ա-
մենայն որ թողան քեզ Աստուծոյ 'ի խոցդ 'ի խնդիր
և 'ի ճարակ հետաքրքրութեան քո, են իսկ անդունդք
անյատակք վասն քո. և կամիցիս դու զի խորհուրդք
հաւատոցդ, զոր քեզն ընծայէ 'ի հանդէս հլութեան
և մեծարանաց քոց, չունիցին ինչ գեր 'ի վերոյ քան
զհասումն մտաց քոց։ Խաբէ խելաբախս ցնորիցդ։

Լութ արդեօք 'ի միջոյ բարձեալ զհաւատս, յստակ
տեսանելիս դու զամենայնն, մարթելիս թերևս արտաք-
նայարդար ինն փաստաբանութեամբ՝ յերկբայս գրել
զիսրս նորա զանյայտս. բայց քանզի և արտաքոյ կրօնի՝
ամենայնն աղօտացեալ է քեզ և 'ի խաւարի կայ.
"Աստուծոյ գաղանիքն պարտին ուրեմն, որպէս ինքեաց
աստուածիմաստն Աւգոստինոս, քան հակառակամարտս
և անհաւանս, պարտին առաւել հլուս և մտադիրս և
ակնածուս գործել զմարդիկ"։ Աչսափ է տկարու-
թիւն մարդկային բանի։

Լաւ արդ՝ երկրորդ անգամ՝ որչափ ինչ տկարութիւնս
այս, այնչափ և ապականութիւն մարդկային բնութեան
զանխուսափելին հարկաւորութիւն հաւատոց 'ի նեբբս
ընծայէ մարդոյ։

Ո՞ւստ դիք աղաչեմ՝ որ այլ ինչ կայցէ յեւիցս այնչափ
համաբանական մարդոյ, որպէս ճանաչել զԱստուած

digitised by A.R.A.R.@

իբրև արարիչ գոյութեան իւրոյ, իբրև պատճառ երջանկութեան իւրոյ, և իբրու վախճան իւր և սկիզբն յամենայնի։ Ունայնել դաւանել զկարողութիւն նորա, զիմաստութիւնն, զբարութիւնն, և միանգամայն զամենայն հանդէս զաստուածութեան, զորոյ զտիպս կենդանատիպս նկարեաց 'ի գործս ձեռակերտաց իւրոց։

Զդ այս իմաստք ոչ ահա համածնունդք և տնկակիցք էին բնութեանս մերոյ. և սակայն յածեաց դու միանգամ մտօք քովք ընդ դարս խաւարինս աշխարհամած անգիտութեան նորակրօն պաշտամանցն՝ յառաջքան զաւետարանին քարոզել, և տեսցես և յապուշ կրթեսցիս, եթէ յոր սահման նուաստութեան առեալ՝ խոնարհեցոյց մարդ զարարիչ իւր, և ուր նմանեցոյց զնա. "Ուր նմանեցուցէք զիս մոլորեալքդ"։ Ասեկայ ինչ յաշխարհի այնչափ ումպէտ և անարդ յէիցս, որում իբրև Աստուծոյ իւրոյ պաշտօն չտարաւ ամբարշտութիւն և անգիտութիւն մարդոյ. նաև մարդն ինքնին եկաց աստուածութիւն առաւել ազնուական՝ յերկրպագութիւն մարդոյ։

Այս եթէ յայսպիսի յանաստուած աստուածածանութութենէն անցցես դու 'ի բարոյական անդր մարդոյ, բա՛ր բնաւ իսկ եղծեալս և ապականեալս գտցես միանգամայն զամենայն սկզբունս և զիմաստս զբնական իրաւանցն և զարդարութեան։ Ասանզի մարդ ոչ եւս այնուհետև բարձեալ բերէր զրեալ 'ի միտս իւր և 'ի սրտի զարձանագրութիւն զօրինացն՝ զոր ինքնին բնութիւնն տպաւորեալ էր 'ի մեզ։

Այս եթէ որ առաւել հանձարեղք համարեալ էին յիմաստասերս հեթանոսաց, նոքա այնչափ ինչ յետնեցան և եղծան 'ի բարոյականին իւրեանց, զոր ապականութիւն կարծիցես դու ունել յայնժամ խուժանին նոցա 'ի վարս իւրեանց։ Ասանզի և կէսք 'ի նոցանէ բնաւ իսկ յետսամիտք՝ իբրև զերագոյն բարի մարդոյ բանաւորի ուսուցին զհեշտութիւնն ինքնին գլխովին։ Ասայց և որ զինչ և իցէ կարծիք աղանդապետին ուսմանս այսորիկ, սակայն և աշակերտք նորա զհեշտախտութիւնն միայն կալան իւրեանց յերջանկութիւն՝ գետնաքարշք իբրու զանասուն կենդանիս։

Օ ինչ եւս. Հռովմ ինքնին և Ասթէնք իմաստու-

digitised by A.R.A.R.@

թեան դայեակ անուանեալ, և Կրնթոս նոցուն նա-
խանձաւոր, անհնարին ապականութեանցն վկայք են.
յորս պարտ էր այնուհետև 'ի նմին իսկ 'ի մարդումն
խնդրել զմարդ։ Վասնզի նոքին իսկ պիղծք և առաւել
պիղծք 'ի մեղութիւնս ախտից անդանաւոր սրբազնացան.
մեհեանք և բազինք կանգնեցան մեղութեանց, պաշտ-
ութեան, աղգապղծութեան, անապօրինութեան,
ուխտադրժութեան. և այլ ևս անհնարին յանցանք 'ի
շուք ամբարձան աստուածութեան. նա ինքն պաշտօն
կրօնին դարձաւ էղև յապականութիւն հասարակաց և
յեղծումն, և աստուածութիւնքն այն պիղծք պաշտօն
ընկալան պղծագոյն ևս անիրաւութեամբք։

Այլ զոր աստուածայինն Ճառեաց առաքեալ զան-
լուրն զնոցանէ, ոչ զխուժանէն միայն նոցա ազգէ,
այլ և զիմաստնոց նոցա և զիմաստասիրացն. "Ալբ
ծանեան զԱստուած, և ոչ իբրև զԱստուած փառաւո-
րեցին. այլ նանրացան 'ի խորհուրդս իւրեանց և խա-
ւարեցան անմտութեամբ սիրտք նոցա. վասն այսորիկ մատ-
նեաց զնոսա Աստուած 'ի ցանկութիւն սրտից նոցա 'ի
պղծութիւն, և մատնեաց զնոսա 'ի կարիս անարգու-
թեան գործել զանարժանս՝ ալեալս ամենայն անիրա-
ւութեամբ, պոռնկութեամբ ..., այլովքն հանդերձ։

Այս կարի իսկ քաջ, ոչ տեր. քանզի զմարդկայինն
հրահանգեցեր սուաւ զիմաստութիւն, մանաւանդ է-
թէ զամբարտաւանութիւն, եթէ 'ի քոց ձեռաց եբեալ
մարդ 'ի խաւար մտաց իւրոց՝ առանց քո լուսոյդ ինքնին
վկաց 'ի վիհս խարդաւանեցի ամենայն անիրաւու-
թեանց։

Այսարդ այսչափ ապականութեան մարդոյ քանի բժըշ-
կութեան հաւատոյ պէտք իցեն անհրաժեշտ հարկաւ։
Այսպէս եթէ երկրորդ անգամ և զյեղյեղուկ փոփոխութի-
մարդկային բանի վայր մի ընդ միտ ածես, քանիցն հաս-
տատութեան անվանելի հաւատոյն նման պէտք իցեն
նովին հարկաւ։

Այս զի 'ի հանառօտն զբոլորն բովանդակեցից, հայ-
եաց դու ինձ միանգամ, քանի խնդիրք և պայքարք
անսպառելիք անդտին 'ի սկզբանէ, քանի խնատք և
կարծիք այլադիմակք ոչ պառակտեցին երբեմն զվար-
ժարանս կրթանաց իմաստասիրութեանն։ Այս մի ում

digitised by A.R.A.R.@

պէտս ինչ և դուշնաքէայս կարծիցես զպայքարան զայն։ Ինդիրք էին այնորիկ մեծամեծք յոյժ և պայքարք կարևորք յառաջին կարգի. այս է՝ յաղագս բնութեանն Աստուծոյ, յաղագս գոյութեանն Աստուծոյ, յաղագս անմահութեան հոգւոյն, և թէ որ իցէ ճշմարիտն և յաւիտենականն երջանկութիւն։

Կէսք յերկբայս եղեն զամենայնէն, կէսք համարեցան գիտել զամենայն. կէսք անդոյ ասացին զԱստուած, և կէսք դարձեալ ըստ քմաց իւրեանց եղին զոմն Աստուած, այս է՝ անգործ, դատարկ, անխնամակալու էիցս. կամ թէ՝ ինքն ևս ճակատագրին ներքևեալ և նախասահմանութեան ինչ օրինաց. իսկ և կէսք հոգի մեծամարմին աշխարհիս այսորիկ ասացին զԱստուած։ Եւ զինչ ևս. թողցուք անդր 'ի բաց զյիմարութեան բարբանջմունս. որչափ վարժարանք կացին, այնչափ և կարծիք յաղագս մեծի և տիրական ինդրոյս։

Իսկ և յաղագս անմահութեան հոգւոյն, և բնութեան նորա որչափ դարք հոլովեցան՝ այնչափ և խեղաթիւր իմաստք բանդագուշեցան։ Կէսք 'ի հիւլէից բաղկացեալ ասացին զնա, կէսք նուրբ և անօսր հուր եղին զնա. կէսք օդ ինն լոյծ, իսկ և կէսք 'ի վարժարանաց մասն և նշխար աստուածութեանն ասացին զնա. կէսք չհամարեցան մահկանացու ընդ մարմնոյ լինել նմա, և կէսք կեալ նմա քարոզէին յառաջ քան զմարմինն, և կէսք դարձեալ հոգեփոխութիւն դնէին 'ի մարմնոյ 'ի մարմին, 'ի մարդոյ 'ի ձի, այլովքն հանդերձ։

Իսկ զճշմարիտ երջանկութիւն զմարդոյ կէսք հաստատեցին 'ի զգայութեան, և բազմագոյնք՝ յիմաստութեան. այլք 'ի փառս և 'ի վարկն, բազումք 'ի պարապորդութեան և յանցաւութեան։

Այլ որ առաւել դժուարաբերելի էր 'ի կիրս, զի այս ինդիրքս գոյութեանն Աստուծոյ և բնութեանն Աստուծոյ և անմահութեան հոգւոյն, և վախճանի և երջանկութեան մարդոյ, ինդիրքս առաջինք և տիրականք ըստ յաւիտենական վիճակին մարդոյ՝ կամ 'ի թշուառութիւն անսպառ կամ յերանութիւն անսպառ, էին առ նոսա իմաստք անքնին և առեղծուածք իմն անթարգմանելիք, ոչ յայլ ինչ պէտս յուզեալք յերկոցուն կողմանց, բայց 'ի ձարակ պարապորդութեան վար-

digitised by A.R.A.R.@

ժառանգն, և փառասիրութեան խնամակալն՝ թանձրամօրուաքն յօրացելոյ և պատմուճանօքն պարծելոյ։ Բ.յս պատկեր է յեղյեղուկ և բազմայեղանակ մնաց նախ քան զլոյս աւետարանին։

Բ.պա եթէ անցեալ զնոքօք՝ մնցուք մեք յառաջին դարս քրիստոնէից, ո՞ բաւական իցէ պատմութեամբ 'ի ներքս բերել զանբանութիւն աղանդոցն. զգարշելեացն Գնոստիկեանց, զիսելայեղիցն Ա աղենոսիեանց, զբանդագուշելոցն Մոնտանեանց, զՀակասաբանիցն Մանիքեցւոց։ Այլ յետ այնորիկ ապա դարուց 'ի դարս յաճեաց դու մինչև 'ի մեր մնտաւոր դարս բիւրաղանդ նորաղանդիցն. ոմ, քանիսն իցեն որոմունքն, քանի՞ ընկերշակութիւնք առանձինն, և քանի՞ դիմակք զանազանեալք 'ի նոսա այսօր 'ի նիւթ հաւատոյ։ Բ.յր այր իւրաքանչիւր 'ի նոսա է անձին իւրոյ դատաւոր, անձին իւրոյ օրէնք. իսկ կրօնք պետական 'ի նոսա, զի այսպէս ասացից, է դաւանել և ոչ մի ինչ կրօն։

Բ՞աբէ հաւատք, բա՞բէ պարզև Բ.ստուծոյ, ոմ բոց աստուածային՝ քանի՞ հարկ և պէտք իցեն մարդոյ քոյին լուսաւորութեանդ։ Ա՛վ կանան անոտերիւր 'ի յերկնից ինքեալ յաւանդ եկեղեցւոյ Քրիստոսի. միշտ նոյն և մի յամենայն 'ի դարս, անփոփոխելի 'ի տեղեաց, անսասանելի 'ի ժամանակաց, անվնասելի յաղգաց, անդրժելի 'ի շահախնդրութեանց. ոչչափ ուրեմն իցէ կարևորութիւն քո 'ի սանձ յարափոփոխ յեղյեղուկ շարժմանց մարդկային ոգւոյ։ Ա՛վ սիւն հրեղէն, անհրաժեշտ առաջնորդ բանակին Բ.ստուծոյ ընդ վտանգաւոր անապատն, ընդ ժայռն, ընդ փորձութիւնսն, ընդ խաւարին և անծանօթ ճանապարհս կենացս այսորիկ։

Իսկ արդ 'ի վերջէ, եղբարք իմ, ո՞ր հրահանգք և զինչ արգասիք իցեն մեզ քաղել 'ի քարոզէս։

Բ.սէք դուք ինձ զօրհանապազ, եթէ ունիք հաւատս. ցուցէք ինձ ուրեմն՝ որպէս ասաց առաքեալն, ցուցէք ինձ զձեր հաւատս 'ի գործոց ձերոց։ Բանդի զինչ շահ իցէ 'ի հաւատալոյն, եթէ գնացք ձեր և քաղաքավարութիւն վարուց՝ յանդիմանեսցեն զստութիւն հաւատոյն ձերոյ։

Բ.ւետարանն ինքնին ոչ այնչափ է կրօն մնաց, որչափ սրտի, և ինքնին հաւատք՝ որ քրիստոնեայս գործէ,

digitised by A.R.A.R.@

չէ լոկ հպատակութիւն լուսոյ բանին, քաջ իսկ է նա բարեպաշտօն ինն և ջերմեռանդն հլութիւն կամաց հո գւոյն, և հանապազօրեայ իրաւ նմանողութեան Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ, և ժիրաժիր և անխոնջ պարապումն յեղծանել տապալել զամենայն ընդդիմանարտս կենաց հաւատոյն։

Զոյ անհաւատութիւն մի սրտի՝ ոչ ինչ նուազ վտանգաւոր 'ի փրկութիւն քան զանհաւատութիւն մտաց։ Արդ որ յամառեալ կամակորի ոչ հաւատալ կրօնին յետ ամենայն հաւաստեացն և փաստից, հրեշ սոսկալի է նա. այլ քրիստոնեայ որ հաւատայ և յետ այնորիկ կեայ իբրև անհաւատ, յետինն է 'ի մորոսաց և անմտութեան նորա չիք սահման։ Զ՝ինն դատապարտի ի բրև զյուսահատ, միւսն կորնչի իբրև յոյլ և սանձարձակ, որ այնպէս թոյլ տայ անձին առնուլ տատանիլ 'ի ծուխածուփ ալեացն, ոչինչ հոգացեալ զնաւահանգստի փրկութեանն։

Հապա սիրելիք, զձեր հաւատս ստուգեցէք 'ի գործոց բարեաց. և եթէ ընդ լոկ յիշատակ ամբարիշտ և անհաւատ ոգւոյն քստմնիք մեծապէս, զնոյն սոսկումն սոսկացէք դուք և վասն անձանց ձերոց։ Վասնզի հաւատք ինքնին զնոյն ուսուցանեն, եթէ բաժին չարի քրիստոնէի հաւատացելոյ՝ չէ ինչ ընդհատ առ 'ի նոր բայոյն. զի և ինքն դատեսցի հաւասար անհաւատին։ Զ՝վ քանի ահագին է վճիռն. "Եւ կորեսցէ, ասէ, ընդ մէջ, և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ.,,։

Եւ արդ կեցէք եղբարք պատկերակից 'ի գործս ձերոյն հաւատոց, զի այն իսկ են հաւատք արդարոց. և յաւիտենական աւետիքն խոստացեալ են միայն այնպիսի հաւատոց։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՀԱՒԱՏՔ ՄԵՌԵԱԼ.

"Հաւատք առանց գործոց մեռեալ են,, · Յակ · բ · 26 :

Նախադասութիւն ահագին էր երբեմն զի որոտաց տէրն մեծասաստ սպառնալեօք · "Եթէ ասեմ ձեզ, զի բարձցի 'ի ձէնջ արքայութիւնն Աստուծոյ, և տացի ազգի որ առնիցէ զպտուղս նորա,, : Նախադասութիւն բերկրական, միանգամայն և լի տրտմականօք · քանզի զանարգութիւնն ազգէր զԱրայելն, և զկոչումն հեթանոսաց ազգին · յորում և աքանչելապէս փայլէ և արդարութիւնն Աստուծոյ վրէժխնդիր, և ողորմութիւնն աստուածային վերանորոգիչ : "Ժողովուրդ ընտրեալ, ասէր մեծն Մովսէսեան, ժողովուրդ ընտրեալ և Աստուծոյ փարելի, 'ի նմին իսկ Աստուծոյ անարգեալ մերժի · այս արդարութիւնն է անաչառ · իսկ լոյս մեծասքանչ աւետարանին փայլատակէ՝ որոց նստէին 'ի ստուերս մահու · այս ողորմութիւնն է մեծ,, :

Այլ եթէ չիք իրաւամբք պարծիլ հեթանոսաց 'ի կոչումն իւրեանց, չիք և վայրիկ մի իրաւացի գանգատել հրեից յանարգութեան իւրեանց : Զանգի առաջնոյն տուան հաւատք, մինչ չև նոցա գործ ինչ ցուցեալ արժանի հաւատոց · և չբարձան 'ի վերջնոյն հաւատք, մինչ չև նոցա երևեալ անարժանք հաւատոց : Անանանդ եթէ պարգևեցան առաջնոյն հաւատք, զի գործս ցուցցեն զսրբութեան և զփրկութեան · և 'ի վերջնոյն

digitised by A.R.A.R.@

վերացան հաւատք, զի գործս գործէին զկորստեան և զմեղաց։

Այս տեսչութիւն Աստուծոյ յայտնեցաւ անդատին և յառաջին հաստատութենէ քրիստոսական կրօնիցս, և ապա սովիմբ վարեցաւ կարգառութեամբ յընթացս նորա։ Ռանզի յառաքելական դարէ անտի առեալ սկիզբն, և դարուց 'ի դարս իջանելով մինչև յաւուրս մեր, դէպս բազմապատիկս տարբերեալս տեսանեմք զհաւատոյն։ Օ 'ի բարձան հաւատք 'ի ժողովրդոց, որ յառաջն էին հաւատացեալք. և ծաւալեցաւ յայլս, որ յառաջն էին անհաւատք։

Այս յայտմ ամենայնի անյեղլի հաստատութեամբ զայն ինչ գտանեմք, եղբարք, զի անդուստ փախեան սրացան հաւատք, ուստի 'ի բաց մերժեաց զնա ամբարշտութիւնն. և անդուստ միայն մեկներ հեռանայր ամբարշտութիւնն, ուր 'ի ներքս եկեալ մնանէին հաւատքն։

Ռաղաքք բաղումք և գաւառք և արքայութիւնք յարևելս և յարևմուտս, որ յառաջն էին անհաւատք, դարձան եղեն ապա հաւատացեալք ուղղադաւանք։ Դարձեալ և քաղաքք բազումք և գաւառք և արքայութիւնք յարևմուտս՝ երբեմն հաւատացեալք ուղղադաւանք, դարձան եղեն 'ի վերջինսն չարափառք և թուլահաւատք։ Վերջինքդ՝ եղեն անհաւատք և չարափառք, քանզի էին իսկ ամբարիշտք. առաջինքդ՝ դադարեցան 'ի լինելոյ ամբարիշտք, յորժամ եղեն հաւատացեալք։

Այս արդ որ ընդ համաշխարհս դէպք ժողովրդոց, նոյն պատահէ և առանձին մարդոյ իւրաքանչիւր։ Օ 'ի զորօրինակ հաւատք կենդանի մինչև 'ի ծայր սրբութեան առեալ վերացուցին զբազումս, ասպէս և սանձարձակ վարք զբազումս գահավէժ արկին մինչև 'ի խորս անհաւատութեան։ Յորում կենդանի էն հաւատք, հարկ է զի թագաւորեսցէ անդ սրբութիւն, յորում թագաւորեն սանձարձակ կեանք, հարկ է զի անդ մեռցին հաւատք. որպէս ասաց, "Հաւատք առանց գործոց մեռեալ էն"։

Այս կրկնակի ճշմարտութիւն մեծ, զոր նիւթ խմոյ քարոզիս սահմանեցի այսօր, թերևս չիցէ ինչ անճահ

'ի լուսաբանել, նա մանաւանդ քաջադէպ որպէս կարծեմ, տեսարք, հովացեալ ժամանակիս՝ յորում կեսամբ. և որում 'ի Ճահ յոյժ պատահեսցէ արդեօք զոր ինչ եղբեմն մեծն Ցերտուղիանոս ասէր վասն իւրոյ ժամանակին. "Դէպք և հանգամանք ժամանակացս, ասէ, արդէն խրատեն զմեզ, զի սկսցուք մեք քարոզել զհաւատս. ոյց. նոցուն իսկ հաւատացելոց.,, ։

Երդ տեսէք ինձ միանգամ, զիարդ տակաւ և անսիալ կարգառութեամբ կրկին այս Ճշմարտութիւնք յերևան գան օրինակ զայս։ Երաջին՝ 'ի սանձարձակ վարուցն հաւատք սկսանին տկարանալ, իսկ 'ի տկարանալ հաւատոյն՝ ուժ առեալ անձէ սանձարձակութիւն վարուց։ Երկրորդ անգամ՝ յաՃել սանձարձակութեանն, հաւատքն արդէն տկարացեալ 'ի սպառ այնուհետև կորընչի. այս էն հաւատք մեռեալ։

Ո՛վ քանի կարևոր, նաև փրկաւէտ յոյժ իցեն խորհրդածութիւնքս։ Ունկնդրութիւն ուշադիր՝ ձերում խնամատութեան արժանի և բարեպաշտութեան՝ խընդրեմ ես 'ի ձէնջ այսօր, տեսարք իմ, պտղաբեր լինել յաւիտենիցն կենաց միջնորդաւ հաւատոյն, առանց որոյ չիք հասանել այնմ։

ՄԱՄՆ Ա.

Երբ արդ ասեմ եթէ 'ի սանձարձակութենէ վարուց սկսանին տկարանալ հաւատք։ Ոչ որ այն իցեն սանձարձակ վարք։ Երստանօր ես ներողագոյնս և չափաւորս առնում սահմանել զնա, թէպէտ և խստագունի ևս արժանի իցէ սահմանի։

Սանձարձակ վարք, յորում այնչափ զյոգունս գտանեմք վարակեալս, իցէ գաղջութիւնն այն և հովութիւն կամաց՝ յայն ամենայն գործս որ միանգամ պատկանագրեսցին 'ի յաւիտենական փրկութիւն հոգւոյն։

Որ այսպէս գաղջք և հովացեալքն իցեն, թէ և չիցեն նոքա արք անզգամք, անօրէնք, ոչ գողք, ոչ պոռնիկք, ոչ հեշտասէրք, սակայն և իցեն զբօսասէրք, աշխարհասէրք, որք և դուն ուրեք զսեաման կոխեսցեն զտաճա-

digitised by A.R.A.R.@

բայն Աստուծոյ, ոչ յանձախեսցեն 'ի խորհուրդս սուրբս եկեղեցւոյ, յուլայեալք 'ի գործս սիրոյ, չիցեն և աղքատասէրք, 'ի կրթութիւնս քրիստոնէական եռանդան աստուածպաշտութեան անհոգացեալք։ Այլ համբուն՝ այնպիսիք ոմանք, որ թէպէտ և խղճեսցեն յանձինս՝ մասն լինել գեղեցիկ թելադրութեանց հաւատոյն իւրեանց՝ անիրաւութեամբ վարելով, սակայն և ոչ փոյթ ինչ իցէ նոցա զօրավիդն տալ հաւատոյն առաքինաբար վարուք։

Արդ յայսմանէ, ասեմ, աղօտանայ 'ի մեզ լոյսն երկնաւոր, և հաւատք ինքնին ծիւրին և ծնդին։ Որ և Ճշգրիտ վարդապետութեամբ 'ի ներքս բերիցէ, սիրելիք, միանգամայն և զպատճառան և զեղանակն. դուք քաջ միտ դիք աղաչեմ՝ զիարդ աստուածայինն արդարութիւն վարեսցի 'ի բանիս յայսմիկ. թէպէտ և որք ընդ նովին դատաստանաւ իցեն, յոյժ սակաւ խելամտիցեն։

Քրիստոսականս կրօնք՝ որպէս խորհուրդս ունի անՃառելիս 'ի հաւատալ, դարձեալ և հրահանգս և սկզբունս անստերիւրս վարուց 'ի գործել, սապէս և առաքինութիւն մի ունի զհաւատոյն, որ զմեզ կրօնիցն այնմիկ սեպհականէ և յօդակապէ. տայ մեզ հաւատալ Ճշմարտութեան խորհրդոյն հաստատութեամբ՝ միանգամայն և զհրահանգս վարուց 'ի գործ վարել հաւատարմութեամբ։ Իսկ այս առաքինութիւն հաւատոյ հեղեալ 'ի մեզ յԱստուծոյ յառաջնում անդ սրբութեան յաւազանէն, ածէ մեզ և իրաւունս առ երկնաւոր օժանդակութիւն շնորհաց՝ 'ի լուսաւորութիւն մտաց և 'ի քաջասնդութիւն կամաց, 'ի ընուլ զպարտս քրիստոսականս կոչման։

Այս ահա յերկնաւոր յայս օժանդակութիւն շնորհաց հաստատեալ և հանգուցեալ կայ ոչ էութիւնն միայն և կեանք հաւատոց, այլ և սնդութիւնն և յոյժ և եռանդն և առուգութիւն նորա. նմանեալք Ճշգրիտ գեղափայլ յանկարծահաս ինն նշուլից՝ որ զմնկակից խաւար զիշերոյն իբրև 'ի լոյս զուարթ տունջեան դարձուցանեն նմա։ Կամ զոր օրինակ ոգիք կենդանականք նեղգործեն 'ի թանձր մարմնին, թեթևաշարժ առաղբելով զնա, և կորովի և առոյգ և շոյտ 'ի գործել։

digitised by A.R.A.R.@

Մարդ ըստ անպատիր վարդապետութեան հարց սրբոց և առ հաստատակ աստուածաբանից, զերկնաւոր զայս օժանդակութիւն պարգևէ Աստուած իրաւացի բաշխմամբ. ումեւին շատ՝ որ յարգէ զնոյն, ումեւին սակաւ, կամ թէ ողջոյն զլանայ այնոցիկ որ ոչն յարգեն։ Այլ տեսանես դու այնուհետև զոր ամենայն զզարմանալին զայն անանանութիւն ընդ մարդ և ընդ մարդ. թէպէտ և երկոքին 'ի նոյն և 'ի մի հաւատոյն կենագործեալք իցեն։ Օ՛ի է զի կէսք այնչափ իմն զգաճեալք են և սասակագոյնս խոցեալք 'ի սիրտս 'ի Հնմարտութեանց աւետարանին. և կէսք դարձեալ որ զնոյն դաւանին և խոստովանին, թեթևակի իմն և 'ի վերին երեսս զգաճեալ են 'ի նոսա։

Կամիս գիտել և 'ի Հնգբիտ նմանութենէն. քանզի կիսոցն հաւատք նմանեալ է գիշերոյ 'ի պարզի, յորում վառ 'ի վառ լուսարձակ բիւրուց աստեղաց պարք զուարթ գործեն զնա և պայծառ և ջինջ, և առ 'ի գործել պատկանաւոր։ Իսկ կիսոցն հաւատք նմանեալ ծնդին բալաձիգ գիշերոյ, յորում օդք անշոյլք միգամածք հրաւէր կարդան ոչ յայլ ինչ, բայց յանգործութիւն և 'ի նիրհ և 'ի քուն։

Սակայն ոչ վայրապար թշուառանան նոքա այնպէս անբաժք 'ի լուսալիր պարգևացն Աստուծոյ. այլ իւրեանց յանցաւորութեան սակս։ Քանզի չեն նոքա անձկանօք հետամուտք սրբութեան վիճակին՝ յոր կոչեցան յԱստուծոյ. քանզի յուլանան գործել գործս արժանի դաւանութեան հաւատոյն իւրեանց. քանզի 'ի վսրս և 'ի գնացս նոցա շինչեալ է եռանդն քրիստոսական, և բնաւ իսկ անձնատուր են 'ի թոյլ և 'ի բերկրական կեանս։

Այլ արդ 'ի վերայ այսր հիման հաստատուն վարդապետութեան հարցն սրբոց, 'ի խորութիւն սրտից մերոց վայր մի աղաչեմ մատիցուք սիրելիք, զնեել զիաղդ 'ի նուաղել 'ի մեզ եռանդան գործոց առաքինութեան, յանհոգանալ մեր և 'ի գաղջանալ, աղօտանայ 'ի մեզ երկնաւոր լոյսն, և հաւատք ծնդին և հիւծին։

Քանզի այս աստուածային երկնաւոր պարգև, որ 'ի խաւարէ անհաւատութեանն վերածեաց զմեզ, հրաւէր կարդայ միանգամայն և 'ի կատարելութիւն մեծ.

digitised by A.R.A.R.@

պատուիրե ոչ միայն զՀետ չերթալ գործոց խաւարին, այլ և միշտ նորոգիլ զօրութեամբ, և յեռանդն հաստանիլ սրբութեան կենաց. ոչ զինչքս միայն զփառաւորս զընտրելոց իւրոց որդւոց հաձեցաւ ուսալ մեզ և պատուէր, այլ և խնդրե զպատիւն զայն ցուցանել 'ի մեզ արդեամբք՝ 'ի պատուիրանապահութեան մերում։

Այլ թէ զինչ դեպք ներկայակիրքք յուզիցին 'ի մեզ, քրիստոնեայք, դուք ինքնին 'ի ձեր իսկ փորձոյ պատմեցէք մեզ։ Այս զուշ և զուրուշ մեր մոգեն դիւթեն կենցաղականս հրապոյրք. դեղեն զմեզ առարկայիցն խօլական ցնորք. թափ անբանական կրից ցանկութեանց տակաւ սպրդեալ 'ի մեզ տիրանան և թագաւորեն. և իբրու թմբիր մահագործ ածեալ զմեզ, մինչդեռ չզգամք՝ հեշտեաւ կախարդեն զմեզ, իբրու մտախաբք՝ միշտ կամել մեզ անձնատուր 'ի հաւատս լինել, սակայն և միշտ անդիմամարտ վարել կեանս 'ի յօժարութիւնս անձահս, 'ի հակամիտութիւնս յանցաւորս, յիղձս անտպաւորս բնութեան մերոյ։

Այս ապա ուշ դիք, զիարդ առ 'ի նոցանէ հրապուրեալքն՝ նօսր քննութեամբ զանազանեն մեզ զօրէնս և զկատարելութիւն հաւատոյն. զիստութիւն պատուիրանի աւետարանին, զքաղցրութիւն խորհրդոյն նորա, զձանապարհս փրկութեան և զշաւիղս սրբութեան։

Լսոնարհութիւն սրտի, ասեն, և մեռելութիւն անձին, և ապաշխարութեան կրթանք են իսկ այդոքիկ առաքինութիւնք պատշաձեալք միանձնական կարգին և վանական կենաց. և չէ պարտ, ասեն, շփոթել զայդոսիկ ընդ պարտուց վիճակի աշխարհիկ անձանց։ Այլ յառաջ ևս խաղան։ — Ղսիրել, ասեն, զոսկի և զարծաթ, չկապիլ ընդ մեծութիւնս, ջերմեռանդն հպատակել յաղօթս, կրթութիւնք հրահանգաց բարեպաշտութեան. այս ամենայն, ասեն, թէպէտ և ազդեալք և խրատեալք, այլ ոչ և պատուիրեալք։

Արդ ահա այնուհետև հոգի քրիստոնէի դերբնակսն՝ դարձաւ եղև հոգի բնաւորական իմն հաստատուն, կամ թէ ասել՝ բնաւ իսկ քաղաքական բարեմարդութիւն։ Այնաւասիկ քեզ մարդ քրիստոնեայ. այո՛ ոչ բառնայ նա զօտարինն, սակայն պնդապէս անքակ կապեալ է ընդ իւրումն։ Արդ քրիստոնեայ, որ անիրա-

digitised by A.R.A.R.@

ութիւնս չգործէ. սակայն և գութ ևս չածէ և չողորմի։ Արդ քրիստոնեայ, որ տարապայմանն չշուայտի. սակայն և միշտ փափկացեալ գրգռէ զանձն։ Արդ քրիստոնեայ, որ թէպէտ և հրաժեշտ տայ 'ի հեշտութեանց՝ զոր արգել Աստուած. սակայն և ոչ վայրիկ մի մեռելութիւն յանձն առեալ՝ երբէք տեղի տայէ 'ի թոյլ տուելոյն։ Եւ համբուն ահա քեզ այր քրիստոնեայ, որ չդժրէ այս պատուոյ հաւատոյն իւրոյ անզգամութեամբք և անօրէնութեան շաւղօք, սակայն և ոչ դուշնաքեայ ինչ շուք յաւելու հաւատոյն առաքինի գործովք, և որ ինչ ձահաւոր իցէ սրբութեան և վսեմութեան վիճակի կոչմանն։ Իբրև չէ շատ խոտորին 'ի չարէ. այլ "Խոտորեա, ասէ, 'ի չարէ, և արա զբարի..։

Եւ այսպէս ապա ըստ իրաւացի դատաստանին Աստուծոյ աղօտանայ 'ի մեզ լոյս հաւատոյն, և զօրութիւնն թուլանայ։ Վանգի և Աստուած ինքնին զնոյն օրինակ վարի ընդ մեզ, որպէս և մեք ընդ նմա։ Ցայ պարգևէ զշնորհսն՝ որ ըստ հասարակ կարգի տեսչութեանն կարևորքն են մեզ 'ի փրկութիւն. այլ ոչ և զայնչափ լոյսն և զյորդն, որ վառ և բորբոք ներգործեսցեն 'ի մեզ զՀնմարտութիւնս քրիստոսեան կրօնիցս։ Ցսպացեալ կան այս այդոքիկ 'ի միտս անդ, այլ որպէս նկաքք գեղեցիկք 'ի կտաւի կամ 'ի պիտակի, որ 'ի գալ գիշերոյն խաւարազգեացք են, անբաժ 'ի շնորհաց գիմակ գիմակ գունոցն, անբաժք 'ի գեղոյ և յամենայն ձարտարութենէ 'ի վայելս տեսութեանն։ Այսպէս և Հնմարտութիւնք անսուտք և հրահանգք զօրաւորք կրօնին 'ի միտս և 'ի սիրտս՝ իբրու անաղդակք ոմանք և անշոյլք և վայրապարք։

Այս է արտասուելին վիճակ տկարացեալ հաւատոյն 'ի մեզ, ջասացից եթէ և մեռելոյ. որում մեք ինքնին զօրհասականն տամք զվերս։

Այլ սակայն և զայն ևս հարկ է առակել, եթէ այս է հաւատն զոր և յաճախ գտանեմք մեք նաև առ այնասիկ, որ իբրև երկիւղածս համարեալ են 'ի մեզ և առ բարեպաշտս գրեալք։ Հաւատ մեղկ, հաւատ առկայծեալ և կիսակենդան։

Իսկ 'ի հաւատիս Հնմարտութեանս՝ զոր ասեմ զօրացեալ 'ի մեզ, դուք ինքնին աղէ ասացէք մեզ։

digitised by A.R.A.R.@

Օ՜ինչ այն իցէ յարգն և վարկն՝ զոր վարկանիցիմք մեք զկրօնն. ո՞ր այն իցէ մերն գաղափար 'ի միտս յաղագս սրբութեան. ո՞ր այն հոգն մեր յաղագս հոգւոյն. որպիսի՞ մեր առ երկիւղն 'ի գեհենայն, և զինչ յոյս կոչման մերոյ՝ զոր ասաց առաքեալն, և ո՞ր ակնկալութիւն մեր յաղագս արքայութեան։

Պատանիցին թերևս բազումք ոմանք, որ յաղքատս և 'ի մուրիկս զնոյն ինքն ակնարկեսցեն զՔրիստոս. որ զնորուն Քրիստոսի զմեծ վայելչութիւնն պատուհասցեն յանձինս քահանայից երեսփոխանիցն նորա. որ 'ի սեղան սրբութեան խորհրդոյն պինդ հաւատումն խտրութիւն արասցեն արժանի՝ ընդ մէջ հացի և հացի։

Ուրանօ՞ր իցեն այսօր հետք շաւղաց անարատութեան հաւատոյն՝ զոր մերն հարք կոխեցին յառաջ քան զմեզ։ Ո՞ւր այսօր արհամարհութի՞ պատուոյ։ Ո՞ւր այսօր սեր և վարկ չարչարանաց։ Ո՞ւր այսօր վեհանձնականն այն նուիրումն գոյից և ընչից և քաջողջութեան և կենաց զլխովին։

Ո՞վ այն իցէ՞ որ իբրև նշդեհ և պանդուխտ հանդերեսցի զանձն ընդ անցաւոր կեանս աշխարհիս։ Ո՞վ այն իցէ, որ իբրև յինչ մի գերագոյն քան զամենայն գործ և քան զամենայն զբաղանս՝ այնպէս ուշ ունիցի 'ի գործ փրկութեան հոգւոյն։ Այ՜ ո՞ւր գտանիցեմք մարդ, որ խորամուխ 'ի քննութիւն առցէ զբարձրութիւն և զխորութիւն զաստուածայնոյն։ Ցուք ինձ պատասխանի ձեռամբ անպատիր գիտութեամբ զոր ունիք զաշխարհի՝ Հնդրիստս և ընդարձակագոյնս քան զմերն։

Այ մանաւանդ, չիցէ՞ թերևս, զինչ ասէք, չիցէ՞ յընդհանուրս յամենայն տիս հասակի, յամենայն աստիճան աւագութեան, յամենայն վիճակի կենաց մահահամբոյր ինն թմբրութիւն, անդորրամիտ ինն անխորտութիւն, և բնաւ իսկ անզգայացեալ ինն վարուց քաղաքավարութիւն յայն ամենայն՝ որ միանգամ գործ կրօնի իցէ, որ միանգամ գործ փրկութեան հոգւոյ իցէ։

Այ՜ ո՞ւր ապա մնայ հաւատք մեր։ Պանի՞ տգիտութիւն ամենաթալ քրիստոնէական վարժից և հրահանգաց ոչ արմատացաւ այսօր և առնէ յընդհանուրս։ Կրթանք և ճգունք ապաշխարութեան և մեռելութեան մարմնոյ իցէ՞ինչ արդեօք, և ո՞չ առաւել քստմնելիք և դժոխ-

digitised by A.R.A.R.@

ընթերցք փափկութեան մերոյ։ Զանի անախորժ պա-
տարագմանք և քանի նուազութեամբ պաշտեն կատարեն
այսօր բազումք զփրկաւէտ խորհուրդն և զկենդանարա-
ծիչն։

Եւ ապա ընդ հակառակս չիցէ տիրացեալ այսօր,
տեարքք իմ, առ բազումս վարկ ինն բարձրագոյն կենցա-
ղականացս առօրեայ, և տենչ տարապայման, և փոյթ
ժրաջան 'ի խնդիր բերկրանաց, 'ի խնդիր մթերից
գոյից, 'ի խնդիր պատուոյ և փառաց, և որ այլ ևս՝ որ
կամ վտանգաբերք և կամ վայրապար և ծաղկընկեց.
զոր մերն հաւատք կամ չհոգան ինչ կամ յընչաց քե-
բեն կամ արգելուն կամ դատապարտեն։

Այս անշուշտ, այս աւադիկ պատկեր սերկեան քը-
բիստոնէութեանս, և այս հաւատ որ կեայ 'ի նմա.
հաւատք՝ յորում չիք եռանդն, հաւատք՝ բնաւ խակ
վատեալ յուժոյ. չիք 'ի նմա ոչ ձեռն, ոչ բազուկ, ոչ
շարժումն. և համբուն այնպիսի՝ որ փոքր միւս ևս տա-
ցէ ցոյցս առ արտաքս ոչ ինչ ընդհատ յայնցանէ՝ որ ոչն
ունիցին ինչ հաւատս։

ՄԱՍՆ Բ.

Եւ արդ զոր օրինակ 'ի սանձարձակութենէ վարուց
տկարացան հաւատք, որպէս և տեսէք, սապէս և 'ի
տկարութենէ հաւատոյն առաւել ևս զայրանայ և աՃՃ
սանձարձակութիւն վարուց. և յայնչափ սանձարձա-
կութենէն 'ի սպառ ապա ծնգին հաւատք և վատին և
չքանան։ Աղաղունիք և զայս պարզեսցուք սիրելեացդ,
և խելամուտ ազաչեմ լինել Ճշմարտութեն, 'ի Ճշգրիտ
յօրինակէ անտի բանիցն, զոր կարգեաց աստուածային
մնրդարէն։ "Բարեր, ասէ, խաւար, և եղև գիշեր 'ի
նմա գնան ամենայն գազանք անտառի..։ Այ՝ իսա գիշք, ա-
սէ, կարգի ընութեան. յորժամ 'ի մայրն իւր գիմէ գառ-
նալ տիեզերասփիւռ ամն արևու, անդէն և տունջե-
նայինքն զկայ առնուն գործք և արարք, և 'ի հանգիստ
իւրեանց 'ի քաղցր՝ դառնան կենդանիքն ընդելք. զոր

digitised by A.R.A.R.@

կամ 'ի մեր զբօսանս կամ 'ի հարկ կամ 'ի պէտս ինչ մարդկան վաստակեն զտիւն ողջոյն. եթէ գրասաք խոնջք բեռնակիրք, եթէ հարկիք եղանց արօրադիր, եթէ երիվարք ընդ քիրան մտեալք, և խաշն և արջառ յիւրեանց արօտից. և դառնան առ հասարակ հանգչել իւրաքանչիւր 'ի դադարս։ Երինք և բլուրք և դաշտք և արօտք՝ որ 'ի լոյս արևուն հնչէին զուարթացեալք 'ի վաստակս ձեռաց մարդկան, 'ի հասանել գիշերոյն՝ անշշունչ 'ի լռութեան դադարէ ամենայնն. և յանդորրու ամենայն կենդանի առնու զհանգիստ։

Այլ ոչ զնոյնօրինակ և յանտառս խորս և 'ի թաւս անմատոյցս. անդ 'ի տունջեան լռութիւն թագաւորէ. քանզի գազանք խաւարասէրք զանգիտեալք՝ ատեան զլոյս, և դադարեն որջացեալք իւրաքանչիւր 'ի մերիս, ակնկալեալք խաւարի։ — Այս ապա այն ինչ մութ գիշերոյն պատէ, և անդէն անտառն առ հասարակ 'ի շշուկ հատեալ խռովի։ Զարժին գան 'ի դուրս 'ի կաղաղացն. սողացեալ շանթեն՝ վիշապք մահաշունչք, գոչէ յերևան գայ առիւծ ամենի, ոռնայ կաղկանձէ գայլ աբեղարբու. և գազանք այլք ազգի ազգիք ահագինք գան, գնան և շրջին. և 'ի վեր և 'ի վայր հնչէ անտառն. մոլեգինք յարձակին, ապաստան իւրեանց զխաւարն ունելով. քանզի "Այղև գիշեր. և 'ի նմա գնան ամենայն գազանք անտառի.,։

Այդ դու յօրինակէն իմաստասիրեա ինձ զՀշմարտութիւնն։ Այս քանզի վատել հաւատոյն է 'ի նուաղելոյ անտի երկնաւոր լուսաւորութեանն՝ զոր ասացաք, ասպա ուրեմն՝ ոյր ախտակրեալ են հաւատք, հարկ է եթէ 'ի խաւարի բնակեսցէ հոգին. խաւար՝ զոր նշոյլ ինն աղօտ աստուածային լուսոյն թէպէտ և հարկանէ, այլ ոչ և վարատեալ փարատէ։

Այս թէ զինչ դէպք աղէտից տացեն յայնժամ 'ի խաւարին յայնմիկ, դուք ինքնին խելամուտ լերուք, քրիստոնեայք. և զոր ես ասեմ՝ դուք ձերովդ փորձիս 'ի քնին առեալ Հշգրտեցէք։

Իբրև այս մութ իմանալի խաւարին հասանէ հոգւոյն, յայնժամ յօժարութիւնք նորա հոգևորք երկարժամանակեայք, և առաքինութիւնք երկնաւորք հեղեալք, միանգամայն և լոյս բանին, և ողջամիտ

digitised by A.R.A.R.@

խորհուրդք, այս ամենայն՝ որ երբեմն 'ի լոյս պայծառութեան երկնաւոր նշուլիցն տքնաբար վաստակելին և գործս գործելին զփրկութեան, այնուհետև ընդարմացեալ կան անգործք և պարապորդք, և իբրև խոր 'ի քուն թմբրութեան անկեալ կան։ Իսկ անդուստ յայն ժամ՝ իղձք և ցանկութիւնք դժպատեհք և պիղծք, և կիրք անբանականք, որ 'ի փայլատակել երբեմն առաւածային լուսոյն 'ի հոգին, իբրու հոյլք գազանաց յորջս և 'ի կաղաղս այնպէս զոզեալք անշշունչք կային՝ պահ կալեալ անձանց, խուժեն դան 'ի դուրս հառնարձակ, և ապաստան զանազոյն իւրեանց ունելով զկիշեր, 'ի գործս խաւարին թաղթափեն։

Ընդուստ թունալից մահահոտ գազանն հնչէ, և ընդ քնթունոցն իբրև ընդ բազմապտոյտ շաւիղս խոտորնակս սողոսկեալ շրջի նենգաւոր օձն անձնասիրութեան և շահախնդրութեան։ Ի գայռալից մորիցն 'ի դուրս գայ, և ընդ ամենայն մարդս քայլ առեալ գնայ անպատկան հեշտութեանցն՝ պիղծ գազանն անժուժկալութեան։ Ի՞՝ողեգինս և ամէնի շարժէ թաղթափէ զբաշն, և ահեղասասան գոչէ աննկունն առիւծ՝ փքուռոյց գազանն ամբարտաւանութեան։ Ի՞՝ այլ ևս ըստ նոցանէն՝ որ առաւել և որ նուազ, բնաւ իսկ ամենայն գազանք կրիցն բորբոքելոց վեր 'ի վայր դղրդեն զկենդանութիւն մարդոյն. քանզի "Ի՞՝զև զկիշեր. 'ի նմա գնան ամենայն գազանք անտառի..։

Ի՞՝ ապա յայս վիճակ ձախողակ՝ անդէն զլուխ ամբարձեալ տիրանայ առ հասարակ 'ի վերայ ամենայնին ցանկութիւն մարմնոյ. և սանձարձակութիւն վարուցն լինի այնուհետև սանձակոտոր. ահա՛, ապականութիւնն՝ որ ինքնին հակամետ է 'ի չարն, և 'ի դժոխի ցանկութենէն գնալով գնայ և վատթարի։ Ի՞՝ այսոքիւք և խակախորհուրդ տեսութիւնք զգայարանացն՝ որ զաչատեն, և համբաւ և շշուկ աշխարհի՝ որ խլացուցանեն, և սկզբունք թիւրք՝ որ մոլորեցուցանեն, և խնամաք ձախողակք՝ որ դաւեն, և օրինակք չարաց՝ որ հրապուրեն, և 'ի վեր քան զամենայն՝ կեանք պարապորդ և հեշտին՝ որ վարեն և յանկուցանեն։ Ի՞՝այս ամենայն՝ յընթացս մոլութեանց և ախտից առեալ քայլ առ քայլ յառաջադէմ՝ քարշէ ձգէ զմարդ, և ապա արագ 'ի

digitised by A.R.A.R.@

վերջէ 'ի վիհ անդր խարդաւանէ ամբարշտութեան և անհաւատութեան։

Մեղանչեն նախ, ապա դիւրընտելք բնաւորին 'ի մեղանչել, ապա և մեղանչեն անխիղճ. Ոչ շատ. մեղանչեն և անպատկառ, և ապա հուսկ ուրեմն՝ մեղանչեն և պարծին ևս, և ջատագով ևս մնանեն և գովեն զմեղն՝ զոր գործեցին։

Օ այսօրինակ աւադիկ կորովացեալ հսկայանայ խօսն այն ամենամեղ՝ սանձարձակութիւնն ասեմ, որ է ինքն Ճշգրիտ կնիքն դրոշմաւոր աշխարհի, երկրաւոր, շնչաւոր և դիւական, զոր աւետարանն սուրբ մերժեաց և դատապարտ արար։ Սանձարձակութիւն և աներասան կեանք, որ որպէս տեսէք՝ 'ի թուլացեալ հաւատոյն իբրու յառաջին պատճառէ առեալ ծագումն, նոյնպէս և պատճառք առաջին ինքն լինի նաև 'ի սպառ ծնգելոյ և մեռանելոյ հաւատոյն։

Օ ունկնդրութի զիմաստութեան ձերոյ նորոգեցէք ինձ աղաչեմ և 'ի Ճշմարտութեանս յայսմիկ. Ճշմարտութիւն՝ թերևս այսօր առաւել ընտել, իբրու առաւել 'ի գործ առեալ. ուստի և 'ի լուսաբանել առաւել կարևոր և առաւել պտղաբեր։

Օ սանձարձակութիւն զայս զքրիստոնէից նաև յամենայն ժամանակս գոգցես արտասուեցին Հարքն սուրբք։ Ի քրիստոնէից, ասեն, յոգունք 'ի ծոցի կեան եկեղեցւոյ և 'ի հաղորդութեան խորհրդոց կրօնիցս սրբութեան. 'ի վերայ այսր՝ և 'ի թանձր խաւարի խարխափեն անհաւատութեան։ Օ անուն կրեն զքրիստոնէի, պարծանս ունին զհաւատոյն, մերթ ընդ մերթ երևին յեկեղեցւոջ, և յամենայն տեսողացն հաւատացեալս կարծին։

Լուեն իսկ նոքա այնպիսիք յանուանէ քրիստոնեայք, իսկ արդեամբք և Ճշմարտութիւնք ամենևին իսկ օտարք 'ի հաւատոյ։ Վերսարանաւ 'ի ներքս կան յեկեղեցւոջ, քաղաքավարութեամբն արտաքոյ են եկեղեցւոյ։ Օ այս ասացին Հարքն. ոչ վայրապար իմացուածով առեալ զբանս, իբրև ոչք բերանով չափ դաւանեն զհաւատս, և զանհաւատից վարելով կեանս՝ ժխտեն գործովք. այլ տիրապէս և սահմանաբար, իբրև ոչք 'ի տնանկութեան երկնաւոր պարգևացն՝ նաև զհաւատս ինքնին

digitised by A.R.A.R.@

որ իբրև տախտակ ապրեցուցիչ 'ի նաւաբեկութեան թողաւ նոցա, նոքա և զնոյն 'ի բաց ընկենուն յանձանց՝ մերկք յամենայնէն։ Բանզի չարաչար վարուքն կորուսանեն և զայն՝ զոր բարիոք դաւանին, նաւակոծեալք 'ի բարձրագոյն յայն պարգև և յերկնաւորն ուանդ։

Իսկ առ ողբալին այն վիճակ անհաւատութեան կամ ուրացութեան, չեն պէտք այնպիսեացն՝ մրրկածուփ ամպրոպաց հալածանացն կամ բռնաւորացն վերադարձի դարուցն առաջնոց, ոչ յանդիման լինելոյ մոլեգին դատաւորացն, ոչ չարաշուք դահճացն սակրաց և վաղերց և ձիաձև տանջանարանաց և խարուկաց և խաչից. այլ նաև յորժամ հալածող և ոչ ոք է 'ի միջի, նոքա ինքնին ուխտանենք, մատն լինին հաւատոյն. թէպէտ և 'ի խոր խաղաղութեան եկեղեցւոյ և յանալեկոծ կեանս իւրաքանչիւր, թէպէտ և 'ի նմին իսկ 'ի նաւահանգստի, յորժամ սպառնայ և ոչ ոք, յորժամ արհաւիրս չածէ և ոչ ինչ։

Բանզի որպէս զեղեցիկս յոյժ ասացին Հարքն, ոչ ցաւ տանջանացն միայն յուրացութիւն դրդէ, այլ առաւել յոյժ քան զչարչարանսն՝ բերկրալեացն հեշտութիւն և սրտի ապականութիւն, և խոտորումն վարուց և 'ի մեղս բնաւորութիւն՝ ուրացողս գործէ. քանզի յուշիկ խօլացուցեալ զմարդ՝ 'ի սպառ 'ի հաւատոցն մերկացուցանէ։

Բաբէ, այս է նոցա փոխան դահճի, այս փոխան ամենայն տանջանարանացն դառնութեան յուրացութիւն անդր։ Մի միայն է անմնութիւնն, որում խելամուտ լինել աղաչեմ. նախնի ուրացողքն դատալիք քրիստոսական զինուորութեանն՝ կապուտ կողոպուտ 'ի հաւատոյն լինէին, առ ակամէ միայն ժխտելով զայն ինչ՝ զոր 'ի նեբբս դաւանէին՝ միայն առ ահի տանջանացն որ բուռն առնէր նոցա։ Ա՛ երջինքդ՝ զիրկք և մերկք 'ի հաւատոյն՝ ժխտելով 'ի նեբբս զայն ինչ՝ զոր առ արտաքս դաւանեն, առ սէր միայն ցանկութեան հեշտալեացն որ խօլացուցանէն զմիտս։

Լաւ այսպէս անհաւատութիւնն՝ թէպէտ և 'ի միտս է, սակայն 'ի կամացն և 'ի սրտին ապականութենէ առնու սկիզբն։ Բանզի կամք խոտորեալ իբրև տեսանէ զի հաւաք խռովէն և անհանգստեն զնա 'ի կա-

digitised by A.R.A.R.@

տարումն ցանկութեանցն, ձգնի յինքն զմիտսն որսալ. և տակաւ ամրէ զնա ժխտել զՀնարտութիւնն, այսինքն զայն ինչ որ տանջէ զնա։ Եւ ապա լոյս բանին մեծանեալ 'ի բազմադէմ կրիցն, և շուրջ պատեալ և մատնեալ 'ի խեղաթիւր կամաց անտի, նախ սկսանի յերկուանալ ընդ Հնարտութիւնն, և ապա բերի և 'ի ժրիտել. և այնպէս մարդ ախտաւոր՝ յախտաւորութենէն դառնայ յանկարծակի և զտանի միանգամայն և ախտաւոր և անհաւատ։

Բ. Յլ չէն ինձ կամք աստանօր պայքարաւ մանրաշնին սահմանել, եթէ յանաստուածութիւն գլխովին, կամ 'ի նիւթապաշտութի, կամ յաղանդ մի, և որ այլ այսպիսի գլորեալ անկանիցի հաւատացեալ ախտաւորն։ Բ. սեմ պարզ, եթէ անշուշտ 'ի հաւատոցն անկանին բազումք մեծամեծ մեղօք ցանկորդեալքն յապականութեան սրտի և վարուց. և անժխտելի է բանս 'ի փորձոյ անտի կենակից քաղաքավարութեան ընդ աշխարհի, յորում լսեմք բազում անգամ և տեսանեմք իրս ինն, որ զախտաւոր հոգւոյն և զխոտորնակ մտաց տան ցուցակութիւնս քաջայայտս։

Մի՞ դիք աղաչեմ։ Օ. իմիրդ նշանս անհաւատութեան չկոչել մեզ զսկզբունս զայն զվարուց զանձարձակ որերոյն. զոր վարեն անդուռն բերանով ատեպ 'ի կենակցից ակումբս, և ասեն եթէ պատիւ անձին կորուսեալ վերանորոգի որով և իցէ Հանապարհաւ. և տանել նախատանացն և ներել անիրաւութիւնք գձռութի է և վատուի ոգւոյն։ Եւ թէ՝ էն մեղք որոց համար չպահանջի. քանզի Հանապէ Բ. ստուած զտկարութի և զթշուառութի հաստուածոյն մերոյ, զի 'ի կաւոյ հաստատեալ եմք առ հասարակ։ Եւ թէ այնչափ է ոք երջանիկ, որչափ յօրացեալ է 'ի յարգն և 'ի պատիւ և 'ի մթերս գոյից. և թէ տեսչութիւն նախախնամութեան տիեզերաց՝ որ յընդհանուրս և որ առ իւրաքանչիւր մարդ, է նոյն իսկ յաջողաձեռնութիւն առն իւրաքանչիւր, և կար զօրութեան նորա և իմաստութիւն հանձարոյ նորա. և թէ ժուժկալութիւն աւետարանին և կուսակրօն կեանք և աղքատութիւն կամաւոր՝ էն միայն յանձնառութիւնք ապիկար և գձուձ ոգւոց, որ թողուն զաշխարհ և արհամարհեն, քանզի չէն ձեռնհաս յաջողել 'ի նմա։

digitised by A.R.A.R.@

Բայց սկզբունք մնալոյ, սկզբունք գայթակղականք, սկզբունք դէմ ընդդէմ նեբհակակիրք անաուտ և ամենասուրբ հրահանգաց բարոյականին Բլմասոսի, և չգիտեմ և զահի հարեալ եմ զիարդ գիրկս այդոցիկ արկանիցեն սկզբանց առանց մեղանչելոյ անհաւատութեամբ և առանց ուրանալոյ զաւետարանն։

Բայց յառաջ ևս խոստացեալ՝ի խնդիրն, զմերն համեմատեցուք հաւատ ընդ առաքելական աւանդիցն և հրահանգին։ Օ՞իարդ ոչ նշանս կոչել անհաւատութեան զանիոյթութիւնն՝ մանաւանդ եթէ զանպատուութիւնն և զանարգութիւն զոր վարեն բազումք յիրս արդոյս և յատուածայինս։ Բանզի ասացէք ինձ, քանի՞ նշաւակութիւնք և անսրբութիւնք ոչ կատարին՝ի տեղւոջ սրբութեան, և յանդիման տեառն փառաց որ անդ բազմեալ կայ։ Օ՞ր յարդ, զի՞ր շուք ածեն այսօր աշխարհիկք բարձրագոյն աշտիճանի սրբոյ քահանայութեանն. յո՞ր չափ գձձութեան և ծաղուչնուաստացան առ բազումս բազումանգամ՝արք երկիւղածք և բարեպաշտիկք և Ճշմարիտ հաւատացեալք։

Եւ զի՞նչ ասեմ զբարեպաշտիցն. ոչ ահա և նոքին իսկ արդիւնք և կրթանք ամենասուրբ հաւատոցն՝ և առանձին բարեպաշտութեանց հրահանգ յեկեղեցւոջ հաւատացելոց, և խորհրդոց սրբոց և սրբազնագործութեանց յաճախութիւն՝ առ բազումս իբրև նիւթ զօրացան և նպատակք ծաղուց և կատականաց՝ իբրու արդարև առ անկրօնս։

Մոռնամ ասել զյանդգնութիւն և զյանձնապատան միտն, որ իբրու յլինչաց քերել՝ զիմաստս ծանունս զկրօնիցն և զդրոց սրբոց և զՀարց սրբոց՝ վՃիռ համարձակ՝ի վերայ ածեն զիւրեանց դատաստանին, իբրու այն թէ աշխարհական պատմութեանց վէպք իցեն։

Մոռնամ ասել զիսորին խորհրդոց դաւանութեանս, որք խորհուրդք են անթարգմանելիք նաև կարի խորիմաստ վարդապետաց. և սակայն վայրապար զրուցաբանութեամբ յակումբս կենակցութեան՝ի մէջ բերին իբրև նիւթ ժամանցաուութեան։

Մոռնամ ասել և զմահաթոյն և զանկրօն զրոցն և զգրոցացն զանդատապարտ արձակումն և զգոլութիւնն՝ ՝ի նոցն ակումբս շփացելոցն։

digitised by A.R.A.R.@

Այլ զիարդ 'ի վերջէ՝ ոչ նշան անհաւատութեան կոչել մեզ զոգին զայն ինչաւոր և զքաղաքական, որ զքրիստոսական հաւատոյն զանսուտ ճշմարտութիւնն՝ իբրու կարծիս համարեսցի հաւանական զաստուածաբանից. զկրօնն ինքնին գրեսցէ իբրու կառավարութիւն քաղաքի՝ կարգեալ 'ի վայելչութիւն և 'ի հանդարտութիւն աշխարհի. և զեկեղեցական սահմանադրութիւնն և զաստուածայինն կարծեսցէ իբրև օրէնս կանոնաւորս քաղաքականս՝ սանձել ընուաճել զխուժանն, և հոգ տանել հասարակաց անդորրութեան։

Արդեօք կուտակաբա՞ն քան զչափն անցի ինչ յարտասուելի նկարուս. եթէ մանաւանդ անտպաւոր և անարծարծ գունով, և անկենդան երանգօք մեռելատիպք նկարեցան ճշմարիտքն, դուք ինքնին ո՛ քրիստոնեայք, որ միշտ յաշխարհի էք և ընդ աշխարհի թարթափիք, դուք ինքնին տուք զդատաստան. զի ես մանաւանդ յանբարբառ գրոցն քաղեալ՝ 'ի ներքս բերի զնկարն, քան եթէ 'ի խօսուն յաշխարհէ։

Կամի ամենայն ըղձիւ, և կամի մանաւանդ լինել յայդոսիկ իբրև նախանձայոյզ ոմն ծայրայեղ և իբրև խրթնի վարուք խստամբեր, քան եթէ պատմիչ ճշգրտաբան։ Սակայն և զայն աւասիկ միւսանգամ, սիրելիք, հաստատեմ աներկեան կրկին և երեքկին, եթէ նուազունք իցեն և կամ բազումք յայնպիսեաց հաւատացելոց՝ վասն այնորիկ դառնան լինին անհաւատք, քանզի են սանձարձակք վարուք և խառնակեցիկք։

Զանզի անսուտ է ճշմարտութիւնն, զոր Աստուած ինքնին վկայեաց. "Աստ ազգ, ասէ, որ ոչ ընկալան զխրատ, պակասեցին հաւատք և բարձաւ ճշմարտութիւն 'ի բերանոց նոցա.,։ Այլ քանզի անխրատք, ասէ, և անսաստք եղեն օրինացն՝ զոր առին յԱստուծոյ, և ըստ կամս անձանց գնացին, վասն այնորիկ զվերջինն առին պատուհաս. "Պակասեցին, ասէ, հաւատք և բարձաւ 'ի նոցանէ ճշմարտութիւն,.։

Աչաղ դժնդակ բախտին. յորժամ կամք ապականեալ, և ըստ նմանէն միտք իցեն մոլորեալք, որ այն իցէ դեղ դարմանոյ վերջին ախտակրութեանն. բայց թէ այր իւրաքանչիւր սանձ դեղեցիկ և բանաւոր դիցէ ապերասան վարուցն, և այնպէս 'ի դիւան ցնծասցէ

digitised by A.R.A.R.@

կորուսեալ հաւատոյն։ Հապա վերանորոգեսցին վաղք, և անդէն նորաստեղծցին հաւատք։

Օ առաքելականն այր այր 'ի միտ ածցէ զկենսաբեր խրատն. "Յիշեա ուստի անկարն և ապաշաւեա, և գործեա զգործ քո զառաջին.,։ Յիշեա յո՞ր աստիճանէ անկար բարձրութեան, յո՞ր երջանիկ բերկրաւէտ վիճակէ։ Յիշեա զանդորրաւէտ խաղաղութիւն զմտացն, զանսպառելի հրճուանսն, զսրտին քաղցրութեան զիղձսն յաներկեւանութեան կեանս, յորժամ 'ի լոյս և 'ի հնորհս վայելէիր անարատութեան հաւատոյ։

Ապա և զգաղջութիւն հոգւոյն, նա զբնաւ իսկ զցրտութիւնն վառ և բորբոք արծարծեսցես 'ի նիւթ իմանալի հրոյն՝ 'ի գործս թեւակոխելով աստուածպաշտութեան և 'ի կրթանս քրիստոնէական հրահանգաց։ Յիշեա ուստի անկարն, և գործեա զգործս քո զառաջինս զոր գործէիր։ Ու յառաջ քան զամենայն՝ յերանդն աղօթից քոց մաղթելով 'ի տեառնէ "Յաւել մեզ հաւատս.,. և ապա 'ի գութ սիրոյ առ աղքատս վառեսցես զքեզ. և երկոքումբք այսոքիւք հորդեսցես քեզ ճանապարհ առ ամենայն առաքինութիւնս։ Օ ի այնպէս ապա ընդ Լուռնեղեայ բարեպաշտի և ողորմածի զաւետաբեր հրեշտակին լուիցես զբարբառ. "Աղօթք քո և ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ.,։ Ու յաղօթից քոց և յողորմութեանցդ հաստատեսցիս դու իբրև զնա 'ի հաւատս ճշմարտութեան. քանզի անհնար է, եթէ յորժամ առաքինասցիս դու 'ի վարս, չեղիցիս հաստատմամբ և 'ի հաւատս։

Իսկ թէ հաստատութիւն հաւատոյն իցէ միակ և առաջին աղբիւր ամենայն առաքինութեանց և սրբութեան վարուց, զայն մեք՝ (քանզի յոյժ կարևոր և լի տոհմականօք է նիւթն), յառանձին քարոզի սեղանաւորեսցուք սիրելեացդ։

ԹԱՐՄԱՑ ԺԲ.

ՀԱՒԱՏՔ ԿԵՆԴԱՆԻ

"Զանց հաւատոց անինար է հաճոյ լինել Աստուծոյ ,, .

"Այս է յաղթութիւն , հաւատք մեր որ յաղթէ աշխարհի ,, :

Երկինք աստեղազարդ , վայելուչ ասաց ոմն 'ի սրբոց , է եկեղեցի Աստուծոյ . որչափ բազմահոյլ պարուք աստեղացն զարդարեալ է , այնչափ և բազմագունակ լուսոյն զանազանութեամբ պայծառացեալ . թէպէտ և առ հասարակ աստեղք , այլ որպէս առաքեալ ասաց , "Աստղ քան զաստղ առաւել է փառօք ,, : Եւ որչափ նմանութիւն հրաշալի դիտեաց աստուածային առաքեալն յաստեղափայլ յոլովս եկեղեցւոյ , այնչափ է և աննմանութիւն սքանչելի :

Անմանութիւն 'ի դիմակ դիմակ կրօնիս առաքինութեան առն իւրաքանչիւր , 'ի պաշտամանցն , 'ի վիճակէն , 'ի գործոցն և որ այլ ևս , յորս լուսափայլեն վարք և քաղաքավարութիւնք ընտրելոցն : Իսկ ապա և նմանութիւն . զի նոյն և մի հոգի է աստուածեղէն , որ շարժէ և վառէ և սաղրէ 'ի նոսա զանազանեալ դէմն և օրինակս և տիպս . ըստ որում է տեսանել 'ի բազմահոյլս սրբոց՝ որ կեցին և որ կեցցեն մինչև 'ի կատարած աշխարհի , զի "Լեթէ բաժինք ինորհաց են , ասէ , այլ հոգի նոյն է ,, :

Բազմիկ յեկեղեցւոջ , ամուրիք՝ անձնապահ զգուշացեալք , ամուսինք՝ հաւատարիմք պարկեշտացեալք ,

digitised by A.R.A.R.@

միանձունք՝ աստուածամերձք խորհրդածուք, կենա-
կիցք՝ համամիտք խաղաղասէրք, անապատասունք՝ աշ-
խարհատեացք խստամբեռք, քարոզիչք՝ հոգեսէրք ժո-
ղովացեալք, աղքատք՝ համբերատարք, մեծատունք՝ ողոր-
մածք, կուսանք՝ անարատք, այրիք՝ մենացեալք, վար-
դապետք՝ աստուածիմաստք, մարդարէք՝ լուսաւորեալք,
մարտիրոսք՝ արիականք։

Դասք են այսոքիկ զարմանազանք ընտրելոյն, և այս
նշանագրեստք և տիպարք բաղմեղիմակ, յորս ցուցին
և պահեցին զքաղաքավարութիւն իւրեանց 'ի մահկա-
նացու կեանս. եթէ բաժինք իցեն շնորհաց, եթէ բա-
ժինք պաշտամանց, եթէ բաժինք յաջողութեանց և
գործոց, զոր ասաց առաքեալն։ Ա՛յս է անմնմանութիւն
սրբոյն 'ի սուրբս. և եթէ ասել արժան իցէ՝ անմնմա-
նութիւն 'ի նմանիսն. քանզի անդամք են զանազանեալք,
սակայն մի և նոյն մարմնոյ կաթողիկէ եկեղեցւոյ. յո-
գեալ և պատշաճեալ ընդ միով գլխով, յորմէ աղբե-
ւրանայ սրբութիւն և կենդանութիւն հաւատոյն։

Ա՛հաւատն ուրեմն, միութիւն եկեղեցւոյ, միու-
թիւն գլխոյ, միութիւն մկրտութեան, միութիւն հա-
ւատոյն. և համբուն ասել նոյն հոգի և նոյն կենդա-
նութիւն հաւատոյն, որ գործէ և կենդանագործէ զբաղ-
մազան օրինակս սրբութեան. "Օ՛ի հոգի նոյն է, և
տէր նոյն է, և աստուած նոյն է, որ յաջողէ զամենայն
յամենայնի"։

Օ՛նորաբանչ զայս տիպար վարչութեան հաւատոյն՝
որ սուրբս յամենայնի գործէ զմեզ նմանեալս և ան-
նմանս, նիւթ առցուք այսօր մեծի առաջարկութեանս։

Ա՛նգի զոր օրինակ յայտնաբանեցի սիրելեացդ. ե-
թէ առաքինութիւն հաւատոյն՝ յախտաւոր վարուցն
շինչանի 'ի մեզ, սապէս այսօր ձառ արկից՝ եթէ զսրբու-
թիւն քրիստոնէի ծնանի և գործէ առաքինութիւն կեն-
դանի հաւատոյն։

Սակայն կարդ գեղեցիկ տալով լայնածաւալ առա-
ջարկութեանս, 'ի նոյն մասունս՝ որպէս և հարքն
սուրբք՝ բաշխեցից և ես. եթէ առաջինն կենդանի
հաւատք պատշաճաք է սրբութեան. քանզի 'ի հաւա-
տոյն միայն առնու սա սկիզբն։ Երկրորդ անգամ՝ հիմն
է սրբութեան. քանզի 'ի վերայ կենդանի հաւատոյն

digitised by A.R.A.R.@

միայն հաստատեալ կայ։ Լրրորդ անգամ՝ արմատ է սրբութեան. քանզի միայն 'ի ձեռն կենդանի հաւատոյն պտղաբերէ սրբութիւնն։

Ունկն դիր աղաչեմ կարևորագունի ձառիս քաջիկ խելամտութեամբ, զոր սեպհական գիտեմ ձերոյ փութոյն և բարեպաշտութեան։

ՄԱՍՆ Ա.

Ակիզբն և աղբիւր սրբութեան ասեմք աներկևան զհաւատն. իբրու որ պայման անհրաժեշտ աստուածատուր՝ եղան հաւատք հաճոյից և սիրելութեանն Աստուծոյ։ Առաքելական է պայմանն և առ հասարակ 'ի հարցն սրբոց և 'ի կաթողիկէ եկեղեցւոյ կնքեալ, եթէ "Առանց հաւատոց անհնար է հաճոյ լինել Աստուծոյ.."։ Պէտք հարկաւոր են հաւատոյն՝ առ 'ի սիրելի լինել Աստուծոյ. քանզի սա ինքն է մարդոյ՝ միակ միջնորդ բարեկամութեանն Աստուծոյ և շնորհաց հոգւոյն։

Վասն որոյ թէպէտ և մեծամեծք յոյժ իցեն գործք նահատակութեանց՝ որ ըստ աշխարհի, բարերարութեանց ասեմ, և մարդկային առաքինութեանց, և խստամբեր ևս մարմնոյ ճգնութեանց, և որ այլ ևս բազմամանութիւք քաղաքականք, որպիսիք առ հեթանոսս, առ աչս աշխարհի արդոյք և հոյակապք, յոչինչ համարեալ են առ Աստուած և անարժանք փառաց երջանկութեան հոգւոյն և հաւատոյ, զոր ինքնին ապէնիաղն Աստուած ձրի առանց առ 'ի մէնջ արդեանցն պարգևեաց քրիստոնէից։

Վասնզի այն ինչ առաջին 'ի լոյս ընծայեալք յարգանդէ մօրն, անդէն այլ մայրը գերապանծ 'ի հաւատս և 'ի շնորհս առեալ զմեզ ծնանի։ Նմոռաց յուշի կապել աղաչեմ, եղբարք, զնախամեծար զայս սիրելութիւն տեառն՝ զոր սիրեաց զմեզ. 'ի բիւրուց անտի անհաւատից որոշեալ զմեզ՝ վիճակակից լինել սրբոցն և սուրբս՝ քրիստոսական կոչմանքն. ծնեալք 'ի ծոց եկեղեցւոյ սրբոյ և 'ի ծնողաց հաւատացելոց։ Վասնզի յառաջ

digitised by A.R.A.R.@

պարգևացն Քրիստոսի ածեալ մեք երախայք յաւա-
զանն մկրտութեան, անդանօր 'ի վերայ կենդանարար աւա-
զանին տեսանեմք հանգուցեալ զկրօնն։ Եւ թէպէտ
և մեք ծնունդք օտարախորթք Աստուծոյ 'ի սկզբ-
բնական 'ի մեղն, սակայն նա զուիթ ածեալ մայրաբար
'ի գիրկս իւր Ժողովք զմեզ. և ապա 'ի շունչ կենդան-
արար աստուածային բանիցն 'ի խորհրդական լուաց-
մանէն վերածնեալ զմեզ՝ զերկնից դուռն մեզ բանայ,
և զաստուածաձիր հաւատն և զերկնաւոր զսէրն ընդ-
հաբաշխէ 'ի հոգիս մեր։

Այսպէս մեք 'ի մի մտքին եկեղեցւոյ և հաշտք և
բարեկամք ընդ աստուածութեան՝ սուրբք և ժառան-
գորդք լինիմք անեզրական կենացն, մինչ չև մեր ե-
զեալ բանաւորք։ Զանիծն ի՞նչ ընդհն, քանի՞ ան-
զուգական պարգևն. "Եւ այսպէս արար ամենայն աղ-
գաց տեր ... ՝ որ հատուցումն կայցէ անպատում պար-
գևացն։

Եւ սակայն ունկն դիր. զնոյն բարեկամութիւն և
զնոյն որդեգրութիւն աստուածային զսրբոյ մկրտու-
թեանն, յոգնաթիւք աւադիկ 'ի հաւատացելոց՝ յար-
բունս հասեալք, որք կանուխ և որք անագան՝ 'ի բաց
մերկանան մեղաք։

Այլ դու հայեաց ինձ ընդ սքանչելի արգասիս հա-
ւատոցն. զի ոչ սկիզբն միայն է նա սրբութեան վան-
երախայից վարակելոցն մեղաք, այլ և յարբունսն հա-
սելոցն և մեղաք մոռելոցն՝ սրբիչ է և կենդանարար։
Զանգի 'ի ձեռն հաւատոցն այնոցիկ միւսանգամ վերա-
կանգնեալք՝ առնեն պտուղ արժանի ապաշխարութեան։
Այլ դարձեալ է զօրութիւն հաւատոցն։

Սակայն և խելամուտ վայր մի աղաչեմ լինել հրա-
շալի պատմութեան հաւատոյս 'ի սկզբանն։ Յաշխար-
համած աւադիկ խաւար անգիտութեամբ խարխափելին տիե-
զերք՝ ամենատեսակ ախտիւք վարակեալք, և լոյս ծա-
գել զգանձուն ընդհաց հաձեցաւ Աստուած։ Իսկ յայս
գործ մեծահրաշ առան ընտրեցան. ոչ արդեօք։ Եւ
արդեաք և իսնատունք . . . ։ Զկնորսք երկոտասան կար-
գեցան երթալ հաւատս իմն քարոզել անթարգմանելի
խորհրդովք, և վարս իմն օրինադրել խստամբեր կրօ-
նիւք։ Սփռին աւասիկ տարածին, բաշխեն յիւրեանս

digitised by A.R.A.R.@

զտիեզերս. քաղաքք և արքունիք հոյակապք, և սահմանք խուժադուժք հնչեցին 'ի բարբառ նոցա. հրաշից աքանչելագործութիւնք լսելի եղեն առ հասարակ. անդէն հաւատացին մեծամեծք և փոքունք, աւագ որեարն և սինքքոր, տգէտն և գիտնաւոր։

Եւ առասիկ քեզ ըստ տգաւորութեանց նորոգատուր հաւատոցն՝ այլայլութիւնք մեծահրաշք. վարք փոխեին ազանց, և գէմք այլակերպին տիեզերաց։ Պերձութիւն տեղի տայ ցածութեանն, հանձարն յիմարութեան, փառիկութիւնն տեղի տայ խոտամբերութեան, մնասաշտութիւն՝ հաւատոյ խաչին։ Լսնարհութիւն սրտի, ուրացութիւն զգայարանացն, մոռելութիւն մարմնոյ, ատելութիւն անձին, 'ի ներքս մըտեալ զտեղին փոխանորդեն զանբարտաւանութեանն, զանձաթձակութեանն, զանխոռնութեանն, զհեշտախտութեանն, զանձնասիրութեան։ Եւ համբուն՝ աշխարհ անհաւատ և ախտաւոր՝ դառնայ լինի միանգամայն և հաւատացեալ և արդար և բարեկիրթ և կատարեալ։ Ո՞յսչափ է աքանչելագործութիւն հաւատոյն. և այնչափ յաղթեաց աշխարհի, որչափ և դարձոյց։ «Ո՞յս է յաղթութիւն, որպէս ասաց առաքեալն, այս է յաղթութիւն, որ յաղթէ աշխարհի. հաւատքն մեր»։

Եւ արդ նոյն հրաշագործութիւն հաւատոյն՝ որ ընդ տիեզերս յանհաւատս յայնժամ, նաև զօր ամենայն վերանորոգի այժմ 'ի քրիստոնեայ մեղաւորս։ Զանգի ասացեք ինձ վայր մի. ո՞ր, երբ և զիսրդ 'ի գործ ելանեն զգաստութիւնք վարուցն՝ հաստատունք, գեղեցիկք և կատարեալք։ Հոգի ապաշխարութեան, հոգի աստուածային օրինապահութեանց ոչ ահա ծնանի և բուծանի, և պտղաբերէ 'ի սիզբանց անտի և 'ի հրահանգաց հաւատոյն, զոր 'ի մուտացունս արկեալ մեղաւորաց՝ այնպէս 'ի զգայարանացն դաւեցան։

Ինքերցանութիւն մատեանից սրբոց, լուր ջերմեռանդն բանիցն Աստուծոյ 'ի քարոզս եկեղեցւոյ, անձնասարսահ զգուշաւորութիւնն 'ի կենակցութիւնս, երբեք երբեք միայնութիւնն՝ յորում ընդ միտս և ընդ Աստուծոյ խօսեացիս՝ ըստ առաքելոյն, և այլ երբեք անուշաս մնածութիւն ուղղութեան անձին։ Ո՞յս ամենայն

digitised by A.R.A.R.@

փուքք իմն են զօրաւորք՝ որ յերկնաւոր շնորհացն փը-
չեալք զԹմբրեալն սԹափեցուցանեն հաւատք . և ար-
ծարծեն բորբոքեն , մինչև աբանչելի օրինակաւ 'ի նո-
րոգածին կեանս պատրաստեսցի մեռեալ հոգին ։

Պտի տպաւորութիւն Ճշմարիտ տեսութեանց՝ յան-
դորրութիւն ամբոխելոյ երևակութեանն , և 'ի ջնջումն
խաբուսիկ պատկերացն ։ Պտի լուսավառ փայլատա-
կունք որ զմութ խաւարին մնացն տան մարդոյ Ճանա-
չել , և զանխաբ Ճշմարտութիւնն իմանալ , զոր կամ
երբեք ոչ ծանեաւ , կամ զոր աղօտացոյց և 'ի մոռա-
ցմամ դարձոյց ։ Պտի սանձակոծութիւն ցանկականին ,
որ զբաղցրութիւն երկրաւորացս դառնացուցանել մար-
դոյ , և զդառնութիւն ապաշխարութեանն քաղցրա-
ցուցանել ։ Լաւ 'ի վերջ կամք մարդոյն ներգործեալ 'ի
կենդանի հաւատոյ՝ շարժին ստեալ զմեզս և դարշիլ և
խոստովան լինել և մաքրիլ 'ի հուր եռանդուն զղջմանն ։

Այս գործ է հաւատոյն , այս հրաշագործութիւն
նորա , զոր միշտ ներգործէ 'ի հոգին մեռեալ , անգործն
'ի բարեաց , անբաժն յիմաստից բարեպաշտութեան
կրօնիցն ։ Լաւ եԹէ երբէք 'ի նմա մուտ գտանէ առած
մի և սկիզբն աստուածային , որ զընդարմացեալ հա-
ւատն ընդոստուցանիցէ , և զծագեալ լոյսն ընկալցի
հոգին , բարձ հրաշից տեսլեանն . տեսանիցես դու այ-
նուհետև՝ յանկարծ փոփոխեալ զկամն , զառ 'ի չարն
հակամիտութիւն լուծեալ , զդնացս վարուցն նորեալ ,
խզեալ զդժպատեհ կապն , հրաժարեալ 'ի հեշտա-
լեաց , սանձակոծեալ զկիրսն ։ Լաւ սիրէ և ինդրէ նա
այնուհետև ոչ այլ , բայց զխստամբերութիւն և զար-
տասուս ապաշխարութեան ։

Ո՛վ քանի տենչալի էր , եԹէ զաբանչելի զայս զօ-
րութիւն հաւատոյն , զոր ասեմն այսօր , բաղմաց և բաղ-
մագունեաց՝ նա առ հասարակ զփարձ առեալ էր անձամբ
յանձինս ։ Պայլ եԹէ , նուաղունք իցեն , ոչ հաւատոյն
ինչ մեղ է և ոչ շնորհացն , այլ ափշութեան և ան-
զգայութեան քրիստոնէիցն , որք անՃանաչք և ապա-
շնորհք երկնաւոր պարգևին , Թողուն այնպէս ծնողիլ և
ցամաքել հաւատոյն յանդգնութեան կեանս ։

Օ՜ առաքելականն ուրեմն զիսրատ և զբաջալեր առէք
դուք սիրով յանձինս , որ միանգամ ապաշնորհք եղե-

digitised by A.R.A.R.@

բուք և էք մեծի պարգևին. «Օ մնաս ածել զաւաջին զանխիղճ հաւատն որ 'ի ձեզ», ։ Վանգի «Յիշեցուցանեմ ձեզ, ասէ, արծարծել զշնորհն Աստուծոյ», Ոանաչել ձեզ՝ յոր վիճակ հիքութեան գտանէք դուք այսօր զանձինս ձեր. արդեօք մեռարուք հաւատոյն ձերոյ, արդեօք խորթացայք շնորհայն, արդեօք բնաւ ըեցայք այնպէս 'ի մեղանչել, զի իբրև անհրաժեշտ հարկ իցեն մեզն. արդեօք ընդ ամենայնի ինչ կրիւք զբաւեցան ոք, զի և ոչ գերութեանն զգայցէ, և ոչ՝ զատութեան երբէք փափաքիցէ։

Ասել, քրիստոնեայ, թէպէտ և 'ի վերջինսն ևս մնանեալ իցէ քո, մի երբէք յուսահատ լինիցիս. քանզի սերմն կենաց տակաւին դոյ 'ի քեզ, սերմն հաւատոց. ունիս աւադիկ զսերմն, արի ցանեա և բուսցի։ Հաւատաս արդէն զայն՝ զոր քեզն ուսուցանեն հաւատք յաղագս ահագին վտանգին. զայն եթէ թշնամացար ընդ Աստուծոյ, զայն եթէ անատոյդ է ժամանակ մնոյն, զայն եթէ յաւիտենական է վիճակ հանդերձելոյն։

Ասել սակայն հաւատալ, և միանգամայն ընդ մեղացն կապիլ, ոմ, զինչ այլ իցէ՝ բայց հրեշք դիւական, զի և դուք հաւատան, հրեշք մոլեգնութեան, անզգայութեան։ Պարտ իցէ ուրեմն ասել, եթէ հաւատաս այո, այլ զմտաւ երբէք չածես՝ ըստ առաքելոյն՝ զհաւատսն։ Ասել սակայն չիք հնար, սիրելիք, օժանդակութիւն 'ի հաւատոյն գտանել, թէ ոչ հանդէպ մտացդ ձշգրիտ նկարեսջիք զհաւատոյն. և խոկասջիք 'ի նոսա ուշի ուշով, սակայն մի՛ տագնապաւ, այլ խաղաղաւէտ սրտիւ։ Ամբեսցի այնուհետև ամենայն խոստութիւն սրտի, և ամենայն յուսութիւն ժրասցի։

Հապա դու վայր մի, սիրելի, յաղմկալից զբաղանաց աշխարհի հանդարտեալ, մուտ 'ի ներքս 'ի քեզ. կաց յանդիման Աստուծոյ իբրու զխորհրդածու հաւատոյն՝ զոր դաւանիս. յանձին կալ զի աստուածայինդ այդ հաւատ իբրու զձեռանէդ կալեալ՝ մինչև 'ի վեր անդր յերկինս հանցէ զքեզ՝ տեսանել զյաւիտենական վայելս զբարեաց գործոցդ. և անդուստ դարձեալ մինչև 'ի խորս գեհենոյն իջուսցէ զքեզ, տեսանել զխաւարն արտաքին, զլալ աչացն, զկրճել ատամանցն, զանշէջ

digitised by A.R.A.R.@

հուրն։ Լու ասասցես ցանձն. ահա վայր որ պատրաստեալ ինայ քեզ, թէ ոչ դարձցիս առ Աստուած։ Ահա զանձք աստուածային բարութեան, ահա խաչն տերունի, ահա արիւն փրկչական, ահա ինքնին և տէրն իմ 'ի խաչ ելեալ ձայն արձակէ, "Փրկիս, եթէ կամիս"։

Ո՛վ տեսիլ ազգողական, ո՛վ ձայն փրկական, որ զերկիւղ սուրբ վառէ 'ի սիրտ, զյոյս կենդանի, զապաշաւ ձգմարիտ, զտէր զմայլեցուցիչ։ Լուսիկ, եղբարք, տեսչութիւն և ներգործութիւն՝ զոր ազգեն հաւատք 'ի հոգին. զի զիղձն ծախեն զՀինան, և տենչ նոր 'ի նմա հաստեն զերկնայնոցն և զաստուածայնոցն. և այնպէս տաճար պատրաստեն զՀոգին և բնակարան ամենասուրբ Հոգւոյն։

ՄԱՍՆ Բ.

Ցեսէք, եղբարք, զիաւրդ սկիզբն և աղբիւր սրբութեան մերոյ հանդերձեցան հաւատք։ Այլ չէ շատ. նաև հիմն է նա հաստատութեան և հանապազորդութեան սրբութեան հոգւոյն՝ որպէս կանխեցաք եղաք։

Լու արդ՝ որ խոչընդոտն են սրբութեան հոգւոյն, է զի նուազ է զի առաւել, 'ի կրկնակի փորձութեանցն արնուն ոյժ։ Աջին փորձութիւնն տաղտկացուցանէ զՀոգին և ծանրացուցանէ 'ի կատարումն գործոց առաքինութեան՝ զոր պատուիրեն օրէնք, երկրորդն՝ հրապուրէ և քաղցրացուցանէ հոգւոյն զգործն ախտաւոր՝ զոր արգելուն օրէնք։ Ի կրկնակի յայս փորձութիւնս պատկանագրին այլ ամենայն փորձութիւնք 'ի քրիստոսեան ձակատամարտին, որ մարտ եղեալ կուռին ընդ մեզ. և երկոքին միանգամայն յիւրաքանչիւր ազգի հզօրք են և սոսկալիք. քանզի բնութիւնս մեր որչափ ձգնի խորշել 'ի տաղտկալեացն, այնչափ և փարի զբերկրականօքն։

Արդ ասեմ՝ եթէ առ ամենայն ազգ փորձութեանց պատրաստեաց մեզ Աստուած զէն և վահան 'ի զօրութեան անդ հաւատոյն։ Վանի աստուածայնազոյնս պարզեաց մեզ զայս Աբրահամն ոսկի, զայն՝ եթէ 'ի հո-

digitised by A.R.A.R.@

գեռ պատերազմիս ունիմք մեք 'ի հաւատոյն զամենայն զինուորութիւն առիրապահեստ մեզ. "Հաւատքն, ասէ, զինարան է ամենայն զինուց և բաշխէ իւրաքանչիւր զէնս, այլ և պահպանէ.. Դիցուք, ասէ, եթէ հեշտութիւնն կռուի ընդ քեզ, այլ և ազնուականութեան քո զարմն, և բարգաւաճ քո և հոյակապ վիճակ, և կեանք փափկասուն, և վայելչութիւնք կարգիդ, և զբաղանք կենցաղականք, և գործք պաշտամանց՝ որ առանձին և որ հասարակաց։ Այս ամենայն բիւրս ինն քեզ հարկ և պատեհս առթեն, և լարս ձգեն որոգայթ ոտիցդ, զի անխիղճ տեղի տացես դժպատեհ կրիցն, կամ թուլացուցանելով զերառատակն ժուժկալութեան, կամ դրժելով անդրժելի իրաւանցն, կամ դիմամարտելով զեղեցիկ թեւադրութեանց սիրոյն։

Եթէ քո այդ է մարտն, ասէր Երանելին, մի դու այլ ուստեք ոչ սիրելի ինդրեսցես քեզ զէնս, բայց 'ի հաւատոյն։ Զմնաւ ած դու յայնժամ, զինչ քեզ ուսուցանեն հաւատք յաղագս մերոցս առաքինութեանց, յաղագս նոցուն դիմամարտ մղութեանցն, յաղագս առօրէիցս անցաւորութեան, յաղագս յաւիտենիցն երջանկութեան. և 'ի վեր քան զամենայն՝ զմնաւ ած զի թեթև և ժամանակեայ բերկրութիւնս՝ զանժամանակն ունի պատուհաս. "Ուժամայն է որ բերկրեցուցանէ, յաւիտենական է որ տանջէ.. Զայսոսիկ զմնաւ ած, ասէ, և անշուշտ յաղթեսցես։

Դարձեալ, յաւելու Երանելին. է զի և անչքութիւն և գձձութիւն զարմիդ կռուի ընդ քեզ. քաջողջութիւնդ վատնգեալ, չքաւորութիւն գոյիցդ, նեղութիւնք և անձկութիւնք կենաց. է զի և անկարծելի պատահարք սանջեն, և է զի հանապազօրեայ հարուածք կոչկոձեն։ Այսոքիկ են դառնադառն փորձութիւնք, որ յանհամ բերութիւն տագնապեն զքեզ, և 'ի տրտունջ լուծանեն ոգեստանջ և սրտառուչ, զի և վայրիկ մի ևս 'ի մոլեգնութիւն դրդեն և 'ի յուսահատութեան կիրս։

Այս արդ մի երբեք սրտաբեկեսցիս սիրելի, ասէր Երանելին. արի դիմեա դու յապաստան հաւատոյդ, և յառաջին անդորրութիւն հաստատեսցէ զքեզ։ Զմնաւ ած, յինչ զքեզ հրահանգեն հաւատք յաղագս տիեզերական նախախնամութեան Աստուծոյ, յաղագս

digitised by A.R.A.R.@

'ի հուր փորձութեան մաքրելոյ ծառայիցն Աստուծոյ, յաղագս անթառամ պսակին խոստացելոյ հաճելոց։ և զի "Արժանայն թէթև նեղութիւնս՝ 'ի յաւիտենականն զառաւելութիւն փառացն գործէ 'ի մեզ... և զի "Ոչն արժանի չարչարանք ժամանակս հանդերձելոյն փառաց՝ որ յայտնելոց են 'ի մեզ...։ Արանզի "Արժանայն է որ տանջէ, յաւիտենական է որ բերկրեցուցանէ...։

Այս կնքէ երանելին, եթէ պատերազմ է կեանք մարդոյ 'ի վերայ երկրի. "Հաղում ինչ մեզ 'ի նեղբս արկանէ բանտարկուն, բազում ինչ և ցանկութիւնն, բազում ինչ իրք են և 'ի մերոց աստի մոռացութեանց, և առ հասարակ բազում են յուսահատութիւնքն. այլ ամենայնին զարմանն և յաղթութիւն՝ են հաւատք Հնմարիտք...։

Ո՛վ հաւատք, հաւատք, ամենայնի յաղթական, յամենայնի անվանելի։ Ո՛վ հաւատք յուսացելոց հաստատութիւն, և աներևութիցն՝ Հոգեստանկար տեսութիւն։ Հաւատք կենդանի, որ զզգալիս չտեսանելոյն առնէ, և իմանալեացն պատկառ կայ անքթիթի խորհրդով. որ զերկիր արհամարհէ, և երկնից յաղաւժամ փափաքէ. իբրև որ չունի աստէն քաղաք, այլ զհանդերձեալն ինդրէ։ Այթէ զառաքինութիւն զայս հաւատոյ զբռամբ ածցես, ամենայն երանութեամբ լի ես. քանզի և ամենայն առաքինութեանցն ժառանգորդ լինիցիս։ Արաքէ հաւատոյն արդասաւորութեան։

Այս զիմաստ այնուհետև աստուածայինն Պաւղոս գնաբածաղիկ հաւատացեալն ոչ վառեալ բորբոքեսցէ, զարմանալան հաւատոյն հանդիսիւք նախահարցն՝ յոսկեզիր մատենին առ համազգիսն։ Որ զի եթէ նորայինքն յայնժամ վայելեցին 'ի հնորհս ակեզբչին Պօղոսի, արժան իցէ 'ի դէպ ժամուս և մեզ ինքնին դէթ հաստուածով չափ վայելել 'ի նոցուն տառիցն։

Օ մնաս միանգամ ածէք, յիշեցուցանէր յայնժամ առաքեալն, 'ի վերջ քան զհասողութիւն մտայ զհանդէս հաւատոյն Աբրահամու. քանի անհնարին փորձեաց գնա Աստուած։ Այս սքանչելապէս անօրինեալ ուներ նմա ամուսին անդատին 'ի ծագիկ տիոյն ամուլ. իսկ 'ի ծերութեանն տայր նմա սին ունել առնուլ պտուղ յամուլ

արգանդէն։ Այս հանեալ զնա 'ի հայրենի երկրէն, ընդ երկար պանդխտութեամբ վրանաբնակ շրջեցուցանէ 'ի մէջ այլազան ժողովրդոց։ Այլ ասա հուակ ուրեմն 'ի տարաժամ հասակին հայր զնա առնէ աւետարանեալ զաւակին, և 'ի նմա խոստանայ զաձուին զարմին, և ըստ նմանէն՝ հրաման կարդայ նմա իւրով իսկ հայրենի ձեռաքն 'ի սպանդ ողջակիզի զնոյն զաւակ հանել նմա, և զհոտ անուշիչ հնազանդութեանն 'ի նուէր բուրել նմա։ Ո՛վ նորասքանչ փորձոյն, ո՛վ անհանդուրժելի փորձութեանն։ Անտիոն յայնժամ աղէտք սիրոյն տագնապեցան. քանի յուզեցան վտանգք խորհրդոց մեծի նահապետին յայս նոր հանդէս նախախնամութեան։ Որպէսզի որ Յոգիպտոս, վիշտքն 'ի Պաղեստին, սէր հայրենեաց, անձկութիւնք ճանապարհորդութեանն, անստուգութիւն հանդերձելոյն, անկակից թելադրութիւնք բնութեանն. աստի խորհրդածութիւն լուսոյ բանին, անդուստ պնդութիւն հաւատացեալ հոգւոյն՝ 'ի նուէր աւետաճնունդ զաւակին. միանգամայն այս ամենայն դաշնաւորեալք՝ մարտ եղեալ կռուէին ընդ միտս արդարոյն, զի կամ զերկնաւոր հրամանն ոչ տարցի 'ի գործ, կամ գոնեա յաստուածային խոստմանցն երկմտեսցի։

Այս տակայն պինդ և կենդանի հաւատով ամենայնին յաղթէ. քանզի տեղի ետ բնութիւնն, տիրացաւ շնորհն։ Այլ գնաց հաւատոմբն, և ոչ գիտէր յով երթիցէ. հաւատով պանդխտացաւ, խորանաք բնակեաց. հաւատով 'ի փորձութեանն մատոյց զսահակ պատարագ. եղ 'ի մտի թէ և 'ի մեռելոց կարող է յարուցանել Աստուած. զօրացաւ, ետ փառս Աստուծոյ, և 'ի հաւատոյն ոչ երկմտեաց անհաւատութեամբ. հաստատեցաւ, եթէ որ խոստացաւն, նոյն և կատարեսցէ։ Այսչափ էր Աբրահամու հաւատոյն հանդէս։

Իսկ ապա և զՄովսէսին մեծի ո՞ որ բաւական իցէ 'ի դէմն ածել ճշգրիտ պատկեր զհաստատուն հաւատոյն, ոչ 'ի փորձութեան ինչ դառնութեանց վշտացն իբրու զԱբրահամն, քան թէ 'ի հրապոյրս քաղցրութեան հեշտալեացն։ Անդի ազգայազուն որդեգրեալն 'ի փափկութեան եգիպտական գրգռալից արքունեացն, առ ոտն զորդեգրութիւնն հարեալ զաղքու-

digitised by A.R.A.R.@

նի, ընդ վշտացելոյ անաւագ ժողովրդեան ազգին իւրոյ չարչարեալ, մանաւանդ եթէ ընդ հանդերձելոյ իւրոյ փրկչին նախատակոծ հանդիսին, որպէս խորհրդածեաց առաքեալն, "Արարեալ համարեալ զնախատինսն Քրիստոսի՝ քան զմեծութիւն գանձուցն Եգիպտացւոց. քանզի հաւատովն ուրացաւ կոչիլ որդի դստերն Փարաւոնի, հաւատովք թողին զերկիրն Եգիպտացւոց. հաւատովք զանձրևոյթեան իբրև տեսեալ համբերութեամբ համարեցաւ.,։

Բայց նմանեն ապա և զայլոց առաքինացելոցն հաւատովք՝ հիւսեալ առաքեալն, անշուշտ մարգարէապէս ըստ նահատակելոցն 'ի Քրիստոս ազգեաց մեզ. զարիական մարտիրոսացն, զիոսատովանողացն, զկուսանացն, զմանուանցն, և առ հասարակ զսրբոցն, յորոց կէսք նախատակոծք, կէսք գանալիք, կէսք 'ի պրկոցս, կէսք 'ի քարկոծումն յօշելոք, հրակէզք, գազանակուբք, ջրահեղձոյցք, խեղդամահք. "Յանապատի մնացեալք, 'ի լերինս, և յայրս, և 'ի փապարս երկրի, կարօտեալք, նեղեալք, չարչարեալք.,։ Բայց, և ոչ այն խառնուած մարմնոյն 'ի նոսա, և ոչ հաստուած արտից նոցա. արդեաք յերկաթոյ էին մարմինք, կամ 'ի պղնձոյ ոյժ լանջաց նոցա։ Լէ, կրկնէ աստուածայինն Պաւղոս, ոչ. մարդիկ էին նոքա 'ի նմին դիւրեղծանելի կաւոյ, սակայն սերտեալք 'ի սնդուութենէ հաւատոյն. "Հաւատովք, ասէ, պարտեցին զթագաւորութիւնս, հաւատովք գործեցին զարդարութիւն, հաւատովք հասին աւետեաց.,։ Բազմադիմակ էին փորձութիւնքն, մի միայն էր վահան՝ որով պաշտպանեցին անձանց. հաւատոյն կենդանութիւն։

Բայց և մեք, սիրելիք, կնքեցեալ ընդ երանելւոյն, որ այսչափ շուրջ զմեզ մնծեալ ունիմք զբազմութիւն վկայիցն, համբերութեամբ ընթացցուք 'ի պատերազմ՝ որ առաջի կայ մեզ. զինուելառեալ հաւատովն՝ անքթիթ հայեցեալ 'ի զօրագլուխն հաւատոց 'ի Յիսուս, անքրթիթ 'ի հանդէս մարտից յաղթութեան նորա, անքրթիթ 'ի պսակահանքաղ կէտ չարչարակից սրբոց նորա. զի ընդ Ամենաբիտ հաւատացելոցն՝ ասցուք և մեք զհաւատոյն յաղթանակ։

digitised by A.R.A.R.@

ՄԱՍ Դ.

Ա.յլ քանզի յաղթանակ չիք կանգնել՝ առանց գործոց նահատակութեան, և ո՞ այլ ապա պտղաբերեսցէ մեզ զգործսն՝ յաղթանակին արժանի։ Ոչ այլ, բայց հաւատք. որ որպէս աղբիւր եկաց սրբութեան և հիմն սրբութեան, ըստ որում տեսէք, նոյնպէս և արմատ է սա պտղաբեր ամենայն սրբութեան մերոյ։ Վասն միտ դիք սիրելիք. այս արմատ եթէ ընձիւղ չարձակէ, երբէք ոչ սուրբ եղիցին պտուղք գործոց մերոց։ Այս արդ սեպհական է ամենայն արմատոյ՝ որ յառոյգութեան կայ, զկենդանութիւն իւր և զոյժ ծաւալել ողջոյն ընդ բունն, և նովաւ մինչև 'ի գիտակս բարձունս ոստոցն և բարունակաց տալ 'ի վեր զսննդական հիւթն, առ 'ի բուժիլ և ածիլ 'ի դալարագուարճ սաղարթսն, և ապա երփնագեղիլ 'ի ծաղիկս գեղեցիկս, և ապա յուռթանալ 'ի պտուղս բարեհամս։

Ի.րդ 'ի նոյն տիպ նմանութեան՝ արմատ սրբութեան մերոյ ասեմ զհաւատս։ Վանզի և ամենայն ազգ գործոց՝ յորս նահատակի արդարն, եթէ աստուածայինք իցեն և կրօնից, եթէ մարդկայինք և քաղաքականք, և եթէ բնաւորականք, առ հասարակ քրիստոնէականք են, առ հասարակ սուրբք, առ հասարակ պատկառելիք, յորժամ հաւատք սիրով յաջողեալք հրամայեն զայնոսիկ, ազդեն զայնոսիկ. վարեն և ուղղեն և 'ի գործ անդր մատուցանեն։

Օ.ձնմարտութիւն 'զայս գործնական քաջ 'ի միտ առնուք քրիստոնեայք, յորժամ թէպէտ և թշնամիք մոլութեան իցէք դուք և սիրողք առաքինութեան, սակայն անբաժ իցէք 'ի հաւատոյն սիրով յաջողելոյ 'ի գործս ձեր, և ուշ նպատակին ձերոյ չիցեն գերբնական շարժաւիթք հաւատոյն։

Հապա կրիս մի համեմատութեան 'ի քաջիկ խելամտութիւն առէք դուք ինձ զկրկին արդարոյն։ Կոյս արդար Ա.ստուծոյ, զոյ և արդար աշխարհի։ Ա.ռդարն աշխարհի նա է, զոր հասարակ բարբառով կոչեմք՝ այր

digitised by A.R.A.R.@

լաւ և համեստ. արդարն Աստուծոյ է այն՝ զոր առ հաստակ կոչեմք այր առաքինակրօն և բարի քրիստոնեայ։

Եթէ յարտաքին տարազ գործոց նոցա զակն յառցես, հազիւ թէ զանազանել զնոսա կարասցես։ Երկոքին միանգամայն ժիրաժիր գործաղիրք են ամենայն պարտուց ընկերութեանն՝ յորում կեան. բարեկամք են հաւատարիմք, ընկերք սիրունք, տանուտերք խոհականք, մտադիրք գերդաստանին, փութաջանք 'ի գործառնութիւնս, նախանձառորք հասարակաց բարւոյն, ձեռնտուք աղքատին, անկեղծաւորք, առատաձեռինք, յարգարունք, բարեկիրթք։

Ցեսէք, տեարք, քանի՞ շնորհիւ բարեմտին եղեալ պատուասիրեմ զլաւութիւն բնութեանն, իբրու որ 'ի մի կշիռ համեմատեմ զնա ընդ քրիստոնէական վեհ և վսեմական լաւութեանն։ Աստ աղէ՛ դուք զնեցէք լինձ առ նմին և զտարօրինակ արմատն, ուստի ընձիւղին նը մանօրինակ բարեմտութիւնքդ. և ըստ նմանէն զիտասջիք զանսահման տարբերութիւնն զկրկին զարդարոցն՝ զոր ասացաք, կամ զանպիտանութիւն կամ թէ զյարգ արժանեաց գործոց նոցա։

Ի միումն են բնութիւն, 'ի միւսումն շնորհք և հաւատք, որ թեւադրէ, որ կառավարէ, որ ներգործէ զամենայն գործս զարդարոյն Աստուծոյ։ Իսկ ուղղութիւն լուսոյ բանին, բնաւորականն բարեբաւութիւն, փառքն և պատիւ, շահախնդրութիւնն, դաստիարակութիւնն մարդկային, բոյս բարուցն, խառնուած մարմնոյն. այս ամենայն են շարժիչք, այսոքիկ՝ սկզբունք, այսոքիկ՝ սատարք, որ զայր զարդարն աշխարհի ածեն վարեն յամենայն 'ի գործս և 'ի խորհուրդս նորա։ Իսկ որ արդարն է Աստուծոյ, նորա հաւատքն է հոգի. որ եթէ հրամայէ և եթէ ծառայէ, եթէ խորհի, եթէ խօսի, եթէ կրէ, և եթէ որ զինչ և իցէ գործէ, առ 'ի հաւատոյն իւրմէ ունի կեանս և ոգի և շունչ. "Արդարն իմ՝, ասէ, 'ի հաւատոյ կեցցէ՝,,։

Ուստի ըստ առաքելական կանոնին, եթէ ոստքն և պտուղ զմոյն ունին զարմատոյն և զոյժն և զբնաւորութիւն, յորմէ ընձիւղին, "Եթէ արմատն սուրբ է, ասէ, ապա և ոստքն՝,։ Այս ուրեմն արդիւնք գործոց առ 'ի հաւատոյն կենսաբերեալք՝ տան արդարոյն Աստ-

digitised by A.R.A.R.@

տուծոյ զիրաւունս ժառանգութեան անեղբական վարձուցն հատուցման։ Այլ եթէ այս այսպէս ապա և արդարոյն աշխարհի գործք՝ պտղաբերեն պտուղ անցաւոր զշահս անձին, զկենցաղական բերկրութեանն, զծաղկընկեց փառացն, այլ առ յաւիտենական փառս կենացն հանդերձելոց՝ ումպէտք են և անպտուղք և ոչ ինչ։

Այս սակայն այս բնական լաւութիւնն՝ յորմէ պտղաբերեն բնական բարիք՝ է ուշ նպատակի, յոր ակն կառոյց կան զոգցես առ հասարակ. սա է և շուքն պարծանաց՝ որով պերճացեալ Ճոխանան մարդիկ. և յոր ուղղեալ կան հրահանգք և կանոնք քաղաքական դաստիարակութեան։ Ուստի և այր քաջանուն և այր մեծ համբաւեն, օրինակ իմն՝ զզինուորեալն 'ի մարտ, և զքաղաքագէտն 'ի գործառնութեան, զքաղաքացին 'ի տուրևառս, զվաճառականն 'ի տրապիզս, զարուեստագէտն 'ի խանութս։ Այս առ 'ի լինել յայսպիսեաց աստի քաջահամբաւից՝ յորդորեն խրախուսեն առ հասարակ ծնողք զորդիս, դաստիարակք զսանս, զդիւրաթեք հասակն ծերունիք։

Ո՛վ գերիք և ստրուկք աշխարհի, ասէք դուք, "Յիսուսի Քրիստոսի եմք. ուստի և այր աշխարհագէտ պարտ է լինել, այր քաղաքագէտ, այր քաջահամբաւ.,։ Քաջ է։ Այս ընդէր չասէք մանաւանդ. եթէ յանցաւոր և 'ի բազմանվտանգ աշխարհի եմք. ուստի և պարտ է հանապազ հսկել 'ի վերայ ամենայն զբնացից մերոց, ուղղել զվարս, այր լինել Ճշմարիտ աստուածասպաշտ, այր լինել բարի քրիստոնեայ. զի յաւիտենական է հատուցումն չարաց և բարեաց։

Թերևս անբարի ինչ իցէ կամ թէ անարգութիւն՝ վիճակիլ զվիճակ փառաւոր կարգի դաւանութեան աւետարանին. Թերևս ոչ ինչ պտղաբեր կամ պիտանացու ինչ իցէ՝ կարելն լինել սուրբ. Թերևս Ճառ խաչին և խորհուրդ խաչելոյն՝ յիմարութեան իցէ նիւթ կամ գայթակղութեան՝ իբրու Հրէից և հեթանոսաց. Թերևս մարդկան հանդուցն լաւագոյն ևս իցէ և փարելի առաւել քան զՀաճոյսն Աստուծոյ. և Թերևս չիցէ՞ այսուհետև խտիր և անջրպետ ընդ համեստ ոք այր հեթանոս և ընդ այր Ճշմարիտ քրիստոնեայ։ Այլ՝ Թե-

digitised by A.R.A.R.@

բևս ոչ ինչ պիտանացուք յուղղութիւն վարուց և 'ի բարեկրթութիւն կենաց՝ օրինակք սքանչելահրաշք և հրահանգք գերագոյնք տեառն Յիսուսի։ Այլ թերևս զկարգ և զսահման բարեբաւութեան չիցէ՞ մեզ արժան առնուլ մանաւանդ 'ի քառից աւետարանացն, քան թէ 'ի բարոյագիր մատենից փիլիսոփայից, և 'ի վիպասան հրահանգիչ առասպելաց։ Այս մեք ապիկար քարոզիչք՝ 'ի վանել տապալել զախտս և 'ի գովել և յիրաւացուցանել զառաքինութիւն՝ 'ի բաց դնիցեմք այսուհետև զսուսերս հատու զբանիցն Աստուծոյ. և փոխան այնորիկ զէն 'ի ձեռն առնուցումք զանօթս պատերազմի անզօրս զդիւրախաբ բանին և զշնչաւոր խմաստութեանն։ Իսկ ապա խաչն տերունի, արքայութիւնն վերին, և դժոխք նեղբին, և յաւիտենականութիւնն ինքնին գըլխովին, այս Աշմարտութիւնք մեծամեծք և անսուտք, որ զամենայն զօրութիւն վանեցին, որ զտիեզերս ամենայն դարձուցին, չիցէ՞ն այլ ևս բաւականք և հզօրիչք մեզ 'ի գործել զբարին։

Բաբէ, Աստուած փրկիչ հոգւոց և կատարիչ հաւատոց. զինչ այլ գործեսցուք մեք այսուհետև. զինչ այլ. բայց 'ի քեզ միայն անկանել և 'ի քո յօգնութիւն ապաւինիլ։ Աշխարհս կիրթ և քաղաքավար՝ ոչ պակասեսցի թերևս 'ի մարդկայնոց աստի առաքինութեանց. այլ արժանաւորքն յաւիտենական կենացն՝ պակասին. չիք նորա հաւատք, հաւատք որ սուրբս գործէ, հաւատք յորմէ կեան արդարք, հաւատք որ ազգէ և կենագործէ զամենայն զգնացս և զգործս զառն քրիստոնէի։ Այ՛ խացեալ է այսր ընդ եկեղեցւոյ քում սրբոյ 'ի ձեռն հաւատոցն Աշմարտութեան, այլ 'ի քէն հեռացեալ մեկուսի է սրտիւն, հոգւովն և խորհրդով։ Աշխարհս արտաքնայարդար ցուցակութեամբք յարդարուն, լի է մոլորութեամբք, լի խաբանօք. իսկ 'ի Աշըշմարիտ առաքինութենէ և 'ի քէն նուազեալ է և թափուր։

Օ մաղթանս ուրեմն զսրբոց աշակերտացն Յիսուսի պաղատեսցուք և մեք սիրելիք. "Յաւել մեզ տէր, յաւել մեզ հաւատս ..։ Այ՛ աբրեսցուք, սրբեսցուք զանձինս. վառեսցուք զվատեալն 'ի մեզ զհաւատս՝ կենագործեսցուք զմեռեալն։ Այս այնպէս դարձուսցուք 'ի

digitised by A.R.A.R.@

մեզ զոսկեղինիկն զայն զնահնի դարս եկեղեցւոյ, յորժամ անարատ և կենդանի հաւատովն այնպէս ինն քաղաքավարէին հաւատացեալք, զի և խտիր ամենևին չէր յայնժամ ընդ քրիստոնեայ և ընդ սուրբ։

digitised by A.R.A.R.@

ԿԱՐՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ՀԻՄՆ ՀԱՒԱՏՈՅ

" Տէր չեմ բաւական , եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես . . .
Այլեւ ասեմ ձեզ , և ոչ յիսրայելի այսչափ հաւատս գտի ,, :

Զիարդ իմաստութիւնն Աստուծոյ միշտ ընդ հակառակս մարդկայնոյն ներգործէ իմաստութեան : Զ հաւասիկ և նորահրաշ հաւատոյն Քրիստոսի հաստատութեան հիմն առնու ոչ զայլ , բայց զընդդիմամարտեալն ամբարտաւանութեան մարդոյ :

Հապա և այսօր , որ գիտէին կամիցի՝ թէ ոչք իցեն փականքն որովք դրունք բացցին հաւատոյն քրիստոնէութեան , դարձուցէ միանգամ զաչս և տեսցէ զփականսն . ուր արդեօք . 'ի բռին հարիւրապետի ուրումն հեթանոսի : Այլ ուր դարձեալ . 'ի ձեռս քանանուհւոյ ուրումն անհաւատի :

Այս ամենք նահատակեցան իմաստութեամբ , և զփականսն զայն կորզեցին խոնարհութեամբ 'ի ձեռաց ամբարտաւանեալ ժողովրդեանն Իսրայելի , և աստուածային փականացն այնոցիկ պարգևաբերք եղեն եկեղեցւոյն հեթանոսաց : Սէն ասէ . " Տէր չեմ բաւական , եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես ,, : Հաւասիկ քեզ Հանապարհ հաւատոյն , զոր եգիտ և զոր ընթանայ հեթանոսն : Իսկ և միւսն . " Այս տէր , և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց ,, :

digitised by A.R.A.R.@

Ի՞հաւասիկ քեզ շաւիղ հաւատոյն, յորմէ զարտուղեալ խուսէ իսրայելացին։

Իսկ անպուտաստ հաւատոյն տէր զինչ։ Ի՞նչ մին՝ եթէ «Լու ոչ Յիսրայելի այսպիսի հաւատս գտի երբէք»։ Լու առ միւսն, եթէ «Մեծ է հաւատք քո»։

Հաւատաց հեթանոսն խոնարհութեամբ հլութիւն սրտի զայն ինչ, յորմէ ըմբռստանայ հրէայն գոռոզութեամբ ապառում մնացն։ Լու ուր խոնարհ հեթանոսն առաջին եկաց՝ զպարագրեալն 'ի մարմնի Ճանաչէլ զաստուածութիւն, բարձրայոյն ժողովարանն և ոչ այսօր երկրորդ է 'ի կարգին։

Ի՞յլ զինչ զարմանք իցեն, սրտառուչ ձայնէր տէրն. «Ո՞ւրդ կարէք դուք հաւատալ, զի զփառս 'ի միմեանց առնուք, և զփառս զառ 'ի միոյն Ի՞ստուծոյ ոչ խնդրէք»։ Լու զինչ այլ, ով փառասէրք, զինչ այլ այնուհետև մնայ ինձ, ասէ Ի՞ստուած, 'ի նուիրաց անտի խնկոցն, զոր այրէք բարդէք դուք 'ի շուք փառաց ձերոց։ Լու զիա՞րդ հնար իցէ այնուհետև՝ եթէ նշոյլ մի լուսոյ իմոյ հաւատոյն ծագեսցէ 'ի մէջ այնչափ ծըխոյն բարդութեան. որ զուշ և զուրուշ մնաց ձերոց ողջոյն վարակեալ և զտեսութիւն աչացն շլացուցեալ է։ «Ո՞ւրդ կարէք դուք հաւատալ, զի զփառս խնդրէք»։ Տ՞եսանէ՞ս, զիա՞րդ խոչ ընդդէմ հաւատոյն միայն զՀպարտութիւնն եդ. զիա՞րդ և անկարելի՞ հպարտից կնքեաց զՀաւատաւն։

Ա՞ման որոյ յուշ ձեզ, քրիստոնեայք, և քաջ միտ դիք աստանօր. ահա յանդիման աչաց յերևան դայ ձեզ Ճշմարտութիւն մի, զոր Թերևս յամենայն իսկ 'ի համախմբութիւնս քարոզից ոչ լսիցէք դուք՝ կամ իբրև նուազ ծանօթ, կամ թէ իբրև առաւել կարևոր։

Ո՞ւրդ զինչ արդեօք, համարիցիք Թերևս, եղբարք, ցայսօր, եթէ ներանձնացեալդ այդ առաքինութիւն քրիստոնէական, զխոնարհութիւնն ասեմ, սեպհականեալ միայն իցէ մենաստանաց, վանաց, կամ անապատ վայրաց. և նշանագրեստ միայն իցէ առաքինութիւնդ այդ առանձին միանձանց և կրօնաւորաց յաշխարհէ հրաժարելոցն. զխոնարհութիւնն ասեմ՝ զայն որ յամենայն իսկ ժամանակի առաքինութիւն եկաց միակ

digitised by A.R.A.R.@

կարևոր և միակ էնիք զրոշմաւոր՝ սեպհական առ հաստարակ ժողովրդեանն Քրիստոսի. մինչ զի առանց լինելոյ խոնարհ՝ չիք և չիք հնար երբէք լինել քրիստոնեայ։

Այլ զիարդ, որ միանգամ զմեծապէս զայն զովութիւն աստուածային բերանոյն առ խոնարհ հեթանոսն լսիցէ՝ որպէս վայր մի յառաջ լուարուք, ըստ նրմանէն դարձեալ և զկշտամբանս զնորուն բերանոյ առ գոռոզ հրէայսն, զիարդ այնուհետև դեղևեսցի ոք իբրև անշուշտ յաստուածուստ պատգամ զմեծին Այգոստինոսի ընդունել զառածն, եթէ՝ որ միանգամ ըզտուն քրիստոնէութեանն կամիցի կանգնել, հիմն շինուածոյն դիցէ 'ի խորս զխոնարհութիւնն. "Օ մտաւածես դու, ասէ, ով մարդ, խորհիս զբարձրաբերձն զայն շինուած մեծապէս կանգնել, նիստ դու նախ խորհեաց յաղագս հիմանն խոնարհութեան"։

Այլ արդեաք, սիրելիք, լուեալ իսկ է ձեր բազումանգամ աստանօր 'ի գեղեցիկ քարոզչաց բանին՝ յաղագս մեծի հաւատոյն մերոյ անվանելի հաստատութեան 'ի շարժիչ առիթս իւր, յաղագս անպատիր դաւանութեանն 'ի խորհուրդս իւր, յաղագս ծագմանն 'ի սկիզբն իւր, յաղագս մեծվայելչութեանն 'ի տարածմանն, յաղագս անայլայլակ պնդութեան 'ի վարդապետութեանն, յաղագս աստուածահրաշ սրբութեան յօրէնս իւր։ Այլ զի լուեալ իսկ է ձեր զայսոսիկ, իսկ զարդիս վայր մի խելամուտ լերուք, որպիսի՞ ինչ ուրեմն իցեն հաւատքն ձեր. որպէս զի և խելս ապա խառնեսջիք 'ի խնդրել ձեր իմաստութեամբ՝ եթէ որպիսիք արդեաք ուրեմն պարտիցին լինել և հաւատացեալք։

Արդ ուրեմն քաջ միտ դիք. հաւատք մեր ողջոյն՝ հաւատք է հիմնեալ 'ի խոնարհութեան. և այս ըստ կրկնակի տիրական մասանցն, որ լինիցին մեզ իբրև սինք կրկին հաստատութեան քարոզին մերոյ։

Զանգի հաւատք Քրիստոսի խնդրէ յիւրոց աշակերտելոցն՝ առաջին զհլութիւն մտաց. և չիք հլութիւն մտաց առանց խոնարհութեան։ Այլ երկրորդ անգամ՝ խնդրէ զհպատակութիւն կամաց. իսկ հպատակութիւն կամաց անհնար է առանց խոնարհութեան։ Հլութիւն մտաց՝ առ 'ի հաւատալ ամենայնին, զոր

digitised by A.R.A.R.@

ինքն ուսուցանէ։ Հպատակութիւն կամաց՝ ձեռն 'ի գործ կատարել զամենայն՝ զոր ինքն հրամայէ։

Այս է բովանդակ, միակ և տիրական մեծութիւն հաւատոյն Քրիստոսի։ Ոչիք նմա, չիք երբէք դաւանութիւն գտանել, բայց եթէ 'ի խոնարհաց. չիք նմա, չիք երբէք կամակատարս գտանել, բայց եթէ 'ի խոնարհաց։ Հապա դուք առ հասարակ ժողովուրդք աշխարհաց, ազգք ամենայն, լեզուք ամենայն, խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն, խոնարհեցարուք տիեզերք ընդ Աստուծով՝ որ մեծ է քան զձեզ. և գիտացէք անպատիր, եթէ չիք փրկութիւն արտաքոյ հաւատոյն նորա, և չիք հաւատք արտաքոյ խոնարհութեան ձերոյ։

ՄԱՍՆ Ա.

Արդն կաթողիկէ առ հասարակ ըստ հրահանգացն և ըստ դաւանութեանն՝ 'ի մասունս բաժանի հաւատոյն որ 'ի հանգանակի, և 'ի մասունս բարոյականին որ 'ի տանաբանէի։ Առաջինն մեծագոյն մասամբ 'ի դաւանութիւնն 'ի վերայ է քան զկշռութիւն լուսոյ բանին։ Երկրորդն բազմագոյն մասամբ 'ի պատուիրանն՝ ընդդիմանարտ է հաճոյից կամաց։

Քաջայայտ ուրեմն է, սիրելիք, քանիցն ապա հլութեան մտաց պէտք իցեն խոնարհել հաւատալ զայն ինչ, որ նմա անհասանելին իցէ. քանիցն և հպատակութեան կամաց զինանել՝ կատարել միշտ զայն ինչ, որ նմա անհաճոյն իցէ։ Այս ահա 'ի հլութեանս յայսմիկ և 'ի հպատակութեան հաստատեալ կայ ողջոյն ոյժ պնդութեան և հոգի ճշմարիտ խոնարհութեան։ Այս այս խոնարհութիւն է՝ զոր աշակերտեալք 'ի հարցն սրբոյ՝ կոչեմք հիմն և կնիք քրիստոնէութեան. "Հաւատք, ասէ մեծն Աւգոստինոս, չէ հպարտից, այլ խոնարհաց"։

Զի դու գիտ ինձ միտս իմն ըմբոստ և ամբարտաւան, որ յանձն երբէք առնուցու 'ի պատճառս հաւատոյն ելանել ըստ չափ մտաց իւրոց և հաւատալ անհա-

digitised by A.R.A.R.@

սանելեացն։ Օ իմիրդ մարթասցին այնպիսի դաւանութիւն տալ ամենայն խորհրդոց՝ որ վեր 'ի վերոյ տեսութեամբն հակառակ ամբառնան լուսոյ բանին, իսկ Ճշմարտութեամբ 'ի վերոյ են միայն քան զլոյս բանին։ Օ՞ր Ճանապարհ, ասա ինձ, զի՞ր եղանակ երբեք գտցէ նա առ 'ի Ճշգրտիւ հետախուզել զծածուկս գաղտնեաց զաղատութեանն Աստուծոյ, զնախագիտութեանն Աստուծոյ, զծածուկս կարգաւորութեանց զբնական և զդերբնական նախախնամութեանն Աստուծոյ։

Օ իմիրդ երբեք դարձեալ բաւական իցէ Ճառել ինչ մի յաղագս նախասահմանութեան ընտրելոցն, յաղագս անարդութեան նախագիտելոցն, յաղագս ազատութեան երկաբանչիւրոցն։ Օ իմիրդ մարթ իցէ երթալ 'ի ծով, և անդ 'ի խեցի մի կամ 'ի բաժակ դուզնաքեայ Ճգնել ամփոփել զՋուրս համատարած. "Զի զմեծվայելչութիւնն, ասէ, քննել խնդրեսցէ, 'ի փառայն ընկղմեսցի.,,։ Բանզի 'ի մեծվայելչութիւն անսահման լուսոյ՝ կամ անքթիթ արժան իցէ զաչսն կառուցանել, կամ բնաւ իսկ շլացուցանել։

Յս անշուշտ 'ի փորձ արդեանցն մատուցեալ՝ զիր դու զմարդ յանդիման հաւատոցն իւրոց, և տեսցես զիմիրդ նա անդէն տագնապեալ 'ի խորհուրդս, այլ յայլմէ շուարեսցի 'ի հոգին։ Բանզի զիտեն միտք նոքա հաւաստեաւ իբրև քաջածանօթ սկիզբն հանգուցնատիպ նմանութեան, եթէ որ նոցն են ընդ միում երբորդի, նոցն են ընդ միմեանս։ Յս ահա անդէն խորհուրդ ամենասուրբ երրորդութեան աստուածային անձանցն տապալէ զգիտութիւն նորա. քանզի երեք անձինք զանազանեալք մի գոլով ընդ աստուածութեան, սակայն չեն երեք աստուածք, այլ աստուած մի։

Դարձեալ Ճանաչեն միտք մարդոյ բացերևակի, քանիցն անջրպետութիւն ամբաւ կացցէ ընդ սահմանաւորն և ընդ անսահմանն։ Յս ահա անդէն տագնապեալ վրդովէ զնա անՃառելի մարդեղութիւն բանին Աստուծոյ. որ ընդ անհուն ասպարէզ ընթացեալ իբրև հսկայ անսահման անջրպետին՝ որ կայ ընդ մէջ կրկին բնութեանց մարդկայնոյն և աստուածայնոյն, առեալ միաւորեաց զնոսա 'ի միում անձին իւրում, և եղև նոցն մի Ճշմարտապէս Աստուած և մարդ։

digitised by A.R.A.R.@

Պարձեալ ունին և զգայութիւնք զիրարմ արդեանց իւրեանց. քանզի 'ի զանազանիչ պատահմանցն տեսութենէ գիտեն նոքա ճանաչել և զզանազանեալ գոյացութիւնս իրաց։ Այլ ահա անդէն յանձնառաջիր խորհուրդ սրբոյ հաղորդութեան գոն և մնան և տեսանին ամենայն երևոյթք և պատահմունք հացի և գինւոյ. և սակայն չիք անդանօր գոյացութիւն ոչ հացի և ոչ գինւոյ։

Իսկ և մարդ ինքնին խելամուտ անձին իւրոյ և գործոց իւրոց՝ գիտէ իսկ ճշգրիտ եթէ ազատ և անձնիշխան է ինքն բնութեամբ. և սակայն զգործս իւր բարիս առ յաւիտենական կեանս՝ զոր ազատութեամբն գործէ, պարտի ընծայել շնորհացն։ Այլ թէպէտ 'ի գործս անդ իմանայ ինքն զՋան և զՀիզն բնութեանն, իսկ զշնորհացն տեսանէ և ոչ ինչ, 'ի վերայ այսր՝ պարտի քան բնութեանն զոր իմանայ, առաւել ևս շնորհացն վերադրել՝ զոր չիմանայ. ուստի և համարել զայնոսիկ ոչ այնչափ արդասիս արդեանց իւրոց, քան թէ պարգևս շնորհացն Աստուծոյ։

Այլ այսպէս ապա մարդ՝ որ մերձենայ առ Աստուած 'ի ձեռն հաւատոյն, մարդ է նա այնուհետև բոլորովին անձնանուէր. քանզի նուիրեալ է նա Աստուծոյ համանգամայն զլոյս բանին իւրոյ, զփառսն և զբանս. նուիրեալ է Աստուծոյ զիրարմ արդեանցն, զզգայութիւնսն, զկար իւր և զամենայն խորհուրդս իւր և զիղձս. իբրու այն որ մնադիւր յանձնառութեամբ 'ի գերութիւն տայ զիւրն զամենայն՝ կամաց և տնտեսութեան և առաջնորդութեան հաւատոյն, որ ողջոյն յանձնէ իւրմէ կապտէ և մերկէ զնա։ Այս է զոր խորագոյնս ասաց առաքեալն. "Գերեմք զամենայն միտս 'ի հնազանդութիւն"։

Իսկ ոյր ուրուք արդեօք 'ի հնազանդութիւն։ Հաւասիկ քեզ և այլ իմաստ յոյժ դժուարմբերելի մարդկայինս ամբարտաւանութեան. "Ի հնազանդութիւն, ասէ, Քրիստոսի"։ Նա՛ւ է. ոչ այնչափ տարտնապէ սասանեցուցանէ զմարդ մեծվայելչութիւն փառացն Աստուծոյ, որչափ զձգութիւն խոնարհութեան մարդացելոյն Աստուծոյ. "Ի հնազանդութիւն, ասէ, Քրիստոսի գերեմք զմիտս"։

digitised by A.R.A.R.@

Ի՛անգի քաջ միտ դիք. նաև վայրենիք և խուժադուժ ազգինք կամակարութեամբ դաւանին զմի Աստուած կառավար տիեզերաց դերադոյն, և ինքնիշխան բաշխող կարգաց և վիճակաց մարդկան։ Այս հաւատ տնկակից բնաւորեալ է 'ի բնութեանս. ոչ ազգաւ և տեսանեմ՝ զի 'ի վտանգս և 'ի յանկարծադէպ զարհուրանս ինքնագրաւ բնութիւնն այլ յայլմէ ստիպի 'ի բնէն՝ աչք 'ի վեր յերկինս զԱստուած կարդալ յօդնականութիւն։ Այլ անաստուած լինել չիք հնար. շատ է միանգամ 'ի գնին կալ արարածոց, և յակառնոյս իւր փայլակն աստուածութեան խոտորեսցէ զաչս նորա. "Երկինք, ասէ, պատմեն զփառս Աստուծոյ"։

Յայտնի է այս ամենայն։ Այլ 'ի միում անդ էութեան աստուածութեանն զերրորդութիւն անձանցն դիտել, այս խնամս և խելամտութիւն պահեալ կայ միայն աչաց հաւատոցն։ Ի վերայ այսր՝ ինքնին և լոյս բանին՝ որ խորհրդոյն չհասանէ, սակայն առ հասարակ խելամտեալ՝ դէպ և արժան համարի լինել զԱստուած խորհրդոց անձառից՝ որ 'ի վեր քան զմիտս իցեն մարդոյ։ Ուստի և 'ի մանաւորի մտադիւր յանձն առնու հաւատալ զայն ինչ, զոր 'ի հասարակի մերժեաց նա իբրև անհաւատալի. ուստի և ցորչափ կան միանս աստուածավայելուչքն, բարութիւնն Աստուծոյ ամբաւ, իմաստութիւնն Աստուծոյ անսահման, զօրութիւնն Աստուծոյ ամենակարող, միտք մարդոյ՝ զի այսպէս ասացից, մխեալ 'ի նեղքս 'ի լոյս անմատոյց փառացն՝ միշտ երկրը պագէ և խոստովանի։

Այլ ապա 'ի ձնոս մարդեղութեան բանին Աստուծոյ, գործ նոր և չքնաղ և անօրինակ, այլ և անհնար անկանել 'ի սիրտ մարդոյ. չհանդուրժէ բնութիւնն, եղջիւր ամբառնոյ ամբարտաւանութիւն մտացն, վաբանին խորհուրդք, խռովին լսելիք. աստանօր ցնորեալ յիմարանան հեթանոսք, աստանօր ըմբոստացեալ ապարթանեն հերետիկոսք, աստանօր գայթակղեալ դարշին հրեայք. որպէս համարձակաձայն բարբառի հոգին Պաւղոսի, "Մեք քարոզեսցուք, ասէ, զխաչելեալն Քրիստոս. հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն"։

Այ կայք են աւադիկ պրակքն առաքելոց, և ողջոյն

digitised by A.R.A.R.@

տարեգիրք եկեղեցւոյ. ոչ երբէք այնպէս բարձրայօնս շարժեցին զգլուխս հեթանոսք և ըմպահկեցին, քան յորժամ բան լինէր 'ի կնքել 'ի Ճակատուն զխաչն։ Օ՜ինչ ասասցուք զնոցուն իսկ զհրէիցն, որ ժամանակակիցք Լաղովրացւոյ տեառն, թէպէտ և զօրինակս եւ տեսեալ նորա զգերաշխարհիկս, և զարուեստս հրաշիցն անՃառելեաց, երբէք յանձն չառին զաստուածականն տալ նմա պատիւ, իբրև զի այնչափ խոնարհեալ տեսանէին զնա 'ի մարդիկ. ընդվզեալք գոռոզութեամբ երկիր պագանել այնպիսւոյ Աստուծոյ, որ արդէն իսկ չառնոյր յանձն՝ երկրպագուս իւր ունել ամբարտաւանս. "Հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն"։

Այլ զի՞ է մեզ խնդրել զարտաքինսն։ Ի բուն 'ի յարկի քրիստոնէութեանս, ուր այնչափ ինչ մարթի զօրութիւն մկրտութեանն, հնարք խորհրդոցն, պարգև հաւատոցն. և զիա՞րդ է զի և յամենայն իսկ 'ի դարս ապստամբք ըմբոստացան ընդդէմ խոնարհ հաւատոցն մարդացելոյ բանին Աստուծոյ. և 'ի ջոկս հերետիկոսացն՝ որ չարչարեցին զեկեղեցի՝ և բազմադոյնք ընդդէմ յաւակնեցան Քրիստոսի Աստուծոյ։ Ով միայն անուանց ինձ անբերելի է, և ձեզ պատերազմող լսելեաց։

Սոքա 'ի ջոկս ջոկս տրոհեալք, սակայն և միացեալք ընդդէմ նորա, կէսք զմարդկայինն 'ի նմանէ կապտեցին զբնութիւն, կէսք զաստուածայինն զլացան նմա, որպէս զի նուազ արասցեն 'ի մեծասքանչ խոնարհութիւնս նորա կամ զհաստատութիւն հիմանն կամ զՃանՃանչ լուսոյ օրինակին։ Ոմանք թափեցին զամենայն՝ թօթափել զլուծ հաւատոցն, զոր տանել չէր մարթ՝ բայց ընդ հեշտ և ընդ կամակ պարանոց խոնարհեալ թիկամբք։ Այլք իսկ Ճշգրտելով 'ի նմա, զոր այն ինչ մանուկ ընծայեալ 'ի տաՃարն լուսաւ զնմանէ մայրն, եթէ ընդ դրօշակաւ նորա միանգամայն և գրեսցին մարդիկ խոնարհութեամբ, և ծընկեցք լիցին ապստամբք գոռոզութեամբ. "Այս կայ, ասէ, 'ի գլորումն և 'ի կանգնումն բազմաց, և 'ի նշան հակառակութեան"։

Ահա քանիցս խոնարհութեան սրտի, եղբարք, և հլութեան մտաց պէտք էին 'ի հաւատս քրիստոսական

digitised by A.R.A.R.@

դաւանութեանս, և յերկրպագութիւն հոգւով և ճշմարտութեամբ խաչելոյն Աստուծոյ։ Զանի՛ և խոնարհութեան սրտի և հպատակութեան մտաց պէտք իցեն և 'ի նմին իսկ ուղղափառութեան դաւանութեանն, եթէ երբեք պատահեսցի՝ որպէս և պատահեաց իսկ բազում անգամ, յուզել խնդրոց և ջերմանալ վիճից և վարանել տարակուսանաց 'ի մասունս ինչ հաւատոյ՝ կամ ուղղափառաց ընդ ուղղափառս, կամ ուղղատեսից ընդ չարափառս։ Զոր զինչ. թերևս յայնժամ 'ի վարանան յայնոսիկ և 'ի տարակուսանս ինքնի՞ առ մեզ յերկնից հրեշտակ, և լուծցէ զվարանսն, և յայտնեսցէ զճշմարտութիւնն։ Զա մնասանդ և յայնժամ մեծապէս հլութեան և խոնարհութեան պէտք են մարդոյ, զի յանձն առցէ խոնարհել բնութենակից իւր մարդոյ կամակար հպատակութեամբ մտաց իբրև Աստուծոյ. քանզի և երկնաւոր վարդապետին հրահանգ զայս պատուիրէ իւրոց աշակերտելոցն, եթէ "Զոր ձեզ ասէ, ինձ ասէ"։ Ուստի և պարտ է յայնժամ զամենայն հպարտութիւն 'ի բաց եդեալ՝ զմիտս և զկարծիս խոնարհել ժողովոյ մարդկան հոգւով սրբով համախմբեալ ելոյց 'ի սինհոդոս. և չիցէ՞ այս ամբարտաւան սրտից խոց վերջին և նուաճութիւն դժոխրմբեր, որում և ոչ անտացեալքն եղեն հերետիկոսք։

Զի խոնարհել Աստուծոյ, է խոնարհել արարչի. և խոնարհել Քրիստոսի, է խոնարհել Աստուծոյ մարդացելոյ։ Զայլ թէ պարտ իցէ խոնարհել և մարդոյ ըստ ոյ, և 'ի նմանէ առնուլ անդիմանարար և ընդդրկել խոնարհութեամբ զսահման դաւանութեանն, այս խոնարհութիւն է մտաց՝ զոր ճշգրտիւ խնդրեաց 'ի հաւատացելոց իւրոց խոնարհութեանն վարդապետ և նախատիպ Քրիստոս ասելով. "Զոր ձեզ ասէ, ինձ ասէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ"։ Զանիւն սիրով ընդդրկեցաւ միշտ այս խոնարհութիւն մտաց 'ի հարազատ որդւոց եկեղեցւոյ. և քանի՞ ամբարտաւանութիւնք զընկեցաւ միշտ 'ի կամակոր ըմբոստացելոցն։ Զայլ չէք յաշխարհի բարձրութիւն գիտութեան, և ոչ ծագ հանճարոյ խմաստութեան, որ ապահարկ կացուսցէ զմարդ 'ի խոնարհ հպատակութենէ, ատի եկեղեցւոյ, զոր Քրիստոսն աւանդեաց։

digitised by A.R.A.R.@

Մ'ինչ զի և առաւել սիրելի Աստուծոյ գիտեմ զիսուն նարհել մարդոյ առ մարդ, քան առ Աստուած. զի և հրեշտակ Աստուծոյ երևեալ Կոռնելեայ՝ յաշակերտութիւն հրահանգութեան առաքէ զնա առ Պետրոս՝ Լաւ ինքնին Քրիստոս իջեալ առ Պաւղոս, վարժապետնման կարգէ զ'նանիա։ Ոչ էին ինչ արդեօք բաւականք նոքա, մին Աստուած, և միւսն հրեշտակ Աստուծոյ, քաջիկ և անձամբք հրահանգել զնորածաղիկ զաշակերտսն յայն ինչ, զոր խոնարհագունիցն յանձն արարին վարժապետաց։ Բաւականք էին, այլ չարարին։ Ռանզի'ի կարգի հաւատոցն չյաջողի մարդ ունել ըզկատարեալն խոստովանութիւնն առ Աստուած, որ ոչն ունիցի խոնարհութիւն հպատակութեան առ մարդ։ Ուստի և ո՞ որ և իցէ, եթէ "Եկեղեցւոյն ոչ լսիցէ, եղիցի իբրև զհեթանոսն և զմաքսաւորն"։ Ա՛ռն այնորիկ և միտք ամբարտաւան, որ ոչն խոնարհեսցի անսալ եկեղեցւոյ, մի ակնկալցի երբէք առնուլ ինչ Աստուծոյ. և որպէս յաստանօր յարքայութեանն Քրիստոսի՝ յեկեղեցւոջ, չիք մնան և բաժին մարդոյ հրպարտացելոյ, նոյնպէս և յարքայութիւնն երկնից չիք նորա մուտ ամենևին։

Ռանզի և կարի իսկ քաջ. սիրելիք, որչափ ինչ խոնարհութեան մնաց պէտք են'ի հաւատս, այնչափ և խոնարհութեան և նուաճութեան սրտի պէտք են'ի գործսն հաւատոց, որ'ի բանս, որ'ի գնացս, որ'ի խորհուրդս, որ'ի սանձել զկիրս, որ յարհամարհել զփառս. և միով բանիւ՝ որ յանտես առնել զմարդկայինսն առ աստուածայնովք։ Ռանզի և չէ շատ առն քրիստոնէի հաւատալն միայն. այլ արժան է զսրտին հաւատսն նաև յարդեանցն ցուցանել. "Հաւատալ, ասէ, սրտիւ յարդարութիւն, և բերանով խոստովանել'ի փրկութիւն"։

Խոստովանել պարզերես և համարձակաձայն՝ յորժամ պէտքն պահանջիցեն. թէպէտ և 'ի կենակցութիւնս սանձարձակ և թուլահաւատ որերոյն և խառնակեցիցն, թէպէտ և քում վարկին և յարգին զեան հասցէ, թէպէտ և գոյիցդ, թէպէտ և կենացդ՝ եթէ հարկն պահանջեսցէ՝ ընդ բազմահոյլ մարտիրոսացն։ Եթէ ծաղր իցէ, եթէ նախատինք, անցանել քաջու-

digitised by A.R.A.R.@

թեամբ և արհամարհել. եթէ մարդկային նկատմունք՝ առ աստուածայնովքն առ ոսն կոխել. վնեղողութիւն և զթողութիւն թշնամւոյն՝ թէպէտ և գձնութիւն համարեսցի առ մարդիկ՝ նախասահմանաբար քան զփառս վրէժխնդրութեանն ընտրել. զմեռելութիւն անձին՝ քան զբերկրութիւն զգայութեանն, զաւետարանականն աղքատութիւն՝ քան զընչաւէտութեան պերճութիւն։ Ա՛յ մեծ ինչ է քրիստոնէին, եթէ ընկերին պատուոյ չգժրէ. պարտի և նեղումն տալ և համբերել փնասակարին իւրում։ Ա՛յ մեծ է նմա, եթէ ինչ մի չբարձցէ յօտարէն, պարտի և շնորհել 'ի սեպհական գոյիցն. և կարաւոյն իւրում՝ քան իշխան և տէր՝ առաւել ևս մատակարար աղքատաց ծանիցէ զանձն և աւանդապահ։ Ա՛յ մեծ ինչ է քրիստոնէին, եթէ յամենայն արգելեալցն զաչսն դարձուսցէ և զձեռս. պարտի սանձել նաև զիղձսն, նաև զիսորհուրդսն. և տեղի չտալ վրէժխնդրութեան կրիցն, նաև 'ի ծածուկս սրտին։

Ի՛տեղութիւն կալցի քրիստոնեայն, բայց միայն ընդդէմ անձին. սէր կալցի, բայց 'ի հատուցանել զայն թշնամւոյն իւրոյ. ժուժկալեսցէ 'ի հեշտալեայն. 'ի խաչէ մի՛ փախիցէ, և զչարակրութիւնսն սիրով ընդգրկեսցէ։ Ի՛ովին գոհութեամբ և ըղձմամբ համբուրեսցէ զձեռն Ի՛ստուծոյ, յորժամ բարերարէ և յորժամ դանէ. և ընաւ իսկ յԻ՛ստուած յանձն արասցէ որպէս զկեանս իւր, նոյնպէս և զմահ իւր։ Ի՛յ իբրև զամենայն կատարեսցէ ըստ հաճոյից կամաց նորա, 'ի վերայ այսր և մի՛ ինչ մեծ համարեսցի զանձն, կամ փքասցի և հպարտասցի։ Ի՛յս մանաւանդ առաւել ևս յայնժամ դողասցի վասն անձին, եթէ արդեօք 'ի սպառ յարատևեսցէ՞ 'ի ձրիաբաշխ շնորհին։ Օ որօրինակ նաւապետ որ զնաւ իւր փարթամ կարասեօք առաւել ակաղձուն լցեալ իցէ, առաւել զանգիտեալ խիթասցի յարկածից ալէտանջ ծովուն։ Ի՛նչ է սքանչելի հրահանգ երկնաւոր վարդապետին. "Յորժամ զամենայն հրամայեալսն ձեզ, ասէ, առնիցէք, ասասջիք՝ ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել, ասարաք,,։

Ի՛նչ ապա յայս ամենայն նահատակութիւնս, քանզի միտ դիր քրիստոնեայ, յայս ամենայն նահատակեսցիս

digitised by A.R.A.R.@

դու աստ 'ի բազմորդայթ աշխարհի, 'ի հրապոյրս ամ բարտաւանութեան աստի կենաց, 'ի յոյս ակնկալութեան հեռաւոր հատուցմանն, 'ի հաւատ տեառն՝ որ ոչն տեսանի բայց 'ի մուրիկս փողոցաց 'ի պատժառորս բանտից, 'ի խօթս և 'ի հիւանդս անկելոցաց։ Ընդ սոսա խոնարհել պարտ է, և 'ի սոսա ճանաչել պարտ է ինքնին զտէրն Քրիստոս և պատուասիրել զնա։

Զարձեալ՝ զիմաստ մարդ երբեք բաւական իցէ առանց հաստատիչին սկզբանց խոնարհութեանն Քրիստոսի՝ յամենայն 'ի կեանս 'ի դիմի հարկանել հանապազ օրեայ աղցից և արկածից և ամբոխմանց 'ի քաղաքական ընկերութիւնս և յառանձնին 'ի բազմաղբաղ աշխարհի։ Աշխարհ՝ յորում անպակաս են նախանձք և գրգռութիւնք, և զմիմեանսիք եղանել 'ի շահախնդրութեան, 'ի փառս, 'ի համբաւն, յորում նենգել և կեղծաւորել և դրժել և հարստահարել և զրպարտել, և ընդ անիրաւ կամ ընդ ոլորտապտոյտ շաւիղս ապաձեռն հանել զքեզ 'ի շահեդ, և յանուանեդ միանգամայն։

Զիմաստ բաւական իցէ յայնժամ լեզուն ժուժալ, լսել ընդդէմ կրիցս այսոցիկ, եթէ խոնարհութիւնն Քրիստոսի մերձ ոչ իցէ, և զնա ոչ սանձահարեսցէ։ Զիմաստ հնար իցէ 'ի մէջ քաղաքայնոց և բազմազբօս կրպակաւորաց և վաճառակից ընկերաց և անձնադրաւ շահախնդրաց և ներհակակիր բարոյից, լինել միշտ սիրող խաղաղութեան, եթէ երբեք փոխարէն շնորհաց առաւուն զոցեն անդրադարձ, կամ զապերախտութեան և զարհամարհութեան, կամ զնախատակոծ զրուցաց կամ զմատնութեան ևս։ Զիմաստ, սիրելիք, որ ընդ փորձն անցանէք ամենայնի այսոցիկ, ընդ այնչափ կիրսն ոչ ջերմասցին ոգիք և մինչև 'ի վրէժխնդրութիւն վերջին մնաբերեսցեն. եթէ խոնարհութիւնն Քրիստոսի և հեզութիւն ոչ համբուրեցուսցեն զդաղանն, հովացուսցեն զեռանդն սրտի և 'ի չափու սանձեսցեն զխորհուրդս։ Զի յայնժամ յանձն առցէ քրիստոնեայն դիւցազնաբար խոնարհութեամբն, համբերութեամբն, անյիշաչարութեամբն՝ առ վայր մի արհամարհ և իբրու վատասիրտ և անկած առաջի մարդկան երևել, քան զօրէնսն Աստուծոյ և զաւետարանն առ ոտն կոխել։

digitised by A.R.A.R.@

Ո՛վ, 'ի քանի և յայլ դէպս պէտք իցեն մեզ հանապազ խոնարհելոյ հլութեամբ ընդ ձեռամբն Աստուծոյ։ Բաղդիկ, առաջ վշտացնելոյ և սրտառուչ մօրդ. մեռաւ քո միածին որդին. 'ի նա հաստատեալ էին ամենայն խորհուրդք, և էր նա միակ յոյս ողջոյն գերդաստանին . . . ։ Պիտեմ զի հեծես և արտասուես անմխիթար զիշերս բազում. և թերևս սաստկութիւն անտանելի ցաւոցդ զրդեսցէ զքեզ և 'ի ծածուկ ինչ քանքարտանս աստուածայնոյն ընդդէմ նախախնամութե։

Բայց եթէ քո ձշմարիտ իցէ քրիստոնէութիւն, պարտիս գլուխ խոնարհել, համբուրել զաջն, համբուրել զգաւազանն որ զքեզն հարկանէ. և խոնարհութեամբ ասել ընդ սրբոյն Յովբայ. Որեղ փառք ո՞վ տէր վասն իմոյ որդեկիս՝ յաւուրն յորում ետուր դու ինձ զնա. և յաւուրն յորում առեր դու յինէն. "Տէր ետ, և տէր էառ, որպէս տեսաւն հաճոյ եղև՝ այնպէս և կատարեցաւ. եղիցի անուն տեառն օրհնեալ,, ։

Իսկ և վասն քո առաքինի քաղաքացւոյդ և արուեստագիտիդ և վաճառականիդ ցաւ ինձ։ Անզի ոչ արգասիք արժանեաց և ոչ հանձար և ոչ հնարագիտութիւն պակասէին քեզ առ ամենայն բարգաւաճութիւն վիճակի քոյ և գերդաստանին քոյ։ Ի վերայ այսր՝ տեսանեմ զքեզ զի թողեալ կաս յանկեան ուրեք, և յետնեալ ես քան զբազում համարուեստս քո. էր աղագաւ. քանզի ոչ կամեցար յառաջադէմ լինել 'ի վիճակիդ հանդերձ թշնամանօք պատուոյդ, հանդերձ ինստակարութեամբ այլոց, հանդերձ խորամանկութեամբ և նենգաւոր դաշամբք, հանդերձ հարստահարութեամբ։

Պիտեմ զչեծութիւն քո հանապազօրեայ 'ի յետին և 'ի սինլբքոր աստիճանիդ յայդմիկ, յոր առեալ կացոյց զքեզ երկիւղածութիւն բարեպաշտութեան քո։ Պիտեմ, զի և բազում անգամ ընդ հենդն զրուցեն զքէն աներկիւղածք, և ընդ առակս պարսաքարեն ըզքեզ։ Բայց եթէ դու աշակերտ ես հարազատ Յիսուսի Քրիստոսի հեզոյն և խոնարհին, պարտիս ընդդիմանալ զիսաչն և զարհամարհանս խաչին, և խոնարհութեամբ առ նա դիմել և ասել. Տէր, եղէց մանաւանդ արհամարհ յանիրաւի, քան փառաւորեալ անիրաւու-

digitised by A.R.A.R.@

թեամբ. տէր, եղէց մանաւանդ աղքատ արդար, քան մեծատուն մեղաւոր. «Կնտրեցի ես ընդ աղբ կալ 'ի տանն Աստուծոյ, քան բնականալ 'ի յարկս մեղաւորաց...»

Զարձեալ նախատեցար քրիստոնեայդ, ո՞ւր և իցես, թշնամանեցար, առակ եղեր առաջի մարդկան։ Զիտեմ քաջ, քանի՞ ցաւեաց քեզ. և յեռանդն քանի՞ հարկանէ զքեզ սիրտ քո. քանի՞ք ոմանք թելադրեն քեզ, զիրաւացին հատուցանել վրէժխնդրութիւն նախատանաց նախատչացն քոց։ Բայլ եթէ դու խոնարհին Յիսուսի Ճշմարիտ ես աշակերտ, և նշանագրեստ զքրիստոնէի զանկողոպտելին՝ զարհամարհութիւն և զնուաստախոհութիւն անձին՝ զանձամբ առեալ է քո պարծանօք, գիտես զգալ նախատանացն, այլ ոչ և փոխարինել. ցաւել ընդ վերան, այլ ոչ և վիրաւորել։ Այս պէս քաջութեամբ նահատակեալ յանդիման խաչելոյն աղօթեաս. «Ազատ տէր և քում խաչին նուիրեմ զնախատինսն. ներեմ նախատչին՝ զի դու հրամայեցեր. փառաց քոց նուիրեմ զփառս և զվարկ անձինս, և քում գթութեան և ներողութեան յանձն առնեմ զիմ հալածիչն, զիմ թշնամանիչն, զիմ թշնամին։

Ո՛վ հրաշից հաւատոցն Քրիստոսի. ո՞վ օրէնք քրիստոսեան գերմարդկային, զո՞ր սիրտ, զորպիսի՞ խորհուրդ, զո՞ր իղձ 'ի քոց խնդրես հետևողաց։

Ա՛ռք յընդհանուրս ընթացեալք, յորո՞ւմ այլ դաւանութեան և յո՞ր հաւատս կրօնից երբէ՞ք գտցուք զհոգի զայս զՔրիստոսին. ուրանօ՞ր մարթասցուք խնդրել զտիրական զայս առաքինութիւն, որ առաջին է յառաքինութիւնս բանական արարածոյն. ըստ որում խնամանաբանեաց բերանն ոսկի. «Օ՞ինչ է, ասէ, խոնարհութիւն։ Խոնարհութիւնն ոչ այլ ինչ է, ասէ, բայց իրաւասիրութիւն և Ճշմարտախոհութիւն...։ Այս արդ՝ քանզի Ճշմարտախոհութիւն զարդ էական է բանական բնութեան, ապա ուրեմն մարդ անբաժ 'ի նմանէ միշտ 'ի ստութեան կայ՝ անՃանաչ գոլով ստեղծուածոյն իւրոյ. ուստի և համարի զանձն այն ինչ՝ որ ինչ չէ, և այս է հպարտութիւն։

Ա՛յլ դու վայր մի յածեաց ընդ պատմութիւնս վաղեմիս. թէպէտ և բազումն գտցես առ արտաքինսն օրինակս առաքինութեանց, զարդարութեան, զհաւատարդ

digitised by A.R.A.R.@

մութեան, զպարկեշտութեան, ըստ որում՝ 'ի հոյակապ և 'ի համբաւատենչ քաղաքս աշխարհիս, յԱթենս աւ սեմ, և 'ի Սպարտիա և 'ի Հռոմ. այլ ուր երբեք գտանիցես դու այր մի խոնարհ սրտիւ կամ յԱթենացւոց անտի, կամ 'ի Սպարտացւոց, կամ 'ի Հռոմայեցւոց։ Զամենայն ինչ գիտացին, ասէր աստուածիմաստն Աւգոստինոս, զամենայն գիտացին զերահանձնարքն այնոքիկ խնամատարքը, մեծապանծքդ այդոքիկ վարժապետք հեթանոսութեանն, զամենայնն՝ բաց 'ի խոնարհելոյ զկիսկոչացեալ զյօնսն, բաց 'ի կքելոյ զամբարտաւան զգլուխն։ Սատի և զամենայնն գիտացին, բաց յԱստուծոյ. որ յանձն չառնու երբեք, զի գիտացեն զնա ամբարտաւանք. "Բարձր է տէր, ասէ, զխոնարհս տեսանէ, և զբարձունս 'ի հեռաստանէ ճանաչէ"։

Ո՛վ, քանի՛ տիրացեալ է բնութիւնս։ Զարկն այն ընդաբոյս, և տնկակիցն մեր իրձ սեպհական՝ բարձրութեան, որպէս առաջին կիրք են՝ որ գրաւեն զմարդ, նոյնպէս և վերջին են 'ի թողուլ զմարդ։ Այս քաջ խսկ տեսանեմք մեք հանապազօրեայ փորձիւ, զի մարդկայինս այս բարձրամտութիւն՝ յոչինչ այլ առաւել ամբոստանայ, որպէս 'ի խոնարհել տեղի տալ 'ի կարծեաց իւրոց և 'ի կամացն. և ըստ նմանէն՝ ոչ ինչ այլ իմիք առաւել ընդդէմ մնաքառի, որպէս կրօնին՝ որ սահմանադիր իցէ հաւատոցն 'ի միտս, և բարեկարգիչ ըղձիցն 'ի կամս, և կանոնադիր բանիցն 'ի լեզուն։

Այս ահաւասիկ ձեզ, սիրելիք, պատճառք առաջին և վերջին, այր աղագաւ ամենայն հերետիկոսքը ընդ ամենայն դարս. և որք 'ի վերջնումն մանաւանդ՝ բարձրամիտ չարաբարոյն նորաղանդք լութերականք և կալվինեանք, նաև ընդ քաջայայտ ճշմարտութիւնն մարտ եղեալ՝ դժուարաւ դառնան 'ի ծոց կաթողիկէ եկեղեցւոյ։ Զարդոյր է նոցա անձամբ անձին առաջնորդել. ճանաչեն զլրութիւն եկեղեցւոյ, և զառանձին իւրեանց զմիտս և զկարծիս ունին իւրեանց կառավար. և մեկնիչ և թարգման սուրբ գրոց ոչ զայլ ինչ գիտեն, բայց զինքնահաճ իւրեանց զիսէլս։

Զա՛՛՛

արդիւնք խոնարհամտութեան այնչափ իմն ընտանիք և բնաւորականք հանդիպին սոցա, զի և հաղիւ երբէք զգան նոքա դժուարին նահատակութեանց հոգւոյն։ Օ՜ ինչ ասես. ո՞չ նահատակութիւն մեծ իցէ այն՝ զոր որդիքս եկեղեցւոյ գործեմք զօրհանապազ. մի միայն կրը թութիւն մեր այն երթալ անկանել յոտս քահանային և խորհրդական խոնարհ խոստովանութեամբ առ ունկանէ յայտնել նմա զմեզս մեր, քանի՞ խոչ ական և ատելի է արձակերասան նորաղանդիցդ այդոցիկ. քանի՞ դժոխրմբերելի բարձրամտութեան դուցա. այլ զմեզ յորպիսի՞ ինչ վարժս խոնարհութեան սրտի և նուաստութեան ոգւոյ ոչ առեալ հրահանգէ՝ ի պատարագ անուշահոտ Ի՞ստուծոյ. որպէս ասաց եթէ «Պատարագ Ի՞ստուծոյ հոգի խոնարհ»։ Լու զարմանք և քաջալերութիւն մեծապէս ո՞չ իցեն, զի ոչ ռամիկն եւեթ առ մեզ, այլ և քաջազգիքն. ոչ հպատակեալքն եւեթ, այլ և արքայազունքն, այլ և արքայք ինքնին գլխովին, իբրև յանցաւորք իբրև պատժապարտք երթան անկանին առ ոտս սոսկականի ուրուք քահանայի, և անդ իւրեանց բերանով ամբաստան զանձանց լինին՝ ի ծածուկ մեղս իւրեանց, նաև յոյժ յամօթալի կիրսն և՝ ի գործսն. խոնարհին առնուլ խրատ, յանձն առնուն յանդիմանութիւնս, ընդդրկեն զպատիժ ապաշխարանացն և պաղատին զարձակուրդն։

Ի՞այս է հրաշալին առ մեզ անդորրաւէտն այն և խաղաղարար ատեան խորհրդոյ ապաշխարութեան խոստովանութեան, զոր չարափառքդ այդ նորաղանդք չՀանդուրժեալք անարժան ձայնիւ կոչեցին, «Դահճաբար կտտանս խղճի մտաց»։ Լաւագոյն ևս էր նոցա կոչել, «Լուն ջախիչ ընդ կառաւին իւրեանց»։

Ի՞անգի յորմէ հետէ բարձրապարանոցս յաւակնեցան նոքա ընդդէմ լրութեան եկեղեցւոյ իբրև դատաւորս ոմանս, երբէք ոչ խոնարհեցան խոստովանել զանձինս իբրև դատելիս, իբրև պարտաւորս. բայց թէ թերևս ըստ վերջին անմտութեան մտախաբիցն՝ ի նոսա բարեպաշտից, որ զԻ՞ստուծոյ շնորհացն ամբաստան կան՝ զի զլացեալ է նոցա. անձանց մեղ ոչ դնեն թշուառականքն, զի անարժան զտան շնորհացն։

Ի՞սկա ուրեմն՝ ընդ որդիս եկեղեցւոյ և ընդ ապստամբ

սրդ ընդ այդոսիկ խտիր այս է, զի առաջինքդ առ 'ի կալ մնալ հաւատարիմք, գիտեն լինել խոնարհք. վերջինքդ առ 'ի ոչ գիտելոյ լինել խոնարհք, չկամին լինել հաւատարիմք։ "Բ.մենայն հերեսիովտաց, ասայ մեծն Բ.ազոստինոս, ամենայն հերեսիովտաց մայր և ծնող՝ է հպարտութիւնն,,։ Բ.ստ որում և "Բ.ռաջին առաքինութիւն քրիստոնէից՝ է խոնարհութիւնն,,, որպէս կնքեաց մեծն այն Հերոնիմոս։

Օ խտիր զայս, դասք ուղղափառաց, պինդ կալարուք յանձինս. և գիտացէք Ճշգրիտ՝ եթէ զոր օրինակ ամենայն անհաւատ այնչափ առաւել մերձենայ լինել հաւատարիմ առ եկեղեցի որչափ է խոնարհ, նոյնպէս և ամենայն հաւատացեալ այնչափ առաւել մօտի յանհաւատութիւն, որչափ է հպարտ։ Վանզի որպէս 'ի պատուհաս մեծեղեռն յանցանաց բնաւորեցան հաւատք 'ի կորնչիլ, նոյնպէս և 'ի պատուհաս հպարտութեան բնաւորեցաւ թոյլտուութիւն մեծեղեռն յանցանաց։ Այս է այս կշիռ իրաւադատ նախախնամութեանն Բ.ստուծոյ՝ որպէս Հաղքն ասացին. որպէս զի ծանիցէ մարդ հպարտ՝ եթէ անարժան է այնուհետև պահպանիչ շնորհացն Բ.ստուծոյ, և իրաւապէս թոյլտուութիւն է վասն նորա սաստկաբուռն փորձութեանց, մինչև զիջցի 'ի հպարտութէն և խոնարհեսցի։ Վանզի և իրաւունք գեղեցիկ են, զի որ ըմբոստացաւ լինել խոնարհ 'ի ձեռն առաքինութեան, ստիպեսցի լինել խոնարհ 'ի ձեռն յանցաւորութեան։ Օ որ օրինակ մայր տեսեալ զմանուկ իւր տակաւին չհաստատեալ յուժի՝ ինքնին ոտնիսիս լինել, չթողու 'ի ձեռացն, սակայն և ըմբոստ տեսեալ զնա և անսաստ, ձանձրացեալ՝ 'ի վերջ թոյլ տայ նոսա մինչև անկանիցի. զի ապա կշտամբեսցէ զնա 'ի պատուհաս անսասստութեանն 'ի խրատ. սապէս և Բ.ստուած։ Բ.ստ որում և Պաւեթի թոյլ ետ անկանել, զի յանձնապաստան եկաց. թոյլ ետ անկանել Պետրոսի, զի յանձն իւր պանծացաւ։ Օ նոյն կրեցին օրինակ և ամենայն մեծամեծքն այնոքիկ և հոյակապ արք, զորոց ողբայր երանելին Բ.ազոստինոս, եթէ որք զբոյնս իւրեանց յերկինս եդեալ էին, և ապա 'ի մրրկէ ծածուկ հպարտութեանն վայր հոսեալք ինչին յանդունդս։

digitised by A.R.A.R.@

Վանդի «Լան զապաշաւ յառաջէ հպարտութիւնն, վնաեաց գիրն, և նախ քան զկործանումն բարձրանայ սիրտ առն»։ Եւ «Ցեր ամբարտաւանից հակառակ կայ»։ Հակառակ ամբարտաւանից, նախ՝ զէպս իմն ձախողակս և արկածս փոքունս առաքելով 'ի գերդաստան նոցա, ապա և անձկութիւնս ծանուցանս յանձինս նոցա. և թէ տակաւին ըմբոստ կան, հակառակ կայ նոցա՝ խօթութեամբ և հիւանդութեամբ վարակելով զմարմինս նոցա. ապա և սրտաբեկ ամայի լքանէ զհոգիսն. և թէ տակաւին խստապարանոցք յաւակնին, հակառակ կայ նոցա՝ թոյլ տալով 'ի թանձր խաւար պաշարել մտաց նոցա, ապա և կամաց նոցա զթել յանկմունս մեծամեծս։

Իսկ եթէ և ոչ յետ այնորիկ խոնարհին նոքա, հակառակ կայ նոցա՝ լքեալ զնոսա 'ի կուրութիւն արտաստուերի և 'ի խստութիւն սրտի անտեղիտալի, մինչ զի և ընդ կոփիւն ուռանն առաւել ևս խստանալ նոցա, և ընդ հարուած գաւազանին սկսանիլ հայհոյել։ Եւ ապա 'ի ծայրն հասեալ թշուառութեան յաւիտենական անարդութեան իւրեանց, 'ի նոսին իսկ 'ի մեղսն սկսանին ահագինս ամբարտաւանիլ, և 'ի վայր զդիմակսն առեալ լրբաբար՝ այնուհետև աստուածամարտք գտանին, և յայտնի ապստամբք անհնազանդիք ընդդէմ եկեղեցւոյ։ Ո՛վ վախճան զարհուրելի ամբարտաւանութեան մտաց. ո՛վ պատուհաս սարսափելի հպարտութեան սրտի։

Բաբէ, Աստուած իմ, Աստուած իմ. և յայս չափ խոտորնակ, և յայս սահման չարութեան իցէ երբեք հասանել ստեղծուածոյն...։ Ցուր ինձ տէր, ձանաչել զիս. և այժմէն գետնանուածեալ խոնարհութեամբ զդէմս իմ 'ի յերկիր եդեալ՝ ծածկել զիս ողջոյն 'ի խորս անարդութեան իմոյ։ Աստուած իմ, եթէ երբեք չիք հնար մարդոյ մնանել 'ի փառս ընդ քեզ, որ ոչն է խոնարհ ընդ քեզ, ապրեցո զիս 'ի կաւոյ, զերծո զիս 'ի հպարտութենէ։ Վիտեմ զպատճառս բազմապատիկ յանցաւորութեանցս, զոր ողբամ, այն է պատուհաս իմոյ ծածուկ հպարտութեան սրտի։ Ընձառելի խոնարհութեանդ երկրպագեալ 'ի փայտիս կենաց, պաղատիմ. դու դարձո զիս, դու փոխեա զսիրտ իմ։ Ցուր

digitised by A.R.A.R.@

ինձ միտս հեշտ և հլու առ քո հաւատս. սիրտ պատ-
կառ և հպատակ առ քո եկեղեցի. հոգի խոնարհ և
հնազանդ առ քո պատուիրանս. և արժանի արա զիս
շնորհիդ, զոր տաս խոնարհաց, և զանազան ամբարտա-
ւանից. "Տէր ամբարտաւանից հակառակ կաց, տայ
շնորհս խոնարհաց,, ։

ՄԱՍՆ Բ.

Յայս վայր խելամտեալք, սիրելիք, եթէ յինչ հաս-
տատեալ իցէ հոգի քրիստոնէական խոնարհութեան,
և թէ քանիսն իցէ կարևորութիւն առաքինութեանս
յամենայն վիճակի մարդկան, և թէ խոնարհութեանս
առաքինութիւն ոչ 'ի հեզ և 'ի համբոյր ինչ ձայնարձա-
կութեան, և ոչ 'ի խոնարհ ինչ դիրս մարմնոյ, և ոչ 'ի
գլուխ ինչ հանդերձիկ, և ոչ 'ի նկուն ինչ գնացս և 'ի
շարժմունս հաստատեալ է, ընդ որովք բազում անգամ
բնաւորեցաւ քօղարկիլ ծածուկ հպարտութիւն սրտի.
այլ առաքինութիւն է սա հոգւոյն, և անձնանուէր հր-
լութիւն ներքին մարդոյն 'ի միտս՝ առ հաւատս յայտ-
նեալ առ Յ՚ստուծոյ, և բոլորապտուղ հպատակութիւն
'ի կամն՝ առ պատուիրանս հրամայեալս Յ՚ստուծոյ.
որպէս ասաց մարգարէն, "Ո՞չ ապաքէն Ա՚ստուծոյ հր-
նազանդ լինիցի անձն իմ,, ։ Ա՚խանգամայն և է սա, որ
պէս ասաց Պօղոս՝ Ճշմարտախոհութիւն. Ճանա-
չել զանձն ոչ ինչ աւելի քան զոր էն ։

Ասատի ցայս վայր խելամտեալք յայսոսիկ, այժմ
սղագունիք հերքեսցուք զմոլորութիւնն բազմագունից
'ի մարդկանէ և զիսաբանն մտաց այնոցիկ, որ ձախո-
ղակս կարծեն, եթէ խոնարհութիւն սրտի առեալ
գձէք զոգիս, և նկուն յարդարէ զմարդ 'ի գործս ան-
կածս և հետևակս, և խափանէ զաշխոյժս զամենայն
առ գործս մեծամեծս ։

Ա՚յլ նա աւանիկ ուղղապէս կշռադատեալ զիրսն,
չիք, սիրելիք, չիք առաքինութիւն 'ի մարդիկ, որ այն-
չափ մեծանձինս, և այնչափ մեծագործս, և այնչափ

digitised by A.R.A.R.@

փառաւորս յարդարեսցէ զունողս իւր, իբրու զխոնարհութիւն։

Եւ զոր ասեմքս, ցուցցուք ակներև։ Զանգի որ ասաց, եթէ «Զանց իմ ոչ ինչ կարէք գործել», յայտ է ուրեմն եթէ որ Աստուծոյ է և ունի զԱստուած, զամենայնն կարէ գործել։ «Յամենայնի կարող եմ, ասէ, այնու՝ որ զօրացոյցն զիս»։ Իսկ արդ՝ ո՞ր այն երջանիկ հոգի, որ ունիցի զԱստուած. ո՞ր այլ՝ բայց որ խոնարհն է սրտիւ. որպէս և ինքնին կնքեաց Աստուած, եթէ «Այս յո՞ հանգեայց, եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս սրտիւ, և որ դողան 'ի բանից իմոց»։ Արդ՝ յոր հանգուցեալ է Աստուած, յայտ է եթէ և նա հանգուցեալ է յԱստուած։ Եւ որ այսպիսի ոք է, զինչ ինչ այնուհետև 'ի դժուարին նահատակութեանց, կամ զինչ 'ի դժոխքմբեր մեռելութեանց զարհուրեցուսցէ զխոնարհն, յետս կալ և ոչ նահատակել, զամենակարողն ունելով իւր զօրավիգն և գործակից։ Եւ կամ զո՞ր 'ի հոյակապից արգասեաց և 'ի հրաշակերտից մեծագործութեանց ոչ խրախուսեսցէ այնպիսին բուռն հարկանել և կատարել, և փառս յաձախել նոքօք զօրացուցչին իւրոյ Աստուծոյ. որպէս ասաց ինքնին տէրն, «Տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է»։

Եւ անշուշտ, սիրելիք, զիտէք իսկ դուք ինքնին 'ի զրոց, և 'ի հաւաստի պատմութեանց, քանիք 'ի խոնարհաց և յանկածից առ մարդիկ, 'ի քանի՞ մեծագործութիւնս և 'ի հրաշակերտս հանդիսացան յաշխարհի։ Զանգի որպէս Աստուած է՝ որ գործէն զամենայն, նոյնպէս և Աստուած ինքնին 'ի գործել զանկարծելիսն՝ գործի 'ի ձեռն առնու, զտկարսն ընտրելով զի յամենի արասցէ զՀզօրս, և զանտոհմն և զարհամարհեալն, զի յամենի արասցէ զմեծատունսն և զփառաւորսն, և զոչինչսն՝ զի զնսն ինն խափանեսցէ. որպէս զի մի՞ պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ։

Եւ քանզի զգերագոյնն և զանձառելին 'ի գործս իւր՝ առ խոնարհսն ներգործեաց Աստուած, որպէս ինքնին որ զփորձն էառ, խոնարհագոյնն հոգւով 'ի մարդիկ և գերագոյնն քան զամենայն՝ որ չէ Աստուած, վկայեաց յերգսն. «Այց արար 'ի վերայ խոնարհութեան ա-

digitised by A.R.A.R.@

զանոյ իւրոյ. և արար ընդ իս մեծամեծս հզօրն ,, . զինչ ասա այնուհետև զայլոյ ամենայնէն ասել պարտ իցէ ։

Բ.յսպէս միշտ երջանիկք՝ խոնարհք , այսպէս միշտ արդասաւորք . և որ գեղեցիկ և՝ որչափ մեծագործք և փառաւորք , այնչափ և նեղունք յանձինս և խոնարհք 'ի սրտի . և որչափ պտղալիցք , այնչափ և անեղեւակք ։ Լ(ոտ սինքն և անպտուղ թեթեւացեալքն ամբարձեն զգլուխս . քանզի և տունկք քաջաբերք և ոստք ակաղձունք պտղովք՝ խոնարհեալք կան կքելով միշտ զգլուխս . և որչափ առաւել կորացեալք , այնչափ առաւել և զտոհմականութիւնն 'ի դէմն բերեն ։

Բ.անզի և օրէնք հեզոյն և խոնարհին գերմարդկայինք՝ սանձ դնեն ամենայն անձնացոյց կրից և ամբարտաւանութեան և փառախնդրութեան, և միանգամայն ամենայն աշխարհական ցանկութեանց . և 'ի նբաստախոհ փոքրկութիւն անձին կրթեն հանապազ ըզ Բրիստոսի համբակն ։ Լ.ս սակայն որչափ 'ի միոյ դիմացն խոնարհեցուցանեն , այնչափ և 'ի միւսմէն բարձրաւաձ և փառաւոր բարձրացուցանեն . որպէս որ յայսոսիկ խորհրդածեաց հոգւոյն , ասաց . “ Լնձ յոյժ , ասէ , մեծարոյ եղեն բարեկամք քո Բ.ստուած , և յոյժ զօրացաւ իշխանութիւն նոցա ,, ։

Լ.ս արդ , քաջ միտ դիր աղաչեմ, որ միանգամ յաշխարհի ընդ բազմօրինակ և ընդ բազմամիտակ շաւիղս ընթանայ քաղաքական ընկերութեան , կեանս մի և ճանապարհ մի ընտրէ անձին այնպիսի , որով առաւելագունին մարթասցի վիճակել պատուոյ և աստիճանի ։ Լ.ս արդ՝ որ ճանապարհ առաւել արդոյ և առաւել փառաւոր երբէք քան զքրիստոսեան կենայն ։

Բ.այս ճանապարհ է , զոր կոխեցին և ընթացան ընդ բազմահոլով դարս աղգք աղգք լեղուաց , յամենայն ազանց , յամենայն վիճակէ կենաց . ընդ այս ճանապարհ ընթացան նաև ինքնին արքայք հոյակապք և սուրբք , հանդերձ բազմահանդէս արքունեօքն ։ Օ այս ճանապարհ կոխեցին և բազմահոյլ դասք առաքինեաց , նահատակք ճշմարտութեան, և արք սքանչելագործք, վարդապետք խնամատունք և գերահամբաւք՝ որ մեծապէս փառօք փայլեցան 'ի բանս և 'ի գործս , և հետս լու-

digitised by A.R.A.R.@

սաշաւիղս զկնի Իւրեանց Թողին զմեծամեծ առաքինութիւնս և յաւերժից յիշատակաց։

Տեսանէք, զոյս ոմանս ունիմք մեզ ուղեկիցս Ճանապարհին, և զոյց ոմանց կոխեալք մեք զհետս. զիարդ 'ի սրտակամբարս կէտ նոցա ակնկալեալ մնամք, զի և մեք ինքնին լինիցիմք աքանչելիք զկնի եկեղցոյն մեր, որպէս և մեզ յառաջեալքն քան զմեզ։ Խաբէ վայելից անձառելի փառայն, եթէ էր երբէք հնար տեսանել այժմէն, փառայն ասեմ խոնարհայն՝ որ յառաջեցին քան զմեզ 'ի Քրիստոս յերկինս. և անդանօր սպասեն ընդունել և զմեզ, եթէ և մեք ըստ նոցայն օրինակի առաքինասցուք աստէն ասել և գոհանալ, "Խաբի է ինձ, զի խոնարհ արարեր զիս. զի սա մխիթարեսցէ զիս 'ի խոնարհութեան իմում"։

Ո՛վ հաւատք Քրիստոսի, ո՛վ օրէնք աստուածային, ո՛վ խոնարհութիւն բարձր քրիստոսեան. դու իմոյ հաւատոյն հիմն, դու իմոյ գործոց հաստատան, դու իմում մեծութեան ամենայն յաւիտեան։

Ի յայս իսկ փափաքանաց, ո՛ քրիստոնեայք, յայս տենչանս հոգւոյ արժան է մեզ կեալ, յայսոսիկ պարտ է մեզ մեռանել, և յայսոսիկ երջանկանալ 'ի յաւիտեան։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐՈՒՆ ԽՈՍ.

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

"Յարուցեալ զնացից առ հայր իմ, և ասացից. հայր, մեղայ յերկինս և առաջի քո"։

Ողորմութիւնն Աստուծոյ՝ զմիակ յուսոյ փրկութեան մերոյ, բազում անգամ՝ ի քարոզս յիշատակ արարեալ, առանձինն քարոզիս առենաբանեսցուք այսօր իբրև զնիւթոյ որ ինձ առաջին կարևոր է՝ ի խօսել, և ձեզ առաջին կարևոր՝ ի լսել. ինձ խօսել ամենայն ճգամբ, և ձեզ լսել ամենայն խելամտութեամբ։ Իբրու այն որ եթէ ողորմութիւնն Աստուծոյ չէ՝ ի միջի, ընդունայն է ամենայն քարոզութիւն մեր, ընդունայն է և ամենայն ջան ձեր։

Աղէ որ շուրջ զակն և զմիտս յածեցուսցէ յընդհանուրս, եթէ վայրիկ մի բաւական իցէ հասու լինել ողորմութեանն Աստուծոյ. զիարդ "Ողորմութիւնք տեառն անապառք իցեն"։ և զիարդ "Ողորմութեամբ տեառն լի է երկիր"։ Թանձրէ, զիարդ յափշութիւն ոչ կրթեսցին միաք և ընդարմանցին խորհուրդք, յորժամ միանգամ տեսցէ մարդ կամ լուիցէ, քանիօն յանցաւորութիւնք մեծեղեռն, քանի սեղանակապութիւնք, քանի պղծութիւնք, քանի սմբարշտութիւնք, ընդ տարի մի միայն մոլին յաշխարհի։ Քանի արեանց ճնապաղիք՝ որ յատելութենէ, որ՝ ի վրէժխնդրութենէ, որ յագահութենէ, ընդ ամիս մի

digitised by A.R.A.R.@

միայն խաղաղացեն յերկրի։ Քանի՞ չարութիւնք, քանի՞ հաստատհարութիւնք, քանի՞ դարանակալութիւնք ընդ օր մի միայն նիւթեսցի 'ի քաղաքս և 'ի տունս։ Ո՞վ, զոյժ տայ։ Ո՞վ զՀեղեղաց չարեաց ընդ տիեզերս խաղացելոց։ "Նեղք, ասէ, և ստութիւն և սպանութիւն և գողութիւն և շնութիւն հեղեալ 'ի վերայ երկրի. և արիւն ընդ արիւնս խառնեն, վասն այնորիկ սուգ առցէ երկիր ,,։

Այս արդ զինչ պատահեսցէ յաշխարհի, եթէ յանկարծ ոչ ևս հանդուրժեալ Աստուծոյ ընդ այնչափ ամբարշտութիւնսն, 'ի մի հարուած՝ ամբարձցէ զաջն հարկանել զտիեզերս։ Եթէ այսօր իսկ յաթոռոյ ձայն տուեալ մահնոն՝ ասասուած փառաց որոտասցի, Երի՛ մահ. որպէս երբեմն առ վրէժխնդիր աղբայն, "Երի՛ մահ, երթ և հար զմեղանչականսն յիս զՄանդէկ, 'ի փոքրիկանց նոցա մինչև ցմեծամեծս ,,։ Օ՜ինչ պատահարք յայնժամ զուժեսցեն, յորժամ սկսանիցի հարուածքն ընդ աշխարհս, ընդ գաւառս, ընդ քաղաքս, ընդ տունս, և մինչև ընդ տաճարս. ո՞ր ողբ, ո՞ր աղաղակ, ո՞ր շշուկ 'ի ժողովուրդս. քանի՞ դէմք դալկացեալք, քանի՞ ձեռք ամբարձեալք յերկինս, քանի՞ գլուխք կորացեալ 'ի հող, 'ի մոխիր, յահ և յարտասուս։ Կէսք կողկողեսցին ողորմութիւն, կէսք ձեպեսցեն 'ի փախուստ, կէսք զողեսցին 'ի դարանս։

Այս արդ աղէ՜ ասացէ՛ք ինձ վայր մի, որ գիտէիր զմեծ մնաց ձերոց, յանցաւորք Աստուծոյ. եթէ արդ լուեալ կայ առ ձեզ արդարութիւնն Աստուծոյ, եթէ արդ տակաւին երկայնամտեալ համբերել, ո՞է որ սաղրէ զշնորհն, ո՞ զաջն կալաւ զԱստուծոյ, ո՞ սանձեաց զնա, ո՞ւմ դուք շնորհս կալջիք . . . Զի՞ ձայն տուք, ասացէք ինձ . . .

— Ո՞չ ահա մեծութիւն է այդ ողորմութեանն Աստուծոյ, անչափութիւն է զթոյն նորա։ Ողորմութիւն և զութ՝ որ արդարութեանն յաղթէ, որ յաստուածայինն վրէժխնդրութենէն ցարդ պահէ զձեզ, և որ զօրհնաբաղ հովանացեալ կայ 'ի վերայ գլխոց ձերոց։

Իսկ ո՞ որ ասա՛ զարժեաց զնա, այնչափ ինն ջերմեռեռս պաշտպան կալ ձեզ. "Ցդիտիցեն ոմ մարդ, աղաղակ ասասուածայինն Պաւղոս, չգիտիցեն զի քաղցրութիւն Աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ ,,։

digitised by A.R.A.R.@

Աստ արդեօք փոքր ինչ էր ոչ պատուհասէն զապրստամբեալսն, եթէ արդեօք 'ի զգաստութիւն դարձելոյն զանոյր գնեբու

։ Բայց միա դիր, գործ գերագոյն ողորմութեանն Աստուծոյ առ ձեզ ո՞ մեղաւորք, չէ անագանութիւն պատուհասին, այլ նոյն ինքն հեստանուա ձեզն նեբոլութեան. "Իբրև, ասէ, զայս ամենայն արար նա. ասացի ասէ Աստուած, դարձ առ իս, դարձ առ իս.,։

Աստ ուրեմն փոքու իմն ձանաչէք դուք, զինչ է ողորմութիւնն Աստուծոյ. գիտելով միայն չափ, եթէ զիարդ ժուժայ երկայնամտիւ։ Սակայն անդրադարձն եւս առէք դուք զգիտութիւն ձեր, եղբարք, և խելամուա եղերուք՝ զիարդ ողորմութիւնն Աստուծոյ, նաև մարդասիրասիրպէս առնու ժողովէ, և քանի սպասարկութեամբ հիրամեծար լինի դարձելոյն առ նա։

Հայեցարուք միանգամ ընդ անառակ որդին, նայեցարուք միանգամ ընդ հիւրընկալու հայրն. գիտէք իսկ դուք քաջ ո՞ է հայրն, և ո՞ անառակն։ Հիւրընկալութիւնդ այդ վասն մեր է. և այդ գգուանք Աստուծոյ, և այդ համբոյրք երկնաւոր հօրն, այս եղբարք, վասն մեր են անառակ որդւոցս։ Դու քաջ իսկ այսօր 'ի փոքոյ անտի գիտասցուք մեք, եթէ արդեօք որպէս նոնանեալք անառակին վտարանքեցաք 'ի հօրէն, նոյնպէս և նոնանեալք նոնա դարձցուք առ հայրն. և առ ձայն հրաւիրի բազմագութ հօրն, կազմ և պատրաստք տացուք մեք զպատասխանին. "Հառասիկ ես, յարուցեալ գնացից առ հայր իմ.,։

ՄԱՄՆ Ա.

Օ անառակին պատմութիւն գիտէք իսկ քաջ ամենեքին. զիարդ անմոռացաւ և սպասեաւ 'ի հօրէն, զիարդ վատնեաց զինչն, զիարդ և 'ի սպառ հիւրացաւ։ Շատ է ասելն, եթէ յաղնուական գերդաստանէն դարձաւ եղև խոզարած, նա և ընդ խոզեանն ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն։

Իսկ իբրև նա 'ի զգաստութիւն բերեալ դառնայ ապա

digitised by A.R.A.R.@

'ի Հայրենի տունն, մեք 'ի նոյն դարձ նորա վայրիկ մի զմերն 'ի քնին առցուք, և տեսցուք քանի հեշտին իցէ մերն առ նորայոնն։ Վանդի պատրաստեալ մեր դառնալ յանառակ վարուց առ երկնաւոր Հայրն, ունիմք մեք առաջի զաներկեան օրինակ զանառակին, եթէ անշուշտ և զմեզ զթասիրաբար ժողովեսցէ Հայրն։ Իսկ անառակն զինչ ունէր առաջի օրինակ քաջալեր նմանութեանն, վստահութեամբ դիմել առ զթութիւն հօրն։

Լուր պատանւոյն հիւրասիրելոյ. 'ի քանի ոչ ետանչ կրկին և 'ի խորհրդոց ծփանացն ազատանայր անառակն, եթէ ուստեք արդեօք լուր քաջալեր աւետեաց յունկն նորա հասանէր, իբրու այն թէ արի հիւրասիրեալդ, արի, զի դանդաղիս. երթ դարձիր առ քոյ Հայրն. աւանիկ նա անձկանօք հառաչէ 'ի տեսանել զքեզ, 'ի ժողովել զքեզ։ Այլ անառակին յայնժամ չէր ինչ 'ի միջի մխիթար և քաջալեր յայսպիսեաց աստի. համայն և այնպէս յարուցեալ գնայ առ Հայրն՝ որում յանցեաւ, ոչ ինչ գիտելով զպատրաստութենէն սրտի հօրն։ Այս իրաւապէս և մեր խիթայր և դողայր, եթէ անշուշտ 'ի սրտմտութեան բարկութեան գտանիցէ զՀայրն իբրև արդար պատուհասադիր, քան իբրև Հայր ներողամիտ։ Յայսր ամենայնի վերայ մնասխորհ յանձին խնամութեամբ, զինչ այս կեանք իցեն իմ, ասեր, զիարդ այլ և հանդուրժել՝ զի ես սատ որդիս սովամահ կորեայց, յորժամ անդ 'ի տան հօր իմոյ վարձկանք բազուքք հացալիցք վայելեն. "Յարուցեալ գնացից առ Հայր իմ,,։

Այս ասաց, և անդէն յարոտին լինք եթող զխոզեանն, և յարեաւ դիմէր առ Հայրն։ Հայրն անդուստ արտաքս 'ի տանէն կամ 'ի հանապազօրեայ տենչանաց որդւոյն կամ թէ 'ի սիրութիւն ինչ անձին ելեալ 'ի դաշտն, նշմարեր եկաւոր 'ի հեռաստանէ իբրու 'ի հիւրասիրելոյ կամ 'ի մուրկաց զոք դիմեալ կշիռ առ ինքն։ Որով սրտի յուզեցաւ հօրն, ծփայր 'ի խորհուրդս. մի եթէ որդին արդեօք իցէ։ Իբրև այնպէս տակաւ մնա յական կշռել ծանեաւ զորդին, ոչ ինչ այլ յամեաց 'ի տեղւոջն, յարեաւ վազվազակի՝ ընթանայր ընդ առաջ որդւոյն։

Լտես և որդին, և գիտաց եթէ ծանուցաւ. սիրտն վազեաց, գոյն երեսացն շրջեր։ Այր մի զկայ էառ.

digitised by A.R.A.R.@

յոգւոց եհան . . . . Ահա հայրն . . . Որպիսի ինչ արդեօք ես բանս դառնութեան լուայց 'ի հօրէ , ես խեռ և ստահակ որդիս . . . . Զոգ յուշ ածէր նա զառաջին տմարդութեան գնացսն , որով վատարանջեաց 'ի հօրէ . յուշ ածէր զառաջին պատմուճանն իւր՝ որով մերկեցաւ 'ի տանէն , և դառնայր նայէր 'ի գրգռեակն՝ զոր յայնժամ զանձամբ արկեալ ունէր՝ նշանագրեստ անառակութեան . . . . .

Բաբէ , և իցէ՞ երբէք տեսանել այնչափ դիմամարտութիւն ըղձից 'ի նմին արեան : Դիմեալ դան աւադիկ անդանօր երկուք , հայր և որդի , միմեանց ընդառաջեալք , այլ զիարդ , մին թաքթաքուր գայթ 'ի գայթի գայր և մօտէր տակաւ . միւսն մեծաբայլ արձակ արձակ խաղայ . մին թաղացեալ 'ի դող և 'ի խէթ սրտին , միւսն վառեալ 'ի հոգին՝ դէմք ցնծալից : Հաւասար են յերկոսին իրաւունք արեանն , այլ ոչ և սրտին . հիւացեալ պատանին լայ առ ցաւոյն . լայ և ծերունին առ զթոյն : Դողայ որդին յանդիման լինել հօրն , գուցէ դատաւոր դատանիցէ զհայրն . յաղէտից սիրոյն տուչորի հայրն՝ վաղ վաղակի ժողովել զյանցաւորն , զի որդի է նորա :

Լաւ տեսէք , զիարդ վաստակաբեկ հատկեալ ընթանայ ծերունին , զգիրկսն բացեալ , կշիռ առ որդին . . . : — Ո՞հ . դո՞ւ ինքն իցես այն որդեակ իմ . . . . : — Հայր , մեղայ . . . : — Հապա դու արի 'ի վերս , զի 'ի գիրկս իմ առից զքեզ . . . : Լաւ այլ ինչ ասել ոչ թողեալ որդւոյն , ողջոյն հեղեալ փարի՝ գիրկ ընդ խառն անկեալ զպարանոցաւ . և ողջոյն թանայ արտասուօքն , և համբոյրս 'ի համբուրիչ վերայ տայ որդւոյն . " Լաւեա , ասէ , զնա հայրն և գթացաւ , յարեաւ և ընթացաւ . անկաւ զպարանոցսն և համբուրեաց զնա . . . . . :

Լպա առ ծառայսն . արիք վաղվաղակի ածէք հանդերձ 'ի ծածկոյթ որդւոյս , զգեղեցիկն 'ի պատմուճանսն հանէք 'ի դարանէն . " Ածէք վաղվաղակի , ասէ , զպատմուճանն առաջին և ագուցէք նմա . . : Պատրաստեցէք և կոչուցս մեծահաց յընտիր խնց անդէոց . ածէք զեզն պարարակ . ժողովեցէք և երաժիշտս , կարդեցէք տօնս . հոչակ հարէք ընդ ամենայն , եթէ որդին իմ դարձաւ : Իցէ այլ այսօր հայր յաշխարհի երջանկագոյն քան զիս : Բաբէ արեանն , բաբէ աղէտից սիրոյն . " Որդին

digitised by A.R.A.R.@

իմ, ասէ, մեռեալ էր, և եկեաց. կորուսեալ էր և գտաւ ,,։

Այլ մինչ դեռ տակաւին բերելոյ պատմուճանին սպասեալ մնային, աղէ դուք, ասէր Աստուծոյն ոսկի, ուշ դիք աստանօր Հայրենի սիրոյն, զիարդ գրկախառնութեամբն իբրև ընդ մեկնոցան իւրով առեալ պարագրէր զորդին Հայրն. զի ոչ ժուժայր սիրոյն տեսանել զնա մերկ, կամ տեսանել զնա ամօթահար առ'ի յայլոցն տեսութենէ. "Յուժեաց, ասէ, յանցանաց որդւոյն, որ ոչն ժուժեաց մերկութեան որդւոյն. ուստի և մինչ չև տեսեալ'ի ծառայից, կամեցաւ զգեստաւորել'ի ծառայից ,,։

Գոխտեմ զի հիացեալ է ձեր, և ասէք դուք ինձ. Եվ քանիսն եկաց գութն Հայրենի, քանիսն հիւրընկալութիւն անառակին։ Սակայն հաւատացէք ինձ, եղբարք, ձեզ ինքնին այնպիսի իմն հիւրընկալութիւն պատրաստեալ է Աստուած Հայր, զի և արդեամբք յառնուլ ձեր զփոքձն, մոռասջիք դուք զայնչափ գութ, զայնչափ գգուանս զառակաւոր հօրն։ Վանգի բիւրիցս առաւել հանդերձեալ է առնել ընդ ձեզ Աստուած։

Այլ զի է ինձ ասել եթէ հանդերձեալ է. առաւելա գոյնս յոյժ արար և առնէ ընդ մեզ, թէպէտ և վատարանք եալս, թէպէտ և փախստականս'ի նմանէ, առաւել յոյժ քան զոր եցոյց Հայրն այն առակաւոր'ի դարձի անառակին։ Վանգի, քաջ միտ դիք, առակ աւետարանին պատմէ եթէ գթասիրաբար ժողովեաց Հայրն զանառակն. այլ չասէ եթէ կանխեաց ինչ և ջերմագոյն'ի խնդիր եալ նա փախուցելոյ որդւոյն։ Այլ նա զփախուստ կորուսեալոյ զառակին, այլ ոչ յառնէ խնդրել գտանել զնա։

Իսկ ապա առ մեզ, այն ինչ միանգամ տեսեալ զմեզ փախստականս'ի տանէն մեղաց, ոչ քանի սիրով հապ ընդ հապ զՀետ մեր ընթանայ. յամենայն'ի քայլս'ի փախչիլ մերում հովանի կայ'ի մեծոց, հովանի կայ'ի հեռաստանէ. բարբառի անդուլ, ձայնէ անհանգիստ. "Դարձ առ իս Իսրայէլ, ասէ տէր, դարձ առ իս ,,։ Իսկ այս ձայն, այս բարբառ Աստուծոյ, են իսկ աւադիկ այն նախաժամանն ջնորհք՝ որպէս կոչեն աստուածաբանք. զոր և մարգարէն հայցէր. "Ողորմութիւն նորա առաջի իմ երթիցէ ,,։ Այն ջնորհք նախաժամանակ՝ լուսաւո-

digitised by A.R.A.R.@

բիւք մնայ 'ի Ճանաչել զյանցանս. Հնարքն՝ շարժիչք կամաց յառնել ելանել 'ի Ճանապարհ. Հնարքն՝ որ այն-չափ ինչ յուզեն պղտորեն զիսաղաղութիւն մեղաւորին, մինչև 'ի զիրք եկեալ ստրջանայ ընդ փախուստն, խնդրել զդառնալն. "Յարուցեալ, ասէ, գնացից առ հայրն իմ.,,

Եւ ահա այս հնարքն առաջին, որպէս խմաստնաբանեաց Իսկեբերան, և այս առաջին ողորմութիւն Աստուծոյ աշխարհաքարոզ լեռ աշխարհակործան անկմանն Ադամայ։ Յանցանեն նախատեղծք, և ամենապարտեալք փախչին ծածկին 'ի թաւս ծառոց դրախտին։ Օ ինչ յայնժամ Աստուած. մտանէ 'ի դրախտն ընդ երեկս աւուրն՝ իբրև սփոփութեան աղաղակ. զգնայ անդանօր յուշիկ հեռագոյնս՝ այնչափ մինչև լսել յանցաւորացն զոտնաձայն զգնալոյ տեառն 'ի դրախտին։

Ի՞նչ դիր. ոչ սրտմտելոյ ուրուք է զգնալն, հեշտալոյ ձեմ առնուլն հանդարտելոյ անձին է և հեզացելոյ և խորհողի. այնպէս զգնայ Աստուած միայն լուռ և հանդարտ։ Սակայն և մեն մի քայլ ոտին Աստուծոյ, մեն մի հրաւէր է գթութեանն Աստուծոյ, որ կոչէ զյանցաւորս՝ զի թողութիւն հնարեսցէ։ Իսկ իբրև ետես Աստուած, զի թէպէտ և լուսն զձայն ոտիցն, այլ յանդիման չերևեցան, հանդարտութեան քայլիցն զուգաձայնել յայնժամ զհեզութիւն ձայնին. "Ադամ, ուր ես.,։ Ասաց. ուր է ապաստարն, ուր կայ յանցաւորն. եկցէ յանդիման ապաշնորհն, և առցէ զարժանահաս պատուհասն։ Եւ ինչ յայսպիսեաց ասաւ. ոչ ապառնայ Աստուած, և ոչ ահ ձայնիւն արկանէ. այլ նախ յառաջոյ զողորմութիւնն առաւել ընդդէմ կալ արդարութեանն. "Ադամ, ուր ես.,.... — Եւ 'ի աներ-կեւան գործել զնա յերկիւղէն, ինքն առաջին կարդայ զնա. իսկ առ 'ի շարժել յապաշխարութիւն՝ նաև յանուանէն կոչէ. "Ադամ, ուր ես.,։ Այս քաջ իսկ գիտէ, ուր է Ադամ, այլ չգիտելոյն առնէ. զի ժամանակ տացէ նմա՝ ներողութեան գթութեան իւրում հանդիպել։ Եւ կոչէ զայս զառաջին յանցաւորն, զի հրաւիրանօք նուազ մեղուցելոյն պատացէ զառաւելեանն։ Հապա, զի քո այդ դանդաղելդ. "Ադամ, ուր ես.,, եկ կայ յանդիման, տուր ձայն. տեղեանօք կամիմ զյանցուցեալդ տե-

digitised by A.R.A.R.@

սանել ապաշաւեալ. եկ մատիր առ ոտս՝ որ հանդարտիկ քայլէն 'ի պատուհաս, զի Ձեպեսցէն զԹողութիւն։ Ո՞ւր ես, ո՞ւր կաս։

Դա՛բէ, ձայն փարելի Աստուծոյ մերոյ. այս ձայն փարելի լսելի անդատին 'ի սկզբանէ աշխարհի 'ի հրաւէր մեղաւորի, տակաւին անդուլ կայ, եղբարք, տակաւին անսուազ է. մանաւանդ եԹէ և հզօրացեալ է ձայնն, և ուժգնագոյն ևս հնչէ 'ի շրԹանց հեզոյն Յիսուսի 'ի հրաւէր բերկրութեան. "Ելր ծարաւի իցէ, ասէ, եկեսցէ առ իս և արբցէ"։

Դու արդեօք, սիրելի, յաւուր յորում 'ի մեղս քո կորուսեր դու երբէք զնորհս Աստուծոյ քո, ո՞չ ահա անդէն 'ի սիրտ քո էլ 'ի խնդիր քո Աստուած... Ո՞ւր ես, ո՞ւր կաս հիքացեալդ, քանիցս դու այժմ հեռի կաս յինէն. ո՞չ զգաս հիքութեանդ՝ զոր հիքացուցին զքեզ մեղք քո։

Ո՞ւր ես... ձայն ոչ միօրինակ, այլ բազմօրինակ կարդայ Աստուած։ Ձայն կարդայ 'ի ներքին խէԹ մտացդ. ձայն կարդայ քեզ 'ի Թախծութեան հոգւոյդ. ձայն կարդայ յանկարծելի վիշտդ։ Ո՞ւր ես...։ Դու եԹէ քեզ չեն բաւական ձայնք նորա, առ քեզ զամենայն արարածս յորդէ հրաւիրէ ձայն արձակել. "Դուր, ասէ, և կարկուտ, ձիւն և սառն, հողմ և մրրիկք, որք առնէք զբան նորա"։

Այդ աւադիկ մրրիկ ծովուն ահագինս յուզեալ, այր աղագաւ Իբրև զՅովնան խիԹացեր դու զքէն. "Գնացեր, զի վասն քո է մրրիկդ այդ մեծ"։ Այդ որոտընդոստ երկին, յորմէ սարսեցար. այդ հրացան բարկութիւն շանԹին՝ յորմէ դողացար. այդ խօլական ցնորք, այդ անրջական երազք, այդ մահահրաւէր երևակութիւնք, այս ամենայն ձայնք առ 'ի Աստուծոյ զայն քեզ ազդէին, եԹէ 'ի խնդիր քո եկեալ է արարչին։ Ո՞ւր ես, ո՞ւր կաս։

Դու զոր օրինակ որսորդ Ճարտար յաներկևանութիւն վասն սիրեցեալ որսոյն, շուրջ պարեկապանս հանէ զանտառովն, և պառականօք, վարմիւք, և երազագիւք պարսպէ, սապէս բարերարն զի մի 'ի դերևս եկցէ 'ի գիւտոյ սարտուցելոց որդւոցն, առ ամենայն քայլ փախստեան նոցա առաքէ զնորհս իւր։

digitised by A.R.A.R.@

Ո՛վ անձառելի Հայրենի զԹոյն. Պարձ, ասէ, որ-դեակ, դարձ 'ի Հայրենին քո ծոց։ Ա՜հ, որ երկայն ճանապարհ կայցէ քեզ 'ի գտանել զիս՝. ահա 'ի Թի-կանց կամ, ահա յերեսաց. աւասիկ մերձ կամ, դարձո ինձ ղգէմնդ. "Պարձ առ իս, և ես դարձայց առ քեզ,,։

Իսկ մեք, ո՛վ ԹշուառուԹեանս, քանիցս անգամ ապառուսն պատասխանեցաք քաղցրուԹեան ձայնիցն։ Թող, այր այր իւրում անձին, իւրում խղձին կացցէ դատաւոր. "Կոչեցի, ասէ, և չէր ոք որ պատասխանի առնէր,,։

Իսկ զինչ արդեօք յետ այսորիկ բարերարն։ Պահ կենաց մերոց ունի յամենայն վայրկենի 'ի բիւրուց վտանգաց. "Մնայեցէք պատանեկին իսմա՛,,, ձայն արձակէ առ ամենայն արարածս, իբրու զգորովաղէտն Պաւլոս առ իւր հաւատարիմն։ Ի բաց կաց դու ո՛վ մահ, մինչդեռ ապստամբ է որդեակն իմ, մինչդեռ տա-կաւին 'ի մեզս կայ, 'ի բաց կաց, մի՛ մերձենար 'ի դա։ Մնայեցէք յորդեակն իմ, ո՛ շանԹք կայծականց, մի՛ հարկանէք զդա։ Այլ դուք դժոխային այսք մի՛ 'ի սպառ տիրեսջիք նմա. ապստամբ է, այլ որդի է. "Մնայեցէք պատանեկին իսմա՛ Աբիսողոմայ,,։

Ո՞ր շահանդրուԹիւն, աղէ՜ ասա, կացցէ Աստուծոյ 'ի փրկուԹեան քում, ո՛վ մարդ. կամ զինչ կորուսցէ նա 'ի կորստեան քում։ Այլ Թերևս մի կամ երկու միայն տացէ քեզ հրաւէր դարձի. և եԹէ չլսիցես, լքցէ՜ զքեզ։ Բա՛ւ, ասէ Աստուած։ Ա՛ն սիրելեաց է բանն, վասն փարելեաց հոգւոց, կամ՝ յաւիտենական փրկու-ԹեանՀ կամ յաւիտենական կորստեան։ Գիտեմ, քանի՞ գնոյ արեան գնեցար դու։ Ա՛ԹԹէ երբէք մայր գորո-վալից մոռանայցէ՞ զծնունդ երկանցն՝ զդստուղ որովայնին. և մոռանայցէ՞ երբէք կին զմանուկ իւր։ Այ՛ԹԹէ և մոռա-նայցէ նա իբրև մարդ, սակայն ես Աստուած մոռանամ զմեզս, երբէք չմոռանամ զմեզաւորն. "Այ՜ եԹէ մո-ռանայցէ նա, ասէ, սակայն ես ոչ մոռացայց զքեզ, ասէ տէր,,։

Այ՜ արդ մեք, եղբարք, յայսչափ մեծափափաք խնդրե-լոյն Աստուծոյ զկորուսեալն, խելամտուԹեամբ 'ի վերայ բերցուք, քանիսն ուրեմն ցնծալից ժողովեսցէ՝ յորժամ գտցէ զկորուսեալն։ Թուի ԹԷ և ոչ ինքնին տէրն բան

digitised by A.R.A.R.@

գտանէ նմանութեան յերկրաւորաց աստի առ 'ի ՀՀգբրտել զցնծութիւնն. Է զի զայս, և է զի զայն 'ի ներքս բերէ. բազմադէմ փոփոխէ զբանն, իբրու ոչ հաւանեալ և ոչ ընդ մի նմանութիւնն 'ի կենդանագրել զՀՀմարտութիւնն։ ՀՀերթ ասէ, զիաՀրդ խնդայ հովիւն 'ի գիւտ միոյ ոչխարին մոլորելոյ 'ի լերինս և կորուսելոյ, և 'ի վերայ ուսոցն բարձեալ ցնծութեամբ 'ի խնդութեան ձայնէն հնչեցուցանէ զանտառն, "Յսպէս, ասէ, ուրախութիւն եղիցի յերկինս վասն միոյ մեղաւորի, որ ապաշխարեսցէ..։

ՀՀերթ ասէ, կամ թէ կին մի զմի 'ի տասանց դրամոց իւրոց կորուսեալ, յորժամ ստէպ աւել ածեալ 'ի տանն և գտանիցէ, քանի ծափահար զամենայն զդրացիսն 'ի հաղորդութիւն ցնծալից սրտին հրաւիրէ, "Յսպէս, ասէ, ուրախութիւն եղիցի յերկինս վասն միոյ մեղաւորի, որ ապաշխարեսցէ..։

Յս ապա ըստ սոցանէն՝ նաև յառակէ անառակին՝ զոր վայր մի յառաջ լուարուք, զվերջին հրաՀանան զՀօրն ՀՀգրտիւ 'ի դէմս բերէ բազմօրինակ. քանզի տայ անկանել զպարանոցաւն և համբուրել, և զպատմուՀանն տայ հանել, և զմատանին մատուցանել, և զպարարակն ածել և հացկերոյթ կահել, և երգս երաժշտել, և պարս բոլորել, և հրաւէր կարդալ, "Լերիցուք, ասէ արբցուք և ուրախ լիցուք. զի այս որդի իմ՝ կորուսեալ՝ էր և գտաւ..։

Յսոքիկ ըստ առակագրութեանն. իսկ և ըստ արդեանցն ՀՀմարտութեան՝ մինչդեռ տակաւին շրջէր յերկրի Քրիստոս Յստուած ընդ մարդկան, ՀՀրչափ ինչ մարդասիրեաց, քանի մեղաւորս հեզութեամբ 'ի գիրկս ընկալաւ, քանի խստացելոց զսիրտն դարձոյց առ ինքն գթասիրաբար. գիտէք իսկ քաջ։

Իսկ և 'ի վերանալ իւրում յաշխարհէ՝ քանի սիրոյ կապանաՀ յինքն յանկոյց զտիեզերս, ըստ աւետեաց խոստմանն, եթէ "ՀՀորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս..։ Քանիսն եղէն և դարձք անկարծելիք յառաջն անզեղջ մեղաւորաց և ապա սրբոց մեծամեծաց. գիտէք կամ թէ լուեալ իսկ էք շատ ինչ 'ի վաւերական պատմութեանց։

Իսկ և այսօր, թող առանձին այր իւրաքանչիւր

digitised by A.R.A.R.@

քննեսցէ զառաջին աւուրս կենաց իւրոց օտարացեալս յԱստուծոյ, և զարդիս Հշմարտութեամբ մերձեցեալս առ Աստուած. Հրաւիրեալ 'ի նոյն 'ի բազմապատիկ ձայնիցն Աստուծոյ՝ հնչելոց 'ի սիրտս առ 'ի հնոտհացն Քրիստոսի։ Բայց, զոչեր աստուածայինն Աւգոստինոս, զքանիս ոմանս տեսանեմք մեք այսօր 'ի մարդկանէ, որ սարտուցեալ էին յԱստուծոյ, որ յառաջն 'ի գայթակղութիւն էին, և են զարդիս 'ի մեծ շինութիւն քաղաքի։ Բանիցս անգամ տեսեալ մեր յայսպիսեաց աստի յանկարծելի փոփոխութեանց, և զզիարդն անգիտացեալ, այր ցընկեր հարցանեմք զարմացեալք. զիա՞րդ երբէք այդ այր կամ այդ կին այդչափ մարթացաւ փոփոխիլ, զիա՞րդ այնչափ յաջողեցան նոքա յայդ նորօրինակ տարաղ գեղեցիկ քաղաքավարութեան կենաց։ Մեք անգիտանամք, այլ նոքա որ առ Աստուած դարձան, գիտեն իսկ քաջ զիա՞րդ մարթացան, որպէս յաջողեցան։ Բայց իսկ յիշեն նոքա զօրն և զժամն, յորում Աստուած մերձեցաւ 'ի սիրտս նոցա. յիշեն՝ զիա՞րդ սքանչելի էր մուտն զոր արար անդանօր, որպիսի՞ ինչ էր բարբառն՝ որ խօսէր ընդ նոսա. որպիսի՞ բանքն, որպիսի՞ ազդեցութիւնքն զոր վառեաց 'ի նոսա։ Բայց, գիտեն զայն երանեալ հոգիքն, որ լուան միանգամ 'ի ներքս զձայն զայն Աստուծոյ. "Լսօսեաց տէր, զի լուիցէ ծառայ քո"։ Մի՞անգամ լուան զանուշակ զձայնն, և 'ի սպառ մոռացան զաշխարհ, մոռացան զմարմին, և Հաշակ և զախորժակ զամենայն զերկրաւորացս այսոցիկ մոռացան նոքա։

Դուք ինքնին դարձեալքդ Հշմարտապէս առ Աստուած, որ կայքդ աստէն աւադիկ, դուք ինքնին իրաւացուցէք զիս։ Բանի՞ բարի՞ և ամենաբարի՞ և գորովալի՞ գտէք դուք զԱստուած, յորժամ ժողովեաց զձեզ 'ի դարձին ձերում առ նա։ Աստուածէ՞ ժողովոյս մերում վայրիկ մի, զինչ նա երևեցաւ ձեզ 'ի ժամուն, յորում հաստատեցէք դուք 'ի միտս 'ի սերտ սրտէ փսխել զվարս ձեր։ Որչափ քաղցրացաւ ձեզ այդ խոստովանութիւնդ՝ զոր արարէք դուք զզիմամբ 'ի սրտէ. որչափ, յորժամ ինքնին Աստուած տուեալ ձեզ զՀամբոյրն՝ իբրու ձեռօք իւրովք առեալ 'ի վեր կանգնեաց զձեզ յոտից հօր խոստովանութեան ձերոյ։ Ոչ՞ երբէք խա-

digitised by A.R.A.R.@

զաղութիւն, իսկ՝ երբեք քաղցրութիւն յաշխարհի, զուգահաւասար այնմ զորոյ զնաշակն առէք դուք յաւուր յայնմիկ։ Լասցէք դուք ինքնին զբերանս, ամբարձէք զձայնս. իմոյ ձայնի զինչ պէտք իցեն այսուհետև. զինչ պէտք իցեն հաւաստեաց յերևել Աչմանարտութեանն։

Ա՛վ տեսարան անձառելի ողորմութեանն Աստուծոյ։ Այն ինչ առեալ զձայն արձակմանն 'ի բերանոյ քահանային Աստուծոյ, անդէն մեղաւորն իբրու յափշտակեալ հիասքանչ՝ անցիւքն 'ի մեղաց 'ի հնարս, 'ի թշնամութենէն յորդիութիւն Աստուծոյ, 'ի վայրկենի անդ յանկարծակի փոփոխութեանն, միութարութիւն այնչափ յորդէ 'ի ծոցին, զի և գոգցես չմանայէ այնուհետև ինքն զսիրտ իւր։ Հալածեալ է դևն, լռէ խիղճն, հանդարտեն իղձքն. և հոգին 'ի գիրկս մտեալ միսանգամ հօրն, և համբոյր առեալ գգուանաց, աներկևան խնդայ 'ի ձայնն հնչեալ 'ի սիրտն. "Դաջալերեաց որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո"։ Լու սրբեալ այնպէս ապաշխարողն՝ ամբառնայ միսանգամ զգլուխն յերկինս, և անդրէն նահատակեալ 'ի յոյս ակնկալութեան արքայութեանն, նախ սրտառուչ հառաչէ, ապա կողկողի, ապա չմանդուրժեալ աղէտից սիրոյն և յարտասուս հատանի։ Լաբէ քաղցր արտասուացն, բաբէ կենսագործիչ ցօղոյն. քանզի ինքնին Աստուած է աղբիւր արտասուացն այնոցիկ։

Հաւասիկ ձեզ սիրելիք, առաջին հայրենի հիւրընկալութիւն մեղաւորաց, որով Աստուած ժողովէ զնոսա այնչափ ինն փարելի և նորաքանչ օրինակաւ ուրախութեան, զոր և ոչ առ անմեղսն զլխովին ցուցանէ։ Ա՛չ ահա և ինքնին որ հանդիսադիրն է ուրախութեան երբ կաքանչիւրոցն, վկայէ եթէ "Ուրախութիւն եղիցի յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ, քան վասն իննսուն և ինն արդարոց"։

Լաև բանաւոր փաստիւք 'ի նախանձ շարժեալն յառակի անդ անառակին ընդ հիւրամեծարութենն հանդարտեցուցեալ, և յուրախակցութիւն ևս հրաւիրէ. "Լու հանապազ, ասէ, ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է, քոյ է. այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր"։ այլովքն հանդերձ։

digitised by A.R.A.R.@

Ա՝ սան որոյ, սիրելիք, եթէ երբէք օտարացեալ ինչ իցէ ոք 'ի ձէնջ յԱստուծոյ մեղաց, տեսէք ահաւասիկ ակներև և խելամուտ եղերուք՝ եթէ ընդ որպիսի՞ տեառն և ընդ որպիսո՞ւմ հօր իցեն բանք ձեր։ Գիտէք իսկ, զիա՞րդ նա վարեցաւ առ բաղումս նմանեալս ձեզ. և զիա՞րդ դարձեալ հանդերձեալ է նա վարել ընդ ձեզ՝ 'ի դառնալ ձեր առ նա։

Ա՛յլ մի, եղբարք իմ, մի՛ զարհուրեցուցեն զձեզ ոչ ծանրութիւն մեղացն և ոչ թիւ մեղաց. "Հազար ամ յաչս տեառն իբրև օր երեկի, զի էանց ,, , աւե՜տեաց մարգարէն։ Գիտէպէտ և հազար ամաց, որպէս քաջալերեր 'ի Ճառին իւրում աստուածխնամ Լիւսացին, թէպէտ և հազար ամաց մեղաւոր իցես դու, հաշիւն առաջի Աստուծոյ՝ միոյ աւուր իցէ, միայն թէ օր մի ցաւեսցի քեզ վասն հազար ամացն անցելոց. "Գիտէպէտ և դումբր մեղացդ, ասէ, թուեսցի քեզ ո՞վ մարդ իբր հազարաց ամաց, առ ոչինչ է համարեալ, եթէ միանգամ վերջոտնեալ 'ի մեղացդ դարձցիս առ Աստուած ,,։

Գիտէպէտ և համակ վարակեալ յախտս քո և նեխեալ և հոտեալ ևս իցես իբրու զչորեքօրեայ մեռեալն, որում և ոչ փարելին այն քոյր հանդուրժէր ինչ, "Տէր, ասէ, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է ,, , մի՛ ինչ և յայնժամ վարանեսցիս. քանզի կեանք քո մերձ կան քեզ, և յարութիւն քո 'ի մեղաց առընթեր քո է։ Լեր աներկեան, զի եթէ և ոչ զոք գտանիցես դու համբերել ժուժալ դարշութեան ախտիցդ, համբերատար գտցես միայն զՔրիստոս։ Գիտէպէտ և մերձաւորք ա՜ռեանդ գարշեսցին, լքցեն զքեզ, թէպէտ և կարևոր բարեկամք և սիրելիք բացէ՛ 'ի բաց փախիցեն 'ի քէն, ոչ գարշեսցի բարեգութ հայրն, ոչ լքցէ երբէք զքեզ Քրիստոս։

Հայեաց դու միանգամ՝ 'ի բացեալ յայս կող խաչելոյն Յիսուսի. ատ վասն ամենեցուն գոյ տեղի, լայն արձակ է Ճանապարհն որ տանի 'ի սիրտ անդր . . . . ։ Օ՜այս Ճանապարհ կոխեցին բաղումք, կոխեսցես և դու . . . ։ Հա՛սպա ուրեմն եկայք մերձեցարուք, եկայք արտասուեսցուք առ ոտս հօրն զոր դառնացուցաք. "Եկայք երկիր պագցուք, անկցուք և լացցուք առաջի

digitised by A.R.A.R.@

տեառն արարչին մերոյ ,, . զայս խրախոյս աստուածային հոգւոյն մեզ կարդայ Դաւիթ ։

Լ.ՍԼ մինչ չև մերձեցեալք , վայր մի մոսխորհ լիցուք սիրելիք . առ որպիսի բարեգուութ հայր քանի՞ սպառումն գտաք ապաշնորհ որդիքս , զիա՞րդ ժառեցաք տապաբաբախտիկ որդիքս՝ թիկունս նմա դարձուցանել , զիա՞րդ զՀանապարհ փրկութեան յայնպիսի հօրէ տեսաք անառակքս ։ Լ.՚ա՞ղ առուրն չարի , առա՞ղ ժամուն , յորում սարտեաք ՚ի հօրէն . ուրանօ՞ր էաք ՚ի պահուն . ո՞ զառածեաց , ո՞ զուշ և զուրուշ մոգեաց զմեր , ո՞ մատն ելև փրկութեան մերում ։

Հայր , մեղայ յերկինս և առաջի քո . ես ինքն եմ հայր անառակ որդին , ես ինքն եմ որ դառնացուցի զքեզ ։ Դամ այսօր առաջի քո առօթահար շիկնեալ՝ ՚ի ցնցոտին իմ յայս գրգռեակ՝ ծածկոյթ մերկութեան իմոյ . չիք իմ այլ ՚ի հայրենի գոյիցդ , չինաց ինձ այլ , վատնեցի զամենայնն . վատնեցի զգին զպատուական արեան միածնիդ՝ զշնորհս զամենայն . “ Վատնեցի զինչս իմ , զի կեցի անառակութեամբ ,, ։ Լ.՚չ այժմ դառնամ ՚ի տուն , ոչ զորդւոյ առնուլ պատմութեան , այլ ձորձ զծառայի արկանել և զվարձկանի . “ ՀԵմ արժանի կոչիլ որդի քո , արա զիս իբրև զմի ՚ի վարձկանաց քոց ,, ։

Մ՚ի ՚ի գիրկս քո ընկալցիս զիս , հայր . այնմ ինչ ոչ սպասեմ. ոչ բազուկս ժտիմ, ոչ գիրկ , այլ խնդրեմ զոտս . Համբուրի ոտինդ արժանի եղեց հայր ։ Լ.ռ ոտդ այդոսիկ դիմեալ գամ. առ ոտս այդոսիկ արտասուեցին բազումք նմանեալք ինձ , և զտին ընորհս զՀնամարիտ զղջման ։ Կամ աւադիկ առ ոտդ անկեալ , տեր , խոնջ և վաստակ ՚ի տարագիմ օտարութենէս ։ Ի համբոյր ամենասուրբ ոտիցդ՝ խոստովանիմ եթէ ՚ի բազմաժամանակեայ օտարութենէս , և ոչ մի օր դտի սիրտ իմ՝ այսօր նորատեղծին իղձք. այսօր արտասուեմ առ ցաւ սրտիս և սիրեմ յարտասուացս . այսօր Հանապազեմ զբարեգութ հայրն , և այսօր Հանապազեմ զմեծութիւն յանցանացս ։

Մ՚ի երբեք այսուհետև ո՛վ Լ.ստուած իմ և հայր իմ, մի երբեք այլ օտարացայց ես ՚ի քէն . յուշ ածեալ Հանապազ՝ եթէ մոլորեալ էի և խնդրեցեր զիս ,

digitised by A.R.A.R.@

մեռեալ էի և յարուցեր զիս, կորուսեալ էի և գտեր զիս։ Զդ տուր ինձ տէր իմ և Հայր իմ զողորմութիւն քո, զի մի՛ և այլ կորեայց և մի՛ և այլ մեռայց ընդ հայ քոց։

ՄԱՍ Բ.

Զե՞ մնաց ինչ այլ, սիրելիք, պակաս յաստուածային ողորմութենէն, լուեալ ձեր ցայս վայր զանձառելին զայն ժողովումն 'ի դարձ անառակին։ Մնաց ինչ այլ. և կարի իսկ քաջ. զի ոչ բաւական համարի Աստուած զիւրն միայն խնդութիւն. այլ և հանդէս զցնծութիւն դարձին հրամայէ ամենայն երկնաքաղաքացեացն յապաշխարութիւն մեղաւորին։ Զե եթէ 'ի սրբոց և յանարատից հրեշտակացն խնդրէ զայս, զմնաւ ածէք քանիցն յարդարոց անտի մարդկանէ, որ՝ երբեմն անառակեալք իբրև զառակաւոր որդին, և ասպա հայրենի գթոյն թախանձ արկեալք՝ վայելեցին 'ի ընդհս որդիութեանն։

Զե արդ այսուհետև զիա՞րդ իցէ համարձակելի, որ զայնչափ գթութեանն Աստուծոյ և զողորմութեանն լուաք զձառս, և նմանողք հրաւիրեցաք լինել հօրն. "Զերոբ, ասէ, գթածք, որպէս և Հայրն ձեր գթած է"։ զիա՞րդ իցէ համարձակելի, որպէս խրատաբանէր աստուածայինն Աբգոստինոս, եթէ դժպատեհ մերնա խանձաւորութեամբ բաւնայաք մեք յառաջոյ մեղաւորաց զաստուածային զայն ողորմութեանն կամուրջ, ընդ որ մեք անցաք. "Աստուած ինքնին կազմեաց քեզ, ասէ, զողորմութեան իւր զկամուրջն, զի դու մարթասցիս անցանել. և դու խնդրեսցես բառնալ զայդ, զի մի այլ ոք անցցէ ընդ դա"։ Զչէ դու ասա ինձ վայրիկ մի, հարցանէր երանելին. դու որ խնդրէիր տեսանել միանգամայն պակաս յաշխարհէ զբնաւ իսկ զամբարիշտս, և եթէ զքեզ ևս 'ի նոյն համար արկանէր Աստուած՝ յորում էիր երբեմն, լինէիր դու արդեօք որ ինչ եղաւադիկ։ "Թէ ինքնին Աստուած չինայեր 'ի քեզ յամ

digitised by A.R.A.R.@

բարչութեան քում, զիսիրդ դու երբէք արդարութեանն լինելիր բաժանորդ ,, ։

Բ.յլ ես, եղբարք, աւասիկ վկայեմ առաջի երկնի և երկրի, զի 'ի վարչութեան մեղաւորացն սիրեցից միշտ առաւել ծայրայեղ լինել 'ի քաղցրութեան քան 'ի խստութեան. քանզի և օրինակ զայս վարեցաւ ընդ իս և ընդ ամենեսեան Քրիստոս։ Բ.ա՛ռ, միշտ անջինջ կայ 'ի սրտի իմում բան տեառն իմոյ առ Պետրոս. "Բ.յլ ես աղաչեցի վասն քո Պետրէ, զի մի պակասեսցին հաւատք քո. և դու երբեմն դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո ,, ։ Երբակի դու նզովիւք ուրասցիս զիս, այլ ես ներեցից քեզ. և փոխարէն 'ի քէն ոչ այլ ինչ պահանջեմ, բայց զի և դու յետ այնորիկ հայեացիս նովին աչօք, որովք ես հայեցայց 'ի քեզ. "Դարձցիս դու երբեմն և հաստատեսցես զեղբարս քո ,, ։

Ողասաց, յերեսս հարցես, կշտամբեսցես, զձձեսցես. այլ թէ հաստատեսցես զեղբարս քո։ Ցուր քաջալերը սրտից նոցա, և դու ինքնին մուտ վասն դոցա երաշխաւոր առ իմն արդարութիւն. ցաւ և զիղջ բղխեցուսցես 'ի սրտից նոցա, որպէս ես 'ի քէն հայեցուածովս. զպակասն ցաւոց նոցա դու լցցես, և թէ նոքա արտասուէլ չգիտեն, փոխանակ նոցա դու արտասուեսցես. քեզ յանձն առնեմ զնոսա ո՛վ Պետրէ. մի ես ստրջացայց 'ի կարգել իմ զքեզ դոցա բժիշկ բարեգութ. "Դարձցիս դու և հաստատեսցես զեղբարս քո ,, ։

Բ.յս ձայնք լի գորովով սիրելիք, յամենայն ժամ լինիցին տիպարք և հրահանգք իմոց քարոզից։ Դանիցս անգամ յակնարկել իմ ընդ վայրս քրիստոնէից, և 'ի տեսանել զնոսա այնչափ անկղիտացեալս և վարակեալս ախտիւք և յանձնապատանս 'ի մեղս, մղձկեալ եմ 'ի հոգի, և ջերեալ բորբոքիմ նախանձու 'ի վերայ այնչափ անարգութեանց անուանն Բ.ստուծոյ։ Բ.՛զի ժամիմ ելանել երևել յայս բեմ ոչ 'ի քարոզել, քան թէ պատուհասակոծ մեծասաստ կշտամբանօքս զկծեցուցանել. է զի իզձ լինիմ զնալ ընթանալ ընդ ամենայն երկիր, և անդ ձայն բարձրագոչ արձակել՝ իբրու 'ի յերկարաձգեալ քնոյն զնիրհեալն Բ.ստուծոյ բարկութիւն ընդոստուցանել 'ի թաւս շանթից. "Բ.զի

digitised by A.R.A.R.@

տէր ընդէ՞ր հնջէս, արի ցրուեա զհեթանոսս, զոր կամին ընդ պատերազմ.,

Խորհուրդք այսպիսի ընդառաջեն մտացս, այլ սակայն վայր մի դիւր տուեալ նախանձաւոր թափոյն, և զորովալից ձայնից տերունական ուշ՝ի կուրծս արարեալ, բաբէ գոչեմ. առ արդարութիւնն ես բողոք հարի, այլ ողորմութիւնն ինձ պատասխանի տայ. ես դատաւոր կարդացի, այլ յանդիմանն ինձ հայր տեսանեմ։ Զ՚ս սա՞ ուրեմն արձակեցի ես ձայն ընդդէմ մեղաւորաց, և ընդ անձին իմում ես ինքնին ոգորեցայ։ Ա՞չ ահա և ես մի եմ՝ի նոցանէ. և ընդ այնչափ յանցաւորութեանց իմոց երբ մերժեաց զիս Զ՚ստուած իմ, և երբ պատուհաս զարժանին կապեաց։

Զ՚յս խորհուրդ, սիրելիք, հզօրացեալ է յիս, որ զամենայն խստութիւն միանգամայն բառնայ յինէն. և զնախանձաւորութեան փոխեալ զձայն, այլ իմաստ բանի առնում՝ի ձեռն, և յոգւոց հանեմ. ո՛վ, իցէ՞ թէ դարձայց և ես երբեմն և հաստատեցից զեղբարս իմ։ Ա՞ ինձ տայէ ընթանալ յընդհանուրս՝ի խնդիր մեղաւորաց. իցէ՞ թէ տեսանէի ես զանձն իմ զօրհանապաղ թարթափեալ պարապեալ՝ի սպասարկութիւն հոգւոց նոցա, և իմովս իսկ աչքով առ հասարակ զնոսա փայփայեալ և արձակեալ, և դիրկ ընդ խառն ընդ նոսա գորովեալ՝ զիմն ընդ նոցուն խառնէի արտասուաց։

Զ՚յլ քանզի յամենայն իղձս իմ չեմ բաւական՝ի կատարումն, զձեր հնորհ ո՛ արգոյ երիցակիցք, զձեր հնորհն մաղթեմ ո՛ հարք հոգւոց. դուք լցէք զպակասն, դուք ձերով զօրութեամբդ, ձերով իմաստութեամբդ զտերունական ձայն առ Պետրոս վայելչապէս արդիւնացուցէք՝ի պաշտամանդ։ Յուշ լիցի ձեզ, աղաչեմ, զի և խոժոռ մի դէմք կամ բան մի դառնութեան՝ բաղում անգամ բնաւորեցաւ զեան մեծապէս գործել հոգւոց ապաշխարողացն՝ որ մերձենան առ ձեզ։ Ա՞՝արդասէր, հիւրընկալ, քաղցրահայեաց լերուք առ հիւսացեալ մեղաւորսդ. թէպէտ և յանցաւորք ևս մեծամեծք իցեն, սակայն զրկալից համբուրիւ անկաւ հայրն զպարանոցաւ նոցա. սակայն տէրն իւրեանց՝ի վերայ այսր կենսաբեր փայտի չմուռացաւ զնոսա։

Օ՚դէպսն գիտէք, զդէպսն զայն աբանչելի ճահաւոր

digitised by A.R.A.R.@

առաջարկութեան բանիս 'ի սրբոյն պատմութեանց, և յուշ ածել աղաչեմ։ Որժամ առ ոմն 'ի սրբոց մեծաց վանականաց քոյր նորա աշխարհիկ, աշխարհասէր, հանդերձս երևելիս պճնապաճոյճ արկեալ զիւրև զբնաց և խնդրէր տեսանել զեղբայրն իւր զսուրբն, սա բնաւ իսկ խորշեցաւ 'ի նմանէ և զանայր նմա զտեսութիւն իւր. այնպէս փակեալ մնացեալ պարարտեր 'ի խցկանն։ Կոչեցաւ 'ի սրտին քոյրն, և տայր արտասուօք զրոյց տանել եղբօրն այսպէս. "Լաթէ ես, ասէ, մեղաւոր իցեմ, և ոչ վասն մեղաւորաց մեռաւ Քրիստոս. ասացէք եղբօրն իմում, վաղ եկեսցէ տեսցէ զքոյր իւր. և եթէ նա իբրև եղբայր ոչ տեսցէ յիս զարիւն իւր, զոնէ իբրև ծառայ Աստուծոյ տեսցէ յիս զարիւնն Քրիստոսի"։ Ել հանդուրժեաց եղբայրն բանին, մանաւանդ եթէ անվանելի փաստին. եկ արտաքս քաղցրահայեաց 'ի տեսանել զնա. այլ այնչափ ինչ պատրաստութեամբ 'ի լաւ անդր եդիտ զքոյրն, զի և այն ինչ բացեալ զբերանն ասել ինչ յաստուածայնոց բանից, բոլորովին իսկ 'ի կատարելութիւն աւետարանին ած փոխեաց զքոյրն, և նուիրեաց Քրիստոսի։

Բաբէ, եթէ կացեալ մնացեալ էր եղբօրն 'ի խորհուրդ խստութեան իւրոյ չելանել չտեսանել զքոյրն, զինչ շահ օգտի արարեալ էր քեռն. Թերևս և կորուսեալ իսկ էր խստութեամբն զհոգին, զոր շահեցաւ քաղցրութեամբ։

Այսինքնակ քաղցրութեամբ որսասցուք զհոգիս, և 'ի գրկացն սատանայի կորզեալ, տացուք 'ի գիրկս Քրիստոսի։ Մի՛ խորշեսցուք որչափ և մեղապարտք իցեն, այլ մանաւանդ առաւել և մերձեսցուք առ նոսա. յուշ զիրաւացին ածեալ բան զքեռն. "Լաթէ ես մեղաւոր իցեմ, և ոչ վասն մեղաւորացն մեռաւ Քրիստոս"։

digitised by A.R.A.R.@

ԿԱՐՈՂ ԺԵ.

ՓԱՌՔ ԵՒ ՊԱՇՏՕՆ ՏԻՐԱՄՕՐՆ Ի ՏՕՆԻ ԱԻԵՏԵԱՑ ԿՈՒՍԻՆ

"Անուասիկ կամաղախին տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում"։

Թէրևս ակնարկեալ ոք հիացմամբ ընդ մեծահրաշ արարչագործութիւն հնոյ աշխարհին և նորոյս, 'ի վաբանս լինիցի ընտրել ո՞ քան զո՞ առաւելեալ իցէ 'ի կարգին։ Այր մի ապա 'ի քնին առեալ՝ առ ժամն անսահմանաբար կնքեսցէ, եթէ երկոքին միանգամայն մեծահրաշք են, քանզի և յերկոսին անբաւութիւնք զուգակցին։ Ի միումն՝ թագաւորէ զօրութիւն ամբաւ, 'ի միւսումն՝ մարդասիրութիւն ամբաւ։ Օր և զայս ի մասն գերահրաշ՝ խորագոյնս ակնարկէ եկեղեցի 'ի ծընունդ Տիրամօրն 'ի նուագել իւրում, "Որ յանէից բանիւ (իբրև ամենազօր) գայացուցեր զաշխարհս ամենայն. այսօր մարդասիրեալ անօրինաբար (իբրև ամենողորմ) արկեր հիմունս նորոյ աշխարհի"։

Ի մարդասիրութենէ աստի ամբաւ և անսահման՝ աստուածայինն շարժեցաւ ողորմութիւն 'ի յաւիտենից. և անդստին 'ի սկզբանէ յետ հանակոծման արկածից բնութեանս, իբրու յածեալ 'ի վերայ աւերակաց աշխարհին՝ զյաւիտենական խորհուրդն միշտ 'ի մտի կալաւ՝ նոր արկանել հիմն և նորաստեղծել զաշխարհ։ Բայլ քանզի անփոփոխ էր և սահման խորհրդոյն, զայն ինչ որ 'ի ձեռն կնոջ քակեցաւ, վերաստեղծել 'ի ձեռն

digitised by A.R.A.R.@

կնոջ. վասն որոյ և զործն մեծ սպասեալ Հնայր ծագ-
ման կնոջն յառաջագոյն նկարելոյ 'ի խորհրդոյն Աս-
տուծոյ։

Հոլովելին ժամանակք, հոլովելին դարք։ Գան և
անցանեն ընդ դարս կանայք վեհաղինք. կանայք սա-
պընջականք վերընկալք մեծամեծար նահատակութեց.
այլ սակայն գան և անցանեն։ Գայ անդուստ Սարրա
հոյակապն տիկին բարգաւաճ ժառանգութեամբ բիւ-
րուց զառակաց. գայ և անցանէ։ Յերևան գայ Հռա-
քել փառաւորեալն 'ի շուք վայելչութեան դիտակին.
գայ և անցանէ։ Ընդ ուրեմն և Գեբորա այրասիրան
զօրավար իսրայելեան ձակատուն՝ հրամանատար լինի
բանակին. այլ չէ նա։ Ընդ և Յայել շահատակն 'ի
կանայս՝ այն ինչ եղեալ 'ի խորանէն կապուտ կողոպուտ
զՍիսարա ընդ ծամելին վարսէ և առ ոտիւքն տապալէ.
սակայն չէ և նա։ Ընդուստ գայ Յուդիթ 'ի բանակէն
Ասուր, յաղթանակաւ զկառափն ունելով 'ի ձեռին զՀո-
ղեփեռնեայ. այլ չէ նա ընտրեալն։ Ա՛ռ հասարակ սո-
քա անցին 'ի հանդէս, այլ ոչ ընտրեաց 'ի նոցանէն
տէր։

Ո՞ՀՐ ուրեմն իցէ մեծն այն և քաջափայլն տիկին,
որում այնչափ օրինակք կարապետեցին, զոր այնչափ
պատգամաց ձայնք աւետեցին, որում այնչափ խղճք 'ի
ինդիր եղին։ Ա՛հա անձկացելոյ աշխարհին՝ յոյս, ահա
կորուսելոյ աշխարհին փրկանակ, ահա ծաղիկ կանանց
և պսակ կուսից, Մարիամ։ Սա է նա, որում սպա-
սեալ Հնայր ակնկալութիւն հանօրէն դարուց. սա է
նա, որ միայն 'ի կախ ունէր զյաւիտենական սահմանն,
'ի կախ՝ զարարածս, 'ի կախ՝ զաշխարհ ամենայն. քան-
զի և չէր առնել ինչ, մինչև ոչ եկեսցէ Մարիամ։

Ա՛ւ աւաղիկ նա յանդիման յերևան գայ աստուա-
ծային անձառելի խորհրդոյն, տեսանէ անդանօր զգը-
ծագիր տիպարն զաստուածային ողորմութեան. տեսա-
նէ և հիացեալ յակՃիռս կոյս ընդ խորհուրդն, փու-
թացուցանէ զգործադրութիւնն. ձայն տայ Ճոխաբար
իշխանութեամբ. իշխանութիւն՝ որ ոչ ցուցաւ երբէք
'ի դարս. "Ա՛ղիցի, ասէ, եղիցի"։ Ա՛յն ինչ ասաց,
և անդէն ամենակարողութիւնն ամբարձ զձեռն. "Ա՛ւ
արար զզօրութիւն բազկաւ իւրով"։ Ա՛ղիցի. և հապ-

digitised by A.R.A.R.@

շտապ շարժեցան դղրդեցան՝ երկինք, «Լոյս ամպք ցօղեցին զարդարութիւն»։ Լցիցի. և անդէն Աստուած վերանորոգիչ բնութեանս, բաբէ, մարմնազգեցիկ ի բրև մարդ յերևան գայ. «Լոյս բանն մարմին եղև, և բնակեցաւ 'ի մեզ»։

Օ խարդ նորաստանչ դէպք, քանի հրաշափառ տեսարան. Մարիամ վերանորոգէ զաշխարհ, և միայնակ նա արտաքոյ բնութեան ընտրի 'ի նորաստեղծել զբնութիւն։ Այո, Մարիամ վերանորոգէ զաշխարհ. քանզի ինքն ետ զհաստատութիւն աստուածային գծագիր օրինակին. ձեռն ետ 'ի գործն. լրումն ետ նահատակութեան գործոյն։ Օ խարդ. 'ի նմանէն իսկ լուսաբուք. «Հաւասիկ կամ աղախին տեառն. եղիցի»։ Այս է Մարիամ, որ խոնարհութեամբն նահատակի, և 'ի խոնարհութեանն՝ կատարիչ է բարձրութեան խորհրդոյն. «Եղիցի ինձ»։ Այս է Մարիամ որ ձեռն հաւանութեան տայ կուսութեամբն, և 'ի կուսութեանն տայ գնիւթն առ գործն. «Եղիցի ինձ ըստ բանի քում»։ Այս է Մարիամ, որ սահմանէ զբանն մայրութեամբն, և 'ի մայրութեանն՝ պսակէ զմարդեղութիւնն Աստուծոյ. «Լոյս բանն մարմին եղև»։

Չնչա մեք մանրամասին տեսցուք զանձառելեացս զայսոցիկ՝ միանգամայն զսկիզբն, զմէջն և զկատարած. տեսցուք 'ի նոյն և զգեղեցիկ պարտս պաշտաման և սիրոյ մերոյ առ սատարն և առ միջնորդ փրկութեան՝ առ Տիրամայրն։ Լոյս անշուշտ ոչ լիցի մեզ այնուհետև տեսանել երբեք ոչ գործ՝ առաւել մեծահրաշ, և ոչ կին՝ առաւել մեծագործ։

ՄԱՄՆ Ա.

Լոյս 'ի խելամուտ աստուածայնոյն լինել մեծութեան կամ թէ առնել զոք, բնաւորեցաք մեք մատնանիշ ըզմեծամարմին զայս աշխարհ ցուցանել, շուրջ զանն յաձել ընդ ծով, ընդ ցամաք, ընդ երկինս, ընդ համաբուր արարածս. հիացեալք անհասութեամբ՝ զի ամենայնիցդ այդոքիկ 'ի սատար աքանչելի գոյութեանն ոչ

digitised by A.R.A.R.@

զայլ ինչ, քան թէ զձայն մի միայն ունելով "Լղի-
ցի ,, հաստեցան կացին. "Լսաց և եղեն, հրամայեաց
և հաստատեցան ,, ։ Քանի ընդհատ զաստուածայինն
կարծիցես 'ի մարդկայնոցս, քանի ամբաւութեամբ
անջրպետեալ. յորժամ քաղաք մի, յորժամ տուն մի
մեր ձարտարքս կանգնեսցեն, քանիսն իցեն կարկառք
քարանց, քանի կոյտք ատաղձացն. քանի և ատաղ-
ձագործ հիւսունք, քանի և ժամանակք, քանիսն ձայնք
և ղընդիւնք։ Իսկ աստանօր բանս մի "Լղիցի ,, բա-
ւական ընդ ամենայնին։ Որ միտ բաւական իցէ հաստ-
նել, զինչ զօրութիւն էր 'ի ձայնն, որ ազդումն, որ
հոգի. զի այնպէս յական քթթել 'ի բարբառ մի յան-
գոյից յերևան գան աքանչելիքն գունակ գունակ։

Արդ որ գիտէքդ զայդ և հիանայք անհասութեամբ,
զոր առաւել կարծիցէք դուք գործ մեծահրաշ. զաշ-
խարհի արարչութիւնն, եթէ զբանին մարդեղութիւն.
զարարչութիւնն ստեղծիչ, եթէ զմարմնառութիւնն
վերաստեղծիչ։ Հարցէք ցհարս սուրբս և ասասցեն։
Լուստ ուստէք և հայեսջիք, ասեն, դուք 'ի վերջինդ,
եթէ ըստ գործոյն հանդերձանաց, եթէ ընդ մեծվայել
չութիւն հանդերձելոյն, եթէ ընդ գերազանցութիւն
վախճանին, եթէ ընդ մեծագործութիւն արդասեացն,
մեծ է յոյժ վերջինդ քան զառաջինն. և անզուգական
առաւելութեամբ մեծ է Աստուած մարդացեալ, քան
աշխարհ ստեղծեալ։ Օ՜ որ "Լղիցին ,, ուրեմն համա-
րիցիք դուք մեծ. զայն որ ասացն, "Լղիցի լոյս և է-
ղև լոյս ,, եթէ որ ասացն, "Լղիցի ինձ. և բանն
մարմին եղև ,, ։ Օ՜այն որ ձգեաց յոչնչէ զարարածս,
եթէ որ ձգեաց յերկնից զարարիչն։ Զհա չափ, ահա
հանդէս մեծահրաշ փառացն Արարիչն։ Բաւական ան-
չափ փառաւորութեանն, քանզի և անչափ եկաց խո-
նարհութիւնն։ Զեկաց 'ի քնութեան խոնարհ այնպիսի
իբրու զԱրարիչ. քանզի և չեկաց որ այնչափ փառաքն
լաւագոյնս վարեցաւ, և յայնչափ փառսն՝ նուազ պար-
ծեցաւ իբրու զԱրարիչ։

Օ՜ փառս իւր առաւել մեծացուցանել աստուածու-
թիւնն՝ փառաւորելով զխոնարհս. քանզի սոքա են որ
գիտեն քաջ, յումմէ է ինորհն. սոքա են որ հաւա-
տարիմք անդրէն յաղբերակն զբազմահոս վտակսն դար-

digitised by A.R.A.R.@

ձուցանեն։ Ի՛նչ «Կացուցի, ասէ Աստուած զՄովսէս, ահա կացուցի զքեզ Աստուած Փարաւոնի»։ Ել քոյին միայն Ժողովրդեան գիտասցես զքեզ այսուհետև առաջնորդ, այլ և Աստուած Եգիպտոսի։ Յայդ գաւազան զիմն առադիկ տամ քեզ զբաղուկ. սարսեա զերկիր, դո զացո զգետս, զատեա զոդոդ,ած ստուեր երկնից,տիւ արա և գիշեր, որպէս և կամիս. ահա եղի զքեզ Աստուած։

Սակայն և միտ դիք սիրելիք, քանիցն է անջրպետն ընդ Մարիամ։ Զ Մովսիսէ կախեսցի, ասէ, Թագաւորութիւն մի միայն. զՄարիամայ՝ տիեզերք ամենայն։ Ի՛նարկութեանց առաջնոյն՝ ուշ ունին արարածք. երկրորդին՝ որպէս աստուածխնամն ասաց Ի՛գոստինոս՝ սպասեալ մնայ արարիչն. «Ողկամեցաւ, ասէ, մարմին առնուլ 'ի նմանէ, եթէ նա չտայր»։ Ել վասն բախտին Եգիպտոսի գիտել ինչ կամիցն, երթեալ հարցցէ զՄովսէս. որ վասն սահմանի տեսչութեան տիեզերաց՝ գնասցէ հարցցէ զՄարիամ։

Ի՛սկ բա՞ւէ, զիսա՞ղդ աստանօր միաբանեսցին իրքն։ Ել ասացն «Զ փառս իմ այլում ոչ տայ», թէր զայնչափ զօրութիւնն առատաձեռնեսցէ՝ յորմէ և այնչափ փառք։ Ի՛սկ որպէս ասացի, այնպիսի ժառանգաւորք զօրութեանն՝ առաւել ևս փառաւորեսցին զՍտուած առ անչափ խոնարհութեան սրտից իւրեանց։ Զ՝ինտէք իսկ դուք զկրկին փառաւորելոցս զներդաշնակաւոր միաձայնութիւնն առ պարգևատուն. մին երգէր «Զրհնեսցուք զտէր, զի փառաւք է փառաւորեալ»։ «Մեծացուսցէ անձն իմ զտէր», նուագէ Մարիամ։ «Ի՛նչ քո տէր փառաւորեալ է զօրութեամբ», հնչէին ցնծութեամբ ափունքն 'ի Կարմիր ծովուն։ «Ի՛սքար զզօրութիւն բազկաւ իւրով», ձայն գանգեցին անդրադարձ՝ լեռնակողմանքն Հրէաստանի։ «Ա՛ա է Ի՛նչ Աստուած իմ, և փառաւորարարիցս զսա», կցէր զՀետ փրկիչն Իսրայելի։ «Ա՛ւ ցնծացաւ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ», ձայնակիցս յառաջանայ փրկանակն աշխարհի։

Ա՛ւ այսպէս ապա 'ի վեգ զմիմեանսքն գան կրկնաձայնք և միասիրտք Մովսէս և Մարիամ. այնչափ խոնարհեալք 'ի սրտի, որչափ առաւելեալք 'ի մեծութեան։ Ա՛յրբեալք ոչ գիտեն՝ յանձինս լինել մեծք, բայց եթէ յԱստուած և վասն Ի՛նչ։

digitised by A.R.A.R.@

Ահա խելամուտ լերուք եղբարք, զի ուր յանչափս երևի Աստուած առատաձեռնել զզօրութիւն իւր 'ի մարդիկ, անդանօր առաւել նախանձախնդիր ցուցանի փառաց իւրոց. քանզի և զայնոսիկ միայն բարձրացուցանէ առնել մեծամեծս, որ փառս նմա դարձուցանեն՝ զի արարին մեծամեծս. "Աստուած ընդ իս մեծամեծս հզօրն, և սուրբ է անուն նորա, և հայեցաւ 'ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ"։

Դաջ իսկ այսմ խելամուտ ողջունաբեր զուարթունն խօսակիցն Աբրահամու, եթէ քանիցն փախչէր թաքչէր նա գրաւել անձին զօտարին զփառան, ուստի և ի բերու փոփոխեալ զոհ բանին 'ի դեսպանութենէն, 'ի նմանէն առ բարձրեալն զամենայն գովութիւնսն ըղերձէր հրեշտակն. "Ուրախ լեր բերկրեալ, տէր ընդ քեզ. զի գտեր շնորհս յԱստուծոյ"։

Աղդպիսի՞ մուտ և այդ ողջոյն առ այնպիսի խոնարհն։ Զիա դիք. "Իսկ նա խռովեցաւ ընդ բանն. և խորհէր ընդ միտս թէ որպիսի՞ ինչ իցէ ողջոյնս այս"։ Այ՞ս ինքն բերկրեալ, ե՞ս ինքն գտող շնորհացն Աստուծոյ։ Զ բիպեալ է քո ո՛չ անմարմին զուարթուն։ Այս կին մի հիքացեալ անբաժ եմ յամենայն բարեաց։ Տէրն իմ ընդ ի՞ս։ Այթէ նա տէր իմ, թող զիս ուրեմն առցէ իւր յաղախին, ոչ եթէ 'ի մայր։

Զայլ աւետաբերն քաջ հրահանգեալ յերկնից, զինչ գործեաց։ Իբրև խոնարհ խռովեցոյց զնա, իբրև խոնարհ յաղթահարեաց զնա։

Գործ մեծ աստուածային մարդեղութեան բանին կրկնակի ունի հայեցուածս. մին փառաւոր վասն Աբրահամու, իբրու նա ընտրեցաւ 'ի գործի. մին՝ վասն Աստուծոյ, իբրու բուն պատճառք և արարիչ մեծի գործոյն։ Զին՝ 'ի ցնծութիւն մօրն, միւսն՝ 'ի բարձրութիւն որդւոյն։ Զդ զխռովել Աբրահամու տեսեալ հրեշտակին, փոխանակ բարձրացուցանելոյ զմայրն, կրթի 'ի գովել զորդին. և իբրու չտեսանելոյն արարեալ զգործ կուսական արգանդին նորա և հապճեպ անցեալ, յաճախեալ առաւել 'ի համբաւել միայն զգործն Աստուծոյ. "Յղասցես, ասէ, և ծնցիս որդի"։ Զայլ որդի որպիսի՞. "Այս եղիցի մեծ, և որդի բարձրելոյ կոչեսցի. և տացէ նմա տէր Աստուած զաթոռն Դաւթի

հօր նորա, և թագաւորեսցէ 'ի վերայ տանն Յակոբայ 'ի յաւիտեան. և թագաւորութեան նորա վախճան մի լիցի ,, ։ " Յղասցես և ծնցես որդի ,, . այլ ո՞ օժան-դակ և թեւարկու. " Հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո. քան-զի և որ ծնանելոցն է 'ի քէն սուրբ է, և որդի Աստու-ծոյ կոչեսցի ,, ։ Այլ եթէ զվերջինն և զառաջինն միանգամայն խնդրեսցես լսել յանհասանելիսն, չիք այլ. բայց եթէ " Օ՛ի ոչ տկարասցի առ յԱստուծոյ ամենայն բան ,, ։

Այո՛ այո՛, տկարասցի և ոչ ինչ։ Գործս ուրեմն մեծ՝ գործ միայն է Աստուծոյ, բաբէ։ " Յղիցի ապա, ասէ Մարիամ, եղիցի ,, ։ Այլ եգիցին հնարքն մեծապէս հիքացելոյ աղախնոյ՝ ծառայութիւն հարկանել փառաց տեառն իւրոյ. " Հաւասիկ կամ աղախին տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում ,, ։

Այլ արդ որ միանգամ կարողն է, սահմանեսցէ՝ երբ առաւել խոնարհ յանդիմանեսցի մեզ Մարիամ. արդեօք յընդդէմ դառնալն, եթէ 'ի յանձն առնուլն։ Այլ ես զարդիս առանձին զանչափութիւն նախնոյն այն խաւարին անդնդոյն ոչնչութեան՝ յորմէ ած յերևան Աստուած զաշխարհս ամենայն, համակշռեալ հիացմամբ 'ի միտս իմ՝ ընդ խորանդունդս խոնարհութեան, որով այսօր նորաստեղծէ զնա, յայնչափ անհաւասարութեան անզուգակից գործոյն, աբանչացեալ եմ՝ ընդ հաւասարութիւն և ընդ զուգակցութիւն իրին։ Օ՛ի անդ գործեցաւ 'ի ծոց ոչնչին, որ 'ի բնէն չունի զգոյն. և աստ գործեցաւ 'ի ծոց գոյին, որ 'ի խոնարհութենէն դառնայ լինի յոչինչ. " Հաւասիկ կամ աղախին տեառն, եղիցի ,, ։

Արդ տեսցէ այսօր Գամ և գիտասցէ, եթէ առ 'ի նմանել Աստուծոյ 'ի գործս, " Յղիջիք, ասէ, իբրև զաստուածս ,, , պարտ էր նմա մինչև ընդ ոտիւքն խոնարհել ըստ նմանմամբ. և 'ի հիւանդութեան իւրում հրահանգեալ 'ի դեղ դարմանոյն իւրոյ, ուսանել եթէ կործանելոյ աշխարհին յամբարհաւաճութենէ հնոյ և մարդոյ՝ որ թեկն ածին զաստուածանալոյն, չէր այլ դարման քաջադէպ քան զխոնարհութիւն Աստուծոյ, զոր մարթասցի առնել իբրև մարդ. և քան զխոնարհու-

digitised by A.R.A.R.@

թիւն մեր՝ զոր կամեսցի առնել իբրև աղախին. «Զ-հաւասիկ կամ աղախին տեառն, եղիցի»։

Զհաւասիկ Աբրահամ խոնարհութեամբն եւ հաստատութիւն խորհրդոցն Աստուծոյ 'ի մեծահրաշ մարդեղութեանն, տայ և այժմ կուսութեամբն նիւթ 'ի գործն մեծ. «Եղիցի ինձ», ասէ։ Զնդ ուրեմն 'ի կոյս արգանդէ հողոյն զոյացուցեալ Աստուած զառաջինն Ադամ, աբանչելապէս օրինակէր զերկրորդն Ադամ, որ յաւուր միում անապական ծննդեամբն 'ի կուսական արգանդէն Աբրահամու երևեցաւ յաշխարհի։ Զնքննաբար 'ի ձահ պատահեալ միմեանց յաւիտենական ծնունդ և ժամանակաւորն. մին՝ անձառելի անմայր ծնունդ, միւսն՝ աբանչելահրաշ անհայր ծնունդ։

Զայլ ինձ աստանօր տարակուսանս, եթէ արդեօք հրաշալի նախաձայնութիւնն Գաբրիելայ. «Զհա կոյս յղասցի և ծնցի զՄանուէլ», ծանօթ ինչ էր ժողովրդեանն Իսրայէլի, եթէ անծանօթ։ Եթէ ծանօթ էր, զի՞ է զի կուսանք բաղումք էրևեցան Իսրայէլի։ Զպա եթէ անծանօթ, առ ինչ Աբրահամու այնչափ սնդապարհ լինել 'ի կուսութեանն։ Ուստի շարժեցաւ նա 'ի նոյն, և որպէս Հարքն ասացին, «Որ օրէնք, որ իրաւունք, որ բան կտակարանաց հնոյ ուիտին, կամ պատուիրեաց նմա զայն, կամ խորհուրդ թելադրեաց կամ թէ դրդեաց զնա այնպէս 'ի մարմնի կեալ անմարմնաբար»։ Եւ ուր առ հասարակ աղջկունք մայր ցանկային լինել, զի մայր լինիցին Քրիստոսի, սա միայն անօրինակ յայլոց ամենեցուն՝ 'ի ծաղկի կուսութեանն յաւերժանայ։

Ի սեր ուրեմն կուսական մաքրութեանն սաստկապէս վառեալ էր Աբրահամ. ուստի և զհասարակացն թողեալ ձանապահ, միայնակ անօրինակ հետևեցաւ ընդ նորասքանչ շաւիղն։ Ի սեր մաքրութեան կուսի սաստկապէս վառեալ ասեմ զԱբրահամ. քանզի և զինչ այլ ապա պատճառք կային 'ի միջի նորօրինակ կենացն։ Քանզի և չէ ասել, եթէ թերևս զեսայեանն լուեալ զաւետիսն զկուսի յղութեան և զծննդեանն, սպասեալ մնայր մայր լինել Քրիստոսի։ Զա աւանիկ ինքն առ 'ի մնալ կոյս հրաժարէ յաւետեաց մայրութեանն. քանզի այն ինչ լուեալ զայն, կարձէ զբանն. «Զ-Իսրդ

digitised by A.R.A.R.@

լինիցի ինձ, ասէ, այդ. քանզի զայր ոչ գիտեմ,, ։ Եւ ան-
շուշտ եթէ կանուխ գիտէր զնախասձայնութիւնն, ասացեալ,
զիա՞րդ խոչ ընդ մէջ արկանէր զիւրական կուսութիւնն,
որ մնանաւանդ դիւրահետ յոյժ գործէր զաւետիսն ։

Զ.ԱԼ նա պնդել զհարցումն 'ի գիտել, զիա՞րդ լինիցի
ինձ, ասէ, մայր լինել, որ կուսութեամբս սիրեցի հրա-
ժարել 'ի գիտելոյ զայր ։ Եւ քանզի լսէ յաւետաւոր
հրեշտակէն, եթէ մայր զնա լինել կամի Զ.ստուած,
հարցանէ խոնարհութեամբ, եթէ ընդ ծննդեանն կաց-
ցէ՞ մնասցէ 'ի միասին անդրժելի և շուշան կուսութեն ։
Եթէ չկացցէ, ուրեմն կամ զայն հրամայէ Զ.ստուած
յայտնապէս, զի որ մինչև ցայն վայր պահեաց զկուսու-
թիւնն վասն Զ.ստուծոյ, զնոյն դարձեալ նուիրեսցէ նա
Զ.ստուծոյ, կամ՝ եթէ բնաւ իսկ 'ի կասն անձին իւրոյ
առնէ ապաստան զբանն, և յայնժամ քան զգեղեցիկ
շուշանի կուսութեանն խամրել՝ առաւել ընտրէ ինքն
հրաժարել 'ի պտղոյն անմահութեան. և թէպէտև
յաստուածային մայրութեանն գերաշուք է հանդէս
մեծութեանն, յանապական կուսութեանն ցանկալի
են արգասիք առաքինութեանն, մնադիւր ինքն յանձն
առնուցու լինել նուազ մեծ, միայն թէ չլինիցի ինքն
նուազ մաքուր, և երբէք ոչ ինչ առաւել փարելի իցէ
փրկչին իւրոյ Զ.ստուծոյ, քան յորժամ 'ի փառս նորա
ինքն հրաժեշտ տացէ և 'ի մեծապարգև և յանզուգա-
կան հնորհէն ։ Զ.յսպիսի ինչ է, ըստ աստուածիմաստ
մեկնչաց գրոցն՝ զօրութիւն և իմաստ բանին, զոր ասաց.
"Օ իա՞րդ լինիցի ինձ այդ,, ։

Զ՞վ կոյս անօրինակ, ո՞վ կուսութի՞ անզուգական. ո՞վ
արդարև արժանի զի 'ի հնորհս նորա դարձցի անդրէն
Հոգին սուրբ բնակել 'ի մարդիկ. "Հոգին սուրբ է-
կեսցէ 'ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի
'ի վերայ քո,, ։

Զ՞ւր արդ ահագինն սպառնալիք ընդդէմ տիեզերաց,
յորժամ անդնդասոյզն լինէր. "Զ՞'ի՞' մնասցէ, ասէ,
հոգի իմ 'ի մարդիկդ յայդ, վասն լինելոյ դոցա մար-
մին,, . 'ի սրտմտութիւն բարկութեանն, զՀոգի իմ
ասէ 'ի բաց առնում յաշխարհէ, զի մարմին եղև,
ստրջացայ՝ զի արարի զմարդն ։ Եւ արդ բա՞ռ, ո՞ յայն-
ժամ ընդ միտ երբէք ածէր, ո՞ յաշխարհակուլ յայն

digitised by A.R.A.R.@

յորմանան ժտէր ասել, եթէ օր եկեսցէ զի ամենամանաքուր այն հոգին Աստուծոյ՝ այնչափ զարշեալն 'ի մարմնոյ աստի՝ դարձցի անդրէն ոչ 'ի սիրել միայն զնա, այլ և ինքնին զնոյն մարմին զգեցուցանել յանձին բանին Աստուծոյ, "Ասեն մարմին եղև ... ... : " Զի մնասցէ հոգի իմ 'ի մարդիկդ, վասն լինելոյ դոցա մարմին ... ... Ասէ. " Զու հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ ..., վասն լինելոյ բանին մարմին :

Զու արդ պարզեցէք երկինք զկնիքս, ցօղեցէք ամպք, անձրևեցէք մեզ հոսանս զողորմութեան սիրոյ՝ զցանկացեալն 'ի դարուց, " Ցօղեսցեն երկինք 'ի վերուստ, և ամպք հոսեսցեն զարդարութիւն. բղխեսցէ երկիր զողորմութիւն և նորացուսցէ զօրհնութիւն 'ի փրկութեան մերում ... :

Զի մեկնեցաւ Աստուած 'ի մարդոյ, քանզի եդիտ 'ի նմա հոգի ամենևին մարմնեղէն. արդ դառնայ դայ, քանզի գտանէ 'ի նմա մարմին ամենևին մաքուր, և զի այսպէս ասել՝ մարմին ամենևին հոգեղէն. " Նասցէ 'ի մարդիկդ, մնասցէ 'ի մարմնոդ հոգի իմ և մարմին իմ, վասն լինելոյ դոցա հոգի ... :

Հաւասիկ Արիամ կազմ և պատրաստ՝ առնուլ ժողովել զնա. " Հաւասիկ, ասէ, կամ աղախին տեառն. եղիցի ինձ ըստ բանի քում ... : Ասեալն Արիամու զդուռն փակեալ, և մտանել ընդ նա Աստուծոյ բանին, մի եղև համանդամայն : Զոյն ինչ ասաց, և բանն Աստուծոյ իջեալ անձնաւորապէս 'ի ծոց արգանդին, անդանօր միացաւ անքակտելի յօդիւ ընդ մարդկային բնութեանս. " Զու բանն մարմին եղև և բնակեցաւ 'ի մեզ : Զու զի ոչ վայրապար ինչ մայր երևեսցի Արիամ, որպէս հայհոյեաց Նեստոր, այլ Աշխարհապէս մայր Աստուծոյ, 'ի մաքուր մարմնոյ կուսին և յանարատ արենէն հանդերձեցաւ մարմին բանին և 'ի նմա ստեղծեալ հոգի. և ամենայնն ոչ իբրև յորդեգիրս առեալ 'ի բանէն, որպէս զգայոեաց Ժանան, այլ միացեալ ընդ նմա ոչ ըղձական միաւորութեամբ, այլ էական և գոյացական. աստուածային բնութիւն և մարդկային անշփոթ միաւորեալ 'ի միում անձին յաւիտենական բանին. որով և Աշխարհիս Աստուած և Աշխարհիս մարդ. և ինքն ոչ երկու, այլ մի. ուստի և Արիամ

digitised by A.R.A.R.@

Հնարիտ մայր Աստուծոյ։ Ասանզի «Ասանն մարմին եղև»։ Այս գործ անձառահրաշ՝ նեղգործեալ 'ի ձեռն ամենակալ զօրութեանն Հօր, և սեպհականեալ 'ի ձեռն ամբաւ բարութեան Հոգւոյն, և կատարեալ 'ի ձեռն անձնանուրական միաւորութեան Որդւոյն, եւ Մարիամ 'ի մանկէն իւրմէ լրումն վերջին աքանչելագործ ձայնիւն. «Լցեալ, եղիցի ինձ ըստ բանի քում»։ և անդէն բանն մարմին լինի։

Ասանզի իբրև խոնարհ՝ եւ նա հաստատութիւն խորհրդոյն Աստուծոյ, և իբրև կոյս՝ եւ նիւթ 'ի գործն, և իբրև մայր եւ լրումն մեծի գործոյն մարդեղութիւն, և նուաւ աշխարհի նորոգութեան. «Մինայնակ ինքն արտաքոյ բնութեան ընտրեցաւ 'ի նորոգել զբնութիւնն»։ Զի սակայն մեք ոչ յԱյուայն՝ զմահ ճաշակեցաք, և ոչ 'ի Մարիամ՝ զկեանս։ Զգամ եկաց գլուխ, որով կորեան ամենայն անդամքն. Քրիստոս է գլուխ՝ որով կենագործեցան ամենայն անդամքն։ Զի եթէ հարցումն առնեմք Զգամայ, զիարդ նա մեռոյց զմեզ, «Կինս, անդէն տայ պատասխանի, կինս, սա եւ ինձ»։ Օ պտուղ մահուն ձերոյ ես 'ի ձեռացն առի Աւայի։ Այնպէս եթէ խնդրեմք 'ի փրկչէն Յիսուսէ, զիարդ կենագործեցաք մեք, կրկնէ առ մեզ. Կինն եւ ինձ։ Օ պտուղ կենաց ձերոց առի ես յարգանդին Մարիամու. նա ինձ զայս զգեցոյց մարմին, զոր տանիմ վասն ձեր. նա ինձ յերակունս իմ զայս ելից աբիւն, զոր անպարտակիր հեղից վասն ձեր։ «Ահա սկիզբն, ասէր աստուածայինն Աւետարանն, նախասկիզբն մեղաց Աւա, նախասկիզբն բարեաց Մարիամ։ Ահա մեռուցանելով վնասեաց, Մարիամ կենագործելովն օգտեաց. Ահա եհար, և սա բժշկեաց»։ Ուստի և առ հասարակ ըստ աստուածազգեցիկ նախաձայնութեանն՝ երանեցաւ շնորհապարտ սրտիւ յամենայն ազգաց։

Այս քանզի նախասկիզբն եղև բարեաց ամենայն աշխարհի, գեղեցիկս 'ի դէմս իւր և իրաւապէս երգեսցէ Մարիամ։ «Տէր ստացաւ զիս 'ի սկիզբն ճանապարհաց իւրոց 'ի գործս իւր»։ Ահա սկիզբն բարեաց և նախասկիզբն արարածոց 'ի խորհրդեանն Աստուծոյ։ Զանզի և առաջին քան զամենայն լոկ արարածս ընտրեցաւ Մարիամ 'ի շնորհս. որպէս երանելին կոչեաց քեր-

digitised by A.R.A.R.@

թողն զնա, "Ընդատապարտ շառաւիղ,, ։ Եւ առաջին նախասահմանեցաւ Աբրահամ 'ի փառս. որպէս խորագոյնս ազգեաց Եւարեկեան հրեշտակն. "Ահոյ տեսչութեամբն Աստուծոյ, ասէ, նախագիծ 'ի ծովէ քարն պատուական. ապիտակ մարգարտին մաքուր կերպարան գոյացեալ ցուցաւ, 'ի յաշխարհիս ծովէ ընտրութեան,, ։ Եւ որպէս միջնորդ փրկութեան աշխարհի եկաց Աբրահամ, նոյնպէս և միջնորդ է շնորհաց ամենայն փրկելոցն։ Եւ ոչ միայն շնորհք ամենայն գան մեզ 'ի ձեռացն Աբրահամու, այլ և ինչ մի առաւել տեսանեմ ես 'ի բանիս. և թոյլ տուք ինձ ըղձանօք սրտիս յառաջանալ յայս խորհուրդ։

Վանզի, բաբէ, ոչ միայն ամենայն շնորհք, այլ և ոչ ինչ այլ գայ մեզ՝ բայց շնորհք 'ի ձեռացն Աբրահամու։ Վանզի տեառն Յիսուսի անմարթ է ողորմութեամբ միայն վարել առ մարդիկ. քանզի Աստուած է և արդարութիւնն անանջատելի է առ 'ի նմանէ։ Ամն որոյ և 'ի խոնարհ յայս երկիր շրջելով ընդ մարդկան, թէպէտ և հայրօրինակ գթածութեամբ բնաւորեցաւ, սակայն է զի և զդատաւորի կերպարան Ճոխաբար 'ի դէմն բերէր. մերթ խարազան շարժելով առ սեղանակապուտն, մերթ արժանահաս կշտամբանօքն դառնապէս դղրդելով զյանցաւորսն, մերթ աստուածաբար տապաստ յերկիր կործանելով զզօրականն։

Եւ արդ քանզի պարտ էր խստութեան արդարութեան անմեկնելի լինել 'ի Վրիստոսէ՝ իբրև յԱստուծոյ, վասն որոյ զնոյն խորհուրդ կամեցաւ նորոգել 'ի փրկութեան աշխարհի, զոր ինչ անդ ուրեմն կալաւ յարարչութեան աշխարհի. "Ամէն է, ասէ, բարի մարդոյդ միայն լինել, արասցուք նմա օգնական նման նման,,։

Ի պակաս լրման գործոց բնութեան՝ թուի թէ ինչ մի պակասի. չէ 'ի միջի Եւա. 'ի պակաս լրմամբ զգործ շնորհացն՝ թուի թէ պէտք էն Աբրահամու. "Ուրաց ցուք օգնական,,։ Ամ առաջինն՝ որ յօգնական տուաւ, կործանիչ գտաւ. ոչ յայլ ինչ եղև պիտանացու, բայց մահաւորի լինել մարդկան ազգի։

Բայց երկրորդա՝ յորժամ 'ի մահ դատապարտեալ իսկ էր առ հասարակ աշխարհ, ինքն իբրև "Ընդատապարտ շառաւիղ,, վերաբուսեալ կենաւորի մարդ-

digitised by A.R.A.R.@

կան, զօգնականին պաշտօն սքանչելապէս 'ի ներքս եբեր. որպէս վառեալն սիրով տիրամօրն Ճշգրիտ նշանակեաց, եթէ "Օ կենցաղոյս ընթացս ընդ լուսազարդ կենացն շաւիղ փոխեցեր ,, ։

Եւ զարդիս դարձեալ չէք այլ պարապումն Մարիամու, բայց միջնորդ կալ աշխարհի և բաշխել 'ի մարդիկ զշնորհս. յոր և ըղձակալթ ընդ եկեղեցւոյ հանապազ նուագեմք մաղթելով, եթէ "Յոյս մեր և ապաւէն մայր տեառն և կոյս սուրբ, որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. քեզ հաձեցան իմանալիքն ընդ հողեղէնքս և քեզ մերձեցաք 'ի փայտն կենաց ,, ։ Եւ որպէս յաստուածամերձից ոմն գովաբանէր. "Մարիամ, ասէ, օգնական է բարձրելոյն Աստուծոյ. քանզի գործ է նորա փրկել զազգ մարդկան ,, ։

Եւ այսպէս ապա քաղցր իմն զուգախառնութեան գիւտ հնարեցաւ մեզ։ Վասնզի Որդին մերթ զհօրն վարելով դէմն և մերթ զդաստաւորի, և Մարիամու տացէ 'ի ձեռս զմօր միայն ցուցանել մեզ զդէմն։ Որդին է զի արդար երևեսցի և է զի գթած. Մարիամ միշտ և հանապազ գթած և ողորմած։

Ո՛վ անպատում գթութեանն Մարիամու, որ և մինչև ցայսօր անդատին յօրէ աւետեացն զնոյն գութ մայրական գթայ 'ի վերայ մեր։ Վասնզի և առ մեզ ինքնին, սիրելիք, յայնժամ դէտակն կալեալ այնչափ տենչմամբ ըղերձէր զհրաշագործն զայն իւր, "Յղի՛ զի ինձ ըստ բանի քում ,, . փութա էջ ո՛վ տէր իմ և Աստուած. ահա արդանդ աղախնոյ քոյ, ահա աշխարհ ամենայն կորուսեալ, զոր խնդրես դու 'ի սմա, եղիցի եղիցի ինձ ըստ բանի քում։ Փութա էջ առ աղախին քո, որ պատրաստ կայ կամաց հրամանի քոյ. փութա, մի անագանեսցէ փրկութիւն մարդկան։

Ահա առաջին միջնորդ, եղբարք, առաջին բարեխօս սրտեռանդն փրկութեան մերոյ։ Վասնիօն ուրեմն և պարտք մեր անհրաժեշտ առ Մարիամ։ Նմա աւասիկ պարտի ամենայն աշխարհ. նմա աւասիկ երանիս կարդան ամենայն ազգինք. նմա խոնարհին կրկնեն ծունր ամենայն տիեզերք. զնա Ճանաչեն աջակից Մխիթարին՝ փրկանակ կենաց աշխարհի. զնա միայն կարդայ եկեղեցի մեծաձայնաբար. "Ընտիրից լուծիչ և քաւիչ մե-

digitised by A.R.A.R.@

զաց սուրբ կոյս ,, . զնա գովաբանեալ հոչակ հարկանեն՝ 'ի խոնարհութեան անզուգական, 'ի մեծվայելչութեան անհամեմատ, և յամենայն սոգ դրուատից՝ անձառելի։

Բանզի և որչափ ինչ ասիցեմք, միշտ վերջացեալ եմք՝ ով մայր սուրբ սքանչելի լուսոյն՝ միշտ վերջացեալք յարժանահաս գովութենէ մեծի փառաց քոց։ Նոկալ ոչ զբանս, որ անկշիռք են ամենևին 'ի մեծութեան փառաց սրբութեան քո, այլ զիրգ մեր սրտի ամենայորդոր փութով 'ի սիրել զքեզ միշտ և 'ի բարեբանել։

ՄԱՍՆ Բ.

Եւ քանզի կարգ բնութեան հիմն է և խարիսխ գերաբնական և աստուածային կարգի, ուստի և չիք երկբայել՝ եթէ աստուածամայրն Մարիամ՝ որ այնչափ ինչ ձեռն նպաստամատոյց եւ 'ի կարգն գերաբնական զոր ցայսվայր լուարուք, չիցէ մեծապէս զօրավիգն նաև 'ի բնականիս վարչութեան։ Օ այս ծածուկ խորհրդով խնամատնաբանեաց նարեկեան հրեշտակն՝ ասելով առ Տիրամայրն, "Մի՛ զարհուրիր կենաց երկոցունց՝ սքանչելապէս համարձակեցար ,,։ Օ զինչ ապա մեծ իցէ, տեսարք իմ, եթէ ժառեցայց ասել, եթէ և աշխարհ ամենայն առ պատուանդանի աստուածամօրն կայ յակաստանի։

Եւ կարի իսկ քաջ. քանզի և որ անդատին յառաջին ամաց արարչութեանն տաղտկացաւ արարչապետն ընդ արարածն, "Ստրջացայ, ասէ, զի արարի զմարդն ,, , և համաշխարհական կորուստ 'ի վերայ ածէր ջրհեղեղաւն, զի է զի յետ այնորիկ աւետարար հնչէր ձայն, եթէ "Մի՛ ևս այսուհետև ջրհեղեղաւ կորուսիցէ զաշխարհ ,,։

Յայտ է, զի հաշտարար բարկութեանն եգիտ 'ի մարդիկ, և զնոյն գրաւական աւետարար ձայնին կարգեր հաստատութեամբ առ մարդիկ։ Իսկ ո՞ հաշտարարն և ո՞ գրաւական անսուտ խոստմանն։ Այն զոր ստէպ չքնաղ բազմագունակ տեսանեմք նկարեալ յօդս.

digitised by A.R.A.R.@

«Օ աղերն իմ, ասէ, եղիցս յամենս. և եղիցի նշան ուխտին ընդ իս և ընդ երկիր, և յիշեցից զուխտն իմ.»։

Այլ զո՞ որ օրինակեսցէ զեղափայլդ գրաւական. և զո՞ որ յուշ ածցէ ամենատես աչաց աստուածութեանն։ Զեզ ինքնին թողում քննել և գտանել. սակայն և հորդեմ ձանապարհ։ Վասն միտ դիր, աղաչեմ. քանի՞ ըղձմամբ, քանի՞ն դարձուածով բանից խօսի Աստուած զգրաւականէն զիւրմէ զայնմանէ. յուշ առնէ երկին և երեքկին, և բաղմօրինակ զնա յերևանի դնէ։ Ամենի՞ն 'ի սպառ զմայլեալ 'ի տեսութեան նորա. թուի՞ ինչ մի 'ի խորս նորա մտնել 'ի նմա, և ինչ մի առաւել քան զերևոյթն՝ զեղագունակ ծիածանդ յանդիման բերցէ տեսութեանն Աստուծոյ։

Լասիկ քեզ, ասէր Աստուած առ երկրորդն մեր նախահայր, աւասիկ քեզ խոստումն անսուտ. եթէ աշխարհակործանդ այդ պատուհաս, որպէս առաջին է կաց, նոյնպէս և վերջին կացցէ։ Իսկ թէ գրաւական խնդրես, աւասիկ քեզ աղեղնդ իմ զոր տեսանես. զա՛ զեղնդ զայդ գեղեցիկ հաշտարար, զոր նկարեալ եղի յամենս, զնոյն արդ թողում քեզ 'ի գրաւ խոստմանս. «Երդիցի նշան ուխտին ընդ իս և ընդ երկիր.»։

Այլ ունկն դիր միւսանգամ բանին. կցեաց զՀետ, եթէ զէպք ասէ տացեն մթագնելոյ երկնից և խառնելոյ օդոցդ և սպառնալեաց ամպոցդ, հանեմ յայնժամ զաղեղն յերևան աշխարհի. «Յորժամ պատեցից ամպովք զերկինս, երևեսցի աղեղն իմ յամենս.». և 'ի տեսանելն իմ, յուշ ինձ գայցէ սերկեան դաշն իմ ընդ քեզ. «Եւ յիշեցից, ասէ, զուխտն իմ որ ընդ ձեզ.»։ Կրկնեաց այնպէս զանսուտ խոստումն և իրեքկնեաց. «Եւ յիշեցից, ասէ, զուխտն յաւիտենական՝ զոր եղի ընդ իս և ընդ ամենայն մարմին.»։

Օ՞ ինչ պէտք էին այնչափ կրկնելոյն զայն ինչ, զոր և յառաջին նուազէն խնայաւ՝ Լոյ։ Խաբէ, ոչ՝ 'ի հնարս ինչ էր խոստմանն, այլ՝ 'ի սէր և յանձուկ տարփման առ գրաւականն։ Վասնիօն փարելի գտաւ այն աղեղն գեղեցիկ, այն առ հաւատչեայն սիրոյն Աստուծոյ, զոր աստուածիմաստ վարդապետք թարգմանեցին յաստուածամայրն Մարիամ։ «Մարիամ, ասէն, աղեղն է ուխտին Աստուծոյ՝ և հաշտութեանն որ ընդ մեզ.»։

digitised by A.R.A.R.@

զոր և հիացմամբ սուրբն այն խորագոյնս նշանակեաց յասելն առ Տիրանայրն այսպէս. "Լու երրորդութեան անտես թաքնութեան խորհրդակից սիրոյ կոչեցար ,,։

Այս է առհաւատչեայն անխաբ խորհրդոյ աստուածութեանն. նա գրաւականն այն քաղցրութեան կենաց աշխարհի առկայացեալ 'ի բարձունս երկնից. զոր արդեօք և մերս ակնարկէր Հոգերգուն 'ի նուագելն, եթէ "Որ 'ի բարձրութիւնս երկնից բարձր բանիւք բարեբանիս սրբուհի. զարեգակն արկեալ զքև, և գրաւական կենաց մարդկան Ամարիամ աստուածամայր ,,։ Այս էր որ 'ի վաղնջուց դարուցն մարդկան աւետեցաւ ազգի. որպէս 'ի հրաշալի տապանն ապրեցուցիչ մարդկութեանս օրինակեալ, նոյնպէս յետ այնորիկ և 'ի հրաշագեղ աղեղն տպաւորեալ պահէ, զյառաջատութիւն բնութեանս մերոյ. գրաւական կենաց մարդկան, և միջնորդ կենաց երկոցունց՝ հանդերձելոյն և առօրեայս, որպէս մերն կոչեաց Հոգերգուն։

Ռանիցս անգամ դէպք տան, սիրելիք, զի աստուածայինն արդարութիւն յանցաւորութիւնս բազումս տեսեալ 'ի յերկրի, 'ի սրտմտութիւն բարկութեան՝ պատէ զերկինս կարկտաբեր ամպովք, և զանհնարինսն սպառնան բնակելոցն յերկրի հողմունք դիւաշունչք, բարկութիւնք հրացանք, մրրիկք համակործանք, սրածութիւնք աշխարհակուլք, ինքնին հաստատութիւն երկրաւորացս՝ երկիր, սասանեալ. բաբէ, բաբէ, կրկին ուրեմն աստակէ Աստուած զաշխարհս. մի երկնչիր. գայ անդէն յերեւան Ամարիամ, յառաջոյ նորա փախուցեալ անհետանան արկածք, հանդարտեն երկինք, անդորրանայ բնութիւնս. "Ի պատել իմում զերկինս, երեւեսցի աղեղն իմ, և յիշեցից զուխտն իմ ընդ մարդկան,,։

Ռանիցս անգամ 'ի հարուած գաւազանի բարկութեանն Աստուծոյ պետք և բռնակալք իբրև փոթորիկք ընթացան ընդ աշխարհ, գանեցան ժողովուրդք, խրատեցան աղէնք, յոգիս ապաստան եղև աշխարհ մինչև 'ի ընուլ ջափու պատուհասին. և ասասիկ աւետաբերն նշան տայ՝ եթէ 'ի կատարած է. անդէն հրաշագեղն յայտնի ծիածան. յակն զայն բարկութիւնն արկանէ Աստուծոյ, և հանդարտէ. "Տեսից զաղեղն, և յիշեցից զուխտն յաւիտենական ,,։

digitised by A.R.A.R.@

Ի՛նչպէս անգամ ասուածասաստ յերկինս պատրաստին պատուհասք գալ Թովմափել՝ի գլուխս մեղաւորաց. և անդուստ վաղ ընդ փոյթ իրազգած Ամարիամ՝ միջնորդ հաշտարար՝ի մէջ մնանէ, կամ կարձել՝ի սպառ զհարուածն, կամ նուազել զժամանակն, կամ չափ տալ պատուհասին։ Եւ յորժամ զԱմարիամ տեսանեն երկինք երթալ մօտիլ յաթոռն Աստուծոյ, անդէն և զկատարած պատուհասին գիտեն նոքա։ Ի՛նչպէս նա է անպատիւ նշանն խաղաղութեան. «Աստ եղիցի ձեզ նշան ուխտին»։ Օ՜ի բարի և զի գեղեցիկ իցեն մեզ ժամանակքս, եղբարք. յորս ինքնին երկինք առ՝ի մէջ արհամարհեալք, անդէն սանձեալ հանդարտին, չարդուեն ընդ մեզ պատերազմ՝ առանց զդրօշն պարզելոյ զիսաղաղութեան։

Ո՞նորհք են այս Ամարիամու, արդասիք են այս ամենայն Տիրամօրն. քանզի աղերն է ուխտին Աստուծոյ՝ հաշտարար, գրաւական կենաց մարդկան, միջնորդ կենաց երկոցունց սքանչելապէս։ Ի՛նչպէս Ամարիամ՝ ոչ իբրև աղախին գործէ յերկինս, այլ իբրև դշխոյ. ոչ այնչափ խնդրէ, որչափ հրամայէ։

Եւ զինչ զարմանք այսուհետև, եթէ՝ի համաշխարհս քրիստոնէութեան, Թէպէտ և՝ի տարաբնակ յոյժ ժողովուրդս և յաղին՝ այնչափ ինն աներկեան վստահութիւն լի հաւատով առ բարեխօսութիւնն Ամարիամու գտցես դու առհասարակ։

Ոչ՞ն արդեօք քաղաքք կամ աւանք կամ գիւղք, յորս ոչ գտցես կամ տաճարս կամ մատուռս կանգնեալ՝ի փառս Ամարիամու։

Գտցե՞ս երբեք և ազգ մի՝ի քրիստոնէութեանս, որ ոչն դաւանեսցի զինքն պանծանօք առաւելեալ քան զայլս յազգաց՝՝ի սրտեռանդն պաշտօնատարութեան առ Տիրամայրն։ Իսկ եթէ և գովաբանս խնդրեսցես Ամարիամու, գտցես յամենայն ազգս և մատենիւք չափ ձառս հրաշաբանս և յաձախապատում. զորս և չկարասցես ամփոփել՝ բայց յարտայայտութիւնս խմաստիցն՝ զոր նուագեմք առ Տիրամայրն, եթէ «Ի՛նքիցն լուծիչ և քաւիչ մեղաց. և դուռն երկնից և ձանապարհ արքայութեան»։

Իսկ և ջերմեռանդն աղօթաւորս առ Տիրամայրն՝

digitised by A.R.A.R.@

գտցես որոց ոչ գոյ թիւ. այլ թուի թէ չգտցես մաղ-
թանս առաւել սրտեռանդն և առաւել Հաճողակի մեծ-
վայելչութեանն Ա՛ստուծոյ, քան զոր մաղթեմքս ընդ
գերահրաշ սիրողին Ա՛ստուծոյ, եթէ "Ի՛ստուծոյ
պատիւ քո լինիցի, և ցուցցի փրկութիւն իմ քեզ,, ։ Ի-
րանիս առցէն, և բիւր երանիս մեղաւորք, որ միան-
գամ փրկութեան հոգւոյն փափաքեալք, և զնացեալ
ապաւինեսցին ոչ յայլ՝ բայց 'ի հովանին Ա՛ստուծոյ
ջերմ աղօթիւք և հաւատով, քանզի և անշուշտ է
յայնժամ փրկութիւնն։

Հապա մեք սիրելիք, պինդ կալցուք զոր ունիմք,
զՔրիստոսանդն պաշտօն և զսէր առ Տիրամայրն. զի որ
պէս և 'ի պաշտօնէիցն կամ 'ի սրբոց ոմն ասաց. "Սրն-
դրեա միշտ զԱ՛ստուծոյ, և գտցես միշտ զԱ՛ստուծոյ. առ
Ա՛ստուծոյ կարդա յամենայնի, և երջանկասցիս յամի,, ։

Իսկ եթէ զնախամեծարն պաշտօն առ Ա՛ստուծոյ
խնդրեսցես գիտել, ահաւասիկ զոր առաւել սիրէ նա
և խնդրէ 'ի մէնջ, նմանողութիւն աքանչելի վարուց
նորա. քանզի և սիրելիք զնմանն սիրեն։ Ոչայք
դուք ապաքէն, եղբարք, ցայս վայր զՀրաշալի առաքինու-
թիւնս նորա. զիմաստ խոնարհ անզուգական, զիմաստ
մաքուր անօրինակ եկաց Ա՛ստուծոյ. քանիցս նորա հզօր
բարեխօսութիւն, քանիցս նորա բարեգործութեանն
առ մեզ զեղմունք, քանի՞ նորա անվանելի պաշտպանու-
թիւն, և զայլն ևս. զոր բովանդակեսցէ քեզ սիրողն
նորա և բարեբանն, հրեշտակն Գաբրիէլեան "Հաճեստ
,, հեզութեամբ, խոնարհ ամբծութեամբ. վարուք
,, մաքրեալ, բարութեամբ լցեալ, հեզութեամբ ար-
,, ձանացեալ, առաքինութեամբ կատարեալ, քաղցրու-
,, թեամբ աղբիւրացեալ,, ։

Որպէս զի և նմանօրինակ նմա՝ ըստ կարի տկարու-
թեան մերոյ՝ նորուն ընդարձայն օժանդակութեամբ
քաղաքավարեալ աստէն առաքինութեամբ, ամենակալ-
ցուք այնուհետև հաւատով ընդ հովանեաւ նորա մնաս-
նել յայն դուռն երանաւէտ, զոր նա ինքնին մեզ է-
բաց. և նորին միջնորդութեամբ հասանել կենդանի, որ
'ի նմանէն առթեցաւ. որպէս ասացն եթէ "Որ զինն
գտանէ, գտանէ զկեանս,, ։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՎԻՃԱԿ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԵՒ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ.

" Եւ մեք զինչ գործեսցուք . . . . Մի ինչ առեալ քան զնրամայեալն ձեզ առնիցէք " :

Վիճակք կենաց որ յաշխարհի բազմադիմակք՝ են անդստին սահմանեալք յարարչէն ։ Զի որպէս Ճշգրտիւ իմաստնաբանեաց աստուածիմաստն Աւգոստինոս , բանն ինքնին , ասէ , խելամուտ առնէ զմեզ , եթէ կամեցեալ Աստուծոյ ընկերութիւն 'ի դուրս բերել զբանաւոր արարածոց , պարտ էր և դիմակ դիմակ վիճակօք զարդարել զնա , որ ըստ պաշտամանցն , որ ըստ աստիճանացն , որ ըստ պարտուցն . զի այնպէս փոխադարձ առևտրօքն միանգամայն զզուգութիւն մնասցն և զտարաղ բոլորին ողջ 'ի դէմս ընծայեցուսցեն և պահպանեսցեն ։

Այսելչապէս զնոյն աստուածային առաքեալն լուսաբանեալ օրինակէ 'ի պատշաճութիւն տան , յորում ձոխ և առատ գտանիցես դու 'ի նմա կահս , անօթս , և կարասիս . կէսք յոսկւոյ ճուլեալք , կէսք յարծաթոյ գործեալք , կէսք յունկէտ փայտից կտրեալք , և կէսք 'ի կակուղ կաւոյն ըմեալք . կէսք յառօրեայ 'ի պէտս նուաստացեալք , և կէսք 'ի սպաս գեղեցիկ փառաւոր պատրաստեալք . և ամենայնն 'ի հանդերձանս սպասաւոր

digitised by A.R.A.R.@

բութեան մեծագործ տանն միանգամայն է կարեւոր. "Ի տան մեծի ասէ, ոչ միայն են անօթք ոսկեղէնք, արծաթեղէնք, այլ և փայտեղէնք և խեցեղէնք. են որ 'ի պատուի են, և են որ յանարգութեան",

Եւ մեկնագոյնս զնոյն խնաստ նոյն առաքեալ յաղագս ժողովոյն հաւատացելոց նմանաբերեալ առակ 'ի մարմին. յորում բազումք և միմեանց անհամանք իցեն անդամքն, ոչ առ հասարակ 'ի նոյն 'ի մի պէտս սահմանեալք. այլ մէն մի 'ի նոցանէն զսեպհականն իւր գործ զանձամբ առեալ իցէ 'ի սպասարկութիւն մարմնոյն։ Սակայն և առ հասարակ ամենայնքն զմի ունիցին գլուխ 'ի վարչութեանն, և 'ի միոյ հոգւոյ անտի առցեն զշարժումն և ընդ միում մարմնոյ աբանչելապէս յօդեալք և պատշաճեալք իցեն. "Սրպէս 'ի միում մարմնի, ասէ, բազում անդամ ունիմք. և ամենայն անդամքն ոչ զնոյն գործ ունին. այսպէս և բազումքս մի մարմին եմք 'ի Քրիստոս",....։

Եւ ապա 'ի ՃՀզբիտ օրինակէ ասասի աստուածայնոյն Պաւղոսի 'ի նեբքս բերեն հարքն սուրբք, եթէ վիճակ կենաց՝ որ զինչ և իցէ, յորում կոչեցեալ է իւրաքան չիւր ոք 'ի մէնք, այն է միշտ վիճակն նախասահմանութեան և փրկութեան մերոյ. յորում և այր այր մարթի պահել զօրէնս Աստուծոյ և աշակերտ լինել առաքելոցն. լինել սուրբ, լինել և մի ոք 'ի գերադունիցն սրբոց։ Ասասի և հաստատեալ կնքեն, եթէ ամենայն վիճակք և կենցաղք մարդկան յաստուածուստ անտի սահմանեալ և կարգեալ են, և Աստուած ինքնին յայն վիճակ կոչէ զմեզ։ Ով, քանի զուարթարար իցէ ՃՀշմարտութիւնս, մանաւանդ որոց միանգամ զբաղեալք և ընկղմեալք 'ի վիճակ աշխարհի կենցաղական զբաղանաց՝ զանգիտեն և տագնապին մի արդեօք անմանն եղցեն նոքա 'ի սրբութենէ աւետարանին։

Սակայն քաջ միտ դիք աղաչեմ. մարթ է, այո մարթ է, և 'ի վիճակին յայնմիկ լինել սուրբ, նաև հեշտեաւ մարթ է լինել սուրբ։ Այսն որոյ և իմ 'ի սոյն մնախորհ բազում անգամ եղեալ՝ հաստատեցայ 'ի սերկեան քարոզիս մեկն և պարզ լուսաբանել ձեզ, սիրելիք, ՃՀշմարտութիւնն. միանգամայն և ՃՀախողակ կարծիսն ուղղել ՃՀրիստոնէից զառածելոյն, որք համարին

digitised by A.R.A.R.@

և ասեն, եթէ սրբութիւն աւետարանին 'ի քնէ անպատկանաւոր է վիճակացն աշխարհայնոց, և թէ հոգք սոցա և զբաղանք՝ հակառակ ամբառնան իմաստից սրբութեան աւետարանին։ Ի՞՝ողորմութեանս այսմիկ ջաղխիչ և ուղղիչ կարգեսցուք առաջարկութիւնս կրկին։ Ի՞՝դաջին՝ եթէ 'ի կարգս և 'ի վիճակս և 'ի հանգամանս վիճակացն աշխարհի՝ որ զինչ և իցեն, մարթ է լինել սուրբ։ Երկրորդ անգամ՝ եթէ մարթ է նաև հեշտաւ լինել սուրբ։ Յուցցուք զայս, որպէս զի յայս քաջախորհ և խելամուտ եղեալ այր այր 'ի ձէնջ, քաջալերեալ յանձն ըստ պարտուց վիճակի կենացն՝ զուն գործեսցի, արդեամբք կատարել զանձին սրբութիւն։

ՄԱՍ Ա.

«Անդի և զսրբութիւն զայն որ միանգամայն ամենայն հաւատացելոցն յայլ և յայլ վիճակս աշխարհի 'ի ճահ պատահեսցէ՝ չէք այլ օրինակ սահմանել կարգել, քան զոր աստուածիմաստն յայտ արար Պաւղոս զրելով առ Տիտոս կրետացւոց եպիսկոպոս, անդատին յաստուածակողմանէն առեալ զհրահանգն իւր։ Իբրու եթէ ինքնին Ի՞ստուած երևելի մարմնով եկեալ առ մարդիկ, ուսոյց նոցա զսրբութեանն օրինակ։ «Անդի երևեցաւ, ասէ, շնորհն Ի՞ստուծոյ փրկիչ ամենայն մարդկան, որ խրատէ զմեզ.,, զինչ։ ոչ այլ ինչ քան թէ 'ի բաց կալ՝ 'ի չարութենէ, մի անձնագրաւ սիրել զաշխարհ, ժուժկալութիւն ունել յանձին, արդարութիւն ընդ ընկերին, բարեպաշտութիւն ընդ Ի՞ստուծոյ։ «Որ խրատէ, ասէ, զմեզ, զի ուրացուք զամբարշտութիւն և զաշխարհական ցանկութիւնս, զգաստութեամբ և արդարութեամբ և աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի.,,։

Ի՞հաւասիկ ձեզ սրբութիւն մարդոյ, որ զայսօրինակ քաղաքավարեսցի յաշխարհի։ Թէպէտ և ամուսնացեալ, թէպէտ և վաճառական, թէպէտ և արուեստագործ, թէպէտ և որ զինչ և իցէ յաշխարհիս կարգաց, նա է մարդ սուրբ որ ճշդութիւ տիրացեալ իցէ անձին,

digitised by A.R.A.R.@

և զերասան կամայն և զրղձիցն 'ի ձեռին ունիցի, որ հրահանգաց աւետարանին պատկառ և հպատակ կայցէ. ոչ զերեալ 'ի պատուոյ, ողջախոհ 'ի բերկրանս, չափաւոր 'ի զբօսանս, և յամենայնի զինքք քրիստոնեական համեստութեանն ողջ յանձին բարձեալ բերիցէ. Ի՞նչ է ասելն. "Օ գաստութեամբ կեցցուք յաշխարհի.,, ՝Լ,այ է մարդ սուրբ՝ որ զիրաւունս այլոց ոչ շորթիցէ, իրաւունք որ 'ի պարտուց հնազանդելոյ հրամանաց առաջնորդաց, իրաւունք որ 'ի պարտուց եղբայրական սիրոյն օգնելոյ 'ի կարօտութեան ընկերին, իրաւունք որ 'ի պարտուց բնութեանն մարդասիրապէս քաղաքավարելոյ ընդ բնութենակիցն։ Ի՞նչ է ասելն. "Լ,րդարութեամբ կեցցուք յաշխարհի.,,։

՝Լ,այ է մարդ սուրբ, որ թէպէտ և կուռս բազմագունակ շուրջ զիւրև կանգնեալս տեսանիցէ զբազմագրեալ խեան ասեմ՝ զցանկութիւնսն՝ որ յաշխարհի, լինութեանցն, զանձարձակ ազատութեանն, զթուլահաւատութեանն, զարծաթպաշտութեանն, զչար օրինակացն, նա երես չառնէ, ոչ պաշտէ զկուռսն զայն. այլ անարատութեամբ զգայութեանցն՝ Ի՞ստուծոյ միայն պաշտամանն պատկառ կայ, և յաճախ մերձաւորութեամբ յաստուածային խորհուրդսն պատուէ զնա, և կենաց հոգւոյն սպաս հարկանէ։ Ի՞նչ է ասելն. "Լ,աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի.,,։

Ի՞նչ պատկեր անվթար սրբութեան քրիստոնէի. և չիք և ոչ մի ինչ յայսցանէ՝ որ դիմանարտ և անպատկանաւոր կայցէ հանգամանաց վիճակաց աշխարհի, որ պիսի ինչ և իցեն, եթէ մեծամեծք և փառաւորք, եթէ անաւագք և յոքնատաժանք և բազմանդեղք։

Օ՞ որ օրինակ աստուածայինն Ասկեբերան յայտ յանդիմանութեամբ ցուցեալ անդ ուրեմն յառ Ի՞նտիոքացիս 'ի Ճառսն զՃշմարտութիւն առաջարկութեանս, ոչ փաստանուրբս 'ի նեղբս բերեր, ոչ համոզակեր ցուցակութիւս Ճարտարեր, քան թէ ծանօթ պատմութեամբք և հետևակ օրինակօքն ազդոյ զբանն գործեր։ Ա՞յսր դիք, ասէր, խելամուտ լերուք, զիարդ յամենայն ազգ վիճակաց և պաշտամանց օրինակք փայլեցան սրբութեան. և այն կանուխ քան զգալուստ փրկչին, և քան զքարոզութիւն աւետարանին. յորժամ նուազեալ էին

ՀՈՐՀ, և գեղեցիկ դէմք առաքինութեանն չև էր ար-
տաքայլեալ յաշխարհի։ Այլ մի շուրջ յածեցէք,
ասէր, զաչս առ Հեբրայեցւոց ժողովուրդն. զկէս տե-
սանէք յաւագութիւնս ամբարձեալս մեծամեծս, կէսք
ընչիւք յօրացեալք, կէսք 'ի զինուորութիւն տաժա-
նեալք, կէսք 'ի վարչութիւն քաղաքի թարթափեալք.
և առ հասարակ զոգցես յամենական 'ի կարգն պա-
տաղեալք և զբաղեալք։ Զիարդ նորա հաւատարիմ
առ Աստուած գտան առ հասարակ յամենայն 'ի վիճակս
կենաց, և նախանձաւորք պաշտամանն Աստուծոյ և
ժրախնդիրք յաւիտենից փրկութեան իւրեանց։ Դա-
ւիթ փայլեաց 'ի մեծի բարձին. ոչ սոսկական ոք էր.
այր էր թագաւոր փառաւոր, ոչ 'ի լուսափայլութենէ
ինչ թագին շրջեալ նորա ամէն, ոչ 'ի բարձրութենէ
գահոյին ամբարտաւանեաց սիրան. այլ ցած 'ի մեծու-
թեանն, սակաւապէտ 'ի լիութեան, 'ի վերայ քրձին
զգենոյր զծիրանին, նստեր 'ի մոխրին, կանխեր յաղօթս,
և զՀոգին Հպատակէր ապաշխարութեան։

Մովսէս փայլեաց 'ի բազմազբաղ վարչութեան հա-
մագումար ազգին. ո առաւել քան զնա իշխան, պետ,
և օրինադիր ազգի. մեծափառն աղբայի Աստուած Փա-
րաւոնի, և ազգաց հզօրաց յաղթանակող փառաւոր։
Լե սակայն սուրբ եկաց 'ի վիճակին յայնմիկ՝ հաւա-
տո

'ի վերայ ամենայն տան նորա, այնչափ իմն անարատութեամբ և արդարութեամբ պաշտեաց զգործն, ոչ ինչ անհոգացեալ և 'ի հոգւոյն, նա պատկառ և կալով միանգամայն աստուածայնոցն զրոց քննութեան, զի և մեծին ասա արժանացաւ հնորհի՝ քրիստոնէական կարգին, և առաքեալ աշխարհաքարոզ եկաց Յթովպացւոց ազգին։

Յս արդ եթէ նոքա և նոցուն նմանիքն այնչափ պայծառացան իւրաքանչիւր 'ի վիճակին կանուխ քան զլուսափայլութիւն աւետարանին, քանի՞ բիւրաւորս կարծիցես դու նահատակեալս և սուրբս յամենայն 'ի վիճակս կենաց, յաշակերտաց աւետարանին, յամենայն ազգէ, յամենայն ժողովրդոց, յամենայն հասակէ։ Զինչ պէտք իցեն՝ ըստ յովհաննիսեան յայտնութեան բանալ մեզ այժմ 'ի վերուստ պարունակաց և կամարաց երկնից, զի յերեւան մեզ գայցեն բիւրաւորք ընտրելոց յամենայն ցեղիցն։ Հասակիկ ձեզ բազմահոյլ պատկերք նկարագիրք սրբոցն առաքինութեան, նահատակութեան, զոր առ ձեզ ունիք և զօրհանապազ յանդիմանն յակն արկանէք։ Հասակիկ և մատեանք վաւերականք վկայաբանութեան և ճգնութեան նոցա, զորս պահեմք, և զորոց զպատմութիւնն լսեք և ընթեռնուք, և զարմանայք՝ քանիսն պատերազմեցան նոքա յերկրի, քանի՞ նշանս յաղթութեան կանգնեցին, և քանի՞ պայծառացան 'ի յերկինս, յայլ և այլ վիճակս կենաց իւրեանց։

Այլ զինչ պէտք իցեն հնջեցելոց սրբոց. 'ի կենդանիսն որ առ մեզ՝ վայր մի յառեւոցուք զաչս։ Քանիս ոմանս գիտեմք առ հասարակ և ճանաչեմք նմանեալս մեզ 'ի վիճակի կենաց, և սակայն անմանս 'ի քաղաքավարութեան կենաց։ Դրամբիք են և կանամբիք, սակայն սուրբք են. վաճառականք են, սակայն սուրբք. արուեստագործք, կրպակաւորք են, և սուրբք են. տեարք, ծառայք, իշխանաւորք, առաջնորդք, աղնուականք, սոսկականք, ճոխք, աղքատք. և ամենեքին աշակերտեալք Յիսուսի Քրիստոսի և հետեւողք հաւատարիմք աւետարանին։ Յս արդ զոսա, որպէս ազգաղաբար 'ի նեղքս եբեր 'ի կարգին Քերանն ոսկի, զոսա՝ որ այժմ առ մեզ բարեաց օրինակք են և 'ի նախանձա-

digitised by A.R.A.R.@

ւորութիւն դրդիչք և քաջալերութեան առիթք, զսո-
սա յաւուր միում՝ յանդիման արասցէ մեզ Քրիստոս 'ի
մեր դատապարտութիւն. և զկցկցեալն 'ի մէնջ զանկա-
րութիւն կամ՝ զանհնարին դժուարութիւն սրբութեան
'յաշխարհական 'ի կարգս՝ խայտառակեալ նշանակես-
ցէ, և 'ի ձշգրտութենէ վարուց սոցա զբաղբաղեալս մեր
'ի դերև հանցէ։

Սոքօք մեզ յանդիման ցուցցէ, եթէ ոչ ձոխու-
թիւնք ուրեմն և արծաթ և ոսկի, այլ ջարաջար կիր-
առութիւն նոցին պատճառք կացին շռայլութեան,
շուայտութեան, գրգասիրութեան, մարմնասպաշտու-
թեան։ Սոքօք մեզ յանդիման ցուցցէ Քրիստոս, է-
թէ մարթ էր ուրեմն լինել մեծ առանց ամբարտաւա-
նութեան, իշխանաւոր՝ առանց բռնաւորութեան, աղ-
նուական՝ առանց գոռոզութեան, ազնուագոյն՝ այլ
ոչ մեղկ, բարեկիրթ՝ այլ ոչ անձնացոյց, մեծատուն՝
և սիրտ աղքատ անզրաւ 'ի գոյից։ Սոքօք մեզ յան-
դիման ցուցցէ Քրիստոս, եթէ 'ի մէջ բազմահոգ կե-
նաց աշխարհիս մարթ էր ուրեմն պահել միանգամայն
և զհոգի աստուածպաշտութեան, և հոգևորացն պատ-
կառ կալ և 'ի խորհուրդս սրբութեան յաձախել։ և
զկենցաղական զբաղմունսն նիւթ յարդարել առաքի-
նութեան և յաւիտենական փրկութեան։

Այս համբուն, սոքօք մեզ յանդիման ցուցցէ Քրիս-
տոս, եթէ անժուժկալութիւն կամ՝ անիրաւութիւն
կամ՝ թերահաւատութիւն, որ զհոգի աշխարհիս ըն-
ծայեցուցանէ, չէին ուրեմն տիրապէս ծնունդք և կա-
րիք զանազանութեանց վիճակաց աշխարհի. և թէ ընդ հա-
մարողը վիճակաց մարդկան մարթ էր ուրեմն զուգակից
ունել զհակառակս նոցուն զառաքինութիւնս, որ զհո-
գի աւետարանին 'ի ներքս բերեն յաշխարհի. "Քան-
զի երևեցաւ, ասէ, շնորհն Աստուծոյ փրկիչ, ոչ ոմանց
'ի մարդկանէ, այլ ամենայն մարդկան. որ խրատէ ըզ-
մեզ՝ զի ուրացուք զամբարշտութիւն և զաշխարհական
ցանկութիւնս. զգաստութեամբ և արդարութեամբ և
աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի.,։

Այլ յայսր ամենայնի վերայ՝ գիտեմ՝ զի ասէք դուք
ինձ, եթէ թէպէտ և սուրբ ևս մարթ իցէ լինել յաշ-
խարհի վիճակս, սակայն և դուն երբէք պատահեսցի

digitised by A.R.A.R.@

այդ, դժուարին և առաւել դժուարին յոյժ մեզ՝ որ թարթափիմքս յաշխարհի, քան որք մենացեալք հրաժարեալք իցեն յաշխարհէ։ Քանի դժուարին, ազէ ասա, իցէ առն մեծատան՝ 'ի չափու կալ 'ի լիութեան իւրում. քանի և առն դատաւորի՝ միշտ անկաշառ ամբծութիւն. և որք յառաւտուրս են՝ քանի հեշտեաւ հատանիցին յագահութիւն. և վաճառականք և արուեստագործք և կրպակաւորք, և այր իշխանաւոր և ատենակալ, և ամուսնացեալք և տանուտեարք այնչափ իմն զբաղեալ են 'ի պէտս աշխարհականս, զի և ժամ առնուլ պարապել 'ի սրբութիւն զիսաւրդ հնար ի-ցէ նոցա։ Քանի կարդայք դուք, և բիւր երանի մենացելոցն յաշխարհէ, գիտեմ քաջ, որոց ոչ որդեակք գան 'ի խնամակալութիւն, ոչ տուն 'ի վարչութիւն, ոչ հասարակաց ինչ գործք կամ առանձինն 'ի զբաղել. որոց խորհուրդք մնաց և իղձք սրտի չեն բաժանեալ ընդ աշխարհ և ընդ Աստուած։

Քաջ է. այլ քաւ յինէն եթէ երբէք լայն և արձակ գործեցից ես ձեզ զձանապարհն փրկութեան, և ոչ առաւել յապահովի համարեցայց ես զվիճակ կենաց հրաժարելոցն յաշխարհէ, յորում կամեցաւ կոչել զնոսա Աստուած։ Այլ զինչ անտի 'ի նեղքս բերել արժան իցէ քրիստոնէական տրամախոհութիւն. զինչ այլ, բայց եթէ որ զգործն զայն զմեծ՝ զհրաժարական կեանսն զանձամբ առին, 'ի հնորհացն Աստուծոյ զանձուին ընտրեցին ճանապարհ 'ի փրկութիւն. և ըստ տերունական խնամատիցն նախ նստան համարել զբաւական ծախսն 'ի շինութիւն աշտարակի. կամ իբրև զօրավար խնամատուն նախ հանդէս արարին բաւական զօրականին 'ի մղել զմարտ պատերազմի։ Այլ ես զայն ասեմ, եթէ յորժամ դուք խոհական ընտրութեամբ վիճակ մի կենաց զանձամբ առնուցուք յաշխարհի, յոր սահմանեալ կոչեցէք զձեզ նախախնամութիւնն աստուածային, մարթ է ձեզ լինել սուրբ։

Քանզի, քաջ միտ դիք, նոքին իսկ զբաղանք և գործք և պիտառնութիւնք վիճակին ձերոյ՝ ըստ Աստուծոյ տնօրէնութեանն և խնամոց լինիցին ձեզ նիւթ և առիթք սրբութեան անձանց ձերոց։ Այլ դու մի զցուրտն զայն, որպէս ասաց Իսկեբերան, մի զցուրտն զայն

digitised by A.R.A.R.@

քան ասասցես ինձ, եթէ աշխարհիկ եմ և կին ունիմ և զաւակաց հոգ ածեմ. այլ զայն միշտ յուշի կապեսցես, եթէ «Իւրաքանչիւր ոք, որպէս պատուիրեաց աստուածային առաքեալն, իւրաքանչիւր ոք յոր կոչումն կոչեցաւ, 'ի նմին կացցէ»։ այս է զոր ասեմն, եթէ 'ի նմին կացցէ, ուրեմն և 'ի նմին սրբասցի, յոր և ՀԸՀ զբրտիւ արդ կամիմ հրահանգել զձեզ և յաստուածայնոցն հաւանեցուցանել տարից։

Ահաւասիկ ձեզ այր Ճգնաստուն, խոշորաղղեաց 'ի ստէպ ուղտու, գօտի ածեալ մաշկեղէն, մարախաբուտ, և վայրենի բուծեալ մեղու, մաշեալ մարմնով, խուուացեալ 'ի դէմն, յերևան գայ յանապատէն Հրէաստանի, կարապետն Յովհաննէս՝ քարոզն և սքանչելիքն ապաշխարութեան։ Իսկ 'ի սրբութենէ համբաւոյն և 'ի խստամբեր կենացն և յաստուածաշունչ քարոզութենէն զրդեալ՝ խուռն յամենայն քաղաքաց և յաւանաց առ նա մերձենային մեծամեծք և սոսկանք. զահի հարեալք 'ի խրթին վարուցն և 'ի համար ձակաձայն բարբառոյն և 'ի սաստկութենէ սաստիցն և յահագին սպառնալեացն սուր տապարին և անշէջ հրոյն։ Դիպեալք դողութեամբ վասն անձանց փրկութեան և ապաշխարութեան, զինչ գործեսցուք, հարցանէին, զինչ գործեսցուք մեք 'ի փրկութիւն՝ ապրել 'ի տապարահատ սատակմանէն։ Զինչ գործեսցուք, հարցանէին զօրականք, զօրավարք. ահաւասիկ մեր կանայք և մեր սուր. թողցուք մեք ուրեմն զկին մեր կարգն, և դու ցուցցես մեզ զնորն և զապահովն՝ յորում կեցցուք։

Իսկ և մեք, անդուստ հարցանէին և մաքսաւորք և կապեալաւորք, զինչ գործեսցուք, հնար ինչ ելցէ մեզ գործել զմեր փրկութիւն, մեք անհնարին զբաղեալքս 'ի տարպիզս, և նեղեալքս 'ի պահանջս մաքսից և հասից և բաշխից։

Իսկ և մեք, ասէին և զոյաւորք հարեալք յոգիս 'ի սաստիկ քարոզութենէ կարապետին, զինչ գործեսցուք. գնասցուք թերևս՝ մերկասցուք 'ի գոյից թողեալ էքեալ զտունս, զկալուածս, զդարակս, և զամենայն կեանս մեր, և եկեսցուք ընդ քեզ յանապատս անշէնս խստամբեր վարել կեանս։ Ցոյց մեզ ոմն աստուածայինդ քարոզ և վարդապետ մեր, ցոյց մեզ զնորոգատուր

digitised by A.R.A.R.@

կարգ և զվիճակ կենաց, և հրահանգ անելոկեան զարբ բութեան և զիրկութեան մերոյ ասա՝ զինչ գործեսցուք։

Ինդ էր ապա տեսանել զյանկարծակի և զդեղեցիկ փոփոխումն զմեծի կարապետին. խստամբերն, խստակրօն նախանձաւորն, անաչառն, անակնածու քարոզն, անդէն հեղ և ամոք երևեցաւ վարժապետ։ Ինասցէք, ասէր, անսասցէք վայր մի. չէն ինչ ձեզ պէտք թողուլ լքանել զկեանդ, փոխել զվիճակդ, փոխել զպաշտամունդ, առ 'ի փոխել զվարդ։ Այն ինքն վիճակ կենաց, յոր վայելչապէս կոչեցարուք, այն է ձեզ վիճակ սրբութեան։

Դուք զինուորեալքդ, պատկառ կացէք ձերոց զինուցն. յուշ լիցի ձեզ երդումնդ 'ի հաւատս, մի լինիք դասալիք, դիք զձեր կեանս քաջութեամբ ըստ պարտուցդ 'ի վերայ եղբարց։ Այլ զգոյշ լերուք 'ի հարստահարութենէ, 'ի զրկանաց և 'ի գողութեանց. սանձեցէք զլեզուս 'ի թշնամանաց, 'ի յիշոցաց. այդոքիկ բռնակալութիւնք են զինուցդ, չէն պարտք գեղեցիկ զինուորութեան. "Ի՞նչ զոք, ասէ, խուիցէք, և մի զոք զբռպարտիցէք. շատ լիցին ձեզ թոշակքն ձեր.,։

Իսկ և դուք կապեալքդ և մաքսաւորք և հարկապահանջք, որ զկայսերն տայք հատուցանել կայսեր, միտ դիք պաշտամանդ՝ որ 'ի սրբութիւն և 'ի փրկութիւն բաւական է ձեզ. միայն եթէ և միտ դիջիք անշաղակս զձեր ձեռն պահել. մի նեղել զաղքատն, և մի դարձեալ ընչեղութեամբ մեծատանն զեղծանել. այլ զկարգեալն յօրինաց պահանջեցէք խնամատութեամբ, ոչ յաւելուածով և ոչ նուազութեամբ. "Ի՞նչ աւելի, ասէ, քան զհրամայեալն ձեզ առնիցէք.,։

Իսկ ապա և դուք գոյաւորք և ձոխք, բնակեցէք խաղաղութեամբ 'ի վայելուչ ապարանս ձեր. վայելեցէք գոհութեամբ 'ի բարիսդ, այլ մի մոռասջիք զկարօտեալն. պահեցէք զպատշաճ պատիւդ, այլ մի ամբարտաւանիք. փոյթ կալջիք 'ի ժուժկալութիւն. չափու և խոհեմութեամբ վարեցէք զարծաթն. և որ ձեզն յաւելանայ, բաշխեցէք 'ի չքաւորս. "Որ ունի, ասէ, երկուս հանդերձս, տացէ զմին այնմ՝ որ ոչն գուցէ. և որ ունի կերակուր, նոյնպէս արասցէ.,։

digitised by A.R.A.R.@

Զեղ ահաւասիկ հաւատացեալք, քարոզութիւն՝ որչափ խնդարհ, այնչափ և բարձր և վսեմական. վարդապետութիւն՝ որչափ քաղցր և հեշտին, այնչափ և աներկեւան՝ վեհագոյն վարժապետի։ Այն ինքն գործք և զբաղումն վիճակի իւրաքանչիւր՝ յոր կոչեաց Աստուած, նիւթք են ասէ և սատարք փրկութեան մերոյ։ Ահաբէ, քանիցն իցեն մնոլորութիւնք մտաց և խաբէութիւնք, զոր 'ի բաց թօթափել պարտ է ըստ կանոնի վարդապետութեան սրբոյ Պարապետիս։

Մոլորութիւն է մտաց և խաբէութիւն, եթէ ոք այր տանուտէր և հայր և մայր զդաստիարակութիւն զաւակին, և զՀոգ մտից և էլից տանն և զկարգ պաշտամանցն, և զկառավարութիւն ծառայիցն, և զամենայն ինաման գերդաստանին, իբրև լոկ մարդկային ինչ և քաղաքական համարեսցի, և ոչ մանաւանդ քրիստոնէական և աստուածային։

Մոլորութիւն է և խաբէութիւն, եթէ ոք այր առաջնորդ և իշխանաւոր և դատաւոր՝ զվաստակել իւր 'ի բազմանդամ կարիս ապաւինելոցն 'ի նոսա, զքննութիւն դատաստանին, զխորհրդակցութիւն զիմաստնոցն, զհաշտեցուցանել կողմանցն, զանաչառութիւն արդարութեանն, զնշաւակութիւն զրկողացն, զձեռնտուութիւն հարստահարելոցն, զայս ամենայն ոչ համարեսցի նա իբրև նահատակութիւնս պայծառս մեծի սրբութեան։

Մոլորութիւն է և խաբէութիւն, եթէ ոք այր աբուեստագործ և վաճառական՝ զբազմապատիկ հոգս զգնելոց և զվաճառելոց և 'ի փոխ տալոց, զվանդ ուղևորութեանն, զչարչարանսն, զանքնութիւնսն յօգնութիւն ընտանեացն, և չափով և արդարութեամբ յոտին կացուցանելոց միշտ զգոյաւորութիւն գերդաստանին, զայս ամենայն իբրև ումպէտ համարեսցի նա, կամ թէ իբրև խոչընդոտն յաւիտենից փրկութեան իւրոյ։

Մոլորութիւն է և խաբէութիւն, եթէ ոք այր կենցաղաստէր, մարդասէր և զուարթամիտ՝ զբարեբարութեան վարսն և զգնացսն, մանաւանդ եթէ և զսփոփութիւնս զպարկեշտս և վայելուչս և քրիստոնէականս 'ի չափու, իբրև խափանարարս համարեսցի նա քրիստոնէական սրբութեան։ Այս ամենայն և որ սոցուն

digitised by A.R.A.R.@

նմանք, մոլորութիւն են և խաբէութիւն, յորոց լքեալ պարտ է ըստ Ձշգրիտ հրահանգաց սրբոյ Ի՞կրտչին։

Այս, որպէս աստուածայինն ասէր Ի՞սկեբերան առ ժողովուրդն, Օ տունս ձեր, ասէ, զբարեկարգեալս յերկիւղն Ա՞ստուծոյ, համարեսջիք ձեզ իբրև տաճարս Ա՞ստուծոյ. և զխանութս ձեր և զգործատունս, յորս վաստակէք արդարութեամբ և երկիւղածութեամբ, կարգեցէք ձեզ իբրև սեղանս ինն և խուրանս սրբութեան 'ի պաշտօն Ա՞ստուծոյ. և զլրումն պարտուց ձեր իւրաքանչիւր՝ իբրև աղօթս և խունկս նուիրական, որպէս աստուծիմաստն ասաց Պաւղոս. "Ի հոտ անուշից 'ի հաճոյս Ա՞ստուծոյ"։

Ա՞նգի, աղէ ասացէք ինձ դուք վայր մի, եթէ երբէք ձանաչէք զՀոգի Շնորհաց աւետարանին, զինչ այլ իցէ սրբութիւն առն քրիստոնէի. բայց հաճոյք և կամքն Ա՞ստուծոյ և լրումն նորուն կամաց. "Կամք Ա՞ստուծոյ, ինքեաց առաքեալն, կամք Ա՞ստուծոյ սրբութիւն ձեր"։ Կամի Ա՞ստուած զի սուրբք եղիցուք. ապա ուրեմն սուրբ լինիցիմք, եթէ զկամն Ա՞ստուծոյ առնիցեմք։ Ա՞յդ եթէ կամի Ա՞ստուած՝ կամ տանուտէր կարգել գքեզ, կամ ծառայ, կամ քաղաքական, կամ ուսումնական, կամ վաճառական՝ և որ այլ ևս, նոյն իսկ ապա տունն և ծառայական կարգն, և քաղաքական վիճակն և գրաւորական վարժքն, և այլն ևս հանդերձ սարքն եղիցին ձեզ 'ի սրբութիւն, զի "Կամք Ա՞ստուծոյ՝ սրբութիւն ձեր"։

Այս դուք միտ դիք աղաչեմ, զիարդ Ա՞ստուած զաշխարհական կարգին զգոլութիւնն սքանչելապէս հիւսէ 'ի լրմանէ անտի առանին պարտուցն վիճակի այնորիկ։ Կին մի ժրագլուխ 'ի ձեռն առնու, և զնկարագիրն նորա տայ յօրինակ ամենեցուն և 'ի զարմացումն. ոչ մերոցանս ինչ վսեմականս 'ի նեղքս բերէ զնորա, որ այնչափ համբաւատենչս զՅուդիթեանսն գործեցին և զԻ՞երոբեամս և զԱ՞սթերեանսն. այլ կին մի տնակալուչ ածէ յօրինակ, որ ընդ ամուսնոյն կապեալ իցէ, և մտադիր զաւակացն իցէ, որ զգործովք տանն գայցէ, և սպասաւորութիւնս ծառայից բաշխեսցէ. որ զողորմածութիւնն առ աղքատսն չմոռանայցէ, և որ ինքնին իւրոյին ձեռօքն անկանիցէ, և զմատունս իւր անձանձիր

digitised by A.R.A.R.@

իկոյ տացէ և յաղէկասն, և վաճառեսցէ և զհանդերձ առ իւր կալցի, և յայդուէ ցերեկոյ աքնեսցի, և զամենայն զերդասանն յոտին կացուսցէ։ Զ.յսպիսի կին, ասէ, 'ի սրբութիւն մեծ հասեալ է, և քան զհասարակ կարգ տիար ազգին 'ի վերոյ անցեալ է։

Օ.նոյն դու ինձ խնամասիրեսցես 'ի գրոց և յաղագս արանց ազգին, որ պարտուց վիճակին պատկառ կայցէ. եթէ տանուտէր գօտէպինդ, եթէ ատենակալ անաչառատես, եթէ ամուսին համամիտ, եթէ բարեկամ անկեղծաւոր, եթէ վաճառական արդար, եթէ ծառայ հաւատարիմ. զի առ հասարակ առցէն վարձս յԱ.ստուծոյ ըստ արժանեացն, լսել զուրախալին եթէ "Զ.նիւ, ծառայ բարի և հաւատարիմ, մուտ յուրախութիւն տեառն քո"։

Զ.յսպէս ամենայն գործք աստուածատուր վիճակի արդիւնարարք են և վարձք ձեր անշուշտ, սիրելիք։ Զ.յլ սակայն և տրամախոհութիւն մի կարևոր յոյժ և փրկաւէտ պինդ կալարուք 'ի ձեզ. զի ամենայն գործք ձեր շարժեսցին և կատարեսցին ոչ վայրապար, այլ հոգւով կրօնի և հոգւով աստուածպաշտութեան. իբրու կամակատարք առաւել կամացն Ա.ստուծոյ լինել ձեզ յայն գործսն, որ յայն վիճակ կոչեաց զձեզ, և կամի զլրումն պարտուց վիճակին. այս է զոր ասեմքս հոգի կրօնի և աստուածպաշտութեան, և այս բաւական է ձեզ 'ի սրբութիւն։ Զ.պա թէ ոչ, անբաժ 'ի հոգւոյ աստի առ տուածպաշտութեան, նաև վսեմական գործք և աստուածայինք՝ ըստ որում ուխտիւք հրաժեշտ յամենայն աշխարհայնոց և նեղանձնութիւն, և ողորմութեան գործք՝ հիւանդաց ծառայել և բանտարկելոց այցել և զմեռեալս թաղել և կարօտելոց ջամբել, անպիտանք եղիցին։ Զ.աև որ զերազունի վիճակեալք մասին, նոյն ինքն անընդմիջելի պաշտօն աստուածային և ահաւոր քահանայագործութիւն և աստուածաշունչ քարոզութիւն մեր, և որ այլ ևս, եթէ վայրապար գործեսցին իբրու ըստ պատեհի պաշտամանն և բերման ժամանակի գործք, և սոլորութիւնք հանապազորդեան՝ զիրկ 'ի հոգւոյ աստի, անօգուտք իցեն և անպտուղք 'ի սրբութիւն գործելեացն։ Զ.ուդ՝ եթէ վսեմականքն այսպէս, քանիսն ապա առաւել ձեր քաղաքական և առանին

digitised by A.R.A.R.@

գործ և զբաղումն։ Այս եթէ դուշնաքեայքդ այդոքիկ և ունկէտքդ ձեր՝ կենդանութիւն առցեն յաստուա-ծային հոգւոյ անտի կրօնի և բարեպաշտութեան, բա-բէ, քանի մեծամեծք եղիցին և առաքինականք և սուրբք, և մոլախոտ կարծեցեալք դարձցին 'ի բոյսս պիտեանս, և կատարեսցի յայնժամ ասացեալն, "Փո-խանակ ցրդոյն նոճ բուսցի, և փոխանակ դժնկի մուրտ ելցէ ..,

ՄԱՍՆ Բ.

Շատ արդեօք լցեն, սիրելիք, ասացեալքս 'ի մխի-թարութիւն ձեզ և 'ի զուարթութիւն, եթէ յորժամ կամելն մերձ իցէ, մարթիք և դուք սրբութեան հա-սանել մասին սրբոցն. այլ թէ և մարթիցիք ևս հեշ-տեաւ, որպէս կանխեցի ասացի, թուի ինձ եթէ ան-ընդունելի լիցի ձեզ առաջարկութիւնս։ Վանզի և անշուշտ թէպէտ և ոչ այնչափ հեշտին ձեզ լցէ, եղ-բարք իմ գործն, ձեզ որ յաշխարհայինս զբաղեալքդ էք հանապազօր, որչափ որոց յաշխարհէ հրաժարեալքն լցեն՝, 'ի վերայ այսր՝ քաջալերեցարուք զի ոչ պակա-սեսցին ձեզ երբէք օժանդակք զօրաւորք յոյժ, օգնա-կանութիւնք անդուլք առ յԱստուծոյ, զոր "Օգնու-թիւնս կոչման և օգնութիւնս վիճակի,, կոչեն աս-տուածաբանք։ Այս է մատն Աստուծոյ, և այս է ձեռն Աստուծոյ ծածուկ, որպէս ասաց զիրն, եթէ "Ծա-ծուկ ձեռամբ պատերազմի տեր,, ընդ թշնամիսն, նի-զակակից իւրոցն լինելով։ Այս ձեռն ծածուկ անտես առ 'ի ձէնջ և անզգալի և անշշունջ՝ միշտ շարժէ զձեզ, որպէս 'ի զգալիս՝ ձարտար մենքենագործին հնարի-մաց անուշն գաղտնի զօրութիւնն, որ այժ 'ի շարժումն տայցէ բոլոր մեծամարմին մենքենային՝ աներևոյթ 'ի տեսողացն։ Այս ձեռն ծածուկ է հնարքն Աստուծոյ, զոր կոչեմք "Հնարք կոչման և հնարք վիճակի,, զոր ոչն երբէք զլսացի Աստուած վիճակին, յոր ինքն կոչեաց և եդ զևրաքանչիւր ոք 'ի ձէնջ։ Այս հնարք է, որ զմարմնաւորն հոգևոր գործէ, և զքաղաքականն

digitised by A.R.A.R.@

և զմարդկայինն աստուածային, և զերկրաւորն՝ սուրբ և երկնաւոր յարդարէ և փրկութեան արժանաւոր։ Այս շնորհ է, զոր բազմադունակ և յոգնազան կոչեաց Պօղոս առաքելոյն. "Այսու բազմադէմ, ասէ, շնորհացն Աստուծոյ.,։ Անզի թէպէտ և ինքն շնորհն մի է, այլ ըստ պէսպէս վիճակաց մարդկան և կոչմանցն, և ինքն դիմակ դիմակ փոփոխի, և զօրութիւնս ազգէ բազմ-օրինակս։

Կամիս և յերևութից ինչ բնութեան ճշդիւ ի-մաստասիրել զբանն. Ճառագայթ լուսոյ յարեգակնէ արձակեալ՝ թէպէտ և մի է և պարզ, սակայն և հրա-շալի ինն բեկեալ և փոխեալ և խառնեալ և զուգա-կցեալ՝ գոյնս դիմակ դիմակ 'ի դէմն ածէ, որ կարմիր, որ դեղին, որ կանաչ, և որ այլ ևս. և գունակ գունակ զառարկայսն յարդարէ և ցուցանէ։ Սապէս, որպէս հարքն սուրբք ասացին, և բազմադէմ շնորհքն Աստուծոյ խառնին ընդ բազմադիմակ վիճակաց մարդ-կան, և կենագործեն և զօրացուցանեն ըստ պիտոյից ի-բաքանչիւր. զի այր այր 'ի հաւատացելոցն 'ի վիճակին իւրում՝ դարձցի և եղիցի իբրև կատարեալ քրիստո-նեայ։

Ի կրօնաւորս՝ են շնորհք անզբաղ ներանձնութեան, յեկեղեցականս շնորհք սրբութեան և առաքնորդու-թեան, յամուսնացեալս շնորհք ընկերական սիրոյն, 'ի դատաւորս շնորհք անաչառատես անշահասիրու-թեան, 'ի տանուտէրս շնորհք հսկողութեան, 'ի ծառայս շնորհք հաւատարմութեան, յաղքատս շնորհք համբերութեան, 'ի մեծատունս շնորհք գթութեան և ողորմութեան, 'ի մեծամեծս և յաւագս շնորհք չափաւորութեան, 'ի սոսկականս շնորհք խոնարհու-թեան. և համբուն առ հասարակ յամենեսին շնորհք, զոր կոչէմք շնորհք կոչման և վիճակի։ Այս են բազ-մադէմ շնորհքն, զոր կոչեաց երանելի առաքեալն։ Այլ եթէ այսչափ են շնորհք, այսչափ և օժանդակք զօրա-ւորք, որ դժուարութիւն այնու հետև կացցէ, սիրելիք, 'ի սրբութիւն անձանց, յորժամ կամելն մերձ իցէ. "Աստուծով իմով, ասէ, անցիս ընդ պարիսպս.,. "Ես, ասէ, այլ շնորհքն Աստուծոյ՝ որ ընդ իս.,. "Յա-մենայնի կարող եմ, ասէ, այնու՝ որ զօրացոյցն զիս.,։

digitised by A.R.A.R.@

Յան միայն դիջիք հաւատարմութեամբ գործակիցք 'ի դէպ հանդիպել առաստապարգև շնորհացն Աստուծոյ. "Արանդի և իւրաքանչիւր մեք, որպէս ՀՇՊրտեաց առաստուածիմաստն Պաւղոս, իւրաքանչիւր մեք ունիմք ըստ շնորհս ընդ շնորհացն, որ տուեալ են մեզ ազգս ազգս.,,։

Որ զինչ և իցեն գործք և պաշտամունք վիճակաց իւրաքանչիւր, եթէ հրամայելոյ, եթէ հնազանդութեան, եթէ վարչութեան, եթէ օգնականութեան, եթէ ուսուցանելոյ, և որ այլ ևս, ամենեքումբք միանգամայն ծառայեցէք Աստուծոյ զրդեալք 'ի ջերմեռանդն հոգւոյ քրիստոնէութեան, որպէս խրախուսեաց առաքեալն. "Հոգւով եռացէք, տեառն ծառայեցէք.,,։

Ի վերջ՝ յաներկիւանութիւն նաւարկելոցդ յաշխարհի 'ի վեր բերցուք և զկրկին ժայռն զծածկեալն 'ի ծովածուփ կենցաղ վիճակի կենաց ձերոց, զի մի թերևս նաւակոծեսջիք։ Աստ՝ ժայռն՝ ծայրայեղ և տարապայման զբաղումն հոգւոյ, երկրորդն՝ գերութիւն և զակատումն սրտի։ Այս կրկին ժայռք լի վտանգաւք, յորս հաստատէ աշխարհ զհանգամանս վիճակաց իւրոց։ Այլ արդ հրահանգ գեղեցիկ կրկնակի 'ի նեբքս բերեալ սիրելեացդ, ասեմ. եթէ յաշխարհի ոչ կապելով ընդ աշխարհի ազատ լինիք 'ի գերութենէ սրբոյ, և յաշխարհի երբեք երբեք առանձնակեաց իբրու մենացեալք յաշխարհէ՝ ազատանայք 'ի ծայրայեղ ըստ բաղմանէ հոգւոյն։ Երբեմնակք կրկին նախատիպք հրաշալիք յաստուածայնոցն տարից՝ լուսաւորագոյնս 'ի դէմն ածցեն ձեզ զկարևորութիւն հրահանգիս։ Առաջին ոչ 'ի դուշնաբէից ոք է նախատիպն. այլ միտ դիք, տիկին և տիկնաց տիկին, մեծատաւ, անհամեմատ գեղոփն, լծակից և գահակից մեծի արքայից արքայի, Յսթեր անուն նորա. յարքունիս ածեալ և անդէն քաղաքավարեալ։ Արքունիք՝ յամենայն շուք փառաց ականաւոր, ամենայն զրգութեամբ լի, ամենայն շռայլութեամբ պատարուն։ Ի վերայ այսր՝ հարկաւորեալ այս տիկին 'ի բնակութիւն այնպիսի արքունեաց, այլ ոչ կապեալ ընդ արքունեացն. Դու գիտես, ասէ, ով տէր, ինքնին զԱստուած 'ի վկայութիւն կոչէր անբրծութեան սրտին, դու գիտես, ասէ, տէր զանհրաժեշտ զիմ հարկն, զի բռնադատիմ պայծառս զգենուլ,

digitised by A.R.A.R.@

թագ կրել արքունի, 'ի գահ բազմել պանծալի, յոսկի համակել, 'ի գոհարս ճաճանչել, զրգել յանուշունս իւրոց և բուրմանց խժդժիցս, և անաստուած արքայի փարելի ընծայել, և զշուք վիճակին ողջ բերել, յոր կամեցար ամբառնալ զաղախին քո։ Դու գիտես զբրնադատութիւն իմ. քանզի գաղանիք սրտից և ծածուկք հոգւոց մարդկան բաց են առաջի քո. դու գիտես զաղատութիւն սրտի իմոյ, զանսիրելութիւն իմ՝ որով զամենայն շուք և զպչրանս և զգրգանս զարքայական վիճակիս ոչ միայն յընչաց քերեմ, այլ և զզուիմ և գարշիմ. և երբեք ես չյօրանամ 'ի թագն՝ անձնայցոյց իբրև թագուհի երևել, նա յայն միայն հեշտացեալ է իմ լինել և երևել քո աղախին։

Խաբէ անարատութեան սրտին 'ի մէջ այնչափ գարշութեանցն, բաբէ խնամութեան ղեկավարին 'ի մէջ այնչափ ժայռիցն։ Դրնակ է մեզ ճշգրիտ, սիրելիք, զիարդ անձնասարհ լինել և մեզ 'ի գերութենէ սրտի, որ է առաջինն 'ի վտանգաց 'ի վիճակս կենաց աշխարհի։ Զայնպէս իմն 'ի գործ վարել մեզ յաշխարհի, եթէ փառք իցէ, եթէ պատիւ, եթէ բազմահարուստութիւն, եթէ գրգանք, եթէ զբօսանք, և որ այլ ևս, զի իբրև հարկեալք վարեսցուք նոքօք, և մի իբրև հեռամուտ ընտրութեամբ 'ի ձեռս բերեալք, զի և մարթասցուք և մեք ասել. Դու գիտես տէր, զբռնադատութիւն իմ, զի թէ այնպէս շքով և պայծառ կենցաղիմ և զգենում և բնակեմ, զայն ըստ պատեհութեան միայն և վայելչութեան վիճակիս վարեմ, յոր զիսն վիճակեցուցեր. սակայն դու գիտես տէր, զի ոչ են կամք իմ և սիրտ իմ 'ի դոսա, ոչ իգձ և ոչ վարկ. նա յընչաց քերեմ և հաճարիմ իբրև մնոտիս և վտանգաբերս. և փառաւորիմ և հեշտանամ լինել քեզ և երևել քո ճշմարիտ ծառայ։ Օ այս ասա, և այսօրինակ պատրաստութեամբ սրտի, թէպէտ և յաշխարհի՝ այլ աղատասցիս յաշխարհէ և 'ի հրապուրից նորա ըստ օրինակի սրբուհւոյն։ Զայս առաջին հրահանգ ընդդէմ առաջին ժայռին։

Սակ ասա և երկրորդն, թէպէտ և յաշխարհի կեաս, սակայն երբեք երբեք մենացեալ ընդ անձին միայնոյ կեցցես, և աղատասցիս 'ի ծայրայեղ զբաղմանէ հո-

digitised by A.R.A.R.@

գլոյն, որ է երկրորդ ժայռն և վտանգ յաշխարհական վիճակի։ Որինակ հրաշալի կալցուք մեզ, եղբարք, և առ այս զգեղեցիկ քաղաքավարութիւն կենաց զմիւսոյ մեծի սրբութեանն Յուդթայ, զբազմահարուստ տիկնոջն։ Այս 'ի ծաղկի հասակին այրիացեալ, և բազում ստացուածոց տէր թողեալ յամուսնոյն, և ինքն կառավար այնուհետև ամենայն գերդաստանին և ծառայիցն և կալուածոցն, և անհնարին զբաղեալ, 'ի վերայ այսր՝ իբրու անզբաղ յաշխարհայնոց՝ այնպէս մենացեալ լիւրում առանձնութեան հանապազօր աղօթիւ պատկառ կայր առ Աստուած։ Այնպէս ինն զմիտն ամիսիսեալ 'ի կենցաղականացս, զի և ամենայն զբաղումն այնուհետև չէր նմա երբէք խափանարար առաքինի քաղաքավարութեան կենացն. մինչ զի և ոչ յետ այնորիկ յորժամ զէպքն ետուն ելանել նմա 'ի տանէն, և ամենազարդ հանդերձանօքն և չքնաղագեղ հասակաւն երթալ մեկ 'ի մէջ խժդժիցն, ոչ խառնամբոխ խուժանն, ոչ անհնարին լրբութիւն բանակին Հոլոփեռնեայ, ոչ մեծաշուք փառքն, ոչ բազմահանդերձ գլրգանքն, և ոչ բազմախոտրտիկ սեղանքն, երբէք խոչընդոտն եղեն մենակեցութեանն և առանձին աղօթակացութեանն և առ Աստուած ամիսիման մնացն։

Օ այս օրինակ առանձնութիւն և ամիսիսութիւն մնաց, սիրելիք, մայր է սրբութեան. քանզի 'ի տարապայման զբազմանէ հոգւոյն՝ թէպէտ և զբազում իւիք զբաղեալ իցէ, ազատ առնէ զմարդ յաշխարհի, և սուրբ և անդրբժելի պահէ զհոգին յաշխարհայնոց։

Առանձնութիւն և ամիսիսութիւն է մնաց, 'ի մեզ յինքեանս կալ ամիսի՝ փակ զդրունս պահելով զգայարանացն և զգուշանալով մտից և ելից նոցա ընդդէմ մտախաբ երևութից, ընդդէմ հրապուրից աշխարհի։

Առանձնութիւն և ամիսիսութիւն է մնաց, գէթ միանգամ յաւուրն յանձն առնել զմեզ Աստուծոյ՝ յիշելով զմահն, զմտաւ ածելով զպատուիրանն, սրբելով մաքրելով ըստ ժամանակին զփոշոտեալ խիղճ մտացն։

Առանձնութիւն և ամիսիսութիւն է մնաց, երբէք երբէք մերձենալ, նա յաճախել ըստ կարի 'ի խորհուրդս սրբութեան, լուանալ յաւազանին ապաշխարութեան,

digitised by A.R.A.R.@

և կենարար մարմնոյ տեառն Յիսուսի հաղորդել սրբութեամբ։

Ուսանելութիւն և ամիսոփումն է մտաց՝ ջան դնել, եթէ մարթ իցէ, յամին մի անգամ աւուրս լինչ բոլոր նուիրել Աստուծոյ, հաստահիմն պնդել 'ի ճշմարտութիւնս քրիստոնէական դաւանութեանս, ճանաչել զպարտս վիճակի իւրաքանչիւր, 'ի բաց կալ յանցելոցն թերութեանց, և յառաջիկայսն պատրաստել անձին զճանապարհն փրկութեան։

Հաւասիկ այսչափ լինչ 'ի գործ վարեն՝ որք միանգամ սուրբք են թէպէտ և յաշխարհի են. և այսչափ լինչ պարտին գործել՝ որք միանգամ խնդրեսցեն ազատիր մնալ 'ի հրապուրից աշխարհի, և աստէն սրբացեալք յիւրաքանչիւր վիճակս աշխարհի, և անդ սրբոցն վիճակակից լինել 'ի յաւիտեան։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐՈՒ ԼԻՆ

ՍԷՐ ՃՈԽՈՒԹԵԱՆ

"Մի գանձէք ձեզ գանձս յերկրի" :

Օ՜խարդ դժուարալուր կենցաղասէր մարդկանն իսկ պատգամն . սակայն և զդառնութիւն գանձուն կուտելոյ լուեալ 'ի Ճաշակողաց անտի՝ որպէս պատահէ բազում անգամ, քանի՛ հեշտալուր պարտ էր լինել տերունեան պատգամին . այլ աւա՜ղ, զի խօթամիտք են ընչասէրք :

Վանգի քարոզել այսօր առ մարդիկ եթէ մի՛ ցանկայք մեծանալ, մի՛ գանձէք գանձս , մի՛ ինչ աւելի քան զկարևորն ունել հանդերձ և կերակուր՝ և այնու շատանալ ըստ առաքելոյն , այս քարոզութիւն այսօր՝ որպէս և միշտն՝ նոյն համարեալ է առ մարդիկ , որպէս եթէ ասէր ոք առ նոսա , եթէ մի՛ ցանկանայցէք այլ ևս կեալ 'ի կենցաղումս , մի՛ կենակից լինել ընդ բնութենակից մարդկանդ , մի՛ հոգալ ինչ զպիտոյից կենաց , կամ թէ բնաւ իսկ ելանել յաշխարհէ :

Վարձեալ այս քարոզութիւն համարեալ է առ մարդիկ , իբրու եթէ ոք խնդրեսցէ խափանել զամենայն կենցաղաշահ Ճարտարութիւն մարդկան , և հետախաղաղ ծածկել զհանճար նոցա 'ի կենցաղօգուտ գիւտս և յարուեստս , և զհնարագէտ քաղաքացիս իբրու անպիտանս յարդարել քաղաքին և ընկերութեան : Ամենայն ոք Ճգնի յաշխարհի բախտ մի գեղեցիկ գտանել

digitised by A.R.A.R.@

հաստել անձին իւրում։ Այս ՀԻՆԳՆ է որ համբերա-
տարս և ժիրս և արթունս և երկասէրս գործէ զքա-
ղաքացիս յիւրաքանչիւր կարգի. այս է որ զմիտս սը-
րէ, և որ զաղուեստս և զգիտութիւնս հնարէ և յե-
բևան ածէ. որ զքաղաքս և զգաւառս 'ի վեր և 'ի վայր
ցանգ 'ի շարժման պահէ. յորս ընդ այլ և այլ ՀԱՆԱ-
պարհս առ հասարակ ամենեքին 'ի մի և 'ի նոյն կէտ
վախճանի յառեալ ունին զանկն. այս է զի յաւուր
միում բարեկեցիկս և ՀՈԽՍ և անքիրսն վարեսցեն
կեանս։ Իսկ առանց ոսկւոյ և արծաթոյ՝ զիարդ յաջո-
ղեսցին այդոքիկ։

Այլ 'Ի՛ զիստոս ոչ եթէ զարծաթն և զոսկին ար-
գել, այլ զմթերս նոցա, զի մի զսիրտն գրաւեսցեն
նոքա. "Ի՛ զանձէք, ասէ, մի կուտէք, մի մթերէք
ձեզ գանձս յերկրի. զի ուր գանձն ձեր է, անդ և
սիրտք ձեր եղիցին..։ Եթէ և արծաթ ունիջիք 'ի
պէտս, սակայն արհամարհեցէք զգանձս նորա։

Եւ արդ դուք անշուշտ, ունկնդիրք, գտանիցէք յի
մաստասէրսն խստամբերս յարհամարհել և յանգոս-
նել զմեծութիւնս գանձուց. այլ անգոսնելդ այդ բա-
զում անգամ կիրք են վրէժխնդրութեան և գողոզու-
թեանց նոցա։ Ազնարթին երևելի լինել յաշխարհի
մեծութեամբք և հարստութեամբ, դառնան լինին
այնուհետև ներհակակիր ոխերիմք ընչաւէտութեան.
և արհամարհութեամբ գանձուն՝ զոր յուսահատք են
'ի գանձել՝ խնդրեն ականաւոր լինել յաշխարհի։ Այլ
աղէ տուր դոցա միանգամ 'ի ձեռս միջնորդս իմն և սա-
տարս 'ի հարստութիւն՝ լինել մեծատուն, և տեսցես
դու զի անդէն 'ի բաց յապուրակի զաղաբողնն արկեալ
զՎոյիկեանցն խստամբերից և զմնխաղն, առաջինք
լինիցին նոքա գանձամբք արկանել զսպայծառ պատմու-
ՃԱՆՆ զՀեշտակեաց զԱպիկուրեայցն։

Ազ այս աւետարանականն իմաստասիրութիւն ար-
համարհելոց զգանձս աշխարհի։ Այլ սակայն միտ դիք
սիրելիք, սէր հարստութեան եթէ կայցէ մնասցէ 'ի
սահմանի պարկեշտութեան և 'ի պայմանի սրբոց աւե-
տարանին, չէ ինչ չար։ Զանց ինչ յանցաւորութեան
մարթ է ցանկալ ունել՝ որչափ ինչ բաւական իցէ 'ի
վայելուչ կեանս և 'ի պէտս վիճակի իւրաքանչիւր։ Ա՛ս-

digitised by A.R.A.R.@

տի և մարթ է չափաւորութեամբ ցանկալ ընչից, որ ըստ համաշխարհական կարգի կենաց կենցաղոյս դուռն են և փականք մարդկային ընկերակցութեանց, և միջնորդք և սատարք կարևոր մերոց պիտոյից։

Ողջոյն առաքինութիւն և անմեղութիւն հաստատեալ է 'ի չարին արդար և 'ի սահման ճշգրիտ ցանկութեանս այսորիկ։ Բանզի զոր օրինակ յղփութիւն կերակրոյ ծանրացուցանէ զստամոքսն և փնասէ քաջողջութեան մարմնոյն, նոյնպէս և յղփութիւն ընչից հասարակ կարգաւ խանգարէ զկեանս հոգւոյն, և բնաւ իսկ եղծանէ զանտեսութիւն քրիստոնէական վարուց։

Էրդ 'ի կրից աստի որ զօրացեալ է 'ի քրիստոնեայս, յորդորիմ այսօր սիրելիք խօսել յաղագս ցանկութեան ընչից։ Բայլ զիարդ արդեօք, յորժամ բաղմագոյնք նաև անբաւականք ևս են և անձեռնհասք 'ի վայելուչ կեանս վիճակին իւրեանց։ Ասակայն և խօսեցայց. քանզի և մարթ է լինել աղքատ, և միանգամայն կեանս վարել անձնամատն զակատեալ 'ի տարապայման և յախտաւոր սէր ճոխութեան։ Մարթ է դարձեալ և ընչեղ լինել և մեծատուն, և միանգամայն աղքատ՝ 'ի պատճառս ախտաւոր և չարաչար կիրառութեան հարբուտութեանն։

Ոչ՝ ասեն որոյ և արժան համարիմ զբողոքութիւն կարևոր առաջարկութեանս 'ի կրկին տրոհել քարոզս։ Յառաջնումն՝ յաղագս ընչասիրութեան, և յերկրորդումն՝ յաղագս վայելուչ կիրառութեան ճոխութեանց ատենաբանել։

Էրդ ասեմ վասն առաջնոյն, եթէ սէր տարապայման ճոխութեան 'ի ծուփս և յանձկութիւնս անհնարինս արկանէ զմարդ։ Այրկրորդ անգամ՝ նաև 'ի վտանգս մեծամեծս և 'ի կորուստ մատնէ զմարդ։

Ոչ այր մի ժուժկալել աղաչեմ՝, և խելամուտ լինիջիք ճշմարտութեանն։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆ Ա.

Երրակի աղգք բարեաց 'ի հանապազօրեայ յուզման ծփեալ տատանեն զբնաւորական մեր զանձնասիրութիւն։ 'Լախ՝ բարիք որ և ցանկ զգալիքն են յինքեանս, և են այսոքիկ բերկրութիւնք փափկութեանց։ Երկրորդ անգամ՝ բարիք որ ցանկալիք են, այլ չեն զգալիք յինքեանս. և են այսոքիկ համբաւ և վարկ աշխարհի։ Երրորդ անգամ՝ բարիք որ և ոչ ցանկալիք և ոչ զգալիք են յինքեանս, և են այսոքիկ մեծութիւնք և ինչք։ Լասիկ քեզ բաժանումն բարւոյ 'ի բերկրականն, 'ի համբաւն և յօգտակարն. սէր բերկրութեան բանաւորական է։ Սէր համբաւոյն և վարկին՝ օրինաւոր է. սէր մեծութեանց և ընչից՝ չէ ըստ ինքեան չար։ Այլ առ հասարակ այս ամենայն յօժարութիւնք յայնժամ միայն են և անուանին ախտաւորք, յորժամ չեն ուղղեալք և առաջնորդեալք 'ի լուսոյ բանին։

Անձնասիրութիւն որ անկարգութեամբ սիրէ զբերկրութիւն, անժուժկալութիւն կոչի և հեշտախտութիւն։ Անձնասիրութիւն՝ որ մոլեգինս հետամուտ տարփայ համբաւոյն և վարկին, զանուն կրէ զամբարհաւաճութեան և զփառամոլութեան։ Անձնասիրութիւն՝ որ տարապայման ցանկայ հարստութեան, ընչաքաղցութիւն կոչի և արծաթասիրութիւն։

Եւ է վերջինս այս կիրք հզօր և սաստիկ առաւել և լայնասահման քան զայլն։ Հարստութեամբ ընչից 'ի ձեռս բերեն մարդիկ զբերկրութիւնս և զշուք պատուոյն, և ինչք միայնակ բաւականք են գոգցես առ ամենայն։ Եւ զինչ ևս զարմացիս այնուհետև եթէ սէր ընչեղութեան՝ կիրք է համաշխարհական։ Մինայն որ յաշխարհի՝ ձկտի դրդել զարթուցանել զդժպատեհ զայս կիրս 'ի սրտի մերում, տածել և աճեցուն գործել։ Ամն որոյ և աստուածաշունչն մատեան իբրև արդարև՝ այր զարմանալի և հրաշից արժանի համարի զմարդ, որ երես չարասցէ 'ի փայլիւն ոսկւոյն, և հե-

digitised by A.R.A.R.@

տամուտ չիցէ ժողովելոյ ինչս բազումն, և ոչ զայս իւր եղեալ իցէ 'ի մեծութիւնս։

Այլ զիարդ, ասէն, ոչ 'ի խնդիր ելանել ընչեղութեան 'ի կենցաղումս. ուր աղքատութիւնն նշաւակ է հասարակաց անարգութեան, և ուր մեծութիւնք միայն են արգոյք առ մարդիկ. "Արծաթոյ լուիցէ ամենայն ունկն.,. և առանց արծաթոյ, ասէն, անպիտան է հանձար. անպիտան և զարմն, անշահ՝ արգասիք, և առաքինութիւնն ինքնին գլխովին։ Զատ է լինել աղքատ առ 'ի լինել յամենայնի նեղքևեալ և յամենեցուն ընդոտնեալ. նա և 'ի ստուերն անգամ աղատութեան՝ չվայելէ աղքատն։

Այս հաւատայցես զի ոչ և մեծութիւնք ինքնին միջամտահմանք չեն բաւական վասն բազմաց 'ի մարդկանէ՝ յերևանի փայլեցուցանել զպայծառութիւն զարմին, 'ի մուցանել զորդիս շքով և ազնուականագոյնս, 'ի հարստացուցանել զդստերս վայելչապէս։ Այ զի և ժամանակին քաջադիպութեան պարտ է հանքերութեամբ սպասել. դարձեալ և սովորութեանցն ուշ ունել, զի մի թերևս 'ի շուքն նկուն ինչ երևիցիմք 'ի մերոց հաւասարիցն։

Պարտ է նախատես և դիպաց իրացն լինել, որ անհամարք են և անկարծելիք և բազմագունակ. իսկ յայսոսիկ ապա ոսկին միայն է բարեկամ հզօր, զոր մարթիմք ունել. և ոսկին միայն է ապաստան անքոյթ յանդորրութիւն անձանց և աղգատոհմին։ Այսոքիկ են աւասիկ սովորական սաղրիչք և խթանք, որ զարթուցանեն 'ի մեզ զանչափն զայն և զդժպատեհ սէր հարստութեան։

Այլ մեք, բաբէ, ափշութեամբ հարեալք՝ չառնումք 'ի միտ, եթէ այնչափ տարփանամբ զՀետ ընթանալով անգոյ և առերևոյթ հանգստեան, մնան լինիմք ձգնարիտ և գոյաւոր անդորրութեանս մերոյ։ Այս որ խնդրեմք ապրել 'ի կարծեցեալ կարօտութենէն, ամենայն թշուառութեանց միանգամայն նշաւակ զանձինս կացուցանեմք. և որ աղքատք չեմք, 'ի նեղքոյ արկանեմք զանձինս յետսամիտ խորհրդով՝ ամենայն դժպատեհ կրից, զոր ընդ իւր բերէ աղքատութիւնն։

Զատ է 'ի խնդիր ելանել անչափութեամբ հարբս-

digitised by A.R.A.R.@

տութեան արծաթոյն, առ 'ի չունել երբեք զխաղաղութիւն։ Բայց միտ դիր աղաչեմ, տարապայման այս ըղձի չիք չափ, չիք ինչ սահման երբեք։ Բայն ինչ մեք 'ի ձեռս բերեմք ինչս, և անդէն ամենայն ինչք մեր նուազին. և չիք ինչ 'ի բարեաց՝ որ բաւական լինիցի մեզ։ Հանգունատիպ է այս իղձ՝ Ճշգրտիւ տապոյն ծարաւոյ առն ջրգողելոյ, որ յրմնելելոյ անտի՝ ուստի ըզտապն պապակման խնդրէ շիջուցանել, սաստիկ ևս զայրանայ, և չար ևս տանջէ տապ ծարաւոյն զախտակրեալն։

Բայց ինձ, սիրելիք, 'ի կշիռ համեմատութեան առէք արկէք վայր մի զերկուս ոմանս 'ի մարդկանէ։ Բ՝ին 'ի նոցանէ գոհ և անդորր է ընդ այն, որ բաւական է անձին. իսկ անդուստ միւսն՝ խնդրէ բարդել և գտանել զաւելորդն։ Բ՝ուաջինն՝ 'ի վաստակոց ձեռինն, և խոստութեամբ անտեսական կառավարութեանն անցուցանէ յանդորրու զտիւն ամենայն. և ապա լի խաղաղութեամբ և քաղցրութեամբ՝ և զգիշերն հասարակէ. 'ի գոգ անմեղութեան հանգուցեալ կայ, և բերկրապատար սրտիւ տեսանէ զարգանդութիւն անդոյն իւրոց, զօրհնութիւն քրտանցն առ յԱ՝ստուծոյ, պաշար բաւական պիտոյիցն, միանգամայն և պատճառք բարօրութեան կենաց, որպէս զի և նախանձելի ևս յարդարէ զանձն՝ յղփացեալոյն անգամ և լիացելոյն 'ի մեծութիւն։

Իսկ ապա երկրորդն այն՝ որ հետամուտ է ցանգ հարստութեան, չունի ինչ ամենևին հանգիստ. նա բնաւ իսկ չձանաչէ՝ զինչ իցէ անդորրութիւն. միշտ խնդրէ և ցանկայ լինել գոյաւոր և ընչեղ։ Բ՝ս սակայն ինչք և հարստութիւն չեն ինչ ինքնեկք. պարտ է յառնել հետամուտ 'ի խնդիր լինել այնց զցայգ և ըզցերեկ. իսկ գտանել չիք հնար զնոսա՝ առանց բազում քրտանց և աշխատութեանց։ Բ՝ս եթէ երբեք կամիցի և բնաւ իսկ յամենայն առիթս և 'ի քաջադիպութիւնսն որ պատահեն՝ օգտաշահ լինել, քանի անհնարին աշխատութեանց և քրտանց պէտք իցեն. և եթէ զմին միայն 'ի քաջադիպութեանցն 'ի ձեռաց հանցէ, քանիսն իցէ ցաւն և ապաշաւն։

Օ ամենայն ճիգն թափէ, յամենայնն ձգտի, զամենայնն փորձէ, զի առաւել հեշտակեաց լինիցի և առաւել երջանիկ յաշխարհի։ Սակայն և անդուստ բիւրք

digitised by A.R.A.R.@

իմն խոչընդոտն և խափանարարք ընդ առաջ ելանեն։ Եւ մինչդեռ մեք մեծապէս յաջողեալք՝ իբրև առաջաստալիքք հողմուռոյցս կարծեմք նաւարկել, անդուստ նոքա յայնժամ յանկարծ սանձ արկանեն ընթացիցն, եղծուն տապալեն զամենայն հնարիմացութիւնս մեր, և 'ի ձեռաց կորզեն հանեն զբախտն գեղեցիկ, զոր ստոյգ կարծէաք 'ի ձեռս բերել։ Իսկ յայնժամ քանիսն իցէ սրտաբեկութիւնն, քանի՞ սրտառուչ հառաչքն և թառաչքն։

Հանայն և այնպէս, սիրելիք, այս իրաձ անխոնջ, կիրք սանձակոտոր, կիրք ընչահաւաք հարստութեան, իբրու մտրակ 'ի կուշտ ցանգ խոցէ, ցանգ դրդէ, տագնապէ, դուլ ոչ գիտէ. չիք նորա դանդաղել ինչ, զամենայնիւ վազէ, խիզախէ, պատիր ինչ երևութիցս երես չառնէ, երբէք չհանդարտի։ Եւ աստի ապա անձկութիւնք ո՞ գետանջք, դառնութիւնք սրտի, և լլկանք անհնարինք օգտաճարաւ ոգւոյն, որ յընչաքաղցութենէն գերի վարեալ իցէ։ Վիրտն 'ի վերայ քրտան, աշխատութիւնք 'ի վերայ աշխատութեանց, գործք 'ի գործս և զբաղմունք 'ի զբաղմունս բարդին։ Օ՞ր ամենայն հաշիւ առնեն, կարծեն եթէ կատարած է, և զոր ամենայն սկիզբն է։

Եւ զի և 'ի միում անդ նուագի բազումն և ծանուցեալ և դժուարինս համանգամայն 'ի ձեռս առնուն։ Օ՞այն խորհին 'ի գիշերի, յայն պատգին 'ի տուէ։ Ո՞ւրդ ինչ հանգիստ, չիք երբէք. իցէ՞ ինչ քուն աչաց կամ նինջ արտաքանաց, չիք երբէք։ Եղծանեն զբնութիւնն, խանգարեն զքաջողջութիւնն, դիմագրաւեն և զկեանս։ Եւ եթէ կեան, կեանքն են անկենդանք։ Հոլովին ամք, անցանեն ողջոյն 'ի ծուփս, ցանգ 'ի յուզմունս, անդուլ 'ի յանձկութիւնս։ Եւ է բազում անգամ, զի և 'ի վերջնումն աւուր վախճանի կենաց իւրեանց, յետ այնչափ բազմաժամանակեայ վաստակելոյն առ 'ի լինել մեծատուն, դառնացեալ սրտիւ մեռանին, աւաղ բախտին՝ մեռանին աղքատք։

Ա՞հա քեզ անդորրութիւն կենաց և խաղաղաւէտ մահ, և վարձ հատուցման որ 'ի դանձելոյ գանձս յերկրի. ահա քեզ պտղաբերութիւն կանուխն և անագանն՝ որ 'ի տարապայման սիրոյ Աստուծոյ։

digitised by A.R.A.R.@

Տեսցուք վայր մի և գյաջողութիւնս զգանձուցն։ Զհա գանձեաց նա գանձս, ժողովեաց մեծութիւն ամբաւ, եղև մեծատուն։ Իսկ ապա զինչ. ոչ և պահպանութեան պէտք իցեն նոցա։ Զի ահա քեզ աղբիւր նոր՝ նորանոր անձկութեանց և մեծաց հոգոց, ոչ լինչ նուազ քան զկրիցն ժողովելոյ. զի զոր տարփմամբ ոք սիրէ, այնչափ և առաւել երկնչի 'ի կորուսանելոյ. և է այս երկիւղ՝ փուշ և տատասկ որ անդուլ խոցէ և սաստիկ տանջէ։

Զմենայն կորուստ՝ թէպէտ և թեթև և դուշնաքեայ, դժոխքմբեր է նման. նա ոչ հայի 'ի բաղումն՝ որ գանձեալ կայ, այլ 'ի սակաւն՝ որ բարձաւ։ Ոչ ոք ճիմ է յամենայնի, հոգածու ընչեցոյն. խնդրէ յամենայնէն շահ, և 'ի գոյիցն զոր ունի, արգասաւորութիւն պահանջէ նաև զչգոյիցն՝ որոց ցանկայ։ Լուսի և անդրէն միւսանգամ ձեռնարկութիւք գործոց՝ նոքք, և զբաղումն՝ նոր, և զոր ամենայն հոգք և անձկութիւնք նորանոքք։ Զպառում է, անողոքելի է, չտայ տեղի, և ոչ 'ի դուշնաքէից ինչ իրաւանցն հրաժեշտ տայ. սաստ կապահանջք են համարքն. զոր ամենայն նախանձ, զոր ամենայն սրտնութիւնք, ցանգ երկմտութիւնք, ցանգ կասկածք։ Զսուի են փուրշիշք, աստի դատախազութիւնք, աստի ատեանք և բողոքք, կագք և պայքարք անսպառելիք։ Զի՝ բաղում անգամ 'ի կորուստ գոյիցն զոր պահանջեմք, բարդեմք և զկորուսան զորոց արդէն ստացեալ ունիմք. մինչև 'ի վերայ հասանէ մահն, յորում առեալ կուտեմք 'ի գոգ ժառանգացն զպտուղ անմտութեանցս մերոց։ Զասիկ քեզ վիճակ կենաց մարդոյն, յորում թագաւորէ կիրք և տարապայման սէր ճոխութեան։

Զայլ սակայն և քաջի ուշիմութեան պէտք են մեզ, սիրելիք, մի ըմբռնիլ 'ի պատրանս։ Զանզի պատրիմք հեշտեաւ, յորժամ տեսանեմք մեք նախանձաբեկ և կկոցեալ աչօք, զի յոլովք 'ի մարդկանէ ճոխանան ընչիւք և լինին մեծատունք։ Սակայն և վայր մի խելամուտ լինել աղաչեմ, և ճանաչել զիսել քանզի արժէցին նոցա այնչափ հարստութիւնք ընչից, և իմաստասիրել հանճարով։

Զոքա առ 'ի զբռամբ ածել զայն գանձս, 'ի սպառ հրա-

digitised by A.R.A.R.@

ժեշտ եւ տուն յանդորրաւէտ կենաց, հրաժեշտ 'ի սպառ 'ի խաղաղութենէ սրտի. կորուսին զքաջողութիւնն, կորուսին բազում անգամ զհամբաւ բարի. հրաժեշտ եւ տուն 'ի պատուոյ անձանց. և զինչ ևս այլ բազում անգամ առ ոտն հարեալ և զխիղճ մտացն, զրժեցին պատուիրանացն Աստուծոյ։ Այլ ո՞ զք ապա իմաստասէր անձն՝ եթէ որ ըստ աշխարհի, և եթէ առաւել՝ որ ըստ աւետարանին, յանձն առցէ Հոխանաղ անկայուն մեծութեամբն այսչափ ծանրագնի։

Վաստակեցէք, աշխատ լերուք, պատուիրեն աստուածային զիրք, գործ 'ի ձեռս առէք՝ կեանս վարել վայելուչ. այլ մի վաստակաբեկ լինիջիք առ 'ի լինել մեծատուն. մի վաստակեսցիս, ասէ, զի մեծասցիս և հարստասցիս։ Զսի դիք ցանկութեան գանձուց, սահման կարգեցէք կրիցդ. ապա թէ ոչ, խաղաղութիւնն առաւել ցանկալին 'ի կեանս մարդկան՝ բարձցի 'ի ձէնջ 'ի սպառ։

Զի՝ աւելի և մի նուազ. զայս խնդրեաց և զայս աղօթեաց իմաստունն. մի տացես ինձ տէր, ասէ, մեծութիւն բազում, զի մի հպարտացայց և մոռացայց ըզքեզ. և մի աղքատութիւն, մինչև գողացայց և ատելի եղէց քեզ. "Զ մեծութիւն և զաղքատութիւն մի տար ինձ.,։ Կեալ՝ միջասահման ընդ մեծութիւն և ընդ աղքատութիւն, զիարդ գեղեցիկ իցէ. անվտանգ անդրժելի 'ի փորձութեանց երկոցուն կողմանցն քանիսն իցէ երջանկութիւնն. գոհանալ ընդ չափաւորն և չինդրել զաւելորդն, քանի իմաստասիրութիւն իցէ։

Այս արդ դու առ այս ո՛վ քրիստոնեայ՝ զկենսաւէտ պատգամն լուր զբաղմնգանձ արքային. "Զեծութիւն, ասէ, թէ առուիս գայցէ, մի յօժարեսցին սիրտք ձեր.,։ Այթէ երբեք զեղցին ևս քեզ մեծութիւնք առ Յաստուծոյ, առ ընկալ դու գոհութեամբ, ժողովեա 'ի տուն քո, մի ժողովեր 'ի սիրտ քո, զլացիր նոցա մուտս 'ի հոգի քո. այս է չափ և սահման՝ ասմնջական անդորրութեան հոգւոյն, և այս անքոյթ պահապան սրբութեան խղճի մտացն։ Զարքինութիւն չէ ուրեք այնչափ յապահովի, որպէս 'ի միջասահման մեծութեան։ Զիարդ Հշդրտիւ կնքեաց աստուածայինն Յովհան՝ Զերանն ասկի. "Զ մեծաց հրաշից, ասէ, համարեա,

digitised by A.R.A.R.@

եթէ ոք հարստասցի 'ի բազում գայթից, և ոչ գերեսցի 'ի բազում ախտից ,, ։ Իսկ և կարծիք այն հասարակաց՝ որ ասէ եթէ անզուգակից է առաքինութիւնն ընդ մեծի բախտի, մեծապէս արդարացեալ է 'ի հասարակացն փորձոյ ։

Այլ եթէ պատահեսցի երբէք, զի ոչ ամենայն ընչեղք գրաւեալք նկուն լիցին 'ի փորձութեանց բազմահարուստ մեծութեանն, սակայն վտանգ կործանման չէ վասն այնորիկ՝ ոչ նուազ ահագին և ոչ նուազ ստոյգ։ Վասն որոյ եթէ 'ի ծուփս և յանձկութիւնս անհնարինս անկաւ մարդ, որ տարապայման ցանկացաւ հարբութեան, արդեօք անշուշտ և 'ի վտանգս մեծամեծս և 'ի կորուստ մատնեսցի այնպիսին, վայրիկ մի հանգիստ տուք ինձ սիրելիք, և տեսջիք ճշգրիտ ։

ՄԱՍՆ Բ.

Վաղիկ խելամուտ աւետարանին ճշմարտութեան աստուածային հոգւոյն երանելի առաքեալն, զհիմն հաստատութեան տերունական պատգամին եթէ "Ի՞նչ դանձէք գանձս յերկրի ,, . պարզէր գնէր առաջի հաւատացեալոցն, եթէ որ 'ի սիրոյ հարստութեան գրաւեալ իցեն մարդիկ, չեն անփորձք, չեն զերծք 'ի հաղբից հրապուրողին, անմնացեալք են 'ի ցանկութիւնս, և 'ի վերջն յանգիւտ կորուստն յուղարկին. "Ոչք կամին, ասէ, մեծանալ, անկանին 'ի փորձութիւն և յորոգայթն սատանայի, և 'ի բազում ցանկութիւնս անմիտս և ճնասակարս, որք ընկղմեն զմարդիկ 'ի սատակումն և 'ի կորուստ։ Զի արմատ ամենայն չարեաց արծաթասիրութիւն է. որում ոմանց ցանկացեալ վրիպեցան 'ի հաւատոցն, և զանձինս արկին ընդ բազում ցաւովք։ Բայց դու ո՛վ մարդ Աստուծոյ, փախիր յայնցանէ ,, ։

Այս է առաջին փորձութիւն և առաջին վտանգն՝ յոր խարդաւանի անհանձարաբար և անկարգութեամբ ցանկացողն հարստութեան. անմնանայ 'ի հոգին 'ի տարապայման ցանկութենէն, և միտ երբէք չդնէ ըն-

digitised by A.R.A.R.@

տրել իմաստութեամբ, որով Ճանապարհաւ, որովք միջ նորդօք արժան իցէ ստանալ ինչ։

Եթէ երբէք մարթ իցէ յաջողիլ 'ի նոցն՝ Ճանապարհաւն որ ըստ պարկեշտութեանն է և արդարութեան, և որ ըստ աւետարանին է, բարւոք է. ապա թէ ոչ՝ այլ Ճանապարհքն հակառակք առաքինութեան և ոգւոյ աւետարանին՝ զեան մեծապէս գործեն և մահ։ Սեն միշտ անմնացեալքս այսոքիկ. "Արով և իցէ օրինակաւ շահեսցուք ինչ.."։ Այս առած է զակատեղցն յախտ արծաթասիրութեան։ Ցանգ 'ի բերանի ունին զառաքինութիւն, զհամբաւ բարի, զպատիւ անձին, զլաւութիւն։ Այլ պատիւ անձին և լաւութիւն և առաքինութիւն՝ անուանք միայն են առ նոսա անգոյք։ Առաքինութիւնքն նոցա և ամենայն լաւութիւնքն՝ յարծաթն են. և արծաթով միայն համարին ունել, եթէ պատիւ իցէ, եթէ լաւութիւն, եթէ համբաւ բարի։

Եթէ երբէք նոքա 'ի տունս Հոխից ընչասիրաց կամ իշխանաւորաց ընչաքաղցից մուտս գտեալ 'ի գործ ինչ կամեսցին մեծանալ, վայ է նոցա, զի վտանգ ակնարև կայ առաջի նոցա։ Արանցի անկեղծութիւն և Ճշմարտութիւն չեն միջնորդք, չեն Ճանապարհքն անքոյթ առ 'ի բախտ մի 'ի ձեռս բերել՝ 'ի տեղւոջ յորում շատ է անկեղծաւոր լինել՝ առ 'ի կործան անկանել։ Անկեղծաւորութիւն, նենգութիւնք, խորամանկութիւն, պատրանք, խաբէութիւն, խարդախութիւն, մարդեղութիւն, կապալք, գաղտնախորհուրդ զուլողութիւն, են անդանօր Ճշգրիտ գործիք զօրաւորք և ելք բարեյաջողք, և զիարդ ապա ոչ սիրեսցեն նոքա զայդոսիկ, զիարդ 'ի ձեռս չառցեն զգործիսն զայնոսիկ զսեպհականս տեղւոյն այնոսիկ և զտիրացեալսն 'ի նմա։ Արանցի տունք են տեարց ընչասիրաց կամ իշխանաւորաց ընչաքաղցից։

Ա՛ռ սէր հարստանալոյն խեղաթիւրեն զՃշմարտութիւնն, առ ոտն հարկանեն զիրաւունս, լքանեն զարդարութիւն, տիրացուցանեն զստութիւն։ Ոչ ապա անարդաբար հարկանեն առ ամենայն թերակատարութիւնս, առ ամենայն տկարութիւնս առն՝ որ 'ի ձեռին իւրում կալեալ ունի զփականս զիւրեանց բախտին. հանձարագիտ լինին առ նմա յիմաստս երկրաւորս և ինչաւորս, խարդախեն զբարս, պատրուակեն զհա-

digitised by A.R.A.R.@

ատոս, բարեմարդիկ լինին գձձուԹեամբ. և չդան և ոչ դադարեն երբեք յայսպիսեաց աստի, բայց եԹէ յետ կուտելոյ գանձելոյ զկորստական ինչան։

Այս եԹէ յանկարծ գտանիցեն նոքա 'ի տունն յայնոսիկ նախանձաւոր և զայլ ոք հետամուտ իբրև զինքեանս ընչահաւաք լինել և հարստանալ, տես ինձ դու յայնժամ, քանիսն իցեն դարանակալուԹիւնքն, քանի՞ սրոգայԹք լարեսցին, քանի՞ չարախօսուԹիւնք, քանի՞ քսուԹիւնք, վատահամբաւուԹիւնք, զրպարտուԹիւնք, մինչև յաջողեսցին 'ի կոր կործանել զայրն զայն նախանձաւոր, զհետամուտն, զիսուրնդոտն անձանց 'ի կորզել զարծաԹն, որ նոցա անկ էր։

Աբդարացաւ ուրեմն առաքեալն զի ասաց. "Աբմատ ամենայն չարեաց արծաԹասիրուԹիւնն է"։ Այլ ասէն նոքա. "Շատ է շահել, որով օրինակաւ և իցէ"։ Այ՝ի ասեր՝ այր դու, շահել լոկ, այլ շահել և զմեզ 'ի միասին։

Այս եԹէ կամեսցին ցանկասէրքդ այդոքիկ նաև յատեանս դատաստանաց բազմել և 'ի բանս իրաւանց զանձինս խառնել, ո՛վ քանի՞ իցեն յայնժամ նաւաբեկուԹիւնքն, քանիսն ցաքն բազումք՝ զոր ասաց առաքեալն, եԹէ "Ի բրիպեցան 'ի հաւատոյն, և ընդ բազում ցաւովք արկին զանձինս"։

Զանգի յայնժամ իրաւունք աղքատաց և որբոց և այրեաց միանգամայն առ ոան հարեալ կան, և միայն մեծատանցն, և միայն կաշառատուացն՝ ԹէպԷտ և իրաւունք անիրաւք և օրէնք անօրէնք՝ յայնժամ զօրացեալ Թագաւորեն։ Զի՞ԹԷն գտանեն օրէնս ինն յուզեալ 'ի խորշս մատենից՝ ցանգ 'ի կոզին, ցանգ 'ի ջատագովուԹիւն ընչեղիցն և Ճոխից և պարգևատուաց. և Էնքեն դատակնքեն ընդդէմ այնորիկ՝ որոյ չէք ոսկի 'ի զօրավիգն դատին իւրոյ և 'ի պաշտպան իրաւանց իւրոց։ Ոսկին է անդանօր հոգի վՃռոյն, արծաԹն՝ կենսաւորիչ ատենից. և 'ի սէր ոսկւոյն՝ նաև կարի յայտնադիմնուԹիւնք իրաւանցն տապալին, և կարի ակներև անօրէնուԹիւնք՝ բարձրագլուխ պանծանօք իբրև իրաւունք հրատարակին, և իբրև այնպիսի՝ կատարումն առնուն։

Աչաղ անմտուԹեանն, զի "Պարտ է, ասեն, ո-

digitised by A.R.A.R.@

բով և օրինակաւ իցէ՝ շահել ինչ.,։ Բաբէ, զիարդ ահա «Որ կամին մեծանալ, ձգզրտեաց երանելին, անկանին 'ի փորձութիւն և յորոգայթս սատանայի.,։

Իսկ թէ երբէք 'ի շուկայս և 'ի տուրևառս վաճառաց կամիցին մեծանալ ընչասէրքդ այդոքիկ, քանի յանցաւորութեամբք յայնժամ գօտեպինդք ժրասցին առ 'ի նոյն։ Բստի դաւք և նենգութիւնք, անտի մենավաճառութիւնք և կապալք, կշիռք մեծ և փոքր, վաշիք և տոկոսիք, դաշնադրութիւնք անօրինաւորք, պայմանք դժպատեհք, պահանջմունք անիրաւք, բռնաւորութի, հարստահարութիւն, կեղեքումն։ Բանի գաղանորոգայթ շահախնդրութիւնք՝ 'ի զեան ազքատացն և անաւաղացն. քանիօն հնարիմացութիւնք և աբուեստք 'ի կանգնել շինուած զբաստի անձինն 'ի վերայ աւերակաց կործանման ընկերին, և 'ի վերայ ողբոց և հեծութեանց հիքացելոցն անձանց։

Բ. այս ոչ յամբարշտաց միայն և յապականելոց մարդկանն, այլ և 'ի կարծեալ քրիստոնէիցն և 'ի փարիսաձև բարեպաշտիցն։ Բ. կէս անիրաւութիւնք յայտնիք, և 'ի կէս հնարիմացք և քողարկեալք, սակայն և միշտ անիրաւութիւնք, զոր երբէք չմարթասցին արդարացուցանել, թէպէտ և ազգի ազգի բաղբաղայիւք և չքմեղութեամբք ձգնեսցին հանդարտել զմոլար և ըղխեղաթիւր խիղճ մտացն։ Բանզի և ոչ ահա մեք ինքնին զփորձն առաք բազում անգամ զխորոց անդրնդոցն՝ յոր խարդաւանեցաք 'ի ծայրայեղ սիրոյ ձոխութեանց. այլ նոյն իսկ ախտակիր սէրն՝ որ յանիրաւութիւն դրդեաց զմեզ, նոյն ինքն բողոք հարեալ հանապազ տանջէ զմեզ 'ի տուժել և 'ի հատուցանել։

Բ. յայնժամ խնդրեմք մեզ վարդապետս և աստուածաբանս և բարոյականս հեշտընկալս, զի նոքա կամ առ խէթ կորուսանելոց կամ առ յոյս շահելոց ինչ՝ մի խստասցին առ մեզ, այլ հեզացեալք ընթեսցեն մերոց յանցաւորութեանց։ Բ. կամ թէ ինքնին մեք լինիմք մեզ ինքնաձեռնադրելի աստուածաբանք պատգամատուք, և լինիմք հանձարիմաստք և հնարագէտք 'ի գտանել մեզ փաստս իմն և պատրուակս՝ անպարտ կացուցանել զմեզ յանհրաժեշտ պարտուցն։

Բ. սակայն պարտք են հատուցանել զօտարինն, ընդ

digitised by A.R.A.R.@

այս չէք երկբայութիւն՝ և պարտք են անխուսափելի։ Այլ բաբէ նուազութեան հատուցողացն. զիսրդ մարթասցի երբէք հատուցանել այր՝ որ 'ի կրիցն գերեալ՝ հետամուտ է ցանգ 'ի հարստանալ։ Անզի տալ անդրէն զօտարինն՝ զոր ունի առ իւր, կորուստ համարեալ է առ այնպիսւոյն. և թուի նմա վերջոտնիլ՝ փոխանակ յառաջ խաղալոյ։

Հաւասիկ ձեզ վտանգք մեծամեծք, անհնարինք, որ 'ի կրից արծաթասիրութեան. և արդեօք քանիք ոմանք իցեն, որոց երբէք յաջողեսցի անձնասուր 'ի վտանգաց ատի լինել, և մի շաղիլ յորոգայթս անելս կորստեան. և ոչ մի ոք, սիրելիք, որոյ սիրտն գրաւեալ իցէ յաշխարհակուալ կրիցն։ Անզի անսուտ է պատգամն, և լի արհաւրօք, "Որ կամին, ասէ, մեծանալ, անկանին 'ի փորձութիւնս և յորոգայթս սատանայի, և 'ի բազում ցանկութիւնս անմիտս և վնասակարս...։ և ապա կատարածն զինչ. "Որ ընկղմեն, ասէ, զմարդիկ 'ի սատակումն և 'ի կորուստ. զի արմատ ամենայն չարեաց արծաթասիրութիւնն է..։

Իսկ որ դժնդակագոյն ևս կիրք՝ այն են, զի յաւակնեալ խորհրդով արհամարհեսցէ ընչաքաղց ոգին զամենայն վտանգօքն։ Այս դիմագրաւ անձնամատն իբրև գազան զերծեալ 'ի գառագղէ ուր միանգամ յակին զոսկին արկանէ և զարծաթ՝ դիմէ սլանայ եթէ ընդ սուր՝ եթէ ընդ հուր, եթէ ընդ ջուր, եթէ ընդ ահագին մրրիկս, երես չառնէ և ոչ միոյ ինչ 'ի դժնդակացն. վաճառէ զպատիւն, վաճառէ զհաւատս, վաճառէ զհոգին, վաճառէ զԱստուած, զի ընչեղ լիցի և յընչաւէտութեան իւրում փափկասցի։ Այսն որոյ կնքեաց հոգին սուրբ, եթէ չիք ինչ անիրաւ, քան սէր արծաթոյ. "Այս զհոգին իւր, ասէ, 'ի վաճառ հանէ..։

Այս ապա որ իցէ վախճանն, զայն քեզ Աշգրիտ համառօտէ Աւերանն ոսկի. "Հաւատիկ, ասէ, անձն ընչաքաղց վաստակեցար և մեծացար, հասեր 'ի վախճանդ. և ահա մեռանիս Ճոխացեալ ոսկւով, և ծանրաբեռնեալ մեղօք..։ Օ ինչ խնդալ իցէ նոցա, զինչ վայելք յայն ինչ՝ զոր այնչափ ծանրագնի ստացան և կուտեցին և մեծատունք եղեն. նա մնաւանդ յոր կոծ, յոր լալիւն հատանել արժան չիցէ 'ի վերայ թը-

digitised by A.R.A.R.@

շուառութեանցն հանդերձելոց, իբրու անհրաժեշտ սպառնալեացն՝ զոր ահագինս գրեաց առաքեալն. "Լ.մ սուհետև, ասէ, մեծատունք լացէք և ողբացէք 'ի վերայ թշուառութեանցն՝ որ գալոց են 'ի վերայ ձեր. զի մեծութիւնդ ձեր յոչինչ է, և հանդերձք ձեր կերակուր ցեցոյ. արծաթ ձեր և ոսկի ժանգահար, և ժանգ նոցա լիցի ձեզ 'ի վկայութիւն, և կերիցէ զմարմինս ձեր. իբրև զհուր գանձեցէք աւուրցն յետնոց.,,։

Լ.ոդ զի անշուշտ են բանքն, զիմաստասիրութիւն աւետարանին, եղբարք, յանձին կալեալ, մի գանձեսցուք գանձս յերկրի նիւթ ցեցոյ և ուտձաց, նիւթ գողոց ական հատանողաց, այլ առաքելականին միտ դիցուք գեղեցիկ իրատուն. "Ունիմք կերակուր և հանդերձ, և այնու շատասցուք.,,։ Ա՝ի անցաւոր մեծութիւնքս գրաւեսցեն զսիրտ մեր, զի մի կորուսցեն զհոգիս մեր։ Ա՝եծասցուք առաքինութեամբք, մեծասցուք սիրովն Լ.ստուծոյ, սիրով ընկերին. բա՛ւական անձառելի ճոխութեանցն, որ միայն են բաւական անդորրաւէտ գործել զմեզ և երանելիս 'ի հովտի կենցաղիս, և յաւիտեան երանաւէտս 'ի հանդերձեալն։

Ա՝աղաթեսցուք, զհայց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, ո՛վ տէր, այլ մի՛ մեծութիւն, և մի՛ աղքատութիւն. զբաւականն և զհարկաւորն տուր մեզ, և առաւել քան զամենայն զգանձս տուր մեզ զերկնաւոր առաքինութեանցդ, զքոյին աստուածախնամ տեսչութեանդ, զքոյ զանսպառ ողորմութեանդ. որպէս զի ուր գանձն մեր է, անդ, տէր, և սիրտք մեր եղիցին։

digitised by A.R.A.R.@

ԹԱՐՈՄ ԺԸ.

ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ ՃՈԽՈՒԹԵԱՆ

" Դժուարաւ մտցէ մեծատունն յարքայութիւնն երկնից ,, :

Պարտ էր և մարթ էր մեծատանն՝ որում սատարք բազումք են 'ի բարեգործել, դիւրագոյն ևս ժառանգել զարքայութիւնն երկնից . սակայն և որչափ անսուտ է պատգամն , այնչափ և ահաւոր ։ Բանզի նոյն ինքն արծաթն ծառայեցուցիչ բուռն առնէ մեծատանն չարաչար վարել նովաւ . և ըստ նմանեն՝ դժուարամուտ գործէ զնա յարքայութիւնն Աստուծոյ ։

Այսն որոյ և ես չգիտեմ, սիրելիք , ասել ձեզ Ճշգրիտ՝ , ո՞ զբ առաւել արտասուաց արժանի իցէ . արդեօք այր մեծատուն ախտակիր , որ 'ի հարստութեան իւրում սատարս հեշտին գտանէ 'ի գործել զամենայն չար՝ զոր և միանգամ կամեսցի , եթէ այր աղքատ առաքինի , որ 'ի չքաւորութենէն արգելեալ , չմարթի գործել զբարին՝ զոր և միանգամ կամեսցի ։ Այլ քանզի առաւել վնասակար է գործել չար , քան չառնել զբարին առ անկարութեանն , առաւելագունի ուրեմն արտասուաց արժանի է այր մեծատուն , որ չարաչար վարեալ հարստութեամբն՝ անիրաւի , քան զայրն աղքատ անձեռնհաս 'ի բարեգործել առ 'ի չգոյէ ընչից ։

Սակայն նահատակութիւնք աղքատին՝ առաքինութիւնք մեծամեծք են և առաւել դժուարինք , իսկ որ առաւել հեշտինքն են և քաղցունք՝ քաջութիւնք են

digitised by A.R.A.R.@

մեծատանն։ Վանզի պարտ է աղքատին համբերութեամբ տանել անարգանացն և խոնարհութեան, քրքտանց և ծարաւոյն և քաղցուն ցանգ վաստակել և 'ի մոյր անկանել առ 'ի զօրապահիկն գտանել, կեալ միշտ 'ի կարօտութեան, և վշտամբեր լինել. տեսանել զլիացեալն՝ և զինքն կարօտեալ աւուրն պարենի. և 'ի վերայ այսր ամենայնի՝ ոչ ինչ տրտնջալ, և երկիրպագանել և աստուածային տեսչութեանն։ Այսքիկ են առաքինութիւնք աղքատին, որովք մարթի նա մասին սրբութեան հասանել։

Շատ է մեծատանն 'ի սրբութիւն՝ կարեկից դութն և ողորմածութիւն և բարերարութիւն. առաքինութիւնք ընդածինք և տնկակիցք բնութեանս, նա և հեշտարարք 'ի կատարմանն։ Այլ բաբէ, զի 'ի հանապազորդեան փորձոյ և յաստուածային պատգամացն զիտեմք քաջ, եթէ մեծութիւնք չեն ինչ հեշտեաւ զուգահեռք ընդ առաքինութեան. և հասարակ կարգաւ՝ շատ է լինել մեծատուն՝ առ 'ի լինել անբաժ յառաքինութեանց աւետարանին։

Ա՛վ, քանի՛ ահաւոր հնչեցաւ պատգամն. «Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւնն Աստուծոյ մտանել.»։ Այլ սակայն մեծութիւնն ըստ ինքեան չէ չար. այլ չարաչար կիրառութիւն արծաթոյն ժանտացուցանէ զնա. և նոյն ինքն դիւրութիւնն զեղծանելոյ նովաւ՝ իրաւացուցանէ զմեծ պատգամն եթէ՝ «Դժուարաւ մտցէ մեծատուն յարքայութիւն երկնից»։

Օգտեցիկ ուրեմն կիրառութենէ արծաթոյն հարկ է ինձ այսօր, սիրելիք, կարդել զկարևորս յոյժ քարոզ. որ աղագաւ և կանոնս կրկին առաջի ձեր ընծայել։ Առաջին՝ 'ի կիր առնուլ զարծաթն վասն մեր. երկրորդ անգամ 'ի կիր առնուլ վասն ընկերին։ Վասն մեր՝ բայց արդարութեամբ. վասն ընկերին՝ բայց սիրով։ Ի կրկին իմաստից աստի յաջողեսցի մեծատանն փրկութիւն նորա, և մուտ յարքայութիւնն Աստուծոյ։ Տացուք սկիզբն կարևոր քարոզիս։

digitised by A.R.A.R.@

ՄԱՍ Ա.

Սատանայ մեծութիւն բազում անձնագրաւ կրիւք, և միանգամայն լինել իսնստուն 'ի գնացս՝ քաջ իսկ դը-ժուարաւ միաբանին ընդ միմեանս։ Վասնզի ունել այն պէս գանձս բազում՝ և ոչ խոտորեցուցանել երբէք զդատաստանս մտացն և ոչ վատթարել երբէք զշարժ-մունս կամացն, 'ի հրաշից կարգի է. զոր դուն ուրեք տեսանեմք պատահել յաշխարհի։ Վասնիք ոմանք յաղքատաց, որք յաղքատութեան իւրեանց այնպիսի ինչ համարէին զմեծութիւնս, որպիսի ձիգրտեն գիրք, և այն ինչ վայր մի հարստացեալ նոցա, իբրև զՆ-տուած սկսան նոքա պաշտել զոսկի և զարծաթ։ Այս քանիք դարձեալ՝ որ ցանկային մեծանալ առ 'ի ընուլ միայն զպէտս անձանց և զտանն, այն ինչ մեծացան՝ այնչափ ինն կապեցան ընդ ոսկին, զի և առ երկիւղի նուազելոյ ինչ զնա կամ կորուսանելոյ, թշուառագոյն ևս քան յառաջին աղքատութեան իւրեանց՝ յանձն առին վարել կեանս։ Այս քանիք ոմանք դարձեալ 'ի մի-ջասահման վիճակին անցանեն 'ի հարստութիւն, որ-պէս եթէ յանկարծ 'ի ցածութենէն անցանիցեն յամ-բարտաւանութիւն, 'ի պարկեշտութենէն՝ յանժուժ-կալութիւն, յանմեղութենէն՝ 'ի վերջին վատթարու-թիւն։ Յայտ է ուրեմն, եթէ հրապոյրք միայն 'ի չար անդր պակասին նոցա յաղքատութեան իւրեանց։

Ոչքա առ հասարակ 'ի կիրառութեան ընչից անիրա-ւին առ անձինս իւրեանց։ Իսկ օրինակք կրկին են ան-իրաւ կիրառութեանս. առաջին՝ զի երբէք 'ի կիր չառ-նուն, այլ յայն միայն հային՝ կուտել և 'ի պահեստի ունել զնոսա. երկրորդ անգամ՝ զի յաւելորդս 'ի կիր առնուն ընդդէմ կանոնաց բանին։ Առաջինն կոչի ա-գահութիւն, երկրորդն շռայլութիւն։ Ագահութիւնն անպիտանս յարդարէ զինչս՝ ստացողին իւրում. շռայ-լութիւնն զրկէ յայնցանէ զժառանգն, նաև անիրա-ւութեամբ վատնողին՝ պատուհաս 'ի վերայ ածէ։

digitised by A.R.A.R.@

Բազումք են 'ի մարդիկ ագահք և շռայլք 'ի ծածուկ և անծանօթք, 'ի ծածուկ կան նաև յանձանց իւրեանց։ Օ՛ի են իսկ աստիճանք ագահութեան և շռայլութեան. և ըստ չափն՝ չելանեն միշտ. է բազում անգամ զի պատրուակ ևս առնուն իւրեանց զկերպարանս առաքինութեան, և պէտք են նրբամտութեան՝ որոշել ճանաչել զնոսա։

Ոչ ամենայն անկանոն սէր մեծութեանց է ագահութիւն։ Բ՛զահ է տիրապէս, որ վեր 'ի վայր եղծեալ խանգարէ զկիրառութիւն ընչիցն՝ որ սահմանեալքն են 'ի ընուլ զպէտս կենաց. և առաւել սիրէ կեալ 'ի կարօտութեան՝ քան խաւսան անկանել ամենութեան նոցա և կամ նուազեցուցանել ինչ մի յարծաթոցն՝ որում պաշտօն հարկանէ իբրև Բ՛ստուծոյ։ Բ՛անզի և ոչ ինչ ընդհատ 'ի քարէն՝ որ թաղեալ կայ 'ի հիմունս տան իւրոյ, նա 'ի կիր առնու զարծաթն։ Բ՛ւ է այս ագահ անպատրուակ առակեալ և հրապարակագոյժ, և է իսկ այնպիսին և նմանիք նորա՝ արհաւիրք և զզուանք ազգի մարդկութեանս։ Բ՛ւ է այս ագահութիւն՝ հիւանդութիւն անհնարին սոսկալի ընդ արեգականմբ. զորմէ հիացեալ գրեաց իմաստուն. "Բ՛ հիւանդութիւն չար, զոր տեսի 'ի ներքոյ արեգական. մեծութիւնք պահեալք 'ի չար տեառն իւրոյ..։

Բ՛անզի առաջին պէտք և կիրառութիւն արծաթոյն է վասն անձանց մերոց՝ 'ի ընուլ պարկեշտութեամբ զպիտոյս բնութեան, և չափու ուշ ունել վայելչութեան վիճակի կենացն, որ ըստ զարմին, որ ըստ հանգամանացն, որ ըստ աստիճանի իշխանութեանն։ Բ՛այս է վարել և 'ի կիր առնուլ զինչս իրաւամբք և արդարութեամբ։

Բ՛այլ կամիլ կեանս վարել թշուառ 'ի լիութեան գոյից, քաղց ունել և ժուժալ, ծարաւել և տանջիլ, զգենուլ ցնցոտին և թաքթաքուր ծածկել զանձն 'ի մարդկանէ, զի մի ինչ յանկարծ նուազեսցի 'ի քսակէն, և յընկերութեան իբրու կենդանի անկենդան թաքթափել, և բերկրիլ ոչ յայլ ինչ՝ բայց 'ի հաշուել 'ի հանարել զամուլն զայն և զանպիտանացուն արծաթ, և երկնչիլ 'ի վար առնուլ զայն՝ իբրու խիթալով 'ի կորուսանել. այս է տիրապէս ագահութիւնն անիծեալ,

digitised by A.R.A.R.@

և այս է անիրաւութիւն անհնարին՝ զոր միանգամ մարթասցի մարդ անիրաւել ընդդէմ անձին իւրոյ։

Բայց է մարտ գնել կռուել ընդ ամենեսեանս խորհուրդ երկնաւոր տեսչութեանն. որում չէ այլ նպատակ յանկաւոր մատակարարութեան ժամանակէիցս, քան եթէ կիրառութիւն նոցուն։

Բաւական անմտութեանն որ ընդ անձին ոգորիցի. և որ անձին ոխերիմ թշնամի է, զիարդ այնպիսին այլում բարի լինիցի երբէք. "Որ անձին իւրում չար է, ասէ, ո՞ւմ այլ լինիցի բարի"։

Այլ որ իւրում անձինն նախանձեսցի զբարին, և ո՞ զբ յաշխարհի վատթարագոյն իցէ քան զնա. որպէս ինքեաց աստուածային գիրն, եթէ "Որ անձին նախանձի, չէք ինչ չար քան զայնպիսին"։

Թշնամի ոխերիմաւ հասարակ մարդկութեանս հանդիսացեալ է հրեշն այն մարդկեղէն, յորմէ հետէ թշնամի ընդդէմ կքրեցաւ անձին։ Այնթէ մեծատուն ես, փախիր յայնպիսւոյն. քանզի անշուշտ նա զակն իւր յառեալ է 'ի մեծութիւնս քո, եթէ շորթել ինչ մարթասցի երբէք։ Այնթէ աղքատ իցես, փախիր դարձեալ յայնպիսւոյն. քանզի եթէ երբէք 'ի ձեռս անկցիս, անշուշտ հպատահարութեամբն խնդրեսցէ կորզել ինչ մի և 'ի քէն։ Իսկ եթէ պարկեշտացեալ վայելես դու 'ի գոյս քո, զգոյշ լեր 'ի նմանէ, գուցէ դառն դատաւոր և հալածիչ չարարուեստ ունիցիս զնա քեզ։

Ոչիք հնար, եթէ սիրելի ումեք լինիցի այնպիսի այր, բայց եթէ իւրոց ժառանգաց։ Բայց բարուց հրեշաւոր սոսկալի, ո՞ երբէք կարծէր գտանել երբէք 'ի քնութեան մարդկան, եթէ արդարև չէին յաշխարհի ադահք։ Այլ եթէ անիրաւի մարդ յանձն իւր, յորժամ 'ի կիր չառնու զարծաթն ագահութեամբն, ոչ ինչ նուազ անիրաւեսցի և նա՝ որ ընդ վայր վատնեսցէ զարծաթն շռայլութեամբն։

Ո՛վ, քանի՞ օտարոտի և այլանդակ կիրք իցեն, յորժամ տեսցես դու յաշխարհի զմարդիկ որ զկէսն կենաց իւրեանց ծախեսցեն 'ի հարստանալ՝ կործանմամբ այլոց, զկէսն այլ ծախեսցեն 'ի կործանել անձամբ զանձինս։ Ոչ կարեն ոչ սիրել զարծաթն. խնդրեն զնա, Ինչն զամենայն թափեն 'ի կուտել ժողովել զնա. բայց

digitised by A.R.A.R.@

այն ինչ կուտեալ՝ ոչ կարէն պահել զնա։ Զոգջիր անշուշտ, եթէ կեան նոքա յերկուց անչափութեանց, միանգամայն և ազահութեամբ և շռայլութեամբ։ Զի առ ինչ նոքա յաղքատութեան այնչափ ձիգն թափեցին 'ի մեծանալ. արդեօք զի անդրէն փութով անկցին 'ի թշուառութիւն աղքատութեանն՝ վատնելով զսրծաթն։

Օ ինչ է շռայլութիւն, բայց չարաչար կիրառութիւն արծաթոյն. և է այնչափ երկիւղալի և լի վտանգօք, որչափ և ծածկեալ կայ ընդ քողով առաքինութեան։ Զանգի շռայլէ, իբրու եթէ առատաձեռնեսցէ. և կարծի առատաձեռն, այլ արդեամբք անիրաւի առ անձն, բաղում անգամ և առ այլս։ Զցահութիւնն ձկտի միայն 'ի պահել. շռայլութիւնն չդադարէ 'ի ցրուել։ Այժ է նա անձնասպան, հուր է՝ ձարակին իւրոյ ծախիչ, յորձեռանդն պղպջակ ջրոյ, որչափ ուռնու և լայնի՝ այնչափ փութով պայթի և կորնչի։

Զբիւրք երրակի են շռայլութեանն, Խաղն, Ընժուժկալութիւն և Եղխութիւն։ Ընտանեաց ագահութեան և մայր յուսահատութեան է խաղն։ Ընտանեաց հեշտասիրութեանն և մայր թշուառութեան է անժուժկալութիւնն։ Իսկ զեղխութիւն յառաջ գայ յոնայնասիրութենէն և 'ի փափկութենէն, և ընդ ձանապարհ լայնարձակ և ծաղկաստիս՝ ածեալ տանի 'ի կորուստ և յօրհաս դառնութեան։ Զի են այսոքիկ երրակի չարաչար կիրառութիւնք արծաթոյն, յորս վարակի շռայլութիւնն. և երրեակ անիրաւութիւնք մեծամեծք, զոր անիրաւի այր մեծատուն ընդդէմ անձին։

Զրդ առաջին՝ է իսկ խաղն ծով իմն անյատակ, ոչ ոչ չիք և ամն. այն ինչ մնեալ մեր 'ի նա, և անդէն յաչաց մերոց անհետանայ նաւահանդիստն, և դուն ուրեք յաքնղեացի մեզ միւսանգամ տեսանել զնա։ Հոգին այն ուժգին՝ որ վարէ տանի, ցանգ մրրիկ է մանդեղին. որ խեղայ ծփումն տայ և ծանօթութեան անձին քօղ ածէ, մինչև 'ի մոռացօնս դարձուցանել մեզ ոչ զմեր զարմն միայն և զդէրդատան և զմեր շուք սպատուոյն, այլ և մոռացուցանել մեզ՝ եթէ իցեմք մարդիկ։

Զեթէ 'ի խաղուն յաղթէն և շահին, անմոռաբար

digitised by A.R.A.R.@

վատնողութեամբն անդէն 'ի շահելոցն ծախեն բազմա-
գոյն մասամբն։ Այսպա եթէ յաղթին և կորուսանեն,
այնուհետև վտանգ 'ի վերայ կայ առ հասարակ ստա-
ցուածոցն։ Սակ դաշտ պատերազմի խաղուն՝ լի է ան-
կելովքն, որք միանգամ յօրհաս մահուն մնատեալ ի-
ցեն, և որք արդէն դիտապատ անկեալ կայցեն։

Այսպա եթէ միւսանգամ կորուսանեն, 'ի խնդիր եղա-
նեն այնուհետև նորոգ ստացուածոց, 'ի վաճառ հանել
խաղուն և միւսանգամ կորուսանել։ Սան յայնժամ՝
առաջի կան վաշխառուք և սեղանաւորք ձեռն տալ նո-
ցա և թիկունս, մինչև 'ի սպառ կործանեսցեն զնոսա։

Սաբէ մորոսութեանն, քանիսն իցէ մոլեգնութիւնն.
'ի միում միայն գիշերի կորուսանել առաւել քան զոր
ստացեալն ունին։ Սի միում միայն վայրկենի՝ դիմագրաւ
վտանգել գքիրսն և զաշխատութիւն զհարիւր ամաց.
մատն լինել, և միանգամայն եթէ զինչս, եթէ զան-
դորրութիւն, եթէ և զկեանս նենգել զկանանց, և
զաղայոց անմեղաց։ Այդ եթէ չիցէ այս վերջինն 'ի
մեծաց անիրաւութեանց, ոչ անմտութեամբ միայն 'ի
կիր առնուլ զհարստութիւնն, այլ և ամբարշտու-
թեամբ, զինչ այլ, տեարք, պարտ իցէ կոչել զայս։

Այլ սակայն դժնդակ և սիրելիք, կիրք անժուժ
կալութեանն՝ յոր վարակի շռայլութիւնն։ Սակաւք են
որ 'ի խաղս թարթափեսցին, մինչև 'ի սպառ 'ի կործա-
նիլ. այլ անժուժկալութիւնն հասարակ է ամենայն
հասակի, ամենայն սերիցն, ամենայն վիճակի։ Սա է
ժայռն, ահեղն այն և երևելի յոր նաւաբեկեալ կորըն-
չին. ժայռ հաւասար ահագին՝ և մարդոյ թարթափելոյ
և զբաղելոյ 'ի բազմապատիկ գործառնութիւնս, և մար-
դոյ անդորրացելոյ 'ի խաղաղ և 'ի բերկրական կեանս։

Սկը անկակից բնաւորեալ է 'ի մարդումն, սիրտ ու-
նին մարդիկ առ 'ի սիրել։ Այլ կրօնք և քաղաքակա-
նութիւն՝ միջնորդս իմն օրինաւորս սահմանեցին 'ի չա-
փու և 'ի կարգի պահել զսէր զայս. և են այս՝ սուրբ
և անդրժելի կապանք ամուսնական կարգին։ Այլ ոգի
ապերասան ազատութեան, և յողջոյղութիւն կա-
մաց մարդոյ և հեշտախտութիւն, որոյ չիք ոչ չափ և ոչ
սահման, կամ՝ յանձն չառնու հպատակել կապանաց
սրբութեան, կամ թէ արհամարհէ և՝ զի օտարս իմն

digitised by A.R.A.R.@

սոյլ միջնորդս փոխանակ սահմանեսցէ։ Լաստի և միան-
գամ գրաւեալ մարդ և գերեալ 'ի հեշտականէն, որչափ
և ազահ իցէ՝ դառնայ և լինի շռայլ։ Լաւ բաբէ, չիք
այնուհետև գանձ յաշխարհի ոչ ոսկւոյ, ոչ արծաթոյ,
որ բաւական երբէք լինիցին։ Պէտք են ծախուց 'ի
հրապուրել և 'ի վարմել. պէտք են ծախուց պահել 'ի
վարմին, պէտք են ծախուց և 'ի հրապուրանաց հաղքան
անփախուստ շաղել։

Վաճառք և տուրեւառք ցանկորդին յայնժամ արգե-
լեալ՝ սիրոյն. 'ի դուրս գան հայրենի ժառանգու-
թիւնք 'ի մթերից պահեստից իւրեանց. հիքանան
տունք և զարմք, աղքատացեալք մնանկանան գերդաս-
տանք, մնանկանան վաճառականք, փակին վաճառա-
տունք և կրպակք։ Իսկ անդուստ, ո՛վ չարեացս, ինք-
նին կորուստն բազմահաւաք արծաթոյն՝ որ զմեղն
մնուցանէ, չդադարէ երբէք, և զսիրտ կորուստին ան-
դրէն ձկտեցուցանէ տարփմամբ 'ի խնդիր նորոգ ոսկւոյն
'ի տածել զնա։

Լի է աշխարհ այսօրինակ շռայլութեամբ արծա-
թոյն. և չիք ոք թերեւս որ 'ի մեղս համարեսցի զվստ-
նել արծաթոյն 'ի չարն, զոր ընկալաւ յԱ՛ստուծոյ 'ի
գործել զբարին։ Լաւ ապա 'ի վերջն հիացմամբ ևս հար-
ցանէն. զիարդ այնպէս կործանեցան նոքա 'ի սպառ, և
ուր երթեալ կուտեցան այնչափ հարստութիւնքն։ Ա՛ւր
այլ, բայց 'ի գոգ անդր ծածուկ ապականութեան վա-
ղուցն և անբանական կրիցն, որում զոհեցին սիրով
զամենայն, և որ աղագաւ յոչ ինչ խնայեցին նոքա։
Ա՛հաւասիկ վիրասն յորում երթեալ կուտեցան մթեր-
քքն՝ ամբարիշտ կիրառութեամբ արծաթոյն։

Իսկ որ 'ի զեղխութենէն շռայլութիւնն է, է եր-
ւորդ անիրաւութիւնն զոր անիրաւի այր հարուստ։
Հարստացաւ երբէք։ Պարտ է ուրեմն, ասէ, վայելել։
Լաւ անդէն գտանեսցի միանգամայն յամենայն իսկ
վայելս տարապայմանս. խնդրէ լրումն տալ ամենայն
ցանկութեանցն՝ որ ծնունդք են անչափական սիրոյն առ
անձն, առ անձնդիւրութիւնն, առ փափկասուն և
բերկրական կեանն։ Օ արդք տան նորա, կահք կա-
բասիք հրաշակերտք, հետաքնինք. հանդերձանք և
կազմութիւնք սեղանոյն՝ մեծագործք. պալատք հա-

digitised by A.R.A.R.@

բուստք քան զտաճարս հոյակապս. թիւ ընտանեացն և սպասեկացն՝ բազմահոյլ և 'ի վեր քան զբաւակա-նութիւն ձեռինն, սփոփութիւնք բազմադէմք, զբօ-սանք հանապազօրեայք, պերճութիւնք անձնացոյցք. 'ի հանդերձս երևելիս շրջել, նախագնացքն 'ի հրապա-րակս, դահագլուխք 'ի բազմականս, բարձերէցք 'ի խրախճանս։

Ահաւասիկ քեզ գեղեցիկ կիրառութիւն հարստու-թեանն. ահաւասիկ ամբարտաւանութիւն զեղխու-թեանն, որ առաթուր հարկանէ զաղքատութիւնն Քրիստոսի, և զվշտմբերութիւն նորա. և ողջոյն զա-ւետարանն արհամարհեալ՝ թշնամանէ զկեանս աղքա-տաց. ուստի և անարգեալ և անիծեալ յԱստուծոյ տեսանեմք զնա յաստուածային դիրսն։

Այլ մեծապէս զարմանայիս, սիրելի։ Այս այս զեղխու-թիւն է, որ աղագաւ և քանքարտան այսօր այնչափ մարդիկ, եթէ աղքատք են 'ի լիութեան իւրեանց. և որ աղագաւ այնչափ բազմագանձ հարստութիւնք հայ-բենի ժառանգութեանցն չեն նոցա բաւական։ Այս այս զեղխութիւն է՝ որ շփոթեալ խառնակէ այսօր զվիճակ կենաց ընկերութեանն. և որ աղագաւ չնարթիմք մեք որոշել զաղնուականն՝ 'ի սոկականաց, զբարեկեցիկ քաղաքացիսն՝ յարուեստաւորաց, զմեծատունսն՝ յաղ-քատաց։

Քանզի նախանձաւորութիւն նմանողութեանն և ամբարտաւանութիւնն առ հասարակ տիրացեալ, թուի իմն բազմաձարակ ախտ հիւանդութեան ժամանակիս մերոյ։ Քանզի քան զպէտսն նախապատիւ է 'ի կար-գի՝ ունայնասիրութիւնն. և հանդերձք երևելիք և գոռոզք՝ հանարեալ են իբրու կարևորք 'ի պէտս կենաց։ Կեանք մեր գլխովին իբրև հարկատուք ներքևեալք ընկճեալ կան 'ի պատճառս անձնացոյց կրքին, և հար-կապահանջքն մեք ինքնին եմք բռնակալք անիրաւու-թեան հարկին։

Զի դու տուր միանգամ՝ տկար անօթոցն 'ի ձեռս պաճուճանս, սեթևեթս զարդուց, և հիւսս, բայց ծանրագինս. և նոքա այնուհետև լուռք և գոհք՝ շա-տասցին նա և ընդ հայրիկն և ընդ դուշնաբեայ ճա-շիկն 'ի պարէն։ Այլ եթէ չիմանան և դատապարտ ես

digitised by A.R.A.R.@

չառնեն և նոքա զայնչափ մորոսութիւնն. այլ խմենան քաջ և դատապարտեն 'ի միտս, սակայն և չդադարին 'ի բաց կալ. ընտրեն առաւել ուտել առանձինն աղքատաբար, զի մի թերևս արտաքոյ կարծեացին լինել աղքատք։ Այսին զի բնութիւնն ինքնին ընկճեալ տեղի տացէ կարծեացն, և սովուն և քաղցուն ժուժան տանին. և ընդ հովանեաւ միայն առ երևոյթ շքոյն և պայծառութեանն՝ զոհք են և անդորր սրտիւ։

Արդ աղէ ասացէք, այս ինչ արժանաւոր և գեղեցիկ կիրառութիւն բարեացն՝ զոր առաքէ մեզ Աստուած։ Ոչ տեսանէ, զի այդօրինակ վատնել գոյիցն զլխովին իսկ անիրաւութիւն է առ անձն, անիրաւութիւն է առ պարգևատուն Աստուած։ Արծաթ և ոսկի տայ Աստուած 'ի պէտս կարեաց բնութեանս, նաև 'ի վայելչութիւն վիճակին կենաց. ոչ առ 'ի ժողովել կուտել անպէտ յարկեղ իբրու զգահս, և ոչ դարձեալ յանարժանս և յանօրինաւորս վատնել իբրու զշռայլս և զփափկակեացս։

Այլ արդ լուայք, սիրելիք, եթէ արդարութեամբ վարել զարծաթն 'ի պէտս անձին, այս է առաջին գեղեցիկ կիրառութիւն հարստութեանն. իսկ և վարել զայն 'ի պէտս այլոց և հաղորդական լինել ըստ օրինաց սիրոյն, այն ինքն երկրորդն՝ զոր լուիջիք 'ի մեծոց, վայր մի հանգիստ առեալ։

ՄԱՄՆ Բ.

Լուեալ իսկ է մեր և ձեր բազում անգամ 'ի բերանոյ սուսկականաց որերոյն զհանապազօրեայ զյանկութիւն նոցա 'ի մեծանալ։ Այլ առ ինչ արդեօք. միայն զի 'ի թիկունս, ասեն, հասցուք մեք կարօտելոյն։ Իսկ թէ, յոգւոց հանեն նոքա ստէպ, իսկ թէ մեծատուն լեալ էր մեր, և յայնժամ տեսանէր աշխարհ. եթէ քանի դիւրապատրաստ հանդիսացեալ է մեր 'ի կերակրել զբաղցեալս, զգեցուցանել զմերկս, սփոփել արդեամբք զվշտալիսն, յոտին կացուցանել զդերդաստանս հիւծացեալս և զգայթ 'ի գայթ զկացեալսն. և ըստ բաւականի ձեռին մերոյ՝ երջանիկ յարդարել զամենայն մարդ։

digitised by A.R.A.R.@

Այս ցանկութիւն է նոցա . սակայն և ցանկալի է՝ զի որք այսպէսն խորհին , ոչ երբէք մեծասցին . թող այնպէս կացցեն մնասցեն նոքա միշտ 'ի բարիոք ցանկութեան բարեգործութեանն , և վայելեսցեն գոնեա յարգասիս բարեբաւութեան կամացն . սակայն մեծասցին մի։ Զանգի 'ի հանապազորդեան փորձոյ քաջ իսկ խելամուտ եմք , զի այն ինչ հարստացեալ միոյ ուրուք յայնպիսեաց անտի , առաջին՝ զոր նոքա անդէն 'ի մոռացօնս դարձուցանեն , այն է . տուրք կարօտելոց։

Օ ինչ արդեօք պատճառքն իցեն դժպատեհ կրիցն, քաջայայտ է . զի որչափ առաւել աճեն մեծութիւնք , այնչափ առաւել լայնասահման ձգին կարիք մտացածինք պիտոյից կենաց . և որ յաղքատութեան իւրում գոհացեալ շատանայր միայն օրապահիկ հացիւն , 'ի լիութեան իւրում և 'ի հարստութեանն՝ ոչ շատանայ նաև բազմախորտիկ կերակրովք . "Ասկի և արծաթ , ՀՀզբրտաբանէր Ասկեբերան , ոսկի և արծաթ ըստ չափուն որով աճէ , տայ աճել և ցանկութեանն . որչափ առաւել ստանայ ոք , այնչափ առաւել պէտս գտանէ ստանալոյ , 'ի լիութեան իւրում մուրիկ լինի , և մեծութիւնն ինքնին զաղքատութեանն ունի զտեղի .,։ Օնոյն գեղեցիկս և մեծն Աբգոստինոս . "Կարօտին , ասէ , առաւել , որչափ ունին առաւել . չէ այդ ուրեմն մեծութիւն , քան թէ մուրողութիւն . զի որչափ առաւել լիացեալք են , այնչափ առաւել անինչք են .,։

Այլ արդ , աղէ ասա , յայդ վիճակ մտախաբ , յայդ խորհուրդս դժպատեհս , յայդ կիրս ծիծաղելիս , կիրք՝ միանգամայն և հարստութեան և կարօտութեան , զիարդ երբէք մարթ իցէ նոցա յուշ ածել զայլոցն կարօտութիւն։

Դիտասջիք զի և ոչ դուշնաքեայ ինչ համարեսցին այնպիսիքն , եթէ երբէք յաջողեսցին շորթել յայլոց նաև զդուշնաքեայն զոր ունին նոքա։ Ո՞չ բազմահարուստ էր Աբայաբ , ո՞չ և թագաւոր . և զիարդ չմարթացաւ նա յանդորրու կեալ , մինչև ոչ շորթեաց 'ի Նաբովթայ զայգին , զոր ժառանգէր աղքատն։

Այլ անշուշտ , սիրելիք , այս սուտ և կեղծ մուրողութիւն մեծատանցդ , և այս անհաղորդական այլոց լինել 'ի մեծութեանցն հակառակ քրիստոնէական սիրոյն , և

digitised by A.R.A.R.@

միայնակ առանձին վայելել 'ի նոսա. այս միայն անհնարին յանցանք էն նոցա. և ըստ նմանէն՝ պատճառք ահագին և անսեթեթի պատուհասին։

Յառաջ կացցէ առաքելական սրբութեան. ահաւասիկ ձեզ այր ոմն մեծատուն յեղակարծումն 'ի գիշերի շանթահարեալ յԱստուծոյ. և ոչ վայրկեան մի ժամանակի թողաւ նմա յերկնաւոր ողորմութենէն՝ վասն փրկաւէտ ապաշխարութեան։ Օ տիւն նա 'ի տունջեան ձոխ և բազմահարուստ, և 'ի նմին իսկ 'ի գիշերի դիակ նացեալ յանկողնի և դատապարտեալ 'ի դժոխս. "Ընդ միտ, յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջեսցեն"։ Զինչ արդեօք էին յանցանքն, որ աղագաւ ահագին և յանկարծահաս պատուհասն։ Վերեւս զի մեծատունն էր. և ոչ բնաւ. քանզի է իսկ մարթ լինել մեծատուն, և չլինել յանցաւոր։ Իսկ թերեւս զի անիրաւութեամբք կուտեաց ժողովեաց զմեծութիւնն. և ոչ բնաւ։ Օ 'ի չգիտեմք իսկ եթէ գողացաւ ինչ նա կամ շորթեաց, կամ զարծաթ իւր անիրաւ տոկոսեաւք 'ի վարձու ետ, կամ թէ զվարձս ծառայիցն զլացաւ, և զնչական զրկեաց յարծաթոյն։ Յայսպիսեաց աստի ոչ ինչ ասաց տերն. այլ թէ աստուածատուրքն էին բարիքն, բնութիւնն առատաձեռնեաց նմա. "Լատուն նմա, ասէ, անդք տոհմական"։ Օ այս միայն գիտեմք, զի "Լսորհէր նա 'ի սրտի իւրում և ասէր. զինչ արարիցս, զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցիցս զարդիւնս իմ. գիտեմ զինչ արարիցս. քակեցիցս զշտեմարանս իմ և ևս մեծամեծս շինեցիցս, և անդր ժողովեցիցս զցորեանն և զամենայն բարութիւնս իմ"։ Օ ցորեանն առատ, զոր ետ Աստուած, ժողովէս այր դուվասն անձին միայն։ Զոյ, խնդրեր մթերել 'ի մեծամեծ շտեմարանսն զցորեանն՝ զառաջին պարէնն հասարակաց կենաց, և զամենայն բարութիւնսն իւր վասն անձին առանձին. և ամիսիսեալ ծածկել զայն յաչաց աղքատաց և կարօտելոց։ Զայլ ծածկել զցորեանն 'ի կարօտելոց, այն միայն էն անհնարին մեղք, քանզի նշաւակ է անիծիցն Աստուծոյ, նշաւակ է անիծից ժողովրդեանն. "Որ ծածկէ զցորեան, պատգամ է աստուածային, որ ծածկէ զցորեան, անիծեալ լիցի 'ի ժողովուրդս"։ Գիտեմք և զայն, զի յղփացեալ լիա-

digitised by A.R.A.R.@

ցեալ 'ի մեծութեանն, խորհեցաւ ինքնին միայնակ առանձին վայելել 'ի բարին, քանզի ասէր ցանձն իւր. "Ընձն, ունիս բազում բարութիւնս համբարեալ ամս բազմաց.,. ահա ժամ, ահա ժամանակ քեզ անձն իմ, ընդունելի անդորրաւէտ կենաց, 'ի կերակուր, յըմբելի, 'ի զրգանս, 'ի սիրտութիւնս զբօսանաց. զի փոյթ քեզ, եթէ այլք սովեսցին, թող այր այր վասն անձին հոգասցի. "Դու անձն իմ, հանգիր, կեր, արբ, և ուրախ լեր.,. Ոչ ինչ այլ ասաց աւելի, ոչ ինչ այլ գործեաց 'ի դժոխակաց. և այս միայն եղեն նորա անհնարին յանցանքն. և նորին աղագաւ ձգեաց յանձն զաստուածասաստ վրէժինդրութիւնն յահագին պատուհասին. կորուսեալ միանգամայն 'ի միում գիշերի և զհարստութիւնն և զհոգին և զԱստուած. "Ընմիտ, յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջեսցեն, իսկ զոր պատրաստեցերն, ո՞ւմ լինիցի.,.

Օ՜նոյն պատուհաս, յաւելու աստուածային բերանն, զնոյն պատուհաս ասէ, կրեսցեն և առ հասարակ մեծատունք. որ վասն անձանց միայն կամիցին մեծանալ, 'ի մուացնս դարձուցեալ զընկերին կարօտութիւն. "Այսպէս, ասէ, և որ գանձէ անձին, և ոչ Աստուած մեծանայցէ.,, գանձելով և ընկերին։

Բ՜ուդ վարել զմեծութիւնն և 'ի պէտս ընկերին, պարտք են անհրաժեշտք մեծատանն. սակայն չէ շատ. հարկ է վարել և ըստ կանոնաց և օրինաց քրիստոնական սիրոյն։ Բ՜անզի մարթ է վարել զարծաթն 'ի պէտս ինչ ընկերին, և միանգամայն մեծապէս յանցանել նոր վին իսկ գործոնէն, յորում ինդայ և կարծէ բարեգործ հանդիսանալ առ եղբայրն և առատաձեռն։

Բ՜աջ իսկ դուք ինքնին գիտէք սիրելիք, քանի՞ ամ բարշտութիւն իցէ վարել զոսկին 'ի հրապուրել և տալ այլոց գործել զչար։ Ոչ զոսկին ընդ ոտն արկանել առաջի առաքինեացն, ժուժկալացն, և պարկեշտիցն. ընդոտնել ոսկւով զարդարութիւն, ապականել ոսկւով զմիտս ատենակալացն, զդատաւորացն, զփաստաբանիցն. 'ի զօրավիճն ոսկւոյն այժ և թիկունս տալ կուսակցութեան չարաց յանիրաւութիւնս. առաթուր ընդ ոսկւոնէն կոխել և 'ի դերեւս հանել զիրաւունս ազքատին և զդատաստան որբոյն։ Ո՞է այս վարել զարծաթն 'ի

digitised by A.R.A.R.@

պէտս և 'ի կեանս ընկերին, այլ 'ի մահ։ Զինչ ևս ամբարշտագոյն կայցէ քան զայն՝ մեղանչել 'ի տուրսն Աստուծոյ, մեղանչել 'ի պարգևատուն, մեղանչել յանձն, և տալ մեղանչել և այլոց։

Պարձեալ չարաչար վարել է արծաթով, սիրելով զայն 'ի գոգ մարդոյն, որ անարժան է այնմ. առանց չափոյ, առանց ընտրութեան, և ընդ բեռամբ ծանրիլ պարտուց, զոր և չմարթասցի երբէք հատուցանել, և առնուլ 'ի միոյն զարծաթն, զի տացէ միւսումն։

Չարաչար վարել է արծաթով յորժամ նովաւ տաւ ծիցէ զկիրս զպարապորդ մարդկանն, զմարդելուզացն, զհացկատակացն. և թիկունս տալ և յոտին պահել զիսումբ անառակ որերոյն, զի իբրև բարեգործ համբաւեսցի առ մարդիկ և առատաձեռն։ Այս ապա զայսօրինակ վարել զարծաթն վասն այլոց, ոչ անարգութիւն միայն է մեծատանն, այլ միանգամայն և կորուստ և կործանումն՝ և անձին և այլոց։

Կամիցիք, ո՛ մեծատունք, կամիցիք գեղեցիկս վարել մեծութեամբքդ, և գանձել անձանց գանձ զարդարութեան և զսրբութեան. պատսպարան լերուք տկարաց, տուք զարծաթն, սիրեցէք զոսկին, ուր յարգեսցին դոքա 'ի ձեր փառս, յօգուտ քաղաքին, 'ի շինութիւն հասարակաց։ Օգնեցուցէք զձեռս Ճարտարագիւտ մարդկանն, որ հիւանդացեալքն են և անձեռնհասք առ կարօտութեանն՝ 'ի մշակել զհնարագիտութիւնս և զարուեստս իւրեանց կենցաղոգուստս աշխարհի։ Ամբեցէք, տուք զարծաթն 'ի Ճարակ, տածեցէք զհանճար և զիմաստութիւն զգիտնականացն, որ առ աղքատութեանն չմարթին յերևան գալ աշխարհի վարժիւքն իւրեանց և մատենիւքն. լերուք Եկեղեցաբ հոյակապք։

Կամիցիք գեղեցիկս վարել մեծութեամբքդ, սրբեցէք զարտասուս յաչաց բազմահոյլ աղքատաց, որ առ 'ի հարկէն միայն ստիպեալք՝ 'ի վտանգի կան դրժել իւրեանց խղճին և անձանց փրկութեան։ Սրբեցէք զարտասուս զբազմաց որբոց, որ անպատսպարք չունին զոք ապաւէն։ Տուք զարծաթն 'ի զօրավիգն հիւանդաց, որ անբաժքն են յամենայն օգնականութենէ։ Գութ արկէք, կանգնեցէք զգերդաստանս, որ տուայ-

digitised by A.R.A.R.@

տեսլէ Հաշին 'ի կարօտութեան։ Ի խնդիր եղէք վըշ-
տամբերիցն, ողբ 'ի բանտս, ողբ յանկելանոցս, ողբ
յանկիւնս փողոցաց, ողբ 'ի տունս տունս սգոյ և կո-
ծոյ, ուր արգելեալք փակեալք կան նոքա անտեսք,
աներևոյթք առ ամենայն։ Այրտք ձեր աղէկեզ, կա-
րեկից ընդարձակեսցին, և ձեռք ձեր պարզեսցին 'ի
խնդացուցանել զնա. "Ոչ լինիցի ձեզ պատճառ չարի՝
մեծութիւնդ, քաջալերեք զձեզ Տնորհալին սուրբ,
եթէ կամիցիք արդարութեամբ վարել զդա, այլ մնա-
ւանդ բարւոյ առիթ լինի ըստ իմաստնոյն՝ զի ասէ,
թէ "Վրկանք առն մեծութիւն իւր"։

Լուսեպէտ և 'ի մտմտնայէ անիրաւութեան, արարէք
ձեզ բարեկամս. արարէք ձեզ յանձինս աղքատաց՝
փաստաբանս առ Աստուծոյ և պաշտպանս և ջատա-
գովս. և մեծութիւնքդ ձեր եղիցին ձեզ շահաբերք
իբրև անդք տոհմականօք հարիւրապատիկ։ "Աբար
Աստուած, զիարդ քաջիկ հրահանգէ Ներսէն ոսկի,
արար Աստուած զմեծատունս, զի սիրեսցին աղ-
քատք. արար Աստուած և աղքատս, զի փրկութեան
հասանիցեն մեծատունք՝ բարիոք վարելով մեծու-
թեամբքն"։

Աւլ բա՛ռ, քանիք ոմանք 'ի մեծատանցն զնոյն օ-
րինակ վարեսցին։ Ցուազունք, նուազունք յոյժ, սիրե-
լիք. և նորին աղագաւ լինել մեծատուն, աւա՜ղ կրիցն,
լինել մեծատուն և միանգամայն լինել անարգեալ
յԱստուծոյ, գոգցես նոյն իմաստ է յաւետարանին
Քրիստոսի։ Այս զիարդ ապա մարթի իցէ ձեզ, ո՛ մեծա-
տունք, սանձել զարտասուս. և ոչ մանաւանդ ողբալ 'ի
լիութեան ձերում, և հայել 'ի հարստութիւն գան-
ձուդ՝ իբրու 'ի քար փորձաքար զոր ետ ձեզ Աստուած։

Քանզի եկեսցէ անշուշտ համար խնդրել զարծա-
թոյն, և վա՛յ է ձեզ եթէ չվարեցայք նովաւ ըստ պա-
տուիրանի աւետարանին, եթէ "Տուք ողորմութիւն,
և ահա ամենայն ինչ սուրբ է ձեր"։ Մեծութիւնքդ
ձեր ինքնին վկայք և բողոքարկուք կացցեն ձերոյ խըս-
տասրտութեան առ աղքատս, և առիթ սկզբնաւորեն
դատապարտութեան ձերոյ։

Բա՛ռ է, դժոխք լի են մեծատամբք, և զիարդ քրիս-
տոնեայք ցանկան հանապազ լինել մեծատունք։ Բա-

digitised by A.R.A.R.@

նիւն իցէ անմիաբանութիւնն ընդ հաւատալ մեր և ընդ գործել։

Այլ աղէ մեծատունք, մարթ է ձեզ միաբանել զհաւատն ընդ գործոյն, զփրկութիւն ձեր ընդ արժանաթոյն, և մի դժուարամուտ լինել յարքայութիւնն։ Զեզ աւադիկ դարձեալ քաջալերս սուրբն, Շ նորհալին հայրապետ. "Օ՛ի թէպէտ և, ասէ, Քրիստոս դժուարաւ ասաց մեծատանց յարքայութիւն երկնից մտանել, ըստ օրինակի ուղտոյ ընդ ծակ ասղան, այլ է թէ զմեծութիւն ձեր ըստ կամացն Աստուծոյ 'ի գործ արկանէք, դժուարինն ձեզ դիւրին լինիցի"։ Եթէ բաժանորդք քսակին արասջիք ձեզ զաղքատս, եթէ ուղղոյն ձեր հորդորս յարքայութիւն առջիք ձեզ զաղքատս. քանզի նոյն աստուածային բերանն որ դժուարամուտ զմեծատունն ասաց յարքայութիւն, նոյն վճռեաց և առ աղքատասէր մեծատունն, եթէ "Ա՛յսօր եղև փրկութիւն տանս այսմիկ"։

Ընդ սարայք սիրով, և զմիմեանց բեռն բարձէք ըստ առաքելոյն։ Բեռն աղքատին՝ է նորայն կարօտութիւն. բեռն մեծատանցդ՝ է ձերդ յղփութիւն. չունի աղքատն զբաւականն 'ի կեալ, ունիք մեծատունքդ առաւել քան զբաւականն 'ի կեալ. "Բեռն աղքատութեան, որպէս ասէր աստուածայինն Աւգոստինոս, ոչ ունելն. բեռն հարստութեան՝ առաւել քան զպիտոյն ունելն"։ Միմիեալ զաղքատն 'ի կարիս փոքրոգի արարէք զբեռն նորա, փոքրոգի համանգամայն յարդարեսջիք և զձերն։ Արձէք զբեռն կարօտութեան որ տանջէ զաղքատն. բարձցէ աղքատն զբեռն լիութեան՝ որ ընկձէ զձեզ։

Ձիք ձեր այլ ձանապարհ հաւասարութեան, և չիք ձեր այլ ձանապարհ փրկութեան։ Պատապարտեալ կան մեծատունք բազմագոյնք թուով. առ իսկ. ոչ զի մեծատունք էին, այլ զի չարաչար վարեցան մեծութիւնքն։

Պարել զարծաթն վասն անձին արդարութեամբ, վարել զնոյն վասն այլոց՝ ըստ օրինաց սիրոյ աւետարանին, որպէս ցարդ լուայք, ահաւասիկ ձեզ սիրելիք միակ միջնորդ՝ միանգամայն 'ի լինել մեծատուն և 'ի լինել սուրբ։

digitised by A.R.A.R.@

ԳԱՐՈՒՆ ԺԹ.

ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ ԱՌՕՐԷԻՑՍ ԲԱՐԵԱՑ

“ Ունայնութիւն ունայնութեանց , ամենայն ինչ ընդունայն է ,, :

Թ. Էպէտ և անհերկբայաբար 'ի բերանս ամենեցուն իցէ առածն մեծի իմաստնոյն , եթէ “ Ամենայն ինչ ընդունայն է ,, , 'ի վերայ այսր՝ և Ձդրիտ ևս լուսաբանել պարտ է զիմաստ առածին ։

Օ ի եթէ ամենայն որ ինչ յաշխարհի են բարիք՝ ընդունայն են և ունայնութիւն ունայնութեանց , ո՞ւր ապա կացցէ ընկալեալն այն յընդհանուրս՝ բաժանումն բարեաց՝ 'ի բարիս բնութեան և 'ի բարիս բախտին ։ Եթէ ընդունայն են , զի՞ ևս կոչեսցին բարիք . և եթէ կոչին , ի՞նչ չիցեն այնպիսիք ։

Պարձեալ՝ զի՞ է զի յընդհանուրս արդոյք են և սքանչելի , շուք և վարկ , հանձար , բարեվայելչութիւն դիտակի , փառք , մեթերք ոսկւոյ , զարմի պայծառութիւն , բարձի աւագութիւն , տոհմի հնութիւն ։ Զ. սա ուրեմն՝ կամ առ հասարակ մարդիկ բանդագուշեն 'ի յարդ բարեացն , կամ ինքնին բարիքս չեն նշաւակ ձայնիս , “ Ունայնութիւն ունայնութեանց ,, ։

Պարձեալ՝ որք միանգամ բարգաւաճք գտան յերկրաւոր բարիս յաստուածաձիր պարգևացն , ըստ նմանէն պարտապանք են նոքա շնորհակալութք լինել առ պարգևատուն Աստուած ։ Ո՞ւր թողցուք , զի և յորժամ ինքնին Աստուած 'ի տալ զօրէնս ժողովրդեան իւրում , խոստանայ և զգեղումն բարեացս օրինապահացն .

digitised by A.R.A.R.@

և զիսոդ հնար իցէ Աստուծոյ փոխարինել մարդոյ օրէնսապահի զունայնութիւնս. և կամ մարդոյ պարգևառուի ընդդէմ ունել Աստուծոյ վասն ունայնութեան և վասն հողմոյ։ Օ՜ինչ իցէ ապա առածն, «Ամենայն ինչ ընդունայն է»։

Ահաբեկ, քանի՞ դժոխալուր իցէ առածս աշխարհասիրաց և անհանդուրժելի։ Վաղ իսկ և ես ինքնին սպասեալ ինայի, եթէ վաղ ընդ փոյթ զինուորեսցին նոքա ընդդէմ Աշմարտութեանս։ Աշմարտութիւն՝ որ զամենայն քաղցրութեան Աշաւակ կենցաղականացս միանգամայն դառնացուցանէ առածիւն. և հարկեցուցանէ և ես պատգամանն՝ եթէ պարտ է մեզ Աճանաչել և դաւանել եթէ «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է»։ Այլ թէ հարկ է մեզ յանդիմանն լուսոյ Աշմարտութեանս փոխել՝ի պատրանաց մնաց մերոց՝ թէպէտ և դժկամակս, և՝ի բաց զսիրտ մեր քեցել՝ի բերկրականացն՝ թէպէտ և դառնութեամբ սրտի...։

Սակայն մի՞ տագնապիք քրիստոնեայք, չեմք մեք լաւ քան զնախաածնողս մեր. յուշ միանգամ ածէք՝ զի որդիք գոլով նոցա առ հասարակ մեք, զինչ մեծ իցէ և պարտիլս մեր իբրև զԱդամ, և պատրիլս մեր իբրև զԵւայ՝ յերկրաւորաց աստի։ Այս ո՞չ խմաստութիւն մեծ իցէ Աճանաչել զպարտութիւնս մեր, Աճանաչել զպատրանս մեր և գիրկս Աշմարտութեանն արկանել։

Ո՞չ ահա ինքնին և Սողոմոն, որպէս ասաց ոմն յաստուածամերձիցն խմաստնոց, չեկաց երբէք այնչափ խմաստուն, չեկաց երբէք այնչափ երջանիկ, որչափ յորժամ կնքեաց մեզ զառածն մեծ, եթէ ամենայն ինչ ընդունայն է. «Ուրանօ՞ր, ասէ, կարծէք եթէ էին միտք Սողոմոնի՝ յորժամ զայս կնքեաց։ Ա՜արդ էր՝ որ վայելեաց յամենայնն, և սիրեաց զամենայնն. սակայն՝ի վերջ էր քան զմարդ՝ յորժամ զգերմարդկայինն բարբառեցաւ Աշմարտութիւն, եթէ ընդունայն է ամենայն»։

Ա՜ստ որոյ և իմ այսօր, սիրելիք, հանդերձեալ տալ ձեզ՝ իբրև ձեռօք շօշափել զմեծ Աշմարտութիւնն, նախ՝ ձեզ Աշղրտիս զայն եղից առաջի, եթէ բնաւ իսկ ընդունայն են առօրեայ բարիքս. զի ոչ յագեցու-

digitised by A.R.A.R.@

ցանէն։ Չրկրորդ անգամ, եթէ ընդունայն էն և սիրողք նոցա. զի ոչ յագին։ Ընդունայն էն բարիքն. քանզի սին և թափուր էն 'ի ճշմարիտ բարւոյն։ Ընդունայն էն սիրողք նոցա. քանզի զիրկք էն 'ի լիութենէ սրտի. և երբէք 'ի վայելսն՝ չասէն շատ։ Զ ամն որոյ և Խնամանոյն հայրն կանուխ կնքեաց, եթէ "Ընդունայն է ամենայն մարդ մեղի ,,։

Զոր ասա այսմ քաջիկ խելամուտ եղեալ սիրելիք, հարկ իցէ մեզ այնուհետև խնամտութեամբ 'ի խնդիր ելանել առ 'ի գտանել միայն յԱստուած զճշմարիտ բարին, և նովաւ միայն երջանկանալ. քանզի չիք լիութիւն սրտի, մինչ չև ստացեալ զամենաբարին։

ՄԱՍՆ Ա·

Պատգամ առաձիս, թէպէտ և զամենայն առօրեայ բարին ընդունայն կարդաց, այլ ոչ եթէ և չարս. ըստ որում անմտացեալ ոմանք 'ի հերետիկոսաց մոլորեցան ասել։ Զանմտութիւն նոցա 'ի դիմի հարեալ վանեցին հարք. և զոր խնամտութեամբ կնքեցին այս է, եթէ ընդունայն էն ժամանակեայ բարիքս՝ ոչ ըստ ինքեանց, այլ առ համեմատութեամբ երկնաւոր և անանց բարեացն. դարձեալ՝ ընդունայն էն և առ անմտութեամբ մարդկանն, որ անփոյթ զերկնիւքն արարեալ, իբրև երկրաքարշ աստէն միայն խնդրեն մեծանալ։ Զոր օրինակ անարգագոյն յոյժ յայնժամ է ապակի, յոյժամ մերձ պատուական ականցն դնիցես դնա. և անմտագոյն յոյժ յայնժամ է մարդ, յոյժամ ընդ պատուական ականցն դնոց դնեսցէ զապակին։

Այլ ժամանակեայ բարիքս ինքնին միայնակ ոչ բարի էն տիրապէս և ոչ չար. քանզի վասն մարդկան՝ չէն և չկարէն եւս լինել վախճանն վերջին, այլ միջնորդք էն միայն 'ի վախճանն. "Զամենայն ինչ վասն մարդոյ, ասէ ճշմարտութիւնն, այլ մարդ վասն Աստուծոյ ,,։

Զրինակ իմն՝ ոչ վասն արծաթոյ հաստեալ է մարդ, այլ արծաթ վասն մարդոյ, որոյ վերջին վախճանն է միայն Աստուած, ուստի և բանաւոր արարածոյն այն-

digitised by A.R.A.R.@

չափ ինչ օգտէ կամ վնասէ ունել զարծաթ, որչափ ա-
ռաւել 'ի պատճառս արծաթոյն մերձի կամ հեռանայ
մարդ 'ի վերջին վախճանէն։

Օ ինչ օգուտ իցէ, ասէ ասա, ուրն քանդակողին
կամ կկոց ոստայնանկին, յորժամ գործիքն անպիտանք
իցեն գործանին։ Այլ ո՞ր յարուեստագիտացն երբէք
խնդրեսցէ 'ի ձեռս ունել յայնպիսեաց անտի։ Ապէս
և ամենայն արծաթ աշխարհի՝ եթէ վախճանին մար-
դոյ պիտանացու ոչ է, ոչ որ յիմաստուն մարդկանէ
կամ 'ի լաւաց քրիստոնէից խնդրեսցէ երբէք ունել զնա։

Այլ են բանքդ, ասէք դուք ինձ. այլ սակայն այն-
չափ առաւել կարէ մարդ, որչափ առաւել են դանձք.
և որ զարծաթ ունի, զամենայնն ունի։ — Օ՞ ամե-
նայնն։ Ա՛հ, ունիցի թերևս և զիմաստութիւն. ու-
նիցի՞ թերևս և 'ի բարեմասնութեանց հոգւոյն զա-
ռաքինութիւնս կամ զերկինս կամ զյաւիտենակա-
նութիւն։ Այլ եթէ յայսցանէ չունիցի ինչ նա, ո՞ւր
կացցէ՝՝ Ամենայնդ.,, այդ, զոր ունիցի նա։ Ա՛սա դու
ինձ. եթէ որ քեզ 'ի պարգև առաջի առնէր ոսկի բիւրս
քանքարոյ, բայց և 'ի նոյն զայն ինչ ազդ առնէր քեզ,
եթէ առեալ 'ի քեզ զոսկին՝ կորուսցես զկեանսդ, մե՞ծ
ինչ արդեօք զրէիր յայնժամ զպարգևն և առնուիր 'ի
քեզ։ — Ա՛ռ, ասես, և ոչ մերձիլ անգամ կամի 'ի
պարգև այնպիսի. սակայն եթէ չէր ինձ մահհրաւէր
պարգևն, ո՛վ քանի՞ երջանկացեալ էր իմ յայնժամ
յամենայն մասունս բարեաց վայելչութեան կենցա-
ղոյս յայնչափ քանքարաց ոսկւոյն։ — Ա՛ռ է. այլ
ասա ինձ դարձեալ. եթէ այդ ամենայն վայելքդ 'ի
կատարածի առթէին քեզ 'ի վերջն կործանումն ան-
կանդնելի 'ի մշանջենաւոր տուգանս հոգւոյդ, կամէիր
և յայնժամ ընդունել զպարգևն։ Ա՛մբէ, ասես, չէ
պարտ ըստ միոյ միայն դիմացն դատաստան կշռել զի-
բաց՝ որ զինչ և իցէ. մարթ է եթէ մթերք ոսկւոյն
յանդիւտ կորուստն տարցին զստացողն. սակայն և մարթ
է՝ զի եղիցի ոսկիդ այդ սատար փրկութեան հոգւոյ։
Ամն որոյ և դէպքն եթէ յաջող եթէ ձախողակ՝ 'ի
ձեռին մարդոյ կան ըստ վարչութեանն. և ո՞ երբէք
չարչայն ակն կալցի յիւրմէ ձեռանէն...։

Ա՛ստուած է։ Ա՛յլ քո այդպէս ուղիղ դատաւոր կա-

digitised by A.R.A.R.@

ցեալ զիրացդ, և առ ինչ ապա ոչ նովին աչօք հայիս դու և յաղքատութիւն։ Զանգի նաև աղքատութիւնն ինքնին զկէսս առեալ հասոյց յանքոյթ նաւահանգիստ, և զկէսս դարձեալ արկ 'ի նաւաբեկութիւն ողորմելի։ Այս ուրեմն ըստ իմաստիդ այդորիկ կամ նաև աղքատութիւնն ինքնին է բարի, կամ և մեծութիւնքն չեն բարիք։

Բայց և հնարհեմ ես քեզ, եթէ 'ի կարգի բնութեան մեծ ես է մարդոյ յաստուածային բարերարութենէն վիճակել, զի ազբայազուն ծնանիցի քան սոսկական, ազնուական քան ռամիկ, ընչաւէտ քան մուրիկ։ Այլ տարբերութիւնդ այդ պայմանաւ երջանիկ գործէ զմարդ. այս է՝ յորժամ ազբայազունն քաջացի յիշխանութեանն 'ի պատուհասել զմոլութիւնն և 'ի վարձատրել զառաքինութիւնն, յորժամ ազնուականն փոյթ տայցի գեղեցիկ դաստիարակութեան անձին՝ որ ըստ քաղաքի և որ ըստ քրիստոնէական վարժարանի, յորժամ ընչաւէտն 'ի մթերից իւրոց առատութեամբ ջամբեսցէ աղքատայն և կարօտելոց։ Այլ այնպէս ապա 'ի վիճակաց անտի կենայն՝ յորս եդ զնոսա Աստուած, հորդեսցին ճանապարհք եթէ բարւոյն հասարակաց և եթէ փրկութեան անձին առանձին։

Այսպա եթէ իշխանութիւնն վարեսցի 'ի հարստահարել, և ազնուականութիւնն՝ 'ի պերճանալ և եթէ և յամբարտաւանել, և ընչեղութիւնն՝ 'ի զեղխել և 'ի շուայտել. ոչ լաւ ևս էր, ասէ, և բարեվիճակ ևս լինէր վասն քո 'ի խնարհագոյն վիճակ ծնանել քեզ և կեալ, քան եթէ 'ի բարձրութենէն 'ի վայր հոսել հանդերձ խորտակմամբ։ Զանգի "Օ ինչ, ասէ, օգտիցի մարդ, եթէ զաշխարհ ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ..."։

Ո՛վ, քանի իմաստութեամբ ազդեաց մեծն Աստուծոյ. քաջ միտ դիր ո՛ աշխարհի մեծամեծք, "Ընդ դուք, ասէր, վայելողք լաւագոյն բախտին, բայց եթէ իբրև պարտապանք լաւագոյն վարուց։ Այլ զոր օրինակ կամիք դուք, զի ամենայն սպասարկութիւն ձեր լինիցի լաւ, տուն բնակութեան լաւ, սեղան կերակրոյն լաւ, անկողին լաւ, և ամենայնն լաւ, նոյնպէս եթէ այդ ամենայն վայելքդ բերան ունէին, ասէին ձեզ ան-

digitised by A.R.A.R.@

շուշտ, եթէ որպէս դուք կամիք ունել զմեզ լաւ յամենայնի, այսպէս և մեք կամիմք զձեզ տեսարս ունել յամենայնի լաւ։ Իսկ եթէ դուք վատթարասջիք, անդուլ բողոք զձէնջ կալցին առ պարգևատուն Աստուած՝ իբրև զապերախտից. Ցէր աւադիկ դոցա զամենայնն ետուր լաւ. այլ ինքեանք են վատթարք»։

Այսն որոյ և մեծապէս անմտանամք, ասէ, յորժամ զմարդ գոյաւոր տեսեալ՝ անդէն երջանիկ կարդամք անհանձարաբար. զի ոչ տերութիւն գոյիցն առնէ երջանիկ, այլ պէտք գոյիցն և վարչութիւնն. «Զի, ասէ, տեսանեմք անդս արգաւանդահողս և արգասալիրս, և հարցանեմք՝ ոյր իցեն անդքս, լսեմք՝ եթէ այս անուն մարդոյ, և անդէն ձայն կարդամք, Երջանիկ այր։ Զուր կարդամք, ունայն բարբառիմք. Երջանիկ է այր, որոյ Աստուած է նորա»։

Անսուտ է ճշմարտութիւնս. այլ ճշմարտութիւն է սա այնպիսի՝ որ 'ի գործոցն առաւել իմացեալ տեսանի, քան 'ի պատճառացն։ Հապա փոխեսցուք մեք զերազնակն, և 'ի բանից անցցուք 'ի փորձ անդր վարչութեան ժամանակէից բարեացս, և զզինչութիւն սոցա ճշգրիտ ծանիցուք 'ի գործոյ անտի նոցա՝ զոր ներգործեն 'ի սիրոցս և 'ի ստացողս իւրեանց։

Երբ քանզի սեպհական է բարւոյն՝ գոհ և երջանիկ գործել զստացողն իւր, տեսցուք արդ վայր մի անաչառ, իցեն երբեք գոհք և լիացեալք և երանեալք՝ որ միանգամ իբրև երկրաքարշք վայելեն յառօրեայ բարիս յայսոսիկ։

Մենայն՝ որ աստէն զգալի բարիքս՝ 'ի կարգ երրակի բաժանին, այս են Երկրանք, Փառք և Հարստութիւն։ Արդ մեք սեպհական վայելչութեանցն իւրաքանչիւր հասակաց զՀետ երթեալ, տացուք զբերկրանսն երիտասարդաց. զփառս՝ արանց, զՀարստութիւն՝ ծերունեաց։ Երբ սիրելի է ինձ աստանօր զերեցուն այսոցիկ հասակաց զվայելսն վայր մի առաւել մանրամասին ճշգրտել։

Արդ մտեալ մեր 'ի գերդաստան մի, յակն արկանեմք անդանօր որդի անդրանիկ հօր՝ յարբունս հասեալ բախտի հարսին 'ի նորածաղիկ փեսայութեանն, բարետեսիլ անարատ յամենայն 'ի մասունս, առոյգանձն,

digitised by A.R.A.R.@

քաջառողջ, կենցաղասէր, կենակցութեանց փարելի. չիք ոք յերիտասարդաց քաղաքին նմին զուգակից՝ 'ի բանս վայելչութեան, 'ի պատասխանիս խնամտութեան, 'ի զրգռութեան շարժմանց, 'ի ընդհանս գնացից. արագ, յաջողաձեռն, քաջամարդ յամենայն 'ի վարժս ազատ որերոյն. ուր և հասանէ, զարմանս յաձախէ. ո՞ ոք 'ի նա ակնարկէ, անդէն և յանկչի. ընդ ում ունէք և բարբառի, զսիրտն գրաւէ։

Լու ապա նա յայս ամենայն պարգևս բնութեան բերկրեալ զուարձացեալ է զօրհանապազ. երանիս վասն իւր բիւրս լսէ՝ զոր տան հօրն ամենայն ընտանիք, ամենայն բարեկամք, և ողջոյն քաղաքն։ Լ.ՅԼ ՅԵՐԲ այս բերկրանք հանապազորդեսցեն քաջառոյգ երիտասարդիս...։ Լ՝ամբէ. Օ՞ի է զի այնպէս արագավախճանք տեսանին...։ Պ՝նա աւանիկ տխուր կայ...՝ 'ի թախծութեան պաշարեալ է...։ Լ՞ր աղագաւ...։ Պ՝անզի նորա եռանդունն այն և դժուարասանձելի խառնուածն խոչ ընդ մէջ անկեալ՝ դառնացուցանէ՝ 'ի բուն զքաղցրութիւն բերկրանացն։ Լ՝ու նա ստէպ՝ յորժամ դէպքն տան՝ յայնմանէ ձգեալ բերի բարձրայօնս գոռոզանալ, և 'ի սրտմտութիւն ևս հատանի։ Լնքն հաստատեալ է 'ի միտս՝ ոչ զոք ունել իւր զուգական 'ի քաղաքին. սակայն և տեսանէ և լսէ, զի բազումք այն են, որ ոչ զուգահաւասար միայն, այլ և գերագոյն քան զնա համբաւեն զանձինս։

Լ՝ զի և ՀՂՀԻՄ պատուասիրութեամբն կորուսանէ զբարեկամն. և է զի անձամբ կատակաւն տաղտկացուցանէ զընկերութիւնն։ Պ՝երթ քանքարտան զնմանէ, զի լսել չգիտէ. մերթ խածանէն՝ զի խօսել չգիտաց։ Լ.յսօր հատուցումն խնդրէ պատուոյն, վաղիւն պարտաւորի 'ի հատուցանել։ Պ՝ուր և սնդէ զիրաւունս անձին, հակառակորդս գտանէ. ուր և սիրէ՝ նախանձորդ ընդ առաջ ելանէ։

Լ՝ զի ընդ համատիոցն հաւասարեալ հանգանակէ, և շուայտեալ 'ի խօթութիւն անկանի, և այնպէս անցուցանէ զաւուրս բազում։ Լ՝ զի 'ի սէր զովողացն գիշերս բազումս տքնեալ, բազմապատիկ ախտից ներքոյ անկեալ կայ։ Պ՞ուր այն բերկրանքն, ո՞ուր խնդութիւնն սրտի, ո՞ուր զուարթութիւն կերպարանին. քանզ

digitised by A.R.A.R.@

զի և մեղձ դառնութեան պատճառն է։ Լուսոյ և յայնժամ անխորհուրդ բերումն, անհանձար սրտմտութիւնն, անդուռն բերանն, անբանաւոր սպառնալիքն ատելի է նոցա առնելն ընկերութեանն, և տաղտկալի իրում անձին։

Իսկ ապա յինքն ժողովեալ վայրիկ մի միտ դնել անձին, և հաշիւ արարեալ գտանել յինքեանն տգիտութիւն բազում և խելս սակաւ, բարեպաշտութիւն նուազեալ, և անխտրութիւն վարուց յարամբի 'ի ներքս մնեալ. իսկ առ տնին տնտեսութիւնն և գերդաստանին բարեկարգութիւնն 'ի սպառ պակասեալ։ Եւ զայս օրինակ ապա ընդ ամն քսան կամ երեսուն անցանեն գնան աւուրք կենաց երջանիկ երիտասարդիս այսորիկ։ Զհա կատարած բերկրանացն առաջին հասակին . . . ։ Եւ եղէ արդեօք ամենայնն ունայնութիւն ունայնութեանց, ըստ պատգամին Սողոմոնի։

Տեսցուք և զունայնութիւն փառացն։

Օ՜ինչ առ այս պատասխանի արասցեն մեզ արդեօք՝ որ յերկրորդ հասակէն՝ պատուասէրք և փառախնդիրք . . . ։ Որ առաւել խնամատունքն են 'ի նոսա, զայս ասեն. "Կանուխ իսկ խելամուտ լեալ է մեր ունայնասիրութեան անմոռացդ այդոցիկ երիտասարդաց։ Զանզի որ ընդ ճանապարհ ընթանայ բերկրանացն. զառաջինն ոչ այլ ինչ տեսանէ՝ բայց ծաղիկս. այլ ապա 'ի կատարածին ոչ այլ ինչ գտանէ բայց փուշս։ Իսկ ճանապարհն պատուոյ և փառաց՝ որ յաշխարհի ըստ այլ և այլ վիճակացն, ոչ ունայնութիւն է և ոչ ունայնասիրութիւն. քանզի շահաբեր է և պիտանի անձին և քաղաքին . . . ։

Զթէ այդպէս է, հապա ուրեմն մեք ընդ փորձն անցցուք բանիդ . . . ։ Որ միանգամ զինուորական վիճակին փառաց հանապազօր անձկացեալ է, ոչ ահա քիրան բազում թափէ առ 'ի գերագունին հասանել աշխիճանի և պատուոյ՝ իբրու զօրապետի, իբրու զօրավարի, իբրու սպարապետի։ Այլ սակայն է բազում անգամ՝ զի կամ վատացեալ 'ի դերևս ելանէ և չհասանէ, կամ թէ մինչ չև հասեալ՝ 'ի մարտի անկանի. կամ թէ հասեալ՝ յակնկալութեանն ոչ վայելէ, կամ 'ի մախանացն վանեալ, կամ 'ի ձախողակ մարտէն, և կամ 'ի տարաժամ յօրհասէն։

digitised by A.R.A.R.@

Իսկ որ միւսոյ վիճակին փառաց և պատուոյն հետամուտ է, այսինքն՝ կամ յաղթունիս ուրեք ապատարկութեան, կամ 'ի յարկս իշխանաւորաց մեծաց մեծի պաշտաման անձուկ բերեալ, և ձիգն թափիլ զօրհանապազ, երբեք եթէ յաջողեսցի, բազում անգամ նախանձոտացն զրպարտութեանց և դարանաց միշտ նշաւակ կայ. նաև յայլոց ևս հետամտիցն պաշարեալ 'ի հզօրաց՝ միշտ յահի կայ և 'ի դողման, զանդորրութիւն ոչ-ոյն կորուսեալ զօր ամենայն։ Այսպա եթէ ոչ յաջողեալ՝ 'ի հետամուտ լրջէն 'ի դերևս ելցէ, յանձկութենէ սրտին զօրհանապազ մաշեսցի։

Իսկ որ յայլ վիճակ աշխարհի 'ի համբաւ մեծի վաճառականի ակնկառոյց լեալ է, կորուսեալ է այնպիսին 'ի սպառ զանդորրութիւն տունջեան և զգիշերոյ. զօրհանապազ նատի խորհի և հնարագիւտ լինի անդուլ։ Այլ եթէ երբեք յանդուգն և խիզախ խնդրեսցէ վաղ ընդ փոյթ փառաւորիլ, միշտ 'ի վտանգի կայ մնանկութեան. ապա եթէ վատ և երկչոտ իցէ ամենայնի, երբեք չհորդեսցէ անձին ճանապարհ պատուոյ։

Այլ արդ դու ով մարդ, որ համբաւատենչ խնդրես լինել 'ի վաճառաշահս. կամ դիւրաւ 'ի վաճառ հանես զամենայնն յապառիկ, և չգտանես ապա՝ որ հատուցցէ, կամ խնդրես կանխիկ, և չգտանես որ գնեսցէ։

Դարձեալ՝ հոչակ խնդրես վասն անձինդ զձարտար արուեստագործի. և յայնժամ կամ 'ի դուրս հանես սիրես զձեռակերտսդ 'ի տեսիլ քաղաքի. և անդուստ քոյ հոչակիդ ստուերածս ածէ յաչաղանք հանարուեստիցդ. իսկ և չարակամութիւն թշնամեացդ մեծապէս զեան գործէ քեզ 'ի յուզել քննել 'ի դատակնքել և յընդ վայր հարկանել զգործածսդ. կամ թէ սրտաբեկեալ քո, ծածկեալ պահես զայնոսիկ, և դու այնպէս յանշքութեան տուայտիս։

Դարձեալ՝ զգիտականի առն թեկն ածես դու զաթոռոյն և զպատուոյն, կամ թէ զգերահամբաւ քարոզչի և զվարդապետի, և ձգնիս 'ի նոյն զամենայն աւուրս։ Այդ եթէ քան զքաջուշիմն չես զօրաւորագոյն, ոչ երբեք յառաջեսցես 'ի քայլն. նա ստգիւտ ևս լուիցես միշտ և դատակնիք բամբասանս. և որչափ առաւել ձգնեսցիս յառաջադէմ երևել յապիկարութեանդ,

digitised by A.R.A.R.@

նոյնչափ միշտ յետանեալ վերջոտնեացիս։ Պարձեալ՝ հմնայեալ քո վայրիկ մի 'ի վերին երեսս 'ի վարժս սրտաբնոյն նախնեաց, և Ճաշակ մի ևս առեալ զարդեաց մատենից զքաջորերոյն Ժամանակիս, հանդերձիս 'ի պայքար մտանել. զառաջինն գտանես քեզ համապայքար պատասխանատուս. յերկրորդումն՝ հակառակորդս դարձիս. հուսկ ապա ծաղր և խաղ և քրքիջ 'ի քաջահմտաց կանՃառէն։ Կամ թէ և քաջուշիմ ևս եղեալ քո և բազմահմտաց քան զսոսիդ և զպայքարիչն՝ այր յանդգն և խրոխտ և ձեռներէց և Ճառատող. իսկ դու պարկեշտացեալ տեղի տացես նմա 'ի մրցանակն, բազում անգամ կարծեսցիս խոնարհագոյն և ապիկար քան զնա։

Պարէ, քանի Ճշգրտութեամբ՝ որ զունայնութիւն ծանեաւ զայսոցիկ՝ զնոյն և մնրատասին ազգեաց յապա եկելոցս այսպէս. "Պարձայ, ասէ, և տեսի 'ի նեղբոյ արեգական. զի ոչ թեթևաց են ընթացք, և ոչ զօրաւորաց պատերազմ, և ոչ իմաստնոց հաց, և ոչ հանճարեղաց մեծութիւն, և ոչ գիտնոց հնարքն. զի ժամանակ է և պատահար պատահէ ամենեցուն նոցա. քանզի ոչ իսկ գիտաց մարդ զժամանակ իւր"։ Զասիկ ընթացք և վախճան՝ նաև որոց հետամուտք եղեն փառաց և համբաւոյն։ Զինչ ասես, ունայնացան արդեօք և սոցա վայելքն, ըստ պատգամին։ Զդ տեսցուք և զերրորդ հատակին զերջանկութիւնն։

Իսկ երրորդ հատակ ծերունեացն ծիծաղեալ զառաջնումն և զերկրորդումն, ասէն եթէ անշառաչ և անշշուկ անդորրութեան պէտք են վայելից. ծիսոյն պարտ է լինել սակաւ, և նիւթոյն շատ։ Եթէ երբեք մերուշ եղեալ էր, ասէն, մեծամեծ և բազմաշշուկ խորհրդոց, որ յուզէին 'ի տիս պատանութեան կամ երիտասարդութեան մերոյ, արդարև 'ի յարկս բազումս օդեղէնս հասանէր մեզ օթևանել այսօր. քանզի և յօդս այնչափ ինն աշտարակս և տունս կառուցանէին մեզ յայնժամ իղձք և խորհուրդք մտաց մերոց։ Զայլ արդ մերոց պատանեաց և երիտասարդաց օրինակ մի տուաք մեք տեսանել և գիտել, եթէ սակաւապէտ կեանք և յամենայնի խնայօրէն անտեսութիւնն բազումս պաղաբերէ։ Հայեաց ինձ, ասէն, միանգամ 'ի

digitised by A.R.A.R.@

տունն, զիարդ բարեշէն յակատամնի կայ · որչափ ա-
ւադիկ աձեցին կալուածք գեանոյն, զիարդ առաւելան
ստացուածք, իբր հաստատուն էն եկամուտք, և հայ-
բենի ժառանգութիւնն ամբարեալ կայ ամաց բազմաց
վասն յապա եկելոց ծննդոցս ։

Ա՛յլ է ծերունիդ ։ Ա՛յլ դու ցարդ զինչ աւելի
վայելեցեր յայնչափ գոյիցդ՝ առաւել քան զտեսու-
թիւնդ · որպէս ասաց Նոյն իմաստուն · "Յ զինչ օ-
գուտ իցէ ստացողին · բայց զի աչօք իւրովք տեսցէ ըզ-
մեծութիւնն .,, ։ Ասաձեալ՝ և բազում գոյիւքդ ոչ
բազումն բացեր դու բերանս առնուլ և ուտել · "Օ՛ի
ուր, ասաց իմաստունն, ուր բազում էն մեծութիւնք,
բազումք էն և որ ուտեն զնոսա .,, ։ Ասկ ապա զայն զի
արտացես, զոր դատապարտէ Նոյն իմաստուն · "Ա՛յ, ա-
սէ, չարութիւն զոր տեսի 'ի նեղքոյ արեգական, և
բազում է յոյժ 'ի վերայ մարդոյ · այր մի՝ որում տացէ
Ա՛ստուած մեծութիւն և ինչս . . . և ոչ առնիցէ զնա
Ա՛ստուած իշխան ուտել 'ի նմանէ · զի այր օտար կերիցէ
զնա · և այն ընդունայնութիւն է և ախտ չար .,, ։

Ասանզի և եթէ կամիցիս և եթէ ոչ, պարտ է քեզ
բաժանել զկալուածոցդ զմիթերեալ մեծութիւնն · կէս
մի տալ նախանձու սահմանակցացդ՝ որ կագեսցին ընդ
քեզ դատաստանաւ · կէս մի՝ զրժանաց գործակալացդ,
երդնավարաց, մշակաց, վերակացուաց, որ դաւեսցեն
զքեզ · կէս մի՝ անզգամութեան գողոցն, որ շորթեսցեն
'ի քէն ։ Գողզ զոգոցն զանբարեխառնութիւն, զմա-
ռախզոյն զնաան, զկարկտին հարուած, զգետոցն հեղե-
ղել, զհողմոցն դառնաշնչութիւն, զերդեանն, զդալուկն,
զջրեանն, զերկիրն, և զայլոց ևս ձձեացն հոյլ ազ-
գի ազգիս ։

Ասկ և միթերք ոսկւոյդ՝ կենդանեաւ քով թերևս՝ 'ի
ձեռս անկցին որդւոց զեղխից և շուայլից և շուայտացե-
լոց, որ ընդ սակաւ ամն վատնեսցեն ողջոյն զմիթե-
ռալն ։ Ասցեն թերևս և որ 'ի խաղս բախտաւորս զա-
կատեալք՝ չարաչար 'ի միում միայն աւուր, նա 'ի միում
միայն ժամու ցրուեալ ծախեսցեն նոքա՝ զոր դու ընդ
ամն բազումն ժողովեցեր անձկութեամբ ոգւոյ և տա-
ռապանօք և քրտամբք երեսաց ։ Ա՛յ զինչ ապա մնաս-
ցէ քեզ 'ի գոյիցդ · վաստակ ժողովելոյն, քիրսն աձե-

digitised by A.R.A.R.@

ցուցանելոյն, ջան խնայելոյն, և հոգն պահելոյն, ահ և անձկութիւն կորուսանելոյն։ Այլ ապա . . . ապա և օր հաս մահուն հասցէ՝ ի վերայ։ Ոչ ահա և քո ոմն բազմամեթեր ծերունի, կատարածն, ունայնութիւն եղև ունայնութեանց՝ ըստ նախասաց պատգամին։

Այլ արդ ազէ սիրելիք, յորոց միանգամ ցարդ տեսէք առաւել՝ ի նկար աչաց, քան՝ ի լուր ականջաց. (նա մանաւանդ և զերիս հատակացն թերևս անձամբք յանձինս առեալ և զփորձն), դուք ինքնին խմաստնանեալ ասացէք մեզ այժմ։ Արդեօք որ՝ բերկրանաց աշխարհի զՀետ զակատեցաւ, ձաշակեաց ողջոյն, եթէ և ինաց ինչ արտաքոյ. և որ փառաց և համբաւոյն հետամուտ եղև, արդեօք յայն ատենման՝ ի վերայ եկ, մինչև կարել ասել, "Շատ է"։ Իսկ՝ ի կուտակութեան մեթերից ընչից ո՞ որ երբէք յաշխարհի այնչափ ինչ կարաց կուտել, որչափ և կամէր։ Այլ ուրեմն՝ ի բարեաց աշխարհիս յիւրաքանչիւր մասին միշտ քաղցեալ և ծարաւի գտաւ մարդ. ոչ երբէք յագեցաւ, և ոչ երբէք ասաց շատ։ Այլ՝ աբէ, և զիարդ ապա ունայնութիւն ունայնութեանց ոչ իցէ ամենայնն . . .։

Օ՜ի է զի այդչափ բերկրեցար այր դու, և այդչափ փառաւորեցար, և այդչափ հարստացար. (քանզի և չէք այլ ասել՝ ի ժամանակէիցս բարեաց արտաքոյ երից այսոցիկ). զի է զի տակաւին չգտար գոհ, չգտար յագեալ, ջաստացեր երբէք շատ. դեռ ցանկայ սիրտ քո, դեռ չեն քո անդորրացեալ ոչ միտք, ոչ կամք։ . . Որ իցէ պատճառն . . . . Այլ միտ դիր, աւասիկ քեզ. քանզի աշխարհի բերկրանք՝ արտաքին մարդոյն են՝ որ է մարմին, չեն ներքին մարդոյն՝ որ է հոգին։ Փառք և պատիւ և համբաւ՝ առ ժամանակ մի են, դու վասն մշանջենաւորին ծնեալ ես և յաւիտենական ես։ Իսկ ինչք և հարստութիւն չափ ունին և սահման. դու անչափին և անսահմանին ասպնջական ես։ Ապա՝ որոյ թէպէտ և զբղացեալ՝ ի բերկրանս, թէպէտ և յօրացեալ՝ ի փառս, թէպէտ և յդմացեալ՝ ի գանձս, ՝ի վերայ այսր՝ լի ես անգոհութեամբ, տաղտկաս յերկրաքաղաքացին, ընդ անձին ողորմս. և ինքնին բռնադատիս յոգւոյ հանել. բաբէ, զիարդ ահա ունայնութիւն ունայնութեանց է ամենայնն։

digitised by A.R.A.R.@

Այլ եթէ և յետ այսր ամենայնի, յետ բանիցն, յետ փորձոյ անձինն, նաև յարդեանց անտի ինչ մի ա-ընակ կամիցիս ունել քեզ և ապա հաստատիլ, քեզ աւադիկ օրինակ Հնդրիա՝ որպիսի ոչ ինչ եկաց յաշխարհի զուգահաւասար, ոչ յառասպելեաց ինչ է բանա-հիւսից, և ոչ համեղակեր բան Հարտասանից. անսուտ պատմութիւն է յաստուածայնոցն տառից. և անշուշտ Աստուծոյ նախախնամութեանն եկաց բանն. զի 'ի տե-սիլ աշխարհի և 'ի հասարակաց զգաստութիւն երևեսցի 'ի մարդիկ այր մի, որոյ նման չեկաց յաշխարհի ա-ռաւել երջանիկ միանգամայն և առաւել անշնորհակա-լս։ Այլ ձեզ այլն յանդիման, արիկեք 'ի նա զակն. սա է Սոզոմոն աղքայ. որ աղաչաւ միայն՝ կարծեցան 'ի վեղ գալ երկինք և երկիր, շնորհք և բնութիւն, ո՞ առաւել տացէ նմա, կամ ո՞ կանուխ քան զընկերն ընծայաբեր նմին եղիցի։

Սա թագաւոր փառաւոր կրկին պատկայն. առ սովաւ ամենայն թշնամիք նկունք, խաղաղութիւն 'ի սպառ տի-բացեալ, իբրև 'ի դրախտի զուարճացեալ նստէր հրեա-ստան։ Որա առաջին երազ գիշերոյ՝ երևումն աստուա-ծային, և առաջարկութիւն հոյակապ աւադութեան բարձի յանսովոր առատապարգևութենէն Աստուծոյ. "Խնդրեա, ասէ Աստուած՝ բացեալ զաստուածեղէն զձեռն, խնդրեա ասէ դու քեզ խնդիր, զինչ տաց քեզ։ — Օ իմաստութիւն և զՀանճար, ասէ, տացես ինձ ,,։ Զ՞ սէ՝ Աստուած և սիրէ զխնդիրն, և իբրև ա-ռատաձեռ տէր կրկնէ. "Փոխանակ զի ոչ խնդրեցեր քեզ մեծութիւն ընչից և ոչ փառս, զիմաստութիւն և զՀանճար տամ քեզ. ահա ետու քեզ սիրտ իմաստուն և հանճարեղ. իբրև զքեզ ոչ ոք եղև յառաջ քան զքեզ, և յետ քո ոչ ոք յարիցէ նմանող քեզ. և զոր ոչ ետս խնդրեցեր, զմեծութիւն և զինչս և զփառս տաց քեզ. որպէս զի ոչ եղև նման քեզ 'ի թագաւորս յա-ռաջագոյն քան զքեզ, և զկնի քո ոչ լինիցի այդպէս ,,։

Այլ ապա 'յայնմ՝ գիշերէ՝ նորոյ աղքայիս ամենայն գործն եկաց օրէնք, ամենայն բանն՝ պատգամ. ամե-նայն ակնարկութիւնն՝ խորհուրդ։ Այսաւ 'ի գրել. և յութ հազար գիրս իւր ասպարէզ կարդայց գերագու-նիցն յիմաստունս աշխարհի։ Զ՞ինչ առաջի նորա

digitised by A.R.A.R.@

իմաստութիւն եգիպտական, զինչ յանդիման նորա պերճութիւն քաղդէական։ Ոչ արքայ Տիւրոսի, ոչ դշխոյն Հարաւոյ, 'ի զեղարուեստս գերահռչակք, ա-մենայն ինչ անձանց համարեցան երևել աշակերտք պսակաւոր վարժապետին։ "Մինայն թագաւորք երկրի, ասէ, խնդրէին տեսանել զերեսս Սողոմոնի, և լսել զիմաստութիւն նորա"։

Ունդ էր տեսանել յայնժամ Յերուսաղէմ կոյս խուռն դիմեալ մեծաշուք հրեշտակութեանց արքայից. կէսք 'ի խնդրել զանձկացեալն ընդ նմա բարեկամութիւն, կէսք պատարագաբերք բազմահարուստն ձօնից, կէսք առ 'ի խելամուտ լինել խորին առակաց և բանից դարձուածոց։ "Մինայն թագաւորք երկրի բերէին, ասէ, իւրաքանչիւր զպատարագս իւրեանց, անօթս արծաթեղէնս և անօթս ոսկեղէնս, և հանդերձս. սաստին և խունկս և ձիս և ջորիս ամի ամի։ Յա-մենայն ինչ արքայի Սողոմոնի ոսկի գործեալ, և ոչ գոյր, ասէ, արծաթ. քանզի ոչ էր համարեալ արծաթ յաւուրս Սողոմոնի, թէ իցէ ինչ"։

Իսկ և արքունիք Սողոմոնի, որպիսի ոչ երևեցաւ յաշխարհի յամենայն թագաւորութիւնս. զի էին նորա քառասուն հազար և վեցհարիւր ծառայք դիպակազգեստք և ոսկեհանդերձք. և հազար և չորեքհարիւր կառավարք շքեղք. քառասուն հազար ձիք մատակք կառաց, և երկոտասան հազար երիվարաց։

Իսկ ապա դաստակերտ նորա տաճարն մեծ՝ գործ ճաշխարհիկ՝ որ ոչ ցուցաւ 'ի դարս. ընդ ամն եօթն կանգնեալ յերկերիւր հազար գործաւորաց և յերիս հազարաց ճարտարապետաց. և յերկոսին ևեթ 'ի սիւնսն կանգնեալս առընթեր սեմոյ մեծի դրանն՝ որպէս ասեն՝ ծախեալ ինն սուն և հինգ հարիւրոց բիւրուց. իսկ 'ի սեմոյ աստի իմաստասիրեսցէ ոք և զինացեալն ամենայն։

Այս ձեզ 'ի կարճոյ՝ փառք, համբաւ և մեծութիւնք Սողոմոնի, առաջին, և երկրորդ՝ զոր ասացի՝ 'ի բարիս կենցաղոյս։ Իսկ ապա զերրորդ բարին, զբերկրանն ասեմ և զսփոփութիւնն, միանգամայն զամենայն փափկութիւնս Սողոմոնի, ո՞ ոք մարթասցի ընդ թուով արկանել, բայց թէ որ վայելեսցն և բերկրե-

ցաւ այնչափ, որչափ և ցանկացաւ։ “Յաճախեցի ինձ, ասէ, արարս. անկեցի ինձ այդիս, փայտս ամենաբերս.... արարի ինձ գուսանս և երգեցիկս... և ըստ փափկութիւնս որդւոց մարդկան. արարի ինձ տակառապետս արս և կանայս. և մեծացայ առաւել քան զամենեսին. և զամենայն՝ զոր ինչ խնդրեցին աչք իմ, ոչ զրկեցի՝ի նոցանէն, և ոչ արգելի զսիրտ իմ յամենայն ուրախութենէ. զի սիրտ իմ ուրախ եղև յամենայն վաստակս իմ.,,։ Բաբէ, և մնաց ինչ այլ արտաքոյ՝ի բերկրականացն, յորժամ ասաց “Յամենայն ցանկութիւն և զամենայն ուրախութիւն.,,։

Հապա արիք սիրելիք մուտ գտեալ միանգամ յարքունիսն Սողոմոնի, և զնա յակն արկեալ՝ յակձիոս կացցուք հիացեալք ընդ այնչափ փառսն, ընդ համբաւն, ընդ մեծերս գանձուցն, ընդ բերկրանս փափկութեանցն. ո՞ ոք այլ երբէք զրգացաւ առաւել քան զնա, ո՞ ոք առաւել ընչաւէտ, ո՞ ոք առաւել փառաւոր։ Հապա յակն արկէք միանգամ և գտջիք զնա անշուշտ՝ի խոր խաղաղութեան, տեսանիցէք զնա՝ սիրտ զուարթ, պայծառացեալ՝ի կերպարանն, ցնծաւէտ՝ի դէմս....։

Ցնծաւէտ՝ի դէմս... սիրտ զուարթ...։ Բաբէ... զինչ իցէ պատահումնս....։ Լա լուռ կայ... դէմք՝ի վայր... ակնկոր... տխրութիւն գրաւեալ զսիրտ, և թախիծ ողջոյն պաշարեալ է զդէմս... նա ձեռն՝ի ծնօտի, և արտասուք առեալ են զնա....։ Որ դէպք որ պատահար ճախողակ դիպաւ երջանիկ արքային....։ Որ այլ դէպք... բայց նոյն դէպք երջանկութեան նորա....։ Լա զերջանկութիւնն արտասուէ... էր աղագաւ...։

Զէ, դու ինքնին ասա արքայ...։ Զինչ պակասեաց ինձ, ասէ, յամենայնէն՝ զոր կամեցայ. պակասէ ինձ այն միայն՝ զոր առաւելն կամէի...։ Ընդարձութիւն սրտի, և գոհութիւն։... “Հայեցայ, ասէ, յամենայն արարս իմ, զոր արարին ձեռք իմ ընդ արեգակամբ. և ահա ամենայն ընդունայնութիւն է և անձկութիւն ոգւոյ.,,։

Ա՜ան ունայնութեանն սրտաբեկ միջաբեկ է Սողոմոն։ Թոկ՝ի ձգմանտութիւն ունայնութեանս այսորիկ խորագրած եղեալ, ապա յետ այնորիկ յատելութիւն

digitised by A.R.A.R.@

ևս բերի նա ամենայն մեծութեան իւրում և փառացն և բերկրանացն. “Եւ ասեցի ես, ասէ, զամենայն վաստակս իմ՝ զոր ջանացայ ընդ արեգականբ ,, : Իսկ ի բրև այսպէս ասեաց զանցաւորս, յատելութենէ անտի սաստիկ սրտառուչ եղեալ, նաև ընդ կեանս աշխարհիս այսորիկ տաղտկայ, նաև զկենդանութիւն իւր ևս ատեայ. “Եւ ասեցի ես, ասէ, զկեանս իմ. զի չար էր ինձ արարածն, որ արարեալն էր 'ի նեղբոյ արեգական. ընդէր. զի ամենայն ինչ ընդունայնութիւն է, ասէ, և անձկութիւն ոգւոյ. և դարձայ ես, ասէ, հրաժարեալ սրտիւ իմով յամենայն վաստակոց իմոց ,, : Զհա վայելք ամենայնին, ահա ունայնութիւն ամենայնին, ահա ատելութիւն ամենայնին, և հուսկ ապա հրաժարումն յամենայնէն :

Զայսպէս ուրեմն երջանիկ արքայն, այսպէս աւաղէ զերջանկութիւնն, այսպէս ատեայ զերջանկութիւն՝ ի բրու զունայնութիւն. ո՞ ոք առաւել քան զՍողոմոն 'ի ծայրն Եհան բարեաց աշխարհի, ո՞ ոք առաւել վայելեաց յաշխարհի. ո՞ ոք առաւել քան զնա գիտաց և փորձեաց զաշխարհ : Զասիկ փորձեաց և վկայեաց. և քան յամենայն ժամանակս և քան յամենայն 'ի բանս՝ առաւել իմաստնացաւ իմաստունն այն, յորժամ կրկնեաց և երեքկնեաց և չորեքկնեաց, եթէ ունայնութիւն է ամենայնն : Զո՞ ոչ հաւատասցէ այնպիսումն փորձառուի. և եթէ նմա չհաւատայ, ո՞ւմ այլ երբէք հաւատասցէ. “Օ՜ի լինի, ասէ, մարդոյն յամենայն վաստակս իւր և 'ի յօժարութիւն սրտի իւրոյ.. զի ամենայն աւուրքն նորա ցաւոց են, ասէ, և տրտմութեան՝ զբօսանք իւր. և գիշերի՝ ոչ հնդէ սիրտ նորա ,, : Օ՜ի “Օ՜ինչ, ասէ, մեծութիւն իցէ՝ մեզ նպաստաւոր. անցանէ ամենայնն իբրև զստուեր, և իբրև զհամբաւ առն ընթացեալ.. իբրև զփոշի յարուցեալ 'ի հողմոյ, իբրև զսարդի ոստայն և իբրև զեղեամն 'ի մրրկէ հալեալ, և իբրև զծուխս մաշեալ ,, . Զայսպիսի ինչ են, ասէ, կենցաղական բարիքս :

Եւ քանզի 'ի Աչմարտութենէ բարւոյն սինք են և թափուրք՝ որպէս կանխեցի ասացի, վասն որոյ և ոչ միայն անցաւորք են և ունայն, այլ և ոչ երբէք յագեցուցանեն : Օ՜սիրտ քո, ո՛վ մարդ, զոր ստեղծ Զստուած,

digitised by A.R.A.R.@

նա միայն բաւական է ընուլ զնա . և սիրտ՝ որ վասն Աստուծոյ հաստեցաւ , Աստուծով միայն երջանկասցի , Աստուծով միայն . զի արտաքոյ նորա « Ունայնութիւն ունայնութեանց ամենայն ինչ ընդունայն է » ։

ՄԱՍՆ Բ ·

Իսկ արդ եթէ այդպէս ճշմարտապէս ունայնութիւն է ամենայն , զինչ այլ ապա մեզ կամիցի , վարդապետդ , ազդել քարոզիւդ . բայց թէ յառնել մեզ ամենեցուն ելանել յաշխարհէ , և անձնապուր 'ի հաղբից նորա գնալ երամովին խնդրել զանապատ , զօղել յանձաւս , կամ թէ երթալ փակել 'ի մենաստանի ուրեք և 'ի վանս ։ . . .

Այլ ընդէր ոչ . եթէ ձեզ այնպիսի դէպք տացեն բարեպատեհ ժամանակի , և եթէ մարթ իցէ ձեզ առնել զայն . միթէ մարթ ինչ իցէ ինձ տալ ձեզ խորհուրդ լաւագոյն քան զայն՝ զոր անձին խմում տուեալ իսկ է իմ , կամ թէ փափաքիցեմ տալ ։

— Այլ մեզ զիարդ երբէք յաջողեսցին իրքդ . մեզ որ այնչափ աստի և անտի և ամենայն ուստեք իբրև անլոյծ կապանօք կամ բազմանձիւն սարեօք կապեալ կամք ընդ աշխարհի . . . ։ Օ ինչ ապա մեզ առնել պարտ իցէ . . . ։

— Ողորմիմ հարկին , սիրելիք ։ Քաւ չիստանամ երբէք . ոչ պատուիրեմ . . . ։ Իցէ ձեզ հնար նաև յաշխարհի բնականալ , և առանց ելանելոյ յաշխարհէ՝ ոչ կապիլ ընդ աշխարհի . է ձեզ և վայելել զաշխարհ և անզերծ չլսիլ ընդ ունայնութիւնս աշխարհի ։

Ո՞րպէս , և զիարդ օրինակաւ ։ — Լինելով ձեր յաշխարհի , իբրու չլինել 'ի նմա ։ Ա՛ զիմ ինչ , քրիստոնեայք , այլ զաստուածայնոյն Պաւղոսի ձեզ յուշ առնեմ զպատուէրն . « Որ ունիցին , ասէ , կանայս , որպէս թէ չունիցին . և որ խնդանն՝ որպէս թէ չխնդայցեն . և որ գնեենն՝ որպէս թէ ոչ ունիցին . և որ վարեենն զաշխարհս՝ որպէս թէ չվայելիցեն . զի անցեալ է վայել չութիւն աշխարհիս այսորիկ » ։

Քաջ միտ դիր . ոչ արգելու Պաւղոս հաւատացելոցն

digitised by A.R.A.R.@

ունել զկանայս, ունել տուն, ստանալ կալուածս, և որ ինչ յայսոսիսեաց աստի, որչափ ինչ պէտք իցեն 'ի վայելուչ կեանս քրիստոնէիցն զերդաստանաց։ Բ. յդ մեծապէս վրիպակ եկաց 'ի նախնումն մոլորելոյն Պե-ղագիոսի, որ պարտս կամեցաւ 'ի վերայ դնել հաւատացելոց իբրու 'ի Քրիստոսէ, վաճառել զինչս իւրեանց և տալ աղքատաց։ Բ. ռ որ մեծն Աւգոստինոս, "Կամեցաւ, ասէր, մոլորեալն այն, կամեցաւ զայն. սակայն կամեցաւ զանկարելին"։

Այս զի և առաքեալն սուրբ յորժամ քաջայայտ պատուէր կարգէր մեծատանցն պահել զկանայս, պահել զորդիս իւրեանց, ունել զծառայս, և զիարդ առանց ինչ սեպհական գոյից մարթ էր 'ի գործ տանել զայն պատուէր։

Շատ ուրեմն համարեսցի հաւատացելոյն՝ որպէս աղդեն հաքն սուրբք՝ ունել իւրեանց սեպհական զգոյսն, այլ որպէս թէ ոչ ունիցին. "Որ ունիցին, ասէ, որպէս թէ չունիցին"։ Զինչ իցէ բանն. թող ասէ, քո աչք ոմ քրիստոնեայ, յարկդ անդր ակնկառոյց իցէ, այլ ոչ քո սիրան. խորհեսցին քո միտք, այլ ոչ ձկտեսցին իղձք։ Հանդի մեծն Պաւղոս զանչափն արդել զիրացն պէտս և զիղձս. "Իբրև զի մեք ստասցուք զնոսա, որպէս ասացին հաքն, և ոչ նոքա ստասցին զմեզ"։

Իսկ և պատճառ Ճշդրիտ 'ի նեբքս բերէ աստուածխնաստն, զընդունայնութեանն և զանցաւորութեանն. "Զի անցեալ է, ասէ, վայելչութիւն աշխարհիս այսորիկ"։ Իբրու եթէ ասիցէ. զիարդ երբէք մարթ իցէ ձեզ, ո մահկանացուք, վառիլ բորբոքիլ ձեզ այնչափ, և 'ի սերն կապիլ առօրեիցս այսոցիկ և անցաւորաց։ Զուք աւադիկ յուզևորութեան ձերում 'ի քաղաքէ 'ի քաղաք, 'ի Ճանապարհ անկեալ և յօթևանէ յօթևան իջանան կալեալ, մտեալ բնակէք և երեկօթս առնէք. թէպէտ և վայելէք ևս 'ի նմա ըստ իւրաքանչիւր պիտոյից, կահ և կարասին կաղմ, և պատրաստ սեղանն, պատրաստ անկողինն, և որ ինչ այլ 'ի պէտս, սակայն և ոչ ինչ այնպէս ըղձակաթք յանկչիք զուք 'ի նոսա, իբրև որ անցաւորք էք Ճանապարհաց և սանդուխաք. զգիշեր զայն միայն անդորրաջիք 'ի

digitised by A.R.A.R.@

նամ, և առ վաղիւն եբջիք միանգամայն և զպանդոկն և զպանդոկապետն և զկահն, և զայլն ամենայն։ Զարդ ուրեմն որ սատէն յաշխարհի պանդխտութեամբ իբրև 'ի մեծ օթևանի աւուրս ինչ առելի վայելեալ ձեր 'ի տունս, 'ի կալուածս, այլուվքն հանդերձ, որպէս ըղձակալեալք յարեսջիք 'ի դոսա, մինչ զի և 'ի գերութիւն զսիրտ ձեր զրաւել նոցա....։

"Զաւ ձեզ այս, եղբարք իմ, ասէր երանելին Գրիգոր տիւնոս, քաւ ձեզ. դուք ձեզէն 'ի ձերդ ուղևորութենէ օրինակ առեալ՝ իմաստնացարուք։ Կացէք 'ի տունս ձեր իբրև յօտարին պանդոկի. վարեսջիք դուք 'ի պէտս զարծաթն, որպէս ճանապարհորդ պանդուխտն յինջավանին վարէ 'ի պէտս զսեղանն, զբաժակն, զկահն և զկարասին, իբրու հանդերձեալ 'ի թողուլ անդէն և ոչ յառնուլ տանել անձին սեպհական։" Զոր ասա ըստ նմանէն զդեղեցիկ հրահանգ քրիստոնէութեանն ողջոյն զնովիմբ ածէ. "Զինպէս ասէ, անցցուք ընդ ժամանակեայ բարիս, զի մի կորուսցուք զյաւիտենականն։"

Զոր զի այս այսպէս է ճշմարտիւ, իւրաքանչիւր ոք 'ի մէնջ սիրելիք իմաստնաբանեսցէ ուրեմն ընդ անձին իւրում. եթէ որովհետև զգալիքս ամենայն ոչ անդորրացուցանեն ահա զհոգի, ոչ յագեցուցանեն զսիրտ, (որպէս յանձին փորձոյ և յօտարին ծանուցեալ իսկ է ձեր), ոչ ևս ուրեմն այսուհետև զհետ զակատեսցուք բերկրականացն, ուր հրապոյրք կայցեն զգայութեանց։ Ոչ ևս հետամուտ լիցուք փառաց և պատուոյ ընդ հետս մոլարս և խոտորնակս։ Ոչ ևս անձնագրաւք լիցուք 'ի մեծութիւնս, և մի երբէք ուր յորդեսցին մեզ ընդ ճանապարհս անիրաւութեան։

Զոր արդ դու ո՞վ մարդ, որ պատանի ես կամ երիտասարդ, ամենայն զբօսանք քո ՝ն սիրութիւնք և խրախճանք եղիցին ըստ չափու թոյլտուութեան պարկեշտութեան քրիստոնէի։ Զելին քան զայն ունայնութիւն ունայնութեանց է և դատապարտեալ։

Որ ձեռագործ արուեստաւորդ ես, կամ կրպակաւոր, կամ որ յայլ ինչ աշխարհիկ կարգաց. պաշտեսցես ըստ գործ քո ամենայն արդարութեամբ. եթէ չես ինչ 'ի գոյաւորաց, զոհ կացցես 'ի վիճակիդ, մի յաչաղեսցես

digitised by A.R.A.R.@

զօտարին։ Եթէ զոյաւոր ես, մասն հանցես աղքատին. Եթէ խնդրես և ես մեծանալ, խնդրեա ունել աւելի՝ բայց 'ի շահ և 'ի պէտս կարօտելոց։ Բայն ամենայն ունայնութիւն ունայնութեանց է, և դատապարտեալ։

Որ ազնուականդ ես և յիշխանաւորաց ոք, աղէ դու խնամտուն հրամանատարութեամբդ սպաս հարցես 'ի պէտս հասարակաց. ընկալ զպատիւ, ընկալ զյարգն, և փոխանակ բարերարեա. զշուք պահեա և զյարգութիւն զաշտիճանիդ, այլ մի զոռոզութիւն։ Որիբեա զսեպհականութիւն զոյիցդ, ատեա զզեղխութիւն. ապա թէ ոչ, ունայնութիւն ունայնութեանց է և դատապարտեալ։

Որ 'ի կանանց ես կարգի կամ 'ի տիկնայց և 'ի բամբշաց, շատ համարեսցիս զարդ արկանել զանձամբ վայելուչ վիճակիդ զպարկեշտութեան և զհամեստութեան, որպէս խրատեաց առաքեալն. "Կանայք, ասէ, 'ի զարդ խնարհութեան, ակնածութեամբ և զգաստութեամբ զարդարել զանձինս ,,. այսինքն՝ որ համեստն է, և որ աշտիճանին վայելուչն է ըստ քրիստոնէական ակնածութեան։ Բ. Զելին քան զայն ունայնութիւն է և ունայնասիրութիւն, և դատապարտեալ է։

Եւ արդ որ զքրիստոնեայ զգերաշխարհիկն անուն յանձին բարձեալ և կեանս իմն կամեսցիս ըստ անուանդ վարել զգերաշխարհայնոյն, պարտ է քեզ ո՛վ քրիստոնեայ, սրտիւ միշտ արտաքս ելանել յաշխարհէ։ Զանզի "Բ. Ոչ ոք առաքինութիւն քրիստոնէի, որպէս քարոզէր աստուածայինն Սկեբերան, առաջին առաքինութիւն քրիստոնէի է իբրև պանդուխտ և ի ջաւոր յերկրի հանարել զանձն ,,։ Զանզի և չէ իսկ յաշխարհէ աստի քրիստոնեայն. երկնաքաղաքացի է. վասն երկնից ծնեալ է և ոչ վասն աշխարհի. "Յաշխարհէ աստի չէք, ասէր տէրն, որպէս և ես չեմ յաշխարհէ ,,. և նորուն առաքեալն, "Մեր քաղաքավարութիւն, ասէ, յերկինս է ,,։

Եւ արդ այս առաջին առաքինութիւն՝ զոր 'ի մէնջ խնդրէ Աստուն ոսկի, ոչ իւիք այլ յաջողեսցի մեզ երբեք, բայց թէ ձչգրտագոյնս և տպաւորագոյնս 'ի սիրտս մեր և 'ի խորհուրդ հաստատելով զձշմարտութիւն ու-

digitised by A.R.A.R.@

նայնութեան կենցաղականացս , քաջիկ խելամուտ լի-
նելով աստուածային առաձին , եթէ “ Անայնութիւն
ունայնութեանց , ամենայն ինչ ընդունայն է ,, ։ Զի
թէպէտ և վայելել հասանիցէ 'ի նոսա , մի մոլիլ , մի
պատրիլ 'ի նոցանէ , և մի անձնատուր լինելով 'ի նո-
սա՝ յաւերժիցն վայելից՝ որ անխաբ յուսով մեզ սպա-
սեալ մնան՝ մատն լինել 'ի պատճառս նոցա վերջին
յետամնութեամբ ։

Զ.յլ անմոռացք առաձին , միշտ ասել զնոյն , միշտ
լսել , միշտ ակներև տեսանել . որպէս մանկունք վար-
ժարանաց 'ի հրահանգ ինչ պիտեան 'ի վարժապետացն
կրթեալ , պատուէր առցեն զնոյն մի միայն 'ի լուր ա-
կանջացն պահել , այլ և 'ի տես աչացն 'ի պիտակի ու-
րեք արձանագրեալ յանդիման միշտ ունել և ընթեռ-
նուլ և սերտել 'ի նոյն ։ Զայս մեզ նոյն Աստուած ոս-
կի ազգէ յաղագս ունայնութեան ժամանակէիցս .
“ Ասեզ , ասէ , միշտ ժամ բարեպատեհ է ասել և կրկ-
նել հանապազ , եթէ ունայնութիւն ունայնութեանց ,
ամենայն ինչ ընդունայն է . քանզի ամենայնն , ասէ ,
տեղի տայ՝ իբրու հողմն ուժգին որ շնչեալ թօթափես-
ցէ զտերևսն ,, ։

Զ.պա և այլ բազմագիմ նմանաբերութեամբք ճշգրտէ
և գձէ զունայնութիւն առօրէիցս . “ Գիշեր են , ասէ ,
ամենայնն և անուրջք , և 'ի գալ աւուրն անհետանան .
ծաղիկք են գարնայնոյ և 'ի գալ ամարան թառամին
ամենայնն . ստուերք են և անցեալ գնան . ծուխք են և
չքանան . պղպջակք են և պայթին . սարդիոստայնք են
և պատռին ։ Յաղագս որոյ զՀոգևորականն զայն նուագ
երգեմք ասելով ստէպ , Ունայնութիւն ունայնութեց ,
ամենայն ինչ ընդունայն է ,, ։ Զ.պա և զանմոռացութե-
անսուտ առաձին զձանապարհն ուսուցանէ . “ Զ.սոյն
առաձ զՈունայնութեան ունայնութեանցն պարտ է
ձեզ , ասէ , արձանագրել յորմունս ձեր , և 'ի հան-
դերձս , 'ի հրապարակի և 'ի տան , 'ի փողոց , և 'ի դրունս
ձեր , և 'ի գաւիթս ,, ։

Զ.յլ քանզի անմոռացիր անձին վայրապար և ան-
պտուղ լիցէ ընթերցուած առաձին , խնամութեամբ ըզ-
վերջին խրատն զնովիմբ ածէ . “ Զ,ս քան յորմունս և
'ի դրունս՝ առաւել պարտ է , ասէ , յիւրաքանչիւր գի-

digitised by A.R.A.R.@

տակցութեան մնաց տպաւորել զառաջն, եթէ ունայնութիւն է ամենայն։ Եւ քանզի խաբանք աւագութեանց աշխարհի և նոցուն կերպարանք և խարդաւանք՝ Աշմարտութիւն իմն կարծին լինել 'ի բազմաց, պարտ և արժան է զսոյն զօրհանապաղ և յընթրիս և 'ի Ճաշս և 'ի ժողովս առն իւրաքանչիւր քարոզ կարդալ ընկերին իւրում, և յընկերէն դարձեալ լսել, եթէ Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է ,,։

Զայս այսպէս երանելին, որ Աշգրտիւ 'ի վերայ հաստատեալ էր ունայնութեան զդալեացն և աղնուականութեան իմանալեացն. ուստի և մի միայն հոգի մարդոյ գերագոյն է, ասէր, քան զընդհանուր տիեզերս. և հոգի՝ որ վասն Աստուծոյ ստեղծեալ է՝ միայն Աստուծով մարթասցի ընալ։

Զրանէ՛ մարդոյն 'ի կեանս և երանէ՛ առաւել 'ի մահուն. որ անպատիր յունայնութեանց աշխարհի՝ միայն անանց բարեացն անձուկ բերեալ, կարդասցէ միշտ առ Աստուած. "Զրևեցայց երեսաց քոց, և յագեցայց յերևել փառաց քոց ,,։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ Ի.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՈՐԴՒՈՅ

Ա. Պետրոս Գ. 8

"Երէ որ խրոցն, մանաւանդ ընտանեացն խնամ ոչ տանիցի, 'ի հաւատոցն ուրացեալ է, և չար ևս քան զանհաւատսն է"։

Զիք բան և խմաստ այնչափ ստէպ յեղյեղեալ 'ի բերանս ամենեցուն իբրու զայն՝ եթէ փրկաւէտ յոյժ և 'ի կարևորագունից մասին է՝ դաստիարակութիւն որդւոց. սակայն և չիք դարձեալ առաւել քան զայն կամ նուազեալ ըստ տիրական մասանցն, կամ թերակատար յամենայն իսկ 'ի մասունս, կամ գլխովին անհոգացեալ։

Ճ նորհս իմն խնդրէր երբեմն 'ի տեառնէ մայրն Օ. Եբեդեանց վասն որդւոցն. "Լաստցին, ասէ, սոքա երկու որդիքս իմ, մի յաջմէ քումմէ և մի յահեկէ յարքայութեան քումմ"։ սովաւ մայրն զանկակիցն իղձ ծնողական 'ի դէմս ածէր՝ երջանիկս յաշխարհի յարդարել զմանկունս իւր։ Զէ ինչ, ասէր Աստուած ոսկի, չէ ինչ դրժպատեհ խղճն. եթէ զնոյն իղձ 'ի սահմանի պարագրելով աւետարանական պարկեշտութեան, նմանօրինակք մնան Օ. Եբեդեանց՝ նաև հարք և մարք առ հասարակ իցեն փութաջանք արդոյս և երջանիկս յարդարել զծընունդս իւրեանց առաջի Աստուծոյ։

Այլ բաւէ, յաւելոյր 'ի բանսն երանելին, բաւէ անկարգութեան հարց և մարց քրիստոնէից 'ի դաստիարակութեան որդւոց իւրեանց. զի ժրաջանք են նո-

digitised by A.R.A.R.@

քա 'ի յարդարել զնոսա և յամբառնալ 'ի ժամանակէիցս երջանկութիւն. և անհոգացեալ են ողջոյն՝ յաւիտենականին յարդարել զնոսա ժառանգորդս։ Ոչիչն զամենայն թափեն զի մի ինչ պակասեսցի որդւոց 'ի ծաղկընկէց վայելչութեանց կենցաղոյս. և յայն ինչ չհային՝ զինչ արդեօք հասանիցէ նոցա կրել 'ի հանդերձեալն. "Յանկան, ասէ, զի բարգաւաճք իցեն որդիքն յաշխարհի. չհոգան՝ արդեօք հիքասցին նոքա յանտիսն,,։ Խորհին բարձս աւագութեան կանուխ պատրաստել նոցա, ոչ մեծ ինչ համարին կամ թէ հետամուտք երբեք չլինին, զի մեծարգոյք լինիցին նոքա առ Աստուծոյ. "Հանդերձեն, ասէ, որդւոց իւրեանց շուք և պատիւ, ոչ հանդերձեն նոցա զԱստուած,,։ Լթէ երբեք հիւանդանայցեն որդիքն կամ աղքատացին, սուգ առնուն և ցաւին։ Փոյթ ինչ չէ նոցա՝ եթէ յոռասցին որդիքն, և խեռք և ստահակք շրջեսցին. "Լթէ թշուառացեալք, ասէ, տեսանիցեն զորդիսն, տրտմին, իսկ եթէ մեղուցեալք՝ ոչ ևս,,։ Լաստի և գործովք իւրեանց ցուցանեն նոքա, եթէ ծնողք միայն են մարմնոց նոցա, և ոչ են հարք խնամակալուք հոգւոց նոցա։

Այսմ մահաբեր անկարգութեան, որ միանգամայն զծնունդն ընդ ծնողայն 'ի կորուստ մատնէ, պատրաստեալ եմ 'ի դիմի հարկանել այսօր քարոզիւս։ Այլ խօսիմ միայն յաղագս դաստիարակութեան որդւոց՝ որ 'ի կարգի քրիստոնէութեան։ Իսկ ապա այլ բաղմադիմ հրահանգք և պատուիրանք և սահմանադրութիւնք դաստիարակութեան, զոր կոչեմք դաստիարակութիւն բնական, դաստիարակութիւն քաղաքական և աշխարհական, այն ամենայն ոչ իմոյ աւետարանական սպասաւորութեանս 'ի Ճահ գան, և ոչ առ ժամն՝ ձերոց պիտոյից։ Այլ են ձեզ վասն այդոցիկ վարժապետք, այս է՝ ձայն բնութեան, կարգ սովորութեան աշխարհի, և իրաւունք բարեկեցութեան քաղաքի։ Այլ դարձեալ և բարոյական խմաստասիրութեան գիրք ձեզ 'ի կրթութիւն։ Զայլ մեզ քարոզաց բանին Աստուծոյ 'ի դէպ է խօսել վասն արքայութեան Աստուծոյ. և 'ի բեմէ աստի սրբութեան պարտ է մեզ առաջնորդել ձեզ ոչ յայլ ինչ, քան թէ յիմաստս աստուածայինս և յաւիտենականս։

digitised by A.R.A.R.@

Եւ արդ ըստ գերագունից այսոցիկ խնամատից երկուքինչ իրք են աւադիկ 'ի դաստիարակութեան որդւոյ։

Առաջին՝ բարեկրթութիւն վարուց նոցա, և երկրորդ՝ ընտրութիւն վիճակի կենաց նոցա։ Զ առաջինն պարտ է կատարել ըստ աւետարանին սկզբանց. և զերկրորդն՝ պարտ է ապստարել ողջոյն 'ի կոչումն աստուածային։

Եւ արդ ասեմ եթէ յերկաքանչիւր պարտս յայսոսիկ բազմագոյնք 'ի ծնողաց քրիստոնէից յանցանեն կրկնակի ներհակակիր օրինակաւ. քանզի 'ի բարեկրթութեան վարուց տարապայման զիջանին առ նոսա. ազատութիւն ինքնակար տալով նոցա. այս է առաջին մեղն։ Իսկ յընտրութեան վիճակի նոցա անհանձարաբար խստանան՝ բառնալով 'ի նոցանէ զպարտուպատշաճ ազատութիւնն. և այս է երկրորդն։

Արկին այս ազատութիւնք, մին՝ շռայլեալ, և մին զլացեալ, աւասիկ ձեզ ո՛ հարք և մարք և մանկածուք և վարժապետք, ողջոյն անկարգութիւնն 'ի դաստիարակութեան որդւոց։

ՄԱՍՆ Ա.

Երբակի ազգ են ինքնակար ազատութեան յորս չարաչար դաստիարակին որդիք։ Ազատութիւն թոյլ տուեալ առ 'ի պակասութենէ հսկողութեան. ազատութիւն ազդեալ 'ի չար օրինակէ. ազատութիւն ուսուցեալ վարժապետաբար։

Ունկն դիք ուշով, և զանանչումդ զոր ունիք զաշխարհս՝ ո՛ ծնողք, մերձեցուցէք դուք 'ի բանս զոր ասեմ։ Զանզի այսօր ոչ կամիմ այլ փաստս և ցուցակութիւնս, քան թէ զփորձ ինքնին զիրացդ և զսովորութիւնն։

Եւ արդ առաջին՝ վասն պակասութեան հսկողութեանն ասացէք ինձ անաչառ. իցէ՞ ինչ այլ արդեօք առաւել յաձախ և առաւել սովորեալ՝ քան 'ի նոսին իսկ 'ի հիքացեալ որդիսն յանձն առնել զիրս զկրօնից հաւատոյս և զվարուց առաքինութեան. և թողուլ

digitised by A.R.A.R.@

լքանել այնպէս զնոսա՝ զի ինքնին նոքա բուսցին և ա-
ճիցեն իբրև զծառաստանսկս յանտառս մայրեաց ան-
խնամք, անոռոգք, անմշակք։ Այլ զպակասութիւն զայս
հսկողութեան ոչ յաղքատս միայն է տեսանել կամ՝ ի
միջակային վիճակս արուեստաւորաց քաղաքին, այլ և
՝ի մեծատունս և յաղնուականս յայլ և այլ պատ-
ճառաց։

Այս արդ յայս թուլակի հսկողութենէ ծնողացն յա-
ռաջ գան հիւսացելոցն զաւակաց հետևանք կրկին չա-
բաչարք, խոչընդոտն և եղծիչք քրիստոնէական դաս-
տիարակութեան և բարեկրթութեան վարուց. այս են
տգիտութիւն ինքնաբերս յոյժ, և չարութիւն ապակա-
նադրծ։

Ի՞նչ տգիտութեան մասին՝ տեսանեմք մեք բաղում
ուրեք մանկունս յառաջացեալս՝ ի տիս՝ յուստերաց և
՝ի դստերաց, որք տակաւին ոչ գաղտիար ինչ և ոչ իղձ
մի և եռանդն ստացեալ ունին զկրօնից հաւատոցն, յո-
րում ծնեալ են և կեան. և սակայն տեսանեմք՝ զի գի-
տեն իսկ նոքա քաղաքավարել և սիրելի և նազելի տե-
սողացն զանձինս ընծայել. բայց՝ ի բարեպաշտութեան,
օրինակ ինն՝ յաղօթից ինչ մասին տակաւին գիտեն և
ոչ ինչ։ Ասեալ են քաջիկ խաղս, չեն ուսեալ տակա-
ւին ինչ մի՝ ի հոգևոր կրթութեանց կրօնի և վարուց։
Ասկսեալ են արդէն զգալ յանձինս երբեք երբեք զմ-
բոստ ապստամբութիւն մարմնոյն. այլ անփոյթք են
կամ չեն դաստիարակեալք դիմել՝ ի դարմանս ինչ հո-
գևորականս։ Ասեալք և վարժք են՝ ի ծաղրածու-
թիւնս և՝ ի կատակաբանութիւնս հեշտալուրս աշխարհ-
հիս. այլ չեն տակաւին վարժեալ՝ ի գիտութիւն ինչ
հարկաւոր խորհրդոց հաւատոյս։

Այս չիցեն այդոքիկ, ասէ ասացեալ, չիցեն ինքին նը-
շանաւորք դարուս այսորիկ, յորում կամքս. դար՝ որ
յամենայն գիտութիւն աշխարհական առաւել բարգա-
ւաճ և առաւել նրբաշնին, է և առաւել նուազեալն և
առաւել տգիտացեալն՝ ի գիտութեան փրկութեան։

Այս արդ այսչափ դժպատեհ կրից անկարգութեան
բաղում մասամբք՝ չիցեն անշուշտ պատճառք ինքնին
ծնողքն անհոգացեալքն և յոյլքն. որոց չիք ինչ փոյթ
կամ անձամբ անձին հրահանգել կամ այլոց տալ հրա-

digitised by A.R.A.R.@

հանգել զմնոտաղատունկս իւրեանց՝ 'ի խորհուրդս կրօնիս և յիմաստս քրիստոնէութեան։ Կարծիցէք թէ ելեւ, եթէ բնութիւն դոցա դեռաբուսիկ՝ բաւական ի ցէ հրահանգիչ անձանց լինել և վարժապետ պարկեշտութեան վարուց և հաւատոցն իւրեանց։

Մուի թէ ոչ վերնական ինչ յայտնութեամբ կամեսցի Աստուած հրաշագործել և վարժել զնոսա։ Ընդ մարտութիւնք քրիստոնէութեանս չունին մուտս 'ի մեզ այլազգ՝ քան ընդ զգայութեանց մերոց Ճանապարհ։ Ինչ որում և ընդ այս մուտ զբաւականեալք մեզ զՀմարտութիւնս բնութեան։

Այլ արդ անշուշտ, եթէ հարք և մարք գեղեցիկս 'ի զլուխս տարցին զպարտս իւրեանց, եթէ նոքա զմանկունս իւրեանց առեալ ածցեն առ վարժապետս իմաստունս և առաքինիս, և եթէ սոքա իւրեանց կենդանի բարբառովն վարժեսցեն զնոսա 'ի հաւատ և 'ի բարեպաշտութիւն, եթէ ոչ իբրև հետևակ ինչ և ումպէտ սպասաւորութիւն համարեսցին զմեծ զայս և զաստուածային վարժապետութիւն, եթէ զամենայն առաւօտս և ընդ երեկս միշտ անմեկնելի առ իւրեանս կալցին զնոսա, և մի ըստ միոջէ պարապով յայտ արասցեն նոցա զվախճանն և զվարձն հատուցման և զպատմութիւն և զգաղտնիս և զպարտս հաւատոցն՝ զոր դաւանեցին 'ի մկրտութեան իւրեանց. արդ ասեմ՝ եթէ յայսոսիկ նահատակեալ և զայսօրինակ ժրասցին քրիստոնէից ծընողք, անշուշտ սիրելիք չառակեսցի յաշխարհի ամենայն այս տգիտութիւն յաստուածային։ Այս մանաւանդ մեք յառաջին հասակէն լինիցիմք վարժք և հրմուտք հաւատոցս. որպիսիք ոմանք հերձուածոյն իւրեանց են՝ Այրաղանդդ անուանեալք, որպիսիք և Այրբրայեցւոց մանկունք. որք 'ի ջանս վարժապետութեան հարց իւրեանց և յառանձին և ամենայն անդուլ մշակութենէն՝ խորագոյնս ստացեալ ունին զիմաստս ամենայն և զխորհուրդս և զսկզբունս զձախողակ կրօնից իւրեանց. և զիտեն իսկ նոքա քաջիկ պաշտպան և ջատագով մարտանել մոլորութեանն, յորժամ անդուստ մանկունք եկեղեցւոյ չեն ուսեալ զՀմարտութիւնն։

Ասել դուք, որ ինձ ունին զնէք, քրիստոնէից մարք, յինչ այլ հաստատեալ է ձեր զժրագլխութիւնդ, զձեր

այսոյժս, զձեր խանդն, զձեր հանձարդ. և յինչ իրս այլ զբաղեալ է ձեր կամ թէ զուարճացեալ, եթէ ոչ առ 'ի հաստատել զձեր մանկունս 'ի հաւատս և 'ի սէր առ Աստուած և 'ի վարս բարեզգեացս, և կեանս իմն ընդել 'ի նոսա անզուգական՝ յանչափս գերազանցեալ քան զբնաւորականն, կեանս և կերպարան զքրիստոնեի։ Վասն իսկ, չգտանեմ և չտեսանեմ ես ազգի ձերում և բնութեանդ՝ քաջադէպ քան զայս աշխատութիւն առաւել արդոյ և պատուական, քան զայս վարժապետութիւն առաւել ազնուական, քան զայս զբօսանս և պարապումն՝ առաւել աստուածային։ Օ յինչ օգտեացեն մանկանցդ ձեր զարդդ և պճնութիւնդ, ձեր հիւսք ոսկեմանք, և հոպտանքդ ձեր փայլքդ դիմանց, և ձեմքդ նազաբայլք, այլ զվանդն հանդերձ։ Օ ձեզ յաղնուականացոյնն և 'ի վեհագոյնն կոչեաց 'ի վարս Աստուած՝ յորժամ ետ ձեզ որդիս, գործակից Աստուծոյ լինել. անտիսեղծ զպատկերն Աստուծոյ և զնմանութիւնն պահելով յորդիս ձեր՝ գեղեցիկ դաստիարակութեամբդ ձերով։

Հապա արիք դուք մարք, վարժապետուհիք նոցա 'ի հրահանգս կրօնից և առաքինութեանց ըստ բաւականին ձերոյ՝ անդատին յառաջին նշուլից բանին 'ի նոսա. մի թողուցուք մատաղ որդւոց ձերոց պարտապան դաւանել զանձինս իւրեանց՝ սիրոյն օտարաց յայն ինչ՝ զոր պարտ էր նոցա առ 'ի ձէնջ ունել ըստ իրաւանց ոչ միայն սիրոյն, այլ և արդարութեան։ Ուարուք ծնողք, զոր գեղեցիկս յոյժ զրեաց առ ձեզ Երանելին Շնորհալի հայրապետ. "Օ այս պատուէր, ասէ, առ Հաստատակ աւանդեմք. զի զմանկունս ձեր երկիւղիւն Աստուծոյ սնուցանիցէք. խրատելով զնոսա 'ի մանկական տիոց լինել աստուածասէր, ողորմած, աղօթասէր։ Լաւ ուսուցէք նոցա զբանս աղօթից. և սատարեցէք չտովսրել 'ի խօսս ազատղիս և 'ի յիշողատուութիւնս. զի 'ի մանկութեան ժամանակ առաւել տնկի խրատ ծնողացն 'ի միտս մանկանցն անջնջելի յիշատակաւ. ընդ որում և վարձս բարեաց ընկալջիք փոխարէն 'ի տեառնէ՝՝։

Նմին արմատոյ անհոգութեան հարց և մարց՝ են և դառն շառաւիղք ապականագործ չարութեանն՝ զոր ասացի. և յոր յաւուրս մեր վարակեալ են ոչ պատա-

digitised by A.R.A.R.@

նեակք միայն, այլ և պասպաչող տղայքն։ Եւ զինչ հարկ իցէ, ո՞ հարք և մարք, վկայութիւն 'ի մէջ առնուլ զխղճի մտաց ձերոց վասն բանիս այսորիկ. գիտէք իսկ քաջ դուք ինքնին և խոստովան լինիք, եթէ նոյն ինքն անմեղութիւն և պարկեշտ գնացք մանկանց տըղայոց յետ 'ի լոյս բանին ընծայելոյ նոցա, և յետ յարբունս ինչ հասանելոց աշխոյժ պատանեկութեանն, է նոյն ինքն գեղեցիկ պտուղն պտղաբերեալ 'ի նոսա յանքուն և հետաքնին և յուշիմ հսկողութենէն՝ զոր կանխեցին կալան հարք նոցա։

Զդ աղէ ասացէք ինձ, հարք, զիարդ և որպիսի իցեն յայս պէտս՝ ձեր խնամքդ և հոգարկութիւնք վասն որդւոց ձերոց, զոր ետ ձեզ Աստուած։ Զդրեօք նոքա հայեցեալ 'ի վարս ձեր՝ մարթիցին կալ ճիալ 'ի փրկաւէտ և յերջանիկ յանգիստութեան յայնմիկ որ պահպանն է վարուց նոցա։ Զդրեօք իցէ՞ երբէք տեսանել 'ի ձեզ գործ մի, կամ զրուցաբանութիւն մի, կամ բառ մի միայն, յորմէ մանկունքդ ձեր զարթիցեն յորդորեսցին 'ի հետախուզել՝ 'ի զեան և 'ի կորուստ անձանց իւրեանց։ Զդրեօք իցեն ձեզ լրտեսք և պահապանք արթունք կարգեալք 'ի վերայ որդւոց ձերոց, գիտել տքնաբար զհետս շաւղաց նոցա և գիտել իմանալ զանանապարհ նոցա, ո՞ր արդեօք յառնեն գնան նոքա, և ո՞ր արդեօք դեղերին նոքա, և ընդ որո՞ց։

Զդրեօք տեղեկացեա՞լ իցէ ձեր այսոցիկ. և գիտիցէ՞ք եւս արդեօք նաև զվարժս ուսման նոցա, զինչ ուսանին. ո՞ր այն արդեօք գիրքն իցեն, զոր առ իւրեանս ունին և ընթեռնուն նոքա և թարթափին 'ի նոսա։ Եւ ո՞ր այն զվարդքն իցեն և ընկերք, ընդ որս կենակցին նոքա։

Գիտիցէ՞ք արդեօք և զայն եթէ որպիսիք ոմանք իցեն ծառայքն և որպիսիք վարժապետքն, և մանկաձուքն, որոց յանձն առնէք դուք զմանկունս ձեր 'ի լրնուլ զպակասութիւն հսկողութեան ձերոց։ Ամացա՞յք ճշգրիտ, զիարդ իցէ հաւատարմութիւն նոցա, մտադիր աչալրջութիւն նոցա. և առաւել քան զամենայն՝ զիարդ իցէ բարեպաշտութիւն դոցա և վարք։

Եւ ապա 'ի վերջի՝ խնամ ունիցիք դուք արդեօք զի մի և թոյլ և պատճառս ինչ տացի նոցա՝ առ 'ի մի-

digitised by A.R.A.R.@

մեանց յոռանալոյ և յիրերաց եղծանելոյ որդւոց ձե-
ռոց, իմաստութեամբ և խոհեմութեամբ վայր ցուցեալ
և տեղի զատուցեալ իւրաքանչիւր նոցա՝ անջրպետու-
թիւն 'ի մէջ արկանելով նոցա եթէ 'ի ժամանակ հան-
գրստեան գիշերայնոյն, և եթէ 'ի տունջենային կենա-
կից կենցաղավարութեան նոցա. որ կարևորքն են և
վայելչականք և քաջադէպք՝ եթէ հասակին նոցա և
եթէ սերի նոցա։

Ի՞նչ թերևս թուեսցի ձեզ, տեարք, եթէ 'ի մա-
նուսն ինձանեմ ես և յումպէտս և 'ի ռամկականս։ Ի՞նչ
տակայն այդոքիկ, քաջ միտ դիք, այդոքիկ են արուեստք
և ճարտարութիւնք ճշգրտիւ պահանջեալք 'ի պահել
ողջիկ յորդիս ձեր զանգիտութիւն չարին, որ ոչ ինչ
նուազ պիտեան և օգտակար է նոցա քան զգիտութիւն
բարւոյն։ Ի՞նչ անշուշտ յայսպիսեաց աստի բազմութիւք
երևեցան յեկեղեցի յառաքինեաց և 'ի բարեպաշտօն
քրիստոնէից յերջանիկ դարսն յայնոսիկ, յորժամ
մարք բարեպաշտուհիք 'ի գրկաց իւրեանց հանեալ ըղ-
մատաղ որդեական՝ առեալ առաքէին 'ի դաստիարակու-
թիւն 'ի մենաստանս ուրեք սրբոց, կամ առ ոտս ուրուք
յառաքինեաց. ուրանօր առ ժամանակ մի մեկուսա-
ցեալ յաշխարհայնոց աստի, և 'ի միտս և 'ի խորհուրդս
իւրեանց տպաւորեալ ոչ այլ, բայց զվարժս առաքինու-
թեան, և 'ի սրտի զսէր և զերկիւղն Ի՞ստուծոյ, զան-
մեղութիւնն զսրբոյ մկրտութեան առեալ հասուցանէին
մինչև 'ի խոր ծերութիւն։

Ի՞կեսցուք արդ 'ի ժամանակն, յորում յառաջին
յանտիական դաստիարակութենէն եղեալք՝ ձեզ կե-
նակից կենցաղակիցք լինին վայր մի 'ի չափ հասեալ
մանկունքդ. յորում ժամանակի առնուն նոքա զազա-
տութիւնն զայն զվնասակար, զազատութիւնն ասեմ
ազդեալ 'ի չար օրինակէ, զոր կանխեցի ասացի։

Ի՞թէ վասն երկրորդիս այսորիկ պակասութեան դաս-
տիարակութեան բան հանդերձեալ էր իմ խօսել,
տեարք իմ, 'ի գեղջ ուրեք կամ յաւանի ուրեք, կամ 'ի
համախմբութեան ռամիկ որերոյն, անաւագ ծառայից
և յետին արուեստաւորաց, նուաստութիւն արդարև
և ոչ մի հանարէի մեծի առաքելական սպասաւորու-
թեանս՝ մի առ մի մանրակրկիտ 'ի դէմս ածել զչար հե-

digitised by A.R.A.R.@

տեւանն և զանկարգութիւնն զսինկրքոր և զանաւաղ վարուց նոցա և զչարախտաւոր օրինակացն նոցա։ Բ. սէր համարձակ, եթէ սոքա են ահա պատճառք սկզբնաւորութիւն ախտից, ապերասանութեանն, յանդգնութեանն, խեռութեան և ստահակութեան 'ի խօսս, մեղկութեանն 'ի գնացս, անամօթ լրբութեանն, զոր է տեսանել յաւուրս մեր 'ի պատանիս ռամկին։ Բ. սէր եթէ ահա յայնպիսի հարց ուսանին որդիքն հայհոյել զԲ. ստուած, մինչ և ծանուցեալ զԲ. ստուած։ Բ. սէր եթէ 'ի նոցանէ ուսանին որդիքն յիշողնատու լինել, և երես չառնել սրբազանիցն և աստուածայնոց։ Բ. սէր, եթէ 'ի նոցանէ ուսանին որդիքն ոչ մեծ ինչ դրել նաև զանսուտ երդմանցն կռել։ Բ. սէր եթէ 'ի նոցանէ ահա ուսանին որդիքն, և զմեղկիլ շփանալ և զպագշոտութեան խօսսն հանել 'ի բերանոյն՝ իբրու կարծելով նազաբանել։ Բ. սէր եթէ 'ի նոցանէ ուսանին որդիք զարբեցութիւն, զգողութիւն, զվնասանանն, զկապ, և որ ինչ յայսպիսեաց աստի, եղեալ նոցա առաջի յօրինակ 'ի սինկրքորաց անտի, 'ի դատարկակեցիցն, 'ի գռեհաբնակացն, 'ի կապելայս թարթափելոցն, կռուարարացն, երդմնահարիցն, յափշտակողացն, 'ի խաղս զակատելոցն, գինեձանիցն, հայհոյչացն։

Օ այս ամենայն և զայն ևս համարձակեալ ասէի ես տեառքդ իմ. և չասէի արդեօք ինչ մի, որ ոչն ակներև ցուցակութեամբ առակեր ողջոյն զանբարի զգնացս ըզվատ օրերոյն այնորիկ։ Բ. յլ քաւ, տեառքդ, չունին այդոքիկ մասն մի և բաժին ընդ գնացս արդոյ և պարկեշտ ունկնդրացդ։

Սակայն և առ ձեզ ժամ ասել զայս, եթէ երբէք դուք ինքնին ձերովքդ վնասաբեր օրինակօք եղծանէք յորդիս ձեր զայն ինչ, զոր մեք ընդ ամն բազումն աշխատեալ սքնութեամբ շինեցաք 'ի նոսա։ Լուարուք վայր մի աղաչեմ զայսր յանդիմանութիւնն հանդերձ զուգակշռութեամբն՝ զմերն և զձերն։

Մեք զորդեակս ձեր վարժեցաք 'ի պարտս կրօնից սրբութեան, և կանուխ վառեցաք զնոսա սիրել, պաշտել 'ի կրթութիւնս գործոց քրիստոնէական բարեպաշտութեան։ Բ. զի զինչ արդեօք համարեացին նոքա զկրթութիւնն զայնոսիկ, յորժամ տեսանիցեն զձեզ

'ի տան անհոգացեալ 'ի նոյն. կամ թէ միայն ինչ մի բարեպաշտութեան գործ ցուցեալ ձեզ նոցա, և այն վեր 'ի վերոյ և հարևանցի։ Նշուշտ նոքա խորհուրդ 'ի մտի կալցին՝ տեսեալ զայն, եթէ ոչ այլ ինչ ուրեմն են կրթութիւնքդ այդոքիկ, բայց կերպարանք առ երևոյթք քաղաքականութեան, և կամ թէ պարապմունք տղայականք։

Եթէ զձեր որդեակս սովորեցուցաք կանուխ յաշխատութիւն կրթել զանձինս և մի երբէք կալ դատարկ. նաև յաջողեցաք մեք վառել 'ի նոսա զսէր ուսման վարժից և զվաստակոց։ Արդ զինչ համարեսցին նոքա զայս զմեր դաստիարակութիւն, յորժամ յետ սակաւուց տեսանիցեն զձեզ 'ի տան իւրեանց անգործ և անվաստակ վարել կեանս։ Հաստատեսցեն նոքա արդեօք 'ի միտս, եթէ այս են ուրեմն պարտք և վիճակ և վայելչութիւն դոյաւոր մարդկանն։

Եթէ զձեր որդեական դաստիարակեցաք երբէք երբէք յառանձնութեան ամիսոիել զմիտս և վայր մի 'ի քնին առնուլ զքաղաքավարութիւն կենաց իւրեանց և 'ի լաւագոյնն յարդարել։ Եւ նաև յաջողեցաւ մեզ ընդել 'ի նոսա և տպաւորել զբարեկարգութիւն կենաց յամենայնի, և վայելչութեան փոյթ ունել յամենայն 'ի գնացս։ Արդ զինչ արդեօք ունիցին նոքա ասել վասն դաստատութեանց մերոց այսոցիկ, յորժամ դարձ առարեալ նոցա 'ի տուն՝ յետ սակաւ ժամանակի տեսանիցեն զձեզ՝ զամենայն ակնածութիւն 'ի բաց եղեալ այնպէս խօսել, զրուցել և զգենուլ, և վարել յամենայն 'ի գնացս վայրապար խորհրդով և անվայելչական աղատութեամբ։ Տեսեալ զասոսիկ՝ խորհուրդ 'ի միտս հաստատեսցեն ձեր որդեակքդ, եթէ արուեստք և հնարիմացութիւնք իցեն ուրեմն այդ կրթութիւնք մեր և հրահանգք՝ առ 'ի ընծայեցուցանել զանձինս և վայելչանալ յաշխարհի և արդոյ համարիլ առ կենցաղասէր մարդիկդ։

Օր վասն ուստերացն ասացի, ասացէք դուք զնոյն և վասն դստերացն. որք երբէք 'ի չար օրինակաց մարցն 'ի տունս՝ յոռացեալք 'ի գնացս, 'ի մոռացօնս դարձուցանեն՝ զոր միանգամ 'ի գեղեցիկ հրահանգաց վարժապետուհեաց իւրեանց բարեպաշտից, կամ 'ի վարչաց

digitised by A.R.A.R.@

իւրեանց, կամ՝ 'ի հոգևոր հարց իւրեանց, դաստիարակեցան յառաջին տիսն և ուսան։ Օ՜ինչ. զայն եթէ զեղ և վայելչութիւն ջանէ շուք և պատիւ ազգի նոցա, եթէ չիցէ միանգամայն զուգեալ ընդ սուրբ երկիւղին Աստուծոյ. և թէ ծնգասիրութիւն նոցա փառք և վայելչութիւն է նոցա յամենայն իսկ 'ի ժամանակս. և թէ գոն վաստակք և պարապմունք առանձինք քաջադէպք սերի նոցա. յորմէ չէն նոքա ազատք ոչ ըստ վիճակի կենացն և ոչ ըստ աւագութեան բարձի. և թէ վայելչութիւն գնացիցն և չափաւորութիւն և պարկեշտութիւն և համեստութիւն յամենայնի, և ժրագլուխ տնտեսութիւն, և կրօնից բարեպաշտութեան արգասիք, այս ամենայն էն Հնդրիտ փառք և սեպհական և տիրական զարդք կնոջ մարդոյ։ Աստուածիկ վարժք և հրահանգք առհասարակ ճահաւորագոյնք ոչ միայն քրիստոսական կրօնին, այլ և բնաւորական լուսոյ բանին։

Աստ յայսոսիկ վարժեալ դաստերքդ յառաջին տիսն՝ եթէ զհակառակն սոցուն 'ի ձեզ տեսանիցեն, ո՛ մարք, զինչ ասասցեն 'ի սրտի իւրեանց. զինչ արդեօք, եթէ յաղագս գնացից ձերոց՝ զոր տեսանեն, և եթէ յաղագս հրահանգաց դաստիարակութեանն՝ զոր առին կանուխ 'ի վարժապետուհեացն։ Ո՞չ ապաքէն զօրաւորագոյնս ազդեսցեն 'ի նոսա առաջիկայ օրինակքն, քան զանցեալ դաստիարակութիւնս։

Աստ կամիք ո՛ ծնողք, որպէս և կամիք, դիտեմ՝ քաջ, եթէ ուստերքդ ձեր և դստերքդ լինիցին լաւք և երկիւղածք, համեստք և կրօնասէրք, և ուշիմք 'ի գնացս, և ապա յարբունս հասեալք՝ պիտանիք քաղաքին, պիտանիք ազգին. ցուցէք նախ դուք արդեամբք յանձինս ձեր զնոյն գեղեցիկ առաքինութիւնսն. և գործք ձեր դաստիարակեսցեն զմանկունս ձեր՝ առաւել քան զբանս ձեր և զմեր։

Կամ՝ է արդ ասել յաղագս երրորդի մասաբեր աստուածութեանն, զոր տան ծնողք հիքացելոց զաւակացն. ազատութիւն՝ որպէս ասացի՝ իբրու դաս տուեալ վարժապետաբար։ Ասեմ՝ եթէ ուղղակի վարժապետք չարութեան և անիրաւութեան էն նոքա որդւոց իւրեանց. քաւ յինէն զայս ասել աստ 'ի ժողովի արդոյ

digitised by A.R.A.R.@

ունկնդրաց։ Այս սակայն է վարժապետութիւն 'ի վերին երեսս անմեղանչական, և 'ի նեղբոյ փնասաբեր, զոր վարդապետութիւն ըստ աշխարհի յորջորջեն յընդհանուրս։

Գիտութիւն կրկին գտանեմ ես. և երկաբանչիւրքն գիտութիւնք աշխարհի կոչին և են. մին ուղիղ և գովելի, միւսն խոտորնակ և չար։ Այ գիտութիւն աշխարհի, որ սահմանադրէ և ուսուցանէ որ ինչ վայելչական է և պարտք են ընկերական կենաց և քաղաքական բարեկարգութեան։ Գիտութիւն է այս՝ որ հրահանգէ զմեզ քաջիկ, զինչ պարտք իցեն հատուցանել ըստ իւրաքանչիւր կարգաց, առ մեծամեծս, առ փոքունս, առ ստորինս, առ հաւասարս, առ բարեկամս, առ օտարս. ընդ անձին, ընդ աշխարհի, ընդ Աստուծոյ։ Գիտութիւն ոչ ինչ ամենևին ներհակեալ բարոյականի աւետարանին. նա մանաւանդ մեծապէս պիտեան առ 'ի նոյն. քանզի և երբեք չէ մարդ բարի, չէ քաղաքացի բարի, որ ոչն է քրիստոնեայ բարի։ Զեմ ես վայրենամիտ այնպիսի, կամ այնչափ խրթնացեալ 'ի վարդապետութիւն, զի և մերժեալ դատապարտ արարիցէ զգիտութիւն զայս աշխարհի. նա դատապարտ ևս առնեմ զբարեպաշտեալսն խաբէութեամբ մնաց և զթերակատար հոգևորսն զայնոսիկ, որք իբրև 'ի կարգի քրիստոնէական բարեպաշտութեան մոլորութեամբ դասեն զմարդատեաց ըզբարսն և զանընտել վայրագասուն բրտութիւնն։

Ասան որոյ և ասեմ եթէ զայս գիտութիւն, որ մարդասիրագոյնս և ազնուականս գիտէ յարդարել զայր քաղաքացի, պարտ է ձեզ ինքնին ո՛ հարք և մարք ոչ միայն ուսանել և պահել, այլ և վարժիւք ուսուցանել զնոյն յարբունս հասելոց ձեր մանկանց։ Այանզի զովաւ ըստ ժամանակին յաջողեսցին որդիք ձեր լինել միանգամայն և ծնողք բարիք և բարեկամք բարիք, և տանուտերք բարիք, և թագաւորաց հպատակք բարիք։

Գիտացէք քաջ եթէ բարոյական առաքինութիւնք սատարք են աւետարանին վարժից, և հիմունք են և խարիսխք քրիստոնէական առաքինութեանց։ Այլ սակայն և քաջ միտ դիք զոր ասեմ, մի փոխել մի շփոթել զգովելի զայս գիտութիւն ընդ միւսումն գիտութեան աշխարհի, զոր մերժէ և արգելու աւետարանն. մի դուք ուսա-

digitised by A.R.A.R.@

նիջիք զայն և մի որդւոց ձերոց ուսուցջիք։ Այն է գիտութիւնն՝ զոր ստորագրեցին հարքն սուրբք՝ իբրև վարժք ապականագործք հոգւոցն և իբրև արդարք «Գիտութիւն կորստեան»։ Այս է այս գիտութիւն որ ձգնի բովանդակ կերպարանափոխ առնել և գեղեցիկ ընծայել նման զախտս և զմոլութիւնս. և զամենայն զկիրսն՝ արդոյ և նազելի անուանակոչութեամբք քօղարկեալ իբրև պարտս կենցաղականս, կամ իբրև առաքինութիւնս աշխարհականս, և իբրու աշխուժութիւն և խանդս ոգւոյ զարձակերպանն զկեանսն։

Այս գիտութիւն է, որ զնենգամիտ և զխորամանկեալ քաղաքականութիւնն տայ կարծել իբրև հանճար և ուշիմութիւն և խոհեմութիւն։ Այս գիտութիւն է, որ զփառասիրդրութիւն և զամբարհաւաճութիւն տայ 'ի գովութիւն առնուլ և համարել իբրև յաջողաձեռն մեծանձնութիւն և աշխոյժք ոգւոյ։ Այս գիտութիւն է, որ զանհանճար և զանակնածու համարձակութիւնն հանդգաղօր խառնէ և շփոթէ ընդ ընտելական կենակցութեան և ընդ պարկեշտ քաղաքավարութեան։ Այ 'ի վերջէ՝ այս գիտութիւն է որ առ հասարակ յաշխարհի իբրև նուաստութիւն և անաւգութիւն ոգւոյ կարծեցուցանէ զքրիստոնէականն կենագործ խոնարհութիւն սրտի. իբրու տմարդի վայրենութիւն՝ զնենգանձնական կեանս. իբրու պարտս ինն բնական՝ զոգին վրէժինդրութեան. իբրու կեղծաւորութիւն զբարեպաշտիկ և զերկիւղած վարս։

Այ արդ աղէ առացէք ինձ, ունկնդիրք, եթէ երբէք ոք 'ի հարց ժրացուցէ զորդիս իւր յանդգամութիւն, 'ի բռնութիւն, 'ի չարութիւն, 'ի պղծութիւն. կամ թէ վարժոց կալեալ՝ հմտացուցէ զնա 'ի կրօնս հեթանոսական մնոտիապաշտութեանցն, չասէ՞ք դուք զայնպիսին հայր ամբարիշտ և պիղծ և սեղանակապուտ և անհաւատ։

Այ արդ միտ դիք ո՛ ծնողք. կրօնքս մեր այս սրբութեան՝ որ դատապարտ առնէ զանհնարին զմեղսն զայնոսիկ, նոյն ինքն արդեօք անդատապարտ թողու զկեղծաւորութիւն, զպատրանս, զնենգութիւն, զխարդախութիւն, զյանդգնութիւն, զվրէժինդրութիւն, զբռնասացութիւն։ Այ բնաւ։

digitised by A.R.A.R.@

Լ՝ արդ դուք ինքնին զայդոսիկ ուսուցանել հաճարիք որդւոց ձերոց, յորժամ նստիք և ազդիք 'ի նոսա ի մնասս իմն և վարժս և սկզբունս զվնասաբերս զայդ աշխարհային զիտութեանն՝ զոր ասացի, և նկարեցի, և զոր հարքն սուրբք կոչեցին "Գիտութիւն կորստեան"։ Լ՝ մանաւանդ՝ յորժամ (որ յանձախեալ է արդ բազում ուրեք, թէ ոչ ամենայն ուրեք) յորժամ թողուք լքանիք զուստերս ձեր յազատութեան կենաց, յազատութեան խօսելոյ, յազատութեան կենակցելոյ. անհոգացեալք և 'ի պարտս փութաջանս մայրենիս յաղագս հրահանգաց ժուժկալութեան և ծնգասիրութեան, դստերաց ձերոց։

Լ՝ յլ թերևս ընդդէմ ինձ ասասջիք բանս, եթէ այդ ուստերքդ մեր և դստերքդ մեր չեն վասն միանձնական կենաց. այլ այնպէս դաստիարակին իբրև սահմանեալք և պատրաստեալք վասն ամուսնական կարգին։ Լ՝ զդ ես այժմ չասեմ զայն՝ որ ճշմարիտն է և իրաւ, եթէ չպարտիք դուք ամենևին 'ի բաց քեցել պարզապէս զորդիս ձեր յամուրի կենաց. զայս միայն ասեմ՝ եթէ ընդ հակառակս ամենևին ընթանայք դուք դիտաւորութեան ձերոյ։

Լ՝ սիք դուք դաստիարակել զդոսա վասն ամուսնական կարգի։ Լ՝ զդ յորժամ կին ածեալ կամ առն եղեալ որդիք ձեր՝ արասցեն զայն ինչ՝ զոր 'ի ձէնջ ուսան յայսպիսի դաստիարակութեան իւրեանց, լինիցին այնուհետև նոքա արամբիք պճնասէրք. և կանամբիք անհոգք, կանայք անհաւատարիմ և արք էնաթոզք, հարք յուլացեալք և մարք անդորովք, տանուտէարք անմտադիրք և տանտիկնայք անտնակալուչք։ Լ՝ յայնժամ զինչ. ընտանիք տժգոհք և տունք և գերդաստանք և իրք հասարակաց վեր 'ի վայր և առհասարակ անկարգացեալք։

Լ՝ սիք դուք ինձ՝ դաստիարակեալ զորդիս վասն ամուսնական կարգի։ Լ՝ ես ձեզ ասեմ, վասն այդորիկ մանաւանդ հաստել հաստատել զդոսա 'ի սուրբ եկեղն Լ՝ ստուծոյ. որովհետև "Ի՝ արմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է. իսկ աստուածպաշտութիւնն՝ որպէս ասէ աստուածային առաքեալն՝ առ ամենայն ինչ օգտակար է. և զաւետիս կենաց ունի զար-

digitised by A.R.A.R.@

դիս և զՀանդերձելոցն ... ։ Իսկ աշխարհասէր գնացք, և անզգոյշ վարք, և անժուժկալ բարք չմարթին լինել կրթութիւնք, ոչ կարևորք և ոչ օգտակարք 'ի սրբութիւն, և 'ի կատարումն պարտուց խորհրդոց ամուսնութեանն։

Բ. սէք դուք ինձ դաստիարակեալ զորդիս վասն ամուսնական կարգի։ Բ. ես ձեզ ասեմ եթէ վասն այդորիկ իսկ առաւել կրթեցէք սովորեցուցէք զդոսա 'ի զգուշաւորութիւն, յաչալրջութիւն, 'ի համեստութիւն, 'ի շրջահայեցութիւն։ Վանդի գայթագղութիւնք և խոչք և թշնամիք անմեղութեան պատանեացն, են իսկ արդարև քարընդոսն և թշնամիք ամուսնական հաւատարմութեան։

Բ. սէք դուք ինձ դաստիարակեալ զորդիս վասն ամուսնական կարգին։ Բ. ես ձեզ ասեմ, ազդեցէք ուրեմն և տպաւորեցէք 'ի նոսա զկատարեալ և զՀրեշտակաղատիար զկարգին զայնորիկ. քանզի չէ ամուսնութիւնն կարգ ազատ և արձակերասան կենաց. չէ կարգ ըստ հաճոյս և ըստ քիւն գնացից. այլ կարգ է դա հպատակութեան, ակնածութեան, աշխատութեան, սրբութեան։

Իսկ 'ի վերջէ, վասն ամուսնական կարգին դաստիարակեցէք դուք զորդիս ձեր. Ջանացարուք ուրեմն, զի 'ի ձէնջ ուսցին դոքա կանուխ զՀնութիւն տան, ըզվոյթ և զպարապել յաշխատութիւն, զսովորելն թարթափել 'ի տան։ Օ ի 'ի ձէնջ ուսցին և կանուխ վարժեսցին 'ի պահպանութիւն առ տնին կարգի, 'ի դաստիարակութիւն որդւոց, 'ի կառավարութիւն ծառայից։ Օ ի 'ի ձէնջ ուսցին ոչ զվայրապար խիղճ զանհանձար նախանձաւորութեանն, այլ զիսոհական և զՀանձարեղ զգուշութիւնն, առ 'ի ոչ խռովել ամբոխել և քակել կամ վասն կասկածանաց կամ վասն կազից և դատից զամուսնական, զպատուական, զսուրբ և զօրինաւոր ընկերութիւնն։

Օ այսոսիկ ազդեմ, տեսարք իմ, քանզի այս դաստուութիւնք և օգտեսցեն որդւոց ձերոց, յորժամ ամուսնական վիճակեսցին կարգի. միանգամայն և ոչ վնասեսցեն նոցա, յորժամ 'ի կարգ ամուրի կենաց կոչեսցէ զնոսա Բ. ստուած։ Վանդի և ընտրութիւն այսմ կամ

digitised by A.R.A.R.@

այնմ կարգի տիրապետ'ի ձեռս նոցա է, և ընդ իրաւամբք որդւոց ձերոց կայ։ Այլ սակայն է տեսանել զՁերութիւն զայս առ բազումն'ի ծնողաց քրիստոնէից, որք զաստուածիւն շնորհելով որդւոց իւրեանց զվնասաբերն'ի բարեկրթութիւն վարուց նոցա զոր ցարդ լուայք, բառնան ապա'ինոցանէ զազատութիւնն՝ զոր պարտ էր տալ նոցա յընտրութիւն վիճակին իւրեանց։ Զոր չպարտէին՝ տան. և զոր պարտէին՝ չտան։ Ցեսցուք զայս վաղվաղակի, վայրիկ մի հանդիստ առեալ։

ՄԱՄՆ Բ·

Որչափ չար է ծնողաց բառնալ զպարտուպատշաճ ազատութիւն որդւոց իւրեանց, յընտրութեան վիճակի կենաց, այնչափ և վնասաբեր յոյժ է այս'ի հետևանսն։

Այլ զի ըստ քմնց և ըստ հաճոյից իւրեանց խնդրեն շրջել զկոչումն վիճակի որդւոց՝ 'ի շահ օգտի զերդաստանին իւրեանց. և առ այս փաստս իմն և պատճառս 'ի ներքս բերեն ծնողք, մինչև կատարեսցեն զկամս իւրեանց 'ի վերայ որդւոց։

Այդ որդեակ մեր, ասեն, յաջողաձեռն է և ուշիմ է մտօք. ուստի և միայն վասն աշխարհի ծնեալ երևի դա լինել յապայս'ի շուք և'ի պարծանս և'ի շինութիւն զարմին իւրոյ և տան։ Այլ յայն ինչ չհային նոքա, զի յայտնի և ակներև կոչէ զնա Աստուած յայլ վիճակ կենաց եթէ եկեղեցական իցէ եթէ վանական։ Այլ վասն այնորիկ սկսանին ապա տալ նմա դաստիարակութիւն իմն աշխարհային, առ'ի շինուցանել յորդեկին իւրեանց զեռանդն ընդաբոյս առ այլ կարգ, և հեղձուցանել'ի նմա զսերմանս աստուածային կոչմանն։

Իսկ զմիւս որդեակ մեր, ասեն, թուի թէ կոչէ ինքնին Աստուած'ի կարգ աշխարհական. թէ և առ վանականն չունի ինչդա բերումն, նաև ոչ առ եկեղեցական վիճակ եցոյց նա երբէք յօժարութիւն իմն և միտումն։ Այլ սակայն զհետ լինին՝ այլ և այլ թելադրութեամբք յայն վիճակ յօժարեցուցանել զնա, և առնուլ կարգել զնա յայն ինչ՝ յոր չունի ինչ և կոչումն ամենևին։

digitised by A.R.A.R.@

Ա. յս ինչ է աւաղիկ, ո՛ ծնողք, զոր կոչեսցէ զք իրաւամբք «Անխորհրդաբար բարձումն ազատութեան...», զոր պարտ էր ձեզ ընդհանրել որդւոց ձերոց յընտրութեան վիճակին իւրեանց։ Պարտ էր, ասեմ. քանզի՝ քաջ միտ դիք, վիճակ կենաց իւրաքանչիւր մեծապէս զուգակցեալ է ընդ փրկութեան հոգւոյ. նա պարտի ընտրել զայն՝ որ պարտի նովաւ փրկութեան հասանել։

Այս արդ աղէ ասացէք ինձ. յորժամ կապէք դուք զորդեակն ձեր յայն վիճակ կենաց՝ յոր չունի ինչ նա կոչումն, արդեօք նաև երաշխաւոր մնանէք դուք ընդդէմ ամենայն թերութեանցն և զանցառութեանցն 'ի պարտս վիճակին այնորիկ։ Կարո՞ղ իցէք տալ որդեկիդ նաև յաջողակութիւն, հանապազորդութիւն, և զօրութիւն ժուժկալել 'ի վիճակին յայնմիկ։ Կառնայցէ՞ք դուք ըզբեանն, թեթևացուսջի՞ք զծանրութիւնն. լինիջի՞ք և դուք վաստակակիցք յաշխատութիւնսն վիճակին. 'ի գլուխ տարջի՞ք անվթար դուք ինքնին զպարտսն. փարատեսջի՞ք դուք 'ի բաց զփորձութիւնսն վիճակին զծանուցեալսն, զպէտսն. ընդ նոսին և զդայթագղութիւնսն և զխոչ և զխութ փրկութեան։

Ա՛յ ինչ արդեօք։ Վանդի անձին առանձին են դլխովին իրքդ և անհատականք. ապա ուրեմն մեծապէս իրաւամբք պէտք են և ընտրութեանն այնմիկ՝ անձին առանձին լինել և անհատական։ Անհանանելի է ողջոյն փաստս և անդրժելի են իրաւունքն, որ աղագաւ և ատեանք դատաստանաց՝ եթէ՛ եկեղեցական և եթէ աշխարհական՝ հանձարեղ օրինադրութեամբք անդրժելի և յապահովի կացուցին զաղատութիւն որդւոց յընտրութեան վիճակին իւրեանց։

Շատ լիցի այսչափ ինչ վասն այսորիկ. անցցուք մեք ասել՝ և որ ինչ ծնողացդ պարտք են նաև 'ի բանի ընտրութեան նոցա։ Արդար է եթէ ընտրութիւն վիճակի կենաց՝ որդւոցն է. սակայն է համանդամայն և ձեր ծնողացդ. և երկաքանչիւրոցն ևս 'ի դէպ պատշաձի այս այլ և այլ օրինակաւ։ Որդիքն են տեարք ընտրութեանն, և ծնողքն են ուղղիչք և վարիչք ընտրութեանն։ Որդւոցն անկանի ընտրել. այլ դուք պարտիք կառավարել զնոսա յընտրութեանն՝ զոր ընտրեն։ Այսպէս առաջին դասատիրակելով և կրթելով զնոսա յայն ինչ իրս ամենայն ջանիւ

digitised by A.R.A.R.@

որք կանուխ պատրաստեսցին զնոսա յաստուածակոչ վիճակն։ Եւ ապա առաջի զնեալ նոցա յայսմանպէս և զՀեռանան և զվտանգն զընտրութեանն, յոր հակամիտեալն էն, 'ի կշիռ ձգելով ընդ այնմ զբաւականութիւն նոցա զընդաբոյս. զի յաջողեսցին ապա քաջապէս 'ի ձեռս բերել զփրկութիւն հոգւոց իւրեանց՝ որում փափաքէն։ Եւ ուշ ունել զի ուղիղ ճանապարհաւ և անարատութեամբ և արդարութեամբ զբռամբ ածցեն զվիճակն՝ զոր ընտրեցին անձանց իւրեանց։

Հաւասիկ ձեզ սակաւուք, զոր ըստ թելադրելոյ բնական պատուիրանին պարտիք դուք որդւոց ձերոց յընտրութեան վիճակի նոցա։ Յորս եթէ պակասեսջիք կամ ծնողքդ յուլութեամբ, կամ որդիքն անսաստութեամբ, երկոքեանդ միանգամայն տայցէք համարս Աստուծոյ. յանցանիցեն այն որդիքն, այլ ոչ անմեղք արձակեսջիք և դուք։ Եւ զքա դատեսցին 'ի պատճառս անբարի ընտրութեան իւրեանց. և դուք դատապարտք լինիջիք 'ի պատճառս անբարի կառավարութեան ձերոյ. "Եւ 'ի ձէնջ, ասասցէ ձեզ Աստուած, ես 'ի ձէնջ թէպէտ և բարձի զիշխանութիւն ընտրութեան վիճակին որդւոց, այլ 'ի ձեզ յանձն արարի ուղղել և կառավարել զնոսա։ Եւ զոյն ինքն ընտրութիւն վիճակի էր իսկ նախապատիւ և տիրական մասն քրիստոնէական դաստիարակութեան. և վասն այնորիկ խնդրեի քաջիկ իմն մտադրութիւն զնախախնամութեան և զնախատեսութեան ծնողացդ վասն նոցա։ Ձեզ անկանէր դիտել զնել հանձարեղ խորհրդածութեամբք զերիտասարդական նոցա զանխորհուրդ մտածութիւնս։ Ձեզ անկանէր քաջ և օգտաշահ խորհրդով զթեթևամտութիւն նոցա վանեալ՝ 'ի խելամտութիւն ամրապնդել զնոսա։ Ձեզ անկանէր և ծնողական մեծաւ իշխանութեամբդ սանձել զկիրս, զանմիտ բերումն, զանխորհուրդ շուտափութիւն զեռանդուն հասակին նոցա։ Սակայն դուք այնպէս լքեալ 'ի ձեռաց զերասանակն՝ թռչակի կառավարութեամբ և մեղկաղէտ սիրով լքէք թողէք զնոսա 'ի ձեռս զգայութեան և յետասիտ խորհրդոց նոցա։ Հատուցէք ինձ ուրեմն հատուցէք զհամար զմոլորելոյ և զկիսացելոյ որդւոյն, որում պարտ էր ձեզ իբրև պաշտօնեայ և սպասաւոր աստուածային կամացս լինել ուղիղ և առաջնորդ ,,։

digitised by A.R.A.R.@

Աղէ դուք հաղբ և մաղբ վայրիկ մի 'ի միտ առէք քաջիկ զանհրաժեշտ և զմեծամեծ պարտս զծնողական վիճակին ձերոյ։ Խնամով խելամուտ լերուք իմաստիցն՝ զոր 'ի ձեզ ազդէն հաւատք. վառեցէք բորբոքեցէք 'ի ձեզ զնախանձ բարի զիրկութեան ձերոյ և զզաւակացդ։ Օրթիք, ժրացարուք 'ի փոյթն, կրկնեցէք երեքկնեցէք զհսկողութիւնն. սաստեցէք, յանդիմանեցէք, յորդորեցէք խրատեցէք 'ի դէպ ժամանակի և ըստ դեղեցիկ կանոնաց հայրական խնամակալութեան։

Ձեր որդեակքն քաջապէս դաստիարակեալք և առաջնորդեալք՝ եղիցին ձեզ փառք 'ի մահկանացու կենցաղս ձեր, և արդասիք բարեաց ձեզ և վարձք անդանօր յանմահական 'ի կեանս։ Այլ եթէ լքեալ թողցին դրքա անխնամք և անհոգացեալք, եղիցին ձեզ պատճառք դառնութեանց 'ի յաւիտենիս յայսմիկ, և պատճառք ապիտից 'ի հանդերձեալն. զոր քաւ մի թոյլ տացէ Աստուած։

digitised by A.R.A.R.@

ԿԱՐՈՂ ԻՄ

ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ

"Երանի՛ ողորմածաց . զի նոքա ողորմութիւն գտցեն ,, :

Վերաշխարհիկ են աւետիքն , որպէս և ոչ այլ իմիք առաքինութեան խոստացեալ սուրբ լինել ամենայնին՝ բայց 'ի տուրս ողորմութեան : Վանդի և քաջայայտ առաքինութիւն ողորմածութեանն փարելի յոյժ է սրտին Աստուծոյ . իբրև զի չիք ինչ յառաքինութեանց այնչափ ստէպ և խնամով պատուիրեալ 'ի Քրիստոսէ , իբրու ողորմածութիւն . իբրև զի և նմանողութիւն իսկ մեծ է ողորմածին Աստուծոյ : Արդ ո՞ք պանծալի բարեմասնութեանցս ասպնջական յաջողեսցի լինել , բայց որ գոյաւորն իցէ և բազմահարուստ :

Վանդի թէպէտ և մեծապէս ևս չարակնեսցին աղքատք ընդ մեծատունս , թէպէտ և կկոցեալ աչօք 'ի նոսա՝ բիւրս իմն 'ի ժողովին իւրեանց գձձեսցեն թշնամանօք զբազմավտանգ կեանս մեծատանցն , սակայն թուի ինձ եթէ և միանգամայն նախանձելիք սոցա պարտիցին լինել ընչեղքն , իբրու որ սատարք բազում են 'ի ձեռս նոցա քաջագէպք առ 'ի զբռամբ ածել զերանութիւնն զայն զմեծ՝ զաստուածային բերանոյն , "Երանի՛ ողորմածաց ,, :

Այլ սակայն տուայտեալ աւադիկ աղքատացդ հոյլք , վշտմբերք հանապազ , քաղցեալք և ծարաւիք , սփոփանս քանի՛ ընկալցին նոքա 'ի սիրոս , լուեալք զօրհնանաղ յաւետարանին զվայ աւա՛ղ զմեծատանցն , յորմ

digitised by A.R.A.R.@

ժամ և 'ի բեմ աստի սրբութեան ստէպ նշաւակեսցին նոքա, քանիսն իցէ սրտի դիւր աղքատացն։ Լա մանաւանդ քանի՛ ցնծութեան ձայնք 'ի մէջ գրդեկացն այնոցիկ, և ոտնհարութիւնք մեծատանցն՝ առ խորտկաձաշ մեծատանն պատմութեամբ. յորժամ զտարօրինակ դէպսն լսեն նոքա զնորա և զաղքատին։ Ղազարոսի. զի բեհեզաւորն և ծիրանաւորն և հեշտակեացն ընդ դժոխայնոցն պապակեսցի, և աղքատն 'ի հրեշտակաց սպասաւորեսցի. "Եռաւ մեծատունն և 'ի դժոխս 'ի տանջանս էջ..։ "Հաւասիկ, ասէն, ահաւասիկ վախճան մեծատանցն. եղուկ են նոքա։ Իսկ մեզ աղքատացս, հիքացելոցս, 'ի ցնցոտիս զարդարելոցս, ընդ Ղազարոսին մերոյ վշտակրին՝ կայ մեայ փրկութեան հասանել, զերկինս ժառանգել...։

Զղիցի այնպէս, ո՛վ աղքատք. այլ եթէ դուք Ղազարոսին հանդիպէսջիք զեղեցիկ բախտին, ասացէք ինձ. ո՞ւր տարցին զձեզ հրեշտակք։ — Ի գոգն Աբրահամու։ — Զե՞ ո՞ք էր Աբրահամ։ Է մեծատուն բազմահարուստ 'ի կալուածս, բազմահարուստ յանդեայս և յընդոծինս, ո՞չ և յայլն ամենայն օրհնեալ և բարգաւաճ յԱստուծոյ։ Զե արդ եթէ փրկութեան հասանէք ընդ Ղազարոսի աղքատին, տարեալ լինիք դուք 'ի փրկութեան ձերում 'ի գոգ մեծատանն։

Ասացցին ուրեմն զրունք երկնից՝ միումն և միւսումն, և երկաքանչիւր վիճակաց տուք աւետիս. որպէս աստուածայինն նախաձայնեաց մարգարէն. "Ընդ, ասէ, 'ի միասին մեծատունք և տնանկք մտցեն օրհնել զԱստուած յաւիտեան...։

Զե անշուշտ սիրելիք, մեծապէս զօրավիգն մեծատանց հանդերձին աղքատք, միանգամայն և 'ի հարստացուցանել զնոսա յերկրի, և յերջանկացուցանել 'ի յերկինս։ Զանգի էն իսկ մեծութիւնք և ինչք, միանգամայն և պարտք և պաղաբերութիւն ողորմածութեանն. և է ողորմածութիւնն 'ի մեծատունս գրաւական միանգամայն և գործարան փրկութեան հոգւոց նոցա։

Զ՚վ արդասեաց ողորմածութեանն, քանզի պաշտպան և ջատագով մնանէ սա վասն ընչեղացն, և հանէ քաղէ վասն նոցա 'ի ձեռաց աղքատացն առաւել յոյժ քան զոր աղքատք առցեն 'ի ձեռաց մեծատանց, և կրկնակի պար-

digitised by A.R.A.R.@

տապանս կացուցանէ զնոսա եթէ 'ի մեծարանս երեսաց մեծատանցն, և եթէ 'ի պէտս գոյից նոցա։

Այսն որոյ և դուք տեարք, այն ինչ հաստատեալ 'ի միտս՝ ողորմած լինել 'ի տուրս, անդէն զերծ և ազատ կացուսջիք զանձինս 'ի յաչաղանացն աղքատաց և 'ի դատափետութենէն նոցա։ Զանազի զիարդ մարթ իցէ նոցա այնուհետև նախանձել ընդ ձեզ, յորժամ վասն նոցա հարստացեալ է ձեր. և զիարդ այլ ևս բամբասիցեն զձեզ, յորժամ նոքօք դուք փրկութեան հասանիցէք. իբրու որ զձեռանէն ձեր կալեալ այնպէս մուծանիցեն յարքայութիւն։

Այլ արդ տեսէք ինձ տեարք իմ, քանի՞ բարեմասնութեամբք՝ որ յաստիս 'ի ժամանակեայս, և որ յանտիս 'ի յաւիտենականսն, իբրու եթէ բուռն ձեռին իւրում արարեալ Աստուծոյ այնպէս առատաձեռնէ առաքինութեան ողորմածութեանն՝ որչափ և հնար իցէ. յորժամ այնչափ ինն բազմացեալ ողորմութեամբն ընդ ձեզ՝ բիւր անգամ յաստուածային մատեանսն յապահովի առնէ զձեզ յանպիտ կորստենէն, եթէ միջնորդ ձեզ զողորմածութիւնն կալջիք, զի այս է ասելն. "Երանի՞ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն„։

Առաջին՝ ողորմութիւն գտցեն յաստի կեանս. զի տունք նոցա լցցին միշտ հացիւ, և ծաղկալից եղիցին հանապազ։ Երկրորդ անգամ՝ ողորմութիւն գտցեն և 'ի հանդերձեալն. զի անձինք նոցա երջանկասցին 'ի յաւիտեան։

Այլ եթէ ես այսօր, տեարք իմ, անհրաժեշտ հաւասատեաց ոչ ցուցից ձեզ յայտ յանդիմանութեամբ զառաջարկութիւն քարոզիս, ահաթոյլ է ձեզ. մի՞ տայցէք այլ ևս ողորմութիւն, մի՞ ինչ ջամբիցէք աղքատաց, և դադարեցէք դուք այսուհետև 'ի լինելոյ ողորմած։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆ Ա.

Օ՛իարդ վայելուչս Ներսէսն ոսկի, յորժամ հանդէր ձէր խօսել առ մեծատունս վասն ողորմածութեան, զայս կանխաբանեաց. «Խօսեսցուք, ասէ, զարդիս վասն մեծաշահ օգտի ոչ այնչափ առողացն՝ ի ձէնջ, որչափ ձեզ տուողացդ.»։

Այս իրաւապէս յառօրէից աստի բարգաւաճութեանց առնէ նա սկիզբն. որ թէպէտ և չիցեն ինչ արգոյք, սակայն էն զգալիք առաւել. թերևս փոքր ինչ թուեսցի ձեզ՝ մեծատունք ողորմածք, զի՝ ի պատճառս տրոց ձերոց առ աղքատս՝ շուրջանակի զձեր տունդ ամրացուցանէ Աստուած անդրժելի՝ ի հարուածոց, որ յերկնէ, որ յերկրէ, որ՝ ի մարդկանէ. զի և երբէք զաղքատութիւն ոչ տեսցէ։

Այս անշուշտ է բանս, ունկն դիր։ Օ՛ի զոր միանգամ տայք աղքատաց, յիւրում հաշուէդրին զայն իւր համարի Աստուած. «Օ՛որ ինչ, ասէ, արարէք միում յեղբարցդ, ինձ արարէք.»։ Այս զնոյն կրկնէ և երեքկնէ, և խնդայ՝ ի յեղյեղելն։

Գիտէք իսկ դուք՝ ի հաւաստի պատմութիւնս, զի և յողորմածաց անտի զգեցուցեալ մերկոց և աղքատաց, զինքն զգեցուցեալ համարէր Քրիստոս։ Օ՛նոյն օրինակ խնամատարութիւնջիք դուք և յաղագս ողորմութեանցն՝ որ զինչ և իցէ, վասն դուշնաքեայ պարէնի, վասն աղքատին ձորձոյ, վասն առժամայն դարմանոյն, զոր տայք դուք տանել յարգելոցս առ բանտարկեալսն, և յանկեանոցս առ հիւանդս։

Բ.յո՛, ՝ի պէտս տրոցդ վայելեն հիւթացեալքն. այլ զայնոսիկ պարծանս իւր համարի Քրիստոս, և երբև պատմուհան փառաց արկեալ զանձամբ՝ այնպէս խնդայ առաջի հրեշտակաց սրբոց. և կամի և ողջոյն ընդ երկինս հուչակ հարկանել, զի այն որ աղնուական, և այն որ բամբիշ, և այն որ վաճառական, և այն որ արուեստաւոր, այսչափ ինչ ջամբեաց նման. «Օ՛ի զոր արարէք միում՝ ի փոքրկանցս, ինձ արարէք.»։

digitised by A.R.A.R.@

Լ.յլ աստանօր, քաջ միտ դիք. չէ ինչ փոյթ, եղ-բարք, եթէ Հնմարիտ կամ թէ սուտ իցէ մուրիկն՝ որում ջամբէք։ Վանզի որ խաբէ՝ կեղծաւորեալ զինքն աղ-քատ, թէպէտ և ինքն վրիպեալ է յիրաւանց ողորմու-թեանն, սակայն վրէպ երբէք չմարթի կացուցանել զձեզ յարդասեաց ողորմութեանն։ Մխալէ՝ ի քեզ ձեռնն, այլ ոչ և սիրտն։ Ի սրտի քում տեսանէ Քրիս-տոս քաջիկ՝ զոր ջամբեցերդ նմա։ Լաստի և դէպք ևս տացին յաւուր միում, զի դու փրկութեան հասցես վասն ողորմութեանդ քո այդորիկ զոր ետուր. և նա վտանգեսցի՝ ի փրկութեան իւրում՝ վասն ողորմու-թեանն այնորիկ զոր էառ։

Վասն որոյ և դու որ չգիտեսդ՝ տուր ամենեցուն աղքատացն և մուրկաց. զուցէ յորժամ կարձեսցես զձեռնդ, յայնժամ և Հնմարիտ մուրիկքն և որ աւուրն հացի կարօտեալքն իցեն, վրէպ գտանիցին յողորմու-թենէդ։ Վանզի և անշուշտ ողորմութիւն առնել շարժեալ՝ ի քրիստոսեան սիրոյն՝ որում և իցէ, է իսկ ողորմել նմին Քրիստոսի։

Եւ արդ՝ ի վերայ Հնմարտութեանս այսորիկ հաստա-տեալ, միտ դիք, զիարդ Հնգրտագոյնս և աստուածայ-նագոյնս, այն որ վարդապետն եկաց ողորմածութեան և հայր խնամածու աղքատաց Իսկեբերանն սուրբ, ՝ի քաջալերս և՝ ի հրահանգ կողման ողորմածացն խնամատ-նաբանեալ այսպէս. Լցէք, ասացէք ինձ, ասէ, տեսարք, մինչ չև զտուն ձեր օրհնեալ և ամրացուցեալ Աստուծոյ բազմահարուստ ժառանգութեամբդ՝ զոր վայելէք. մինչ չև յարգաւանդ անդս, և՝ ի ջոկս անդէոց, և՝ ի հօտս խաշանց և՝ ի բազմապատիկ կալուածս, և՝ ի հարուստ եկամուտս, և յայդչափ բարձս աւագութեան, օրհնեալ զձեզ Աստուած և բարգաւաճ կարգեալ, մինչ չև ասեմ առեալ ձեր զայս ամենայն՝ ի ձեռանէն Աստուծոյ, ա-սացէք ինձ վայր մի, եթէ ինչ մի էսո՞ նա՝ ի ձէնջ։ Յայտ է թէ ոչ ինչ։

Եւ արդ եթէ այն Աստուած որ այնչափ առատա-ձեռնեաց՝ ի ձեզ, մինչ չև ձեր տուեալ՝ ի ձերոցդ՝ և ոչ պատառիկ մի հացի. իսկ յորժամ յողորմութեան ձե-ռում այնչափ էառ՝ ի ձէնջ, ապահեսցէ՞ և կամ ժլատես-ցէ՞ ինչ առ ձեզ տալ՝ ի դանձուց իւրոց՝՝. Զի եան, ասէ,

digitised by A.R.A.R.@

այնմ՝, յորմէ չէաւ ինչ, ոչ ապաքէն բազմապատիկ առաւելութեամբ տացէ, յորժամ առնուցու։ "Որ զձեռն իւր կանխեաց երբայ տալ քեզ յիւրմէն, կծծեսցէ զնոյն 'ի հատուցանել քեզ զքոյն։ Որ բարերարեացն միայն 'ի շուք հնորհին, ոչ փոխարինեսցէ 'ի շուք հնորհակալու մտացն. որ և քեզ 'ի պարգև եւ, զլասցէ քեզ զվարձն. "Բանի՛ բազմապատիկ, ասէ, առաւելութեամբ տացէ, յորժամ և առնուցու"։

Այլ առ 'ի քաջայայտ եւս 'ի նեբբս բերել, ասացէք մեզ։ Ո՞ւմ առաւել արժան դատեսցի Աստուած առատաձեռնել յառօրէից աստի բարեաց. զիարդ թուի ձեզ, արդեօք որ չարաչար վարեսցեն զարծաթ 'ի զի-նեբբուս, 'ի շուայտութիւնս, 'ի կապելայս, յաշխարաւանդիկս, եթէ ոբք 'ի պէտս մանկանց, աղքատաց, որբոց, այրեաց, անկելանոցաց վարեսցեն զոսկին։ Դայտ է թէ վերջնոցդ։

Այլ եթէ նա և զբաղումն յառաջնոց անտի տեսանեմ և յընչաւէտութեան պահեալ Աստուծոյ, զինչ ասես, քանիցն ապա առաւել զվերջնոցքդ երբէք անտես չարարեալ լքցէ 'ի ձեռաց։ Այլ թէ շուայլ ոք և յանցաւոր վասնիչ՝ լիասցի յղփասցի բարեօք, իսկ բարեպաշտն և ողորմածն մուրիկ շրջեսցի. "Մանուկ էի ես, ասէ, և ծերացայ. և ոչ տեսի զարդարն արհամարհեալ, և ոչ զաւակ նորա՝ թէ մուրանայ հաց"։

Ապա եթէ երբէք դէպք կամեսցին տալ կրկնս այսոցիկ'ի տեսչութեան տիեզերաց, տեսցես դու յայնժամ վեր 'ի վայր դղրդեալ զաշխարհ. զի անդէն առհասարակ բոլոր բարձեալ 'ի բարձունս աղաղակեսցեն առ հասարակաց հայրն ողջոյն զերդաստանք, որոց դուք ողորմեցարուք. ձայնք հառաչանաց հազարաց բիւրուց յանկելանոցաց, 'ի բանտից, յորբանոցաց հնչեսցեն յերկինս. "Այլ ո՞ւմ այլ ումեք, ով Աստուած, թողցես յանձն արասցես զմեզ. և ո՞ստ ուստեք մեք այսուհետև զօրապահիկ հայն, յորժամ դու բարձցես 'ի մէնջ զայրն, որ մեզն ջամբէր։ Այլ այնպէս զայն ինչ՝ որ պատճառքն էր աշխարհաւ բողոքելոյն, կանուխ աղաղակաւն կարձեն յողորմածացն, զի մի՛ ինչ չար երբէք պատահեսցէ նոցա։

Զան քո աղօթէ հիքացեալն այն ազնուական, որ մինչ չև խնդրեալ նորա առ ամենեցն, դու ձեռն տուեալ՝

digitised by A.R.A.R.@

յանհնարին շառագնութիւնէն զերծուցեր զնա 'ի դէպ ժամանակին։ Զ ամն քո աղօթէ պարկեշտն այն օրիորդ, զոր նախատես խնամակալութեամբ քով յապահովի կացուցեր զշուք համեստութեան նորա։ Զ ամն քո աղօթեն յարկք բնակութեան ծառայիցն Աստուծոյ, վանք և մենաստանք, որոց 'ի դէպ ժամանակի ձեռն տաս յողորմութեան գանձուցդ, և յանդորրու կացուցանես զնոսա խաղաղաւէտ կենօք անզբաղ աղօթել միշտ վասն աշխարհի։ Զ, ու ապա առ հասարակ վասն քո աղօթեն ամենայն աղքատք և մուրիկք, որ դեգերեալ կան առ դուրս քո և կողկողին, և ձեռնունայն չմեկնին անտի։

Զայս եթէ և դէպք ևս տացեն, զի երբէք ողորմելքն անշնորհակալուք տմարդիք, զլաստին քեզ զաղօթիցն օգնականութիւն, մի երկնչիր. նոքին իսկ տուրբդ ասէ Աստուած, զոր ջամբեցեր, նոքին աղօթեսցեն վասն քո։ Զ'իր, ասէ, յաւանդ զողորմութիւն 'ի սիրտ աղքատին, և ողորմութիւնդ աղօթիւք փրկեսցէ զքեզ յամենայն չարէ։

Զ ուստի և զայս օրինակ շուրջանակի ամրացուցեալ քո զտունդ յակաստանի բազմանեցուկ ամրութեամբ, որ այն հարուած իցէ այնուհետև՝ յորմէ խիթասցիս։ Հա մարձակիմ ասել, զի թէպէտ և 'ի պատճառս այլոց ինչ յանցաւորութեանց քոց տապալել և զտուն քո խնդրեսցէ Աստուած, տեսեալ զայնչափ ամրածածուկ հաստատութիւն զողորմածութեանն, կարձեսցէ ըզձեռնն. քանզի և ինքն իսկ ասաց եթէ "Տուք ողորմութիւն, և ահա ամենայն սուրբ է ձեր"։

Զ.ԱԼ քանզի քան 'ի փաստից բանից՝ առաւել յօրինակաց շարժեսցի մարդ, աղէ տուք պատասխանի. իցէ՞ ձեզ երբէք պատմեալ ուստեք օրինակ մի յաղքատասէր և յողորմած գերդաստանաց անտի, որ 'ի տնանկութիւն անկեալ իբրև մուրիկ դեգերեալ շրջեսցին առ դուրս օտարին։ Զ.սպարէզ կարդամ, գտէք ինձ զնա։ Զ.ռէք զուք 'ի ձեռս զաստուածային մատեանն, անցէք ընդ նա, դարձուցէք ողջոյն զպիտակն։ Զ.ինդրեցէք առ հասարակ 'ի խոյզարկեալ և զեկեղեցական պատմութիւնն ընդ արտաքնոցն։ Զ.ըրեք մանաւանդ, անցէք ընդ ամենայն քաղաքս հետաքննաբար. տեսէք, հարցէք և տեղեակս արարէք զմեզ։

digitised by A.R.A.R.@

Լա, զինչ ասեմ. ձեզ և յամենայն 'ի քայլս ընթացից ձերոց յաջողեսցի մատնցոյց առնել ինձ զողորմածացն զերդաստանս պայծառս, տոհմն աղնուականս, տունս համբաւատենչս, որ 'ի տիպ Հնգրիտ միտաբուղիս աղբերց անսպառ արբուցանիցեն զամենեսեան 'ի վտակաց իւրեանց, և երբէք չնուազեսցին. նա վտակ առ վտակ և եւս աղբերացեալք 'ի նորածին ականց՝ որ ընդ նոսա խառնեսցին. և չգիտիցէք դուք բաղում անգամ, հիացեալք ուստի այնչափ յորդութիւնքն, ոչ անսպառեալք միայն, այլ և գամ քան զգամ առնեցեալք։ Օ խորդ ապա քաջավայելուչս աստուածայինն Բասիլիոս զողորմածացն անհատահոս ջրհորոցն նմանեցոյց զտունս. "Օ՞ որ օրինակ, ասէ, ջրհորք առատաբուղիք, թէպէտ և զօր ամենայն անդուլութեամբ զջուրն հանցեն 'ի նոցանէ, նոքա եւս զեղեցիկ և յորդագոյնս բղխեսցեն վտակս, սապէս և որ 'ի քէն յաղքատս փոխաբերեալ ինչք, մեծապէս յոյժ պտղաբերեսցեն քեզ"։ Ուստի և ողորմածութիւն ոչ միայն չնուազէ զաղբիւրն՝ յորմէ հոսի, այլ և յորդաբուղիս և եւս գործէ։

Լաւ անշուշտ, ո՞ այն այր ողորմած, որ ոչ առաւել եւս լիացաւ 'ի բարիս. որ ոք պարապ ունիցի, երթեալ հարցանիցէ զպատգամագիրս և զժամանակագիրս զեկեղեցւոյ և բիւրս ինն գտցէ հաւաստիս բանիցս. քանզի չէ ինձ այժմ բաւական ժամանակս պատմելոյ։

Նոցանէ միայն սղագունիւք ընդ աստուածայինսն։ Ի՞մ իմիք զրեսցուք մեք զերջանկութիւնն Աբրահամու, որ այնպէս 'ի տարաժամ հասակի օրհնեցաւ զաւակաւն յանթիւ բազմութիւն։ Ի՞մ իմիք և զշուք պատուոյն Աբիգեայ 'ի տիկնութեան իւրում առ Դաւթի արքայն։ Ի՞անի բարօրութեան պատճառք եկաց այրոյն՝ հիւրընկալութիւն մարգարէին Եղիայի։ Ի՞անի և Յոնաթացւոյն՝ իջավանեալն առ նմա Եղիսէի մարգարէին։ Ի՞անի և Պօբղիոսի՝ առնուլ ժողովեալն նորա զՊաւղոս։

Իսկ անդ յանշէն անսպատին ո՞ լիացոյց զաշակերտսն Յիսուսի, բայց նոյն ինքն հայն, զոր 'ի բերանոց իւրեանց կորզեցին առաքեալքն, զի զքաղցն լցցեն զայնչափ որերոյն. "Տեր, ասեն, արձակեա զխուժանն. զի մինքթիցեն առ քաղցուն։ Եկ դուք տուք դոցա ուտել, ասէր Յիսուս։ — Եւ ուստի. հինգ նկանակքն միայն

digitised by A.R.A.R.@

նշխարեալքն առ մեզ, բաւական ի ցեն առ այնչափ մարդիկդ։ — Այս, ասէ, հինգ նկանակքդ՝ որոց այնչափ խնամով պահ ունիք 'ի ձերում մխսագի, և ձեզ ևս երկոտասանիցդ չեն բաւական, եթէ զԹածաբար բաշխեսցին 'ի պարէն աղքատաց, հինգքդ այդոքիկ բաւական եղիցին հնգից հազարաց. աղէ դուք վայր մի բազմեցուցէք զմարդիկդ դասս դասս։

Օ՛ի ևս ասել, գիտէք իսկ դուք քաջ զպատմութիւնն։ Ամբէին տային աշակերտքն, և ըստ չափու բաշխին անձէր հրաշագործեալ հացն 'ի ձեռս նոցա։ Իսկ որ հիացման ևս արժանի, արդասիք քրիստոսեան սիրոյն՝ 'ի յաղելոց անտի ժողովրդոց նշխարեալ կոտորքն լի Թանձրուն նաև զամբիւղս ընուին երկոտասան, զի և աշակերտքն՝ որոց 'ի հինգ նկանակաց հազիւ անկանէր առն առն կոտոր մի դուշնաքեայ, մէն մի այնուհետև 'ի նոցանէն ընոյր վասն իւր առանձին սակաւի մի զհամեղաձաշակ հացին։ Իսկ քրիստոնեայք. և ո՞ր այն առաւել վաճառաշահ քիրտն կրպակաց ձերոց այնչափ ինչ մարթասցի պտղաբերել ձեզ։

Եւ զիարդ ապա, յաւելոյր Իերանն ոսկի, զիարդ ապա խելամուտ չլինիք ճշմարտութեանն։ Տեսանեմք մեք առաղիկ զայր այր 'ի ձէնջ փութաջան հետամուտս յայն ինչ արուեստ 'ի շահել, յայն ինչ գործառնութիւն մեծաշահ։

Իսկ զնուազունս տեսանեմք ժրաջանս յառնել ողորմութիւն. ողորմութիւն՝ գործ և արուեստ յոյժ առաւել օգտաբեր, որչափ ինչ երբէք կայցէ յաշխարհի։ "Բանզի ողորմածութիւնն, ասէ, արուեստ է քան զամենայն արուեստագիտութիւն առաւել յոյժ շահավաճառ։"

Ո՛վ զիարդ զոսկեբերանեան զայս դրուագ գերազոյնս խնայան նաև որք 'ի Թագաւորաց անտի բարեպաշտք, յորոց մին առ հաղարապետն իւր որ զանգիտէր նուազել զանձուն 'ի լիաձեռնութեան իւրում առ աղքատս, այսպէս ասէր. "Բաւ ոչ ինչ պակասեսցի զանձուն արքունի. շատ է զի մի պակասեսցին աղքատք. Թող զի տնանկք ողորմութիւն գտցեն, և գերիք զփրկանս. զի գանձ մեծ այս է։"

Իսկ միւսն առ գաւառապետն իւր՝ որ գանգատէր

digitised by A.R.A.R.@

վան առատաձեռնութեան նորա առ կարօտեալս, յանդիմանութեամբ այսպէս ասէր. «Լրթ յետս իմ, թոյլ տուր ինձ առնել զիմն. քանզի այսու ճանապարհաւ և զոյք իմ բարգաւաճեն և թագաւորութիւն իմ հաստատի»։

Ուսարուք ողորմածք զարքայիցն խնամատարութիւն։ Լրբեէք 'ի բանալ ձեր ձեռս առատս առ աղքատս և 'ի խափանել յընտանեաց և յորդւոց ձերոց, ասացէք. Ի բաց կացէք, ես զձեր շահն խնդրեմ և զիմն, ողորմած լինիմ; զի զուք մուրիկք չլինիջիք։ Քանզի այսու ճանապարհաւ ինչք յորդեն և տուն մեր հաստատի։ Ցնչ զուք որդեակք իմ, լուարուք զոր ասեմ։ Յորժամ 'ի կառս զիս տեսանիցէք շքեղ բազմեալ, փառացի հանդէսս կարգել, խրախուսնս կոչնոց հանդերձեալ՝ առաւել քան զձեռին մերոյ բաւականն, բողոք բարձէք զուք յայնժամ, և խնդամ ես։ Նաև կշտամբեցէք և զիս և հրահանգեցէք. քանզի յայնժամ անշուշտ զտուն ձեր տապալեմ։ Իսկ ապա յորժամ տեսանիցէք զիս՝ մերկս զգեցուցանել, գքաղցեալս կերակրել, զօտարս ժողովել, զպանդուխտս հիւրընկալել, զգոյշ լերուք՝ մի՛ ինձ խոչ ընդոտն լինիջիք. քանզի այսու ինչք յորդեն յԱստուծոյ և տուն մեր հաստատի։ Այս է խնամատարութիւն և գործ առն քրիստոնէի։

Այլ սակայն ես առ վսեմական ձեր հոգիս՝ անշուշտ 'ի կամս յակամայս յօրացայ 'ի բանս զդուշնաքեայսն և զնչինան 'ի ներքս բերել ձեզ։ Յամենակեայքս այսոքիկ և ծաղկընկէց բարիք ընարութիւն ոչ յորդոր լինել ողորմածացն սրտից և ոչ քաջալերս։ Ոչ շարժիչ պատճառք. ապա թէ ոչ՝ որպէս աստուածիմաստն կնքեաց Հերոնիմոս, «Ողորմութիւնն յայնժամ, քան ողորմութիւն առաւել ևս տուրևառիկ վաճառ պարտ է կոչել»։ Այս ոչ զարձեալ քաջալերս. քանզի որպէս աստուածայինն կնքեաց Ոսկեբերան, որ կամաւորապէս մերկանայ 'ի գոյնցն առ 'ի ջամբել աղքատայ, տակաւ ստանայ և զարհամարհութիւն նոցուն, և զմեծանալոյն ինչ ոչ հոգայ. «Որ 'ի գոյնցն, ասէ, առատաձեռնէ կարօտելոց, ուսանի այնուհետև արդոյ ինչ չհամարել զարծաթ և զոսկի»։

Այս զայս օրինակ ապա բնաւորեալ տիրանայ անձին

digitised by A.R.A.R.@

իւրում և ամենայն երկրաքարշիցս այսոցիկ, և 'ի գեր 'ի վերոյսն անդր ձկտեցուցանել զանձն, առ ոսն կոխելով զերկիր. "Ռանդի ողորմութիւնն, ասէ, սկիզբն առնու վերանալ յերկինս,,։

Հրաւէր բարձրագոյն և քաջալեր Աշմարիտ առն քրիստոնէի ողորմածի այն է, զի անշուշտ գիտէ եթէ միջնորդաւ ողորմութեան յապահովի կայ նոսա փրկութիւնն յաւիտենական, քանզի անսուտ են պատգամքն Աստուծոյ. "Բարի է, ասէ, առնել ողորմութիւնս, քան զնել զգանձս ոսկւոյ. զի ողորմութիւն 'ի մահուանէ փրկէ. և նա ինքն սրբէ յամենայն մեղայ,,. զոր և առաւուածայինն ինքեայ բերան. "Տուք ողորմութիւն, և ահա ամենայն ինչ սուրբ է ձեր,,։

Ել եթէ 'ի յաձախել զողորմութիւնն՝ նուազ յայնժամ զգուշալի լցեն մեղքն, այլ թէ այնչափ ինն բեղմնաւոր են ողորմութեանն արգասիք, զի նոքաւ երկնաւոր առատ շնորհացն արժանի լինի մեղաւորն, դառնալ 'ի մեղացն և ապաշխարել և սրբանալ։ Զիր հնար, եթէ կորիցէ մեղաւոր ողորմած. քանզի և 'ի վերջէ ուրեմն արժանաւորեալ ողորմութեանն Աստուծոյ, դադարէ 'ի մեղացն և մերձենայ առ Աստուած։

Աստուտ են բանքս, սիրելիք. զի և վերջին խոստացելոցն և 'ի մեղս յանառելոցն՝ միակ դեղ դարմանոյ և վերջին քաւչարար՝ որպէս ազդէն գիրք սուրբք և վարդապետք աստուածխնամքն, է 'ի նեղքս ընծայել նոցա յորդորակ զօրաւոր յողորմածութիւն։

Արաշխաւոր անշուշտ ունիմք զմեծն և զիմաստնագոյնն Դանիել։ Այս առ մեծապէս ամբարշտեալն Նաբուգոդոնոսոր խրատ սուղ և ազդոյ զոյն 'ինեղբս մատուցանելոյ նմա. "Արատ իմ քեզ արքայ, ասէ, բարւոք թուեսցի, զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես, և զանօրէնութիւնս քո գթովք տնանկաց,,։ Օ խարդ ամենայն գժնդակայն, միանգամայն յաղթական՝ միայն զողորմածութիւն 'ի նեղքս ընծայէր մարգարէն այնպիսումն ամբարշտելոյ։

Դաջ միտ դիք, սիրելիք. քանզի այն ջամբել կարօտելոյն, այն ձեռն տալ գլորելոյն, այն աջ կարկառել 'ի մոլիկն, բնաւորէ զաչն 'ի կարեկցութիւն, բնաւորէ զսիրտն 'ի գութ. այլ յայլմէ գործէ զմարդ. զխստու-

digitised by A.R.A.R.@

թիւն հոգւոյն կսկիծ, զհոպարտութիւնն ցածուցանել, տակաւ դուռն, տակաւ ճանապարհ հոգւոյ առ քրիստոսական հոգին. հոգի հեզութեան, հոգի սիրոյ և զթութեան։ Այս է հոգի յորմէ անբաժ՝ որպէս ամենայն մեծատուն անողորմ դատապարտի, նոյնպէս և ամենայն մեծատուն ողորմած փրկի։

Այսն որոյ և մեծապէս իրաւամբք՝ առաջի նշանագրեալ ընտրելոյ իւրոյ զողորմածութիւնն ճանաչէ տէրն յայտնաբարբառ 'ի տիեզերական ատենին. "Եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն. քանզի քաղցեայ և կերակրեցէք. ծարաւեցի և արբուցէք,,։

Զանազի անդ 'ի հանաշխարհական աւուրն յառաջ մատուցեալ յերևան զայս ողորմած՝ ոչ մերկ և սակ իբրև ողորմած միայն, այլև բազումս այլ հանդիսակից ըստ պատուոյ պատուասիրեալ, և ազգ ազգ առաքինութեամբք զարդարեալ։ Զի, քանիցս էն հաւատք կենդանի ողորմածին, որ 'ի մուրիկն անդր և յախտաժէտն ընդ ցնցոտի գրգռեկօքն՝ ինքնին զտէրն փառաց զՔրիստոս ակնարկէ։ Զանիցս և յոյս հաստատուն՝ ողորմածին, որ այնչափ անեղկևանութեամբ կապտէ զանձն 'ի ժամանակէից աստի գոյից, զի 'ի յաւիտենականն վայելեսցէ։ Զանի և զութ սիրոյ ողորմածին, որ նմանողութեանն փափաքելով զթած երկնաւոր Հօրն, սիրէ ձեռն տալ՝ զօրավիգն լինել օտարաց անծանօթից՝ իբրև եղբարց։ Այս հաւատք, ահա յոյս, ահա սէր ողորմածին։

Այս այսոքիւք և բաժին Աստուծոյ հանելով ողորմածին յիւրոց անտի գոյից, եթէ պաշտօն մատուցանել նմա իբրև արարչի և թագաւորի, և է այս գործ կրօնի։ Այս եթէ զպատուն տայ հատուցանել իբրև սեպհական տեառն, և է այս գործ արդարութեան։ Հաւասիկ քանի շքով և հանդիսակից ընկերօք գայ յերևան այր մեծատուն ողորմած՝ առաջի ատենին Աստուծոյ. և զինչ զարմանք իցէն այնուհետև, եթէ և այնչափ փառաց հիւրընկալութիւն գտցէ նա առ 'ի Աստուծոյ։

Այլ բա՛ւական բա՛ւական. քանի տարօրինակ հանդէս կրկնակի դասուց մեծատանցն յաշխարհաժողով ատենին։ Զանի բազմաղէտ մեծատանցն անողորմից. քանի բազմերանեան՝ մեծատանցն ողորմածաց։

digitised by A.R.A.R.@

Աղաջինքն տաղնապեսցին անդանօր 'ի գնին բազմահոյլ աղքատացն և մուրկաց։ Ո՛վ, քանի՞ ձայնք հառաչանաց սրտառուչք յարեսնէ անտի որբոցն և այրեաց հնչեսցեն յատեան արդար դատաւորին։ Խողոք բարձցեն աղքատք 'ի գրգռել զբարկութիւնն Աստուծոյ ամբաստանք զանողորմից. ցուցեալք մի առ մի զվշտըմբեր կեանսն, առ նմին և զապառուսմ սիրտս նոցա։ Յառաջ մատիցեն յիւրաքանչիւր կարգի տպասարկուք 'ի պէտս ազահացն, և տարազագործք անվարձք՝ փափկացելոցն 'ի հանդերձս, գործաւորք քրտնահաղք, և մշակք հողագործք ագարակաց ընչեղացն կծծեաց, զրկեալքն 'ի նոցանէ, արևակէզքն՝ ցրտահալքն, գեանաբեկքն և խոնջքն և ծառայք ժլատիցն, առ հասարակ բոլորքարկուք՝ զիրաւունս զայս խնդրեսցեն յարդար դատաւորէն։ "Օ՛ի է զի՝ յորժամ մեծատունք անողորմք բեհեզս և ծիրանիս արկեալ՝ ուրախ լինէին հանապազ առատապէս, մեք սարսռեալք 'ի ցրտոյ և կարօտեալք աւուրն պարենի՝ նուազեալ կայաք առ քաղցուն, և յորժամ հացկատակքն և հոմանիքն առ նոսա և ծաղրածուքն և խաղարկուքն առատապէս վարձատրեալք, իսկ աղքատս եղբարք Քրիստոսիդ՝ սովատանջք, ախտակրեալք, անանկողնիք, գեանախշտիք, մերկք կամ 'ի հանդերձս պատառուտունս ,,։ Եւ այնչափ ինչ հարցեն զբողոքն, զի և չհանդուրժեալ անողորմիցն՝ յանհնարին ամենեցուն ինքնին խուճապեսցին 'ի դժոխս։

Իսկ ապա ո՞ր այն հեշտալի հանդէս՝ 'ի տես և 'ի լուր արժանի, երբեք կացցէ զուգահառաստար ողորմածացն՝ 'ի հրապարակին յայնմիկ. յորժամ մատնանիշ հրճուանօքն յայտ զնոսա արասցեն տիեզերաց ողորմեալքն յիւրաքանչիւր վիճակի, օժանդակեալքն, հովանաւորեալքն առ 'ի նոցանէ, արք, կանայք և մանկունք և ծերք և բանտարգեալք և պանդուխտք և օտարք և հիւանդք։ "Լասիկ, ասասցեն, սրբիչք մերոց արտասուաց, մխիթարք վշտաց, կերակրիչք մեր և զգեցուցիչք և ժողովիչք։ Լոդ զոր մեք չկարացաք, հատո նոցա արդար դատաւոր. տուր, ապէնիալ տէր, զարժանահաս ըզփառսն ողորմածացն և առաքինեաց ,,։

Եւ արդ վայր մի զմտաւ ածէք, ո՞ ողորմածք, փաստաբանս այնչափ և ջատագովս շուրջ զձեզ մածեալ, հնա՞ր

digitised by A.R.A.R.@

ինչ իցէ վասնզել ձեզ՝ի փրկութեան ձերում։ Եւ նո-
քին, զի այսպէս ասացից, իբրու արմատնեաց մինչանա-
կօր՝ի ձեռին՝ այնպէս առեալ մուծանիցեն զձեզ յարքայ-
ութիւն։ Ո՞չ և տէրն ինքնին կանուխ առետեաց.
«Դարձէք ձեզ բարեկամն՝ի մամոնայէ, և ընկալցին
զձեզ՝ի յարկսն յաւիտենականս»։ Եւ «Անի՛ վկայք ձերում
բարեպաշտութեան կացցեն առաջի ողորմածին Աս-
տուծոյ՝ աղքատքն մուրիկքն կերակրեալքն առ՝ի ձէնջ.
քանիցն և տոն ցնծութեան կատարեսցեն՝ի լուր երա-
նաւէտ վՀռոյն վասն ձեր. «Եկայք օրհնեալք Հօր
իմոյ. զի ինձ ողորմեցարուք յաղքատսդ յայդոսիկ. Ե-
կայք օրհնեալք զոր ձեզն պատրաստեցի՝ի տան Հօր
իմոյ, յօթեւանս բազմապատիկս լուսեղէնս. Եկայք
բնակեցարուք՝ի յաւիտեան»։ «Անզի, քան դատա-
ւոր, որպէս գեղեցիկս ասաց Իսկեբերան, քան դա-
տաւոր՝ առաւել պարտապան ողորմածացն զանձն իւր
Ճանաչէ Քրիստոս։ Տուր, ասէ, ո՛վ մարդ, տուր Հաց,
տո՛ւր ջուր, եթէ պարտապան զԱստուած կամիս ունել
քեզ և ոչ դատաւոր»։

Բա՛ւական Հողածնի պատուոյն, զԱստուած ունել պար-
տապան. որպէս և ինքնին ինքեաց Աստուած. «Որ
ողորմի աղքատին, փոխ տայ Աստուծոյ»։ Անի՛ շուք,
քանի՛ և անարկեանութիւն փոխոյն։

Այլ՞ արդեօք, տեսլիք իմ, գտանել նիւթ բանի,
յորում առաւել մի զմիով, քան՝ի Ճառ ողորմածու-
թեանն, ՝ի վեգ եղեալ նկրտեցան հարքն սուրբք այր
քան զընկեր զՀամբաւի հարկանել զայս առաքինու-
թիւն։ Անզի և զինչ այլ գերազոյն անարկեանու-
թիւն փոխատուին՝ քան փոխառու ունել զԱստուած.
և զինչ այլ լաւագոյն աջ, քրիստոնեայք, ապապարել՝ի
նմա զգանձն ձեր, քան զձեռան Աստուծոյ։

Հապա դուք, եղբարք, տուք առատապէս զձերն տուք
՝ի ձեռս Քրիստոսի միջնորդաւ քրիստոսազգեցիցն
աղքատաց, և տոհմականաբար յարգեսցէ ձեզ զարծաթն։
Այս եթէ զմի ոք ընդառաջեալ ձեզ տեսանիցէ՝ի նոցանէ,
՝ի մերկոցն, ՝ի վշտամբերեալցն, ՝ի պասքելոցն, մի զանց
առնիցէ զտեսութեամբն, այլ աղէտք սիրոյն՝ի ձեզ յու-
զեսցին զթով։

Զեթեւացուցէք զբեռն նեղութեան նոցա, և թե-

digitised by A.R.A.R.@

թեւաջիք 'ի բեռանց մեղաց ձերոց. մինչ չև խնդրեալ նոցա, դուք կանխաժամանեալիք առ նոսա. մանաւանդ որ ազնուականք տնանկք իցեն, և յամենեցուն թաքեալ քուք շրջեսցին հրապարակել զանձինս։ Զի արարէք ձեզ բարեկամս. գնոց գնեցէք 'ի քսակաց ձերոց բարեկամս հաւատարիմս վասն յաւիտենական յարկացն, յորս ընկալցի զձեզ Յուստուած 'ի ձեռաց նոցա։

ԱՅԼ աստանօր աւաղ ինձ 'ի դորովել սրտիս 'ի յիշատակ բանիս, զոր ստիպիմ ազգել։ Զի թէ յանկարծ, ո՛ մեծատունք, զայն ինչ զոր ձեզ նիւթ արքայութեան՝ զարծաթն և զոսկի՝ ընդհեաց Յուստուած, դուք զեհենոյն նիւթ առնիցէք գնա, քանիցն իցէ ապաշաւն, քանի՛ և անպէտ արտասուքն և ոգեստանջ կիրքն։ Զանգի՛ աղէ ասացէք վայր մի. և ընդ որ այլ չնչին և գնոց զանեզրականն զերջանկութիւն մարթեր Յուստուած խոստանալ և տալ ձեզ. ընդ մարդոյ՝ զՅուստուած, ընդ երկրի՝ զերկին. ընդ անցաւոր ժամանակի՝ զանժամանակն յաւիտենականութիւն, զինչ և՝ ընդ միոյ խերևեշի զարքայութիւն։ Զի որում ինքն է տէր սեպհական և ոչ դու, զմեծութիւնդ ասեմ. նա յայնմանէ խնդրէ 'ի քէն բաժին հանել նմա յանձինս աղքատաց. և խնդրէ զոր՝ն. ոչ զկարևորն քեզ 'ի պէտսդ, կամ զվայելուչն քո 'ի շուք վիճակի անձինդ. այլ զյաւելեալն 'ի նոցանէ, զարժանն. այն է զոր տէրն ինքնին ասաց. "Զայս աղէ, զարժանն. տուք ողորմութիւն, և ամենայն ինչ սուրբ է ձեր"։

Զայս եթէ բաց 'ի սակաւէ այսի՛նաև առատաձեռնեսցես, առատագոյն և դարձուսցէ քեզ ամենահարուստն Յուստուած։ Զի՛նչ, ասիցս միւսանգամ ասել. թէ իմիք այլ անարդագոյն գնոց մարթ էր գնել զարքայութիւնն. տուր հաց և առ զերկինս, տուր զչչինն և առցես զհրաշակերտսն։

Զի՛նչ, քանիցն առաւել քան զաղքատսն զձեզ, ո՛ մեծատունք, պանծացցոյց Յուստուած և բարձրացցոյց. նոքա 'ի ձէնջ զօրասարիկն առնուն հաց, դուք զյաւիտենից զկեանսն. նոքա զնչչին լուսոյն, դուք զմարթամեծութիւնն. մեծութիւն՝ որ և զժամանակեայն քո զբաղդն և զյաւիտենականն միանգամայն յապահովեսցէ։

Զորա զայն ինչ 'ի քէն գրաւեն անձանց, զոր և ա-

digitised by A.R.A.R.@

կամայ 'ի մահուդ թողցես զու նոցա, զու միջնորդաւ նոցա զանթառամելին առցես զպսակն, զանմահական զկեանսն. "Ցուր զնկանակն, և առ զաղբիւրն թիւնն,,։

ՄԱՍ Բ.

Զ.ՍԼ թերևս ասասնօր յերկուասցի ոք ընդ բանքս՝ զոր ցայս վայր լուաւ։ — Զ.բարեալ իսկ է իմ, ասասցէ, ողորմութիւնս բաղումն. սակայն զփոխարէնն չգտի՝ զոր առեսես մեզ 'ի քաղուիդ։

Հապա քաջ միտ դիր, եղբարք իմ, զոր ունիմն ազդել այժմիկ։ Ի ժամանակէից ասասի բարեաց զփոխարէնն՝ է բաղում անդամ զի գաղտաբար պարգևէ Զ.ստուած և դու չգիտես, տայ զպարգևն և ծածկէ զձեռնն։ Զ.յս է խնամատութիւնն Զ.ստուծոյ, զի ողորմութիւնք և տուրք ազքատացդ մի լիցին մնաւաստակ 'ի շահասիրութեանդ սակս. լիցին միայն վասն Զ.ստուծոյ, միայն 'ի սէրն Զ.ստուծոյ. միայն 'ի թեթևացուցանել զվիշտս ոդուոցն Զ.ստուծոյ։

Զ.յս է ողորմութիւն՝ արքայութեան երկնից պտղաբերբ. այս է ողորմութիւն՝ յաւիտենականին արժանաւոր ողորմութեանն Զ.ստուծոյ։ Զ.յս է ողորմութիւն աւետարանին Զ.քրիստոսի. Օ զոյշ լերուք, ասէ, ողորմութեան ձերում՝ մի առնել վասն մարդոյ, ոչ փողովք, ոչ թմբկօք, 'ի ցոյց ինչ նոցա։ Պատուութիւնն այն առ 'ի մարդկանէ՝ է բոլոր վարձ այնպիսի ողորմութեանն, և անբաժ է 'ի վարձատրութենէն Զ.ստուծոյ։

Լ.ս արդ զնոսա ած. եթէ բաղում անդամ չտայր Զ.ստուած 'ի ծածուկ ասասէն զփոխարէն ողորմութեանդ՝ զոր ասես, այլ անդէն ակն յայտնի ընդ միոյ զոր ետուր՝ դառնայր հարիւր 'ի քսակդ, ո՞չ ահա յայտնապէս վասն զէր ողորմածութիւն քո առնել 'ի շահախնդրութեան սակս, քան եթէ առ կարեկցութեան ինչ կարօտելոցն և 'ի սէրն Զ.ստուծոյ։

Վասն որոյ առ ապահովել զատուածայինն շարժառիթ զաղքատասիրութեան քո, ծածկէ բաղում անդամ զհատուցումն երկրաւորիս բարեաց. հատուցանէ

digitised by A.R.A.R.@

զփոխարէնն նա և աստէն, տայ զպարգևն, այլ ծածկէ զձեռնն։

Եւ զիարդ այս. ասասցես թերևս։ Մի՞ թէ դիր։ Ցե սանես դու աւասիկ բազում անգամ, զի երջանկացեալ է տուն քո՝ի շայեկանութեան. յանձն լինելով քեզ աստի և անտի բազում գործառնութեանց և պաշտամանց, և դու չգիտես զվասն էրն։

Ցեսանես դու աւադիկ, զի բարուրք զոր զքէն կարկատեցին թշնամիք՝ի կործանել զքեզ, հեշտեաւ՝ի դերևս ելին. և զրպարտիչք քո վաղ ընդ փոյթ խայտառակեցան։ Զինչ իցէ պատճառն։

Ցեսանես դու աւադիկ, զի և ախտք և հիւանդութիւնք կամ՝ոչ ձարակին՝ի տան քում, կամ երբեք դէպք չտան, կամ թէ արագ արագ ապաքինին։ Եւ բիւր ևս այլ ձախողակք՝՝ի հիմանց տապալիչք դերդաստանիդ, տեսանես՝ զի հրաշալի ինն և անկարծելի դառնան՝՝ի յաջողութիւնս։

Զ այսոքիւք դու անշուշտ՝ բարեխառնութեան օդոյդ և բարեշունչ հողմոյն յաջողակութեան գրեա զողջամբ հաստատել վաճառալից նաւուդ՝՝ի նաւահանգիստ։ Դարձեալ և ժրութեան և հաւատարմութեան վաճառակից քո ընկերացդ համարիս դու զբարգաւաճել գոյիցդ՝՝ի տուրևառս քո։ Դարձեալ և քաջութեան և արիութեան փաստաբանիդ տաս դու զյաջողութիւն դժուարակնձիռն դատին քո՝՝ի բարի ելս։ Եղիցի ամենայնն այդպէս ըստ կարծեացդ։

Զ.ԼԼ յառաջ քան զայդոսիկ՝ գիտասցես անշուշտ ով մարդ, զի երկինք առաւելապէս առանձինն հովանացեալ կայցեն՝՝ի վերայ քո, առ՝՝ի փոխարինել քեզ գաղտապէս զտուրս սիրոյ ողորմութեանցդ՝ զոր ջամբեցեր աղքատաց։ Ցայ զպարգևն, և ծածկէ զձեռնն։

Եւ բնաւ իսկ ասել. որ ինչ միանգամ և ուստի միանգամ՝՝ի բարեաց՝՝՝ի տուն քո յորդէ, գիտեա քաջ զի երբեք չցամաքեսցի վտակն առ քեզ և առ որդեակս քո, ցորչափ քո հանապազորդեալ է՝՝ի գործ աղքատասիրութեդ։

Զ.անզի և Զ.ստուծոյ պատգամն զնոյն ասէ. Զ.ան ողորմածի՝ որոյ ոչ պակասեցին ողորմութիւնք, հանապազորդեսցեն բարիք ընդ զաւակի նորա։ Զ.յսոքիկ վասն ժամանակէիցս հատուցմանց։

digitised by A.R.A.R.@

Իսկ վասն հոգևորացն՝ զոր տայ Աստուած 'ի վարձ ողորմութեանցդ, քաջայայտ են ձառքն։ Զողորմ պատմել այժմ զբանչելի դարձս մեղաւորաց և զանկարծելիս՝ յարդասեաց անտի ողորմութեանց իւրեանց, որպէս ունիմք 'ի հաւատի պատմութիւնս բազում եկեղեցւոյ։ Զոր ինքնին քաջիկ զիտրձն առեալ էք ընդ ժամանակս ժամանակս. քանի՞ անմեկնելի զուգակցութիւն և քանի՞ յօդակապ հաստատիմդ կայցէ ընդ ողորմութիւնն աստուածային առ ձեզ, և ընդ ողորմութիւն ձեր առ աղքատս. զի և անվրէպ գտեալ է ձեր զողորմութիւնն Աստուծոյ՝ յողորմել ձեր աղքատին. ըստ անսուտ պատգամին եթէ «Ողորմածք զողորմութիւն գտցեն»։

Զանգի հնորհս առանձին միշտ 'ի պահեստի ունի Աստուած վասն ողորմածացն. զի կամ չթողու նոցա անկանել 'ի մեղս մեծամեծս, կամ յետ անկանելոյն՝ միւսանգամ կանգնել զնոսա։ Զոսկս և հարքն սուրբք և վարժապետք աւետարանին կնքեցին եթէ «Ցուրբ սիրոյ և ողորմութիւնք՝ ամենայն մեղաց կամ քաւիչք են, կամ՝ նախապահեստ դարմանք»։

Զայլ սակայն վասն գեղեցիկ կարգի սիրոյ և ողորմութեանն՝ զգոյշ լերուք սիրելիք յողորմածութեան ձերում։ զի մի թերևս անպտուղ ելանիցէք 'ի տուրս ձեր։

Զառաջին՝ զգոյշ լերուք, զի կարգաւ յառաջ խաղացեալ սէրն, և երբէք դիմագրաւ մի վազեսցէ զարդարութեամբն։ Զրինակ իմն՝ յորժամ առատաձեռնեալ քո յողորմածութեան առ աղքատս, և դանդաղեսցիս 'ի վարձս ծառայից, յուլասցիս 'ի սակ աւուրն գործաւորացն հատուցման, 'ի գինն վաճառաց, 'ի պարտս պարտատերաց քոց, ո՞ր սէր իցէ այն։ «Ոչ իմանայք, ազգէր աստուածայինն Աստուծոյ, ո՞չ իմանայք զի 'ի տրոց այսի և յայնօրինակ բաշխից կէաք խնդան, և կէաք լան. կէաք գոհանան և կէաք հայհոյեն։ Այլ ո՞ւմ ուրեք լուիցէ Աստուած, և ո՞ւմ առաւել անսասցէ։ Զա՛ռ է, չիք հնար, եթէ 'ի միասին կայցէ վարկ քաղաքական մեծի պարտապանի և յարգ քրիստոնէական մեծի ողորմածի»։

Զրկրորդ անգամ՝ յաղագս չափու ողորմութեան 'ի գոյից 'ի տալ շատ կամ նուազ, միակ կանոն անստերիւր

digitised by A.R.A.R.@

լեցի քեզ պատուիրեալն 'ի Տովբիթայ. "Յընչից քոց, ասէ, առնիցես ողորմութիւն. և մի ազահիցէ ակն քո՝ յորժամ առնիցես զողորմութիւն։ Որչափ և իցէ քո, ըստ նմին բազմութեան արասցես զողորմութիւնն. եթէ սակաւ իցէ քո, ըստ սակաւին. և մի յապաղիցես առնել զողորմութիւնն, զի զանձս բարիս գանձեսցես քեզ յաւուրն կենաց քոց"։

Այս ուր այրին տառապեալ ըստ գոյին զերկուս լումայսն արկանէր 'ի գանձանակն, անդուստ մեծատունն Օ՞ակքէոս. "Հա, ասէ, զկէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին"։

Երրորդ անգամ, միտ դիք զոր ասէն բազումք 'ի մեծատանց. "Ուռատաձեռնեցից 'ի մահուս և ըստ չափու մեծութեանս՝ բազմացուցից զողորմութիւնն. լաւ ևս է անագանն քան զբնաւն ամենևին"։ Օ՞այս ասէն նոքա։ Սակայն ընդ ողորմածն 'ի կեանս և ընդ ողորմածն 'ի մահուն այն խոիր է՝ ասէր աստուածխնամն Սոկեբերան, որ ինչ ընդ պանդուխտս երկուս ուղևորեալս 'ի զիշերի. մին յառաջոյ իւր ունի զլոյս Ճրագին, և միւսն՝ 'ի թիկանց։ Որ յառաջոյ տանի զՃրագն, նմա ստուեր անձինն 'ի թիկանց կայ. իսկ որ զկնի իւր՝ ստուերն յառաջոյ ընթանայ, և զտեսութիւն խոչընդոտիցն խափանէ։

Ազէ դուք ողորմածք, եթէ 'ի դագաղէ անտի մահուն՝ 'ի Ճանապարհի յաւիտենականութեանն ստուեր ձերոց մեղացն յառաջ ընթանայ առ աստուածային ատեանն, զինչ ձեզ օգտեսցէ լոյս դուշնաքեայ ողորմութեանցդ որ զհետ դայ ձեր։

Խորհուրդ քաջ և աներկեան առէք դուք 'ի ձեզ, և խնամտանացեալ արձակեցէք յառաջոյ զլոյսն. բարձէք դուք ինքնին զՔահս ձեր վառեալս քրիստոսեան սիրովն. "Եղիցին գօտիք ձեր պնդեալք ընդ մէջս և Ճրագունք լուցեալք"։ Մի երբէք ակն կալեալ սպասեսջիք Ճրագացն, որ զհետ դիահանաց յուղարկաւորութեան ձերոյ տարցին ձեզ ժառանգքդ ձեր։ Օ՞այն Աստուած գիտէ, եթէ երբէք լուցցեն դոքա։

Հապա դու ո՛վ մարդ, տովբիթեան խրատուն պատկառ կացեալ. "Որչափ և իցէ քո, ըստ նմին բազմութեան արասցես զողորմութիւնն"։ "Մի դարձուցանէ

ցեւ ասէ զերեսս քո յամենայն աղքատաց, և՝ի քէն ոչ դարձուսցէ տէր Աստուած զերեսս իւր. զի ողորմութիւնք փրկեն՝ի մահուանէ, և ոչ տան մտանել՝ի խաւարն։ Պարգեւք բարիք են ողորմութիւնք ամենեցուն՝ որ առնեն զնա առաջի Աստուծոյ։ Մի՛ դարձուցանիցես զերեսս քո յամենայն աղքատաց. և՝ի քէն ոչ դարձուսցէ Տէր Աստուած զերեսս իւր,,։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ Իր.

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

" Իմաստութեամբ գնասցիք առ արտաքինս ,, :

Աչուեստք բազմօրինակք են յաշխարհի կենցաղոգուտք և կարևորք : Այլ է՛ի նոսա և արուեստ մի , զոր որչափ իրաւապէս՛ի գովութիւն առնումք իբրև առաջին՛ի կարևորսն , այնչափ և ցանկալի էր մեզ այնպիսի ունել կեանս , զի և կարօտ երբէք չլինել մեզ արգասեաց նորա : Այս է բժշկականն արուեստ . յորում Եթէ քաջապէս հանճարով յաջողեսցին ճարտարքն , բազում ամս զամ և՛ի ժանեաց մահաբուտ մահուն՝ ապրեցուսցեն զմեզ . Թող զմեծապէս օժանդակութիւնն՛ի մեծամեծ կարիս զհանապազօրեայն , և զդարմանն քաջալայելուչ՛ի դիւր բազմադէմ ախտիցն՝ որոց՛ի ներքոյ անկեալ են կեանքս մեր : Սակայն քանի՞ ցանկալի էին կեանք անկարօտ մեծի արուեստին . ազատացեալ՛ի կարեաց ատի , զերծ՛ի հարկէ խնամարկութեան մարմնոյն , որ հանապազ սպառնայ մեզ զատակումն :

Այդ զոր՛ի թիւս արուեստիցն զբժշկականէն ասեմք , զնոյն՛ի թիւս առաքինութեանց՝ արժան է ասել զհամբերութենէն : Որ բան երբէք բաւական իցէ՛ի գովութիւն կարևորագունի առաքինութեանս . որ այնչափ սատարս զօրաւորս՛ի ներքս մատուցանէ մեզ՝ տանել քաջութեամբ աղէտից կենացս : Այլ սակայն և երջանիկ առաւել համարէաք մեք զանձինս , յորժամ և ոչ մի ինչ յաղէտից ատի ամբոխէր զխաղաղութիւն մեր . և

digitised by A.R.A.R.@

չէին մեզ պէտք գնալ ապաւինիլ՝ի համբերութիւնն՝ առ՝ի քաղցրացուցանել զդառնութիւն կենացս, և բնաւ իսկ չէր՝ի միջի այս առաքինութիւն՝ի դասակարգի առաքինութեանցն, որոց հանապազօրեայ պէտք իցեն մեզ կրթութեանն՝ ըստ ազգաւոր բնութեանս և ըստ պարտուց հաւատոյս մերոյ։

Այլ սակայն այս բժշկարան մեծ հոգւոյն, այս է՝ համբերութիւնն, այնչափ ինն կարևորագոյն է մեզ և անխուսափելի, մինչ զի եթէ և հեշտին ևս իցէ մեզ գտանել յաշխարհի բազում մարմնոց քաջառոյգս և անախտակիրս, այլ սակայն և ոչ զոք գոգցես՝ի մարդկանէ՝ ազատ և անփորձ՝ի բազմօրինակ վշտաց և՝ի նեղութեանց՝ որ ըստ հոգւոյ և որ ըստ մարմնոյ, ՝ի հակառակութեանց և յանձկութեանց որ ներքոյ և որ արտաքոյ, և յաղէտից որ զինչ և իցէ։ Այանզի զլինեն մարդ և զկրեն, նոյն և մի իր համբերեցան խնամատունք. և որ առաւել երջանիկն է յաշխարհի, նա է որում նուազ են կարիք։

Յայսր ամենայնի վերայ զոյ մեզ սիրելիք և այլ առաքինութիւն, յոր եթէ քաջասցուք՝ բաւական իցէ նա միայնակ՝ ոչ այնչափ ինչ կարևոր գործել մեզ՝ի բազմաչարչար կեանս մեր զկրթութիւն զայս համբերութեան։ Այս որ այն իցէ. է առաքինութիւնն՝ զոր կոչեմք "Իմաստութիւն քրիստոնէական", որ զբնութիւն ինքնին զվշտացն՝ որ չարչարեն զմեզ՝ի կեանս մեր՝ խորագոյնս քննեալ, ՝ի վեր հանէ զձշմարտութիւնն և մխիթարէ զմեզ և անխռով կեանս բազում անդամ նաւեցնէ մեզ։ Այս է զոր խրատեաց աստուածխնամն Պաւղոս. "Իմաստութեամբ գնասջիք առ արտաքինս"։

Այանզի մանր գնեալ զիրն առ հասարակ՝ գտանեմ զի աղէտք՝ի կենցաղումս՝ որ պատահեն մեզ և տագնապեն, առաւելագոյն մասամբք՝ի մէնջ ունին ըզպատճառս իւրեանց. և եթէ մեր փոքր մի խնամատանցեալ էր և իմաստասիրեալ խոյս տալ՝ի պատճառացն և յառաջիցն, և նախատես հանդերձելոցն լեալ, ոչինչ այնպէս ստէպ պէտք ինչ էին մեզ առաքինութեան համբերութեանն՝ի տանել զնոսա ժուժկալութեամբ։

Այս խնամատութիւն քրիստոնէական եղիցի նիւթ

քարոզին մերոյ այսօր, և սա հրահանգեսցէ զմեզ մի 'ի սպառ հիքանալ յանձկութիւնս մեր. քանզի ուսուսցէ մեզ ձանապարհ՝ անձնապուր լինել յայն ամենայն վըշտաց՝ որոց մեքս եմք պատճառք։

Այլ արդ քաջ միտ դիր սիրելիք. են իսկ բնաւորապէս մարդիկ այնչափ իմն յանձնապաստանք 'ի միտս զի և պէտք են նոցա մերթ ընդ մերթ լինել վշտակիրք, զի մի իցեն այնպէս բարձրամիտք։ Անշուշտ է խորհրդածութիւնս և պտղաբեր յոյժ։

Որանզի այն ինչ յաստիճան հասանէն նոքա յեղյեղուկ բախտին, անդէն իբրև այլ յայլմէ բազումանգամ խելաց ծփումն առնեն։ Անձնանաչք են նոքա այնուհետև անձանց, և 'ի հասարակաց բնութենէն 'ի վեր վազեալ 'ի վեհագունից իմն կարգի դասեն զանձինս։ Այս անշուշտ յայնժամառ դուրս կայցէ նոցա նա և յանմնութիւն գլխովին հատանիլ, եթէ ոչ աղէտ մի կամ տարաբախտութիւն մի 'ի վերայ հասեալ զգօնացուսցէ զնոսա։ Իսկ ապա իբրև յարկածից անտի հարեալ վատթարին, դարձեալ այլ յայլմէ եղեալ հիքաբար՝ մինչև յերկինս 'ի վեր զանչիւն և զաղաղական իւրեանց հասուցանեն. և որպէս 'ի բարեբախտութեան յանպայման ինձդանս հատան, այսպէս և 'ի տարաբախտութեան 'ի սպառ յուսաբեկք, անձնագրաւք են 'ի տխրութիւն։

Այլ սակայն չէ մարդ ստեղծեալ վասն այսորիկ զի հանապազ տարուբերեալ ծփեսցի կամ 'ի տարապայման խնդութենէն կամ 'ի տարապայման տխրութենէն։ Այս եթէ մեք խորհրդակից բարի արասցուք մեզ զքրիստոնէական իմաստութիւնն, 'ի ձեռս մեր իցէ յայնժամ հաւասարավիճակ վարել կեանս ընդ մեզ ինքեանս, և ըստ նմանէն միշտ ըստ կարի երջանկանալ 'ի կենցաղումս։ Եթէ տկարագոյն ինչ իցէ իմաստութիւն աւետարանին՝ քան զշնչաւորս զայս և զաշխարհական իմաստասիրութիւն. և եթէ սովաւ բազումք յարտաքնոց քաջացան և յանդորրու վարեցին կեանս, ոչ 'ի նոյն զօրեսցէ և աւետարանն. որ քան զայն այնչափ վեհագոյն է, որչափ հրահանգ Աստուծոյ 'ի վեր է քան զգիւտ հանճարոյ մարդկան։

Այլ սակայն մեք ինքնին, որպէս ասացի, մեք եմք բազումանգամ պատճառք և գործարան մերոց չարեաց.

digitised by A.R.A.R.@

մեք ինքնին փոքրեմք և պզտեմք գուբա 'ի նեքքոյ ոտից մերոց. և յորժամ հիքացեալ անկանիմք 'ի խորխորատն, փոխանակ ձիգն թափելոյ յերկն, աւաղ միայն և վայ կարդամք անձանց։

Արդ գործիս և պատճառս երրակի բնաւորեցաք մեք 'ի ձեռս առնուլ, և մեզ ինքնին մերովք ձեռօք գործել զմեր խաչ։ Առաջին՝ երևակայութիւն տարապայմանն և անկարգ։ Երկրորդ՝ խուժան ցանկութեանցն։ Երրորդ՝ տեղի տալ կրիցն։ Որքա երեքին, տեարք իմ, են աղբիւրք ամենայն չարեացն, որոց մեք ինքնին եմք պատճառք։ Աշաւեմ խնամտութեամբ ունկն մատուցանել։

ՄԱՍՆ Ա.

Արդ յառաջնոյն սկիզբն առեալ, զի է զի չեմք մեք միշտ համամիտք ոչ ընդ անձանց և ոչ ընդ այլս յաղագս զինչութեան և յաղագս ծանրութեան չարեացն, որ չարչարեն զմեզ. և երբէք է զի անկայուն և այլազան են մեր կարծիք յաղագս արկածից կենացս։ Խաչք քանիօն՝ որ ծանունք յոյժ երևէին մեզ 'ի վերին երեսս, իսկ յորժամ մանր և 'ի մօտոյ զննեցաք զնոսա, և ոչ խաչք անգամ հանարեցան նոքա. կամ գէթ ծանունք կարծեալքն՝ փոքրոգիք գտան և թեթևք։

Օ ինչ պատահումն իցէ իրացս՝ ասացէք։ Յայտ է, թէ երևակայութիւն մեր ընդմտանէ յէութիւն անդր չարեացն, և զնոսա կամ նուազէ կամ առնեցուցանէ. և ըմբռնումն մտաց անկարգ՝ առաւել տանջէ զմեզ քան զբուն աղէտսն։ Յայտ է ուրեմն, եթէ քան 'ի բնութենէ վշտացն հասելոց, առաւել ևս 'ի հանգամանաց վշտագնեալոցն հանդիսանան չարիք. որպէս խնամտութեամբ ինքեաց Իսկեբերան. "Ոչ այնչափ, ասէ, բնութիւն կրիցն, որչափ պատրաստութիւն կրելեացն, մեծ կամ փոքր երևեցուցանէ զչարիսն՝ որ 'ի մեր վերայ հասանեն „։

Աղէ դու հայեաց միանգամ ընդ մարդդ ընդ այդ, որ յղփացեալն է 'ի բարիս կենացս, և սակայն ապերջանիկ կարծէ զանձն. միշտ քանքարտաց՝ ոչինչ բռնա-

digitised by A.R.A.R.@

դատեալ յաղէտից ուստէք. միշտ ամբոխեալ և անհանգիստ՝ ոչինչ տեսանէ յանցեալն բայց զչարիսն զոր կրեաց. ոչինչ նկատէ յապագայսն՝ բայց զչարիսն յորոց խիթայ. իսկ՝ի ներկայումն ակնարկէ միայն՝ի նեղութիւնն դուշնաքեաց յոյժ. ոչինչ զմտաւ ածեալ թէ քանիսն էին բարիքն յորս միանգամ վայելեաց։ Աւասիկ քեզ մարդ փոքրոգի, զոր՝ի գլորել սակաւ ինչ իր բաւական է։ Աւյլ առ՝ի մէջ այսպէս. քանզի կեայ նա միայն ըստ երևակութեանն. և է այս նոցա երևակութիւն տարապայման և անկարգ։ Օ՛ի կամ՞ոչ պատրաստէ նա երբէք զանձն առ չարսն կամ թէ տարապայման պատրաստէ. աւասիկ քեզ պատճառք անկարգութեան նորա։

Աւ սակայն խնամտութիւնն քրիստոնէական զայս ուսուցանէ, եթէ յաղցաւոր կենցաղումս քան առ բարին առաւել առ չարն հասանէ մեզ միշտ կազմ և պատրաստ լինել։ Աւ այս և հրահանգէ, եթէ՝ի գալ հասանել չարին, ոչ փոքր ինչ է՝ համբերատար առաքինութեամբ տանել այնմ, և մի օտարոտի խորհրդովք և տխրագին մտածութեամբք ծանրացուցանել զնոյն։ Զանի՞ խնամտութեամբ կանխեաց ազդեաց մեզ աստուածային առաքեալն. "Աղբաբք իմ, մի օտարոտի ինչ համարել զեռանդն, որ՝ի փորձութիւն ձեզ լինիցի"։

Զպաքէն անակնուն նել ինչ արկած՝ նիւթ և պատճառք է անսպառ կոծոյ։ Աւ առ՝ի մէջ ապա ոչ խնամտութեամբ կանխել ակն ունել այնմ, զի մի անկարծութեամբն խսպառ վեր՝ի վայր գործեսցէ զմեզ։ Զ՞է ապաքէն հասարակ կարգաւ յաջողութիւնն ինքնին կաբապետ է մնտալուտ չարին, որպէս պարզութիւն օդոց մրրկին. գնել՝ի մտի եթէ հնար է յաւերժանալ յերջանկութեան, ոչ այլ ինչ է բայց բնաւ իսկ չճանաչել զվայրն յորում կեամք, յորում հանապազօրեայ է փորձութիւնն, հանապազօրեայ է և մարան. "Զ՞է ապաքէն պատերազմ է կեանք մարդոյ՝ի վերայ երկրի"։

Աւ այս դարձեալ՝ եթէ խնամտութիւն է մարդոյ նախատես չարեացն լինել և պատրաստել՝ի համբերութիւն, սակայն չէ խնամտութիւն մանրախոյզ՝ի խորս անդ անստուգութեան ապագայիցն՝ որոնել անձին պատճառս իմն զանձկութեան և զտաղնապի։ Պատրաստ

digitised by A.R.A.R.@

լինել ընդունել զարկածն 'ի նախախնամական ձեռաց Աստուծոյ մերոյ, խնամատուութիւն է այս քրիստոնէական, այլ կանուխ հեծել և յոգւոց հանել վասն այնոցիկ, այս անմնուութիւն է անկարգ երևակութեան։

Բազմերինակք են, եղբարք, խաբանք մնացածինք որ տանջեն զմեզ։ Ուշ ունել մնոտեաց՝ մինչև երաշոց անգամ և անրջոց երես առնել, և խիթալ իբրու 'ի վնասաբեր ազգմանց խօլական թշնամւոյն. և հեռատես նկատումն ամենայն հնարաւոր արկածից, և յանդիման նկարել զնա սին իբրև ժայռաշաղինս և խորխորատս անձողոպրելիս. և տարապայման ըմբռնումն մահու և ահաբեկութիւն յանկարծահաս մահու, և հաշիլ և մաշիլ՝ մինչև վաղվաղել անձին և զօրհասն. և մոտաբաբ երկիւղ յանվնաս և յումպէտ հանգամանաց իրացն որ պատահեն, և առնուլ շրջել զնոսա 'ի վնաս անձին։ Այս ամենայն են խաբկանք և անձկութիւն և տառապանք հոգւոյ, որոց մայր և սաղրիչ է միայն անկարգ մերն երևակայութիւն։

Բաբէ 'ի քանի ներհակակիր մոտախաբութեանց աստի տատանեալք, և զօրհանապազ աւաղեմք և գանգատիմք, զիարդ զի և պատարուն իցեն, ասեմք, կեանք մեր արկածիւք, . . . Այլ նոքին իսկ աւաղելոցն մեք ինքնին բազմապատիկ գործեմք զայնոսիկ։ Պարտ և արժան էր 'ի քաղաքական ընկերութենէ արտասահմանել զայնոսիկ, որոց միշտ 'ի ժամու և 'ի տարաժամու սիրելի է աւաղել ոչ զհասարակացն միայն զաղէտս այլ և զիւրեանց, որք անձանց վնաս գործեն աձեցուցանելով ըզվիշտս իւրեանց, և լսողացն օգտեն և ոչինչ, նա և ոգեսպառ տաղտկացուցանեն։

Օ՜ ինչ ասել պարտ իցէ և զայլոց բազմաց, որոց կիցեն անձկութիւնք ընդ պաշտամանց աւագութեան նոցա։ Այլ որ զարմանաց և ծաղու և արժանի է, մինչ տրրտունջան և աւաղեն յաղագս նեղութեանցն՝ որք անսանջատքն են 'ի բարձէ աւագութեան, անշուշտ առ ցաւս սրտին մեռանիլին նոքա, եթէ որ յանկարծ կորզէր զիշխանութիւն 'ի ձեռաց նոցա։

Օ՜ ինչ և զնոցանէն որ ոչն հային երբէք 'ի տառապանս մերձաւորացն իւրեանց. կամ թէ և հային և՝ 'ի կրիս ընդ իւրեանցն եղեալ, զիւրեանցն միշտ ծանրաբեռին գտանեն։ Ուստի և այն հանապազօրեայ տրտ-

digitised by A.R.A.R.@

մութիւն նոցա՝ այնպիսի ինչ հանդիպի լինել հոգւոց նոցա, որպիսի ինչ է աւազակացն խաւար և մութն գի շերոյ, ըստ որում ասաց Պօղոս։ Տրտմութիւն բնաւորեցաւ աղցաւոր բնութեանս, զի եղիցի մեզ սատար ապաշաւել տրտմութեամբ յետ յանցանացն, ճանաչել զկարիս թշուառութեան մերոյ, և հայցել զողորմութիւնն Աստուծոյ։ Իսկ մեք անհանձարաբար հնարագիւտք տրտմութեան լինիմք վասն անձանց, ոչ 'ի դիմել ապաւինիլ յԱստուած, քան թէ անձնամատն 'ի յուսահատութիւն անկանել։ Այս ամենայն են մնացեալքեր արգասիք մնախսաբ երևակայութեան։ Այլ փերկաւէտ խորհուրդ տայ մեզ քրիստոնէական խնամութիւն, որպէս խրատէր Պօղոս, 'ի կշիռ ձգել զմերս ցաւսն ընդ ծանրագունիցն, և այնպէս թեթևացուցանել զմերսն. այս է խնամութիւն։ Ո՞չ դու 'ի վիշտս և յանձկութեան տառապես. քաջ է. այլ զմնաւ ած՝ քանիք ունիք չարաչար և ես քան զքեզ տուայտին. և թերևս ոչինչ այնպէս արժանապէս արժանահաս իցէ նոցայն պատուհաս իբրև զքոյդ։ Իբրև տեսարան թատերաց է աշխարհս լի բազմազան անհամար ողբերգութեամբք. գտցես դու անշուշտ 'ի նմա խաչ ծանրագոյնս յոյժ՝ 'ի բաղդատութիւն առնուլ ընդ քոյոդ։

Այլ սակայն և 'ի վերս քան զամենայն՝ մեր պարտք այն են՝ անձնանուէր 'ի կամն լինել երկնաւոր նախախնամութեանն։ Ինչուշտ եմ ես, ասա դու հաւատացեալդ, անշուշտ եմ, եթէ Աստուած պահապան անքուն հովանացեալ կայ միշտ 'ի վերայ իմ. և 'ի մի քթիթ ական միանգամայն տեսանէ նա և զանցեալն և զներկայն և զապագայն իմ. և առիմ՞ ապա խնդրեցիս ես կամ տանջել զիս վասն ապագային, կամ բազմապատիկ գործել զներկայսն. արկածք ամենայն գործք են նախախնամական ձեռին նորա, ես խոնարհեալ եմ ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ. նա որչափ հզօր է 'ի պատժել, այնչափ հզօր է յանդորրը հանել։

Հաւասիկ յայս հրահանգ քրիստոնէական խնամութեան է մեզ սիրելիք չափ և կարգ դնել մնախսաբ երևակութեանց։ Այլ չէ շատ և այս, եթէ ոչ սանձաւորութեամբ և զխուժան ցանկութեանցն։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆ Բ.

Օ՜ որ միանգամ 'ի բարեաց մասին ինչ տեսանեմք յայլս, թուի մեզ եթէ և մեք ինքնին արժանի էաք ընդունիլ այնմիկ. ուստի և ոչ միայն ցանկամք այնմ, այլ և ցանկամք ունել և ևս քան զևս։ Լ՚ահա այս ցանկութիւն է, որ բազում անգամ չարչարէ զմեզ։

Մ՚իջասահման վիճակ ոչինչ յանկուցանէ զմեզ. և սակայն միջասահմանութիւն միայն կարող է անդորրաւէտ և երջանիկ գործել զմեզ յաղցաւոր կենցաղումն։ Լ՚իսկ քո աւադիկ մեծութիւն ըստ բաւականին այր դու, զի՞ է քեզ ցանկալ և ևս. և եթէ հասեր ցանկութեանդ, կարծիցես ոչ ևս ցանկալ։ Մ՚այն իցէ 'ի մեզ մեծատուն արդեաւմբք. — նա միայն որ գիտաց չափաւորապէս ցանկալ։

Լ՚ուն մուրկի նուազ է տրտունջն վասն աղքատութեանն, քան զտրտունջ առն ընչեղի վասն գոյաւորութեանն։ Մ՚ուրիկն չափ և սահման դնէ ցանկութեանցն. մեծատունն անսահման է 'ի ցանկութեան։ Օ՜ որ այսօր կորոյս նա ինչ մի 'ի բարեացն, գրեա եթէ զմ՚ստուած կորոյս. այլ առ իմ՞ այնչափ տարապայման տրտմութիւն. ո՞չ ահա ըստ բաւականին 'ի նոյն վայելեալ իսկ էր նա յառաջագոյն։ Վ՚այելչութիւնք կենացս այսորիկ մի զմիով գան և միմեանց յաջորդեն. զի՞ է զի ոչինչ միտ եդեալ նորոգատուր բարւոյն՝ յոր վայելէ այսօր, միայն զմնաւ ածէ զոր յերեկին կորոյս։ Տ՚րտմութիւն նորա այն ընդ կորուստ միոյն՝ ծիծաղելի է առ այնչափ բարեօքն յոր վայելեաց և յոր վայելէ։ Լ՚այլ որպէս ասացի, անսահման է ցանկութիւնն։

Լ՚ուեալ իսկ է ձեր զմեծի ամբարտաւանին զայնորիկ զդէպսն։ Վ՚անիցս անգամ 'ի ձեռս զգիրն առեալ եմ, չիք իմ երբէք և ոչ մի անգամ, անցասումն մտօք ընթերցեալ զպատմութիւն զայն։ Լ՚մբարտաւանն այն Հ՚ամանն երկրպագութիւն առեալ առ հասարակ յամենայն իշխանացն արքունեաց Լ՚ուտաշիսի, քանզի Մ՚ուրթքէ միայն ոչ երկիր պագանէր՝ մեծարեալն յարքայէ և

digitised by A.R.A.R.@

հաւատարիմն նորա. ոչինչ հանդարտէր Համան, նա աւաղէր և զբախտն գլխակոր լի տրտմութեամբ, և 'ի սրտմտութիւն ևս գրգռէր ընդ նմա։ Յանկութիւն պատուոյն՝ զոր առհասարակ յամենեցուն խնդրէր՝ ընդ պակասել միոյն ևեթ սաստկապէս տանջէր զնա. և զի անձին միայնոյ խնդրէր զամենայն պատիւն։ Որանի՛ անիրաւ էին ցանկութիւնքն, և քանի՛ իրաւապէս տաշեցին կազմեցին նմա զփայտն անարգութեան։ Որանի՛ք և այսօր 'ի բարձս իւրաքանչիւր և 'ի վիճակս կենաց հիքացեալ վարեն կեանս՝ 'ի պատճառս անչափաւոր ցանկութեան պատուոյն և արծաթոյն։

Որեծն այն և արգոյն կարծիք զոր ունիմք զանձանց, զառանցեցուցանէ զմեզ իբրու այն թէ ընդ որս կենցաղիմք, չիցեն նոքա ըստ բաւականին առ մեզ ակնածուք և շքադիրք. և օտարոտի իմն թուի մեզ և դժոխըմբերելի իր, եթէ երբէք ոք յանկարծ թերակատարութիւնս ինչ նշմարիցէ 'ի մեզ։ Որաւունք չափով տուեալք մեզ 'ի մարդկանէ, և գովութիւնք չափով ընծայեալք մեզ 'ի նոցանէ, անիրաւութիւնք թուին մեզ և անարգութիւն անձին։ Որակ ապա մարդելուզութիւն անարգ, և գովութիւն կուտակաբան, և ակնածութիւն անպարտական, այսոքիկ են զոր անպատկառաբար ժտիմք 'ի մարդկանէ իբրև պարտս. և եթէ յայնցանէ յեռնեսցին նոքա, աւաղիկ մեր վիշտք սրտի, աւաղիկ մեր անձկութիւնք ոգւոյ։

Որաբէ, ո՞րպիսի ինչ իցէ անձկութիւն մեր այս, քանի՛ այլանդակ։ Որէ ահա ցանկութիւնք մեր դժպհիք տանջեն, ծայրայեղ պատուասիրութիւն, անպատկանաւոր հոգ վարկին, խաչս բաղումս բարձեալ բերեն մեզ ընդ իւրեանս, և 'ի նոյն խաչ առեալ բևեռեն զմեզ։ Որնշուշտ խորհրդակցոյսք եմք, եղբարք, 'ի գիտութեան բարեմասնութեան մերոյ։ Որ քանի՛ ոգետանջ կրից, 'ի քանի՛ անարգութեանց, 'ի քանի՛ ամբաստանութեանց և բամբասանաց, հեշտին էր մեզ անձնապուր լինել, եթէ մեր առաւել պարկեշտացեալ էին ցանկութիւնք, առաւել բանաւորք, առաւել արդարք։

Որանզի են իսկ ցանկութիւնք մարդկային սրտի արդարև իբրև ալիք մրրկեալք ամենի ծովու, կուռ մի զմիով կուտակեալք անդադար՝ գոչեն և փրփրադեղ

digitised by A.R.A.R.@

ամբառնան ընկենուլ զմեզ։ Ի՞նչ ոք 'ի մէնք, աղէ ասացէք, ամենեքին գոհ իցէ և անտրտունջ 'ի վիճակին իւրում, և ոչ առաւելագունին իրձ լինիցի։ Հաւասիկ ոչք 'ի պաշտաման ինչ արքունեաց կան, վաստակաբեկք առ անդորրութիւն կենացն հառաչեն. իսկ ոչք արտաքոյ անզբաղք կեան, հետամուտք յոգւոց հանեն՝ բարձ մի պաշտաման ունել. որ տոհմիկն է ընչեղութեան մեծատան ցանկայ. իսկ որ ընչեղն է ընդ աղնուական արիւն քաջատոհմին խանդայ. որ պարապորդն է՝ անպարապութեան կենացն փափաքէ. այլոլքն հանդերձ։ Հանգի և այնչափ են հոյլք ցանկութեանց յաշխարհի և խուժան, զի եթէ ողջ զամենայն կամեսցի ոք ընդ թուով արկանել, բնաւ իսկ 'ի զուր վաստակեսցի։

Այլ ահա նոյն այն ցանկութիւնք, եթէ 'ի նպատակ իւրեանց չհասանիցեն, դառնան լինին վիշտք և անձկութիւնք։ Իսկ եթէ ամենայն ըղձից մերոց ունկն մաուսցէ երկնաւորն նախախնամութիւն, տալով մեզ զոր այսօրն խնդրեմք, անշուշտ չլինիցիմք մեք գոհք առ վաղիւն։ Այսչափ է անհաստատութիւն անպայման ցանկութեանց մարդկային սրտի։

Իսկ արդ առիմ՞ ուրեմն անսաստել մեզ քաջիկ խորհրդոց քրիստոնէական իմաստութեան։ Այս իմաստութիւն հրահանգէ զմեզ եթէ մեծ և նահատակութիւն է չափ դնել ցանկութեանց հոգւոց, քան 'ի վերայ աղգաց քաջաց նշան յաղթութեան կանգնել։ Այս իմաստութիւն հրահանգէ զմեզ՝ գոհ և անտրտունջ կեալ 'ի վիճակին մերում, և ոչ առաւել ինչ խնդրել քան զտուեալն մեզ 'ի խնամոց երկնաւորին։ Այս իմաստութիւն հրահանգէ զմեզ, եթէ ոսկեղինիին այն չափաւորութիւն կենաց ընդ ինքեան բարձեալ բերէ զխաղաղութիւն. և սանձ դժպատեհ մերոց ցանկութեանց դնելով՝ հնար է մեզ երջանիկ կեալ և երջանիկ մեռանել։

Այս եթէ խորհրդոցս այսոցիկ քաջաց ունկն չմատուցանեմք, 'ի զուր է մեզ այնուհետև տրտնջալ ընդ վիշտս և ընդ անձկութիւնս մեր։ Տրտնջամք յանիրաւի և առաւել յանիրաւի, յորժամ անձամբ անձին մեզ հնարագիւտք լինիմք վշտացն այսոցիկ, զհետ երթալով կրից մերոց։ Օ՜որ և տեսցուք վաղվաղակի։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆ Գ.

Ով քանի՛ առաւել քան զբաղցրութիւն իցեն դառնութիւնք յանցանացն։ Ոչեն ինձ կամք՝ ի թիւ հիքացելոց գրել զամբարիշտս, որ միշտ իբրև պատուհասակոծք յերկնից, յանկածութեան վարեն կեանս. միշտ ամբոխեալք մտօք՝ ի տուէ, և միշտ անհանգարտք՝ ի գիշերի, տագնապեալք և հարուածեալք անդուլ՝ ի խղճէ չարեացն։ Բանզի ամբարձեալ կայ միշտ բազուկ ամենակալին՝ ի գլուխս ամբարշտաց, ո՞՝ ի դիմի բաւական իցէ հարկանել նմա, և կամ՞ ո զսահմանն խախտեսցէ զամենիմաստ նախախնամութեան նորա։ Կապեալ կան միշտ իբրու խաւարային կապանօք, և հեծեն մինչեն միշտ արհաւրօքն՝ որ բունեալ կայ՝ ի սիրտս նոցա։

Ո՞՝ իշտ սոցա և տագնապ ոչ գթութեան է արժանի և ոչ ողորմութեան. ՝ի ձեռս նոցա է յամենայն ժամ ազատութիւն նոցա. և պարտապանք եւս են երանել յազատութիւնն՝ նզովելով զպատճառսն անձկութեանց իւրեանց, որ այն ինքն են ՀՇմարիտ յանցաւորութիւնք նոցա։ Ի՞մ քանք զարդիս վասն հիքացելոցն այնոցիկ են, որ այլօրինակ անձամբ զանձինս թշուառացուցին՝ ի կենցաղումս. և սանձարձակ և անհանձար վարելով կեանս, ինքեանք կացին պատճառք հիքութեան իւրեանց։

Որ երբեմն մեծատունն էր, տեսանես այսօր զի հեծէ և յոգւոց հանէ ՀՇնչեալ ընդ աղքատութեամբն իբրու ընդ ծանրաբեռն խաչիւ։ — Ո՞ կազմեաց քեզ, այր դու, զիսաչս զայս . . . ։ Ի՞տես իսկ դու ապաքէն։ Կամ՞ ո արդ ծանրացուցանէ և եւս զայն՝ ի վերայ ուսոց քոց։ . . . Ո՞չ ահա յուշ ածելդ քո այդ զաւուրսն քո զառաջինս, յորս յղփացեալ՝ ի մեծութեան, այնչափ իմն զակատեալ վայելեցեր՝ ի նոյն, զի և յուշ երբեք չածեր, եթէ ժամ և օր թերեւս հասանիցէ քեզ երբեք տեսանել զքեզ յաղքատութեան։ Ի՞ ակատեցար՝ ի կիրս անչափաւորս խաղուց, զակատեցար՝ ի զբօսանս անպատկանաւորս, զակատեցար՝ ի գործս անտպաւորս, և վատնեցեր զինչս քո։ Ի՞ արդ եթէ այսօր աղքատ ես, զո՞ որ կալ-

digitised by A.R.A.R.@

ցեռ քեզ պատճառս, զումմէ այլ կարասցես դու տրտունջալ բայց զքէն։

Դարձեալ բարձ մի աւագութեան, կամ առաջնորդութեան, կամ պաշտաման կալեալ քո, և զլքեալ անկար 'ի գահէդ և լուծաբ յիշխանութենէդ։ Բաղա այնուհետև կարդաս դու անձին քում, և 'ի խորս տրտմութեան ընկղմեալ քո, անկենդանական վարեռ կեանս. և անհրաժեշտ տուեալ ամենայնի զանձնդ հարկաւորիս այնուհետև երթալ զօղիլ 'ի խորշս բռնադատեալ բարեպաշտութեդդ և վայր մի ապրիլ զքեզ։ Օ՜ի եղև քեզ. կամ առ ինչ արդեօք...։ Դիտես իսկ դու ապաքէն, զի խաբէութիւնք քո 'ի վեր ելին 'ի պաշտամանդ, և նենգութիւնք քո առակեալք, դարանք քո գաղտնիք և սպառնալիք 'ի դերևս ելեալք, այդոքիկ աւաղիկ կործանեցին զքեզ։ Բ՝ն այսոքիւք և սանձ քո չեղեալ լեզուին, և անխոհեմացեալ քո 'ի բանս, և սկզբունք շնչաւորք, և առածք վտանգաւորք ելեալք 'ի բերանոյդ, զրգռեցին միանգամայն զոսոխն, և զգուբ զայն փորեցին ընդ ոտիւքդ։

Դարձեալ 'ի թշնամութիւն ընդ այլս զրգռեալ քո, և զարդիս աւաղիկ յահի յերկիւղի կեաս հանապազօր, եթէ յանկարծ ուստեք շանթեսցէ քեզ հարուած գաղտնորոգայթ 'ի դարանեալ սրոյ, կամ 'ի խառնեալ թունից թշնամւոյդ...։ Պարտ էր քեզ կանուխ զգօնանալ և անդորրանալ 'ի կեանդ. զի թէ երբեք յանձն առնուիր միանգամ ներել թշնամւոյն, շատ էր քեզ յայնժամ վայրիկ մի բուռն արարեալ անձին, և հոգի մեծ և ազատաշնեայ և քրիստոնէական յանձին բերել։ Դանզի և ո՞ որ այնչափ բուռն և ոխերիմ թշնամի, որ տեսեալ 'ի հանդիպոյ զոսոխն զալ հեզաբար և զիրկ ընդ խառն հաշտիլ ընդ նմա, և ոչ 'ի վայր զդաշոյնն արկցէ 'ի ձեռանէն։ Բ՝այլ դու 'ի վրէժխնդրութիւն անհաշտելի հատար, և այժմ զանդորրութիւն կենացդ խոպառ կորուսեր։ Բ՝հաւասիկ քեզ անձկութիւնք դառնք առ 'ի հպատակութենէ կրեցդ։

Բայց առ այսոքիւք և յայլոց ևս վշտաց 'ի տրտունջ հատանին մարդիկ։ Բ՝ա՛բէ, — ասեն. քանիսն իցեն ախտք և հիւանդութիւնք 'ի մարմնի. քանի՛ երկիւղ մահու 'ի կեանս մեր. իսկ արհաւիրք տարաժամ և յան-

digitised by A.R.A.R.@

կարծահաս մահուն որչափ . . . . : Վաղ է . զի են իսկ այդոքիկ աղցաւոր կենացս անխուսափելի հարկ :

Այլ հարցանեմ, որ իմաստութիւն, կամ՝ զինչ միա բանութիւն կայցէ երկնչել՝ի մահուանէ և ահաբեկիլ ևս՝ի յանկարծահաս մահուանէ . և ապա ողջոյն այնպէս քաղաքավարել՝ի կեանս, որպէս թէ երկիւղ ուստեք ինչ ոչ կայցէ : Պարձեալ և այնպէս վարել կեանս, զի և մինչև մեռեալքս, և զօր ամենայն՝ի տրտունջ լուծեալ վասն թոյլ և ապիկար խառնուածոյ մարմնոյդ, դու ինքնին կանուխ իբրու դիակնացուցեալ և զնա ընդգրկեալով միանգամայն զամենայն սատարս ապականագործս մարմնոյդ, որ առաւել ևս բնաւորեցան վատել զնա և հաշել մնալ : Վասնզի է զի անչափապէս զրգանօք խենչեցեալ լինիս՝ի հեշտութիւնս և՝ի պագշոտութիւնս . է զի զչափաւորն հանգիստ և զկարևորն զանաս մարմնոյդ և զակատեալ՝ի խաղս զգիշերն տիւ գործես, և զտիւն գիշեր օրինաց բնութեանն անասստելով : Ի մայրն իւր խոնարհի արփին, և Ճրագունք լուցեալք՝ ծագեն քեզ արև, և քո յայնժամակսանի տիւն : Արևածայրք երևին, և քո յայնժամ է մութն, և դառնաս՝ի հանգիստ . և յորժամ հասարակեալ իսկ է օրն, յայնժամ բանաս զաչս քո առ լոյն : Օ զինչ այն քաջողջութիւն իցէ մարմնոյն . կարծիցես վայելել՝ի շնորհս բնութեան՝ի խախտել քո զկարգ սահմանի բնութեան : Այլ զիարդ այնուհետև ոչ խիթասցիս դու վաղամահ լինել . քանզի և զրգասէր կեանք և հանապազօրեայ անժուժկալութիւնք՝ սատարք են յախտակրութիւն և լուծիչք մարմնոյ և նախավախճան չարչարանօք արագ հորդիչք ճանապարհին քո՝ի գերեզման :

Այս ահա այսոցիկ կրից թողացուցեալ զերասանակն, զի է քեզ այնուհետև գանգատել վասն հանապազօրեայ ախտաժէտութեանցդ . գանգատել զբնութենէն՝ եթէ այնպէս սակաւօրեայ գործեաց զկեանս քո :

Զի՞նչ մեք վայրիկ մի իմաստնասցուք եղբարք . և սէր և դութ զՃշմարիտն ածցուք անձանց մերոց, զի և զթը շուառութիւն աղցաւոր կենացս մեք ինքնին իմաստութեամբ նուազեցուցուք : Զի յիշխանութեան մարդոյ ոչ զգալ չարեացն՝ որ տանջեն զնա . այլ հետամուտ՝ի խնդիր լինել այնոցիկ՝ յանդգնութիւն է և անմտու-

digitised by A.R.A.R.@

թիւն։ Զայր քրիստոնեայ առաջնորդեալ յիմաստութենէ աւետարանին, պարտի համբերատար առաքինութեամբ տանել վշտացն որ 'ի վերայ գան. այլ դիմադրաւ ընծայել զանձն վտանգաց առանց պատճառի և հարկի՝ անմտութիւն է. Ինչդրիտ նմանեալ անհանձար նաւապետի՝ որ յանձնացոյց պարծանս քաջահմտութեանն զխարիսին վերացուսցէ յայնժամ յորժամ տակաւին մրրկաւ ամենայնեալ իցէ ծովն։

Զառաքելականին միտ եղեալ խրատուն. "Իմաստութեամբ գնասջիք առ արտաքինսն,, , յամենայնի զգօնացեալք առ ամենայն վիճակս մարդկան. առ միմեանս՝ անձնապահ լիցուք մի անհանձարաբար զարթուցանել զատելութիւն. առ աւագսն և առ հղօրսն՝ մի զրգռել զթշնամութիւն. առ հետամուտ նախանձաւորսն՝ մի բորբոքել զկիրսն. առ վեհսն՝ որ ձոխաբար թերևս զեղծանիցին իշխանութեամբն՝ մի հակառակիլ։ Ցաւի և սահման զիցուք նաև սուրբ և արդար նախանձումն՝ մանաւանդ յորժամ կիրս իմն բորբոքեալս և շահախնդրութիւն նշմարեսցուք 'ի նմա։

Զհաւասիկ ձեզ, սիրելիք, բաղմապատիկ հոյլք անձկութեանց կենացս, որոց մեք ինքնին եմք պատճառք մերոյս անիմաստութեամբ։ Զհաւասիկ և արգասիք քրիստոնէական իմաստութեան՝ զոր լուսաբանեցաք. առաջին՝ չափ և կանոն դնել անկարգ երևակութեանց. երկրորդ՝ նուազեցուցանել զխուժան ցանկութեանց. երրորդ՝ սանձ դնել ապերասան կրիցն։

Սակայն և ոչ ինչ յաջողեսցուք յայսոսիկ, եթէ ոչ 'ի խարիսխս հաստատութեան առցուք մեզ զկրօնս։ Զոչ շատ ինչ սկզբունս գեղեցիկս սադրէ մեզ իմաստասիրութիւն աշխարհի. այլ սակայն կրօնիցն է միայն բաւականութիւն՝ զօրավիգն մեծ տալ մեզ արդիւնացուցանել զնոսա։ Սա միայն զօրէ իմաստունս գործել զմեզ՝ զառաջս առնուլ զչարեացն. և յորժամ տկարանայցեմք 'ի կանխել՝ սա միայն համբերատարս գործէ զմեզ առաքինութեամբ նահատակել, յուշ ածեալ իմաստութեամբ զանհրաժեշտ հարկ զփորձութեանց յաղցաւոր 'ի կեանս, յուշ ածեալ խնամով և զառաջնոց մերոց առաքինեաց հարց և սրբոց զօրինակս, որք համբերութեամբ ստացան զոգիս իւրեանց։

digitised by A.R.A.R.@

Այլ թէպէտ և կեանք մեր այս լի են յոգնութիւն արկածիւք և նեղութեամբք, այլ քանզի և ոչ՝ի միում վայրի և ոչ՝ի միում ժամանակի ամենեցուն՝ի վերայ հասանեն չարիք, զի կէսք վշտանան և կէսք միխիթարին. միխիթարեալքն զբեռն բարձցեն քրիստոսական սիրոմ՝ զվշտացեալսն. միանգամայն Ձիգն օժանդակութեան՝ի նեղբս մատուցցեն յամոքել զգառնութիւն վշտաց եղբօրն։ Իսկ եթէ և հանդերձ արդեամբքն արտասուեսջիք և յաղէտս և յարտասուս նոցա, երանելի էք. քանզի վասն քրիստոսին են արտասուքն։ Այլ սերմանք անշուշտ են արտասուք այնպիսիք՝ հանդերձելոյ անպարտական ցնծութեանն զոր պտղաբերեսջիք՝ի Քրիստոս. յորժամ և վշտացեալ և չարակրեալ եղբարքն և առ՝ի ձէնջ օժանդակեալքն և միխիթարեալքն, սրտառուչ պաղատանօքն մաղթեսցեն վասն ձեր առ Քրիստոս առաջի սեղանոյս սրբութեան, զի ընդ ժամանակէից բարեացն՝ յաւիտենականին այնմիկ արժանի լինիջիք դուք հասանել երջանիկ կենացն՝ի յերկինս։

digitised by A.R.A.R.@

ԳԱՐՈՅ ԻԳ.

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

« Բարկանայք, և մի մեղանչէք ».
« Բարկութիւն մարդոյ զարդարութիւնն Աստուծոյ ոչ գործէ » :

Թէպէտ և յամենաբարի արարչէն և ոչ մի ինչ անբարի հաստեցաւ 'ի բնութեանս. 'ի վերայ այսր՝ կիրք բազմադէմք 'ի մարդումն՝ իբրու դժպատեհք, թուին ինն զանբարութեան ինչ բերել զտիպար։ Բայլ սակայն և ՀՀզրիտ խուզզութեամբ և ոչ զմի ինչ 'ի կրից անտի գտցես դու որ ոչն իցէ բնաւորապէս բարի։ Կիրք ամենայն տուան մեզ Աստուծոյ իբրու բազմաձեռն գործիք 'ի հոգալ պատրաստել մեզ զօգտակարն, և 'ի վանել մերժել զվնասակարն։

Բանց կրից չիք հնար լինել առաքինի. չիք հնար լինել բանաւոր, չիք հնար լինել և մարդ գլխովին։ Բաղձ 'ի մարդոյ զկիրս՝ և գտցես դու զնա իբրև բոյս իբրև տունկ կենդանի աճեցուն՝ անպիտան անձին, անպիտան և այլոցն ամենեցուն։

Այլ եթէ այս այսպէս, զինչ պարտ իցէ ասել, տեարք իմ, յաղագս դաղանական կրից բարկութեանն. կիրք մահաբեր ազգի մարդկան, կիրք ապստամբ 'ի լուսոյ բանին, կիրք ոխերիմ հանդիսացեալ հոգւոյ աւետարանին հեղութեանն ասեմ։

Զինչ ասել պարտ իցէ. բայց զոր հարք սուրբք առ հասարակ և վարդապետք աստուածաբանք, 'ի վերջէ

digitised by A.R.A.R.@

ուրեմն յայտնապէս կնքեցին, եթէ կիրք բարկութեան՝ ըստ ինքեան չէն կիրք անբարի. ուստի և մարթ է բարկանալ առանց մեղանչելոյ. ըստ որում աստուածայինն հրահանգեաց դիր. «Բարկանայք և մի մեղանչէք»։

Սիրեմք մեք զկեանն, սիրեմք և զբարիսք և զվայելչապէս կեանն։ Ողձ պահպանութեան կենաց՝ ընդաբոյս ծննդակից է մեզ։ Ողձ ուրեմն բնաւորեալ է՝ի մեզ ատել վանել զամենայն՝ որ խոչընդոտն է անդորրութեան և երջանկութեան կենաց մերոց. և նոյն իզձ բնաւորեցաւ դարձեալ և ժիր և գործօն առնել զմեզ՝ մարտ դնել կռուել ընդ թշնամիս մեր, և սրտապնդել՝ի պաշտպանել անձանց մերոց։

Հաւասիկ ձեզ առաջին տեսութիւն և նպատակ կրիցն զոր կոչեմք բարկութիւն։ Այս է այս բարկութիւն յուզումն և գրգռութիւն զգածմանց հոգւոյն ընդդէմ այնոցիկ՝ որ միանգամ՝ի դիմի հարեալ խնդրեսցեն զրժել կամ կենաց մերոց կամ գոյից մերոց կամ պատուոյն մերոյ։ Այս զայս կիրս մեք քաջիկ ևս զգամք յանձինս, քան թէ կարիցեմք ինչ արտայայտել։

Արդ բարկութիւնն խորհեալ առանձինն չէ ինչ չար. սակայն խորհեալ յայս ինչ և յայն ինչ, յայս ոք և յայն ոք, դժուարին է յայնժամ բարկանալ և ոչ մեղանչել։ Յորժամ բարկութիւնն կամ թափով հարեալ կանխէ քան զբանն, կամ յանձն չառնու վայր մի լսել և տեղի տալ բանին, և յայնժամ միշտ է յանցաւորութիւն. և բաղում անգամ յանցաւորութիւն ապականագործ յոյժ։ Անզի յայնժամ իբրև զաչացու ձգեալ զՀետ երթամք մոլեգին թափոյն, և անհանձնաբաար գրգռամք յանիրաւ պահանջս նորա. չար առնեմք անձանց, չար առնեմք այլոց։

Այս արդ ես ազգ կրկին տեսանեմ, տեարք, զբարկութեան. մին է բարկութիւն մոլեգին, միւսն է բարկութիւն բարեպաշտական։

Առաջնոցն յանցանեն նոքա, որ յանխորհուրդս և ստէպ և հեշտեաւ թափ անձնատուր լինին՝ի զայրուց կրիցն այնորիկ։ Երկրորդիւն յանցանեն նոքա որ խընդրեն զթափ բարկութեանն քօղածածուկ առնել բարեպաշտութեամբն։

Առաջինն է ժանտաւոր մարդկութեան. երկրորդն

digitised by A.R.A.R.@

է թոյն կրօնի։ Որ 'ի մոլեգին բարկութենէն տիրացեալ է, ոչ մարդ է այնպիսին և ոչ քաղաքացի։ Որ 'ի բարեպաշտական բարկութենէն տիրացեալ է, չէ այնպիսին քրիստոնեայ բայց անբարիշտ մոլենախանձ։

ՄԱՍՆ Ա.

Ըգիտեմ իսկ բնաւ, սիրելիք, զի՞ր կարծիս ունել պարտ իցէ վասն մարդոյ, որ այնպէս անդուլ և վայրապարանձնագրաւ իցէ յանխորհուրդ թափմոլեգին կրիցս։ Սակայն և անշուշտ գիտեմ, զի և մարդ այնպիսի եթէ վայրիկ մի զլոյս բանին 'ի գործ վարեալ դարձցի հայել յանձն իւր 'ի ժամու անդ մոլեգնութեանն, քաջ իսկ և ինքն լի արհաւրօք քսմնեալ կայցէ ընդ տեսիլ դիմացն։ Ո՛յն ինչ նորա աչք հրալիցք բոցավառք և խեղաթիւր և այսահարեալ. է զի և գոյն դալկան, է զի և բոցատիպ վառումն դարձադարձ շողայցեն յերեսս նորա. ձայն հնչմանն որոտընդոստ, խափարաձայն. յիշոցք և նզովք բերանոյն՝ դժոխալուրք, կարկտից նմանեալք զարկուածոց և շանթից հրացանից, դողդոջել դեղեւել բոլոր անդամոյն. բազում անգամ և ընդդէմ անձին վայրենանալ գազանութեամբ, և տեսողացն ամենեցուն մերթ արհաւիրս զարթուցանել, մերթ ախտակցութիւն, մերթ և ծաղր և քրքիջ։

Ոչ արդ յայս ամենայն տեսիլ դժպատեհ մոլեկան կրիցն, աղէ ասացէք ինձ տեարք, ո՞ւր իցէ մարդ, ո՞ւր այն պարզութիւն մեծվայելչութեան դիմացն, ո՞ւր այն պերճութիւնն, որ և անբանից անգամ գիտէ ակնածելի ընծայեցուցանել զմարդ։ Ո՞ւր այն պատկեր և նմանութիւն աստուծոյ, որով ինքն պատուեցաւ և յայլոց որոշեցաւ։

Ընդսոին մեք 'ի ծնէ բանաւորք բնաւորեցաք, և բարկութիւնն յամենայն բանէ միանգամայն կապտէ զմեզ։ Ընդսոին 'ի ծնէ մեք անդորր բնաւորեցաք և համբոյր, և բարկութիւնն վայրագս գործէ զմեզ և անկենցաղս և անագորոյնս։ Ընդսոին 'ի ծնէ մեք արգարասէրք բնաւորեցաք, և բարկութիւնն քարշեալ ձգէ զմեզ ոչ յայլ ինչ, բայց յանիրաւութիւն։

digitised by A.R.A.R.@

Խակ ապա ոչ իցէ միւսն այն ազգ, տկար այն անօթքն և փափուկք, զոր ընկեր և օգնական ետ Աստուած մարդոյ, զի քաղցրացուցցէ զաղէտս պատուհասին նորա 'ի դժուարակիր կենցաղումն, և սատար և առիթ անդորրութեան և համակամութեան լինիցի 'ի տունս և 'ի գերդաստանս։ Խաբէ, զինչ այն պատահումն իցէ դրժպատեհ. զի կէսք 'ի նոցանէն թուին իմն ծնեալք ոչ յայլ ինչ, բայց յաձեցուցանել զաղէտս պատուհասին նորա. և բարկացայտ բարուքն և դեգ և անժոյժ գնացիքն՝ դժտութիւն արկանել և անմիաբանութիւն 'ի ծոց գեղեցիկ ընկերութեանն։

Օ արդք են նոցա և ձիրք և պարտք սեպհականք, հեզութիւն և քաղցրութի և հպատակութիւն։ Ծնեալք են 'ի կենակից ընկերութիւն. պարտք առաջին են նոցա սիրել և հնազանդել և համբերել։ Խակ բարկութիւն և յամառութիւն և դաժանութիւն, օտարախորթք են նոցա. չեն նոցա զէնք՝ զոր առին անդատին 'ի բնութենէն՝ 'ի զայրացուցանել և 'ի յաղթահարել զտկարութիւն մարդոյ։

Հաձոյականս և փարելիս արար զնոսա Աստուած, զի մի այնպէս հապշտապ 'ի բարկութիւն բրդեսցին։ Ցկարս արար զնոսա, զի մի այնպէս ժտեսցին 'ի ձոխանալ։ Զայն ետ նոցա հեշտ և համբոյր, զի մի զլեզի դառնութեան հեղցեն 'ի բերանոյն։ Օ շնորհաշուք զայն վայելչութիւն դիտակին նկարեաց 'ի նոսա, զի մի այնպէս տգեղութեամբ սրտմտութեանն այլանդակեսցեն զերեսս։ Այս ունին նոքա բաղում անգամ և իրաւունս սրտնելոյ և քանքարտալոյ, սակայն 'ի սրտմտել և 'ի վառիլ բարկութեամբ՝ միշտ են պարտաւորք. պէտք են իւրաքանչիւր ազգի՝ սեպհականին իւրում և վայելչականին խնամով պատկառ կալ։

Այլ արդ և զայն տեսցուք վայր մի, որ այն դառնութեան արգասիքն իցեն 'ի կրից ասի. և որ զեան տիրացելոցն երբէք յանբանական սրտմտութենէն։ Հպարտութիւն ամբարտաւանութեան որպէս ասաց ոմն յիմաստնոց սրբոց՝ տայ մեզ անշուշտ կորուսանել զԱստուած. Լախանձուն կիրք տայ մեզ կորուսանել զեղբարս. բարկութիւն սրտմտութեան տայ մեզ կորուսանել զանձինս. Հպարտութիւնն բառնայ, ասէ,

digitised by A.R.A.R.@

յինէն զԼուսուած, նախանձն զընկերն, բարկութիւնն զանձն։։

Ի երկնչիր, ասէր Լուսուած ցՅայէն, մի. ոչ սպանցեն զքեզ, յորմէ զարհուրեալդ ես։ Սակայն և ոչ այնպէս անպատուհաս արձակիցիս յանիրաւութենէդ։ Զարատանչ այսոցն բարկութեան մատնեմ զքեզ, նա եղիցի քեզ որդն՝ որ ուտիցէ զքեզ, ատելի անձին քում և ատելի այլոց և արհամարհ, 'ի սպառ վատթարացուցէ զքեզ։ Լոյս շատ է 'ի վրէժխնդրութիւն արեան եղբօր քո։

Վանիք նմանեալք մոլեգինն Յայենի՝ 'ի կիրս անդ բարկութեան գտանեն զպատիժ պատուհասին։ Յեց և ուտիճ են նոքա սրտից իւրեանց, հարուած կեղեքիչ կենաց իւրեանց, նաև հուր ծախիչ գոյից իւրեանց։ Յայսոց անտի բարկութեան՝ իբրև դիւաբախք զցերեկ անցուցանեն աստանդեալք անզգայութեամբ, և զցայգ լի ամբոխմամբք և անքունք։ Ցաժուարընդեալք այլոց, դժոխրմբերք անձանց. համառօտեն զսահման կենացն, և ձեպեն 'ի մահ 'ի տարաժամ հասակի։ Լտելիք ամենեցուն և տաղտկալի առ հասարակ։

Լուծանան որդիք 'ի հարց, ընտանեակք նզովեն զընտեարս, տունք և գերդաստանք դառնան իբրև 'ի բանակետղ կռուոյ պատերազմի։ Լոյն ինչ լուեալ զաղաղակ զզայրացկոտ կնոջ, և զբարկացայտ սրտմտելոյ առն, այր այր խորհի, կամ անդէն խոյս 'ի տեղւոյն տալ, կամ դարմանել ինչ զչարն։

Լթէ անիրաւութիւնք անհնարինք իցեն, ծնունդք են մոլեգին կրից բարկութեան. աստի կագք և կռիւք և դատք դժպատեհք. աստի թշնամութիւնք անվախ ձանք, կորուստ յարգի, կորուստ գեղեցիկ համբաւոյն, կորուստ գոյից։ Վանդի և յանչափ բարկութենէն խիթալի է ամենայն չար, կամ վաղվաղակի և կամ աստագան։ Իբրև տապ տենդի է մահագոյժ, ծփումն է խելաց, սանձակոտոր թափ սրտի. ոչ կապանք առաւել նուիրականք և ոչ պարտիք առաւել պատկառելիք՝ չեն բաւական սանձ արկանել նմա։ Մոլեալ են միտք, խառնէ շփոթէ զանմեղն ընդ պարտաւորին, զբարեկամն ընդ թշնամւոյն, զայր լաւ ընդ ամբարշտին։

Լի եմք մեք արհաւրօք, և համակ սարսուռք գնան

digitised by A.R.A.R.@

ընդ մարմինս յակն արկեալ միանգամ՝ի մարդ այլակերպեալ՝ի սատիկ կրիցն։ Քանզի է զի հրայրեացս սաղրէ, է զի թոյնս խառնէ, է զի և մահուանս բազմազկիս նիւթէ. և հանդարտէ ոչ՝ բայց՝ի վերս և՝ի հարուածս և յապաժոյժս արեանց։ Այլ. նա և որոց երբեմն առաւել սիրելիք կային նմա և մտերիմք նազելիք. յաւրիւն հարսին, յարիւն ծնողին, յարիւն որդւոց, յարիւն բարեկամաց։ Աւաբէ, որ աղէտք իցեն տեսանել զկիրսն զայն. յորժամ և ըստ չափու աչմանն սպանդիցն՝ զայրացի և ևս մոլեգնութիւնն, մինչև՝ի վերջէ՝ նա և ընդ անձին ոգորեալ, զնոյն սրտմտութիւնն որ ապառում վայրենացաւ առ իւր արեանառուն՝ իրաւապէս յարիւն իւր թափեսցէ։ Այ՞ որ երբէք, որ յայս անչափութիւն անկղիտացաւ, կարծեաց ինչ յառաջագոյն յայն չափ հասանել։ Այ սակայն եհաս. զի ոչ հոգացաւ կանուխ վայրիկ մի ժուժկալել, սանձ՝ի սկզբանն՝ որ հեշտին էր՝ արկանել դժնդակ կրիցն։

Ընդ եթէ՝ի սոսկականս այսչափ, քանիսն կարծեսցես՝ի կրից աստի աղէտս յարս աւագս և՝ի հզօրս, և զիարդ հնար իցէ անձնապուր ճողոպրիլ երբէք՝ի հրոյն նոցա։ Քանզի յորժամ բարկութիւն տիրացեալ իցէ յաւագս, յընչեղս,՝ի փառաւորս աշխարհի, նոքա յայնժամ՝ի նմին իսկ յաւագութեանն իրաւունս համարին գտանել վիսանալոյ, և՝ի դուշնաքեացս անգամ՝ի սրտմտութիւն բարկութեան բրդելոյ։ Երբուայն թէ օրէն իցէ նոցա առաւել անհանձարաբար վայրենանալ. Եր վասն . . . վասն զի են առաւել երջանիկք, և զի նոյն ինքն երջանկութիւնն և բռնութիւնն՝ օրինաղրութիւն իցէ նոցա՝ ըստ ասացելումն՝ կուրել՝ի բարկութեան զանաւադն։

Այ՛վ . . . քանի տարօրինակ իմաստ, մտաց անբմբռնելի, և սակայն արդիւնացեալ են իմաստքն։ Քանզի որ առաւել հեշտակեացք են յաշխարհի, նոքա են բազմամանգամ և առաւել ցասկոտք. և նոյն ինքն հեշտակեաց կեանք առաւել անարիս և առաւել փառասէրս և հպարտս առադրէ զնոսա. և այսպիսեաքն ապա զգածեալ կրիւք՝ նաև՝ի նիւթ չնչին անդէն բորբոքին՝ի հուր բարկութեան, և անհնարին գործեն հրայրեացս, քանզի ձեռնհասք են։ Այլ և են իսկ նոցա բարկու-

digitised by A.R.A.R.@

թիւնքն միշտ'ի չքմեղս հանեալք և արդարացեալք, կէս մի յանձնասիրութենէն որ դաւէ զնոսա, կէս մի 'ի մարդելուզութենէն՝ որ ապականէ զնոսա։ Սակայն և արդիւնքն միշտ են մահահոտք։

Ի սրտմտութիւն բարկութեան բրդի Նոյեմոբոս, զի աշխարհ չառնու յանձն խոնարհել Ճանաչել զնա արքայ տիեզերական. և սրտմտութիւն նորա'ի սուր'ի հուր առ հասարակ դատի զժողովուրդս։ Իսկ անուն կարդայ անիրաւութեան սրտմտութեանն՝ իբրու վրէժխնդրութիւն արդարութեան. "Արդուաւ, ասէ, յիւր թագաւորութիւնն և յաթոռն խնդրել զվրէժ"։

Ի բարկութիւն բրդի Յեղաբէլ. քանզի չառնու յանձն՝ Աբովթ տալ զայգին իւր. և հետամուտ մեքենայէ զմահն՝ Աբովթայ՝ արժանահաս իբրու ապստամբելոյ'ի թագաւորէն։

Ծանրացաւումն է Համանն. քանզի չխոնարհի Մուրթքէ երկիրպագանել նմա. համարի առ ոտն կոխեալ զմեծաշուք հրամանն։ Արշիլանի ոչ բարկութիւն նորա, բայց յապաժուժից արեան ողջոյն ազգի։

Անիծն է սրտմտութիւն հղօրացն։ Օ՜ի եթէ և միշտ հրեշտակ մահու ոչ իցէ ըստ ասացելումն, սակայն և միշտ աղէտից գուժկան է, աղքատութեան, և քանդելոյ և 'ի սուգ համակելոյ ողջ գերդաստանաց։ Անզի և որ անիրաւագոյն և վնչոք և հրամանք են եղեալք երբէք 'ի բերանոյ աւագաց, տեսցես դու զայնոսիկ որոտացեալ'ի թափս անդ կրից բարկութեան նոցա։

Օ՜ինչ օգուտ իցէ եթէ 'ի չիջանել հրոյն ծանիցեն յայնժամ զբռնաւորութիւն կրիցն։ Օ՜ինչ օգուտ ասելն և մխիթարելն, եթէ վաղանցուկ է բարկութիւն հղօրացն։ Այո, վաղանցուկ է, տակայն որ միանգամ կորեաւն, յաւիտեան կորեաւ։

Իսկ զինչ պարտ իցէ ասել և յաղագս տարաղէպ զբուցացն, զոր լսեմք զօր ամենայն'ի ցասկոտացն. չքմեղութիւնս իմն'ի թափ մղեգին բարկութեան, որչափ և վայրապարս, այնչափ և պարտաւորիչս։ Մերն բարկութիւն, ասեն, ոչ այլ ինչ է, բայց աշխոյժք լոկ. բընաւորական եռանդն, խառնուած իմն մաղձային։ Այս հուր իմն է յարդի, որչափ դիւրաբորբոք, այնչափ և

digitised by A.R.A.R.@

չինչանելի. չար ումեք չգործէ, նա զի որ առաւել ցաս-
կոտքն են՝ նոքա բազում անգամ բարեսիրտք են։ Ո՞ինչ
աշխոյժքն իցեն, ասել ասա. զինչ բնաւորականն, որ
խառնուածն մնձային։ Եթէ բնաւորականն, եթէ
խառնուածն չքմեղութիւն իցէ և ջատագովութիւն,
չիք այնուհետև յանցաւորութիւն և ոչ մի, որ ոչն մար-
թասցի արդարանալ, բնաւորական ասելով զասականու-
թիւնն։

Բայց իսկ, եթէ 'ի քեզ բնաւորական է, այր դու,
բարկութիւն քո, ապա և յամենայն մարդ. և եթէ
ամենայն մարդ խնդրեսցէ զհետ երթալ բնաւորական
թափոյն, զինչ ասես, ոչ 'ի վերն նախաստեղծ յան-
երևոյթ և յանպատրաստ գլորեալ անկցի յայնժամ աշ-
խարհ, որ խաւար անդունդք ոչ իցեն 'ի նմա, զօրհնա-
պաղ զրկանաց, հարստահարութեանց, վրէժխնդրու-
թեանց, արեանց ապաժուժից։

Եթէ բնաւորականն ասել չքմեղութիւն իցէ, և ըն-
դէր ասա հրամայել մեզ Աստուծոյ, եթէ «Ի՞ մի տայք
տեղի բարկութեան. սանձեցէք կոծեցէք ամենայն զօ-
րութեամբ զթափն». և զի «Բարկութիւն մարդոյ,
զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ»։

Ասես, եթէ քո բարկութիւն հուր է յարդակէզ։ —
Ո՞ինչ կամիցիս ասել մեզ, բայց զայն եթէ ընդունակ
է ուրեմն քո բարկութիւնդ արագ արագ 'ի սուղ ժա-
մանակի գործել զամենայն հնարաւորսն 'ի չարեաց. 'ի
թափ անդր բարկութեանդ՝ ոչ Աստուծոյ ակն ածեալ,
ոչ մարդկան, ոչ անձինդ վայելչութեան։ Այլ ասես,
եթէ քո բարկութինդ չար ումեք չառնէ։ — Այդ ինչի
երբէք այնպէս. այլ արդեօք և միշտ։ Բանզի եթէ 'ի
նոյն կիրս անդուլութեամբ միտեալ է քո, ունակու-
թիւն ուրեմն չար բնաւորեալ է 'ի քեզ։ Աչեսցեն,
զիտեա քաջ, աչեսցեն տակաւ զօրութիւնք նորա. և ո՞
զքեզ յապահովեսցէ այնուհետև, եթէ ոչ յաւուր
միումթափ կրիցն առեալ ձգեսցէ զքեզ յանհնարինսն
զոր ոչ կարծիցես։

Այ եթէ և այս դէպք ոչ տացեն, ո՞չ մեծապէս է
չարն. զի ոչ ընդ երկար ինչ մարթիցիս դու քաղաքա-
վարել ընդ անձին քում խաղաղութեամբ և աներկեան
վստահութեամբ, իբրու յամենայն ժամ խիթալով

digitised by A.R.A.R.@

գուցէ երբէք չհանդուրժեալ քո և զհուր բարկութեանդ հատեալ, բորբոքեսցես զբոցն և շաչիւն արձակեալ առ հասարակ ընդ տունն, վերՙի վայր ամբոխեսցես զգերդաստանն. և՚ի մէջ խաղաղութեան արկցես խռովութիւն, և՚ի մէջ սիրելեաց հեռ, և՚ի մէջ մտերմաց սուգ, ողբ և աղաղակ, թերևս և արիւն։

Այաւ ո՞չ մեծապէս իցէ չարն, զի այնպէս ապաժոյժ և դժուարընդել և ծիծաղելի տեսանիցէ զքեզ աշխարհ. զի և՚ի դուշնաքեայս ոչ երկայնամտեալ քո՝ ընդհարցիս ցասմամբ ընդ ընտանիսդ, ընդ բարեկամդ նաև ընդ կարևոր սիրելիսդ։ Այսես, եթէ որչափ դիւրավառ ես՚ի բարկութիւն, այնչափ և առաւել սիրտ բարի իցէ քո։ — Այլցես դու զայդ, որպէս ախորժես։ Այլ էջ քեզ այդ գովութիւն մեծ։ Այանզի և ազգք գամիռանց առաւել վայրագք և կատաղիք՝ յանդորրու կեան և հեշտք են և համբոյր յորժամ ոչ գրգռին։

Այայց արդեօք շատ թուեսցին ցայսվայր ասացեալքն՚ի նկարագիր վասն մոլեգին բարկութեանն. անցցուք երկրորդ անգամ՝ տեսանել վայր մի, որ այն իցէ զոր կոչեցաք բարկութիւն բարեպաշտական։

ՄԱՍՆ Բ.

Զիք մարդոյ խնդութիւն առաւել, քան յորժամ յաջողեսցի նմա զիւր զգժպատեհ կիրսն՝ յորոց տիրացեալ իցէ՝ ընդ գեղեցիկ քօղով առաքինութեանն ծածկել։

Այր ադահ արծաթասէր, որ՚ի կծծութեան իւրում և յընչաքաղցութեանն համարի յանձին եթէ զոգի տնտեսական վայելչապէս ինքն զգեցեալ ունիցի. և ընդ հակառակն՝ այր շռայլ որ՚ի վատնել իւրում զինչս հաստատեալ է՚ի միտս՝ եթէ յառատաձեռնիցէ ոք իցէ ինքն և յաղատ որերոյն. են սոքա անդորրամիտք առաւել քան զամենայն մարդ որ յաշխարհի. ուստի և առաւել քան զամենայն մարդ անուղղայք՚ի մոլութիւնս իւրեանց։

digitised by A.R.A.R.@

Զդ զնոյն օրինակ տեսցես դու ինձ և յայր ոք, որ դեզ բնութեամբ իցէ և անընտել և ցասկոտ, եթէ երբեք յաջողեսցի նմա 'ի ջրմեղս հանել զկիրս դժպատհս զբարկութեանն, հաստատուն կարծեօք վրէժխնդրութեան 'ի սէրն Աստուծոյ, և խնդրել ոչ այլ ինչ 'ի նմա՝ բայց զփառս Աստուծոյ։

Այլ ինչ պատճառաց արդեօք դէպքդ այդ, զի աղբ բարեպաշտք սուտք և մնախաբք՝ բաղմագոյնք թուով 'ի կրից բարկութեան գրաւեալք են։ Արձեալ և 'ի նոյն կիրս առաւել իմն վարակեալ են հոգիք տկարամիտք, յորս ընդ մի գրեսցես դու զնոցա և զբարեպաշտելն և զանչափ ցասնուլն։ Ա՛ւ գտցես դու զնոսա այնպէս առաւել բարկասիրտս, որպէս յաւուրս սուրբս մեծաց տօնախմբութեանց եկեղեցւոյ։

Ընդուցանեն նոքա ողջոյն զառաւօտն յեկեղեցին առ պատուանդանի խորանացն, կան մաղթեն յաձախ, աղօթեն յերկար. երկիր պագանեն Աստուծոյ, որ աստուած է հեզութեան և աստուած խաղաղութեան։ Այ՛ ասա այն ինչ մեկնեալք յաղօթարանէն, մնանեն ընդ յարկաւ տանց իւրեանց, անդէն աղաղակաւ ընուն զտուն. և 'ի դուրս զմաղձ սրբութեանն իւրեանց թափեն դառնապէս 'ի վերայ ընտանեաց իւրեանց, 'ի վերայ անմեղ զաւակաց իւրեանց։

Ո՞ր պատճառքն իցեն անպատկան կրիցն։ . . .

'Այրօրինակ սուրբքդ այդոքիկ՝ պատճառս զայս սովորեցան տալ բարկութեան իւրեանց. " Զդ ամենայն, ասեն, է գործ չարարուեստ սատանայի, որ զարս բարիս առաւել բնաւորեցաւ 'ի փորձութիւն արկանել, մանաւանդ յաւուրս սրբութեան տօնից, յորս մանաւանդ առաքինանան նոքա։

Օ՜ այս ասեն . . . ։ Զայդ բարբառ ծնունդ է յետսամիտ խորհրդոց նոցա, որով կարծեն յանձինս այնչափ իմն առաքինութեամբ բարեպաշտել, մինչև 'ի նախանձաւոր կիրս զարթուցանել ընդդէմ անձանց զսատանայ։

Զայ՛ ես հաստատեալ եմ, եթէ սատանայ այլ չիք նոցա՝ որ տանջիցէ զնոսա, բայց նոցայն պատիրն այն և մնախաբ բարեպաշտութիւն։ Այ՛ եթէ ինձ ներիցէք, տեարք, ասել ձեզ որ ինչ 'ի միտս եկեալ է, զի թէ և ամենևին անդերկուանալի ոչ գտանիցէք զնմ՝ խորհուրդ,

digitised by A.R.A.R.@

սակայն և տիպ մի գոնեա զՀշմարտութեան տեսանիցէք 'ի նմա։

Զ. Հասարակ բարեպաշտդ այդոքիկ սուտք և պատիրք, թէպէտ և մեռելութիւնս ևս խաչակրօնս է զի յանձինս բարձեալ բերիցեն և Հգնութիւնս, բայց քանզի այնպոռնակ բարեկրօնութեանց նոցա՝ հոգի չիք այլ, բայց կամ երկիւղ անարգ, կամ ակնածութիւն մարդկային, վասն այնորիկ և անբաժ են նոքա 'ի խաղաղութենէ անտի և 'ի խնդութենէ հոգւոյն, որ պտուղք են անկեղծ բարեպաշտութեան և Հշմարիտ աստուածպաշտութեան։

Յանձն առնուն մեռելութիւնս, կրեն Հգնութիւնս, այլ միշտ դժկամակ սրտիւ։ Ամենեալք են օրինակի որդեկորոյս մարցն Հեթանոսաց, որք զծնունդս որովայնի 'ի նուէր զոհի բռնադատէին հանել բագնացն սատանայի։ Զևանային իբրև ապուշք անզգայք՝ երևեցուցանել առ արտաքս զանձինս իբրու խաղաղս և անդորրամիտս 'ի սոսկալի անդ պահու արիւնոտ պատարագի զաւակայն. այլ 'ի նեղբոյ կատաղութիւն մղեալ և հեղձամղձուկ բարկութիւն և տագնապ սրտառուչ գրաւեալ գօշէր զսիրտս նոցա։ Զ. յսպիսի ինչ են և պատիր այդ բարեպաշտդ։

Իբրու առաքինանան նոքա և հրաժեշտ տան 'ի հեշտալեաց, զրկեն զանձինս յաղատութենէ, չլինին քինախնդիրք։ Զ. յլ քանզի չՀանապէն նոքա զՀշմարիտն բարեպաշտութիւն սրտի, ամենայն նուէրք և մեռելութիւնք նոցա բռնադատութիւնք են. չիք հոգի անձնանուէր. ձգեալ բերին իբրու 'ի հարկէ իմեռնէ, որ լոկ մարդկային է և ծառայական։

Նոքա 'ի նեղբս 'ի սրտի չեն և ինքեանք 'ի կարծիս բարութեան վասն անձանց, սակայն և իղձ անդուլ բարութեան առ ոչս մարդկան՝ միշտ գրաւեալ ունի զնոսա։ Զ. ստի է նոցայն հանապազօրեայ մարտ պատերազմի, յորում մասն մի և բաժին չունին ընդդէն Քրիստոսի։ Զ. յն մարտ պատերազմի է որ միշտ անհամբոյրս և դաժանս ունի պահէ զնոսա. ուստի հեռ և զրդռութիւն և բարկութիւն է 'ի նոսա նեղբոյ և արտաքոյ. չկամին անձնանախատ լինել՝ 'ի վերայ անձանց զՀուրն իւրեանց Թափելով. դիւր առնեն ոգւոյն և Թափեն 'ի վերայ այ-

digitised by A.R.A.R.@

լոց։ Եւ հետեւաւ այնուհետեւ զայրացկոտք առ ամենայն, առնուն զՀուրն և արկանեն 'ի ծոց ընտանեաց և 'ի մէջ կենակից ակմբից։

Զանի՛ զգուշութեան պէտք իցեն 'ի կրից աստի, քանզի և պտուղք դառինք բազումք են 'ի բարեպաշտիցդ այդոցիկ ստոց՝ 'ի բարեպաշտականն կարծեցեալ նախանձաւորութենէ։

Եւ քանզի գիտեն իսկ և նոքա զկեղծաւորեալն իւրեանց բարեպաշտութիւն 'ի բարկութեան իւրեանց, ուստի և հնարին օրինակաւ սրբոցն սրբել զանձինս և անբասիր առնել 'ի կրից անտի. ընդ քօղով քանզարդ իմն Թարգմանութեան կրից սրբոց պատանցն՝ զիւրեանցն ծածկելով զպատիր նախանձաւորութիւն։

Զհաւասիկ, ասեն, քաջ՝ մարգարէ մեծ Յստուծոյ էր Յովհան. և սակայն այնպիսի սուրբն 'ի դէպսն յայն Հնուէացւոց անկանի և տխրի. նաև խռովի և զայրանայ. և այնչափ իմն այլ յայլմէ լինի մարգարէն սուրբ, մինչև բողոք առ Յստուած կարգալ. եթէ յոյժ տրտմեալ եմ մինչև 'ի մահ. մինչև սրտառուչ մաղթել, եթէ "Յս զոգի իմ յինէն, զի լաւ է ինձ մեռանել քան թէ իցեմ կենդանի,,։ Զհա ամբոխումն մեծ առն սրբոյ, ահա զայրուց սրտի, և որ զինչ և այլ առիցէ ոք։

Զյսպիսի ինչ են, ասեն բարեպաշտքդ այդոքիկ, և մերս կիրք զայրացեալք՝ հանգուցատիպք սրբոցն։ Զայլ սակայն յոյժ խարդախեն նոքա և 'ի բանսն և յօրինակսն։ Զանզի կիրք յովհանեան միայն 'ի նախանձուէ փառացն Յստուծոյ շարժեցան յայնժամ. քանզի գնացեալ ապաշխարութիւն քարոզէր՝ Հնուէացւոցն, և մինչև ցաւուրս երիս կործանումն գուժեաց քաղաքին։ Լուան՝ Հնուէացիք և դարձան յապաշխարութիւն. զղջաւնայ Յստուած ընդ սպառնալիսն և զանց առնէ։ Տեսանէ Յովհան, զի անցին ժամանակակէտք և դեռ յոտին կան՝ Հնուէացիք, ոչ տրտմութիւն միայն մեծ տրտմի, այլ և անհնարին խռովի։ Ո՞ւր ապա, ասէ, այսուհետեւ իցեն փառքն Յստուծոյ. ահա երեք աւուրք, որպէս ասաց Յստուած, և Հնուէ ոչ կործանեցաւ։ Յասացեն ուրեմն մարդիկն, կամ ասէ Յստուած, կամ թէ այնչափ ապիկար է Յստուած՝ զի և զսպառնալիս իւր չմարթի 'ի կատարումն ածել։ Զանզի և անար-

digitised by A.R.A.R.@

գութիւն անձինս իբրև մարգարէի Աստուծոյ՝ յորոյ դիմացն պատգամ կարդացի, յԱստուած ինքնին 'ի վեր եղանէ։ Այլ արդ ուր մնացին փառքն Աստուծոյ։

Այս Աշխարհս պատճառք խառնութեանն Յովհաննու։ Օ այն խորհէր մարգարէն և խոռվէր. և Յանհնարին ամբոխմանէն մահ անձին կարդայր. խնդրէր մեռանել 'ի սէր փառացն Աստուծոյ։ Արդեօք ոչ կամէր արդարն զարիւն տեսանել զբիւրուց բիւրաւորաց մարդկան, սակայն և միշտ կամէր տեսանել զփառսն Աստուծոյ։

Իսկ պատիր բարեպաշտիդ այդոքիկ զՀուր ցասման զայրացելոյ սրտին իւրեանց՝ միշտ բնաւորեցան նախանձաւորութիւն կոչել վառեալ փառացն Աստուծոյ. և ընդ քօղովդ ընդ այդուիկ զմաղձ դառնութեանն միայն իրն դրեն թաքել, և միայն անձանց իւրեանց են նոքա նախանձաւորք Աշխարհիս։

Ի՞նչ 'ի խաղաղութեան կեան ընդ մեղս, և միշտ թշնամիք բարկացայոյք ընդ մեղաւորս։ Զգիտեն իսկ բնաւ եթէ նախանձաւորութիւն հոգևոր, նախանձաւորութիւն Աշխարհիս, որչափ ատեայ զմեղս, այնչափ սիրէ զմեղաւորս։

Կամէին արդեօք այդ սուտ նախանձաւորքդ, բնաջինջ լինել յաշխարհէ ամենայն մեղաւորաց և անիրաւաց..։ Այլ արդեօք յինչ պատճառս։ Կամ՞'ի վրէժխնդրութիւն քահանայն և ծաղու, զոր 'ի նոցանէն կրեն. կամ զի ինքեանք միայն երևեսցին և համարեսցին բարիք։

Զոր այսոքիւք, նաև դուշնաքեայ թերութիւնք 'ի մարդիկ, 'ի կարծիս նոցա գայթակղութիւնք են անհնարինք. որոց քաւութիւն չիք՝ բայց սրով և հրով։ Ի՞արտ եղեալ կուրին ընդ արս առաքինիս, ընդ արս ցածունս, ընդ պատրուակաւ կրօնի. և չհանդարտեն՝ մինչև վանեսցեն զնոսա։ Ա՞յ է, որոց միանգամ ընդդէմ դարձցին կարծեաց նոցա, կամ յաղթահարեալ առակեսցեն զպատիր բարեպաշտութիւն նոցա, կամ ակներև խրատեսցեն դառնալ 'ի մոլորութենէն։

Ա՞յ է, ասեմ. քանզի անդէն սրեն չարաչար զլեղուս իբրև՝ զօձի 'ի զէն մաղձի դառնութեան իւրեանց. և հնարին բիծս կարկատել նոցա անհնարին՝ կամ զանհաւատութեան, կամ՝ բնաւ իսկ զանաստուածութեան, զի մարթասցին կործանել զնոսա։

digitised by A.R.A.R.@

Դասակնիք առաւել խիստք և առաւել դառնիք, այն են նոցա դատակնիք սիրելիք։ Ազգիտեն խորհել կամ խօսել, գոգցես առանց հեղոյ զարիւն։ Այլ եթէ նոցա բարեպաշտիկ սրտմտութեանդ այդմիկ ունկնդիր լեալ էր Աստուած, քաջ իսկ արդէն յանապատ ամայի դարձեալ էր աշխարհ։

Այլ զինչ կարծեսցեն դոքա։ Համարեսցին թերևս 'ի դառնութեան մաղձի բարեպաշտութեան իւրեանց շուք ինչ դնել կրօնիցն սրբութեան՝ զոր դաւանին։

Այլ չիք ինչ, որ այնչափ անկած և այնչափ շինչեալ փառ գձձեսցէ զվսեմութիւն քրիստոնէական կրօնիցս, որպէս հեռ և խէթ և բարկութիւն 'ի խնդրել անդ պաշտպան կալնամ և բարգաւաճել։

Խաղք համբոյր և քաղցրութիւն բանի և հեզութիւն սրտի՝ են ճշգրիտ կնիք ոգւոյ աւետարանին։ Ի բարկութիւն բրդին Օ՝ երեղեանք ընդ արհամարհութիւն պատուոյ տեառն իւրեանց, և հուր յերկնից սպառնան արհամարհողացն։ Զինչ լսեն 'ի տեառնէն. ոչ ինչ այլ, բայց սաստ. "Ո՞ գիտէք, որոյ հոգւոյ էք դուք"։ Աստուած Յիսուս 'ի վերայ ուխտադրուժն Երուսաղէմի. և 'ի վերայ մեղայ ժողովրդեանն, քան անէծս կուտել, առաւել աղօթս յաճախէ։

Կարծիցեն թերևս առաքինիքդ այդոքիկ փարիսայեալք՝ հեշտագոյնս այդուիկ յանկուցանել զարձակերաստանն 'ի քրիստոնէից և զթուլահաւատսն։ Ա՛յ. գլխովին ներհակաբար են իրքդ, սիրելիք։ Յոր վայր զհրայրեաց զսպառնալիս բարկութեանն լսէին սամարացիք, ոչ ինչ ամաքէին առնուլ զՔրիստոս ընդ դրունս քաղաքին իւրեանց. իսկ յորժամ զհեզահամբոյր գնացս զնորա լուան 'ի քաղաքակից իւրեանց կնոջէն, առեալ ժողովէին և աղաչէին նա լինել առ նոսա։

Որչափ ինչ հեզութեամբն՝ յաջողեսցի մարդ 'ի գործս իւր, այնչափ և հակառակաւն տուժեսցէ միշտ։ Ուստի և որոց բուռն է բնութիւն և ցասկոտ, զնոսա միշտ հեռագոյնս պարտ է ունել 'ի հոգաբարձութեանց հասարակաց և 'ի բարձից պաշտամանց, որ յեկեղեցականս և որ 'ի քաղաքականս։ Զանգի 'ի պատրուակ առնուն նոքա զաւագութիւն պաշտամանն՝ անպատուհաս թափել զմաղձ դառնութեան իւրեանց ընդ հովանեաւ նա-

digitised by A.R.A.R.@

խանձաւորութեան։ Միշտ քան բարի, առաւել գործեն նոքա չար։ Թէպէտ և այր Աստուծոյ՝ Հեղիաս, այլ քանզի ողջոյն հրավառեալ էր, միշտ բացագոյնս 'ի քաղաքէ ունէր զնա Աստուած։

Յորժամ ուղղութեան պէտք են մեզ առաւորաց և կրշտամբանաց և պատուհասի, մի երբէք յուղղութեանն խառնեսցես դու բարկութիւն, և մի 'ի յանդիմանութեանն՝ դառնութիւն։ Այսպէս թէ ոչ տուժեսցին փոխանակ շահուն, և կորիցեն փոխանակ փրկութեան։

Պատուհաս կապեսցես 'ի վերայ նոցա՝ որ իշխանդ ես՝ հոգւով օրինաց. օրէնք՝ երբէք սրտմտութեամբ բարկութեամբ չվարին ընդ յանցաւորս։ Այրբէք 'ի բարկութիւն չբրդի բժիշկ ընդդէմ հիւանդին, զի հիւանդացաւ. Ճշնի միայն 'ի բուժել զնա։

Այթէ Ճշմարիտ քեզ կամք իցեն ապրեցուցանել զմոլորեալսն, զի է քեզ սրտմտել՝ յորժամ քո սրտմտելդ առաւել ևս գրգռեսցէ զնդել նոցա 'ի մոլորութեանն։ Աւյլ այս Ճշմարտութիւն մեծ է, զոր չիմացան երբէք սուտանուն բարեպաշտքդ։

Օ Ինչ ևս յաւելու ազդել ձեզ, սիրելիք, յաղագս կրկնադիմի բարկութեանն, որ մոլեգին և որ բարեպաշտական։ Աչաջինն՝ իբրև ուխ զայրացեալ առեալ տանի զմեզ 'ի ծայրայեղ խոտորմունս ահագինս. երկրորդն՝ քօղածածուկ 'ի մոլորութիւնս մահացանս։ Այանձակոծեսցուք զմոլեգինն, որ բազում անգամ մեծեղեռն յանցաւորս առաղրէ զմեզ։ Այրկիցուք 'ի բարեպաշտականէն, որ 'ի մոլորութենէ 'ի մոլորութիւն գահավիժէ զմեզ։

Խարկասցուք եղբօրն այնպէս, որպիսի կամիմք եթէ բարկասցի ընդ մեզ Աստուած։ Խաբէ, քանի դժպհի կիրք իցեն. մեք զոր ամենայն աղօթեմք աղաչեմք զԱստուած, զի ողորմած լինիցի և համբոյր և գթած և երկայնամիտ. և գիտելով չափ 'ի նորուն իսկ յաստուածային բերանոյն, զի որով չափով չափիցեմք զեղբարս, նովին չափեսցուք յԱստուծոյ. և ապա մեք զոր ամենայն զհուր բարկութեանն կուտեմք 'ի գլուխ եղբօրն. քանիսն իցէ յետասամութիւնն որ ընդ անձին ոգորիցի։ Խանզի "Մարդ ընդ մարդոյ պահէ, ասէ առաջն, բարկութիւն և ոխութիւն, և 'ի նոյն խնդրէ յԱստուծոյ զգթութիւն "։

digitised by A.R.A.R.@

Ա.ՍԼՔԼ, տէր, քև միայն մարթասցուք մեք ապրել 'ի գազանէ բարկութեան։ Օ օրութիւն 'ի քէն է միայն, մարտ դնել կռուել ընդ բռնութեանն, և ընդոստնել զմոլութիւնն։ Այսպա թէ ոչ, մեք մեզէն յոյժ հիբացեալ եմք սիրելիք, եթէ երբէք տիրասցի մեզ ոնկակից այս գազան։ Հանդի և չիք այլ 'ի կրից, չիք իբրև զբարկութիւնն որչափ բուռն, այնչափ և զաչացու, որ զհետ իւր քարշեալ ձգեսցէ զմարդ 'ի կործանումն՝ որ յաստիս և որ 'ի հանդերձեալն։

digitised by A.R.A.R.@

ԳԼԽԱՎՈՐ ԻԴ.

ՀԵՂՈՒԹԻՒՆ

“ Ողորմութ յիսուսէ, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ ,, :
“ Երանի՛ հեզոց , զի նոքա ժառանգեսցեն զերկիր ,, :

Մարդեղեան առաքինութիւնք արդոյք են և պատուական և ընդունելիք Աստուծոյ . սակայն և էն 'ի նոսա մի քան զմի առաւել սիրելիք և փարելիք : Մեծն այն Հեղինաս , քան մարմնեղէն մարդ՝ առաւել բոցեղէն , յորժամ՝ վրէժինդրութիւն կայր 'ի միջի փառացն Աստուծոյ . և բնաւ իսկ ամենևին չկամէր ինչ մի լսել ոչ զՀեզութեան , ոչ զքաղցրութեան , ոչ զնեղողութեան : Այն ինչ կազմեցաւ հանդերձեցաւ , և կոտորեաց նաև զԹարիւր յիսուն այր 'ի քլմանցն Բահաղու , անդէն հետամուտ խնդրէր լուանալ զձեռս նաև յապաժոյժ արեան արքունեացն և ժողովրդեան , որչափ ինչ երկրպագուք կային ստութեան 'ի Սամարիա :

Թուի թէ պարտ և կարևոր էր վայր մի հրահանգել զմարգարէն , և փոքու իմն քաղցրացուցանել զդառնութիւն նախանձաւորութեանն :

Յարեաւ Յեղաբէլ հալածել զԷղիա , և խնդրէր զգլուխ մարգարէին : Նա ապաստան զանապատն կալեալ , այր մի եդիտ և անդէն զօղեցաւ : Նա ահա ձայն երկնաւոր առ նա . “ Ելի՛ ես դու առ Էղիա ,, , եկ յայրեդ , և կացցես առաջի տեառն , և ահա տէր անցցէ : Այն ինչ եկեալ , և ահա հողմ մեծ ուժգին , որ զլեռ-

digitised by A.R.A.R.@

ընս քակիցէ և զվէմն խորտակեսցէ։ Այս և շարժումն մեծ ահագին. սասանի երկիր և առ հասարակ ժայռք զդողանի հարեալ տատանին իբրև զտերև։ Այս և բոց մեծ և հուր բորբոքեալ, որ 'ի շաւիղն ահաւոր առ հասարակ լափեսցէ զդաշտս, զանապատն և զանտառս։

Հաւասիկ տէր, թերևս ասէր ընդ միտս իւր մարգարէն, աւասիկ տէր անցանէ։ "Ոչ այլ ոչ 'ի հողմն տէր, ոչ 'ի շարժմանն տէր, և ոչ 'ի հուրն տէր"։ Տէր ոչ անցանէ մինչ չէ սիւգ քաղցրութեան հեշտ և բաղձալի ընչեալ զծայրս փափուկս հեզաբար զրգեսցէ ըզբուսոցն և զծաղկանց։ Արի ո՛վ մարգարէ, ահաւասիկ տէր գայ հեզաբար անցանէ 'ի ձայն մեղմոյ օդոյ. քանզի 'ի նմա կայ, զնա սիրէ, զնովաւ փարի։ Ասացիս և դու ո՛վ մարգարէ վայր մի մեղմանալ 'ի խստութենէդ և լինիցիս հեզ։

Զայս պատկեր ճշգրիտ հրահանգաց հեզութեան ուսցուք և մեք սիրելիք, և խելամուտ լիցուք՝ քանի՛ սիրելի և փարելի իցէ Աստուծոյ հեզութիւնն և քաղցրութիւնն։ Զանգի և չմարթիցիմք երբէք քրիստոնեայքս հաճոյ լինել Աստուծոյ անբաժ 'ի հոգւոյ հեզութեանն Քրիստոսի. զոր ինքնին մեզ դաս ասաց. "Ասարուք յինէն, զի հեզ եմ"։

Այլ զինչ ուսանելոյ մեզ պէտք իցէն, ասէն, այսօր 'ի լուսաւորեալ դարուս, զոր դար մարդասիրութեան մերս կոչէն իմաստասէրք, դար քաղցրութեան, հեզութեան, դար գթութեան և կարեկցութեան։ Ո՞է այժմ որոյ սկիզբն և հրահանգ չիցէ 'ի սրտի քաղաքավարութեան կենաց, եթէ մարդասէր պարտ է լինել և հեզ, և համբուրիւ վարել ընդ կենակից որերոյն։ Թող եղիցի այնպէս . . . Այլ սակայն հեզութիւնն և քաղցրութիւն՝ որ յընդհանուրս այժմ զհամբաւի հարեալ է՝ իբրու արդիւնացեալ 'ի մերում դարու, իցէ՞ արդեօք ինքն ճշմարիտ հեզութիւնն քրիստոսեան՝ զոր հրամայիք։

Զկարևոր զայս առաջարկութիւն հանդիսասցուք այսօր վայր մի 'ի քնին առնուլ։ Զգ երրակի զհեզութեանն գտանեմ ես աւադիկ։ Առաջին՝ հեզութիւն անցաւութեան կամ անզգայութեան։ Երկրորդ՝ հեզութի աշխարհային և ընչաւոր։ Երրորդ՝ հեզութիւն սիրոյ։

digitised by A.R.A.R.@

Հեզութիւն՝ որ յանցաւութենէն, է սա մեծապէս մոլութիւն 'ի վերակացուս, 'ի դատարակս և 'ի ծնողս։ Հեզութիւն աշխարհային՝ է մատնութիւն մեծ։ Իսկ ապա հեզութիւն որ 'ի սիրոյ, և է սա ցանկալին այն առաքինութիւն մեծ, որ կենաց է աւետարանին և քրիստոսական կրօնիցն։

ՄԱՍՆ Ա.

Պիտեմք առհասարակ եթէ զոյ բարկութիւն բարի, բարկութիւն բանաւոր և արդար. մարթի ուրեմն լինել և հեզութիւն անբարի, անբանաւոր և անիրաւ։ Պոյ բարկութիւն, որ է առաքինութիւն. իցէ ուրեմն և հեզութիւն, որ է մոլութիւն։

Այն է բարկութիւն սուրբ և արդար, որ սրտմտի ընդդէմ յանցանացն, բայց և 'ի նոյն կարեկից է յանցաւորացն. սա հալածէ զմեղս յանձին իւրում և յայլս. սակայն յանդգնոր զմեղաւորն հանէ. զայրանայ 'ի տեսանել զանիրաւութիւն. այլ ոչ գիտէ ատել զանիրաւն. և թէ երբէք պարտ իցէ ընդ կառափն հանել ումեք, գործէ միայն 'ի փրկութիւն այլոցն ամենեցուն։

Այս բարկութիւն առաջնորդեալ 'ի բանէն, լի է ամենայն կարգաւ, լի անդորրութեամբ և մարդասիրութեամբ։ Այս օրինակ և ինքնին Աստուած բրդի 'ի բարկութիւն՝ և բարկութիւն նորա չէ այլ ինչ, բայց արդարութիւն նորա։

Այս օրինակ սրտմտէր և ինքնին Քրիստոս, մինչև խեթիւ հայել զայրագին 'ի Փարիսեցին. "Լու հայեցաւ, ասէ, զնոքաւք լի ցասմամբ"։ Լու սրտմտէր այնչափ, զի և 'ի հարուած խարազանին տագնապաւ վարել զպղծողն տաճարին։ Լու չեկայ ոք առաւել հեղ քան զՅիսուս. այլ չեկայ և ոչ ոք նուազ անցաւ քան զնա, յորժամ պէտք էին զպարտս ընուլ զերկնաւոր առաքելութեան իւրոյ։

Այս բարկութիւն սուրբ, որպէս գեղեցիկս Ձիգբրտեաց աստուածային Գրիգորիոս, շարժումն է եռանդան հոգւոյն, որ խեղամուտ սրբութեան օրինացն Աս-

digitised by A.R.A.R.@

տուծոյ, և տեսեալ առ ոսն կոխեալ յամբարշտաց, չհանդուրժէ և վառի բորբոքի կամ խսփան արկանել նորոց անիրաւութեանց, կամ վրէժ խնդրել եղելոյն և պատուհաս 'ի վերայ կապել։

Զդ եթէ այս այսպէս, հեզութիւն է ուրեմն ախտաւոր և մոլի, որ պարտապան գոլով վառիլ բարկութեամբ առ 'ի խսփան արկանել կամ թէ վրէժխնդիր լինել յանցաւորութեանց, բնաւ իսկ անզգայացեալ կայ, փոյթ և ոչ մի ինչ ունելով։

Այս է զոր հեզութիւն անցաւութեան ասեմք. որ ընդ մեծապէս բամբասանաք կայ յաստուածային մատեանս. և 'ի յանցաւորութիւն մեծ գրէն զայն մարդոյ, որ 'ի վերակացութիւն հասարակաց վերառեալ իցէ, որ եկեղեցական և որ քաղաքական։

Վասնզի թէպէտ և առն վերակացուի և դաստիարակի և ծնողի, որոց հոգ յանձն եղեալ է հսկողութեամբ 'ի բարեբաւութիւն վարուց հնազանդելոցն, պարտ է լի գթութեամբ լինել և հեզութեամբ առ մեղաւորս, սակայն և յանցաւորութիւն մեծ է նորա՝ եթէ զայրագին չիցէ առ մեղսն։

Տեսանել զանկարգութիւնս, զանիրաւութիւնս, կուսակցութիւնս, ուխտադրժութիւնս. տեսանել զբարեպաշտութիւնն հովացեալ 'ի սիրտս, զբարոյականութիւն աղարտեալ 'ի խառնակեցիցն, և զայլ ևս. տեսանել զայս ամենայն, և պարտապան գոլով զաղգոյ դարմանն 'ի վերայ ածել՝ անփոյթ կալ և անդորը յայնչափ յանցաւորութեանց միջի, և թոյլ այնոցիկ տալ ամենայնի լռութեամբն, մարդ այսպիսի մեծապէս զրժէ վերակացութեանն պարտուց. և 'ի խժդժից մանաւանդ կարգի է և 'ի բռնաւորաց, թող թէ վերակացուաց և հեզոց։ Այս համարեսցի նա արդարև իբրև պատուհաս գերդաստանի ապականագործ, զոր երբէք թոյլ տացէ Աստուած, 'ի սրտմտութեան բարկութեան իւրոյ։

Ոչ հովիւ է այնպիսին, և ոչ ծնող և ոչ տանուտէր. իբրև զկուռս դրօշեալ կանգեալ վայրապար՝ սին և պատիր կերպարանաւն պաշտօն առնու։ Սիրտ ունի և չզգայ, աչս՝ և ոչ տեսանէ, լեզու՝ և ոչ խօսի. ձեռս՝ և ոչ գործէ 'ի պատուհասել զյանցանսն։ Այս է ինքն ողջոյն նպատակ անիծիցն յաչս Աստուծոյ. քանզի լի է և

digitised by A.R.A.R.@

ծանրաբեռնեալ ամենայն անիրաւութեամբք զոր գործեն հնազանդեալքն առ նշաւակ անցաւութեան նորա։

Լ.յլ հեզ է նա, ասեն, և բարի. և այնչափ հեզ՝ զի և երբեք բարկանալ չգիտէ, և չար ումեք չառնէ։ — Լ.յլ՝ որ հեզութիւն, որ բարութիւն իցէ, զոր աղագաւ զոր ամենայն այնչափ զօրասցին անկարգութիւնք 'ի տունս. և ամենայն յանցաւորութիւն անպատուհաս տիրասցի 'ի գերդաստանին։

Բանզի և որպէս ոմանց թուէցաւ ասել, առ ինչ այնչափ ստամբակութիւնք և խեռութիւնք երբայական ժողովրդեանն ընդդէմ Մովսէսի, մերթ աշխարհաւ տրտնջալ, մերթ զառնապէս բամբասել զնա, և այնչափ բուռն յարձակել՝ զի և անձնապուր 'ի խորանն վկայութեան ապաւինել նմա. և այն զի գիտէին քանի սիրելի է նա Աստուծոյ, քանի սքանչելագործ, զի և մէն մի 'ի քայլից ոտից նորա, էր մի մի հանդէս հրաշից նորա։

Օ ինչ ապա էին պատճառքն։ Թէ՞ երևս, ասեն, երբէք երբէք տարապայման եկաց հեզութիւն նորա. զի և հեզ էր Մովսէս յոյժ առաւել քան զամենայն մարդիկ։

Այլ մի քննեսցուք, եթէ ուստի՞ իցէ և այնչափ նշաւակ հեզութիւն անցաւորութեան։ Ի կէս՝ դէպք տան 'ի դանդաղութենէ խմենի խառնուածոյն, և 'ի կէս՝ 'ի դատարկասուն և 'ի պղերգ բնաւորութենէ։ Հրկոքեան միանգամայն չեն ծնեալ վասն հրամայելոյ։ Զար մեծապէս գործեն 'ի հոգաբարձութեան իւրեանց, յորժամ՝ ոչ չար ինչ առնեն և ոչ բարի. այս է՝ առնեն և ոչ ինչ։

Իսկ 'ի կէս՝ դէպք տան յանձնդիւրութենէ. զի թէպէտ և բաւականք են 'ի հրամայել և յառաջնորդել, այլ կեանս ինդրեն վարել անդորրականս և անալեկոծս. և առ ինչ ապա զանձամբ առին զսպասաւորութիւնն՝ որ անմեկին է 'ի հոգոց և 'ի պարտուց։ Որ անդորրութիւն իցէ, յորժամ հիմն հաստատութեան իւրոյ ունիցի զգրժել պարտուցն և զանպատուհաս արձակուրդ գչարեացն և զաղէտս գերդաստանին։

Կարծեսցեն թերևս այնպիսիք անբարի հեզութիւն զովաբանս անձանց ունել և ջատագովս, իբրու որք նեղողամիտք իցեն և համբոյր, որք չտեսանելոյն և չսե-

digitised by A.R.A.R.@

լոյն առնիցեն խոհեմութեամբ, զի մի ինչ դառնացուս-
ցեն զընտանիսն և զհպատակեալսն, և մի ինչ ուծացուս-
ցեն 'ի սիրոյն իւրեանց. նա միշտ սիրելիք և փարելիք
իցեն նոցա։

Վանիծն իցէ անարգութիւնն, և որ այլ նուաստա-
խոհութիւն գձուձ երբէք 'ի կշիռ զայցէ լինդ այնչափ
ախտաւոր և նշաւակ հեգութեան։ Օ ինչ և այլ վատ-
թարագոյն կացցէ քան զինդրեէն սիրելի և գովանի լի-
նել՝ դրժելով պահպանութեան կարևոր պարտուց վի-
ճակի անձինն։

Ինդրեսս դու հաճոյ լինել մարդոյ հեգութեամբ ան-
ցաւութեանն. և չէ ինչ քեզ փոյթ յաչաց ելանել Աս-
տուծոյ, և եթէ Աստուած զքեզ դատապարտ առնէ, ո՞
յանդորը հանիցէ։

Զիք հնար տեսուչ և վերակացու կալ, և հաճոյ լի-
նել ամենեցուն, առանց գերի վարելոյ 'ի կրից նոցա և
առանց անհաճոյ լինելոյ Աստուծոյ։ Ուստի և աստէն
սովորեցաւ Աստուած պատուհասել զհեգութիւն զայդ
անբարի և խոտան, որով խնդրեցեր կամ յանդորրու-
կալ կամ սիրելի և փարելի միշտ մնալ ոչ ինչ սաստելով,
ոչ ինչ պատուհաս արժանահաս 'ի վերայ ածելով, յոր-
ժամ պէտքն պահանջէին։ Խեռասցին այնուհետև այն-
չափ հնազանդեալքդ, զի և 'ի սպառ զանդորրութիւնդ
տացեն քեզ կորուսանել, և յեռնեսցին այնչափ 'ի սի-
րելոյ զքեզ, զի և բաժակս դառնիս տացեն քեզ ըմպել։

Լուիցեն զայս դաստիարակք և վերակացուք, լուիցեն
մանաւանդ ծնողք. և թերևս 'ի փորձոյ իսկ անտի իրացն
ճշմարտութեան բանիցս վկայեսցեն, որք միանգամ
անագան յոյժ և յանօգուտս ապաշաւեն այսօր, զի առ
զաւակս իւրեանց և առ դաստիարակեալսն՝ 'ի դեռա-
հասակ տիսն անցաւութեամբ վարեցան 'ի խակութիւնս
նոցա, և տարապայման ցուցին հեգութիւն 'ի պատուհա-
սին նոցա։

Աչս արդ եթէ զհեգութիւն անցաւութեանն խոտան
և անարդ պատուհասէ Աստուած, ոչ ինչ նուազ պատու-
հասեսցէ զմիւս զայն, զոր հեգութիւն կոչեցաք աշխար-
հային և հնչաւոր։ Օ ի եթէ առաջինդ յանցաւորու-
թիւն մեծ է 'ի վերակացուս, 'ի ծնողս և 'ի դաստիա-
բակս, երկրորդին մեծապէս է յանցաւորութիւն մատ-

digitised by A.R.A.R.@

նութեանն. և տեղի ունի այս հեզութիւն պատիր՝ առաւելապէս 'ի նոսա որոց ելևմուտ է առ աւագս և առ իշխանաւորս։

ՄԱՍՆ Բ.

Կէսք 'ի մարդկանէ որ բուռն և սաստիկ վիճակեցան բնութեան, սովորեցան անբասիր առնել զանձինս՝ ասելով եթէ չիք նոցա զօրութիւն բաւական 'ի սանձել զբարկութիւն։

Այլ խարդախեն նոքա 'ի բանսն, քանզի հանապազ օրեայն փորձ ստէ զնոսա։ Այնզի արդարև տիրացեալ են այնպիսիքն 'ի բարկութենէ, յորժամ դեգերեալ կան 'ի տունս ընդ ամուսնաց իւրեանց և ընդ զաւակացն և ընդ ընտանեաց, և ասեն ոչ կարել երբէք յաղթել կրից բարկութեանն։ Այլ սակայն այն ինչ զոքա 'ի շահախնդրութեան ինչ սակս գնան մօտին առ աւագս և իշխանաւորս, տեսցես զու զնոսա յայն տեսարան այնչափ ինն այլակերպեալս, այնչափ ինն հեզացեալս և համբոյրս, մինչ զի և գառինս ասասցես զնոսա։ Ո՞ւր այն նոցա դիմացն դաժանութիւն, ո՞ւր լեզուին դառնութիւն. նա ժպիտ ևս քաղցր տեսցես ծնանել յերեսս նոցա, և մեղր ևս կաթեցուցանել 'ի շրթանց նոցա. թուի ինն անդէն յելս սեմոց տանցն թողեալ նոցա միանգամայն զամենայն դառնութիւն և զամենայն կիրս իւրեանց։

Զ՞ինչ կամիցի այս լինել։ Զ՞այն յայտ առնեն, եթէ զպէս առ մեծամեծս և առ իշխանաւորս հեզ են և համբոյր, զնոսն և առ ընտանիսն ուրեմն կարէին նոքա լինել եթէ կամեցեալ էր նոցա։ Այլ եթէ բարկութիւնն՝ յորմէ տիրանան նոքա 'ի տունս, մոլութիւն է նշաւակիչ նոցա առ ընտանիսն, հեզութիւնն՝ զոր կեղծաւորին արտաքոյ, մոլութիւն է անարգ և անարգիչ նոցա առ իսնստունս յիշխանաւորացն։

Այլ երկեակ զաշխարհական հեզութեանս այսորիկ գտանեմ ես. առաջին՝ յորժամ հեզ կեղծաւորի մարդ առ 'ի ձեռս բերել զաւագութիւն. երկրորդ՝ յորժամ

digitised by A.R.A.R.@

հեզութիւն կեղծաւորի առ 'ի կործանել զայլս. և երկոքին միանգամայն ոչ այլ ինչ են, բայց դրժանք և մատնութիւն։

Զիք փառասիրութիւն առաւել նուրբ և առաւել բուռն, քան յորժամ քօղածածուկ լինի ընդ պատիր հեզութեամբ և ընդ արուեստակեալ քաղցրութեամբ։ Այս զամենայն անարգութիւն և զամենայն գծծութիւն յանձն առնու առ 'ի հասանել նպատակին՝ որում ուշ եդեալ է։

Ոչք յայսմանէն տիրացեալք են, շնթեն անպատկառապէս, զիջանին ծառայաբար, անձնատուրք են իբրև կոյր. իբրև դերիք քո ինքնագրաւք դաւանեն զանձինս, զի եղիցին քո յաւուր միում բռնակալք։ Այսպն և զկատակ և զթուք զամենայն, հեշտաբար յանձն առնուն զնոցա, զորս միանգամ պիտանիս անձանց Ճանաչեն և գործեսս առ 'ի հասանել յամբոկ նպատակի ըղձին իւրեանց։ Դյախատեա, խոտեա դու որչափ և կամիս զնոսա, և ոչ խոժոռութիւն մի կամ ինձիոն մի տեսցես դու ծնանել 'ի դէմս նոցա. և անդուստ միամիտք հիացեալ զարմացին ընդ այնչափ պարզութիւն դիմացն և ընդ այնչափ հեզութիւն սրտից նոցա։ Ալ սակայն ոչ այլ ինչ է այս ամենայն, բայց հեզութիւն աշխարհային, հեզութիւն շնչաւոր, հեզութիւն թատերական, որ ծափահարս խնդրէ 'ի զնին կացողացն, և զակնկալեալ յաջողութիւն բախտին։

Դրօշեալք են նոքա նուիրականք և ձօնիք ձախողակ ունայնասիրութեան իւրեանց. որում փառախնդրութիւնն հզօր առաւել քան զամենայն նախատինս փակէ զաչս, խնու զականջս, կարկէ զբերան, կապէ զոտս և զձեռս. և տարեալ սահմանափակ պահէ 'ի կենդրոն սրտից նոցա միանգամայն զամենայն թափ բարկութեան սրտմտութեան նոցա։

Ալդ դու ժամն կացո զնոսա միանգամ 'ի նպատակ վախճանին նոցա. բաբէ, տեսցես դու անդէն զորոտրնդոստ թափ յարձակման ոգւոյն, զդժնդակն, զվայրագն, զսանձակոտորն, զանագորոյնն, զընդաբոյս խառնուածոյն նոցա և զանկակից գոռոզութեանն։

Ոչ էին նոքա և համբոյր ամենևին 'ի վիճակին հպատակութեանն, և վիսացեալք դառնան նոքա և ա-

digitised by A.R.A.R.@

պառումք, յորժամ սկսանին 'ի հլամայել։ Զիարդ ամենք և դիւրանասցք յառաջն նաև առ ամենայն փաստ փանաքի, և զիարդ զարդիս խիստք և անամոքելիք նաև առ ցուցակութիւնս անչերկուանալի փաստից։

Ոստի ապշութիւն սրտառուչ առ հասարակ ոգիք միանգամ զայնչափ փոփոխութիւն այլանդակ յանկն արկանիցեն 'ի նոսա։ Ոստի մնտնութիւնն միանգամայն և մեծաց և փոքունց. որ կարծէին և խնդային՝ գտանել ունել զնոսա խորհրդական յանձկութիւնս իւրեանց, միսիթար 'ի վիշտս, և կարծէին գտանել ունել զնոսա իբրև արս քրիստոնեայս, համբերատարս 'ի տկարութիւնս իւրեանց. և տեսանեն աւադիկ զնոսա վայրենամիտս և տմարդիս և գժնեայս, անձնադրաւս 'ի սրտմտութիւն բարկութեան, անխնամակալս որոց դիմեն առ նոսա։

Յաւ ապա յայն չափ հասանեն 'ի տմարդութեան իւրեանց, մինչև ամենայն դաւաճանեալք 'ի հեղութենէն նոցա և ամենայն ձեռնտուք նոցա յարուցեալ, անարգաբար 'ի բաց հանեն զնոսա 'ի բարձէն և 'ի պաշտամանէն, զոր գողաբար 'ի ձեռս բերին կեղծաւորեալ հեզութեամբ իւրեանց։ Ոյս առաջին վախճան՝ աշխարհական և ընչաւոր հեղութեանն։

Ոնցցուք և յերկրորդ նպատակն նորին, որով խորամանկեալ հետամուտ լինի այր՝ վրէժ խնդրել հեզաբար և կործանել զընկերն։ Ով, ի՜ց արդեօք յաշխարհի, տեարք, վրէժխնդրութիւն առաւել արիւնահեղ, առաւել անագորոյն։

Ոյս վրէժխնդրութիւն 'ի ծածուկ տածի և բուծանի ընդ դիմակաւ մարդասիրութեան, ընդ քօղով ներողութեան, ընդ պատրուակաւ անչիշաչարութեան։ Ոյնչափ է ահագին, որչափ և ճահաւոր յելս յաջողակս։ Ոստահ կայ մարդ, զանգիտէ և ոչ ինչ ուստի և աղատաձեռն և աներկեան ոսոխն զվերն հատուցանէ։ Ոմ Եպիսկոպոս և երբեք նախատեսցի, նա լուռ կայ. պատասխանի նորա ոչ այլ ինչ է, բայց նորանոր հանդէս մարդասիրութեան, հեզութեան, քաղաքավարութեան, արտաքնայարդար բարեզգեաց բարուց, և սակայն գաղտաբար պատրաստին զէնք, լարին որոգայթք 'ի յափշտակել և մատնել։ Որ միանգամ յերևութիցն դաւի, յապահովի կարծէ զանձն. մինչև հասցէ մծտա-

digitised by A.R.A.R.@

լուտ հարուածն, որ 'ի սԹափեցուցանէին միանգամայն և կորուսանէ։

Այսօրինակ Յովաբ քծնէր զԱմասեաւ, համբուրէր և զրգէր զծնօսան, մինչև վարսեաց ղդաշոյնն և հասոյց յերիկամունս նորա։ Այսօրինակ Աբիսողոմ, մինչդեռ սիրահամբոյր գգուէր զեղբայր իւր զԱմն 'ի խրախունս կոչնոցն, 'ի սպանդ վարէր զնա։ Այսօրինակ Այէն, իբրու զբօսակից Հաբէլի, յետ խաղաղարար պատարագի հրաւէր կարդայր եղբօրն՝ ելանել սփոփել 'ի դաշտ, և յարիւն անմեղին՝ առաջին գունէր զնորաստեղծ հող երկրի։

Ամենակայն դաւանանքդ այդոքիկ հեգք՝ զորոց բանքս են, զէն 'ի ձեռս չառնուն ոչ զդեղ մահու, ոչ դաշոյն խոցոտիչ, ոչ սփոփութիւն մահագոյժ. լեզու շատ է նոցա փոխանակ մահաղիտուցն. լեզու գործարան ազդոյ խուժադուժ և բան զամենայն գործի մահու։

Ամենայն աղէ զինչ պատճառք մահաւիրթքն ի ցեն, որ զսրտնութիւնդ զայդ և զԹափ բարկութեան զարԹուցեն 'ի դաւանանող հեզացեալդ. զրկանք արդեօք և Թշնամանք մեծամեծք. ոչ։ Այն իսկ պատճառքդ ծնունդ կամ ամբարտաւանութեան, կամ շահախնդրութեան, կամ նախանձուն նոցա։

Սրտմտեցան առաքեալք, տեսեալք զփառախնդրութիւն զՅակոբայ և զՅոհաննու, զի զառաջին բարձին Թեկն ածին ունել յաջոյ Թեան տեառն Յիսուսի. "Այս լուեալ, ասէ, տասանցն, բարկացան 'ի վերայ երկուց եղբարցն"։

Սրտնեցան, տրտնջացին այգեգործքն՝ տեսեալ զհաւասարաչափ վարձն զմի ժամ գործողին և զօրն ողջոյն վաստակաւորին. "Իբրև առին, ասէ, զվարձն, տրտնջէին զտանուտեառնէն"։

Ի բարկութիւն բրդեցաւ երեց որդին, տեսեալ զկրտսերն զանառակն, զվատնիչն, այնպէս ողջամբ և համբուրիւ ժողովեալ 'ի հօրէն. "Բարկացաւ, ասէ, և ոչ կամէր մտանել 'ի ներքս"։

Փառասիրութիւն յառաջինն, շահախնդրութիւնն 'ի միջինն, մախանք 'ի վերջինն, ծնողք կացին բարկութեան նոցա. և զհուր սրտին գնացիւք և բանիւ բերանոյն յերևան հանին սոքա և սրտմտեցան։

digitised by A.R.A.R.@

Ալ այսպէս և մահագոյժ գաղտնութիւն բարկացայտ հեզոցդ այդոցիկ. սրտմտութիւն սոցա զնոյն ունի զծնողսն, այլ ոչ նոյնօրինակ յերևան գայ։ Կեղծեն և կեղծաւորին դոքա. չգիտելոյն, չլսելոյն, չտեսանելոյն առնեն զամենայն. և բնաւ իսկ իբրու խաղաղիկ երևեցուցանեն զանձինս, մինչև հասցէ դէպ ժամանակին. նաև զրդան, զգուեն զմարդ՝ զոր խնդրեն կործանել։ Իսկ երբ հասունացեալ է հարուածն, անդէն հարկանեն և տապալեն։ Զանի՛ անագորոյն իցէ մատնութիւնդ, յորժամ զառաքինութիւնն առցէ՝ ի գործի կատարել զարութիւնն. հանդերձիւ հեզութեան ծածկել զբարկութիւնն, առ՝ ի աներկեւան և կշիռ հարկանել զմահացու վերն։ Զի որպէս զի անշուշտ իցէ հարուածն, անբաժ ամենևին երևեցուցանել զանձն եթէ՝ ի նախանձուն կրից, եթէ՝ ի՛ շահախնդրութենէ անձին, եթէ՝ ի փառասիրութեանն կասկածանաց. և ապա այնպէս իբրև ամենևին սուրբ և անարատ յամենայն կրից, ՝ի ծածուկ զոխութիւն բարկութեանն կալեալ, երթալ առ իշխանն և առաջնորդն, և քրթմնջիւն գաղտին և չարախօսութիւն և զրպարտութիւն առունկնչառ հեղուլ յականջս նորա, և թափել՝ ի սիրտ նորա զթոյն դառնութեան մաղձոյն իւրեանց, իբրու բարեպաշտել յօգուտ հասարակաց՝ եթէ յաջողեսցին միանգամ խութ և խոչ արկանել ընդ ոտիւք ընկերին, զոր խնդրէինն կործանել։ Կործանումն այնչափ անշուշտ, որչափ անխիթալի՝ ի կեղծուպատիր հեզութենէն։

Այս իցեն նշանագեստք բարեկիրթ քաղաքացւոյ, այս կնիք բարեկրօն առն և եղբայրասէր քրիստոնէի։ Զի եթէ մատնութիւն չիցէ այս դժնդակ քան զամենայն մատնութիւն և դրժանք անագորոյն, զինչ այլ իցէ։

Այլ հերիքասցին ասացեալքն յաղագս ստապատիր հեզութեանցն, և մեք պատրաստ լիցուք արդ զանձամբ առնուլ զնշանագեստ մեր սեպհական՝ զհեզութեան սիրոյ աւետարանին, զկնիք քրիստոնէութեանն։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆ Գ.

Յորժամ զՀեզութիւնն պատուիրեաց Յիսուս, թուի թէ զամենայնն միանգամայն ասաց մեզ. "Լսարուք, ասէ, յինէն, զի հեզ եմ.,, : Արանզի զմի զայն նուազ, իբրու 'ի յաթոռ վարժապետի անցեալ տեառն, և առաջին դաս զՀեզութիւնն տուեալ, յայտ է թէ զգերագոյնն քրիստոնէական իւրոց վարժից՝ յորում ամենայն վարժք՝ ուսուցանէ աշակերտելոյն : Արանզի և ոչ այլ ուրեք յաւետարանին, իբրև 'ի վարժապետական աթոռոյ՝ զայնօրինակ վարեցաւ բանիւ, ասելով "Լսարուք յինէն, զայս ինչ, կամ զայն ինչ.,, այլ թէ "Լսարուք յինէն, զի հեզ եմ.,, : Արանզի և անշուշտ՝ որպէս տեսցես վաղվաղակի՝ Հեզութիւնն ինքնին միայնակ՝ ամենայնին է պարագրիչ աւետարանին կատարելութեան :

Այլ ասասէն առաջին՝ ուշիմ լերուք սիրելիք, մի ինչ զառածել 'ի խաբանաց : Զոյ հեզութիւն ընդաբոյս խառնուածոյ մարդկան. սակայն չէ այն հեզութիւն աւետարանին : Առաջինդ է պարգև քնութեան, երկրորդդ է՝ առաքինութիւն կրօնի :

Հեզութիւն աւետարանին՝ զոր ասեմքս՝ մարթի և պարտի զոյգ և միաբան կալ և ընթանալ ընդ տնկակից խառնուածոյն, թէպէտ և եռանդուն յոյժ ելցէ քնութիւն մարդոյ և բուռն և ցասկոտ անհնարին, քանզի ուշ նպատակի չունի այլ՝ բայց զսէրն Աստուծոյ և զնմանակցութիւն տեառն Յիսուսի :

Այս է հեզութիւն քրիստոնէական, որ 'ի խորս անդ սրտին միանգամայն զամենայն թափ և զեռանդն բարկութեանն ընդոտնէ. և հրահանգէ և զմարդ՝ չտալ և առ արտաքս նշան՝ մի զանհամբերութեան կամ զխոժոռութեան, թէպէտ և սիրտն անհնարին տապի և եռայ 'ի զայրուց կրիցն :

Այս է հեզութիւն քրիստոնէական, որչափ և կշիռ տայ լեզուին շարժութեան, և մաքրէ սրբէ միանգամայն յամենայն լեզոյ դառնութեան 'ի զրուցել անդ ընդ մարդոյ. թէպէտ և անհնարին ևս խեռացեալ ելցէ մեր ընդ նմա :

digitised by A.R.A.R.@

Հեզութիւն, որ բարեզգեաց ցուցակութեամբ գնացեալն և դիմացն միշտ քաղաքավարի՝ իբրև հեշտ և բաղձալի ամենեցուն. միշտ համբոյր և ընտել խոնարհի զիջանի նաև առ ապառում և խորթաբարոյ մարդիկն. թէպէտ և վայրենամիտք գոլով և դժուարընդել ամարդութեամբն կիրս ինն վառեսցեն՝ի մեզ զբարկութեան, զդառնութեան և զարհամարհութեան։

Այս յայս ամենայն նահատակի հեզն հոգւով՝ առ՝ի հնազանդել Աստուծոյ և հնազանդութեամբն փառաւորել զանունն Յիսուսի։ Այս է առաքինութիւն հեզութեանն քրիստոսեան։ Առաքինութիւն, որ և այնչափ ծանրագնի է, որչափ առաւել ծանունք են և յաճախք են և բռունք՝ դէպքն և առիթքն՝ի մարդիկ առ՝ի զանց առնել զնովաւ և՝ի ձեռաց հանել զնա։ Առաքինութիւն, որում պէտս ունիմք յամենայն վիճակի, յամենայն՝ի վայրս, յամենայն՝ի ժամանակս։ Առաքինութիւն է համաբոլոր կենացս, և զոգցես յամենայն՝ի վայրկեանս կենդանութեան մերոյ։ Վասնզի կեամք և զեգերիմք հանապազ ընդ բնութենակից ընկերս. և չեն սոքա միշտ համբոյրք և հեշտք՝ի բարս, և չեն միշտ նոյնօրինակք և՝ի գնացս։ Ուստի և առաքինութիւն է այս, ոչ ինչ այնպէս դիւրագնի, և զոր՝ի ձեռս բերել չմարթիմք առանց բուռն առնելոյ անձին, և առանց հզօր ձեռնտուութեան շնորհաց Փրկչին. պէտք են հեզանալ՝ի խորհուրդս, հեզանալ՝ի բանս, հեզանալ՝ի գործս։

Այլ քաջ լերուք, եղբարք. զի որչափ և առաւել իցէ քիրտն վասն քրիստոնէականս հեզութեան, այնչափ և առաւել մեծամեծք են և շայեկանք գեղեցիկ արգասիքն, զոր մեզն պտղաբերեսցէ։

Ամբէ, քանիսն իցեն արգասիքն, քանի՞ և երջանկութիւնն՝ զոր մեզն առթեսցէ։ Վասնզի միայն այս հեզութիւն՝ի ծովածուփ կեանս մեր խաղաղաւէտս զմեզ բաւական է գործել և հանդուցեալս՝ի սիրտ, որ այն ինքն է երջանկութիւն յաստիս ցանկացեալն, զոր ինքեցին խմաստասէրքն. ուստի և Տէրն զայն աւետեաց և զայն խոստացաւ առ՝ի վարդ. "Ուսարուք, զի հեզ եմ.,։ Այլ զինչ մրցանակ ուսմանն. "Այլ գտջիք, ասէ, հանդիստ անձանց ձերոց,,։

digitised by A.R.A.R.@

Քանզի միայն քրիստոսական հեզութեամբս, տիրանամք մեք առաջին՝ 'ի վերայ սրտից մերոց. տիրանամք երկրորդ 'ի վերայ սրտից այլոց. երրորդ անգամ՝ շահիմք նոքաւ 'ի մեզ և զսիրտն Աստուծոյ։ Զինչ և այլ մեծ քան զայս կայցէ 'ի կեանս մեր։

Արդ առաջին՝ տեարքս և իշխան լինիմք մեք 'ի վերայ սրտից մերոց, յորժամ աւետարանին հեզութեամբ վանեալ ընթադրեմք զայն ամենայն կիրս, որ սաստկապէս և յոյժ բքաբեր յուզեն և պղտորեն զներքինս մեր, և վեր 'ի վայր 'ի ծուփս արկանեն անհնարինս։ Այս են այսոքիկ կիրք, ոխութիւն սրտատանջ, բարկութիւն հրատապ, վրէժխնդրութիւն մրրկեալ։ Անուն թեան կրիցս այսոցիկ հեզութիւնն 'ի դիմի հարեալ վանէ. և 'ի վանելն անդ զօրութեամբ՝ միանգամայն հանդարտեալ խաղաղէ ոչ զանձն միայն, այլ և զնոյն իսկ զկիրսն։

Քանզի այր հեզ 'ի լաւագոյնս առնու շրջէ զամենայն։ Այթէ ինչ մի ընդառաջէ նմա, զոր անբասիր առնել չկարէ, տանի համբերութեամբ. ապա եթէ ինչ մի տեսանէ՝ որ սաստկապէս հարեալ ընդ նա, դառնացուցանէ զնա, ներողութեամբ ախտակից լինի մարդկային տկարութեանն։ Այս յամենայն մարդ ոչ այնչափ զախտ մոլութեանն տեսանէ՝ յոր վարակեալ իցէ նա, որչափ լաւութիւն մի՝ զոր նշմարէ 'ի նմա։

Աստի է նորա փարելի պարզութիւն դիմացն, աստի անխռով անդորրութիւն ոգւոյն. աստի նորա և տէրութիւնն 'ի վերայ անձին, ուստի և այժմէն երջանկութիւն նորա յերկրի, առհաւատչեայ երկնաւորին. զոր տէրն երանեաց. "Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր"։

Տիրանամք երկրորդ՝ և սրտից այլոց փարելի առաքինութեամբս. քանզի և չէք ոք 'ի մարդկանէ՝ թէպէտ և ապառում յոյժ իցէ և վայրենամիտ՝ որ յերկար ժամանակ պնդեսցի մարտ դնել կռուել ընդ քրիստոսական հեզութեան։

Քանզի և առ հասարակ բնաւորեալ իսն է բնութեան մարդոյ՝ 'ի սիրել զայր հեզ և համբոյր, և կամակարութեամբ սրտի յանձն առնու զիջանել նմա։ Պարձեալ և յայս իմաստ երանելիս կոչեաց տէրն

digitised by A.R.A.R.@

զՀեզ՝ իբրու ժառանգս և տեարս երկրի և ոլոց յերկրի։

Ա.յս հեզութիւն 'ի վերջէ ուրեմն միշտ յաղթող զինաթափ առնէ զթշնամիս, և բազմացուցանէ անձին բարեկամս. ուստի և հարք սուրբք կոչեցին զսա յօդ և շաղկապ անխզելի ընկերութեանց առ հասարակ։ Զանազի բնաւորեալ է բնութիւնս՝ 'ի հակառակել այլոց և 'ի խստանալ՝ առաւել ևս պնդել և հակառակել. այլ 'ի հեզանալ նոցա՝ անդէն անձնատուր լինել և հանդարտել։

Ա.ղդարութեան չիք զօրութիւն բաւական 'ի պահել ունել զմարդիկ 'ի չափու պարտուց իւրաքանչիւր. է բազում անգամ զի և 'ի դերևս ելանէ առ չարութեան մարդկան։ Ա.ռատաձեռնութիւն բազմանգամ՝ ոչ յայլ ինչ է պիտանացու, բայց 'ի բազմացուցանել զապերախտս։

Այլ՝ այն հեզութիւնն միշտ գոգցէս աներկեան յաղթանակ կանգնէ. յաղթանակ այնչափ իմն ազնուական և վսեմ, որչափ զի յաղթանակողն առ 'ի յաղթել այլոց՝ նախ սկսանի 'ի յաղթութենէ անձին։

Լորենն աղագաւ և զայր հեզ՝ աստուածային գիրք քարոզէն իբրև հզօր առաւել քան զքաջս քաղաքամարտս. "Ա.յր երկայնամիտ, ասէ, լաւ է քան զայր հզօր. և որ տիրէ անձին՝ քան որ առնու զքաղաքս"։

Ա.ռ այսոքիւք երրորդ անգամ ժառանգեալք մեք հեզութեամբ և զսիրան Ա.ստուծոյ։ Այս զիարդ ոչ սիրելիք. քանզի է իսկ հեզութիւնն սկիզբն և առիթ հաւատոց, անդիմադրած հլութեամբն 'ի հաւատալ։ Կանոն և հորդիչ յուսոյ, նկուն զանձն առնելովն և յԱ.ստուած միայն ապաւինելովն։ Պտուղ ՀՀմարիտ սիրոյ, քաղցրահամբոյր գնացիւքն առ ընկերս։ Հաւատ, յոյս, և սէր. երրեակ այս առաքինութիւնք արգասիք աքանչելիք հեզութեանն, որովք միայն յաջողիմք կապիլ միանալ ընդ Ա.ստուծոյ, և փարելի լինել սրտին Ա.ստուծոյ։ Զանիւն իսկ հնորհն, յորժամ նախանձաւորքս առաքինութեան հեզոցն, նոյնպէս և ժառանգք մեծապարգև անուանակոչութեանն լինիցուք և մեք "Ա.յր ըստ սրտին Ա.ստուծոյ" ըստ երանելւոյն։

Ա.յս հեզութիւն հոտ անոյշ է Քրիստոսի, զոր առաքեալն ասաց, և զոր պահանջէ 'ի մէնջ Ա.ստուած։ Հոտ անոյշ՝ որ զաղգս և զժողովուրդս ձգեաց 'ի Քրիստոս և

digitised by A.R.A.R.@

յեկեղեցի. “Օ՜հետ քո՛ի հոտ իւղոց քոց ընթացուք...։ Յս հոտ անոյշ հեզութեան աւետարանին, յընդհանուրս ծաւալեալ ած ձգեաց զամենայն ծագս երկրի՛ի պաշտօն Քրիստոսի. և զվայրենիս զբացական վայրաց արկ հեշտին ընդ լծով աւետարանին։ Յս զիա՞րդ այնուհետև ոչ առաւել յոյժ փարելի սրտին Աստուծոյ առաքինութիւնն իցէ, որ այնչափ փառացն Աստուծոյ և պատուոյն սատար և նախանձաւոր՛ի ներքս ընծայեցաւ։

Յս զիա՞րդ այնուհետև զառն հեզոյ և զխոնարհի զինդրուածս անտես երբէք արասցէ Աստուած։ Մի՞ ահա հեզութիւնն միայնակ սքանչելոյն Դաւթի՝ բարեգործ և մարդասէր առ ապաշնորհն Իսրայէլ յարդարէր զԱստուած. և՛ի թափ բարկութեանն ընդ մէջ մտեալ հեզացուցանէր զԱստուած, յուշ միայն զհեզութիւնն ածեալ զարքայն. “Յիշեա, ասէ, տէր զԴաւիթ և զամենայն հեզութիւն նորա...։ Յս “Լեռեցից, ասէ, վասն իմ՝ և վասն Դաւթի ծառայի իմոյ...։ Յս զինչ կարծէք սիրելիք. գիտացէք անշուշտ, զի և զարդիս զօր ամենայն հեզութիւն այնչափ բարեպաշտիցն և առաքինեացն կարձէ՝ի մէջ՝ի յանցաւորացս զարժանահաս բարկութիւնն Աստուծոյ։

Վասն որոյ և մեք զնաւ երրակի հեզութեանցն լուեալ, փախիցուք սիրելիք՝ի պատիր հեզութենէ անցաւութեանն, որ զսրտմտութիւն շարժէ զհեզոյն և զանդրդասիրին Աստուծոյ՝ի վերայ առաքնորդաց և վերակացուացն անզգայացելոց իբրու զՀեղի՝ որ անցաւութեամբն հեզանայր առ որդիս խեռացեալս, վասն որոյ և սաստկագոյնս պատուհասակոծ լինէր։ Փախիցուք՝ի սուտ և՝ի ընչաւոր աշխարհական հեզութենէն, որ հոգւոց է մատնտու և ժանտախտ ընկերութեան։ Սիրեսցուք՝ի սրտէ, փարեսցուք զաւետարանին հեզութեամբն, որ հիմն է և խարիսխ բարեշաւութեան վարուց առն քրիստոնէի։ Սիրեսցուք զնա վասն անձանց. սիրեսցուք զնա՝ի շահ ընկերաց, սիրեսցուք զնա վասն Աստուծոյ փառաց, և երանիս առցուք՝ի Քրիստոսէ։ Օ՜ի եթէ երանի կարդաց հեզոց, զի նոքա ժառանգեսցեն, ասէ, զերկիր, որչափ ևս առաւել երանիս տացէ նոցա, զի անշուշտ ժառանգեսցեն և զերկինս։

digitised by A.R.A.R.@

Ա.ՅԼԴՈՒ ԻՆՔՆԻՆ ՈՎ տէր, որ հրահանգես զմեզ 'ի վարժարանիդ սիրոյ և հեզութեան, ուսարուք ասելով զի հեզ եմ, դու ինքն զլոյս իմաստութեանդ ծագեսցես 'ի միտս մեր, զի մի 'ի դերևս ելցուք մեք 'ի խելամտութենէ աստուածային հրահանգացդ։ Այսև կաթ մի, աղաչեմք զքեզ, դու ինքն հեղցես 'ի մեր սիրտս զքաղցրութեան քո և զհեզութեան։

digitised by A.R.A.R.@

ԿԱՐՈՂ ԻՆ·

ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ

"Մի դատէք, զի մի դատիցիք: Զի որով դատաստանաւ դատէք, դատելոց էք,,:

Չէք 'ի շարժմունս բնութեան առաւել արագ քան զշարժումն մտաց. և չէք 'ի գործս նորա առաւել հեշտ և անվաստակ քան զգործել մտաց: Ուստի և չէք մեղք այնչափ առաւել յաձախեալ 'ի մարդիկ՝ իբրու զմեղս դատողութեան. և որչափ յաձախ՝ այնչափ և նուազ է խիղճ մարդկան վասն մեղացն այնոցիկ: Բայր իւրաքանչիւր ունի առանձին 'ի ներքս իւր ատեան ծածուկ դատաստանի. և յայն ատեան՝ իբրու իրաւունս ունելով ճոխաբար՝ զօրհանապազ քարշէ զընկերն 'ի դատել և 'ի դատապարտել:

Այլ քանզի մարդ՝ 'ի մեղս դատման որչափ առաւել յաձախէ, այնչափ և նուազ խղճէ, որպէս ասացի, ապա և մեզ այսօր առաւել ինն 'ի նախանձ բերեալ առաքելական սպասաւորութեանս՝ պարտ է յայտ յանդիմանութեամբ 'ի դէմն բերել՝ քանի անհնարինք ի բնէն մեղք դատողութեան, և քանի ահագինք որ 'ի նմանէն հետևանք:

Նրեք ինչ՝ որպէս էնքեն աստուածաբան վարդապետք, էն տիրապէս կարևորք առ 'ի դատել դատաստան արդար· իշխանութիւն, ծանօթութիւն, անարատութիւն: Իշխանութիւն յանձն դատողին. ծանօթութիւն 'ի միտս նորա. և անարատութիւն 'ի սրտին նորա: Իշխանու-

digitised by A.R.A.R.@

թիւն առ 'ի կարել դատել. ծանօթութիւն առ 'ի գիտել դատել. անարատութիւն՝ առ 'ի կամել բարիոք դատել։ Յորժամ որ դատէն իշխանութիւն չունիցի, վայրապար է դատաստանն. թէ Աշգրիտ ծանօթութիւն չունիցի զդատին, սուտ է դատաստանն, իսկ թէ անարատութիւն սրտին պակասի, թիւր է դատաստանն։

Լաւիկ ձեզ սիրելիք երրակի յանցաւորութիւնք 'ի հանապազօրեայ դատաստանս մեր ձախողակս յաղագս ընկերին, ուստի և անիրաւք և յանդգունք։ Պակասութիւն իշխանութեան, պակասութիւն ծանօթութե, պակասութիւն անարատութեան։ Նա և բաժանումն քարոզին իմոյ այսօր։ Դատիմք զընկերն, այլ դատիմք յանդուգն. ընդէ՞ր։ Բաջին՝ քանզի չետ մեզ Աստուած ինչ մի իշխանութիւն 'ի վերայ նորա։ Երկրորդ անգամ՝ քանզի չկարեմք միջամուխ մինչև 'ի սիրտ նորա քաջիկ Ճանաչել զնա։ Երրորդ անգամ՝ քանզի 'ի նախագրաւ կրից և 'ի շահախնդրութենէ անձին առաւելապէս բերիմք 'ի դատաստանս մեր։

Եւ զի այս այսպէս, մի ուրեմն դատեսցուք երբէք, զի մի երբէք դատիցուք, պտղաբերեալ կանուխ 'ի տերունի պատգամէն. "Մի՛ դատիք, զի մի դատիցիք"։

ՄԱՍՆ Ա.

Չիք ոք, բայց միայն Աստուած ինքնաբուն իշխան օրինաւոր 'ի դատել զմարդիկ. քանզի և չիք ոք այլ բաց 'ի նմանէ արարիչ մարդկան, ուստի և ինքնիշխան տէր։ Անվանելի է Ճշմարտութիւնս և հաստակաց. մինչ զի և Քրիստոս ինքնին որպէս մարդ՝ չէր իշխան դատելոյ զաշխարհ, ըստ աւետարանին՝ թէ չէր տուեալ նմա այն 'ի հօրէ իւրմէ։ "Աստուած, զիրաւունս քո, ասէ, արքայի տուր"։ քումդ իշխանութեան, ասէ, որ քեզ միայնոյ սեպհական է, դու հաղորդ արա զարքայն՝ զոր ընտրեցեր. "Եւ զարդարութիւնս քո, ասէ, տուր որդւոյ թագաւորի"։ զի յանուն քո իշխանացեալ նստցի 'ի "դատել զժողովուրդս քո արդարութեամբ և զաղքատս քո իրաւամբք"։ Օ՛ի թէպէտ և առ ձեռն զՍո-

digitised by A.R.A.R.@

զամենէ ասէր, այլ Հնգրիտ զԽրիստոսէն էր կանխաձայ-
նութիւնն՝ ըստ հարցն սրբոց և ըստ նոցուն երբայե-
ցւոցն աւանդութեան. որպէս և աստուածայինն կըն-
քեաց բերան, "Հայր զամենայն դատաստան ետ որ-
դւոյ իւրում,, :

Լս արդ միտ դիր, քանի անվանելի իցեն հաւաս-
տիքս ընդդէմ չարաչար և պիտակաբար դատողութեանց.
Օ՜ինչ գործեմք մեք՝ յորժամ անսաստեալ կանոնիս,
և իշխանացեալ դատիմք զընկերն. ոչ ինչ այլ, բայց 'ի
մեզ ինքեանս զ՝ստուծոյ իշխանութիւնն սեպհական-
եմք և զիրաւունսն յափշտակեմք զնորա. և զոր՝Խրիս-
տոս միայն է իշխան 'ի գործել իբրու երեսփոխան եր-
կնաւոր հօրն, զայն մեք ըստ կամն գրաւականեմք ան-
ձանց . . . : Ամենեքեան իցէ յանդգնութիւն :

Սա այս է հիմն և սկիզբն վարժից աստուածխնամն
Պաւղոսի, յոր հաստատեալ կայ յանցաւորութիւն դա-
տողութեանց մերոց. Մ՛ ես դու, ասէ, ո՞վ մարդ, որ 'ի
դատել նստիս զօտարին ծառայ. "Դու ո՞վ ես մարդ,
որ դատիս զայլոյ ծառայ,, : Լթէ անկանի, եթէ կայ,
կամ յոտին կայ. եթէ անյանց է կամ թէ յանցաւոր,
ոչ 'ի քէն խնդրեն զնա, այլ յիւրմէ տեառնէն. "Ի-
րում տեառն, ասէ, կայ կամ անկանի,, :

Օ՜ի՞ քեզ դատել, խրատաբանէր Ներսէսն ոսկի, զի՞
քեզ դատել զայն ինչ՝ որ ոչն է քեզ անկ, զի՞ քեզ զքոյ
տեսութիւնդ առնուլ ձգել անդր քան զսահմանն՝ յո-
րում փակեաց զքեզ Ստուծոյ վարչութիւնն և քոյին
վիճակ : Զ՞ըբ առեր դու իշխանութիւն 'ի վերայ մարդոյ,
դատելոյ ոչ զգործսն միայն, այլ և զդիտաւորութիւնն.
քի՞զ հասանիցէ տալ զհատոր կենաց դորա. պահան-
ջեսցէ՞ ինչ 'ի քէն Ստուած վասն դորա : Լթէ այդ-
պէս է, թողում քեզ դատել զնա. սակայն և յայնժամ
հարկ պաշտամանն ուսուցէ քեզ զօրինակ դատելոյն,
հոգւով հեզութեան, հոգւով սիրոյ և խոհական հան-
ճարով :

Այս հիմն հաստահիմն վարժից աստուածայնոյն
Պաւղոսի, որպէս Հնգրատաբանեաց Ներսէսն ոսկի, որով
վարժէր նա զքրիստոնեայս ժամանակին. քանզի և մին
յառաջին աղետից եկեղեցւոյ, և որ հերձեաց, ասէ,
զքրիստոնեայս, եկաց աղատութիւնն դատելոյ : Անզի

digitised by A.R.A.R.@

որք միանգամ յայնժամ թլփատեալ հաւատացեալքն էին, խոտան համարէին զՀեթանոս զանթլփատ հաւատացեալսն. և 'ի Հեթանոսաց դարձեալքն իբրու կեղտ կարծելիս ունէին զառ 'ի Հրէից հաւատացեալսն։ Եւ որք յայնժամ պահէին 'ի կերակրոց, դատապարտ առնէին զուտողսն. և որք ուտէինն, դատակնքէին զպահողսն։ Եւ յայնմանէ ապա հերձուածք և խռովութիւնք. ուստի և առաքեալն 'ի նախանձ միութեան և խաղաղութեան, քարոզէր անդուլ. "Մի այսուհետև, ասէ, զմիմեանս դատեսցուք,,։ Եւ զնոյն քարոզ բազում ուրեք բազմօրինակ սաստիւ յեղյեղէ։

Բայց զինչ պատճառք այնչափ սաստի պատուիրանիդ, ով աստուածայինդ առաքեալ. ոչ ինչ այլ, ասէ, բայց "Օ՛ի ամենեքին կալոց ենք, ասէ, առաջի ատեանին Քրիստոսի,,։ Բաւական, ո՞ւր տարեալ յանդոյց զբանն...։ Մինչև յատեան անդր Քրիստոսի։ Բանզի որ աստանօր, ասէ, ատեանք առանձին ուրեք ուրեք, ատեանք են վայրապարք, ատեանք են յեղակարծք. ուստի և այնպիսեացն ատենից վճիռք նանրացեալք են առ Աստուծոյ։ Իշխանութիւն դատելոյ զգործս մարդկան, մանաւանդ զսիրտս նոցա, Քրիստոսի միայն տուեալ է. և որ զայն անձին գրաւականն, թէպէտ և հրեշտակ իցէ, թէպէտ և 'ի մեծաց ոք սրբոց, յափշտակող է։ Օ այս մեծն Կնքեաց Հերոնիմոս. "Որ միանգամ, ասէ, զեղբայրն դատէ, զմիցանակն Քրիստոսի յափշտակէ։ Եւ եթէ մեք, ասէ, զօրհնապաղ նստեալ դատիցեմք զընկերսն, զինչ այլ ապա մնասցէ Քրիստոսի,,։

Բայց ասեն, "Օ՛ խարդ ապա ասաց նոյն աստուածայինն առաքեալ, եթէ սուրբք զաշխարհ դատին,,. և թէ "Մի՞ գիտէք, եթէ զՀրեշտակս (զչարսն) դատիմք, թող թէ զերկրաւորս,,։ Սակայն ամենայն վասն հանդերձելոյ համաշխարհական դատաստանի են բանքն. զոր և տէրն ինքնին խոստացաւ, եթէ "Կրաստ ջիք և դուք 'ի դատել,,։

Ուստի և զնոյն բան մեծն Աւգոստինոս 'ի դէմն իւր ածեալ, և ինքնին դարձեալ վսեմական հրահանգաւն լուծանէր, հաստատուն և գործելով զՀմարտութիւնն՝ զոր մեք ձեզն քարոզեմք այսօր. "Հապա, եղբարք իմ, ասէր, հաստատուն կացցուք 'ի վերայ հիման ա-

digitised by A.R.A.R.@

տուաջիմնասն Պաւղոսի · Ի՞նչուշտ մեք , ասէ , յաւուր միում Նոտցուք ընդ Արիստոսի 'ի դատել · այլ քաւ՝ մի փութացուք ասասէն կանուխ քան զաստուածային դատաստանն · նա յաւուր միում հաղորդս զմեզ արասցէ իւրումն իշխանութեան ։ Ինքն ակնկալցուք բաժանակցութեանն , ակնկալցուք խոնարհութեամբ և համբերութեամբ · և 'ի հրահանգ նորուն առաքելոյ հաւատարիմ կացցուք · " Յետհետև , ասէ , մի յառաջքան զժամանակն դատիք , մինչև եկեսցէ տէր , որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի և յայտնիցէ զմտրհուրդս սրտից ,, ։ Անդի և զժնդակ կիրքս իցեն , եթէ խոնարհագոյն դատաւորքն ինդրեսցեն կանուխ քան զնախադահն նոտել 'ի դատել ։

Օ այս մեծն Գրիգոստինոս ։ Ի՞նչ անտալ ազաչեմ սիրելիք , և զոր ինչ զնովիմբ ածեալ հրաշաբաներ նոյն երանելին · " Ինքնին և տէրն Արիստոս , ասէ , ցորչափ յաշխարհի եկաց , թէպէտ և տէր զերազոյն , երբեք ոչ վարեաց զտերութիւնն 'ի դատել զմեղաւորս · արդարացոյց հեզն զնոսա · ներեաց երկայնամտեաց , քաղցրագոյ եմուտ նոցա , շնորհս բաշխեաց , մխիթարեաց զնոսա և սիրեաց · և երբեք ոչ դատեցաւ զնոսա ։ Այս բարձրագոյն ևս վկայութիւն ինքնին վկայեաց զանձնէն , " Ես եկն որդի մարդոյ , զի դատեսցի զաշխարհ ,, ։

Ի կրկնակի հանդիսից պաշտամանն Զրկչի և Հատաւորի , զառաջինն վարեաց ցորչափ շրջեցաւ ընդ մարդկան · զերկրորդն պահեաց 'ի միանգամ դալստեանն փառաց ։ Ի՞զդ իցէ՞ մերն իշխանութիւն ընդարձակատարը քան զնորայն · · · · Կացցուք ուրեմն 'ի սահմանին՝ զոր ինքն չափեաց ։ Սիրեսցուք յաստի կեանս զեղբարս , որպէս նա սիրեաց · արդարացուսցուք իբրև զնա , խստակից տարութեանցն լիցուք որպէս նա ։

Ի՞զպա եթէ 'ի ժամանակին՝ յորում՝ նա միայն զողորմութիւնն վարեաց , մեք հասարտատ անհանձնարաբար զարդարութիւնն միայն 'ի ձեռն առցուք , ո՞չ արդա մեք ինքնին յայնժամ անհերելի դատիցիմբ իբրև յանդունք , իբրև ամբարտաւանք ։ " Յորժամ ես ժամ առից , ասէ Աստուած , ես ուղիղ դատեցայց ,, ։ Օ այս հրահանգ , եթէ սահմանեալ է ժամանակ 'ի ներել , և ժամանակ 'ի դատել · " Ժամանակ , ասէ , դատելոյ , և ժամանակ ողորմելոյ ,, ։

digitised by A.R.A.R.@

Իսկ մեք առասիկ չասելք, եթէ յորժամ ժամ առից դատեցայց. այլ մեր ամենայն ժամանակ է դատելոյ միայն, և զիարդ այնուհետև սպրեսցուք մեք յանանելի դատաստանէն Աստուծոյ։

Այս եթէ զնոյն տարաժամ դատողութիւն ընդդէմ աստուածագիր սահմանին, ոչ առ եղբարս միայն հաւասարս, այլ և առ աւագսն յաւակնեալ տարածեսցես զու որ յեկեղեցւոյ և որ յաշխարհէ՝ կարդեալք առ Աստուծոյ 'ի վերայ քո, քանիցս ինչն յայնժամ յանցանքն, քանի պատուհասն։

Արդարեն ոչ լուար սրտառուչ ձայնին՝ որ 'ի դիմաց Աստուծոյ. "Որ մերձենայ, ասէ, 'ի ձեզ, որպէս որ ընդհարկանիցի ընդ բիւր ական իմոյ"։ Ուստի և բնաւին կարձեաց. "Զի մերձենայք, ասէ, յօծեալս իմ. և 'ի մարգարէս իմ մի մեղանչէք"։ Զանազի և որ տուիչն է իշխանութեան Աստուած, նոյն ինքն է պահապան իշխանին, նոյն ինքն է վրէժխնդիր. և որ զիշխանութիւնն հաստատեաց, նոյն և զկատակերն խնդրէ։ Այլ եթէ զու զգործս և զբանս դատակնքես զքո իշխանին, և դատաւոր դատաւորին քո կացցես, վեր 'ի վայր զկարգն Աստուծոյ արարեր. և ահագին սպառնալեացն պարտաւոր լիցիս այնուհետև։

Թէպէտ և թերութիւնք ևս իցեն 'ի նոսա, իբրև մարդիկ են. թէպէտ և յանցաւորութիւնք ևս՝ այլ զու երբէք ոչ արդարացիս. "Զ Աստուածս քո, ասէ, մի բամբասեսցես"։

Այլ ասէ, եթէ Զ գործս նոցա դատիմ, սակայն բարձի իշխանութեան նոցա և պաշտամանն շուք ածեմ։ — Այլ ես ասեմ, եթէ վայրապար է բանն, և արդարացիս ոչ. քանզի որ ասաց. "Զ Աստուածս քո մի բամբասեսցես"։ միանգամայն և զանձն իշխանին և զբարձն նոցա 'ի ներքս փակեաց։ Կանուխ ետես և գրեաց, եթէ արհամարհութիւն միոյն, այսինքն անձին, զհետ իւր բերել բնաւորեցաւ միշտ և զարհամարհութիւն միւսոյն, այսինքն՝ զբարձին։

Այլ եթէ օրինակ ազգարար կամիցիս 'ի ներքս բերել, ես քեզ ոչ 'ի հաւասարիցդ կամ յաւագացդ, այլ որ աւագագոյն ևս էր քան զամենեսին, զբարեպաշտն ասեմ Ինքնակալ Կոստանդիանոս 'ի դէմն ածից, որ շուք

digitised by A.R.A.R.@

մեծապէս հարեալ եկեղեցւոյ, երբեք ոչ ժուեաց նստել դատաւոր իշխանաց նորա. իսկ այսօր և սոսկականք յաւակինն դատել զիշխանս եկեղեցւոյ։ Այն ինքնակալ քօղաղգեաց, զի այսպէս ասացից, իւրով իսկ ծիրանեաւն առեալ ծածկէր զթերութիւնս ինչ պաշտօնէիցն եկեղեցւոյ. իսկ այսօր և պարծի և ոք, ոչ 'ի դատել միայն զնոսա, այլ և յառակել։

Այս արդ 'ի դատողութիւնս եթէ հաւասարիցս և եթէ աւագաց, զի՞ է մեզ սիրելիք, մեզ որոց այնչափ է նիւթ 'ի դատել իրաւամբք զանձինս, և զայն թողեալ, զօտարինն 'ի մեզ կապել բեռն, և նովին զմերն ծանրացուցանել խիղճ, յանցաւորութեամբ դատողութեանն յափշտակելով զիրաւունս Աստուծոյ. "Մի, ասէ, դատիք"։ Զոնեա շահու անձինդ ուշ կալցիս ով մարդ. ոչ տեսանես զիարդ մեծ և անկշռելի է խոստումն առատացն. ոչ դատել քեզ զեղբայրն, և ոչ դատիլ քեզ յԱստուծոյ. "Մի դատիք և մի դատիցիք", ասէ։

Հիացեալ ինն էր ոմն 'ի սրբոցն, որ և միշտ ահաբեկեալն էր 'ի դատաստանէն Աստուծոյ, և ասէր առ Աստուած. "Արդարև տեր ճշմարտիւ այդ այդպէս իցէ, զի զերծանիցիմ ես յահագին քոց դատաստանաց, ոչ դատելով զեղբայրն իմ։ Ո՛վ, քանիցն իցէ հատուցումն առաքինութեանն"։

Այս անշուշտ, սիրելիք, անսուտ և անխաբ է խոստումն. զի ինքնին ճշմարտութիւնն Աստուծոյ երդուաւոր եկաց. "Մի դատեր, և մի դատիցիս"։ Բայց անխաբ խոստումն աստուածային և այլ ոմն 'ի սրբոց հաւատով հաստատեալ 'ի ժամ մահուն ուրախութեամբ ելանէր 'ի մարմնոյն, և զպատճառս հարցանողացն՝ տայր պատասխանի. "Պարզերես, ասէ, յանդիմանեցայց առեանի դատաւորին իմոյ Քրիստոսի, զի ոչ դատեցի զեղբայրն իմ 'ի կեանս իմ. քանզի և ինքնին Աստուած խոստացաւ, մի դատիք, զի մի դատիցիք"։

Այս մեք, սիրելիք, որպէս լուայք ցարդ, յանցանեմք դատելովն, ոչ միայն զի իշխանութիւն չիք մեր, այլ զի և ծանօթութիւն ճշգրիտ պակասէ մեզ։

digitised by A.R.A.R.@

ՄԱՍ Բ.

Ճանաչել առանց դատելոյ, կարի քաջ իմաստութիւն է և առաքինութիւն, իրաւաբանէր Սկեբերան. այլ դատել առանց Ճանաչելոյ՝ միշտ է անմտութիւն և յանցաւորութիւն։ Այլ եթէ առ հասարակ Ճշմարիտ է բանն, առաւել ևս Ճշմարիտ՝ յաւելնոյն երանելին՝ առաւել ևս Ճշմարիտ է 'ի դատել մեր զընկերն և 'ի դատապարտել։ Աստի և ճախողակի դատաստանք մեր զընկերէն՝ գոգցես ամենայն՝ յանդգնութք են և մեղանչականք։ Ինդէր։ Ուղղի և միշտ գոգցես անբաժ են 'ի յայտ յանդիմանութենէն, որ կարևորն է առ 'ի արդարացի գործել զդատաստանն։

Ուղղի իմաստութեամբ Կնքեաց մարգարէն. "Ա կայն ընդունայն են, ասէ, որդիք մարդկան. սուտ են որդիք մարդկան. 'ի կշիռս իւրեանց մեղանչեն, և Կնքեանք յունայնութեան են 'ի միասին"։

Կամիս և զՀաւատսին լսել Ճշմարտութեանս, աղէ դու Հայեաց միանգամ։ Ոչ՞ Ինչ առաւել սովորեալ յաշխարհի՝ քան զերիս զայսոսիկ, Բ.դաջին՝ քան զդատելն յերևութիցն։ Երկրորդ անգամ՝ քան զդատելն 'ի գործոց զդիտաւորութիւնն։ Երրորդ անգամ՝ քան զդատելն 'ի պատմութենէ այլոց։ Կամ թէ քանի վաղվաղակ իցէ դատելն. քանի յանդուգն և յանձնապաստան, քանի կեղակարծելի և խարխուլ։

Բ.սասիկ քեզ աղբիւրք ստութեան դատաստանին մերոյ 'ի վերայ միմեանց, որ նախ վեր 'ի վայր գործեն 'ի մեզ զընկերութիւն, և ապա քակեն 'ի սպառ. "Սուտ են, ասէ, որդիք մարդկան, 'ի կշիռս իւրեանց մեղանչեն"։ Երբ արդ երբակի այս իմաստք դատողութեան, աղաչեմ, անմոռաց կացցեն յուշի ձերում։

Ուղղի առաջին դատեմք մեք զմարդիկ յերևութիցն. այլ սակայն, որպէս նրբաբանէր Բ.զոստինոս, մանաւանդ պարտ էր, ասէ, զերևոյթան դատել 'ի մարդկանէ։ Ուղղի և քաջ իսկ քանիս տեսանեմք մեք յաշխարհի, որ սակս բազմօրինակ պատՃառաց՝ չեն

digitised by A.R.A.R.@

ինչ նոքա այն որ երևին. և բազում անգամ չերևին այնպիսի որպիսի էին։ Վասնիք դարձեալ որ 'ի պատ-ճառս պերճ կամ գոռոզ կերպարանին իւրեանց՝ խուն ինչ ցուցանեն առ արտաքս 'ի բարւոյն զոր ունին, և քանիք դարձեալ ձիգն թափեն 'ի ծածկել զչարն իւ-րեանց, և անձնացոյցք բերին 'ի բարին զոր չունին։

Այլ քանիք ոմանք՝ որոց թերութիւնք ստոյգք, նաև մեծամեծք, և սակայն քողարկին իբրու 'ի փոխարէն մեծամեծ արդեանցն. և քանիք դարձեալ որոց ընդ անկած և արհամարհ կերպարանաւն ծածկեալ կան առաքինութիւնք մեծամեծք։

Այլ արդ դու աղէ դատեա զայդոսիկ, զորս թուեցի, ըստ երևութիցն, յորս և որչափ կարծիք և դատաս-տանք իցեն քո զնոցանէ, այնչափ և անիրաւութիւնք։

Իսկ Աստուած այլազան 'ի մերոց տեսութեանց ա-նարգէ, զոր մեքս յարգեմք. և յարգէ զոր անար-գեմքս. "Որ առաջի մարդկան բարձր է, ասէ, պիղծ է առաջի Աստուծոյ"։

Օ՜ի մեր դատաստանք յերևելիսս միայն յածին. և Աստուծոյն յաներևոյթ գաղտնիսն։ "Օ՜ի ոչ եթէ որպէս տեսանիցէ մարդ, ասէ, տեսանէ Աստուած. զի մարդ հայի յերեսս, այլ Աստուած հայի 'ի սիրտս"։ Հայի 'ի սիրտն, վասն այնորիկ և դատի արդարապէս. մեք ի՞նչ հետախոյզ արարաք զսիրտ մարդոյ. զի և կա-րեմք իսկ ոչ։

Աստուած լոյս է, որպէս ասաց առաքեալն, և չիք 'ի նմա մութն խաւարի. և մտանէ մինչև ցորոշումն հնոյ և յօդիոյ և ուղղոյ, և այնպէս դատի իրաւամբք։ Մեք վեր 'ի վերոյ ինչ մի տեսեալ, զիա՞րդ իրաւասցուք 'ի դատել զընկերն։

Նաև իբրու Ճրագ 'ի ձեռին առեալ Աստուծոյ զստոյգ գիտութիւն զգործոց, այնպէս կամի զդատելն իւր. այնպէս կամի և զմեր դատելն. "Այլ քննեսցի, ասէ, Երուսաղէմ Ճրագաւ"։ Մեք բնաւ իսկ 'ի խաւարի՝ ոչ միայն Ճրագ չունիմք զստոյգ գիտութիւնն, այլ և ոչ գիտութիւն մի. քանզի յերևութիցն դատեմք. իսկ երևոյթքն ստուերք են, այլ ոչ ստուգութիւնք։ Վա-նիցս անգամ մեք շփոթեալ խառնակեցաք զառաքինու-թիւնն ընդ մոլութեան, զանարգութիւնն ընդ յարգի,

digitised by A.R.A.R.@

զՀնարտութիւն ընդ սուրեան. և այնպէս ուրեմն մեղանչեմք, ըստ զրոյն, 'ի կշիռս մեր։

Այս է առաջին յանցաւորութիւն կշռոյն մերոյ, դատելով զընկերն յերևութից։

Սակ երկրորդ անգամ դատիմք մեք զդիտաւորութիւնն 'ի գործոց անտի։ — Այլ արդ ասէք դուք ինձ, եթէ 'ի գործոց գուշակի դիտաւորութիւնն։ Զկիր հնար այլ ազգ դատել։ — Այլ ահա ձեզ քաջիկ պատասխանի մեծին Հերոնիմոսի. ասէ, եթէ վասն այդորիկ իսկ էր պարտ էր արժան դատել ամենևին։ Զի մեք յայլ տարազ բանի, ասէ, փոխեսցուք վայր մի զառաջարկութիւնդ. ասասցուք այսպէս. դատիմք մեք զգործսն, առանց ճանաչելոյ զշարժառիթսն և զդիտաւորութիւնն։ Կամ թէ մանաւանդ ասասցուք այսպէս, գուշակեմք մեք զշարժառիթսն և զդիտաւորութիւնն, առ 'ի կարող լինելոյ դատել զգործսն։

Այլ արդ հարցանեմ. ի՞նչ լինիցի առաւել քան զայն յանդուգն և անիրաւ։ Զադիկ, ասէ, կամ մնամ ես ուշ եղեալ՝ զինչ ոք գործեսցէ, և իմանամ վասն էր գործեսցէ. ոչ անմտութիւն է այս անշուշտ. քանզի նոյն և մի գործ մարթի ունել շարժառիթս բազմապատիկս՝ միմեանց ներհակակիրս. ուրեմն և դատաստանս այնչափ տարբերեալս 'ի միմեանց։

Զադիկ քեզ տիրասէր կինն. յորժամ զիւրն անոյշ նարդեան աղնուի մեծագնոյ հեղոյր 'ի գլուխս տերունւոյն, գործ և միտք նորա ողջոյն աստուածպաշտութիւն էր գլխովին. այլ տեսողք զայրանային ընդ նա՝ իբրև ընդ վատնիչ. և նոյն զայրացումն՝ էր իբրև աղքատասէր ոգւոյ, և էր դարձեալ իբրև գողոյ և արծաթասիրի, ըստ որում Յուդային։

Այլ ինքնին փրկիչն զմեղաւորս ընդունէր և ուտէր ընդ նոսա՝ առ 'ի շահել զնոսա առ Աստուած. իսկ փարիսեցիքն կասկածէին զտեառնէն իբրու տուրևառ անբարի առնել ընդ նոսա։

Զարձեալ և զնոյն գործս տեսանեմք, ասէ, գովեալ, միանգամայն և անարդեալ յԱստուծոյ ըստ այլազան դիտաւորութեանցն. Զարաւան ծախէր զԱրայել, և Մովսէս սատակմամբ նուազ առնէր զնոսա յանապատին. "Զի՞ն, ասէ, բռնաւորութեամբ փքացեալ,

digitised by A.R.A.R.@

միւսն աստուածային նախանձու լցեալ։ Պարձեալ ոչ ինչ նուազ քան զՅուդաս ինքնին Աստուած մատնեաց, ասէ, զԲրիստոս 'ի ձեռս խաչահանուացն. և սակայն 'ի մատնութեանս յայսմիկ, ասէ, գթած և ողորմած է Աստուած, և մարդն ապիրատ և պարտաւոր։

Այլ զինչ ապա։ Պիտաւորութիւնք ուրեմն գործելեացն հանդիսացուցանեն զգործն. և քանզի այս դիտաւորութիւնք՝ Աստուծոյ միայնոյ են ծանօթ, որ քննիչ է մտաց և խորհրդոց սրտից, քանիցն ուրեմն իցէ յանդգնութիւնն՝ եթէ մեք ինքնին սահմանեսցուք զնա։

Զանզի և յերկուց ոմանց դիտաւորութեանց, մին բարի և միւսն չար, զի՞ դիտես այր դու, զորն հաստատեալ է իմ 'ի միտս. զի ըստ այնմ դատեսցես զիս. "Ոչ ըհոր խոր է, ասէ, սիրտ առն։

Կամիս և զանկարծելին լսել, լուր զոր Քրիստոս յոյժ ասաց որ ասացն, եթէ նաև ինքնին մարդ 'ի դէպս բազմապատիկս քաջ չէ դիտակից անձին իսկ իւրում 'ի գործելն. և բազում անգամ Քրիստոս չճանաչէ ոչ զգործս իւր 'ի դիտաւորութեանցն, և ոչ զդիտաւորութիւնս իւր 'ի գործոցն։ Այլ եթէ 'ի ներքինս իւր տկարանայ, զիա՞րդ յարտաքինսն ոչ գթեսցէ։

Այսպէս ուրեմն խաբեմք և մեղանչեմք նաև յերկրորդում յայսմիկ կշռութեան մերում։

Իսկ ապա երրորդ անգամ դատիմք մեք առ 'ի պատմութենէ և 'ի լրոց այլոց. և կարծեմք դատել յայնժամ առաւել ազատութեամբ և անմեղութեամբ, իբրու անկանել յանցանացն 'ի վերայ լրաբերիցն։ Սակայն և 'ի դէպս յայս ունիմք մեզ հրահանգ քաջիկ և վարդապետութիւն աստուածային, առ 'ի ուղղապէս առաջնորդել անձանց։

Ձիրք աւադիկ Ողորմացւոյն և երեքն Ողորմացւոց աշխարհագոյժք և անհնարինք՝ մինչև յաթոռն Աստուծոյ բողոք հարեալք, "Աղաղակք, ասէ, Ողորմացւոյն և Ողորմացւոց բազմացան յոյժ։" Այլ արդ միթէ անդէն և անդ ածիցէ՞ Աստուած զպատուհասն։ Այլ դու ինձ հայեաց և աստանօր ընդ խնամատութիւնն նայեսիցես։ Հարաւ բողոքն, բազմացաւ աղաղակն. սակայն և քննել կամի և ակամատես եւս խուզել. "Ա՛

digitised by A.R.A.R.@

զի, որպէս ասաց ոմն 'ի սրբոցն, կարօտ ինչ էր Աստուած, այլ զի մեզ տացէ օրինակ, և չափ ուսուցէ 'ի դատելն ...։

"Աղաղակ, ասէ, Սոդոմացւոց և Գոմորացւոց յաճախեաց, և մեղք նոցա մեծացան յոյժ. արդ իջեալ տեսից, եթէ ըստ աղաղակին նոցա՝ որ յինն հասանէ՝ վճարիցեն. ապա թէ ոչ՝ զի գիտացից ...։ Եկ շատ, ասէ, աղաղակն հասեալ առ իս. ինքնին եկեալ հետաքննեցից, և ես ինքնին եղէց վկայ. քանզի ոչ վայրապար ինչ իրաց են բանքն. այլ ժամ ելհաս դատելոյ, և ժամ է արդ դատապարտելոյ ...։ Ասաբէ, քրիստոնեայք. և իցէ՞ն արդեօք մեզ այս իմաստութեան հրահանգք յառաջնորդութիւն ...։ Ա՞'ի մէնջ սիրէ նմանել օրինակին Աստուծոյ ...։ Լսեմք աւադիկ համբաւ չար յայս նիշ քաղաքիւկամ 'ի քաղաքի աստ մերում համբաւ աղարտիչ գլխովին անուան և պատուոյ՝ այս նիշ գերդաստանի, կամ այս նիշ անձին. ասե՞մք արդեօք յայնժամ և մեք ընդ Աստուծոյ. "Արդ իջեալ տեսից, եթէ ըստ համբաւոյն առ իս հասելոյ՝ վճարիցէ՞. ապա թէ ոչ՝ զի գիտացից ...։ Հապա ինքնին ես գնացեալ ընտրեցից զսուտն 'ի ճշմարտէն՝ մինչչև իմ ինչ մի դատակնիք 'ի վերայ ածեալ գործոյն և գործողին։ Ա՞' գիտէ, եթէ թերևս չարախօսողաց իցէ համբաւն, կամ զրպարտողաց, կամ դիւրահաւատից, կամ ստախօսից, կամ թեթևամտաց, կամ թշնամեաց, կամ նախանձոտից։ Թերևս և պատմութիւն իցէ լոկ կասկածանաց ուրուք, և ոչ ստուգութեան լուր. թերևս որոմնացանութիւնք իցեն ատելութեան և անմիաբանութեան։ Այլ զիարդ ես զկասկած չարութեանն, իբրև ճշմարիտ սահմանեցից։ Արդ ուրեմն իջեալ տեսից, եթէ ըստ համբաւոյն լրոյ և պատմութեան զուգահաւասար և իրքն իցեն. ապա թէ ոչ՝ զի գիտացից։

Այս հրահանգ ճշգրիտ և այս վարդապետութիւն աստուածային՝ 'ի ճահ մնանանդ պատահեսցէ իշխանաց և առաջնորդաց՝ որ յեկեղեցւոյ և որ յաշխարհէ։ Որքա կամին գիտել զամենայն. այլ քանի՛ ստապատիր կամ այլակերպեալ լուրք և պատմութիւնք հասանեն առ նոսա. և այնպէս՝ է՛ զի և կասկած միայն առեալ՝ հաստատեն 'ի միտս, և որչափ ինչ պէտք էին ճշգրտիւ

քննութեան՝ յայնմանէ պակասեալ, դատեալ լինի այնուհետև անմեղն, դատեալ լինի այնուհետև հաստատիմն. դատակնքի և այլն՝ որ միայն էր արժանին առ 'ի նոցանէ մրցանակին առաւել քան զամենեսեան, կործանեալ առ 'ի հնարից թշնամեացն և չարարուեստ ոլերոյն, որ շուրջ դարանեալ կայցեն զաթոռովք առաջնորդացն։

Վանդի իշխան, որպէս զգուշացոյց իմաստունն, իշխան՝ որ մտադիւր լսէ զբանս ստութեան, շուրջ կան զնովաւ պաշտօնեայք ամբարշտութեանն։

Լուս արդ որպէս ցայսվայր լուայք, սիրելիք, առաջին մեղաք մեք 'ի դատել մերում առ պակասութեան իշխանութեան։ Երկրորդ՝ մեղաք մեք առ պակասութեան ճշգրիտ ծանօթութեան։ Եղանչեմք զօրհանապազ և երրորդ անգամ՝ զի պակասէ մեզ և անարատութիւն սրտի 'ի դատելն։

ՄԱՄՆ Գ·

Որպէս ամենայն գործոց բարեաց՝ անկակից առաքինութիւն մի հիմն է նոցա և աղբիւր, և անանջատ կայ 'ի նոցանէն, ըստ որում՝ ողորմել աղքատի՝ վերաբուսեալ 'ի գթութենէ, և զիմագրաւել յարիութենէ և ժուժկալել 'ի բարեխառնութենէ, և քաջ վարչութիւն 'ի խոհեմութենէ. նոյնպէս և ուղիղ դատելն՝ յարդարութենէ։

Ոստ որում և աստուածայինն Դաւիթ՝ որպէս քաջիկ խորհրդածեցին հարք՝ զիրաւունս դատողութեանն միշտ անանջատելի յարդարութենէն երգեաց 'ի սաղմոսին. Ասուած իմ, Արարի իրաւունս, ըստ արքունի պաշտամանս, ոչ լոկ, այլ և զարդարութիւնն։ Մինչ զի եթէ արդարութիւնն միշտ մերձ ոչ իցէ, իրաւունք դատողութեանն՝ ոչ արդարացին երբեք։

Լոկ արդարութիւն զինչ իցէ. Նարատութիւն պատրաստութեան սրտի ուղիղ դատել և տալ իւրաքանչիւր ումեք զիւրն։ Այլ բաբէ, քանիցս անգամ 'ի մեր դատաստանս իղձք դժպատեհք և կիրք բազմա-

digitised by A.R.A.R.@

դէմք զանարատութիւն զայս բնաւ իսկ ժանտացուցանել բնաւորեցան 'ի սիրտս մեր։ Որանք բիւրք 'ի դատաստանաց՝ որով դատիմք զընկերս, անիրաւք են, զի անբաժ են յարդարութենէ։

Դատիմք ըստ ցանկութեան սրտից մերոց, և ոչ ըստ լուսոյ բանին. դատիմք կանխակալ նախադրաւ կարծեօք, դատիմք ատելութեամբ, դատիմք նախանձու, դատիմք շահախնդրութեամբ. և այլ ևս բազմապատիկ կրիւք. որ սպրդեալք խանդար առնեն ուղղութեան մերոյ, և ապականեն զառողջ խորհուրդս։

Այլ դու ինձ ասասցես, թողեալ զշեղջակոյտս կրիցն, միայն զտիեզերական զայն կիրսն քննեա վայրիկ մի, զշահախնդրութիւնն ասեմ, որ զամենայն միանգամայն պարագրէ։ Յինչ իրաց այնպէս մոլեգին դրդեցան Փարիսեցիք անհաշտ ոխերիմք ընդդէմ տեառն հեղոյն և խոնարհին և բարերարին և ամենասրբոյն. զի՞ պատճառս նոցայն մոլեգնութեանն ետ տէրն. բայց զի շահասէրք եին նոքա և անձնասէրք և փառախնդիրք, զնախողջոյնս խնդրէին 'ի հրապարակս, զբարձերեցս յատեանս, զգահագլուխս յընթրիս։

Այն ինչ նա երևեցոյց զանձն իւր աշխարհի, իբրու 'ի խոչ ընդ ակն և իբրու 'ի խոչ ընդ ոտն իւրեանց հայեցան 'ի հեղն. իբրու յոխերիմ հակառակորդ կեղծաւորութեան նոցա, իբրու 'ի տապալիչ աղանդոյն նոցա. ուստի և շահ մեծապէս համարեցան անձանց գձձել զնա և վատահամբաւել և 'ի կորուստ ևս մատնել։ Այն եղև սկիզբն ամենայն ատենից նոցա, այն հիմն ամենայն դատաստանաց նոցա ընդդէմ անձին նորա և աքանչելեացն նորա՝ լի. անձնանախատ շահախնդրութեամբ։

Այր իսկ տերն աշխարհաքարոզ համբաւեալ իբրև մարգարէ լի հոգւովն Աստուծոյ. իսկ անդուստ Փարիսեցիք պայթեալք յանձինս, զինչ համբաւեն. "Եթէ գիտեմք, զի այրն այն մեղաւոր է.,։ Գիտեմք քաջ, ոչ եթէ կարծեմք ինչ կամ կասկածեմք։

Այլ զիարդ, աղէ ասասցէք. զիարդ եթէ մեղաւոր է, լսէ նմա Աստուած, զիարդ այնպիսի մեղաւորն նշանս առնէ, և զիարդ անստգիտ է ինքն յամենայն 'ի վարսն....։ Որ զինչ և իցէ, ասեն, որ զինչ և արասցէ,

digitised by A.R.A.R.@

չէ ինչ մեզ փոյթ . մեք զայն գիտեմք , զի այրն այն մեղաւոր է ։ Եւ զիարդ գիտեն զնա այնպիսի . վասն զի այնպէս կամին ։ Եւ ընդէր կամին . վասն զի շահ մեծապէս է նոցա լինել նորա այնպիսի ։ Իսկ շահախնդրութիւնն միայն բաւական՝ իցէ ՝ի լինել կանոն և իրաւացուցիչ դատաստանին ։ Այո , ամենայն իրօք ։ Ուստի մեք ոչ միայն կարծեմք զնա մեղաւոր , այլ և գիտեմք զնա այնպիսի . և յորժամ գիտեմք , զիարդ ոչ ուղղապէս դատեսցուք զնա և դատակնքեսցուք և համբաւեսցուք , եթէ այրն այն մեղաւոր է . . . ։ Ի՛վ պատկեր Ճշգրիտ , և տիպար կենդանատիպ դատողութեանց աշխարհի ։

Ոչ տիրք զմարդիկ ոչ յարդեանց բարեաց նոցա , այլ ՝ի շահախնդրութենէն՝ որ տիրացեալ է ՝ի մեզ ։ Ոչ տիրք զմարդիկ , ոչ որպիսի են նոքա , այլ որպիսի մեքս եմք ։ Օ՛իարդ քաջ կնքեաց զառածն՝ մերս հանճարիմաստ Կոստանդիոս . " Ամ ինչ ոք է , ասէ , ՝ի նոցն և զայլս կարծէ .,, ։ Ոչ տիրք զմարդիկ ոչ ՝ի բարւոյն կամ ՝ի չարէն զոր ունին , քան թէ ՝ի բարւոյն կամ ՝ի չարէն որ թերևս մեզ հասցէ ։

Ահա դառն աղբիւր՝ դառնութեան վտակաց . քանզի աստի խաղան ՝ի մեզ անիրաւութիւնք անհնարինք , աստի կամակորութիւնք անհանձարք , աստի կուսակցութիւն աշխարհակործան , թեկին ածել միումն՝ գովութեամբ , և ընդդէմ կբրել միւսումն՝ դառն բամբասանօք . աստի չարաբուեստ դատակնիքք ընդդէմ բազմարդիւն մարդկանն աստի անձահ գովութիւնք միջակայնոցն . աստի գահերիցութիւնք շնորհեալք միումն , աստի մերժումն անիրաւ և զրկումն միւսոյն ։

Եւ իցէ՞ ինչ , սիրելիք , քան զայս առաւել սովորական յաշխարհի , և ձեր ինքնին ոչ բիւր անգամ զփորձն առեալ իցէ ՝ի ձեզ ինքեանս ։ Ելադիկ իցէ ոք այր ՝ի համբաւի առ մարդիկ , և իցէ այն ՝ի շահ անձանց մերոց , ոչ վաղվաղակի նաև մեք ինքնին ձեռն տամք հաւանութեան՝ ՝ի բանին յայնմիկ . թեպետ և արդիւնք չիցեն նորա , սակայն ՝ի մեր կարծիս ընդունակ է այրն այն ամենայնին , բաւական է յամենայնի . քանզի և ՝ի մեր շահն կրթի բանն ։ Այս եթէ չիցէ այն ՝ի շահ անձանց , մեք ուծացեալք ՝ի նմանէ , և ինչ մի դարձեալ չտեսանեմք ՝ի նմա որ չիցէ անդոմանելի ։

digitised by A.R.A.R.@

Ի՛նչ կերբ շահախնդրութեան այնպիսի մեզ զայրն նկարէ, որպիսի և կամիքս. այլակերպէ, քօղարկէ մեզ զբարեմասնութիւնն զոր նա ունի. և տայ մեզ նկատել 'ի նմա թերութիւնս՝ զոր չունի, և բազմադէմ երեսք շահուն մերոյ, բազմադիմակ փոփոխէ մեզ զայրն։

Այլ զի այս այսպէս է, ապա եթէ յանկարծ և թշնամի հանդիպեսցի մեզ այրն, զինչ ասես, ո՞ր դատաստան իցէ մեր յայնժամ զնմանէ։ Հատ է մեզ թշնամութիւնն միայն, և բնաւ իսկ 'ի կորուստ և յանդգնութեան կայ այրն առ մեզ։ Զոր երաշխաւոր էն մեզ այնուհետև նաև սքանչելագործութիւնք նորա, և մեծամեծ նահատակութիւնքն ոչ այլ ինչ ներգործեն 'ի մեզ՝ բայց մեծ և ստեղութիւն։ Զոր նա այնուհետև բարձեալ բերիցէ և զամենայն առաքինութիւն, զի թէպէտ և լուսաւորք յոյժ իցեն, մթագնեալ էն յերևակութեան մերում, իբրու որ մոլութիւնք իցեն զլխովին։ Եթէ բարեպաշտութիւն բերէ յանձին, իբրև կեղծաւոր բամբասի. Եթէ բարեպաշտ չէ, իբրու զամբարշտէ կասկածիմք զնմանէ. Եթէ խոնարհութիւն 'ի դէմն ածէ, իբրու գձուձ և անաւագ տեսանեմք զնա. Եթէ մեծանձն է, բարձրայօն է և գոռոզ. Եթէ 'ի չափու կայ և սանձէ զանձն, իբրու այր քօղածածուկ և նենգաւոր համբաւի. Եթէ պարզ է և անկեղծաւոր, միամիտ է և անզգոյշ։

Եթէ այլք նուազոք բարձրացուցանեն զնա, մեր նախագրաւ կերբս տայ մեզ իբրև մարդելոյզ շողմութիւնս պատիրս համարել զգովութիւնսն։ Եթէ ոքա ծափահար երգեսցեն նմա՝ իբրու պար կանանոյն առ Աւթի. իսկ անդուստ, ո՜հ, մեր կերբս իբրև թոյն դառնութեան դեղեսցէ զմեր սիրտն իբրու զԱուուղայն։

Ի՛նչ քեզ տիպար շահախնդիր ոգւոյ. և որպէս երանելին ասաց Ի՛մբրոսիոս, 'ի խոր խոցեալք առ հասարակ վերս առնուն անհնարինս առ 'ի խայթից նախանձուն։ Այլ զոր օրինակ ախտ նախանձուն ունի ստէպ իւր ուշ նպատակի զառաւել զգիրգն, զառաւել փարելին յամենայն իսկ 'ի շահս, զպատիւն ասեմ զանձին և զփառս, այսպէս և չարութիւն շահախնդրութեան նուրբ է առաւել և անօրդ՝ առ 'ի գլխովին զաչացու յարդարել զմարդ։ Այլ նորին աղագաւ, աւաղ թշուառութեան

digitised by A.R.A.R.@

բախտին, զոգցես յանՀնարիցն է մեզ երբէք իբրու 'ի սրտէ հաշտս և բարեկամս լինել և ցուցանել զմեզ այնմ, որ 'ի միասին ընդ մեզ գնոյն բարձի աւագութեան կամ գնոյն վաճառաշահութեան թեկն ածիցէ, որում մեքս ըղձանամք։

Ոչ ընդակ այս կերբ շահախնդիր, իբրու ամբ թանձր մթագին կայկայեալ ընդ նա և ընդ մեզ, կար զօրութեան չթողու լուսոյ բանին 'ի վանել փարատել զնա։

Իսկ ապա զայրն, որ միանգամ կամ խոնարհագոյն յոյժ է քան զմեզ կամ յոյժ գերագոյն, մեք ոչ ինչ թշնամանասէր գոլով, արդարութեամբ և ուղիղ դատիմք. քանզի և 'ի բարձրանալ նորա կամ 'ի խոնարհելն՝ չհասանէ զեան ըղձանաց մերոց և շահուն մերոյ։

Զարդ ուրեմն քանիցն արդարութեան, սիրելիք, և մեծապէս ուղղութեան և անարատութեան սրտի պէտք իցեն մեզ 'ի դատելն, յորժամ միանգամ այս ահագին մենաբենայ շահախնդրութեան շարժեալ սասանեցուսցէ առ հասարակ։ Զու է իսկ այնչափ անշուշտ բանս, զի և նոքին ազգ մարդկան 'ի բնէ ծնեալք վասն կենցաղասէր ընկերութեան, և որոց տուրևառ առ հասարակ հոլովի իբրև 'ի վերայ ծխնեաց անդրժելի հաւատարմութեան, այն ինչ խուն մի միայն կասկած զշահախնդրութեան առեալ զմիմեանց, մոռանան զամենայն բարիս ընկերին, մոռանան զամենայն բարեկամութիւն, և ուծանան ի բրև յանբարեաց։ Զու թէպէտ և դատաւոր ոք իցէ, այր լաւ և առաքինի և անկաշառ ամենևին, եթէ յանկարծ շահաւոր հանդիպեսցի նմա դատն զոր վարէ, լքանէն զատեանն և անիրաւութիւն առնա չհամարին՝ եթէ յայլ ատեան գնասցեն։ Ոչարձեալ՝ թէպէտ և ամենևին անարատ և անսուտ իցէ վկայն, եթէ յանկարծ երբէք շահ ինչ նկատիցի վասն նորա յանսուտ վկայութենէ անտի, թողուն գնա և զայլմէն բուռն հարկանեն։ Իբրու եթէ առ հասարակ մարդիկ միաձայնաբար իրաւունս անձանց համարեսցին և բռնադատեսցին 'ի խոստովանել, եթէ ուր ուրեք յանկարծ սպրդեալ մոռանիցէ շահ ինչ անձին, անդանօր ոչ քաջ և ուղիղ լինիցի դատաստանն։ Զաբէ բռնադատ զօրութեան շահախնդիր կրիցն։

Զ Ինչ և ապա այսուհետև զարմասցիս դու, եթէ

digitised by A.R.A.R.@

Փարիսեցիքն այնչափ անիրաւ շահախնդիրք այնչափ կու-
բացան 'ի դատողութեան իւրեանց, և 'ի կշռին ընդ-
դէմ սրբութեանց սրբոյն։

Ա.ԻԼ արդ որ յայն կորուստ և 'ի վիհ առ ձգեաց
զնոսա յայնժամ, զօրհանապաղ վարեալ ձգէ և զմեզ։
Ընձնադրաւք եմք 'ի շահն, որ նախ կուրացուցանէ
զմեզ, ապա դառնացուցանէ, ապա դրդռէ հրապուրէ,
և առեալ վարէ ստէպ ընդդէմ յառնել այնոցիկ, որ ար-
ժանիք էին առ 'ի մէնջ պատուոյն և համարման. և միշտ
ընդդէմ այնոցիկ՝ առ որս անդուլ պարտ էր ունել զբրիս-
տոսեան սէրն։

Ո՛վ շահախնդրութիւն, բաբէ դու դատաստանս և
իրաւունս քանիս թիւրեցեր 'ի զեան մեծապէս աստուա-
ծային առաքինութեանս սիրոյ. և խոցս, վերս քանիսն
դու զօրհանապաղ ոչ դնես նմա ձախողակ կարծեաց
տպաւորութեամբ, զոր շուրջ գաս հեղուս 'ի միտս մարդ-
կան՝ դատել անիրաւութեամբ։

Յառաջ ուրեմն կացցէ աստանօր հրաշալի Ներսէս
ոսկի, և զանարատութիւն սրտին՝ զոր խնդրեմք 'ի
դատաստանս մեր, Ճշգրիտ նկարեսցէ մեզ. "Նա՛բէ,
ասէ, քանի՛ ինչ իրաց մեզ պէտք անհրաժեշտք իցեն, առ
'ի ուղղապէս դատել զընկերն։ Ինչ ազատ ամե-
նևին պարտ է լինել յամենայն նախապրաւ կանխակալ
կարծեաց, ամբիծ յամենայն ըղձից, սուրբ և մաքուր
յամենայն կրից, անմասն ամենևին յատելութենէ,
զերծ յամենայն կուսակցութեանց, անդրժելի 'ի ցան-
կութենէ, աննկուն 'ի ցասմանէ, աննուաճելի 'ի ցան-
կութենէ, անվանելի յերկիւղէ. և միանգամայն ա-
սել՝ օտար յամենայն շահախնդրութենէ..։

Նա՛ անարատութիւն սրտի՝ զոր կանխեցաք խնդրե-
ցաք 'ի դատողութեան մերում։ Իսկ ո՞վ ոք բաւական
իցէ, եղբարք իմ, խոստանալ անձին զայսչափ ինչ հան-
դերձանս բարեմասնութեանց հոգւոյն, զոր թուեաց
Ներսէս ոսկի։ Ո՞վ ոք կացցէ մեզ երաշխաւոր վասն սրտին
իւրոյ։ Ինչիք ունիք 'ի մէնջ յայն չափ կատարելու-
թեան 'ի վեր ելեալ իցեն։

Ոչ լաւ ևս իցէ ուրեմն, ոչ հեշտին ևս յաներկևա-
նութիւն փրկութեանս, և բնաւ իսկ անձնասպահ կա-
ցեալ 'ի վտանգէն՝ զգոյշ միայն կալ պատուիրանին Ներսէ-

տասի, որ հրամայեաց 'ի չափու կալ և մի դատել ամենևին. «Մի դատիք, զի մի դատիցիք»։

Օ՜ինչ պատասխանի մարթասցուք մեք տալ Աստուծոյ, յորժամ համար պահանջեսցէ զայնչափ դատողութեանցն որովք դատեցաք զընկերն։

Օ՜ինչ ասես. արդեօք քոյ նախագրաւելն 'ի ձախողակ կարծիս ընդդէմ եղբօրն՝ 'ի չքմեղս հանցէ զքեզ։ Այլ ո՞չ մանաւանդ Աստուած մեծ և իրաւամբք ասասցէ քեզ, եթէ որովհետև նախագրաւեցար ընդդէմ եղբօրն, և ահա քաջ վասն այդորիկ պարտ էր քեզ ամենևին անձնապահ կալ 'ի դատելոյ։

Այլ թողեալ զնախագրաւ կիրսն, դու ինքնին կաց դատաւոր անձին քում։ Արանիցս անգամ յանդուգն և ձախողակ դատեցեր զեղբայրդ, յորժամ շահախնդրութիւնդ միայն՝ առանց կանխակալ կարծեաց՝ ուծացոյց զքեզ 'ի նմանէ։

Արա՛բէ, չմնաց թերևս ինչ մի 'ի մեզ 'ի դատել զմեզ. «Օ՜ի տեսանես, ասէ, զչիւղ յական եղբօր քո, և 'ի քում՝ ականդ զգերանդ ո՞չ տեսանես։ Կամ զիա՞րդ կարես ասել ցեղբայր քո. եղբայր թող հանից զչիւղդ յականէ քումմէ, և ահա 'ի քում՝ ականդ գերան կայ։ Կեղծաւոր հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցիս հանել զչիւղն յականէ եղբօրքո»։ Այս է խնամատութիւն ատատուածային, և այս ճշմարտութիւն դատաստանի։ Արանի՞ լաւ էր քեզ ո՞վ մարդ զքեզ ինքն դատել անաչառ և հրահանգել մեծաշահութեամբ. քանզի այն է շահախնդրութիւն ճշմարիտ՝ որ դրդեսցէ 'ի դատել զանձն։ Ա՛վ, քանիցն էր յայնժամ պտղաբերութիւնն. քանզի և Աստուծոյ անշուշտ էր յայնժամ ողորմութիւն քո. քանզի անսուտ է որ խոստացաւն, «Մի՝ դատիք, և ոչ դատիցիք. զի որով դատաստանաւ դատիք, դատելոց էք. և որով չափով չափիք, չափեսցի ձեզ»։

Յայնժամ և մեծապէս խնդութեամբ քո անդատապարտ ճայիր ոչ 'ի մեղաց միայն դատողութեան, այլ և 'ի բազմաց և 'ի կորստական հետևանացն. զոր զհետ աղխաղխեալ բերցէ դատողութիւնն. իբրև «Խորք 'ի խորոց կարդասցեն առ քեզ», ըստ մարգարէին։

Արանզի դատողութիւն յանդուգն՝ ծնող է չարախօ-

digitised by A.R.A.R.@

սութեան, չարախօսութիւնն տածիչ բարբանջանաց, բարբանջանքն յաճախեն տրտունջս, տրտունջք ծնանին զթշնամութիւն. Թշնամութիւնն՝ զատելութիւն և զվրէժխնդրութիւն և 'ի վերջէ զարիւն։

Այս զիմաստ 'ի բազմահոյլ մեղաց ատի ազատանալ հնար իցէ, բայց թէ պատուիրանապահ միայն լինելով պատգամին. "Մի դատիք, և ոչ դատիցիք,,։

digitised by A.R.A.R.@

ԳԼԽՈՎ ԻՎ.

ՆԱԽԱՆՁ

« Նախանձոռ բանսարկուին նմոռտ մահ յաշխարհ » :

Չկիրս մարդոյ զաղգի ազգի եթէ ոք 'ի քնին կամիցի առնուլ, ոչ գտցէ ինչ այլ անարգագոյն և անբանագոյն քան զկիրս նախանձու։ Անարգ է՝ քանզի նկուն և սինքքոր ոգւոյ նշանակ է. և անբանագոյն՝ քանզի ցաւ միայն առթէ ստացողին իւրում, անբաժ ամենևին 'ի սիրտանացն՝ զոր այլք 'ի կրից բնաւորեցան երբէք ածել մարդոյ։

Ունել զբարի և լինել նախանձելի, տեսանել յայլս զբարի և 'ի նախանձ դրդիլ, համաբունք են միմեանց։ Ունաւ նախանձ ծնունդ երկուորեակ անհաւասարութեան. և յորում ժամանակի մուտ եգիտ յընկերութեան մարդկան՝ ծառայութիւն և հրաման, աղքատութիւն և հարստութիւն, նուաստութիւն և փառք, յաջողաձեռնութիւն և ապիկարութիւն, 'ի նմին ժամանակի և նախանձ բռնացաւ 'ի սիրտ մարդոյ. ամբոխեաց զնա և սարսեաց. և չդայ երբէք՝ ցորվայր խառն բնակացեալ են յաշխարհի առաքինութիւն և մոլութիւն, երջանկութիւն և թշուառութիւն։

Այլ է իսկ նախանձ՝ ախտ համաշխարհական. ոչ պարագրի ոչ տեղեաւ, ոչ ժամանակաւ. ոչ ինայէ ոչ 'ի վիճակ ինչ կենաց, և ոչ 'ի հանգամանս ինչ անձին։ Այ զի բազում անգամ սպրդի մտանէ և 'ի նուիրական դաբիրայս սրբութեան. գրգռէ զկամ և տածէ զպայքար

digitised by A.R.A.R.@

զաստուածաբանից, վրդովել և զխաղաղութեան մենաբանս, զհամակրօն եղբարց, և դիմակս առնու քօղազգեաց զպատիր նախանձաւորութեան. և նիւթել և տանի մինչև 'ի սեռան անդր սեղանոց վրէժխնդրութիւնս զբարեպաշտութեան։

Անսի՞ Ճշգրտութեամբ Աւետարանն ասէ, "Իբրու տիեզերական խուժադուժ տիկին" զնախանձն կոչեաց. իբրու այլ ամենայն կրից վարիչ և հրամանատար, տէր ինքնիշխան, բռնաւոր ամենայն ախտից, որ զամենայն՝ սպասարկուս իւրոցն գործէ չարաբուեստ խորհրդոց։ Անզի նորա են ոստիկանք, դահիճք, հոյլքն մեղաց՝ բամբասանք, թշնամութիւն, մատնութիւն, ատելութիւն, արիւն։

Ուստի և մեք՝ եթէ յաջողեսցուք այսօր շնորհիւն Աստուծոյ վանել զբռնութիւն աշխարհակուլ կրիցս, բազումս այլ յախտից 'ի միասին նկուն արասցուք։ Այլ զիարդ հնար իցէ վանել 'ի սպառ, մինչ չև մեր ծանուցեալ գնա։ Անզի և նուազունք են 'ի մարդկանէ՝ որ 'ի խայթից նախանձուն տանջեալք չիցեն և օր ըստ օրէ չտանջիցին. և սակայն չիք ոք 'ի նոցանէ որ համարեսցի կամ խոստովան լիցի զանձն վարակեալ 'ի կրից աստի։

Առաջին ուրեմն հրահանգս իմն, սիրելիք, 'ի դէմս ածցուք ձեզ, կշռել ճանաչել եթէ իցէ՞ք Ճշմարտապէս նախանձոտք։ Երկրորդ անգամ՝ միանգամայն զամենայն չարութիւն և զանարգութիւն նախանձուն առակեսցուք մեք ձեզ։ Երրորդ անգամ՝ նաև դեղս իմն դարմանոյ զօրաւորս ընծայեսցուք ձեզ ընդդէմ հատանկործան ախտին։

ՄԱՍՆ Ա·

Եւ արդ անդստին 'ի սահմանէն ծանիցուք մեք 'ի մեզ ինքեանս զախտ անարգ զնախանձուն։ Օ՞րինչ իցէ սահմանն։ Նախանձն է տրտմութիւն ընդ բարին այլոց, և խնդութիւն ընդ չարն։ Եւ արդ եթէ օրինակ զայս զգածեցար, ո՛վ մարդ, գիտեա զի Ճշմարիտ գրաւեալ ես յախտէն։ Ո՛վ անկարգութեանն. ցաւել սրտ-

digitised by A.R.A.R.@

նել, վասն զի այլք են երջանիկ. լալ, վասն զի այլք ծիծաղին. ծիծաղել, վասն զի այլք լան։

Այս բնութիւն է, այս կնիք դրոշմաւոր անջինջ նախանձուն։ Որոշմ արդար և իբրու հրեշտաւոր ուրուք զանի. կնիք և խարան՝ արդարև իբրու ահագին նզովից, որ 'ի մարդկան ընկերութենէ որոշէ զմարդ, և 'ի քրիստոսեան դաւանութենէ տարամերժէ զքրիստոնեայ։

Պարտ էր, տեարք իմ, մտանել միանգամ 'ի սիրտ առն նախանձոտի. տեսանել զիարդ նա հաշի և մաշի հանապազ ընդ զեղեցիկ բախտ եղբօրն և ընդ ամենայն բարեմասնութիւնսն. մտանել և հարցանել միանգամ, զի՞ է այր դու, զինչ պատճառքն իցեն տրտմութեանդ, առ իմ՞ իցէ հաշելդ և հառաչել։

Այլ գիտեմք քաջ, եթէ հեշտին և-ս իցէ բուժել զնա յախտէն, քան տալ նմա խոստովանել զկիրսն. այն չափ ինն նշաւակութեան են բանքդ։ Վասկայն մարթ է մեզ դոնեա տալ նմա ճանաչել քաջիկ զանիրաւութիւն ախտին, զանարգութիւնն և զդձութիւն. զնոյն իսկ զաստուածեղէն զհարցումն առ Կայէն 'ի ներքս բերելով. "Ընդէր խոնարհեցան անկան երեսք քո", զինչ իցէ անձկութիւնդ, կամ առ ինչ. զի՞ է զի՛ 'ի թուխ մնղձի դառնութեան համակեցան երեսք քո։ Օ՛խմրդ այնպէս յանկարծ այրն՝ զոր յառաջագոյն սիրելի ասէիր, դարձաւ արդ քեզ 'ի դառնութիւն. զինչ չար գործեաց։ Վնասեաց ինչ քեզ 'ի գոյսդ, դրժեաց ինչ համբաւոյդ. դարանեցաւ ինչ կենացդ։ Վչ ինչ, ասէ, յայսպիսեաց ատի։ Օ՛ի ուրեմն եղև քեզ, "Ընդէր անկան խոնարհեցան երեսք քո։

Վչ ահա զի 'ի բարձ յայն աւագութեան ամբարձաւ նա, որում զքեզն համարէիր արժանի. զի յաչս փառաւորաց աշխարհի եգիտ նա ընորհս առաւել քան զքեզ. զի եհաս նա ցանկութեանցն. զի հովանի կայ նմա Աստուած. զի յարդէ զնա ժողովուրդն. զի ծաղկաւէտ բարգաւաճի գերդաստանն, և օրհնութիւնք յաճախեն նմա ամենայն ուստեք։

Ահա քեզ ճշգրիտ պատճառք անձկութեան քո. թէպէտ և պատրուակս բիւրս քօղ արկանիցես տրտմութեանդ։ Այլ դու անաչառ խուզեա զքեզ, և գտցես անշուշտ զի այս են յանցանքն՝ որ ատելի գործեցին

digitised by A.R.A.R.@

զնա, արժանաւորութիւն նորա, առաքինութիւնք նո-
րա և բախտն նորին։

Բ. Յլ բաւէ, զինչ յանցանք իցեն նահատակեալ նորա
'ի պէտս հասարակաց բարւոյն և յաջողել 'ի ձեռն-
արկն, և զերկնաւոր օրհնութիւնսն ամբարել 'ի գոգ
իւր յԱստուծոյ և 'ի մարդկանէ։ Զինչ յանցանք իցեն
'ի պատճառս բարեբաղութեանն յինքն զժողովուրդն
յանկուցանել։ Ղտեսանիցէս քանի՞ անիրաւիցեն կիրքդ՝
ոչ աւետարանին միայն հրահանգաց, այլ և մարդկու-
թեանն և քաղաքականին։ Ո՞չ եղբարք իցեմք առ հասա-
րակ՝ միոյ հօր որդիք, միոյն Քրիստոսի աշակերտք՝ որ
զընկերին բարիս քեզ խրատէ սեպհականել։ Իսկ դու
զկապանս խզեալ զբնութեանն, և առ ոսն հարեալ զա-
ւետարանն, վասն այսորիկ ընդ խնդալոյն տրտմիս, փո-
խանակ շինելոյն գայթակղիս։ Զրժեռ իրաւանց արդա-
րութեանն, զրժեռ իրաւանց սիրոյն, զրժեռ իրաւանց
համեստութեան։

Բ. Յլ արդեօք խմաստք այսոքիկ հզօրք և անպատիրք
ամրեսցե՞ն ինչ զմոլեկան թափ նախանձուն։ Ոչ
ճանաչէ հոգի նորա ոչ զառաքինութիւն, ոչ զբարոյա-
կան, ոչ զկրօն։ Ոչ սանձակոծեսցեն զնա ոչ իրաւունք
բնութեան, ոչ յօդակապք ընկերութեան, ոչ փաստք
բանականք արեան։

Իսկ եթէ կամիցիս քաջ անդորրացուցանել զնա,
մատիր ասա յունկն նախանձոտին, եթէ աւադիկ այրդ
այդ նախանձեալն 'ի քէն՝ 'ի բարձանց երջանկութեանն
հոսեցաւ 'ի թշուառութիւն, կորոյս զշնորհսն, կապ-
տեցաւ յաւադութենէն, զարմն հիւքացաւ, տուն 'ի
սուգ կայ, և անուն նորա անարգեցաւ։

Ի լուր աւետեացս, ո՛վ թէ քանիսն թափ շիջցի նա-
խանձուն, հանդարտեսցի մրրիկն, պարզեսցին օդքն։
Ցեսցես դու յայնժամ զնախանձոտն յեղակարծումն 'ի
խոր թախծութենէն 'ի խնծղանս անցեալ, 'ի կապու-
տակ դիմացն 'ի զուարթութիւն դարձեալ։ Այլ ասա
փոյթ ինչ չէ նախանձոտին, եթէ զիմարդ օրինակաւ
դէպք ետուն փոփոխութեանն, արդեօք զրպարտեցա՞ւ
ինչ այրն նախանձեալ, կամ թէ արդեօք յանցեա՞ւ ինչ
ձնմարտապէս։ Զատ է զի հիւքացաւ նա, որպէս զի
ինքն անդորրասցի։

digitised by A.R.A.R.@

Ա՛վ չարեայն. եթէ զոտի երբէք 'ի մարդ ամբարիշտութիւն այնչափ։ Եւ սակայն ընդ բազմագունակ դիմակօք այս ամբարշտութիւն տիրացաւ յաշխարհի։ Ա՛յս է այսօր, որպէս և յամենայն ժամանակի, նզովելին վիճակ մարդկային սրտի։ Եւ է իսկ ինքնին նախանձն՝ մեղք, որ աղագաւ առ հասարակ ամենեքեան բողոք հարեալ էին. բայց այր իւրաքանչիւր նզովէ զայն յայլս՝ միայն առ ահի անձին. սակայն և միանգամայն զնոյն ախտ յանձն իւր ընդունի 'ի կործանումն այլոց։ Իսկ որ կարի զարմանք են, որչափ անուանարկ է յաշխարհի նախանձն, այնչափ և տարածեալ է զարբայութիւնն. վարակեալ է զամենայն վայր, զամենայն կարգ, զամենայն վիճակ կենաց, զամենայն սեռս, զամենայն հասակ, զամենայն հանգամանս անձանց։

Եւ է իսկ այս նախանձ՝ որ և զազգ ընդդէմ ազգի 'ի ճակատ հանէ, տիրանայ յատեանս և 'ի հրապարակս հասարակաց զարթուցանէ մրրիկ, ճառ արկեալ և բանդագուշէ, զի զամագիւտ լիցի յայլն զոր խնդրէ։ Այս և զառաջնորդութիւնս և զվարչութիւնս դատակնքեալ բամբասէ. բիւրապատիկ հնարագէտ լինի և նորութիւնս և նորոգութիւնս 'ի ներքս արկանէ։ Եւ զի և յանէծս և 'ի նզովս հատանի, յորժամ 'ի սրտմտութիւն բորբոքի. է զի և հանդարտութիւն կեղծէ, յորժամ կեղծաւորութեամբն յաջողի քօղարկել զախտն։ Այս այս նախանձ սպրդի և 'ի սրբութիւնսն, և բազում անգամ զայթագղութեամբ եկեղեցւոյ հերձանէ զսուտ անուն հոգևորսն. ուստի և կէսք պաւղոսեան էն, և կէսք ապաւղոսեան, և կէսք կեփայեան. բայց ոչ ոք քրիստոսեան։

Եւ ներգործէ նա զայս ամենայն՝ դիմակս բազմադիմակս զանձամբ առեալ և ամենևին քողարկեալ. քանզի և ինքնին գիտակ է անարգութեան իւրում և զանգիտէ առակել զնշանակութիւն ոգւոյն։ Ա՛յլ ինչ՝ թէ անդիմակ երևէր և ցուցանէր զինքն՝ որպէս և էն. չէր յայնժամ այնչափ ահագին արանց լաւաց և առաքինեաց։ Ա՛յլ նա անարգաբար խոցէ և ծածկի, դարանի և չերևի, կործանէ և յայտ չառնէ. իբրև օձ դարանակալ է 'ի հարկանել, և ժամ չտայ 'ի զգուշանալ. "Հարցէ, ասէ, իբրև օձ 'ի լռութեան.,։

digitised by A.R.A.R.@

Որպէս ամենայն լաւորեալ և առաքինի՝ նպատակք են նախանձուն, սապէս և ամենայն միջնորդք և սատարք վնասելոյ են զէնք 'ի ձեռին նախանձոտին. և որ առաւել նզովելիքն են 'ի զէնս նորա, են առաւել սիրելիք նորա։ Այլ թայ դաշնաւորի ընդ վատ որերոյն և ընդ սրիկայս, և 'ի նոցանէ կազմէ իւր գործիս չարարուեստ կրիցն։

Շատ է չունել ոչ արդասիս ինչ բարեաց, և ոչ հանձար ինչ, և ոչ շուք, և ոչ հետապնդութիւն պատուոյ, զի սիրելի լիցիս դու և բարեկամ յաչս նախանձոտին։ Իւր առաքինութիւն օթանայ, կամ յաջողութիւն բախտի, զաչս խոտղէն զնախանձուն. անդանօր մոլեգին յարձակի, ժայթքէ և թափէ զթոյնն. զի ստուերածս ածցէ կամ եղծեալ ապականեսցէ։

Ղար են և առաւել չար աչք չարակնողին, կնքէն աստուածային գիրք, երբէք ոչ դլան լրտեսել մանր զգնացս, զքայլս, զշարժումն զամենայն, զբանս, նաև զիսորհուրդս մտաց անձին չարակնելոյ։ Ինքք թէպէտ և յոյժ դուշնաքեայք, իբրև արատս մեծամեծս և սրածս պժգալիս երևեցուցանէ նա զնոսա։

Ալխանձուն կրիւք ընդդէմ տեառն հաշէին Փարիսեցիք։ Զի է, ասէն, այնչափ նորա շուք փառաց, զի՞ամբոխ այնչափ զհետ նորա, և առ իմ՞ ամենայն ժողովուրդն կախեալ կայցէ զնմանէ 'ի լսել։ Ուստի և զամենայն լրտեսէին, բիծ կարկատել 'ի կործանել զնա. "Այս նորքա, ասէ, սպասէին նմա"։ Ի՞ զուր նա օրինասահ լինէր, 'ի զուր էր պատուիրէն՝ զի մի՞ հռչակ արասցէն զնա, 'ի զուր նա մեկուսանայր յանապատ տեղիս և 'ի լերինս։ Զի որ նախանձու լցեալքն էին հանապազ դարանէին նմա. եթէ անլուայ ձեռօք ուտէն աշակերտք նորա, ահա դրժեալ աւանդութեան ծերոցն. եթէ 'ի շաբաթու հրաշագործէ, ահա զանցանէ զպատուիրանաւն Այստուծոյ, ուստի և հրապարակագոյժ բամբասի. "Լէ է այրն յԱ՞ստուծոյ. զի զշաբաթս ոչ պահէ"։ Այսպա եթէ յայս ամենայն տկարանան գամանգիւտ լինել 'ի նա, 'ի զարմէն սկսանին գձձել զնա. "Ի՞նչ սա է մանուկ հիւանն"։ Իսկ իբրև ամենայն զէնք սպառին 'ի ձեռս նոցա 'ի հարկանել զնա, զանշուշտ գիտութիւն իւրեանց 'ի ներքս ածեալ դատապարտէն. "Ի՞նչ գի-

digitised by A.R.A.R.@

տեմք, ոչ 'ի կարծ, մեք գիտեմք՝ զի այրն այն մեղաւոր է,, ։ Այլ ո՞ր էին մեղքն. սէր ժողովրդեանն առ նա, հուչակ վարդապետութեանն, յարգ առաքինութեանց, համբաւ աքանչելեացն. "Հաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց,, ։ Հաւասիկ պատառեցին զքօղն, պայթեաց փարիսական նախանձն, մերկացաւ ձշմարտութիւնն ։

Բայց և այսօր քանիք ոմանք 'ի լաւորերոյն և յառաքինեաց, որ յաշխարհի և որ յեկեղեցւոջ, ունին և նոքա իւրեանց փարիսեցիս, որ շուրջ կան և սպասեն նոցա. դատակնքեն զամենայն զնոցա, առակեն զծածուկ տկարութիւնս նոցա. մոլութիւնս կարծեցուցանեն զառաքինութիւնս նոցա ։ Առաքինութիւնք նոցա ձշմարիտ՝ յաչս չարակնոցին ոչ այլ ինչ են՝ բայց անձնացոյց պարծանք. զյարգ նոցա և զվարկ՝ սխալանս կոչեն ռամկին, և զհանձար նոցա և զվաստակ 'ի պէտս քաղաքին՝ փառախնդրութիւն անուանեն ։ Այլ եթէ 'ի փառաւոր ինչ ձեռնարկս յաջողին նոքա, դէպք իրացն, ասեն, այնպէս եղուն, դիպուածոյ ծնունդ է, քան եթէ արութեան քաջութեան և իմաստութեան նոցա ։

Շատ է լինել չարակնելի, և զամենայն արգասիս բարեաց կորուսանել 'ի միում վայրկենի ։ Զի եթէ բարեպաշտ է, կեղծաւոր է. եթէ բարեպաշտ չէ, ամբարիշտ է. եթէ երկիւղած է՝ միամիտ է. եթէ խոնարհ է սրտիւ՝ անկած մարդ է. եթէ վեհանձն է՝ ամբարհաւաճ է. եթէ զգոյշ է 'ի խօսս՝ խորամանկ է և չարադաւ. ապա եթէ պարզ է և համարձակ՝ անխոհեմ է և թեթևամիտ ։ Եղու չարակնոցին դեղէ զամենայն՝ յոր միանգամ մերձենայ, և լեզու այս անարգ տիրացեալ է առ հասարակ ։

Ո՛վ կիրք անգոսնելի, յոր կոյս և շարժեսցես զքայլսն, մերձ գտցես զդարանակալութիւն և զմատնութիւն ։ Խուն են կիրք ատելութեան, այլ հոլանեն զչարութիւնն, ժամ տայ ատելոյն պաշտպանել անձին. ոչ այնպիսի է նախանձ ։

Այսաւ ատեայ զՅակոբ, և գուժիւ սպառնալեաց ընու զտունն, և անձնասուր լինի Յակոբ 'ի ձեռաց նորա ։ Նախանձուն կիրք Կայենի՝ կենսախուզ լինի արդարոյն Աբելի, քօղ զիւրև արկանէ զեղբայրութեանն՝

digitised by A.R.A.R.@

հրաւէր զՀարազատի կարդայ իբրու զբօսնուլ 'ի դաշտի, և յառնէ 'ի վերայ և հեղու զարիւն անմեղին։ Բ. յա-չափ է անարգութիւն ախտին, սիրելիք. այլ քան զչափ անարգութեանն՝ սաստիկ յոյժ է չարութիւնն և զեանն՝ զոր ընկերութեան հասուցանէ, որպէս տեսջիք վաղվա-ղակի։

ՄԱՍՆ Բ.

Ինաւորական է մարդոյ կարեկից առաւել թշուա-ռացելոցն լինել և լալ ընդ լացողս, քան բաժանորդ եր-ջանկացելոցն համարել զանձն և խնդալ ընդ խնդացողս։ Ուստի և իմաստութեամբ Ոսկեբերան առաւելագու-նին նշանակ սիրոյ և առաքինութեան՝ կնքեաց խորա-գոյնս զինդալն ընդ բարիս ընկերին, քան զցաւել ընդ չարիս նորա։ Բ. յլ աւադիկ նզովելի կիրք նախանձուն՝ ոչ միայն ընդ բարիսն չինդայ, այլ և ցաւի ևս, այլ և հնարի ևս կապտել 'ի բարւոյն զընկերն։ Զիք նորա ուրեմն մասն, չիք և նշխար մի սիրոյ. չիք ինչ նորա մարդկային, բոլորն է գազանային։ Կիրք անօրինակ, կիրք համակործան մարդութեանս, համածին ընդ մարդոյ, առաջին ընկեր 'ի մուտս յաշխարհ, և վերջին լքանող 'ի սեռան դամբանին յելն յաշխարհէ. "՝Լա-խանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ"։

Բ. յլ ո՛ տայր, եթէ միայն 'ի նախանձել անդ պարա-գրեալ մնայր նախանձ. իսկ՝ թէ կիրք նախանձուն 'ի սահմանի տրտմութեան իւրում կացեալ հաշէր և մա-շէր միայն. և որպէս չարանիւթք են ամենայն ցանկու-թիւնք նորա, և որպէս տանջիչ է զօրութիւն նորա ստա-ցողին իւրում, այնպէս 'ի դերևս ելեալ նանրանային և խորհուրդք 'ի ձեռնարկս նորա։ Բ. յլ նա այնչափ մեն-քենայէ, և այնչափ այլադիմակս և այլահանդերձս փո-փոխի, մինչև գամագիւտ 'ի լաւն լինել և 'ի վերջէ կործանել։

Ոչ կուտակաբանութիւն ինչ է, սիրելիք, եթէ աղ-բիւր ամենայն դառնութեան չարեացն՝ որ վարակեցին զաշխարհ և վարակեն, զնախանձն ասեմք համարձակա-

ձայն։ Զիք նորա ծագումն այլ, բայց չարութիւն բանս-
արկուին սատանայի։ Ով հանդուրժեաց ամբարտաւանն
տեսանել զանմեղութիւն, զառաքինութիւն, զանդոր-
րութիւն, զերջանկութիւն զմերոյ նախահօրն. ոչ հան-
դարտեցաւ, պայթեաց նախանձու. զլորեաց զնա, հի-
քացոյց 'ի սպառ։

Հորդան այնուհետև եռուն յազգ մարդկան մեղք և
մահ և ամենայն աղէտք. և առաջին 'ի մեղս ախտ նա-
խանձուն ահագին և քան զմահ մուտ եգիտ յորդիս
Աղամայ, այր զընկեր դաւել և սպանանել. տեսիլ ար-
հաւրաց լինել երկնից, և առակ խնծղանաց լինել դժո-
խոց. "Աստուած հաստատեաց, ասէ, զմարդն յանեղ-
ծութեան. նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշ-
խարհ ,,։

Այս նախանձ զհետ իւր աղխաղխեալ ձգեաց յա-
մենայն յանցաւորութիւն՝ սպասահարկուս կամանցն,
զզրպարտութիւն, զմատնութիւն, զգոռոզութիւն, ըզ-
սրտմտութիւն, զվրէժխնդրութիւն, զարիւն. և 'ի զէնս
յայսոսիկ այրեացաւեր արար ողջոյն զտիեզերս։ Վանի
որեար աւագք և հոյակապք, քանի հանձարք վսեմա-
մականք՝ որ լոյս էին աշխարհի և հաստատութիւն ազ-
գաց և ժողովրդոց, ընդոտնեալք 'ի նախանձուէն սատ-
պեցան վերջոտնիլ, և անձնապուրք 'ի Ճիրանաց գազա-
նիս երթալ զոզիլ յամայի վայրս, կեալ յանշքութեան,
մաշիլ յանգործութեան, և մեռանել անպիտանք ան-
ձանց և ընկերութեան։

Զոր կացցէ մնասցէ Յովսէփ 'ի խորս գբոյն՝ ուր
ընկեցաւ 'ի նախանձուէն. թող անդ 'ի խաւարին գտցէ
զտապան իւր։ Այլ ապա ո՞ կերակրեսցէ 'ի սովուն
զտուն նահապետին, ո՞ բարգաւաճ գործեսցէ զշուք զեր-
բայական աղին, ո՞ 'ի դժուարինսն խորհրդական կաց-
ցէ աքբային, ո՞ փրկեսցէ զսովատանջեալ ժողովուրդն։
Կորուստն Յովսէփայ, կորուստ է աշխարհին։ Այլ ո՞ր
անագորոյն զկորուստ զայս առնէ աշխարհի. կիլք նա-
խանձուն։

Զոր ցուցցեն արդ չարակնողք՝ հօրն իւրեանց զպատ-
մուճան անմեղին արիւնաթաթաւ, և 'ի քող չարու-
թեանն աղդեսցեն հօրն, եթէ "Գազան չար եկեր
զՅովսէփ ,,։ Զասեն սուտ, չեն խաբանք բանքն, Ճըշ-

digitised by A.R.A.R.@

մարտութիւն է անշուշտ։ Այո՛ գաղան չար և քան զամենայն գաղան առաւել չար եկեր զՅովսէփ. Ժանիք նախանձուն։

Զ՝նախանձ, գաղան կեղեքիչ առաքինութեան, ի մաստութեան, յաջողակութեան, անմեղութեան։ Զու՞ ոչ տեսանէք, սիրելիք, կամ՞ ոչ տեսէք, ահա առաքինիք յանկարծ յաչաց ելանեն, սիրելիքն՝ իւրեանց իշխանաց յաշխարհի և իւրեանց առաջնորդաց յեկեղեցւոջ, և ահա բարեբաստեալքն թշուառացեալ կան։ Զդգործօնք և յաջողաձեռնիք յանկարծ 'ի պաշտամանցն զրկեալք՝ յանգործութեան մնային. Ժառանգաւորք եկեղեցւոյ երկիւղածք և խնամտունք՝ իբրև գձուձք արհամարհեալ կան յերեսաց չարութեանն և ստութեան. գերդաստանք հեծեն 'ի վերայ աւերակաց երջանկութեան իւրեանց. ատեանք դատաստանաց կապտեցան աւադիկ յարանց խնամտնոց և ուղղոց, և փոխանակեցին զնոսա արք անաւագք և աչառատեսք։ Զ՞ նեղգործեաց զչարութիւնն։ Զու՞ ոչ ահա դեպք են այդոքիկ հասարակք և ընդհանրականք յաշխարհի, արդասիք դառնիք մահաբեր տնկոյն նախանձու։

Զ՞ինչ յանցանք էին անմեղացն։ Զոքա ոչ իւրեանց պաշտաման զրժեցին, ոչ զարդարութիւնն վանձառեցին, ոչ զանմեղութիւնն հարստահարեցին։ Զքա էին անստգիւտք, խնամտունք, հաւատարիմք, անարատք իբրու զՅովսէփ, որ գաղան յափշտակեաց եկեր զնոսա. "Գաղան չար եկեր զՅովսէփ.,,։

Զ՝ատանօր դարձեալ և ինչ մի խելամտութեան արժանի։ Զնախանձին չմատնեն օտարք զՅովսէփ։ Զոնդպետ և սատարք մեծամեծք նախանձու առ նա՝ էին Զ՝գիպտացւոյն, տեսանել զպատանի մի օտար յանկարծ 'ի տանէ բանտի 'ի գահ արքունի անցեալ։ Զէ յօտարաց, յազգէն իւրմէ զրժի անմեղն. 'ի զարմէն, յեղբարցն։

Զ՝այս չարութիւն է այլանդակ նախանձուն. երբէք ոչ այնչափ մնի, երբէք չէ այնչափ ոխերիմ և անհաշտ որչափ յորժամ դէպք տանի նմա 'ի բարիս յաչաղել մերձաւորին, քաղաքակցին, համազգւոյն։ Հետեւաւ ներէ օտարին, չտեսանելոյն առնէ զշուքն, չլսելոյն առնէ ըզվարին. իսկ ընդ որում անդստին յորոշանէն կապեցաւ

նոյն ազգաւ, նոյն հայրենեաք, նոյն քաղաքաւ. և ապա յանդիման իւր տեսանէ զնա աւագացեալ և բարգաւաճ, չհանդուրժէ, չարամիտ և մատն լինի։

Լուեալ իսկ է ձեր զպատմութիւնս ազգաց ազգաց. քանի աղէտք, քանի մահունք 'ի նախանձուէն համազգեաց՝ վեր 'ի վայր գործեցին զինիկ աշխարհն։ Զի պիտոյ իցեն մեզ օտարացն 'ի խրատ. գիտակ իսկ էք մերոյն և սեպհականին. զի թէպէտ և եղբայրասէրք անուանիք բազումք և անանխանձ ազգասէրք հոյակապք բազումք կացին 'ի մեզ և կան, սակայն և արկածս քանիօն 'ի նախանձուն կրից, և մատնութիւնս քանի, և թշնառութիւնս համակործանս քանիօն՝ կրեաց ազգն 'ի համազգեաց։ Զոյն ամենայն՝ քանզի մեծաց արտասուաց է ձառն, այն ամենայն յուշ միայն այժմ վայրիկ մի ածցի, և շատ լիցի 'ի խրատ զգուշութեան յապագայս։

Զոյսպէս նախանձն բնաւորեցաւ վայրենանալ առաւել 'ի մերձաւորն, 'ի համազգին, 'ի քաղաքակիցն. մինչև ՀՀմարտութեանն ինքնին հնքել, "Ոչիք մարդարէ անարգ, բայց 'ի գաւառի իւրում և յազգատոհմի և 'ի տան իւրում"։ Պարտ էր մանաւանդ՝ Յազարէթացւոցն անանխանձ ինդալ և պանծալ ընդ փառս քաղաքակցին իւրեանց տեառն. և զի էր նոցա 'ի նախանձուէն բանդագուշել. "Ուստի է սմա այս, կամ զինչ է իմաստութիւնս՝ որ տուեալ է սմա, զի զօրութիւնք այսպիսիք 'ի ձեռաց սորա լինին"։ Յե ապա շահ 'ի կրիցն զինչ. բայց յարգասէաց քաղաքակցին վրէպ գտանել. "Յե ոչ արար, ասէ, անդ զօրութիւնս բազումս"։

Զայս աւադիկ, սիրելիք, պտուղ դառնութեան համազգայնոցն և հայրենակցացն նախանձու. զարս քաջս և արդասաւորս անպիտանս յարդարել հայրենեաց, անպիտանս ազգին, անպիտանս քաղաքին. արք՝ որ զարդք անեղծութեան, առիթք հաստատութեան, արփիք լուսաւորութեան մարթէին լինել ողջոյն ազգին։ Զի՞վ կրիցն, մանաւանդ եթէ անմտութեանն։ Զի՞չ քո ինքնին փառք իցեն, այլ դու, փառք համազգւոյդ. և զի քեզ անշքութիւն համարեսցիս պաշտօն հարկանել առաքինութեան։

Սակ արմատք դառնիք չարամտութեան համազգեացն

digitised by A.R.A.R.@

ընդ համարձակս, երեք են, առաջին՝ անձնասիրութիւն տարապայման. երկրորդ՝ պակասութիւն ազգասիրութեան և ընկերասիրութեան. եւ երրորդ անմտութիւն. զի յայլոց աւելորդացն վերայ ամն ունի և ճգնի ամբառնալ զիւր շինուածն, որում ոչ յաջողեսցի երբեք։ Եւ երեքեանն միանգամայն կիրք են ընդդիմամարտք ոչ միայն աստուածային օրինաց աւետարանին, այլ և գեղեցիկ հրահանգաց քաղաքականին։

Եւ զի այս այսպէս, 'ի ձեզ ուրեմն է ապաստան, ո՛ առագք ազգի և առաջնորդք եկեղեցւոյ, 'ի ձեզ է ապաստան ողջոյն շինութիւն ազգի։ Պարտ է ձեզ միշտ արթուն և սրատես զննել զիտել զամենայն շարժմունս և զգնացս աշխարհակործան և ազգակորոյս չարակնոզացն և ճանաչել զնոսա. և միշտ ճշգրտիւ խուզարկուլինել և խեղամուտ խորհրդոց և լեզուի նախանձոտացդ. յորժամ առաջի ձեր զլեզուն առեալ զառաջին օձին՝ նենգ և դարանս նիւթեսցեն նոքա արանց քաջաց, հայրենասիրաց, վաստակաւորաց, 'ի կործանել զնոսա 'ի յագուրդ նախանձուն, և 'ի կորուստ ազգին։ Պարտ է ձեզ արութեամբ քաջութեամբ՝ զսայրասուր լեզուն բթացուցանել և զամենայն մենքենաւոր հնարսն անգործ առնել։ Լոտ այնուհետև մղձկեսցին 'ի սիրտ մախացողքն. մղձկեսցին 'ի սպառ, տանջեալք ընդ բարիս ընկերին, և առաւել տանջեալք՝ զի չեն բաւական չար նմա հասուցանել։

Եւ արդ զայս ամենայն չարութիւն զախտին գիտելով չափ, սիրելիք, զիարդ մարթ իցէ այնուհետև ոչ զզուել, ոչ նզովել զկիրսն և իբրև 'ի չար գազանէ 'ի բաց սարսնուլ 'ի նախանձուէ։ Յաչաղանք՝ կամ անգործք մնան և ապիկարք. և զինչ յայնժամ, բայց հեղձամղձուկ յանձին լինել։ Կամ թէ գամագիւտ լինին 'ի կործանել զընկերն. և զինչ յայնժամ, բայց ա նագորոյն երևել այնչափ, մինչև հրձուել ընդ աղէտս ընկերին. և ո՞ր այն մարդկութիւն իցէ, կամ ո՞ր այն կրօն և դաւանութիւն, որ և զթշնամին անգամ պատուիրէ սիրել և ատելոյն անգամ բարի առնել։

Այլ և յայլ ամենայնի վերայ՝ ամենեքին պատրաստ և զգոյշ լինել պարտ է, մի անմտութեան պատճառս տալ երբէք նախանձոտացն. այլ մանաւանդ հանդար-

digitised by A.R.A.R.@

տել զկիրն և ամոքել։ Հապա, ուշով սիրելիք դուշնա-
քեիցս այսոցիկ հրահանգաց ունկն մատուցէք 'ի դեղ
դարմանաց աշխարհակործան նախանձուն։

ՄԱՄՆ Գ.

Ցանել խոնարհութեամբ անխուսափելի չարեացն,
համբերութիւն է քրիստոնէական։ Ոչ տալ պատճառս
չարեացն, խմաստութիւն է քրիստոնէական։ Հաւա-
նեալ եմ; սիրելիք, եթէ չար մեծապէս է ընկերութեան
նախանձն. սակայն և հաստատեալ եմ՝ եթէ և մեք
ինքնին բաղում անգամ մերովս անմտութեամբ զար-
թուցանեմք զնախանձն՝ զննջեալն, և զէնս 'ի ձեռս
տամք նորա 'ի վանել զմեզ։ Զոր չարակնողին միշտ ա-
ձեցուն տեսանել զբարին ընկերին և տանջել զանձն. այս
է կնիքն նախանձուն. սակայն և բոյս բարուց բնաւո-
րեալ է բազմաց 'ի մարդկանէ՝ անհանձարիցն և փառա-
սիրացն, այնչափ ինն պերճ զանձինս՝ իբրև զաղգ սիրա-
մարդաց՝ ընծայեցուցանել 'ի բարեմասնութիւնան յոր
վայելեն, զի և կարծին խնդրել ոտնհար այլոցն լինել
թշուառութեան։ Ղարակնիկ նոցա՝ յանցանք են փա-
ռասիրութեան նոցա. և հալածիկ նոցա՝ պտուղ է ան-
հանձար թեթևամտութեան նոցա։

Ոչք յաղագս նախանձուն մատենագրեցին, կէսք զայս
քարոզեն և վարդապետեն, եթէ երբեք չիք հնար քաղ-
ցրացուցանել զդառնութիւն նախանձուն։ Այլ թէ
մարթ է տապաստ զդազանն զայն արկանել, այլ ընդե-
լացուցանել ոչ կա. վայրենանայ նախանձն և մոլի՝ եթէ
յորժամ խնդրես պարտել զնա, և եթէ յորժամ ցու-
ցանես պարտիլ 'ի նմանէ։

Այլ սակայն չէ այս վարդապետութիւն միշտ ճշմա-
րիտ վասն ամենայն ազգ նախանձու։ Վանդի քաջ են
մեզ հնարք լուեցուցանել 'ի սպառ զնախանձն. են և
հնարք՝ քաղցր և համբոյր գործել զնա։ Կարևոր յոյժ
և օգտակար ամենայն ունկնդրաց, և առաւել կա ազ-
գիս, զիտեմ զխորհրդածութիւնս։

Երբեակ ազգք են նախանձու։ Նախանձ գոռոզու-

digitised by A.R.A.R.@

թեան. նախանձ շահախնդրութեան, նախանձ բուն չարութեան։ Բ. Առաջինն ուշ նպատակի իւր ունի զփառս ընկերին, որում առաւելապէս զինքն համարի արժանի։ Երկրորդն՝ զգոյն ընկերին, որոց ցանկայ վասն իւր։ Երրորդն՝ չկամի ինչ վասն իւր. շատ է նմա չունել ընկերին բարի ինչ, և յօտարին թշուառութեան զիւրն հաստատել զերջանկութիւն։ Ոչայր է այս չարութեան։

Նախանձ գոռոզութեան էր ամբարտաւանին Համանայ ընդդէմ Մուրթքէի։ Նախանձ շահախնդրութեան էր Բ. քայաբու, յափշտակել ունել զայգին Նաբովթայ։ Նախանձ բուն չարութեան էր Սաուղայն. որ թէպէտ և արքայ, թէպէտ և բազմահարուստ, մինայր ընդ Դաւիթ։

Ոնախանձ գոռոզութեանն պարտ է ամբել պարկեշտութեամբ և խոնարհութեամբ։ Ոնախանձ շահախնդրութեանն՝ համբուրեցուցանել բարերարութեամբ։ Ոնախանձ զբուն չարութեանն՝ պարտ է թողուլ լքանել յինքն, այլ միանգամայն զգոյշ կալ՝ի գրգռելոյ զնա։

Սատն առաջնոյն՝ պէտք էն մեզ մեծի պարկեշտութեան՝ի փառաւորութեան մերում. քանզի և չիք ոք՝ի մարդկանէ՝ որ ոչ արժանի փառաց և պատուոյ համարեսցի զանձն իւր. ուստի և զայլոցն փառաւորութիւն յակն արկեալ՝ մախայ. մանաւանդ յորժամ և բարեմասնութեամբք ինչ ոգւոյ տեսցէ զարդարեալ զանձն։

Յաչս մեր մերն արդասիք չէն երբէք դուշնաբեայք. ուստի և հեշտեաւ շփոթեմք զստորինն ընդ միջակայնոյն, և զմիջակայինն՝ ընդ գերագունին։ Բ. պա եթէ խոնարհագոյն քան զմեզ լցէ կամ ծննդեամբ, կամ զարմիւ, կամ հանձարով, կամ արդեամբք, և՝ի վերոյ անցցէ քան զմեզ՝ի շուք աստիճանին և փառացն, անհնարին յայնժամ մոլի նախանձն, ոչ ինչ հանդարտէ, ընչէ զբարկութիւն, փորատէ զգոռութիւն, սանձակոտոր է ամենևին։ Բ. դու որ՝ի գագաթն անդր փառաց անցեալ նստար, հանապազ՝ի վտանգի տեսանես զանձն խարդաւանելոյ՝ի նախանձուէն։ Կամիս վայրիկ մի յայնժամ հեզացուցանել զգազանն, երևեցո դու՝ի փառաւորութեան քում առաւել ինն պարկեշտութիւն՝ի գնացս, և խոնարհութիւն՝ի բանս։ Ման-

digitised by A.R.A.R.@

զի և անհանդուրժելի է արդարև անհանձար փառա-
խնդրութիւն ոմանց 'ի մարդկանէ, որ այն ինչ 'ի շուք
աւագութեան հասեալ, ոչ այլ ինչ գիտեն նոքա խօսել
և ասել, բայց զարգասեաց անձին, և պերճացուցանել
զառաքինութիւնս. ասեն զոր են, ասեն և զոր չեն,
Լուտակաբան եղեալ բարձրացուցանեն զբարձն՝ զոր
կալան. և զբարգաւաճելն միայն խնդրեն զփառայն ան-
ձին 'ի բանս իւրեանց։

Լու զինչ ապա. ոչ ինչ այլ գործեն նոքա խօսելովն՝
բայց զայրացուցանել զնախանձն 'ի կործանումն անձանց։
Այլ դու թէ կամիս զի լուեսցեն նախանձողք, լուեա դու
առաջին։ Հրահանգ գեղեցիկ զտէրունեանն ընկալ 'ի
քեզ. բուժելն նա զՀիւանդս, հանէր նա դևս, փայլեր
'ի Լաւոր, և ապա զինչ. "Պատուիրեաց նոցա, ասէ,
զի մի յայտնի արասցեն զնա,". "Զի ումեք պատմես-
ցեն զտեսիլն, մինչև որդի մարդոյ 'ի մեռելոց յարիցէ,".
"Զի ումեք, ասէ, ասասցես 'ի շինին,"։ Ինդէր, զի
մի զայրասցին մնխանք Փարիսեցւոցն։

Փառք զՀետ քո ընթանան, սակայն և նախանձ ան-
անջատ 'ի փառացդ՝ ընթացակից է, երբէք չեքանէ
զքեզ։ Վասն զի աւասիկ հնարք հանձարեղ՝ վատնել զբրո-
նութիւն ուղեկցիդ։ Լսօսեաց շատ զարժանեաց օտա-
րին, և մի երբէք զքոյոցդ։ Լթէ յաջողեցար 'ի գործ
երջանկապէս, մի քեզ միայնոյ ընծայեսցես զայն, կոչեա
քեզ բաժանակից 'ի բանիդ՝ և զայլոցն խմաստութիւն,
զյաջողաձեռնութիւն, զխորհուրդ, զխոհեմութիւն։
Լաղ զի այլք խօսեսցին վասն քո. և դու 'ի գովութիւն
առցես զՀանձար և զժրութիւն գործակցացդ։

Արուեստ է այս հանձարիմաստ, աղնուական և վսե-
մական ոչ։ այլ ՈՒր գտցուք մեք զայնպիսի այր։ Սա-
կայն և անհրաժեշտ են դարմանքն ընդդէմ բռնութեան
ախտին. այս է պարկեշտութիւնն 'ի բանս. այլ չէ
շատ. պէտք են և պարկեշտութեան 'ի գնացս՝ յամոքել
զգազանն։

Վասնզի են են և այլք՝ որ յանկարծ 'ի սինկքոր վի-
ճակէն ամբարձեալք 'ի ծայրն բախտին, յանարգութե-
նէն 'ի փառս, յաղքատութենէն 'ի մեծութիւն, ան-
հանձարաբար գնացիւքն՝ ողորմելի նշաւակք դառն նա-
խանձուն 'ի տեսիլ և յառակ աշխարհի։ Փոփոխութիւն

digitised by A.R.A.R.@

վիճակին զՀետ իւր ձգեաց փոփոխութիւն զայլանդակութեան բարուց. փոխեցին զիսրհուրդս, փոխեցին զսիրսն, փոխեցին ողջոյն զկեանս։ Որոգայթն 'ի սպառ որ ինչ էին, և յիշեն միայն որ ինչ են։ Դրեկ հեգք և խոնարհք, այսօր խրոխտք և հպարտք. որ երբեմն քաղցունք և փարելիք, արդ դժխեմք և անմուերք. անչքութիւն անձանց հանարին զՀողն և զմոխիրն՝ յորում ծնան. և ամօթ զբարեկամութիւնն՝ զոր ունէին։ Որ 'ի տան դնեն այնուհետև միայն պայծառութեան շքոյն որ զնոքօք բակ առեալ է. միտ դնեն միայն նորոգածին բարեկամութեանցն՝ ըստ արժանի բարձին իւրեանց. 'ի շլացութիւն հարեալ են 'ի նշուլից փառաց իւրեանց. որչափ անբաւականք են 'ի բառնալ զառժամայն մեծութիւնն, այնչափ և ծանրաբեռնիք են այլոց։ Պապարկուս անձանց հանարին ողջոյն զժողովուրդն 'ի շուք փառաց իւրեանց։ Ցունք նոցա իբրև արքունի գոռոզութեան և բարձրայօն ձեռից. ո՞ ոք մարթասցի համարձակ մերձիլ առ նոսա 'ի կարօտութեան իւրում։ Կուռք և դրօշեալք կցկցեալք ինքնաձեռնադրելիք, պաշտօն և երկրպագութիւն ինդրեն 'ի բնութենակից մարդկանէն։ Յայտ զայն առնեն եթէ չէին իսկ արժանի մեծութեանն՝ յոր ամբարձան։ Այլ զինչ զարմանք իցեն այնուհետև՝ եթէ նշաւակք ատելութեան իցեն, նշաւակք և ձարակք ամենածախ ժանեաց նախանձուն։

Արդ միայն պարկեշտութիւնն յայնժամ 'ի գնացս՝ 'ի փառաւորութեան իւրեանց փրկեսցէ զնոսա։ Ամանգի և յամենայն ժամանակի և ամենայն իմաստնոց՝ որ արտաքինք և որ ներքինք՝ այս եղև խորհուրդ և առած, հեզ և գեղեցիկ չափաւորութեամբ բարուցն և գնացիցն՝ դիւր և սփոփութիւն տալ զայրագնեալ ոգւոյ նախանձուն և բթացուցանել զժանիսն։

Ոստ չափու փառաւորութեանն պէտք են և պարկեշտութեան և ցածութեան. և ընկալցիս զու յարգանս, ոչ ինչ պահանջելովդ յարգանս։ Այլ զնոցն պարկեշտութիւն և զնոցն պարզութիւն բարուցդ, ոյր աղագաւ առեալ բարձրացուցին զքեզ, զնոցն պահեսցես և 'ի բարձրութեան քում. որպէս զի մարթասցիս յաւերժանալ 'ի նմին։

Որ 'ի այնչափ ինն կերպարանափոխ լիցիս 'ի փառան,

digitised by A.R.A.R.@

մինչև ոչ Ճանաչել զքեզ Յանօթիցն. Հրահանգ աստուա-
ծային ընկալ 'ի տէրունւոյն, որպէս գեղեցիկս յոյժ
խորհրդածեաց մեծն Ներսուղիանոս. Թէպէտ և ինք-
նին տէրն, ասէ, այնչափ լուսափայլ 'ի դէմսն իբրև
զարփի, այնչափ սպիտակ 'ի հանդերձս իբրև զձիւն, և
այնչափ հիասքանչ ողջոյն 'ի մարմնին՝ 'ի Թափօրական
'ի փառսն, "Սակայն և զընդեղականն իւր, ասէ, զե-
բեսայն զբնաւոր գծագրութիւնն ողջ պահեաց.,: Այսն
Յիսուս՝ Թէպէտ և փառաւոր, նոյն Յիսուս՝ Թէպէտ
և լուսաձաձանչ, եցոյց զանձն եթէ Աստուած է. և
տակաւին Յանօթիս տայր անձին 'ի բնաւոր կերպարա-
նէն՝ եթէ և մարդ է: Այս դու յիշեա միշտ 'ի փառաց՝
որ ինչ էիրն, և սիրեսցիս միշտ՝ որ ինչ եաց:

Արդ առաջին՝ նախանձուն գոռոզութեան դարման
տարեալ քրիստոնէական համեստութեամբ և ցածու-
թեամբ 'ի բանս և 'ի գնացս, իսկ երկրորդ անգամ՝
նախանձուն շահախնդրութեան՝ միակ դեղ դարմանոյ
կալցես դու զքրիստոնէականն բարերարութիւն:

Սա միայն է զօրաւոր դարման. պարտ է բաժանորդ
բարեաց քոց առնուլ զմարդիկ: ԵՀեծութիւն և հան-
Ճար, բարձ և հարստութիւն խոտղեն զաչս զիսնար-
հագունիցն քան զքեզ. և քան զիղձն առ քեզ 'ի սիրտ
նոցա՝ առաւել դրդեն զնախանձն: Իսկ բարերարու-
թիւնն մտանէ տիրանայ սրտից նոցա և զերախտագի-
տութիւն զարթուցանէ 'ի նոսա. իսկ ուր երախտագի-
տութիւն թագաւորէ, անդանօր նախանձ մնաց գտա-
նել ոչ ունի. մանաւանդ և սիրէ և զփառս և զհարըս-
տութիւն բարերարին իւրոյ:

Այս իմաստ երախտագիտութիւն անդատին 'ի սկզբանէ
հաստատեալ է 'ի բնութեան մարդոյ, այնչափ՝ մինչև
և յաստուածութիւն անդր նորակրօնաւոր պաշտամամբ
վերառնուլ զբարերարս: Պաշտօն աւադիկ հարկանէին
հեթանոսք մարդոյ իբրև Աստուծոյ՝ զի բարեգործեաց.
երկրի՝ զի մնուցանէ, արեգական՝ զի լուսաւորէ, այ-
լովքն հանդերձ. և ամենայն թագաւորաց որ միանգամ
առաւել քան իշխանք՝ հարք եղեն ժողովրդոց, պաշտա-
մունս և տօնախմբութիւնս սահմանեցին: Աստի և
քոյ արծաթ և ոսկի և իշխանութիւն՝ լիցին քեզ զէնք
և գործարանք առ 'ի քեզ զսիրտն յանկուցանել ժո-

digitised by A.R.A.R.@

զովրդոց բարերարութեամբդ։ Պաշտպան լեր տկարին, իրաւունս արա զրկելոյն, ձեռն տուր կարօտելոյն, ջամբ բեա աղքատին, վարձատրեա վաստակելոյն։ Ցեսցէ աշխարհ, եթէ քոյ մեծութիւնդ քան 'ի Ճարակ փառասիրութեան և զեղխութեան՝ են առաւել 'ի սատար և 'ի մխիթարութիւն կարօտելոց և հիքացելոց։ Ո՞ւր յայնժամ նախանձ և հեռ. նա շուրջ յայնժամ զքեզ տեսցես սիրողս 'ի սրտէ և պատուադիրս քեզ անկեղծաւորս։ Ոչիք նախանձ, որ առաջի զօրութեան բարեբարութեանն ոչ լուծցի և 'ի չիք դարձցի։

Ոչ մի միայն նախանձու անվանելի կայ. ոչ պարկեշտութիւն, ոչ խոնարհութիւն պարտեսցէ զնա, և ոչ բարերարութիւնն հեզացուսցէ զնա. այն է նախանձն բուն չարութեան, զոր կանխեցի ասացի։

Ոչ զդ նախանձուս այսորիկ՝ որ տնկակից չարութեան է, դարման այս է։ Զոր ամենևին լիք զնա յինքեան. մի երբէք երես ինչ արասցես նմա, և զհոգն յԱստուած միայն ապսպարեա. նա միայն վանեսցէ և վատնեսցէ զնա։

Ոչ այս նախանձ ինքնաբուն չարութեան ոչ պատուաստեր է, ոչ շահասէր է. ոչ զքոյ փառն խնդրէ և ոչ զքոյ ինչսն. ոչ ինչ խնդրէ վասն իւր. խնդրէ միայն զքեզ տեսանել հիքացեալ, կապուտ կողոպուտ 'ի պատուոյդ, կապուտ կողոպուտ յընչից. ընտրէ և անձին իւրում հիքութիւն, միայն թէ և զքեզ տեսցէ թշուառացեալ։

Յայսոսիսեաց աստի էր կինն, կին օտարախորթն 'ի բնութենէ, որ վասն կենդանի մանկան 'ի սողոմոնեան ատենի 'ի պայքար մտանէր ընդ Ճշմարիտ մօր մանկանն. խնդրէր զի ընդ մէջ կտրեսցի տղայն. զրկէր զինքն 'ի բոլորէն, միայն զի զրկեսցի և հարազատ մայրն։ Ոչ 'ի ինձ, ասէ, և մի նմա. կտրեցէք ընդ մէջ զերախայն, և առցուք մեք իւրաքանչիւր զկէսն։ Ոչ՞ աբէ, և իցէ՞ երբէք տեղի այսչափ չարութեան 'ի մարդկային բնութեան. սակայն երբէք և փորձն, աւա՜ղ, իբրև ընտանի ապականեալ բնութեանս ցուցանէ զնա։

Ոչայց աղէ, թող լաւ որեարն և առաքինի շուրջ պատեալ 'ի նախանձուէ աստի, մխիթարեսցին. խելամուտ եղեալ մեծի Ճշմարտութեանն զոր ասեմ, եթէ այդ նախանձ չարութեան քան զամենայն զովութիւն, շուք և պատիւ առաւել ածէ նոցա։ Ոչանգի նախանձ այդ-

digitised by A.R.A.R.@

պիսի՝ ատեցող ՀՇմարիտ ակներև բարւոյն և արհամարհոտ 'ի վերին երեսս, 'ի նեղբոյ ծածկեալ ունի յինքեան զՀՇգրիտ յարգ և զվարկ զառաքինեացն։ Այ՛ ուրեմն սրտաբեկ 'ի նախանձուէդ յայդմանէ եղեալ՝ յեռս ընդդէմ վերջոտնեսցիս դու յաղատաքայլ ընթացից առաքինութեան քո, հանՀարոյն քո, գօտէպինդ ժրութեան քո 'ի պէտս բարեաց ընկերութեանն. իբրու կարծել այդու Հանապարհաւ վատնել զբռնութիւն նախանձուս այսորիկ չարութեան կամ թէ լռեցուցանել։ Ոչ առն քաղաքագիտի և հանՀարեղի, և ոչ առն քրիստոնէի և առաքինւոյ 'ի դէպ երբէք պատահեսցէ անարգութիւն այսչափ։ Զանգի և որ նաւապետ առաքինի 'ի յառնել մրրկաց և յամբառնալ ծովուն՝ զքեղիսն 'ի ձեռաց լքցէ։ Այլ որ զօրավար արի 'ի գոռալ թշնամւոյն երբէք ահաբեկ վերջոտնեալ զօրականին իւրոյ մնասն լինիցի։

Զարդ եթէ քաջասիրտս ցանկորդեսցես դու 'ի քաջալաւութեան ընթացս քո, երես և ոչ մի առնելով նախանձուն այնմիկ, չիք նոա տանջանք չար և բան զայն, ինքնին նոա պայթեսցի և իբր պղպջակ 'ի չիք լուծանիցի։ Զանգի և Աստուած ինքնին բնութեամբ բարին, այնչափ չարութեանն միշտ հակառակ կայ։

Հայեաց դու միանգամ ընդ Սաւուղ և ընդ Դաւիթ. մին նախանձուն չարութեան գերի, միւսն ամենեւին անմեղութեան հարազատ։ Սա սոսկական անձն 'ի գահն բազմեալ, երջանիկ 'ի կեանս, երջանկագոյն 'ի մահուն։ Այս արքայ՝ 'ի գահէն անկեալ, թշուառ 'ի կեանս, թշուառագոյն 'ի մահուն. կորոյս զկեանս՝ կորոյս և զհոգին։

Զայչափ է չարութիւն նախանձուն, այսչափ և աղէտք պատուհասին նորա։ Զչաղեր երբեմն աստուածայինն Սակերերան. բա՛ռ է, քանիօն իցէ, ասէր, ախտ նախանձուն. ախտ զոր բանսարկուին միայն անկակից ասէի, եթէ հանապազորդեան փորձն ոչ ցուցանէր զսա բնաւորեալ և 'ի մարդ։

Ո՞ ոք 'ի մէնջ սիրելիք ոչ Հանաչէ զայս ամենայն, այլ քանիք արդեօք 'ի մէնջ զերծք իցեն յախտէն։ Իսկ և քանիք արդեօք վարակեալք ախտին, երբէք զղջացին և զառ 'ի նմանէն յանցաւորութիւնսն սրբեսցեն Հշմարիտ խոստովանութեամբ։

Զանգի և չիք յանցաւորութիւն ոխերիմ տապալիչ

digitised by A.R.A.R.@

քրիստոսական սիրոյն՝ իբրու զնախանձ, և չիք ախտ՝ յոր առաւել հակամիտեալ իցեմք յընդաքոյս անձնասիրու-թենէն։

Եւ զի այս այսպէս, զիա՞րդ մեք, ո՛վ տէր, անձամբք բաւական իցեմք առանց ամենազօր շնորհացդ՝ որ 'ի մեզ բուսեալ զգաղանն վանել։ Ի քէն, ամենասուրբ հոգի աղբիւր անսպառ սիրոյ, մաղթեմք արտասուօք, հեղցես 'ի սիրտս մեր զշնորհս Ճշմարիտ սիրոյ. հայել 'ի բարիս ընկերին իբրու անձին՝ և խնդալ. հայել յա-ղէտս ընկերին իբրու անձին՝ և գթալ։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐՈՒՆ ԻՆ

Ա. ՆՄԱ. ՔՐՈՒԹԻՒՆ

"Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ"։
"Հոգւով գնացէք, և զցանկութիւն մարմնոյ մի կատարէք"։

Իմաստութեամբ ասաց որ ասացն, եթէ Օ որ օրինակ 'ի քրիստոնէական դաւանութեան են ինչ ինչ խորհուրդք հաւատոյ, զոր 'ի նանիր ոք ժտեսցի ըմբռնել ողջ՝ քանզի անհասանելիք են, սապէս և 'ի քրիստոնէական բարոյականին են ինչ ինչ մոլութեանց նկարագիրք, ոյց աղագաւ խոհեմութիւն քարոզից աւետարանին յանձն չառնուցուն յայտնի և հրապարակաւ բան ձառել, զի պատկառելիք են։

Բանզի և անշուշտ յունկնդրացն իցեն ոմանք, կամ որ գլխովին անմեղքն իցեն և 'ի մէնջ լսիցեն և ծանիցեն զայն ինչ, զոր լաւ ևս էր նոցա անգիտանալ. կամ թէ արդէն իսկ յուղղութիւն եկեալ իցեն, և հեշտեաւ դէպք տայցեն՝ զի իբրու 'ի փչմանէ մերոց ձայնից շիջեալն հուր կամ առկայծեալն միւսանգամ արծարծեալ վառիցի. և կամ թերևս իցեն ևս մեղաւորք խստասիրտք, որ չար ևս մոլեսցին 'ի լսելն. ուր լրջանալն պարտ էր նոցա և առնուլ զդէղն։

Բարիոք է զգուշութիւնն և գեղեցիկ խոհեմութիւն։ Բ. Այլ սակայն և ըստ ժամանակաց կշռեալ զբանն՝ թուի ինձ, եթէ թուլակի սանձ և ազատութիւն ժամանակիս շատ իսկ այսօր ազատ կացուցանէ զքարոզս աւետարանին յայսպիսեաց աստի մանր և ձշդիւ զգուշա-

digitised by A.R.A.R.@

ւորութեանց 'ի Ճառս քարոյականին՝ որ յաղագս մոլութեանն, զորմէ թուի թէ 'ի մէջ այլոց մոլութեանց առաւել ևս պարտ իցէ այսօր բան Ճառել, այն է մոլութիւնն Անմաքրութեան։

Օ յայտնեաց չէ ինչ հարկ երկայնաբանել. քանզի և այր իւրաքանչիւր յունկնդրացդ՝ թուի թէ իրաւունս տայցէ առաջարկութեան բանիս, յորժամ այնչափ ինչ սանձարձակութիւն գիտիցէ և տեսանիցէ զարդիս 'ի վարս և 'ի գնացս, և այնչափ ինչ ազատութիւն անխիղճ 'ի լեզուի, որ առ տնին, որ 'ի հրապարակս, որ յաւուրսն, որ 'ի հասարակաց կենակցութիւնս. յորս ոչ կատարեալ հասակացն միայն՝ այլ մատաղերամ մանկտւոյն կանուխ քան զժամանակին և զհասակին լրումն՝ բաց են այսօր աչք և եկեալ իսկ 'ի ծանօթութիւն չարին։

Այլ զիարդ այսուհետև արժան իցէ լռել քարոզից աւետարանին 'ի Ճառս քրիստոնէական պարկեշտութեան, և ոչ մանաւանդ հետամուտ վանել և զօրութեամբ քարոզութեանն յայտնի հալածել զախտն. և որչափ ինչ հնար իցէ՝ գէթ վատել զզօրութիւնն, որ Ճգնի այսօր ոչ իբրև արհամարհ միայն և անփառունակ ցուցանել զգեղեցիկ զգուշաւորութիւնն և զպարկեշտանալն, որ 'ի բանս, որ 'ի վարս, որ 'ի կենակցութիւնս, իբրու որ վանաց և կուսաստանաց միայն յանկաւոր իցէ, այլ և նշան յաղթութեան սանձարձակութեամբն 'ի մէջ հաւատացեալ ժողովրդեանն կանգնել 'ի վերայ մաքրութեան և քրիստոնէական անարատութեան։

Զան որոյ և պարտ իցէ այսօր քարոզից բանին 'ի բեմ՝ աստի սրբութեան իբրու 'ի բարձր աշտարակէ և նեռակալէ մարտ դնել խոցել զթշնամին սրբութեան։ Զանզի և աշխարհ չէ ինչ այսօր այնչափ պարզ և միամիտ, զի գթեսցէ ինչ գայթակղութեամբ յաղատօրէն և համարձակաձայն բանից սպասաւորաց աւետարանին։ Այս մանաւանդ զի և արթնամիտք բազումք և նախանձաւորք բազումք են 'ի քրիստոնեայս, որ և զամենայն նախանձ գեղեցիկ խնդրեն 'ի պաշտօնեայս բանին 'ի ներքս բերել նոցա յայտնաբարբառ Ճառս զօրաւորս և փաստս բանականս 'ի վանել կամ 'ի վատել զսխտն ժանտ, որ Ճարակեալ է առ հասարակ։

Այլ ինձ թուի 'ի վերայ այսր ամենայնի դիպողա-

digitised by A.R.A.R.@

գոյն և սիրել ընդ քաջով ընթանալ միշտ 'ի բան քաջոգիս, և իբրու ընդ Ճանապարհ արտուղի հասանել 'ի նպատակ ուղւոյն. միշտ առաջի ունելով զպատկառելի իրաւունս զյարկիս սրբութեան, զբեմիս աւետարանին, և զմարդկօրէն վայելչութեան։

Այս ուրեմն ոչ 'ի ներքս յինքեան 'ի մոլութիւն անմաքրութեանն յառեսցուք մեք զակն, որ գլխովին իսկ դժոխալուր և դժոխակերպարան և գարշելի է 'ի տեսութիւն, այլ մանաւանդ 'ի ծածուկ յարմատն նորա ձկտեսցուք մեք զաչս մտաց, այս է՝ 'ի հրապուրիչ յայն կիրսն, յորմէ նա բուսանի և աճէ։

Իսկ յաղագս կրիցս այսոցիկ երիս ինչ կարևորս յոյժ յայտնագիտութեամբ 'ի ներքս բերցուք տեարդ։ Առաջին՝ եթէ ոչ Ճանաչէն զնոյն կիրս նոքա՝ որ միանգամ նովաւ վարակեալքն իցեն։ Երկրորդ անգամ՝ եթէ ոչ գարշին յայնմանէ թէպէտ և ծանիցեն իսկ զնա։ Երրորդ անգամ՝ եթէ ոչ ուղղեն զանձինս թէպէտ և գարշիցին և ս 'ի նմանէ։

ՄԱՍՆ Ա.

Ճշգրտագոյնս վարդապետեաց վասն կրիցս այսոցիկ աստուածային Իսկեբերան, յասել անդ իւրում եթէ Դիտութիւն չարին հեշտեաւ յառաջանայ ինքնին փորձառութեամբն. քանզի որչափ առաւել 'ի գործ ինչ թարթափեսցի ոք, այնչափ և լաւ ևս գայ 'ի Ճանաչումն նորին։ Այլ սակայն յանմաքրութեան կիրսն, ասէ, գլխովին ներհակաբար են իրքդ. նոքա միայն, ասէ, քաջ Ճանաչէն զնոյն, որ անմասն իցեն 'ի նմանէ. և յորժամ սկիզբն ոք արասցէ վարակիլ ախտիւս, յայնժամ զնոսալով զնայ և նուազի Ճանաչումն նորին։

Այս արդ առ 'ի քաջ խելամուտ լինել Ճշմարտութեան քաջի տրամախոհութեան Իսկեբերանին, վայր մի 'ի քնին առցուք զբանն. զիմաստ հրապուրեալ յառաջին շարժութենէ անտի կրիցն և մոլորի հոգին։ Վասանզի է բազում անգամ զի ընդ առաջ ելանէ մարդոյ առարկայ՝ որ ըստ կերպարանին և ըստ բնութեանն ընդ միտ մտա-

digitised by A.R.A.R.@

նէ տեսողին, և բնաւորապէս տենչմամբ յինքն յանկուցանէ. և ըստ նմանէն՝ ապա մարդ 'ի մնկակից թըշուառութենէն իւրմէ 'ի նեղքս յանդգնամն իւր զգայ զօրէնս իմն, զոր ասաց Լ.ռաքեալն, եթէ "Օ՞ յինեալ կայ հակառակ օրինաց մտաց իմոց.,։ Յայտնանէ ապա ծագումն առնուն մոլորեցուցիչ կիրքն. քանզի զգայեալն բնութեամբ՝ տակաւ այնուհետև զօրանայ ընտրողութեամբ։

Իսկ ապա զինչ։ Լ.ւ քանզի մարդ ըստ գեղեցիկ թեղադրութեան հրահանգաց հաւատոյն 'ի պարկեշտութիւն և 'ի համեստութիւն բերի, ուստի և դժկամակեալ առ ժամն՝ ոչինչ այնպէս հակամիտ յըմբռնումն ախտին՝ զոր միանգամ կալաւ նա 'ի ծածուկ շարժմունս կանուխ խլրտեալ 'ի սրտին։ Ա՞ինչև միսանգամ 'ի խլրտել ախտին՝ ինքնին յայնժամ սկսանի մարդ մտախաբ լինել, իբրու եթէ զգայեալն այն ջեռնուլ ոչ այլ ինչ լցէ, բայց բերումն մնկակից ախորժակաց, յարգ և վարկ արժանեաց ուրուք, հակամիտութիւն բնութեան, աշխոյժք անմեղք բնաւորականք, բայս բարուց՝ որ սեպհական լցէ բարեկիրթ և քաղաքական մարդոյ, որ միշտ զքաղցրաբարոյութէ և զքաղաքավարութեան թեկն ածիցէ, որ միշտ համաձայնեալ միամտեսցի ընդ ամենեսին, և միշտ անուշակ օրինաց բարեկամական ընկերութեանն պատկառ կայցէ։

Լ.յսպիսեաք պատրեալ և մոլորեալ հոգին 'ի միանգամ և 'ի միսանգամ շարժութեան հրապուրիչ կրիցն, տակաւ կուրանայ 'ի ձարակել նորա, որ գնալով գնայ և զայրանայ։ Լ.նդուստ և ընթերցուածք հրապուրիչ վիպից առասպելաց և անմաքուր քերթածաց, և անառակ նուագք, և լկտի տեսիլք, և արատ հայեցուածք, և ընծայատրութիւնք մտերիմք, և այցելութիւն ստէպ, և կենակցութիւնք յերկարաձգեալք, և սպասարկութիւնք փոխադարձք. այս ամենայն քեզ առասիկ փուք և փչումն և ձարակ, որ զՀարեալն հուր տարտարոսական միշտ վառ և բորբոք պահեալ, և զբոցն զայրացուցանէ։

Լ.ւ արդ զայս ամենայն, (զձեզ ինքնին կարդամ 'ի վկայս, և 'ի ձեր դատաստան և 'ի փորձառութիւն առնեմ ապաստան), զայս ամենայն խթանս և գրգռիչս և

digitised by A.R.A.R.@

սաղրիչս մեղանչականս՝ ոչ ահա իցեն բազումք որ ա-
ռաւել ևս համարիցին քաղաքավարութիւնս իմն յան-
կաւորս և վայելուչս բարեկիրթ մարդոյ քաղաքացւոյ,
և գնացս և եղանակս իմն կարևորս 'ի վարել ընդ աշ-
խարհի, 'ի պահել յարդարուն և զկերպարանն և զո-
գին, 'ի կենակցիլ բարեաւ, և յամենայնի 'ի վարել
կեանս քաղցունս և կենցաղասէրս։ Այլ սակայն եթէ
քանի՞ բուն և սաստիկ իցէ յայսպիսեաց աստի ձարա-
կիլ և զայրանալ զամ քան զգամ ախտաւոր կրիցն, ան-
շուշտ պարտ էր նոցա ձանաչել զայն 'ի նոցունն իսկ յար-
դեանց գործոցն, որ այժմ լաւ ևս ընդ քօղով արկանին
լուութեան։

Զրդ առ 'ի յայտ յանդիմանութեամբ պարզել զայս
տրամախոհութիւն, և առ 'ի զղջացութիւն մտացն փա-
րատել, ձեռն ինձ տացէ գեղեցիկն այն նմանաբերու-
թիւն աստուածայնոյն Զէոստինոսի. "Զէ դուք,
ասէ, բոյս մի կամ թուփ մի փշալից յոյժ առէք կորզե-
ցէք 'ի հողոյ, և զարմատն նորա 'ի ձեռս առեալ զնե-
ցէք։ Ցեսանէք դուք զնա նիւթ լերկ, ողորկ, անփուշ,
կակուղ և քնքուշ այնչափ, զի և գրգան մատունք 'ի շո-
շափել զնա. այլ սակայն խուռն փուշք որ 'ի վեր երևին
'ի բուն անդր նորա, և մի զինի միոյ ընդ ամենաձիւղ
ոստն ձարակեալ հարկանեն և խոցեն զքեզ յանզգոյշ
լինել քո, այն փուշք ասեմ 'ի կակուղ յարմատոյ ան-
տի որ ոչ իւիք տանջեաց զքեզ՝ ունին զծագումն իւ-
րեանց։ Այսպիսի են, ասէ, մարդք անժուժկալք և
հեշտասէրք. արմատք փշոյ են նոքա.,։

Եթէ միայն անուանցն միտ դիցես և կերպարանին,
և 'ի նոսին միայն յանկեսցիս, 'ի տիպս միայն արտաք-
նայարդարս ընկերական ախորժակացն, քաղաքավարու-
թեանցն, փոխադարձ կենակցութեանցն, ընտանի զրու-
ցացն և մտերիմ այցելութեանցն, չիք ինչ որ հարեալ
խոցեսցէ զխիղճ մտաց երկիւղածացն։ Այ՛ զիրգք են
եղանակն, ախորժականք, քնքուշք և քաղցունք են
բարբառքն և կենակցութիւնք. այլ չէն ինչ մեղանչա-
կանք. արմատք փշոյն են այդոքիկ, կակուղք և նօսրունք
և գողտրիկք։

Այլ դու ուշիմ լեր. դարձո միանգամ զաչս և յոստսն
և 'ի բունն ուր խռնեալ կան փուշքն, որ յարմատոյ

digitised by A.R.A.R.@

անտի 'ի վեր գան։ Վշալից ոստքն արմատոյն այնորիկ՝ են անմաքուր մտածութիւնք, զգայական հաճոյքն, խանդքն, իղձք և ցանկութիւնքն՝ որ գոգցես անմեկնելիք են յայնպիսեաց կենակցութեանց։ Վշալից ոստքն արմատոյն այնորիկ՝ են վտանգաբեր հնարագիտութիւնքն, զոր յաճախ 'ի վար արկանեն սանձարձակ գնացիւքն, կամաւոր պչրանօքն, սրտակալթութեամբն, առ 'ի յանկուցանել և 'ի խոտորեցուցանել զսիրտ օտարին։ Վշալից ոստք արմատոյն այնորիկ՝ են կատակքն, զրուցատրութիւնքն, հոմանձայնութիւնքն բանից և բայից, անելեկեան մտերմութիւնքն, անզգոյշ ազատութիւնքն, յորս ձարակի և սերտի և զայրանայ անխորհուրդն այն և մոլին՝ սէրն ախտաւոր։

Այլ քանզի կոյրք եմք և զաչացուք 'ի մահահոտ յայն ձարակսն և 'ի խայծսն, քաջ իսկ այնուհետև կուրանամք և 'ի մահաբեր պտուղսն կրիցն այնոցիկ։ Յաւելումն և ևս, եթէ և վասն այնորիկ ժտիմք ևս ոչ կամիլ ձանաչել զգերութիւն կրիցն և զչարութիւն։

Քանզի եթէ ինձ թոյլ տայք, տեարք իմ, ասել եթէ իցեն ոմանք (սակայն և ոչ ինչ կարծեմ, և ոչ ընդ միտ անգամ ածեմ) եթէ իցեն ոմանք աստանօր յակումբ քարոզութեանս այսօր, որ զբաղցը լուծ զուրբ երկիւղին Աստուծոյ թօթափեալ յանձանց, սկսեալ ևս իցեն փոքու ինչ անձնատուր 'ի մտրմին լինել, և 'ի քաջառոյգ երիտասարդական տիս կենաց՝ ընդ հաճոյս անձին ազատաբայլ զրգիլ և հեշտանալ, ապէ յուշ միանգամ ածցեն նոքա զյարդն և զվարդն և զսէրն՝ զոր երբեմն ունէին նոքա յաղագս պարկեշտ և ամիտի քաղաքավարութեանն և գեղեցիկ առաքինութեան մաքրութեանն. քանիօն էր երբէք, և քանիօն իցէ զարդիս. յուշ միանգամ ածցեն և զամօթ կրեսցեն։

Այլ իսկ ըստ նոցա՝ առաքինութիւնդ այդ, այնչափ ինն գիրգ առաքինութիւն և դիւրաշնասելի, զի և իղձ մի անձահ և անտպաւոր, և խորհուրդ մի անզգուշացեալ, և հայեցուած մի անխորհուրդ և անքթիթ, և համարձակութիւն մի, և կատակ մի ևս, համարէին նոքա՝ եթէ մթար և ստուերածս ածիցէ առաքինութեանն այնմիկ։ Այս և պահպանութիւն զգայարանացն, և փախուստ յառթիցն վտանգաց, և երբէք երբէք մեռելու-

digitised by A.R.A.R.@

թիւն մարմնոյ, թուէին նոցա անշուշտ իբրև պէտք կա-
բևորք և թումբք և պատնէշք 'ի պահել ամբիծ ան-
արատ իւրաքանչիւր զիւր ամուսն, և 'ի հոգի սրբութեան
սերտել զգիւրեղծանելի հոգն։ Եւ ա և ամենայն եղանակ
յանցաւորութեան՝ որ զառաքինութիւն զայն արատէր,
գարշելի յոյժ էր յաչս նոցա. և սրտի տարգնապէսութիւն՝
իբրու սեղանակապուտք իմն լինել նոցա պատուական
անօթոց սրբութեան պատրաստելոյն 'ի փառս՝ 'ի հա-
ղորդութիւն հարազատութեան ամենասուրբ մարմնոյն
Քրիստոսի։ Եթէ յոյսիկ էին, եթէ երբեք յուշ ածցեն,
այսոքիկ նոցա տրամախոհութիւնք գեղեցիկք երբեմն
յաղագս առաքինութեան մաքրութեան։ Եւ բա՛յլ բա՛բէ
ոգեկոծան փոփոխութեանն. այն ինչ մուտ 'ի սիրտ
գտեալ այսոյն անմաքրութեան՝ այնպէս արագ արագ
վերբ 'ի վայր եղծ և խանթարեաց միանգամայն և զպատ-
կերս առաքինութեանն և զպատկեր մոլութեանն։

Որ առաւել վտանգաբեր կենակցութիւնքն իցեն,
այնոքիկ թուին այժմ իբրև բարեկամական ընտանու-
թիւնք. և որ արձակերասան ազատութիւնքն են՝ իբրու
երիտասարդական թեթևութիւնք, և որ առաւել ամե-
թալի մեղքն իցեն՝ իբրու դիւրասահութիւնք անխու-
սափելիք մարդկային տկարութեան՝ նեղողութեան ար-
ժանիք։ Սակ զգուշաւորութիւնք գեղեցիկք, և պատկա-
ռանք, և ամենիմաստութիւնք, համարին այսօր իբրու
ապիկարութիւնք մտաց և գձձութիւնք ոգւոյ, իբրու
կանխակալ դատմունք՝ հասակին, իբրու հեռեւանք և
պտուղք՝ կամ թանձու իմն դաստիարակութեան կամ
ՀՂՁԻՄ բարեպաշտութեան։

Եւ՛ սաղ բախտին, ահա յոր կէտ հասեալ ժամանեցին
ապերասան կիրք, մինչև վայրիկ մի ևս վերբ 'ի վայր
շրջել և զբնութիւնն ինքնին զիրայն. և զանամեթ
լիութիւնն՝ իբրև գործ արդոյ և պատուելի 'ի գովու-
թիւն առնուլ, և զյայտնի գայթակղութիւնն՝ պան-
ծանօք ևս յերևանի կացուցանել. և որպէս աստուա-
ծային առաքեալն ասաց, յորմէ ակնկոծելն պարտ էր,
իբրև հանդերձ շքոյ զանձամբ արկանել. "Որոց, ասէ,
փառքն՝ ամենեն իւրեանց։"

Եւ՛ անդի և այս ինքնին է կնիք և դրոշմ ախտիս այսո-
րիկ՝ զորմէ բանքս են, զի զծագումն իւր և զսկզբունն

digitised by A.R.A.R.@

և զնարական և զպղծան և զչարութիւնն՝ որպէս կան-
խեցի ասացի՝ ծածկէ 'ի նոցանէ, որ միանգամ նովա-
վարակեալքն իցեն։

Իսկ որ առաւել վտանգաւորն, յաւելից ասել։ Արդ
որ 'ի կրից ասոտի գերեալ է, ցանգ 'ի խաբանս կայ և 'ի
կուրութեան. փակեալ են աչք առ հետևանս և առ
անկարգութիւնս ախտին։ Համարիցիս թերևս ոմ-
մարդ, եթէ բաւական իցես 'ի ջափու և 'ի սահմանի
պահել զնա միշտ ըստ կամի քում. զի մի ինչ մոլեսցի նա
կամ 'ի ծածուկ կամ 'ի յայտնի գայթակղութիւնս։
Այլ ես զհակառակն ասեմ. եթէ նա ինքն առեալ
ձգեսցէ զքեզ անդր քան զսահմանն, զոր ոչն կարծէիր։

Այս այս էր աղաղաւ։ Անզի առիթք բորբոքեն
զարդէն տապացեալ զիրգն. և 'ի գալ հասանել դէպ
ժամանակին, գտանիցես դու յայնժամ յերևան եկեալ
զծածկեալն 'ի սրտի քում չարութիւն. որ նկուն 'ի փոր-
ձութենէն եղեալ զլեսցէ զքեզ յանհնարին յանցաւո-
րութիւնս։

Վա՜հ, ո՞չ և նա որ ոչ դուշնաբեալ զք այր, այլ զոր
սիրան՝ սիրտ Աստուծոյ, որպէս ինքնին Աստուած
վկայեաց անձնառելի գովութեամբ, նկուն գտաւ 'ի փոր-
ձութենէն։ Զինչ ասես. համարէր թերևս այնպիսի
այր արձակերասան այնչափ լինել 'ի կեանս իւր, մինչև
զառագաստ օտարին պղծել, մինչև և յարիւն անմեղին
զձեռն իւր շաղախել քաջանելի մատնութեամբն։ Տե-
սանէս, յոր չափ մոլութեան կիրք ցանկութեանն Աստ-
ուածայ եռուն մնաբերել նման։

Դարձեալ և որ այնչափ խմաստուն էր 'ի վեր քան
զամենայն մարդ առ յԱստուծոյ խմաստութեամբն, զինչ
կարծես՝ արդեօք ընդ միտ անգամ անկեալ էր նորա յետ
ժամանակաց այնչափ ինչ իգանալ և յանհնարինս անկղի-
տանալ, մինչ և 'ի ծայրն հասանել անօրէնութեան 'ի
կռապաշտութիւն։ Այս սակայն կիրք ցանկութեան յի-
մարեցուցին զիմաստութիւն նորա։

Զաև հնացեալքն աւուրքք չարութեան, հարք և
դատաւորք կարգեալք յԱստուծոյ 'ի տեսչութիւն ժո-
ղովրդոց, կասկածէին ինչ թերևս զանձանց՝ յաւուր
միում այնչափ ինչ վայրենանալ, զի և դարանակալ և
դաւաճան լինել սատուոյ և անմեղութեան և կենաց

digitised by A.R.A.R.@

գլխովին պարկեշտին Շ ուշանայ։ Ի՞հաւասիկ յայն սահման ձգեցին կիրք ցանկութեան անապատին։

Ի՞յլ զինչ պէտք վաղնջուց բանիցն իցեն, տեսարք իմ, և սարսափելի օրինակացն. լի է աշխարհ այնպիսեօք, որ միշտ 'ի խաբանս կան. քանզի հանարին զանձինս բաւական 'ի չափու և 'ի սահմանի պահել զկիրսն զայն։ Սակայն գերիք են հիւթացեալքն, նաև 'ի շլացութիւն հատեալ են չտեսանել զսահման անձանցն, յոր ածեալ ձգեցան 'ի կրից անտի։ Ի՞նչ ոչ սատանա մնրգարէն, "Ի՞նքարձ, ասէ, զաչս քո, և տես. ուր ոչ պղծեցար 'ի Հանապարհս քո"։ 'ի քանի անապրգութիւնս գետնաքարշեալ ընդ երկիր, քանիցն առակ նշաւակի, 'ի քանի գայլս, 'ի քանի մորուս։

Լդղեր դու թերևս 'ի միտս աներկեանս, ո՞վ մարդ, եթէ երբեք չհասանիցէ քեզ լինել 'ի հրապարակս գոյժ մեղաւորաց, և ահա գտանես զանձն քո յայնպիսեաց անտի։ Հրահանգ հաւատոցդ, և գաստիարակութիւնն քաջ, և պատիւ անձին, կարծեցան քեզ զօրավիղն և ամրութիւնք՝ աննկուն մնալ քեզ 'ի կրից յոր ըմբռնեցար. այլ տեսանես աւադիկ դու ինքնին զասասնել ամրութեանցդ յերեսաց արձակերասան գնացիցդ։

Ի՞նչ դու վայր մի հայեաց 'ի ծաղումն և 'ի Հարանումն յաղթական կրիցդ։ Ա՞վ զիա՞րդ Հնմարտութեամբ սասց սատուածայինն Գրիգորիոս, եթէ "Յունայնասիրութենէ յանիրաւութիւն անդր ձգեցան միտք. և սովորեալ զառաջինն՝ յախոս մանուն և 'ի թերեաս, տակաւ առնուն առեալ 'ի յանցանացն՝ յօրացաւ և տիրացաւ 'ի չարութեան"։ "Յունայնասիրութենէ, ասէ, յանիրաւութիւն"։ Ա՞յ ահա զբեզ 'ի սկզբանն բնաւորական իմն թերեւութիւնք կամ երկիտասարդական աշխոյժք առեալ ձգեցին գործել իրս իմն՝ յորոց զանգիտելն մանաւանդ պարտ էր վասն հեռեւանացն։ Ա՞յդ տարապայման յարդ և զարդ անձինդ, այդ փափկաղդեաց կիրք, այդ սէր հանդերձից, այդ հանապազ օրեայ անձնացոյց կիրք, և կենակցութիւնք այդչափ համարձակք. այդոքիկ աւադիկ սկզբունք ունայնասիրութեան՝ եղեն սերմանք անիրաւութեան. "Յունայնասիրութենէ յանիրաւութիւն է Հանապարհն"։ Ի՞անզի անդուստ մնա գտանեն 'ի միտս ազգ ազգ

digitised by A.R.A.R.@

զգայական պատկերաց, որ ի՝ջանելով 'ի սիրտ անդր և ջեռուցանելով զնա, ախորժակ իմն ծնանին 'ի ներքս՝ որ մնանի և աճէ և 'ի փոխադարձ ընտանութիւն մտաբերէ, ապա և յանձուկ սրտի և 'ի խանդ, և հետ զհետ զօրացեալ ստէպ ստէպ այցելութեամբն, ընդ երկար զրուցասրութեամբն, ներքին մտերմութեամբն, և անձահ ազատութեամբն, յեղափոխի 'ի կիրս։

Իսկ այն կիրք՝ որ 'ի սկզբանն ակնածէր և պատկառէր և ծածկէր զանձն, յետ այնորիկ հանդգնակեալ և լրկնեալ՝ 'ի վայր զդիմանին առնու, և 'ի գործ անդր ևս յայտնապէս ժամ։ Իսկ ապա այն գործք 'ի կրից անտի առաւել յօրացեալք՝ յանձամեն և բաղմապատկին, և 'ի սովորոյթ յեղափոխին։ Իսկ սովորոյթդ այդ անդուլութեամբ գործադարձ 'ի մեղն առնելով, երես ինչ չանի այնուհետև խղճի մտայն. և ընդդէմ գառնայ ամենայն հնարից դեղոցն զգաստութեան և առ Աստուած դարձին և փրկութեան անձին։ Եւ այնպէս զողորմելին զայն գերութիւն 'ի ներքս բերէ հոգւոյն, յորմէ կապեալ իբրև անլոյծ կապանօք՝ գտանէ մարդ այնուհետև զանձն իւր անդերծանելի 'ի չարեաց։ Զանդի "Յունայնասիրութենէ յանիրաւութիւն, ասէ, ձգեցան միտք. և սովորեալ 'ի յանցաւորութիւնս մանուանս՝ տակաւ անուանն առեալ մեղայն՝ տիրանայ 'ի չարութեան ..։ Օ ինչ այնուհետև շահ ինչ օգտի, թէպէտ և 'ի վախճանի անդ ծանիցէ մարդ ճշգրիտ զբռնութիւն կրիցն, որ գերեաց զնա։

Զանդի և ոչ ուղղութիւն ինչ 'ի ճանաչմանէն յայնմանէ պտղաբերեսցէ երբէք, և ոչ զանարգութեան զլուծն զծանրն բաւական իցէ թօթափել յանձնէն այնուհետև։ Զնդէր. լուր աւադիկ։ Զանդի զայդ կիրս՝ ոչ միայն չճանաչէն որք նոքանն վարակին՝ որպէս ասացի առաջին, այլ և թէպէտ և ծանիցեն՝ ոչ դարձին յայնմանէ, որպէս ասացի երկրորդ. զոր և արդ կամ աւադիկ առաջի յայտ յանդիմանութեամբ ցուցանել սիրեցեալդ։

digitised by A.R.A.R.@

ՄԱՍ Բ ·

Պանդի հոգի որ յանմարդութեան կրիցն միանգամ ընկնեալ իցէ և գերեալ, և 'ի պատճառս հեշտախտութեանն նաև 'ի խելացն անկեալ իցէ, յոչինչ այլ իրաց այնուհետև այնչափ ատելութեամբ խորշի և տեղի տայ, որպէս 'ի պատճառաց և 'ի հնարից գեղոցն՝ որ յանկաւորքն իցեն 'ի զգաստութիւն ածել զնա։ Այս է զոր անզեղծութիւն կամաւոր կոչեմ ես անմարդութիւն։ Այր աղագաւ և 'ի վկայութիւն ճշմարտութեանն բանիս կարդամ դարձեալ զայնոսիկ՝ որ միանգամ գիտակցութեամբ մնացն տանջին յայսոսիկ՝ 'ի սովոլոյթս և 'ի փորձառութիւնս անձանց։

Օրէ, ասասցեն մեզ վայր մի, զի է զի խորհուրդն ապաշխարութեան՝ զոր նոքա յառաջն ազատ գոլով յանմարդութեան կրիցն՝ 'ի գործ վարեին բազում անգամ այնչափ հեշտեաւ և քաղցրութեամբ, զարդիս իբրև բեռն անտանելի թուի նոցա և իբրև ահագին ինն խաչանդանք խղճի մնացն։ Խորհուրդ ամենասուրբ սեղանոյն, յոր բազում անգամ մերձեալ այնչափ փափաքանօք և քաղցրութեամբ ընդունէին նոքա, զի է զի զարդիս իբրև ճնշակ անսխորժ անհամացեալ է 'ի քիմն սրտից նոցա։ Պարզութիւն և լուր բանիցն Աստուծոյ, զոր երբեմն սքանչելի ախորժանօք լսէին նոքա, զի է զի զարդիս տաղտկալիք են նոցա, և զարհուրանս ևս 'ի ներքս բերեն նոցա, իբրու որ կշտամբիչք են անսաչառք՝ միանգամայն և ախտին և ախտակրելոյն։ Զօթք հասարակաց եկեղեցւոյ, և աղօթակացութիւնք առանձին, որ միակ միջնորդք և պատճառք են 'ի զգաստութիւն և 'ի դարձ նոցա, զի է զի զարդիս աշխատութիւն մեծ թուի յաչս նոցա, և իբրու զուր ջան, և անօգուտ վաստակ, և յոչինչ պիտանացու։ Եկեղեցի, զոր յառաջն սիրէին այնչափ և յաճախէին և պաշտէին այնչափ, զի է զի զարդիս օտարացեալ է առ նոսա, և հազիւ երբէք յամոյ յամիս, կամ ամ յամէ կոխեն զսեամն նոցա։ Եւ զամենայն ասել· որ ինչ ա-

digitised by A.R.A.R.@

սուսածայինքն են, որ ինչ փրկարարքն են հոգւոյն, ոչ
ահա զարդիս այն ամենայն են առ նոսա իբրու անխարա-
կանք ինչ, կամ տաղտկացուցիչք, կամ յընչաց քերելիք,
և կամ սատելիք և։

Նշանեն եօթնեակք, անցանեն ամիսք, անցանեն
և ամք, և այնպէս հովացեալք և ցրտացեալք 'ի բաց
կան նոքա 'ի խորհրդոյն եկեղեցւոյ մերձաւորութենէ,
և այնպէս զամենայն հոգ զհոգւոյն, զամենայն փոյթ
զիրկութեան անձին, զամենայն սէր և զիսորհուրդ վասն
Յուսուածոյ, հիրացեալքն 'ի բաց եղեալ են, զի մի յան-
կարծ զգաստացին, 'ի պատճառս դժնդակութեան
կրիցն՝ որք անձողպրելի զերի վարեալ են զնոսա, և
կապեալ ընդ անանրբական հեշտալիսն զգայութեանց։

Յայլ զայս անբակաելի կապանս զմահագոյժ զերու-
թեան նոցա՝ յանզեղջ և յանապաշխար կեանսն՝ զոր
ասացի, առաւել ևս պարզ տեսցես դու 'ի նմին իսկ 'ի
զղջութեան և յապաշխարութեան նոցա։ Յասիկ քեզ։

Յնտածութիւնք մարդկայինք, նաև քաղաքական
խորհրդածութիւնք, և թէ ոչ և այլ ինչ, թուրակի ինն
խայթ խղձին, և կամք և իղձ ամուլ և անպտղաբեր առ
Յուսուած դարձին, յորմէ չեն գլխովին անբաժք, որ
միանգամ չեն անբաժք 'ի հաւատոյն իբրեանց դաւա-
նութենէ. այս ամենայն է զի առեալ ձգեն զնոսա յե-
կեղեցի առ ոտս հայրց խոստովանութեան։ Յայլ քաջ
միտ դիր աղաչեմ ասասանօր՝ կշռել անաչառ զիղձ և զյա-
ղուսին նոցա առ մեղսն՝ զոր ցուցանեն 'ի նմին իսկ յա-
պաշխարութեան և խոստովանութեան և 'ի դարձին
իբրեանց։

Այսպէս՝ հայրք խոստովանութեան իբրեանց ընտրեն
զայնպիսի որ, զոր հանդերձ լինել կամ ոչ 'ի քաջ գիտ-
նաւորաց, կամ որ առաւել ապիկար իցէ և անբաւական
'ի դարմանս բժշկութեան ախտին՝ որով վարակեալք
են։ Ա՛հ, ասասցես ուրեմն, և առաւել վա՛հ, յոչինչ
այլ իրաց ուրեմն այնպէս փախչին և զանգիտեն դոքա,
բայց 'ի բժշկութենէ։

Իսկ թէ և զիղձ ևս բժշկութեանն ցուցանիցեն,
զվինակ հոգւոյն իբրեանց ոչ բացերևանէն առակեն ա-
ռաջի բժշկին։ Յանգի թէպէտ ծանուցանք ևս իցեն
մեղքն, ծածկեն զթիւ մեղացն, ծածկեն զտեսակն,

digitised by A.R.A.R.@

ծածկեն զՀանգամանսն կարևորս։ Այլ թէ և ասասցեն և ինչ, սակայն չասեն զՀանապազորդելն իւրեանց 'ի նոցն։ Այլ թէ և ասասցեն զսովորելն իւրեանց 'ի մեղսն, սակայն զգուշագոյնս ծածկեն զմեղաց առիթսն, զորս սիրեն տակաւին և յորս միջամուխ են տակաւին։

Իսկ եթէ և աչալրջութիւն խոստովանահօրն և հարցաքննութիւնն 'ի վեր հանցէ զծածկեալսն, սակայն չլինին նոքա անձնանուէրք 'ի դարմանս ախտին բժշկութեան. համարին նոքա զայնոսիկ զժուարինս յոյժ 'ի գործ, նաև ոչ խոհեմութեամբ առաջարկեալս 'ի խոստովանահօրէն, նաև անկարութիւն և կցկցեն նոքա 'ի կատարել զայնոսիկ։

Այլ թէպէտ և զի յանձն և առնուցուն զդեղն, այլ կասկածոտ սրտիւ և երկմտութեամբ 'ի գործ վարել ստուգիւ։ Այլ թէ և հաստատեսցեն և 'ի միտս 'ի կատարել, սակայն 'ի գործ անդր եկեալ՝ տաղտկան և 'ի բաց միանգամայն քքանեն և զդեղն և զբժիշկն։

Լասիկ ձեզ, քրիստոնեայք, Ճշգրիտ տիպար մնախաք ապաշխարութեան՝ որոց յանմաքրութեան ախտէն ըմբռնեալ իցեն։ Ապաշխարութիւն, յորում երկուց ինչ իրաց փորձառութեամբ քաջիկ խելամուտ լինին հիքացեալքն. այս է՝ զի 'ի բաց մերժելով զդեղն պատրաստեալ վասն նոցա, միանգամայն և զախտն իւրեանց Ճանաչեն, միանգամայն և 'ի ծանուցեալ ախտէն չգարշին։

Այս աւաղելի վիճակ է սիրողացն անմաքրութեան։

Այլ մեք 'ի գործոյն 'ի պատճառն 'ի վեր ելանելով, հարցանեմք այժմ. ընդէ՞ր այնչափ անՃողոպրելի շաղին սիրտք ընդ կիրսն ընդ այնոսիկ։ Լաղիկ պատճառն՝ զոր ահագինս բայց և Ճշգրտիւ ասաց մարգարէն. "Լէ տացեն, ասէ, զխորհուրդս իւրեանց դառնալ առ Աստուած ,,, ոչ. ընդէ՞ր. "քանզի ոգի պոռնկութեան, ասէ, է 'ի մէջ նոցա ,,։ Ինքնին անմաքրութեան հոգին, ասէ, միանգամ մուտ գտեալ 'ի մարդն՝ փոխանակ հոգւոյն մարդոյ ինքն տիրանայ 'ի նեղքս, և իբրու այն թէ ինքն հոգիացուցանէ զնա, և տանի բերէ և շարժէ վարէ զամենայն նեղքինս նորա և զարտաքինս՝ որպէս և ինքն կամի։

Զ արժէ այս հոգի անմաքրութէ զերևակայութիւնն, և բիւրուք ինն անմաքուր ցնորիւք ընու և խօլացուցանէ

digitised by A.R.A.R.@

զնա։ Իսկ այս ցնորք յուզեալք 'ի տուէ, ոչ հանդարտեն 'ի գիշերի. այլ որպիսիք շարժին յարթնութեան, նոյն-պիսիք դարձեալ երևութանան յերազի։

Շարժէ այս հոգի անմաքրութեան և տիրանայ մտաց մարդոյն, և ոչ յայլ ինչ խորհուրդս առեալ դեգերեցու-ցանէ զնա և զբօսեցուցանէ, բայց 'ի նիւթականս և 'ի զգալիս։ Իսկ այս խորհուրդք այնչափ ինն գերեն զմիտս, զի և ոչ այլոց ինչ մեծամեծ գործոց և հոգոց աշխարհի երբեք միտ դնեն, և ոչ տեղւոյ և ժամանակին և անձին, նաև ոչ տաճարաց և վայրաց սրբութեան երես առնեն։

Շարժէ և տիրանայ այս հոգի անմաքրութեան մտնաւանդ 'ի սրտի. և հեղձուցանէ և շիջուցանէ 'ի նմա միանգամայն զամենայն յորդորակս և ազդեցութիւնս հնորհացն Աստուծոյ. և սիրով զգալեացն և հեշտալեաց սպառէ ծախէ 'ի նմա զամենայն իղձս գովելիս և զգեղեցիկս բնութեան։

Շարժէ վարէ այս հոգի անմաքրութեան ըստ կամի և զախորժակս մարդոյ. քանզի և ամենայն բնաւորականս կիրք նորա 'ի հոգւոյ աստի անմաքրութեան իբրու յանագորոյն բռնաւորէ ձգին և կառավարին. եթէ յոյս, եթէ երկիւղ, եթէ նախանձ, եթէ նախանձաւորութիւն, եթէ ատելութիւն, եթէ անարութիւն, եթէ յանդգնութիւն. այս ամենայն կամ 'ի հաճոյից մարմնոյն յառաջ գան, կամ 'ի հաճոյս անդր մարմնոյն առեալ ձգեն։

Եւ այսպէս 'ի նեղքս 'ի մարդում բնակեալ հոգին անմաքրութեան, բառնայ 'ի նմանէ կամ թէ վատէ 'ի նմա միանգամայն զամենայն սպատճառս և զգօրութիւնս զդարձին առ Աստուած. քանզի ինքեցաւ, եթէ "Ոչ տացեն, ասէ, զխորհուրդս իւրեանց դառնալ առ Աստուած, զի ոգի պոռնկութեան է 'ի մէջ նոցա"։

Իսկ թէ երբէք և 'ի պատճառաց ինչ արտաքնոց, և առաջին՝ յողորմութենէն Աստուծոյ և 'ի շնորհացն Քրիստոսի ազատացեալ հիքացեալքն առ վայր մի 'ի բռնաւորէ աստի, մնաբերեսցեն 'ի ձշմարիտ ապաշխարութիւն և դարձեսցին ևս ստուգիւ յախտէն՝ զոր ծանեան, սակայն և ահագին յոյժ է սիրելիք երրորդն այն կնիք և դրոշմ ախտիս այսորիկ՝ զոր կանխեցի ասացի, և

digitised by A.R.A.R.@

զոր հասանէ ինձ այժմ յանդիման ցուցանել ձեզ. այն է՝ եթէ թէպէտ զարշեսցին և յախտէն, սակայն 'ի վերայ այսր ոչ ուղղեսցեն զանձինս։

ՄԱՍՆ Գ.

Պատճառս կրկին զօրաւորս յոյժ ունիմ ես 'ի հաստատութիւն առաջարկութեանս. առաջին՝ եթէ յայլ ամենայն մոլութիւնս չիք այնչափ դիւրեաւ և յաճախ վերստին անկումն՝ որպէս 'ի սմա։ Երկրորդ՝ եթէ և յայլ ամենայն վերստին անկմունս չիք այնպէս դժուարագիւտ կանգնումն, որպէս 'ի սմա։

Զ առաջնոյն ճշմարտութիւն թող վկայեսցեն անաչառ, որ միանգամ գիտակցութեամբ մնացն 'ի նոյն ախտ վարակեալն իցեն։ Սակ համանգամայն ընդ նոսա թող զնոյն վկայեսցեն հարք խոստովանութեանն՝ որք քաջ գիտեն։ Զի ահա 'ի պատճառս անդադար վերադարձին 'ի մեղսն՝ տարապայման ծանրաբեռնեալք և յոգիս ապաստան են նոքա 'ի սրբազան և 'ի ներողամիտ պաշտաման իւրեանց։ Զոր ասասցեն նոքա՝ զոր գիտեն քաջ. ոչ ահա 'ի պատճառս այնպիսեացն իբրու անաւագեալ ինն և իբրու վատեալ երևեցաւ իշխանութիւն փականացն կապելոյ և արձակելոյ, և իբրու նուազեալ արժէք և զօրութիւն ապաշխարութեան։ Զոր ասասցեն նոքա՝ զոր գիտեն քաջ. ոչ ահա 'ի պատճառս այնպիսեացն իբրու տեղի տուեալ և իբրու անբաժ յուժոյ վատեալ իցեն առատաձեռ շնորհք խորհրդոյն սրբութեան։

Զ բազումանգամ՝ զի առ փութոյ փրկութեան հոգւոյն ընթանան նոքա մնադիւր 'ի խոստովանարան անդրսակայն և տարակուսեալք են և սրտաբեկք և իբրու ամօթահարեալք 'ի դէմն և 'ի ձայնս իւրեանց և 'ի բացատրութիւնս մեղայն. և տեսանեն հարք խոստովանութեան յայնպիսեաց անտի առ ոտս իւրեանց անկեալս և սրտառուչս, և լսեն զի մեղաւորս մեծամեծս կոչեն զանձինս, և սկսանին առակել զգարշութիւնս իւրեանց և զվերս և զխղճայթս հոգւոյն. և հառաչս և թառաչս յոգւոց հանեն, և արտասուս ևս թափեն, և

digitised by A.R.A.R.@

նշանս եւս 'ի դէմս ածէն ընդունել ամենայն քաղցրութեամբ զամենայն յանդիմանութիւնս և զամենայն դեղ դարմանոցն՝ զոր պատուիրեսցէն նոցա հարք խոստովանութեանն։ Զինչ զի և նոքին իսկ հարքն զորովին առ նոսա և զիւրեանցն ընդ նոցայն խառնէն զարտասուս. և այնպէս արձակեալ և խրատեալ և քաջալերեալ գնասա յանձն առնէն ընդ հաստատութիւն առաջադրութեան որդւոցն՝ կեալ ըստ կարի անարատ քաղաքավարութիւն։

Իսկ ապա զինչ. սակաւ մի ժամանակ կեան նոքա այնպէս զգաստացեալք, և յետ այնորիկ յուլացեալք 'ի բաց թօթափեն յանձանց զամենայն խրատս զոր լուան. և որպէս յառաջն՝ միւսանգամ 'ի նոյն առիթս մեղացն թարթափեալք՝ դառնան յառաջին փսխածն։

Իսկ 'ի գալ հասանել կամ զատկին կամ այլ ինչ նշանաւոր տօնախմբութեան՝ փոքր փոքրէն միւսանգամ զապաշխարութեան, դիմեալք առ ոտս հարց խոստովանութեան։ Զայլ թէ որպիսի ինչ արդեօք խոստովանութիւն այն իցէ, անկեղծ արդեօք և 'ի սրտէ, կամ թէ խաբէութեամբ և սեղանակատութեամբ, այս ինչ անշուշտ է՝ զի դարձ առնէն նոքա միւսանգամ 'ի մեղս։

Զայս աւասիկ է վիճակ, զոր ՀՀզբտեաց աստուածային բերանն վասն ըմբռնելոցն յայսոց ասաի պղծութեան. որք առ վայր մի զգաստացեալք և անկանին միւսանգամ։ "Յորժամ այսն պիղծ, ասէ, ելանէ 'ի մարդոյն, շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ և ոչ գտանէ. յայնժամ ասէ դարձայց 'ի տուն իմ, ուստի ելի.,։

Պէտք եւ առ վայր մի էլ, սակայն տուն իւր սեպհական կոչէ զՀոգին ունակացեալն յանմաքրութեան. ուստի և "Գտեալ գտանէ զնա մաքրեալ և յարդարեալ.,, այս է՝ կազմ և պատրաստ յընդունելութիւն իւր, և մնեալ բնակէ անդ հանդերձ այլ եւս եօթն՝ այսինքն բազում այսոքք չարութեան, որ ծնունդք են անմաքրութեան ախտին՝ յորմէ ըմբռնեցաւ. "Գնա լինի այնուհետեւ յետինն մարդոյն չար քան զառաջինն.,։ Զայս է զոր ասացի՝ եթէ յայլ ամենայն մոլութիւնս ոչ միայն չիք այնչափ հեշտեաւ և յաճախ վերադարձ 'ի մեղս՝ որպէս յանմաքրութեան, այլ և յամենայն վերադարձս մեղաց չիք կանգնումն և ուղղութիւն այնչափ

digitised by A.R.A.R.@

գժուարագիտ, որպէս 'ի սմա. ուստի և լինի, ասէ, յետինն մարդոյն չար քան զառաջինն։ Զ.յս է՝ որով հետև անկանի միւսանգամ՝ և կանգնի միւսանգամ՝ անկանի դարձեալ և դարձեալ կանգնի, և կեանք նորա ողջոյն են դարձադարձ գլորումն և կանգնումն. իսկ ապա 'ի յետնում գլորմանն հասարակ կարգաւ մնայ անկանգնելի. "Լինի, ասէ, յետինն չար քան զառաջինն,,։

Զանգի հոգի ունակացեալն 'ի մեղս՝ օր քան զօր նուազեալ գտանի և անմասն 'ի կրկին մեծամեծ սկզբանց զգաստութեանն. առաջին՝ 'ի լուսոյն Զ.ստուծոյ, երկրորդ՝ 'ի խայթել խղճի մտացն։

Զ.ս տանջեն միտք զհոգին, քանզի անդուլ սովորութեամբն կորուսանեն միտք և զպատկեր և զգաղջութիւն մեղացն։ Զ.ծագէ և աստուածայնին լոյսն. զի ոչինչ յայլ ախտէ այնչափ գաղշի հոգի Զ.ստուծոյ, որպէս 'ի սմանէ. "Զ'ի մեռացէ, ասէ, հոգի իմ 'ի մարդիկդ յայդ, վասն լինելոյ դոցա մարմին,,. և թէ "Հո զի Զ.ստուծոյ, ասէ, ոչ բնակէ 'ի մարմնի վարեցելոյ մեղաք,,։

Զ.ասիկ ձեզ. սիրելիք, ողջ սկիզբն և աճումն և յառաջատութիւն և կատարած բռնաւոր կրիցս. կիրք՝ առաւել քան զամենայն կիրս ճարակեալ 'ի մարդիկ յամենայն իսկ 'ի վիճակս կենաց, յամենայն տիս հասակի, և յամենայն 'ի սեռս. կիրք՝ զոր ոչն ճանաչեն վարակեալքն նոքաւ, կիրք՝ յորմէ չգաղշին ճանաչողքն նորա. կիրք՝ զոր 'ի բաց չթողուն գաղշողքն 'ի նմանէ. . . .։

Իսկ զինչ ասա. 'ի յուսահատութիւն ուրեմն կրթեալ յանգեցան բանքն . . .։

Զ.ս այդպէս . . .։ Զուիցեն գերեալքն 'ի կրից ասի, զի թէ սրատաբեկեցան թերևս 'ի ճառիցս, սակայն և դիւրեաւ առցեն քաջալերս։ Զուիցեն, ասեմ, և զվերջին զայս ճշմարտութիւն. և որ այն իցէ . . .։ Ցակաւին նշան յաղթութեան անշուշտ կանգնեացեն նոքա նաև 'ի վերայ բռնաւոր կրիցս, եթէ միայն ճշմարտապէս կամեսցին։

Իձեռս քո ուրեմն կայ յաղթութիւն քո, ով մարդ . . .։ Սակայն լսեն նոքա զայս, և զինչ լեան այնորիկ։ Զ.նդէն բան ընդդէմ մեր զայս ասեն, "Զ.ս կարեմք,, . . .։ Զ.յս լեզու է հասարակ՝ որոց միանգամ 'ի կրից ասի

digitised by A.R.A.R.@

ըմբռնեալք իցեն . . . ։ Ա.յլ ես ասեմ. Օ ինչ արդեօք այն իցէ , այլ դու , զոր քեզն պատուիրեն և խրատեն իբրև 'ի դեղ դարմանոյ հիւանդութեան քոյ , զոր ա- սես ոչ կարել . . . ։

Ա՛չ զայն պատուիրեն քեզ հարք խոստովանութեան քո , թողուլ 'ի բաց լքանել զայն ինչ տուն ։ Պատուիրեն քեզ՝ կարձել զայն ինչ կենակցութիւն , զայն օրինակ մոերմութիւնն ։ Պատուիրեն և խրատեն՝ 'ի բաց փախ- չել յայն ինչ առեալ չարել , որ 'ի հեշտախտութիւն զքեզ հրապուրէ ։ Ա՛չ ահա այսոքիկ են , զոր ասես թէ ոչ կարեմ։

Ա.յլ սակայն կարէիր դու արդեօք , (ո՞չ իրաւ է բանս), կարէիր դու արդեօք զայդ , եթէ յանկարծ ուստեք սպառնալիք մեծապատ կայր 'ի վերայ քո մեծաց ինչ ա- զատից , կամ մահու օրհասիդ , կամ մեծի վատահամբա- ւութեան , կամ մեծի աղքատութեան ։

Ա՛սես թէ ոչ կարեմ. այլ սակայն կարէիր դու ար- դեօք , եթէ քո սեպհական տէրդ Ճոխաբար , կամ մի ոք յաւագաց և 'ի Ճոխից՝ յորոց ակն իմիք ունէիր , կամ իշխան քո ինքնին գլխովին հրամայէր քեզ զայդ ։

Ա՛սես դու թէ չկարեմ, այլ կարէիր թերևս՝ եթէ յանկարծ ապերախտութիւն կամ երեսգարձութիւն , կամ յընչաց քերել և նախատինք , կամ կասկած ինչ ձախողակ , 'ի մէջ անկեալ խանգար առնէին խանդիդ և բռնութեան կրիցդ , և յուշաբերել զքեզ զրդէին ։

Յ՚ արդ որ վասն այդոցիկ պատճառաց շարժեալ կա- րէիր դու 'ի գործ դնել զպատուիրեալն քեզ , ապէ դու ո՞չ կարասցես զայդ վասն Ա՛ստուծոյ միայն , վասն հոգ- ւոյ միայն , վասն յաւիտենականութեան միայն ։

Ա.յլ ես հնորհեցից քեզ , եթէ չկարես դու անձամբ անձին կատարել զայն ինչ , զոր 'ի քո դարման պատուի- րեցին քեզ ։ Ա.յլ զայն ուր թողցուք . ո՞չ ինչ յուշ արաս- ցես քեզ , ով սիրելի , և զօգնութիւնս և զզօրութիւնս զնորհայն Ա՛ստուծոյ . և մուտացնք լիցին քեզ 'ի սպառ մարգարէին սրտառուչ ձայնք . " Համբարձի զաչս իմ 'ի լերինս , ուստի եկեսցէ ինձ օգնութիւն . օգնութիւն ինձ 'ի տեառնէ եկեսցէ . տէր պահեսցէ զքեզ և տէր ընկալցի աջոյ ձեռամբն իւրով։ Ա՛յրեգային 'ի տուէ քեզ մի մեղիցէ , և մի լուսինն 'ի գիշերի ։ Տէր պահեսցէ

digitised by A.R.A.R.@

զմուտ և զել քո »։ Այլ թէ «Ամ կարեմ այլ ազգ ժուժ կալ լինել, բայց եթէ Աստուած տացէ »։ Յորժամ Աստուած հրամայէ քեզ 'ի դառնալ առ ինքն և միանալ ընդ նմա, այն յայտ իսկ է և 'ի հաւատոց է՝ եթէ և զօրութիւն տացէ քեզ 'ի գլուխ հանել զբանդ. և դիւրին գործեսցէ քեզ շնորհօք զայն ինչ, որ ինչ անհնար թուի բնութեամբ։

Այլ ասես, եթէ Ազգաս ինչ դու շնորհացդ այդոցիկ։ Իսկ ես կրկնեմ ասել, եթէ զգասցես անշուշտ, եթէ փորձ մի փորձեսցես աղօթիւք՝ կամել գործակից լինել շնորհացն։ Այնթէ զիրձդ վառեսցես 'ի քեզ. եթէ միայն ճշմարտապէս կամեսցիս, եթէ հաստատուն կացցես յառաջադրութեանդ, եթէ վայր մի 'ի բաց զյուլութիւնդ եդեալ, ապա սկսանիցիս ձեռն 'ի գործ վասն դարձիդ առ Աստուած։

Այլ ես զայն ևս շնորհեցից քեզ, զոր ասես. եթէ ահաւադիկ ապիկար գլխովին գտանես դու զքեզ 'ի սկսանել՝ առ պակասութեան շնորհացն . . . ։

Այլ աղէ և զայն ևս ասա, ո՞վ սիրելի, արդեօք ապիկար գտանիցե՞ս դու զքեզ նաև 'ի հայցելն և 'ի խնդրել քեզ զզօրութիւն Աստուծոյ և զզօրավիգ շնորհացն, և յասել միանգամ 'ի սրտէ, «Ոչ տուր տէր աչաց խնոց, զի մի երբէք ննջեցից 'ի մահ »։

Որչափ և ապիկար լցես, որչափ և հիւանդ և վիրաւոր 'ի կարողութիւնս հոգւոյդ, ողջ է բերանն, բաց են շրթունքդ բաւական 'ի մաղթել յԱստուծոյ զօգնութիւն։ Իսկ 'ի մաղթելդ լցե՞ս ինչ երկեան առնուլ զինդիրդ . . . ։ Այլ ո՞ւր կայցեն անսուտ աստուածային բանք, եթէ «Խնդրեցէք և տացի ձեզ. հայցեցէք և գտջիք »։ Այլ թէ «Որ խնդրէ, առնու. և որ հայցէ, գտանէ »։ Այլ թէ «Խնդրեսցէ յԱստուծոյ, որ տայն ամենայնի առատապէս և ոչ նախատէ. և տացի նմա »։

Անշուշտ է ուրեմն, եթէ կարես դառնալ թէ կամեսցիս. և յոչ դառնալն՝ անշուշտ է ուրեմն թէ ոչ կամիս։ Ո՞չ կամիս դառնալ. ընտրես դու ուրեմն 'ի գերութեան կալ բռնաւոր կրկին. կիրք անագորոյն թշնամի խաղաղութեան սրտի, ոխերիմ ապականիչ ամենայն բարեմասնութեանց մարդոյ, միանգամայն և քաջողջութեան, և պատուոյ, և ընչից, և կենաց։

digitised by A.R.A.R.@

Ո՞չ կամիս դառնալ. ընտրեա դու ուրեմն զոգի և զմարմին հանդգնամայն արկանել 'ի գեհեան, ուր որդն ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի։

Ո՞չ կամիս դառնալ, ընտրեա դու ուրեմն զվաղանցուկ հեշտութիւնդ՝ նիւթ յաւիտենական տանջանացն, առաւել քան զվաղանցուկ ապաշխարութիւնդ՝ նիւթ յաւիտենական բերկրանացն, և որ մորոսութիւն առաւել յեստամիտ կայցէ քան զայդ։

Զ.ԱԼ ասեա, եթէ Կամիմ Ճշմարտապէս դառնալ. սակայն յերկուացեալ եմ ես և զանգիտեմ՝ եթէ յաջողեցայց . . . : Իսկ և ես ասեմ. Յումմ՝ երկուացեալ է քո և զանգիտես. թերևս յԱ՛ստուծոյ, այլ Ա՛ստուած ինքնին է որ 'ի մերոց բերանոց կոչէ զքեզ առ ինքն և հրաւիրէ և Ճեպէ ևս 'ի դառնալ։ Շատ է եթէ պատրաստութիւն մի սրտի տեսցէ 'ի քեզ, և զամենայն թերին ինքն լցուսցէ շնորհօք իւրովք։

Զ.ԱԼ թերևս յերկուասցիս ընդ մեզ ընդ պաշտօնեայս նորա . . . : Սակայն մեք զօր ամենայն բազկատարած և զրկալիր փափաքանօք քեզ սպասեալ մնամք՝ բուժել զքեզ 'ի վերայ հոգւոյդ։

Զ.ԱԼ թերևս յերկուասցիս յանձնէ քումմէ. իսկ այդ յերկուանքդ միշտ է գովելի և սուրբ, այլ և կարևոր. սակայն յետ միանգամ դարձին քո 'ի մեղայ և յետ ապաշխարութեանդ։ Դարձիր դու միանգամ առ Ա՛ստուած, և ապա միշտ յերկուացիր յանձնէդ, զի այնպէս միշտ կացցես հաւատարիմ առ Ա՛ստուած։ Դարձիր դու առ Ա՛ստուած, և միշտ զանգիտեա յանձնէդ. զի այնպէս աներկեւան զՀետ ընթացցիս հլութեամբ հոգևոր առաջնորդիդ և փրկաւէտ խրատուց հօր խոստովանութեան քոյ։ Զ.այս է առաջին Ճանապարհ հանապազորդութեան 'ի բարին։

Դարձիր դու միանգամ առ Ա՛ստուած. և յետ այնորիկ յերկուացիր միշտ յանձնէդ. զի այնպէս յաջողեսցի քեզ միշտ դիմել առ Ա՛ստուած, և առ միակ ապաւէն փրկութեան մերոյ առ Տիրամայրն։ Զ.այս է երկրորդ Ճանապարհ հանապազորդութեան 'ի բարին։

Դարձիր դու առ Ա՛ստուած, և այնուհետև միշտ յերկուասցիս յանձնէդ. զի այնպէս կացցես դու միշտ պատրաստ և զգոյշ յամենայն աւթից մեղաց։ Զ.այս է

digitised by A.R.A.R.@

երրորդ Ճանապարհ հանապազորդութեան 'ի բարին։

Զորդ ուրեմն դարձիր դու միանգամ առ Աստուած, ոչ սիրելի, և միշտ յերկուացեալ յանձնէդ՝ առ Աստուած միայն ապաւինեսցիս, մաղթեալ 'ի սրտէ՝ եթէ դարձո զիս տէր և դարձայց առ քեզ. և կամեաց տէր փրկել զիս և փրկեցայց, և զի և ոչ կարեմ այլ ազգ ժուժկալ լինել, բայց եթէ Աստուածդ իմ տացէ։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐՈՅ ԻՐ·

ՅԱՐԳՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՏԱՃԱՐԱՅ

« Գրեալ է , տուն իմ տուն աղօթից կոչեսցի . և դուք արարէք զսա այրս աւազակաց » :

Ի հոյակապ տաճարիս Աստուծոյ , զոր հաւատն կանգնեաց , և յոյսն ամրացոյց , և զոր սէրն հանապազ բարգաւաճ ծաղկեցուցանէ 'ի բարեպաշտել աստանօր համագումար խմբելոցդ զոր ամենայն , յերեկոյս , 'ի վաղորդայն , և 'ի հասարակ աւուր , 'ի վերայ այսր՝ ո՞ զիս անարժան յանդգնիլ կացուսցէ , եթէ և ոչ աստանօր յաւուր միում տէրն և փրկիչն խարազան սոսկալի 'ի ձեռին երևեսցի յայսկոյս յայնկոյս տուեալ զՀարուածն , և զամբոխս մեր զայս առ հասարակ փարատեալ վարեսցէ արտաքս ։ “Այլ եհան , ասէ , զամենեսին արտաքս 'ի տաճարէն , և ասէ . գրեալ է , տուն իմ տուն աղօթից կոչեսցի , և դուք արարէք զսա այրս աւազակաց .,, ։

Իսկ ընդէ՞ր ասպա այս , սիրելիք ։ Ո՞չ հոյակապ է տաճարս , արժանի ըստ կարի մեծվայելչութեանն Աստուծոյ . ո՞չ հաւատով կանգնեցաք զնա , ո՞չ և օրըստօրէ համախմբեալ յուսով 'ի սմա աղօթեմք առ նա , ո՞չ և սիրով հանապազ սպասս հարկանեմք 'ի պիտոյս սորա , զի մի՛ ինչ խրթնասցի 'ի բարեզարդութենէն ։ Այլ ոչ ընդ հոյակապութիւն տաճարին հայի ինչ Աստուած , ոչ ընդ փայլ պայծառութեան ոսկոյն , ոչ ընդ բարե-

digitised by A.R.A.R.@

զարգութիւն խորանայն, և ոչ հանապազօրեայ խոնարհութեանն երեսս ինչ առնել Աստուած։

Աղէ դու զարձո միանգամ զաչս 'ի պատմութիւն աւետարանին. ասա ինձ, ո՞ւր եմուտ Քրիստոս. ուրանօր շուրջ հայեցար բարկացայտ, ո՞ւր շարժեաց զխարազանն . . . : ՅԵրուսաղէմ՞ի մեծն, 'ի տիեզերահռչակն տաճարի։ — Լաւ է, նաև զսքանչելապայծառ գործն հրաշակերտեալ տանն, յորում ինքն ընտրեաց բնակել, յլինչաց քերէ աստուածային բարկութիւնն. յորժամ մարդիկ 'ինման իբրև երկրպագուք նորա, չպահէն զչարգ մեծվայելչութեան բնակելոյ հիւրոյն, զոր յառաջն ցուցին նմա կառուցողք նորին։

Աչ երբեմն առ նախնեաւք մի ոմն 'ի սրբոց եպիսկոպոսաց, որ յաղքատութեան իւրոյ ժամանակին մխիթարեր զանձն յանչուք շինուածոն յաղքատին մատրունս հաւատացելոցն, ասելով. եթէ թէպէտ և մեծապէս յայսոսիկ գերազանցեն զմեաք հեթանոսք, գերազանց երբեմն գտան և հրեայք, այլ սակայն 'ի կրօնասիրութեանն մասին և յաստուածպաշտութեան գերազանցեալ գտանի քրիստոնեայն առաւել քան զամենայն ազգս. որպէս զի հրեից և հեթանոսաց միանգամայն բացերև ցուցցի և ձշմարտութիւն հաւատոյս մերոյ և աստուածայնութի։

Աչ արդ թէպէտ և այսօր բարձրագլուխ յոյժ պանծացեալ է քրիստոնէութիւնն 'ի բազմահարուստ և 'ի հրաշակառոյց տաճարս իւր, որ ոչ ցուցաւ այնպիսի երբէք 'ի դարս, սակայն և ոչ վասն այնորիկ նուազել ինչ արժան իցէ նմա 'ի պարտս յարգութեան տաճարաց։ Ցա առաւել, միտ դիր սիրելիք, այնչափ առաւել աձեցին պարտք յարգութեանն, որչափ նոյն ինքն հրաշակերտութիւն մեծամեծար տաճարացն առաւել ևս կենդանատիպ նկարէ յաչս մեր զանսահման մեծութիւնն Աստուծոյ։

Քաջ իսկ, տեսարք իմ, քաջ իսկ վասն այնորիկ՝ զի առաւել աշխատեցայք և աշխատիք վասն Աստուծոյ 'ի պատրաստել նմա բնակարան վայելուչ, առաւել ուրեմն ջան ցուցանել պարտք 'ի վերայ կան, եթէ քանի հիւրամեծարութեամբ ընդունել պարտ իցէ զբնակիչն։

Ցուք ինքնին 'ի ձէնջ տուք և առէք զօրինակն բարեաց. և յինէն միայն զյորդորակն և զհրահանգն։

digitised by A.R.A.R.@

Լաւդ յիսնեամ հրահանգին վախճանս կրկին տեսանեմ ես առաջի առնել սիրելեացդ։ Ա՛ խնձան՝ զոր 'ի նպատակ իւր կալաւ կանգնողն տաճարին Աստուծոյ. և վախճան զոր կնքեաց ինքնին Աստուած՝ որ հաճեցաւ բնակել 'ի նմա։

Եւ արդ 'ի կանգնել ձեր տուն Աստուծոյ, գիտիցէք արդեօք զոր գործեցէքդ։ Ո՞անզի շինութեամբն պատրաստէք նմա բնակութիւն հաստատուն լուիկ ինն անխաբ դաշնագրութեամբ որ ընդ ձեզ և ընդ Աստուած։ Ձեզ պաշտօն 'ի սմա մատուցանել նմա հրապարակաւ իբրև Աստուծոյ ձերոյ. և նմա ունկնդրութիւն շնորհել պաղատանաց ձերոց իբրև իւրոց հաւատացելոց։ Ձեզ մատնել այսր յերկրպագութիւն նմա ամենայն մեծարանօք. վասն այնորիկ ասէ, "Տուն աղօթից կոչեսցի,,։ Եւ նմա կալ աստէն իբրև 'ի սեպհական տան, և փոխարինել բարիս արժանի երկրպագութեանց ձերոց. վասն այնորիկ ասէ, "Տուն իմ,,։

Ա՛յդպա յայս իմաստ ես զպարտս քրիստոնէին՝ որ մտանէ յեկեղեցիս Աստուծոյ, ամփոփեմ 'ի կրկին խղճս գլխաւորս. խղճ յարգութեան և խղճ սիրոյ։

Ա՛ռաջին խղճ յարգութեան առ մեծվայելչութիւնն Աստուծոյ, որ առանձին ինն ներկայութեամբ բնակէ աստանօր։ Երկրորդ անգամ՝ խղճ սիրոյ առ բարերարութիւնն Աստուծոյ, որ առանձինն առատաձեռնութեամբ բաշխէ աստանօր։

ՄԱՄՆ Ա.

Եւ արդ առաջին յուշ ածեալ զպարտս յարգութեան մերոյ, զիա՞րդ հնար իցէ խօսել ինչ, յորժամ՝ անդէն դողումն և սոսկումն առ հասարակ ընթանայ յոսկերս։ Ո՞անզի արձանացայ ես աստանօր այսօր՝ իբրև զթարդմանն մատեանիցն սրբոց, և ջատագով յարգանաց մեծվայելչութեանն Աստուծոյ, եթէ զիա՞րդ և որպիսի՞ հանդերձանօք պարտ և արժան իցէ երևել առաջի թագաւորին թագաւորաց։ Պիտեմ՝ իսկ զի ինքնին նա ունկընդիր կայ, և 'ի սեղանոյ այտի սրբութեան մի առ մի

digitised by A.R.A.R.@

նշանակէ զբանս իմ, եթէ արժանիք և զուգակիրք իցեն երկրպագելի իւրում հաճութեանն. և վայ է ինձ, եթէ և 'ի նշանախեց մի յանկարծ վրիպեցայց ես։

Այս քանզի անշուշտ Աստուած փառաց և մեծվայելչութիւն անմահ թագաւորին խոնարհեալ է ասա 'ի ստորինս առ մեզ, և այս վայր՝ ուր քարոզեմքս և ուր լսէիք՝ յարկ է սրբութեան սրբոց, և սեպհական տուն մեծին Աստուծոյ, քանիցն ուրեմն պարտք իցեն ինձ լինել հրահանգիչ 'ի պարկեշտութիւն և 'ի համեստութիւն յամենայնի, քանի բարեպաշտութեան 'ի կերպարանս՝ արտաքոյ, և 'ի խորհուրդս 'ի ներքոյ։ Ի գնացս և 'ի շարժմունս խոնարհք, 'ի հայեցուածս զգոյշք, 'ի դիրս բարեվայելչք։ Զուցէ՝ ինչ արդեօք կերպարան խոնարհութեան, պաշտաման, յարգանաց, երկիւղածութեան, որ բաւական իցէ մեծվայելչութեանն Աստուծոյ 'ի տան անդ իւրում։

Զէք ինձ ասասանօր զմտաբերանն աշխարհի, զմտաբերանն ասեմ օրինադիր յարգանաց զիշխանաց աշխարհիս և զթագաւորացն. տուք ինձ լսել միանգամ, զինչ սովորոյթ, զինչ օրէնք իցեն յարքունիս նոցա 'ի կալն անդանօր, յելանելն, և 'ի մտանելն, յընդունելն զուն. կընդրութիւն 'ի ներքին սենեակս նոցա, 'ի խոնարհելն երկրպագութեամբ յերեսեալ նոցա։ Յուշ ինձ ածէք զհիացումն մտաց զտիկնոջն Սարայ յանդիման Սողոմոնի 'ի զնին հրաշիցն նորա. զնուաղել ոգւոյն Աստեղայ յանդիման փառացն Աբրտաշեսի. զահ պատկառանացն Յուդթայ յերեսեալ Հոլոփեռնեայ։

Այս զի մի այնչափ զհնովքն գայցեմք, զառաժամայսն յուշ ածէք ձեզ զոր գիտէիք քաջ. քանի ազատազգի և հոյակապ իշխանք, և քանի պերճախօս ատենաբանք այնպէս պատկառք և անբարբառք կան շուք հարեալք առ պատուանդանի ինքնակալ սրբայի, կամ մեծաշուք քահանայապետի։

Այս արդ եթէ յայնչափ խոնարհութիւն առեալ ինքնացանէ զմարդ պատկառանք մեծարանացն առ իւր մեծաւորս, քանիցն ապա, ասա ինձ, արժան համարեսցիս զյարգն՝ որ առ Աստուած իւր գլխովին։ Այթէ զայդչափ յարգանս առ դրունս մեծամեծաց աշխարհի 'ի ձահ համարեսցիս, քանի ապա առաւելաւ դրունս երկ-

digitised by A.R.A.R.@

նից. «Ա՛ա է, ասէ, տուն Աստուծոյ և դուռն երկնից, և ես ոչ գիտէի.»։

Զ՝ այսոքիւք հայեաց դու ինձ և 'ի գեղեցիկն յայն տեսիլ։ Օ՜ խորդ և քաջնափայլ աղատանին, զիսոյդ և արքայք զլխովին, այնչափ խոնարհութեան կերպարանաւք և այնչափ ակնածու շքով սովորեցան զալ մերձենալ առ դրունս սրբութեանցս։ Զանգի և ինքնակալ թագաւորք և թագուհիք, իբրու զԱՎոդոն և զնմանսին, մինչ չև մտեալ 'ի յարկ սրբութեանն, արտաքոյ զծիրանին թողուին և զթագն։

Օ՜ ինչ ասասցես և զգերահրաշ սրբոցն. յորոց մին մինչ չև կոխեալ զաւս տաճարին Աստուծոյ, արտաքոյ այնպէս կացեալ մտադիր զքննութեամբ գայր ամենայն ըղձից իւրոց և սրտին խորհրդոց. զի թէ երբեք չիցեն արժանիք մտից սրբութեան տեղւոյն, այնպէս առ դուրս արտաքոյ կացցեն իբրև նզովեալք։ «Աստ կացէք մնացէք, ասէր, խորհուրդք ջարք, աստ կացէք խղձք սրտի անպատկանաւորք և ցանկութիւն մարմնոյ, իսկ դու հոգի իմ՝ մուտ յուրախութիւն Տեառն քոյ.»։

Դարձեալ և այլ ոմն 'ի սրբոց, թէպէտ և 'ի դուզնաքեայ ինչ փորձութեանց կրեալ 'ի հոգին, 'ի վերայ այսր և զանգիտէր կոխել զսեամն սրբոց տաճարաց. «Ա՛յժմիմ, ասէր, 'ի վկայարանս մտանել մարտիրոսացն. այնչափ ողջ հոգւով և մարմնով խնդրեմ շուք հարկանել.»։

Զ՝ արդարև սիրելիք, եթէ ոք ձշգրիտ քննեսցէ զբանս, հնարք ինչ իցէ այլազգ քաղաքավարել այնմ՝ որ 'ի տան աստ Աստուծոյ հայեսցի մտօք 'ի մեծութիւն բնակելոյն, հայեսցի և 'ի մեծահրաշ հանդէսս իրաց և խորհրդոց անձառից՝ որ կատարին 'ի սմա։

Ուստի և քաջիկ խելամուտք իրացս, դիցուք մեք այժմ, եթէ չիցէ ուրեք յաշխարհի ոչ եկեղեցի, ոչ վկայարան, և այս յարկ սրբութեան՝ յորում կանքս, համարեսցի մեզ այսօր ոչ այլ ինչ, բայց սրահ իմն արքունեաց մեծաշուք. յորում՝ Քրիստոս Աստուած ինքնին ինքեալ առ մեզ, խորհուրդ մի մարդկօրէն խորհեալ ընդ մեզ։ Հապա, ասասցէ, սրդեակք իմ. հաստատեալ եմ 'ի մտի զալ և բնակել հաստատուն միշտ ընդ ձեզ։ Զ՝ այլ այժմէն կամիմ գիտել ինչ վասն տանն՝ զոր սահ-

digitised by A.R.A.R.@

մանեսջիք վասն իմ, և վասն արժանապէս հիւրընկալու-
թեանն. "Օ որպիսի տուն շինեսջիք ինձ, կամ՝որ տեղի
հանգստեան իմոյ.,: Սակայն մինչ չէ պատասխանեալ
ձեր, նախ զայն արժան է լսել, յինչ պէտս իմ և ձեր՝
հանդերձեալ իցէ տունդ այդ՝ զոր ինձն կանգնեսջիք:
Այս աւադիկ առաջին խոստումն կռեմ ձեզ՝ զի մտադիր
իջեալ բնակեցայց սիրով 'ի նմա: Այլ և դուք 'ի յիշա-
տակ իմ և իմոյ ողջակիզին՝ որով պատարագեցայ միան-
գամ 'ի խաչին առ սէրն ձեր՝ կանգնեսջիք ինձ սեղան
մի, յորում զօրհանապազ կրկնեսցի նոյն ինքն պատա-
րագն հաւատար առաջնոյն 'ի զօրութիւն, զոյգ յարգիւնն,
նոյն 'ի շնորհաբաշխութեանն: Իսկ 'ի մեծահանդէս
յայս պաշտօն դուք ինձ միշտ առնութեր կացջիք՝ խառն
դասակիցք ընդ իմոց հրեշտակաց՝ ընդ վերագոյն հոգ-
ւոց իմոց արքունեաց: Այլ ոչ եթէ 'ի վերագունից ան-
տի հոգւոց եղիցի ոք սեղանոյս սրբութեան պաշտօնեայ
և սպասարկու. այլ դուք ինքնին միայն ո՛ երկրածինք,
դուք ամբարձջիք յաշտիճան գերագոյն սպասաւորու-
թեանն. 'ի ձեր ձեռս եղիցի ողջոյն իշխանութիւն 'ի
վերայ անձին իմոյ: Յանկարկութեան ձերում և 'ի կոչ
ձեր խոնարհեալ իջից ես նուիրագործիլ 'ի հացին մար-
մնով իմով, և 'ի բաժակին՝ արեամբ իմով: Ի ձեր փըր-
կութիւն և ինձ 'ի փառս նուիրեցայց ողջակէզ երկնա-
ւոր հօրս մինչև 'ի կատարած աշխարհի: Այս արդ՝ ա-
սացէք ինձ, "Օ որպիսի, զորպիսի տուն շինեսջիք ինձ,
կամ՝որ այն իցէ տեղի հանգստեան իմոյ.,...:

Անճառելի են խոստմունքն, եղբարք, անհասանելի
աւետիքն: Իսկ՝ "եթէ բնակեսցէ, ասէ, Աստուած
ընդ մարդկան 'ի վերայ երկրի.,: Իսկ առ 'ի մէնջ ապա
զինչ, և քանիսն պարտիցի լինել անդրադարձ փոխարի-
նին: Ինանդի յորժամ ասէ. "Օ որպիսի տուն շինես-
ջիք ինձ.,, ինձն ասելով՝ յայտ է եթէ անձին իւրում
միայնոյ սեպհականեալ զրաւէ ողջոյն զվայրն:

Զոր քանզի ճշմարտիւ այս այսպէս է, և տունս ոչ
այլոց ուրուք, այլ Աստուծոյ միայնոյ է յարկս այս սրբու-
թեան, ապէ վայր մի դուք սիրելիք զմնաւ ածէք, եթէ
յիւրում սեպհական տան զոր յարգ, զոր շուք արժան
իցէ առնուլ Աստուծոյ, և ոչ պարտք անհրաժեշտք իցեն
զմիայն զարժանին հատուցանել նմա:

digitised by A.R.A.R.@

Լ.յլ աւա՛ղ, զի տունք Լ.ստուծոյ բազմացան և յարգն նուազեաց. և ընդ առաւելութեան թուոյն որչափ պակասեաց նորութիւնն 'ի տեսութենէն, այնչափ պակասեաց և հաւատն 'ի տեսողն։ Լ.յլ սակայն քան 'ի ըզգայութենէն, առաւել ևս 'ի խոհականութենէն պէտք են առաջնորդութեան. և յայնմանէն զոր յառաջնում նուազի ցուցէք դուք զյարգն 'ի նորակերտ շինութեան տաճարին Լ.ստուծոյ՝ 'ի մտանել ձեր ասա յերկրպագութիւն, արժան է չափել և զայն՝ զոր միշտն պարտիք ցուցանել և յայլ ամենայն նուազս։

Լէ միութիւն տաճարի շարժեսցէ զքեզ, և ոչ բազմութիւն տաճարաց. այլ քեզ միշտ հաւատք կացցեն առաջնորդ, և հաւատով միայն յուշ ածցես և ասասցես. այս տուն է, որոյ տանուտէրն ինքնին միայն է Լ.ստուած. այս տուն է՝ յորում Լ.ստուած բնակէ ընդ մարդկան։

Օ մտաւ ած եթէ այս հաւատք 'ի ստուերին առաջնորդեցին ժողովրդեան Լ.բրայեցւոց 'ի մեծի հանդիսի նաւակատեաց շինութեան տաճարին, այն ինչ 'ի պսակել նորա, 'ի ձայն ցնծութեան բարեկենդանութեան աշխարհաժողով փողոց 'ի բանալ անձկացեալ դրանցն խուռն մտանէին, որպէս ասէ գիրն, և անկեալ յերկիր խոնարհ՝ հաւատով երկիրպագանէին Տեառն, քանիսն և որպիսի հաւատոց կարծիցես պէտք իցեն 'ի Ճշմարտութեանն 'ի մէնջ յերկրպագուացս հոգւով և Ճշմարտութեամբ։

Լ.ւ զի ոչ ասէ, եթէ երկիրպագին, այլ թէ երկիրպագանէին տեառն՝ մտեալ 'ի տաճարն, զայն յայտ արար՝ եթէ քանիցս անգամ մտանէին՝ զնոյն հաւատս ունէին յերկրպագութեանն իբրև տեառն տաճարին, և իբրև տանուտեառնն՝ որ անդ իբրու 'ի սեպհական իւրում տանն հաստատուն բնակեալ իցէ։

Լ.ւ կարի քաջ յիրաւունս. քանզի և ո՞ր այլ վայր իցէ՝ յորում բնաւորեցան մարդիկ մանր և Ճշգրիտ պահանջել առնուլ զյարգութիւն անձանց, քան եթէ անդ 'ի ներքս պատուարաց տանց իւրեանց. իբրու որ 'ի սեպհական տանն իւրում այր այր երևի իբրև տանուտէր և գործէ իբրև տէր։

Լաև երբէք դու ոչ զտցես որեար այնչափ սինքքոր՝

digitised by A.R.A.R.@

ոչ 'ի քաղաքայնոց և ոչ 'ի գեղջեից, որ ոչն խնդրեսցէ՝ թէպէտ և ընդ աղքատին մարդկաւ՝ ողջ զյարգութիւն անձին իւրոյ ընծայեցուցանել։ Եւ անաւագ ռամիկդ, որ այլ ուրեք արտաքոյ տանն ուր և իցէ, անարգութիւն ինչ յանձին կալցի լուիկ, սակայն յիւրում սեպհական տանն ոչ հանդարտէ նաև դուշնաքեայ ինչ տմարդութեան զոր ցուցցես նմա։

Եւ գազանք վայրենիք զգածեալք օրինօք բնութեանն յոյժ առաւել զայրանան և մոլին բռնութիւն կրեալք 'ի բուն 'ի դադարս և 'ի կաղաղս իւրեանց, քան եթէ խոցեալք արտաքոյ 'ի դաշտի կամ 'ի քաղաքի։

Այսչափ ինչ տնկակից է ամենեցուն՝ իրաւունք սեպհական բնակարանին իւրոյ, իբրու անքոյթ վայրի՝ զոր ընտրեաց ոք առանձին յանդորրութիւն կենացն։

Եւ արդ՝ թէպէտ և Աստուած յանչափութեան էութեանն գրաւեալ ունի զամենայն վայր, և 'ի գերագոյն տերութեանն ընդ բոլոր ունի զամենայն գոյակ ստեղծական, սակայն և ոչ ուրեք երբէք 'ի վերայ երկրի կայ այնպէս կամ թէ գործէ իբրև առաւել տեր, քան եթէ 'ի տաճարս և յեկեղեցիս՝ որ նմա սեպհականեալ տունքն են։

Եւ անշուշտ, նաև դուք ինքնին քրիստոնեայք, ո՞ր ուրեք այլ բայց 'ի ներքս 'ի յարկիս սրբութեան հետևեալք մնանէք 'ի հանդէս համախումբ՝ աստանօր ճանաչել և դաւանել զտէրութիւնն Աստուծոյ 'ի ձեր վերայ։

Եւ 'ի մէջ ջնաղ հանդիսից պայծառութեան եկեղեցականս պաշտամանց և արարողութեանց՝ ո՞ր այն իցէ առ ձեզ առաջինն և գերածայրեալն, բայց սպասարկութիւն մատուցման աստուածային և անմահ պատարագին։ Եւ զի՞նչ այլ իցէ պատարագն. բայց հանդիսական դաւանութի ժողովրդեան և քահանայից՝ անձնանուէր իւրեանց ծառայութեան և բոլորապտուղ հպատակութեան առ աստուածեղէն բնութիւնն՝ նուիրմամբ անմահ գառին Աստուծոյ առ երկնաւոր հայրն։

Աստենայն յուցակութիւն հանդիսից կրօնին, ըստ որում ծնրադրութիւն, խնդրուած, ձեռնամածութիւն, բազկատարածութիւն, կոծել կրծոցն, և որ ինչ այսպիսի, մարթ է զայս ամենայն 'ի դէմն բերել նաև յայլ

digitised by A.R.A.R.@

ամենայն տեղիս և առ այլս ոմանս. այլ զգերագոյն նուէր սուրբ և անմահ պատարագին՝ երբէք ոչ առ այլս, բայց միայն առ Աստուած. և ոչ այլ ուրեք՝ հասարակ կարգաւ՝ բայց 'ի տան իւրում յեկեղեցւոջ արժան է ընծայել։ Այլ թէ 'ի յիշատակ ևս սրբոց իցէ երբէք կամ 'ի յիշատակ հոգւոց ննջեցելոցն, այն 'ի պատիւ միայն է առաջնոցն և յօժանդակութիւն վերջնոցն. այլ էութիւն ողջ աստուածային պատարագին՝ Աստուծոյ միայնոյ վերընծայի 'ի փառս ամենաշնորհ տէրութեանն։ Այսչափ է մեծվայելչութիւն եկեղեցւոյս, և այսչափ շուք սեպհական տանն Աստուծոյ։

Այլ արդ աղէ ասացէք ինձ, դուք որ այնչափ ինն շուք և ակնածութիւն պահանջէք տանց ձերոց՝ նաև 'ի մարդոյ, որ քաղաքավարութեան սակս ևեթ արասցէ զգալստ իւր առ ձեզ և զայցելութիւն, քանիցս ապա ասնիրաւութիւն, քանի թշնամանք իցեն այսպիսի տանն և այսպիսի տանուտեառն 'ի մարդոյ՝ որ 'ի բուն իսկ 'ի գործ պաշտաման երկրպագութեանն իւրոյ թերացեալ գտանիցի յակնածու յարգութենէն։ Այլ քանիցս ևս առաւել՝ եթէ նաև 'ի ժամու անդ ահաւոր խորհրդոյն՝ յորում տէր տանն ոչ միայն անդ մերձ կայ, այլ և ինքնին անդ պատարագի 'ի փառս և 'ի պատիւ տանն սրբութեան. յորում և զամենայն ազգի ազգի պատարագաց ընդ զտեղի անսահման առաւելութեամբ միակ այս անմահ պատարագ։

Այլ սակայն ցայս վայր ասացեալքս յաղագս մեծվայելչութեան և անձառիցն խորհրդոց տանս Աստուծոյ, թուի թէ քան 'ի գեղեցիկ հրաւէր քրիստոնէութեան, առաւել ևս յահ և 'ի զարհուրանս կրթէին արդեօք եթէ ինքնին անձառահրաշ տէր տանս սրբութեան՝ ընդ ահարկու մեծվայելչութեանն չխառնէր զքաղցրութիւն հայրենի համբուրին։ Անգի գիտէ իսկ ինքն, եթէ 'ի մէջ մարդկան միշտ ինքնաբուն հրաշիւքն կացեալ և երևեալ, վաղվաղակի նոյն կիրք ահրնկեցք պատահեսցեն 'ի տունս տաճարաց իւրոց, որ ինչ անդ ուրեմն առ ստորոտով լերինն Սինայ. յորժամ առաջին այն ձայն ահաւոր տէրութեանն որոտացեալ, զամենայն ժողովուրդն առհասարակ 'ի տագնապ անհընարին արկանէր։

digitised by A.R.A.R.@

Վասն որոյ և 'ի մէջ մարդկան բնակեալ է Աստուած 'ի տանս յայսմիկ, ոչ այնչափ իբրև տէր տան, քան թէ իբրև հայր խնամածու որդւոց. և խնդրէ 'ի մէնջ աղօթս և խնդրուածս 'ի սմա, զի միշտ լսիցէ և միշտ բարեբարեսցէ հայրաբար. "Ցուն իմ, ասէ, տուն աղօթից կոչեսցի"։ Այլ խնդրէ 'ի մէնջ յորդւոցս առաւել զիղձ սիրոյ սրտին քան զերկիւղ ծառային։

Բանզի առ երկրաւոր թագաւորս՝ մինչև ցնչանախեց պատուոյն և յարգութեանն պարտ է աչալուրջ լինել. զի չեն նոքա բաւական թափ անցանել մինչև յիղձս ներքին իւրեանց ծառայից. պարտ է զի յարտաքնայարդար սպասարկութիւնսն միայն շատասցին։ Այլ Աստուած՝ որ սրտագէտ է և տեսանէ զծածուկս, չէ ինչ սաստկապահանջ յարտաքինսն։ Այլ սովին դարձեալ առնու նա 'ի մարդկանէ զյարգութիւն սիրոյ սրտին զՀնմարիսն և զանէրկեանն. քանզի հիմնացեալ և հաստատեալ է 'ի սէրն՝ զոր առաջին խնդրէ Աստուած։

Օ յարգութիւն զայս որդիական խնդրեաց Աստուած և 'ի Յողոմոնէ՝ որ զգերահռչակն կանգնեաց նմա տաճար. Այ՝ 'ի երկնչիր, ասէ, մի երկնչիր. չեմ ես ինքեալ այսր 'ի տաճարդ՝ զոր ինձ շինեցեր, յահարկութիւն որդւոց երկրպագուաց իմոց, այլ 'ի քաջալերս. ընտրեցի, ասէ, և սրբեցի զտեղիդ զայդ. զի իցէ անուն իմ անդ 'ի յաւիտեան. և եղիցին անդ աչք իմ և սիրտ իմ։ Աստանօր կամ ես բացեալ զձեռս. հայիմ յեկաւորն, և լսեմ զաղաչաւորն. աչք իմ, ասէ, եղիցին բաց, և ականջք իմ բաց՝ լսել աղօթից առն որ աղօթեսցէ 'ի տեղւոջս յայսմիկ։ Այ՝թէ իցէ ինձ երբէք 'ի սրտմտութիւն բարկութեան պատուհասել զմեզս, փակել զերկինս երաշտութեամբ, ապականել զսերմանիսն, տալ յաւար ջրեկաց զհունձս նոցա, և կարկտահար աւերել զայդիս նոցա, և աստանօր նոքա յիմում տաճարի գտանիցեն ապաստանարան անքոյթ յիմոց հարուածոց, աստանօր գտանիցեն նոքա միշտ առնութեր զգթութիւն իմ և զողորմութիւն կամ և պատրաստ որպէս 'ի թողուլ զմեզս նոցա, նոյնպէս և 'ի կարձել զպատուհաս նոցա։ Այ, ասէ, լուայց յերկնից 'ի վերուստ և քաւիչ եղէց մեղաց նոցա և բժշկեցից զերկիր նոցա։

digitised by A.R.A.R.@

Աստի հաստատունն այն կրօնասիրութեանն բարեպաշտութիւն 'ի քրիստոնէութեանս, զի միշտ սովորեցան քրիստոնեայք 'ի հասարակաց աղէտսն և յառանձնաւորսն աներկեան հաւատով դիմել 'ի տաճարն Աստուծոյ, և յեկեղեցի միաբան հետևել 'ի քաւարանն 'ի մաղթանս։ Աստի և գեղեցիկն սովորոյթ առ նախնի քրիստոնեայս, թէպէտ և 'ի տարադէմ հեռաստանէ՝ դառնալ հայել յեկեղեցի կոյս 'ի կարդալ օգնականութիւն 'ի վտանգս անձանց. ըստ որում և օրինակն լի հաւատով բարեպաշտ իշխանին Մուշեղայ՝ 'ի տագնապ մարտին 'ի բացուստ դէտակն ամբառնալոյ 'ի կաթողիկէն Ս աղաղշապատու յօգնականութիւն, և յաջողել 'ի քաջութեանն և յաղթել։ Ապէս և ուղղոր՝ թէպէտ և 'ի խորս անտառաց հեռամտեալ յաւազակաց յօգնութիւն կարդաց հաւատով զեկեղեցի և եգիտ։ Օնոյն և նաւորդք ալէծուփք 'ի ծովուն՝ յուսահատք տագնապեալք 'ի մրրկէ կարդան առ Աստուած և յեկեղեցի։

Այս ամենայն հաւատոյ ճշգրտութիւն, եթէ 'ի տան իւրում մեծապէս ունկնդիր է Աստուած ուխտաւորին իւրում, և առ ամենայն աղգ պաղատանաց կամակատար է Աստուած 'ի յարկիս յայսմիկ. "Կանչք իմ, ասէ, եղիցին բաց լսել աղօթից մարդոյ՝ որ յաղօթս կացցէ 'ի տանս յայսմիկ,,։

Իբր ոչ եթէ յամենայն կողմանց աշխարհի ելիցէ բարձրեալն զաղօթս և զարտասուս ապաւինելոցն, այլ քանզի առաւել պայծառափայլ երևի 'ի պաշտաման, նոյնպէս և ինքն սիրէ աստանօր պայծառանալ ևս քան զևս յառատաձեռնութեան։ Տի նա, և ասասցէ ևս ոք, եթէ Աստուծոյ յամենայն տեղիս բաց են աչք 'ի վերայ մեր, բայց յեկեղեցիս ոչ աչք միայն, այլ և բաց է սիրտ նորա. "Օ յի եղիցին, ասէ, աչք իմ և սիրտ իմ անդանօր,,։

Եւ արդարև եթէ չէր նորա աստանօր սիրտ մեծ, իբր արդեօք հանդուրժէր տեսանել զալ ժողովել աստ 'ի տան իւրում այնչափ բազում և մեծամեծ մեղաւորաց, նաև յայնժամ՝ յորժամ ոչ 'ի խնդրել թողութիւն մեղաց գայցեն նոքա աստ։

Զի դու ցոյց ինձ, եթէ իցէ՞ ուրեք 'ի վերայ երկրի

digitised by A.R.A.R.@

դարպաս արքունեաց, ուր մուտս երբէք տայէն ապրս-տամբելոցն 'ի Թագաւորէն։ Այսոյն եկեղեցի է վայր ապաւինի և ապաստանարան մարդոյ, որ պարտաւորն իցէ միանգամայն և մարդկայնոյն արդարութեան և աստուածայնոյն։

Իսկ որ հրաշալին է յաստուածային ողորմութեանն, զի առաւել իւրոց թշնամեաց գալստեանն սպասեալ մնայ Աստուած յեկեղեցւոջ իւրում. ուստի և այնչափ հրաւէրս հոգեշարժս լսելի առնէ նոցա միշտ 'ի բեմէ աստի և յամբիոնաց 'ի զղջումն և յապաշխարութիւն. նաև կազմ և պատրաստ յարդարէ նոցա և քահանայս ժիրաժիրս յատեան խոստովանութեան մեղաց և արձակման. առ այսոքիւք և այնչափ շնորհաբաշխութիւնս և թողութիւնս առատաձեռնէ աստ նոցա 'ի զօրավիգն յաւուրս տօնականս եկեղեցւոյ։

Այլ թուի ինձ իրաւապէս բանս՝ յաղդութենէ անտի գորովագութ բանին զոր ասաց. "Աչք իմ և սիրտ իմ եղիցին անդանօր"։ Այնչ զի թուի թէ իբրև 'ի դարանի ուրեք նստեալ աստ փրկիչն դէտակն ունիցի անդուստ 'ի խորանէն, ոչք ոմանք իցեն՝ որ մտանիցեն այսր. և եթէ յանկարծ յակն արկանիցէ 'ի խուան զայրն զայն կամ զկինն զայն՝ որոց ինքն է սրտագէտ, 'ի խընդութենէն սիրտն վազիցէ, իբրու արդէն իսկ ունել զորսն 'ի բուին, որպէս ունի 'ի տան իւրում։ Այանզի և վասն այնորիկ թոյլ տայ մտանել 'ի տունն և հրաւէր ևս բազմապատիկ կարդայ զի շահեսցի զնա։ Այաբէ անձառելի սիրոյն և հայրենի խնամոյն։

Ի սոյն նպատակ, ասասցէ ոք անշուշտ, և մեծն այն հայր զթած և որդեսէր Դաւիթ թոյլ մինչև 'ի ներքս 'ի տուն իւր տայր ապստամբ որդւոյն, ամաքել զնա 'ի խստութենէն և միւսանգամ զհայրական համբոյրն տալ նմա. "Երիք, ասէր, արիք փախիցուք, փութասցուք ելանել"։ Այս առ իմՁ է փախուստդ, հզօր թագաւոր, մինչև մխեալ 'ի տուն քո ապստամբ զաւակին։ — Ոչ փախուստ է, ասէ, 'ի պատերազմէ. այլ հանդէս է սիրոյ և քաղցրութեան. ոչ փախուստ է 'ի պատերազմէ, այլ փախուստ 'ի յաղթութենէ. մի յանկարծ 'ի յաղթել իմում, վերջացայց ես 'ի սպառ 'ի շահելոյ զնա և 'ի համբուրելոյ զնա. թող եկեսցէ նա, մխեսցի մինչև

digitised by A.R.A.R.@

'ի մարդակ տանս. ո՞ գիտէ, եթէ մինչ նա խորհէսցի յաղթել հօրն, ոչ յաղթեսցի ինքն 'ի հայրենի տանէն։ Թող եկեսցէ, տեսցէ ուր ծնաւ ինքն, ուր սնաւ, ուր աճեաց 'ի մէջ գգուանաց հայրենի բազկացս։ Մի՞տեալ 'ի տուն յայս իբրև թշնամի, ոչ կարասցէ ոչ յիշել՝ եթէ եղև երբեմն որդի։ Նշուշտ հասեալ նա մինչև 'ի գահոյս իմ յայս, անկցին զէնք 'ի ձեռաց նորա, յուշ ածցէ եթէ քանիսն ներեալ է իմ նմա 'ի գահէ աստի, քանի և համբոյր հայրենի տուեալ եմ նմա։ Թող եկեսցէ Աբեսողոմ. զի եթէ պատերազմող խնդրէ և 'ի Դաւիթ, նա արտաքոյ է տան. իսկ թէ հայր խնդրէ, և ողջոյն ընդ ամենայն խորշս տան հանդիպեսցի նմա։

Այս գեղափայլ պատկեր գթութեանն Դաւթի 'ի շահել զապստամբ որդին։ Իսկ դու քանիսն ապա առաւել կարծեսցես զամենաբարւոյն Աստուծոյ զգիջումն և զգթութիւն առ ապառում և ապստամբ որդիս իւր՝ 'ի ներել նոցա քաղցրութեամբ մոռանել կոխել զսեռան սրբութեան տան իւրոյ, զի թերևս ամաչեալ որսացին 'ի կամն նորա։

Դանդի ոչ այնչափ իբրև տէր արդար կամ ես աստանօր, ասէ Աստուած, որչափ հայր գթած։ Աստանօր ողորմութիւն իմ միայն կայ ինձ առնութեր՝ ժողովել ընդունել զթշնամիս իմ... և քաջ իսկ գայ աւադիկ մոռանէ այսր մի ոմն 'ի նոցանէ. այլ բաւէ, քանի ծանրացեալ տեսանեմ զնա 'ի զէնս և 'ի մեղս. այլ թող եկեսցէ և մերձեսցի. զի և շնորհք իմ նմա սպասեալ մնան 'ի տանս հայրենի, որոյ մարդակք և որմունք ամենայն՝ վայելուչ երանգօք ներկեալ են սիրով։ Մի՞թէ հնար ինչ ինչ ցէ չունել նմա և դոյզն նշխար մի սիրոյ 'ի սրտի առ հայրն զոր անկուշեաց։ Մի՞ գիտէ, թերևս հանդէսք կրօնի դիմակ դիմակ՝ զոր տեսանէ աստանօր, շարժեսցեն ինչ զնա. տեսցէ զաւազանն սրբութեան յորմէ վերածնաւ նա շնորհօք վասն երկնից. յիշեսցէ զսպիտակափառ հանդերձ զանմեղութեանն՝ զոր 'ի մկրտութեանն արկի զնովաւ։ Տեսցէ զվայրն՝ ուր ինքնին նա խնդրեաց երբեմն առնել ջերմապէս զխոստովանութիւն մեղացն, և ընկալաւ յինէն թողութիւն. նա զիս սիրեաց յայնժամ, և ես զգգուանաց համբոյրն ետու նմա ոչ մի անգամ։ Տեսցէ զսեղանն սրբութեան

digitised by A.R.A.R.@

հաղորդութեանն. յորմէ զինն Ճաշակեալ բազում անգամ 'ի կերակուր և 'ի բաժակ անմահութեան՝ ոգեխառնեցաւ ընդ իս սիրել զիս զամենայն աւուրս կենաց իւրոց...։

Լաւ արդ աղէ եթէ և այսչափ մարդասիրութեան գգուանք առ ապստամբ որդիսն 'ի դերև ելցեն, զինչ եղիցի այնուհետև յորժամ ոչ սիրոյն ինչ երես արասցեն նոքա հօրն, և ոչ յարգութեան ինչ շուք ընծայեսցեն առ տուն բնակութեան նորա. այլ և 'ի նմին իսկ 'ի հայրենի տանն՝ իբրև զՊ.ելիսողոմ վայրենասցին ընդդէմ ծնողին։

Օ զինչ եղիցի, ասեմ, այնուհետև...։ Հարցէք զՊ.ելեսողոմ, որ քաջ գիտէ...։ Հապա Յովաբ...։ Ի ծայրն աւասիկ եհաս ամբարշտութիւնն...։

Ո՞ւր փախչիս ապստամբ զաւակ...։ Ո՞ւր անձնապուր տեղի տաս մտանես 'ի թաւս մայրեաց...։ Դեզ անդ ծառք աւադիկ սպասեալ մնան 'ի խեղդան և 'ի կախաղան. "Լաւ էառ, ասէ, Յովաբ երիս նետս, և եհար 'ի սիրտն Պ.ելեսողոմայ..."։

Ա՜ման ձեր ո՛ մեղանչականք տանն Պ.ստուծոյ, վասն ձեր, ո՛ սեղանակապուտք, վասն ձեր աւադիկ 'ի կախ ընդ օդս տատանեալ կայ դէշն անկենդան, սոսկալին այն յաղթանակ աստուածային վրէժինդրութեանն։

Դա՛ւ, ջասեմ ես, եղբարք, եթէ յայնպիսի սեղանակապտին իցէ ինձ ոք այսօր առընթեր՝ եթէ յաբանց ոք իցէ եթէ 'ի կանանց. ցկարեմ և ոչ ընդ միտ ածել անգամ զոք յայնպիսեաց անտի 'ի մէջ հանգուամար իմոց բարեպաշտ և եկեղեցասէր ունկնդրացս։

Պ.յլ սակայն այր այր իւրում անձին գիտակից՝ սրտին իւրում դատաւոր կացցէ. հայեսցի անաչառ, զոր խորհի և զոր միանգամ գործէ 'ի կեանս իւր...։ Պ.ստ է միշտ Պ.ստուած 'ի տան իւրում, ասա լսէ նա, ասա տեսանէ զամենայն։ ԼՕէպէտ և յամբիոնաց աստի ձայնք լսեսցեն աւետարանին քարոզչաց ընդդէմ անարգուաց տանն Պ.ստուծոյ, և առաւել քան զամենեսին ես ինքն լսեցից իբրև առաւել անպատկանաւոր յաստուածային սպասաւորութեանս. զինչ օգուտ 'ի հասարակ լսութենէն պաշտօնեիցն Պ.ստուծոյ, յորժամ ինքնին Պ.ստուած անդուստ 'ի սեղանոյն ահընկեց որոտասցի մար-

digitised by A.R.A.R.@

գարէիւն . “Մի՛թէ այր աւաղակաց եղև տուն իմ, ասէ տէր ,, ։

Այս , ես եմ, ես տեսի , ասէ տէր ։ Համարիցիք թերևս եթէ չտեսի ես աստանօր 'ի տան իմում զանարկել զայդ յօնիցդ զժպիրն և զապերասան, զհայեցուածդ զայդ դժպրի և զարատ , զժպտելդ զայդ ընդ քիմն լի չարութեամբ ։ Կարծիցէք , ասէ տէր , եթէ ոչ խորամուխ սրտագէտ ձեր իցեմ 'ի ներքինս խորհրդոց ձերոց , 'ի թերահաւատութեան կարծեաց ձերոց , յամն պարշտութեան միտդ , յանմաքրութեան 'ի կիրսդ . ես տեսի , ես տեսի , ասէ տէր ։

Գիտեմ, յինչ միտս դժպատեհս ժողեցեր դու այսօր գալ կոխել զսեամն սրբութեան տան իմոյ . զինչ խորհուրդք իցեն քո այդչափ անարժան հանդերձանօրդ այդ զարդու 'ի գալ մտանել քո աստ 'ի տօնախմբութիւնս հանդիսից . ես տեսի , ես տեսի ։ Գիտեցի զամենայն զգնացս քո աստանօր , զշարժել քո , զնստել քո , զբարբառել քո . աչք իմ բաց են աստանօր յամենայնի , և ականջք իմ բաց են աստանօր 'ի լսել զամենայն . ես տեսի , ես գիտացի զամենայն , ասէ տէր . . . ։ Այս արդ այս իցէ շուք և այս յարդութիւն զոր մատուցանէք տաճարի տեառն ձերոյ . և այս սէր զոր ցուցանէք տան հօր ձերոյ . . . ։ Ցեսի շատ , ժուժկալեցի շատ . . . կարծիցէք արհամարհողք , եթէ պակասեցան 'ի սպառ 'ի տանէ իմմէ երկիւղածք, ակնածուք և շքաղիրք ։ “Լռեցի զհզօրս իմ 'ի բարկութեան իմում ,, ։ Հապա հրեշտակք , առէք զէնս . ինդրեցէք , գտէք ինձ զապըստամբդ զայդ . հարէք 'ի սիրտ սլաքս երրեակ 'ի վրէժխնդիր երեքսրբեան տերութեանս , զոր դա աստանօր թշնամանեաց ։ Վանիցն երկայնամտեաց մարդասիրութիւն իմ առ քեզ . ես աստ 'ի տան իմում ոչ մնայի կորուսանել , այլ փրկել զքեզ . ինքնին տունդ հայրենի ոտերիմ ընդդէմ ապառումդ որդւոյդ բողոք հարկանէր ։ Օ՛ խաղդ դու այլ ուրեք արտաքոյ յանցաւոր , աստ վաղէիր յապաւէն փախուցեալ յեկեղեցի . և արդ յեկեղեցւոջ ես պարտաւոր գտեալ քո , ուր այլ ուրեք իցէ քո վայր ապաւինի կամ ատեան քաւութեան վասն քո ։ Դու ինքնին փակեցեր զամենայն դրունս ընդդէմ հնորհաց . . . ։

digitised by A.R.A.R.@

Ա՛յլ բա՛ՀԷ, տեսանեմ ես տակաւին 'ի սրտի զի հայր եմ, ահա քեզ շաւիղ 'ի փրկաւէտ յայս կողոր բաց յաւ վասն քո։ Զոյ քեզ տակաւին յապաստանարանիս յայսմիկ՝ յոր մեղաւ, այլ ապաստանարան և ապաւէն փրկութեան...։ Ահա մայրն իմ և մայր քո. "Կին դու, ահա որդի քո,,. և քեզ որդեակ, "Ահա մայր քո,,։ Այր ապաւէն միակ փրկութեան, դուռն երկնից, և Ճանապարհ արքայութեան։ "Արձրասցի պատիւ նորա քեւ, և ցուցցի փրկութիւն քո նովաւ,,։ Խոստովանեա ինձ զղջմամբ՝ զոր գործեցեր զմեղն. տուր ինձ զսիրտ քո միւսանգամ զոր յինէն բարձեր. զշուք զյարգութիւնդ՝ զոր ցայս վայր տան իմում զլայար։

Ա՛վ, բանք քո այդ զսիրտ իմ խոցեն, Աստուած իմ Յիսուս։ Արդ Ճանաչեմ, արդ իմանամ, ուրանո՛ր իցեմ։ Ճանաչեմ զսրբութիւն տան քոյ, զոր պղծեցի բազում անգամ. "Արդարև ոչ այլ է տեղիս այս, բայց տուն Աստուծոյ և դուռն երկնից. և ես ոչ գիտէի...,,։ "Ա՛վ երկնանման եկեղեցի սուրբ, ուրախ լեր վէմ պատուական, հովանի մեր և յոյս,,։ "Արդարև սուրբ է տեղիս այս. և ոչ է, բայց տուն Աստուծոյ և դուռն երկնից, և ես ոչ գիտէի,,։

ՄԱՍՆ Բ.

Յոյժ ցանկալի էր ինձ, սիրելիք, 'ի զօրութեան քարոզիս տպաւորել 'ի սիրտս ձեր շուք մեծայարգ և պաշտօն արժանի և սէր վառեալ առ այն՝ որով տունս այս է Ճշմարտապէս տուն Աստուծոյ, առ աստուածայինն ասեմ և անմահական խորհուրդ սեղանոյ 'ի տաճարիս. որով տէր Յիսուս զաւետիս քաղցր խոստմանն արդիւնաւորացանէ մեզ զոր ամենայն լինել միշտ ընդ մեզ. "Այս ընդ ձեզ եմ, ասէ, զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի,,։

Արդ եթէ Աստուած ընդ մեզ է միշտ, առ իմ՞ և մեք ոչ եղիցուք ընդ Աստուծոյ միշտ։ Օ՜ի է մեզ այնչափ դուն ուրեք յանդիման լինել երեսաց նորա 'ի տա-

digitised by A.R.A.R.@

ՀԱՐԻս. ընդէր է մեզ ընդ այնչափ ժամն աւուրն թողուլ զնա միայնակ։

Զդէ մնասիք ստէպ առ տէր և առէք զլոյս. մնէք ստէպ ընդ յարկաւ սքանչելեաց տանն Աստուծոյ, և զհանապազօրեայս զայս լոյս Հրագի տեսեալ աստ միշտ վառ և բորբոք առաջի նորա, մինչչև զակն արկեալ՝ի զարդս տաճարիս, երկիր պագէք սիրով՝ի սրահ սրբութեան նորա. ոչ այնչափ իբրև երկրպագու հաւատաւոր, քան թէ որ ակներև յանդիմանն իւր տեսանիցէ զԱստուած իւր և զտէր, և ընդ նիւթականին հրոյ միշտ անշէջ սիրովն վառեսցէ զսիրտ իւր։ Մերձեսցի առ նա ժողովեալ մտօք, երկիւղած սրտիւ, յարդարուն անձամբ յամենայնի, ՝ի զգեստ, ՝ի գնացս, ՝ի դիրս, ՝ի շարժմունս, ՝ի հայեցուածս։

Ահաբեկ, քանիցն ակնածութեան և պատկառանաց և շքոյ և երախտագէտ սրտի պէտք իցեն՝ի հաւատալ անդ և՝ի դիտել մեր, զի մեծվայելչութիւնն Աստուծոյ աստանօր օթատայեալ է, որոյ կամքս առաջի՝ անքթիթթ պատկառանօք՝ի նա յառելով որպէս զակն, նոյնպէս և զսիրտ։

Այլ եթէ այսպէս, իսկ ապա որպիսի՞ ինչ պարտ իցէ մեզ լինել, յորժամ բաց՝ի հիւրընկալութեամբ ժողովելոյ զմեզ՝ի տուն իւր, հաճեալ խնայարհեսցի մեծն Աստուած գալ մնանել և՝ի մեր տուն՝ի սենեակ սրբոյ հոգոյ մերոյ, և անպատում հոգեխառնութեամբ միանալ ընդ մեզ հաղորդութեամբ անապական հաշակմանն։

Զանգի յորժամ Աստուած ինքնին հանդերձեալ է եկաւորիլ՝ի մեզ, զմտաւ ած որպիսի՞ ինչ օթեվան սուրբ և անարատ խնդրէ նա՝ի մեզ։ Զի եթէ վասն նիւթականին միայն տեղւոյ հաշակման գառինն խնամով պատուիրեաց, «Գտանիցէք, ասէ, վերնատուն մի մեծ զարդարեալ...», զմտաւ ած՝ որպիսի՞ ինչ տաճար փառաց իւրոց լի ամենայն մաքրութեամբ խընդրեսցէ վասն առ՝ի ներքս՝ի մեզ ընդունելութեան. և որպիսի՞ ինչ սենեակ սիրոյ իւրոյ՝ի սրտի մերումանձկով տարփման զարդարեալ, յորում՝ շնորհք փայլեսցեն, յորում՝ հոտ անմահութեան դրախտին Աստուծոյ բուրեսցէ։

Այլ սոսկումն զիս աստանօր ունի, եղբարք, և ար-

digitised by A.R.A.R.@

հաւիրք անհնարինք, յորժամ օթեւանս պատրաստեալ իւր գտանիցէ նա բազում անգամ ոչ անզարդս միայն, այլ... աւա՛ղ... նաև փոշելիցս և տղմաշաղախս. և "Ընդանքրապէս մերձեցողս յաստուածային կայծակունսն՝ որ սրովբէից անհպելին է,, ունիցի Քրիստոս 'ի տաճարիս, ոչ հաղորդեալ՝ քան թէ պարտապանս իւրում խորհրդոց մարմնոյ և արեան, յամենայն վիճակէ միանգամայն՝ որ քրիստոնեայ անուամբն և որ Քրիստոսին սպասաւորութեամբն պարծիցին։

Յիշատակ անմոռաց ունիմ միշտ զսրբոյն զայնորիկ զբանն, որ յոգւոց հանեալ ասէր. Ո՛ւրեմ, եթէ ընդ մոյ միայնոյ հաղորդութեան կամ պատարագելոյ սասարիկ է քննութիւնն և համարն առ Ստուծոյ, զինչ լինիցի վասն հաղարացն. ահ մեծ է, ասէր, անկանել 'ի ձեռս Ստուծոյ կենդանւոյ։

Այս արդ որպէս առաջինն և մեծն յանպատուութեան և յոտնհարութեան տանն Ստուծոյ, է անարժանութեամբ մերձենալ Ստուած՝ որ բնակեալ է 'ի տանս յայսմիկ, այսպէս և առաջինն և մեծն 'ի շուքն և 'ի յարգութեան տաճարիս, է արժանապէս և մաքրութեամբ մերձենալ 'ի բնակիչն նորա։ Օ՛ի որ սիրէ և պաշտէ զբնակիչն, սիրէ և պատուէ զեկեղեցի զբնակարան Ստուծոյ. և որ սիրէ զեկեղեցի, սիրեսցի յեկեղեցւոյ։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐՈՅ ԻԹ.

ՄԱՀ

«Ով մահ, զիաւրդ դառն է յիշատակ քո»։
«Ցիշեա զվախճան քո, և յաւիտեան ոչ մեղիցես»։

Յուշ միանգամ ածեալ քո, ո՛վ մարդ, զկեանսդ զոր մեղօք անցուցեր և անցուցանես, 'ի լսել քո այսօր 'ի բեմէ աստի զաստուածատատոն պատգամ, զինչ արդեօք 'ի քո միտս և յիմն նկարեսցէ հանդէս քարոզիս. զինչ այլ. բայց թէ զքեզ կարծել Աստուած մեղանչական, և զիս գուժաբեր Յովհան սատակման մահուն աղդարար։

Վասանզի, «Աբի և դու, ձայն և ինձ հնչեաց 'ի վերուստ, աբի և դու գնա 'ի Աստուած քաղաք մեծ, և քարոզեսջիր 'ի նմա»։ Օ՛ինչ... «Ահա երեք աւուրք, և Աստուած կործանեսցի»։ Աստուածային էր պատգամն, և զիաւրդ չառնու զկատարումն։ Ոչ երեք աւուրք, այլ և բազմահարուստ անցին ժամանակք, և Աստուած ոչ կործանի։ Վասն զի ամբարիշտ քաղաքն զաղատութիւնն տուեալ նմա Աստուծոյ. զի կամ ինքն կործանեսցէ զմեղս իւր, կամ ինքն կործանեսցի 'ի մեղացն։

Բա՛ւական փրկաւէտ գուժին. զիաւրդ այնպէս հզօրացաւ 'ի սիրտ լսելեացն։ «Ահա երեք աւուրք և Աստուած կործանեսցի...»։ Ո՛վ դեղեցիկ կործանմանն, զիաւրդ այնպէս փոյթ և յառաջ քան զերիս աւուրսն՝ արդիւնացաւ 'ի կատարեալ ապաշխարութենէն։

digitised by A.R.A.R.@

Ա. յոչափ ուրեմն զօրաւոր ազգումն մահու 'ի յորդորել զմարդ, զի և աստուածայնոյն յաղթել պատգամին յայնժամ. և այնպէս իմն հնարագէտ հապճեպ անձնապուր լինել 'ի նեղբուստ ձեռին աստուածային արդարութեանն, որ անդ մնտալուտ առ դուրս փայլակնանացայտ սուր շողացուցանէր։

Յաւելից ուրեմն և ես դարձեալ յառակին իմում. "Ո՛վ մահ, զիաՀրդ դառն է յիշատակ քո"։ Ա. յո. այլ զիաՀրդ և զօրաւոր միանգամայն և քաղցր է պտուղն 'ի յիշատակէ դառնութեան քո։

Ուանզի և այս ձայն յոՀնանեան գուժին ազգեալ զարդիս և առ քաղաքս քաղաքս քրիստոնէից և առ իւրաքանչիւր բնակիչս, եթէ "Լործանեսցի Լինուէ, և մարդ 'ի հող իւր դարձցի", սքանչելագործ յամենայն 'ի դարս, չարագործս քանիս զանՀնարինսն 'ի մարդիկ՝ սարսեալ և դարձոյց։ Ոչ կարացին յուշ միանգամ ածել սերտիւ, եթէ մահկանացուք են, և ոչ կարացին երբէք չխորՀրդածել իմաստութեամբ՝ եթէ պարտին ուրեմն պատրաստիլ 'ի մահ ապաշխարութեամբ։

Լսկ արդ եթէ այնչափ է զօրութիւն յիշատակի մահուն, և առ ինչ ապա յայս յիշատակ կենսաւէտ ոչ յառեսցին մեղաւորք. զի՞ է զի և քրիստոնեայք յորդորակ առ 'ի հեթանոսացն Լինուէացւոց ապաշխարութենէն ոչ առցեն յանձինս։

Ա. յլ դու, ո՛վ տէր, որ զմերն պատուհաս զմահ՝ 'ի դեղ դարմանոյ իմաստութեամբ շրջեցեր մերոց յանցանաց, դու հովանի 'ի խաւար խորՀրդոց մերոց ծագեսցես զլոյս երեսաց քոց։ Լյ առաջի քո մերձեսցին խնդրուածք մեր, և ըստ բանի քում իմաստուն արասցես զմեզ։ "Յիշեա զի ձեռք քո արարին զմեզ և ստեղծին. յիշեա զի կաւ ստեղծեր զմեզ, և յերկիր միւսանգամ դարձուցանես զմեզ"։ Լոյս ուրեմն տացես աչաց խորՀրդոց մերոց, տէր, 'ի կենսաւէտ յիշատակ մահուն մերոյ. զի յորժամ ննջեսցուք, 'ի քեզ տէր՝ և մի երբէք ննջեսցուք 'ի մահ։

Լյ յայս իմաստ աւադիկ սիրելիք՝ զՀանդէս կրկին զահագինն մարդոյ մեղաւորի՝ զմահն ասեմ և զապաշխարութիւն, սքանչելի օրինակաւ քաղցրացուցանէ առ-

digitised by A.R.A.R.@

տուածային Հոգին։ Բանզի մարդասէր գթութեամբն ոչ յայլ ինչ յուշ առնէ մեզ զմահն, բայց 'ի հրաւիրակ մեզ յապաշխարութիւն. դարձեալ և ոչ յայլ ինչ հրաւիրէ յապաշխարութիւն, բայց 'ի քաջալերս մեզ ընդդէմ հոգեվարքին մահուն։ "Ով մահ, ասէ, զիաւրդ դառն է յիշատակ քո..։ ահա հրաւիրակ յապաշխարութիւն։ Եւ "Յիշեա, ասէ, զվախճան քո. և յաւիտեան ոչ մեղիցես..։ ահա քաջալերս անեղկեան ընդդէմ մահուն։

Ուստի և առաջարկութիւն քարոզիս կրկնակի է։ Առաջին՝ խօսեցայց զիաւրդ օրինակաւ արժան իցէ մեզ յիշել զմահն, որպէս զի հրաւէր ուժգին լիցի մեզ այն յապաշխարութիւն։ Երկրորդ անգամ՝ զիաւրդ օրինակաւ արժան իցէ առնել զապաշխարութիւնն, զի քաջալերութիւն լիցի մեզ այն ընդդէմ մահուն։

ՄԱՍՆ Ա.

Լուսի իմն, սիրելիք, ոչ ինչ դժուարին՝ այնպէս յիշել զմահն, զի պտղաբեր լիցի մեզ յապաշխարութիւն։ Բանզի 'ի միոյ կողմանէ աստուածային է պատգամն, եթէ որ յիշէ զմահն, այն որ ազդեցութիւնս տպաւորագոյնս բնաւորեցաւ հաստել 'ի սիրտ մարդոյ, զերծ է 'ի մեղանչելոյ. "Յիշեա զվախճան քո, և յաւիտեան ոչ մեղիցես..։ Իսկ և 'ի միւս կողմանէ, մահն հանապազօր գոգցես ամենայն ուրեք պատահէ աչաց մերոց. կէս մի 'ի լուր զարթուցեալ, և կէս մի 'ի տես հանդիպեալ. կէս մի յայց գերեզմանատանց, և կէս մի 'ի յուշարկաւորութիւնս անդուլ ընդ փողոցս հանդէպ տանց մերոց. զի և չկարեմք չյիշել չխորհրդածել ստէպ։ Եւ սակայն յայնչափ տեսութեանն, յայնչափ յիշատակէն, նոյն եմք մեք և զնոյն կոխեմք շաւիղ 'ի վարս և 'ի լաւագոյնս ընկրտիմք։

Եւ արդ զինչ պարտ իցէ մեզ ասել աստանօր։ Մի՞թէ եթէ մահն այնչափ ամենայն ուրեք ընդ առաջ ելեալ մեզ մարթիցի արդեօք 'ի մոռացօնս ինչ լինել 'ի մարդկանէ, այլ ընդդէմ է այս հասարակ կարգի բնութեան։

digitised by A.R.A.R.@

Մի եթէ թէպէտ անմոռաց ևս յիշեսցեն, սակայն և այնպէս աղատօրէն բերցին դարձեալ 'ի մեղանչել։ Այլ և այս ընդդէմ ելանէ աստուածային պատգամին։

Զի՛ զբրիստոնեայք, ոչ սխալէ Աստուած 'ի պատգամն իւր. մեք եմք ողբ վրիպիմք ստէպ 'ի խորհուրդս և 'ի կարծիս մեր։ Ասասց Աստուած լոկ. յիշեա զվախճան. այլ յիշեա՛ զվախճան քո։ Ո՞ ժխտեսցէ երբեք, եթէ մեք չյիշիցեմք ստէպ զմահն, սակայն ոչ զմերն։ Անշուշտ է, եթէ և յոր կոյս դարձուցանեմք զաչս, ընդ առաջ ելանէ մեզ յիշատակ նորա. այլ մեք 'ի խուսել 'ի զբաղութենէ անտի նորա, այն ինչ յիշատակ նորա ծնանի 'ի միտս, անդէն վազեմք զնովաւ, և զխորհուրդս մեր դարձեալ զբաղեցուցանեմք յայլ ինչ իրս, առանց մերձեցուցանելոյ 'ի մեզ ինքեանս։ Ասի և իրաւապէս կշտամբէր ոմն 'ի սրբոցն զմարդիկ՝ ասելով. "Զի՞նչ՝ զոր այնպէս հանապազօր տեսանէն մարդիկ, որպէս զմահն. և չի՞նչ՝ զոր այնչափ մոռանան մարդիկ՝ որպէս զմահն ,,։

Այս արդ քննեսցուք Աշգրտիս. զիսաՐդ օրինակաւ բազմագոյնք 'ի մարդկանէ յիշեն զայն և խորհրդածեն...։ Անդուստ աւադիկ ոմն խնամատարելով յաղագս մահուն, մեծապէս է ինձ, ասէ, ազգումն այն զրոց՝ զոր ընթեռնում 'ի ծնունդսն յաղագս երկայնակեաց նահապետացն։ Կէսք եօթն, կէսք ութ հարիւրամն, կէսք ինն, և զոգցես հազար ամն կեցեալք յաշխարհի, և ամենայնին զհետ բերէ գիրն զմահ՝ համբոյրն զայն բառ, "և մեռաւ ,,։ Ինն հարիւր և երեսուն ամ՝ եկաց Ադամ և մեռաւ. ինն հարիւր երկոտասան ամ՝ Սէթ, և մեռաւ. հանդերձ այլովք բազմօք մինչև 'ի Մաթուսաղայ, որ զոգ հազար ամ կեցեալ, սակայն և նա մեռաւ։ Բա՛ռք, ասեն, քանիսն հանռօտեցան մեզ կեանքս. քանի՞ իցէ անջրպետն ընդ ութ հարիւր և ընդ ութսուն։

Այս ապա յիմաստասիրաբար քննութիւնս առեալ զբաղեցուցանեն զխորհուրդս. Զի՞նչ արդեօք, ասեն, պատճառքն իցեն այնչափ քաջակազմութեան մարմնոց նոցա և այնչափ երկայնակեցութեանն. զի՞նչ կերակուրքն՝ յորոց առնուին. և զի՞նչ այն բանջարքն զօրաւորք. կամ՞ որ հիւանդութիւն, ո՞ր ախտ, յորմէ մեռա-

digitised by A.R.A.R.@

նէին նոքա։ Օ իսկզդ այնպէս յանկարծ լեռ ջրհեղեղն կեանք մարդոյ յիննհարիւր ամաց վայրաբերեցան 'ի չորեքհարիւր և յերեքհարիւր ամն. և ապա սահմանափակ անձկացաւ 'ի հարիւրն, զոր և հաղիւ ուրեք է տեսանել։

Եւ ապա սկսանին քննողաբար խորամուխ լինել 'ի հաշիւս տարբերութեանց կլիմայից, և աստեղաբաշխական գիտութեանց, և թուոյ նորածնելոց մարդկան, և աղգեցութեանց օդերևութիցն, և արգաւանդութեան հողոյ, և բիւրուց ևս դիպաց՝ որ 'ի տիս հասակաց մարդոյն, որ 'ի զանազանութիւնս աշխարհաց, որ յայլևայլութիւնս գաւառաց, այլովքն հանդերձ։

Հաւասիկ պտղաբերութիւնք 'ի կենսաւէտ յիշատակէ մահուն. ահաւասիկ քեզ խոկումն փրկաւէտ 'ի նորոգութիւն վարուց ապականութեան։ Օ իսկզդ այնպէս օգտաշահ յիշատակն մահու երթեալ ընկղմեցաւ և անհետացաւ 'ի խնդիրս անպտուղս հոգւոյն, և յաոաջարկութիւնս վայրապարս և տատամնեցուցիչս։ Այս իսկ յիշատակ մահուն, զոր խնդրեաց Աստուած յասելն, յիշեա՛ զմարդ, և յաւիտեան ոչ մեղիցես։

Իսկ և այլ ոմն անդուստ յիշատակ արարեալ, ես ասէ 'ի Ձառ մահուն ոչ գտանեմ մարդ, որ Ձշգրտագոյնս կենդանագրեալ իցէ զմահ իբրու զՅոլբ, որ պատուհաս արքունի կոչելով զնա՝ իբրև աշխարհակալ արքայ տիեզերաց նկարէ մեզ զմահն. "Կերիցէ, ասէ, մահ տարաժամ զգեղեցկութիւն նորա... հասցէ նմա տագնապաւ պատուհաս արքունի,,։ Օ ի և տիրապէս է իսկ մահն տէր բոլորից. չիք նմա ընդդիմակաց. մտանէ, տիրէ, վանէ. մտանէ 'ի Ձակատամարտս, 'ի բանակս, և յաղթէ. մտանէ յարքունիս, փոխէ զտեարս, փոխէ զտերութիւնս. սահմանադիր է արքայութեանց և արքայից. և մակդիր ունի՝ արքայից արքայ. "Հասցէ տագնապաւ պատուհաս արքունի,,։

Օ այս օրինակ և սա յիշատակ արարեալ զմեծագործութեանց միայն զմահուն, պտուղ անձին և ոչ մի քաղէ 'ի զգաստացուցիչ յիշատակէն, այլ առեալ զխորհուրդս մտայն դեգերեցուցանէ 'ի պատմութիւնս վաղնջուց արքայութեանցն. Ո՛վ մահ, ասէ, ո՞ որ երբեք ընդդէմ եկայ զօրութեան բազկի քո. ո՞ պատուհաս

digitised by A.R.A.R.@

սրբունի, որ և ոչ զՀետս Թողեր զարքայիցն, ոչ զարքունեացն միայն՝ այլ և ոչ զնոցուն շիրմանց։ Զի՞ւր իցէ այսօր Յ՚սրուոցն պետուն, ո՞ւր ՊարԹևացն և Յ՚սրայեցն, ո՞ւր Պարսիցն նախնեաց, ո՞ւր Հռովմայեցւոցն . . . : Փոխեցեր զնոսա, և զայլն բազմեցուցեր. 'ի չիք դարձուցեր զՀինսն, 'ի չիք դարձուցեր և զնորսն։ Զ ախՀան առցէն ամենայն մարդկայինքս, և յաւուր միում՝ յաղԹանակող քո ոսն կոխան արասցէ զընդՀանուր տիեզերս։

Զ՚այսպէս նա ընդ մահն բացագանչեալ, ապա և հետաքնին և եղեալ ապաղայիցն լինելուԹեան, իբրու հարցանէ ընդ աշակերտացն. "Զ՚ՐԸ արդեօք լինիցին այդոքիկ, և զինչ նշան իցէ վախՀանի աշխարհիս„։ Յայսմիկ և 'ի բիւրս այլ խորհրդածեալ նա 'ի Հառ մահուն, այսքանեօք միայն յիշատակ առնէ զնորա. ոմոմիեալ 'ի պատմուԹիւնս գործոց նորա զոր գործեաց և զոր գործեսցէ, խոյս տուեալ Հանապազ՝ որպէս ասացի՝ 'ի զօրուԹենէ անտի նորա, զոր ինքնին փրկաւէտ յիշատակ նորա բնաւորեալ է տպաւորել յայր մտաւոր 'ի նորոգուԹիւն կենաց և վարուց։

Իսկ և այլ ոմն ընդ Զ՚ՐԵԿԻԵԼԻ երԹեալ շրջի 'ի գերեզմանատունս, և 'ի դաշտին տեսեալ զիսաղաղակոյտ ոսկերացն և զզրահանս զգանկից կառափանցն և զկմախիցն, յապուշ Հարեալ Հարցանէ. ասա՛ղ, զինչ ոսկերքդ իցեն, և ո՞յց նարդեօք։ Զ՚ՐԸ իցէ կառափն, ո՞ր բազուկքն և ոտքն. ո՞ր աւագ առն և իշխանի և զօրավարի. "Զ՚ՐԸ դի մարդոյ, մարգարեաց 'ի վերայ ոսկերացդ այդոցիկ„։ Զ՚այսչափ ինչ միայն դեղերի և սա 'ի խորհուրդ մեռելոցն, և յայս չափ միայն յանդէ ողջոյն զյիշատակ մահուն։

Իսկ և այլ ոմն ընդ Դանիելի գնայ ընդ յատակս տիեզերաց, խարբալէ ցանէ զմոխիրն, և ծածկէ ողջոյն մոխրացան զամենայն ուղիս մարդկան, Հանապէտ 'ի Հետոցն զնոսա. Հայեաց, ասէ, և տես, ո՞յց Հետք իցեն այդոքիկ, նշանակք էն կէսք տղայոց, կէսք պատանեաց, կէսք կատարեալՀասակ մարդոյ. կաց, Հայեաց և զնեա. ահա Հետք արանց և կանանց, ահա Հետք մանկանց։ Զ՚ս սա և այսքանեօք շատանայ 'ի յիշել անդ իւրում՝ զմահն։

Զ՚նոյնսոյն և այլ ոմն Հառ արկեալ զմահուն, 'ի նմա-

digitised by A.R.A.R.@

նութիւն գետոյ ընդ Պաւլի օրինակէ զկեանս մարդ-
կան. որ նախ դարիւ և դարիւ, ապա տակաւ աճեցուն
և փրփրադէզ խաղայ և թափի 'ի ծով և անդնդասոյզ
կորնչի։ "Նարգ եղիցին նոքա, ասէ, որպէս ջուր զի
հեղու,,։ Յիշէ զսաղմոսն, և աւաղ կարդայ անցաւոր
կենացս։ Բ. յաչափ միայն յիշատակ արարեալ մահուն,
և զկայ առնու։

Կամ թէ ընդ Լասայեայ 'ի նմանութիւն բերեալ
զմահն՝ ծաղկազարդ մարգաց, որչափ և գեղեցիկ, այն-
չափ և ծաղկընկեց, յոգւոց հանեալ մակագանէ, "Ամ-
ենայն մարմին խոտ է. և ամենայն փառք մարդոյ՝
իբրև զծաղիկ խոտոյ. ցամաքեցաւ խոտն և թօթափե-
ցաւ ծաղիկն,,։ Բ. յաչափ ինչ աւաղէ, և անդ զկայ
առնու։

Կամ թէ ընդ սրբոյն Յակոբայ օրինակեալ զկեանս
'ի ծուխ մրրկի, "Որպիսի ինչ իցեն կեանք մեր, հիա-
ցեալ գոչէ, զի իբրև զմրրիկ եմք. որ առ սակաւ մի ե-
րևեալ, և ապա պակասեալ,,։ Այլ սա ևս այնպէս կայ
մնայ 'ի հիացման իւրում, յառաջ ևս չխաղայ. շատ
համարի այսչափ ինչ միայն 'ի յիշատակ մահուն։

Ա՛ճ քրիստոնեայք. և ո՞չ բնաւ իսկ ամենի և կշտամ-
բութիւն իցէ առն քրիստոնէի, որում աշխարհս՝ ինքա-
վան անցաւորաց է, և ինքն պանդուխտ, և հայրենիք
իւր՝ երկինք և կեանք հանդերձեալ։ Բ. յսօրինակ միայն
իցեն նորա խորհուրդք 'ի կենսաւոյթ յիշատակի մա-
հուն. որով միայն մարթասցի նա 'ի պանդխտութեան
վայրացս երջանիկ ունել կատարած յետ մեռանելոյն։

Ո՞չ կշտամբութիւն իցէ, ճնաւ արկանել զմահուն 'ի
ցոյցս միայն ճարտասանութեան, 'ի հանդէս միայն հան-
ճարոյն և հմտութեանն և բանաստեղծութեանն, և
ոչ երբէք 'ի հանդէս զղջութեան սրտի, արհամարհու-
թեան աշխարհի. խորամուխ գիտութեան ունայնու-
թեան ամենայնի բաց յԱստուծոյ սիրոյն և 'ի ծառայու-
թենէն, 'ի հանդէս և 'ի գործ և 'ի խթան ապաշխա-
րութեան։

Բ. յս աւաղիկ է ունել միշտ հանդէպ աչաց զմահն,
առանց տեսանելոյ զմահն. նա միշտ տեսանել զմահն
յայլս և ոչ յինքեանս. խորհել զմահն վասն այլոց, և
երբէք ոչ վասն իւր։ "Ոչ ինչ ուրեմն, որպէս ասաց,

digitised by A.R.A.R.@

զոր այնչափ հանապազօր տեսանէն մարդիկ, որպէս զմահն. և չիք զարձեալ՝ զոր այնչափ 'ի մոռացօնս դարձուցանէն, որպէս զմահն ,, : Եւ զինչ իցէն պատճառքն . . . : Վասնզի զխոկումն մահուն և զյիշատակն խնդրէ 'ի քէն Աստուած, ոչ մարդ, 'ի քեզ ինքն մերձեցուցանել, և մի յայլ. 'ի քոյ գործս, և մի յօտարին. "Յիշեա, ասէ, զվախճան, ոչ լոկ. այլ զվախճան քո՝ յամենայն 'ի գործս քո ,, :

Այլ սակայն զհասարակաց կենսաբեր յիշատակ մահուն և զխոկումն, առաւելագոյն ևս օգտիւ վասն երից վիճակաց մարդկան ամիտիւեն հարք սուրբք, այս է ախտակրեալցն մարմնապաշտից, արծաթասիրաց, և ամբարտաւանից, յիմաստս կրկին անխաբս՝ 'ի խոկումն անընտուգութեան ժամանակի մահուն, և 'ի խոկումն ստուգութեան մահուն, խոկումն սոսկալի, սարսիչ քնութեան :

Առաջին՝ ոչ ոք գիտէ, յորում աւուր և յորում ժամու հասցէ մահն. այս խոկումն, ասէն, Աշգրիտ 'ի Ճահ գայ մարմնապաշտիցն : Երկրորդ անգամ՝ ամենայն ոք գիտէ եթէ 'ի մահուն կապուտ կողոպուտ թողցի մարդ յամենայն գոյից իւրոց. և այս խոկումն քաջադէպ յոյժ է ագահ և արծաթասէր մարդկանն : Երրորդ անգամ՝ ամենայն ոք գիտէ եթէ 'ի մահուն զիրկ և անբաժ մնասցէ մարդ յամենայն փառաց և 'ի պատուոյ. իսկ և այս խոկումն քաջադարման դեղ է վասն ամբարտաւանից :

Արդ յաղագս մարմնապաշտիցն Ճահաւորագոյնս և Աշնարտագոյնս ասացին հարքն սուրբք, եթէ "Նշուշա չունի տեղի անդանօր ցանկութիւնն, ուրանօր է խոկումն և երկիւղ մահու ,, : Վասնզի ահ մահուն սանձ մեծապէս է ցոփութեան անժուժկալիցն. և եթէ յաշխարհի բազմագոյնք թուով իցեն մարմնասէրք, վասն այսորիկ է զի նուազունք թուով երկնչին 'ի մահուանէ : Իսկ թէ զպատճառն հարցանիցես զբանիս, քանզի տարադէմ, որպէս ասէն հարքն, տարադէմ յոյժ զմահն կարծեն խօթամտեալքն. մինչև՝ որպէս Աշգրտեաց յասելն աստուածայինն Հերոնիմոս, "Լաւ 'ի կարի զառամելոյ ծերոյն չիք ոք, որ ոչն կարծեսցէ՝ եթէ և այլ ևս ամ մի կեցցէ ինքն յաշխարհի ,, : Եւ

digitised by A.R.A.R.@

եթէ զառամեալքն այնպէս, խորհեաց դու վայր մի, եթէ զինչ միտս ունիցին պատանիք և երիտասարդք։

Այլ արդ առ 'ի քաջիկ խելամուտ լինել՝ պատանիք, եթէ մոռանաքք էք անշուշտ, աղէ ինձ ասացէք վայրիկ մի։ Ո՞ ձեզ խոստումն կռեաց զայդչափ երկարակեցութեան կենաց, զոր յերազէքդ. արդեօք կենատու՞ ջերմութիւն արեանդ, և աշխոյժութիւն ոգւոյն, և առուգութիւն դալարագեղ տիոցդ։ Այլ զի՞նչ, աղէ ասա, զինչ յայդմ ամենայնէ պակասէր 'ի ժիրաժիրդ յայդ արբուն պատանիդ, կամ 'ի քաջառոյդ յայդ օրիորդ, զորս ձերովք իսկ աչօք տեսէք հափափեալ յանկարծ 'ի կենաց և ի ջեալ 'ի տապան 'ի ծաղկահասակ իւրեանց տիս։ Այրիք ելէք դուք 'ի վայր անդր զբօսանաց ձերոց և խաղուց. զննեցէք անդ վայր մի, զիա՞րդ թափուր կայ տեղին 'ի սեղան խաղուցդ. ո՞ւր է պատանին, որ առուրբք յառաջ խաղայր ընդ ձեզ.... չէ 'ի միջի։ Ո՞ւր է և այն ոմն, որ յանցեալ ամին յակուռքս ձեր խրախացուցանէր զձեզ... չէ 'ի միջի։ Ո՞չ ապաքէն ընդ ձեզ եկն նա 'ի սրահ անդր, և զայն օր 'ի սրահէդ անտի չոքաւ 'ի գերեզման։ Ցուցէ՞ երբէք տեղի սփոփութեանց և զբօսանաց ձերոց, յորում չտեսանիցէք դուք ուրեք հետս իմն տպաւորեալ զմահուն։ Այ՛ւթէ պակասեցա՞ն և այսօր պատահաքք յանկարծամահք, և զի՞արդ մարթասջիք այդչափ աղատութեամբ խոստանալ ձեզ կեանս։

Ո՛վ քանիցս նսար և բարակ բնաւորեցաւ թեզն, զոր մէ կախեալ էն կեանքս մեր. և 'ի քանի՞ իրաց զգուշութեան պէտք իցեն, զէթ օր մի յապահովի զկեանս անցուցանել։ Այրհաւիրք յերկնից, զի մի՞ յանկարծ շանթահար տապաստ արկցէ զմեզ։ Այրհաւիրք յերկրէ, զի մի՞ շունչ մի մահաշունչ վարակեսցէ զմեզ։ Այ՛հ 'ի ջրոյ, զի մի՞ հեղձամահք 'ի պտուտիցն լինիցիմք։ Այ՛հ 'ի լերանց, զի մի՞ ընդ փլատակօք ծածկեսցէ զմեզ։

Իսկ և 'ի մարդիկ քանիք ոմանք մահաւիթք լինիցին մեզ. կէսք 'ի թշնամեաց՝ դարանակալութեամբ, կէսք 'ի նախանձոտաց՝ մահաղինութք, կէսք 'ի նաւարտակաց՝ յելուզակութեամբք, աւազակք՝ յանտառս մայրեաց, մասնտուք՝ 'ի յընտանեաց, բարեկամք՝ յուխտանենդ դրժողաց։ Զ՞ինչ ևս 'ի նոցուն իսկ 'ի քոց զբօ-

digitised by A.R.A.R.@

սանաց խէթք և երկիւղ. եթէ ընդ դաշտս գնասս մարգաւէտս, ահա քեզ ընդ առաջեալ իժ. եթէ ընդ մայրիս՝ ահա քեզ գազան. դեգերեալ առ գետափունս՝ քեզ աւասիկ ուղիք. 'ի հաստատուն ցամաքի՝ ահա քեզ գետնաշարժ. նստեալ 'ի տան, կամ պատահաքք ինչ 'ի գետնի 'ի ներքոյ ոտիցդ, կամ տանեաց ինչ 'ի վայր կործանումն 'ի վերայ գլխոյդ։ Մերթ յոտնկելեաց անկումն, մերթ յերիվարէն, մերթ 'ի պատուհանէն. և ամենայն ուրեք մահ։

Այլ այսոքիկ քեզ յարտաքնոց անտի. զինչ արդեօք և 'ի ներքս 'ի քեզ տնկակից դարանակալութիւն կայցէ ընդդէմ կենացդ։ Զի՞ զիտէ, թերևս յայս ժամ՝հիւթք քանի՞ մթերեալք 'ի մարմնի, վեր 'ի վայր յուզեալք 'ի կայից իւրեանց, յանկարծ հեղձամղձուկ արասցեն զքեզ։ Քանի՞ հոսմունք տարադէպք և անկարգք քեզ թանչս պատրաստեսցեն և ահոկութիւնս. և քանիսն տապք տենդից մահաւիթք՝ եռացեալք և հասունացեալք 'ի քեզ սոսկալի անդամազօսութիւն կաթուածոյ սպառնասցին և մահ յանկարծամահ։

Զ.յլ զի՞նչ պէտք իցեն և այնչափիս պատրաստութեանց մահ ածել քեզ. նա 'ի քաջառողջ կենդանութեանդ նաև շունչ հանապազորդեալք ընդ փողոցս միով միայն խածուածով մահացուսցեն զքեզ. ո՞չ ինքնին և մեք վկայք եմք արկածին։ Այլ փուշ մի միայն ախորժաձաշակ ձկանդ, նաև թիւն մի միայն համեղահամ խաղողոյ հեղձամահ առ տեղեաւն արասցէ զմեզ։

Ո՞չ ահա և բիւրուց մահաբեր վրիպակութեանց ընթաղրեալ իցեն թշուառ կեանքս. եթէ որ յընտանեաց անտի և եթէ 'ի ծառայից 'ի պատրաստել մեզ կերակուր, 'ի մատուակել մեզ զըմպելին, 'ի ջամբել մեզ զդեղորայս։

Այլ ապա յետ այսր ամենայնի, ասացէք ինձ. ո՞ է տէր և իշխան և սահմանիչ աւուրց կենաց մերոց. եթէ ինքնին Այստուած արարիչ սրտմտեալ իցէ, որոյ առաջի այսօր 'ի մեզս մեր՝ անկեալ եմք յերեսացն, ո՞չ ահա ակնարկութիւն մի նորա՝ շատ է առ մահն, և անդէն ընչասպառ անկանիցիմք։ Կամեսցի՞ նա արդեօք երկայնաբանել այլ ևս, և երկարաձգել մեզ զկեանս. այլ ո՞ զիտիցէ զայն։ Ո՞ պատմեսցէ մեզ զխորհուրդ ամենակալին, զոր խորհի և այժմ՝ 'ի վերայ քո։

digitised by A.R.A.R.@

Իսկ զոր գիտեմքս յայտնի յաստուածային պատգամացն, և զոր քաջ իսկ տեսանեմք փորձառութեամբ, այս է զոր աստուածեղէն հոգւոյն աղդեաց իմաստունն. «Յանցանել, ասէ, մերկի եղծանի ամբարիշտն. ամբ ամբարշտաց նուազեսցին, յոյս ամբարշտաց կորիցէ»։

Ո՞ զբ առաւել աչխոյժ, առաւել առոյգ 'ի քաջողութեան քան զամբարիշտ արքայն Խաղդասար. յորժամ նա բազմեալ խնդագին 'ի մեծահաց խնձոյսն ընդ մեծամեծացն, և ըմպէր գինի զուարթութեամբ ինքն և աւագորեալն և հարէմք նորա և կանայք, որ խորհուրդ մահու երբեք անկանէր յայնժամ'ի միտս նորա։ Չբնչէր արքունի սրահն 'ի ձայնէ ցնծութեան կոչնականին 'ի բարեկենդանութեան մաղթանս կոչողին։ Այլ մինչդեռ ընդ գինիս մտեալ էր Խաղդասար, տեսիլ յանկարծ ահագին, մատունք ձեռին մարդոյ ելեալք 'ի վերայ բռելոյ որմոյն հանդէպ թագաւորին, գրէին զարագամահ վախճան նորա 'ի գիշերին յայնմիկ։ Զոյն երեսաց յայնժամ հատեալ նորա, և յօդք միջոյ նորա լուծանէին և ծունկքն զմիմեանս բաբախէին. և 'ի գիշերին յայնմիկ, ասէ, սպանաւ Խաղդասար արքայ։ Այլ է իսկ անշուշտ յայսպիսեաց աստի բազումն տեսանել 'ի պատմութիւնս աշխարհի, մահունս յանկարծամահս զմեղաւորաց 'ի նմին իսկ 'ի բորբոքեալ ժամու յանցաւորութեանց նոցա։

Այլ արդ որ միանգամ փափկացեալ 'ի պատիրս՝ ժամեսցի օր և ժամ սահմանել վասն հեշտալեացն, մի երբեք մոռասցի զմահագոյժ մատն զահաւոր ձեռինն. չէ նա դադարեալ և այսօր 'ի գրելոյ ընդդէմ ամբարշտաց. «Տակաւին ձեռն նորա, ասէ, բարձրացեալ է. ոչ դարձաւ սրտմտութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է»։

Ո՞ գիտէ եթէ օրն այն սահմանեալ 'ի քէն վասն հեշտակեաց աւուրն, այն օր իցէ սահմանեալն յերկինից վասն մահուն օրհասի։ Ո՞ գիտէ, յորում ժամու գայ որդի մարդոյ. այն զի յորում ժամու ոչ կարծիցես, յայն ժամ եկեսցէ. զի ոչ զօրն և ոչ զժամն գիտէ մարդ, կնքեաց անսուտն բերան։

Այս աւադիկ ահագին աղդումն անստուգութեան ժամանակի մահուան, 'ի զգաստութիւն մեծ ամենայն

digitised by A.R.A.R.@

մեղաւորաց, մանաւանդ մարմնապաշտիցն. այլ ոչ ինչ նուազ և ստուգութիւնն 'ի մահուն կապուտ կողոպուտ մերկանալոյ յամենայն գոյից՝ զգաստս մեծապէս և մնայոյզս գործեսցէ զարծաթասէր մարդիկն։

Այլ մինչև խօսեալ ինչ զնոցանէն, շնորհս մեծապէս ունիմք աստուածային նախախնամութեանն, որ յետ յանցաւորութեան մերոյ մահ սահմանեաց յաշխարհի։ Վանգի եթէ այժմ առ դուրս իւրեանց մնացուցուն ունելով զմահն՝ բիւրք բիւրուց 'ի մարդկանէ այնչափ զակատեալ էին զՀետ արծաթոյն, մոռացեալք զԱստուած, մոռացեալք զՀոգին, մոռացեալք 'ի սպառ զերկնաւոր մեծութիւնն, զինչ ասես, յոր սահման ընչաքաղցութեան մոլեալ էր նոցա, եթէ յանկարծ անմահութեան վիճակեալ էին կենաց։

Իսկ այժմիկ, քանզի հարկ է մեռանել, զիաւրդ հնար իցէ՞ արծաթասէրքդ, զի ոչ սանձ և ոչ թումբ բաւական կայցէ մահն ընդդէմ անյագուրդ ցանկութեանդ։ Իսկ՝ զիաւրդ հնար իցէ, զի և 'ի նոցունց իսկ 'ի հինօրեայցն և 'ի գերեզման մերձեցելոցն գտանիցես դու առաւել ընչաքաղցս և ընչահաւաքս. և զիաւրդ երբէք հնար իցէ սրտակաթ լինել ձեզ զՀետ այնոցիկ, յորոց 'ի տերութենէն հատանէ ձեզ անհրաժեշտ մերկանալ 'ի մահուն։

Մի խաբիք, ո՞ քրիստոնեայք, և մի խաբէք զանձինս, յասել ձեր զօրհանապազ. իմ է տունդ, իմ է կալուածն, իմ իսկ են անդաստանքդ։ Վաւ, չեն ձեր այդոքիկ. չէք դուք դոցա տեարք։ "Պանդուխտ ես, կրկնէր միշտ աստուածայինն Աւգոստինոս, պանդուխտ ես և նժդեհ. մի խաբիր. 'ի տանդ յայդմիկ զոր քո սեպհական ասես, իբրու վարձուոր իբրու օտար՝ բնակութիւն կալեալ է քո։ Մի՞չ հաւատաս. կալ ուրեմն զքեզ հաստատուն 'ի նեբքս 'ի յարկիդ, զի մի երբէք եկեալ տէրն քո մահ՝ արտաքսեսցէ զքեզ։ Լաւ հիւր չես և պանդուխտ, ոչ երբէք ելցես դու անտի. ապա եթէ հարկ է ելանել կամայ ակամայ, ուր իցէ պանծացեալդ տէրութիւն...։ Այլ տերութեանս իմոյ, ասէ, ես ինքն եմ անօրինիչ իմովս կտակագրութեամբ...։ Վաղջ է... Այլ զինչ իցէ այդ քո կտակագիր անօրինելդ. ոչ ապաքէն կապուտ կողոպուտ մնալ քեզ 'ի

digitised by A.R.A.R.@

գոյիցդ, զոր ոչ ևս այլ կարող իցես 'ի պէտս քո վարել։ Այսպա ուրեմն զկտակաւ թողուլն քո զայն ինչ՝ որ բռնի բառնայ 'ի քէն, զիմիրդ մարթիցիս դու՝ տերութիւն իշխանական համարել քեզ և կոչել։

"Վանիցս անդամ 'ի ծաղր հատայ, ասէր աստուածխնամն Սկեբերան, 'ի ծաղր հատայ ընդ սովորական զրոյցդ։ Վանգի ընթերցայ կտակս բազում գրեալս, և շատ ծիծաղեցայ. քանզի գրեալ կայր անդանօր և սահմանեալ. զի այն ոք զտերութիւնն կալցի զանդաստանացս կամ զտանս. իսկ այլ ոք դարձեալ զպէտս նորա և զվայելեն։ Ոչ ծաղու արժանի իցեն բանքդ. քանզի ամենեքին մեք զվայելեն միայն ունիմք և զպէտսն, իսկ զտերութիւնն և ոչ ոք,,։

Այլ եթէ այս այսպէս, քանիսն իցէ ապա անմտութիւն արծաթասիրին և ագահին, որ յետ այնչափ քրտամբք, այնչափ սիրով ժողովելոյ զարծաթն, ոչ զտերութիւնն ունիցի և ոչ զվայելեն. և 'ի վախճանին բրոնադատեսցի այլոց միայն թողուլ զմթերեալսն սիրով, դառնապէս ցաւով միանգամայն յամենայնէն 'ի մի հարուածդ զրկեալ։

Մանաւանդ եթէ և յորժամ դէպ լիցի նմա մեռանել 'ի ժամանակին, յորում առաւել խնդամիտ գտանիցէ զանձն, տեսեալ զի աւարտեալ գեղեցիկ պակեաց զտունն՝ զոր սկսեալ էր. տեսեալ զի զերծ 'ի դատաստանաց անպայքար գնեաց զկալուածսն. տեսեալ զի լի և զեղուն են արկեղքն ոսկով. տեսեալ զինքն այնուհետև բազմահարուստ առաւել քան զամենայն դրացիսն և զգաւառակիցսն. և եկեսցէ հասցէ յայնժամ օրն, աւաղ, օրն խուճապելոյ յաշխարհէ աստի, յաշխարհէ զոր ոչ գիտասցէ։

Այլ ո՞ւմ այնուհետև լինիցին պատրաստեալքն, ըստ կշտամբութեան տերունական անմիտ մեծատանն. որ նստեալ խորհէր հաշուէր զլութիւնս բախտին. "Ո՛վ անձն, ունիս աւադիկ բազում բարութիւնս,,. հարուստ արծաթով, հարուստ 'ի տունս, հարուստ յանդաստանս, զեղուն ամբարք, լի են շտեմարանք, լի են սապատք. ամբարեալ ամենայն բազմայն։ Վաղ է. ամբարեալ են ամենայն բազմայն 'ի վայելս...։ Այլ էլ շատ. արդեօք և քեզ ինքնին սահմանեալ իցեն վայելքն ա-

digitised by A.R.A.R.@

մաց բազմաց. "Ո՛վ անմիտ, յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն. իսկ զոր պատրաստեցերն, ո՞մ լինիցի ..։ Ո՛վ, եթէ և երրորդ մի յամբարելոցդ յայդոցիկ երթեալ 'ի ձեռս անկեալ էր աղքատաց և ուրախ զտառապեալս արարեալ էր, քանիսն էր քաղցրութիւն դատաստանիդ, քանի՞ աներկեան, քանի՞ միսիթարութեամբ էին ելք քո յաշխարհէ։ Ի. յսչափ ինչ առ արծաթասէրս 'ի փրկաւէտ յիշատակէ մահուն։

Զամ՞է արդ տալ տեսանել վայր մի և ամբարտաւանից զգերեզմանս իւրեանց։ Զիք այլ հրահանգ ազգոյ 'ի խոնարհել զբարձրայօնութիւն մարդկային, և չիք վարժ առաւել սեպհական 'ի զգաստութիւն քան զվարժարան գերեզմանին։ Զանգի՞ զիարդ մարթ իցէ, ասեն հարք առհասարակ, զիարդ երբէք մարթ իցէ ցանկալ ամբարտաւանութեամբ ելանել 'ի վերայ գլխոց այլոց, յորժամ ոք խոկասցի միանգամ, զի յետ սակաւուց առհասարակ մարդիկ հանդերձեալ իցեն գնալ 'ի վերայ գլխոց նոցա և կոխել զնոսա։

Ի. յլ աւա՜ղ խակախորհուրդ մարդկանն, յորս և ոչ հրահանգք անհրաժեշտք վարժարանիս այսորիկ ազդեսցեն ինչ իմաստութիւն. ուստի և թագաւորեալ է յաշխարհի այնչափ ամբարտաւանութիւն։ Զքացեալք այնպէս և պերճք, թուի թէ եկեալ իցեն յաշխարհ փառասէրքն և ամբարհաւաճք սրտիս, ոչ յայլ ինչ, բայց ընթանալ երևել ամենայն ուրեք իբրև գլխահարք ամենեցուն և մեծապանծք։

Զրբէք ոչ գան յերևան, բայց անձնացոյց գոռոզութեամբ. ոչ խօսին՝ բայց հպարտագոյնս. ուր ուրեք հրապարակեն զանձինս՝ նախողջոյնք խնդրեն լինել և բարձերեցք. ուր ուրեք քայլեն՝ հարկ է տեղի տալ նոցա և զանցս շաւղացն լայնել նոցա։ Բարձրապարանոցք և բարձրայօնք յամենայն 'ի գնացս, որ 'ի տունս, որ 'ի փողոցս, որ 'ի հրապարակս, որ յակումբս. զի և հազիւ երբէք կարծին նոքա, կամ թէ խոնարհին, 'ի տեսանել զայլս։ Իբրու որ ինքեանք միայն առարկայք իցեն տեսութեան արժանիք, և ինքեամբք միայն ընութիւն ամենայն վայրք՝ ուր գտանիցին նոքա։

Ա՜հ, այր դու. և ո՞ւր ապա երթեալ յանգիցէ այդ ամենայն ամբարտաւանութիւն։ Զրբէք զմնաւ չաճի-

digitised by A.R.A.R.@

ցես, զի մահկանացուդ՝ յանցանել ամաց կամ աւուրց կամ ժամուց, զի անկենդան անկեալ, և 'ի նեխոյ գարշութեանդ՝ իբրու յամբարտաւան արքայէն զղջանօք 'ի բաց փախիցեն նաև կարևորքն 'ի սիրելեաց և յընտանեաց։ Իսկ ո՞ւր յայնժամ փարելի պերճութիւնդ, ո՞ւր շուք բարձրայօն ձակատուն. յորժամ և 'ի խշտին տարտամութեան քո և 'ի հող գերեզմանին, պատկեր քո պժգալի, և որք հայիցին՝ քստմնափուշ սարսեսցին։ Լու եթէ ես քեզ այժմ ակն չածէի՝ սաստկապէս նողկացուցանել զքեզ, զամենայն գարշանն աստանօր նկարեալ առակեի, յորժամ դու անդ 'ի խորան բնակեալս ի՛ցես յեռանդն որդանց և յամենայն ապականութիւնս։

Լու զիարդ հնար ի՛ցէ, որ միանգամ սերտիւ զձշմարտութիւն զայս խոկացի, երբէք ամբարտաւանել. և մինչև սկամայ 'ի հող մահու և յապականութիւն խոնարհեալ, զիարդ հնար ի՛ցէ՝ կամաւորութեամբ այժմէն չխոնարհել զանձն առաջի Աստուծոյ, և հեզ և խոնարհ սրտիւ՝ լինել և երևեալ առաջի մարդկան։ Օ՜ ինչ օգուտ երբէք յամբարտաւանութենէն կայցէ, ո՛ մահկանացու, աղէ ասա. օգտեաց ինչ այդ յամենայն 'ի դարս՝ աղատ երբէք 'ի նշաւակութենէ մահուն լինել։

Ո՞ որ առաւել գոռոզ, ո՞ առաւել պերճ, իբրու զԱզաբէլ։ Ո՞ւր նորա պերճութիւնն, ո՞ւր գոռոզութեան զարդ զվիսոյն, յորժամ 'ի պատուհանէ արքունեացն հոսեցաւ։ "Օ՜արբեաց, ասէ, զաչս իւր, և զարդարեաց զգլուխ իւր, և հայեր ընդ պատուհանն"։ Ո՞ւր 'ի միտս անկաւ նորա յայնժամ յիշատակ մահուն, յորժամ սիգաձեմ խրոխտապանծ զարդուն անցանէր գնայր՝ ընդ արքունի պատուհանն կարկառեալ։ "Ընկեցէ՛ք զդա 'ի վայր, գոչէր վրէժխնդիր իշխանն, ընկեցէ՛ք զանիծեալն 'ի խոնարհ"... Ընկեցաւ, և ցայտեցաւ յարենէ նորա զղմովքն և զձիովքն, և կոխեցին զնա առաթուր"։ Ընդ գոռոզ տիկինն յանկարծ գէշ անկեալ 'ի կուր շանց, մինչդեռ իշխանն յետ ժամուց 'ի գութ շարժեալ առաքէր զթաղմանէն. "Երթայք տեսէք, ասէ. զանիծեալն զայն և թաղեցէք զնա. զի դուստր թագաւորի է"։ Ո՞յլ ո՞ւր Զաբէլ, զի թաղեսցեն...։ Գտան խնդրեն և զԶաբէլ չգտանեն. "Ո՞ղբան, ա-

digitised by A.R.A.R.@

սէ, Թաղել զնա. և ոչ ինչ գտին 'ի նմանէ, բայց զգա-
գաթն և զոտն և զԹաթս ձեռացն. և դարձան պատմե-
ցին նմա.,։ Բ.ինպէս 'ի ձեռս բարձեալ զՀատակոտորն
զնորա զքստմնելիս, գան ցուցանեն տեառն իւրեանց,
և ասեն. "Բ.Հաւասիկ Յեզաբէլ.,։ Ի սոսկումն հարան
ամենայն տեսանելիք։ Բ.յլ քանի՞ առաւել քստմնելի
իցէ տեսիլն մեր ամենեցուն 'ի դիակունսն, և քանի՞
սոսկալի 'ի գերեզմանին յեռալոյն անբաւից որդանցն՝
գործել 'ի մարմինն զայն ինչ՝ զոր ոչ գործեցին լափիլ-
զող շունքն ընդ Յեզաբէլ։

Բ.զէ բացէք դուք այդր և տեսցուք. Թերևս 'ի խառ-
նակոյտ անդր ոսկերացն մարԹասցուք գտանել Ճանա-
չել զգլուխն զայն. և ցուցեալ զայն ասասցուք. "Բ.-
Հաւասիկ Յեզաբէլ...,։ Այս այս է գլուխն, պՀնա-
զարդն, բարձրապարանոցն, որ այնչափ շուք և այն-
չափ սէր և այնչափ երկրպագութիւն եգիտ երբեմն.
"Բ.յս է Յեզաբէլ.,։

Այս այս իցէ գլուխն բարձրայօն։ Յայս գլուխ նիւ-
Թեցան այնչափ հնարագիտութիւնք փառաց, այնչափ
մենքենայք երկրաւոր մեծութեանս։ Յայսմ գլխոյ որ-
տացին ամբարհաւաճութեամբ այնչափ արհաւիրք
սպառնալեաց, այնչափ հրամանատարութիւնք բռնու-
Թեանց...։ Բ.յս է գլուխն, որ այնչափ կռփեաց զա-
նաւագսն, այնչափ արհամարհեաց զաղքատ որեարն,
այնչափ հարստահարեաց զաշխարհ...։

Այս այս իցէ գլուխն, որ 'ի վեգ եկեալ ընդ քահա-
նայիցն Բ.ստուծոյ և մարտ եղեալ կռուեցաւ ընդ եկե-
ղեցւոյ. որ ժխտեաց հպատակել զանձն սրբութեան
սեղանոյն, որ յաւակնեցաւ մինչև ընդդէմ դառնալ Բ.-
ստուծոյ։ "Բ.յս իցէ Յեզաբէլ...,։ Ո՞ւր գլուխն ամ-
բարտաւան, ո՞ւր ծարիր աչացն, ո՞ւր գլխաշուք զարդն...
Ո՞ւր որոտընդոստն բարբառող լեզու։ Ո՞'ի քէն խլեաց
զաչդ, աչք լուսալիքդ, փայլակնացայտք։ Ո՞վ զիարդ
ժուժալ 'ի ժամուս, և ոչ յարտասուս ողբալ զքեզ,
կեա՞նք աշխարհի, կեա՞նք անկայուն, խաբող դա-
ւաՃան։

Բ.յլ զի՞նչ օգուտ յողբալոյն զանցաւոր զկեանսն,
յորժամ մերձ ոչ իցէ խնամութեամբ խոկումն վախ-
Ճանի կենացն։ Բ.զէ միանգամ խնամտնասցին ամբար-

digitised by A.R.A.R.@

տաւանք 'ի յիշատակէ մահուն, յուշ ածեալ եթէ կայ 'ի վերայ գլխոց նոցա Աստուած, Աստուած՝ որ կամ խոնարհս կամուրս ինդրէ լինել նոցա 'ի կեանս և կամ ակամայ 'ի մահուն։ Աւլ զինչ շահ յակամայ խոնարհութենէն, քանզի դատապարտութիւն է վախճանն։

Աղեալ ուրեմն միւսանգամ զաստուածային պատգամն՝ զպտղաւէտն յիշատակ մահուն, 'ի քեզ լինքն հայեաց ով մարդ, և Յիշեա, ոչ զվախճան լոկ, այլ զքո վախճան և 'ի քոյ յամենայն 'ի գործս, և մեծաշահ օգտեսցիս 'ի յիշատակէն։ Զանգի և անշուշտ պտղաբերութեամբ յիշեսցեն մարմնապաշտք զանստուգութիւն ժամանակի մահուան։ Յիշեսցեն արծաթասէրք զստուգութիւն կորստեան գոյիցն։ Յիշեսցեն ամբարտաւանք զստուգութիւն մերկանալոյ 'ի պատուոյն իւրեանց։ Աղաջինքն ուշ եղեալ հայեսցին 'ի Աղղասար։ Երկրորդքն անմոռաց կալցին զմեծատունն անմիտ։ Երրորդքն հանապազ խոկասցեն զՅեզաբէլ։

Եւ ապա զայս օրինակ առ արմին զտապարն եղեալ երից մահաբեր ծառոյն, մարմնապաշտութեան, արծաթասիրութեան, ամբարտաւանութեան, յորոց և ամենայն ախտից և մեղաց դառնութեան բոյսք, անշուշտ այնուհետև յիշատակ մահուն պտղաբերեսցէ զապաշխարութիւն, և ապաշխարութիւն՝ զյաւիտենականն փրկութիւն։

ՄԱՍՆ Բ.

Ի կենսաւէտ մահուն յիշատակէ ցայս վայր դրդեալքդ յապաշխարութիւն, ունկն դիր սակաւուք այժմիկ, սիրելիք, և որպիսի՞ այն ապաշխարութիւն և ո՞ր այն իցէ, որ միսիթար մեզ և քաջալեր 'ի մահուան մերում լինիցի։

Եւ արդ այն ապաշխարութիւն սիրելիք, որ ոչն ապաւեալ մնայ մահուն, այլ մինչդեռ քաջառողջք իցեմք, և արասցուք զայն. այն է քաջալեր մեզ, և նոյն փրկա-

digitised by A.R.A.R.@

ւէտ. այն է մեզ միսիթար և նոյն խնդացուցիչ 'ի ժամու մահուն. քանզի կամաւոր է գլխովին, քանզի երանդուն է, քանզի պտուղ է Հշմարիտ հաւատոյն, պտուղ է Հշմարիտ սիրոյն Աստուծոյ. քանզի անբռնադատ է, և պտուղ է կենսաւիթ երկիւղին Աստուծոյ։ Որով բանիւ, այն ապաշխարութիւն, որ ոչն յերկարաձգի մինչև 'ի կէտ մահուն։

Զանզի մինչև ցայն ժամ յերկարեալն ապաշխարութիւն՝ ինչ մի ունի յինքեան ծառայական, ինչ մի բրոնական, որ մեծապէս 'ի վարանս յայնժամ արկանէ զմեզ։ Զուի իմն այնպէս դժկամակել մեզ ընդ այն, և զի այնպէս ասել՝ իբրու տոռամբք քարշեալ. թուի իմն այնպէս՝ անձնատուր մանաւանդ առ ահի մահուն լինել, քան առ 'ի ցաւոց մեղացն. և թուի իմն այնպէս՝ դադարել 'ի մեղանչելոյ, ոչ զի ոչ կամին մեղանչել, այլ զի ոչ ևս կարեն մեղանչել։

Զու ահա բազումք քաջ իսկ տան զհաւատսին, յորժամ միանգամ զերծեալք յահագին ժամէն, դառնան միւսանգամ չար ևս յառաջին փսխածն։ Զ ասն որոյ և ապաշխարութիւնն այն միշտ լի է խռովութեամբ, լի երկևանութեամբ, վարանական է և անդրդական։

Զմտաւ ած, քանիցս իցէ տագնապն մերձ 'ի մահ օրհասական հիքացելոյն, որ 'ի մահձի անդ մահուն ծանրաբեռնեալ մեղաքն՝ որչափ ինչ գործեաց 'ի կեանս և չապաշխարեաց, և ահա յայն տագնապ հոգւոյն, միանգամայն և 'ի դժուարին կիրս խօթութեան տապացեալ մարմնոյն, յեղակարծումն ձայն ահեղ գոչեսցէ յունկն նորա. "Հրաման տուր վասն տանդ, զի մեռանիս և ոչ կեաս"։

Զ՝վ գուժին, զոր ազդումն շանթեսցէ 'ի սիրտ օրհասականին. քանի՞ ինչ իրք յայնժամ նկարեսցին աչաց նորա. ո՞ր խուժան, ո՞ր ամբոխումն չյուզեսցի ընդ երակունս նորա...։ Յական քթթել ելանել մեկնել ողջոյն յաշխարհէ աստի, և գնալ յաշխարհ զոր ոչ գիտասցէ...։ Զ՝ նոյն տագնապ զգալ լսել ամենայն ուստեք, նա և զխուճապ և զհեծել ընտանեացն՝ յելս յանկարծահաս խռովեալ հոգւոյն յեղկելի մարմնոյն։

Զու ապա յայն շտապ մեծի տագնապին՝ թէպէտ և ձիգն ևս մեծ թափեսցէ նա դառնալ առ Աստուած,

digitised by A.R.A.R.@

ոչ գիտեմ եթէ ձիգն այն յանդորրու յապահովի կա-
ցուսցէ՞ յայնժամ զապաշխարող զայնպիսին՝ մեռանել
խաղաղութեամբ։

Իսկ ներհակաբար դարձիր դու հայեաց միանգամ,
քանիսն իցէ քաջալերն, քանի՞ աներկեւանութիւն հոգ-
ւոյն, որ միանգամ յընթացս քաջառողջ կենացն 'ի սրտէ
առ Աստուած դարձեալ իցէ, ոչ ինչ սպասեալ ահագին
ժամուն։ Այլ հասեալ ապա 'ի մեռանել, տեսանէ ար-
դէն իսկ հորդեալ զձանապարհն, հարթ և դիւրին
զուղին երկնաւոր։

Այս և գեղեցիկ այն պատրաստութիւն կանխաժամն
հոգւոյն՝ համարձակութիւն աներկեան տացէ բժշկացն
և ընտանեացն, երթալ կանուխ ազդել յունկն նորա
զվտանգն։ Այլ է տեսանել յայն ազգումն 'ի բազումն՝
կնիք ակներև զյաւիտենական բարեվիճակ ընտրու-
թեան. քանզի կէաք յայտնի 'ի խնդութիւն և 'ի հրա-
ճուանս հատանին. և տեսիս ինքնին՝ զի և կէաք համ-
բոյր եւս զդդուալից տային ձեռաց բժշկին, որ կան-
խեաց համարձակ ազդեաց նմա զվտանգն. դարձեալ և
զկէաս՝ որոց պէտք ինչ չէին յումեքէ մխիթարութիւն
և քաջալերք առնուլ 'ի դժուարին ժամուն, նա մանաւանդ
ինքն մխիթար մատուցանէր և խրախոյս՝ որոց մերձն
կային յաւանդել հոգւոյն...։ Քանի՞ բերկրանք իցեն
սրտի հանդիպել տեսանել յայսպիսեաց ատի օրհ-
ասականաց։

Աղաշխարութեան հանդէսք, իղձք զղջութե սրտի,
փափաք սիրոյն առ Աստուած՝ չէն առ նոսա անուանք
նորք և իրք անսովորք. զԱստուծոյ ողորմութեանն ըզ-
գեղեցիկ ճաշակն և զքաղցրն արդէն իսկ բազում ան-
գամ ճաշակեալ է նոցա 'ի կեանս իւրեանց. և զխաչն
Քրիստոսի արդէն իսկ քաջիկ ծանեան նոքա յօրէ
անտի, յորում առ պատուանդանի նորա արտասուս բա-
զում թափեցին նոքա 'ի սրտէ. և 'ի վերջին ժամուն
յայնմիկ ոչ ինչ սպասեալ մնան նոքա առնուլ զայն 'ի
ձեռաց հօր խոստովանութեան իւրեանց. ինքեանք իսկ
կանխեն ինդրեն փափաքմամբ, և կամին միշտ առն-
թեր 'ի մահճի մահուն ունել զնա առ իւրեանս։

Իսկ և յամենայն դարձուածս մահահամբոյր աչաց իւ-
րեանց առ խաչելեալն՝ ճմլին սիրտք նոցա սիրով խաչե-

digitised by A.R.A.R.@

լոյն. և յիշեն և զգան 'ի սրտի իւրեանց զՀին խոցուածս զսիրոյն և զզղջմանն և զապաշխարութեանն՝ զոր արարին 'ի կեանս. ուստի և զամենայն մխիթարութիւն և զքաջալերս զգեցեալ էն նոքա յայնժամ յերջանիկ եղս իւրեանց։ Խաբէ այնպիսի երանաւէտ մահուն. եթէ մահ արժան իցէ կոչել և ոչ կենաց սկիզբն։

Այս օրինակ մեռանէին ամենայն ապաշխարողք սուրբք. զայս օրինակ ինդայր 'ի մահուն և երջանիկն Աղոստինոս. ոչ այլ ինչ կամէր ասել յաւուրս վախճանին իւրոյ, բայց զՀրաշագիծ զընթերցուած ապաշխարութեան սաղմոսացն Դաւթի։ Խաղցր էր նմա 'ի ժամուն յայնմիկ յածեցուցանել միանգամ զխորհուրդս իւր յապաշխարութիւնս իւր զոր արար 'ի կեանս. և 'ի մեծութեան մեղաց իւրոց խելամուտ լինել մեծի ողորմութեանն Աստուծոյ 'ի թողուլ զմեղսն. և ասէր երանելին. "Ով 'ի դէպ մարդոյ՝ որչափ և անմեղ իցէ, երթալ յանդիման լինել դատաւորին Աստուծոյ, բայց թէ նշանագրեստ զանձամբ առեալ զապաշխարողի..։

Իսկ եթէ քանի՞ քաջալերս, քանի՞ վստահութիւն իցէ այդ 'ի սիրտ մարդոյ 'ի մահ մերձեցելոյ, դու ինքնին հեշտեաւ ծանիցես 'ի քումդ փորձոյ, զոր փորձեցեր դու յաւուրն՝ յորում 'ի բոլոր սրտէ դարձար երբէք առ Աստուած յընթացս կենացդ։ Եթէ այնչափ մխիթարութիւն աղդեաց յայնժամ 'ի հոգիդ զիղջ քո այդ և խոստովանութիւն մեղացդ, քանի՞ն եղիցի 'ի մահուն քում, յորժամ բովանդակ զքաղցր պտուղ զնորա քաղեսցես յայնժամ անվեհեր. յայնմ ահագին վայրկենի՝ յորում ամենայն դիմակք և պատրուակք 'ի բաց զերծցին յամենայն առարկայից, և ումպէտք և ընչինք որպէս էին՝ առակեսցին ամենայն կենցաղականքս։

Քանի՞ սանձալի զուարթութեամբ յերևան դայցէ յայնժամ 'ի մահ մերձեցելոյն՝ արժանընկալ ապաշխարութիւն նորա, որ պատճառք եղիցի անթառամելի պսակին նորա։ Քանի՞ փառաւորեսցէ օրհնեսցէ նա զԱստուած, զի այնպէս 'ի ժամ բարեպատեհ կոչեաց զնա յաւուրս դարձին իւրոյ. ընդ որում և առ բազումս 'ի բազմամեայ մեղաւորաց մարդասիրապէս բարեդործեաց նա, երկայնամտեալ ընդ հարուստ ամս չարաչար կենաց նոցա, և ապա 'ի տարւոջ անկեղծաւոր դարձին նոցա կոչեաց զնոսա։

digitised by A.R.A.R.@

Լ.յլ սակայն և զչափ մարդասիրութեանն և զժամանակ երկայնմտութեանն իւրոյ ինքն միայն գիտէ. իսկ որ մեզ հարկաւոր միայն՝ զայս պատուիրէ. "Լ.սցէ՛ եթէ ձայնի նորա լսիցէք, մի խստացուցանէք զսիրտս ձեր"։ Օ՞ինչ խստացուցանելն իցէ։ Օ՞դարձն քո առ Լ.ստուած մի յերկարաձգեսցես օր յօրէ, և ամիս յամսոյ, և ամ յամէ։ Լ.պա թէ ոչ՝ ձայն այնուհետև դադարեսցէ զքեզ աստուածայնոյն Պաւղոսի. "Լ.թէ դու զներելո

Աչեմ ստէպ և կրկնեմ և աղաչեմ. Մինչդեռ այսօրդ առաջի կայ, դարձ առ Աստուած։ «Այս նա աւասիկ և բախէ զդուռս քո. երանի՛ որ լսիցէ և ոչ տացէ սպասել տեառն իւրոյ»։ Ասեմ միայն, այլ և աղաչեմ սիրոյն Քրիստոսի. յուշ ածցես միանգամ՝ եթէ յաւիտենական է վտանգն. Մինչդեռ այսօրդ 'ի ձեռս է, դարձիր առ Աստուած։

Քանզի պարտք են ինձ անհրաժեշտ, յորմէ հետէ յանձն առեալս եմ՝ 'ի քարոզել, պարտք են ինձ կրկնել և երեքկնել և աղաչել. քանզի եթէ չառեւտարանեմ վա՛յ է ինձ. քանզի և անձնապուր լինել ինձ 'ի տալոյ համարս վասն ձեր՝ չիք հնար. «Օ՜ արիւն նորա, ասէ Աստուած, 'ի ձեռաց քոց խնդրեցից»։

Լա՜ւ արդ որո՛ւմ պատուհասի ակն ոչ կալայց ես առ 'ի Յ՚Աստուծոյ, եթէ 'ի շահախնդրութեան հոգւոց ձերոց նուազեալ գտայց ես քան զՀաղարապետս ձեր մարմնաւորս և զգաւառապետս, որ անդուլ տքնին 'ի շահ անցաւոր օգտի ձերոյ։ Քանզի գան նոքա առաջի ձեր իբրև հաւատարիմք, և ստէպ ազդ առնեն ձեզ, մի՛ հեղգալ մի՛ դանդաղել առ վաղիւն. ստացուած աւադիկ, ասեն, լաւ և դիւրագնի կալուածոյ կամ տան կամ ագարակի կայ առաջի, 'ի վաճառ հանեալ է, մի՛ ձգեր առ վաղիւն. այսօր իսկ հատցես զգինն մեծապէս շահու. մի՛ զբաւրեպատեհ բաղդն հանցես 'ի ձեռաց. ստացիր և տեր կաց անանցական վաճառուց։ Օ՜ այսոսիկ նոքա։ Իսկ և ես վեհերեալ ո՛չ սնդեցից զմէջս իմ փութացուցանել զձեզ, և մի՛ օր յօրէ և ամիս յամսոյ յերկարաձգել զստացուած յաւիտենական կալուածոց ձերոց։

Օ՜ն անդր 'ի բաց տարայք զդանդաղանսդ. ահա ժամանակ ընդունելի, ահա ժամ բարեպատեհ, ահա օր փրկութեան. «Օ՜ի հեղգաս, զի՞նանիայլին խրախոյս առ Պաւղոս կարդացից, զի՞ հեղգաս. արի և լուա զմեղս քո 'ի կարդալ զանունն Յիսուսի»։ «Օ՜ի հեղգաս» յորժամ լինքնին օր մահուն անստոյգ, և կոբուստ գոյիցդ և փառացդ՝ ստոյգ, 'ի նոյն մտրակեալ ստիպէ զքեզ։ «Արի և լուա զմեղս քո»։ Յիշատակ մահուդ խթան անշուշտ եղիցի քեզ յապաշխարութիւն, զի և ապաշխարութիւնն եղիցի քեզ միակ քաջալերը 'ի մահուն քո։

digitised by A.R.A.R.@

ԿԱՐՈՂԼ։

ԳՈՆ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔ

«Եւ երրիցեն նորա 'ի տանչեանս յաւիտենականս, և արդարքն 'ի կեանս յաւիտենականս»։

Ո՛վ զիա՞դ միանգամ զձայնն արձակեաց, և զյաւիտենական վճիռն եհատ...։

Ահաւասիկ ո՞ւր 'ի վերջէ երթեալ յանգեցան ամենայն երկրաւորքս, իղձք բաղձացեալք, յուսոյ ակնկալութիւնք, հանձարք խորհրդոց, նահատակութիւնք գործոց։ Ո՞ւր զնացեալ հուսկ ուրեմն սպառեցան մնոտիապատուաստ խորհրդածութիւնք և ամենայն կարծիք խմաստնոց աշխարհի։ Ո՞ւր երկմտութիւնք և հանապազօրեայ վարանք թուլահաւատիցն։ Ո՞ւր աշխարհակուլ խորհուրդք և իղձք տիեզերականացն արքայից, և յիշատակարանքն մեծագործք և մահարձանքն հաստատեղոյսք ո՞ւր տապալեցան։ Ո՞ւր հետամուտ ջանք համբաւոյն, և շուք մատենագրութեանց հանճարիմաստ որերոյն, և բախտին խաղք, և տերութեանց և պետութեանցն բարգաւաճանք, և բնաւ իսկ ամենայն վայելչութիւնք աշխարհի։

Ահա այսպէս ահագին յայտնութեամբ յանկարծակի երևեսցի օրն, յորում՝ 'ի վեր առցի քօղ ծածուկ խորհրդոց նախախնամութեանն 'ի վիճակս վիճակս որդւոց Ադամայ, և արդարասցի խմաստութիւնն Աստուծոյ 'ի վարչութեան տիեզերաց։ Վանդի և ոչ այլ

digitised by A.R.A.R.@

ինչ գիտեմք զաստի կեանքս, բայց սուղ և արագա-
թռիչ վայրկեան, և սկիզբն անեղը և անծայր հանդեր-
ձելոցն. ուր կամ անսպառ տանջանք, կամ անսպառ
բերկրանք սահմանեսցեն զվիճակ ամենայն մարդոյ. և
յերկուց անտի մին կնքեսցէ և զիմն։

Մի՛ ահա այս իմաստ հրահանգիչ վարուց հզօր ա-
ռաւել քան զամենայն իմաստ։ Այս սակայն պատկեր
ահագին տեսարանիս, որ երբեմն զբռնաւորաց սիրտն
սարսեաց, և զպերճութիւն արքայից կոխեաց, և զպլն-
դութիւն զիմաստասիրացն վանեաց, և զփափկութիւն
Լեսարացն խռովեաց, և զվայրագութիւն խուժադուժ
ազգացն հեղձցոյց։ Այլ և որ տոհմականս հրաշալիս
'ի վեր երևեցոյց. բազմացոյց մարտիրոսս, շէն կացոյց
զանապատս, և զտիեզերս ամենայն 'ի լուծ խաչին նուա-
ճեաց։ Այս պատկեր ասեմ յոչինչ պիտանացու իցէ
այսօր, բայց յահաբեկել վայրիկ մի և եթ զհաւատա-
ցեալս. ուստի և ո՞ ոք այսօր սրտապնդեալ հանդիսացի
երբէք 'ի բեմէ զահագինս զայսոսիկ ողջ և ձշգրիտ
նկարու 'ի լսելիս յեղուլ սուտ և վայրապար իմաստնա-
ցելոցն յանձինս, կամ փափկակեաց որելոյն, կամ կռա-
պաշտից արծաթոյն։

Բանզի և պտուղն դոգցես միշտ յայսպիսեաց պըտ-
ղաբերեալ քարոզից՝ այն եղիցի բազմագունիցն յուն-
կընդրաց. զի այն ինչ ելեալք արտաքս յեկեղեցւոյս,
առ վայր մի դողումն կալեալ զնոսա՝ հարցումն առ մի-
մեանս արասցեն վարանմամբ, զինչ արդեօք, ո՛վ եղ-
բայր, և իւրաքանչիւր մեր եղիցի սահմանն 'ի հանդեր-
ձեալն. զինչ արդեօք. յայս վարանին և ցայս վայր
միայն զկայ առնուն. և այնպիսիք ելանեն արտաքս,
որպիսիք մտին 'ի ներքս։

Այլ մի զարմանար. զի լուր լսելեայն իբրև զմրրիկ
անցեալ, իսկ անդուստ հանապազօրեայ հեշտութիւնն
խաբէ, և արծաթն վանէ, և բանսարկուն դրդէ, և
աշխարհ ապականէ, որ ցանկութիւն է մարմնոյ և
ցանկութիւն է աչաց և ամբարտաւանութիւն է աստի
կենաց։ Այս ամենայն քօղ արկանէ յստակատես տե-
սութեան մտաց 'ի վերայ հանդերձելոցն, և ապիկար
զկամն գործէ 'ի բարիս. գոգցես և յերկբայս ևս ար-
կանէ զմիտն վասն հանդերձելոցն, կամ թէ զձշմար-

digitised by A.R.A.R.@

տութիւն հատուցմանն տկարացուցանէ. Էր վասն. քանզի հատուցումն է՝ որ վերը 'ի վայր միշտ բնաւորեցաւ խոովել զհեշտակեաց կեանս աշխարհի. քանզի հաւատ կենդանի վասն հանդերձելոցն՝ սանձ դժոխքմ բեր է մարդկային կրից։

Այլ գրեա եթէ մարդ հեշտակեաց և յախտս զանազանս անձնատուր, եթէ արծաթսիրութեան իցէ, եթէ փառասիրութեան, այլովքն հանդերձ, ոչ հանդարտէ, մինչև ոչ նախ երկմիտ լինիցի 'ի վերայ հանդերձելոցն և 'ի ծածուկ անհաւատ։ Այլ ապա այնուհետև կեայ հանդարտիկ և անխիղճ, և յախտալից կեանս իւր ստութեամբ անդորրացեալ է 'ի հոգին. և յապականութենէ անտի սրտին ապականեալ և մոռացն տեսութիւն՝ ոչ խորհի և ոչ խորհիլ կամի և ոչ իմանալ, եթէ յետ մահու մարմնոյն կեցցէ՞ն արդեօք տակաւին անկարգութիւնք մարմնոյն. և արդեօք ամենայնն մեռցի ընդ մարմնոյ. և թէպէտ և ընդ աստի կենաց վախճան առցէ յանցաւորութիւն հոգւոյն, արդեօք սկիզբն յայնժամ եղիցի անվախճան պատուհասի հոգւոյն։

Հապա և մեք 'ի սնդել զՀմարտութիւնն անսուտ, և 'ի վանել զանդորրութիւն զայն ոգւոյն զմահահամբոյր և զսուտ, 'ի դիմի հարեալ տապալեսցուք փաստիւք, որչափ ինչ միանգամ հեշտակեաց կեանք և ապականեալ վարք թելադրեն մտաց և կամաց մարդոյն պատրուակս սուտս և ապաւէնս վաղափուլս ընդդէմ հանդերձելոցն։

Այլ առաջին, "Ո՞ գիտէ, ասեն, եթէ 'ի մեռանել մեր՝ ոչ և ամենայնն միանգամայն վախճան առնուցու ընդ մեզ։ Այլ այդ հանդերձեալ կեանք, զոր քարոզեն և ցուցանեն, իցէ՞ արդեօք այդչափ հաստատիւն և ամենևին ստոյգ։ Իսկ և ո՞ ոք դարձաւ անտի երբէք առ մեզ, և պատմեաց զիմ՞դ իցեն իրքդ այդոքիկ"։

Երկրորդ անգամ, "Այլ իցէ՞ արդեօք, ասեն, բանդ այդ արժանի մեծվայելչութեանն Աստուծոյ, խոնարհել, զիջանել, և հաշիւ ունել զօրհանապազ՝ զինչ ինչ գործիցին 'ի մարդիկ, և զինչ յանցանիցեն նոքա։ Զինչ փոյթ իցէ ամենակալին, եթէ անարդ որդունք երկրի, որպիսի եմքս, զմիմեանս սպանցեն, զմիմեանս խաբեսցեն, զմիմեանս հարստահարիցեն. արդեօք ժուժ-

digitised by A.R.A.R.@

կալք իցեն, արդեաք անժուժկալք։ Եւ չիցէ այդ հպարտութիւն հողածին մարդոյն, կարծել հաւատալ եթէ Աստուած գերագոյական էակ հոգ ինչ կալցի զանարգութեան նորա ,,։

Երրորդ անգամ. "Եւ զիարդ հաւանելի իցէ, ասեն, եթէ 'ի ստեղծանելն Աստուծոյ զմարդն այնպիսի, որպիսի է այժմ. և ապա իբրև յանցաւորութիւն պատուհասեսցէ զյօժարութիւն զայն 'ի հեշտալիսն՝ զոր ունիմք իբրև 'ի բնութենէ տուեալ և տնկակից մեզ ,,։

Հաւասիկ քեզ բովանդակութիւն թելադրութեցն՝ որ յապականութենէ վարուց և 'ի սանձարձակ կենացն։ Երկմտութիւն վասն հանդերձելոցն։ Անծվայելչութիւնն Աստուծոյ, զոր անարգ ոք ստեղծուած չէ բաւական թշնամանել յանցաւորութեամբն։ Ընդաբոյս տկարութիւն մարդոյ և յողջոյզութիւն. ուստի և անիրաւութիւն իցէ զայն 'ի մեզ գրել նմա։

Ապա և մեք ընդդէմ հաւաստիս անվանելիս 'ի ներքս բերցուք. Նախ եթէ անխաբ ճշմարտութիւն հանդերձելոցն արդարացեալ է ինքնին և 'ի նմին իսկ ողջամիտ և յանաղօտ լուսոյ բանին։ Երկրորդ անգամ եթէ չէ անարժան մեծվայելչութեանն Աստուծոյ հոգ և խնամ ունել յամենայնի զարարածոյն իւրոյ։ Եւ այս ևս ճշմարտութիւն արդարացեալ է յիմաստութենէ անտի Աստուծոյ և 'ի փառաց նորա։ Երրորդ անգամ, եթէ պատրուակդ այդ՝ որ յընդաբոյս տկարութենէ մարդոյն ասուտ է գլխովին. և ճշմարտութիւնս այս արդարացեալ է 'ի նմին իսկ 'ի ներքին դատաստանէ մտացն խղճի։

Զի՞ որ լուսաւորութիւն երբէք ծագեսցէ, ո՞վ Աստուած իմ, 'ի միտս և 'ի սիրտս կամաւոր կուրացելոցն, եթէ ոչ լոյս քո աստուածային իմաստութեան կանխեալ ազդեսցէ, յիս որ ասեմ, և 'ի սոսա որ լսեն. զի առ հասարակ մեք լուսով երեսաց քոց տեսանիցեմք զլոյս։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆ Ա.

Բ.ղեօք ոչ գժոխքմբեր իցէ, սիրելիք, պաշտամանս մերոյ, կալ առաջի հաւատացելոց և նոցուն իսկ յանդիման հաւաստիս 'ի ներքս տալ յաղագս որ 'ի հաւատս դաւանութեանս մերոյ առաւել մխիթար և առաւել ուրախարար՝ յայտնի ճշմարտութեանցն, հանդերձելոյն ասեմ կենաց, և անմահութեան հոգւոյս, և աստուածայնոյն որ 'ի մեզ նախախնամութեամբ, և հանդերձեալ հատուցման վարձուցն՝ ըստ իւրաքանչիւր գործոցն։

Ո՞չ ահա նշանախեցք առաջինք են այդոքիկ և հիմունք հաւատոյս մերոյ. յորմէ և աստուածխնամն Պաւղոս առ գերաբուն կարծեցեալ իմաստասէրսն Բ. բիսպագին առնէր սկիզբն, եթէ ազգ եւք մեք Բ.ստուծոյ, ուստի և շառաւիղ 'ի նմանէ անմահ է հոգիս. օր ուրեմն եկեսցէ արարչին 'ի դատել զարարածս և հատուցանել իւրաքանչիւր զարժանին։ Օ նոյն ըստ նմանէն և ամենայն առաքելական հարք հիմն եղին դաւանութեանս մերոյ յընդհանուրս։

Իսկ արդ առ մեզ շինուած իմանալի հաւատոյս մերոյ արդէն իսկ կանգնեալ 'ի վերայ հիմանցն և բարձրացեալ և պսակեալ, և ամենայն ինչ ըստ գրոց մարգարէիցն կատարեալ, և Բ.ր.իստոս առ հասարակ դաւանեալ և փառաւորեալ, և Ճանապարհ սրբոյն մաքրեալ և հորդեալ, զինչ ուրեմն պէտք էին մեզ 'ի քարոզել այլ ինչ, բայց թէ միայն պատրաստել ժողովուրդ կազմեալ, և հանել յանդիման Բ.ր.իստոսի 'ի դալստեան նորա. որում և վերջին դարուց ծնունդքս ակն կալեալ սպասեմք 'ի մեծոյ առաւել քան զհարսն մեր։

Բ.յլ որպէս ասացի, քանզի մարմին հրապուրէ և բանսարկուն խաբէ և աշխարհ գայթակղեցուցանէ՝ մանաւանդ 'ի մահաշունչ մատենիցն վերծանութենէ, և ապա այս ամենայն զյստակ տեսութիւն զհանդերձելոյն աղօտացուցանէ 'ի միտս և 'ի սիրտս ապականելոյն 'ի վարս։

digitised by A.R.A.R.@

"Ո՛ռք, ասէն, դարձաւ 'ի մեռելոց, և պատմեաց ինչ մեզ զՀանդերձելոցն և զՀառս զանտի կենացն։ Եթէ կայցէ ինչ տակաւին յետ մահուն, զայն ո՞ գիտաց։ Հապա մեք վայելեսցուք 'ի բարութիւնս որ կանն, զոր տեսանեմք, զոր շօշափեմք,,։

Եւ արդ ասեմ. եթէ այս երկմտութիւն և թերահաւատութիւն զՀանդերձելոցն խարխուլ է և վաղափուլ 'ի սկիզբն ծագման իւրոյ. անմիտ է և անհանձար 'ի փաստս հաստատութեան իւրոյ. է և քստմնելի և դժոխրմբեր 'ի հետևանս իւր։

Վաղ միտ դիք աղաչեմ։ Խարխուլ է 'ի սկիզբն իւր։ Վանգի յինչ իրաց իցէ ծագումն նորա, քննեսցուք. ապա և զզինչութիւն նորա ծանիցուք, եթէ ՀՀմարտասիրութիւն իցէ արդեօք թէ շահասիրութիւն։

Ամենայն մարդ անդստին 'ի ծննդենէն բարձեալ բերէ ընդ ինքեան զսկզբունս զբնական օրինացն, գրեալ 'ի սիրտս իւր։ Այս սկզբունք արդելուն նմա զամենայն բռնութիւն, զամենայն անիրաւութիւն, զամենայն ուխտադրժութիւն, և զամենայն ինչ զոր ինքն չկամի կրել յայլոց։ Ապա յարքունս հասեալ հասակին և դաստիարակութիւն առեալ, առաւել ևս սերտի 'ի նոյնս. Ճանաչել զԱստուած, սիրել զԱստուած, երկչել յԱստուծոյ։ Օ՜այս օրինակ ընթանայ նա զառաջինն 'ի կեանս իւր, յօրինաց անտի բնութեանն և 'ի խղճէ մտացն ուղղապէս առաջնորդեալ անձին իւրում։ Ապա եթէ քրիստոնէական է դաստիարակութիւնն, քաջայայտ են պարտք և հրահանգք հանդիսից քրիստոնէութեանն, զոր կատարէ կամ ջանայ կատարել ըստ կարի։

Ա՛յլ ապա յընթացս ինչ հասակի նորա, բա՛բէ, տեսցես դու ինձ յանկարծակի զայլատարազ փոփոխութիւնն։ Նախ յուլանայ 'ի պարտս իւր առ Աստուած, և հեշտեաւ ևս այնուհետև առ ընկերն. ապա և 'ի սպառ զանց ևս առնէ։

Հոգանայ յամենայնէն, որ ինչ բերկրականք ոչ իցեն նմա 'ի զգալեաց աստի. հոգւոյքն իբրև ստուերք երևին նմա. յանցաւորութիւն և առաքինութիւն առ նմա իբրու ոչ ինչ զանազանեալք 'ի միմեանց. և յորժամ այսպէս, զինչ ուրեմն՝ ասէ իցէ հատուցումն.

digitised by A.R.A.R.@

ապա և երկբանութիւնք անկանին 'ի միտս նորա. և սկսանի տակաւ յերկբայս լինել՝ իցէ՞ն արդեօք հաւաստեաւ հանդերձեալքն, և չիցէ՞մք մեք արդեօք փոքու իմն այլաբունք քան զանասուն կենդանիս. և ո՞չ արդեօք իբրև զոդ թոյլ ընչեսցի հոգիս մեր այս, որպէս և տեսանեմք իսկ 'ի հոգեվարսն, ուստի և ցնդեսցի և չիջցի համանգամայն ընդ մարմնոյ։ Օ այսոսիկ նա որոշալով 'ի միտս իւր՝ այնուհետև իբրև լուսաւորեալ և իմաստնացեալ կարծէ զանձն։

Բ.ոդ ուստի՞ իցէ նմա այս իմաստութիւն, և այսչափ այլատարազ փոփոխութիւն սկզբանցն. զիա՞րդ և Երբ կերպացաւ այս 'ի նմա գլխովին հակառակ էական սկզբանցն, զոր հիմնացեալ 'ի միտս այնպէս անյերկուանալի ունէր նա յառաջն։ Բ.նդ ո՞ր ճանապարհ գլեցաւ նա այնպէս, ընդ ո՞ր աստիճանս տակաւ իջեալ ոտն առ ոտն՝ շաղեցաւ նա այնպէս յանզերծանելին յայն վարմ՝ այնչափ այլափոխ և քստմնելի մնաբերութեանց. միթէ 'ի քնին էա՞ռ նա առանձինն անաչառ զսկզբունսն, կամ թէ 'ի խորհո՞ւրդ ինչ եմուտ ընդ իմաստնագոյնսն և Երարց վասն կարևորագունիցս այսոցիկ։ Բ.ոդեօք փոյթ ինչ կալա՞ւ յառաջագոյն և զգուշացաւ սրտին՝ մի գուցէ դժպատեհ ինչ կիրք սպրդեալք զառածեցուսցեն զնա 'ի ճշմարտութեան խորհրդոցն և վտանգեսցեն 'ի յաւիտենականսն։

Ո՛վ, ո՞րչափ երկրպագելի իցէ արդարութիւնն Բ.ստուծոյ 'ի վերայ ապականելոցն 'ի վարս. զորս թողու քանէ յունայնութեան մնաց նոցա. "Բ.արձի թողի, ասէ, զնոսա երթալ զհետ կամաց սրտից իւրեանց, զի գնացին նոքա ըստ կամն անձանց իւրեանց.,։

Բ.նդստին յառաջին քայլէն, յորում վարք և բարք դոցա յանկարգութիւն հատան, անդէն իբրև կեղակարծելիք երևեցան նոցա պահպանութիւնք պարտուց իւրեանց։

Բ.նդստին յառաջին քայլէն, յորում երթեալ շաղեցաւ յանասնական ցանկութիւնսն, անդէն խորհուրդ 'ի սիրտ անկաւ նորա յերկուանալ ընդ աղնուականութիւն հոգւոյն. ապա բուռն առնել և մնացն և հաստատիլ՝ եթէ նոյնաբո՞ւն արդեօք իցէ մարդ ընդ անասնոցն անբանից։ Բ.ապա արդեալ փակեաց առաջի իւր և զամենայն ճանապարհս, որ բաւական էին 'ի ճշմարտութիւն վե-

digitised by A.R.A.R.@

բաժել զնա. քանզի և զկրօնն ինքնին զլխովին իբրու յումպետից ինն եդ 'ի կարգի, և զմտաւ անգամ չկամեցաւ ածել զնա և քննել հաւաստեաւ. խստացաւ և ընդդէմ խայթից խղձին, զի մի խափան ինչ լինիցի կշտապինդ վայելիցն 'ի հեշտութիւնս։

Ընդ այս Ճանապարհ աւասիկ և ընդ այս աստիճանս եհան նման անկանել յառաջին հաստատութենէ մտացն 'ի վերայ անսուտ Ճշմարտութեանցն, և 'ի ընորհս հեշտութեան մարմնոյն ընտրեաց լինել թերահաւատ և անհաւատ։

Հաւասիկ սկիզբն և ծագումն երկմտութեան հոգւոյն. այն ինքն է՝ անկարգութիւն սրտին։ Զի ինձ սիրելիք իմ գտէք եթէ կարէք՝ յիսնամեայ զոք 'ի մարդկանէ 'ի Ճշմարտիցն, յողջախոհիցն, 'ի բարեպաշտիցն, որ ոչ ակն կալեալ սպասեսցէ հանդերձեալ կենացն և անդանօր վարձուցն հատուցման, որ զշնութիւնս, ըզպոռնկութիւնս, զաղգապղծութիւնս, և զանժուժկալութիւն զամենայն իբրու հակամիտութիւնս համարեսցի և խաղս անմեղս բնութեան։ Իսկ թէ ետես երբէք աշխարհ և յանկրօնից յամբարշտաց կամ 'ի թերահաւատից, որք իբրև խնամատունք ունին երևեցան և առաքինիք և ժուժկալք, վասն զի գիտացին այնպիսիքն խորագիտագոյնս քօղածածուկ ամենևին առնել զանկարգութիւնսն ընդ հռչակաւ մեծի համբաւոյն իւրեանց. կամ թէ վասն զի յագուրդ հեշտութեանն յայն սահման կեղծուպատիր ժուժկալութեան ած զնոսա։

Այլ նախ կացին հեշտասէրք, ապա թերահաւատք. սիրտն նախ ապականեալ, մինչ և հաւատոյն նաւակոծեալ. սիրելի էր նոցա, եթէ ամենայնն մեռանէր ընդ մարմնոյ, զի 'ի պատուհասէն ապրեսցին...։

Ա՛վ, քանիսն ի՞նչ մխիթարութիւն մեզ հաւատացելոցս և պարծանք, տեսանել զի հարկ է ուրեմն նախ հրաժեշտ տալ յառաքինի վարուց, 'ի բարեպաշտութենէ, յամենթխածութենէ և յամենայն գեղեցիկ հանդիսից մարդկութեանս, և ապա հրաժարել 'ի հաւատոյն։ Այլ զի առ 'ի ոչ ևս լինել քրիստոնեայ, պարտ է նախ ոչ ևս լինել մարդ։

Հա թերահաւատութիւն խարխուլ՝ որպէս ասացի՝

digitised by A.R.A.R.@

'ի սկիզբն իւր և արագաւէր. սակայն և երկրորդ անգամ՝ է նա և անբաւական և անմիտ 'ի փաստս հաստատութեան իւրոյ։

Զանգի յորժամ թերահաւատի ոք՝ ոչ յումպէտս ինչ, այլ 'ի մեծամեծս յոյժ և 'ի յաւիտենականս, պարտ է փաստից նորա լինել կարի հաստահիմն և զօրաւոր յոյժ՝ առ 'ի զդէմ ունել հասարակաց հաւատոյն, որ հիմնեցաւ դարուց 'ի դարս այնչափ քաջայայտ ցուցակութեամբք, զոր յայլսմ քարոզի ցուցեալ է մեր։ Զինչ զի եթէ ցուցակութիւնք ակներևք և փաստք անվանելիք և հաւաստիք անխաբք՝ չգուցեն զէն 'ի ձեռին այնպիսի թերահաւատելոյն, չիք ինչ այնուհետև յաշխարհի այլ անբանութիւն, այլ ծիծաղն խելաց, որ հաւասարեսցի ընդ իւրումն. իբրև որ անժխտելի ճշմարտութեանն ընդդէմ կքրեսցի։

Այս արդ տեսցուք. որ իցեն նորա այդ փաստք 'ի հաստատութիւն թերահաւատութեանն։ — "Զոր զի տասցէ, ասէ, զնորոյ աշխարհին այնորիկ զիրսն՝ զորմէ քարոզեն։ Արդարն ահա և ամբարիշտն հաւասարապէս մեռանին. և այնպէս մեռանի մարդ, որպէս անասուն կենդանի։ Այս ո՞ դարձաւ երբէք յետս յայնմ աշխարհէ, ասել մեզ. ո՞ 'ի մեռելոցն թշուառացաւ և ո՞ երջանկացաւ,,։

Զհա փաստք նորա...։ Զայլ աղէ այր դու, մեք ոչ զերկմտութիւն քո և զթերահաւատութիւնդ կամիմք լսել, այլ փաստս զթերահաւատութենէդ։ Իսկ դու այլ և այլ տարաղու զնոյն զայն զերկմտութիւն յեղյեղես։ Այս եթէ մեք զնոյն հարցումն փաստից կրկնեմք քեզ, և 'ի նեղն ածեմք ասել մեզ ինչ մի 'ի նոցանէ, դու միշտ զնոյն երկմտութիւն բացագանչեսցես, "Զոր դիտաց զանտիսն, ո՞ դարձաւ անտի, ո՞ պատմեաց մեզ,,։

Զայլ սակայն երկբայութիւնք չեն փաստք։ Այս եթէ ևս ոք 'ի մեռելոց դարձցի առ քեզ և պատմեսցէ, միթէ հաւատասցես. վաշ, ասասցես անշուշտ, եթէ ուրուական է, եթէ խաբանք են։ Զանգի ոչ զճշմարտութիւն խնդրես, քան թէ զհեշտութիւն. և զաշխարհ և զմարմին չկամիս թողուլ, և 'ի հանդերձեալ պատուհասէն զանգիտես։ Զուստի եթէ և ժխտել գլխովին չհամարձակիս, սակայն յերկբայութիւն արկանես։

digitised by A.R.A.R.@

Աչդ եթէ ընդ քարոզեալն այնչափ հաւատեաց յայտ յանդիմանութեամբ երկմտիս, զիարդ դու ընդ տեսիլ միոյ ուրուք դարձելոյ յայնմ աշխարհէ ոչ երկբայեսցիս, քանզի եթէ այսպէս և եթէ այնպէս, ամենայնն զքոյ կողմն Հնչեսցեն. այս է Թողուլ զաշխարհ, Թողուլ զմարմին։ Ուստի և Հշգրիտ միայն և վերջին և առաջին պատասխանի այն է, զոր կարի իմաստութեամբ ասաց Աբրահամ. «Եթէ Մովսէսի և մարգարէից ոչ լսեն, և ոչ թէ 'ի մեռելոց ոք յառնիցէ, հաւատասցեն»։

Այլ բաց դու միանգամ զաչս, և ուշիմ լեր. երկբայութիւն միայն շատ իցէ, այր դու, թերահաւատ գործել զքեզ. իսկ ամենայն ցուցակութիւնք, ամենայն փաստք կրօնին չիցէ՞ն բաւական՝ հաւատացեալ գործել զքեզ։ Երկբայիս միայն եթէ իցէ՞ն արդեօք հանդերձեալ կեանք. և անդէն կանուխ սկսանիս դու կեանս վարել այնպէս, որպէս թէ ստուգապէս չիցեն։

Օ՛ի եթէ երկբայութիւն է յերկաքանչիւրսն, զի՞ է զի՞ զմիոյ միայն կողմանն թեկն ածես դու 'ի գործելդ, և զայնր կողմանն՝ որոյ սպառնալիքն են յաւիտենական։ Վանիւն իցէ խելայեղութիւնն։ Քոյ չիք այլ փաստ, և այլ հիմն կարծեացդ, բայց երկբայութիւնդ միայն. և մեզ յերեսս հարկանես զհաւատն, իբրու դիւրահաւատութիւն ռամկին։

Բայց աղէ, յորո՞մ 'ի կողմանց աստի գտանես դու զմեծապէս դիւրահաւատութիւն զայդ։ Օ՞ կոչեսցուք մեք պարզամիտ դիւրահաւատ. զթերահաւատն եթէ զհաւատացեալն։ Հաւատացեալն հաւատայ զհանդերձեալն՝ յեցեալ 'ի վկայութիւն աստուածային մատենիցն, յաւանդութիւնս դրաւոր և ձայնաւոր առաքելական արանցն, արք արդարք, պարզք, աննենգք, սքանչելագործք. արք որք և զարիւնս իւրեանց հեղին վասն փառաց Հշմարտութեանն՝ զոր քարոզեցին յընդհանուր տիեզերս. քարոզեցին և դարձուցին ևս։ Հաւատացեալն հաւատայ՝ յեցեալ 'ի լրումն մեծաց մարգարէութեանց, զոր անյերկուանալի ընկալան այնչափ արք անուանիք և հոյակապք. արք սուրբք և գերահրաշակք, արք հանճարեղք և մատենագիրք. զոր ընկալան և ազգ և ազինք իմաստունք և քաջահրահանգք։

digitised by A.R.A.R.@

Իսկ Թերահաւատդ երկմտիս զՀանդերձելոյն, յե-
ցեալ միայն յերկբայութիւնդ, յեցեալ միայն 'ի վա-
բանս. "Ո՞ դիտէ, ասես, զանտիսն. ո՞ դարձաւ անտի և
պատմեաց մեզ,,...։ Ի՞նչ ամենայն փաստ քո. ահա
ամենայն հաւաստիք քո։

Այլ արդ հարցանեմ. Ո՞ այժմ իցէ դիւրահաւատդ։
Հաւատացեա՞ն 'ի զօրութենէ այնչափ ցուցակութեանց,
եթէ Թերահաւատեա՞ն 'ի պատճառս լոկոյ երկբայու-
թեանն...։ Ի՞նչ կուրութեանն, յորում լքեալ Թո-
ղանի յԱ՞ստուծոյ մեղաւոր բարձրամիտ. որում, աւա՜ղ,
և ոչ տնկակից լոյս բանին նպաստեսցէ ինչ նմա։

Ի՞նչ ես յառաջ և ընԹացեալ, շնորհեցից Թերա-
հաւատ ոգւոյդ, եԹէ յերկբայութեան քում հաւա-
սարազօրք իցեն քո փաստք ընդ փաստից հաստատիմն
Ճշմարտութեանցն՝ որ աւետեն և խոստանան զանա-
հութիւն 'ի հանդերձեալն. զոնեա ցանկալի պարտեր
քեզ լինել, այր դու, Ճշմարտութիւն կողմանն հաւա-
տոյն. որ այնչափ գերազանց քարոզէ զբնութիւն հոգ-
ւոյն, և այնչափ շուք դնէ բնութեանս մերոյ, իբրու որ
ծագումն նորա երկնաւոր է, և յոյս ակնկալութեան
նորա անանցական։

Ի՞նչ այսոքիւք և ատելի յոյժ և քստմնելի պարտէին
քեզ լինել պատիր Թելադրութիւնք Թերահաւատ ոգ-
ւոյդ. Թելադրութիւնք անկածք և այնչափ նուաստա-
ցուցիչ բնութեան մարդոյ, մինչև անասնոց անբանից
հաւասարեալ զնա, և տալ նմա կեալ միայն վասն մարմ-
նոյ իբրև զպաՃարս։ Թելադրութիւնք՝ որ ոչ տեսչու-
թիւն ինչ վերին 'ի նեղբս մտատուցանեն մարդոյ, ոչ վախ-
Ճան ինչ սահմանի, ոչ յոյս ինչ բարւոյ ակնկալութեան։
Թելադրութիւնք՝ որ զվիՃակ կենաց մարդոյ պարագրեն
միայն 'ի սակաւաթիւ ինչ աւուրս անցաւորս ծաղկըն-
կեց կենացս. աւուրք վշտմբերք, անանդորք, լի հո-
գովք, ցաւագինք, ախտակիրք։ Այլ ո՞ ոք՝ Թէպէտ և
'ի յոյժ յետսամտաց իցէ, 'ի հաւասարազօր կարծիսն
չկամեսցի առաւել խաբել 'ի միումն, և ձեռն տալ այնմ
որ շահաւոր կողմանն նպաստամատոյց իցէ։

Ի՞նչ էն ինչ զարմանք, սիրելիք, եԹէ մարդիկ ծնեալք
յարենէ միայն և 'ի կամաց մարմնոյ և 'ի կամաց սուն,
երես ինչ չառնիցեն պատուոյն և շքոյ՝ զոր բնութեան

digitised by A.R.A.R.@

նոցին 'ի նեղքս մատուցանեն հաւատք. և կամեսցին ա-
ռաւել զի կաւ իցէ ողջոյն հոգի նոցա և մինիր յոյս նո-
ցա, և ամենայնին մեռցի 'ի մեռանել նոցա։

Զանգի որպէս ասացի՝ հոգւոյդքն իբրև ստուեր են
առ նոսա. քանզի սիրեցին զնարմին առաւել քան զՀո-
գին։ Զի անբանական են կեանք նոցա և անասնա-
կան հեշտութիւնք նոցա, համարին եթէ և իբրև պա-
ճարաց իցէ բնութիւն նոցա։

Այլ աղէ, եթէ անմնացեալ քո միանգամ՝ և բնու-
թեանդ ինքնին մեծարանս չընիցես 'ի կողմն լինելով
հաւատոցն, առ ինչ դու երկրորդ անգամ անմնացեալ
երես չառնիցես և շահս անձինդ։ Զինչ կորուսցես,
ասա ինձ, եթէ հաւատաս. իսկ ո՞ր չարաչար և անհնա-
ին հետևանք կայցեն, եթէ խաբեալ մոլորեալ թերա-
հաւատիս։

Զթէ հաւատաս, կեցցես դու իբրու հաւատացեալ
'ի շուք և 'ի պատիւ անձինդ, գուն գործեալ ըստ հրա-
մանդի հաւատոցդ երևեալ և լինել քաղցր և համբոյր
և սիրելի, արդար, անկեղծաւոր, երկիւղած, բարե-
կամ ուխտապահ, ամուսին հաւատարիմ, տանուտէր
արդարադատ։ Չափու կալցես ըստ հաւատոցդ զկիրսն,
որ թերևս սանձարձակեալք առանց հաւատոց, ողոր-
մելի քեզ յարդարեսցեն զաւուրս կենաց քոց։ Զուժ-
կալեսցես ըստ հաւատոցդ յայն ինչ հեշտալեաց, որ
ծերութիւն տարաժամ, ծերութիւն ցաւագին կանուխ
առթեսցեն քեզ. կամ թէ վիճակ մի կենաց՝ ամենևին
անկարգ։ Զայլեսցես ընդ երկիւղածութեանդ 'ի յար-
գանս առաքինութեան, և յարժանաւոր վարկ համար-
մանն առ ժողովուրդն։ Հաւասիկ քեզ կորուստն քո։

Զի դիցուք եթէ թէպէտ և ամենայնին ըստ քեզ
վախճան առցէ ընդ կենացդ, ոչ ահա միակ ճանապարհ
այս իցէ շքով անցուցանելոյ զկեանդ իբրև երջանիկ և
յանդորրու։ Զի ոչ շատ իցէ քեզ այս։ Զի թէպէտ և
վարձ յաւիտենական հատուցման՝ ըստ քեզ՝ չիցէ 'ի մի-
ջի, զինչ կորուսցես դու ակն ունելովդ այնմ։ Կորուսցես
այո՛ ինչ մի 'ի վաղանցուկ հեշտալեաց աստի կենցաղոյս՝
որ այն ինչ ճաշակեալ և անհամասցի, զի կամ տաղտ-
կասցիս և կամ նողկասցիս 'ի կրկնումն. կամ քարշես-
ցիս իբրև տոռամբք գերի վարեալ 'ի նորանոր ցանկա-

digitised by A.R.A.R.@

թեանց՝ որ անդուստ զրգռեսցին։ Կորուսցես և զան-
գոնեալին զայն և զբարբարոսական բերկրութիւնդ՝ ըստ
սանձարձակ թերահաւատութեանդ լինելով քո ան-
բաժ 'ի հաւատոյ, մերկ 'ի բարեգործեաց բարուց, ան-
մասն 'ի խղճէ մտաց, ապառուսմ առ մարդիկ, անագո-
բոյն, օտարախորթ 'ի բնութենէ։ Այսպէս է երջան-
կութիւն կենաց թերահաւատիդ. և ապա զլիս միւս-
անգամ յանչուութիւն քո, և մոլորութեանդ քո չիցեն
այլ հետևանք։

Այս ամենայն ըստ թերահաւատ կողմանդ, արդ
լուր և զկողմն հաւատոյն։ Զի՞նչ ասես. եթէ յան-
կարծ ստուգապէս կայցեն հանդերձեալք որպէս քա-
րոզեմք, և դու թերահաւատութեամբդ խաբեալ լիցես,
զի՞նչ ասես. որ կորուստ, որ վտանգք անհնարինք զքեզ
պաշարեսցեն, այր դու։ Որ. բայց անգիւտ կորուստ
անսպառելի բարեացն. անկանել 'ի յաւիտեան 'ի տե-
սութենէ փառացն Աստուծոյ, որ երջանիկ յաւերժա-
բար հանդերձեալ էր գործել զքեզ։ Զի՞նչ այլ...։
Լերու որ շատ չիցեն այս աղէտք. նաև հուր ծախիչ ան-
շիջանելի պաշարեսցէ զքեզ, տանջանք դառնք անվախ-
ճանք ընդ առաջ ելցեն քեզ, և յաւիտենականութիւն
անձկութեանց սրտի և արհաւրաց լլկեսցէ զքեզ։

Այս արդ վայրկեան մի 'ի կրիս համեմատութեամբ ձգեալ
զկրկին վիճակս, զոր կողմն այժմ կալցես դու... զայն
դու ինքնին յուշ արա անձին. քանզի ընտրոյ տէր թո-
ղում զքեզ։

Բայց մեք սակաւիկ մի և զերրորդն տեսցուք, եթէ
քանի՞ քստմնելի իցէ թերահաւատութիւնն և 'ի հե-
տևանս իւր։ Արդ միայն առ խղճէ մտաց թերահաւա-
տիդ խօսելով զարդիս, ասեմ եթէ արդարև ամենայնն
ընդ կենաց մարմնոյդ վախճան առնուցու, որպէս կար-
ծեսդ. և եթէ յետ աստեացս ոչ այլ իմիք ակնկալցի
մարդ. և եթէ մերս հայրենիք, և մեր ծագումն և
վախճան, և մեր երջանկութիւնս աստեաք չափ միայն
իցէ. և ընդէ՞ր ապա չիցեմք մեք երջանիկք։ Այս եթէ
վասն հեշտալեաց զգայութեանց միայն ծնաք մեք, և
ընդէ՞ր ապա սոքա չեն բաւական շատացուցանել զմեզ.
նա տաղտկացուցանեն և, և տխրութիւն և անպտղու-
թիւն 'ի ներքս ածեն 'ի սիրտ մեր։

digitised by A.R.A.R.@

Լ. Եթէ մարդ վիճակակից է պաճարաց, և ընդէր ապա ըստ նոցա օրինակին չանցուցանէ և սա զաւուրս իւր անհոգ և անդորր և անտաղտուկ և անտրտում՝ վայելեալ յերջանկութեան զգայութեանց միայն և մարմնոյն։ Լ. զի է զի և ոչ ինչ այլ յաստի կեանս գլխովին երջանկացուցանէ զմարդ։

Օ. Ինչ պատճառք իցեն, զի հարստութիւնք անհանգստեն զնա. և պատիւ և փառք անյագուրդ թողուն զնա, և հեշտալիք ջլատեն զնա։ Իսկ և դպրութիւնք և գիտութիւնք ամբոխեն առաւել, քան եթէ հանգուցանեն. քանզի և երբէք ոչ շատացուցանեն զխուզողութիւն նորա և զհետաքրքրութիւնն, նա աճեցուցանեն և ևս, և համբաւ և վարկ ոչ լիով անդորրացուցանեն զնա. և միանգամայն ամենայն որ յաշխարհի ոչ ինուն զանչափութիւն սրտի նորա. ինչ մի հանապազ մնայ որում՝ ցանկայ։ Օ. Ինչ պատճառքն իցեն...։

Իսկ ապա բաց 'ի մարդոյ՝ այլ ամենայն արարածք գոհ են ընդ վիճակ իւրեանց և թուին երջանիկք, յոր միանգամ եղ զնոսա արարիչն։ Լ. Եթէ լուսաւորք իցեն յերկինս, եթէ մեծամարմին երկիրս, եթէ անասուն կենդանիք 'ի դաշտս, եթէ էրեք յամպիս, եթէ գազանք 'ի մայրիս, 'ի կաղաղս. եթէ թռչունք ընդ օդս. ամենայնն է երջանիկ, զի այսպէս ասացից, ամենայնն է 'ի կայի իւրում՝ 'ի բնութեան. մարդն է միայն անհանգիստ և անգոհ, թուի թէ չէ տակաւին 'ի կայի իւրում. մարդն է միայն որս դիւրըմբռնելի և ճարակ ողորմելի իւրոց ցանկութեանց. նշաւակ իւրոյ երկիւղին. նաև 'ի յոյս ակնկալութեան անձին ինքնին գտանել զտանջանս անձին. թշուառ և ապերջանիկ 'ի բերկրալիսն՝ որոց հետամուտ է. և այսպէս մարդոյ միայն չիք ասա 'ի ստորինս, ուր հաստատեսցէ զյոյս իւր։

Օ. Ինչ պատճառքն իցեն... Լաստի է այս ամենայն. ասա ինձ թերահաւատդ։ Ո՞չ թերևս, քանզի ես դու ասա յերկրի արտաքոյ քումդ կայանի. քանզի վասն երկնից ստեղծար. քանզի քո սիրտ մեծ ևս է քան զբոլոր աշխարհ. քանզի երկիր չէ քո հայրենիք. քանզի ամենայնն որ ոչ է Աստուած՝ իբրև ոչ ինչ է առաջի քո...։ Ցուր ինձ պատասխանի...։ Կամ թէ առաւել

digitised by A.R.A.R.@

ևս դու ինքնին հարց զսիրտ քո, և լինիցիս հաւատացեալ։

Այս եթէ յետ այսր ամենայնի տակաւին թերահաւատութիւնն զօրասցի 'ի քեզ 'ի մասին յայսմիկ, ով քանիցն կիրք խցեն անհանդուրժելիք. քանզի չիցէ ուրեմն այնուհետև ինչ մի թշուառական յաշխարհի առաւել քան զմարդ. և ամենայն կենդանի և ամենայն արարածք՝ որ վասն մարդոյ հաստատեցան և մարդոյ սպասս հարկանեն, առաւել երջանիկք խցեն քան զմարդ, և ինքն միայն ապերջանիկ. և 'ի ձահ առաքելականն սպասահեսցէ խմբստ, "Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ իցեմք, ողորմելի եմք քան զամենայն,,։

Դարձեալ քեզ և 'ի հասարակաց հաւանութենէն. եթէ ամենայն մեռանի ընդ մարմնոյ, և յինչ պատճառաց ասա զրդեալք հաստատեցան 'ի միտս ամենայն մարդիկ յամենայն 'ի դարս և յամենայն ազգս, եթէ անմահ է հոգի նոցա...։ Ասասի ծնաւ յազգի մարդկան այս նորանշան զաղափար անմահութեան, այս իմաստ այնչափ 'ի վեր քան զմիտս մարդոյ և այնչափ օտար 'ի բնութենէ մարմնոյ. ուստի՞, ասա ինձ, եթէ արդարև 'ի վարել միայն զզգայութիւնսն ծնեալ իցէ մարդ, և 'ի վայելել միայն 'ի ժամանակեայս իբրու զդասակս պատճարաց։ Օ՛ իարդ տիրացաւ յընդհանուրս այս իմաստ ազնուական անմահական վիճակի։ Ո՞ ոք զտակ առաջին և հեղինակ իմաստիս այսորիկ և զաղափարիս... չիք ուրեք։ Այլ տակայն առ ամենայն ազինս առ հասարակ եգիտ հլութիւն և աշակերտութիւն. եթէ վայրագասունքն էին ազգքն, եթէ քաղաքականացեալք, եթէ տխմարք և անուսք, եթէ ուսեալք և կիրթք, եթէ անհաւատք և եթէ հաւատացեալք։

Զի դու անց յառաջ մինչև 'ի ծագումն դարուց, յածեաց ընդ ազգս ամենայն, ընթերցիր զպատմութիւնս ամենայն արքայութեանց. երթ խօսեաց և ընդ այնոսիկ, որ տարադէմ ճանապարհորդեալ ընդ աշխարհ, դարձ արարին 'ի ծագաց նորա և 'ի յոյժ բացական կրզեաց կղզեաց։ Անմահութիւն հոգւոյն միշտ եկաց առ նոսա, և այն է տակաւին հաւատք առ հասարակ ամենայն ժողովրդոց աշխարհի։

Եթէ երբէք ծանօթութիւն միոյն Աստուծոյ նուա-

digitised by A.R.A.R.@

զեցաւ յերկրի. և ողջոյն ժողովուրդք վայրաբնակք և անտառասունք կեան առանց պաշտաման, առանց կրօնի, սակայն առ հասարակ ակնկալեալ մնան հանդերձելոյ իմիք. սակայն իմաստ և գաղափար անմահութեան հոգւոյն երբէք ոչ ջնջեցաւ 'ի սրտից նոցա. այլ ամենեքեան կերպացեալ ունին 'ի միտս տեղի մի, գաւառ մի, յորում բնակեցին հոգիք յետ մահուն. նաև զԱստուած զմին 'ի մոռացօնս դարձուցեալ, չկարացին երբէք մոռանալ զանձինս։

Արդ զինչ պատճառք իցեն, զի մարդիկ այնչափ զանազանեալք լեզուաւ և ազգաւ, 'ի պաշտաման, 'ի կրօնի, տարբերեալք 'ի դաստիարակութեան, 'ի բարս, 'ի սովորութիւնս, 'ի յօժարութիւնս, յիմաստս, 'ի խորհրդածութիւնս, 'ի շահախնդրութիւնս, տարաղիմեալք 'ի գաւառս գաւառս, տարբերեալք 'ի տիպս կերպարանաց, մինչ զի այլատեսակ 'ի դասուց մարդկան համարել նոցա. և սակայն առ հասարակ ամենեքեան 'ի նոյն իմաստ միաձայնեալ են, և ամենեքեան ջատագովք կան անմահութեան, և ամենեքեան խնդրեն անմահ լինել։

Բայց, ահա համաշխարհական կրօն տիեզերաց. ահա վարդապետութիւն դաւանութեան՝ որ ոչն ճանաչէ իւր զոք ոչ հեղինակ, ոչ գլուխ, ոչ պաշտպան։ Արդիւք ինքնին 'ի մասինս գտան ինքնաձեռնադրելի աստուածաբանք ողջամիտք. վարժապետի պէտք չեղեն. անձամբք անձանց եղեն վարժեարք. ինքնին բնութիւնն ընչեաց աղդեաց 'ի նոսա։ Յետ յորմէ հետէ եղեն արարածք, այս հաւատ անմահութեան և հանդերձելոյն անց միշտ 'ի հարց առ որդիս և միշտ պահեցաւ յաշխարհի։

Իսկ արդ եթէ թերահաւատութիւն 'ի բանիս յայսմիկ զօրեսցէ ինչ, զիարդ ոչ յոյժ քստմնելի կիրք իցեն ասել, եթէ ամենայն մարդիկ միանգամայն անմոռացան յամենայն դարս, յամենայն ազգինս, յամենայն աշխարհս, և վայրագ և շէն մարդիկն, և ռամիկն և աւազորեարն և ժողովուրդք և առաջնորդք, և անուանք և իմաստասէրք. և անմտութիւն այսպիսի՝ ոչ մարդոյ իցէ, այլ բնութեանն. իսկ որ անլուր և անասելի 'ի հայհոյութիւնս, և ոչ բնութեանն, քան թէ արարչին

digitised by A.R.A.R.@

բնութեանն, որ զնոյն խնամատ անջնջելի տպաւորեաց յամենեսին։

Բ. Եւ զի այս ամենայն այսպէս, զինչ և այլ անխոսք հաւաստեաց պէտք իցեն ակներև տեսանել, եթէ երկրայութիւն թերահաւատութեան՝ նշանակ է ուրեմն 'ի ծագման իւրում, և անբան 'ի փաստս, և անհանդուրժելի 'ի հետևանս։ Ուստի և չիցէ ինչ այլ այնչափ հակառակամարտ լուսոյ ուղիղ բանին, որչափ երկմտութիւն 'ի հաւատ հանդերձելոցն։

Հա՛սպա այսուհետև նշանակեսցուք զսա նաև 'ի պատրուակս իւր, և ցուցցուք եթէ քան զայս թերահաւատութիւն՝ չիք ինչ այլ առաւել հակառակամարտ նաև ընդդէմ խնամատութեան և մեծվայելչութեանն Աստուծոյ. նոյն և ընդդէմ գիտակցութեան խղճի մտաց։

ՄԱՍ Բ.

Ամէն այլանդակ ամենևին իրք իցեն, սիրելիք, մանաւանդ թէ և ամբարշտութիւն, յորժամ 'ի թերահաւատից ոք ժամեսցի երթալ մինչև 'ի մեծվայելչութիւն անդր Աստուծոյ, և անդ խնդրել ինչ մի 'ի զօրավիգն և պաշտպան անզգամութեան իւրում. և չգտեալ 'ի ներքս իւր և ոչ ինչ առ 'ի չքմեղս հանել զանզգամութիւն հոգւոյն, համարեսցի ապա գտանել 'ի մեծվայելչութեան անդ գերագոյն էին այնչափ լիմն նեղողութիւն և զիջումն և թուլութիւն, զոր և ոչ յապականութեան սրտի իւրոյ երբէք կարասցէ գտանել։

Լուր աւադիկ, զինչ 'ի դէմս ածեն թերահաւատքդ. «Ոչ՞ ինչ, ասեն, արժանի մեծվայելչութեանն Աստուծոյ, այնչափ ճշգիմ լինել և հոգ այնչափ ունել և միտ հանապազ դնել՝ զինչ անցք անցանիցեն 'ի մարդիկ. հաշիւ ճշգրիտ ունել զմոլութեանց նոցա և զառաքինութեանց նոցա, և խորաքնին մինչև 'ի խորհուրդս նոցա լինել, և մինչև 'ի ցանկութիւնս նոցա ընչինս և անթուելիս։ Ոչ՞ այս արժանի մեծի փառացն Աստուծոյ։ Ա՛յս մարդիկ անարդ որդունք երկրի, որ 'ի հայեցուած միայն աստուածպետական աչացն կո-

digitised by A.R.A.R.@

ըստ չին և 'ի չիք դառնան, արժանիք ինչ իցեն նոքա այս-
պէս 'ի մեծոց մանր հետազօտութեան ամենակալին Աս-
տուծոյ։ Այս 'ի ձեռն իցէ և այդչափ մարդկօրէն խոր-
հել զմեծվայելչական աստուածութենէն. և տալ նմա
գործ մի և զբաղումն այնպիսի, որ և ոչ մարդոյ ումեք
աւագի և վեհանձին իցէ արժանի ,,։ Օ այս 'ի դէմս
ածեն նոքա։

Այլ մինչ չեւ ողջ նշաւակեալ զհայհոյութիւնն, միտ
դիք զիարդ ինքնին և թերահաւատքդ 'ի խօսելն այս-
պէս, գձձեն նոքա զմեծվայելչութիւնն Աստուծոյ, և
իբրև նմանօրինակ մարդոյ ընծայեցուցանեն զնա։
Վանդի զինչ պէտք իցեն Աստուծոյ՝ այնպէս 'ի մեծոյ
մանր հետազօտել զմարդիկ՝ առ 'ի խելամուտ նոցայն
լինել գործոցն և խորհրդոց։ Օ ինչ պէտք իցեն նմա
այնպէս ձղձիմ ուշ ունել՝ զինչ անցք անցանիցեն յաշ-
խարհի։

Ոչ ապաքէն ըստ անսուտ ճշմարտութեանն, 'ի նմա
եմք մեք, 'ի նմա շարժիմք, 'ի նմա կեամք և գործեմք.
և խուսափել հնար իցէ յամենատես ականէն։ Վանի
անմտութեան իցեն բանքն համարել, եթէ զէպք և
անցք որ յաշխարհի, հոգ և խորհուրդ յաւելցեն յաս-
տուածութիւն անդր, եթէ երբէք կամեսցի նայել 'ի
նոսա...։ Զ'ն անդր 'ի բաց յիմարութեան բարբանջ-
մունքն....։ Վանդի մի միայն է Աստուծոյ երանա-
ւէտ պարապումն՝ նկատել ճանաչել զանձն և վայելել
յանձին։

Արդ նշաւակեսցուք զնոսա այսպէս։ Այթէ մեծ-
վայելչութեանն Աստուծոյ 'ի դէպ իցէ, որպէս ասեն,
այնպէս անխնամ թողուլ զարարածս, անխնամ զչարս և
զբարիս, այնպէս անպատուհաս թողուլ կամ անվարձ,
ապա ուրեմն նոյն իցէ առ Աստուած լինել արդար, ան-
կեղծաւոր, մարդասէր, խնամակալ. և նոյն իցէ դար-
ձեալ՝ լինել ապառուամ, նենգաւոր, ոխտադրուժ, տմար-
դի։ Որեսցէ ուրեմն Աստուած հաւասարապէս զառա-
քինութիւն, զպարկեշտութիւն, զուղղութիւն, զկրօնա-
միանդամայն և զմոլութիւն և զստութիւն և զամբա-
ղարշտութիւն։ Որովհետև արդարն և ամբարիշտն, մա-
քուրն և անմաքուրն համավիճակք հանդիպին առ Աս-
տուծոյ. և առ հասարակ ոչնչութիւնն յետ սակաւուց

digitised by A.R.A.R.@

նմանօրինակս գործեսցէ զնոսա, և 'ի նոյն արհաւիրս տարտամութեան միոյ տապանի շեղջաշեղջ խառն կուտեալ պահեսցէ 'ի յաւիտեան։

Այս, զինչ ասեմ սիրելիք, ոչ ամբարշտացն յաստիս փառաւոր և իցեն կեանք քան զարդարոյն. "Օ՛ի է, ասէ, զի Ճանապարհք ամբարշտաց յաջողեալ են, և երջանկացան ամենեքին՝ որ արհամարհեն զարհամարհանս,,. Այլ, "Ցեսի, ասէ, զամբարիշտն վերացեալ բարձրացեալ իբրև զմայրսն Լիբանանու,,։

Մի՛ուի ինն շնորհս առաւելագոյն գտանել նոցա յաշխարհի առաջի Աստուծոյ, որ այնպէս բարձրացուցանէ զնոսա. փառաւք և պատուով և ոսկւով և արծաթով լիացուցանէ. ցանկութեանց նոցա զօրավիգն տայ. զկամս խորհրդոց նոցա յաջողէ. քանզի և են իսկ ամբարիշտք հասարակ կարգաւ երջանկացեալք յաշխարհի։

Իսկ և ներհակաբար՝ թուի ինն արդարն յաշխարհի մոռացեալ առաջի Աստուծոյ. խոնարհեցուցանէ զնա, մատնէ յանձկութիւնս, 'ի վիշտս. զրպարտութեանց առակ նշաւակի կարգէ զնա. 'ի ձեռս թշնամեաց թողու զնոսա։ Հանգի և վշտմբերութիւնք և նախատինք և անաւագութիւն հասարակ կարգաւ բաժինք են յաստի կեանս արանց արդարոց։

Այլ արդ ո՞ր հրեշ խառնակերպարան աստուածութեան իցէ ընդ տիեզերս, եթէ ամենայնն վախճան առնուցու ընդ մահուան մարմնոյ. եթէ արտաքոյ աստեացս չիցեն չարիք այլ, և բարիք այլ, որոց ակնկալեալ սպասեսցեն ամբարիշտք և արդարք։ Իցէ՞ ուրեմն Աստուած պաշտպան և թեկնածու յանցաւորութեանց, շնութեան, սեղանակապտութեան, և այլ և այլ մեծեղեռն անկղիտացելոցն։ Իցէ՞ ուրեմն Աստուած հալածիչ ոխերիմանմեղութեան, պարկեշտութեան, աստուածպաշտութեան և ամենայն առաքինութեանց։ Իցէ՞ն ուրեմն պարգևք շնորհաց նորա՝ մրցանակ մեղաց. և պատիժք պատուհասի նորա՝ միայն վարձ և հատուցումն առաքինութեան։

Իսկ՝ զո՞ր Աստուած խաւարին, զոր Աստուած լըցեալ անիրաւութեամբք ստեղծանէ յինքեան թերահաւատութիւնն և երևեցուցանէ աշխարհի. թերահաւատութիւն՝ որ և յանհաւատութիւն գլխովին առեալ ձգէ զունողն իւր։

digitised by A.R.A.R.@

Բայլ զիարդ՝ մեծվայելչութեանն Աստուծոյ, զոր ստէպ զօրավիգն առնուս մոլորութեանդ, մեծվայելչութեանն ասեմ Աստուծոյ արժանն և 'ի դէպ իցէ քանել թողուլ 'ի ձեռաց զաշխարհ՝ զոր այնչափ զարդարուն 'ի վեր եհան 'ի վէրէ անտի համաշխարհական անպատրաստութեանն։ Զոր ուրեմն ամբարիշտն միշտ հարստահարեսցէ զարդարն, թող բռնաւորն յանթռոյն սասանեցուսցէ զանմեղն, թող ամբարտաւանութեան որդւոյն զոհ լինիցի հայրն, թող յանհաւատութեան ուխտադրուժ հարսինն հեծեծեսցէ փեսայն. և 'ի բարձանց անտի մեծվայելչութեանն իւրոյ 'ի զնին միայն կացեալ աղետիցն զուսրձասցի, ո՛ դժոխքմբերելի կիրք, զուարձասցի Աստուած ուրոյն մեկուսի առանց ինչ վարելոյ դատ։

Օ՜ ինչ ասես. արդեօք 'ի պատճառս այնպիսի մեծի վայելչութեանն իւրոյ իցէ՞ Աստուած կամ տկար, կամ անիրաւ, կամ անագորոյն։ Արդեօք և մարդոյ 'ի պատճառս փոքրկութեան և որդն անարգ լինելոյ՝ թո՞ւլ իցէ նմա կամ անկղիտանալ 'ի չարիս առանց մեղաց, կամ առաքինանալ 'ի վարս առանց արդեանց։

Անիծն իցեն բարբանջանքն, մանաւանդ ամբարշտութիւնքն։ Այլ ուրեմն Աստուած՝ զոր սիրեմք և որում երկիրպագանեմք, ոչ հայր մեր, ոչ դատաւոր մեր, ոչ փրկիչ մեր, ոչ պաշտպան, ոչ ապաւէն, ոչ միխիթար վրշտաց, ոչ զօրավիգն տկարութեանս, ոչ վարձատրող լաւութեանս։ Այլ ուրեմն նա ոչ այլ, բայց բռնաւոր անախտակիր և անագորոյն, որ 'ի նպանդ զոհի իւրումն մեծվայելչութեան վարեսցէ առ հասարակ զամենայն մարդ. և յանէից 'ի գոյ ածեալ դիցէ զնա 'ի խաղալիկ միայն իւրումն պարապութեան, և յառակ կամացն սիրոփութեան։

Անզի արդարև 'ի թերահաւատել քո միանգամ զՀանդերձելոյն, զո՞ր ապա վախճան, ասա ինձ, զո՞ր խորհուրդ արժանի աստուածեղէն իմաստութեանն՝ տացես դու ունել Աստուծոյ 'ի ստեղծանել իւրում զմարդ։ Արդեօք ի՞նչ նորա այլ ուշ նպատակի 'ի հաստել զմարդ, և այլ 'ի հաստել զանբան կենդանիսն։

Օ՜ ինչ ասես, աւասիկ մարդ ամենուականագոյնն յարարածս, որ այնչափ խորհուրդս բարձունս յղացեալ

digitised by A.R.A.R.@

գանձէ 'ի ծննդական 'ի միտն. այնչափ ընդարձակա-
տարը իղձս, այնչափ իմաստս վսեմականս, ասպնջական
է սիրոյ, ասպնջական ճշմարտութեան, ասպնջական է
արդարութեան. մարդ միայն՝ յամենայն գոյակս ընդու-
նակ անդարձ սահմանի վերին տեսչութեանն, զի ինքն
միայն ընդունակ 'ի ճանաչել և 'ի սիրել զԱստուած.
մարդ միայն՝ յամենայն արարածս վկայեալ պատկեր և
նմանութիւն արարչին։

Ա՛ա այս մարդ, զինչ ասես, վասն հողոյ միայն հաս-
տեցաւ, առ 'ի կեալ և շնչել և անցուցանել զաւուրս
սպառընթաց մարմնոյն՝ ըստ օրինակի անասնոցն 'ի կերա-
կուր և յարբումն, 'ի պարապմունս շնչիս, 'ի սփոփու-
թիւնս անտիսականս, կամ 'ի հեշտութիւնս անասնա-
կանս։

Զ՞ի՞նչ 'ի ճահ այնպիսի սքանչելի հաստուածոյն
մոռանել խառնիլ 'ի նոյն ջոկ պաճարաց այնչափ անա-
ւագ և անկած. և լինել այնպէս արքային տեսիլ աշ-
խարհի և առակ նշաւակի յամենայն արարածս։ Զ՞ի
ապա 'ի մեռանել մարմնոյն, գնալ անկանել միւսանգամ
'ի վիհ ոչնչութեան, անգործ անպիտան թողեալ 'ի
յաւիտեան, զպէտս և զվաստակս զայնատարը մտացն
զիսորհուրդս զվսեմացեալ սրտին, զոր ետ նմա արարիչն։

Ա՛ա՛չ, եթէ այսպէս էր, ուր էր իմաստութիւնն Աստ-
ուծոյ 'ի հաստել անդ իւրում զհրաշակերտ զայս գործ
և զմեծ՝ միայն վասն սակաւօրեայ ժամանակի և վասն
ապականացու երկրի, և միայն առ 'ի փորձ ինչ և 'ի
ցոյցս կարողութեան զօրութեան իւրոյ։ Զ՞ո՞ր ճշգրտ-
իւ մարգարէին կրկնեսցի նուագ. "Իսկ արդ յիշեա
և տես թէ ո՞վ է իմ հանգիստ. միթէ 'ի զո՞ւր ինչ ստեղ-
ծեր զամենայն որդիս մարդկան..»։

Զ՞այս ուրեմն թերահաւատից և ամբարշտացն Աստ-
ուած՝ չէ մեծ. և մեծ է միայն և իմաստուն է միայն,
իբրև զի անիրաւ է առաւել, այլանդակ է առաւել, և
նուազեալ է առաւել քան զմարդ։

Իսկ ներհակաբար զմտաւ ած դու և զմերն, և տես-
ցես այնուհետև անաչառ. քանի՞ արժանի իցէ մեծ-
վայելչութեան արարչին՝ խնամակալութիւնն. հսկել 'ի
վերայ տիեզերաց. առաջնորդել մարդկան ստեղծուա-
ծոց իւրոց՝ ըստ օրինաց արդարութեան, ճշմարտութե,

digitised by A.R.A.R.@

սիրոյ, անմեղութեան, և զյօդ և զհիմն ընկերութեան զմարդկան հաստատիմն տալ գործել, ոչ միայն յառաքի-նութենէն, այլ և 'ի լուսոյ անտի բանի՝ զոր եդ 'ի նոսա։

Օ մնաւ ած քանի արժանի իցէ մեծվայելչութեան արարչին, սիրել զարարածս իւր. սիրել 'ի նոսա զառաքինութիւնսն, որովք նմանեսցին սկզբնատպին. ատել 'ի նոսա զմոլութիւնսն՝ որ ժանտացուցանեն զպատկերն. ոչ խառն 'ի միասին մինչ 'ի սպառ պահել զարդարն ընդ ամբարշտի. երջանիկս իւրև յարդարել զհոգիսն, որ վասն նորա միայն կեցին յաշխարհի, և 'ի թշուառութիւն մատնել զհոգիսն, որ համարեցան զտանել զերջանկութիւնն արտաքոյ նորա։

Հաւասիկ Ստուած հաւատացելոց, աւասիկ աստուածութիւն խնամտուն, արդար, Ճշմարիտ, որում մեքս երկիրպագանեմք, անաչառատես ակն, արդարակշիռ հատուցանող. Ստուած՝ որպիսի ամենայն արարածք քարոզեն մեզ. "Օ 'ի աներևոյթքն Ստուծոյ, ասէ, արարածովքս խնացեալ տեսանին, մշանջենաւորութիւն նորա, և զօրութիւն, և աստուածութիւն նորա։ Ստուած՝ զոր կարդացին ամենայն բանաւորք ընդ ամենայն դարս, և որպիսի ծանեան և հեթանոսացն խնամտունք. "Օ 'ի գիտութիւնն Ստուծոյ, ասէ, յայտնի էր 'ի նոսա. զի ծանեան զՍտուած, թէպէտ և ոչ իբրև զՍտուած փառաւորեցին"։

"Իսկ արդ, ասեն, եթէ այնչափ արդար է Ստուած, և իցէ՞ ապա նմա արժան պատուհասել իբրև յանցաւորութիւն զյօժարութիւնս ինչ զմեր, և զհակամիտութիւնս 'ի բերկրանս և 'ի հեշտութիւնս, որ համածինք մեզ են, և առ 'ի նմանէն տպաւորեալք 'ի մեզ։ Այս ո՞ հանդուրժեսցէ այսմ"։

Այս աւադիկ թերահաւատիցն և ամբարշտաց վերջին ձայնարկութիւն, մանաւանդ եթէ հայհոյութիւն. ուստի և նշաւակութի սորա լիցի և մեզ վերջին գլուխ քարոզիս և կնիք։

Այս արդ ո՞ զ և իցես, որ ընդդէմ դնես բանս. եթէ արդեօք 'ի միտս հաստատունս իցես 'ի չքմեղս հանել զամենայն գործս քո՝ պատրուակ առեալ քեզ զյօժարութիւնսդ և զհակամիտութիւնս յոլոց դրդիցիս։ Այնթէ արդեօք ամենայնն՝ որում ցանկամբ՝ իցէ օրինա-

digitised by A.R.A.R.@

ւոր։ Այնմ արդեաք ամենայն հակամիտութիւնքս մեր պարտիցին միակ կանոն լինել պարտուց մերոց։ Այնմ ասեմ՝ այս այսպէս իցէ, հնապա ուրեմն, այր դու, շատ իցէ քեզ միայն չարակենալ ընդ բախտս յաջողակս ընկերին, զի ապա արժան և թոյլ իցէ քեզ կապտել զնա 'ի բախտէն։ Դարձեալ և ամուսնոյն պագշտուելոյ թոյլ իցէ բռնաբարել զսրբութիւն անկողնոյն ընդդէմ իրաւանց ընկերութեան և բնութեանն։ Դարձեալ և 'ի թեթև ինչ կասկածանս վարանեալ քո միանգամ՝ 'ի վերայ թշնամւոյն, իրաւունք իցեն քո այնուհետև կենալ ուզ լինել նորա։ Դարձեալ և սրտնեալ քո միանգամ և չհանդուրժեալ ընդ ճոխաբար իշխանութիւն հօրն կամ ընդ խստութիւն իշխանիդ, ոչ ինչ յանցանք իցեն քո այնուհետև լուանալ զձեռս քո յարենէ նոցա։

Այս միով բանիս, շատ իցէ յօժարութիւնս ինն և հակամիտութիւնս առ մնրութիւն որ զինչ և իցէ՝ զգալ 'ի քեզ, զի ապա օրինաւոր լիցին քեզ և գործքն։

Այս քանզի այր իւրաքանչիւր գտանէ յանձին սերմանս չարս զախտից, առ հասարակ ուրեմն վայելեսցին ամենեքեան 'ի նզովելի յայս առանձնաշնորհութիւն։

Եվ քանի կարևոր ուրեմն և յոյժ կարևոր իցեն մարդոյ այլ օրէնք և այլ կանոնք յառաջնորդութիւն՝ արտաքոյ յօժարութեանց նորա և ցանկութեանց։ Ոչ ահա և դարք վաղնջուց խաւարին հեթանոսութեանն ծանեան զհարկ զիմաստասիրութեանն, այս է՝ զլուսաւորութեան ինն մտաց գերագոյն քան զզգայութիւնսն՝ 'ի կառավարել զնոսա. ուստի և զերասանն 'ի ձեռս ետուն բանին սանձել զկիրս մարդկայինս։ Զանզի անդրստին բնութիւնն ինքնին ած ձգեաց զնոսա 'ի ծանօթութիւն ճշմարտութեանս այսորիկ. և ուստոյց նոցա՝ եթէ կոյր և մոլեգին բերումն չարարի լինել միայնակ առաջնորդ գործոց մարդկան։ Եվ՝ ինչ զի 'ի դէպ իցէ ասել, եթէ այս բերումն և յօժարութիւն չունի տիրապէս զծագումն իւր անդստին 'ի բնութենէ։ Եվ ասեն զի և ամենայն օրէնք՝ որ հետզհետէ 'ի վեր ելին յաշխարհի, ուշ նպատակի կալան առ հասարակ 'ի չափս պահել զբերմունսն։

Զանզի և առ հասարակ որ միանգամ յամենայն 'ի դարս համբաւեցան և սիրեցան իբրև առաքինիք և ի-

digitised by A.R.A.R.@

մասունք, նոքա ոչ ինչ անսացին տպաւորութեան ազդեցութեան յօժարութեանցն. ուստի և յամենայն իսկ 'ի ժողովուրդս ազգաց՝ իբրև հրեշք բնութեան համարեցան և նշաւակք, որք միանգամ անխտիրք գտան 'ի յօժարութիւնս և 'ի հակամիտութիւնս բնութեան։

Բանզի եթէ միանգամ այդ սկիզբն տիրասցի առ մարդիկ՝ չհամարել երբէք 'ի մեղս զյօժարութիւնսն և զարդիւնս նոցա, այնուհետև անհնար իցէ և ընկերութեանն կալ յակաստանի. և պէտք իցեն յայնժամ մարդկան որոշիլ 'ի միմեանց առ 'ի յանդորրու ապահովել զկեանս, և գնալ օթագայիլ յանտառս, և վայրաբնակել յամայիս իբրև զերէս և զգազանս։

Բայց մեք և այլուստ իրաւացուցուք զբանաւոր ապարածն, մանաւանդ եթէ զարարիչն. որով և առաւել նշաւակեսցուք զթերահաւատն։ Օ՛ի եթէ են 'ի մարդ յօժարութիւնք առ չարն և առ հեշտութիւն, են և յօժարութիւնք առ առաքինութիւն, և առ պարկեշտութիւն. և եթէ օրէնք՝ որ յանդամս մեր, ձգեն 'ի բերկրալիս զգայութեանց, ոչ ահա և օրէնք այլ իցեն 'ի մեզ զրեալ 'ի սիրտս մեր՝ հրաւիրակք 'ի ժուժկալութիւն։ Յս արդ զի՞ է զի առաջնովքն միայն խնդրեսցէ այր թուլահաւատ 'ի չքմեղս հանել զյանցաւորութիւն իւր. և այն զի՝ վերջինքդ ձահաւորագոյնք ևս են բանականիս բնութեան։

Բայց է ուրեմն, եթէ խոտորումն բանին է 'ի քեզ, այր դու, պատճառք յանցաւորութեան քո քան թէ հակամիտութիւնք բնութեանն։ Վայր մի դու յաճեաց շուրջ զաչս քո. չիցե՞ն յաշխարհի և արդարք բազումք, ասա ինչ անաչառ. չիցե՞ն և անձինք բազումք ողջախոհք, ժուժկալք, հաւատարիմք, երկիւղածք. չիցե՞ն արդեօք և նոքա իբրև զքեզ ժառանգաւորք 'ի բնութենէ նոցուն հակամիտութեանց և նոցուն կրից. զի՞ է զի նոքա իշխանացեալ են 'ի վերայ կրից, և դու ոչ. ոչ նոյն աղբիւրակն թշուառութեանց իցէ և նոցայն և քոյդ. զինչ ուրեմն առաւել կայցէ 'ի նոսա, քան 'ի քեզ. բայց սէր առաքինութեան և պնդութիւն և ձիգն ընդդէմ բնութեան. և զիարդ ապա պատրուակ արդարացուցիչ յանցաւորութեանցդ առցես դու զհակամիտութիւնս բնութեանդ։

digitised by A.R.A.R.@

Արդար է ուրեմն Աստուած, ով մարդ, և առաւել արդար 'ի պատուհասել զյանցաւորս։ — Եթէ արդար է, ասէն Թերահաւատք, զահի հարեալք 'ի հանդերձելոյն, եթէ արդար է Աստուած, Թող ուրեմն արդարոյն հատուսցէ կեանս անմահ, իսկ յանցաւորացն պատուհաս վերջին, այս է՝ 'ի չէք զնոսա դարձուցանել։» — Այս զրոյց է աւադիկ վերջին ապաւէն Թերահաւատութեանն։

Այլ աղէ ասա, որ պատուհաս իցէ քո 'ի չէք դառնալն քո. ոչ այդ իցէ քո քաղցրագոյն յոյս ակնկալութեան 'ի հեշտութիւնս քո, զի մարթասցիս միանգամ անպատուհաս արձակիլ յոչնչութեան քում. զինչ և սիրելի կայցէ ոձրագործ և մեծեղեռն մեղաւորի քան զչքութիւնն. քանզի զիտակ իսկ է զի յետ գերեզմանին՝ վիհ գեհենոյն հանդերձեալ մնայ նմա յանվախճան տանջանս։

Սակայն յոյս ամբարշտին, ասէ, կորիցէ. այլ ոչ և ամբարշտութիւն նորա և Թերահաւատութիւն։ Յաւիտենական եղիցին տանջանքն, քանզի և յաւիտենական լինիցին հեշտութիւնք նորա, եթէ նա ինքն իշխան կացեալ էր 'ի վերայ կենաց իւրոց. կամէր յաւերժանալ յերկրի 'ի հեշտախտութիւնս, և մահն ինքնին վախճան արար յանցաւորութեանց նորա, այլ ոչ սահման եղ մեղանչական ցանկութեանց նորա։ Արդարն դատաւոր և արտադէտն չափեսցէ ուրեմն զտանջանսն ըստ յանցանացն. «Արթիցեն նորա 'ի տանջանսն յաւիտենականս, և արդարքն 'ի կեանս յաւիտենականս»։

Այս արդ ուշիմ լեր ով մարդ. զիտես իսկ դու զձշմարտութիւնն, այլ զահի հարեալ ես 'ի պատուհասէն. կարծիցես Թերևս Թերահաւատութեամբն անձնապուր լինել 'ի նմանէն... Ա՜հ...։

Այս ցուցից քեզ ճանապարհ անդորը 'ի հանգուցանել զանձն յանհնարին զարհուրանացն։ Դու ինքնին կանխեա, և կամաւորութեամբ ատէն զահի հարջիր 'ի հանդերձելոյն. մի և խնդրեսցես, զիարդ իցեն իրք անտի կենացն, զինչ դէպքն, զինչ անցքն. այլ հարց դու անդուլ ցանձն քո, զինչ գործ իցէ քո յաստի կեանս, ով անձն իմ. զինչ դէպք իցեն կրիցդ, և զինչ անցք որ 'ի նոցունց. հանդո, խաղաղացո զքոյ խիղճն

digitised by A.R.A.R.@

անմեղութեամբ կենաց քոց, ոչ եթէ թերահաւատութեամբ խորհրդոց քոց։ Յանդորը հան զսիրտ քո ապաւինելով Աստուած, ոչ եթէ երկբայելով 'ի խնամոց նորա։ Խաղաղութիւն թերահաւատից ոչ այլ ինչ է, բայց խռովութիւն անդուլ։ Խնդրեա քեզ վիճակ կենաց, ոչ զլուծ թօթափելով զհաւատոցն, այլ Ճաշակելով զի քաղցր է նա։ Ոչիր 'ի գործ զհրահանգս նորա, և քո լոյս բանին ոչ ևս անսատեսցէ հպատակել դաւանութեան նորա։

Ոչ ևս, հաւատա ինձ, ոչ ևս քեզ անհաւատալի կամ երկբայելի թուեսցին հանդերձեալքն, յորմէ հետէ հրաժեշտ տացես յաշխարհասիրացն, մի նմանել նոցա որոց զերջանկութիւն իւրեանց բովանդակ հաստատեալ ի՛ցէ 'ի վայելս անցաւոր կենացս։ Յայնժամ դու ոչ միայն զահի ոչ հարկանիցիս 'ի հանդերձելոյն, այլ և փութացուսցես զնոյն քոյին տենչանօք. յոգւոց հանեալ փափաքեսցես աւուրն, յորում որդի մարդոյ "Հայր հանդերձելոյ աշխարհին" եկեսցէ 'ի պատուհասել զանհաւատն, և զքեզ զհաւատացեալդ ժողովեսցէ յարքայութիւնն։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐՈՅ ԼԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՅ

"Ամենեքին որ 'ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի որդւոյն Աստուծոյ, և ելցեն արտաքս"։

Իմն հաւատոյ հաստատութեան, խարիսխ անսասանելի Հնմարտութեան մերոյ են հաւատք յարութեան մարմնոյ մերոյ։ Սա յոյս աներկեւան յաւիտենից ցնծութեան, սա քաջալերութիւն ազգոյ առաքինութեան, սա դիւր և սիրելութիւն խստամբերութեան, սա պսակ և մրցանակ կենաց բարեաւութեան։ Սա զօրավիգն առ հասարակ՝ որոց քրիստոսեանքն իցեն. վարդապետաց ձայնին հզօրիչ, հաւատացելոց յուսոյն օժանդակ, Հգնարանաց ներանձնացելոցն հաստատան, կուսանաց ժուժկալութեան՝ գերաշխարհիկ պարք հարսանեաց, դժոխրամբեր տանջանաց մարտիրոսաց՝ Հեմք իբրև 'ի մարգս վարդենեաց։

Այսչափ է զօրութիւն հաւատոյ յարութեան մերոյ. այսչափ է ուրեմն և կարևորութիւն քարոզիս 'ի լուր հաւատացելոց։ Այս յարութիւն մահացու մարմնոցս ինքնին ոչ այլ ինչ է, բայց աստուածավայելուչ անմահ արգասիք փառաւոր յարութեան մարմնոյ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Եվ յարութիւն Յիսուսի չէր, չէր և յարութիւն մարդոյ. որպէս գեղեցիկս երգեաց, եթէ "Անմահիդ մեռելութիւն Հնարհեաց դարձեալ զանմահութիւն"։ "Օ՛

digitised by A.R.A.R.@

եթէ հաւատամք, որպէս աստուածայինն քաջալերեաց առաքեալ, եթէ հաւատամք եթէ Յիսուս մեռաւ և յարեաւ, նոյնպէս և Աստուած զննջեցեալսն 'ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա ,, ։

Ինքն մեռաւ Աշմարտապէս, և յարեաւ Աշմարտապէս. մարմին՝ որ յառաջ վիրալից՝ յարեաւ անարատ, լուսափայլ, առոյգ, գեղեցիկ. միայն զսպիս վիրացն պահեալ՝ վկայութիւն անմահ գեղեցիկ մարտին, գեղեցիկ ևս յաղթանակին։ Զի և Աշգրտագոյնս այնուհետև իմանալ մեզ զԱվետայն, և զԱյտայեայն, և զառաքելոյն զիորհրդաւոր զիմաստն, և բարձրաբարբառ ասել առ մահն. "Ո՞ւր է մահ յաղթութիւն քո, ո՞ւր են դժոխք խայթոց քո ,, ։ Որ երբեմն բարձրապարանոց բռնաւորդ անողոքելի մարդկան ազգի, յաղթական ամենայնի, զիաւրդ 'ի պարտութիւն մատնեցար. ո՞ւր նշանակդ մրցանակաց աշխարհակալ յաղթութեանցդ։ Ա՝արդ մի աւասիկ, մարդ Աշմարիտ, զգերութիւնդ գերեաց, զաւարդ էառ, զտէրութիւնդ կոխեաց։ Ա՝արդ մի մահացու, մարմին երկրաւոր, զաղեղն հզօրիդ փշրեաց, զնետսն խորտակեաց. մահուամբ զմահդ մահացոյց, և խայթոցաւ զխայթոցդ խոցեաց. որպէս և ասաց իսկ. "Այլեց մահ քո ո՛վ մահ. և խայթոց քո եղեց ո՛վ դժոխք ,, ։

Ա՛յսչափ կենագործ յարութիւն տեառն Յիսուսի մեծաշքոր գտաւ, յաղթական մահուն. ոչ միայն զի զխայթոցն բթեցոյց՝ բառնալով զմեղսն, ոչ միայն զի զարհաւիրս մահուն՝ մահուամբն մեզ նուաղեցոյց, ոչ միայն զի զիւր մարմինն 'ի ձեռաց մահուն կորզեաց, այլ և առաւել ևս յոյժ՝ զի փառաւոր յարութիւն նորա պատճառք եկաց անպատիր համաշխարհական մերոյ յարութեանս և առաջնորդ անմահութեան։

Ա՛ռդ յաղագս անձառելի շնորհիս պարգևեալ 'ի Քրիստոսէ մահացու բնութեանս՝ լուեալն զիաւրդ հնարաւոր իցէ, և ոչ քարոզ մի շնորհապարտ յարդարել հաւատացելոց. զի և համարիմ՝ անշուշտ ոչ միայն կարեւոր զձառ բանիս, իբրու որ հիմն իցէ հաստատութեան՝ որպէս ասացի՝ քրիստոսական դաւանութեանս, այլ և սիրելի յոյժ և փարելի յունկն իւրաքանչիւր հաւատացելոյ՝ իբրու որ անմահացուցիչ է աղցաւոր մարմնոյս,

digitised by A.R.A.R.@

և յոյս անպատիր անպատում փառաց մերոց, և բարձրագլուխ պարծանք մեր առաջի անհաւատից, և ամենաթագաւոր նշաւակութիւն թուլահաւատից, և եռանդն մեծապէս քաջալերութեան տկարութեան մերոյ յընթացս հոգեւորս քրիստոնէական կենացս, 'ի լսել մեր միանգամ զանսուտ ճշմարտութիւնն տեառն Յիսուսի և 'ի հաւատալ երկրպագութեամբ, եթէ եկեսցէ օր մի՝ յորում ամենեքին որ 'ի գերեզմանս կայցեն՝ լուիցեն ձայնի որդւոյն Աստուծոյ և եկեսցեն արտաքս։ Առաջին որոց բարիս գործեալ իցէ, 'ի յարութիւն կենաց։ Երկրորդ անգամ՝ որոց չար արարեալ 'ի յարութիւն դատաստանաց։

ՄԱՍՆ Ա.

Օ հրաշալին զայն տեսիլ զմեծին Զեկիելի՝ իբրև պատկեր ճշգրիտ և տիպար կենդանի տիեզերական յարութեանս մերոյ՝ յուշ առ վայր մի ածէք սիրելիք։ Հոգի տեառն, ասէ, առեալ օր մի զերանելի մարգարէն կացուցանէր յընդարձակ դաշտի. դաշտ՝ լի խաղաղակոյտ ոսկերօք մարդկան։

Յայն տեսիլ տխուր և ահաւոր, ձայն աստուածային պարզ և մեկին հրաման կարդայր մարգարէին, հոգի կենդանութեան կոչել 'ի վերայ ցամաքեալ ոսկերաւոյն։ Այն ինչ շունչ բարբառոյ մարգարէին հարաւ 'ի վերայ խաղաղակոյտ ոսկերացն, անդէն վաղվաղակի առ հասարակ նոքա 'ի ծածուկ զօրութենէն խլրտեալ շարժէին, և ցիրուցան սփռեալ և տարանջատ ոսկերտին խնդրեր գալ միանալ ընդ ընկերին. ոտք և սրունք, և ձեռք և բազուկք, և կողք և լանջք, և կառափունք և իրանք առ հասարակ գային խնդրէին գտանել իւրաքանչիւր զկայսն, և հաստատիլ 'ի բոնն՝ յորում միանգամ հաստեցան յարարչէն 'ի գեղայարմար շինուած մարմնոյն։ Այսպա և կմախքն առ հասարակ իբրու հենուին անկանէին, և ձգէին նեարդք և ջիղք և երակունք, և տարածէին 'ի վերայ մարմնոյն և անդամոյն,

digitised by A.R.A.R.@

և պատէր բոլորէր մարմնոյն, և գնայր խաղայր արիւնն յերակունսն, և ընդոյր շրջէր աւիշն 'ի խողովակսն, և յերևեան գայր գոյնն, և շունչ մնանէր 'ի բոլոր մարմնոյն, և դառնային լինէին կենդանիք և առոյգք և հզօրք և կերպարանաւորք, և երևեցան կացին իւրաքանչիւր 'ի վերայ ոտից բազմութիւն սմբաւ. "Եւ եմուտ, ասէ, 'ի նոսա հոգի և կացին 'ի վերայ ոտից իւրեանց ժողով բազում յոյժ յոյժ.,,։

Եւ արդ որ 'ի տեսիլ և 'ի պատկեր երևեցաւ յայնժամ մարգարէին, արդեամբք կատարեսցի 'ի կատարածի աշխարհի. և առ հասարակ հոգիք անջատեալք դարձ արասցեն 'ի մարմինսն՝ զոր թողին 'ի մահուան, և մահացու մարմինս յարիցեն անմահ։

Զ.յլ մեք բնաւ իսկ չգիտեմք այժմ, ուրանօր արդեօք լքեալ թողցուք մեք զմարմինս մեր, և որ դէպք որ պատահարք սպասեալ մնան մարմնոցս, կամ թէ զիարդ օրինակաւ մարմինս մեր այս բաժանեսցի 'ի հոգւոյն որ վարէ և շարժէ զսա։

Ա՝արմինքս մեր դիակնացեալք, որպէս օրինակեսցէ որ արդեօք՝ զնմանութիւն բերեն զքրոց, որոց ուղիք և ընթացք բազմօրինակ սահին և սպառին. փոփոխեն զկերպարանս, այլայլին 'ի բնոյն. կէսք անօսրացեալք ամբառնան 'ի շոգի, կէսք թանձրացեալք մնծնուն 'ի գայռ և 'ի տիղին, և կէսք՝ որպէս դէպք տան՝ դառնան 'ի բուսական մարմինս սմբաւս, և որ այլ ևս։

Զ.այս վիճակ ողորմելի է առ հասարակ անխտիր ամենայն մարմնոց անջատելոյն 'ի հոգւոյ. ուստի և սրտառուչ բոլորք հարկանէր աստուածային մարգարէն. իբրու որ անարգութեան կրից և վատթար բախտի բազում անգամ վիճակեցան մարմինք ընտրելոյն և սրբոյն։ Թշնամիք քո տէր, ասէ, հանգուցեալ կան փառաւք 'ի դիրս գերեզմանաց իւրեանց, և եղեալ պատուով 'ի շիրիմս նախնեաց իւրեանց. իսկ քոյ սուրբք և ծառայք, բարէ, քանիցս անգամ, ո՛վ տէր, անմնան լքեալ մնացին 'ի պատուոյ զիահանացն, նա աւանիկ և զպատուական աբիւնս նոցա արբ երկիր ծարաւուտ. նաև հրակեզ ոսկերք սրբոցն յաճիւն փոխեցան, և մոխիրք նոցա հողմնավարք ընդ օդս ցնդեցան. նաև անարատ նոցա մարմինք արկան 'ի կուր դժոխորովայն շանց և յոլոս գիշա-

digitised by A.R.A.R.@

խանձ անդեղայ “Լդղին, ասէ, զդիակունս ծառայից քոց կերակուր թռչնոց երկնից, զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի. հեղին զարիւն նոցա իբրև զջուր, և ոչ ոք էր որ թաղէր զնոսա,,։

Հաւասիկ սահման հասարակաց ապականացու բնութեան մարմնոյ. այլ պինդ կացէք հաւատով, հաւատացեալք. այս արիածք բնաւորականք երբէք զամագիտ ոչ լինիցին 'ի մարմնս մեր՝ այնպէս իմն փոխել և ապականել և այլ յայլմէ գործել, զի աստուածային տեսչութիւնն տկարասցի ինչ 'ի պահել զնոսա և 'ի պահպանել, և յօդել վերստին և միաւանգամ կերպարանել զնոսա իբրու զառաջինն։

Խաբէ մեծազօր նախախնամութեանն, որ ինքնին մեզ կանուխ ազդեաց զաւետիսն, իբրու որ մանր զդուշութեամբ զաստուածութեան խնամն տարածեալ ունի 'ի վերայ կերպարանաց իւրաքանչիւր 'ի մէնջ, և ոչ կերացն և անդամոցն և հերաց իսկ զլխովին. զի և ոչ խուն մի երբէք 'ի բոլորէն կորիցէ. “Խաղում նեղութիւնք են, ասէ, արդարոց. յամենայնէ փրկէ զնոսա տէր, և պահէ զամենայն ոսկերս նոցա, և մի 'ի նոցանէ ոչ կորիցէ,,։ Իսկ և ինքնին տէրն զանձաւելի խնամակալութիւնն հեղաբանեալ. “Ձեր, ասէ, և ամենայն իսկ, ոչ միայն անդամքն և ոսկերքն, այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. և մազ մի 'ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ. զի քան զբազում ճագս լաւ էք դուք,,։

Յս արդ իբրև եկեսցէ հասցէ օրն, լուսաւոր, եղբարք, զպատմութիւն անսուտ զՀանդերձելոցն. և զոր միանգամ 'ի վիշտս էք, և 'ի զրկութիւնս, և յանձկութիւնս աղցաւոր կենացս՝ յուսով խնդացէք անմնացուցիչ յարութեան մերոյ, և քաջալերեցարուք 'ի համբերութեան ձերում. իբրև եկեսցէ հասցէ օրն այն՝ օրն վերջին ամենայն աւուրց, օրն ահագին, օրն նորոգութեան մերոյ, զոր կանուխ մեզ աւետարանեաց առաքեալն Պաւղոս, ինչպէս յայնժամ ինքնին Քրիստոս Աստուած 'ի յերկնից և առընթեր իւր հրեշտակապետն մեծ, 'ի փող աւագագոյն ահագնագոյն ազդեցութիւն առնել տիեզերաց, հնչեցուցանել առ ամենեսին որ ննջեն 'ի գերեզմանս։ “Ինքնին տէր, ասէ,

digitised by A.R.A.R.@

հրամանաւն և 'ի ձայն հրեշտակապետի և 'ի փող Աստուծոյ իջանէ յերկնից ,, . Իսկ և ընդ աւետարանչայն սրբոց՝ 'ի նոյն և հրեշտակայ բազմութիւն՝ մէն մի 'ի գոչիւն փողոյ արագաթեւք սլասցին ընդ ամենայն երկիր . "Գաբրիէլ , ասէ , զհրեշտակս իւր փողով մեծաւ , և ժողովեսցէն զընտրեալսն 'ի չորից հողմոց 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս երկրի ,, . Եւ ընդ գոչման փողոյն և ձայն ազդարար և հնչիւն ահաւոր լսելի լիցի՝ հրամանահան հզօր ամենայն մեռելոցն , Ձեռել յառնել իւրաքանչիւր 'ի վայրաց՝ ուր ուրեք անկեալ կայցեն . ձայն որ ասէ . "Արիք մեռեալք , եկայք 'ի դատաստան ,, .

Զանազի ձայն փողահարայն՝ ձայն նոյն է ինքնին ամենազօրին Աստուծոյ , որ հրամայէ արագ արագ ընուլ զհրամանն . Զ սոն որոյ ասէ . "Զ աղվաղակի յական թօթափել . քանզի փող հարկանի , և մեռեալք յարիցեն ,, , ոչ յամր ինչ՝ այլ 'ի վայրկեան ժամու , այլ 'ի քթթել մի ական , յարիցեն առ հասարակ անդստին 'ի ստեղծմանէ մարդոյն՝ որ մեռանն , որ սպանան , որ այրեցանն , որ ջրահեղձոյց կորեան , որ գազանակուքք եղեն , առ հասարակ յարիցեն , առցեն միաբանգամ իւրաքանչիւր զկերպարանս , և դարձցին 'ի նորոգատուր կեանս .

Թաքէ ամենազօր հրամանին . անշուշտ մեծահրաշ են սքանչելիքն . այլ սքանչելեաց սքանչելիք այն եկաց , յորժամ ասաց և եղեն , հրամայեաց և հաստատեցան . զի յայնժամ յոչնչէ եղեն ինչ . իսկ 'ի վերջնումն աւուր արդէն ընչացեալքն և փոխակերպեալք առցեն միաբանգամ զնոյն՝ զոր երբեմն ունէին .

Այսպէս այն մեծապէս է մեզ սիրելիք , զի զնոյն զայս զմեր մարմին , զմեր զընտանին , զմեր տնկակիցն , զոր այժմ զգեցեալ ունիմք , զնոյն զայս միաբանգամ ողջ առցուք 'ի մեզ վերանորոգեալ յապականութենէ 'ի նոյն ձայն ամենազօր հրամանին որով և ոչինչն էացաւ .

Զանազի և որք վրիպակ կարծեաք ասացին , եթէ առցուք մեք մարմին՝ որպիսի և իցէ , մոլորեցան 'ի Աշմարտութենէ . քանզի աստուածային գիրք և աստուածխնամ հարք զնոյն զայն մարմին տան միաբանգամ իւրաքանչիւր 'ի մէջ . "Ո՛վ իւրաքանչիւր որ , ասէ , աստուածային առաքեալն , իւրաքանչիւր որ առցէ նոյնին

digitised by A.R.A.R.@

մարմնով զոր ինչ գործեաց, եթէ բարի և եթէ չար »։

Հապա առցուք մեք անշուշտ սիրելիք միւսանգամ զնոյն մարմին՝ զոր Թողաք ասեն 'ի մահուն մերում։ Առցուք մեք զնոյն այն, որ սանձեալք ժուժկալեցին 'ի քրիստոնէական մեռելութիւնն. զնոյն այն՝ որք 'ի զեղջ և յարտասուս հատան վասն Աստուծոյ։ Առցուք մեք զնոյն զայս ձեռս, զորս 'ի գործ վարեցաք անպքաշնելի 'ի սպասաւորութիւնս եղբարց և յարդիւնս սիրոյ։ Առցուք զնոյն զայս շրթունս, զորս սովորեցուցաք խոսել բանս աստուածայինս և խրատս հոգեկեցոյցս. զնոյն շրթունս՝ որովք ջերմեռանդն սիրով աղօթից ստէպ կացաք և յօրհնութիւնս առ Աստուած։ Առցուք մեք զնոյն զայս զսիրտ մեր, զոր բորբոքեցաք մեք 'ի սէրն Աստուծոյ և 'ի սէր եղբարց. և յորմէ խղճք փափաքանաց երբէք երբէք ուղերձեցան առ Աստուած, և յորմէ զիղձս գժպատեհս և զմեղանչականն սանձակոծեցաք։ Առցուք վերստին զմեր զայս անդամն առ հասարակ, որ կրեցին և չարչարեցան վասն Աստուծոյ՝ որ յարտաքին արկածից և որ 'ի բնաւորականս կրից։ Եւ առցուք մեք միւսանգամ զբոլոր զայս մարմին, որ ընդ լծով պատուիրանացն Աստուծոյ գրաւեաց զինքն յանցաւոր 'ի կեանս, զի յանանցն հաղորդ և բաժանորդ լիցի վարձուցն հատուցման։

Ահանգի և բնութիւնս մեր ինքնին կատարելագունիս այսմիկ փափաքէ յարութեան, այս է՝ զի միւսանգամ նորոգեսցի և կենդանասցի այն նոյն մարմին՝ որ չարչարեցաւ վասն Աստուծոյ, և քայքայեալ լուծաւ 'ի մահուն։ Օ՜նոյն խնդրէ և արդարութիւնն ինքնին գլխովին և նախախնամութիւնն, զի նոյն և մի մարմինն՝ որ ծառայեաց հոգւոյն վշտակրութեամբն, միւսանգամ կապեսցի ընդ նմա փոխարէն հատուցմանն։

Ահա՛ք, քանիցս յորդեսցէ այս յարութիւն զեռանդն յաստուածպաշտութիւն. քանիցս և համբերութիւն մարդոյ պնդեսցի սքանչելապէս 'ի մշտաչարչար 'ի կեանս, որ սերան հաւատով և անխաբ յուսով ակնկալեալ մնասցէ այսօրինակ յարութեան։

Ձեզ առասիկ տիպար զեղեցիկ դասք սրբոց հաւատացելոցն՝ որ յառաջ եղեն քան զմեզ 'ի Քրիստոս. գիտէք իսկ և լուեալ էք 'ի վկայաբան պատմութեանց

digitised by A.R.A.R.@

եկեղեցւոյ. քանի ցնծութեամբ, որպիսի քաջալերութեամբ նահատակէին 'ի չարչարանս առաքելոյն դասք և մարտիրոսացն և կուսանացն և Ճգնաւորաց, իբրև առաջի աչաց նկարելով ակներև հաւատով զվշտակիցն մարմնոյ իւրեանց զմիասանդամ նորոգումն յարութեան։

Որ հաւատք, աղէ ասա, որ հաւատք կենդանի այնպիսի քաջալիսդ նահատակս եղին զերանելին զայն պար զեօթանց առաքինեացն Յակաբայեցւոյ հանդերձ մարբն. "Դու զմեզ, ասէն, յայսց կենաց աշխարհիս կարձել հանարիս. իսկ այն որ աշխարհաց թագաւորն է, թէպէտ և մեռանիմք մեք վասն օրինացն, 'ի կեանս յաւիտենից 'ի միասանդամ ծննդեանն ժամանակի կենաց 'ի կեանս դարձուցանէ"։ Օ՜իմարդ այնպէս քաջասիրտս խրախուսեցան նոքա, զիարդ այնպէս յայտնաբարբառ յառաջ քան զչարչարս աւետարանին քարոզք առ անհաւատ արքայն եղեն Ճշմարտութեան. "Յեղ լաւ է, ասէն, զի փոխիմք աստի 'ի մարդկանէ, և յուսոյն ակն ունիմք միասանդամ ծննդեանն յարութեան մեռելոց, քան քեզ 'ի կենդանիս. զի արդեալ փակեալ է 'ի քէն յարութիւն մեռելոց"։ Օ՜նոյն և բարեաց յիշատակաց արժանի մայրն սքանչելի քանի կենդանի հաւատովն յարութեան սրտանդեալ զմի մի 'ի նահատակաց որդւոցն քաջալերէր, եթէ "Որ աշխարհի արարիչն է, ասէ, որ ստեղծ զծնունդս մարդկան, զկեանսդ և զոգիսդ 'ի դալստեան իւրում ողորմութեամբ 'ի ձեզ դարձուսցէ"։

Դու որ վաղնջուց յոյժ քան զսոսա՝ մեզ քանի հրահանգ անխաբ յամենայն նեղութիւնս մեր մատուսցէ համբերողացն նախատիպ սքանչելին Յովբ. զիարդ այնպէս լուսաւոր հաւատովն 'ի մէջ այլակրօնիցն յայնչափ հնութեան դարս՝ իբրև Ճշգրիտ քրիստոնեայ գիտաց այնչափ իմաստասիրել վասն հաւատոցն յարութեան։ Իմ աւասիկ, ասէր երանելին, իմ աւասիկ 'ի խորս թաքուառութեան հասեալ է, յանձուկս արկածից ըմբռնեալ եմ, որպիսի թերևս և ոչ որ երբեք յաշխարհի. զի համանդամայն իմ որդիք 'ի միումբ աւուր 'ի մահ տարածեալ. մեծութիւնք իմ ամենայն յափշտակեցան, այրեցան կալուածք, կործանեցաւ տունն, օտարացան ծառայք, լքին բարեկամք, ծաղր եղէ սիրելեաց, նշա-

digitised by A.R.A.R.@

ւակ ամենայն տեսողաց, զզուեցայ ոսն հարեալ յա-
մուսնոյս. սակայն և յոյս իմ անասասանելի է յԱ՛ստուած։
Լոս աւասիկ 'ի ծագ լրման աղէտից և ամօթոյս 'ի բո-
լոր մարմնի վարակեալ եմ չարալլուկ 'ի գարշ ախտէ.
մարմին իմ ժահրալից, թարախալից. ոչ կար մնաց ինչ
զօրութեան, և ոչ յանդամոցս ինչ ողջ, խուսափեցայ
իբրև ստուերք, մարթ ինձ մնաց միայն և ոսկր, ոչ տե-
սիլ ինչ և ոչ կերպարան, մարմինք իմ որդնակերք, ա-
տամունք իմ քանցեալք. շրթունք միայն ողջ կան 'ի
յողբ և 'ի հեծութիւն, շրթունք միայն ողջ կան 'ի
գոհանալ զտեառնէ։ Սակայն և իմ աղիք յիմ վերայ
գալարին, և արհաւիրք անհնարինք զիս ունին. մխի-
թարեցէք, մխիթարեցէք ողորմեցարուք ինձ ո՛ բարե-
կամք. սակաւիկ մի ևս, փոքր միւս ևս կեանք իմ այս
ընկղմեն զհոգի իմ. սակայն և 'ի չարատանջ փորձու-
թենէս չեմ ես երբէք նկուն. իբրև միանգամ զքեզ
ինձ յուշ ածեմ, ո՛վ տէր, և յանուշակ խորհրդոյ հան-
դերձելոյ իմոյ նորոգութեան քաղցրանայ սիրտ իմ. զի
'ի վերջնումն աւուր 'ի հողոյ յառնելոց եմ։ Զանազի
գիտեմ անշուշտ՝ եթէ 'ի կատարածի ժամանակաց յա-
րեայց ես միւսանգամ. և զմահացու զայս իմ մարմինս
պատառ պատառ անկեալ յերկիր դարձուսցէ յիս միւ-
սանգամ տէրն իմ նորափետուր զարդարեալ, ողջ և ան-
արատ և անապական 'ի յաւիտեան. զայս իմ մարմինս
զՆՃակերն, զքայքայեալն, զապականեալն, աւից ես
նորոգածին, ես ինքն՝ և ոչ այլ ոք։ Զայս յոյս անխաբ
որ զիսն ունի, որ զիսն քաջալերէ, այս յոյս սնոգեալ է
'ի միտս, այս յոյս սերտեալ է 'ի սրտիս. և եթէ յայս
կենցաղ զամենայն բարի միանգամայն կորուսից, չեմ
տարաբախտիկ, երջանկութիւն իմ ընդ իս է. յոյս իմ
անխաբ է. "Զայս յոյս, ասէ, հաստատեալ է 'ի ծոցի
իմում,,։

Օ այս ասաց յայնժամ երանելին, և զնոյն մնա-
ւանդ աշակերտաքս աւետարանին ասացուք յամենայն
արկածս մեր և 'ի նեղութիւնս վասն Զ՛ստուծոյ։ Զ՛այս
յոյս յարութեան է՝ որոյ միանգամ նեղեսցին ինչ վասն
Զ՛ստուծոյ, և համբերեսցեն իբրև զՅՈԲ. այս յոյս յա-
րութեան կենաց, զոր որոշեաց տէրն եթէ յասէն որոց
զբարիս գործեալ՝ 'ի յարութիւն կենաց, և որոց զչար՝ 'ի

digitised by A.R.A.R.@

յարութիւն դատաստանաց։ Յարութիւն հասարակաց է արդարոց և մեղաւորաց. այլ զինչ իցէ յարութիւնն կենաց և յարութիւն դատաստանաց։ Յարութիւն կենաց՝ որում ամէն ունիմք, ունկն դիք սակաւուք՝ զոր քարոզիկ Ճշգրտեաց Պաւղոս՝ «Յարութիւն կենաց մեռելոցն, ասէ, սերմանի ապականութեամբ և յառնէ առանց ապականութեան. սերմանի անարգութեամբ և յառնէ փառաւք. սերմանի տկարութեամբ և յառնէ զօրութեամբ. սերմանի մարմին հնչաւոր և յառնէ մարմին հոգեւոր»։

Տեսանե՞ս զիարդ Ճշգրտագոյնս հաւանեցոյց աստուածիմաստն վասն յարութենն՝ 'ի սերմանցն օրինակէ. զոր սերմանեմք հատ մերկ, և ոչ կենդանանայ եթէ ոչ նախ ապականեսցի. և Աստուած զգեցուցանէ նոցա մարմին ըստ ազգս ազգաց, նոյնպէս և յարութիւն մեռելոց, ասէ, սերմանի ապականութեամբ, այլուքն հանդերձ։ Որով և գեղեցիկս և հաստատուն ինդացուցանէ զՀաւատացեալս. քառեակս 'ի ներքս բերելով նոցա ձիրս հրաշալիս զմարմնոց մերոց 'ի փառաւոր յարութեան մերում. այս է՝ զի եղիցին մեր մարմինք յայնժամ անչարչարելիք, լուսափայլք, արագունք, թափանցիկք։

Այս է առաջինն՝ անչարչարութիւն. յորժամ մարմինն ապականացու անմահութեամբ պանծացեալ բերկրի, որպէս ասաց նոյն առաքեալ. «Յորժամ մահկանացուս այս զգեցցի զանմահութիւն, և ապականացուս՝ զանապականութիւն»։ Այս Ճշգրտեսցի յայնժամ՝ զոր աստուածայինն ետես Յովհաննէս 'ի յայտնութեանն, և ասաց, եթէ չիք ցաւ, ոչ աշխատանք, ոչ լալիք, ոչ հեծութիւնք. «զի ընդեաց Աստուած զամենայն արտասուս յաչաց»։ Այս ոչ մի ինչ յարկածից և 'ի կարօտութեանց մահացու կենացս, ոչ ջեր, ոչ ցուրտ, ոչ քաղց, ոչ ծարաւ չարչարեսցէ զփառաւոր մարմինն. և թէպէտ և գիրգ և փափուկ ամենևին, 'ի վերայ այսր՝ և ամրապինդ և անտեղիտալի ամենայնի իբրև ադամանդ անդրժելի և անվանելի յամենայն հակառակաց և 'ի բռնութեանց։ Այս է անչարչարութիւնն, և այս է զոր ասէ. «Սերմանի ապականութեամբ և յառնէ առանց ապականութեան»։

digitised by A.R.A.R.@

Բ.ՍԼ դու ինձ ընդ անչարչարութեանն խնդա և 'ի լուսափայլութեան գեղն, յորժամ մարմին մեր կենդանի լուսոյն ճաճանչեալ փայլատակունս հատանիցէ շուրջանակի. սակայն պայծառս և յստակս՝ ոչինչ խափանարարս տեսութեան հայեցողացն 'ի նա, այլ զբնաւորականն ընծայեցուսցէ կերպարան և զգոյն և զգեղ զամենայն անդամոցն. բոլորն լուսաճաճանչ, բոլորն փայլակնացայտ, նոր և չքնաղ, ցոլասցի ընդ մեծ հեռաստան ըստ տերունական աւետեացն, եթէ «Ուրագեսցին իբրև զարեգակն»։ Բ.յս է զոր ասէ. «Աստուծոյ անարգութեամբ, և յառնէ փառաւք»։

Իսկ և երրորդ անգամ յաւել դու 'ի լուսափայլութիւնն և զարագաթեալ թռիչն, յորժամ մարմինք մեր ըստ իմաստնոյն նկարագրի՝ ընդ լուսահետ ուղին արագունք շարժեսցին, գնասցեն իբրև զփայլակն, ընդ ինքնել, ընդ ելանել, ընդ թևել յաջ և յահեակ. «Պայծառասցին, ասէ, և իբրև զկայծակն ընդ եղէգն ընթասցին»։ Կամ որպէս Նասայիաս օրինակեաց, իբրև զարծուիս արագունս նորափետուր զարդարեալս, այն ինչ ընդ բախել թևոցն և ընդ սաւառնել յառաջադէմ սլացեալ անհետասցին յաչաց, և օդահերձք ընդ ամբաւ հեռաստան գնասցեն և մի վաստակեսցին, ընթասցին և մի յոգնիցեն։ Բ.յս է զոր ասէն, «Աստուծոյ տկարութեամբ և յառնէ զօրութեամբ»։

Իսկ և վերջին ձիր մարմնոց մերոց յարուցելոց սքանչելահրաշ է, յորժամ թանձրաբուն մարմինն այնչափ իմն հրաշալի անօսրութեամբ թափ անցանիցէ ընդ ամենայն, զի և ընչաւորն զյատկութիւն զգեցցի զհոգևորին, սակայն անկորուստ և զբնութիւն պահելով զնիւթոյն։ Բ.անզի զտի և անօսրի, և յամենայն խոչընդոտից զերծ թափ անցանէ ընդ կաղծրունսն. իբրև զտերունական յարուցելոյ մարմինն, որ վիմանն կնքելով արտաքս գայր 'ի գերեզմանէն, և դրօքն փակելովք 'ի վերնատունն մնանէր առ աշակերտսն։ Բ.ս այս է զոր ասէ վերջին. «Աստուծոյ մարմին ընչաւոր, և յառնէ մարմին հոգևոր»։

Բ.հա քանիսն իցեն եղբարք յանանցական 'ի փառս գերահրաշ հատուցմունք մարմնոց մերոց, որք աստէն 'ի սակաւատև կեանս առաքինութեամբ հոգւոյն 'ի մե-

digitised by A.R.A.R.@

ռելութիւն կրթեցան վասն Աստուծոյ. որպէս զի փոքր մի չարչարակիցք եղեալ մարմնոյն Քրիստոսի, ապա և փառացն նորա հաղորդք լինիցիմք։

Քանզի, "Եթէ տնկակիցք եղաք, ասաց Երանելի առաքեալն, տնկակիցք նմանութեան մահու նորա, այլ և յարութեան նորա լինիցիմք"։ Յեսանէք եղբարք. պայման աւասիկ անհրաժեշտ 'ի միջի կայ առ փառաւոր յարութիւնն. մի միայն մեռանել զմահ, այն որ հասարակաց է սահման մահացու բնութեանս, այլ մեռանել նմանողութեամբ մահուն Քրիստոսի։ Քանզի ասաց լոկ, "Զի եթէ տնկակիցք եղաք մահու նորա", այլ թէ "Տնկակից նմանութեան մահու նորա". այս է կերպարանակից լինելով պատկերի մահու նորա։ Զինչ իցէ նմանութիւն մահուն նորա։ Մահն Քրիստոսի ամենայն վշտաց և անձկութեանց և մեռելութեանց և ամենայն առաքինութեանց եկաց մեզ միանգամայն և պարարդիչ և օրինակ և առիթ, ըստ որում մահուշափ հնազանդութիւն նորա, անձառելի խոնարհութիւն, զերաշխարհիկ համբերութիւն, անզուգական հեզութիւն, անպատմելի սէրն, և որ այլ ևս։

Արդ եթէ օրինակին նմանողք եղիցուք 'ի մահկանացու կեանս մեր հպատակութեամբ կամաց, մեռելութեամբք մարմնոյ, ուրացութեամբ անձին, արհամարհութեամբ աշխարհի, յաղթանակութեամբ կրից. ապա և փառաւոր յարութեան նորա բաժանակիցք գտանիցիմք։ Այս է զոր ասաց տէրն, "Յարութիւն կենաց, որոց զբարիս գործեալ իցեն"։ Յեսցուք սակաւուք, զինչ իցէ և զոր ասէն, "Յարութիւն դատաստանաց"։

ՄԱՍՆ Բ.

Որչափ բերկրական իցէ արդարոցն յարութիւն կենաց, այնչափ և անհնարին թշուառութեամբ լի յարութիւն դատաստանաց չարագործացն։ Իսկ "յարութիւն դատաստանաց" ասէ. քանզի յառնեն և նոքա, ոչ զի փառաւորեսցին, այլ զի դատեսցին և դատապարտեսցին։

digitised by A.R.A.R.@

Օ իմաստ և զահագինս զայս խորագոյնս Աշգրտեաց նոյն առաքեալ, յորժամ ասաց. «Խորհուրդ մի ասեմ ձեզ. ամենեքեան յարիցուք, այլ ոչ ամենեքեան նորոգեսցուք...։ Խորհուրդ, ասէ, իբրու ասել է թէ գաղտնեաց խորհրդոյն Աստուծոյ քաջ միտ դիք։ Անշուշտ ամենայն մեռեալք յարիցեն, այլ ոչ ամենեքեան յարիցեն փառաւորք։ Ի տիեզերական յարութեանն՝ առցեն զբարիսն կեանք անմահ. առցէ զչարսն՝ մահն անմահ։

Զանիսն իցէ սոցա յայնժամ թաղութիւնն. քանի սրտառուչ ցաւն, խայտառակութիւնն յանդիման տիեզերական ատենին. քանի հեղձամղձուկ կատաղութիւնն, որով առցեն միւսանգամ թշուառականքն զթշուառացեալ մարմինս, լի ամենայն գարշութեամբ, լի ամենայն անարգութեամբ։ Զիւրիցս անգամ լաւ էր մեզ, անշուշտ ասասցեն նոքա, քիւրիցս լաւ էր մեզ չյառնելն երբէք։

Զրդ զի լուայք դուք զերանաւէտ զփառն մարմնոց արդարոց, զինչ այսուհետև պէտք իցեն երկայնաբանել զթշուառականացն մարմնոց. դուք ինքնին ըստ ներհակաբար համեմատութեան քառից ձրիցն փառաւորելոց՝ խնամասիրեսջիք և զսոցայն։

Զիայն շնորհեցէք ինձ 'ի վախճանի ըստ պատեհի յարութեան Ճառիս՝ հարցումն մի առնել և ձեզ, զոր անդ երբեմն սուրբ հայրն երանելին Լպիփանիոս առնէր հաւատացելոց իւրոյ ժամանակին։ Հարցումն պարզ, այլ լի ամենայն խնամութեամբ, լի տոհմականաք հոգւոյն, և ծնող և տածիչ ամենայն առաքինութեանց քրիստոնէի առն։ Հարցանէր. «Հաւատաս, եթէ հաւատաս։ Հաւատաս, ասէ, Աշմարտապէս զկրկնակի զայս և զտարօրինակ յարութիւն՝ զոր տերն ասաց. զյարութիւն կենաց և զյարութիւն դատաստանաց։ Եթէ հաւատաս, մի հաւատար դու և այլոց Աշմարտութեանց հաւատոյս. մի հաւատացես ուրեմն և ոչ միւմ 'ի նոցանէ. քանզի հին են և խարխս, ասէ, յորում հաստատեալ և կանգնեալ կայ շինուած հաւատոյս մերոյ, է յարութիւն մեռելոց»։ Եւ զիմաստ այս, ասասցես թերևս։ Զիա դիր ուրեմն աւագ ձայնին Պաւղոսի, որ միանգամայն վՃիռ անկարծելի է հատ. «Եթէ մեռեալք ոչ յառնեն, ասէ, ապա և Քրիստոս չէ յա-

digitised by A.R.A.R.@

բուցեալ։ — Զ ինչ հետևանքն իցէն, ասասցես միանգամ։ Զ ինչ բան ընդ յարուցեալ Քրիստոս, և ընդ անյարիր մեռեալն։ — Նման առ վայր մի, և տակաւ զբան իւր ցուցանիցէ Պաւղոս, և խնասցիս քաջ զոր ասաց Լպիփանիոս։ Լթէ Քրիստոս չիցէ, ասէ, յարուցեալ, բոլորն մեր այնուհետև ընդունայն է և ստութիւն. ընդունայն է մկրտութիւն մեր, ընդունայն և հաւատք, ընդունայն և եկեղեցի, և կրօնք ուղղափառաց. ընդունայն և ամենայն քարոզութիւն առաքելոցն, ընդունայն և ամենայն խստամբերութիւն մեր և ձգնութիւն, “Լս գտանիցիմք մեք, ասէ, սուտ վկայք Աստուծոյ. զի վկայեցաք եթէ Աստուած յարոյց զՔրիստոս, զոր ոչն արդեօք յարոյց, եթէ մեռեալք ոչ յառնեն”։

Արդ զինչ իցէ զօրութիւն բանին. “Աստուած չյարոյց զՔրիստոս, եթէ մեռեալք ոչ յառնեն”։ Խելամուտ լեր իմաստութեանն Պաւղոսի։ Ամենայնն, ասէ, յաստուածակոյս կողմանէն վասն մեր տնօրինեցաւ. ապա թէ ոչ, զինչ պէտք էին մարդանալոյն Աստուծոյ, չարչարելոյն, մեռանելոյն և յառնելոյն, եթէ փրկութիւն աշխարհի չէր հանդերձեալ յաջողել. փրկութիւն 'ի մեղաց, փրկութիւն 'ի մահուանէ։

Ապա ուրեմն՝ որպէս մարդեղութիւնն Աստուծոյ վասն մեր միայն, որպէս արիւնն Աստուծոյ վասն մեր, որպէս մահն վասն մեր, նոյնպէս և յարութիւնն վասն մեր միայն. և որպէս մահուամբն նորա փրկեցաք, նոյնպէս և յարութեամբն նորա կենդանացուք։ Լս քանզի ամենայն փրկագործ կրիցն Աստուծոյ պսակ և յաղթանակ էր յառնելն նորա և յարուցանելն զմեզ, որ վասն մեղացն՝ մահու դատապարտեցաք 'ի դրախտին, ապա ուրեմն որ յարութեանն չհաւատայ, անհաւատ է յամենայնէն։ Այս է աւադիկ զոր ասաց Լպիփան։

Լս զի այս այսպէս, և գիտեմ անշուշտ՝ զի ձշմարտապէս հաւատամք ամենեքին այնմ՝ որ այնչափ նշանագործութեամբք հաստատեցաւ, և այնչափ վարդապետութեամբք վկայեցաւ, և այնչափ սրբութեամբ արդարոցն պանծացաւ, և այնչափ նահատակացն աբեամբ կնքեցաւ, զի է ուրեմն, եղբարք, զի ոչ ըստ հաւատոցն վարեմք մեք կեանս, զի է զի քաղաքավա-

digitised by A.R.A.R.@

րութիւնս մեր զնմանութիւն առաւել քերէ զայնոցիկ՝ որ չհաւատանն և որ յուսով հանդերձելոցն ամրապնդեալք չեն. զի այնչափ ընկղմեալս եմք 'ի զգալիս յայսոսիկ և յանցաւորս, զոր և 'ի հարկէ թողուլ հասանէ մեզ 'ի մահուն։ Օ՜ի է զի չեմք մեք ընդ քրիստոնէականն վարուց՝ առաւել ինն պատրաստագոյնք 'ի յարութիւնն կենաց։

Եւ լուաք առաքելոյն, եթէ "Օ՜որ ինչ սերմանէ՝ զնոյն և հնձեսցէ"։ Ա՜հա որ 'ի սերմանցն օրինակէ եցոյց մեզ զյարութիւնն, նոյն զարձեալ նովաւ խրատէ զմեզ խմաստութեամբ։ Սերմն, ասէ, հանդերձելոյ մերոյ յարութեանն է մարմինս մեր այս՝ զոր այժմ զգեցեալ ունիմք, և զնոյն միւսանգամ առցուք մեք այնպիսի 'ի ժամանակի հնձոցն, որպիսի պատրաստեցաք մեք 'ի ժամանակի սերմանելոյն։

Ա՜յրդ եթէ սերմն զոր արկաք, են վայելք մարմնոյ, և հեշտութիւնք զգայարանաց, և դժպատեհ կրից հետեւումն, և մեղաց պղաբերութիւնք, աւա՜ղ սերմանն, առաւել ևս հնձոցն, զի առցուք միւսանգամ զզրգաբար մնեալ մարմին՝ ապականացու և դարշ և 'ի Հարակ պատրաստեալ անշէջ հրոյն. "Ո՜անզի որ սերմանէ, ասէ, 'ի մարմին, 'ի մարմնոյ անտի հնձեսցէ զապականութիւն"։ Ա՜պա եթէ սերմն զոր արկաք՝ են գործք հոգւոյն, յաղթանակութիւն կրից, մեռելութիւն մարմնոյ, ժողովեսցուք յայնժամ 'ի ժամանակի հնձոցն զշնչաւոր մարմինս 'ի մարմին հոգևոր, 'ի մարմին փառաւոր, 'ի մարմին անմահ. "Օ՜ի որ սերմանէ, ասէ, 'ի հոգին, 'ի հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յաւիտենից"։

Հա՜պա եղբարք, քաջալինդ լիցուք նուիրել աստէն Ա՜ստուծոյ զմահացու մարմինս մեր մեռելութեամբ ախտից, անդ զյաւիտենական կենդանութիւն առնուլ յանձինս որ սպասեալ մնայ մեզ։ Յուշ անմոռաց լիցին մեզ համբերողին Յովբայ քաջալերութեան ձայնք. "Օ՜ա մենայն աւուրս, ասէ, սպասեալ մնամ, մինչև եկեսցէ փոխոխութիւն իմ"։ Ո՜անզի կեանք իմ, ասէ, իբրև թռիչք են արագագոյն երիվարի. կամ իբրև շարժումն հողմավար տերևոյ։ Կեանք իմ, ասէ, իբրև վաստակաբեկ զինուորի. զի "Պատերազմէ կեանք մարդոյ 'ի

digitised by A.R.A.R.@

վերայ երկրի ,, ։ Սակայն զօրավիգն կայ ինձ միշտ 'ի մեծէ զօրավարէ , և 'ի զօրաւոր զինուց Համբերութեանն՝ զոր տայ ինձ Աստուած , որով նահատակեալ աստէն՝ յարեայց ես միւսանգամ 'ի հողոյ յանմահութեան կեանս ։

Քաջալերեսցուք հաւատով յարութեանն , և ցնծասցուք առաքելական աւետարանութեամբն , եթէ " Որպէս զգեցաք զպատկեր երկրաւորին , զգեցցուք և զպատկեր երկնաւորին ,, ։ Այս է՝ եթէ ցայս վայր , ասէ , կեցաք իբրև մարդ շնչաւոր քրիստոնեայքս , կեցցուք այսուհետև իբրև մարդ հոգեւոր ։ Անչարչարութեանն՝ որ յայնժամ, այժմ նմանող եղիցուք ամբարանդութեամբ հոգւոյն՝ անդրժելի 'ի ձախողակաց աշխարհիս և 'ի յաջողակացն ։ Լուսափայլութեանն՝ որ յայնժամ, այժմ նմանող եղիցուք լուսափայլ օրինակաւ քաղաքավարութեան մերոյ , զի " տեսցեն մարդիկ զգործս մեր բարիս , և փառաւորեսցեն զԱստուած ,, ։ Արդարեւ շարժմանն՝ որ յայնժամ, այժմ նմանող եղիցուք քաջագօտիք գոլով և եռանդունք 'ի գործս քրիստոնէական բարեպաշտութեան ։ Յաւ ապա ուրեմն՝ թափանցիկ անսխրութեանն՝ որ յայնժամ, այժմ նմանող եղիցուք ներանձնական մտածութեամբն , " Ամենելով , որպէս ասէ , 'ի խորութիւն սրտից մերոց Աստուծոյ խոնարհութեամբ , զի բարձր եղիցի Աստուած 'ի պարգևատուութեան իւրում ,, ։

Որպէս զի այսոքիւք աստէն առաքինացեալք 'ի հոգիս , անդանօր փառաւորեսցուք և 'ի մարմինս հնորհօք տեառն Յիսուսի՝ որ յարեաւ , և զմեզ՝ ըստ անսուտ խոստմանն՝ " յարուցցէ յաւուրն յետնում ,, ։

digitised by A.R.A.R.@

ԳՐԱԲԱՐ ԼՐԻ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆ

"Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք.
յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց" :

Իցէ՞ ոք ուրեք երբեք, որ 'ի միում ժամանակի 'ի ծայրն արհաւրաց, միանգամայն և 'ի ծայրն բերկրանաց հասեալ իցէ։ Մոռի ինձ ոչ բնաւ, բայց թէ յորժամ Աստուած ատեան եդեալ դատեսցի, զկէսս 'ի պատուհասել, և զկէսս 'ի վարձատրել։ Վասնզի ըստ անչափութեան դատողին ծայրալիր էն արհաւիրքն պատուհասին, ծայրալիր և բերկրութիւն պարգևին։ Այս է համաշխարհական դատաստանն։

Ո՞ տայր ինձ խուն մի յարհաւրաց անտի, քանզի զբերկրութիւնն յայլ նուագ հատուսցուք սիրելեացդ 'ի քարոզի Աբբայութեանն, ո՞ տայր ինձ խուն մի յարհաւրաց անտի դատաստանին կենդանագրել ձեզ այսօր բանիւ. այնչափ՝ որչափ երբեմն 'ի Ճարտարաց ոք նկարչաց գունագեղ ծրագրեալ 'ի մեռեալ պնակի զընդհանրական դատաստանն, այնչափ ինչ երևեցոյց 'ի նմա սքանչելի և ահաւոր՝ ըստ Ճշգրտութեան տեսլեանն, ըստ բազմադէմ տարազու երանգոյն, ըստ գունակ գունակ կրիցն, և ամենայն ծայրալիր սարսքն համաշխարհական ատենին, մինչև որ պշուցեալ հայեր 'ի նկար անդր յանհաւատից ոք ազգայից, այնչափ քստմնեցաւ, այնչափ զահի զգողանի հարկանէր անդէն, մինչև առ

digitised by A.R.A.R.@

'ի զերծ միանգամ գտանիլ յահագին սրտմտութենէ անտի դատողին Քրիստոսի, և անձնապուր 'ի սարսափելի հանդիսից ատենին այնորիկ, դարձաւ առ Աստուած սրտի մտօք, և ընդգրկեաց զհաւատս Քրիստոսի։

Ո՞տայր և ինձ յաջողել այսօր 'ի լեզուի, որչափ յաջողեաց յայնժամ Ճարտարն այն 'ի գրչի. և զմի ոք՝ եթէ կայցէ աստ յունկնդրաց իմոց ուծացեալ թերևս Աստուծոյ՝ դարձուցանել առ Աստուած առաջարկութեամբ քարոզիս։ Այս եթէ արհաւրօքն չյաջողեցայց, գոնեա 'ի զօրութենէ հաւատոցն, զոր հանապազ երգեմք հաւատով յեկեղեցիս. "Հաւատամք 'ի յարութիւն մեռելոց, հաւատամք 'ի դատաստանս յաւիտենից հոգւոց և մարմնոց։

Հաւատա՞յք քրիստոնեայք. գիտեմ զի հաւատայք։ Ա.յլ մի՞ հաւատասջիք իբրև հեռաձիգ ժամանակաւ զահեղ զայն ատեանն 'ի կատարածի աշխարհիս։ Մերձ կայ մեզ աւասիկ առաւել քան զոր չկարծեմքս։

Ինդ աստուածիմաստն Ոսկեբերանի գամ աւադիկ ազգ առնել ձեզ զօրն. չասեմ եթէ եկեսցէ, այլ թէ գայ և հասեալ իսկ է. "Ցցէ մեք, ասէր, զատեանն զայն զմտաւ ածցուք սիրելիք, և համարեսցուք եթէ մերձ աւասիկ զարդիս հասեալ և առ դուրս կայ, և զհամարն և զպատուհասն պահանջէ"։

Ա.յսօր աւադիկ, այսօր բացցի Յովսափատեան ձորն. այսօր դիցի ատեանն մեծ և ահեղ. այսօր հրաւէր առցեն 'ի կոչ դալ յերևան ազգք ազգք ժողովրդոց տիեզերաց։ Ա.ռիք եկայք յանդիման դատաւորին Աստուծոյ. լուսարուք զամբաստանսն. ածէք իւրաքանչիւր այսր զչքմեղութիւնսն. մնացէք վՃռոյ դատակնքոյն. "Ա.յժմիկ, այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ"։ Ա.հաւասիկ դատաւորն առ դուրս կայ։

Ա՞ռէք, և ինձ գլխովին թուի, եղբարք, ընդ աստուածարեալ հարցն զվերջինն լսել այժմ փող աւագափող. ձայնն այն յունկն իմ հնչէ ահեղ, սոսկալի. մարմին դողայ, ողջոյն և ոսկերք սասանին. "Ա.ռիք մեռեալք, եկայք 'ի դատաստան"։

Օ՜ինչ... Մինթէ իբրև քարոզ վերջին աւուրն ահեղի հանդիսացայց ես այսօր, եթէ իբրև պարտաւոր

digitised by A.R.A.R.@

զանձն իմ կոծեցից այսօր դառն հեծեծանօք։ Բ. Ես ահա եմ միայնակ. առ հատարակ տեսանեմ 'ի հեծութիւնս, 'ի կողկողանս զիմն խառնեալ խիղճ և ձեռն և զընդ-հանուր տիեզերաց։

Լաւ ապա որ իցէ դարմանն։ Յերից ինչ իրաց՝ իրրև յերրակի սայրասուր նետից խոցեալ եմ 'ի սիրտ. զնո-սին կորզեալ արձակեցից ես ընդդէմ՝ յարկութիւն և 'ի զգաստութիւն՝ եթէ երբեք իցեն աստանօր աներ-կիւղք 'ի Քրիստոսէ դատաւորէն և խոստացեալք 'ի սիրտս։

Լաւ արդ լուր ինձ ո՛վ մարդ։ Հատանիցէ քեզ նախ՝ ելանել արտաքս 'ի գերեզմանէդ և տեսանել զերեսս դատաւորին 'ի սրտմտութիւն բարկութեան։ Լսել երկրորդ՝ զձայն նորա ահեղ 'ի դատել։ Երրորդ ան-գամ՝ զփորձ առնուլ և զզօրութեան բազկի նորա 'ի դատապարտել։ Բ. յս ահաւադիկ իմ արհաւիրք ողջոյն և ձերն։ Ցացուք սկիզբն, զի օր վերջին ահա ծագէ աշխարհի։

ՄԱՍՆ Ա.

Լինէ խելամուտ կամիցիս լինել զօրութեան և փա-ռաց արքայիս, և սրտմտութեան բարկութեան նորա, հայեաց դու ինձ միանգամ՝ զինչ այն ահեղ պատրաս-տութիւնքն իցեն՝ զոր յառաջոյ արձակէ։ Բ՝ամբէ, բա-՛բէ. ձայնք ահա փողոց ահագնագոչք. ձայնք՝ որ զարթ-թուցանեն զմեռեալս անգամ։ ձայնք՝ որ զվէմս թաւա-լեցուցանեն, ձայնք՝ որ ահաբեկ զգերեզմանս բանան։ "Բ.րիք մեռեալք ,,։

Տեսանեմ ահա յամենայն կողմանց ցելեալ պատա-ռեալ զերկինս. ձայն, որ ասէ, "Բ.րիք մեռեալք ,,։ Լսեմ զգարգափումն զՀոնչալ 'ի ստորերկրեայս զդրան-դեաց և զզոնափակաց բանտից յաւիտենականաց։ Լաւաճեալք թռչին հոգիք սուրբք. 'ի դուրս գան խու-ժեն յանցաւորք։ Կէսք 'ի բարձանց, կէսք ամբառնան 'ի խորոց. կէսք ընթանան հրձուեալք 'ի խնդիր մարմ-նոց իւրեանց. կէսք զզուանօք դարձին 'ի նոցանէ. Բ.

digitised by A.R.A.R.@

ըկք մեռեալք... Լրկք 'ի ծովէ, արկք յանտառաց, արկք յանձաւաց, ուրանօր և կայք, արկք մեռեալք։

Օ՜ ինչ ահագնալուրս էր... զինչ էնդրէ 'ի մէնջ... ո՞վ է որ կոչէ... և ո՞ւր գնասցուք մեք...

"Լրկք մեռեալք. եկայք 'ի դատաստան,,։

Լշխար... Վերջինն այն ուրեմն եկեալ էհաս օրն. "Օրն բարկութեան օրն այն. մերձ է օր տեառն մեծն. ձայն աւուր տեառն խիստ և դառն. օր նեղութեան և վտանգի, օր թշուառութեան և ապականութեան, օր խաւարի և միգի, օր ամպոյ և մառախղոյ, օր փողոյ և աղաղակի,,։

Խաբէ. տիւ էր օրն եթէ գիշեր։ Լրթէ տիւ, ո՞ւր աներևութացեալ կայ արեգակն. եթէ գիշեր, ո՞ւր է լուսին, ո՞ւր են աստեղք. զո՞ն տակաւին երկինք, զո՞ տակաւին երկիր։

Լղբարք իմ... ազգակա՞նք իմ.. ո՞ւր էք... բարեկամք իմ...։ Ո՞վ ինձ ունկն մատուցանէ, ո՞վ ինձ պատասխանի առնէ...։ Չիք ոք որ լսիցէ, չիք որ հայիցի...։

Լռութիւն խորին ահաւոր առ հասարակ տիրացեալ...։ Վախճանեցան մարդկայինքս... երկինք խաւարեալ... Լրկիր հրդեհեալ... աշխարհ խռովեալ։ Հոլովեցաւ ժամանակն, անկաւ ընկղմեցաւ 'ի յաւիտենականութիւնն։

Հապա ուրեմն ո՞ ժողովուրդք, ո՞ ազգք և ազինք, հապա 'ի ձոր անդր, 'ի ձորն. "Զայնք հնչեցին 'ի ձորն դատաստանի. զի մերձ է օր տեառն 'ի ձորն դատաստանի,,։ Ո՜ ձոր, ահաբեկ ձոր... ծունկք բաբախեն, կթոտին սրունք, դողդոջեն ոտք. զիա՞րդ էր 'ի գնալ... և սակայն հարկ է գնալ։

Դու ձեռն աներևոյթ, որ զիսն մտրակես, թոյլ տուր վայրիկ մի, մինչ չև երթեալ իմ անդր, թոյլ տուր ինձ գտանել զոք առաջնորդ ինձ խնամակալու, փաստաբան, ջատագով ինչ զոք։ Ո՜հ... վճարեալ է... չիք ժամանակ...։

Վա՜հ, ո՞յք դոքա էրեն, որ տիգոք աչաց հայիցին ընդ իս... Ո՞անաչեմ ահա անշուշտ զձեզ... Ո՞անաչեմ զքեզ ո՞վ այրիդ վշտահար հիքացեալ։ Ո՞անաչեմ զքեզ ո՞վ վարձուորդ տառապեալ։ Ո՞ղե դուք լուռ լերուք, աղաչեմ, վայր մի։ Լուռ, ո՞վ այրիդ, զիրաւանցն յորոց

digitised by A.R.A.R.@

զքեզն զրկեցի . . . ։ Ուրեմ գործաւորդ վայրիկ մի զվարձուց զաւուրն՝ զոր 'ի քէն կարձեցի ։ Իսկ դու առ ինչ յերեսս ինձ հարկանես . . . Հիմ զայրացեալ է քո . . . ։

Իսկ, քանիք զիս մատնցոյց առնէն . ձայնք քանի՞ զանուն իմ կարդան ։ Ա՜հ, քրթմնջիւն է առ հասարակ 'ի ձորն, հծծիւն է առ հասարակ . . . ։

Եւ ապա 'ի կիրս արհաւրացն այնոցիկ և մոլեգնութեան՝ տագնապին յանցաւորք , ընդառաջեալք միմեանց ձանաչէն 'ի դիմաց , կէսք զգործակիցս չարեաց , կէսք զամբաստանսն , կէսք զպատճառսն չարեաց ։

Տեսանես դու զնոսա մերթ կապուտակեալս 'ի զայրուց կատաղութեանն , մերթ շիկնեալս յամօթոյն անարգութեան . այր զընկեր դատի , յանդիմանէ 'ի վերայ մեծեղեռն չարեաց . մի զմիով դիմեալք յարձակին , այր յընկեր ընդհարեալ բախէ . ցետ և մոլեգնիս խածատէ . " Իբրև փուշք , ասէր մարգարէն , իբրև փուշք զմիմեանսք փոթորկեալք " ։ Ո՛վ մայր , մայր անագորոյն . 'ի քէն ես խափանեցայ՝ որում տենչայի՝ զաստուածապաշտ կարդացն 'ի մենարանի ուրեք բուռն հարկանել . . . ։ Ա՜յ զոլոզ անիրաւ , դու ինձ խոչընդոտն 'ի յաձախել ինձ յեկեղեցիս Աստուծոյ . . . ։ Ա՜յ խորհրդականք նենգողք խորհրդակորոյսք , 'ի ձէնջ ես զառածեցայ , յանիրաւ փոխանակութիւնն յայնոսիկ , 'ի տոկոսիս դաշանցն այնոցիկ . այց աղագաւ արդ 'ի մօտոյ տեսցուք մեք զմիմեանս 'ի դժոխս . . . ։ Եւ նոքա այնպէս անդ 'ի ձորն . . . ։

Ա՜յլ ժամ է աւասիկ , զի շարժեսցին երկինք . . . . Հապա դուք զուարթունք երկնից , արիք ելէք յերեւան աղգաց , հրաման է 'ի մէնջ ենաւոր դատաւորէն . ազդեցութի արարէք , զի գայ և հասեալ է արքայն , դալարաս արարէք . զի գայ և հասեալ է տէր 'ի դատել զերկիր . . . ։

Եւ ահա ընդ դրունսն երկոտասան լայնատարսն բանի քաղաքն Աստուծոյ . 'ի դուրս գան երեւին կարգ կարգ 'ի հանդերձս լուսաւորս կարապետք հորդողք աստուածասաստ վրէժխնդրութեանն . " Լցեն հրեշտակք և մեկնեսցեն զչարս 'ի միջոյ արդարոց " ։ Ա՜յրաբերին սերոբէք , թռուցիկք արագունք յերկիր պատգամ բերել զանջրպետութեան 'ի մէջ աշխարհաժողով բազմութեանն . . . ։

digitised by A.R.A.R.@

Ղեն այլ խառնեալք շփոթեալք 'ի միասին չարք և բարիք. այր այր զիւրն զիտեալ զիտէ զաեղի. կամ ընդ աջն հետևեալ կամ ընդ ձախն, անդ կայ անշարժելի՝ ուր և եդաւ միանգամ. "Լոյսն հրեշտակք և մեկնեսցեն. մին առցի և միւսն թողցի,,:

Ինդանօր չիք զինուութիւն ոչ ազգի, ոչ լեզուի. չիք աչառել ոչ արեան ազնուականութեան, ոչ կապանաց բարեկամութեան: Հայրենակիցք են, այլ ելցեն հրեշտակք և մեկնեսցեն: Համատոհմք են, արեանառուք են, այլ մին առցի, և միւսն թողցի:

Ո՛վ թողումն դառնութեան... ո՛վ մեկնութիւն սրբոտառուչ... ո՛վ բաժանումն ցաւագին...:

Ո՛վ հայր. զիս ո՞ւմ թողուս լքանես...: Խարկութեանն Աստուծոյ: Ո՛վ եղբայր. ո՞ զիս արդ քեցէ 'ի քէն...: Եղբն: Ո՞ բարեկամք. բաժանիմք ուրեմն 'ի միմեանց...: Ի յաւիտեան: Լոյսդ. անմտացաք ուրեմն, ափշեցաք, յիմարեցաք: Ո՛յ նզովեալ բարեմարդութիւնք. այ զաչացու լուսաւորութիւնք... այ հնարագիտութիւնք հանճարազիրկք... այ քանքարք մտաց մոռոիք... "Եթ, մեք անմիտք զվարս զերկիւղածացն Աստուծոյ յիմարութիւն համարեաք, և զվախճան նոցա անարգութիւն. ահա զիարդ համարեցան ընդ որդիս Աստուծոյ, և ընդ սուրբս վիճակ դոցա,,:

Խաբէ, զինչ ապա երկիւղածդ այդ զմտաւ ածէր, յորժամ ընաւ իսկ ողջոյն հրաժարական տուեալ աշխարհի, թող, ասաց, բարբանջեսցեն աշխարհասէրք՝ որչափ և կամեսցին: Խաբէ, չէր ուրեմն տխրամած հիւթ մաղձոյն, զի այնպէս պարկեշտացեալն այն բամբիշ մեռնացեալ 'ի տան խնամ տանէր գերդաստանին: Խաբէ, ոչ գձձութիւն ուրեմն, ոչ նուաստութիւն ոգւոյն սատար եղև համբերութեան անարգութեան վշտմբեր առն այնմիկ աւագի. "Եթ, մեք անմիտք զվարս դոցա յիմարութիւն համարեաք,,:

Լաւ մինչ նոքա այնպէս հաշին մաշին յուսաբեկ 'ի հառաչ և 'ի թառաչ ցաւագին, անդուստ ամբարձեալք իբրև զամպս՝ թռուցեալք ընդ օդս 'ի վերայ գլխոց նոցա՝ երամ երամ անցանեն կան, աստ կուսանացն պարք, անդ մարտիրոսացն դասք. և կարգ կարգ ընտրելոց սրբոց սքանչելապէս զարդարեալ, իւրաքանչիւր զնչանագեստս

digitised by A.R.A.R.@

զանձամբ արկեալ զփառաց իւրեանց։ Այլ օր այն օր է, յորում երևեսցին նոքա, ոչք էին և ոչք ոմանք հա-մարեցան յաչս աշխարհի. «Յայնժամ կացցեն, ասէ, արդարք բազմաւ համարձակութեամբ հանդէպ նեղչաց իւրեանց»։ Ահանդի հասանէ նոցա յայնժամ ըստ տե-ղուն եան պատգամին՝ մերձ առընթեր կալ մեծի դա-տաւորին՝ իբրև դատողակիցս, իբրև ամբաստանս, իբրև կշտամբիչս։ Ո՛վ, քանի անաչառ դատաւորն, քանի դառն ամբաստանութիւնն, և քանի սաստիկ կշտամ-բանքն։

Դու Հերովդէս յակն յայնժամ արկանես զՄկրտիչդ զայդ Յովհաննէս, զորոյ զգլուխն աստուածա-շունչ իբրև 'ի պարգևի մասին ժառեցար տալ 'ի կաքաւ հերատուկ աղջկանն...։ Յակն արկանէ և դողայ։

Այլ դու զՊետրոս զայդ ականես Ալերոն, որոյ եր-կրպագելի ոտիցն սարիս արկեր և շղթայս...։ Վկա-նէ և զդողանի հարկանի։

Ո՞անաչէս և դու Անանատրուկ զՕնադէոն և զՍան-դուխտ, զորոց զպատուական արիւնն հեղեր...։ Ո՞ա-նաչէ և սարսափեալ կայ։ Ա՛յլ իմ բա՛բէ, զի՞ 'ի խնդիր եղեալ է օտարին գործոց...։ Այս ես ինքն յաւուր յայն-միկ որոմք զիմոք յանդիման կացից իմում պահպանո-ղական հրեշտակին, իմոց սրբոցն սիրելեաց և միջնոր-դաց. ո՛վ, մանաւանդ զիարդ իմոյն վերհատառ միակ բա-բեխոսի և յուսոյն ամենասուրբ աստուածածնին...։ Բա՛բէ, և Մարիամ յաւուր յայնմիկ հովացեալ 'ի գթոյն, չէ այլ Մարիամ բարեխօս. չիք այլ 'ի մայրենին անկանել 'ի գիրկ, սրտմտեալ է ինքնին Մարիամ, վրէժ-խնդրութիւն խնդրէ և Մարիամ։ Ո՞ւր յայնժամ բարբառն իմ՝ որ առ նա 'ի կեանս իմ զօրհնասաղ. «Ի քեզ, 'ի քեզ եմք ապաւինեալ Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ»։ Ո՞ւր իմ սրտառուչ երգն. «Ընծիցս լուծիչ և քաւիչ մեղաց սուրբ կոյս...։ Փութացիր յօգնութիւն սուրբ Աստուածածնին, փրկել զմեզ 'ի յաւիտենական հրոյն, աղաչեմք զքեզ»։ Այո՞ և յայն-ժամ բանալ զշրթունս իմ առ նա արտասուօք. վա՜հ, և ոչ արտասուք յուզեսցեն զմայրենի գութն...։

Այլուկ եմ ես. զիարդ հանդարտեցայց երեսացն Քրիստոսի դատաւորին, որ այսչափ ինչ 'ի պաշտօնէիցն

digitised by A.R.A.R.@

նորա զահի հարեալ եմ։ Ո՞հ, մի՛ եւս յառաջ, մի՛. մի՛ խաղասցուք անդրադոյն քան զժամն։ Ո՞ի, մի՛ եկեսցէ Աստուած...։ Աւա՜ղ նանրացեալ յուսոյն։ Ա՜ճա-ռեալ է ամենայն։

Ո՞հա ժամ, ահա նշան, ահա խաչ...։ Ո՛վ խաչ, որում յերևեալ քո կոծեսցին զառնապէս ամենայն ազգք երկրի...։ Ո՛վ խաչ...։ Ո՞հաւասիկ Աստուած...։

Փախերուք անարգեալք, զի՞ կայք...։ Փախիցէ, սաքրեսցի, որ միանգամ թշնամի՝ 'ի ձորոց ատի...։

Ո՞հաւասիկ Աստուած...։ Ո՛վ քանիցս իցէ ամպրոպն, քանի՞ մրրիկ, քանի՞ հրացան բարկութիւնն...։ Ո՞հաւասիկ նա. ո՛վ զի՞նչ իցէ տեսիլն։ Ծածկեցէք զիս լերինք, հոսեցէք բլուրք 'ի վերայ իմ։ "Յայնժամ սկսանիցին ասել լերանց, թէ անկերուք 'ի վերայ մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ"։

Ո՞հաւասիկ ժամն, եղբարք, որում նախատեսն իսկ էի, թէ ոչ հանդարտեցայց ես յակաստանի խմում...։ Հրաժեշտ՝ թէ ձեզ կամք իցեն՝ հրաժեշտ տուք ինձ տալ 'ի Ճառէս այժմ, յահաբեկ հանդիսէս։ Ի զնին տեսլեանն չժուժան չհանդարտեն ոչ երևակութիւն, ոչ խորհուրդ, ոչ զգայարանք իմաստից։ Ոչիք իմարիութիւն առաւել քան զԱ՛լաւումայն, որ զաչս փակէր 'ի հանդիպոյ աստուածային դիմանցն. "Ո՞ռաջի երեսաց, ասէ, բարկութեան սրտմտութեան նորա ո՞ հանդարտեսցէ"։ Կամ զՍաղաքիայն, "Ո՞ օր, ասէ, գալստեան նորա ո՞ կարասցէ զմտաւ ածել"։ Կամ զՅովբայն արդարոյ, որ անձկայր հողածածուկ թաքստեան 'ի բարկութենէն Աստուծոյ. "Լրանի՞ թէ 'ի դժոխս սպահիցիր զիս, և թաքուցանիցիր զիս մինչև անցանիցէ բարկութիւն քո, ժամանակիցիր ինձ ժամանակ՝ յորում առնիցիր ինձ յիշատակ"։

Ո՞յսչափ է ահագնութիւն տեսլեան դատաւորին, յորժամ եկեսցէ 'ի վանել զերկիր։ Ո՞անզի և չիք վայր թաքստեան և ոչ դաշտ փախստեան 'ի մեծվայելչութենէ փառաց երեսաց նորա։ Այս եթէ աստէն յաշխարհի թաղաւորք ահաւորք և բռունք սոսկալիք՝ ըստ Ճառի վկայաբանութեանցն սրբոց՝ է զի նշոյլ մի տեսեալ փայլատակեալ 'ի դէմս մարտիրոսին՝ զոր չարչարէին, այնչափ ինն զարհուրեալք թաքթաքուր փախ-

digitised by A.R.A.R.@

չէին յերեսաց նորա, զինչ ասա եթէ Աստուած ինք-նին փայլակնաձաձանչ բովանդակ լուսով մեծվայելչութեանն և 'ի բոց բարկութեանն երևեսցի 'ի դատել. ցուցանել՝ զո՞ անարգեցին, և առ ո՞ արձակեցին զբարբառ իւրեանց։

Շատ է զտեգ մի զաստուածային աչացն խաղացուցանել, և զծով խորհրդոցն փլուզանել իբրև սրտագէտ նոցա յամենայն 'ի կեանս նոցա, 'ի խորհուրդս, 'ի բանս, և 'ի գործս նոցա։ Հայեսցին նոքա շուրջ ընդ օդագ իբրու բոցակեզ 'ի բարկութենէն Աստուծոյ, և 'ի նոյն տեսլենէն զյաւիտենական պատկեր տպաւորեալ 'ի հոգիս նոցա զանշիջանելի հրոյն՝ յոր տանջեսցին։ Հայեսցին յաստուածային դէմն, և ծանիցեն եթէ անհնարին չար ուրեմն էին մեղքն, զոր ընդ խաղ գործէին, ոմանք այնպիսւոյն եղեալ մեծվայելչութեանն. "Հայեսցին 'ի նա, յոր խոցեցինն"։

ՄԱՍՆ Բ.

Լաւ արդ վայր մի խելամուտ լերուք, քրիստոնեայք. զի եթէ այսպիսի ոք յանդիմանի դատաւորն, յորժամ յերևան միայն գայ. զինչ ասես, զինչ լինիցի, յորժամ և բարբառ արձակեսցէ։ Զի եթէ լուռ և անբարբառ միայն փայլատակել հրացայտ աչացն և բոցադիմութիւնն սոսկալի ահիւ մեծաւ տագնապէ զձորն, զինչ եթէ և որոտընդոստ ձայնիւ ահագին ամպահարեսցէ՝ 'ի հիմանց սարսեալով զտիեզերս։

Լոր երբեմն զի արձանացեալ կայր ժողովուրդ Աստուծոյ 'ի ստորոտ լերին Սինայի՝ ընդունել զօրէնսն 'ի բերանոյն Աստուծոյ։ Այն ինչ նա զձայնն արձակեաց, խաւար և մութ, ծուխ, մէգ և մառախուղ, հուր, բոց ահագին պատէր զլեառն։ Զահի զդողանի հարեալ, և յափշութիւն հատեալ այնպէս 'ի զնին կային հրաշիցն. և ապա անդէն յական քթթել կայծակունք թօթափէին 'ի թանձրացեալ ծխոյն և 'ի միջոյ հրոյն. բարբառ որոտընդոստ ահագին 'ի միջոյ միգին, և ձայնք քաջահնչող փողոցն յառաջացեալք ահընկեցք, 'ի շտապ

digitised by A.R.A.R.@

տաղնապի աստ անդ փարատեալ զարհուրեալ փախչէին ժողովուրդք. այնպէս 'ի մեծ հեռաստան յոգիս ապաստան կացեալ հայէին 'ի սարս բորբոքելոյ լերին....։ "Ո՞ւր դուք անարի վատասիրտք, անդուստ 'ի սարէն էր յայնժամ ձայնեալ Մովսէսի, ուր փախուցեալ շտապիք... Ստուած բարբառի... դա այդ իցէ ձեր ունկընդրութիւնդ... Ստուած ձեր, փրկիչ ձեր բարբառի...։ Զարհուրեալ եմք, հաղիւ զբան զայս յօդեցին ժողովուրդք, զարհուրեալ եմք։ Եւ զի Ստուած բարբառի, վասն այնորիկ տաղնապիմք. զօրութիւն չիք ըսելոյ։ Դու մեր բարեխօս առ նա, "Մի խօսեսցի ընդ մեզ Ստուած, գուցէ մեռանիցիմք"։ Ել խորշիմք առնուլ զօրէնսն. քեզ յանձն եղիցին օրէնք, և դու կարդասցես մեզ. "Դու խօսեաց ընդ մեզ, և լուիցուք. մի խօսեսցի ընդ մեզ Ստուած, գուցէ մեռանիցիմք"։

Եւ արդ եթէ Ստուած 'ի խաղաղութեան, եթէ Ստուած օրէնսդիր և ոչ պատուհասադիր, այսչափ է ահընկեց, զինչ լինիցի Ստուած 'ի բարկութեան և Ստուած դատաւոր։ Եթէ տուչութիւն տանն բանէին այսպէս, որպիսի՞ ինչ իցէ դատաստան յանցաւորութեան տանաբանէին։ Եթէ առ որդիսն զայսօրինակ, զինչ առ ապստամբսն։ Յորժամ տիեզերք ամենայն 'ի լռութեան ափ 'ի բերանք, և նա միայնակ զաստուածասաստ զտիրական շրթունսն բացցէ, զինչ առաջին որոտասցի։

Զահի հարեալ եմ ես, եղբարք, 'ի ձայնէն. դողամ 'ի բարբառոյն. "Ես եմ"... յորմէ երբեմն պակուցեալ մեռանէին լսողք...։ Զիք յաւետարանի ահաւորագոյն ձայն քան զկրկին բառսն, ես եմ...։ Ո՞ ինձ ՀՐՇՂՐԻՏ թարգմանեսցէ զզօրութիւն բառիցն։ Ի՞բր միանգամ արձակեցաւ ձայնն, և գնացեալ սոսկապէս զգետնի զարկուցանէր. "Զ՝ո՞ խնդրէք.— զՅիսուս Նազովրացի։ Ի՞բրև ասաց, թէ ես եմ, յետս յետս չոքան և զարկան զգետնի"։

Ո՛՜աբէ, զինչ ազդեաց ականջացն, զինչ հարաւ աչացն, ո՞ր փայլատակունք հատան 'ի միտսն, զինչ շանթեաց 'ի սիրտն, և պակեաւ բնութիւնն և մեռանէր։

Եւ եմ...։ "Ո՞ ես եմն, գոչէր մեծն Աւգոստինոս,

digitised by A.R.A.R.@

զեռ եմն քաջիկ գիտասցուք մեք անդ 'ի ձորն, 'ի ձորն յուսապատեան. յորժամ սիրոյ և տերութիւնք, յորժամ իշխանութիւնք երկնից 'ի հիմանց սասանեսցին, և զօրութիւնք երկնից շարժեսցին ,, ։

Վասնզի այս փայլատակել ձայնին, ես եմ, անդէն առաջին տեսարան բացցէ առաջի մտացն, տեսարան զանահման էութեանն Աստուծոյ, ես եմ որ էն. յորում տիեզերականութիւն, արքայութիւն. յորում զօրութիւն, անչափութիւն. յորում մեծութիւն, անկախութիւն, միանգամայն յանդիման հարցեն զանձնաւորութիւն Քրիստոսի դատաւորին ։

Յորժամ միանգամայն և ամենայնն որ արտաքոյ և որ 'ի ներքս 'ի մեզ՝ ձայն տացէ յարձագանգ բարբառոյն տեառն իւրոյ ։ Լրկինք զկայ առեալ, և արեգակն շիջեալ, և արարածք զդողանի և մարդկան վիճակք առ հասարակ յակձիռս կացեալք, 'ի շրթանց անտի զյաւիտենականն իւրեանց առնուլ զսահման, ամբարձեն զբարբառ դատաւորին, և զօրութեան նորա կրկնեսցին արձագանգ ամենայն խորհուրդք, զուգաձայնեսցին ամենայն իղձք, և 'ի հանդիպոյ առաջին իւրեանց պատճառին սարսեսցին ամենայն թեզք հոգւոց մինչև 'ի սոսափիւն ոսկերաց, որպէս ճշգրտեաց մարգարէն. "Նձն իմ, ասէ, ցնծացէք 'ի տէր. և ամենայն ոսկերք իմ ասասցեն, տէր ո՞նմանի քեզ ,, ։

Յայնժամ ծանիցի Աստուած 'ի մէջ մարդկան, և դաւանեսցին ընդ մարգարէին. "Հա դու տէր ծանեար զյետին իմ և զառաջին իմ. դու ստեղծեր զիս. աբանչելի եղև գիտութիւն քո յինէն ,, ։

Յայնժամ ստրջասցին ամբարիշտք, սարսեսցին և հեծեսցեն ընդ մարգարէին. "Դու ստացար զերիկամունս իմ. խաւարն 'ի քէն ոչ խաւարեսցի. ոչ թաքեաւ ոսկր իմ 'ի քէն՝ զոր արարեր 'ի ծածուկ. զանգործս իմ տեսին աչք քո. և 'ի գիրս քո ամենեքին գրեցան ,, ։

Յայնժամ յոգւոց հանցէ անասուածն. ահաւասիկ Աստուած աւասիկ Աստուած ։ Այս է Աստուած, յորմէ կափուցեալ զաչս՝ ընդդէմ վայրաբանէի փաստս. զսա ես ամենայն ուրեք նշմարէի. և արդ ակնարև յանդիման տեսանեմ՝ զոր ոչն կամէի. "Ահաւասիկ գիտացի, զի Աստուած իմ ես դու ,, ։

digitised by A.R.A.R.@

Յայնժամ հեծեծեսցէ և հեթանոսն տարբապաշտ։ Հաւատիկ Ճշմարիտն Աստուած, ոչ իսկ զնա ինձ սքանչելի միաբանութիւն տարերացդ աղդ առնէր, կարդ աստեղացդ, տեսչութիւն տիեզերաց. ոչ և լոյս բանին ինքնին թեւադրէր ինձ ազդարար զբարեբաւութիւն վարուցն, յորմէ տաղտկայի առ մնապաշտ կրօնիցս. "Լքանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց տէր. և լուսով երեսաց քոց պարտ էր մեզ տեսանել զլոյս։" Ոչ ահա և զնոցն լոյս ազդէր ինձ ակներև զօրհանապազ և քրիստոնէիցն սրբութեան կրօնք. "Պատմեցին ինձ անօրէնք զխորհուրդս, այլ ոչ որպէս զօրէնս քո։"

Յայնժամ սրտառուչ գոչեսցէ և Հրէայն։ Վա՛յ, աւա՛ղ, պարտ էր ինձ զիմն Ճշմարիտ Ճանաչել Մ՚ԵՍիայ. ոչ 'ի նմա քաջայայտ Ճշգրտեցան ահա մարգարէութիւնք, քաջածանօթ տառք Դանիէլի, Դաւթի, և Եսայեայ. ոչ ահա հաստատագոյն ունէի զբանն մարգարէական՝ որում եթէ անսայի, բարւոք առնէի։ Վասնզի "Վկայութիւնք քո, Աստուած, հաւատարիմք եղեն ինձ յոյժ։"

Յայնժամ և հերետիկոսացն ջոկք կականեսցեն, բա՛ւրք մեծամեծ սքանչելեացն՝ որ գործեցան ակներ և յեկեղեցիս ուղղափառաց 'ի մեր լուսաւորութիւն. զիարդ կամաւոր կուրացաք ափշեալքս, մոլորեցաք յուղիղ շաւղացն. չէք այսուհետև 'ի չքմեղս լինել յանյաղթելին տգիտութենէ. չէք այլ ինչ ասել, բայց Մեղաք, անիրաւեցաք, ապստամբեցաք. սրտագէտ դատաւոր արդար ես, ուղիղ են դատաստանք քո։

Իսկ դու ապա հաւատացեալդ յուղղափառութեան, անդուստ ձայն տացէ դատաւորն, դու անբարբառ կաս, դու որդի իմոյ մկրտութեան, դու ժառանգ իմոյ հաւատոյն, մնեալդ 'ի խորհուրդս սրբութեան, բաժանորդ իմոյ շնորհաց, արժանացեալդ իմոյ սիրոյն։ Բարբուցեալ ինչ լոյկ իմ երբեք զքեզ յարենէ իմմէ, և բուծեալ զքեզ 'ի մարմնոյ իմմէ։ Ո՞չ յիմ վարժոց առի զքեզ 'ի մանկութենէ. պատգամաւորեցի յաթոռոյ, խրատեցի 'ի բեմէ, քարոզեցի յամբիոնէ։ Իսկ դու յայնչափ Ճանապարհաց՝ որ տանի 'ի կեանս, զչարն ընտրեցեր 'ի նոցանէ։ Ա՛հ ուրեմն և կորուստ խնդրեցեր ինքնին անձին քում. ընդ մէջ ուրեմն կորեսցիս և

digitised by A.R.A.R.@

բաժին քո այսօր դիցի ընդ անհաւատս, ընդ անաստուածս, ընդ հերետիկոսս, զորոց ըմբերանիցիր զբանն և գործոցն հետևեցար. 'ի հայհոյել զանուն իմ, առանն կոխել զարիւն իմ, պղծել զտաճարս իմ, խաղ առնել զքահանայս իմ, զանցառու տանաբանիցին, ուխտանենդ իմոյ աւետարանին։

Զրոշմ և նշիք քրիստոնէութեանդ փրկեսցէ զքեզ ոչ. 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ չիք քեզ մասն. առատաձեռնութիւնք իմ, չարչարանք իմ, խաչ իմ, առաւելագունի քեզ պատճառք դատապարտութեան։ Յայսիսի ուրեմն փոխարէն առ 'ի քէն իմոցս հնարհաց. և 'ի վերայ ամենայնի այսորիկ չեղէ արժանի գէթ գթութեան ինչ քո յաղքատս իմ, պատառոց հացի, կաթի միոյ ջրոյ, այցելութեան 'ի հիւանդութեանս, զրզլեկի 'ի մերկութեանս, սփոփանաց 'ի բանտի, օթեւանի յօտարութեանս։ Յ. ասաչնորհ. "Օ ինչ ինչ առնել քեզ այդ, և ես ոչ արարի. մնացի զի բերցես ինձ խաղող, և բերեր փուշ.,։ Յոյց ինձ դուռ մի, ժամ մի զկենաց քոց, յորում ոչ հայրաբար խնամեցի զքեզ. 'ի տղայութեան քում, 'ի պատանութեան, յերիտասարդութեան, խրատս զոր լսելի քեզ չարարի 'ի զգաստութիւն սանձարձակութեան. յայր կատարեալ հասեալ քո, քանիցս խելամուտ զքեզ արարի մի խաբիլ 'ի ժամանակէիցս։ Ծերութեան պարարտութեան քանիցս անգամ 'ի փրկութիւն քեզ սաղրեցի զկենսաւէթ զերկիւղ մահուն և զարհաւիրս զիմոյ դատաստանին։

Օ ինչ օգտեցար, աղէ ասա։ Օ խորդ իբրու զիմ հաւատարիմն դասեցիցս ես զքեզ 'ի թիւ ընտրելոց իմոց։ Ով չետուր ինչ մի ինձ 'ի քոյոցդ, գէթ զիմն հատ տու ինձ. ուր է քո անաղտ պատմուճանդ, ուր սպիտակափառ հանդերձն՝ զոր զքեզ արկի 'ի մկրտութեան. ուր սրբարար հնարհքն, ուր խորհուրդքն սրբութեան, ուր վերքն իմ և արիւն և քիրան չարչարագրեաց։ Ցուր զհանդերձն։

Լուր ապառումդ, միթէ զդժուարին քան զկար անձինդ խնդրեցի 'ի քէն. կամ զանհնարն պատուիրեցի քեզ։ Ով երևս ընդ առաքելոց իմոց կոչեցի զքեզ տարադէմ պանդխտութեամբ չարչարել քեզ ընդ ամենայն

digitised by A.R.A.R.@

աշխարհ. կամ ընդ մարտիրոսացն տալ ինձ զբոլոր ա-
բիւնդ, կամ թէ քրձազգեաց ընդ մարգարէին ուտել
զմոխիր, կամ անձաւամուտ լինել իբրև զանապատա-
սունս։

Օրացան այլք, քաջացան 'ի գործ վարել զաւետա-
բանն, զիարդ դու վերջացար 'ի պահել զտամնաբա-
նեայն։ Այլք խնամով զիսրատ և զիսորհուրդ անգամ
պահեցին, դու դրժեցեր և պատուիրանաց։ Օր անի-
բաւութեամբ բարձեր՝ յետնեցար դու 'ի հատուցանել,
այլք զիւրեանցն ջամբեցին։ Անշնամեաց այլք բարիս
արարին, դու և ոչ ներեցեր նոցա։ Այլք անարատնաև
հայեցուածովք չափ պահեցին զանձինս, դու ոչ հատեր
'ի քէն զգայութակղեցուցիչդ, զմեղսաւիթ բարեկամու-
թիւնդ, զանբարի կենակցութիւնդ։

Աներևս բոյս բարուց ունիցիս սրտմտական. այլ ահա
և այն ոք յիմոց սրբոյն։ Աներևս և մեղկաղէտ զբը-
դաստուն. այլ ահա և այն ոք յիմոց ընտրելոյն։ Աներևս
քո յաշխարհի թարթափեալ և յաւագութիւնս զբա-
զեալ. այլ ահա և բազումք յիմոց ծառայից։ Սրբացան
նոքա յամենայն իսկ 'ի վիճակս կենաց. հաւատարիմք
ինձ յարքունիս, հաւատարիմք 'ի զինուորութեան, հա-
ւատարիմք յարուեստս, հաւատարիմք 'ի վաճառս. հա-
ւատարիմք 'ի մեծութեան, նոյն և յաղքատութեան,
'ի փորձութիւնս մեծամեծս, 'ի վշտարքերութեան, 'ի
հիւանդութիւնս դժուարինս։

Արիրս ոմանս ունիմ ես ասա աւադիկ աղնիւ ծա-
ռայս հաւատարիմն, 'ի քոյդ վիճակէ, 'ի քոյդ արենէ,
'ի քոց նախահարց. զքեզ միայն չկարացի ոչ քաղցրու-
թեամբ ամոքել, ոչ սաստկութեամբ ահացուցանել.
զաչացուդ կամաւոր առ իմ լուսաւորութիւնս, ունկնա-
խիս առ իմ ձայնս, ուխտանենդդ առ իմ հաւատս, ա-
պառումդ առ իմ սէրն. և զի՞ կաս ինձ դու տակաւին
ասա հանդէպ աչաց . . . ։

Արթայք լինէն որդիք կորստեան, զարդք յաւիտե-
նական հրոյն։ Ա՛լ կամեցայք զիս, ոչ առջիք զիս։ Արթ-
թայք լինէն . . . բաց զբերան քո դժոխք, լայնեա զքեզ
վիհ կորստական, առ զդոսա. "Արթայք լինէն անի-
ծեալք 'ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է
սատանայի և հրեշտակաց նորա „։ Ծառիս հարէք ըն-

digitised by A.R.A.R.@

տրեալք իմ, ամբարձէք ձայնս, բարբառեցէք զՀետ կոր-
ծանման իմոց թշնամեաց։ Զ. յս է վախճան մարդոյ, որ
յինէն ոչ երկեաւ։

ՄԱՄՆ Գ.

Տեսէք զդէմն, լուայք զձայն դատաւորին. փորձ
արդ առէք և զզօրութեան բազկի նորա։

Լու արդ միտ դիր, եթէ զոր օրինակ կրկին անգամ
դատապարտութիւն առնուն մեղաւորք, մի առանձին
դատակնքովն յետ մահուն և միւս ևս հրապարակագոյժ
'ի վերջին աւուրն, սապէս և կրկնակի տեսութեամբ
հայի յանցաւորն՝ յիւրն դատակնիք. մի զի դատապար-
տեցաւ 'ի ծայրագոյն չար, և միւս ևս զի մերժեցաւ 'ի
գերագոյն բարւոյն։

Յառաջնումն՝ առնու նա զՀարուածն ողջոյն յառան-
ձին դատակնքոյն. այլ յերկրորդումն, ով քանիցն նոր
իցէ հարուածն, քանիցն և ահագին, որ պահեալ կայ
նմա յայնմ աւուր ահեղին։

Զանգի յայնմ աւուր միայն տեսցէ նա յանդիման
զմեծութիւնն Աստուծոյ, տեսցէ և զփառս ընտրելոց
նորա. տեսցէ և հալեսցի 'ի սրտի իւրում, զի անբաժ
եկաց յաւիտեան 'ի գերագոյն բարւոյն, և մերժեալ
յերջանիկ դասէն։

Որովք ականջք և որովք կկոցեալ աչք լուիցեն և
տեսցեն նոքա նախ զՀրաւիրակ քաղցրութեան ձայնին
երկնաւոր դատաւորին առ ընտրեալսն. "Եկայք օրհ-
նեալք հօր իմոյ, ով հրաւէր երջանկաւէտ, եկայք
յաղթայութիւն ձեզ պատրաստեալ 'ի սկզբանէ աշ-
խարհի..։

Զ. յն ինչ բարբառեալ զերանութեան հրաւէրն, օդք
շուրջանակի փայլատակեսցեն, երկինք պարզեսցին, և
'ի դրանց արքայութեանն ձայնք ցնծութեան այնչափ,
և լոյս Ճառագայթեալ այնչափ, զի և մղձկեալքն ան-
հնարին յանցաւորք խլրտեսցին վայրիկ մի 'ի կայից ահե-
կակողմանն, և մինչդեռ իղձք իմն եղեալ շարժիլ մտիլ
յաջեայսն, ահագինս անդէն, վայ յաւիտենական

վՀՌոյն, ահագինս անդէն ձայն շանթեսցէ աստուա-
ծային. «Լրեալ յինէն անիծեալք, երթայք 'ի հուրն
յաւիտենական...»:

Ո՞վ պատմեսցէ մեզ զժամուն զայնորիկ, ո՞ բաւական
իցէ ՀՇգրտել, զիաՀրդ և քանՀՀոն յայն Հարուած ձայնին
աստուածայինն ծանրասցի բազուկ 'ի վերայ զլխոց նո-
ցա: Ո՞ր թափ բռնութեան վանեսցէ զկիրս զիրգնս նոցա
'ի վեր և 'ի վայր մրրկեալս 'ի հեղձամղձուկ նախան-
ձուէն, և կապեալս և վարեալս յամենակարող զօրու-
թենէն...:

ՈւնՀառելի տեսանեմ զաղէտն...: Դէպ մի սոսկալի
յաստուածեղէն գրոյն գտանեմ միայն 'ի յուշ տպաւո-
րել զահագին ժամն...:

Լապս յուշ միանգամ ածէք զօրն և զժամ մահակոր-
ծան զեգիպտական ազգին: Ունդ առ ապն Կարմիր ծո-
վուն ընդ Մովսէսի համարեսջիք զձեզ. անդ խոնեալ
բազմութիւն շուրջանակի զափամբն կան գունդք գունդք
ժողովրդեանն Ստուծոյ: Ունդուստ 'ի թիկանց ամ-
պրոպ զինելոց խմբից խմբից մրրկեալք թանձրախուռն
'ի փոշի բանակք Եգիպտոսի՝ հալածէն զփախստականն
զԻսրայէլ. հետիք ամբաւ և այրուձի՝ զինու զարդու
սպառազէնք և թեթևազէնք. կառք և ամենայն զօրու-
թիւն Եգիպտոսի և Փարաւոն ահեղ 'ի մէջ նոցա...:
Ի շտապ տագնապին այնորիկ այն ինչ ամբառնայ Մով-
սէս զահեղասաստ գաւազանն ընդդէմ ծովուն, պատա-
ռին յանդնդոց ջուրք, և ասպարէզ ցամաք լայնատարդ
փեռեկեալ յալուցաց խորոց ցուցանեն անցաւորաց:
Ոնայ Իսրայէլ զնորաքանչ Ճանապարհն, և առ ամե-
նայն հետս ոտին՝ զոր կոխէ, հրաշս տպաւորէ. «Ո՞տին,
ասէ, ընդ ցամաք 'ի մէջ ծովուն...»:

Օ՞ ինչ ապա յայնժամ գործեսցէ Եգիպտացին.
ժառեսցի պնդիլ այլ զհետ թշնամւոյն, որում երկինք
պաշտպանեն...: Ո՛վ զաչացու սպանդք աստուածային
բարկութեան, տիպք նախասահմանք ամբարշտացն նա-
ւաբեկութեան յաւուրն ահեղին...: Իբրու եթէ 'ի
հրաւէր և նոցուն բացեալ նորաքանչ Ճանապարհին,
այնպէս Ճեպին անդր մոլիքն խնդացեալք: Ո՞յն ինչ
հասեալք մեծ փախստական որոյն, վայր առնուն ըզ-
տէգս, ձգեն զսուսերս, լարեն զաղեղունս. և ահա

digitised by A.R.A.R.@

հրեշտակ փայլակնաձև՝ բոցատիպ առաջնորդ Իսրայելի հարեալ հերձեալ զամպեղէն զսիւնն, փայլակէ, որոտայ, և տեղատարափ զվիմանց բորբոքելոց և զնետից փայլատականց և զշանթից արձակէ, խռովէ, պակուցանէ միանգամայն զկառս և զկառավարս, զերիվարս և զհեծեալս, զգէնս և զզինուորեալս. "Հար զզօրն, և կապեաց զանիւս կառաց նոցա և վարէր զնոսա բռնութեամբ ,, ։

Իբրև մի զմիով ահիւ վերջոնանեալք խուճապին ընդ կրունկս յամին՝ ուստի մնին, անդր դառնայ ծով, պաղեալքն իբրև պարիսպ՝ ալիք զալեօք կուտակեալ՝ կարկատեալ անդնդասոյզ փակեն զնոսա։ Ի հանդիպոյ խուճապէ հուր, և 'ի թիկանց սատակէ ջուր։ "Ի արձան ջուրք և ծածկեցին զկառս և զհեծեալս, և զամենայն զօրութիւն Փարաւոնի, և ոչ մնաց 'ի նոցանէ և ոչ մի ,, ։

Ի ձայն ցնծութեան յայնժամ՝ քնարաց, թմբկաց, ապրեալն 'ի ցամաք Իսրայէլ՝ տիպ սքանչելի ընտրելոցն փրկութեան 'ի ծովէ աշխարհի, "Երգեսցուք, ասէր, զտէր զի փառաւք է փառաւորեալ. մեք ապրեցաք, 'ի վերայ նոցա անկցի ահ և դողումն, մինչև անցցէ ժողովուրդ քո, մինչև անցցէ ժողովուրդ քո այս զոր ստացար։ Տարեալ տնկեսցես զնոսա 'ի լեառն սրբութեան քո, 'ի պատրաստութիւն բնակութեան քո։ Իսկ թշնամիք քո տէր մեծութեամբ բազկի քո քարացին ,, ։

Թշնամիքն Աստուծոյ յայնժամ. թշնամիքն և այսօր՝ օտարացեալքն յԱստուծոյ, խստասրտեալք իբրև զՓարաւոն. քա՛ւ, հեռի արասցէ Աստուած, եթէ այնպիսիք այսօր յիմաց ունկնդրաց դատանիցին երբէք, սակայն եթէ իցեն երբէք, 'ի ձեզ ո՛ մեղաւորք խստասիրտք անզեղջք, 'ի ձեզ դէպքն ահագինք օրինակեցան Եգիպտոսին։

Եթէ պատմութիւն միայն իցէ այդ օտարին ազգի, և ոչ առաւել մնդգարէութիւն մերոյն։ Հա իբրև զհարստահարող եգիպտացին երբէք ոչ վայրենացաք և մեք ընդդէմ արդարոյն, ընդդէմ անպատսպար որերոյն. ոչ իբրև սուսերաձիգք կռուեցաք մեք երբէք, հարաք խոցեցաք զեղբարս մեր 'ի դոյս նոցա, 'ի համբաւն նոցա, յանձինս նոցա. ոչ և որբոյն ծծեցաւ երբէք արիւն, այրեաց, մշակաց, ծառայիցն. ոչ տըրտ-

digitised by A.R.A.R.@

մեցուցաք երբէք զաղքատն, զլացաք տնանկին, ունչս արարաք կարօտելոյն։ Մերևս լցաք և զչափն, և ահա վախճան առին մեղքն, և մերձեցաւ օրն, եհաս ժամն։

Զ.յդ որեարդ հարստահարեալ և մեք ընդ նոսա մտանեմք ահա 'ի ծով 'ի մէջ ձորոյն յովսափատեան։ Զնդ մեք տեսցուք ճանապարհ նորաբանչ բացեալ առաջի նոցա՝ անցանել յայնկոյս յափն յաւիտենական, տեսցուք զհրձնուալիս անցսն յերանաւէտ երկիրն։

Իսկ որք աստէն զեղիպտացւոցն նմանութիւն յանձին բերին՝ մեղաւորք անզեղջք, մղձկեալք յանձնառելին տեսիլ՝ անձկացին հետոցն, զկնի ընթանալ թաքթաքուր քայլիցն։ Զ.յլ աւաղ... շանթեսցէ նոցա անդէն ձայնն. "Հրթայք անիծեալք...."։

Հա ահա քերովբէք հրաման առեալ բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զնորաբանչ ճանապարհն զարքայութեանն, զնոսա թօթափեսցեն 'ի ծով եռացեալ հրով և ծծմբով. անդր վարեալք 'ի թափոյ դժոխական այսոցն, անդր վարեալք յաստուածային արդարութենէն, անդր վարեալք յոգեւոր խղճէն, իբրև կապար ընկղցին 'ի վիշն՝ ուր հուրն նոցա ոչ շիջանի։

Զ.ըդ աւասիկ երեկոյացաւ օր վերջին աշխարհի, և արձակեցաւ ատեան մեծի դատաստանին։

Զ.յլ մինչ չև արձակեալ, յուշ վայր մի ո՛ հաւատացեալք, յուշ...։ Ա՜յ ինձ, զինչ եղիցի վասն իմ... զինչ լինիցի և վասն մեր առ հասարակ։ Օ՜ որ մեք լուիցուք դատակնիք, զուրախալին եթէ զտրտմնականն։ Ո՞ր կողմն արդեօք ընկղցի զմեզ, աջեանն եթէ ահեկինն։ Կենակիցք ոյց եղիցուք մեք 'ի յաւիտեան, հրեշտակաւոն եթէ այսոցն. յարքայութիւն եթէ 'ի դժոխս...։

Հս զահի հարեալ եմ և դողամ. թուի թէ և դուք ընդ իս...։ Կամ ստգտանեն զմեզ միտք մեր, և ահա վճարեալ է վասն մեր, եթէ անապաշխարք մեռցուք։ Կամ ոչ ստգտանեն. սակայն և տակաւին զահի հարեալ եմ յառաքելական ձայնէն. "Օ՜ի թէպէտ և ոչ ինչ գիտեմ, ասէ, զանձին իմոյ. այլ ոչ եթէ այսու արդարանամ. զի որ քննէն զիս, տէր է...։

Ո՞ որք 'ի մէնջ գիտաց ճշգրտիւ զամենայն զանցելոց աւուրց կենաց իւրոց. ո՞ ճշգրտիւ յապահովի զմեզ կա-

digitised by A.R.A.R.@

ցուցանէ վասն ներկայ վիճակի կենաց մերոց. ո՞ աներ-
կեան մեզ խոստացի զհանապազորդութիւն մեր յա-
պայն 'ի բարին...։

Հապա ուրեմն սիրելիք, որոց միանգամ ստգտանեն
միտք, արիք քաջալերեցարուք այսօր, այժմէն բուռն
հարէք զմիակ խորսխէ փրկութեան հոգւոց ձերոց,
զապաշխարութենէն սատմ և զԱստուծոյ ողորմութե-
նէն, որ ամբաւն է որ ամենակարողն է։ Կորոգեցա-
ցուք, անդորրացուցէք միանգամ զխիղճ մտաց ձե-
րոց ապաշխարութեամբ, խոստովանութեամբ առ ոտս
քահանային յայտնեցէք առանձին յանդիման միոյն
զյանցանս, զի մի յանդիման աշխարհի 'ի տիեզերա-
կան ատենին առակեսցին այդոքիկ անսերելի պատու-
հասիս։ Ներկմիտ դիմեցէք աստէն 'ի ծոց ողորմու-
թեանն Աստուծոյ. ջանէք երբէք անտես, միայն պա-
զատեցէք. բախեցէք միշտ զդուռն ողորմութեան. "Որ
բախէ, բացցի նմա,,. անսուտ է վճիռն։

Իսկ զորս ոչ ստգտանեն միտք, ո՞ արդարք, և "դուք
ահիւ և դողութեամբ, որպէս առաքեալ խրատեաց,
զանձանց փրկութիւն գործեցէք,,։ Երբև սիրելի յոյժ
և փարելի ոգւոց ձերոց հաստատուն պահեցէք 'ի ձեզ
զենորհս բարեկամութեանն Աստուծոյ. զի եթէ միան-
գամ կորուսջիք մեզոք, ոչ գիտէք եթէ միւսանգամ
գտջիք զնա։ Այլ եթէ միշտ յահի և 'ի դողութեան
կացցէք ըստ առաքելական խրատուն, գիտացէք անշուշտ՝
եթէ կեցջիք միշտ 'ի հնորհս։ Այս թէ ոչ՝ "որ հան-
ուիցի զանձն հաստատուն կալ, ըստ նորուն առաքելոյ,
զգոյշ լիցի գուցէ անկանիցի,,։

Այսուհետև որոյ թէպէտ և տեսէք դուք զիս ստէպ յայլ
քարոզս հրաւիրակ մեղաւորացն՝ անկանել առ ոտս խա-
չին Քրիստոսի, այլ այսօր առ հասարակ արդարք և
մեղաւորք՝ որոց յանդիման ահագնութիւն նկարեցաւ
ատենի սրտագէտ դատաւորին, կանխեսցուք արտա-
սուօք, անկցուք առաջի, մաղթեսցուք։ Զի զմեզ տէր,
մի զմեզ զգինս պատուական արեան քո մի 'ի կորուստ
մատնեսցես. այլ դասաւորեալ պայծառացուսցես զմեզ
յաջակողմեան դասուն։ Տէրդ՝ տէր, բազումողորմ
Աստուած մեղայ ողորմեա. մեղայ տէր և անկանիմ ա-
ռաջի քո, մեղայ ողորմեա. մեղայ տէր խոստովանիմ զյան-

digitised by A.R.A.R.@

ցանս իմ, մեղայ՝ ողորմեա։ Խնեսցեն տէր աչք մեր զարտասուս ապաշխարութեան, և լուսացես զմեզ հնոր-հօր ողորմութեան քո։ Յիշեա՛ ով տէր զմեծութիւն աստուածային քոյ զթոյ առ մեղաւորս բազումն և մեծամեծս. ահաւասիկ և մեք ընդ նոսա առ ոտս քո. հայեաց 'ի մեզ և ողորմեաց մեզ։ Խախաժամանն հնոր-հիւդ ցաւեացի մեզ տէր 'ի բոլոր սրտէ, զի քեզ միայնոյ բարերարիդ Աստուծոյ մեղաք ապախտաւոր ծառայքս. ներեա, քաւեա և թող զմեղս մեր. և զողորմութեան քո զգուռն բաց մեզ տէր, և արժանի արա զմեզ լուսեղէն յարկայքոց ընդ սուրբս քո։ Նստիլ քո յատենի դատաւոր ահեղ խնայեա յարարածս քո, և 'ի պատրաստեալ քո օթեվանս սրբոց քոց ընկալ և զմեզ փրկիչ յորդեզրութիւն 'ի դպրութեան կենաց։

digitised by A.R.A.R.@

ԳՐԱՐՈՅ ԼԳ.

ՑԱՂԱԳՍ ՍԱԿԱՒՈՒԹԵԱՆ ԸՆՏՐԵԼՈՅ

" Բազումք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք " :

Ո՛վ ահագին վճռոյն ։ . . . Հարցեալ է ձեր բազում անգամ; նա զօրհանապազ եւ խնդրեք 'ի մէնջ, եթէ անշուշտ այնպէս նեղ և անձուկ իցէ Ճանապարհն երկնից. և թիւ փրկելոցն անշուշտ այնչափ սակաւ իցէ, որպէս ասէն։ Մովսէս եւ պատասխանի եւ բազում անգամ առեալ է ձեր յայտնագոյնս, սակայն վասն խընդրոյդ այդորիկ և ինքնին տէրն աւադիկ օրինակս կրկին 'ի ներքս եբեր մեզ յաւետարանին, առ 'ի տպաւորագոյն եւ գործել զՃշմարտութիւնն։

Ա՛ռաջին՝ թէպէտ և բազումք, ասէ, յաւուրս Դաւիթի քիւրաւորք Իսրայելի սովատանջ լկէին, սակայն կին մի այրի 'ի Սարեփթայ սիդոնացւոց միայն հաց եգիտ Դաւիթ։ Երկրորդ, 'ի բազմաթիւ բորոտաց անտի Իսրայելի՝ միայն, ասէ, Ելիսէ մարգարէն։

Իսկ արդ եթէ յայս բեմ եղեալ է իմ այսօր, քան 'ի հրահանգել՝ առաւել եւ 'ի զարհուրեցուցանել զձեզ, շատ լիցի ինձ ապա միայն զսահմանաւորսն 'ի գրոց սրբոց օրինակս յուշ ածել ձեզ վասն Ճշմարտութեան խնդրոյս՝ դարուց 'ի դարս համառօտելով։

Դիտէք իսկ քանի, քանի նուազունք՝ հոգիք ուրեմն միայն 'ի նոյեան տանին՝ յընդհանուր տիեզերս ապրե-

digitised by A.R.A.R.@

ցան 'ի համաշխարհական ջրհեղեղէն։ Դարձեալ և 'ի բիւրուց մարդկանէ՝ միայն Աբրահամ ընտրեցաւ լինել աւանդապահ ուխտին Աստուծոյ։ Դարձեալ և 'ի վեց հարիւրոց հազարաց անտի Յեբրայեցւոց՝ երկուք միայն Յեսու և Քաղեբ մտին յերկիրն աւետեաց։ Դարձեալ և 'ի բազմամբոխ յերկրին Հուսացւոց Յովբ միայն գտաւ արդար։ Յաւ առ հասարակ յերկրին Սոդոմացւոց Լոտ միայն. և յաշխարհաժողովին Դաթելնի՝ երեք մանկունքն։

Լեթէ ընդ ահագինս ընդ այսոսիկ կամիցիք յեռուլ և զսրբոց մարգարէիցն զառաստացութիւնսն, զսակաւաթիւս զընտրեալսն Աստուծոյ 'ի Ձիոս օրինակելով ողկուզաց այգեաց 'ի կութս. "Որպէս յորժամ գտանիցի, ասէ, Ձիւ մի 'ի մէջ ողկուզաց կթելոց, և ասիցեն մի ապականեր զդա, զի օրհնութիւն տեառն գոյ 'ի նմա"։ Կամ որպէս յորժամ հասկք աստ անդ ապրեալ իցեն 'ի մանգաղաց մշակացն, յորայից անտի և 'ի գադիշացն բազմութենէն։ Զս այսոսիկ յուշ ածեալ ձեզ և զզարհուրանս զերկուց Ճանապարհաց զաւետարանին, զնեղն և զանձուկն զոր սակաւք գտանիցեն ասէ, և զլայնն և զարձակն յոր բազումք գնասցեն։ Գիտեմ, եղբարք, զի այսօր լի ահիւ և դողութեամբ յարդարեցիս ես զձեզ վասն ձերոյ փրկութեան։

Զ.ՍԼ սակայն որ շահ, զինչ պտուղ հրահանգաց քաղեսցի վասն ձեր, եթէ պատրաստիցիմ ես արդ միայն ցուցանել ձեզ, եթէ սակաւք իցեն որ ապրելոցն իցեն։ Ա՛ՀՇ խակամտութեանն. եթէ այդպէս էր, անշուշտ ուրեմն զմեծ վտանգն ևեթ ցուցեալ էր իմ ձեզ այսօր, առանց ուսուցանելոյ ձեզ և ելս ինն և հնարս, զիարդ մարթասցուք ապրել 'ի մեծէ վտանգէն։

Օ ինչ շահ օգտի կայցէ՝ իբրու շողացուցանել ձեզ ընդ մարգարէին զսուր ցասմանն Աստուծոյ մերկացեալ 'ի պատենիցն և ամբարձեալ կշիռ 'ի վերայ գլխոց ձերոց, առանց ինչ յօգն ձեզ հասանելոյ՝ առ 'ի խոյս տալ 'ի մնտալուտ հարուածոյն. քանզի անշուշտ խառով անհնարին հարկանէի միայն ես յայնժամ 'ի խիզձ մտաց ձերոց, իսկ զմեղաւորս բնաւ իսկ հրահանգէի ոչ։...

Օ ինչ օգուտ յայտնանէ։

Ապա ուրեմն որ ինչ 'ի մեծաշահ պտուղ իցէ ան-

digitised by A.R.A.R.@

կընդրայդ խնց, պատկեր և առաջարկութիւն ահաւոր քարոզիս այսօր, 'ի մեզ յինքեանս՝ 'ի մեր իսկ ասեմ 'ի վարս և 'ի կեանս և 'ի գնայս հարցյէ խնդրեսցէ, զինչ պատճառք իցեն արդեօք այսչափ սակաւաթիւնուա զութեան փրկելոցն. և ապա ըստ նմանէն այր իւրաքանչիւր 'ի ձէնջ, սիրելիք, առ 'ի գտանել 'ի մէջ սակաւաթիւ այն հօտին՝ ուշիւ քննեսցէ զանձն, եթէ արդեօք հաստատիմն ինչ իցէ վստահութիւն իւր 'ի փրկութիւն անձին իւրոյ. կամ թէ արդեօք կեանս վարելով այնպիսի՝ որպիսի վարէ այսօր, ժառեսցի աներկեան յուսալ յարքայութիւնն։

Ոչն մեզ պէտք 'ի կարևոր ճշմարտութեանս արուեստաբանութեանց ինչ, և ոչ ձեզ 'ի նիւթ յայս մեծ յաւիտենական վիճակի՝ անօսր մտածութեանց։ Պարզապէս այր այր 'ի ձէնջ հարցցէ ցանձն իւր առաջին, ո՞ իցեմ ես։ Երկրորդ անգամ, զինչ գործեմ ես վասն երկնից։ Երրորդ անգամ, յիմ իմիք հաստատատեալ իցէ յաւիտենական յոյսն իմ։

ՄԱՍՆ Ա.

Ո՞ իցեմ ես... Աղդեօք յանմեղաց ոք յանարատից, եթէ յապաշխարողաց։... Վասնզի կրկին միայն ազգ մարդկան մտանեն 'ի սակաւաթիւ հօտ փրկելոցն. կամ ոք անարատ պահեցին զանմեղութիւնն՝ որ անդստին 'ի մկրտութենէն, կամ ոք կորուսեալ զայն՝ միւսանգամ 'ի ձեռն բերին ապաշխարութեամբ։ Ոչ բանի արքայութիւն երկնից, բայց կամ ամենևին մաքրոցն, կամ ապաշխարութեամբ մաքրեցելոցն։ Աղդ ո՞ իցես դու, կամ յոյց դասէն։... Աղդեօք յանտիսեղծ մաքրոցն, եթէ յապաշխարութեամբ մաքրելոցն։

Աւլ բա՛ւէ. ո՞ ոք այսօր աներկեանութեամբ փրկութեան ակն ունիցի, իբրև միշտ մաքուր կացեալ ամենևին։ Ո՞ ոք զգանձ աստուածային շնորհացն զոր ընկալաւ յաւազանէն՝ անդրժելի պահեաց մինչև ցվախճան։ Ո՞ ոք սուրբ զամենայն աւուրս կենաց իւրոց։ Ո՞ւր այն մեզ առաջին երջանիկ ժամանակ եկեղե-

digitised by A.R.A.R.@

ցոյ, յորում ոչ այլ ինչ էր եկեղեցի, բայց ժողով սրբոց. յորժամ 'ի հաւատացելոց սրբեցելոց վերածնութեամբ աւազանին դուն ուրեք էր գտանել միւսանգամ շաղախեալ զոք յանսրբութեան։ Ի՞նչ զ՚նանիայն զիտեմք և զՍափիրայ յեկեղեցւոյն Երուսաղեմի, և զսոռնկեանն զայն յեկեղեցւոյն Կորնթոսի։ Հաղիւ թէ ոք ապաշխարութեան կարօտանայր յայնժամ. հաղիւ թէ ոք յայնժամ անարժան երևէր հանապազօրեայ սեղանոյն սրբութեան և եղբարցն հաղորդութեան։

Ա՚յլ յետ այնորիկ 'ի նուազել հաւատոցն ըստ չափու տարածութեան իւրոյ, 'ի նուազել թուոյ արդարոց ըստ չափու բազմութեան հաւատացելոց, ո՛ քանիօն նուազեաց և բարեպաշտութիւն աւետարանին. և աշխարհ առ հասարակ գոգցես քրիստոնէացեալ յայնժամ՝ ընդ իւր ած եբեր յեկեղեցի զապականութիւն իւր և զմոլորանուն գիտութիւն։

Ա՚յա՛ղ բախտիս... Ա՞յ ահա և այն ինչ յարբունսն հասեալք՝ անդէն սկսանիմք անկարգանալ։ Ա՚ռաջին մեր հակամիտութիւնք՝ են կիրք. և մեր լուսոյ բանին բարգաւաճել յիւր վերայ հաստատեցաւ, բայց 'ի վերայ աւերակաց անմեղութեան։ Ի՞ցաւ, ասէ մարգարէն, լցաւ երկիր յապականութենէ բնակչացն առ հասարակ, դրժեցին օրինաց, փոխեցան կարգք, դրժեցին յաւիտենական ուխտին. անիրաւութիւն, զրպարտութիւն, ստութիւն, ուխտադրժութիւն, շնութիւն և այլ ևս անհնարինք 'ի չարեաց հեղեղեցին զերկիր։ "Ա՚մենեքին խոտորեցան 'ի միասին, և անպիտանացան. ոչ ոք է որ առնէ զբարի, և չէ ոք մինչև 'ի մի.,,։ Ի՞զբայր դարանի եղբօր, և հայր որոշի յորդւոյն, և փեսայն 'ի հարսնէ. անկեղծութիւն և անմեղութիւն՝ միայն պարզամտացն են առաքինութիւն. ատելութիւն՝ յաւերժացեալ, հաշտութիւն՝ կեղծաւորեալ. գտանիցե՞ս դու արդեօք թշնամի զոք, որ հայիցի 'ի թշնամին իբրև յեղբայր։

Կենակցութեան ակումբք զինչ լցեն. բայց զրուցատրութիւնք քրթմնջանաց և բամբասանաց։ Խաղուց սփոփութիւնք յինչ դարձան, բայց կամ՝ 'ի տուրևառիկ վաճառս, կամ՝ 'ի խարդախութիւնս և 'ի նենգութիւնս, կամ՝ 'ի բարկութեան մղեգնութիւնս։

digitised by A.R.A.R.@

Խակ և կոչունք և խրախուսունք ընկերութեան դարձան 'ի զեղխութիւնս և 'ի շռայլութիւն։ Ո՞ ոք երբէք, ո՞ ոք 'ի քարոզչաց վասն այսոցիկ ժտեսցի այսօր բան ասել և չափ կարգել։ Զդ ազգ վիճակաց կենաց 'ի մարդիկ կայցեն 'ի չափուն իւրեանց, մանաւանդ եթէ ոչ առաւել վատթարացան։

Զքաղաք միշտ անդոհք քրիստոնէն ընդդէմ Ճոխիցն. և մեծատունք՝ մոռացեալ են զպարզևատու արարիչն։ Զչագք և հարուստք՝ թուի թէ վասն անձանց իւրեանց միայն ծնան այնպէս. և մեծութիւնն համարեալ է առ նոսա ոչ այլ ինչ, բայց աղատութիւն կենաց և սանձարձակութիւն վարուց։

Ա՜հ, զի և աղն երկրի անհամացեալ է, և լոյսն աշխարհի աղօտացեալ. լուսաւորութիւն Յակոբայ շիջեալ, և քարինք սրբութեան սեղանոյն գետնաքարշք ձգին ընդ հրապարակս. "Լղև, ասէ, քահանայն իբրև զժողովուրդն,,։

Լու զի այս այսպէս, զիարդ դու զարմացիս այնուհետև, եթէ սակաւք իցեն որ ապրեալոցն իցեն։ Վասնիք ոմանք, ասա ինձ, քանիք սուրբք և անարատք կացին 'ի կեանս իւրեանց 'ի սրբութենէ անտի աւաղանին։ Վրեզ աւադիկ պատճառ մի սակաւութեան փրկեալոցն։ Զոգցես ուրեմն ամենեցուն առաջի փակեցաւ աւադիկ առաջին դուռն արքայութեան։ Զառաջին ասեմ, քանզի և դրունք կրկին են, ընդ որս են մուտք յարքայութիւն. մին՝ ոչ երբէք մեղուցելոցն յետ մկրտութեան, և միւս ևս՝ մեղուցելոցն և ապաշխարելոցն։

Վասնզի որպէս հարքն գեղեցիկս օրինակեցին, յետ նաւակոծութեանն 'ի մեղս՝ ապաշխարութիւն է միայն, ասեն, տախտակն բարեբախտութեան, որ 'ի նաւահանգիստն փրկութեան բաւական է առնուլ մուծանել զքեզ։ Լթէ երբէք նաւակոծեցար 'ի կեանս քո, որ ոք միանգամ և իցես, եթէ իշխան և սոսկական, մեծ և փոքրը, չիք չիք այլ ճանապարհ փրկութեան վասն քո. միայն ապաշխարութիւնն փրկեսցէ զքեզ։

Լու արդ թոյլ տուք ինձ հարցանել. ուրանօ՞ր իցեն 'ի մեղ ապաշխարողք. իբր գտցուք մեք զնոսա, և ժողով քանի՞ բազմութիւ իցէ դոցա յեկեղեցւոջ։

Վարանէր երբեմն ոմն 'ի սրբոցն, և ոչ գիտէր սահ-

digitised by A.R.A.R.@

մանել՝ ոյց արդեօք առաւելագոյն իցէ թիւն. արդեօք ամենեւին անյանցիցն, եթէ Ճշմարտապէս ապաշխարելոցն։ Վասնզի և զպատկեր Ճշմարիտ ապաշխարողի օրինակ զայս Ճշգրտեաց Ներբահայեացն այն և մեծիմաստն Տերտուղիանոս։ Զինչ իցէ, ասէ, ապաշխարողն։ Ապաշխարողն է՝ որում յամենայն 'ի կեանս իւր զիղջ է նմա՝ զի մոռացաւ նա երբեմն զ'ստուած իւր և կորոյս զնա. որ յանդիման աչաց ունի զօրհնանապաղ զմեղս իւր։ Ապաշխարողն է, ասէ, գործակից արդարութեանն աստուծոյ ընդդէմ անձինն. ապաշխարողն նաև յանմեղանչական ինչ վայելից զրկէ զանձն, իբրև զի էր երբեմն՝ զի 'ի մեղանչականն յօրացաւ. ապաշխարողն հայի 'ի մարմին իւր իբրև 'ի թշնամի, զոր վատել պարտ իցէ, իբրև յապստամբ՝ զոր պատժել պարտ իցէ. իբրև յամման գարշութեան՝ զոր միշտ մաքրել պարտ իցէ. իբրև 'ի պարտապան անհաւատարիմ, յորմէ ցյետին նաքարակիսն պահանջել պարտ իցէ. և իբրև 'ի յանցաւոր՝ մահու պարտական։ Ուստի և ըստ նմանէն ամենայն ինչ ապաշխարողի, եթէ կեանք, եթէ տուն, եթէ հանդերձ, եթէ վայելք, իբրև սգաւորաց իցէ, իբրև խոշարակեցից. և կեցցէ նա այնուհետև յաշխարհի առ 'ի կրել։ Եթէ երբէք կորուստ գոյից իցէ, եթէ հիւանդութիւն, եթէ վիշտ, եթէ նախատինք, եթէ և այլ ինչ 'ի կրից աղցաւոր կենացս, յանձն առցէ նա զամենայն իբրև պատուհաս մեղացն և քաւարան իւր յաստուածակոյս կողմանէն։ Հաւասիկ, սիրելիք, զինչ իցէ ապաշխարողն. . . . Արդ դառնամ 'ի հարցանել. ուրանօր իցեն 'ի մեզ ապաշխարողք այսպիսիք, ուր մեք գտանիցեմք զնոսա։

Ուռեալ իսկ է ձեր զառաջին դարուց եկեղեցւոյ զապաշխարողացն քրիստոնէից զպատմութիւն. նոքա առ դուրս սրբոց տաճարաց անկեալք 'ի խորգ և 'ի մոխիր, յամենայն վիճակէ կենաց, յամենայն հասակէ, 'ի պահս և յաղօթս և 'ի ձգունս ապաշխարէին բազմաժամանակեայք, որոշեալք 'ի հաղորդութենէ սրբոց իբրև նզովեալք։ Թէպէտ և մեղաւորք էին նոքա, այլ նուազ յանցաւորք քան զմեզ. և քան զգայթակղութիւնսն՝ ապաշխարութիւն նոցա առաւելագունի շինութեան էր տեսարան։ Զսոսա ուրանօր գտանիցեմք մեք այսօր։ Տեղի ետ այժմ այն ամենայն։

digitised by A.R.A.R.@

Յուշ ածեմ ես զպատմութիւն զառաջնոցն, ոչ եթէ յեպերել մինչ զհանձար նախանձաւոր զարդի հովուացս եկեղեցւոյ 'ի խոհական առաջնորդութեան իւրեանց՝ ըստ ժամանակացն յարմարեալ, այլ մանաւանդ յաւաղել զապականութիւն հօտին, յորմէ ստիպեցան նոքա պակաս առնել զհրապարակական զապաշխարութիւնն. իբրև փոփոխութիւն բարուց և դարուց՝ զհետ բերէ և զփոփոխութիւն հրահանգացն։

Այլ սակայն և ոչ երբեք բարձին հովիւք եկեղեցւոյ զառանձնական ապաշխարութիւնն, կամ թէ ասել՝ զհոգի ապաշխարութեան զանփոփոխելին՝ փոխեցին ինչ. կամ թէ զհոգի աւետարանին զանայլայլելին իւիք իրօք նուազեցուցին. քանզի հաստատուն ամենևին պահեցին նոքա զտիրականսն, այս է՝ զանհրաժեշտ պարտս զսիրոյն որ առ Աստուած, զանհրաժեշտ պարտս զատելութեան մեղացն գործեցելոց, զանհրաժեշտ պարտս զղջական սրտի և զհաստատուն առաջադրութեան՝ առ 'ի լրումն հատուցման արդարութեանն Աստուծոյ։

Այս արդ աղէ շուրջ միանգամ տեարք իմ յածեցուցէք զաչս, չասեմ եթէ դատաւորք կացջիք շուրջ եղելոց եղբարցն, այլ միանգամայն ընդ նոսա քննեցէք զանձինս, և զհասարակաց զկեանս՝ զոր վարէք. ոչ ահա առ հասարակ դաւանիմք ամենեքին եթէ չեմք անմեղք. այլ սակայն իցե՞մք արդեօք գոնեա ապաշխարողք։

Ա՛մբէ . . . Թերևս տիք հասունացեալ հասակին, թերևս զբաղանք ինչ անակնկալ, թերևս պաշտօն մի բազմահոգ, զոր զանձամբ առէք, սանձ եդին ձեզ տեղի տալ յանբարի գնացից անկատար հասակին, և յերիտասարդական ցանկութեանցն։ Թերևս և դառնութիւնք ինչ և անձկութիւնք՝ զոր աստուածեղէն բարութիւնն հաձեցաւ խառնել ընդ դժպատեհ կիրս ձեր։ Թերևս և ուխտադրժութիւնք ընկերին, և լեզուադարութիւնք բամբասողացն զձեզ. թերևս և անանկութիւն կամ հիւանդութիւն մարմնոյ։ Այս ամենայն ցրտացուցին թերևս զեռանդն սրտին և սանձ արկին ապերասան կրիցն. թերևս և նոքին իսկ մեղք կատարեալք, յափրացուցին զքեզ 'ի մեղացն, և ժամանակ և անհաստատութիւն սրտի խզեաց զշղթայսն։

digitised by A.R.A.R.@

Լաւ տակայն տաղտկացեալ քո յարարածոյ, յայսր յա-
մենայնի վերայ ոչ ինչ ուշիմացեալ և փոխեալ 'ի սրտի՝
դարձար առ արարիչն։ Լոհեմացար առաւել ըստ մարդ-
կան, պարկեշտացար առաւել ըստ աշխարհի, այր կիրթ
և բարեմարդիկ, այր զգոյշ 'ի պահպանութիւն հասարա-
կաց պարտուցն և որ առ տնին։ Դաջ է ամենայն. այլ
չես դու, հաւատա ինձ, չես դու տակաւին ապաշ-
խարող։

Դադարեցար յանկարգութեանցդ. այո. այլ ոչ քա-
ւեցեր զնոսա, այլ ոչ դարձար առ Աստուած. այլ չև ևս
զթափն զայն և զբախումն հոգւոյն զմեծն, որ զսիրտն
սարսէ և փոխէ, և որ ողջոյն զմարդն նորոգէ, չև ևս
զգացեր դու յանձին քում։ Փոխեցաւ արդեօք սիրտ
քո. նորոգեցաւ արդեօք ներքին մարդն։

Աւաղ մերոյ բախտին եղբարք. զի և վիճակ մի կե-
նաց այսչափ վտանգալից ոչ ինչ զարհուրեցուցանէ զմեզ։
Այն մեղք՝ որ երբէք ոչ մաքրեցան ճշմարիտ ապաշխա-
րութեամբ, ուստի և ոչ թողան երբէք առաջի Աստու-
ծոյ, այն մեղք կան աւաղիկ հանապազօր առաջի աչաց
մերոց այնպէս՝ որպէս եթէ չկացին երբէք կամ թէ
չկայցեն այլ ևս. և այնպէս մեռանիցիմք մեք այնուհե-
տև հանդարտիկ և անխիղճ յանապաշխարութեան վի-
ճակ այնչափ ահաւոր և վտանգաւոր, որչափ և անծա-
նօթ առ 'ի մէնջ։

Ոչ, չեն ինչ այսոքիկ մտացածինք առ յինէն գիւտք.
մի կարծիցէք եթէ և հոգևոր մերոյ նախանձուն եռան-
դան իցեն այսոքիկ թափ և զեղումն, այլ ճշմարիտք են
և էականք և անսուտք։

Ոչ այս վիճակ է, ասէ ասա, զոգցես առ հասարակ
մարդկանն, այն մարդկան որք և առաւել իմաստունք,
և առաւել կիրթք համարեալ են յաշխարհի։

Դաջին կեանք և վարք են միշտ սանձարձակք. այլ
հասակք և դառնութիւնք և վիճակ մի կենաց զբա-
ղեցուցանեն զսիրտ, յետս քարշեն յանկարգութեանց,
մերձեցուցանեն ևս առ խորհուրդս սրբութեան։ Սա-
կայն ուրանօր իցեն, որ 'ի սրտէ փոխեսցին, որ ճշմար-
տապէս դարձցին։ Ուրանօր իցեն որ զմեղս սրբեսցեն
արտասուօք և մեռելութեամբ. ուր գտանիցեմք մեք,
որք իբրև զմեղաւորս սկսեալ, և 'ի գլուխ հանիցեն ի-

digitised by A.R.A.R.@

բրև ապաշխարողք։ Ո՞ր իցէն ասացէք մեզ, ցուցէք մեզ։

Զի թող նշանեսցէն մեզ նոքա յիւրեանց իսկ 'ի վարս և 'ի կեանս՝ հետս իմն միայն զուշնաբերայ զապաշխարութեան...։ Օ՜ն արդեաք նշանեսցէն մեզ... թերևս զօրինաց և զպատուիրանաց եկեղեցւոյ զպահպանութիւնն...։

Այլ աւադիկ քանիք և քանիք յաշխարհական վիճակաց ազատ որեարք՝ մնախաբ առանձնաշնորհութեամբք իբրու ազատս յայնց պահպանութեանց հանարին զանձինս. որպէս եթէ այդ պահպանութիւնք պատուիրանաց՝ պարտք իցէն միայն աղքատ և ռամիկ որերոյն։

Թերևս զքրտնավաստակ հոգս զբահատին իւրեանց և զզբաղանսն, զանձկութիւնսն, զնեղութիւնսն 'ի յաջողել յաշխարհի ասա։ Թերևս զնդունս ծառայութեանն, զդառնութեանց տերանցն համբերել, զբռնութեանցն հպատակել, որովք և շահու անձին միանգամայն ակն ունիցին 'ի նոցանէ։

Այլ զինչ.....։ Կամեսցին թերևս դոքա 'ի համար առաքինութեանց զյանցանսն հաշուել։ Թերևս ակն ունիցին դոքա վարձս առ յԱստուծոյ դտանել զվաստակոց, զքրտանցն, զոր ոչ վասն նորա կրեցին։ Ա՜հ. փառասիրութիւն նոցա և հպարտութիւն և շահասիրութիւն, ոյց աղագաւ պարտ էր նոցա առաւել ապաշխարել, ապահանրկ արասցէ ինչ զնոսա յապաշխարութենէ։

Յո յապաշխարութեան են նոքա, ապաշխարողք են աշխարհի, այլ չեն ապաշխարողք Քրիստոսի։

Լու արդ զոր ապա այլ հետս զապաշխարութեան իւրեանց ցուցցեն մեզ դոքա։ Թերևս հիւանդութիւնքն իցեն, զոր առաքեսցէ նոցա Աստուած. թերևս թշնամիք՝ զոր ընդդէմ յարուսցէ նոցա, թերևս տարաբախտութիւնք և կորուստ գոյից և համբաւոյ, որոց թոյլ տացէ Աստուած։... Սակայն եթէ քան համբերութեամբ հպատակելով այսոցիկ իբրու 'ի նիւթ ապաշխարութեան, առաւել ևս 'ի նիւթ նորոգ յանցանաց դարձուսցեն նոքա զայնոսիկ անհամբերութեամբ իւրեանց, դառնութեամբ, հայհոյութեամբք և տրտնջանօք, զինչ յայնժամ...։ Ոչ ապաքէն նաև անմեղք ինքնին փորձին աստէն յայսոսիկ յառաւելագոյն վարձ պակաց. իսկ ապա

digitised by A.R.A.R.@

մեղաւորաց չիցեն ինչ պէտք առաւելագոյն և ձգանց ապաշխարութեան 'ի քաւութիւն. և յայսր ամենայնի վերայ վստահք եղիցին յանձինս փրկութեան հաստատել։

Բ. Յորմէ՛ք դիմաք ժտեսցիս դու 'ի դոյն, այր դու, որմէ՛ք իրաւամբք, ասա ինձ, վստահ եղիցիս 'ի փրկութիւն. արդեաք իրաւամբք անմեղութեան, եթէ իրաւամբք ապաշխարութեան . . . ։ Ա՞յ ահա կրկին լուար դու զգրբունս արքայութեան, կամ՝ զանմեղացն կամ՝ զապաշխարողաց։

Բ. սեղ չկարես եթէ անմեղ իցես առաջի Բ. ստուծոյ. զի անշուշտ ընդ գիտակցութեանդ քում՝ ոգորիս։ Բ. այս եթէ համարիցիս զանձն ապաշխարող, գիտես իսկ դու զի վայրապար համարիս, և անձամբ զանձն դատապարտ առնես։ Յեր վերայ ուրեմն հաստատեալ իցէ, ով մարդ, հիմն անդորր և աներկիւղ կենացդ այդոցիկ՝ զոր վարես. "Ա՞ր իցեն պարծանքդ. արդեաւն ,,։

Բ. ընդ փակեցաւ ուրեմն դուռն արքայութեան և առաջի բազմաց անապաշխարից, զոր տէրն ասաց եթէ "Բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք ,,։ Լ. ս զի ապա զարմացիս դու այսուհետև ընդ սակաւութիւն փրկելոցն, որոյ առաջին պատճառ եկաց սակաւութիւն անմեղացն, երկրորդ պատճառ սակաւութիւն ապաշխարողաց, և եթէ դու վայր մի զմտաւ ածցես ինձ այժմ և զայն՝ զոր կանխեցի ասացի, եթէ զինչ արդեաք գործես դու վասն երկնից, ծանիցես ապա և զերրորդ պատճառն զսակաւութեան փրկելոցն։

ՄԱՄՆ Բ.

Սակաւք փրկին . . . ։ Բանզի և սկզբունք և կանոնք կենաց զոր յընդհանուրս ընկալան մարդիկ, և որովք քաղաքավարին, են իսկ սկզբունք ընդդիմամարտք փրկութեան։

Կանոնք և սովորութիւնք զոր յանձին կալաւ աշխարհ և սիրեաց և պահեաց և պահէ, որ ինչ յաղագս կիրառութեան ընչիցն, որ ինչ յաղագս հետամուտ

digitised by A.R.A.R.@

պնդութեան փառաց և պատուոյ, որ ինչ յաղագս քրիստոնէական չափաւորութեան, յաղագս պարտուց պաշտամանց իւրաքանչիւր, և որ ինչ յաղագս պահպանութեան պատուիրանաց, են կանոնք և սովորութիւնք հակառակք խնաստից աւետարանին, ուստի և առաջնորդեն 'ի կորուստ։ Օրն 'ի նոցանէն առցուք մեք մանրամասն ստանօր 'ի ձառել, քանզի ընդարձակատարը յոյժ է ասպարէզ քարոզիս։

Նոցցուք ապա սղագունիւք յաղագս սովորութեանցն որովք վարի աշխարհ։ Սեն եթէ սովորութիւն է ընկալեալ յաշխարհի զի այր տանուտէր իբրու տէր սեպհական հայրենատուր գոյիցն՝ իշխան է այնպէս ըստ կամի առատութեամբ վարել տնտեսել զամենայն, ուշ միայն եղեալ շքոյ անձին և պատուոյ գերդաստանին. թէպէտ և 'ի զեղխութիւն ևս հատանիցի բանն և 'ի շռայլութիւն. շատ է խորհրդակից իւր ունել զՀաճոյս անձինն և զփառաւորութիւն։ Սյս սովորութիւն է աշխարհի և կանոն։

Սյլ սակայն չգուցէ արդեօք 'ի միջի և չափաւորութիւն ինչ քրիստոնէական. չիցէ և այլ կանոն աշխարհային և սովորութիւն անդրժելի, եթէ չէ մարդ տէր բացարձակ և ինքնիշխան գոյիցն։ Մանաւանդ ուր այնչափ բիւրք 'ի տառապելոց և 'ի տնանկաց և յաղքատաց տանջին և տուայտին կարօտութեամբ։ Այս թէ այն ամենայն զոր ծախէ մարդ արտաքոյ քան զպէտսն և արտաքոյ վայելչութեան վիճակին, կարձելով զձեռնն 'ի կարօտելոց, անգթութիւն է և մարդատեցութիւն և գողութիւն զոր շորթէ 'ի կարօտելոց։

Սեն եթէ սովորութիւն է ընկալեալ յաշխարհի, գրգիռ սիրիռ ըստ ժամանակին և ըստ տիոցն։ Ասուտի և այն ոք որ տակաւին 'ի պատանեաց կարգի է և յերիտասարդաց, պարտի արձակ համարձակ ազատանալ այժմ յամենայն իսկ 'ի վայելս կենցաղոյս, 'ի բերկրանս, 'ի փափկութեան, 'ի զբօսանս, 'ի խաղս հանապազօրեայս։ Զէ իրաւացի երբէք արդելուլ հասակին այնմիկ զայն ինչ, զոր հասարակ պարտս անձանց համարին յընդհանուրս հանատիքնորա։ Յորժամ կատարելահասակ լինիցի, կամ 'ի ծերութիւն յեցեալ, թող յայնժամ 'ի չափու կացցէ . . . . Սյս կանոն է աշխարհի։

digitised by A.R.A.R.@

Այսեն եթէ սովորութիւն է ընկալեալ առ հասարակ, զի այն որ 'ի քաջազգեաց ծնունդ է, պարտի ամենայն իրաւք հետամուտ լինել պատուոյ և փառաց, ցանկալ շքոյ, ցանկալ համբաւատենչ լինել յաշխարհի։ Ուստի և պերճութիւն և փառախնդրութիւն՝ թէպէտ և 'ի կանոնաց աւետարանին դատապարտեալ, սակայն և ոչ ինչ անպատկանաւոր իցէ այնպիսւոյ անձինն և անուանն և զարմի նորա. նա սատար համբաւոյն և պարծանք բարգաւաճութեան իցէ նախազարմիցն նորա։ Այսոքիկ, և որ այլ ևս շատ սովորութիւնք և կանոնք և վարդապետութիւնք են աշխարհի։

Այլ արդ թոյլ ինձ արարէք և զայն հարցանել։ — Արաջ է եթէ սովորութիւնք են այդոքիկ ընկալեալք յաշխարհէ. այլ ո՞ զպահողն այդոցիկ յանդորրու և յապահովի կացուսցէ 'ի Ճանապարհին զոր գնան. կամ ո՞ր կանոն, ո՞ր հրահանգ երբեք արդարացուցէ զնոսա 'ի միտս իւրեանց։ Ո՞վ վաւերական գործեսցէ զհետևողութիւն կանոնացս, որ այնչափ անբաժք և օտար են 'ի քրիստոնէութենէ։ Ա՞ռերևս աւետարանն, թերևս վարդապետութիւն ինչ սրբոյ, թերևս օրէ՞նք ինչ եկեղեցւոյ...։ Արանզի և չիք ինչ այլ անհրաժեշտ հարկաւոր յանդորրութիւն հոգւոյ, բաց յերից աստի. կամ աւետարան, կամ վարդապետութիւն սրբոյ, կամ օրէնք եկեղեցւոյ։ Արդ ասասցեն մեզ, նոցայն ո՞ր իցէ խարիսխն անդորրութեան։

Պատասխանեն։ — Զհասարակ յընդհանուրս յաշխարհի օրինակ զայս քաղաքավարին. հասարակաց են կանոնք։ Ի մնանել մեր յաշխարհ, այսպէս գտաք մեք հաստատեալ զսովորութիւնսն։ Օրինակ զայս կեցին մերն նախնիք, և ժառանգութեամբ մեք զայսոսիկ ընկալաք 'ի նոցանէ։ Այսև որ առաւել խնամատունքն են յաշխարհի, օրինակ զայս գնան. և ժառեսցո՞ւք մեք միայն խնամատարոյն երևել քան զամենայն մարդ։ Զի արժան թէկն ածել զառանձին իշխանութեան։ Հասարակաց սովորութեան համաձայնեալ պարտ է։ — Հաւասիկ բան, աւասիկ պատասխանի, որ ընդդէմ ամենայն արհաւրաց հաւատոցն յանդորրու կացուցանէ զնոսա։ Չիք այլ կանոն, չիք այլ օրէնք, չիք այլ վարդապետութիւն. միայն օրինակ բազմութեանն երաշխաւոր և ջա-

digitised by A.R.A.R.@

տագով կայ, եղբարք, գնացից և վարուց մերոց, միայն օրէնք աշխարհի. և զիարդ ոչ լուար այր դու, եթէ "Օրէնք ժողովրդոց ընդունայն են", որպէս ասաց Աստուած մարգարէին։

Այլ զիարդ զայս մեք 'ի մոռացօնս դարձուցեալ, զմեր տաւ չածեմք եթէ և Յիսուս Քրիստոս աւանդեաց եթող աշխարհի կանոնս, զոր ոչ ժամանակ, ոչ դարք, ոչ բարք և ոչ սովորութիւնք չմարթին երբեք այլայլել երկինք անցցեն, ասէ, երկիր անցցէ, բարք և սովորութիւնք փոխեսցին փոփոխեսցին. այլ կանոնքն աստուածայինք նոյն կան և կացցեն յաւէժ անփոփոխք։

Օ մնաւ չածեմք, եթէ ըստ աւետարանին ոգւոյն և խնամտիցն՝ հասանել մեզ դատաստան առնուլ յանձինս, և ոչ ըստ տիրացեալ սովորութեանցն. ըստ օրինակաց սրբոցն, և ոչ ըստ կարծեաց մտաց մարդկան։ Օ մնաւ չածեմք, եթէ այդ սովորութիւնք սպրդեալք 'ի հաւատացեալս 'ի նուազութենէ հաւատոցն, զեղծմունք են, ոչ աղագաւ հեծել արժան էր. չեն օրինակք նախանձելիք։ Օ մնաւ չածեմք, եթէ 'ի սպրդել օտար սովորութեանցն, ոչ փոփոխին պարտք քրիստոնէութեանն. և թէ հասարակաց օրինակն որ գնոսա տիրացուցանէ զայն միայն յայտ առնէ եթէ դուն ուրեք է ուրեմն առաքինութիւնն, և ոչ եթէ անկարգութեան թոյլ առնէ։ Այլ բազմագունից զեղծումն զայն ցուցանէ, եթէ բարեպաշտութիւն և քրիստոնէական կեանք բուռն առնեն ուրեմն ապականեալ բնութեանս, և չունի իւր կուսակիցս բայց զսակաւս։

Այլ արդ դու յետ այսր ամենայնի ժտեսցիս ինձ ասել աներկեան, եթէ "Մի՛ չիք այլ գործեալ ինչ, բայց զոր բազմագոյնք գործեն"։ — Վաղջ է։ Այլ վասն այսորիկ իսկ դատապարտեսցես զանձն։ — Որ է, աղէ ասա, որ է Ճանապարհն 'ի գիրս, որ տանի 'ի կորուստ. ոչ ապաքէն բազմութիւնն։ — Ոչիք իմ, ասես, գործեալ այլ՝ բայց զոր այլք բազումք գործեն։

— Այլ ոչ նորին աղագաւ առ՝ Այսեան դարուն բազմութիւնն ջրասոյզ կորեաւ։ Այլ բազմութիւնն միշտ է դատապարտ։ Հա առ 'Աբրագոդոնոսորաւ՝ բազմութիւն կռամոլ երկրպագուացն։ Ո՞ Աղիայիւ բազմութիւն ծնրադրացն Բահաղու։ Ո՞ Ա՝ակաբայեցւովք

digitised by A.R.A.R.@

բազմութիւն ուխտանենդիցն Իսրայելի։ Զ. Յոդոմայեցւովք բազմութիւն ամբարշտացն և արուագիտաց։

Զիքքո գործեալ, բայց զոր աշխարհ ամենայն գործէ։ — Լաւ ոչ լաւար. " Մի կերպարանիք ըստ նմանութեան աշխարհիս այսորիկ չարի ... Ոչ լաւար, եթէ "Աշխարհ ամենայն 'ի չարի կայ ... ։ Լաւ արդ եթէ զաշխարհին գործես, ընդ աշխարհի ուրեմն դատեսցիս։ Ոչ լայն կոչեսցաբեր Ճանապարհն՝ բազմութեանն է. ուրեմն եթէ ըստ բազմացն ընթանաս, ընդ բազմաց և կորիցես։

Զ. յլ դու հայեաց ինձ վայր մի և 'ի նեղ փրկական Ճանապարհն սակաւուց. միթէ բազմութեան Ճանապարհին Յոդոմացւոց երբեք ուղեկից գտաւ Ղոտ. ոչ նա զիւր սուրբ հոգին հանապազ նոցա անօրէն գնացիւքն տանջէր։ Մի՞թէ ըստ կենաց իւրոց ժամանակի բազմութեան մարդկանն կերպարանեցա՞ Զ. Բրահամ։ Կամ թէ Յովք զայլոց թագաւորաց իւրոյ ժամանակին բերի՞ զնմանութիւն։ Կամ թէ 'ի մէջ խժդժից աղքունի կանանոցն բազմութեան նմանօրինակ քաղաքավարեցա՞ Զ. սթեր։ Զանիք ոմանք այրիք 'ի Աստիղուա և Իսրայելի հանգուստատիպ գտան Յուդիթայ։ Զ. յորդիս բազմութեան գերուցն Իսրայելի քանիք առաքինացան իբրև զՅովբիթ։

Սակաւք սոքա 'ի բազմաց ընտրեալք և ընդ նեղն Ճանապարհ հետևեալք՝ փրկութեան հասին։ Զ. թէ ընդ սակաւուցն ընթացիս, ընդ սակաւուցն և փրկեսցիս։ Իսկ դու նախ զբազմութեանն կոխեալ Ճանապարհ, և ապա յելա Ճանապարհիդ՝ զսակաւուցն ինդրես։ Մի՞թէ բազմութիւնն միայն յանդորրու կացուցէ զմարդ, կամ թէ բազմութիւն մեղաւորաց 'ի չքմեղս հանցէ զմեղն։ Մի՞թէ այնչափ բիւրուց բազմութեան կորստեանն ամենայն ինչ ածիցէ ամենակալն։ Զ. ինչ իցեն առ նմա ամենայն մարդիկ. " Իբրև ոչ ինչ էն, ասէ, և իբրև յոչինչ համարեցան ... ։ Զ. ա՛ակն և ոչ մի ածէ բազմութեան յանցաւորացն, ուշ միայն ունի յանցանացն։ Զ. հասարակ հուր տեղայ հնգից քաղաքացն, զի յանցաւորք էն։ Զ. հասարակ 'ի ջուր սուզէ բանակօքն զՓարաւոն, զի յանցաւոր է։ Զ. հասարակ մահ արձակէ տրանջողացն յանապատին, զի յանցաւորք էն։

Ա՛՛՛բէ. Միթէ և թագաւորք երկրի երբեք ակն ա-

digitised by A.R.A.R.@

ծիցէն բիւրաւորաց բազմութեան ապստամբելոյն. իսկ առ Աստուծոյ՝ որպէս ասաց Յովք "Իբրև փոշի են ամբարիշտք, զոր տարաւ մրրիկ. և թօթափէ զնոսա յերկրէ իբրև փոշի 'ի հանդերձից,, ։ Այլ արդ եթէ սակաւք փրկին, քանզի բազումք են՝ որ ըստ յանցաւոր սկզբանց աշխարհի քաղաքավարին, սակաւք դարձեալ փրկին, քանզի և բազումք են որ կամ անգիտանան կամ անտես առնեն զսկզբամբք որ հարկաւորք են 'ի փրկութիւն, և յորս միայն հաստատեալ է յաւիտենական յոյսն։ Այլ ահա քեզ չորրորդ պատճառ սակաւութեան փրկելոյն։

ՄԱՄՆ Գ.

Որ իցեն սկզբունք և հրահանգք քրիստոնէական դաւանութեանս՝ յոր կոչեցաք մեք . . . ։ Ահա ուխտն և խոստումն հանդիսացեալ 'ի մէնջ անգոտին յաւազանէն մկրտութեան, եթէ "Հրաժարիմք յաշխարհէ, հրաժարիմք 'ի մարմնոյ, հրաժարիմք 'ի սատանայէ, և յամենայն գործոց նորա և 'ի խաբէութեանց նորա հրաժարելով հրաժարիմք,,։ Այս ուխտ մեր, և այս կոչումն և վիճակ քրիստոնէին. ահա պայմանք տիրագոյնք դաշին մերոյ կռեալ ընդ Աստուած և ընդ մեզ, յորում խոստացեալ են յաւիտենական կեանք։ Իսկ այս ճշմարտութիւնք, աղէ ասացէք, ոչ ահա ընտանիք թուին և յայտնիք, և միայն ռամիկ և տգէտ որերոյն յուշ ածելիք։ Այլ սակայն խաբկանք են։

Զիք ճշմարտութիւն առաւել փրկաւէտ, և չիք միանգամայն առաւել անգիտացեալ։ Ուստի և առ որս 'ի վերոյ անցեալ են քան զկարգ ռամկին և խմաստնագոյնք համարին, առ նոսա մնանաւանդ յուշ ածելի է բանն, եթէ "Ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ, և ոչ ոք յիմաստնոց աշխարհիս այսորիկ ծանեաւ,,։ Նայեա. են նոքա արդարև իմաստնագոյն որդիք աշխարհիս՝ զգօնացեալք յիրս և 'ի պիտառնութիւնս կենցաղականս։ Իսկ ապա առաջին նշանախեցք քրիստոսեան բարոյականին՝ բազում անգամ քան առ պարզամիտ որեարն՝ առաւել ևս անծանօթք են առ նոսա։ Կաթին պէտք են նոցա և 'ի մէնջ հաստատուն խնդրեն կերակուր. կամին

digitised by A.R.A.R.@

զի զիմաստութեան լեզուն խօսեսցուք մեք առ նոսա ի բրու եթէ ընդ կատարեալս իցէ կենդանիոց քաղաքավարութիւն մեր։

Չարդ զինչ ասէք մեզ. 'ի մերում մկրտութեան առաջին ոչ հրաժարեցաք յաշխարհէ. ոչ այս խոստումն յայնժամ առ 'ի մէնջ եղև առ Աստուած յանդիման սեղանոյն սրբութեան. վկայ և աւանդապահ և երաշխաւոր է աւասիկ եկեղեցիս սուրբ։ Մեք ցայնժամ ոչ հաշուեցաք 'ի թիւ հաւատացելոց, և ոչ կնիք անջինջ փրկութեան տրսցաւ 'ի մեզ, բայց եթէ զօրութեամբ և 'ի շնորհս հաւատոյն զոր երդուաք Աստուծոյ, ոչ սիրել զաշխարհ, ոչ սիրել և զայն ամենայն զոր սիրէ աշխարհ։ Արդ եթէ յանկարծ յայնժամ առ աւազանին սրբութեան ասացեալ էր քո ով քրիստոնեայ զայն ինչ, զոր ասես այսօր եթէ. Ա՛յ ինչ այնպէս յումպէտիցկամ՞ի վնասակարաց՝ որպէս ինձ թուի՝ իցէ աշխարհս այս որպիսի համբաւէն. կամ թէ համբուն՝ մարթէ և զնա սիրել անմեղութեամբ. և թէ քարոզիչք յամբիոնիցվասն այնորիկ այնչափ ընդ վայր հարկանեն զաշխարհ և այնչափ ուծացուցանեն 'ի նմանէ, զի ոչ կատարեալպէս ճանաչէն զնա. և թէ մեք որ ստիպեալս եմք կեալ յաշխարհի և թարթափիլ 'ի նորայն, կամիմք կեալ և ըստ աշխարհի. եթէ ասեմ՝ երբեք յայսպիսեաց ինչ բարբառեալ էր քո յայնժամ, բա՞ր անշուշտ եկեղեցի զլացեալ էր 'ի ծոց իւր ընդունել զքեզ. և յուսոյն քրիստոնէից բաժանակից չէր արարեալ զքեզ, և ոչ 'ի հաղորդութիւն սրբոյն՝ որ յաղթեցին աշխարհի՝ զրեալ էր զքեզ։ Ա՛յսու խորհուրդ զայս տայր քեզ յայնժամ զնալ կեալ և բնակել ընդ անհաւատս՝ որք ոչն ծանեան զՔրիստոս. ընդ անհաւատս՝ առ որս իշխան աշխարհիս այսորիկ յերկրպագութիւն առեալ է. և թոյլ էր քեզ այնուհետև սիրել զաշխարհ և զայն ամենայն՝ որ նորա սակի են։

Ա՛յլ քանզի դաւանեցար 'ի մկրտութեանդ հրաժարել յաշխարհէ, արհամարհել զերկիր և սիրել միայն զերկինս, այս է ահա քո ուխտն և խոստումն առ Աստուած, և պահպանութիւն ուխտին պարտի անդրժելի կալ մինչև ցվախճան լի երկիւղիւն Աստուծոյ։ Ա՛յ ահա այսորիկ աղագաւ յառաջին անդ ժամանակս որ-

digitised by A.R.A.R.@

պէս և լուեալ իսկ է ձեր, երախայացեալքն 'ի հաւա-
տոյ՝ որ միանգամ տակաւին անվստահքն էին յանձինս՝
ըստ աստուածազրոշմ ուխտին հրաժարել յաշխարհէ
և 'ի վայելից նորա, 'ի մարմնոյ, 'ի սատանայէ, և յա-
մենայն խաբէութեանց նորա, այնպիսիքն յերկարա-
ձգէին ցմահ զմկրտութիւն իւրեանց։ Ոչ ժոէին յուխտ
անխաբ դաշինն մտանել առաջի սեղանոյն սրբութեան
'ի խորհուրդ աստուածային վերածնութեանն։ Ընդ
ուրեմն երդմնակուռ եղեալ է մեր ընդ Աստուծոյ՝ ատել
զաշխարհս. այս է ոչ կերպարանիլ ըստ նմանութեանն նո-
րա։ Ուրեմն եթէ սիրես դու զաշխարհ և զկեան եր-
թաս հաճոյանս նորա և անցաւոր սովորութեանցն, ոչ
միայն որպէս աստուածայինն ասաց Յովհաննէս՝ թշնա-
մի առնես զանձնդ Աստուծոյ, այլ և երդմնահար ես և
ուխտադրուժ, այլ և յուրաստ լինիս զաւետարանն
Քրիստոսի, և առ ոսն հարկանես զիրկութիւնդ։

Ընդ տեսցուք, որ այն իսկ աշխարհն զոր ատել
պարտ է քեզ...։ Շատ է ինձ զայս պատասխանի միայն
տալ քեզ, եթէ քաջ՝ այն ինչ է աշխարհն, զոր դուն
սիրես։ Ամարթիս ժիտել, անխաբ է նշանն։ Ամ. այս աշ-
խարհ ընկերութիւն է մեղաւորաց, որոց իրձք և ցանկու-
թիւնք, երկիւղ և յոյս, հոգք և մտածութիւնք, ուրա-
խութիւնք և անձկութիւնք ողջոյն թարթափին կամ
զբարեօք կամ զչարեօք յաւիտենիս կենացս այսոցիկ։
Ամ. այս աշխարհ է ժողով մարդկանն, որ համարին զերկիր
իբրև իւրեանց հայրենիս, իսկ զհանդերձեալ զաշխարհ
իբրև վայր աքսորանաց. զաւետիս հաւատոյն զիսոս-
տացելոյն բարեաց՝ իբրև երազ, և զմահ իբրև դառ-
նագոյն քան զամենայն չարիս։

Ամ. այս աշխարհ է թագաւորութիւն ժամանակեայ,
յորում կամ ոչ Ճանաչի Քրիստոս, կամ յորում նուա-
զունք որ Ճանաչեն զնա, չափաւորեն զնա իբրև տէր.
նա ատեան ևս զնա 'ի սկզբունս հրահանգաց նորա, ար-
համարհեն զնա 'ի ծառայս նորա, հալածեն զնա 'ի
գործս նորա, անտես առնեն և թշնամանեն 'ի խոր-
հուրդս նորա և 'ի պաշտամանն նորա։ Այս այս աշխարհ,
Ճշգրտագոյն ևս ասել, այս աշխարհ է բազմութիւնն։

Ամենայն աշխարհ, զոր ատել պարտ է քեզ, և յոր-
մէ 'ի բաց հրաժարել, նաև մարտ եղեալ կռուել ընդ

digitised by A.R.A.R.@

նմա. զիաՀրդ. քոյին իսկ օրինակօք բարեաց, յորժամ ուրախ լինիցիս դու և խնդասցես, եթէ երբէք ընդ վայր հարցէ զքեզ, եթէ երբէք հալածեսցէ զքեզ. յորժամ անբարի սովորութեանց նորա ընդդէմ կբրեսցիս սրբութեան կրօնիւքդ. քանզի և համբուն՝ քաջ միտ դիր, այս աշխարհ է՝ որ նա քեզ պարտի 'ի խաչ հանել ըստ Պաւղոսի և դու նմա։

Լու արդ հայեաց դու միանգամ անաչառ 'ի քեզ, քրիստոնեայ, զիաՀրդ քո 'ի նեղքս զգածեալ ի՞նչ վասն աշխարհիս այսորիկ. արդեօք քաղցունք յոյժ ի՞նչն քեզ վայելք սորա և զբօսանք. արդեօք գայթակղութիւնք սորա յոգւոց հանել երբէք տայցե՞ն հաւատոցն քոց. մարթասցիս ասել եթէ "Հայէի յանագորոյնս և մաշէի, զի զվկայութիւնս քո ոչ պահեցին"։ "Լու տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց, և ոչք թողին զօրէնս քո"։ Արդեօք իբրև պանդուխտ աշխարհի հեծեսցե՞ս ինչ ընդ երկայնութիւն աղցաւոր կենացդ. կարասցե՞ս ասել "Վա՛յ ինձ, զի ընդ երկար եղև պանդխտութիւն իմ"։ Արդեօք սովորոյթք աշխարհի և սկզբունք սորա և յոյս և խնդութիւնք սորա ի՞նչն և քո զվսովին։ Վա՛յ, քանիս ոմանս տեսանեմք զօրհանասպաղ քրթմնջել, ընդ վայր հարկանել զաշխարհ զայս. բոլոր բառնան եթէ անիրաւ է աշխարհ, ապաշնորհ է աշխարհ, մնախաբ է, յեղյեղուկ է և 'ի մոլորութեան կայ...։ Թողք զայս բառնան, և դարձեալ սիրեն զնա և զհետ երթան նորա...։ Լու ապա դու յետ այսր ամենայնի զարմանացիս դարձեալ, եթէ բազումք են կոչեցեալք և սակաւք են փրկեալք...։ Արդ ո՞ւր մնաց հրաժարումն յաշխարհէ։

Սակ և երկրորդ անգամ ոչ հրաժարեցաք մեք 'ի մարմնոյ 'ի մկրտութեան մերում։ Օ՜ ինչ ի՞նչ հրաժարումն 'ի մարմնոյ...։ Ոչ կեալ ըստ զգայութեանց, 'ի բաց կալ 'ի դատարկութենէ, 'ի գրգռութենէ, չերթալ զհետ ապականագործ ցանկութեանց մարմնոյ. Ճնշել զնա, սանձել զնա, 'ի խաչ հանել զնա...։ Ո՞չ այս եղբարք, չ՞ի կատարելութեան ինչ ցոյք. չ՞ և հանդէս վարուց իբրու զաստուածազգեաց մենացելոցն յանապատի կամ իբրու զկրօնաւորացն վանականաց ուխտելոց։ Դաշն է սա և ուխտ առ Աստուած ամենայն մկրտելոցն, և առաջին 'ի

digitised by A.R.A.R.@

պարտս նոցա. Կինիք է անանձնատելի 'ի հաւատոյն քրիս-
տոնէի։ Այլ արդ ո՞ւր իցեն քրիստոնեայք 'ի մասին յայս-
միկ հաւատարիմ ուխտապահք քան զմեզ։

Դարձեալ և երրորդ անգամ՝ ուխտիւք հրաժարե-
ցաք մեք 'ի սատանայէ 'ի մկրտութեան մերում, և
գարշեցաք յամենայն գործոց նորա և յամենայն խա-
բէութեանց նորա։ Իսկ ո՞ր այն իցեն գործքն սատանայի։
Ա՛յ ահա այն ամենայն, որ զկերպարան քաղաքավարու-
թեան մերոյ ողջ 'ի դէմս բերէ... Մ՛բարտաւանու-
թիւն, պերճութիւնք աշխարհասէրք, խաղք անչափա-
ւորք, վայելք դժպատեհք, զբօսանք անդուլք հանա-
պազօրեայք՝ ցրտացուցիչք յաստուածայնոցն, լուրք և
տեսիլք ապականագործք՝ մեղկացուցիչք պնդութեան
սրտի. ստութիւն, որոյ հայրն է ինքն սատանայ. վեր-
ծանութիւնք վտանգաւոր վիպից և ժանտագործ թու-
լահաւատ մատենից, զորս ինքն հրապուրէ 'ի գրել.
հպարտութիւն, որոյ ինքն սատանայ եկաց նախատիպ
օրինակ և առաջնորդ. հեռ և նախանձ, որոց ինքն է-
կաց առաջին արուեստագէտ յաշխարհի։ Այս ամենայն
և որ այլ ևս գործք սատանայի։ Այլ արդ ո՞ւր իցեն
ուխտապահքն հրաժարեալք 'ի գործոց սատանայի և
'ի խաբէութեանց նորա. և ո՞ւր արդեօք գտանիցես, որ
յետս չկացին 'ի հրաժարմանէն զոր խոստացան։ Մ՛հա-
ւասիկ մեզ եղբարք պատկեր Ճշգրիտ ուխտի մկրտու-
թեան մերոյ յերրակի հրաժարմանն։ Զեն այսոքիկ,
չեն ոչ խորհուրդք ինչ և խրատք բարեկրօն վարուց, ոչ
կրթութիւնք ինչ կամ յորդորակք ջերմեռանդն բարե-
պաշտութեան. պարտք են, որպէս ասացի, պարտք ան-
հրաժեշտք։ Զասեմք եթէ նուազ կամ առաւել կա-
տարեալ է ոք 'ի զանց առնելն զսոքօք կամ 'ի պահելն,
այլ թէ կամ քրիստոնեայ է և կամ ոչ։

Այլ սակայն ո՞ է որ պահէ զայսոսիկ, կամ թէ բնաւ
իսկ Ճանաչէ Ճշգրիտ. կամ թէ ո՞ք քննեսցէ զխիղճն և
ուշ կալցի ամբաստան լինել զանձնէն յատենի խոստո-
վանութեան, եթէ անհաւատարիմ յայսոսիկ դաշինս
իւր գտաւ առ Մ՛ստուած։ Այ՛ բաղում անգամ զի խոր-
հին և տագնապին և քննեն զխիղճ մնայ նիւթ մի
գտանել 'ի խոստովանութիւն. և յետ այնչափ գաղջու-
թեանն 'ի հոգևորսն, և զինի այնչափ աշխարհասէր

digitised by A.R.A.R.@

կենացն զոր վարեցին, հաղիւ գտանեն ինչ մի, գոգցես և ոչ մի ինչ երևելի առ 'ի ասել քահանային։

Եվ, եթէ գիտացեալ էր մեր Ճշգրիտ, յինչ հրաւիրեալ զմեզ պատուական անունն քրիստոնէի զոր կրեմք, եթէ խելամուտ լեալ էր մեր սրբութեան վիճակին մերոց, զինչ նա պատուիրէ, զիարդ իմաստութեամբ թելադիր լինի աղատ զմեր սիրտն ունել յամենայն արարածոց, ատել զաշխարհ, ատել զանձն, ատել և զայն ամենայն որ ոչ է Աստուած, և թէ որ իցէ կեանք հաւատոցն, որպիսի մեր արթնութիւնն հանապազօրեայ, որչափ ինչ պահպանութիւն զգայարանացն, և համբուն զինչ իցէ կերպարանակից լինել Քրիստոսի 'ի խաչն մեր։ Եթէ խելամուտ լեալ էր մեր, եթէ պարտական գոլով մեր սիրել զԱստուած յամենայն սրտէ մերմէ, յամենայն մտաց, յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ մերմէ, և թէ մի միայն տենչ և ցանկութիւն՝ որ անպատկանաւոր իցէ սիրոյն այնմիկ՝ բնաւ իսկ աղտեղէ զմեզ. եթէ խելամուտ ասեմ՞ լեալ էր մեր այսոցիկ, այնուհետև իբրև հրէշ ինն գարշ և սոսկալի առաջի աչաց մեք ինքնին տեսանէաք զմեզ։

Այլ եթէ այս այսպէս, զիարդ ապա, ասասցես թերևս, զիարդ երբեք հնար իցէ ընդ այնչափ ամենասուրբ պարտուցն 'ի միասին կալ այնչափ վտանգաց աշխարհային կենաց մերոց յոր գերեալ եմք 'ի դէպս հանապազօրեայս. զիարդ արթնութիւն այնչափ անդուլ, և կեանք այնչափ զբաղեալ և բազմահոգ՝ յոր գրաւեալս եմք. զիարդ սէր Աստուծոյ այնչափ մաքուր և ծայրալիր, և սիրտ այնչափ նպատակեալ յիրեղն ինն բիւրս օտարս և յանցաւորս՝ յորս թակարդիմք յաշխարհի։ Ա՛մբէ, իսկ ո՞ կարասցէ, ո՞ կարասցէ ապրել։ Գիտիցեա՞ ո։ Սակաւքն այնոքիկ որ ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործիցեն. և որք կեցցեն յաշխարհի, և ոչ կեցցեն ըստ աշխարհի։ Իսկ ո՞ կարասցէ ապրել։ Զոքա որ իւրաքանչիւր զպարտս վիճակին ընուցուն ըստ Աստուծոյ կամացն. եթէ առաջնորդ իցէ՝ տքնաբար հսկողութեամբ 'ի վերայ հօտին. եթէ իշխան իցէ՝ անմիտակողմն արդարութեամբ յիշխեցեալն. եթէ ծնող իցէ՝ յերկիւղն Աստուծոյ դաստիարակելով զորդիսն։ Իսկ ո՞ կարասցէ ապրել. գիտիցե՞ ո։ Հաւատացեալն,

digitised by A.R.A.R.@

որ 'ի նուազեալ և 'ի զաղջացեալ ժամանակիս՝ նախանձ գեղեցիկ նմանողութեան բերցէ յանձն զառաջնոց քրիստոնէիցն. որ սուրբ իցէ ձեռօք, որպէս ասաց Պաւղոս, և անբիծ սրտիւ. որ արդարն է և ոչ երդուաւ նենգութեամբ ընկերի իւրում. որ ոչ գանձեաց անձին զանիրաւութեան զշահսն. որ գթածն է և ողորմած, և զգոյս իւր և զտուն՝ ապաւէն արար աղքատաց. որ մեծանձն է առաքինութեամբ և ընդ չարեաց բարիս թշնամանոյն հատուցանիցէ. որ համբերողն է և 'ի նեղութիւնս. որ քրիստոնեայն է 'ի նախատինս՝ 'ի հալածանս, և որ ապաշխարողն է և սգաւոր՝ նաև 'ի յաջողուածս աշխարհի։ Իսկ ո՞ կարասցէ ապրել։ Պուք ինքնին, եղբարք, եթէ գեղեցիկ օրինակաց այսոցիկ նախանձաւորք լինիջիք։ Յս արդ զինչ ասէք. քանիսն իցեն նախանձաւորք առ գոնդագունդ բազմութեամբ հեստելոյն։ Պ՝ապա ուրեմն որ ըստ օրինակի բազմութեանն վարեսցէ կեանս, 'ի հաւատոց է եթէ զբազմութեանն ընկալցի զատաստան, այս է մի՛ ակնկալցի փրկութեան հասանել. քանզի անսուտ է վճիռն. "Բազումք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք.,։ Ո՞ ոչ զարհուրեսցի 'ի ՀՀմարտութենէս...։ Յս սակայն բազումքդ այդոքիկ չզարհուրին. զարհուրին միայն սակաւքդ, որ արդէն իսկ ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեն։ Ասեն այսմ բազումք, այլ ոչ իբրու զանձնէն որ լսէ ասացեալ զՀՀմարտութիւնն. և իբրև զաւուրս կենացն ըստ օրինակի բազմացն անցուցանիցէ, հասեալ 'ի վախճան՝ մնախաբ այնպէս 'ի մահուն կարծեսցէ հեշտեաւ անցանել 'ի թիւ սակաւուցն...։ Պ՝աշ հիքութեան մտայն...։

Պ՝ալ արդ, եղբարք, 'ի միտս անաչառս եկեալ, աղէ՝ ո՞ որ 'ի մէնջ թողեալ արդ զաղգ մարդկան՝ որ յընդհանուր տիեզերս, ո՞ որ 'ի մէջ բազմահոյլ ժողովրդոյս այժմ 'ի տաճարիս յայսմիկ իբրու անարկեան վստահ յանձն իցէ, եթէ յանկարծ յերևան յեկեղեցւոջս ի՛ջեալ կայցէ Քրիստոս փառօք՝ վճիռ հատուցման 'ի ձեռին, կամ յաւիտենական փրկութեան և կամ յաւիտենական դատապարտութեան. ո՞ որ 'ի մէնջ, ասեմ՝, անարկեան վստահ իցէ յանձն յահագին անդ մեկնութեան օդեայցն աջէից և այծեայցն ահեկեայց, և

digitised by A.R.A.R.@

ոչ մանաւանդ տագնապեսցի եթէ արդեօք ընդ աջմէն դասիցի եթէ ընդ ձախմէ։ Բանդի և 'ի ժողովի բազմութեան մարդկան, յորմէ են յանցաւորք՝ որ ոչն կամին դառնալ և յորմէ գոյնք են՝ որ կամին, այլ յապաղեն զդարձն. և յորմէ գոյնք և ես են՝ որ դառնան առ 'ի վերստին անկանիլ. են և բազմութիւք ոմանք որ ոչն համարին պէտս ունել դարձի։ Դրդ բարձ դու զքառեակ ազգ զայս 'ի ժողովոյ բազմութեանն, և մեացորդք Իսրայելի՝ որպէս ասաց Պաւղոս ըստ ընտրութեան շնորհացն՝ յառաջ կացցեն. այլ բա՛ւական, քանի՞ն արդեօք...։ Ո՛վ որչափ մեծապէս է վտանգն...։ Այլ ես ինքն, եղբարք, առաւել քան զամենեսեան զահի հարեալ եմ և զողամ. զուցէ որ այլոցն քարոզեցի, ես ինքն անպիտան գտանիցիմ։

Բանդի թէպէտ և մի ոմն միայն իցէ 'ի ժողովոյ աստի մերմէ ընդ այծեացն դասելի, և ձայն մի 'ի Բրիստոսէ դատաւորէն հնչեսցէ 'ի տաճարի ասա մերում՝ ազգարար միայն, զմիոյն զայնմանէ, առանց նշանակելոյ զանունն, ո՞ ոք 'ի մէնջ ոչ զարհուրեսցի, զուցէ ինքն իցէ մի ոմն այն 'ի յաւիտենական դատապարտելոցն։ Ո՞ ոք 'ի մէնջ ոչ անդէն պարապեսցի զխիղճ մտացն յուզել քննել ճշգրտիւ, եթէ արդեօք ինքն իցէ պարտաւոր պատուհասին այնմիկ ահեղի։ Ո՞ ոք 'ի մէնջ՝ սիրտ անզարհուրելի ոչ զդողանի հարեալ հարցանիցէ ստիպաւ, որպէս երբեմն տագնապեալ առաքեալքն՝ զմի ոմն 'ի ձէնջն լուեալ. "Ի՞թէ ես, միթէ ես իցեմ տէր, միթէ ես իցեմ վարդապետ.,։ Այլ եթէ ահագին ձայնին ազգարարութեան, վայր մի ևս ժամանակ տուեալ լիցի ժողովոյս՝ 'ի հոգալ իւրաքանչիւր զանձնէն, բա՛ւական, ո՞ ոք 'ի մէնջ յայնժամ ոչ 'ի զգաստութիւն բերեալ յապահովի կացուսցէ զհոգին, ապրել 'ի մոտալուտ վտանգէն. ո՞ ոք ոչ անկցի առաջի տեառն արտասուօք հաշտ առնել զնա, և մաքրել զանձն խոնարհ խոստովանութեամբ և ճշմարիտ ապաշխարութեամբ։

Հաւասիկ հասեալ ժամանեցի ես որում ցանկայի՝ 'ի նպատակ միակ քարոզին խմոյ այսօր, սեղանաւորել սիրելեացդ զմեծաշահ պտուղն զոր կանխեցի ասացի։ Այս թէ ոչ՝ զինչ շահ իցէ ցուցանել միայն և գիտել միայն զբաղմանցն կոչումն, և զսակաւուցն ընտրել 'ի փրկութիւն։ Զինչ շահ իցէ, եթէ ոչ պտղաբերես-

digitised by A.R.A.R.@

ցուք 'ի գիտութենէն. այս է մի՝ որ յայտնանէն 'ի յու-սահատութիւն, մի՝ որ 'ի սրտաբեկութիւն, մի՝ որ 'ի զլխովին սանձարձակութիւն կրթեսցի, այլ մանաւանդ յարիութիւն աստուածապաշտութեան, այլ մանաւանդ 'ի զիղջ և 'ի զգաստութիւն վարուց և 'ի սէր առաքի-նութեանց աւետարանին։ Եվ՝ 'ի որ խաբեսցի, եթէ ո-րովհետև այնչափ հասարակաց և յընդհանուրս տա-ռածեալ է մոլորութիւնն, մարթ իցէ և ինքեան զնոյն առնել զոր առ հասարակ առնեն։ Իսկ՝ եթէ ամենայն լիցի եթէ 'ի փրկութիւն պէտք են որոշիլ 'ի բազմութենէն, զի "Բազումք են կոչեցեալք", և պէտք են երթալ յա-ռիլ ընդ սակաւուցն զի "Սակաւք են ընտրեալք"։ Հարկ է կեալ ընդ բազմութեան, չէ՞ պարտ նմանել բազմութեանն։ Յորժամ՝ 'ի գերութիւն վարեալ Բա-բելացիքն եղեալ գնային Յերուսաղեմէ 'ի Բաբելոն, ան-դանօր Երեմիաս մարգարէն յաստուածակոյս կողմանէն պատգամաւ խրատէր. Եղիք Իսրայելի, ասէր, հա-սեալ ձեր 'ի Բաբելոն՝ տեսանիցէք անդ զենակիցս եր-կրին 'ի վերայ ուսոց իւրեանց կուռս բարձեալ զոսկեղէնս և զարծաթեղէնս. և առ հասարակ զբազմութիւնն տե-սանիցէք երկրպագուս նոցա։ Բայց դուք զգոյշ լերուք աստուածապաշտութեան ձերում, մի՝ նմանեսջիք բազ-մութեանն, մի՝ նմանեսջիք ամբարշտութեանն։ Բայ-ցէք 'ի սրտի ձերում. տէր, քեզ միայնոյ է երկրպագու-թիւն, զքեզ միայն տէր պաշտեսցուք մեք։

Բ. Զդ զնոյն իմաստ աստուածային թոյլ տուք ինձ Ճանողակի առ ձեզ վերաբերել այսօր։ Դեռևս ձեր յեկեղեցւոյս եղբարքդ Յերուսաղեմ աստի սրբութեան 'ի վայրէս խաղաղութեան, գնալ արտաքս միջամուխ լի-նել յաշխարհ 'ի Բաբելոն խառնակութեան, տեսանի-ցէք անդ՝ որպէս միշտ՝ կուռս զոսկւոյ և զարծաթոյ, տեսանիցէք և զբազմութիւնն երկրպագուս նոցա. դտանիցէք դուք անդ՝ որպէս միշտ՝ դիմակս մնոտիա-կարկատ դրօշելոցն; զբազմագունակն ասեմ՝ մարդ-կային կրիցն, զփառացն, զամբարտաւանութեան, զթու-լահաւատութեանն, զընչաքաղցութեանն, զատելու-թեանն, զնախանձուն, զհեշտութեան, և որ այլ ևս. թերեմ՝ ստապատիրք աշխարհէ աստի երկրպագեալք և պաշտեալք։

digitised by A.R.A.R.@

Զոր եթէ զուք ընդ սակաւուցն կամիցիք դասիլ ընդ ընտրելոցն, ասացէք 'ի սրտի ձերում. քեզ միայնոյ Աստուած իմ վայելէ երկրպագութիւն, մեք զքեզ միայն պաշտեսցուք։ Զի որոց երկրպագէ անմիտ բազմութիւնն, չէն աստուածք, ձեռագործք են մարդկան, գիւտք ապականեալ բնութեանս. ընդ երկրպագեալսն կորիցեն երկրպագուքն։ Զայս ասասջիք եղբարք յաշխարհիս գերութեան Բաբելոնի, մինչև եղեալք 'ի գերութենէն՝ հասանիցէք յանդորրու 'ի հայրենիսն, և մտանիցէք ազատք 'ի վերինն Յրուսաղէմ։ Զհաւասիկ ցանկացեալ ուշ նպատակի քարոզիս։ Փախեցուք 'ի բազմութենէն, կեանս վարեցէք 'ի զատ 'ի բազմութենէն. անդուլ զայն զմտաւ ածէք եթէ բազմութիւնն 'ի կորուստ գնայ։ Մի՝ 'ի կապիք ընդ օրէնս աշխարհի և ընդ սովորութիւնսն, զոր միանգամ վաւերական չգործեսցեն օրէնքն Աստուծոյ։ Զի այսպէս զատեալք կամաւ ատէն 'ի յանցաւոր բազմութենէն, անդանօր ընդ սակաւուց ընտրելոցն դասեսջիք փառաք։

digitised by A.R.A.R.@

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

« Գնաց մարդ 'ի տուն իւր յաւիտենից » :

Ա՛Վ յաւիտենականութիւն, քան զամենայն խորհուրդ մտաց առաւել մեծ, քան զամենայն խելամտութիւն առաւել ազգոյ. բաւական 'ի նուաճել զոգի ապըստամբ, բաւական 'ի գերել զամենայն միտս հպարտացեալ 'ի վերայ գիտութեան Աստուծոյ։ Աստո՛ւծ տայր ինձ այսօր զխելամտութիւնս զայս զմեծն և զանվանելին՝ թափ և 'ի սիրտս իմոց ունկնդրացդ անցուցանել, և խորագոյնս սերտել։ Այս է, ոչ խելամտել միայն այլ և երկնչել, և ոչ երկնչել միայն այլ և գործել։ Ամենեքին կամիմք փրկութեան հասանել, սիրելիք. ամենեքին անձկով տարփանն հառաչեմք առ երանաւէտն յաւիտենականութիւն. ամենեքին գիտեմք եթէ և ճանապարհն այն է, առաքինաբար վարել զանցաւոր ցաւամանակս զոր շնորհեաց մեզ Աստուած 'ի սատար անժամանակն երանութեան։ Այս սակայն նուազունք են որ իմաստութեամբ վարեսցեն զդէպ ժամանակն։ Այ՛ն վասն. քանզի չեն անքթիթ ակնկառոյցք 'ի յաւիտենականութիւնն։ Ա՛ տայր մեզ զխելամտութիւն զայն ունել զերջանիկ ապաշխարողին՝ որ ոչ միայն խորագոյնս խորհէր զայն, այլ և զտիւ և զգիշեր յարատեւ հատանէր 'ի վերայ յանցաւոր և անցաւոր կենացն.

digitised by A.R.A.R.@

"Ա աստակեցայ ես 'ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի ,, ։ Այս ընդհանր այսչափ ով երանելի։ Բանզի "Յիշեցի, ասէ, զաւուրսն զառաջինս և զամենն յաւիտենից զմտաւ ածի ,, ։ Բաբէ, քանիսն էր զգածումն 'ի յիշատակ ամացն յաւիտենից։

Բայց դուք՝ ըստ երջանկին յառաջ քան զյիշատակն յաւիտենից, վայր մի ինձ յուշ ածէք այսօր, և զոր բազում անգամ լուեալ է ձեր և գիտէք զբազմերամ սրբոցն, որ յեգիպտական ամայութիւնսն, որ 'ի Լաւրայիդն, և որ 'ի Պաղեստինեանսն, յորոց կէաք իբրև ապաշխարողք, և կէաք իբրև երկնաքաղաքացիք ուրացեալք զաշխարհ և 'ի խաչ ելեալք աշխարհի, "Շ ըղեցան լեշկամաշկօք և մրթմոլք այծենեօք, կաւոտեալք, նեղեալք, չարչարեալք. յանապատի մոլորեալք, 'ի լերինս, 'ի յայրս և 'ի փապարս երկրի ,, ։ Յուշ ածէք ասեմ, և առ անգամ մի հարցէք ցնոսա։ Ո՞ զձեզ ած ձգեաց յանապատդ յայդ. ո՞ զձեզ այդպէս քրձազգեացս արար և խարանազգեստս. ո՞ զձեզ առ տարաւ և թաղեաց յանձաւդ յայդոսիկ և 'ի փապարսդ. ո՞ զձեզ յորդորեաց՝ 'ի մարմնի այդպէս զանմարմնոցն բերել զհանդէս։ Այս զի միանգամայն հարցանել զամենայն, ո՞ զձեզ այդչափ սերտիւ հրահանգեաց՝ այդպէս գեղեցկապէս և լի արդեամբք զսակաւժամանակեայ զաւուրսդ պսակել։ Լսեն, և անդ այր այր յառաջ մատուցեալ պատասխանի զայս առնեն. "Բաբէ, և բնաւ իսկ հարցանել ձեզ արժան ի՞նչ զայսոսնեաց, ո՞չ ահա իբրև արագ սուրհանդակի հետք, կամ իբրու հաւուց թռուցելոց ի՞նչն ընթացք աւուրց մերոց. և ժամանակն որչափ սուղ՝ այնչափ և դաւաձան։ Այ՛ն զայն ամն յաւիտենից, մեք զյաւիտենականութիւնն առաջի աչաց ունիմք հանապազ, զայն տեսանելիք միշտ, զայն խորհիմք միշտ, յայն պատրաստիմք միշտ, յայն հառաչեմք միշտ. զի յայն իսկ ծնեալ եմք. "Յիշեցաք մեք զաւուրսն զառաջինս, և զամենն յաւիտենից ածաք զմտաւ ,, ։

Այս արդ ո՛վ յաւիտենականութիւն, եթէ յաջողեցար դու յայնժամ առնուլ թաղել զկենդանիսդ 'ի փապարս երկրի, աղէ դու վայր մի զօրասցիս և առ մեզ

digitised by A.R.A.R.@

այսօր 'ի կենդանութիւն վերառնուլ զմեռեալքս , որ-
պէս զի մեռեալքն Աստուծոյ՝ մեռեալքն հնորհաց՝ յա-
րիցեն 'ի կեանս յիշատակաւ ամացն յաւիտենից ։ Ա-
այլ ինչ խնդրեմ 'ի ձէնջ սիրելիք , բայց յիշատակ մի ,
բայց հայեցուած մի . այլ հայեցուած անքթիթ 'ի յա-
ւիտենականութիւն անդր , որ ամենեցուն մեզ այն ինչ
եղեալ յաշխարհէ ասասի՝ անդէն ընդառաջէ ։ Ա.յլ զու ,
որ 'ի գանձ անդին պատուական արեանդ գնեցեր զմեզ
'ի յաւիտենական մահուանէն , աղէ այսօր , տէր , տուր
զօրավիգն իմոյ նախանձուն՝ որ վասն փառաց քոց , լու-
սաւորեա զմիտս , տուր հնորհս իմոյ բարբառոյն ազգել
յունէն , ազգել 'ի սիրտ ժողովրդեան քոյ ։

Հոգի ունիմք անմահ , եղբարք , մի յաւիտենական
մահուն լիցուք բաժանորդք ։ Հոգիս մեր յաւիտենա-
կան՝ մի 'ի յաւիտենական երանութենէն զրկեսցի ։ Խե-
լամտութիւն յաւիտենականութեան տպասցի անջինջ
'ի մեր սիրտս . և այնպէս այր իւրաքանչիւր անքթթելի
աչօք մտացն 'ի յաւիտենականութիւն անդր՝ ողբասցէ
առաջին՝ զանցեալ ժամանակն յանցաւորութեան իւ-
րոյ . ուշ դիցէ երկրորդ բարիոք վարել զգալոցն . ապա
երրորդ՝ ապաշխարութեամբն յապահովի կացուսցէ ան-
ձին զյաւիտենականութիւնն ։

ՄԱՄՆ Ա .

Պարտ և արժան էր , սիրելիք , և քանզի մեծ և ա-
հեղ է առաջարկութիւն քարոզիս , պարտ և արժան
էր , ոչ հասարակ ինչ բարբառով , քան թէ 'ի ձայն քա-
ջահնչող տիեզերալուր փողոյ հնչեցուցանել զբանն մին-
չև 'ի ծագս վերջինս աշխարհի , զմարգարէինն ազգե-
լով բարբառ յընդհանուրս առհասարակ , քանզի և առ-
հասարակ մահկանացուք ծնեալք , և ծնեալք են վասն
անմահ յաւիտենականութեան . " Ա ուարուք զայս ա-
մենայն ազգք , ունկնդիր լերուք ամենեքին որ բնա-
կեալդ էք յերկրի .,, ։

Ա.ռիք ժողովուրդք տիեզերաց , արիք , որ յամենայն
ազգէ , որ յամենայն վիճակէ , որ յամենայն կարգէ .

digitised by A.R.A.R.@

եկեղեցականք և աշխարհականք, ազնուականք և սոս-
կականք, մեծատունք և աղքատք, իմաստունք և տը-
գէտք, արդարք և մեղաւորք։ Լուարուք առ հաստատակ
զհարցումն զմեծ զոր աստուածայինքն առնեն զիրք։
Ասացէք մեզ, պատմեցէք մեզ, մարդ որ 'ի հող մահու
էջ, կապուտ կողոպուտ թողեալ յամենայնէ, և հան-
գուցաւ 'ի հող շիրմին . . . ուր իցէ արդ, ուր ջրքաւ . . .
Օ ինչ ասէք պատասխանի։ . . .

Զհա ընդ ամենեցուն ձայնատու, կնքեաց իմաս-
տունն. "Գնաց մարդ 'ի տուն իւր յաւիտենից ,,։ Զայն
որչափ ահաւոր, այնչափ և անյերկուանալի. իբրև զի
ձայն է առ 'ի Աստուծոյ։ Տուն մարդոյ Ճշմարիտ,
տուն իւր սեպհական՝ տունն յաւիտենից։ Զայն ինչ
զվերջին շունչն ընչեալ, եղանէ 'ի սահմանափակ յաշխարհէ,
անդէն մտանէ յաշխարհ անսահման, անպարագիծ,
որոյ ոչ սկիզբն ծագման և ոչ ծագ աւարտման, չիք
եղը, չիք չափ լայնութեան և երկայնութեան, չիք չափ
ժամանակին. այս է տունն յաւիտենից, այս է յաւիտե-
նականութիւնն։ Զայլ յաւիտենականութիւն կրկին,
կամ փառաց որ միանգամ առաքինութեամբ վարեաց
զժամանակն. կամ յաւիտենականութիւն պատուհասին,
որ մեղաւք զկեանսն վախճանեաց։ Զանսի ահագին Ճշմար-
տութիւն, քանի և անսուտ. քանզի ինքնին դատաւորն
մինչ չև զվճիռն հատեալ, այժմէն կանուխ մեզ ազ-
դեաց. "Երթիցեն, ասէ, մեղաւորք 'ի տանջանս, ոչ
լոկ, այլ յաւիտենականս. և արդարքն 'ի կեանս յաւի-
տենականս ,,։

Զու արդ ժուժկալել աղաչեմ սիրելիք, և վայր մի
թոյլ ինձ առնել՝ 'ի վերայ անսուտ Ճշմարտութեանս
բարձրացուցանել բարբառ ընդ սրբոյ աստուածաբա-
նին. "Մինչև ցե՞րբ որդիք մարդկան, եթէ գոյ ան-
շուշտ յաւիտենականութիւն, մինչև ցե՞րբ սիրէք զնան-
րութիւն և խնդրէք զստութիւն ,,։ Զթէ գոյ ան-
շուշտ յաւիտենականութիւն, տակաւին յուսանա՞լ, տա-
կաւին ծանրը արձակել և կեանս անխորհրդաբար վա-
րել։ Տակաւին խանդք անչափ, կենակցութիւնք վայ-
ելչասիրք, տակաւին կապե՞լ ընդ աշխարհ, տակաւին ար-
ծաթի պաշտօն հարկանել։ Զթէ անշուշտ գոյ յաւի-
տենականութիւն, զի այդ հանապազորդելդ 'ի յիշոցս,

digitised by A.R.A.R.@

'ի հայհոյութիւնս, յատելութիւնս, 'ի բամբասանս, տակաւին անժուժկալ 'ի սէրն, պարշտեալ 'ի խորհուրդս և տակաւին մնալ թշնամի Աստուծոյ. "Արթիցեն 'ի տանջանս յաւիտենականս.,, Աչս զիարդ հնար երբեք իցէ յանդիման յաւիտենականութեանն ոչ ինչ սարսել, ոչ ինչ զգաստանալ բանաւորին։ Հարկ է ուրեմն միոյ յերկուց՝ կամ ոչ հաւատալ, կամ զյաւիտենականութիւն չճանաչել։ Ան անհաւատն հատուցեալ եմք յայլում քարոզի, այժմ չիք բան առ նոսա։ Այս թէ հաւատայ և չճանաչէ զինչ տիրապէս յաւիտենականութիւնն իցէ, շատ է հաւատալն առ 'ի զգաստանալ. շատ է գիտելն զի անվախճան են փառք, անվախճան են և պատուհասք։ Պիտութիւն՝ որքան քարոզի, առաւել ևս մտածութեան հարկ է. մեք քարոզեսցուք սակաւ մի, դուք զառաւելն ածջիք զմտաւ։

Յաւիտենականութիւնն այն է, որոյ ոչ սկիզբն լեալ երբեք և ոչ աւարտ կատարածի, միշտ նոյն և միշտ սկսեալ։ Եթէ կարաց ինչ ոք սահմանաւոր ասել զյաւիտենականութենէն. ոչ։ Բանզի գեղեցիկս հնքեաց աստուածխնամն Աստուծոյ. զինչ և ասասցես, պակաս ասասցես. "Օ որ և կամիս ասա զյաւիտենականութենէն, այլ զոր ինչ և ասասցես՝ նուազ ասասցես.,,։

Ի վերայ այսր առ փոքր մի սարսել զանզգայութիւնս, նկարեա դու առաջի աչաց մտացդ զանվախճանութիւնն, զոչ երբեքն և զանչափութիւնն։ Չափին առ դիկ անհնարին բարձրութիւնք երկնից, չափին անդրն դախոր յատակք, չափին ծագք երկրի։ Կամիցիս չափել և զյաւիտենականութիւնն, մի միայն չափ և լայնորա այս է, չափեա զյաւիտենականութիւնն յաւիտենականութեամբ։ Դու 'ի ժամանակեայս յայսոսիկ հան մատն մի 'ի քանակէն և նուազեսցի, յաւել բաժին մի՝ և առեսցէ. հան դու 'ի յաւիտենականութենէն կամ յաւել զբիւրս բիւրուց դարուց միշտ և հանապազ, նա անփոփոխ նոյն է, նա անընդունակ է առնման և նուազման։ "Այնոյն չափ և մեծութիւն և ամենայն անբաւութիւն դարուց, ասէր Աստուծոյ, առ յաւիտենականութեամբն ոչ եթէ դուշնաբերայք ինչ են, այլ ոչ ինչ են.,,։ Ի վեր է նա քան զամենայն ժամանակ, և միանգամայն զամենայն ժամանակ՝ զան-

digitised by A.R.A.R.@

ցեալն և զներկայն և զապառնին յինքեան պարագրել, Եւ ցոր վայր աստուած է աստուած, ցայնվայր է յաւիտենականութիւնն, և ցոր վայր աստուած է աստուած՝ ցայնվայր վայելեսցեն արդարքն՝ի կեանս, ցայն վայր լկեսցին մեղաւորք՝ի տանջանս։

Ո՛վ յաւիտենականութիւն, ո՞ բաւական իցէ երբէք հասանել քեզ։ Եւ եթէ ինքն անհասանելի, անհասանելի ուրեմն իցեն, սիրելիք, և տանջանքն, քանզի յաւիտենական են. և եթէ յաւիտենական, ո՞վ քանիցս իցէ և յուսահատութիւն՝ի տանջեալն։ Եւ զիարդ ուրեմն սիրելիք, մինչդեռ արտաքոյ կամաց յաւիտենականութեան, և ժամանակ՝ի ձեռս է ապրել՝ի յաւիտենականութենէ տանջանացն և՝ի ձեռս բերել զյաւիտենականութիւն կենացն՝ ոչ արիասցուք փախչել՝ի միոյն և փարել զմիւսովն։ Օ՜ինչ թուեսցին մեզ յայնժամ ժամանակեաքս, զինչ անցաւոր փառքս, զինչ ծաղկընկեց մեծութիւնք, զինչ առօրեայ հեշտութիւնք։ Անիծեալ իցէ անմտութիւնս վասն վաղանցուկ բերկրութեանն՝ յանանցականն մատնիլ՝ի տանջանս, վասն ոչ վայրիկ մի բուռն առնելոյ բնութեանս՝ի սանձել զդժպատեհ կիրսն, զբարկութիւն, զոխութիւն, զամբարտաւանութիւն, զարծաթասիրութիւն, զվրէժխնդրութիւն, զատելութիւն, զանժուժկալութիւն, վտանգել զյաւիտենականն փրկութիւն։

Եւ արդ գիտեմ քաջ սիրելիք զհաստատութիւն հաւատոցն ձերոց առ յաւիտենականութիւն տանջանացն, սակայն գիտեմ և զանհաստատնոցն ձախողակ բանսն վասն այնորիկ՝ թերևս և՝ի ձեր հեղեալ լինիցն, յասել անդ նոցա. "Արդար են այս հատուցմունք տանջանացն վասն մեղաց. այլ զինչ այդ խստութիւնդ իցէ՝ի յաւիտեան տանջել, ուր արդարութիւնն իցէ։ Օ՜ինչ համեմատութիւն կայցէ ընդ վաղանցուկ առօրեայ հեշտութիւնդ, և ընդ յաւիտենական անսպառելի տանջանսն.,։ Ա՛մբէ, դու որդն անարգ երկրի և զինչ համեմատութիւն կայցէ ընդ արարածդ որ յոչնչէ, և ընդ անսահման մեծվայելչութիւնն Աստուծոյ թշնամանեալ յարարածոյն։ Զերևս զմեծութիւն արժանահաս պատուհասին՝ի ժամանակէ յանցանացն չափել

պարտ իցէ եթէ 'ի մեծութենէն թշնամանաց. և եթէ թշնամանքն անսահման գոսան, ոչ արդեաք իրաւացի իցէ և պատուհասին լինել անսահման, և քանզի անհնար է սաստկութեամբն լինել անսահման՝ տարածութեամբն լիցին ընդ ամենայն յաւիտեանս։ Դարձեալ և որ բան առաւել իրաւացի կայցէ քան զայն, երբէք չեռելոյ ստուծոյ այնմ՝ որ ոչն ապաշաւեաց երբէք վասն մեղացն և ոչ ապաշաւեսցէ. և ոչ ահա մեղաւոր անապաշաւ՝ իրձ լինէր արդեաք կեալ յաւիտեան, զի կարասցէ մեղանչել 'ի յաւիտեան։ Այս զինչ այնուհետև զարմանք իցեն զի և ստուած այնմ որ յաւիտենական կամէր զմեղն՝ յաւիտենական տացէ և զպատուհասն։

Յաղթիկ առ թերահաւատսն։ Իսկ որ ամրապինդք են 'ի հաւատս, և 'ի լուսոյ բանին խմնատնացեալք, ասասցեն մեզ։ Ընդէր մեղանչէ մարդ. յայտ է զի կամ հեշտանայ, կամ չկամի կրել ինչ։ Յլ հաւատք միումն և միաւսին սպառնան պատուհաս. զինչ և լոյս բանին. զայս ինչ ուսուցանէ և նա, եթէ նուազ չարն ընտրելի է առ 'ի զերծանել յառաւելագունէն։ Իսկ արդ ոչ յետասանութիւն վերջին իցէ, առ սէր ժամանակիցն զրկել 'ի յաւիտենական կենացն, և վասն չկրելոյ ինչ մի աստէն, եթէ մեռելութիւն ինչ իցէ ապստամբ կամացն, եթէ պահք իցեն սահմանեալք, եթէ աղօթք պատուիրեալք, եթէ հատուցումն ինչ արդարութեան, և կրել անդէն 'ի յաւիտեան։ Այս են այն կիրք յաւիտենականք՝ դժնդակագոյնք և յրմբռնմանէ անտի յաւիտենականութեանն. քանզի և յամենայն վայրկենի յաւիտենականութեանն կրէ անդ միանգամայն զամենայն տանջանսն՝ զոր կրեալց է ընդ ամենայն յաւիտեանս։ Իսկ զպատճառսն խորագոյնս մերձ դնէ երանելի աստուածաբանն, իբրև զի որ խիթայ 'ի չարէն, 'ի նոյն և կրէ. "Յորժամ որ ասէ, սկսանի երկնչել յիրաց ինչ, այնպիսին արդէն իսկ 'ի տանջանս է"։ Իսկ արդ եթէ երկնչելն և խիթանն այնպէս իցէ, զինչ պարտ է ասել յաղագս անսուտ գիտութեանն հանդերձելոյ չարին։

Դանի արտասուելի իցէ վիճակն. քանզի գիտէ եթէ բանսն յոր արգելաւ յաւիտենական է. և հուրն որ այրէ՝ յաւիտենական է. որդն որ ուտէ, յաւիտե-

digitised by A.R.A.R.@

նական է. զեր որ տանջէն, յաւիտենականք էն. վՀիան ասուածեղէն անդարձ յաւիտենական է։ Ո՛վ յաւիտենականութիւն սոսկալի. և եթէ 'ի քէն որ չարսեսցի, 'ի զգաստութիւն առ վայր մի եկեալ, ուստ ուստեք երբեք յաջողեսցի այնպիսւոյն 'ի բաց զանմտութիւնն դնել։ Ի սմանէն գոնեա եղբարք արիասցուք գօտէպինդք եղեալ 'ի կենսառիթ ուղղութիւն վարուց Ճշմարիտ ապաշխարութիւն. ապաշխարութիւնս մեր սակաւօրեայ, իսկ պտուղն նորա յանկէտ յաւիտեանս։ ( )՛ն արիք եղբարք. քանզի եթէ և 'ի լուր յաւիտենականութեանն ոչ շարժեսցի հոգի, աւա՜ղ զի կնիք ուրեմն ձախողակ հարեալ կայ 'ի Ճակատ մարդոյն։

ՄԱՄՆ Բ.

ԼՈՎպէտ և 'ի փափկութիւնս անհնարին զոք զակատեալ իցէ, թէպէտ և 'ի փառս աշխարհի զերածայրեալ զոք իցէ, թէպէտ և որ զինչ և իցէ՝ 'ի բաղմաղբօս կենցաղոյս 'ի պատիր հաղթիցն թակարդեալ իցէ, 'ի վերայ այսր առ 'ի յիշատակէ յաւիտենականութեանն՝ զիտացէք անշուշտ ինչ մի այնպիսին օգտեսցի 'ի հոգին։ Զան զի եթէ զոք 'ի մարդիկ զերաստիՃանեալք և տիեզերաց աշխարհակալք, սոնքացեալքն, յօրացեալքն, և յայնչափ խոչընդակաց արգելեալքն 'ի նահատակութիւնս հոգւոյն, զոք թագաւորք, յուշ զյաւիտենականութիւնն ածեալ՝ բազումս օգտեցան, քանիցն առաւել և զոք ոչ իբրև զնոսա յայնչափ խոչընդակաց պաշարեալք իցեն։

Պատմեն՝ եթէ մի ոմն յաշխարհակալաց անտի արքայից հիացուցանէր զտեսողսն, քանզի յամենայնի լուրջ և զգոյշ՝ առաքինաբար միշտ նկրտէր վարել կեանս. ապա և զպատՃառսն զիտացին զՀիացմանն։ Զանզի 'ի նեղբին յաբքունի սենեկին գտանէին գրոշմեալ ոսկեղէն տառիւք զսրբոյ աղբային Դաւթի զտող սաղմոսին՝ զոր կանուխ ետու ձեզ լսել, զայն եթէ "Խորհեցայ զաւուրսն զառաջինս, և զամսն յաւիտենից յիշեցի"։ Օ այս ընթեռնայր նա զոր հանապազ. յորժամ՞ 'ի գահոյսն բազմէր, թուէր ինն նմա լսել յունկանէ։ Ո՛վ

digitised by A.R.A.R.@

մարդ, յիշեա զյաւիտենականութիւնն։ Յորժամ 'ի մարտ ելանէր, առ ամենայն հարկանել փողոց թուէր ինն արձագանգել առ նա. Ո՛վ թագաւոր՝ յիշեա զյաւիտենականութիւն։ Ի կենակցութիւնս արքունիս, 'ի զբօսանս, 'ի թատերս, 'ի խրախուն, յատեանս, 'ի խորհուրդս, և յամենայն իսկ 'ի գործս, ինքնին յուշ ածէր առանձինն ընդ միտս. Ո՛վ թագաւոր յիշեա զյաւիտենականութիւն, և զամն յաւիտենից ած զմտաւ։ Եւ ապա 'ի յիշատակաց աստի մեծապէս օգտեալ՝ առաքինացաւ զամենայն աւուրս կենաց իւրոց և երջանիկ գտաւ 'ի մահուն։

Ո՛ տայր մեզ զյիշատակ զայս կենսաբեր տպաւորել և 'ի մեր միտս յամենայն 'ի գործս մեր, և ասել ցանձն. Ո՛վ մարդ դարձ 'ի քեզ և զամն յաւիտենից ած զմտաւ։ Ինչուշտ ասեմ, սիրելիք, մեծապէս էր մեզ յայնժամ աներկեւանութիւն յաղագս յաւիտենական փրկութեան մերոյ։ Ա.յլ բա՛ւէ. 'ի քանի քանի միտս անյուշ է յաւիտենականութիւնն. կենցաղականս զբաղանք, հոգ բարեկեցութեան, սէր զբօսանաց, սէր արծաթոյն, աղօտացուցանեն զմիտս, գողանան զսիրտս։ Կարծիցէ՞ք թերեւս եթէ այր որ վասն անարդ շահուն անձնատուն է 'ի դաշինս և յառեւտուրս անիրաւս, եթէ յիշեսցէ երբեք զյաւիտենականութիւն։ Կամ այր քրիստոնեայ՝ որ ընդ ամն բազումն լուեաց և ծածկեաց զմեղսն 'ի խոստովանութեանն, յիշեսցէ՞ երբեք երբեք այնպիսին զյաւիտենականութիւնն։ Կամ այր անձնազրաւ յանժուժկալութիւն, յարծաթասիրութիւն, յատելութիւն, 'ի բամբասանս, խորհեսցէ՞ երբեք այնպիսին ինչ մի զյաւիտենականութենէն։

Ա.յլ սակայն անշուշտ, սիրելիք, չիք մեզ ընդ երկուս ընդ այսոսիկ. կամ յաւիտենականութիւն տանջանաց, կամ աստ յիշատակաւ յաւիտենականութեանն զգաստութիւն կենաց. կամ աստ արտասուք, կամ անդ բոց անշէջ։ Ա.յլ ապաշխարութիւն ոչ երբեք, և արտասուք ոչ ուրեք եթէ խորհուրդ և յիշատակ յաւիտենականութեանն մերձ ոչ իցէ։ Հապա այժմէն, սիրելիք, առ պատուանդանի խաչիս խորհեսցի այր այր, և զամն յաւիտենից զմտաւ ածցէ։ Օ մտա՛ւ ած ո՛ անձն անժուժկալ արժեսցէ՞ ինչ առօրեայ հեշտութիւնն առ յաւի-

digitised by A.R.A.R.@

տենական դառնութեանն։ Օ մտաւ ած ո՛ արծաթա-
սէր անձն, արժանն ինչ իցէ վասն միոյ անիրաւ շա-
հու ժառանգել զյաւիտենականութիւն թշուառու-
թեան։ Օ մտաւ ած և դու վրէժինդիր ոխակալ անձն,
դիւր մի 'ի քինահանութեանդ արժեսցէ զյաւիտե-
նականութիւն լալոյն և զկրծել ատամանց։ Օ մտաւ
ած և դու որ տանուտէր կացեալդ ես և հայր ես զա-
ւակաց, որ լաւ իցէ քեզ, վայր մի արթնութեամբ հրա-
կել 'ի վրայ գերդաստանիդ, տքնիլ 'ի գեղեցիկ դաս-
տիարակութիւն զաւակացդ՝ ըստ պարտուց վիճակիդ,
եթէ արդեօք անհոգացեալ քո 'ի պարտսդ, 'ի բանտ
անել դատապարտիլ յաւիտենական արգելոցին։ Ո՛հ,
և դու ինքն զմտաւ ած ով պատանի, լաւ իցէ քեզ արդեօք
փոքու ինն այժմէն բուռն առնելով հասակիդ՝ հրաժեշտ
'ի սակաւօրեայ կեանդ տալ 'ի կրից հեշտախտու-
թեան, եթէ արդեօք հեծել անդ յաւիտեան, և ըմ-
պել զբաժակ յաւիտենական դառնութեան։ Այլ հե-
ծել միշտ յանօգուտս, զի որ միով արտասուօք մարթ
էր քեզ աստէն ժառանգել զյաւիտենական զկեանսն,
անդ ծով արտասուացն և ոչ զկայծ մի բաւական իցէ
շիջուցանել զյաւիտենական հրոյն։ Ո՛վ յաւիտենակա-
նութեան ցաւոց ընդ առօրեայ բերկրութեան, ո՛վ յա-
ւիտենականութեան արգելոցին ընդ սակաւօրեայ սանձ-
արձակութեան. ո՛վ յաւիտենակութեան ընկերութեան
դժոխային այսոցն, ընդ ժամանակեայ չարացն կենակ-
ցութեան։

Այլ օ՜ն արիք, դարձեալ ասեմ, մինչ չև պաշարեալք
'ի յաւիտենականութենէն, զդէպ ժամանակ այժմս
կենացս միջնորդ 'ի ձեռս առցուք ապաշխարութեամբ
ապրել յանժամանակ աղէտիցն, և 'ի ձեռս բերել զան-
ժամանակ զվայելն։ Դէպ ժամանակ զայսօրն շնոր-
հեաց մեզ Աստուած, մի 'ի ձեռաց հանցուք անհան-
ձարաբար. զանն միանգամ այժմէն յառեալ արտա-
սուօք յայս 'ի խաչելեալն Աստուած, փարեսցուք զխա-
չին. «Ո՛վ տէր, հայեաց տէր. կեանս ահա վարեցի
մեղօք՝ ապստամբ 'ի քոց պատուիրանաց։ Նդ 'ի խաչին
աւազակն աղաղակէր, յիշեա զիս տէր. նովին ձայնիւն և
ես գոչեմ, ողորմեա ինձ Աստուած իմ, ողորմեա. զողջ-
մանն իմոյ աւասիկ զարտասուս արկանեմ առաջի քո տէր

digitised by A.R.A.R.@

իմ, թողլինձ զմեղս իմ. որ բժիշկդ ես հոգւոց, բժշկեա զհոգւոյ իմոյ զհիւանդութիւնս. մեղայ տէր բազում ողորմ Աստուած իմ, մեղայ ողորմեա։ Մեղայ տէր, խոստովանիմ զյանցանս իմ, մեղայ, ողորմեա »։

Այո, եղբարք, ահա ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան։ Մինչդեռ մերձ կան շնորհք, մինչդեռ բաց կայ դուռն ողորմութեան, մաղթեսցուք 'ի բոլոր սրտէ. « Յիշեա զիս տէր. աստ կիցեա, աստ չարչարեա, աստ մի խնայեր, զի անդ յաւիտեան խնայեսցես յիս »։ Արբեսցուք աստէն զհոգիս, քաւեսցուք 'ի մեղաց ձշմարիտ և խոնարհ խոստովանութեամբ առ ոտս քահանայի Աստուծոյ, և հաշտ ընդ Աստուծոյ եղեալ միանգամ, թողցէ այնուհետև սանձարձակն յիշատակաւ յաւիտենականութեան զիւրոյ զանժուժկալութեան զկեանսն։ Թողցէ արծաթասէրն յիշատակաւն յաւիտենականութեան զանգթութիւնն, և յառաստ բաժին աղքատացն փրկեսցէ զհոգին։ Յաւիտենականութիւնն յիշեսցէ բամբասողն, և զգերան զկանն իւրոյ փոյթ տարցի 'ի բաց հանել։ Ի ամբարտաւանութեամբ փառասիրութեամբ արբեալ իցէ, մոռացեալ զԱստուած, մոռացեալ զհոգին, յիշեսցէ զյաւիտենականութիւնն, և յանձին կալցի զխոնարհութիւն Քրիստոսի։ Ի ո՞ խակալութեամբ եղբօրն տապի, զյաւիտենականութիւնն յիշեսցէ, հեզասցի և համբերիս խաղաղութեան եղբօրն՝ ընդ Աստուծոյ հաշտեսցի։ Քանզի մեծ և հզօր է յիշատակ յաւիտենականութեան, եղբարք. և եթէ ոք սերտիս յիշեսցէ, զամենայն խստութիւն կակղէ, զամենայն զօրութիւն քակէ, զամենայն կարծրութիւն մաշէ, զամենայն ընդդիմամարտ վանէ, և յաղթանակ 'ի վերայ ամենայնին կանգնէ։

Ո՞սա, որպէս երբեմն աստուածիմաստն Ասկեբերան խրատէր յաղագս ունայնութեան կենացս այսոցիկ, զսա՝ այս է զյաւիտենականութիւնն, յորժամ ասէր 'ի տուն ձեր դարձջիք, երթայք դրոշմեցէք 'ի դրունս տանց ձերոց, յոլմունս, և 'ի սենեակս և 'ի ննջարանս ձեր և յամենայն ուրեք. զրեցէք ըստ օրինակի առաքինւոյն այնմիկ աղբայի. « Յիշեա՛ ով մարդ զյաւիտենականութիւն. անցանէ ամենայն, սպառի ամենայն. իսկ յաւիտենականութեան չիք վախճան »։

digitised by A.R.A.R.@

ԳԱՐՈՂ ԼԵ.

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ

“Որպէս սիրելի եւ յարկք քո տէր զօրութեանց . ցանկայ և ՝փափաքէ անձն իմ ՝ի գաւիթս քո „ :

Ով երկնային քաղաքին վայելչութեան , յորում միայն երջանկութիւնն՝ որում միշտ ցանկացաւ բանական բնութիւնս : Ով, որչափ և ընդ քանի դարս իմաստունք աշխարհի զհետ ելին ՝ի խնդրել զմեծահրաշ խորհուրդն , և եգիտ և ոչ ոք , և գիտաց և ոչ ոք զայն ինչ՝ զոր այսօր ՝ի մեզ տկար կանանին և մատաղ մանկտին գիտեն քաջ և ասեն , եթէ Աստուած ինքնին է մեր վերջին վախճան , և նա միայն է երջանկութիւն առաքինւոյն ՝ի յաւիտեան . “Այս , ասէ Աստուած , ես եղէց վարձք քո մեծ յոյժ , և ոչ այլ ոք բաց յինէն „ :

Աւաղ բաղդի իմաստնոցն , որ այնպէս կաղ ՝ի կաղ իբրու ՝ի խաւարի առ խարխափ ելեալ էին ՝ի խնդիր երջանկութեանն . միշտ կամէին ըմբռնել , միշտ և նա խոյս տայր ՝ի նոցանէն : Իբրև այնպէս միշտ ՝ի դերևս ելանէին՝ ընկեր առ ընկեր երբէք չդլային հարցանել . “Աղէ մեք զինչ գործել եկաք յաշխարհ , որ կէտ որ սահման իցէ նպատակին՝ յոր ընթանամք . զինչ վախճան կենացս իցէ . որ վարձք գործոցս . միթէ ընդ մարմնոյս մեռցի և հոգիս մեր այս . և եթէ տակաւին կեցցէ , ուր արդեօք գնացեալ կացցէ նա , կամ ընդ ո՞ւմ „ : Օ այս օրինակ վարանեալք դանդաչէին նոքա . և եթէ անմահութեան ևս հոգւոյն ՝ի վերայ հասին , այլ թէ որ իցէ երջանկութիւն նորա՝ ոչ գիտացին կուրացեալքն :

digitised by A.R.A.R.@

Լիւրս իմն կարծեաց, ասէ աստուածայինն Գրիգորիոս՝ վասն այնորիկ՝ ի վեր հանին մի քան զմի սուտ. և զընթացսն կատարեցին ողջոյն զկենաց ողբալիքն՝ կամ ոչ ինչ ստուգեալ զվախճանն կամ ոչ երբէք գոհք։ Ել ած ոք զմտաւ, և ոչ ևս մարթացաւ, եթէ յաւիտենականն այն ժառանգութիւն Աստուծոյ և երանաւէտ տեսութիւնն կարգեցաւ՝ ի կէտ նպատակի ընթացից իւրեանց։

Այս ծածկեալ խորհուրդ ի՞նչեալ՝ ի յերկնից, յայտնեցաւ՝ ի շնորհաց, քարոզեցաւ՝ ի հաւատոց, դաւանեցաւ մի՝ ի գերագոյն պարգևաց հոգւոյն։ Սա այս է՝ զոր ասեմքն Արքայութիւն. սա է յոր ակնկառոյցք եմք միշտ հաւատացեալքս յԱստուած. խոստեմք ապա անարգեմք միանգամայն զայն ամենայն՝ որ արքայութիւն չէ. «Յոյց ինձ զդէմս քո, սրտառուչ պաղատէր Մովսէս, ցոյց ինձ զդէմս քո, եթէ գտի շնորհս առաջի քո»։ Փիտեմ զի արքայացուցեր դու զիս՝ ի վերայ ժողովրդեան քո, քահանայ և մարգարէ և օրէնսդիր. դաւանեմ զայս ետուր՝ ի ձեռս իմ՝ զքանչելագործն, զիշխանն՝ ի վերայ տարերաց, զհրամանատարն ազգաց. Ձաղնաչեմ զպատիւն, այլ գոհ չեմ։ Անդորրութիւն բոլորապրտուղ և գոհութիւն սրտին իմոյ՝ քոյ տեսութիւնն է միայն. «Յոյց ինձ զդէմս քո»։ Փիտեմ քաջ, զի չհասանեմ խնդրոյն առանց մեռանելոյ. «Ել տեսանէ ոք զերեսս իմ, և ապրի»։

Այլ աղէ, «Մեռայց, զի աստէն տեսից. յաւելոյր՝ ի նոյն սիրաբորբոքն Գրիգորիոս, մեռայց զի աստէն տեսից, տեսից զի աստէն մեռայց»։ Այս զինչ այլ զին առատ քան զայն վասն կենացս. և ո՞ր այն կէտ գեղեցիկ քան զայն վասն մահուանս։

Օ ամենայն ուրեմն կարձեսցուք դանդաղանս սիրելիք. ո՞ն արիք գնասցուք առ Աստուած. «Մեռցուք զի աստէն տեսցուք. տեսցուք զի աստէն մեռցուք»։ Օ ուգաշաւիղ ընդ սրբոցս մնցուք և մեք խորագոյնս՝ ի քնին, ո՞ր այն իցէ երջանկութիւնս մեր, զինչ յոյս կոչման մերոյ. և քանզի և մեզ յայտնեաց զայն Աստուած, որպէս և նոցա, արիք և մեք ընդ նոսա առաջին՝ ի սեր յեռանդն բորբոքեսցուք այնմ երանութեան. զի և երկրորդ անգամ՝ ընդ նոսա յաւուր միումն վայելեսցուք՝ ի նոյն։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆԱ ·

Լու կարի իսկ քաջ յաւուր միում կայ մեզ սիրելիք վայելել յԱստուած · երջանկանալ 'ի տեսանել անդ զԱստուած՝ որ ստեղծն զմեզ · զԱստուած որ փրկեաց զմեզ , զԱստուած որ այնչափ պարգևօք բնութեան զարդարեաց զմեզ · զմեծն զայն Աստուած , զանսահման բարին , զանչափ գեղեցիկն , զանբաւելի զմիտսն , զվերջին երանութիւնն ։ Ա՜ի 'ի խնդիր ուրեմն ելցուք երջանկութեանս մերոյ վայրապար ընդ բազմահետ շաւիղս մոլորս կենցաղոյս ։ երթեալ գտցուք մեք զնա յաւուր միում 'ի տան անդ իւրում · տեսցուք դէմ յանդիման · երես առ երես գիտասցուք զնա յարքայութեան ։ Ո՛վ , քանիսն խցեն աւետիքն , որ ասաց · " Յայնժամ գիտացից զնա , որպէս և նայն ծանեաւ զիս , զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն ,, · · · ։

Իսկ զինչ ապա տեսցուք մեք տեսանելոյն զԱստուած։ Ո՛ինչ · · · ։ Հարցէք դուք զնոյն առ կոյր ոք , կոյր 'ի ծնէ · որ զաւուրս կենաց իւրոց առ խարխափ ընթացեալ յաշխարհի , և շատ ինչ լուեալ ստէպ վասն արեգական , վասն աստեղաց , վասն լուսոյ , վասն բազմերանգ գունոցն , և զայլոց ևս բազմաց 'ի կուրութեան իւրում , և յանկարծ յաւուր միում կացեալ 'ի լերին բարձու , անդանօր այն ինչ 'ի ծագել արփւոյն և նորա անդէն 'ի բանալ աչացն , յեղակարծումն տեսանիցէ զՀանդիպակացսն ։ Ա՜մբէ , քանի՞ այլ յայլմէ լինիցի այրն 'ի պահուն , 'ի տեսիլ նորասքանչիցն և բազմադիմակ զնութեանցն ։ " Ա՜յս ուրեմն ի՞նչ արփին յերկինս զոր ասէին · այս լոյս տունջենային , այս մեր հողագունտս՝ զոր լսէի · ո՛վ քանի՞ այլադիմակ էր խորհելն իմ վասն դոցա · չէր տիպար , չգոյր ինչ օրինակ , երբեք չկարծէի լինել այդպիսի ,, ։

Զնոյն օրինակ և երանեալքն յառաջնում անդ բանալ աչաց մնացն յերկնաւոր քաղաքին , 'ի նկատել անդ յԱստուած զանսահմանն լոյս անբաւ զնութեանցն՝ զոր երբեք չետես , զոր երբեք ընդ միտ ոչ ած · " Ա՜մբէ ,

digitised by A.R.A.R.@

յապուշ կրթեսցի, ով Աստուած իմ զինչ զքեզ կարծեցի, և զինչ ահա տեսանեմ։ Ա՛խ խաբեաց զիս հաւատք իմ. խոստումն անդուլ ինձ խոստանայր տեսանել զԱստուած, և ահա տեսանեմ զնա. "Արդէս լուաք, նոյնպէս և տեսաք, 'ի քաղաք տեառն զօրութեանց՝ 'ի քաղաք Աստուծոյ մերոյ,,։

Սակայն ընդ հաւատ և ընդ տեսութիւն շատ է սպարէզն, շատ է և հիացումն ընդ մեծահրաշ տեսարանն, և ընդ անստուեր տեսութիւնն։ Դաջ միտ դիք աղաչեմ. կայրդ այդ անդուստ 'ի ծայրից լերինն այս միջնորդաւ արփւոյն ականէ զամենայն և հրաշանայ. այլ թող միանգամ և յարփի անդր յառեսցէ զակն, և անդէն նա տիգօք Ճառագայթիցն բլշացուցեալ զնա, անտես 'ի նմանէ պահեսցէ զանձն։ Ա՛խ այսպէս և յերանեալսն. նոցոյ առաջին մեծահրաշ լուսոյն այնորիկ հարեալ 'ի նոսա՝ կշիռ յարեգակն անդր ձկտեցուսցէ հայել 'ի նա, և 'ի նմա զամենայն ինչ միանգամայն։ Ա՛յսչափ է զօրութիւն, այսչափ կարողութիւն մեծահրաշ լուսոյն այնորիկ, զոր վարժարանք աստուածաբանիցն կոչեն լոյս փառաց։ Այ՛ և է սա իբրու ծաւալումն աստուածային Ճառագայթին, հաղորդութիւն գերաշխարհիկ նորուն իսկ անստեղծ լուսոյն, որով Աստուած տեսանէ զինքն։ Այ՛ զօրութեամբ լուսոյն այնորիկ փառաց իմանայ հոգին իբրու յանչափս իմն ծաւալեալ զինքն, ասպնջական գոլ յինքեան անսահման բարւոյն։ Ի՞արդեաւ մեր մտաց՝ որ ակն է հոգւոյն, նոյն պատահէ յայնժամ աստանօր յաստուածայինսն՝ որ ինչ մարմնեղէնս աչաց 'ի զգալիսս։ Այ՛ զբեռք արդեօք խորհրդածեալ լոցէ ձեր, եղբարք, զփոքրկութիւն գործարանի աչաց մերոց համեմատեալ ընդ մեծութեան լայնածաւալ պարունակի տեսութեան նորա։ Ո՛չ իմիրդ մեք փոքու այս ակամբ տեսանեմք 'ի յերկինս և 'ի յերկրի իրս իմն բիւրիցս մեծամեծս քան զնա զինքն. և սակայն միջնորդաւ արեգակնային Ճառագայթիցն յակնակապիՃ մեր անձուկ առեալ ժողովեմք զնոսա։ Սապէս և աստանօր գիա՞րդ մարթ իցէ սահմանաւոր պարունակի մտաց՝ մարդոյ ամփոփել զԱստուած՝ որ յանսահմանս մեծ է քան զնա. բայց եթէ միջնորդաւ գերագունի լուսոյն այնորիկ փառաց ըստ կարի յաջողեսցի 'ի նոյն։

digitised by A.R.A.R.@

Բայց սակայն և կարի տարանջատ է համեմատութիւնն ընդ տեսութիւն աչաց և ընդ տեսութիւն մտաց. քանզի 'ի զգալի տեսութեանս երկինք և երկիր ծով և ցամաք տեսարան միայն զուարճալի ընծայի մտացս, և ոչ այլ ինչ առաւել։ Բ. յլ չէ և չէ այսպէս յերանաւէտ տեսլեանն։ Տեսութիւն Աստուծոյ տպաւորէ 'ի հոգին քառեակ իմն առանձնաշնորհութիւնս գերաշխարհիկս, զոր ասեմք և լեմք, այլ չիմանամք։ Բ. ռաջին՝ անաղօտ ծանօթութիւնն Աստուծոյ, երկրորդ՝ անվթար նմանութիւնն ընդ Աստուծոյ, երրորդ՝ գերակատար սէր Աստուծոյ, չորրորդ՝ բովանդակ ժառանգութիւն Աստուծոյ։

Վանի՞ սքանչելահրաշ բանք 'ի խորհել, և անպատումք 'ի խօսել։ Զի՞նչ զանձառելին զայն միայն զաստուածանմանութիւնն՝ որ յանաղօտ ծանօթութենէն Աստուծոյ 'ի դէմ յանդիման տեսութեանն, ո՞ ոք երբէք բաւական իցէ 'ի պարզել։ Տեսանել զանսահման էն, զամենագեղեցիկն, զամենաբարին, տեսանել և 'ի նոյն կերպարանիլ. այնչափ նմանել, որչափ և տեսանել։ Որպէս զայս խորագոյնս կնքեաց որ ասացն. "Նման նմա լինելոց եմք"։ Իսկ զի՞նդ այս նորահրաշ իրք, ո՛վ աստուածայինդ Յովհաննէս, ո՞ր այն իցէ սատարն. "Վանզի տեսանելոց եմք, ասէ, զնա, որպէս և էն"։ Ո՛վ, ո՞րչափ յստակ և անաղօտ ճանաչումն, մինչև դառնալ լինել տեսութիւն. և ո՞րչափ ազդոյ և ճշգրիտ տեսութիւն, մինչև դառնալ լինել նմանութիւն. ո՞ր միտք բաւական իցեն 'ի հասանել։ Վանզի անդուստ խորհմաստն Պաւղոս աստուածաբանէ. "Որ ամենեցուն, ասէ, բացաւ երեսօք զփառսն տեառն՝ իբրև ընդ հայելի տեսեալ, 'ի նոյն պատկեր նորոգիմք փառաց 'ի փառս"։ Ո՛վ հրաշիցս... Յցեն ուրեմն երանելեացն հոգիք 'ի յերկինս հայելիք ջինջք և անարատք աստուածեղէն դիմացն. "Օ փառսն տեառն, ասէ, իբրև ընդ հայելի տեսեալ"։ Բայցէ՞ երբէք ձեզ, եղբարք, կենդանագիր ճշգրտահան առաւել քան զերևեալն ձեր պատկեր, որ ծնանիցի 'ի հայելւոջ. և սակայն ո՞ր աշխատութիւն կայցէ 'ի տպաւորելն. ոչ ինչ այլ, բայց լոկ յանդիմանութիւն պատկերահան ապակւոյն։ Ո՛վ սքանչելեացն. գործ մի յական թօթափել, քանի՞ գեղեցիկ,

digitised by A.R.A.R.@

քանի անվթար, քանի բնակաւոր. զիարդ համբոյր կերպարանն, զիարդ կենդանի գոյնն, զիարդ ձշգրիտ մոյն մարմնոյն, իբր տպաւորք գիծք դիտակին։ Զոր յառաջ անցցեն նկարիչք ձարտարապետք՝ որ 'ի նախնումն Գլեղեսք, կամ թէ առաւել՝ որ 'ի վերջնումն Ապատիլք և Տիտիանոսք. շարժեսցեն զբիչս, ձրգնեսցին 'ի վրձինս, տացեն զնոյն գոյն և մոյն այտիցն և ծնօտին, զնոյն փայլ լուսալիր աչացն, զնոյն տիպ և ձշգրտութիւն ողջոյն դիմացն, զոր ակամիցեն 'ի բիւրեղին։ Զաշ արուեստին. ընդ քիրտն մնանէ զամն բազումն և աւուրս՝ ձշգրտել զնմանութիւն բնութեան 'ի գործն, և ոչ հասանէ. և թէ բաւեսցէ և ինչ 'ի կտաւին իւրում կամ 'ի պնակին, որ զուգաւորութիւն կայցէ նորա ընդ հայելւոյն։ Զէմք յառաջնումն անշարժ անփոփոխ միշտ նոյնպէս կայ 'ի նոյն կայս՝ յորում միանգամ գծեցաւ. իսկ որ 'ի հայելւոջն դիտակն, կենդանի, արծարծ, աշխոյժ, եռանդուն գունակ գունակ կերպարանի, բազմադէմ փոփոխի, է զի լրջանայ, է զի ժպիտ արձակէ, 'ի ձօձել յանիցն ակնարկութիւնս ազդէ, շարժին շրթունք, գոգցես և զձայն արձակէ։ Գ.յաչափ է ձշգրտութիւն նմանութեանն։

Բաբէ բախտին երանելեացն հոգւոց, որ զնոյն նմանութիւն կալցին ընդ անբաւ էին անդէն յական թօթափել 'ի մուտս արքայութեան, 'ի տեսանէին զԳ.ստուած իբրև ընդ հայելի անարատ՝ աքանչելապէս տպաւորեալք 'ի հոգիս զպատկեր աստուածութեանն։ Բանիսն ի՞նչ բերկրութիւնն, յորժամ և ոչ 'ի պատկերն նորա միայն, այլ և նմանատիպք ձշգրտեսցին և 'ի վայելս աստուածային բերկրութեանցն 'ի նմին իսկ 'ի համագոյական աղբերէն, յորմէ և ինքն ըմպէ։ Բանզի ասէ. "Եւ զուղիս փափկութեան, ոչ զայլոյ ուրուք, այլ զուղիս փափկութեան քոյ տացես ըմպել նոցա ,,։ Գ.հա անվթար նմանութիւն ընդ Գ.ստուծոյ լեզուի անձառ, մնաց անքնին. միայն տեսութեամբ նմանել Գ.ստուծոյ 'ի գոյն, նմանել Գ.ստուծոյ 'ի գործելն, նմանել Գ.ստուծոյ 'ի վայելելն. ահա զոր աստուածայինն ասաց Պաւղոս՝ 'ի նոյն պատկեր նորոգիլ փառաց 'ի փառս. ահա զոր տէրն ինքնին աւետեաց. "Ուստ յուրախութիւն տեառն քո ,,. ահա

digitised by A.R.A.R.@

գերակատարն նմանութիւն միանգամայն 'ի խորհուրդս, յիրեն և 'ի գնացս կենացն Աստուծոյ. ահա գլխովին և ինքնին «Լեանք Աստուծոյ». «Կենդանի եմ ես, ասէ, այսուհետև ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս»։ Քրիստոս որում եան նմանեցայ, յոր եան փոխակերպեցայ, Քրիստոս՝ յորում եան կեամ երջանկաւէտ յաւիտենականութեամբ. «Լէ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս»։

Արդ և զայն ինձ վայր մի, սիրելիք, ածէք զմտաւ, եթէ որպէս Ճանաչել և տեսանելն զԱստուած զայնչափ նմանութիւնն սաղրէ 'ի հոգին, սապէս և ըստ նմանէն սիրելն զԱստուած՝ բնաւ իսկ զԱստուած ողջոյն ժառանգեցուցանէ հոգւոյն ամենայն բաւականութեամբ, քանզի և զինչ ևս այլ կայցէ արտաքոյ Աստուծոյ. «Աստուած սրտի իմոյ, ասէ, բաժին իմ Աստուած յաւիտեան»։ Ո՛վ, երջանիկքն այն երկնաքաղաքացիք իցեն միայն բաւական ասելի բերանով. «Աստուած իմ, Աստուած իմ, և ամենայն ինչ»։ Աստուած ողջոյն 'ի կար զօրութեան նոցա, Աստուած ողջոյն յամենայն պէտս նոցա։ Ոչառանգէն զԱստուած ողջոյն, և ժառանգին յԱստուծոյ ողջոյն. նոցա են աստուածայինքն, Աստուծոյ են նոցայքն։ Այն ինչ յանդիմանին երեսացն Աստուծոյ, անդէն իմանան նոքա ժառանգեալ միանգամայն զամենայն զամենայն ինորհ և զամենայն սէր։ Լսեն 'ի սրտին, լսեն միշտ զՀրաշալից Աստուծոյ ձայնն. «Խնդրեա զոր և կամիս, և տայ քեզ»։ Ո՛վ դու հոգի ինձ փարելի. յիշեա զի զկամն իմ արարեր զամենայն քոյովսանն, այսուհետև ինձ ՃՇայ առնել զկամն քո զամենայն։ Ոչեն ինձ այսուհետև փառք, զի դու կրեցեաս, այլ զի ցնծասցես. չեն այսուհետև քումդ սիրոյ պէտք ինչ հաւաստեայ, այլ վարձուց արդասեայ։ Խընդամ՝ 'ի խնդիրն, «Խնդրեա զոր կամիս, և տայ քեզ»։ Ոչպէտ և խնդրելոյ ժամանակ չթողու, կանխէ զիրեն, կանխէ զխնդրուածն։ Օ՜ որ օրինակ հիւրընկալ Ճոխ և բարի ասպնջական եղեալ սիրատարփ բարեկամին, ժողովեալ զնա ընդ յարկաւն և մինչև 'ի ներքին սենեակն ողջագուրեալ տարցի զնա։ Ընդանօր ոչ արկեղք գանձուն, ոչ սապատք զարդուն կնքեալ կայցեն առաջի նորա. այլ ողջոյն բաց. և պարզեալ ձոնս գեղեցիկս առաջի մատուս-

digitised by A.R.A.R.@

ցէ նմա, որչափ ոսկի կայցէ նորա, որչափ արծաթ, որ-
չափ և գոհարք, և կահք հոյակապք և կարասիք փառ-
թաւք, և ամենայնին՝ նաև անձին իւրում ժառանգորդ
միանգամայն կարգեսցէ զնա. որպէս աւետեաց տէրն,
եթէ "Լ՝ վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա.,,։
Լ՝ յայնժամ երջանիկն այն հոգի այնչափ շքով ժո-
ղովեալ, յայսկոյս յայնկոյս ոչ զնախնին իւր գտցէ զՀա-
ւատ, զի տեսանէ՝ զոր հաւատացին, ոչ զնախնին իւր
զյոյս, զի վայելէ յոր յուսացին. բոլորապտուղ ինքնա-
նուէր եռանդաբորբոք գրաւեալ 'ի սէրն, և այնպէս
սեպհականեալ ողջոյն զաստուածայինն, ոչ ևս այնու-
հետև գիտասցէ ինքն առաւել իցէ Լ՝ստուծոյ, եթէ
արդեօք Լ՝ստուած նորա։ Լ՝ յայնժամ յօդեսցէ
հոգին ընդ Լ՝ստուծոյ զմիութիւնն զայն զմեծն և
զանքակն զսրտին խանդից, քան զոր առաւել ընդ
մարդ և ընդ Լ՝ստուած անմարթ իցէ լինել միու-
թեան առաւել ներքին և առաւել հզօր։ Վ՝անի ան-
պատում բանք. "Լ՝մենեքին, ասէ, մի իցեն. որպէս
դու Հայր յիս և ես 'ի քեզ. զի և նոքա 'ի մեզ իցեն.
զի իցեն մի՝ որպէս և մեք մի եմք. ես 'ի նոսա և դու
յիս, զի եղիցին կատարեալք 'ի մի. զի սէրն զոր սիրեցեր
զիս 'ի նոսա իցէ, և ես 'ի նոսա.,,։ Լ՝ յայնժամ զմեծ
բարբառոյն այնորիկ՝ զոր ոչ երբէք իմացաւ՝ ծանիցէ
զզօրութիւնն երջանիկն հոգի, զինչ իցէ ասելն, "Լ՝ս-
տուած իմ, բաժին իմ Լ՝ստուած յաւիտեան. Լ՝ստուած
իմ և ամենայն ինչ իմ.,,։ Վ՝անզի և աստուածահրաշն
այն "Լ՝ոյս փառաց,, ոչ զաչս միայն մտաց զերանելեացն
լուսալիր կորովացուսցէ 'ի տեսանել զԼ՝ստուած, այլ և
ողջոյն ընդ հոգին սփռեալ՝ ողջոյն և ընդ մարմինն աղ-
դեսցէ զօրութիւն, 'ի կազդուրելաւհասարակ զկարողու-
թիւնսն. զի և յամենայն վայելս իւրեանց, ոչ մարմինն
խոչ ընդ ոսն կայցէ հոգւոյն 'ի բերկրանսն, և ոչ հոգին
զրկեսցէ զմարմին 'ի վայելսն։ Լ՝ս այնպէս երանելիքն
միջամուխ աչօք հոգւոյն զմայլեալք 'ի տեսութեանց Լ՝ս-
տուծոյ, միանգամայն և աչօք մարմնոյն բերկրեսցին 'ի
վայելս տեսութեան երանակից իւրեանց երկնաքաղաքա-
ցեացն, 'ի բազմահոյլ թիւ ընկերացն, 'ի դասադաս աշ-
տիճանսն, 'ի զանազանեալ փառսն, 'ի նորահրաշ գեղեց-
կութիւնսն սիրեցեալք յամենեցունց, և սիրողք ամենե-

digitised by A.R.A.R.@

ցուն. ծանուցեալք յամենեցունց և ճանաչողք ամենեցուն։ Լ.ա մինչդեռ հոգին վերառեալ 'ի խորհուրդս աստուածայնոցն՝ ընկղմեսցի 'ի գերագոյական էին 'ի ստորագելիսն անքնին, անդուստ և մարմին հրաշուեալ ցնծասցէ 'ի պարերգութիւնս անպատումս գերապանծ յաղթանակաց երկնաքաղաքացեացն։ Ո՞ր բան բաւական ի ցէ 'ի տիպ ճշգրտել զանսահման վայելիցն այնոցիկ զպատկեր՝ ըստ բոլոր բերկրանաց հոգւոյն մարմնոյն։ Որպէս զի և նոքին դարձեալ զեղեալք և անմահացեալք յանհատական աղբերէն, ոչ ինչ այլ բանիւ մարթասցին 'ի դէմն ածել զիւրեանցն, բայց 'ի սաղմոսին նուագս. "Լ.բեալ եմք մեք 'ի պարարտութենէ տանն Լ.ստուծոյ, զի նա զուղիս փափկութեան իւրոյ ետ մեզ ըմպել. երևեցաք մեք երեսաց նորա և յագեցաք յերևել փառաց նորա. Լ.ստուած սրտի մերոյ, բաժին մեր Լ.ստուած յաւիտեան. Լ.ստուած մեր, և ամենայն ինչ մեր. կալաք զնա, և ոչ թողցուք"։

Ո՛վ անճառելեացն... քանզի և անսպառ են սիրելիք ճառք պատմութեան երկնաքաղաքացեացն. քանզի և որչափ առաւել ամբառնան միտքն յերանաւէտ տեսութեանն յայնմիկ, այնչափ և առաւել զրգին մարմինքն. որպէս զի միանգամայն հոգին և մարմինն վայելչապէս անդրադարձիւ պատշաճեսցին ընդ միմեանս 'ի նորոգատուր չքնաղ վիճակին։ Ո՞որ օրինակ յորժամ 'ի դատերաց ոք տնանկաց քաջազարմից՝ 'ի հարսանիս վերառեալ փառօք մեծի արքայի, անդէն նորոգածին վիճակ հարսին թագուհւոյ փոփոխութիւն միանգամայն զամենայն իրաց յանկարծակի բերցէ 'ի նմա, նոր գործեալ զամենայնն որ ըստ հանդերձիցն, որ ըստ սրսկապանին, որ ըստ սպասարկութեանցն, և որ այլ ևս. նոր և 'ի կերպարան դիտակին անձինն, որ 'ի ծանրութենէ հայեցուածոցն, որ 'ի ճեմից ոտիցն և 'ի մեծավայելուչ գնացիցն և 'ի նազելի քաղաքավարութենէն, իբրև յամենայնի հրաշափառապէս նորաստեղծեալ անձն։ Ո՞նոյն օրինակ և հարմնացեալն Լ.ստուծոյ հոգի, և հանապազօրեայ արժանացեալն երեսացն Լ.ստուծոյ, և նպատակ սիրոյն նորա, գործէ հրաշապէս և փոփոխութիւն բոլորական յամենայն պատշաճեալն առ մարմին։ Ո՞իարդ ճշգրտագոյնս և աստուածային մատեանք՝ յորժամ զմար-

digitised by A.R.A.R.@

մեռոյ փառաւորելոյն ազգէն, բազմերանգս 'ի զգալեաց աստի օրինակաց վայելչաբանէն զնոցանէ՝ իբրև զփոփոխելոց, իբրև զնորոգելոց և իբրև զծաղկաւէտս զուարճացելոց. "Նորոգեսցին, ասէ, զօրութեամբ. նոր ափեռուր զարդարեսցին իբրև զարծուի, և իբրև զդալարի զուարճացցին. նորոգեսցի իբրև արծուոյ մանկութիւն նոցա, 'ի նա յուսացաւ սիրտ նոցա, օգտեցաւ և զուարճացաւ մարմին նոցա,,։ Արդ թէպէտ և 'ի զգալեաց աստի գեղեցկութեանց են նմանութիւնք նոցա, սակայն և յոյժ 'ի վեր են քան զօրինակն։ Անզի մարմինք են նորա հոգևորք որպէս ասաց առաքեալն. ոչ եթէ իբր այլաբանք 'ի մերոյն, այլ նորք և չքնաղք և սքանչելիք։ Իբրու նորաստեղծք սքանչելահրաշք են տեսանելիքն, լսելիքն, զեղն նոցա և տեսիլն, և ամենայն մարմնոյքն. որչափ ինչ 'ի Հայր պատահեսցէ մարմնոյն, որ տաճարքն իցեն երանաւետեալ հոգւոցն։ Սակ եթէ կամիցիս Հիզբիտ ևս լսել, այն է. "Զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զայն պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց,,։ Զի թէպէտ և մարդկային մարմնոյ բնութենականքն են նոցայքն, քանզի և աստուածային գիրն ինքեաց, եթէ "Ի մարմնի իմում տեսից ես զԱստուած փրկիչ իմ,,. այլ մարմինք են, որպէս ասացի, փոփոխեալք և գերաշխարհիկք, լուսարձակք, թեթևք, արագունք, անկիրք, անչարչարելիք։

Զոմի ինն եթէ երանելիքն այնոքիկ զակն միանգամ դարձուցեալք 'ի մարմնոս իւրեանց զնոյն զարմանս սքանչելեաց ցուցցեն, որպէս յորժամ տունկն վայրենի յերկուց և յերից օտար շառաւիղաց պտղաբերեալ գեղեցիկ պատուաստեալ 'ի բունն, տեսանիցին ապա բուսեալ 'ի նմա տերևք դալարագեղք այլաձևք, և ապա ծաղիկք և պտուղք նորաբանչք և օտարաբունք. (եթէ բերան զոյր տնկոցն), և ո՞ զոսոսա, ասիցէ, եղ յարմարեաց զարդ ինձ, և պսակ 'ի գլխակիս. գիտեմ իսկ ես զբուն իմ և զարմատ 'ի վայրենեաց փայտից և յանպտղաբերից. ուստի ապա անարդասաւորտունկս անշուք՝ ունիցի զաղնուական զայս ծնունդ։ Ո՞մ իցեն այս բարունակք... այլ զիմարդ իմ, որ անմանք են ինձ. դարձեալ և զիմարդ ոչ իմ, որ յիս հաստատեալ ինև կեան դոքա։ Եւ ինչ տար-

digitised by A.R.A.R.@

օրինակ և փառաւորեալքն այնոքիկ սքանչասցին հայեցեալք ցնծութեամբ 'ի մարմինն նորոգածինս, և զՀինն իւրեանց միանգամ յուշ ածեալ։ . . . Օ ինչ ասեք. քանի՞ իցեն զարմանքն, քանի՞ և հրճուանքն, յորժամ որ աստ 'ի կեանս աշխարհիս տառապեալ որեարն, աղքատքն, չարակրեալքն, ախտաժէտքն. որ 'ի մահուն իւրեանց մեկնեցան աստի, կէսք կոշկոռնեալք մարմնով, բըրտացեալք և փապարեալք անդամովք, կէսք միակողմանիք, կէսք կարկամեալք և գօսացեալք, կէսք կաղք և կոյրք և խուլք և անպեղեալք սոսկալիք. և ասա յանկարծակի անդանօր յակն արկանիցեն ողջոյն զամբողջութիւն անդամոյն, զքաջողջութիւն զգայարանացն, զառոյգութիւն իրանացն, զգեղեցկութիւն բոլոր անձին։ Օ իմ՞ դ նոր և չքնաղ երևեսցի նոցա լուսարձակ զօրութիւն անդամոյն. յորժամ ուր և դիմեալք երթիցեն, հետս լուսոյ զկնի գործեսցեն, և ստուեր ոչ ևս արկանիցեն մարմինք։ Օ իմ՞դ նոր և չքնաղ բնութիւն մարմնոյն անտեղիտալի սայրից սլաքաց, 'ի սուսերաց և յամենայն զինուց անխոց։ Օ ո՞ր բերկրութիւն ոչ բերկրեսցին, յորժամ ընդ օդս թեթևս իբրև ընդ հաստատուն երկիր անմարմնապէս կացեալ յայսկոյս յայնկոյս թռուցեալք խոյացին, և յական թօթափել ասպարէզս անսահմանս չափեսցեն։ Օ իմ՞դ նոր և սքանչելի մուտք և ելք մարմնոյն այնոցիկ ընդ ամենայն թափանցիկք, իբրև զնշոյլս արեգականայնս ընդ բիւրեղ։ Այս այս իցէ մարմինն, ասէպ նոքա հիացեալք հարցանիցեն, սա այս իցէ մարմինն, յորում այնչափ չարչարեցաք 'ի մարդկանէ, այնչափ տանջեցաք ախտակրութեամբք։ ԼՀ արդ ո՞ր իցեն չարչարանքն, ո՞ր տապն ոգետանջ, ո՞ր ցուրտն սառնասառոյց, ո՞ր քաղցն սովատանջ, ո՞ր ծարաւն պապակման, ո՞ր հիւանդութիւնք։ Լ՝ամբէ, անցանեն ժամանակք, հոլովին դարք բիւրք բիւրուց. միշտ առոյգ կեաւք, յար 'ի քաջողջութեան, միշտ յանմահութեան. "Լողջմութիւնք տեառն են անսպառ այսոքիկ. ոչ մեռայց, այլ կեցից և պատմեցից զողջմութիւնս տեառն յաւիտեան. զի աջ տեառն բարձր արար զիս, և աջ տեառն արար զզօրութիւն. անձն իմ ցնծասցէ 'ի տէր յաւիտեան. և ամենայն ոսկերք իմ ասասցեն, տէր ո՞նմանիցի քեզ.,։

digitised by A.R.A.R.@

Ի՜հաւասիկ ձեզ, ո՛ քրիստոնեայք, զինչ իցէ տեսանել զԱ՜ստուած, զինչ իցէ ապրքայութիւն։ Ի՜անիծն ուրեմն տարփանաց սրտի արժանի իցէ ժառանգութիւնն. զինչ կարծէք, որ ցնծութիւն անպայման, որ զեղումն, որ թառանչք սիրոյն ոչ յուզեսցին 'ի հոգի սուրբ և մաքուր յերան իւր 'ի մարմնոյն և 'ի մուտն յարքայութիւն, 'ի հանդիպման անդ երեսայն Ա՜ստուծոյ։ Ինձ թուի յայնժամ յանձառ հրճուանացն յանհնարին զմայլմանէն ոչ հանդարտել ինչ հոգւոյն, այնպէս այլ յայլմէ եղեալ՝ իբրու արտաքոյ իւր ելանել. ըստ որում և առ մեզ 'ի մեծամեծ յանկարծադէպն պատահեսցէ։ Օ՜ որ օրինակ մայր գորովական՝ իբրու անշուշտ մոռեալ 'ի հեռաւոր աշխարհ զսիրասուն որդին աւուրս բազումս արտասուելով, և մինչ չէ ինչ զկենդանութենէն լուեալ՝ յանկարծակի 'ի տուն իւր ողջամբ հասեալ տեսանիցէ զնա, քանիսն կարծեսցես 'ի սրտին զյուզել խանդիցս սիրոյ մօրն... որ անշարժ անքթիթ զառաջինն, ապա վազեալ գիրկ ընդ խառն... որդեակ իմ... որդեակ իմ... անկանիցի զպարանոցաւն...։ Ի՜նպէս հարուստ ժամանբարբառ, ընդ երեսս միայն հայեսցի. ընդ լեզուին խօսեսցին արտասուք, ընդ բարբառոյն խօսեսցի լուութիւնն՝ լի գորովալից խանդակաթ սիրովն։ Ի՜ինպէտ և անբաւական ևս իցէ օրինակն, սակայն և հոգին յայնժամ յընդառաջել անսահման սքանչելոյն և անբաւ բարւոյն, բնաւ իսկ հիացեալ՝ միայն յաղբիւր անդր դիմեալ անկանիցի անսպառ սիրոյն. քանիսն ձգնեսցի ասել ինչ, և սանձեալ 'ի զեղմանէն, բա՛ւ. միայն գոչեսցէ, Ա՜ստուած իմ, Ա՜ստուած իմ...։ Ի՜սկ ապա լուութիւն... հիացումն... խանդ... յափշտակութիւն... նուաղումն... և բոլոր նաւաբեկութիւն յանդունդս զմայլմանն... Ա՜ստուած իմ, Ա՜ստուած իմ...։ Յայն ապա յանձառելի զրգանն, միանգամայն և յԱ՜ստուած ընկղմեալ, միանգամայն և 'ի միտս եկեալ, արդ տեսանեմ ես, ասէ, զնա. արդ ճանաչեմ, արդ ժառանգեմ 'ի յաւիտեան։ Ո՜վ, քանի օրհնեալ ժամն, յորում 'ի սրտէ դարձայ ես առ քեզ. օրհնեալ և ամենայն վայրկեանքն, յորս սիրեցի ես զքեզ Ա՜ստուած իմ։ Ա՜յդ խնամամ, քանիսն իցեն արժէք նաև կամի արտասուաց վասն մեղացն գործեցելոց. քանիսն և կշիռն պատառի

digitised by A.R.A.R.@

միոյ հայի, զոր 'ի սէր քո ջամբեցի. քանի արժեսցէ և անիրաւութիւն՝ զոր թողի ներեցի իմոց թշնամեաց։ Աստուած իմ և տէր իմ, հզօրիչ իմ և պաշտպան իմ և փրկիչ իմ. "Օ՜ողորմութիւնս քո տէր յաւիտեան օրհնեցից,,։

Այս արդ ասա՛ զքրիստոնեայք, ասա թողում զձեզ, և լռեմ... թողում զձեզ 'ի բոլորք սրտին ձերոյ, 'ի խանդ սիրոյն ձերոյ առ Աստուած, 'ի յիշատակ անձառելեացն վայելից, 'ի գիւտ գերագոյն Աշմարտին, գերագոյն բարւոյն, գերագոյն սիրելւոյն. յորում միայն կատարեալ են կամք, լիացեալ սիրտն, կշտացինդ իղձն. "Արևեցայց երեսաց քոց, և յագեցայց յերևել փառաց քոց,,։ Յուշ ձեզ արարէք, արդարք, յո՛ր փառս անպատումն ածեն զձեզ ձեր առաքինութիւնքդ։ Յուշ ձեզ արարէք մեղաւորք, յո՛ր փառաց անձառից զրկեն զձեզ ձերն յանցանք։

ՄԱՄՆ Բ.

Ո՛վ ողբայութիւն, քանի գեղեցիկ որ անդանօր տուն բնակութեան մերոյ. քանի վայելուչ և օթեվանքն բաղումք 'ի տան հօրն երկնաւորի պատրաստեալ մեզ։ "Որպէս սիրելի են, երգեմ և ես ընդ սիրաբորբոք մարգարէին, որպէս սիրելի են յարկք քո տէր զօրութե,,։ Յիշեցի ես և նուաղեցաւ յիս հոգի իմ. ժամ մի հազար թուի յաչս իմ, մինչև ժամն եղէց ես անդ. "Յանկայ և փափաքէ անձն իմ 'ի գաւիթս քո,,։ Այլ քան 'ի տունն, 'ի տանուտէր անդր աղէտք սիրոյս տուչին. "Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Աստուած,,։ Դու նպատակ ա ռաջին իմոց տենչանաց, դու կենդրոն վերջին իմոց բերկրանաց. "Սիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն առ Աստուած կենդանի,,։ Այս քանզի հոգի և մարմին անդաւնօր 'ի միասին կեանս Աստուած կեցցեն անսահմանս, վասն այնորիկ սիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն, ասէ, առ Աստուած կենդանի։

Աղէ դուք, սիրելիք իմ; հրահանգ 'ի սրբոյն առէք 'ի

digitised by A.R.A.R.@

Դաւթայ զեռանդուն տարփմանն 'ի տեսանել զԱ-
ստուած։ Դիտացէք իսկ քաջ զի և զհովացեալ ցան-
կութեան տեսութեանն Աստուծոյ զտոյժն մեծապէս
տուժեսցուք մեք 'ի հուր մաքրութեան մերոյ նախ քան
զմուտն յարքայութիւն։ Դանդի զիաւրդ կիրք դժպա-
տեհ և ապաշնորհ չիցեն այս հոգւոյս մերոյ, որ ժա-
ռանգքս եմք երկնաւոր հօրն գերահրաշ փառաց. և ոչ
անդուլ յոգւոց հանիցեմք 'ի պանդխտութեանս 'ի հայ-
բենի ժառանգութիւն. "Այ է ինձ, ասէ, զի ընդ
երկար եղև պանդխտութիւն իմ,,. և դարձեալ "Յան-
կամ, ասէ, ելանել 'ի մարմնոյս և մնանել առ Ա-
ստուած,,։

Այս ահա այս հովութիւն մեր վասն երկնից, քաջ
միտ դիր, այս հովութիւն ծնանի 'ի մեզ զսէր դժպա-
տեհ զաղցաւոր կենացս այսորիկ, զահ տարապայման եր-
կիւղին զմահուն, զաւելորդ և զձղձիմ հոգ զբաջող-
ջութեան ապականացու մարմնոյս, և ջան մնոտիավաս-
տակ զանձնդիւրութեան և զվայելից կենցաղոյս, լուց-
կիք և ճարակք հրոյն մաքրութեան։ Այլ այսպիսի ոք էր
Դաւիթ յորժամ ասէր. "Յանկայ և փափաքէ և
նուաղի անձն իմ,,։ Որոգայեալ էր զերկիր 'ի ցանկու-
թենէ երկնից. յաւիշտակեալ կեալ յԱստուած, մե-
ռեալ էր աշխարհի։ "Դուաղեցաւ յիս հոգի իմ,, ա-
սէ։ Դիտէք իսկ, զի որ միանգամ նուաղի, անկանի
յոտնկելեացն, և չզգայ և ոչ ինչ. նուաղէր Դաւիթ և
չզգայր և ոչ ինչ՝ բաց յԱստուծոյ. "Յանկամ և փափա-
քիմ, ասէ. Երբ եկիցէ երևեցայց երեսացդ Աստու-
ծոյ. զայս որպէս յիշէի, ասէ, նուաղէր յիս հոգի իմ.
քաջալերեի զի մոլոր ընդ յարկաւ սքանչելեաց տանն
Աստուծոյ,,։

Ա.յլ զիաւրդ արդեօք, հարցանիցէ ոք, այր Թագա-
ւոր յայնչափ ծուփս կենցաղականս միշտ վառ և բորբոք
զսիրտ իւր ունէր առ Աստուած. զիաւրդ արդեօք։—Ար-
պէս Թռչունք, ասէ, վասն ճաղուցն 'ի խնդիր ելանեն
բունոյ, անդ պահել զնոսա և տածել, մինչև կաղդու-
ցեսցին, մինչև բուսցին փետուրքն, առցեն թեւս, թը-
ռիցեն ընդ օդս. "Դանդի ձնձղուկ, ասէ, եգիտ իւր
տուն և տատրակ զբոյն՝ ուր դիցէ զձագս իւր. այլ ինձ,
ասէ, սեղան քո տէր զօրութեանց, Թագաւոր իմ և Ա-

digitised by A.R.A.R.@

տուած իմ,, ։ Սեղան քո է իմ բոյն և իմ տուն ։ Զի Աստուած և չեմ տակաւին 'ի յերկինս ընդ Աստուծոյ, սակայն կամ ես միշտ ընդ Աստուծոյ 'ի տաճարի նորա. անդանօր առ պատուանդանի սեղանոյն առնեմ զբոյն իմ. անդ ժողովեմ զիս 'ի տուէ, անդ կանխեմ 'ի գիշերաց, անդանօր առաւել մերձ կամ Աստուծոյ իմոյ. անդանօր լսեմ զձայնն. անդանօր սիրեմ խնդրուածս, մաղթեմ հնորհս, ակն ունիմ ողորմութեան նորա. անդանօր ես հանդերձեմ պատրաստեմ ինձ փեսուրս, առնում թէս, պարզիմ 'ի թուիչս, յորժամ ինձ մահն ձայն աւետեաց տայէ վերադարձել 'ի յերկինս։ Որ զիսն խնդրէ, գիտէ զբոյն իմ, անդ զիս գտանիցէ. զի թէպէտ և երբէք ելանեմ ես անտի կամ իբրև կենակից Հնձղուկ 'ի պէտս հասարակաց, 'ի դորմս, 'ի զբաղանս արքունի պաշտամանս, կամ 'ի հոգս առտնին պիտառութեանս իբրու զընդելականն տատրակ. այլ ելանեմ, զի անդրէն դարձայց 'ի նոյն. և անդ միշտ՝ ուր է բոյնն իմ՝ զսիրտն ունիմ։ "Սեղան քո տէր զօրութեանց,, , անդ է իմ բոյն և տուն։ Օ այսօրինակ ահա ես միշտ կամ ընդ Աստուծոյ։

Այս արդ մեք քրիստոնեայք քանի՞ առաւել քաղցրագոյնս և դիւրագոյնս յաջողիցիմք շինել մեզ բոյնս 'ի նեբքս յեկեղեցիս Աստուծոյ մերոյ, 'ի սեղանս և 'ի խորանս սրբութեան նորա, ուր հաւատովք երկիր պագանեմք թագաւորին մերոյ Քրիստոսի Աստուծոյ յաստուածահրաշ խորհրդեան. քանի՞ առաւել սրտեռանդն կարեմք մեք ասել առ Աստուած. ընդունող իմ ես դու Աստուած, հայեաց յերեսս Քրիստոսին քոյ։ Քանզի և անշուշտ քրիստոնեայ եկեղեցասէր՝ որ ստէպ հետևի՞ 'ի տունս Աստուծոյ, և յաճախէ 'ի սեղանս սրբութեան, այնպիսին մեծի հասեալ է հնորհի. քանզի տակաւ տակաւ ընտելանայ ընդ Աստուծոյ,և զտունն նորա իւր առնէ. և օր ըստ օրէ առաւել քաղցրացեալ յեկեղեցի, բերկրի զեղերել ընդ Աստուծոյ. աստի 'ի նմա ծնանի երկիւղ սուրբ, զի մի երբէք ուծասցի 'ի նմանէ մեղաք. աստի մշտափափաք իղձ սրտին թարթափել 'ի վայրն, ուր յորդէ եռանդն առ Աստուած, զի մի երբէք ոլորեսցի 'ի սիրելոյն. "Դրանի՞, ասէ, ամենեցուն, որ բնակեալ են 'ի տան տեառն,, ։

digitised by A.R.A.R.@

Վանզի և արանց աստուածապաշտից և երկիւղածաց չէք ինչ սիրելիք խէթ մնաց առաւել ոգեւոանչ, քան զմնաւ ածել նոցա միանգամ, եթէ ցորչափ կեան, կարէն մեղանչել, և ըստ նմանէն՝ օտարանալ յԱստուծոյ։ Լատի և ցանգ սիրոքն Աստուածոյ մնան կանխելոյ մահուն 'ի շնորհս, զի մի թերեւս վասանգեսցին ինչ կորուսանել զԱստուած։

Ո՛վ քանի ձշմարտութեամբ և քանի փափաքանօք ասէր ոմն 'ի սրբոցն, եթէ "Ի ժամէ աստի յայսմանէ կենացս՝ համբուրեմ ես զձեռնն, յորմէ ակն ունիմ հանելոյ զհոգի իմ 'ի մարմնոյս"։ Արդ երանեալ է այր որ բնակէ աստէն 'ի տան տեառն ընտրեալացեալ ընդ նմա, և օրհնեալ 'ի նմանէ. զի և յաւուր միում անշուշտ վերառցի նա 'ի հովտէս պանդխտութեան 'ի յաւիտենական տունն. "Երանեալ է, ասէ, այր՝ որոյ օգնութիւն իւր 'ի քէն է. ելս եդ 'ի մտի իւրում՝ 'ի հովտէս տրամութեան 'ի տեղւոջ, յորում ուխտեաց. զօրհնութիւն ստասցի որ զօրէնս դնէ. գնասցէ նա 'ի զօրութենէ 'ի զօրութիւն և երևեսցի Աստուած հրեշտակաց 'ի Սիոնի"։ Վանիւն իցէ երանութիւն առն, որ իբրև 'ի զօրութենէ 'ի զօրութիւն այնպէս գնասցէ 'ի Ճանապարհի կենացս յաղթանակ 'ի վերայ առօրէիցս կանգնելով. ոչ գլեսցէ, ոչ կասեսցի 'ի Ճանապահին, ոչ քաղցընդոան ինչ յերկրաւորաց աստի, ոչ հրապոյր յաղցաւորացս երբէք գրժեսցէ նմա։

Արդէն իսկ զբերկրանաց աշխարհի, զպատուոյ փառաց, և զմթերից ոսկւոյ և զամբարտաւանութեան աստի կենաց զփորձն առեալ է իմ, ասէ Դաւիթ 'ի նմին սաղմոսի, քաջիկ գիտացի զամենայն, Ճշգրիտ ծանեայ զաշխարհ։ Արքայս աւադիկ կրկին պսակաց վկայութիւն դնեմ, զի առաւել սիրելի է ինձ անդանօր յերկինս լինել վերջին, քան յերկրի աստ առաջին. անդանօր առաւել առ սեամն կալ, քան աստէն 'ի գահոյս. անդանօր մի օր առաւել 'ի տեսանել զԱստուած, քան աստէն հազարս ամաց վայելել յաշխարհի. "Ընտրեցի ես, ասէ, ընդ աղբ գալ, այս է ընդ անարգս և ընդ վերջինս 'ի տանն Աստուծոյ, առաւել քան բնականալ 'ի յարկս մեղաւորաց. վասն զի լաւ է ինձ մի օր 'ի գաւիթս քո քան զհազարս"։ Օ՜ինչ իցէ մի օրն, և զինչ հա-

digitised by A.R.A.R.@

զարն։ Հարց դու զայն յաստուածիմաստն Աւգոստի-
նոսէ, և ուսուցէ քեզ։ Զի Թէ հրեշտակ յԱստուծոյ,
ասէ, եկեալ առ քեզ ով մարդ, դիցէ առաջի քո հազար
ամն բազմաչարչար ապաշխարութեան, և փոխարէն զմի
միայն օր զտեսութեանն Աստուծոյ, պարտ է քեզ ամե-
նայն իմաստութեամբ ընտրել զհազարն. այնչափ գե-
ղահրաշ, այնչափ անհառելի է միօրեայ տեսութիւնն։

Զի արդ վայր մի ուշիմ լեր, քրիստոնեայ։ Ո՞ ոք
քեզ հազար ամն առաջի եդ ապաշխարութեան, և օր
մի զտեսութեանն Աստուծոյ. ո՞չ ահա տեսութիւն Աս-
տուծոյ առաջի ընծայեմք քեզ յաւերժական 'ի փառս
յաւիտենականս, և ապաշխարութիւն քեզ զսակաւուց
աւուրց։ Զկ դու աստուածայինդ Պաւղոս, եկ իմաստ-
նացո զմեզ լուսաւորութեամբ քո. "Ոչ են, ասէ, ար-
ժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոցն փառաց
որ յայտնելոց են 'ի մեզ. և զի առ ժամայն յաճախու-
թիւն թեթև նեղութեանս մերում՝ 'ի յաւիտենականն
առաւելութիւն զմեծութիւն փառացն գործէ 'ի մեզ.
զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մար-
դոյ ոչ անկաւ, զայն պատրաստեաց Աստուած սիրելեաց
իւրոց,,։ Զի արդ ասա ինձ յանցուցեալդ դու քրիստո-
նեայ, պէ՞տք ինչ իցեն առաւել քան զմի վայրկեան ժա-
մու առ 'ի դառնալ քեզ առ Աստուած կատարեալ զղջ-
մամբդ. քանի՞ քայլս ոտից հասանիցէ քեզ յոգնել
գնալ առ քահանայ ոք Աստուծոյ 'ի խոստովանել, և ա-
սել եթէ հայր զփրկութիւն հոգւոյս իմ խնդրեմ ես. ցոյց
ինձ օր և ժամանակ և եղանակ 'ի սրբութիւն հոգւոյս։
Զրդ առ իմ՞ քեզ այդ դանդաղելդ և յերկարաձգել,
և կալ մնալ օտարացեալ յԱստուծոյ։ Հապա դու ա-
ղի, քաջալերեաց յանցաւոր հոգի. դարձ առ Աստուած.
նա աւանիկ քեզ սպասեալ մնայ առ դուրս արքայու-
թեան, նա աւանիկ և բացեալ իսկ է զդուռնն՝ առնուլ
մուծանել զքեզ, միայն դու կամեաց։ Զաւ 'ի քէն,
մի երկիցես երկիւղ մտոտի. քաւ 'ի քէն, մի յուսահատ
լացցես. "Հաւասիկ, ասէ, զողորմութիւն և զճշըշ-
մարտութիւն սիրէ տէր Աստուած մեր,,։ Ճիկ մեղք,
որում ոչ ներեսցէ, քանզի գթած է. չիկ հնարհ
զոր ոչ տացէ, քանզի հաւատարիմ է։ Հաւասիկ 'ի
նոյն յաւելեալ սաղմոսին, "Օ հնարհս և զփառս, ա-

digitised by A.R.A.R.@

սէ, տացէ Ք՝ստուած. տէր ոչ պակաս առնիցէ զողորմութիւն իւր յայնցանէ, որ գնան յանցածութեան ,, ։ Ի՞նչ յուսա 'ի տէր, և լիցիս դու երանեալ յուսովն. " Տէր Ք՝ստուած զօրութեանց, ասէ, երանեալ է այր որ յուսայ 'ի քեզ ,, ։ Օ՞այս 'ի վերջէ ասէ Դաւիթ, և զսաղմոս իւր զայս զհրաշալին կնքէ ։

Օ՞սոյն սաղմոս նշանաւոր որ 'ի կարգին է ութանեորդ երրորդ, վերծանեցէք դուք ստէպ, նաև 'ի բերան ևս սերտեցէք. սրտառուչ յոյժ է, և 'ի կարձոյ վճարէ. արգասիս 'ի նմանէ առատ կթեսջիք հոգւոց ձերոց ։ Ա՛յլ յորժամ զակն ձեր միանգամ 'ի վեր յառեալ տեսանէք զերկինս պայծառ և զաստեղաց զպարսն, ստէպ յոգւոց հանէք. " Ի՞րպէս սիրելի են յարկք քո տէր զօրութեանց, ցանկայ և փափաքէ անձն իմ 'ի գաւիթս քո ,, ։ Օ՞սոյն սաղմոս յուրախութեանց ձեր աւուրս և 'ի պէս-պէս բերկրանաց յուշ անձին ածէք 'ի զգաստութիւն, և ասացէք, " Լաւ է ինձ մի օր 'ի գաւիթս քո, քան զհազարս բնականալ 'ի յարկս մեղաւորաց ,, ։ Դսկ և 'ի վիշտս մեր և յանձկութիւնս, և 'ի նեղութիւնս պէս-պէս կենցաղոյս, զսոյն սաղմոս դարձեալ յուշ ածէք անձանց 'ի քաջալերութիւն. " Ա՛յլ եդ, ասէ, 'ի հովտէս տրտմութեան 'ի տեղւոջ՝ յորում ուխտեաց, մինչև երևեսցի Ք՝ստուած ,, ։ Դա՛բէ, սիրելիք, յորժամ զնորհ զայն զմեծ՝ որպէս յուսամք աներկմիտ հաւատով՝ տացէ մեզ Ք՝ստուած, զի առ հասարակ մեք ցնծութեամբ երևեսցուք միմեանց անդանօր 'ի տեսանել զՔ՝ստուած, քանի բերկրանօք լիշեսցուք մեք յայնժամ զայս քարոզ և զսոյն սաղմոս ։

digitised by A.R.A.R.@

ԹԱՐՈՒ ԼՈՒ

ՍԻՐ ԱՍՏՈՒԾՈՅ

“Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, յամենայն անձնէ քումմէ, յամենայն զօրութենէ քումմէ, և յամենայն մտաց քոց,,։

Լինէ սիրոյ առարկայն է բարին, և զինչ պէտք էին բանից կամ յորդորակի քարոզել՝ի սիրել զամենաբարին. բայց թէ նիւթ միայն և ճարակ մի՝ի բոց սիրոյն յաւելուլ՝ի սիրտ։ Զայն յասպարէզ կարդայր երբեմն աստուածայինն Եւգոստինոս. ո՞ք, ասէ, սրակնազոյն առաւել և յստակատես առաւել լցէ՝ի մարդիկ, եկեսցէ կացցէ յանդիման. կորովի բբօք ակնկառոյց լիցի յերեսս Աստուծոյ, եթէ ինչ մի՝ի դժպատեհիցն ակնարկեսցէ՝ի նմա, դադարեսցի՝ի սիրելոյ. “Լինէ արատ մի միայն կամ բիծ մի, ասէ, գտանիցեմք՝ի նմա, մի սիրեսցուք զնա,,։ Լինէ անսկիզբն է ծագումն նորա, և ո՞ք առաւել աղնուագոյն կայցէ քան զնա. եթէ անփոփոխ է՝ի սէրն, և ո՞ք առաւել հաստատուն լցէ քան զնա. եթէ անվայրափակ է, և ո՞ք ամենայն ուրեք մերձ կայցէ առաւել քան զնա։ Լուրանօ՛ր դու արտաքոյ նորա գտանիցես միտս առաւել լայնասահման, ձեռս առաւել ընդարձակատարը, մեծազօր բազուկ առաւել կորովի։ Յո՞ այլ ոք ակնարկեսցես երբեք մեծ վայելչութիւն անզուգական առանց պերճութեան. գեղեցկութիւն անչափ՝ առանց գոռոզութեան. բարերարութիւն անսպառ առանց շահախնդրութեան. հաբրստութիւն ամբաւ առանց հպարտութեան։ Ո՞ինչ և այլ կամիցիս լսել. նա է Աստուած. “Այս եմ, ասէ, որ էն,,։

digitised by A.R.A.R.@

Բայլ թերևս կորոյս ինչ 'ի մեծ վայելչութենէն, յա-
ւելոյր 'ի բանսն աստուածայինն Բ. Գոստենոս, յորժամ
ողորմութեամբ խոնարհեցաւ յերկնից հաւասարակից
լինել ընդ մարդկան. "Արդեօք, ասէ, անհաճոյ ինչ
երևեցաւ արծաթասիրացն, զի ոչ ոսկեղէն զգեցաւ մար-
մին. արդեօք անհաճոյ ինչ գտաւ ամբարտաւանիցն, զի
այնպէս համբերութեամբ տարաւ նախատանացն ,, ։
Դարձեալ, "Անհաճոյացաւ ինչ արդեօք փափկասիրացն,
զի այնպէս տուայտեցաւ 'ի տանջանս. կամ թէ չեղև ինչ
ընդունելի վատասրտացն, զի խոնարհեալ 'ի մահ զանձն
մատնեաց ,, ։ Արդ եթէ զայդոսիկ խորհիլ անմոռ-
թիւն է, ասացէք ինձ ուրեմն ՀՀզգրիտ ։ Այս որ միայն է
արժանի սիրոյ ձերում, և ընդէր ոչ սիրէք. և եթէ զնա
ոչ սիրէք, զիաՀրդ իցէ նա միայն արժանին սիրոյ ։ Սի-
ցէք թերևս, եթէ յոչ սիրէն ձեր զՍտուած՝ հրա-
ժարեալ է ձեր 'ի սիրելոյ և զայլ ինչ արտաքոյ նորա ։ —
Վա՛յ, այդ իցէ սպասանն. սիրտ ուրեմն գաղանաց է
ձերդ և ոչ մարդոյ. սիրտ վայրագ, սիրտ անդստին 'ի
ծնէ անընդունակ 'ի սիրել ։ Սակայն վայրապար էն
բանքն, զիտէք իսկ դուք քաջ, և գիտէ Աստուած առա-
ւել քան զամենեսին. զի յայդ սիրտ ձեր ուծացեալ
յարարչէն՝ արդէն իսկ կանուխ մոռեալ զրաւեալ վայե-
լեն արարածք ։ Վասն որոյ և ինքն արդար նախանձու
'ի սրտմտութիւն բերեալ, հարցումն առնէ և զձեր կողմն
ՀՀնէ տալ պատասխանի ։ Բաջին եթէ ընդէր չսիրիցէք
զնա ։ Երկրորդ անգամ՝ ընդէր սիրիցէք դուք զարա-
բածս խոնարհագոյնս յանբաւս քան զնա, և նուազ ար-
ժանիս յանբաւս քան զնա ։

ՄԱՍՆ Ա.

Բայս է աւադիկ, եղբարք, բաւիղ ահագին, անել ։
Այլ ես ահա սպասեալ կամ ձեզ 'ի զնին. զոր թել բա-
նական փաստի 'ի ձեռին կալեալ, անձնապուր ելջիք
դուք 'ի բաւղն աստի ։ Հապա, փորձ զամենայն փոր-
ձեցէք, թերևս 'ի վերջն անՀողոպրելի մնալդ ձեր 'ի
չքմեղս հանցէ զձեզ ։ Տուք պատասխանի. կամ ես ա-

digitised by A.R.A.R.@

ւասիկ 'ի լեալ։ Այրն Աստուծոյ, ասէք դուք, սէրն Աստուծոյ անդէն 'ի յուշ ածելն միանգամ, այո, իղձ իմն վառեալ տնկակից սրտի մարդոյ զարթուցանէ 'ի սիրտ. բայց որ վայրիկ մի խորամուխս զնիւ զայն սէր 'ի դըժուարին յայն պահանջեն զոր պահանջէ նա, 'ի մեծամեծ յայն պարտն՝ զոր 'ի վերայ դնէ, անընդեալ յոյժ գտանէ զնա 'ի գործ անդր, որչափ ինչ չերևեցաւ նմա զառաջինն։ Վանդի այս սէր՝ է սէր տիրող իշխանական և մարտ եդեալ ընդոտնէ 'ի մարդումն զամենայն իսկ զշարժմունս կրիցն։ Աստ սէր ոչ իբրու զմարդկայինն գեղեցիկ արտայայտութեամբք շրթանցն շատանայ կամ հեշտանայ. այս սէր ոչ կամի զբանս, խնդրէ զգործ. խնդրէ զկատարեալ պահպանութիւն օրինացն, և զայն 'ի հնարս օրէնսդրին, որ աներևոյթ կայ 'ի մէնջ. և զայն 'ի մարդոյ որ միշտ 'ի զգայութեանց առաջնորդեալ է և միշտ զհետ երևելեացս զկատեալ է։ Արդ զինչ բռնագոյն առաւել մարդկայնոյս բնութեան, որ ողջոյն հակամիտեալ է 'ի սէր այնմ զոր տեսանէ, և սակայն ցանգ պարտիցի սիրել զայն զոր ոչն տեսանէ։ Հատ է, շատ. լուայ զամենայն. ձեր դժուարութիւնդ որպէս ծանեայ յերկուս ամիսսիեալ կայ յիմաստս. մին հայի յառարկայ անդր, այս է եթէ զաստուած ոչ տեսանէք. միւսն յենթակայ անդր, այս է եթէ 'ի տեսանելին հակամիտեալ է ձեր։ Այլ զայն ապրասցուք յառաջնոյն։

Ոչ տեսանէք զԱստուած. Թող այնպէս լիցի առ ժամն. սէր նորա ուրեմն բռնակա՞ն իցէ բնութեանս որ 'ի զգայութեանցն առաջնորդի։ Այուտ է և ամենասուտ, բողոք հարկանէ աստուածիմաստն Աւգոստինոս. "Գովէն, ասէ, զմարդ. և 'ի բացակայութեանն սիրեն զմարդ, յորժամ գիտեն զի անսուտ և անխաբ է բերան գովչին որ բարեհամբաւէ զնա„։ Գարձեալ քանի՞ արանց հոյակապից զիղձն վառէ 'ի մեզ ոչ ներկայութիւն դիմաց նոցա, այլ գիտութիւն գործոցն նոցա։ Վանի՞ն է մեր հիացումն ընդ նահատակութիւնս սուտս ստոց դիւցազանց բանաստեղծիցն, և քանի՞ ողբակցութիւն մեր ընդ աղէտս նոցա ստայօդեալս յողբերգակ քերթողաց։

Աստուածիմաստն նոյն այր նրբագոյն ևս յաւե-

digitised by A.R.A.R.@

լեալ՝ի բանն, «Լա մանաւանդ, ասէ, որ ինչ անե-
ւևոյթ է աչաց, զայն առաւել սիրեմք։ Անպի յայտ
է, զի առաւել սիրեմք զնեղբին մարդն, քան զարտա-
քինն»։ Ոչ ահա յընդհանուրս առաւել ակն ածէն մար-
դիկ բարեմանութեանց հոգւոյն որ ծածկեալ կան, քան
ձրից մարմնոյն. առաւել յարգէն զկորովութիւն մտացն
քան զզօրութիւն բազկին. առաւել զգեղեցիկ խելն
քան զգեղեցիկ դէմն, առաւել զսիրան բարեյօժար քան
զձեռն փայփայիչ։ «Յայտ է ուրեմն, եթէ քան զար-
տաքինն, զնեղբին մարդն առաւել սիրեմք»։ Զինչ
ապա, ասէ ասացէք, զինչ իցեն քանքարտանքդ, եթէ
Աստուած մեր անեւևոյթ է, յորժամ դուք՝ի մէջ ե-
ւևելեացդ զնուազ երևելին առաւել սիրէք։

Աւլ քաւ, չէ Ճշմարիտ եթէ ոչ տեսանեմք զԱս-
տուած, քաւ։ Զի՞նչ ինձ կեղծեցէք, որ բազում ան-
գամ պատահէ։ Արդի մի յարբունս հասեալ, որ երբէք
զերեսս հօր իւրոյ չիցէ տեսեալ, այն որ՝ի հայրենեացն
այլուր մեկնեալ իցէ՝ի տղայութեան որդւոյն՝ի խանձա-
ռուրս. այլ անդուստ հայրն յուշ ածեալ հանապազ զոր-
դին եթէ սիրալիր նամակաբն իցէ, եթէ պարգևաբ ընդ-
ծայիս, եթէ արծաթով, գգուեսցէ զնա՝ի հեռաստա-
նէ. և առ հասարակ՝ի գիտողացն հարցեալ զողջունէ
որդւոյն, զցայգ և զցերեկ զբաղցր անուն զսիրեցելոյ
զաւակին՝ի բերան ունիցի։ Արդ ասացէք ինձ աղա-
չեմ, մանրթ ինչ իցէ որդւոյն, Ճնշել զարտասուսն առ
՝ի գթոյն, քանիցս անգամ զակն արկեալ՝ի գրաւա-
կանն հայրենի սիրոյն, հայեսցի՝ի նամակն, յընդ-
ծայն, յարծաթն։ Այլ եթէ ոք զարտասուալից զաչսն
տեսեալ զորդւոյն, զի՞ քեզ, ասասցէ, զի՞ այդչափ ըղ-
ձակերտ լինել քեզ՝ի հայր մի, զոր բնաւ չէ քո տե-
սեալ։ Ո՛հ, բաբէ, և զիարդ, կրկնեսցէ երախտագէտ
որդին, զիարդ հնար իցէ չտեսանել զնա յայն ամենայն
զոր առ իս ցուցանէ։ Ինորա սիրտն տեսանեմ ես՝ի
գրիչն նորա, զնորա ձեռն տեսանեմ՝ի շարագծածս նո-
ցա, յընծայս պարգևաց նորա, յարծաթն նորա. առէք
բարեկամք ընթերցարուք միանգամ զոր առ իս գրէ,
հայեցարուք զոր ինձն առաքէ. և ապա ասացէք ինձ,
իցէ՞ երբէք հնարաւոր՝ի գործել այլ Ճշգրիտ կենդանա-
գիր զբաղմագութ և զանձկալի հօր։

digitised by A.R.A.R.@

Լա՛ արդ, վա՛շ. այսպէս ուրեմն լինի տեսանել զսէր երկրաւոր, և միայն առ Աստուած խաւարաւ մթագնին տեսանելիք. զի և ոչ հետք անգամ նշմարին նորա առ 'ի տեսանել զնա. "Ի ծովու են ճանապարհք քո, ա՛սէր և լայր աստուածային մարգարէն, 'ի ծովու են ճանապարհք քո, և շաւիղք քո 'ի ջուրս բազում, և հետք քո ոչ երևին,,։

Հապա քրիստոնեայք ցուցէք ինձ օր մի, ժամ մի, յորում զշարագծածս սիրոյ իւրոյ ոչ առաքեսցէ ձեզ Աստուած 'ի միսիթարութիւն, և կամ պարգևօք իւրովք ոչ զգուեսցէ զձեզ։ Ասացէք ինձ, ո՞ ստեղծ զձեզ, ո՞ տա՛ծէ, ո՞ սնուցանէ, ո՞ յաւաստանի պահէ զձեզ, ո՞ ինամ տանի զձեր, զզաւակացդ, զգերդաստանին. "Միթէ ո՞չ հայր մի ամենեցուն, հարցանէ Աղաքիաս, միթէ ո՞չ հայր մի ամենեցուն, միթէ ո՞չ մի Աստուած ստեղծ և ծնաւ զմեզ,,։ Լա՛ ապա յայսչափ բազմադէմ օրինակս և 'ի տիպս բարերարութեանցն տակաւին չնշմարէք զԱստուած, զբազմազեղ և զբազմագութ հայրն։ Ընտեսանէք զսիրտն, զձեռնն 'ի հայրական խնամն նորա. միթէ ո՞չ հայր մի ամենեցուն ծնաւ զմեզ։ Լա՛ արդ եթէ այնչափ երևելի է հայրութիւն նորա, զիա՞րդ ապա մարթի իցէ աներևոյթ ասել զԱստուած։—Ո՞չ տեսանէք զԱստուած։ Լա՛ զիա՞րդ կայցեն բանքդ ձեր այդ, յորժամ դուք ինքնին ասացէք ինձ բազում անգամ, եթէ տեսեալ է ձեր զնա. այո՛ քրիստոնեայք, դուք ինքնին ասացէք զայդ. 'ի ձէնջ լուեալ է իմ 'ի ձէնջ գիտեմ զայն։ Արիք դուք ինձ զնեցէ՛ք պատահար մի։ Հուր աւասիկ վառեցաւ 'ի սրտմտութեան բարկութեանն Աստուծոյ ընդդէմ առն այնորիկ մեղաւորի և ամբարշտի, և ինդրեաց 'ի սպառ աւար հարկանել ողջոյն զտուն նորա զփարելին յանդիման աչաց նորա. սրածութիւն և մահունս առաքեաց նմա 'ի քաղաքի, մրրիկ դիւաշունչ յանդս նորա 'ի դաշտի, նաւաբեկութիւնս ահագինս վաճառաց նորա 'ի ծովու. զսերմանիսն յաղարտ վարեաց, զհունձն 'ի հուր դատեաց, զծառն արմատաքի խլեաց, զորթն և զայգիս յապականութիւն կարգեաց։ Իսկ ապա յետ այսր ամենայնի ամբարիշտն այն այր յափշտութեան իւրում բանայ զաչսն, և ընդ Փաբաւոնեանցն զարհուրեալ ասէ. "Ո՞ան Աստուծոյ է

digitised by A.R.A.R.@

սա ,, . քանզի տեսանէ յայնժամ ակնեալ զձեռն Աստուծոյ . անդուստ և բարեկամք առ հասարակ , ընտանիք առ հասարակ յապշութիւն պարտեալք զնոյն ասեն . զնոյն և դրացիք առ հասարակ և թաղն ողջոյն քաղաքին զնոյն կրկնեն . “ Սատն Աստուծոյ է սա ,, . և իւրաքանչիւր 'ի ձէնջ տեսանէ յայնժամ զձեռն Աստուծոյ ։ Բա՛ռք . զինչ է բանդ . զինչ գործէք քրիստոնեայք . տեսանե՞ք ձեր ուրեմն զձեռն Աստուծոյ , որ բառնայ , և ոչ տեսանել զձեռնն որ տայ . տեսանե՞լ զնա , յորժամ հարուածէ , և ոչ տեսանել զնա , յորժամ փայփայէ։ Տեսանէք դուք զձեռնն , և խորշիք իբրու 'ի թշնամւոյ , և ոչ տեսանէք զձեռնն մատել համբուրել իբրու զբարերարի ։ Զո՞ւթ այնչափ իցեն ձեր աչք 'ի տեսանել զնա 'ի գութ սրտին ձերոյ , որչափ են 'ի տեսանել զհրաշինեալ ձեռնն նորա ։

Լա՛ւ արդ աղէ համարեաց դու , եթէ անդ 'ի սկզբան արարչագործութեանն Աստուծոյ կացեալ էր ոք առընթեր արարչին 'ի պահուն՝ յորում առնէր նա զաշխարհ , յորժամ զուարճացեալ էր Աստուած զտիեզերս բովանդակել . և հիացեալ ընդ չքնաղ տուն բնակութեան աշխարհի զոր պատրաստէր Աստուած , հարցանէր զիտել յԱստուծոյ , ո՞ արդեօք եղիցի բնակիչ այսչափ հոյակապ տանն . “ Ցեր ո՞վ կացցէ 'ի խորանի սոյն կամ ո՞ բնակեսցէ 'ի սմա ,, . և լուեալ եթէ մարդ , դուշեսցէ . բա՛ռք , մա՞րդ բնակիչ սորա հանդերձեալ է լինել , զորոյ այսչափ զարդարեաց զտունն , և այսչափ չքնաղ զյարկս նորա . զինչ ուրեմն ասասցէ այն մարդ՝ յորժամ 'ի գոյ ածեալ 'ի քէն , մտցէ բնակեսցէ 'ի տուն իւր յայս . զինչ արդեօք գործեսցեն ապա ծնունդք և զարմն մարդոյդ այդորիկ բնակեցուցեալ 'ի քէն 'ի հոյակապ յայս յարկ , առաստաղ ունելով այսչափ լուսափայլ և յատակ այսչափ սքանչելի ։ Ա՛վ անշուշտ 'ի թափոյ բերեալք երախտագէտ ըղձանաց սրտի , հաղք և որդիք յայնժամ առ հասարակ յայսկոյս յայնկոյս ընթասցին ցանգ զկնի հետոց քոց արարչին իւրեանց . և բիւրիցս անգամ յաւուրն ամ բարձցեն յերկինս զձեռս իւրեանց առ քեզ . և զբազուկս իւրեանց կարկառեալ յամենայն երևելի արարածս գիրկ ընդ խառն լինիցին ընդ նոսա , իբրու փափաքեալ անձկանօք 'ի տուրսն ընդ տուողիդ զրկախառնիլ։—Պատաս-

digitised by A.R.A.R.@

խանի տացէ Աստուած. Եւ այդպէս, խաբիս ո՛վ դու։ Զառաջինն յորժամ 'ի գոյ ածեալ զմարդիկդ՝ կամեցայց ես փորձ մի փորձել զերախտագիտութեան նոցա, յանցանս ինձ ընդդէմ փոխարինեսցէն նոքա. ոչ զգուշասցին 'ի սեր իմ անձնապահ լինել 'ի մի միայն պտղոյն անդամ՝ զոր արգելուցում ես նոցա ուտել, և ստունգանեսցէն պատուիրանի իմում։ — Ա՛յ անագորոյնք, այ ուխտադրուժք և ապաշնորհք։ Իսկ դու ո՛վ տէր և արարիչ այդչափ սաստիկ անարգեալ 'ի նոցանէ՝ ո՞չ ինչ ցանուցուս անդէն 'ի պահուն զկուռ հաստուած տիեզերաց 'ի գլուխ դոցա կործան տապալել ողջոյն։ — Դա՛ւ, մի լիցի, ես յայնժամ կարեկից 'ի գութ շարժեալ ապաշնորհիցդ այդոցիկ, հաշտարար ջատագով մտից նոցա փոխարէն, երաշխաւոր առ Աստուած հայրն իմ երկնաւոր։ Եւ քանզի ոչ Աստուած լոկ կարէ չարչարիլ, և ոչ մարդ լոկ կարէ հատուցանել և քաւել. եղէց ես Աստուած և մարդ բնական ասպնջական երկաքանչիւրոցդ պաշտամանց, զգեցայց մարմին չարչարելի, և յանմեղ մարմնի իմում առիւ զանձամբ զ յանցանս մեղանչականին։

Դայց դու լուր ինձ և զեղանակն, եթէ արդեօք զամենայն գութ սիրոյն միանգամայն 'ի նեբքս բերիս։ Զ՝ 'ի ըղձակերտս զիս առնել քաջազգեաց մարդկան և աւագորերոյն, ծնայց ես յարքայազարմ շառաւիղէ. իսկ առ 'ի սիրելի լինել ռամկին, եղայց ես յայրի ուրեք 'ի մնուր անբանից։ Իսկ փարելի առ մեծամեծս, ածեալ ձգեցից զաղքայս առ 'ի շուք որոշանին իմոյ։ Իսկ առ 'ի զիջանել խոնարհել առ փոքրկունս, կացից մանուկ 'ի մէջ հովուացն դասուց։ Եւ քանիպատիկ 'ի կերպարանս կերպարանս գիտիցէ փոխել զանձն ոք 'ի սիրողաց, կամիմ զամենայն միանգամայն յանձն իմ գրաւականել. ընդ նժդեհս և ընդ պանդուխտս փախստեայ գնացից ես Յ՝գիպտոս. ընդ արուեստագիտացն վաստակեցայց ես քրտնաբեկ 'ի գործատան հիւսան. ընդ ձկնորսսն թարթափեցայց 'ի յորսս ձկանց, ընդ մուրիկս 'ի մոյրն. 'ի շնորհս գիտնոցն խնաստնոց բացից ես դպրոց 'ի տաճարին. և վասն գռեհկացն և անուսից նստեալ դաս տաց 'ի լերին. և ուր ուրեք խնդրեսցէն զիս, անդր վաղվաղակի դիմեցից յամենայն իսկ 'ի պէտս և 'ի կա-

digitised by A.R.A.R.@

բիս. աչք եղէց կուրաց, և ոտն կաղաց, և առաջնորդ մոլորելոց։ Եւ իբրև այսպէս ընդ մարդկան շրջեցայց յերկրի կեանս վարեալ զամս երեսուն և երիս, բարի առնելով ամենեցուն և բժշկելով զամենեսին, մասնեցեալ զանձն իմ չարաչար և դառն տանջանաց 'ի դուռ և 'ի սեր նոցա և մեռայց ևս կախեալ զփայտէ։

Եվ անձառիցն. բա՛ր է անշուշտ յայնժամ յարիշտակեսցին մարդիկ յայնչափ գթոյն, և հիացեալք հայեսցին նոքա 'ի սեր քո։ — Ա՛նսա, մի և յայնժամ ակն կալցիս։ 'Զոքա իբրև 'ի խայծէ իմմէնէ 'ի հրապուրեալ առարգ շահու ձգեալ յայնժամ, կամ թէ 'ի փայլուն օտարին գեղոյ խոտղեալք, թիկունս ինձ դարձուսցեն իբրև տմարդիս, և ուծացեալք 'ի սպառ իբրու բնաւ իսկ չճանաչել զիս։ Եվ Ա՛ստուած, ո՞ր հրեշք ապաշնորհք ի՞նչն զոքա երբէք. յո՞ր գաւառ խստաշունչ սառամանեաց, յո՞ր երկիր, յո՞ր աշխարհ բարբարոսաց, ընդ որո՞վ անիծեալ երկնաւ 'ի վեր բուսան մարդիկդ այդ առանց սրտի։ Եւ դու մեծ Ա՛ստուած, որ այժմէն իսկ նախատես ես յառաջագիտութեամբ ամբարշտութեան դոցա և այդչափ ապառում կրիցն, յա՞նձն առնուցուս ստեղծանել զդոսա և փրկել ևս զնոսա այդչափ ծանրագնի։ — Եւ զի՞ է քեզ, ո՛վ դու, խոչ ընդ ոտն կալ ինձ եթէ սիրեմ ես զնոսա. զի՞նչ, կամիցիս թերևս իշխան օրինադիր լինել սիրոյն. "Եւ 'ի սեր յաւիտենական սիրեցի և սիրեցից զնոսա"։

Ա՛ռդ ասացէք ինձ քրիստոնեայք, եթէ երբէք դուք անդ պատահէիք, յարարչագործութեան աւուրն առ ընթեր Ա՛ստուծոյ, 'ի խօսել և 'ի լսել յաղագս մարդկանդ այդոցիկ հրեշից, ապաշնորհից, ո՞չ իսկ և դուք ինքնին 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեալք ընդդէմ դոցա. և եթէ ոք ասէր ձեզ յայնժամ, եթէ դուք ինքնին էք ահա մարդիկդ այդոքիկ, ունկն դնէիք երբէք, հաւատայիք երբէք։ Եւ սակայն, բա՛ր է. ո՛վ բռնութեանս, հաւատալ անձանց ձերոց ստիպիք և ընդ անձին ոգորել, եթէ քաջ իսկ դուք էք մարդիկդ. "Դու ես այրն այն, դու ես այրն այն" գոչէր Նաթան։

Եւ այս աւադիկ, քաջ միտ դիք, վասն այնորիկ զի այնչափ բաղում մնասամբք և բաղում օրինակօք երևի ձեզ Ա՛ստուած, և դուք երբէք չհոգայք ինչ ամբառնալ

զաչս 'ի տեսանել զնա։ Զ.Վեպէտ և իրաւ երախտագիտութեան չպակասէ ձեզ, սակայն պակասէ փոյթն. նա ոչ և փոյթն պակասէ, այլ զամենայն փոյթ դուք առ մարդիկ 'ի գործ վարէք. յայն ոչ հայիք զի 'ի նոցա ձեռն ջամբէ տայ ձեզ Աստուած։ Ի դէպ եկեալ հանգուցանատիպ ապաշնորհ ումեք ծառայի, որ պարգև մի տեսեալ յանուն տեառն իւրոյ առաքեալ առ ինքն, զամենայն շնորհակալիսն 'ի լրութենէ սրտի արասցէ պարգևաբերին, 'ի մռայլոնս 'ի սպառ դարձուցեալ զպարգևատուն։

Այս եթէ երբէք երախտագիտութիւն 'ի ներքս բերէք առ բարերարս 'ի մարդկանէ, Ճանաչելով զձեռն զբաղմաղեղ պարգևատուին, բաղումանգամ զնոյն ցուցանէք դուք առ Աստուած, որ ինչ պատահեցաւ Տոբիթայ ծերոյն և Տուբիայ որդւոյն 'ի դէպս բարերարին իւրեանց հրեշտակին։ Զիտէք իսկ քաջ զպատմութիւնն, յետ 'ի գլուխ հանելոյ Տուբիայ զերջանիկ ուղևորութիւնն ընդ հովանեաւ անմարմին առաջնորդին, խորհուրդ հարցանէր Տուբիա ցծերունի հայրն, "Հայր, զինչ վարձս տացուք առնս այսմիկ, կամ զինչ արժանի հատուսցուք երախտեացն"։ Ա՛ս այս այր՝ իմ ուղեկից և առաջնորդ, զիս ողջամբ ած առ քեզ. սա զքոյ աչս ամ հայր իմ եբաց. սա ինձ որդւոյդ հարսն պատրաստեաց, սա զարծաթն որ մեզ պարտէր ողջիկ հոգացաւ, սա և մեր կենայ զցայդ և զցերեկ յամենայնի խնամկալաւ. զինչ տացուք զինչ հատուսցուք երախտեացն։ Հապա, զկէս ամենայն գոյիցն զոր բերաք, առցէ դա։ Ա՛ռառնեցաւ յայնժամ անմարմինն 'ի գերաշխարհիկ իւր կերպարանն. Զողէք անդր 'ի բաց, ասէ, զբաներդ. չէն ինձ պէտք և ոչ իմիք. ես հրեշտակ եմ Աստուծոյ, "Այս եմ Ռափայէլ"։ Ա՛մբէ, հրեշտակ. հրեշտակ արքայութեան, հրեշտակ Աստուծոյ. "Այս խռովեցան, և յահի եղեալք անկան 'ի վերայ երեսաց իւրեանց յերկիր"։

Այս արդ եթէ այսչափ խռովութիւն նոցա 'ի Ճանաչել հրեշտակ զբարերարն իւրեանց զոր ցայն վայր մարդ կարծէին, ձեր քանիսն հիացումն քանիսն խանդ ոչ վառեսցին 'ի սիրտս ձեր, անդէն և անդ 'ի բանալ հաւատոցն զաչս մնաց 'ի Ճանաչել յամենայն իսկ արարածս զծածկեալն 'ի նոսա զերախտիս արարչին։

digitised by A.R.A.R.@

Զեզ բառ և ձայն շնորհակալու սրտի չէ բաւական յարտայայտել զձեր իրձն առ ոք յիշխանաց, առ ոք յաւ տենակալաց, որ պաշտպան կացին ձեզ 'ի կարիս ձեր. առ ոք 'ի փաստաբանից, որ քրտնեցաւ ջատագով եմուտ դատին ձերոյ. առ ոք 'ի բժշկաց, որ խնամ տարաւ ձեզ և ապաքինեաց 'ի դժուարին ախտէս։ Օ՜ինչ տացուք սոցա, ասէք դուք ստէպ, զինչ հատուցուք սոցա։ Այլ է. եղերուք երախտագէտք, եղերուք առատատուրք. բաւ բի է բանդ։ Այլ սակայն յուշ. քաջ միտ դիք, մի փոխանակէք զ Աստուած ընդ մարդկան։ Ոչ այլ ինչ են մարդիկ, բայց լոկ վերհազունին գործիք ձեռին, որ ջամբէ ձեզ միջնորդաւ նոցա։ Հաւասիկ Աստուած, որ յանդիման կայ. ոչ ճանաչէք. "Այս տեր, ասէ, ես առնեմ զամենայն. ես տեր, ես արարի զամենայն"։ Այս Աստուած զսիրտ և զմիտս զիշխանին զայնորիկ, զատենակալին զայնորիկ, շրջեցի 'ի քո կողմն, 'ի քո պաշտպանութիւն։ Այս Աստուած զսիրտն ամենեցի զմեծատանն զայնորիկ վասն քո, ես ազդեցի նմա թողուլ քեզ բաժին 'ի գոյիցն։ Այս Աստուած ես բաղմացուցի քեզ զեկամուտդ, ես էի 'ի հողմունսն յայնոսիկ 'ի վարել սղջամբ գնաւ վաճառացդ. ես յանձրևան և 'ի ցօղն շայեկանսն 'ի պտղաբերութիւն արգաւանդ անդոցդ. ես 'ի բարեբուն յարեգակնդ և ջեռան և հասունացան քոյին հունձք։ Այս ոչ ինչ արարի վայրապար. ես զքեզ ինքն ունէի ուշ նպատակին իմոյ 'ի կառավարել իմում զերկինս, 'ի շրջել հոլովել իմում զփոփոխմունս եղանակացն. "Այս տեր, ես առնեմ զամենայն, ես արարի զամենայն"։

Այլ արդ ձեր այդչափ առատաձեռն, այնչափ շնորհակալու առ արարածս գտեալք, զմի լիութիւն, զմի զեղումն սրտի փոխարինեք արարչին։ Ո՜վ, մեծապէս են յանցանքս, մեծապէս է նշաւակութիւնս. և սակայն անշուշտ է ճշմարտութիւնն, եթէ Աստուած ինքնին եղև և է հանապազ ընդ մեզ ինքեանս. և 'ի դէպսն և յարկածսն և 'ի յաջողութիւնսն՝ ինքն ձեռն ետ, ինքն եկաց զօրավիգն, ինքն պահեաց, ինքն ապրեցոյց. և տակաւին ճանաչեմք զնա։ Ամն հնար ինչ իցէ առաւել քան զայս տեսանելի երևելի լինել, և մեզ հնար իցէ առաւել քան զայս կոյրս և զաչացուս։ Անշուշտ մեծապէս է ամենն։

digitised by A.R.A.R.@

Լայց թուի իմն առ 'ի ձէնջ ընդդէմ ինձ դնել, եթէ մեծ է տարբերութիւնն ընդ տեսութիւն արարչին և ընդ տեսութիւն արարածոյն. քանզի արարածականքս իբրու ողջոյն զգալիք ոմանք, ոչ միայն խոտղէն զաչս ե-ռևմտեալքն, այլ և զսիրտն յինքեանս յանկուցանեն հրա-պուրիւքն. Է՛ զի օգտակարաւն, Է՛ զի բերկրականաւն։ Իսկ զինչ բերկրական բնութեանս կամ զինչ շահ օգտի 'ի պէտս կայցէ 'ի խնդրել տեսանել զՍ՚ստուած հանա-պազորդեանդ այդ ձգաւքք նեղքին աչացն, որ խանջեցու-ցանէ զմիտս և զխորհուրդս, և ոչ յանկուցանէ զիղձս։ — Լ՚ս ոչ վայրապար գլխովին ասացն բանքն, սաստէր Ս՚ս-գոստինոս. „Միթէ մարմնոյ զգայութիւնքդ, ասէ, ունիցին զիւրեանց նրբազնին տեսութիւն, և հոգին ան-բաժ լքեալ կայցէ յայնմանէ։ Միթէ պակասիցին առ Ս՚ստուած բերկրականքն, միթէ պակասիցին վարձք հա-տուցմանն առ որդիս իւր։ Ս՚ղէ զակն միանգամ, արա-րածք, յառեցէք յարարիչն, յանսահման բարութիւնն. նոյն Ս՚ստուած որ 'ի պատճառս միայն երախտեացն ա-րարելոց բաւական էր ամենայն իրաւամբք պահանջել զսէրն մեր առ ինքն, նոյն ինքն հրաւիրակ 'ի նոյն կար-դայ ձեզ նաև 'ի խայծ հանդերձելոցն վարձուց մրցանա-կաց։

Լ՚ս քանզի գտանէ զմեզ սաստկագոյնս կապեալ 'ի բարիս երկրաքարշս, առաջի ընծայէ յանձառելեաց ան-տի վերնական բարեացն, որ քան զմիւս 'ի վեր են և քան զչափ և զսահման գերազանց. "Ս՚րբեացին, ասէ, նոքա 'ի պարարտութենէ տան քո, և զուրախս փափկու-թեան քո տացես ըմպել նոցա „։

Ս՚րդար է, ասիցէք ինձ, սակայն սաստիկ է բռնու-թիւնն ընդդէմ կամաց բնութեան թողուլ լքանել զա-ռաջիկայ բարին, յոր վայելեն զգայութիւնքս 'ի պատ-ճառս ապագայ բարւոյն, զոր խոստանան հաւատք մեր։ — Ս՚յդ ասցէ բռնութիւնն, զոր ասէք. իսկ զիարդ ապա զոր ամենայն գործէք դուք զբռնութիւնդ։ Լ՚թէ այնչափ սաստիկ է բռնութիւնն թողուլ լքանել զառա-ջիկայ բարին 'ի շնորհս ակնկալեալ բարւոյն, զիարդ ա-պա մշակ սերմանացան արկանէ յանդս զցորեան իւր պատուական, յուսով ակնկալեալ անստոյգ հնձոյն զկնի ամսոց բազմաց։ Զիարդ ապա և նաւաստին հատա-

նէ անցանէ ծովս այնչափ, զիաՀրդ և զինաւորն նահա-
տակեալ մնանէ յայնչափ մարտս պատերազմի, առ 'ի
զբռամբ ածել (սակայն Աստուած ինքնին միայն գիտէ
երբէք յաջողեսցի, կամ երբ արդեօք). մին զաստիճան
աւագութեան բարձին, միւսն զշահավաճառս զօտար
աշխարհաց։

Այլ զիաՀրդ ապա և դուք ո՞վ մարք 'ի զրկաց ձերոց հա-
նեալ զսիրասուն որդիս ձեր, և առեալ առաքէք 'ի հե-
ռաւոր քաղաքս և յաշխարհս, կամ 'ի պէտս վարժից
ուսմանց, կամ 'ի գիւտ ճարտարութեան արուեստից.
զի հրահանգեալ նոքա այնպէս ընկալցիք ապա յետ բաղ-
մաց զնոսա առ ձեզ բարեկիրթս և գիտունս և ճար-
տարս։ Արթ իցէ ուրեմն քաջալերութեամբ սրտի
հրաժեշտ տալ յառաջիկայ բարւոյն առ յոյս ակնկալու-
թեան ապագային, թէպէտ և սակաւատեւ իցէ, թէ-
պէտ և անստոյգ, թէպէտ և ծաղկընկէց։ Իսկ արդ չի-
ցէ՞ մարթ ժուժկալել վայր մի 'ի բերկրութեանց ինչ
ումպէտից, 'ի շահախնդրութեանց ինչ դուշնաքէից, ան-
շուշտ գիտելով զանխաբ խոստումն զանվախճան և զան-
պատում վարձուցն առ Աստուծոյ. ժուժկալել ընդ ամ
սակաւօրեայ կենաց մերոց վասն անանցական և անդրա-
ական ամացն։ Այլ սակայն քաջս լերուք. և ոչ այնչափ
ինչ ժուժայ զանդաղել Աստուած. նա առաւել ինդրեմ
տալ, քան եթէ դուք առնուլ, և թէպէտ ցանկացեալն
մեր այն արքայութիւն յաւերժական չէ յաստի կեանս,
այլ 'ի հանդերձեալն, սակայն և յաստիս բազում ան-
գամ բնաւորեցաւ ամենաբարին ցօղս իմն և ճաշակս
կանուխ այժմէն զարքայութեանն զայնորիկ սրսկել 'ի
մեզ քաղցրաճաշակս և անմահականս 'ի սիրոյն իւրմէ։
Այս է զի չև քո 'ի գլուխս հանեալ զիՀզ փափաքանացդ
տալ նմա զգրաւական սիրոյդ յայն ինչ նուիրումն սրտի,
յայն ինչ դէպս ժուժկալութեան քո, նա զիՀզ միայն
փափաքանացն ընկալեալ փոխարինէ զՀատուցումն։ Ո՞վ
անձառ պարգևատուին։

Լուեալ իսկ է ձեր զմեծն զայն ողջակէզ զաբրահա-
մեան. ո՞վ ողջակէզ անհամեմատ սիրոյն առ Աստուած։
"Փորձեաց, ասէ, Աստուած զԱբրահամ և ասէ. Ա-
բրահամ, արի առ զորդիդ քո միածին, սիրելի, զոր սի-
րեցեր զԻսահակ. եկ դնա դու 'ի տանէդ յերկիր հեռի,

digitised by A.R.A.R.@

և հանցես զնա ինձ անդ յողջակէզ ,, ։ Ո՛վ դժուարընդել պատգամին , ո՛վ անտանելի կրիցն ։ Լսէ Ա.բրահամ, վազէ սիրտն , մաքառի բնութիւնն , և մինչև 'ի խորոց անտի խնդրէ փլուզանել զծով խորհրդոց արդարոյն ։ Բայց Ա.բրահամ անհնարին սիրէ զԱ.ստուած 'ի վեր քան զամենայն . անսասանելի կայ . և այն ինչ շողացուցեալ զսուրն 'ի վերայ պարանոցի սիրելւոյն , զիղձ միայն փափաքանացն ընդունի Ա.ստուած . շատ է ինձ .քո անձուկ սիրոյն , “ Ա.բրահամ Ա.բրահամ, մի մեր զձեռն քո 'ի պատանեակդ , մի առներ նմա չար ,, . շատ է այդչափ . զիտացի եթէ սիրող ես դու Ա.ստուծոյ ։ Վանիւն էր յայնժամ մսիթարութիւն արդարոյն 'ի սէրն Ա.ստուծոյ , զի քան զորովագութ հայր՝ եկաց նա անզարհուրելի .քահանայ . քանի զեղումն բերկրութեան սրտին 'ի պահել առ իւր զսուր հայրենին 'ի յաւերժական յիշատակ Ա.ստուծոյ ողջակիզին ։ Վանիւն յետ այնորիկ և քաղցրութիւն հայրենի գթոյն , քանիցս անգամ դառնայր հայեր 'ի սիրելին իւր Խսահակ ։

Դարձցուք և մեք հայեսցուք 'ի մեզ ինքեանս . և չիցէ այս բերկրութեան զեղումն 'ի սիրտ արդարոց յամենայն իսկ 'ի նուիրմունս վասն Ա.ստուծոյ ։ Վանզի է՛ բաղում անգամ զի և նոցա ձայն կարդայ Ա.ստուած . “ Ա.ռի առ դու զդա , զոր սիրեցեր , և հան ինձ յողջակէզ ,, ։ Լաւ մեկնեաց դու 'ի տանէդ յայդմանէ , շնորհեա ինձ զայն ոք . հան ինձ 'ի զոհ զպարապումդ զայդ և զքանդ յայն ինչ դէպսն ։ Լսեն արդարք զդժուարին ձայնն . դղրդի բնութիւնն , կան նոքա անսասան . Ա.ստուած է որ հրամայէ , ժրանան 'ի կատարել ։ Սա՛բէ երջանիկ ժրութեանն ։ Իսկ մինչդեռ 'ի կատարելն կարծեն նուաղիլ 'ի սրտի , անդէն 'ի լուագոյն կեանս զգան նորաստեղծեալ յԱ.ստուծոյ ։

Կարձեցան աւադիկ ամբոխմունք կրիցն , ընդոտնեցաւ զգայութիւնն , լռեաց քրթմնջիւն բնութեանն , կատարեցաւ հրամանն աստուածային , յաղթեաց սէրն ։ Մենանայ այնուհետև հոգին 'ի խորս իւր ներքինս 'ի ժողովել զարդիւնս կանուխ զվաստակոցն ։ Վաղգր է նմա այնուհետև միայն ընդ միայնում լինել ընդ սրտին . քաղցր է նմա ունել 'ի նմա հանապազ յանդիման զգեղեցիկ պատկեր զնուիրմանն՝ զոր նուիրեաց

digitised by A.R.A.R.@

սիրոյն Աստուծոյ, քաղցր է նմա ցանգ ընդ իւր տանել զընտանին զիւր վկայութիւն զբարեգործութեան իւրոյ։ Վանիծն ինչ այնուհետև անդորրաւէտ խաղաղութիւն սրտի նորա. քանի բարեկրութիւն յամենայն իսկ 'ի գնացս, եթէ 'ի կերակուրս, եթէ 'ի հանգիստ քնոյն, եթէ յամենայն իսկ 'ի սիրելութիւնս իւր պարկեշտս. "Զի արդարք վայելեսցեն 'ի բարութեան", ասէ Աստուած։ "Զոր ոք ծառայեսցէ ինձ, ասէ, ուրախ լիցին"։

Որ աչօք այնուհետև դարձցին հայեսցին նոքա 'ի զգալիս յայսոսիկ, կամ յինչ կերպարանս երևեսցին նոցա ամենայն կենցաղականքս։ Վանզի յայնժամ հոգին գիտակից յանձին բարւոյն՝ զոր մարթի պտղաբերել 'ի զգալեաց աստի, միշտ անքթիթ ակնկառոյց առ Աստուած միշտ նորանոր նուիրմունս զարտին իւրոյ հնարի առ նա։ Զոր յայնժամ յուշ անձին ածեալ, զի քաղցրութիւն մի այնպիսի երբէք նա ոչ ճաշակեաց յաբարածոց աստի, յընչաց քերէ զամենայն, և ամենայնին 'ի վերոյ անցեալ միայն ընդ միայնում ընդ ինքն և ընդ Աստուած ուսանի հանգուցանել զամենայն բարին. "Զի ինչ կայ իմ, ասէ, բնաւ յերկինս Աստուած, կամ 'ի քէն զինչ խնդրեցից յերկրի. Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան։ Զոր ոպէս փափաք եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Աստուած"։ Աստուած ժառանգութիւն իմ և վարձ, Աստուած իմ և ամենայն ինչ։

Զայլ զի՞ է ինձ աստանօր 'ի մասինս պապաչել իբրև զմանուկ. աղէ դուք, արդարք, դուք որ զգածեալքդ էք, այլ ինչ, այլ ինչ զլխովին զգայք 'ի փորձոյ, դուք զոր իմ ձայն չքաւէ արտայայտել, խօսեցարուք վայրիկ մի աղաչեմ. վարժեցէք զսիրտս մարդկան որ անճաշակք են 'ի վտակաց աստի։ Հապա հրեշտակդ 'ի մարմնի, դու ձայն տուր ո՛վ աստուածայինդ Գրիգորիէ, ներկուռդ հրահանգեալ 'ի վարժոց սիրոյ. "Զէ այնքան, ասէ, յուսոյն հանգուցիւք, որքան սիրոյն կապանօք բերիմ։ Զէ 'ի տուրսն այլ 'ի տուողն յաւէտ կարօտիմ։ Զէ փառք են ինձ անձկալի, այլ փառաւորեալն է համբուրելի։ Զէ կենացն փափաքանօք, այլ կենարարին յիշատակաւ միշտ ճենճերիմ։ Զէ վայելիցն տարփա-

digitised by A.R.A.R.@

„ նոքա հեծեմ, այլ հանդերձողին տենչանոքա յերիկամանց
„ աստի կականիմ։ Ակ զհանգիստն խնդրեմ, այլ զհան-
„ գուցին զերեսս աղաչեմ։ Ակ հարմնարանին խընդ-
„ ձոյիւք, այլ փեսային անձկութեամբ մաշիմ„։ Օ այս
այսպէս երանելին, և հալէր 'ի սիրոյն։ Հանգուցա-
տիպ և միսն այն հրեշտակայինն աստուածայինն Լուսա-
մաս. "Լաւ է, ասէր և լայր, բաւ է եթէ կաթ մի
ճաշակեալ էր մեր զԱստուած„։ Աստուած իմ, ասէր,
եթէ մարդկան վայրիկ մի ճաշակեալ էր գքեզ, չէին ինչ
նոցա այնուհետև պէտք ցուցակութեանց բանից 'ի գի-
տել քանի քաղցր իցէ սիրել զԱստուած։

Ա.յլ աղէ մինչև ցե՞ր իցէ քո մինչև ցե՞ր ճառել
մեզ վասն Աստուծոյ, բոլոր բառնան ունկնդիրք առ հա-
սարակ. ասեն, տեսանեմ ես աւադիկ զԱստուած, զգամ
ես զԱստուած. տեսանեմ զնա արտաքոյ իմ, զգամ զնա
'ի ներքս իմ. տեսանեմ զնա 'ի բարիս երախտեաց նորա,
զգամ զնա 'ի գութ զրգռանացն. նման նմա տեսանեմ և
ոչ ինչ, հանդուցատիպ նմա զգամ և ոչ ինչ։ Հապա քրիս-
տոնեայք, եթէ սիրէք կալ ընդ Աստուծոյ, մատիք առ
նա, առէք զիրոյն. "Ճաշակեցէք զի քաղցր է տէր„։
Եթէ միանգամ ձեզ արարիչն քաղցրասցի, ոչ ինչ այ-
նուհետև յարարածոց աստի ձեզ քաղցր եղիցի։

ՄԱՄՆ Բ.

Ի հանդէս կրկնակի բաժանեն աստուածաբանք
զսէրն, 'ի սէր ցանկութեան և 'ի սէր բարեկամու-
թեան։ Ա.յսպիսի ինչ է և առ Աստուած սիրոյն հան-
դէս։ Սիրով ցանկութեան վառիմք յԱստուած, իբրու
որ բարերար է մեզ և երախտաւոր. և է այս սէր ան-
կատար։ Սիրով բարեկամութեան բորբոքիմք յԱս-
տուած, իբրու որ ինքն յինքեան բարի է և ամենաբա-
րի. և է այս սէր կատարեալ։ Յարդ մեք 'ի դէմն ա-
ծաք ձեզ, իբրու առիթս ինն և սատարս առ 'ի սիրել
զԱստուած՝ միայն զերախտիս բարեացն և զվարձուցն
աստուածայնոց, 'ի մեր օգուտ և 'ի շահախնդրութիւն
յանգեալ ողջոյն. ուստի և ցարդ յառաջ բերեալն մեր՝

digitised by A.R.A.R.@

էր լոկ սէր ցանկութեան, սէր անկատար և ոչ կատարեալ։ Բ. Յլ ընդէր այս այսպէս, անշուշտ հարցումն հիացմամբ արասցեն ինձ բազումք, ընդէր իցէ մեզ յընթացս յայս աստուածային քաղցրութեան այնչափ սակաւ ճանապարհ առնել, և այնչափ յետնիլ 'ի գեղեցիկ ուղւոյն, և ոչ հետամուտ լինել կատարեալ սիրոյն առ Աստուած։

Բ. Սասիկ ձեզ, տեարք իմ, զոր ասեմ 'ի պատասխանի։ Ի ճանապարհին Աստուծոյ առաւել դժուարին՝ է առաջին քայլն. և վասն այնորիկ է առաւել դժուարին, քանզի է նուազ կատարեալ։ Յաւ նորին աղագաւ խելամտութեամբ ընդ երկար դեգերեցայ ես 'ի սէրն յայն անկատար. իբրու 'ի գլուխ ճանապարհին կալով ես և նշանակելով ձեզ զամենայն իսկ զհետոն, և հորդելով ձեզ զամենայն զշաւիղն, առ 'ի առաջնորդել ածել զձեզ իբրու ձեռամբացի յառաջին 'ի քայլն. գիտելով անշուշտ է թէ միանգամ շարժումն առեալ ձեր յընթացս՝ արագ արագ այնուհետև ժամանն լինիցիք 'ի գերակատարն սէր։

Յաւ արդ միտ դիք, զնոյնօրինակ վարեցայ ես ընդ ձեզ, զոր դուքդ վարէք առ բարեկամն։ Զինչ օրինակ վարէք դուք յընտրութեան բարեկամի, որ արդարև ընտրութիւն է դժուարին։ Նախ դուք 'ի փորձն մատուցանէք զնա. իբրու 'ի գլխոյն մինչև ցոտն, զի այսպէս ասացից, ուղղաչափ գործեաւ ոմամբ զննելով չափելով զնա. սակայն ոչ կարելով ձեր 'ի ներքս 'ի սիրտն մտանել նորա՝ առեալ չափէք զսիրտն առ 'ի ձեռացն։ Իբրև տեսանէք զնա, զի անխնայ անձնագրաւ ձեռն 'ի գործ վաստակի վասն ձեր և ճիգն զամենայն թափէ յօգուտ ձեր և 'ի ծառայութիւն, յայնժամ իղձ յորդէք առ նա և յամենայն արգասիս բարեաց նորա. և շատ է յայնժամ, չէն այլ սկսք բանից կամ փորձոյ. Ճանաչեմ իսկ քաջ զնա, ասէք դուք. դա բարեկամ է իմ անշուշտ, ուստի և ինձ յայսմ հետէ սիրելի է անձն նորա առաւել քան զամենայն։ Բ. Սասիկ և ես առ 'ի պողաբերել 'ի սիրտս ձեր սէր իմն ճշմարիտ և կատարեալ զբարեկամութեան առ Աստուած, զնոյն գործեցի առ ձեզ։

Իսկ 'ի կատարեալ սիրոյ աստի բարեկամութեան առ Աստուած կան մեզ առաջի, սիրելիք, և այլ ևս արգասիք մեծ յոյժ։ Դանզի ընդ այս ճանապարհ առաջնոր-

digitised by A.R.A.R.@

դելով ձեզ, մեծապէս զիւրացուցի ես ձեզ զփրկաւէսն զայն և զկենագործողն, զողջումն ասեմ զկատարեալն զմեղաց ձերոց։ Մեծապէս է ինձ խնդութիւնս և 'ի յիշելն անգամ զայս. քաջ միտ դիք աղաչեմ։ Պիտէք իսկ դուք զպատմութիւնն զ յանցանելոյն Պաւղի. անշուշտ կատարեալ յոյժ եկաց նորա զողջումն վասն յանցանացն, յորժամ միանգամ գոչեաց, "Մեղայ տեառն.,։ Բ.յլէր աղագաւ այնչափ կատարեալ, զինչ այս յանկարծ դէպք սքանչելի. որ աղբերակն կենսաւէտ 'ի սրտէն ցայտեցոյց զգերակատարն զայն զիղջ։ Յաթան մարգարէ յանդիմանէ զՊաւիղ յանցաւոր. և հանդէպ կշիռ յանցանացն նորա արկանէ զբազմադէմ զերախտիսն Աստուծոյ. "Բ.յսպէս ասէ տէր Աստուած Իսրայելի. ես եմ որ առի զքեզ 'ի վերջէ վրանաց հովուացն, ես օծի զքեզ թագաւոր 'ի վերայ ամենայն Իսրայելի. ես փրկեցի զքեզ 'ի ձեռաց Սաւուղայ. ես ետու քեզ զտուն տեառն քոյ. ես ետու քեզ զԻսրայել և զՅուդա, և թէ սակաւ իցէ, յաւելից քեզ դոյնչափ. և ընդէր անարգեցեր զբան տեառն, առնել չար առաջի աչաց նորա.,։

Պեղեցիկս յոյժ Յաթան զառաջին վիճակ զանաւագ հովուութեան յուշ արար Պաւթի, զԱստուծոյ ձրիատուր պարգևսն առ նա զթագաւորութեանն, զի չեր ինքն ժառանգ աթոռոյն, և զայլն ևս. և ոչ շատացեալ, դոյնչափ ևս ասէ յաւելուլ նմա Աստուծոյ, եթէ սակաւ իցէ։ Վանիօն է բարութիւնն, ո՛ Պաւիղ. և դու համայն այնպէս անարգեցեր զԱստուած զբարերարն քո, զեղեալն և զհանդերձեալն։ Ոչաւ Պաւիղ և 'ի յուշ բերեալ զամենայնն, ընդ ձրի երախտեաց ամենաբարւոյն եդ 'ի կշիռ զանհնարին զյանցանսն. ոչ ևս ժուժեաց. որչափ յիշեր, արտասուք այնչափ յորդք խաղային 'ի ներքս. գոչեր 'ի սրտին, ո՛ անհուն բարութիւն, ո՛վ անբաւ անոխակալութիւն, դոյնչափ ևս յաւելո՞լ քեզ առ իս, և ինձ անարգե՞լ զքեզ։ Լ.կաց անշշունչ, հայեցաւ անքթիթի յանսահման բարութիւնն, ընկղմեցաւ սուգաւ 'ի խորս սիրոյն Աստուծոյ. զիտաց զչարութիւնն, ծանեաւ զմեծութիւնն. ցաւ անհնարին մրրկեալ 'ի ներքս փեռեկէր զսիրտն. և զհետ իբրև նետ սպրասուր զիղջ սաստիկ թափ էանց ողջոյն ընդ Պաւիղ. եղո՛ւկ եմ ես, ընդդէմ այնպիսի ամենաբարւոյն մե-

digitised by A.R.A.R.@

զանչել։ “Մեղայ, մեղայ տեառն,,։ Որչափ սրտառուչ գոչեաց զմեղայն, այնչափ արագ ժամանեաց Թողութիւնն. “Լու տէր, ասէ, անցոյց զքեզ զմեղս քո, և մի՛ մեռցիս,,։ Ահա սէր ամենակատար, և՝ի սիրոյն՝ զղջումն գերակատար։

Երդ առաջին յուշ զայս ածէք, քրիստոնեայք, եԹէ գոյքդ ամենայն և քաջողութիւն և կեանք գլխովին հանդերձ ամենայն վայելիւքն յոր միանգամ խրախայցեալքդ էք, ամենայնն է պարգև Աստուծոյ։ Երկրորդ անգամ յուշ ածէք, եԹէ յամենայն բարիս յայսոսիկ և՝ի պարգևսն զեղծայք դուք յանցանելով ընդդէմ պարգևատուին։ Երրորդ անգամ յուշ ածէք եԹէ ամենայն իրաւամբք մարԹ էր Աստուծոյ կապտել մերկել զձեզ յամենայնէ, և այնպէս մերկ և ողորմելի արկանել՝ի գեհեն. բայց ամենաբարին խնդրէ տակաւին և բարերարել ձեզ և պարգևօք շնորհացն իւրոց և փառաց լիացուցանել զձեզ։ Ապա յետ այսր ամենայնի վերակենալ ակնկառոյց եղերուք սիրելիք յԱստուած ինքնին. զննեցէք վայր մի, քանի՞ ուրեմն ամենաբարի իցէ ինքն յինքեան, որ այսչափ բարի է արտաքոյ իւր։ Որպիսի՞ ինչ իցէ բնութեամբ, որ այսպիսի ինչ է՝ի վարելն։ Որպիսի՞ ինչ յէութեան իւրում, որ այնպիսին է՝ի գործել իւրում։ Ո՞ր սիրտ անսահման, ո՞ր գութ անչափական. ո՞ր ծով, ո՞ր անդունդք, ո՞ր խորք շնորհաց և բարութեան և սիրոյ, ո՞ր մեծութիւն, որպիսի՞ տէր, ո՞ր հայր, ո՞ր Աստուած։ Լու ահա այս հայր, և ահա այս Աստուած, որ ընդդէմ յանցեաք մեք ապաշնորհ մեղաւորքս։ Մա՞րԹ ինչ իցէ հաւատալ զայս և ոչ դառնապէս յարտասուս հատանիլ և՝ի զիղջ։ Թէպէտ և արքայութիւն, Թէպէտ և գեհեան չիցեն՝ի միջի, ո՞չ անհնարին չար իցէ մեղանչել անարգել զգերագոյն բարին։ “Մեղայ տեառն, մեղայ,,։

Յայս բարութիւն անսահման, սիրելիք, յայս Աստուած յառեցէք զմիտս, յառեցէք զսիրտս, և միակ Աստուած և միակ ամենաբարին իցէ բուն և առաջին և տիրական շարժիչն և առիԹ ցաւոց ձերոց, և եղիցի կատարեալ զղջումն. զԱստուած սիրեցէք վասն Աստուծոյ միայն. այս է ծայրալիր սահման կատարեալ սիրոյն։ Սիրեմ զնա վասն նորա։ Երժմ խելամուտ լինիք, սիրե-

digitised by A.R.A.R.@

լիք, զինչ էր զոր վայր մի յառաջ ասաց Հրեշտակն 'ի մարմնի. "Լէ 'ի տուրսն, այլ 'ի ասուոցն յաւէտ կարօտիմ. ոչ վայելիցն տարփանօք հեծեմ, այլ հանդերձողին տենչանօք յերկնականց աստի կականիմ,, : Զ'իսկն զնա խնդրեմ եթէ յերկինս և եթէ յերկրի. "Օ՜ինչ կայ իմ բնաւ յերկինս, կամ՝ 'ի քէն զինչ խնդրեցիցս յերկրի : Զ'ստուած սրտի իմոյ, բաժին իմ Զ'ստուած յաւիտեան,, : Զ'յժմ խելամուտք էք, սիրելիք, և զոր կանխեցաք եղաք, զինչ իցէ ասելն, "Սիրեսցես զտէր Զ'ստուած քո. ոչ լոկ. այլ յամենայն սրտէ քումմէ, յամենայն անձնէ քումմէ, յամենայն զօրութենէ քումմէ, և յամենայն մտաց քոց,, : Երջանիկ 'ի մարդիկ և առաւել երջանիկ, որ յայս սէր Զ'ստուծոյ ժամանեաց շնորհօքն Զ'ստուծոյ : Զ'սկա յայս աստուածային սէր խնդամ ես այսօր կնքել զմաղթանս իմ վասն ձեր. քանզի և չգտանեմ ես ոչ յերկինս և ոչ յերկրի այլ սատար և այլ միջնորդ, երջանիկ առաւել յարդարել զձեզ, քան 'ի մաղթելն իմում վասն ձեր զսէր զայս աստուածային : Զ'այլ դու ո՛վ Զ'ստուած իմ, եթէ երբէք աստանօր 'ի մէջ բազմահոյլ ունկնդրացս կայցէ ոք ծածկեալ, որ ոչն սիրեսցէ զքեզ, դու 'ի նեռ սիրոյդ խոցեա 'ի սրտի զմեղսն : Զ'ահասցին մեղք, այլ նեռն վարսեալ կայցէ 'ի սրտին մինչ 'ի սպառ :

digitised by A.R.A.R.@

ԳՐԱՐՈՂ ԼԻ·

ՃՇՄԱՐԻՏ ՊԱՇՏՕՆ ԱՍՏՈՒԾՈՅ

" Յաղթութիւն այս շրջանէն պաշտէ զիս , և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են ինձանէ ,, :

Ահա աստուածպաշտութիւն Ճշմարիտ , որ միայն ընդ Աստուծոյ , և զսիրտ ստեղծեալ միայն վասն Աստուծոյ՝ նուիրել միայն ստեղծողին իւրում. " Տուր ինձ , ասէ , որդեակ զսիրտ քո ,, : Ահա նորոյ ուխտին քրիստոսեան՝ նորոգատուր կրօն սրտի : Պաշտօն հոգւոյ կանգնեալ 'ի վերայ աւերակաց հեթանոս տարրապաշտութեան և հրէական կեղծաւորութեան: Հնազանդութիւն և ողորմութիւն , նախապատուեալ քան զզոհս և զզուարակս : Հոգի որ կեցուցանէ , հակառակ ամբարձեալ գրոցն՝ որ սպանանէ : Ընդ սակաւ մի օգտակարն մարմնոյ կրթութիւն մերժի . և առ ամենայն օգտակարն աստուածպաշտութիւն քարոզի : Միով բանիւ , աւանդութիւն մարդկան , վարդապետութիւն նորաձայն , կրօն զգայական , կամ դատապարտեալ 'ի չարաչար պէտսն , կամ բարեկարգեալ 'ի գեղեցիկն :

Այլ գիտեմք քաջ , եթէ 'ի բան ընաբանիս իմոյ կցկցանս իմն և պատրուակս զրպարտութեան գտին մի լրբեալք ընդ ժամանակս ժամանակս , բամբասելով զեկեղեցի Քրիստոսի իբրու որ 'ի մասին նեղբին և Ճշմարիտ աստուածպաշտութեան առեալ խառնեալ ի՛ց և 'ի յա-

digitised by A.R.A.R.@

ւելապաշտութեանց հեթանոսութեան և 'ի խակութեանց հրէական ժողովոյն։ Զրինադրութիւն սրբազան մերոց խորհրդոց, յարգն մեծ և պատիւ ընծայեալ առ 'ի մէնջ սրբոցն դասուց, և բնաւից վերհագոյն Աստուածամօրն կուսի. պահք մեր և ժուժկալութիւնք և տքնութիւնք, զեղազարդ վայելչութիւնք մերոց տաճարաց և խորանաց, արտաքնայարդար մեծաշուք հանդերձանք մերոց պաշտամանց, սովորութիւնք որ յընդհանուրս և որ վաղնջուցք գոգցես յանյիշատակ ժամանակաց, են իսկ այսոքիկ ամենայն անշուշտ հաւաստիք նոցուն սրբութեանն և ճշմարտութեան։

Սակայն և այս ամենայն յարձակերասան բերանս մոլորելոցն և թշնամեաց չեն այլ ինչ բայց աւանդութիւնք ինն մարդկայինք հակառակամարտք օրինացն Աստուծոյ։ Զանզի չարաչար պէտք սոցա ընդ ժամանակս ժամանակս 'ի տգէտս և յաւելապաշտս և 'ի միամիտս յորդւոց եկեղեցւոյ, մեզ համարեցան 'ի մեղս, իբրու հասարակաց մեր դաւանութիւն և հաւատք տիեզերական եկեղեցւոյ։

Աստարէզ ուրեմն լայն և արձակ բացեալ է մեզ առաջի, սիրելիք, 'ի նիւթ կարևոր քարոզութեանս մերոյ, բան ճառել ձեզ այսօր՝ կամ ըմբերանել զմոլորեալսն, կամ յողջմտութիւն վերածել զնոսա 'ի վերայ ճշմարիտ պաշտամանս մերոյ, բացերևակի պարզելով առաջի զկանոնս և զհրահանգս քրիստոնէական բարեպաշտութեան. գիտել եթէ որ ի՞նչ հոգի ճշմարիտ աստուածպաշտութեան։

Զանզի և կամիմ՝ այսօր մարտ դնել ընդդէմ կրկնակի մոլորութեանց, որ միանգամայն կարի վտանգաւորք թուին ինձ։ Զանզի կէսք 'ի մեզ 'ի հաւատացեալս յաւակնին յընչաց քերել առ հասարակ զամենայն արարողութիւնս արտաքինս զբարեպաշտութեան, իբրու ջերմեռանդութիւնս ինն ռամկին գրելով զնոսա. և զօրհանապազ զայն ինչ կրկնեն և երեքկնեն եթէ Աստուած 'ի սիրտն միայն հայի, և այլն ամենայն յանպիտանեաց սակի է։ Այս առաջին մոլորութիւն, զոր պարտք են մեզ այսօր անհրաժեշտ 'ի յաղթահարել։ Այն և այլք, որ զտիրական մասամբ օրինացն անփոյթ արարեալ, զամենայն զկրօն իւրեանց և զապաւինու-

digitised by A.R.A.R.@

թիւն հաստատեն յարտաքին ծէսս և 'ի կերպարանս բարեպաշտութեան։ Այս երկրորդ մոլորութիւն, յորմէ 'ի բաց քեցել զնոսա Ճիգն Թափեցից այսօր։ Հաւատացեալդ դու, մի արհամարհեր զարտաքինս զայսոսիկ զպէտս բարեկրօն պաշտամանց։ Մբարտաւանութիւն է բանդ և անձնահաճութիւն դսրովելի։ Ոչ զի կրկնակի են հրահանգք տերունեայն 'ի պաշտամանն Աստուծոյ. "Երկրպագուցայն Աստուծոյ, ասէ, պարտ է երկիր պագանել Հոգւով և Ճշմարտութեամբ"։ Իսկ դու այդուիկ ոչինչ կարասցես երկիր պագանել Աստուծոյ Ճշմարտութեամբ։

Ոարձեալ և դու հաւատացեալդ, մի հաստատեսցիս երբէք լոկ յարտաքինսդ յայդոսիկ, և կարծեսցես եթէ այդոքիկ միայն բաւական իցեն արդարացուցանել զքեզ առաջի Աստուծոյ։ Մոլորութիւն փարիսական է բանդ. և ոչ կարասցես դու այդուիկ երկիր պագանել Աստուծոյ Հոգւով։ Առաջին՝ մի արհամարհեր զարտաքինսն։ Երկրորդ անգամ՝ մի զեղծանիր արտաքնովքն։ Հաղիկ կրկին այս իմաստ ողջոյն առաջարկութիւն քարոզիս։

ՄԱՍՆ Ա.

Այս արդ առաջին ասեմ, եթէ Ճշմարիտն պաշտօն Աստուծոյ ըստ ինքեան է սոսկապէս նեբքինն և որ 'ի նեբքոյ 'ի սրտի կատարի։ Ոչ զի երկիր պագանել գեբաղոյն էին, և զմտաւ ածել զաստուածայինն կատարելութիւնսն, կապիլ ընդ նմա անքակ սիրով, գովութիւն նոր բա, բարեբանութիւն նորա, շնորհակալիքն առ նա. այս է կրօն հոգւոց երանելեաց, այս եկաց կրօն արդարոց, որ յառաջ քան զմեզ վկայեցան 'ի հաւատոց։ Այս այս դարձեալ որպէս աստուածայինն ասաց Աւգոստինոս, լինէր կրօն առաջին մարդոյն, եթէ յանմեղութեան իւրում կացեալ էր, և չէր ինքն դատապարտեալ երկրաքարշ լինել, և 'ի զգալեաց աստի պէտս ունել՝ առ 'ի ամբառնալ զինքն միւսանգամ առ արարիչն։

Ասատի և մեք ինքնին ժառանգորդք նախահօրն մեր դրժանացն առ Աստուած, եմք և նորուն պատուհասին

digitised by A.R.A.R.@

բաժանորդք։ Արդիք մարմնաւոր հօրն, ծնանիմք մարմնաւորքը իբրև զնա. հոգին մեր պարուրեալ 'ի զգայութիւնս՝ զոգեաս գերի վարեալ է 'ի նոցանէ. և պէտք են պաշտամանս մերոյ առ Աստուած 'ի զգալեաց աստի առնուլ օգնական հաւատոցս մերոց, զարթուցիչ սիրոյն մերոյ առ նա, տածիչ յուսոյն մերոյ 'ի նա, զօրավիգն խորհրդոց։ Ասպիսի ինչ է կրօն անկեալոցս 'ի դրախտէն՝ այս երկիր. նշանակք, ստուերք, օրինակք, որ զմեզ ամրապնդեն, մաքրեն սրբեն զմեզ, և յօդակապեն զմեզ։ Ատոյգ Աբէլ պատարագս, և Այնովք կոչեաց զանունն Աստուծոյ, 'ի հանդերձանս զգալեաց։ Ահապետք կանգնեցին սեղանս. իսկ ապա մովսիական օրէնք 'ի սպառ պատաղեցան յարարողութիւնս և 'ի պահպանութիւնս։ Իսկ եկեղեցի Քրիստոսի հոգևոր առաւել՝ նուազ կալաւ 'ի զգալեաց աստի, սակայն և կալաւ։ Յայտնեցաւ Աստուած 'ի մարմնի 'ի տիպ զգալի աչաց, զի միջնորդաւ զգայութեանց մերոց ընդմտանիցէ մինչև 'ի սիրտս մեր, և այս խորհուրդ մեծահրաշ յաւերժասցի 'ի սեղանս մեր խորհրդոցն նշանակօք մինչև 'ի կատարած աշխարհի 'ի հաստատութիւն և 'ի մխիթարութիւն հաւատոցն մերոց։

Անմարթ է ուրեմն հաւատացելոցն չունել արտաքին ինչ պաշտօն։ Քանզի սա անշուշտ յօդեսցէ զնոսա ընդ միմեանս. սա որոշեսցէ զնոսա յանհաւատիցն, և սա եղիցի հրապարակաւոր դաւանութիւն հաւատոյն նոցա։ Սապէս հիմնեցաւ և 'ի տեառնէ Քրիստոսէ եկեղեցի, տուեալ նմա հովուապետ մի երևելի, արածել զոչխարս իւր և զգառինս. և սա հովիւս երևելիս հովուել զեկեղեցի իւր սուրբ ակն յայտնի բաժանակցութեամբ նոցուն խորհրդոց։

Այլ սակայն ոչ մոլորեալքն միայն ընդ ժամանակս ժամանակս որպէս կանխեցի ասացի իբրև աւելապաշտութիւն կամ թէ իբրև բարեպաշտութիւնս անպիտանս հանարեցան զարտաքինսն զպաշտամանն Աստուծոյ, 'ի նեղքս անդ 'ի սրտի միայն պարագրեալով զպաշտօնն, այլ և յամենայն իսկ 'ի ժամանակս նշմարեմք մեք զսոյն մոլորութիւն։ Ոչ և այսօր իսկ լաւագոյն հանապազ ասել, եթէ Ճշմարիտն բարեպաշտութիւն հաստատեալ կայ 'ի սրտի. և թէ մարթ է լինել արտաքին հրահան-

digitised by A.R.A.R.@

գայն, առանց պահելոյ յինչ ինչ կերակրոց, իբրև զի «Լէ որ ընդ բերանն մտանէ, պղծէ զմարդն. այլ որ 'ի սրտէն ելանէ,,. առանց անխտրական Հնդուութեան և Հնդրտութեան ինչ ինչ արարողութեանց. և թէ պարտք քրիստոնէութեան հոգևորք են, վսեմականք են, արժանաւորք են կրօնիցս մերոց, առաւել քան զայդ բարեպաշտութիւնս մանուանս և դուզնաքեայս, որոց միտ դնեն միամիտ որեարն։

Այս ամենայն զինչ կամիցի ասել. բայց եթէ խնամտութիւն աշխարհի պատրուակս երբակի 'ի ներքս բերէ առ 'ի հաւատարմացուցանել զվտանգաւոր զիւր հրապոյրսն. մի զանպիտանութիւն արտաքին պաշտամանցն, երկրորդ՝ զտկարամտութիւն պաշտելեայն, երրորդ զչարաչար պէտսն։ Առակեսցուք մեք զպատրուակսն զերեսին և 'ի տեղին կարդեսցուք՝ նախ զպիտանութիւն զարտաքին պաշտամանն Աստուծոյ, երկրորդ զիմաստութիւնն, երրորդ զգեղեցիկ զպէտսն։

Այս արդ մեզ առաջին ընդդիմադրեն, եթէ տիրական մասն աստուածպաշտութեան 'ի սրտի անդ հաստատեալ կայ, արտաքինքն ամենայն անպիտանք են...։ Արդ յառաջ քան զամենայն զայս կամիմ հարցանել։ Այս ինձ, 'ի բաց տարեալ առ այժմ զարտաքինն զոր անպիտան կարծես, իցէս դու գտնես հաւատարիմ առ տիրական մասին, զոր շատ ասես անձինդ։ Արհամարհեալ քո զայն ամենայն, զոր իբրու աւելորդս դրես կրօնիդդ, գտնես դու որչափ ինչ օրէնք Աստուծոյ պատուիրեն քեզ անհրաժեշտ, 'ի գլուխ հանես զայն։ Ասես, շատ է զսիրտն տալ Աստուծոյ...։ Արդ աղէ գէթ զայն տաս դու Աստուծոյ...։ Լէ՞ ահա արտաքին քո ցոյցք ամենայն տակաւին աշխարհի են։ Ա՞ռ քո ինքնին քո. զոր հարկանեմ դիտակցութիւն։ Գտնես դու փառաւոր զԱստուած 'ի մարմնի քում՝ որպէս պատուիրեաց առաքեալն. թէ ոչ մանաւանդ սպասարկու առնուս զնա անժուժկալութեան կրիցդ։ Փութաջան իցես դու 'ի լրումն ամենայն պարտուցդ, եթէ հայրական իցեն պարտք, եթէ են ամուսնական, եթէ տանուտէրական, կամ պաշտաման ինչ քաղաքի, կամ քրիստոնէական։ Զամ իցէ քո սիրտն յամենայն ատելութենէ, յամենայն մախանաց, յամենայն ոխակալութենէ առ եղբայրն։ Ի

digitised by A.R.A.R.@

վերքան զամենայն սիրիցեն դու զԱստուած, որպէս աստուածայինն պատուիրեն օրէնք. ատեանս դու զանձնդ, որպէս պատուիրէ աւետարանն. կենս դու հաւատով, ըստ առաքելական ձայնին. թողուս դու 'ի սրտէ ընկերին զյանցանսն, որպէս հրամայէ Քրիստոս. ապաշաւեա՛լ է քո ճշմարտութեամբ ընդ մեղսդ. փախչիս դու յառաքիչ մեղաց։ Զինչ ևս յաւելուլ։ Հաւասիկ քեզ տիրական մասունքն, զոր ոչ ողջոյն թուեցի և յոր պանծացեալդ ես. իսկ թէ և 'ի գործ վարես զայդոսիկ իբրև հաւատարիմ պաշտօնատար Աստուծոյ, դու ինքնդ հարց ցքեզ։ Ունիս զարտաքինն, որ տեսանի. պանծաս 'ի ներքինն որ ոչն երևի. զի անընդունելի կացցես 'ի մարդկանէ, այլ ոչ և յԱստուծոյ։

Այլ սակայն, սիրելիք, եթէ սիրտն միանգամ անկեղծաբար նուիրեալ իցէ Աստուծոյ, բա՛ր, և ոչ 'ի խորհուրդ անգամ անկանի մարդոյ, զլանալ նմա զարտաքին դաւանութիւն պաշտամանն, զոր թելադրէ սիրտն։ Վանզի մեծապէս յոյժ է պատարագ սրտին և նուէր կրիցն, յորում հաստատեալ կայ ամենայն դժուարութիւն առաքինութեանն. և եթէ միանգամ յաղթեսցես, այնուհետև 'ի դիւրի կայ ամենայն, հորդեալ է ամենայն, և ամենայն մոլութիւնք և կիրք ինքնին տապալին։

Առ այս դարձեալ, նոյն օրէնք որ պատուիրեն հաւատալ սրտիւ, նոյն դարձեալ հրամայէ և բերանով խոստովանել. "Արտիւ, ասէ, հաւատալ յարդարութիւն, և բերանով խոստովանել 'ի փրկութիւն". այս է տալ հրապարակաւ հաւաստիս զգալիս զմերոյ հաւատոյն և զառ Աստուած բարեպաշտութեանն։ Առաջին առ 'ի տալ փառս Աստուծոյ արարչին, և վկայութիւն դնել յանդիման ամենայն մարդկան, եթէ նա միայն է արժանի մերում երկրպագութեան և պաշտամանն։ Երկրորդ անգամ՝ առ 'ի ոչ ծածուկ պահել իբրև զապաշնորհս յանցաւորս զդաղանի շնորհս պարգևեալս մեզ առ 'ի նմանէ, որպէս զի առ հասարակ վկայք կացցեն ողորմութեանցն Աստուծոյ 'ի վերայ մեր. և 'ի մերն զիւրեանցն յաւելցեն շնորհակալիս։ Երրորդ անգամ յօրինակ բարի և 'ի շինութիւն մերձաւորաց, և 'ի խրախոյս քաջալերութեանն նոցա յառաքինութիւն մերովն բարեկրօն

digitised by A.R.A.R.@

կարգաւ։ Չորրորդ անգամ, զի Թիկունս տացուք տկարացն մերոյն քաջամուր սնդու�եամբ ընդդէմ վայրապատին և շաղաւաշուրթն զրուցաց անմտացն, և ծաղաւ ծանակ քրքջանաց Թուլահաւատ որերոյն, որով խաղառնեն նոքա զառաքինութիւնս։ Հինգերորդ անգամ, 'ի զեղ դարմանոյ մերոց գայթակղութեանց, եթէ երբեք յանցուցեալ իցեմք. և լինել ըստ առաքելոյն հոտ անոյշ 'ի կեանս, որպէս եղեաք երբեմն հոտ դառնութեան առ 'ի մահ։ Վեցերորդ անգամ, 'ի մխիթարութիւն և 'ի սփոփանս արդարոց, զուարթացուցեալ զնոսա 'ի զնին մերոյ փոփոխութեանս, յօրհնութիւն աւրատ պարգևացն ողորմութեանն Աստուծոյ։ Օ ինչ և այլ. 'ի յամոթ քարշնկեց լինել յերեսս ամբարշտաց և թշնամեաց դաւանութեանս մերոյ. և յակամայ կամս տալ նոցա խոստովանել եթէ իցէ ուրեմն յաշխարհի որ առաքինաբար կեցցէ։

Հաւասիկ քեզ արտաքինքդ, զոր յանպիտանեաց սակի եդեր. և սակայն անպիտանեօքդ այդոքիւք յամենայն 'ի ժամանակս գործեցին արդարք զփրկութիւն անձանց. տարբերեալք յաշխարհասիրացն եթէ վարուցն զգաստութեամբ, եթէ սկզբանցն հաստատութեամբ, եթէ կարգաւքն վայելչութեամբ, եթէ հանդերձիցն պարկեշտութեամբ, և եթէ 'ի հրապարակագոյժ զբօսանացն զգուշաւորութեամբ, և ամենայն պարտուց արտաքին պաշտամանցն կրօնին հպատակ կալով։

Զուի թէ և դու ինքնին, այր դու, որ մեծ ինչ չգրես զարտաքինսդ զայդոսիկ, դու ինքնին պահանջեսցես զայդոսիկ 'ի Ճշմարիտ ծառայիցն Աստուծոյ։ Մինչ զի եթէ երբեք յակն արկանիցես զնոսա յուլացեալս և զհետ օրինաց աշխարհի գնացեալս, և յարտաքինսն ոչ ինչ 'ի ռամկէն տարբերեալ, դու ինքնին առաջին յառնիցես բամբասող և դատաւոր բարեպաշտութեան նոցա, և վայրաբանեսցես և այսպէս. "Բաբէ, զիարդ ուրեմն զիւրագնի իցէ սրբանալն, զիարդ այդպէս հեշտին ծառայել Աստուծոյ և այդպիսի գնոց գնել զարքայութիւն"։ և ասասցես եթէ "և դու ինքնին կամիր վաղվաղակի լինել 'ի մեծաց սրբոց, եթէ և այլ ինչ աւելի չինդրէին 'ի քէն"։ Այս այսպէս դու ընդ քում անձինդ ոգորեսցես, և քոյին իսկ բերանով զքեզ նշաւակեսցես։

digitised by A.R.A.R.@

Սակայն մեզ աւաղիկ և այլ երկրորդ պատուակ, ո՞ր-
բոլ սուտանուն իմաստունքդ ընդդէմ դառնան արտա-
քին պաշտամանդդ, իբրու որ պարզամտաց անկ իցեն
այդոքիկ և տկարաց։ Օ՜ Ինչ պէտք իցեն, ասեն, այն-
չափ յանախութեամբ մերձենալոյ ի խորհուրդս, այն-
չափ հաստատակաց և առանին աղօթից, այնչափ զգու-
շաւորութեան 'ի զարդս և 'ի հանդերձս, այնչափ վա-
թոյ նախանձաւորութեան 'ի գործս բարեպաշտու-
թեան, այնչափ օր ըստ օրեայ առաջիկայութեան անդ-
մահ պատարագին, այնչափ Աշխի սուրբ պահելոյ զկի-
րակէս, և այնչափ Աշխարհութեան սրբազան արարողու-
թեանց, և որ այլն էս։ Ա՜յ այդ ամենայն ուսակին իցեն
կրօնք. զոր կենք զվեմութեան և զանգնութեան
զացես դու յայդ ամենայն. թող մրանձնուհեացն
զմնանունդ զայդոսիկ, թող տառապելոյն. թող հնաս-
տատորացն, որոց հանձար սահմանափակ է, և այնքա-
նեօք շատանայ և չգնայ այլ յառաջ։ Ա՜յ ասեն տքա
զայս ամենայն այսպէս, իբրու պանծանօք շուք դնել
իւրեանց լուսոյ բանին, անշքացուցեալ զլոյս կրօնին։

Ա՜յլ աղէ դու, որ զայդ վարես զքեզ, ասա ինձ Աշխ-
զրիա։ Ոչ անկարգութիւն վարուցդ և անարգութիւն
դժպատեհ կրկնդ առակեն արդեօք զսուտութիւն կարծե-
ցեալ վեմութեան հանձարոյդ, որով զարտաքինդ զայդ
բարեպաշտութեան ահագարդ միայն տկարաց անձանց
համարիս անկ և պարզամտաց։ Ա՜նշուշտ քո, այր դու,
փքացեալ է ստամեօր 'ի լոյս բանիդ, 'ի վեմութիւնն,
'ի մեծութիւնն, 'ի կորովութիւնն։ Ա՜յլ էս յատակ
տեսանեմ 'ի քեզ զամենայն իսկ զթերակատարութեան
մատնս զաւամիկ որերոյն և զանկրքորոցն. թատ տա-
բապայման, վրէժխնդրութիւն մեղկին, ունայնասիրու-
թիւն, թեթևամտութիւն անտիսական, անժուժկալու-
թիւն ապերասան։ Տեսանեմ 'ի քեզ հոգի ողջոյն 'ի
կաւոյ։ Օ՜այդ հոգի՝ բերկրութիւն մի թողեալ կա-
խարդէ։ իղձ մի ընդ հարեալ տապալէ, շահ մի անարդ
'ի գերութիւն վարէ. և իբրու զանբան կենդանեան
զգայութեանց միայն ազդումն կատարվարէ։ Ասա՛ և
ոչ ինչ տեսանեմ ես 'ի քեզ մեծ, ոչ ինչ բարձր, ոչ ինչ
արժանի թափանցիկ տեսութեան լուսոյ բանիդ։ Ա՜յ
դու գոլով այնպիսի, ժամս էս ասել մեզ էթէ ոգւոյ

digitised by A.R.A.R.@

տկարաց և խօթամտաց ռամկին արժան է թողուլ զմա նունդ զայդոսիկ զարտաքին բարեպաշտութեան։

Բ.ՀԼ ուշիմ լեր, և գիտասցես եթէ Ճշմարիտն հան Ճար և միակ վեսմութիւն մտաց և սրտի այն է, թա գաւորել՝ի վերայ կրից անձին. մի գերի վարել՝ի զգայ ութեանց և՝ի ցանկութեանցն. մի մտախաբ լինել՝ի խորհուրդս վայրապարս և յերևակութիւնս, վանել զսրտմտութիւն և զմախանս ծածուկս, վեհագոյն լինել արկածից և ձախողակաց։ Բ.հաւասիկ քեզ Ճշմարիտն մեծութիւն ոգւոյ։ Բ.և գիտասցես դու այնուհետև եթէ զոյս ոմանս պարտ իցէ կոչել հոգիս հզօրս անվանելիս, հոգիս վեսմն և բարձունս։ Բ.և անշուշտ են իսկ արդարոցն անձինք այնպիսիք ոմանք, զորս անդուռն բերանով ընդ վայր հարկանես, և հայիս դու՝ի նոսա իբրու յոգիս ապիկարս և՝ի սինքորս։

Վանզի հզօրք անվանելիք են՝ի հոգիս իւրեանց նոքա որ ներեն դառնակսկիծ նախատանաց, որ աղօթս առնեն՝ի վերայ լկողաց իւրեանց և հալածչաց, որ՝ի վերոյ կան շահիցն անարգութեան. որ անդրժելի՝ի բախտէն պահեն զպարտս իւրեանց զՃշմարտութիւն, զխիղճ մտացն որ կամաւոր ժուժկալեն նաև յանմեղանչական բերկրանաց, որ դիւցազունքն են և բռունք դիմամարտեալք ամենայնին յորում նշմար ինչ իցէ չարութեան։ Իսկ յորժամ զկրօնից հաւատոցն են Ճառքն, հպատակք և հլուք են նոքա պարզ մտօք և խոնարհք սրտիւ և քաղցունք, և փառս և համբրին անձանց զհլութիւնն և զկարծեալ պարզմտութիւն։ Բ.յորագէտք իբրև զօձս՝ի չարն, միամիտք իբրև զաղաւնիս՝ի բարին։

Իսկ դու որ զնոսա ընդ ռամիկս դասես ներհակաբար տկարագոյն և գտանիս քան զանարգագոյնն՝ի ռամկէն. քանզի յորժամ յաղագս սանձելոյ բանքն են և՝ի չափու զկիրսն ունելոյ, քոյ լոյս բանիդ յայնժամ, և քոյ վեսմութիւն և քոյ սրատեսութիւն ոգւոյդ, քոյ կարծեալ խնաստասիրութիւն, ամենայնն յայնժամ լքեալ թողու զքեզ. զնմանութիւն բերես դու յայնժամ զմանկան տղայոյ. և խաղալիկ ես անարգ և անտիրական կրիցդ, և եղէգն ես դու նօսր դեղևուն, այսր անդր հողմավարեալ։ Բ.և դու այդպիսի գոլով՝ի Ճառս կրօնի և՝ի սրատս հաւատոցն փքանաս իբրու

digitised by A.R.A.R.@

յանզուգականութիւն հանձարոյդ, 'ի սրութիւնն, 'ի կորովութիւնն . . . ։ Օ՜ինչ արդեօք կամիցիս. խնդրեսցես թերևս զօրաւոր լինել ընդդէմ Աստուծոյ ապիկար գոլով քո նաև առ համեմատութեամբ անձինդ ։

Դարձեալ ակն ինչ ևս չածեալ ըստ լուսոյ բանիդ յարգոյ հնութեան և տիեզերական բարեպաշտութեանն, անպատկառ իբրու ծէսս ռամկին ծիծաղելիս առ վսեմական մարդիկ, համարիս զսրբազան սպասարկութիւնս առ Աստուած պաշտամանն. զայն ինչ զոր հաւատք ամենայն դարուց, և բարեպաշտութիւն ամենայն արդարոց, և ամենայն կանոնք և հրահանգք կրօնին՝ արդոյս և պատուականս և անմատոյցս յարդարեցին։ Արդ աղէ, եթէ այդպիսի որոց նպատակն Աստուած է ինքնին և վարձն անմահական՝ չիցէն ինչ մեծք և արդոյք և պատուականք, քոյ պարապմունքդ՝ այր դու յերկրաքարշ 'ի կեանսդ վասն ծաղկընկեց յաւիտենիս, զինչ մեծք իցեն և արդոյք և հոյակապք։

Այլ զի հանձար խնդրես և վեհութիւն մտաց 'ի դատել ձշգրիտ զամենայն, զինչ քեզ առաւել քան զաղքիւր ինքնին զհանձարոյն և զնոյն ինքն խմաստութիւնն Աստուած։ Այլ ահա առաջի ամենիմաստին և անվրէպ կշռողին՝ որպէս սարդիոստայնք ըստ մարդարէին անարգք և անկածք են՝ նաև ամենայն ձեռնարկ հոյակապք աքրութեան քաջութեան աքբայից մեծաց, նոյնպէս և արդոյք առաջի նորա նաև դուշնաքեայքն և մանունք՝ որ զնա և զնորա փառն ունիցին ուշ նպատակին իւրեանց և 'ի նմանէն ակնկալցին վարձուցն հատուցման։

Աղաչեմ զքեզ մարոսացաւ ինչ Դաւիթ մեծն, հանձարեղն, թագաւորն, որ ընդ ռամիկ որերոյն խառնեալ, հոլանեալ կաքաւէր առաջի տապանակին Աստուծոյ, բարեպաշտեր և խաղայր և զտաւիղն հարկանէր. արդեօք իմաստնացաւ ինչ նա քան զբարձրայօնն Աստեղբող, որ 'ի զնին 'ի պատուհանէն "անդոմնեաց զնա 'ի սրտին իւրում. — Վանէ, ասէ, փառաւորեալ էր այսօր արքայ Իսրայելի, որ հոլանեցաւ այսօր առաջի աղախնանց և ծառայից իւրոց, զոր օրինակ հոլանիցի հոլանեալով մի ոք 'ի կաքաւչաց ,, ։ Լուսաւ զանբարեպաշտութեան ձայնն, կարձեաց զամբարհաւաճ լեզուն

digitised by A.R.A.R.@

զկնոջն, չեկաց առաւել հանձարեղ պատասխանի քան զբարեպաշտին այնորիկ։ Ոչ և չէ, ասէ, անարդ գործ ամենայն որչափ և անկած իցէ, յորժամ վասն Աստուծոյ է. և չիք այլ ինչ 'ի փառաւորաց երկրի՝ քան զոր փառաւորագոյն ոչ իցէ այն՝ որ վասն Աստուծոյ է։ Այս էր ասէին Դաւթի առ Եղբօրն. "Զաջի տեառն կաբաւեցիս. օրհնեալ է տէր Աստուած, որ ընտրեաց զիս քան զՀայր քո. և խաղացիս և կաբաւեցիս առաջի տեառն և հոլմնեցայց սոյնպէս և ես քան զեւ. և եղէց անպիտան յաչս քո, և ընդ աղախնեացդ ընդ որս ասացեր փառաւորել, փառաւորեցայց"։ Զ'ինն 'ի վարձ զանզուգականն անուն ընկալաւ, "Այր ըստ սրտին Աստուծոյ"։ Զիւան 'ի պատուհաս զամբութիւն յաւերժ մինչև ցօր մահուան իւրոյ։

Այլ ուստի մեզ այս պատրանքս, սիրելիք, իբրև զդուշաբերիւք անցանել զաստուածայնովքն։ Զանգի չեն մեզ բաց ըստ բաւականին աչք հաւատոցն. հայել յաշխարհայինս և 'ի մարդկայինսն որպիսի են՝ անարդք և անկայունք. և նկատել զհաւատոյսն և զաստուածայինսն որպիսի են արդոյք և մշանջենաւորք։ Որպէս և Ճշդրտիւ ծանեան զայս և Ճանաչեն արդարք ամենայն և իմաստունքն Աստուծոյ և Ճշմարիտ հաւատացեալքն, ոչ որք միանգամ՝ առ մեզ կենդանիք, զորս դատափետեն իբրև հոգիս տկարս, իբրև խօթամիտս, այլ և որք յամենայն 'ի դարս՝ արք հոյսկապք 'ի քրիստոնէութեան, որոց և հեթանոսք ինքնին ստիպեալք շուք դնէին երեսացն. իբրու որ հաւատիս մեծապէս եռուն զկորովութեան ոգւոյն, զվսեմութեան մտացն, զՃշմարիտ իմաստութեանն 'ի վեր քան զամենայն իմաստասիրացն կաՃառս՝ յոր երբեմն պանծացան Աթէնք և Հռոմ։

Զոդ դիւցազունքդ մեր այդոքիկ այնչափ մեծանձինք, այնչափ անպարտուելիք առաջի բռնաւորաց, այնչափ անվանելիք 'ի կորուստ գոյից, 'ի կորուստ պատուոյ և փառաց, 'ի կորուստ կենաց գլխովին, նոքին դարձեալ արք կացին պարդք մնոք, արք երկիւղածք և բարեպաշտք. արք՝ որք ընդ դիւցազնութեանն Ճշդիւ հպատակ կային նա և ամենայն ջերմեռանդն պաշտամանց, որ նեբքոյ և որ արտաքոյ։ Եպիսկոպ և վարդա-

digitised by A.R.A.R.@

պետք լիահանձարք, թէպէտ և առաքեալք հոգիին-
կալք, թէպէտ և արք սքանչելագործք, հասարակաց օր-
հնութեանցն աղօթից գայլին բաժանորդք մնանէին ի-
բրև զոգէտս 'ի ժողովրդոց, իբրև զռամիկս 'ի հաւա-
տացելոց, իբրու Պաւղոսն այն մեծ և Բառնաբաս մեծ՝
որ և վայրիկ մի ևս ընդ աստուածս պաշտօն առնուին 'ի
հեթանոսաց, իբրու առաքեալքն մեծամեծքն և սքան-
չելիքն, զորոց 'ի Պրակսն. որք և հանապազ կանխեալ
միաբանութեամբ, ընդ ժողովրդեան 'ի տաճարն, օր-
հնէին զԱստուած, ասէ, միամտութեամբ սրտիւ։ Ոչ-
հնութիւնք նոցա և աղօթք պարզք և անպաճոյճք, այլ
լի հաւատով. վարք նոցա անմեղք և անկեղծաւորք,
գնացք երկիւղածք և զգուշաւորք, լի ահիւն Աստուծոյ։
Հաւասիկ քեզ օրինակք բարձունք, ճանապարհք
վսեմականք. ահա ամենայն իմաստութիւն բարեպաշ-
տութեան նոցա որ յիմարութիւն իմն համարեցաւ ա-
ռաջի աշխարհի։ Այս սակայն այն մարդիկ անարգեալք
հիմնադիրք կացին տիեզերական հաւատոցն, վկայք ա-
ռաջինք եկեղեցւոյ. ոչ վարուքն միայն բարեպաշտու-
թեան, այլ և որ զամենայն միտս գերէ նշանացն հրա-
շագործութեամբ։ Այսպա զնոյն օրինակ զանմեղութեանն
և զբարեպաշտութեան վարեցին և յաջորդեալքն մին-
չև առ մեզ. և ըստ աձել հաւատոցն և ըստ բարգաւա-
ձել զօրութեան հաւատացելոց, պայծառացան և ար-
տաքոյ փառք և պաշտամունք եկեղեցւոյ, որ ըստ հոյա-
կապ տաճարացն, որ ըստ փառաւոր հանդերձանացն,
որ ըստ մեծաշուք զգեստուցն, որ ըստ հրապարակատես
թափօրիցն, և որ ըստ անձին առանձին կարգեալ հան-
դիսիցն բարեպաշտութեան։
Այս արդ յամենեսին 'ի սոսա յորժամ երբեք երբեք
զեղծումն ինչ տեսաւ, յայնժամ որք միանգամ թուլա-
հաւատքն էին կամ թէ նորաղանդք հերձեալք կամ որք
անհաւատք գլխովին, ոչ միայն անիրաւութեամբ, այլ
և անհանձարաբար սկսան բամբասել և զբարեպաշտու-
թիւնն ինքնին գլխովին։
Այս ահա ձեզ սիրելիք երրորդն պատրուակ, որով ընդ
վայր հարկանեն զարտաքին զկարգս բարեպաշտութեան,
փոխանակ ընդ վայր հարկանելոյ զզեղծանեն ոմանց 'ի
նոսա։ Այլ սակայն նենգեն սոքա. քանզի քօղարկել զիւ-

digitised by A.R.A.R.@

բեանցն ինդրելով խակութիւն և զյուսութիւն և ըղթուլահաւատութիւն, անկուշեն դնշմարտութիւնն։ Բանցի տեսանեն և այսօր գրաղուն, արք նշանաւորք և հոյակապք 'ի լուսութեան բարոյից, յառաքինութեան, յանկեղծութեան, յարդարակրթութեան, յիմաստութեան, յանշահասիրութեան, 'ի բարեմարդութեան, 'ի քաղաքակիրթութեան, և յամենայն բարեկարգութեան գնացս ընդ որս և հիացեալ են նոքա։ Սակայն և տեսանեն դարձեալ, զի և նոցին արք անխափան ընթանան ըստ ժամանակին յամենայն պաշտամունս բարեպաշտութեան, յաձախեն 'ի խորհուրդս, վարժին 'ի բաղմադէմ հրահանգս հոգւոյ և ամենայն գործոց բարեաց հպատակ կան ամենայն երկիւղածութեամբ։ Իսկ իբրև ինքեանք չկարեն 'ի կշիռ գալ ընդ նոսա ոչ 'ի զեղեցիկ պարգևս բնութեանն, և ոչ հետևող լինել կամին նոցուն բարեպաշտութեան, սկսանին բամբասել և ընդ վայր հարկանել՝ եթէ զեղծեալ են նոքա 'ի բարեպաշտութեան կարգս և չարաչար վարին նոքա։

Յե արդ քեզ որ զայդ պատրուակես, 'ի մի բան կայ աւադիկ պատրաստ պատասխանին։ Որ այն բան, ասէ՝ ասա, ասա՝ 'ի մարդիկ, թէպէտ և առաւել արդոյ և առաւել սուրբ՝ յորում ապականութիւն մարդոյ ոչ զեղծանիցի նոքա։ Յե բարեպաշտութեան կարգայ զեղծումն, ոչ իցէ մեզ՝ արդեօք բարեպաշտութեանն ինքնին, եթէ զեղծելոյն նոքա. որպէս և յառաջ ևս ընթացեալ 'ի քարոզիս, Ճշգրտագոյնս պարզեսցուք քեզ։ Զի դու արհամարհեա՛ և զառաքինութիւնն զլխովին, տեսեալ զի նոքա զեղծանին ոմանք. և զլեսցիս դու յանժամ 'ի պատրանս մեծամեծս և 'ի մոլորութիւնս առաւել վտանգաւորս քան զզեղծելոցն։ Եթէ զզեղծմունսն զարաբին բարեպաշտութեանցն կամիս 'ի չքմեղս հանել, և ոչ դարձեալ զընդդէմ նոցուն նախանձաւորութիւնն՝ յորժամ յերկիւղանս յանկեսցի բարեպաշտութեանն։ Ի պարսաւել զչարաչար պէտսն և զզեղծմունսն պէտք են քեզ ուշիմ լինել և զգաստ այնչափ լինն Ճշգրտաբանութեամբ, զի մի բարեպաշտութեանն վերս դիցես, և մի սանձարձակ գնացիցն և թուլահաւատութեան ուղի հորդեսցես։ Եթէ դու շուրջ լցեալ տեսանես զաշ-

digitised by A.R.A.R.@

խորհ կամ սակաւահաւատ որերով և կամ անհաւատ մարդկամբ. որ ոչ միայն հրահանգաց առ Աստուածպաշտամանն ոտնհար լինին, այլ և հաւատոյն վարդապետութեան գլխովին և ահագին խորհրդոյն Ճշմարտութեան։

Զաւ, ոչ մարմնոյ կրթութիւնք, ոչ գունակ գունակ արտաքնայարդար յարգանացն պաշտամունք, յանդիման ամենատես ականն Աստուծոյ որոշեն զչարս 'ի բարեաց։ Աւասիկ քեզ յիմար կուսանքն և խնամտունքն. ամենեքին նոքա առին զլապտերս իւրեանց ընդառաջել փեսայի և հարսին, միաբան ընթանային 'ի նոյն ակումբ բազմականին. և սակայն իւղ սիրոյն և հաւատոյն որոշեաց զնոսա 'ի միմեանց։ Այս աւասիկ արահետն և արքունին Ճանապարհ զոր քեզն հորդեմ զարդիս։ Զանազի որ հաստատեցի զպիտանութիւն զարտաքին կարգայն ընդդէմ անգոսնողացն, արդ պարտ է ինձ հեռքել և զչարաչար պէտսն, զզեղծումն զնոցա ընդդէմ այնոցիկ, որ յարտաքինս յայսոսիկ հիմնեցուցանեն զամենայն զքրիստոնէական բարեպաշտութիւնն։

ՄԱՍՆ Բ.

Զոր աստուածային առաքեալն ասէր երբեմն յաղագս մարմնական օրինացն, իցէ և մեզ զնոյն ասել յաղագս արտաքին հանդիսից բարեպաշտութեանն, եթէ պիտանի են, և սուրբ են և արդար. "Պատուիրանն, ասէ, սուրբ է և արդար և բարերար.,։ Այլ սակայն զեղծանիցն նոքաւք՝ յառիթս ետս փոխել մեզաց զայն ինչ որ 'ի սկզբանն հաստատեցաւ 'ի հորդել զփրկութիւն։ Զանզի որ պիտանին է և բարերար, անպիտանանայ իբրև բնաւ իսկ անպտղաբեր, յորժամ պակասի նմա հոգին, այս է հոգի հաւատոյն և սիրոյն. քանզի մարմին լոկ առ ոչ ինչ օգտէ։ Այս որ սուրբն է և արքարար, փոխի 'ի խոչընդոտն փրկութեան առ գոռոզութեան և յանձնապաստանութեան մարդոյն որ բարեպաշտէ։ Այս որ արդարն է և արդարացուցիչ, եղծանի. յորժամ զարտաքինսն նախամեծար առնէ մարդ քան զբուն և զտիրական զպարտսն։

digitised by A.R.A.R.@

Այլ արդ առաջին, սիրելիք, քաջ միտ դիք, զի ողջոյն արտաքինս պաշտօն նպատակ իւր զբարեկարգութիւնն ունի զբրտին և զհրահանգն, իբրու զառաջին և զվերջին իւր վախճան։ Մեծայն գործ բարեպաշտութեան որ ոչն ձկտի զարքայութիւնն Աստուծոյ հաստատել 'ի ներքս 'ի մեզ, որպէս ասաց տէրն, մնոտի է։ Մեծայն կրթութիւն սրբութեան որ բնակակից իւր ունիցի 'ի մեզ հանապազ զմեր կիրն, որ ոչն քեցեսցէ 'ի սիրոյ աշխարհի զմեր սիրտս 'ի գժպատեհ ցանկութեանցն, որ յարմատոց չիզեսցէ 'ի սրտից մերոց զատելութիւն, զնախանձ, զամբարտաւանութիւն, զյանդգնութիւն, զծուլութիւն, այն ամենայն կրթութիւն խաղ և այպանք է առաքինութեան, քան թէ ինքնին առաքինութիւն ճշմարիտ։ Եթէ այնպիսիք ոմանք եմք առ Աստուծոյ, որպիսիք զմեզ յանդիմանեն նոքա իղձք մեր և սիրտ մեր. ոչ ինչ տեսանէ նա 'ի մեզ բայց զսէր մեր։ Այս ինքն նպատակ ամենայն ցանկութեանց մերոց ինդրէ միայն լինել. վախճան ամենայն գործոց մերոց, սկիզբն ամենայն ըղձից մերոց, և բնաւ իսկ թափ և բերումն ոգւոյ մերոց։ Այն ամենայն որ չէ այսպիսի, որչափ փառաւոր, որչափ և հոյակապ իցէ առաջի մարդկան, յոչինչ է առաջի նորա. պղինձ է որ հնչէ, և ծնծղայ որ զողանչէ։

Հաւասիկ քեզ կրօն ճշմարիտ, ահա պաշտօն ճշմարիտ առ Աստուած, որ ողջոյն հաստատեալ կայ 'ի սրտի։ Ո՞ւ ինչ յայտնեցաւ Աստուած մարդկան, առ ինչ երևեցոյց յերկրի եկեղեցի, առ ինչ կարգեաց զմեծվայելչութիւն հանդիսից արարողութեանց, զզօրութիւն աստուածային խորհրդոց, զհոյակապութիւն զիւրոց խորանաց, զգիմակ գիմակ հրահանգս և ողջոյն զհանդերձանս զիւրոյ պաշտամանն, բայց եթէ 'ի յորդորել զմարդիկ և քաղցրացուցանել զնոսա 'ի պարտս ներքինս սիրոյ և հաւատոցն և զոհութեանն. և առ 'ի կազմել իւր ժողովուրդ սուրբ, մնքուր, անարատ, հոգևոր, 'ի յաւերժական փառս անուան իւրոյ։

Հաւասիկ վախճան պաշտամանն Աստուծոյ կարգեալ յանսահման իմաստութենէն։ Կրօնք՝ որ միայն արտաքնայարդար իցէ, և ոչ տիրասցի 'ի վերայ սրտի և ըղձից նորա, անարժան է գերագոյն էին. չէն նորա փառք, չէ նորա երկրպագութիւն զոր ինքն ինդրէ։

digitised by A.R.A.R.@

Կրոնք են այն տարբերապաշտիցն հեթանոսաց որոյ մարդիկ էին զտակը. որ պատուիրէին միայն պաշտամունս արտաքնացոյցս և արարողութիւնս այլանդակս, անմշակ թողեալ զներքինս նոցա յապականութեան սրտից նոցա. քանզի և կարէին իսկ ոչ՝ բուժել զապականութիւնն զոր և ոչ ճանաչէին անդամ։

Այս սակայն, աւա՜ղ մերոյ բախտին. զի այս և զմեր կողմն ճգնէ. այս և ընդ մեզ ոգորի, և այս վերը են եկեղեցւոյ արտասուելի։ Բա՛ռք, ոչ ահա ամենայն փառք դստեր թագաւորի՝ զոր 'ի ներքոյ ասաց մարգարէն, կայ արդ աւասիկ արտաքոյ յերևանի։ Այկաց երբեք երևոյթն այնպէս զեղեցիկ, որպէս առ մեզ. արտաքինքն պաշտման կացին երբեք այնչափ հանդիսացեալք որպէս առ մեզ. Երբ կանգնեցան երբեք յընդհանուրս տաճարք և վկայարանք այնչափ հոյակապք։ Որդերդք երբ յաճախեցին այնչափ, պատարագք երբ մատեան այնչափ, և երբ արդեօք այնչափ ջերմեռանդութիւնք արտաքինք։ Այս ապա՝ թերևս և երբ արդեօք աստուածպաշտութիւնն ներքին այնչափ նուազեալ, և ճշմարիտ քրիստոնեայք այնչափ դժուարագիւտք։ Բա՛ւ, ոչ զլեզուն վարեմ զթուլահաւատիցն. զնոսա ես յառաջնում վանեցի մասին։ Որքա՜ զներքինն միայն դովեն, զի զարտաքինն արհամարհեսցեն. թէպէտ և զիրկք են միանգամայն և 'ի ներքնոյն և յարտաքնոյն։ Բակ որ պնդապահքն են միայն արտաքնոյն, չասեմ ես եթէ կեղծաւորք են, այլ թէ մտախաբք են և մոլորութեամբն անբերկեանք յանձինս. ապաստանեալք միայն 'ի լրումն արտաքին պաշտամանց կրօնին. չհոգացեալք ինչ զներքնոյն, փոյթ չտանին ոչ սրտին մաքրութեան, ոչ դարձին նորա, ոչ փոփոխութեան վարուցն. յանդորրու կան միշտ 'ի նմին վիճակի։ Այս քանզի երբեք երբեք և բարեպաշտեն և բարեգործեն, և հանգուցանեն զիսայթ խղճին, ուստի և կեան այնպէս անզգայք յախտս և 'ի մոլութիւնս իւրեանց։ Ո՜հ, մեծապէս են պատրանքս, և տարածեալ են յընդհանուրս։

Քանզի և որչափ անհոգացեալ են նոքա 'ի ներքին սրբութիւն, այնչափ և ժրացեալք են յարտաքինն։ Զեռն տան հիւթացելոց, ողորմին կարօտելոց. աւուր աւուր, ամսոյ ամսոյ 'ի սահմանեալ ժամն և ժամանակս

digitised by A.R.A.R.@

բաշխեն ինչս. և զինչ քան զայն գովանի կայցէ, և զինչ ստէպ ստէպ քարոզեալ 'ի զիրս իբրու զողորմածութիւն։ Եւ յլ նոքա կարծեն զամենայն ինչ կատարեալ միայն պատուիրանաւն այնուիկ. իսկ յետ այնորիկ կեանս վարեն անխիղճք 'ի յանցաւորութիւնս, 'ի գայթակղութիւնս, յոխակալութիւնս, 'ի բամբասանս, 'ի ստութիւնս և 'ի խարդախութիւնս վաճառաց, ընկղմեալք յաշխարհ և զակատեալք 'ի վարս սանձարձակս։ Արի է ողորմածութիւն. այլ եթէ դու չողորմիս նախ անձին քում, ընչից քոց չեն ինչ պէտք Աստուծոյ. նա զսիրտ քո խնդրէ. ապա թէ ոչ, արծաթ քո ընդ քեզ լինի 'ի կորուստ։

Արձեալ և վայրաց սրբութեան շուք եղեալ ուշ ունին նոքա. զարդարեն զեկեղեցիս, զարդարեն զխորանս, և այլոց ևս գործոց բարեպաշտութեան փոյթ ունին։ Եւ միանգամայն և 'ի գործսն յայն բարութեան յարտաքինսն, նոյն են նոքա 'ի ներքինս իւրեանց. ամբարտաւանութիւն 'ի միտս, մախանք, ատելութիւն 'ի սրտի, անժուժկալութիւն 'ի մարմնի, ապերասանութիւն 'ի գնացս, շամբշութիւն 'ի կենակցութեան։ Եւ մինչդեռ զարդարեն զտաճարս, զխորանս, ինդրեն անպարտս լինել 'ի զարդարելոյ զհոգիս իւրեանց, որ տաճար է Աստուծոյ կենդանւոյ։ Արձեալ և ժամասէրք, և ժամասացք անխափանք են նոքա, և աղօթաւորք անվրէպք և յերկարողք. այլ միշտ նոյնք գաղջացեալք 'ի վարս, և նոյնք անհոգացեալք 'ի պարտս իւրաքանչիւր վիճակի, 'ի պարտս պաշտաման, 'ի պարտս տան և ընտանեկացն։ Նոքա և յորժամ արկածից պատահեն, և աղէտք մեծամեծք հասանեն տանն և հիւանդութիւնք մահացուք հասանեն որդւոց կամ կնոջ կամ կարևոր մերձաւորաց կամ մտերիմ բարեկամաց, յառնեն դիմեն յայնժամ յաղօթս արանց բարեաց և առաքինեաց. ուխտս դնեն ամենայն սքանչելագործ վայրաց բարեխօսութեամբ սրբոց. չիք տաճար, չիք խորան յորս ոչ մատչիցին պատարագք վասն անդորրութեան տանն, վասն ապաքինութեան ախտացելոցն, վասն քաջողջութեան կենացն և երկարութեան. և կրկնապատկեն և երեքսպատկեն զայիշելիս և նպատակս։

digitised by A.R.A.R.@

Օ՛ի գործեա, այր դու։ Լոյծ ինչ դարման աղեաթոյր այդոցիկ։ Լ՛յո։ Լ՛հա հաշտ արա զԱ՛ստուած փոխանութեամբ անբարի վարուցդ։ Յայն սակս առաքեաց Ա՛ստուած զաղեստդ, զի դու յիշեսցես զնա և զդատապարտիս և դարձցիս առ նա։ Դու պատարագս մատուցանեա այլ, և նուէրս ընծայեա օտարս. մատո միանգամ և զսիրտ քո նմա 'ի նուէր՝ խոնարհեալ անձամբ 'ի զեղջ, 'ի հեծութիւնս, յապաշաւս. "Պատարագ Ա՛ստուծոյ հոգի խոնարհ ..." փոխեա զվարդ, կեաց երբև ՀՀմարիտ քրիստոնեայ. և ցածուացես 'ի քէն զսրտմտութիւնն Ա՛ստուծոյ։

Լ՛ու զինչ եւս այլ. գիտես իսկ դու զՀասարակաց զօրավիգն յաղցաւոր 'ի կեանս, զմիջնորդն փրկութեան քո, "Օ՛միտ բարեխօսն աշխարհի, և զդուռնն երկնից, և զՀանապարհն արքայութեան", որպէս ասէպ լեաս 'ի նուագս եկեղեցւոյ, զամենասուրբն ասեմ զաստուածամայրն և զփառաւորեալն և զմիշտ կոյսն։ Դիտեմ զի բարեպաշտես կանխես 'ի խորանս նորա ջերմեռանդն աղօթիւք զօրհնասաղ մանաւանդ 'ի կարիսդ, և անխափան գտանիս յամենայն պաշտամունս փառաց նորա։ Դաջ է։ Ա՛յլեսս 'ի քեզ 'ի վերս քան զամենայն զնմանողութիւն զմիածնի որդւոյն իւրոյ խնդրէ տեսանել 'ի քոյ վարս, 'ի քոյ ՀՀմարիտ առաքինութիւնս, 'ի քրիստոնեայ անուանդ արդիւնացեալ 'ի գործոց քրիստոնէութեան։ Օ՛ինչ օգուտ իցէ ստէպ կարդալ առ տիրամայրն, եթէ փոյթ ինչ ոչ է քեզ հետևող լինել սրբութեան և առաքինութեանց տիրամօրն։ Լ՛ու այսպէս, եթէ յարտաքինագ միայն մնդասահ եղեալ հաստատեսցես զքրիստոնէութիւնդ, քան քրիստոնեայ՝ առաւել իրատիլ արտաքնապաՀՀ ես քրիստոնէի, գերեզման ես բռեալ, շիրիմ զարդարեալ արտաքոյ նուիրական ցուցակութեամբ, օրինակաց, նշանակաց, դրօշից հաւատոյ, կրօնի, արդարութեան, ողորմածութեան. և 'ի ներքոյ լի ամենայն պղծութեամբ և ժահահոտութեամբ։

Ա՛յլ դու ասա ինձ. գոհ իցես երբէք դու և շատասցիս յերկայնս միայն բարեկամութեան, երբ ՀՀղբիտ գիտասցես քեզ թՀնամի զանուանեալ բարեկամն քո։ Ա՛ՀՀ ապաքէն նողկալի առաւել երևեսցին քեզ յայն-

digitised by A.R.A.R.@

ժամ պատիր նորա գրդանքն և քծնութիւնք։ Լու արդ եթէ մարդ զոլով քո զաղջմտութիւնն միայն խնդրես 'ի նմա և զիրա նորա, իսկ ապա Աստուած, Աստուած նախանձոտ Աչմարտութեան և Աստուած արտի, նուա-զեալ գայցի 'ի զգայութեան քան զմարդ, շատացեալ ընդ արտաքինն քո միայն և ընդ լոկ կրթութիւնս մարմնոյ։ Աստուած, զոր չմարթիս դու երբեք փառաւորել և պա-տուել, բայց սիրելով գնա 'ի արտ։ Ապա թէ ոչ, և իբր յայնժամ ոչ կարդասցէ նա զահագին սպառնալիսն, է-թէ՝ չէն ինձ պէտք ժողովրդեանս այսմիկ. "Օ՜ի ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս, և սիրտ իւ-րեանց հեռացեալ մեկուսի է յինէն. զուր պաշտեն զիս՝՝։

Սեղամուտք ուրեմն, սիրելիք, եթէ անպիտանք և բնաւ իսկ անպտղաբերքը են արտաքինքն, անբաժք 'ի ներքնոյն՝ 'ի սիրոյն և 'ի հաւատոյն, զմտաւ ածէք եթէ և քանի խոչք փրկութեան մարդաբերքը իցեն նոցա, որ միանգամ մտախաբ անհրկեանութեամբ միայն յարտա-քինագոյն ապաստան լինիցին։ Զանգի արտաքին կարդաց կրթութիւնք թուին իմն յապահովել զիսիղձ մտացն, և ապաստանարան իմն գործել մեզաւորի՝ թէ-պէտ և 'ի նոյն մեղն յանառեալ կայցէ։ Ազերկնչի նա 'ի արտին խստութենէ և 'ի լքմանէն Աստուծոյ, յորում բազում անգամ պատուհասին մեզաւորք հնացեալք. զերկնչին՝ քանզի տակաւին ըղձակալեալ տեսանեն զան-ձինս յինչ ինչ արտաքին պարտս կրօնի։ Ազանէն զմտաւ զի նոյն ինքն է հնարիմացութեան խաբանք բանսար-կուին, մինչև յանապաշխարութիւն ածել զնոսա։

Մոլեգնս աւադիկ այն որ զակատեալ զհետ խաղուց 'ի շահս անարժանս, հանդարտէ զիսիղձ մտացն, բաժին մի հանեալ անտի և աղքատաց։ Զարձեալ և այն որ շատ հանարի անձին զկենդանութիւն երբեմն ընդ ա-բանց աստուածապաշտիցն և առաքինեաց. խնդրէ 'ի նա-ցանէ աղօթս վասն անձին, վասն կենաց բարեբաս-թեան, վասն բարիոք կատարածի կենաց։ Զյլ ինքն ա-ռանձին անիսկի է զհոգւոյն. կեայ նոյնպիսի. չիք փո-փոխութիւն, չիք լաւութիւն 'ի վարս. ապաւինեալ կայ միայն յարտաքինացոյց բարեպաշտութիւնս. սիրտ նորա նոյնպէս ցանկորդեալ կայ յատելութեան, 'ի մախանս, 'ի

digitised by A.R.A.R.@

յանկութիւն մեծութեան, և 'ի մարմնոյ փափկութեան. կենակցութիւն նորա զառն, երկիւղածութիւն, չարարուեստս ընկերն, գնացք ցոյիր, դատարկասուն, մերկացեալ հովացեալ յաստուածայինս, անձնասէր, քինախնդիր։ Եւ 'ի վերայ այսր ամենայնի երբու 'ի նաւահանգստի յապահովի կայ շուրջ պարսպանեալ յարտաքին նշանակաց բարեպաշտութեան, իբրու առ իւր զամենայն միջնորդս ունելով զփրկութեան հոգւոյն, բաց 'ի միակ անհրաժեշտ միջնորդէն՝ 'ի փոխարութենէ վարուց իւրոց։

Եւ յս ասպարէզս սուտ և վատանգալից երբէք չիծողս մարդոյ զառնալ 'ի զղջմունս։ Հաւասիկ քեզ ժողովուրդ հրեական՝ զնդապետ հաւատարիմ արտաքնոյն արարողութեանց, կացեալ 'ի սպասս 'ի կարգութեան։ Օ՜ուր գոչէին սակայ մարդասէրքս, ընդ վայր քարոզէին։ Եւ 'ի դուք, ո՞ ժողովուրդք, մի՛ 'ի զոհս միայն ապաւինիք և 'ի զուարակս, մի՛ 'ի նուէրս, մի՛ 'ի ծոնս, մի՛ 'ի յաճախութիւն միայն օրինակին պահպանութեանցդ։ Օ՜ուր էր քարոզն, սուտ էր անդորրութիւնն, անթափանցելիանզգայութիւնն, մահաբերութիւնն. քանզի սնդապահքն միայն էին յարտաքինսն։ Եւ սէրն, եթէ սիրտ միայն մաքուր ընդդէմ Աստուած, միաբ անապատ, ապաշաւ անկեղծաւոր, կեանք անմեղ. վախճան արարքն չարեացն, սէր սերտ կարարութեան միմեանս. սա տառեցեալ զսիրտ և մի զարտմուճանն։ Եւ սէրն, և սաղմոսքն անդղայացեալք կայրն 'ի լուրս տաճար տեառն, աղաղակէին, տաճար տեառն. մեք 'ի տաճար տեառն և 'ի զոհսն ասպարէզեալ կամք. շատ են մեզ սպրդիկ։

Եւ աղեկ, սիրելիք, մերազարդք մեծամեծք, և տնտարիշաք անհնարինք և մաքսաւորք և պոռնիկք դառնան առ Աստուած։ Եւ սակ Փարիսեցիքս, կիսատանեալ քրիստոնեայքն, հոգիք՝ որ 'ի նոցն 'ի միում ժամանակի և կրօնասէրքս են և աշխարհասէրքս, որք զարտաքնոյ զլրանն 'ի մի յարակցեն ընդ բերկրութեանց մարմնոյ, ընդ սկզբանց աշխարհի, ընդ դժպատեհ կրեցն, երբէք նորա ոչ դարձցին առ Աստուած. անբիւրեղք 'ի կեանս, անղեղք 'ի մահուն։ Եւ զեղ եկեալ Եկեղեցոյ զօրականին, որ արտաքոյ վասն աստուածպաշտութեան մարտ եղեալ կուռէին, և 'ի նեղբոյ հանդերձ-

ձիցն յուռուԹուլունս և բժժանս յամենայն կոց ուս ընդ անուԹ ունէին. ուստի մանաւանդ գարշելին օրէնքն։ Խաբէ, զիարդ հեշտին էր լինել կատարեալ քրիստոնեայ, եԹէ յարտաքինսն միայն հաստատեալ էր ոգի և կատարելուԹիւն աւետարանին։ Յուշ ձեզ 'ի դէպ ժամուս կամիմ ածել զյիշատակի արժանին, զոր 'ի նախնումն ոմն յիմաստնոց հեԹանոսացն 'ի դէմս հարկանէր քրիստոնէից, եԹէ օրէնք Քրիստոսին այս գերակատարք են, սակայն մարդկան տկարուԹեան անհնարինք 'ի կատարել։ "Զեր, ասէ, որ յաւետարանին պատուիրանք, գիտեմ զի այնպէս իմն սքանչելիք են և այնչափ մեծամեծք, մինչև ինձԹուի՝ բաւական և ոչ ումեք լինել 'ի պահել զնոսա։"

Այլ արդ զինչ անհնարին ուրեմն իցէ տկարուԹեան մարդկան օրէնք Քրիստոսի ըստ առաւելագանց ձեւոյ բանից հեԹանոսին, եԹէ արդարև յարտաքինսն անդր միայն հաստատեալ էր հրահանգ օրինացն։ Օ՞ինչ անհնարին էր օրինակ իմն՝ տուրս ինչ ջամբել աղքատաց, ջերմեռանդն լինել աղօԹաւոր առ տիրամայրն և առ սուրբս, բարեպաշտուԹեան ինչ կարգաց հըպատակ կալ, զարդս ինչ տալ տաճարին Աստուծոյ և խորանացն, ժամասէր լինել, և երբեք ուխտագնաց լինել։

Իսկ որ 'ի մերսն մեծապէս է և որ շատ արժէ, այն է մեռելուԹիւն ցանկուԹեանցն, յաղԹել դժպատեհ կրեցն, յարմատոց խլել զչար սովորուԹիւնս, բարեկարգել զանկակից հակամիտուԹիւն չարին։ Այս որ անհնարին է խմաստուԹեան աշխարհի և անհասանելի, սիրել զԹշնամին, բարի առնել ատելեացն, աղօԹել վասն հալածչացն. քօղ արկանել յանցանաց ընկերին, անոխակալ լինել, ատել զաշխարհ՝ որ ընդ խաբս զրգայ զմեզ։ և զամենայնն ունելով զկենցաղականսն՝ զերծ և անդրժելի պահել զսիրտն։

Այս տիրապէս կեանք քրիստոնէին, ահա ոգի աւետարանին. ահա որ մեծ և սքանչելի յանդիման հեԹանոսացն առադրեր զսրբուԹիւն, զվսեմուԹիւն, զիմաստուԹիւն բարոյականին Քրիստոսի։ Իսկ արտաքնայարդար գործք և կարգք է բազում անգամ զի և ծնունդք են անձնասիրուԹեան. ուստի և բազում ան-

digitised by A.R.A.R.@

զամ նախամեծար ընտրին տոքա քան զբուն պարտս աստուածպաշտութեան. և վերջ 'ի վայր տապալի այնուհետև կարգն, քանզի եղծանի արդարութիւնն։

Այլ ահա հասեալ ժամանեցաք յերրորդն անկարգութիւն վտանգաբեր յոյժ։ Քանզի տեսանեմք իսկ զբազումս՝ ժիրս և նախանձաւորս յինքնաձեռնադրելի բարեպաշտութիւնս, իսկ 'ի բուն պարտս իւրեանց՝ զոր պահանջէ 'ի նոցանէ Աստուած յուշացեալս և անհոգացեալս։ Գործոց պաշտաման՝ զոր զանձամբ առին՝ չտանին փոյթ առանին խնամակալութեանց գերդաստանին, քանզի անշուք և անտես 'ի մարդկանէ ոչ տածեն զանձնասիրութիւն նոցա, միտ ոչ դնեն. այլ 'ի փառասիրութեան սակս և 'ի ցոյցս յանձն առնուն առ արտաքինսն Ճիգն թափել։ Աստաձեռինք են, ջամբեն տուրս վանաց, աղքատանոցաց, և 'ի հատուցմունս արդարութեան՝ զոր հրամայեն օրէնքն Աստուծոյ՝ անհոգացեալք են 'ի վնասել պարտատերաց զպարտսն։ Աղօթեն յոյժ՝ պարտք էին նոցա գործել, գործեն յոյժ՝ պարտապանք էին աղօթել։ Վերակացուք լինին այլոցն և ոչ բոլոցն, իսկ սեպհական իրք տանն վերջ 'ի վայր տապալեալ են, և հիբացեալ զաւակքն անտերունչք կան։ Տեսուչք լինին և ոստիկանք վարժարանաց, դպրոցաց. իսկ 'ի բարիոք դաստիարակութիւն որդւոց և ընտանեաց և ծառայից երբեք ոչ հպատակին։ Օտարացն կոչ և զգժտութիւն հաշտ առնեն, և գեղեցիկս խաղաղեն զտունս նոցա. իսկ 'ի սեպհական իւրեանց տան հանապազօրեայ է կռիւն, և խաղաղութիւն բարձեալ է 'ի պատճառս դժխեմ բարոյից տանուտերացն։ Զասի ոչ դնեն զբօսասէր գնայիցն և դժպատեհ ախորժակացն, և զկապ սիրոյ զամուսնացն խզեն և ուծացուցանեն յանձանց։ Այրեան խնամարհին միմեանք լինել ցաւագնելոյն մարմնով, իսկ 'ի սէր պատուիրանին Քրիստոսի և ոչ քայլ մի ոտին շարժեն գնալ հաշտիլ ընդ թշնամւոյն և ներել և շահիլ զնա 'ի տէր։ Յաղօթս յաճախեն շատախօսս և երկարս, և ապա նոքին բերանով՝ որով օրհնեցին զԱստուած՝ բամբասեն դատափետեն զեղբարս։ Ի դէպ եկեալ առաքելական յանդիմանութեանն, եթէ "Որ զբաղեցուցանիցէ զսիրտ իւր, և որ միով իւիք գթիցէ, թէպէտ և զամենայն օրէնսն պահեսցէ, այն-

digitised by A.R.A.R.@

պիտոյն վայրապար է կրօնաւորութիւն և աստուածպաշտութիւն. և լինի ամենայն օրինայն պարտական։

Կանոն անստերիւր աւասիկ ձեզ, սիրելիք։ Զ.ին ամենայն որ դիմամարտի բուն և տիրապէս պարտուց իւրաքանչիւր վիճակի, երբեք չմարթի լինել ոչ գործ հաւատոյ, ոչ արդիւնք աստուածպաշտութեան։ Զրիստոս չէ բաժանեալ ընդդէմ անձին իւրոյ։ Վերն չեղծանէ զոր շինէ արդարութիւնն։ Զ.ան որոյ և դուք եղբարք սկիզբն յամենայն գործս ձեր, սկիզբն 'ի պարտուցն աբարէք. և զոր միանգամ ոչ շինիցէք 'ի վերայ հիմանս այսորիկ, այն ամենայն եղիցի իբրև փլածք աւերակաց, կարկառ դերբկաց, կոյտ գործոց մեռելոց, շեղջ յարդից պատրաստելոց 'ի հուր։ Զտուգութեամբ ասեմ ձեզ, եղբարք, զի փոյթ ինչ չէ Զ.ստուծոյ վասն գործոցն զոր ոչն ինդրէ 'ի մէնջ։ Հարցանիցէք, եթէ 'զինչ այն զոր 'ի մէնջ ինդրիցէ։ — Ինդրէ նա 'ի ձէնջ զբարեպաշտութիւն ճշմարիտ և զանկեղծաւոր, զհաւատարմութիւն առ պարտս վիճակաց իւրաքանչիւր. նախ լրումն տալ պարտուցն, և ապա ըստ յօժարութեան առանձին յաւելուլ 'ի նոսա։ Զ.յլ մի նախամեծար քան զբունն ընտրեսցես զյաւելուածն. մի քան զօրէնսն Զ.ստուծոյ, զքմահաղարդ հաճութիւնդ. մի քան զբարեպաշտութիւնն ինքնին՝ զերազայոյս կատարելութիւն բարեպաշտութեանն։ Զ.ուած համբաւեալ է զոր զրուցեն, եթէ այլանդակ այնպիսի է ախորժակ մարդոյ, զի լուծ պարտուցն դժոխամբերելի է, լուծ անմխիթար է, հարկապահանջ է, տաղտկացուցիչ է անձնասիրութեան։ Ոսկ 'ի գործս՝ զոր մեք ինքնին մեզ պարտս եդաք՝ բերկրանօք բերիմք, լուծ է փոքրոգի, և եթէ դժուարաբիրան ինչ կայցէ 'ի նոսա, քաղցրանայ. կամ 'ի տնկակից ախորժակաց, կամ 'ի ծածուկ բերկրութենէ, զի մեք մեզէն ընտիր արարաք։

Զ.ս արդ յերկուց անչափութեանց զդոյշ կացէք, սիրելիք, 'ի կրկին ժայռէն, զոր ակներև ձեզ արարաք 'ի ճառքարողին։ Զ.ուաքինութիւն ճշմարիտ զմիջասահմանն միշտ ունի ուղի անխոտոր. միայն ըստ քմաց ախորժակք սիրեն զծայրայեղսն։ Զ.է ինչ 'ի մերոցս մեք յաւելցուք 'ի կրօնն. լի է նա արդէն բարձրագոյն խորհրդով. միայն թողցուք զնա՝ որպիսի և էն։ Զ.այս եթէ զմեր զախոր-

digitised by A.R.A.R.@

ժական, զմեր զիմաստն ինդրեսցուք խառնել 'ի նա, դարձցի եղիցի նա յայնժամ կամ իմաստասիրութեամբ ինն անպտուղ բարձրայօն, և յանդուցեալ միայն 'ի լոյս բանին, և ինչ մի քաղցրամոք ոչ ջամբեսցէ սրտին 'ի ձաբակ. կամ նախանձաւորութիւն ինն այլանդակ և աւելապաշտ զոր ողջմտութիւն բանին այպանեսցէ, և զոր և դաւանութիւն հաւատոցն դատապարտեսցէ։ Բաքինակրօն վարուք արգոյ ընծայեցուսցուք զառաքինութիւնն, նաև որոց ոչն սիրեն զնա. ցուցցուք աշխարհի մերովն իսկ քաղաքավարութեամբ 'ի կեանս, եթէ չէ բարեպաշտութիւն ինքնաստեղծ գիւտ կամ հանդիպք կամ տկարութիւն, այլ կանոն միանգամայն ամենայն պարտուց, կարգ ընկերութեան, ողջմտութիւն բանին, միակ իմաստութիւն ցանկալի մարդոյ 'ի վերայ երկրի։

Ցուցուք միջամուխ 'ի խորութիւն սկզբանց իմաստից կրօնին, և ողջոյն յամենայն շուք և մեծութիւն պատուիրանաց նորա։ Նեղ արկցուք և զթշնամիս առաքինութեան խոստովան լինել եթէ բարեպաշտութիւն ինքնին առանձին գիտէ ազնուացուցանել զսիրտ, վսեմացուցանել զմիտս, և արս գործել հոյակապս և դիւցազունս. և թէ չիք ինչ այնպիսի փոքրոգի և անտիսական, որպէս այր անձնագրաւ տիրացեալ 'ի կրից։ Արկնեցից միւսանգամ. արգոյ և մեծարոյ երևեցուսցուք մեք զառաքինութիւն. անդրժելի թողլով նմա՝ որչափ ինչ է 'ի նմա աստուածային և փարելի, զքաղցրութիւնն, զարդարութիւն, զազնուականութիւնն, զիմաստութիւնն, զՀաւատարութիւնն, զանշահասիրութիւնն, զվսեմութիւնն։ Եւ յայնժամ աշխարհ՝ թէպէտ և անիրաւ, հաշտ եղիցի ընդ բարեպաշտութեան, եթէ 'ի բացէ 'ի նմանէ արասցուք զձղձիմ բարսն և զտկարամտութիւնս։

Յսու օրինակաւ յաջողեսցի մեզ փառաւորիչս անուանն Աստուծոյ առնել զայնոսիկ, որ ոչն ճանաչեն զնա. և յոյս կալցուք մեք անխաբ յաւուր միում տեսանել զնոսա միաբան ընդ մեզ յանմահական 'ի կեանսն։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐՈՅԼՈՒ

ԵՐԿԻՒՂ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԵՐԿԻՒՂ ԱՆՁԻՆ

Սկիզբն խմաստութեան երկիւղ Տեառն։

Կիրք երկիւղի առելի է քնութեան մարդոյ։ քան զի երկիւղ ընդ ամենայնաւք զոլով՝ որպէս առաջ ասացաք, ամենայն և զմարդ, և զանդորրութիւն հոգւոյն զամենայն հանէ՝ ի նմանէ։ Այլ ակայն և յոյժ սիրելի մարդոյ, և խնդութեան և խաղաղութեան աւիթ առեալ զայն երկիւղ, յորմէ արդասիք մեծամեծք պտղաբերեցին բարեմասնութեանց հոգւոյն։

Այդ որ այլ սիրելիք, բարեմասնութիւն առաւել մեծ և ընտիրագոյն կայցէ բանաւոր արարածոյն, որ և միակ վախճան գաղտեան նորա յայս յաշխարհ, քան զյաւիտենական երջանկութիւն նորա՝ ի հանդերձեալ աշխարհին։ այն ինքն է յաւիտենական փրկութիւն հոգւոյն։ Փրկութիւն՝ որ արդասիք անշուշտ միայն է սքանչելագործ երկիւղին Աստուծոյ։

Անդի եթէ ոչ յայր ինչ վախճան անշուշտ գոյ մարդ յաշխարհս, բայց՝ ի կեալ Աստուած, և մեռանել Աստուած, և ժառանգել յաւիտեան զԱստուած, զիարդ երբէք կարասցէ մարդ՝ ի նոյն կէտ կոչման իւրոյ հասանել, յորժամ՝ ոչ ծանիցէ զԱստուած և ոչ երկիցէ Աստուծոյ։

Անդի երկիւղ Աստուծոյ առաջին հիմն է ամենայն

digitised by A.R.A.R.@

բարեպաշտութեան։ Երկիւղ Աստուծոյ սկիզբն հնոր-
հաց, գանձարան ամենայն արդարութեան։ Որ Աս-
տուծոյ երկնչի, երջանկասցի և յաշխարհի. քանզի և
յերկիւղէ անտի միշտ հրահանգեսցի նա 'ի կեանս իւր,
ուղղութեամբ և արդարութեամբ գնալ ընդ բնութե-
նակից մարդիկն, չասել ինչ որ անհաճոյ իցէ կամացն
Աստուծոյ, չգործել ինչ որ արգելեալ իցէ 'ի պատուի-
րանացն Աստուծոյ։ Որ Աստուծոյ երկնչի՝ որպէս աւե-
տեցին գիրք՝ միշտ լիասցի տուն նորա, միշտ յաջողեսցի
յամենայն 'ի վաստակս իւր։ Երկիւղածի տեառն
օրհնութիւն առ Աստուծոյ և երջանկութիւն միշտ
դեգերեալ կայցէ առ դուրս նորա։ Որ Աստուծոյ եր-
կրնչի 'ի կեանս իւր, անշուշտ գտցէ զԱստուած 'ի մա-
հուան իւրում։ Որ 'ի դատաստանացն Աստուծոյ երկնչի
աստէն, անշուշտ 'ի դատաստանաց անտի ապրեսցի ան-
դէն։ Օ՜նոյն մաղթեր աստուածայինն Պաւլոս.
"Լեռեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի 'ի դատաս-
տանաց քոց երկեայց յոյժ"։

Բա՛ւ եղբարք իմ, եթէ աստէն աներկիւղք Աստու-
ծոյ, աներկիւղք 'ի դատաստանաց նորա նաև օր մի
զկենաց մերոց անցուսցուք. այլ միշտ կեցցուք ընդ կեն-
սաբեր երկիւղին Աստուծոյ յամենայն 'ի խորհուրդս
մեր, յամենայն 'ի բանս մեր, յամենայն 'ի գործս մեր։
Մի՛ երբէք դլասցուք. մի՛ երբէք թողացուսցուք զհոգիս
յերկիւղածութենէն Աստուծոյ։ Պիտէք իսկ դուք, զի
ոչ որ զիարդ և կայցէ 'ի տեղւոջ ուրեք, անխախտելի
մնասցէ 'ի կայի իւրում, այլ որ սեռեռապինդ բեռեռեալ
կայ ուրեք, միշտ նոյնպէս կայ։ Ո՞ ման որոյ և գեղեցիկս
յոյժ արտայայտեաց Պաւլոս զբանն, չասաց լոկ տուր
ինձ զերկիւղ քո սուրբ, այլ թէ բեռեռեա զիս ընդ
երկիւղ քո։

Ո՞ ման որոյ առհասարակ, որ ասեմքս և որ լսեքդ այս
օր մեծամեծք և փոքունք, զերծք հոգւով 'ի մարմնոյ և
յաշխարհէ, հիմա միայն զահ և զերկիւղն Աստուծոյ
զկենսաւիթն, զիրկաւէտն, զանդորրաւէտն բեռեռես-
ցուք միշտ 'ի հոգիս մեր, և այնպէս հասցուք փրկու-
թեան։ Այլ կրկնակի այն երկիւղ քրիստոնէական՝ են
իսկ արդարև կրկին ձեռք, որովք ըստ աստուածային
առաքելոյն յաջողեսցուք մեք զանձանց փրկութիւն գոր-

digitised by A.R.A.R.@

ծել։ Երկիւղ ասեմ Աստուծոյ, և երկիւղ անձին։ Կամ՝ փրկիլ, երկիր Աստուծոյ։ Կամ՝ փրկիլ, երկիր 'ի քէն։

Արդինակի այս Ճշմարտութիւնք մեծամեծք, երկիւղ Աստուծոյ և երկիւղ անձին, եղիցին 'ի նիւթ կարևոր քարոզիս։ Ցացուք սկիզբն առաջնոյ մասին, երկիւղ Աստուծոյ իբրև 'ի դատաւորէ, երկիւղ Աստուծոյ իբրև 'ի հօրէ։

ՄԱՍՆ Ա.

Խորագոյնս երբեմն վարդապետէր աստուածիմաստն Աւգոստինոս, եթէ 'ի նախախնամութեան փրկութեան մարդոյ երրակի հայեցուածովք նկատեմք զԱստուած. իբրու տէր որ կիսոց չար հատուցանէ ընդ չարւոյն. իբրու տէր որ բազմաց բարի հատուցանէ ընդ չարւոյն. իբրու տէր որ այլոց բարի հատուցանէ ընդ բարւոյն. "Ցայ, ասէ, Աստուած, և չարիս ընդ չարեաց, և բարիս ընդ չարեաց, և բարիս ընդ բարեաց"։ Չար ընդ չարւոյ փոխարինէ, յորժամ զամբարիշտս անապաշխարս յաւիտենական տանջանաւքն պատժէ։ Բարի ընդ չարւոյ փոխարինէ, յորժամ զմեղաւորս ինքն հաւքն իւրովք դարձուցանէ։ Բարի ընդ բարւոյ փոխարինէ յորժամ զսուրբս փառաւք իւրովք պսակէ։ Յառաջնումն է ինքն դատաւոր արդար. յերկրորդումն է հայր ողորմութեանց. յերրորդումն է հատուցանող հաւատարիմ։

Արդիւնեայ որ Ճշմարտապէս փրկիլն կամեցի, պէտք են նմա զկրկնակի զայս երկիւղ տածել միշտ յանձին իւրում. երկնչել Աստուծոյ իբրև 'ի դատաւորէ, երկնչել Աստուծոյ իբրև 'ի հօրէ։ Առաջինն է երկիւղ աստուածային դատաստանացն. և է այս երկիւղ որ զմեզ խոնարհս գործէ. զայս երկիւղ ջերմեռանդն պաղատէր աստուածասէր մարգարէն. "Թևեռեա ընդ երկիւղքս զմարմին իմ, զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ"։ Երկրորդն է երկիւղ աստուածային ողորմութեանցն. և այս երկիւղ մեծապէս քաջալերէ զմեզ։

digitised by A.R.A.R.@

Իսկ դատաստանս երրակի վարէ Աստուած ընդ մարդոյ յաղագաւոր կեանս նորա։ Օ առաջինն 'ի ձրիաբաշխ տուչութեան շնորհացն։ Օ երկրորդն 'ի ձրիաբաշխ ընտրութեան առ փառս։ Օ երրորդն 'ի ձրիաբաշխ պարգև յարատևութեան 'ի շնորհս։ Ազգութիւնք մեք 'ի քնին սակաւուք զերրակի զայս դատաստանս Աստուծոյ զահագինս, որպէս զի պտղաբերեսցուք 'ի մեզ զկենսաւիթն շահ և զդողութիւն 'ի փրկութեան մերում։

Այլ արդ առաջին, զինչ է մարդ առանց շնորհացն Յիսուսի Քրիստոսի։ Այ իբրև մարմին առանց հոգւոյ. աչք են և ոչ տեսանէ։ ձեռք գոն և չկարէ գործել. ոտք և ոչ քայլ մի շարժել։ Միտք նորա անբաժ 'ի լուսոյ, կամք նորա անմանն 'ի զօրութենէ. չէ բաւական գործել և դուշնաքեայ ինչ բարի պիտանացու առ հանդերձեալ կեանս։

Այս է արժանահաս կախումին, յոր կարդեաց եդ զմեզ Աստուած 'ի գործել զփրկութիւն մեր. զի անբաւականք իցեմք մեք անձամբ անձին լինել բարիք, այլ միայն 'ի շնորհացն Աստուծոյ։ Ունիմք 'ի մէնք այլ ինչ, բայց զապիկարութիւն և զչարութիւն և զմեղս։ Միայն յերկնաւոր շնորհացն մարթիմք ունել զձշմարիտն առաքինութիւն, զկատարելութիւն և զարդիւնս։

Սակայն ազգ կրկին զշնորհաց բնաւորեցաւ Աստուած բաշխել բանաւոր արարածոյն։ Առաջինն է որով մարթէ նմա լինել բարի, և սակայն չէ բարի. երկրորդն է որով անշուշտ լինի բարի։ Այթէ զառաջինն միայն ունիցի, չլինիցի երբէք բարի, ուստի և ոչ փրկեալ։ Միայն երկրորդն շնորհ աստուածային, որ և գործունեայ, առնէ զմարդ բարի և փրկէ։ Աւադիկ մեզ ահ անքնին դատաստանին Աստուծոյ 'ի ձրիաբաշխ տուչութեան շնորհացն։ Զանգի շնորհ է այս փրկարար. և մեք զմարթեմք արդիւնաւորել զնոյն, և Աստուած չէ պարտական 'ի շնորհել զայն, և չշնորհէ զայն ամենայն մարդոյ։ Զանգի եթէ մերով զօրութեամբ մարթ էր մեզ արդիւնաւորել զայն, ոչ ևս էր շնորհք։ "Օ ի եթէ 'ի գործոց էր, ասէ, շնորհքն ոչ ևս շնորհք լինին"։ Իսկ եթէ պարտական ինչ էր Աստուած տալ զայն, դարձեալ ոչ ևս էր շնորհք։

Ա զիմ ինչ վարդապետեմ տեսարք իմ, այլ զաստուած-

digitised by A.R.A.R.@

խնասան Պաւղոսի, և զաստուածայնոյն Յովհաննոսի։ Այլ եթէ առ 'ի յուսաբեկ գործել զլսելին, քան եթէ փրկարար ահիւն և դողութեամբն՝ որպէս առաքեալ ասաց՝ տալ գործել զանձանց փրկութիւն, միշտ զտիրոջն Աստուծոյ կախիլ, և միշտ խոնարհութեամբ և հաւատով զողորմութիւն նորա խնդրել, և անշուշտ առնուլ։

Այս մեզ առաջին երկիւղ կենսառիթ 'ի ձրիաբաշխ տուչութեան շնորհացն։ Երկրորդ անգամ և 'ի ձրիաբաշխ ընտրութեան առ փառս։ Զանգի ահա և կէսք որ 'ի շնորհն վայելեին, յանկարծ 'ի ձեռաց հանին. և կէսք դարձեալ որ երբէք չտեսին զայն, յանկարծ գտին զնա։ Ո՛վ անհաս բարութեանն Աստուծոյ որ տայ. ո՞վ անքնին արդարութեանն որ բառնայ։ Տէր է ինքնաբուն, և ինքնօրէն նախախնամ. զ Հաս ատեայ, և զ Հակոբ սիրէ։ Այլ արդար է յամենայնի. այլ բարի է յամենայնի, և զիսորս խորհրդոցն իւրոց ինքն միայն գիտէ։ Իսկ որ մեզն անկանի, երկիրպագանել անհասութեան խորհրդոց նորա, և խնարհել որպէս առաքեալ պատուիրեաց՝ ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ. և դողութեամբ զանձին փրկութիւն գործել։ Միշտ ապաւէն նեալ 'ի շնորհս ողորմութեան նորա, միշտ յուսացեալ աներկբայ. զի "Յոյս, ասէ, ոչ երբէք ամաչեցուցանէ.."։ Զանգի և որ զահագինն ասաց աստուածային առաքեալն, նոյն և քաջալերս մեծապէս 'ի ներքս արկանէ, "Կարող եմ, ասէ, յամենայնի նովաւ որ զօրացոյցն զիս.."։ Այլ անշուշտ միշտ զահն ունել յանձին զգաստատանին Աստուծոյ, սակայն և միշտ զհետ երթալ զգործոց բարեաց, են իսկ այս կրկին նշանք անպատիրք երջանիկ նախասահմանութեան մարդոյ։

Այլ սակայն և զերրորդն կենսառիթ երկիւղ 'ի փրկութեան մերում՝ յաւելու մեզ ձրիաբաշխին այն պարգև յարատևութեանն 'ի բարին։ Այլ սկիզբն, սիրելիք, այլ վախճանն պակէ զգործն։ Այլ զի այս վախճան պակիչ է միայն ձրիատուր պարգև Աստուծոյ. և զի որ ոչն համբերեսցէ 'ի սպառ, ոչ կեցցէ, ըստ տերունեան պատգամին. և զի որ յասպարիսի ընթանան, ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու զյաղթութիւն, ըստ Պաւղոսի. ապա և 'ի մասին յայսմիկ, "Երկիւղիւ զմեր պանդխտութեան գնացն յարդարեա-

digitised by A.R.A.R.@

յուք ,, , ըստ առաքելական խրատուն ։ Սակայն և մի մի միայն երկիւղ սրտաբեկ իբրու որ ձրիատուր է յարատեւութիւնն , այլ և զնոյն ձրիատուրն դարձեալ պաղատանօք խնդրել Յ՚Աստուծոյ , որ անշուշտ տայ . “ Խնդրեցէք , ասէ ., և տացի ձեզ . զի որ խնդրէ առնու , և որ հայցէ գտանէ ,, ։

Սակայն և մի 'ի խնդրելն միայն կալ մնալ , այլ և ընթանալ ։ Զի որ ասացն , եթէ մի ոք առնու զ յաղթութիւնն , ոչ յայնմ և եթ յանդոյց զբանն , այլ և քաջալերը կարդայ , “ Զ՚նպէս ընթացարուք , զի հասանիցէք ,, ։ Զ՚ինչ իցէ “ այնպէս ընթանալն զի հասանիցէք ,, ։ Ոչ ընթանալ , ասէ , միայն առ ժամանակ մի , այլ միշտ ընթանալ առ 'ի հասանել ։ Ոչ ընթանալ միայն յուլաղոյնս , այլ ժիրաժիր . ոչ կասել 'ի խոչընդոտիցն յընթանալն , այլ կոխելով զամենայն քաջութեամբ . այս է այնպէս ընթանալն զի հասանիցէք , և զանեղծութեան պսակն առնուցուք ։ Զ՚սա յընթացան քաջութեան միշտ երկիւղածութիւն յանձին բերել . միշտ երկիւղ և միշտ յոյս . միշտ երկիւղ Յ՚Աստուծոյ և միշտ հաւատով խնդրուած Յ՚Աստուծոյ . միշտ երկիւղ և միշտ ընթանալ . միշտ քաջալերիլ Յ՚Աստուած և միշտ երկնչել , և այնպէս հասանել 'ի պսակն ։

Զ՚ոչ վայրիկ մի սիրելիք լուարուք ձայնին որ ասէ . “ երկնչիմ ,, ։ Այ ո՞ ոք է , որ ասէն . խաչեալն աշխարհի , յափշտակեալն 'ի յերրորդ երկինս , լսողն անձառիցն , ջարշարազգեաց նահատակն , տիեզերաց վարդապետն , խաչակիրն Քրիստոսի անձն ։ Լուիցուք ձայնին , “ Երկնչիմ ,, , ասէ ։ Թէպէտ և ես կեամ ասէ , 'ի Քրիստոս , թէպէտ և ընդ Քրիստոսի 'ի խաչ ելեալ եմ , թէպէտ և ՀՆՇԵՄ զմարմին իմ վասն Քրիստոսի , 'ի վերայ այսր և դողամ և երկնչիմ ես . միթէ համբերեցիցի մինչ 'ի սպառ . և յետ այլոց քարոզելոյս մի արդեօք անարգեցայց ես . “ Երկնչիմ , երկնչիմ , գուցէ որ այլոցն քարոզեցի , ես ինքն անպիտան գտանիցիմ ,, ։

Զ՚այլ ելբ , և յոր դէպս , և յորո՞մ ժամու երկնչէր այսպէս երանելի հոգին ։ Ի ժամանակի յորում ինքն նահատակեալ իսկ էր անձնանուէր ողջոյն 'ի գործն Յ՚Աստուծոյ , յորժամ քարոզէր անդուլ զ՚Աստուծոյ բանն , յորժամ տարածէր զՀաւատն ընդ տիեզերս , յորժամ

digitised by A.R.A.R.@

նախատեր անարդեր վասն անուանն Քրիստոսի։ Ալիշտս, ասէ, 'ի ծովու, վիշտս 'ի ցամաքի, վիշտս յաւազակաց, վիշտս 'ի սուտ եղբարց. 'ի դանս, 'ի հարուածս, ընդ արիւն եկեալ և ընդ ապաժոյժ. 'ի թշնամանս, ընդ քաղց և ընդ ծարաւ, ընդ բանտ, և ընդ կապանս վասն Քրիստոսի։ Ի վերայ այսր ամենայնի՝ դողայր և երկնչէր, մի արդեօք "Որ այլոցն քարոզեցի, ասէ, ես ինքն անպիտան գտանիցիմ,,։

Բաբէ, բաբէ. եթէ այնպիսի հոգին՝ այնպէս, մեք որ ոչ միայն չկրեալք ինչ վասն Քրիստոսի, այլ և միշտ անձնդիւրք այլ և միշտ խուսեալք 'ի խաչէ, այլ և բազումանգամ ստամբակեալք 'ի Քրիստոսէ. մեք զինչ...։ Աստանօր պակասին բառք...։ Աստանօր նուազի և ձայնարկութիւն...։ Միայն լռութիւն... և վայրիկ մի ուշով առն իւրաքանչիւր սիրելիք 'ի վերայ անձին քննութիւն...։ Անիծն ուրեմն իրաւունք իցեն զահ և զերկիւղ դատաստանացն Աստուծոյ որպէս ասացի միշտ բևեռեալ 'ի սրտի ունել մեզ և այնպէս տնօրինել զկեանս մեր. միշտ մեծապաղատ ընդ աստուածայնոյն մաղթելով Դաւթի, "Բևեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ; զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ,,։ Օ՛ի թէպէտ և բուռն և սաստիկ է ահ դատաստանացն Աստուծոյ, սակայն և փրկարար է և կենսաւէտ հոգւոյն։

Ահ դատաստանացն Աստուծոյ՝ որոտընդոստ փայլատակումն է առ ամպովք. զոր օրինակ ահագին որոտումն երկնից ընդհարեալ պատառէ զամպս, և լուծանին յօղեն շիթք կենսաբեր անձրևոյն արբուցանել զերկիր, սապէս ահ դատաստանացն Աստուծոյ Ձայթէ, սարսէ և երկրեղկէ զսիրտ հաւատացելոյն, և Ճանապարհ արքունի բանայ երկրորդի երկիւղին. երկիւղ քաղցր և անոյշ, երկիւղ փրկաւէտ և համբոյր, այն է երկիւղ Աստուծոյ ոչ իբրև յարդար դատաւորէ, այլ իբրև 'ի բազմագութ հօրէ։ Յայս վայր, սիրելիք, երկեաք երկիւղ զահագինն, բայց և զկենսաւէտն. երկիցուք զարդիս և զանդորրաւէտն. երկիւղ կարևոր յոյժ 'ի փրկութիւն։

Երկիւղ Աստուծոյ իբրև 'ի հօրէ։ Բաբէ քաղցրութեան որդիական երկիւղին։ Ո՛վ երկիւղ անաբատ և ողջախոհ. ո՛վ երկիւղ սուրբ Աստուծոյ իբրև

digitised by A.R.A.R.@

'ի գորովագութ հօրէ. ոչ աղբիւր խնդութեան և խաղաղութեան, եկ էջ աղաչեմ 'ի սիրտ իմ, եկ և շարժեա զլեզու իմ. խօսել ինչ մի զքէն արժանապէս։ Այլ քանզի անհաղնութեամբ քոց դատաստանաց սարսեցի զիմ ունկնդիրս, վայրիկ մի և քաղցրութեամբ քոց ողորմութեանց սփոփեցից զնոսա։ Արեք ինչ պարտեն և նկուն առնէն զսիրտ մեր, Արկիւղ, Յոյս և Սէր։ Արկիւղ պատուհասին՝ բռնաւոր զոմն 'ի նեղքս մատուցանէ սրտին։ Յոյս հատուցման՝ տէր զոմն առաջի առնէ մեզ։ Սէրն միայն բարեկամ զոմն և հայր զոմն ընդունէ մեզ։

Իսկ երկիւղի ազգ կրկին նշանակէն աստուածային գիրք։ Օ՛առաջինն 'ի բաց վարէ սէրն ըստ Պաւղոսի. "Սէրն 'ի բաց մերժէ զերկիւղն"։ Արկրորդ երկիւղն զեղեցիկս միաբանի ընդ սիրոյ. և է սա երկիւղ սուրբ, փրկաւէտ և մնայուն, ըստ որում ասէ, "Արկիւղ տեառն սուրբ է և մնայ յաւիտեան"։ Առաջինն է երկիւղ ծառայից և գերեաց. երկրորդն է երկիւղ որդւոյ։ Առաջինն դէտ ակն ունի 'ի պատիժ պատուհասին իւրոյ. երկրորդին ուշ նպատակի է միայն բարութիւն և գթութիւն և քաղցրութիւն հօրն յորմէ երկնչի։ Առաջին երկիւղն չփոխէ ինչ զսիրտ ամբարշտին. միայն երկրորդն ազդողական է 'ի սիրտ և փոխէ զնա։

Անզի երկիւղ պատուհասին միայն ամբոխէ զսիրտ, այլ շարժէ ոչ 'ի սիրել զարդարութիւն։ Անզի և շարժմունք սրտին, խորհուրդք մտացն վերաբուսեալք յայսպիսի երկիւղէ՝ միշտ բռնադատեալք են և միշտ ակամայացեալք, և չնան յակաստանի։ Յօրինակ սովատանջ գայլոյ, որ 'ի քաղցէն դրդեալ դիմէ 'ի գաւիթ ոչխարացն, իսկ այն ինչ հաչիւն լուեալ զարթուն գամիւանցն, և զձայն հովուացն, բռնադատեալ տեղի տայ 'ի վայրացն առ ժամն, այլ ոչ եթէ հանդարտէ. զնոյն ունի կիրս 'ի կեղեքել զհօտն. քանզի երկիւղ պատուհասին միայն ներգործեաց 'ի սիրտն։

Այլ զոր օրինակ աւազակաց դիպեալ քեզ, և հղօրագոյն քան զինքեանս գտեալ զքեզ, մարդասիրապէս մօտին, քանզի երկնչին 'ի քէն. այլ ոչ եթէ զաւազակաբարոյ զկիրսն մոռացեալ ինչ են նոքա, և միշտ կամին կապուտ կողոպուտ թողուլ զքեզ՝ եթէ ձեռնհաս իցեն։

digitised by A.R.A.R.@

Ի միայն երկիւղ սուրբ, երկիւղ ակնածու և որդիական բղխեալ 'ի սիրոյն, շարժէ վարէ և ուղղէ զսիրտ մեր, և դրոշմէ 'ի նմա զօրէնս Աստուծոյ, և տայ մեզ ողջիկ պահել զնոսա, ոչ յայլ ինչ պատճառս, այլ զի մի յանցուցեալ դառնացուսցուք զՀայրն որ այնչափ գորովագութ սիրէ զմեզ։ Այս է երկիւղ ողջախոհ և սուրբ և որդիական. և այսմ երկիւղի ամենայն փութոյ պընդութեամբ պարտ է, սիրելիք, ուշ ունել մեզ յամենայնի։ Վասնզի այս երկիւղ, քաջ միտ դիք, այս երկիւղ շատ է մեզ 'ի գործել զյաւիտենականն փրկութիւն։ Աւասիկ քանիսն ինչ զօրութիւն նորա։

Այս զինչ. չիցէ՞ն թերևս 'ի միջի և սատարք մեզ և առիթք բազմապատիկք զօրաւորք, երկնչել մեզ յԱստուծոյ իբրև որդիք, երկնչել 'ի նմանէ իբրև 'ի գորովագութ հօրէ։ Այս, էն իսկ արդարև ահագինք դատաստանք Աստուծոյ երկնչել մեզ յարդարութենէ նորա, այլ սակայն էն էն և արգասիք անձառելիք բարութեան Աստուծոյ՝ առ 'ի յուսալ աներկբայ և սիրել սերտ զգթութիւն նորա և առնուլ անշուշտ զողորմութիւն նորա։

Ընդաւէն ամենաբարին կամի, զի ամենեքին առ հասարակ փրկութեան հասանիցեմք՝ յոյր սակս ստեղծ զմեզ. չկամի երբեք եթէ կորիցէ և մի ոք 'ի մէնջ։ Օ՜որ քաջալերք, զոր միութիւն 'ի նեղքս մեզ չածէն աստուածային պատգամք, նա և երդմամբ չափ. "Կենդանի եմ ես, ասէ տէր. ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա 'ի չար ճանապարհէն և զկեալ։" Ի՜վ անձառ զթութեանն։ Այս դարձեալ զհամաչխարհական աւետիսն տալով խնդացուցանէ. "Ոչ կամի Աստուած, եթէ ոք կորիցէ. այլ ամենեցուն... այլ ամենեցուն հասանել յապաշխարութիւն..։ Այս ինքնին զթած որդին զաւետիս երկնաւոր հօրն կնքով հաստատեաց. "Ոչ են ասէ կամք առաջի հօր իմոյ, եթէ կորիցէ մի ոք 'ի փոքրկանցս յայսցանէ..։

Այս ուրեմն առ հասարակ մեր ամենեցուն իրաւունք են, և իրաւունք անխաբ՝ յուսով ակն ունել փրկութեան մերում։ Իրաւունք անդրժելիք հաստատիմն սնդեալք 'ի վերայ անսպառ բարեգթութեանն Աստուծոյ. իրաւունք անդրժելիք՝ հիմնեալք 'ի վերայ նոցուն իսկ պատ-

digitised by A.R.A.R.@

գամաց Աստուծոյ։ Կամիս և ազգդ ինչ լսել առաւել. ահա իբրև յանցանս անհնարինս համարի Աստուած մարդոյ զյուսահատիլ նորա 'ի փրկութենէ իւրմէ, զանյուսութիւն նորա 'ի գթութիւնն Աստուծոյ, քանզի չափ դնէ յուսահատութեամբն անսպառելի ողորմութեան նորա, և սահման կարգէ աստուածային առատաձեռնութեանն։ Զանիօն իցեն այս անարգանք մեծ-վայելչութեանն Աստուծոյ։

Կամիս և ակներև տեսանել եթէ քանի սիրեաց և սիրէ զմեզ Աստուած իբրև հայր։ Հայեաց յերեսս օ-ծելոյ նորա. հայեաց 'ի խաչելեալս յայս, ինքնին նա ետ մեզ զմիածին զիւր որդին, մարմնակից մեզ և բնութենակից եղ զնա. բաժանակից տկարութեան մերում կամեցաւ զնա. այլ և 'ի թշնամանս բիւրս և 'ի չարչարանս դառնս և 'ի մահ խաչի մատնեաց զնա առ սէր մեր, 'ի փրկութիւն մեր։

Զրդ 'ի խոցուածս վիրացս այսոցիկ, և 'ի հեղումն կենարար արեանս այսորիկ, և յայս մահ անպարտակիր և անմահարար, կնիքս անջնջելիս ունիմք մեք և գրաւականս անսուտս և առհաւատաչեայս անխաբս զաստուածային ողորմութեանն, այլ և զվճիռ սահմանի փրկութեան մերոյ ունիմք 'ի նոսա։ Սա է Աստուած մեր, որ յանմեղութեան մերում զրդայ և գգուէ զմեզ. "Որպէս գթայ, ասէ, հայր 'ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթասցի տէր յերկիւղածս իւր։ Զի որպէս մայր՝ որ զմանուկ իւր գգուիցէ, այնպէս գգուեցից զձեզ,,։

Սա է Աստուած մեր, որ 'ի մեղս մեր կոչէ զմեզ առ ինքն, հրաւէր կարդայ, ձայն տայ սարտուցելոցս որդւոց դառնալ ամիտիլ 'ի ծոց հայրենի. "Դարձ, ասէ, Իսրայէլ, և բուռն հար զյաւիտենական կենացն։ Դարձարուք առ իս, և ես դարձայց առ ձեզ,,։ Զի "Լկայք առ իս ամենայն աշխատեալք, և ես հանգուցից զձեզ,,։ Սա է Աստուած մեր, որ երբէք ոչ թողու 'ի ձեռաց զապաւինեալս իւր. "Դթած և երկայնամիտ և բազումողորմ. ոչ 'ի սպառ բարկանայ և ոչ յաւիտեան պահէ ոխս. ոչ ըստ մեղաց մերոց առնէ մեզ, և ոչ ըստ անօրէնութեան մերում հատուցանէ,,։ Զայս ասէր Դաւիթ, և 'ի սրտառուչ փափաքանացն ոչ

digitised by A.R.A.R.@

դաղարէր ասելով. «Աստուած Աստուած փրկութեան իմոյ», քանզի չկարեմ՝ ես փրկել զիս առանց քոյ։ «Աստուած Աստուած փրկութեան իմոյ». քանզի կամիս զփրկութիւն հոգւոյ իմոյ, և խնայես յոչինչ՝ առ 'ի տալ ինձ զամենայն սատարս փրկութեան։ Եւ արդ յայսչափ գրաւականս անխաբս այնչափ գթութեանդ, «Յս յումմ՝ երկեայց. տէր ասաւէն կենաց իմոց, ես յումմ՝ դող ղացայց»։

Ի՞նչ է, սիրելիք, յորմէ՞ երկնչել պարտ է, սակայն և երկնչել միշտ իբրև որդիք. մի՛ յանցանել յԱստուած հայր մեր, մի՛ դառնացուցանել մեղօք զբաղմանութիւն հայրն։ Այս երկիւղ սուրբ, փրկաւէտ և անդորրաւէտ և խնդութիւն է հոգւոյ. քանզի պահապան է պատուիրանացն Աստուծոյ, զի ոչ այնչափ երկիւղ է, որչափ սէր։ Այս երկիւղ է, զոր և այնչափ մեծարանօք կոչէն աստուածային գիրք. «ՅԱստուծոյ երկիր, ասէ, և զպատուիրանս նորա պահեա, զի այս է մարդն ամենեւին», բաւէ գովութեանն. իբրու որ ասէր, եթէ ընդունայն է ամենայն, և յոչինչ գրեսցին ամենայն առաքինութիւնք մարդոյ, եթէ միայն 'ի սիրալիր երկիւղէ աստի անբաժ իցէ. ապա եթէ զայս միայն ունիցի, նա և զամենայն բարեմասնութիւն հոգւոյն յինքն բարձեալ բերիցէ. «զի այս է մարդ ամենայն»։

Զանզի քան երկիւղ որպէս ասացի՝ բոլորովին սէր է այս երկիւղ որդիական։ Երկնչի ծառայն մեղանչել 'ի տէր իւր, երկնչի մի՛ սրտմտեալ 'ի վերայ իւր տեսանել զերեսս տեառն. էր աղագաւ. ոչ զի սիրէ զնա, այլ զի երկնչի 'ի պատուհասէ նորա. ապա ուրեմն քան զտէրն առաւել ևս սիրէ նա զանձն։ Երկնչի որդին վշտացուցանել զհայրն, խնդրէ միշտ համբոյր տեսանել զերեսս հօրն. առ ինչ. ոչ զի երկնչի 'ի պատուհասէն, այլ զի սիրէ զնա, և չկամի երբեք տրտմեցուցանել զնա յանցաւորութեամբն. ապա ուրեմն զհայրն միայն սիրէ սերտիւ, ոչ ինչ միտ եդեալ պատուհասի անձին իւրոյ։

Ուշ դնէ ծառայն 'ի պարտս միայն ծառայութեանն. զինէ մանր՝ ո՞ր այն իցէ որ թոյլ նմա տուեալ իցէ 'ի տեառնէն, և ո՞ր այն որ արգելեալ իցէ նմա ընդ պատուհասիւ տանջանացն. և ըստ զինութեանն՝ այնպէս ընթանայ միշտ ծառայաբար, և ոչ երբեք ազատօրէն. երկիւղն է

digitised by A.R.A.R.@

միայն առաջնորդ նմա, և ահ պատուհասին կառավար նորա։ Ուշ եղեալ հայի որդին 'ի հաճոյս միայն հօր իւրոյ. քանզի քաջ որ այն իցէ նմա անհաճոյ, և որ այն նմա սիրելի. և շատ է նմա գիտել զայն. հաճոյք միայն հօրն առաջնորդ նմա յամենայնի, և սէր նորա միայն վարէ յամենայնի։ Ինդ մի հանար ունի նա և զհրամանն հօրն և զիսորհուրդ հօրն. 'ի միասին առեալ զուգէ և զպարտս իւր և զվայելչութիւնն։ Յօժարակամ դիմէ 'ի կատարել զազատութեամբ յանձնեալսն 'ի հօրէն՝ իբրու որ հրամայեալք իցեն, և յօժարակամ կատարէ զհրամայեալսն, իբրու որ ազատութեամբ յանձնեալք իցեն։ Ուր բանք են զհաճոյից հօրն, սիրէ առաւել զանցանել առատաձեռնութեամբ, քան նուազել ձչգութեամբ։ Վանզի ըստ աստուածայնոյն Պաւլի, "Աղոցր են 'ի քիմն նորա բանք հօրն քան զմեղր բերանոյն. և օրէնք տեառն քան զմեղրոյ խորիսխ..»։

Ա՛հա այս երկիւղ է հարազատ որդւոյ. և եթէ զայս զրոշմեսցուք հանապազ 'ի սիրտս, չէք հնար, սիրելիք, եթէ յանցանիցեմք յԱ՛ստուած հայր մեր։ Այս զմեզ իմաստունս գործէ ձանաչել զչար, երկիւղածս 'ի տեսանել զչար, ժիրաժիրս 'ի փախչել 'ի չարէ։ Այս զմեզ քաջ ջաղօտիս արիացուցանէ մարտ եղեալ կռուել ընդ կրից, նշան յաղթութեան կանգնել 'ի վերայ փորձութեան, համբերել վշտաց և չարչարանաց։ Ա՛յս երկիւղ է լի աստուածային սիրով, որով միայն փրկին որք փրկինն, և յորմէ անբաժք դատապարտին որք դատապարտին։

Ո՛վ երկիւղ անարատ, ո՛վ երկիւղ հարազատ սիրոյ, աղբիւր հանձարոյ, սկիզբն իմաստութեան, որպէս կընքեաց իմաստունն. ո՛վ ինձ տացէ ունել զքեզ, ժառանգել զքեզ 'ի ծայրալիր լրութեան քում. ո՛ այլ. բայց ինքնին Ա՛ստուած որ խոստացաւ տալ ինդրողին իւրում։ Ինդրեսցուք, հայցեսցուք 'ի նմանէ եղբարք, և ուսցուք մեք երկնչել երկիւղ որ 'ի սիրոյ։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆ Բ.

Կամի Աստուած Ճշմարտապէս զփրկութիւն մարդոյ, և ո՞ երկբայեսցի ընդ այն. այլ թէ Ճշմարտապէս կամիցի և մարդ զփրկութիւն անձին իւրոյ, և ո՞ ոք տոչգեսցէ մեզ զայն։ Աւասիկ, սիրելիք, և այլ ինն խէթ և երկիւղ, յորմէ և խոնարհութիւն անհրաժեշտ հասցէ մեզ, միանգամայն և հանապազօրեայ արթնութիւն 'ի ձեռնարկ մեծ յաւիտենական փրկութեան մերոյ։ Այլ փոփոխի Աստուած իբրև զմարդ. անփոփոխ են կամքն, անդարձք են պարգևքն, անպիղծ են ողորմութիւնքն։ Ինքն միշտ հրաւէր կարդայ մարդոյ 'ի փրկութիւն. մարդ է՛ զի լսէ, է զի ունկնդրիցէ լինի, է զի անսասան։ Աստ ուրեմն հեշտանայ Աստուած 'ի տալ մեզ զշնորհս, քան մեք յառնուլն. առ հասարակ տարածեալ է զսիրոյ բարձրութիւն. երբեք չլքանէ զմարդ, եթէ ոչ նախ լքցի 'ի մարդոյ. "Լսեսցայց, ասէ, զքեզ ինձ հաւատով. և հաստատեցից ընդ քեզ ուխտ յաւիտենական"։ Այս բանք Աստուծոյ անսուտք 'ի հաւատ անխաբ խոստմանցն, և հաստատութիւն կամաց նորա 'ի փրկել զմեզ։

Այլ բաբէ, զինչ ապա իցէն այն սրտառուչ գանգատք նորուն տեառն, մանաւանդ եթէ ահագին սպառնալիքն առ մարգարէին. "Յրուեցին, ասէ, զուխտն յաւիտենական. անցին զօրինաց, փոխեցին զիրաւունս"։ Օ՜ հարդ, որ ընդ իս զյաւիտենից դաշն, ժպրհեցաւ ասէ մարդ փոխել զնա. և զիարդ խոսեցեալն ինձ հոգին, ուխտադրուժ չոքաւ, ասէ, հարաւ 'ի սեր օտարին։ Այլ զիարդ այսուհետև ահագինքն իմ դատաստանք չիցեն արդասիք նորուն իսկ ապիրատութեան մարդոյ և անհաւատարիմ հոգւոյն"։

Ապա ուրեմն քան յԱստուծոյ և 'ի դատաստանաց նորա պարտք առաւելագոյնք են մեզ, սիրելիք, երկնչել և զողալ յանձանց մերոց 'ի փրկութեան մերում. որպէս խրատեաց աստուածխնամն Պաւղոս. "Հիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք"։

Այլ ահա այս երկիւղ անձին կենսաւէտ և փրկա-

digitised by A.R.A.R.@

բար յառաջ կացցէ մեզ և յաջողեսցի ինձ միանգամ շի-
ջուցանել Աստուծով զփքոյուռոյց ամբարտաւանութիւն
'ի սրտից մարդկան, կարձել զաներկիւղութիւնն, ընդ-
ոանել զյանձնապաստանութիւն. մի երբէք 'ի գործ
յայս մեծ հոգևոր ապաւինել յանձն, նա բովանդակ
զյոյս և զքաջալերութիւն իւր դնել յԱստուած։ Լաւ
արդ միտ դիք սիրելիք։ Ամ 'ի փրկութիւն պէտք են
մեզ, կամ կալ մնալ 'ի բարութեան՝ յորում եմք, կամ
խոտորել 'ի չարէն յորում թարթափիմք։ Արկին աւա-
դիկ վտանգք մեծամեծք, կրկին աւադիկ ժայռք՝ դիւրու-
թեան և դժուարութե. այց աղագաւ մեծապէս երկիւղ
կայ մեզ առաջի երկնչել 'ի գործ փրկութեան մերոյ։
Վանգի ցուցցուք առաջին, քանի դիւրեաւ դառնամք
մեք լինիմք չարք՝ նաև յորժամ եմք բարիք։ Երկրորդ
անգամ, քանիօն իցէ դժուարութիւնն 'ի լինել բա-
րիք, յորժամ 'ի չարութեան եմք։ Ցպացուսցուք 'ի
մեզ ինքեանս այսօր ձշգրտիւ զպատկեր թշուառութեան
մերոյ և զապիկարութեան, զի ձշգրտագոյն ևս նկա-
ռեսցուք 'ի մեզ զպատկեր զողորմութեանն Աստուծոյ։
Ի նկատել միանգամ զազգ մարդկութեան՝ վիճակսն ներ
հակակիրս տեսանեմք 'ի նմա զաղքատութեան և զընչա-
ւէտութեան, զաշնուականութեան և զՀիքութեան,
զերջանկութեանն և զանաւագութեան, զառաքինու-
թեան և զմոլութեան, զբարութեան և զչարութեան։
Վանգի մերթ կամի գործել զամենայն բարի զոր կա-
րէ. մերթ խնդրէ գործել զամենայն չար զոր կամի.
է զի սմբառնայ սլանայ մինչև Աստուած մաքրու-
թեամբ հոգւոյն, է զի ինքանէ խառնի մինչև յանբանիկ
դասակ զաղրութեամբ գործոյն։ Ի նկատել, ասեմ,
'ի մարդումն զներհակութիւն զայս զմեծ, թուի
ինձ յակն արկանել, տեսլիք, հոյակապ իմն շինուած
մեծագործ և հինաւուրց որ կամ 'ի թշնամեացն ձեռաց
հիմնայատակ տապալեալ իցէ, կամ 'ի բազմահարուստ
դարուց հնութենէ ողջոյն խաթարեալ իցէ. աւերած
առ հասարակ քանդեալ և աւերեալ միանգամայն։ Ամ-
սակայն և 'ի նոցուն իսկ յաւերակացն յերևան դայցէ
մեծագործութիւնն, և 'ի նշխարաց անտի հոյակապիցն
խնամասիրեսցես դու զվաղնջուց գեղն և զկարգ և զ-
բինակ զչքնաղ ձարտարապետութեանն։

digitised by A.R.A.R.@

Աստուծոյ ինչ է մարդ, տեսլիք իմ. շինուած մեծա-
կառոյց տասպալեալ անդստին 'ի մեղայ նախատեղծին.
և սակայն 'ի դերբուկս աւերակացն և 'ի մէջ ար-
դեան տկարութեանն ողջ տակաւին պահէ զնշխարս
զվաղեմի մեծութեանն։ Այս է այս ինքնին խորհուրդ
բազմահնար երկնաւոր հօրն, զի նկունք իցեմք և
տկարք, զի երկիցուք յանձանց մերոց. լինել դարձեալ
և մեծք և հզօրք 'ի նա միայն ապաւինելով։ Այս օրինակ
զայս միայն յաջողեսցուք մեք ամբառնալ զմեզ և վերա-
դառնալ յառաջին մեծութիւնն։ Երկիւղ անձին և ա-
պաւինութիւն յԱստուած. ահա կրկնակի ձեռք ո-
րովք բաջացեալք յափշտակեսցուք զարքայութիւնն եր-
կնից։ Սակայն և ոչ յաջողեսցի մեզ ունել յԱստուած
զծայրալիրն ապաւինութիւն, եթէ ոչ սկիզբն արաս-
ցուք մեք երկնչել յանձանց։ Երկնչել անշուշտ, նաև
յորժամ եմքս բարիք. քանզի և դիւրեաւ յոյժ է մեզ
գթել 'ի չարն։

Այց և նախ առաջին, աղէ ո՞ անշուշտ յապահովեա-
ցէ զմեզ եթէ եմք բարիք։ Գործք քանիք յաչս մարդ-
կան երևեալ չարք, բարիք են յաչս Աստուծոյ. և քանիք
դարձեալ բարիք առաջի աշխարհի, չարք են յանդիման
երկնից։ Այս չեմք յուլացեալք 'ի գործս աստուած-
պաշտութեան. չեմք անգութք, կարեկիցք եմք աղքա-
տաց, օգնականք տառապելոց. պահեմք զպատուիրանս
Աստուծոյ և զեկեղեցւոյ. ժիրաժիրք եմք յամենայն 'ի
պարտս մեր։ Ի վերայ այսր ամենայնի ո՞ յապահովի
կացուսցէ զմեզ 'ի վերայ բարութեանս մերոյ։ Ոչ բա-
ւական առնել զբարին, պարտ է առնել և բարիոք։ Ո՞
գիտէ, ո՞ր իցէ մեր գաղտնածածուկ ուշ նպատակին 'ի
գործս մեր 'ի բարիս. և իցէ՞ն այդոքիկ շնչեալք 'ի Ճշ-
մարիտ հոգւոյ աստուածպաշտութեան, արժանընկալք
Աստուծոյ և բաժանարդք յաւիտենիցն կենաց։ Ո՛վ քանի
Ճշմարիտ ազդեաց մեզ ինքնին տերն. "Ո՛ զոյշ լեր, ասէ,
գուցէ լոյսդ որ 'ի քեզ է, խաւար իցէ,,։ Այսև իմաստնոյն
ոչ լուար. "Արմին, ասէ, ծանրացուցանէ զոգի. և հա-
կէ հողեղէն յարկ զմիտս բազմահոգս,,։ Դարձեալ և
զիմաստ մարթասցիս դու դատել և կշռել Ճշգրտի զպար-
զութիւն կամ զիարդախութիւն զիտաւորութեանց
քոց։ "Այն Ճանապարհք, ասէ իմաստունն, են Ճանա-

digitised by A.R.A.R.@

պարհք, որ թուին մարդկան թէ ուղիղք իցեն. և կա-
տարած նոցա հայի յատակս դժոխոց.։ Ի՞նչ
արդար և սուրբ իբրև զմեծն զայն և զհամբերողն Յովբ.
և զինչ ասէ. «Օ անգիտեալ խիթայի յամենայն գոր-
ծոց իմոց.։ Անիծեալ էր զդաստուածինն երկիւղած
հոգւոյն։ Իսկ և որ հանապազօրեայ չարչարակիցն էր
Քրիստոսի, խորհրդածուն երրորդ երկնից, թէպէտ և
կրկնէր և երեքկնէր զքննութիւն անձին և չգտանէր ինչ
չար, սակայն և աշխարհալուր վկայէր զանձնէն զահ-
գինն և զնշմարիսն. «Ի՞նչ գիտեմ, ասէ, զանձին իմոյ...
ոչ ինչ... այլ ոչ եթէ այսու արդարանամ.։ էր աղա-
գաւ. զի դատաւոր ունիմ զՔրիստուած. «Օ՞ի որ քննէն
զիս, ասէ, տէր է.։ Ո՞յն տէրն որ և 'ի հրեշտակս
իւր եգիտ բիծ և թիւրութիւն, այն տէրն որոյ և ոչ
երկինքք սուրբ էն առաջի նորա. այն տէրն որ քննիչ է
սրտից և երիկամանց և յօդից և ուղղոց. և սրանայ
և ոչ ինչ յամենատես աչաց նորա։ «Ի՞նդի տեսանեմ
ես, ասէ, յանդգնամ իմ այլ օրէնս զինեալ հակառակ օրի-
նաց մտաց իմոց.։, այնչափ յօժարութիւնս 'ի խնամս չա-
րին, այնչափ հոյլս բուռն կրից, այնչափ հնարագիտու-
թիւնս անձնասիրութեան. պարտ է ինձ, ասէ, ուրեմն
միշտ երկնչել. զի մի թերևս յանդգայս ըմբռնիցիմ 'ի
նոցանէ։

Ո՞յսպէս ասէին, և այսպէս երկնչէին երանելի
հոգիքն յանմեղութեան կեանս իւրեանց։ Իսկ արդ
մեք յայնչափ լուծութեան վարուց, յայնչափ փափ-
կութեան կենցաղոյս, և 'ի բարեաց մասին սակաւ ինչ
գործեալ մեր 'ի կեանս, համարեսցո՞ւք զանձինս յապա-
հովի և անդրժելիս։ Ա՜հ...։ Լցուկ եմք, եթէ չեր-
կնչիմք։ Բայց դիցուք և լինել մեզ բարիս. զիարդ
գոնեա չերկնչել մեզ. գիտելով չափ զի այնչափ դիւրեաւ
է մեզ գթել 'ի չարն։ Ոչք մարդոյ թշնամի մեծ և ս
քան զանձն իւր։ Լու առ հասարակ արարածք չեն բա-
ւական այնչափ ինչ առնել նմա չար, որչափ ինքն իւրում
անձին։ Ի՞նչ իշխանք խաւարին և բռնաւորք յաւիտե-
նիս այսորիկ զմեր բարին կարող են յափշտակել. զմեր
մարմինս չարչարել, զմեր կեանս շինջուցանել. այլ զմե-
հագոյնն 'ի մէնջ բառնալ ոչ ունին, այս է զՍտուծոյ
բարեկամութիւնն՝ յոր վայելեմք, միայն 'ի մեր ձեռս է

digitised by A.R.A.R.@

կապտել զայն 'ի մէնջ. "Որ անձին իւրում չվնասէ, զնա և ոչ ոք կարէ վնասել,, առաջ անսուտ կնքեաց Յերեմն ասկի։

Յ նեերքս 'ի մեզ է միայն մերն սխերիմ թշնամի, ընդ մեզ ունիմք անանջատելի։ Յչ արդ ո՞ ոք այնուհետև բաւական իցէ առանց արհաւրաց չափել զանդունդս թշուառութեան մերոյ։ Մոչուառականք եմք, և սիրեմք զթշուառութիւնս։ Ահա մարմին, ահա վայելք կենցաղոյս արտաքոյ հրապուրեն զմեզ. այլ 'ի նեերքս սիրտ ունիմք յարեալ 'ի նոսա, որ ցանկայ նոցա. "Յ մէջ սուսերաց, ասէր մեծն Կիպրիանոս, 'ի մէջ սուսերաց, շրջիմք սատանային,,։ Ասուսերք երկայրիք, որ յաջմէ և յահեկէ և ամենայն ուստեք խոցոտեն, ասէ, զմեզ, խոցոտեն զաչս, խոցոտեն զականջս, խոցեն զմարմին, խոցեն և զզօրութիւնս հոգւոյն։ Մի ամենի համարեսցուք ասէ, եղբարք, խոստովանել զհիւանդութիւն մեր և ճանաչել զվէրս մեր։

Օ՜ի է մեզ լռել, յորժամ բոլոր կեանքս մեր բողոք հարեալ է ընդդէմ մեր։ Վարունք և հարթք են ճանապարհք մոլութեանցն, և քաջ իսկ առ 'ի փորձոյ գիտեմք զայն։ Գութեամբ դիւրեաւ և անկանիմք 'ի չարն. այլ և բաղում անգամ բուռն քարշիմք 'ի չարէն։ Զ՜աղ, զի "Յ խնամն չարին հաստատեալ են միտք մեր 'ի մանկութենէ,,. որպէս վկայեաց գիրն։ Ձեմք բարիք, բայց թէ միշտ հակառակամարտ ճիգն թափելով։ Յ՜զի և ցանկամբ գործել զառաքինութիւն, և անդէն ուղիք ընդդիմամարտ ցանկութեանց առեալ յափշտակեն զմեզ և արկանեն 'ի մեղս։ Յչ ահա զհակառակամարտ զայս ճիգն չարին ողբայր առաքեալն. "Գտանեմ, ասէ, յիս օրէնս այլ. կամիմ գործել զբարին, և ինձ չարն առաջի կայ. այր մի տառապեալ եմ ես, ո՞վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ աստի մահու,,։ Դանզի և անկեալ կամք նման օրինակք հիւանդի 'ի դժարս եղելոյ. կարծէ նա սփոփել ինչ եթէ զտեղին փոխեսցէ, կամ թէ վայր մի յոտին կացցէ. սակաւիկ մի քայլէ քայլս ապիկարս և ծանրաքայլս, և անդրէն միւսանգամ անկանի 'ի մահճի իբրև քար անշարժ, ապիկար առաւել քան զառաջինն։ Յանցանեմք՝ և ապաշաւեմք վասն յանցանացն, սակայն և դարձեալ յանցանեմք. այն ինչ զհուր մեղացն շինու-

digitised by A.R.A.R.@

ցեալ, անդրէն բորբոքիմք 'ի նոյն, նմանեալք ջահի լուցելոյ այն ինչ չիջելոյ, որ ծխայ. և սակաւ ինչ յոյժ պիտոյ է առ 'ի միւսանգամ վառել զնա։ Զ Իսկզդ գեղեցիկս ասաց Լ։գոստինոս. "Լ՝տեսանել զի վախճան առնուն յանցանք. այլ չիք երբեք տեսանել թէ վախճան առնուցու հիւանդութիւնն,,։ Լ։ջանեմք արտաքս 'ի քարոզէն, 'ի խոստովանութենէ և 'ի սեղանոյն հաղորդութենէ, զեղջք և ապաշաւք հաստատուն առաջադրութեամբք առաքինասէր վարուց. և յառաջնումանդառթին 'ի նոյն փսխածն դառնամք։ Տեսանեմք զլաւն, և հաձիմք և գովեմք. իսկ ապա զվատթարն ընտրեմք և առնումք։ Լանիծն է թշուառութիւնս եղբարք, և զիսզդ հնար իցէ յայնչափ թշուառութեան միջի չերկընչել յանձնէ և ոչ միշտ ապաւինիլ Լ։ստուած միայն։ Լ։տաւապէս ուրեմն յոյժ առաքելականն ազդեաց ձայն. "Լ։հիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք,,։

Իսկ որ առաւել զերկիւղն յորդեսցէ 'ի մեզ, բա՛ր է, զի չզգամք թշուառութեանս. և վասն այնորիկ թշուառագոյնք ևս եմք։ Լ։նզգայութիւն 'ի հիւանդս մահագոյժ է քան զամենայն հիւանդութիւն։ Լ։ւ որչափ նուազ երկնչիմք, այնչափ առաւել պարտիմք երկնչել։ Որ 'ի լիւղ անկեալ է ընդ վայրահոս ընթացս գետոյն, թեթև և թուլակի լուղայ. չեն նմա պէտք ձիգն թափել մինչև 'ի նպատակ անդր. իսկ որ ընդդէմ հոսանացն 'ի լիւղ խաղայ, պէտք են նմա բազուկս կորովիս շարժել, զթափն վանել, ձգնել մինչև 'ի դէմ եդեալ կէտն։ Լ։ոդ զի չզգամք մեք մեծի թշուառութեանս, հաւասարք քաջայայտ են ուրեմն եթէ ընդ վայրահոս թափն կրից հետեւեալ գնամք, ուր առեալ տարցին զմեզ, և թափեսցեն 'ի վերջ 'ի ծոփն կորստեան։ Զ Իսկզդ ապա յաջողեսցուք ապիկարքս անձնապուր 'ի կորստենէն լինել, յորժամ և անզգայացեալս իսկ եմք 'ի թշուառութեան մերում. քանզի չափ վերջին է թշուառութեան 'ի թշուառութենէ չերկնչել և յանձնապաստան լինել։ Հուր աւադիկ հարեալ զտանէն, բոց հատանին ընդ ամենայն կողմն, գամ քան զգամ բորբոքին, տիրէ հրդեհն առ հասարակ։ Ա։չուառական տանուտէրն անկեալ ինքն յանդորրու 'ի փափուկ մահճին. անդուստ

digitised by A.R.A.R.@

յանկարծ կամ 'ի ծխոյն մղձկեալ կամ 'ի շառաչիւն բո-
ցոյն ընդոստուցեալ, տեսանէ առ դուրս զՀուրն, և
զդառնութեան զմահն մօտալուտ. որ տագնապ, որ ար-
հաւիրք ոչ ունին գնա։ Այնպէս յապուշ հարեալ, ընդ-
արմնցեալ առ ժամն, ձիգն ապա վերջին տայ ահաբեկ
ոգւոյն, կամ ճողոպրիլ անձնապուր ընդ մէջ բոցոյն, կամ
'ի բարձանց պատուհանին դահավիժել զանձն, ապրել
միանգամ 'ի մօտալուտ բոցակիզմանէն։ Այս պատկեր
է մարդոյ յաղցաւոր 'ի կեանս յաւիտենիս այսորիկ.
կեանք բաղմնվտանգ, կեանք պատերազմի, կեանք
խռովութեանց, կեանք անդուլ ձգանց։ Անիւք ա-
սասիկ կեանս վարեն յաշխարհի, իբրու ոք յանզգայս
շուրջ պատեալ պաշարեալ լցեն 'ի բազմածախ հրոյն.
և քանի նուազունք զվտանգ զանձանցն ծանիցեն։ Ան-
նիւք դարձեալ առ ժամանակ մի բարիոք վարեալ կեանս,
յետ այնորիկ 'ի վատթարն նկրտեալք ահ և երկիւղ ե-
ղեն տեսանելեացն յանկանգնելի կործանմանէն։ Ինն-
թացան բազմամեայ տքնութեամբ ընդ աստուածպաշ-
տութեան ճանապարհն, հաւատարիմք յօրէնս, ձգրիտք
'ի պարտս, և խանջեալք 'ի վախճանի մարտ գնել կուռել
զէնրնկեցք անձնատուրք 'ի մոլութիւնս, այնչափ առաւել
անկղիտացան արձակերասանք, որչափ էին երբեմն եր-
կիւղածք և բարեկրօնք։ Ոչ օրինակք ահագինք լցեն,
եղբարք, թշուառութեան և տկարութեան ընութեանս,
կամ թէ չարութեան իսկ. և ոչ առաւել զահ և զդող անձին
յորդեսցեն նոքա 'ի մեզ. որք 'ի ծով աշխարհիս տեսանին
նաւաբեկեալքդ այդոքիկ իբրու նշխարք տատանեալք և
բեկորք ալեծուփք անկեալք 'ի վերայ ժայռիցն, և անձն
զոսրելիք այնպէս ողորմելի ձայն արձակեսցեն իբրու 'ի
հեռաստանէ ազդ զգուշութեան կարդալ մեզ, աչա-
լուրջս և երկիւղածս գնալ հատանել մեզ զծով կենաց
յաւիտենիս այսորիկ, և մի զթիւ նաւաբեկելոցն բազ-
մացուցանել։

Այլ զինչ պէտք լցեն, սիրելիք, 'ի քնին զօտարին առ-
նուլ զկեանս և զվտանգ, և այնպէս զերկիւղ կենա-
առիթ զանձին հաստել 'ի մեզ։ Որ իսկ կեանքս՝ հա-
ւաստիք անխաբք մերումն են տկարութեան և խթան
ազդոյ մերոյ երկիւղին։ Զհա ըստ ասացելումն, "Այս
օր 'Դաւիթ հոգեկիր, վաղիւն Սաուլ այսակիր. այս-

digitised by A.R.A.R.@

օր մնանեմք 'ի բոյնն աղաւնի, վաղիւ անդուստ ագ-
ռաւ ելանեմք,, ։ Արիոք կեամք այսօր և վաղիւ՝ այլ
քանիցս անգամ և քանի հեշտեաւ յանկարծակի 'ի բա-
ղեաց ջարք և խոտանք երևեցաք մեք։ Զմ կենաց մե-
ղոց կուռ զմիմեանց կնի ոչ շարք և կարգառութիւնք
եղեն միանգամայն և անկման և ապաշաւանաց, և մո-
լորութեան և դարձի. կրօնից աստուածպաշտութեան
և ապա սանձակոտոր անկրօնութեան. առաքինութեանց
կարգաց և ապա ախտասէր կրից ախտակիր յօժարու-
թեանց։ Զու ոչ պատահեցան մեզ բազում անգամ,
չպատահեսցեն մեզ միւսանգամ։

Զիմարդ Թուիցի քեզ, աղէ ասա. եթէ երբեք զի-
նաւոր որ 'ի Թատր մտեալ 'ի խորանի անդ խաղալկաց
մարտ ընդ ախոյանին ձևացուցանել 'ի զնին զբօսասի-
րացն, թէպէտ և քաջ գիտասցէ զի զէնք առ հասա-
րակ, սուսերք և տէգք և աշտէք սուտք իցեն, սակայն
և յառաջնում անդ շողալ սուսերին սարսեալ թիկունս
դարձուսցէ։ Զոյս աւադիկ դէպք տան մեզ բազում ան-
գամ։ Զաջ իսկ ուսաք մեք և գիտացաք, զի մարդկային
նկատմունքն զոր ասեն, անմտութիւնք են խաբուսիկք.
և զի բարբանջանաց և զրուցաց աշխարհի երես առնել
չէ արժան. և զի բանդագուշանք և ծաղրածու հենգ-
նաբանութիւնք թուլահաւատիցն են իսկ Ճշմարիտ ամ
բարշտութիւն։ Զ վերայ այսր 'ի հնորհս մարդկային
նկատման, զի մի թերևս խաղ զմեզ արասցեն թուլա-
հաւատք կամ աշխարհասէրք, բազում անգամ 'ի բաց
թողաք մեք զառաքինութիւն մեր. և այնպէս տակաւ
ոտն առ ոտն 'ի վիհն գլեցաք մեծաց յանցանաց, յորոց
երբեմն զարհուրեալ էր մեր։ Զ վերայ այսր յարեաք միւս-
անգամ, կանգնեցաք 'ի կործանմանէն. գարշիմք այսօր
'ի մեզանն, այլ զինչ արդեօք առ վաղիւն։ Յոյժ տա-
ղադիմք թուին մեզ այսօր մեղքն, այլ ով զմեզ յապա-
հովեսցէ. ո գիտէ եթէ արդեօք առաւել մերձաւորք
իցեն նոքա մեզ քան զոր կարծեմք։ Ով առաւել իմաս-
տուն քան զՈղոմն. և զիմարդ նա որ և ոչ յերազեալ
էր անգամ՝ յանկարծ պաշտօնատար գտանի կռոց և սե-
զանակապուտ անհնարին։ Ով առաւել հեզ և գթած
քան զԱւելթ. և զիմարդ նա նովին մատամբն որով
զաստուածագիծ սաղմոսն գրէր նովին մատամբն զան-

digitised by A.R.A.R.@

պարտակիր սպանութիւնն զԼուրիայ գրեաց և կնքեաց։ Յաբէ, իբր այնպէս կիրք մի միայն ախտակիր 'ի մի վայրկեան հար տապալեաց զնոցա զամենայն բարեմասնութիւն հոգւոյն։ Յայ մեք աւադիկ զնոցա պատմութիւնն 'ի ձեռին ունելով, զիարդ մարթասցուք երբեք կալ յապահովի և չերկնչել յանձնէ, և ոչ գոչել սրտառուչ ընդ հոգեկրին. բաբէ, "ՅԹէ նա այնչափ մեղաւ, ինձ զինչ պատահեսցէ.,։ Զոյ խոհեմացեալ եմք խորհրդով 'ի լուսոյ բանին, սակայն և գերի վարիմք 'ի զգայութեանց։ Պեղ վայելչութեան առաքինութեանն ըղձակաթս սրտացուցանէ զմեզ. սակայն և բուռն թափ կրիցն յափշտակէ զմեզ։ Ցկար են կամք 'ի գործել զբարին. կոյրք եմք և զաչացուք 'ի տգիտութեան և տարտամեալ 'ի գիտութեան։ Ամաստութիւն մեր որոգայթ է մեզ բաղումանգամ, և վախք և ժայռք են մեր բաղումանգամ առաքինութիւնք մեր։ Ի մէջ որոգայթից շրջիմք. դիւրակործանք յամենայն 'ի վայրկեանս, և 'ի մեծաց առաքինեաց դիւրադարձ եմք 'ի լինել մեղաւորս մեծամեծս։

Ոսկ 'ի բաղմավարան վիճակիս որ հնարք մեզ, սիրելիք, նպաստամատոյց հզօր. ոչ այլ ինչ, բայց միշտ երկիւղ յանձնէ և միշտ ապաւինութիւն յԱստուած. չիք ինչ այլ 'ի հնարից։ Յորմէ չերկնչիմքս առ չարութեան, երկնչել առ տկարութեան. և զոր չկարեմք ունել յանձին զօրութենէ, հաւատով մաղթել յԱստուծոյ ողորմութենէն։ Որ երկիւղս լիցի հիմն հաստատուն յուսոյն մերոյ. չերկնչել 'ի կարձոյ ճանապարհէ 'ի լինել չար, յորժամ եմք բարի. երկնչել յանձնէ միակ վարժապետ արթուն զգաստութեան մերոյ, և պահապան անդորր երկնաւոր ընդհաց 'ի հանապազորդութեան բարւոյն. "Յրանելի է, ասէ, մարդ, որ միշտ յերկիւղի կացցէ.,։

Յաւ արդ եթէ երկնչել յանձնէ պարտիմք, յորժամ եմք բարիք, դիւրագայթ գոլով 'ի չարն, քանիսն առաւել պարտ լիցէ երկնչել յանձնէ, յորժամ եմքս չար, դժուարադարձք յոյժ գոլով մեր 'ի բարին։ Այր մի անսալ աղաչեմ։

Ճանապարհ զարքունի գնասցես, խրատեր ոմն 'ի սրբոցն, հասանել 'ի փրկութիւն։ Յաւ է այս ճանա-

digitised by A.R.A.R.@

պարհ, ասէր, միակ արահետ բարիոք կենաց. այս է միշտ յահ և 'ի դող անձին կալ առաջի Աստուծոյ։ Այլ զիարդ ոչ. միտ դիք աղաչեմ։ Եթէ կամ 'ի շնորհս կամք, կամ կորուսեալ եմք զշնորհս, կամ թէ անդրէն 'ի ձեռս բերեմք զշնորհս։ Այլ յամենայն յայսոսիկ երկիւղի մեզ պէտք են։ Այթէ 'ի շնորհս կամք, երկնչել պարտ է՝ մի թերևս կորուսցուք զնա առ 'ի չարն անկակից հաղորդութեամբս. ապա եթէ անդրէն 'ի ձեռս բերաք զկորուսեալ շնորհսն, առաւելագունի պէտք են երկիւղի 'ի վտանգէ միւսանգամ անկանելոյ. քանզի դառնալ 'ի փսխածն՝ չար է առաւել։ Այլ պատգամ է այս զոր ինքնին տէրն կնքեաց. "Հաւատիկ, ասէ, ողջացար, մի՛ ևս մեղանչեր. զի մի՛ չար ևս լինիցի քեզ..։ Այլ սակայն սաստկագունի ևս երկիւղի պէտք են մեզ, յորժամ կորուսաք զշնորհսն. քանզի դժուարին յոյժ է 'ի չարէն դառնալ 'ի բարին։

Պարտ էր շնորհին ըստ անքնին խորհրդոցն Աստուծոյ միանգամ միայն լինել շնորհեալ։ Այլ արդ հայեաց ինձ իմաստութեամբ. միանգամ միայն կորուսին զայն հրեշտակք, և այլ ևս երբէք ոչ գտին զնա։ Իսկ և 'ի դրախտին անմեղութեան կորոյս զայն մարդն միանգամ, և յաւիտեան ունէր կապուտ կողոպուտ մնալ 'ի շնորհէն։ Այլ զինչ ապա ասել պարտ իցէ յորժամ մեք այսօր զմիանգամ կորուսեալն՝ բազում անգամ անդրէն 'ի ձեռս բերեմք։

Վաա, եղբարք իմ. ոչ մեք ինքնին միւսանգամ 'ի ձեռս բերեմք զկորուսեալն. այլ ինքնին տէր Յիսուս վերստին զնոյն շնորհ տայ մեզ ունել։ Վանզի եթէ արդասիք անապաա արդեանց տեառն մերոյ չէին 'ի միջի, մեր յաւերժաբար անմասն կացեալ էր յԱստուծոյ ողորմութենէն։ Զեն ինչ մեր այսուհետև շնորհքն. պարգևատուութիւն է այս երկնաւոր հօրն առ միածին որդին. և մեք միջնորդաւ որդւոյն միայն ստացեալ ունիմք զկորուսեալ շնորհս։ Սակայն միտ դիք, աղաչեմ, զի թէպէտ և առատագեղ այնչափ է Աստուած 'ի բարութեան իւրում, սակայն և անաչառ է յիրաւունս արդարութեանն։ Ուստի և ընդ չափու ստէպ ստէպ կորուսանելոյ մեր զշնորհս, այնչափ և դժուարին է միւսանգամ 'ի ձեռս բերել զողորմութիւնն Աստուծոյ։ Այո՛, յաւազանին սրբ-

digitised by A.R.A.R.@

բութեան անքիրտն և անվաստակ ստացաք մեք զՀնորհս. նա զի ամենաբարին յայնժամ զմերոց կիսքահարցն ընդունի զդաւանութիւն խոստմանն, իբրու զոր մեր ինքնին դաւանեալ իցէ, և նորածնանիմք մեք յայնժամ սուրբ և ամբիծ առանց ինչ մերոց արդասեաց 'ի շնորհաց անտի միայն Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ։ Այլոչ և այնպէս, յորժամ յետ մկրտութեանն կորուսանեմք զաւեալ շնորհն։ Ո՞ւր իցէ մեր յայնժամ առաջին անարկեանութիւն հոգւոյն, ո՞ւր հեշտաբայլ ընթացքն յառաքինութիւնս. չիք մեր այլ յոյս ակնկալութեան վերադարձին 'ի շնորհս, բայց յարտասուս, բայց 'ի հեծութիւնս ապաշաւանաց, 'ի պահս, 'ի վշտրմբերութիւնս խաչակիրն ապաշխարութեան։ Եթէպէտ և երկրորդ աւազան, երկրորդ մկրտութիւն կոչեցին հարք սուրբք զապաշխարութիւն, այլ է սա մկրտութիւն յոյժ տարբերեալ յառաջնոյն, լի ճգամբք և քրտամբք և խստամբերութեամբք. քանզի ոչչափ առաւել ստէպ վտանգեմք կորստեամբ զՀնորհն, այնչափ առաւել քրտանց և վաստակոց պէտք են առ 'ի միւսանգամ 'ի ձեռս բերել զայն։ Քանզի և Աստուած յայնժամ դժուարդ զոքելի դառնայ. զի Թէպէտ և ամենաբարին միշտ է զԹաց և ողորմած, սակայն և չկամի եթէ "զգթութեամբն և զքաղցրութեամբն և զերկայնմտութեամբն Աստուծոյ արհամարհիցես.,։

Այս արդ զմտաւ առ, քանզի արտասուելի խաբանք իցեն այնոցիկ, ոք 'ի սպառ կորուսեալ զՀնորհն՝ այնպէս ապշեալք հոգւով համարին յանձինս անքիրտն և անվաստակ ապաշխարութեամբ 'ի ձեռս բերել զկորուսեալն։ Քանզի յարուցեալ նոցա ըստ սովորական աւուրցն գնան առ քահանայն, խոստովանին անհոգութեամբ զմեղսն, ասեն զիւրեանց մեղայն միշտ նովին օրինակաւ՝ որով սովորեալքն են, նոյնպէս 'ի վերայ աւծեն և զառաջադրութիւնն ոչ ևս մեղանչելոյ սերտողաբար ինչ բառիւքն բերանով չափ յոր սովորեցան . . .։ Ո՞ւր ցաւն 'ի սրտէ, ո՞ւր ճշմարտութիւն առաջադրութեանն. չիք 'ի միջի . . .։

Այրինչիմ, սիրելիք, եթէ այդչափ դիւրութիւն դոցա յապաշխարել և այնչափ հեշտաբայլ գնացք նոցա 'ի քաւել, հաւաստիք անխաբք իցեն եթէ դժուարին

digitised by A.R.A.R.@

ուրեմն է դառնալ մարդոյ առ Աստուած 'ի սրտէ, և լինել բարի 'ի չարէ։ Հանդուրժեմ ընդ մեղաւորն, որ ապաշխարութեան իւրում զգայ և ոչ ինչ. ոչ անձն նորա խոնարհեալ է, ոչ սիրտն նորա բեկեալ է. ոչ տխրութիւն ինչ է նորա հոգւոյն, ոչ զիղջ վասն մեղացն գործեցելոց։ Այլ 'ի սահմանեալ ինչ աւուրս սովորեալ է այնպէս անվիշտ, անցաւ, անքիրտն երթալ առ ոտս հօր խոստովանութեան իւրոյ թափել զմեղսն զոր գործեաց. և դարձ առնէ անդրէն անահ աներկիւղ 'ի միւս անգամ անկանելոյ. ուստի և անջան և անհոգ է նա 'ի փոխել գվարս։

Յանկալի է ինձ մեղաւորն, որ սրտառուչ ինքն ընդ անձին ոգորի, որ զանձնէն բողոք հարկանէ, որ սրտնեալն է ընդ տկարութիւնս անձինն, որ դժուարի և դանդաղի ընդ պղերգութիւնն, որ արտասուէ զիշուառութիւն բնութեանս։ Այլ ապա ըստ գեղեցիկ նշանացս այսոցիկ անվեհեր ասասցես դու, եթէ 'ի սրտէ ապաշաւեալ է նա. և յետ այնորիկ նորոգածին կեանք նորա 'ի քրիստոնէութեան վարսն վստահ արասցեն զքեզ, եթէ 'ի բարեպաշտութիւն ուրեմն գլխովին դարձեալ է նա։ Իսկ միւսն այն հեշտակեաց վիճակ բազմագոյն մնասին մեղաւորաց այնչափ դիւրադարձ միանգամայն և 'ի մեղս և յապաշխարութիւն, այնչափ անկայուն և յեղյեղուկ կամք նոցա 'ի բարիոք առաքդրութիւնսն, այն բաժանել նոցա զկեանս իւրեանց ընդ առաքինութիւն և ընդ մոլութիւն, և այն ստէպ ստէպ անկանել նոցա և անդրէն յառնել. ազգ է այս հրեշից 'ի քրիստոնէական բարոյականին. և յայտնի առնէ եթէ նուաղունք յոյժ են ուրեմն ՀՀմարիտ ապաշխարողք, և դժուարին յոյժ է լինել այնպիսի։

Զի դու հարց միանգամ և ցիմաստասէրս արտաքնոցն, և ասասցեն քեզ յինչ հաստատեալ իցէ առաքինութիւնն։ Զսեն նոքա. առաքինութիւնն չէ հաստատեալ 'ի ներգործութիւն ինչ տկար և անցաւոր, այլ 'ի հաստատուն և 'ի մնայուն ունակութեան 'ի գործել զբարին։ Զդ կարծեսցուք մեք զմեզ յառաքինեաց կարգի. որ 'ի հանապազօրեայ անհաստատութեան անցուցեալ զամն բազում և զհոգիս աղտեղեալ, և այսօր 'ի կենարար լոգարանս լուացեալ սրբութեան խորհրդոյ և ա-

digitised by A.R.A.R.@

պաշխարութեան, և վաղիւն միւսանգամ՝ի գարշութիւնս թաւալիմք և՝ի լուալիս մոլութեանց. “Ոչ խաբանք անհնարինք իցեն այսպիսի կեանք, որպէս ասաց մեծն Տէր տուղիանոս, իբրու ապաշաւել ընդ ապաշաւութիւնն, և դատապարտել զԱրիստոս յետ ձանաչելոյ զանմեղութիւն դատաստանին, և առնուլ նուիրել զնա՝ի զոհ դրժպատեհ կրից մերոց. և իբրու այն թէ զգուել հաձել միւսանգամ զատանայ, զի այնպէս առ ժամանակ մի լքեալ թողաք զնա ,, ։ Մի, եղբարք իմ, մի՛ այնպէս մանկաբար խաբեսցուք. նա՝ի նմին իսկ յապաշխարութեան մերում և՝ի մեղայն մեր երկիցուք, զուցէ խաբեսցէ զմեզ։ Պաշաւեաց և Յուդա, և մեղայ գոչէր. ապաշաւեաց և Պաւուղ, և յանցաւոր զանձն դաւանէր. ապաշաւեաց և Դաւիթ, և միով մեղայիւն պատարագ անուշահոտ մատուցանէր Աստուծոյ զբեկումն սրտին և զգիղջն։

Զի՛ղջ և ցաւ կեղծ և պատիր, որով զայլս խաբէ մեղաւորն, է զիղջ և ցաւ թերակատար, որով զանձն իւր խաբէ մեղաւորն։ Զու անշուշտ որպէս ասս կարծեմ, չի՛ք տեսրք իմ, դիւան, չի՛ք ատեան դատաստանի, չի՛ք հարցուփորձ յաշխարհի, յորում այնչափ դրժանք և խաբանք սպրդեսցին, որչափ յատեան խորհրդոյ ապաշխարութեան և խոստովանութեան։ Պաշաւէ Պաւուղ իբրև յանցաւոր, սակայն և աղաչէ զմարգարէն պատուել զնա, մեծարանս դնել երեսաց նորա առաջի ծերոց ժողովրդեանն և բանակին Իսրայելի։ Հաւասիկ քեզ ապաշխարութիւն ոչ՝ի հոգւոյ աստուածսիրութեանն ընչեալ, քան թէ՝ի քաղաքական նկատմանէ և յաշխարհական կրից։ Զու ապաշխարութիւն այսպիսի առաւել զօրանայ յիշխանս աշխարհի և յառաջնորդս։ Պաշաւէ Յուդաս, և իբրև պարտաւոր արդար արեան մեղայ կարդայ։ Հաւասիկ քեզ և այլ ապաշխարութիւն ոչ՝ի սիրոյ անպարտ վարդապետին ազդեալ, քան թէ՝ի մղձկելոյ սրտին և յահագնութէ ոճրոյն և՝ի տագնապելոյ յուսահատ կրից։

Զու ապաշխարութիւն այսպիսի, աւա՜ղ, զի բազում անգամ վիճակեալ է մեղաւորացն այնոցիկ, որ մինչև ցժամանակ մահուն հիքաբար յերկարաձգեալ զղարձն իւրեանց առ Աստուած, ակն ունին յայնժամ հասանել ձշմարիտ ապաշխարութեան, և անյոյսք մեռանին։

digitised by A.R.A.R.@

խաբանք մահաւիթք առ հասարակ. այլ ունիմք գոգ-
ցես առ հասարակ և մեք բազում անգամ խաբանս այլ
յապաշխարութեան մերում. յորժամ համարիմք զմեզ
ապաշխարողս, և ՀՇմարտապէս եմք տակաւին'ի մեղս. յոր-
ժամ զմեզ ինքեանս, որպէս ասաց Տէրտուղիանոս, և
զնոյն ինքն զխիղճ մտաց մերոց խաբեմք, և չզգամք խա-
բանացն։ Բանզի և մարդ գոլով'ի մեզ կրկին, արտա-
քին մարդ և ներքին մարդ ըստ առաքելոյն, մին միւսոյն
այնչափ անծանօթ կայ, իբրու զլիովին այլաբունք. և
սիրտ գոլով կրկին, մին միւսոյն անգէտ է շարժմանց
խորհրդոցն. և մինչդեռ մին սիրէ զմեզս, միւսն կեղ-
ծաւորի ատէլ զնոյն։

Հանդերձ այսու, և զորօրինակ ամենիմաստն Աս-
տուած է զի յուզմանց կրից և ամբոխմանց թոյլ տայ'ի
սուրբս իւր, և ախտակիր ևս հակամիտութեանց և
թերակատար իմն ցանկութեան չարին, որպէս զի հաս-
տահիմն կացցեն մնասցեն նոքա'ի կենդանագործ խոնար-
հութեանն և'ի հանապազօրեայ արթնութեանն և
յանդուլ ահ փրկաւիթն երկիւղի, այսպէս և խորա-
մանկ բանսարկուն ցանկութիւնս իմն անկատարս զբա-
ւոյն զրդէ յամբարիշտս, առ'ի հաստատուն յամբարշ-
տութեան պահել զնոսա, և'ի կիրս յանձնապաստա-
նութեան իւրեանց և'ի սափաստուտ յանդգնութեան
ոգւոյ։

Համարին սուրբք զանձինս լինել մեղաւորս. իբրև
զի զչան նոքա յանձինս զխայթս և հրապոյրս զմեղացն.
այս խաբանք են նոցա փրկաւէտք, և կոչի այս խաբանք
սրբոց։ Համարին և մեղաւորք զանձինս յապաշխարո-
ղաց կարգի, իբրու զի զցանկութիւն և զիղձ ապաշխա-
րութեան զչան նոքա յանձինս. այս խաբանք են նոցա
մահագոյժ, և կոչի խաբանք անարգելոց։ Որ-
ին սեր ունի
զառաքինութեանն վասն նորուն իսկ առաքինութեան,
միւսն խաբեալ համարի յանձին եթէ բարիոք կեայ, ի-
բրև զի ցանկայ միայն բարիոք կեալ։ Բաբէ, ո՞ ոչ զդա-
զանի հարցի, խելամուտ միանգամ եղեալ խորոց աստուա-
ծեղէն իմաստութեանն։ Խորհուրդ է այս անքնին աս-
տուածային ողորմութեան, որով անձինք բարիք կար-
ծին լինել չարք, և'ի փրկաւէտ խոնարհութեան կեան
և փրկութեան հասանեն։ Խորհուրդ է այս դարձեալ

digitised by A.R.A.R.@

անքնին աստուածային արդարութեան, որով կարծեն չարք լինել բարիք. և ամբարտաւանեալք փքանան և աներկիւղք ընթանան և անկասկածելիք են 'ի չարէ, և կորնչին անդարմանելիք։ Օ այսօրինակ Աղաւամ կարծեաց լինել սուրբ, իբրև զի ցանկացաւ մեռանել զանհ որբոյ. սակայն և 'ի նոյն միտեգամնոյն խոտան գտաւ. գերի վարեցաւ յախտէն և զիսորհուրդս անիրաւութեան ետ իբրև ամբարիշտ։ Վասն, չիք լինել բարի միայն ցանկանալովն լինել բարի. և չիք լինել ապաշխարող, միայն շիթս երկուս հեղլով զարտասուացն, և ապա զնոյն վարելով սրձակերաստան կեանս իբրու զառաջինն։

Օ սիրտն պարտ է փոխել, զախտակիր հակամիտութիւնն յարմատոյ խլել, 'ի հրապուրից առթիցն փախչել, զհեշտութիւնն մեռելութեամբ մարմնոյն շինջուցանել, զամբարտաւանութիւնն կենդանագործ խոնարհութեամբ սրտին ընդոստնել, զանձին շահախնդրութիւն անկեղծաւոր սիրովն կարձել, կեանս կեալ նորոգածինս, մաղթել, պաղատել, արտասուել. և ապա յետ այսր ամենայնի անդուլ երկնչել, իցէ՞մք արդեօք ճշմարիտ յապաշխարողաց կարգի։

Օ ինչ ասէք. իցէ՞ն այսուհետև հաւատիք անխաբք, եթէ դիւրեաւ յոյժ 'ի բարեաց լինիմք մեք չարք քան թէ 'ի չարաց բարիք. և դիւրին է առաւել անկանելն քան թէ յառնելն. և հեշտին է դիմել 'ի չարն քան վերջոտնիլ 'ի չարէն։ Այլ զիա՞րդ հնար իցէ այսուհետև չերկնչել յանձնէ. դիտեք իսկ քաջ և զանսուտ և զահագին վճիռն, եթէ "Աղօսմք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք"։ Կամիս 'ի սակաւուց անտի լինել. երկիր յանձնէ, բնաւ իսկ երկիր 'ի քէն, և բնաւ իսկ ապաւինեա յԱ՛ստուած։ Երկին նժաքք են այսորիկ, որպէս հաքն ասացին, յորոց 'ի մէջն կայ յաւիտենական մեր փրկութիւն։ Աստաստանք Ա՛ստուծոյ ահագինք են. տարութիւնս մեր մեծ է. ամենայնն զայն ասէ, զոր յառաջագոյն ազդեաց առաքեալն. "Ա՛հիւ և դողութեամբ զանձին փրկութիւն գործեա"։ Այլ զիա՞րդ ոչ ահիւ և դողութեամբ. ահա քանի հեշտեաւ եթէ, եմք բարիք՝ դառնամք 'ի չարն, իսկ եթէ, եմք չարք, քանի դժուարաւ դառնամք 'ի բարին։

Ա՛հա միայն ընդհանք Ա՛ստուծոյ կարող է ոչ միայն պա-

digitised by A.R.A.R.@

հել զմեզ 'ի բարին, այլ և դիւրաւ կորզել զմեզ 'ի չարէն։ Այս հնարքս վասն մեր են եղբարք. միայն մաղթեսցուք զոր ամենայն, պաղատեսցուք. ահաւասիկ ապաւէն մեր. փարեսցուք զխաչին որ է մեր զօրութիւն, զիրկ ընդ խառն ընդ կենարար խաչելոյն՝ որ է մեր փրկութիւն։ Շատ է երկիւղ անձին, և ապաւինութիւն 'ի խաչն։ Ապաւէն իմ Աստուած, և ես յուսամ 'ի քեզ. 'ի քեզ անկայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ. և առ 'ի քէն է ինձ օգնութիւն իմ յամենայն ժամ։ Աստուած փրկութեան իմոյ, զիաւրդ կարաց ցից փրկել զիս, եթէ ոչ դու փրկեսցես զիս։ Ապաւէն իմ Աստուած, և յոյս փրկութեան իմոյ 'ի յաւիտեան։

digitised by A.R.A.R.@

ԲԱՐՈՅ ԼԹՈՒ

ՍԻՐԵԼ ԶԹՇՆԱՄԻՆ ԵՒ ՆԵՐԵԼ

" Այլ ես ասեմ ձեզ , սիրեցէք զթշնամիս ձեր , բարի արարէք ատելեաց ձերոց ,, :

Նոր և չքնաղ վարդապետութիւն , և ամենայն մարդկայնոցս վարժից այնչափ վեհագոյն և անմատոյց , մինչ զի եթէ և բնաւ իսկ այլ ամենայն հաւատքք և սատարք չէին 'ի միջի 'ի հաստատութիւն Աշմարտութեան և սրբութեան և աստուածայնութեան քրիստոնական կրօնիցս , այս միայն հրահանգ աստուածիմաստ շատ էր և զթերին ընդ զամենայնին , պասպանձեցուցանէր զանհաւատս , և նշաւակէր 'ի սպառ զթշնամիս խաչին Քրիստոսի : Ո՞ր օրէնք յաշխարհի երբէք հասին յայս չափ կատարելութեան հրահանգաց սիրոյն : Սիրոյն ասեմ, որ ամենայն առաքինութեանց գերագոյն է և աղնուագոյն . որ կենդանութիւն է աշխարհի , որ և ամենայն բարեաց պարգևատու է ազգի մարդկութեանս : Օ՜ինչ օրինադրեր ստուերական . " Սիրեսցես զընկեր քո , և ատեսցես զթշնամին քո ,, : Օ՜ինչ մեծ էր առաջինն , և քանի՞ թերակատար երկրորդն : Այլ զինչ զարմանք լցեն . քանզի աւետարանին պահեալ կայր լրումն օրինաց . իսկ ամենայն օրինաց որպէս ինքեաց առաքեալն լրումն սէր է :

Այր էր և օրինադրութիւն մի խմաստութեան վարժարանին հեթանոսաց 'ի թիւ առաքինութեանց առնուլ դասել զներումն թշնամւոյն և վրէժ չինդրել զա-

digitised by A.R.A.R.@

ներաւութեանն. այլ քան հրահանգ առաքինասէր վարուց՝ էր այն առաւել հանդէս գոռոզութեան. մի՛ երևեալ խնամասիրին նոցա իբրու ներքևեալ անարգութեան կրից վրէժխնդրութեան. քանզի և ներումն թշնամւոյն առ նոսա էր արհամարհութիւն նորա, և օրինակ ինն վրէժխնդրութեան. իսկ 'ի բերկրանաց վրէժխնդրութեանն տեղի տայր հպարտութիւնն վասն փառաց համբաւոյն արհամարհելոյ զթշնամին։ Բայց աւետարանին օրինադրութիւն 'ի սէր թշնամւոյն և 'ի ներելն ոչ զգոռոզութիւն մարդոյն զրգէ և ոչ զանձնասիրութիւն։ Լրկնաւոր առաքինութեանս որոյ 'ի մարդկան հնարից ապստամբ է Ճշգրիտ կատարումն, չիք այլ ուշ նպատակի առ քրիստոնեայս, քան միութիւն սրտի և Ճշմարիտ սիրոյնք նմանողութեան Քրիստոսի Աստուծոյ. չիք առ նոսա այլ յորդորակ 'ի նոյն քան իբրև եղբայր իւր տեսանելով զթշնամին, անխոսք յուսով այնուհետև ակն ունել զնոյն ներումն գտանել յերկնաւոր դատաւորէն՝ որով ինքն ներեաց թշնամւոյն և սիրեաց զնա։

Բա՛ռք առաքինութեան, որում՝ առաքինութիւնն ինքնին է վախճան։ Սիրոյ քրիստոնէին չիք այլ սահման, քան զսիրոյ ինքնին զլխովին. սիրոյ որ չունի սահման ոչ ըստ տեղեաց, ոչ ըստ ժամանակաց, ոչ ըստ անձանց. զի և երբէք չանկանի և երբէք չիջանիլ չգիտէ։ Բայց չափ է աւետարանին վսեմական հրահանգն 'ի որանչելի սէր թշնամւոյն։ Լաւ արդ մեք բացերև ձեզ, սիրելիք, 'ի քնին առցուք զբարձրագոյն զայս պատուիրան սիրոյ թշնամւոյն. առաջին՝ եթէ արդեօք արդար և իրաւացի իցէ պատուիրանն. երկրորդ անգամ՝ եթէ արդեօք 'ի կարծել մեր հաշտեալ ընդ թշնամւոյն՝ Ճշմարիտ այդ այդպէս իցէ. և Ճշմարտապէս արդեօք սիրեցեմք զնա ներելով նմա ըստ աւետարանին հրահանգաց։ Հապա անաչառ տեսցուք առ վայր մի։

digitised by A.R.A.R.@

ՄԱՍՆ Ա.

Լրեաք ինչ տիրագոյնք կապեն զմարդիկ ընդ միմեանս, և գործեն զամենայն բարեկամութիւնս մարդկայինս։ Առաջին ընդաբոյս միտումն, զոր սիրելութիւն կոչեն վարժարանք. որով իբրև ինքնաշարժք բնաւորիւք յայս ոք և յայն ոք՝ նմանակցութիւն իմն բնաւորութեան տեսանելով մեր 'ի միմեանս. որով և 'ի կենակցութեան նոցա քաղցրանամք։ Երկրորդ շահասիրութիւն, որով խնդրեմք մեզ բարեկամս զայնոսիկ որք պիտանացուք լինիցին մեզ, և շահաւէտք 'ի պէտս կենաց որ զինչ և ի-ցէ։ Երրորդ պատուասիրութիւն, որով սիրեմք և բարեկամս մեզ յարդարեմք զայնոսիկ որ շուք և մեծարանս ընծայեն մեզ. կամ թէ նոքա արդոյք գոլով յաշխարհի, կապիմք ընդ նոսա մեք և մտերմանամք ակն ունելով ի-բրու բաժանակից լինել և մեզ պատուոյ և հանրաւոյ նոցին։ Հաւասիկ երրակի այս յօդակապք ընկերութեան մարդկան. ընկերութիւն երկրաւոր և հնչաւոր, ընդ որում չիք մասն և բաժին ոչ աւետարանին, ոչ քրիստոսեան կրօնիցն, ոչ երկնաւոր սիրոյն։ Եւ վասն այնորիկ յորժամ ընդառաջէ քեզ մարդ յոր ընդաբոյս յօժարութեամբդ չիցես հակամիտեալ, կամ որ չիցէ ինչ քեզ պիտանացու, կամ որ զրժեալ ինչ իցէ համբաւոյդ և պատուասիրութեանդ, անդէն վաղվաղակի խզին և լուծանին յօդակապքդ այդոքիկ անկայունք և երկրաւորք։ Լուծանաս 'ի նմանէ, և գտանես 'ի նմա ոչ այլ ինչ բայց նեղութիւն և դառնութիւն։

Եւ աւադիկ քեզ նաև երրակի աղբիւրք դառնահոսք ատելութեանց հասարակաց և խեթից, որովք զդա-ծեալ են մարդիկ ընդդէմ միմեանց. որ և զամենայն քաղցրութիւն եղբայրութեան ժանտացուցանեն 'ի յաւէժ ոխութիւնս, և իբրև թունիւք դեղեն զինդուութիւն կենակցութեանց և զամենայն անմեղութիւն մարդկային ընկերակցութեանն։ Իսկ թէ երբեք յայն ատելութիւնս և յոխութիւնս տանջիցիմք ինչ 'ի խղճէ մտաց, իբրև հեստք և անասատեալք աւետարանական սիրոյն, պատրուակք բազմադէմք յայնժամ իբրև իրաւա-

digitised by A.R.A.R.@

ցիք յանդիման լինին մեզ առ 'ի չքմեղս հանել զմեզ և անդորրացուցանել զխիղճ մտացն։

Եւ ահա զառաջին պատրուակ հովութեան քո 'ի սէր եղբօրն 'ի դէմն ածես մեզ ասելով, եթէ "Քս. որ և այն որ չէ բնաւորեալ ըստ ընդարձակ յօժարութեան ի մոյ և ախորժակի. տաղտկամ 'ի նմանէ, և տնկակից է ինձ անսիրելութիւնս այս, և չեմ ձեռնհաս բնաւորական կրիս ընդդէմ կերթել. նա տեսանելն անդամ զնա և օրինակ քաղաքավարութեան նորա բերէ ինձ նողկանս։ Եւ զիարդ ոչ, յորժամ բնութիւնն ինքնին ընդ 'ի մեզ երբեմն եթէ ատելութիւն իցէ, եթէ սէր եթէ յօժարութիւն իցէ եթէ դժկամակութիւն այնպիսի, զի և ոչ մարթիմք մեք ձշգրիտ տալ զհամար զայնոցիկ կամ 'ի հարց փորձ մտանել ընդ ումեք, բայց եթէ միայն ը բնութեանն ինքնին գլխովին։ Քս. առաջին քո պատրուակ։ Պաջէ... Բայց և զպատասխանին թուի թէ լսել արժան է ըստ հաստատութեան հիմանն քրիստոսական հրահանգացն որ յաղագս եղբայրական սիրոյն։ Վասն այնորիկ հարցանեմ. Քս. յդ քո հովութիւն զոր ասես 'ի պատճառս անմտանութեան բնաւորութեացդ, ունիցի ինչ զօրավիգն նաև 'ի թերութենէ յեղբայրութեանն մասին, 'ի թերութենէ յորդիութեանն Աստուծոյ, 'ի քաղաքակցութեան երկնից, 'ի թերութենէն լինելոյն անդամ Քրիստոսի և ժառանգորդ յաւիտենիցն երանութեան։ Քս. յդ խառնուած և բնաւորութիւն եղբօրն՝ որ զինչ և իցէ, Ընչեսցէ՞ կամ եղծցէ ինչ մի յանդրժելի իրաւանցն՝ զոր ընկալաւ նա 'ի վերածնութեան սրբոյ աւազանին. իրաւունք՝ որ զնա կապէն ընդ քեզ այնպէս աստուածային և անխզելի կապանօք, որ աղաչաւ և պարտք են քեզ՝ սիրել զնա և ակն ածել։ Եւ յորժամ Յիսուս Քրիստոս պատուիրէ սիրել զմեր եղբարս իբրև զանձինս, համարեցաւ ինչ նա զայն պատուիրան իբրև հեշտընեալ ինչ և ոչ ինչ ամենևին դժուարին 'ի գործ։ Քս. պա թէ ոչ զինչ պէտք էին հրամայել մեզ սիրել զեղբարս մեր, եթէ զօրութեամբ պատուիրանիս այսորիկ պարտական էաք սիրել միայն զայնոսիկ, առ որս և 'ի բնութենէ ձգեալ բերիմք ըստ տնկակից հակամիտութեանս։ Ոչն պէտք սրտի պատուիրանիս այսորիկ, զի ինքն ինքեան է օրէնք։

digitised by A.R.A.R.@

Աժուարին ինչ ուրեմն 'ի մեր կողմանէն համարի պատուիրանն։ Դիւրատես ուրեմն էր ինքնին Քրիստոս եթէ ոչ դուշնաքեայ աշխատութիւն է մեզ սիրել զեղբարս, յորժամ հակակրութիւնս իմն և դիմամարտութիւն բնաւորութեան ունիցիմք մեք 'ի սիրել զայնպիսին։ Դիւ ահա այսորիկ աղագաւ զպահպանութիւն պատուիրանիս մեծապէս յարգեաց, և 'ի նմա միայնում զպահպանութիւն և զլրումն ամենայն օրինաց սահմանեաց։ Դպա ուրեմն այս դիմամարտութիւն բնութեան առ եղբարս ոչ միայն չարդարացուցանէ զմեր հովութիւնս առ նոսա, այլ և առաւելագոյն պարտուք սերտէ զմեզ 'ի սիրել զնոսա։

Դաւ զայն աղէ ասա ինձ վայրիկ մի։ Դէն քրիստոնէի պարտ և արժանի իցէ թողուլ առաջնորդիլ 'ի քանց բնութեանն և յախորժակացն առաւել քան 'ի սկզբանց լուսոյ բանին, 'ի հաւատոցն, 'ի կրօնիցն, 'ի շնորհացն։ Դւ եթէ դիմամարտութիւն մեր 'ի լրումն սեպհական պարտուց՝ տացէ մեզ իրաւունս ազատ առնելոյ զմեզ յայնցանէ, ո՞ ոք 'ի հաւատացելոց՝ որ զայթն 'ի գայթի կայցէ 'ի կռմանն, ազատ այնուհետև չարասցէ զանձն յամենայն օրինաց։ Օ ինչ ասես. ախորժակքս իցէ՞ն թերևս օրէնք բանականիս։ Դւ կրօնն ինքնին իցէ՞ զրգիչ և շողոմիչ բնութեանն առաւել, եթէ դարմանիչ բնութեանն։ Դաւ ըստ աշխարհի՝ ոչ արդեօք վատութիւն իցէ իբրև 'ի կանոնս գնացից մերոց, խորհրդոց մերոց, ատելութեանց, սիրոց, և ողջոյն ամենայն վարուց մերոց, զհետ ընթանալ զիարդուպէտ ախորժակաց և յօժարութեան բնութեանն և առաջնորդիլ 'ի նմանէ։ Դւ որ միանգամ այսպիսիք ումանք իցեն 'ի մարդիկ, ի՞ցէ՞ն նոքա 'ի պարծանս չասեմ կրօնին, այլ մարդկութեանս գլխովին։ Որ վիհ արհաւրաց խառնափնդորեալ ոչ լինէր աշխարհս, եթէ արդեօք յօժարութիւնք միայն և ախորժակք բնութեանն 'ի վեր վաղեալ տիրանային առ հասարակ և օրինադիրք լինէին պարտուց իւրաքանչիւր և վայելչութեանց. և այլ օրէնք չլինէին 'ի միջի 'ի սանձել զայնոսիկ և վայելչապէս յօդակապել զմարդիկ ընդ միմեանս։ Դրդ եթէ յաշխարհի ընկերութիւնս այսպէս, իսկ ապա աւետարանն այնչափ վատեալ և յետասմիտ գտանիցի 'ի մասին յայսմիկ։ Դէ-

digitised by A.R.A.R.@

տարանն որ ոչ այլ քարոզէ, բայց ուրանալ զանձն և ատել զանձն։ Զ.Լեռտարանն՝ որ առ հասարակ պատուիրէ բուռն առնել անձին և մարտ դնել ընդ դժպատեհ իղձս բնութեան, և 'ի վեր լինել քան զմարմին և զարիւն. նուիրել զանձն բոլորապտուղ սրբութեան հաւատոցն և բարձրագոյն հրահանգաց նորա. վայրապար և անհանձար ուրեմն է պատրուակն 'ի պատճառս դիմամարտութեան բնութեան առ 'ի հովանալ քեզ 'ի սիրելութենէ եղբօրն։

Երկրորդ անգամ, ապա եթէ 'ի պատճառս անհաճոյ ինչ և խառն բնաւորութեանց եղբօրն ուծացեալ է քո 'ի նմանէ, ասա ինձ. մնրթ իցէ քեզ հաւատարմացուցանել ինձ եթէ դու հաճոյ իցես ամենեցուն քոյին բնաւորական խառնուածովդ։ Զ.Դ որպէս կամիս եթէ 'ի չքմեղս հանցեն զքեզ այլք վասն դուշնաքէից թերութեանցդ, և տարցին քեզ, և ներեսցեն քեզ, և հայեսցին միայն 'ի բարութիւն և յուղղութիւն սրտի քո, նաև հայեսցին յայլ ինչ մնասնս բարելաւութեան կենաց քոց և յարգասիս արդեանց քոց, զանց զքոյին արարեալ զփոքրումքք պակասութեամքք. զնոյն արդարութիւն ապա ցոյց և դու առ եղբարս. նովին վարեսջիր կանոնաւ. տար նոցա, ներեա նոցա, մի հովանար յեղբայրական սիրոյն։

Զ.Գոյշ լեր, մի և ստգիւտ զնոքօք արկանիցես և բամբասեսցես. քանզի և զայն ևս քաջայայտ տեսանեմք յաշխարհի զօր ամենայն, զի որք միանգամ բնաւորեալք են բողոք հարկանել և բամբասել և աՀեցուցանել զթերութիւնս եղբարց, նոքին իսկ առաւել քան զամենեսին թերակատարք են, նոքին առաւել տաղտկալիք են ընկերութեան, և նոքին առաւել ծանրաբեռինք են այլոց։

Զ.Լաև զայն ասա ինձ Ճշգրիտ ոՀ սիրելի. մի եթէ դիմամարտ այդ բերումն ընդդէմ եղբօրդ՝ զոր անտանելի քեզ ասես, թերևս 'ի քոյ կողմանէ ունիցի ծագումն. այս է՝ թերևս 'ի գոռոզ ինչ կրիցդ և յարհամարհոտ գնացիցդ. թերևս 'ի քոյին իսկ յօտարոտի բնաւորութենէ խառնուածոյդ, և 'ի տնկակից անընկերասէր և 'ի մարդատեաց բարուցդ, և ոչ 'ի նմանէ։ Զ.Այլ և զայն ինչ կամէի խնդրել 'ի քէն. արդեօք և այլք առ հասա-

digitised by A.R.A.R.@

րակ զնոյն Թերութիւնն տեսանելոյն յեղբայրդ, յորս կարծես դուն տեսանել զնա։ Այս այսոքիւք և զայն ևս անաչառ ասա ինձ. եթէ որ ինչ անհաճոյք և դժկամակք թուին քեզ յեղբայրդ, ո՞ դիտէ լցեն Թերևս բարեմանութիւնք ինչ ոգւոյն նորա, կամ թէ հանճարն նորա կամ համբաւ անձինն և շուք վարկի նորա կամ յաջողութիւն բախտին, կամ աւագութիւն ինչ բարձի մնաւանդ, քան եթէ ՀՇմարիտ ինչ Թերութիւնք 'ի նմա։ Ասա՛ւ, քանի՞ հեշտին լցէ 'ի մասինս յայսմիկ մոխաբ լինել և անձնասանն։ Կիրք նախանձուն յոյժ է հնարագէտ, և սիրելի է նմա դիմակս առնուլ զանձամբ և քօղարկիլ. իբրու որ անարդ յոյժ է կիրք նախանձուն, և կիրք անձնանախատ է. և այսմ խելամուտ է քաջիկ և նախանձոտն ինքնին գլխովին։ Այ արդ դու զիտոս սրտիդ անաչառ 'ի քնին առցես. մի գուցէ որք միանգամ առաւել արգոյք և պատուականք լցեն առ քեզ, նոքա քեզ անհաճոյասցին Թերևս. կամ թէ նոքա միայն սիրելի երևեսցին քեզ, որ խոնարհ լցեն քան զքեզ։

Այլ դու ինձ և զայն առաւել քան զամենայն զմբտաւ ածցես անաչառապէս, զի է (զի թէպէտ և ՀՇմարիտք ևս լցեն Թերութիւնք եղբօրդ և մեծամեծք), զի է զի 'ի պատճառս ժամանակէից ինչ շահուց կամ ծաղկընկէց փառաց՝ մեռելութիւն դու յանձն առնուս տրնկակից դիմանարտութեան բնութեանդ, առ այս որ կամ առ այն որ 'ի մարդկանէ յորմէ ակն ունիս յաջողել յանցաւոր յաւիտենիս։ Համբերես տանիս դժպատեհ խառնուածոյն նորա, դժկամակ բնաւորութեանց, դըժխեմ բարոյիցն, գոռոզութեանն, ցասկոտ բնութեանն. Համբերես, քաղցրանաս և ընդդէմ չդառնաս 'ի սէր անկայուն բախտիդ, սակաւատև շահուդ, անցաւոր պատուոյդ։ Իսկ վասն յաւիտենիցն երանութեան և անեղբական փառացն՝ որ խոստացեալ են քեզ 'ի պահպանութեան պատուիրանաց սիրոյն, չկամիս և վայրիկ մի բուռն առնել անձինդ 'ի յաղթել բնաւորական դիմանարտութեանդ առ եղբայրն։ Այ ո՞րպէս խմնաս դու զբանն, եթէ «Աքբայութիւն երկնից բռնաբարի, և բռունք յափշտակեն զնա»։

Այլ դու մի՞ ինձ զայն ընդդէմ բանս դիցես, եթէ

չեմք մեք տեարք մերոց տնկակից և ընդաբոյս սիրելութեանց և անսիրելութեանց առ այս ոք կամ առ այն ոք։ — Ասէ քեզ աւետարանն, չպահանջէ 'ի քէն եթէ համակրութիւն կալցես դու ընդ եղբօրդ, ընդ որում քո հակակրութիւն ընդաբոյս։ Ասէ զայս. սակայն պահանջէ 'ի քէն սիրել քեզ զնա. այս է՝ տանել նմա, ներել նմա, անմեղադիր առնել զնա, քօղարկել զթերութիւնս նորա, և 'ի կարիս նորա յօգն հասանել նմա. համառօտ ասել, առնել նմա զամենայն զորս կամիր եթէ առնէին ընդ քեզ։

Սէրն չէ զաչացու բերումն բնութեան. չէ և համակրութիւն մարմնոյ և արեան, այլ պարտք արդար և բանաւոր. ունի զիւր ծագումն 'ի շարժման անդ հնորհացն և յազդեցութեան հաւատոյն։ Սիրել զեղբայրն լոկ 'ի համակրութենէն չէ տիրապէս սիրել զնա 'ի պատուիրանէ սիրոյն. է մանաւանդ սիրել զանձն։ Համակրութիւնն անհաստատ է և անդուլ փոփոխի. սէրն չելանէ 'ի խնդիր առանձին օգտի. հետամուտ է ողջոյն 'ի շահ սիրեցելոյ անձին, և բարեկամն գործէ ճշմարիտս և հաստատունս։ Համակրութիւնն չկայ յակաստանի յարկածս և 'ի ճախողակս՝ որ զինչ և իցէ. սէրն հզօր է քան զմահ, և կրէ զամենայն վասն սիրեցելոյն։ Կոյր է համակրութիւնն. բազում անգամ և զմոլութիւնս սիրեցելոյն փարելիս յարդարէ. սէրն չհաճի երբէք ընդ անիրաւութիւն, այլ միայն զճշմարտութիւն սիրէ յեղբարս։ Բարեկամք հնորհացն են ուրեմն բուն և ճշմարիտ բարեկամք և առաւել հաստատունք քան զբարեկամս բնութեանն։

Այս աւադիկ առաջին աղբիւր ատելութեան մերոյ և սիրոյ որ 'ի դիմնմարտութենէ կամ 'ի յօժարութենէ բնութեանն։ Սակ է երկրորդն շահասիրութիւն։ Բանզի և յաճախ լսեմք ասել, եթէ — Այն ոք խնդրեաց կործանել զիս և ոչ դադարի երբէք փնտռել ինձ և տան իմում և բախտին իմում և խուչնդոտն կալ շահու իմոյ, և ամենայն ուրեք խնդրէ հալածել զիս։ Այս զիարդ ապա մարթ իցէ ինձ սիրել զայրն որ թշնամին է ինձ։ — Այլ արդ տացուք մեք քեզ եթէ արդարև ճշմարիտ իցեն չարիքն զոր կրես առ 'ի նմանէ. այլ զի՞ է քեզ առ կիրս չարեացդ այսոցիկ յաւելուլ բարդել քեզ և զծանրա-

digitised by A.R.A.R.@

գոյնն ամենայն չարեաց, այն է ատել զեղբայրն։ Քան զի այլ ամենայն չարիքն զոր ասես, յանկայուն և յանցաւոր բարեացն կապտիցեն զքեզ. իսկ ատելութիւնն կորուստ է հոգւոյ և յանմահ պրքայութենէն կապտէ զքեզ։ Ոչ ահա ատելովդ զեղբայրն առաւել ևս քան զնա դու ինքնին վնասեսցես անձին քում։ Որժեաց նա ատն քոյ, զեան հասոյց հայրենի ժառանգութեան քոյ. իսկ դու վրէժ խնդրելով 'ի նմանէ, մանաւանդ եթէ յանձնէ քումմէ, զրկեսցես զքեզ 'ի ժառանգութենէ երկնաւոր հօրն և 'ի ժառանգակցութենէն Քրիստոսի 'ի յաւիտեան։ Դ. այս դարձեալ, ատելով քո զեղբայրն զվնասաբերն կարծիցես թերևս միսանգամ 'ի ձեռս բերել զոր կորուսեր. կամ թէ լաւագունի արդեօք վիճակեսցիս բախտի ատելութեամբ։ Օ՜ինչ շահ օգտի կայցէ քո 'ի դառնութենէդ ընդդէմ նորա։ Դ. ասես, սիրելի՛ քեզ ատելովդ զնա։ — Ա՜հ, զինչ սիրելի՛ քեզ ատելութեանն դառնագոյն կրից, որ հանապազ բնաւորեալ է դահճաբար կեղեքել զսիրտս, և անձկութեամբ ընուլ զնեղբինս մեր, և ապերջանիկ գործել զմեզ 'ի կեանս մեր։

Դայց թողեալ զմարդկայինն, և վայր մի զաւետարանականն առեալ լեզու, որում յառաջին տիոց նուիրեցաք քրիստոնեայքս. եթէ արդարև ճշմարիտ հաւատացեալ լիցես ով սիրելի, և քո բաց լիցեն աչք հոգւոյդ, ոչ միայն չեր քեզ պարտ ատել զվնասաբերն քո ըստ ժամանակէիցս այսոցիկ բարեաց, եթէ մեծութիւնք լիցեն, եթէ փառք, այլ ևս զանդերձ, այլ և արժան էր քեզ տեսանել զնա իբրև գործի 'ի ձեռին աստուածային նախախնամութեանն 'ի վերայ անձին քո. զի մի թերևս 'ի սպառ անձնագրաւ լիցիս դու 'ի կենցաղականս յայսոսիկ և մոռացիս զՔ՚ստուած։ Տեսանել զնա իբրև պաշտօնեայ սրբութեան հոգւոյ քոյ, զի մի պատրեալ քո 'ի ցանկութեանց աշխարհի, սիրեսցես միայն զդգալիսս. տեսանել զնա իբրև վէմ ապաւէնի յալէտանջ ծովու՝ ապրեցուցանել զքեզ 'ի հոգեկորոյս նաւաբեկութենէն. զի մի ընկղմեսցես դու զանձնդ 'ի ծուփս բազմահոգս բազմախաբ կենցաղոյս, որ ըստ փառաց, որ ըստ հաւատոյն, որ ըստ բարձին աւագութեան, որ ըստ բազմամեծ մեծութեան, զի մի թերևս մոռացեալ 'ի

digitised by A.R.A.R.@

սպառ զՀոգիդ, և 'ի յաւիտենական կորուստն վտանգեսցես զնա։

Զչոք հաւատոյ աղէ դու միանգամ Հայեաց յառաջ բերայս, և Ճշգրիտ խուզեա զինչ իցեն ժամանակեայքս. զինչ այլ. բայց ստուերքք որ անցանեն, և ծուխ որ պակասէ. և զինչ այն իցէ 'ի գործս մեր առաւել մեծ և չքնաղ և անեղծ, բայց գործ փրկութեան անմահ հոգւոյդ։ Զանգի յորժամ Ճշգրիտ գիտասցես դու զայս, ծիծաղեսցիս դու այնուհետև ընդ մարդ որ 'ի պատճառս կորստեան ինչ ժամանակեիցս այլ յայլմէ լինիցի, խռովեսցի, ցանուցու, ատեսցէ զեղբայրն, և 'ի վերջէ վասն այնորիկ մատն ևս եղիցի անմահական հոգւոյն. արդարև նմանեալ Ճշգրտիւ մանրիկ մանկտւոյն որ 'ի վերայ խաղալկաց իւրեանց ընչենոց յորժամ ոք 'ի ձեռաց նոցա հանցէ զայնոսիկ, անտիական հանճարո

և 'ի խոր խոցեալ քո, ասես մեզ. "Օ խորդ մարթ ի-
ցէ ինձ ոչ ատել զնա ,, ։

Ի՞նչ է ... ։ Բ.յլ մինչև առեալ զպատասխանիդ, ա-
սեմ առ այժմ։ Բ'ի դու անդէն խռովեսցիս յանձն քո 'ի
լրոյդ որ ընդդէմ քո։ Ի՞նչ քանի զրոյցք յաշխարհի
անմեղութեամբ եղեալք միանգամ'ի բերանոյ՝ խանգա-
բեցան և զգեցան զչարութիւն 'ի հնարիմացութենէ լե-
զուագարացն որ լուան զզրոյցսն։ Ի՞նչ մարդելոյզ հաց-
կատակաբ լի է աշխարհս, որ խնդրէն յաչս մտանել այ-
լոց ինասելով զայլս. չպակասին երբէք չարարուեստք,
որոց ամենայն գործ և զբաղումն յայն յանգաւորի՝ ե-
բևեցուցանել չար ուր չիք ինչ չար, և որոմնացան լինել
'ի մարդիկ։ Ի՞նչ՞ն իցեն յաշխարհի և արք անխո-
հեմք և թեթևամիտք, որ ոչ ինչ ուշ պարագայիցն ե-
դեալ, թունալից գործեն զայն ինչ իրս, որ զրուցեցան
անդատապարտ դիտաւորութեամբ։ Ի՞նչ՞ք և կուտա-
կաբանք, յորոց բերանի ուռնու ամենայն և ահՀ քան
զՀմարտութիւնն։ Ա՞ն որոց և 'ի քեզ ինքն բողոքեմ
ես այժմ. երբէք դէպք ո՞չ եղուն քեզ, զի զրոյց մի քո
անմեղութեան բերանոց'ի բերանս յածեալ և այլայլեալ
այնպիսի ինն յաւելուածովք յունկն այլոց հեղեալ իցէ,
զոր և յերազեալ անգամ չիցէ քո. և ո՞չ քանքարտեցար
դու յայնժամ ընդ անիրաւութիւն և ընդ չարութիւն
դուշակացն։ Ա՞ն արդ չիցէ՞ մարթ և քեզ ինքնին խաբիլ
յայլոց 'ի զրոյցս որ ընդդէմ քո։

Բ.յլ ասիցես, եթէ զոր ասն լուայ, հաւաստիք են և
անյերկուանալիք։ — Ա՞ղիցի այնպէս։ Բ.յլ աղէ ասա.
նաև քում եղբօր չիցէ՞ն թերևս պատՀառք զնոյն կրչ-
տամբանս առնելոյ ընդդէմ քո։ Բ.ղեաբ առ նորա պա-
կասութիւնսն եղէր դու ներողամիտ։ Բ.ղեաբ իրաւա-
ցուցէր դու երբէք զբարեաւութիւնս նորա առ բամ-
բասողսն։ Բ.ղեաբ թոյլ եռուր երբէք չարախօսացն
նորա դատափետել զնա յանդիման քո։

Ա՞ւ զայն ևս ասա ինձ. եղէր և դու առ այլս զգու-
շաւոր և ակնածու ըստ արժանւոյն. արդեաբ զայլոց
տկարութիւնսն չտեսանելոյն կամ չլսելոյն արարէր.
արդեաբ չարեցէր երբէք զնեղոյդ ընդդէմ եղբօրն, և
չաղարտեցէր հրապարակաղոյժ զնորա համբաւն կամ
անխոհեմութեամբ կամ չարութեամբ։ Ա՞ւ զի է քեզ

digitised by A.R.A.R.@

այր դու այնչափ գիրդ, այնչափ զգայուն լինել յորժամ վասն անձին քոյ իցեն բանք։ Եւ եթէ քոյ այնչափ իցէ վասն անձին զրգռութիւնդ, սակայն և մեզ կարի քաջ պարտք են աստուածային սպասաւորաց՝ հրահանգօք կրօնիս ձայն տալ քեզ և ազդել զի ներեսցես դու եղբօրն զզրոյց զայն և զբան ընդդէմ քո կամ զքէն թռուցեալ 'ի բերանոյն բաղում անդամ անմտադրութեամբ և յեղակարծումն, կամ թէ առ իրաւացի ինչ զայրացութեան։ Իսկ զքոյդ անսահմանափակ ազատութիւն զրուցելոյդ ընդդէմ այլոց չտեսանիցես երբէք. որ ոչ ըստ վայելչութեան վիճակիդ և ոչ ըստ քրիստոսական քաղաքավարութեանդ չիք քո չափ 'ի լեզուի, չափ որ և ըստ աշխարհի ինքնին պարտք են ամենայն բարեզգեաց և կիրթ մարդոյ։

Բայց տացուք քեզ և զայն, եթէ և 'ի չափաւորութեան կրից ընդդէմ եղբօրն չիցէ քո թերացեալ։ Այս կայն ասա ինձ. յիմ խմիք յաջողեսցիս դու ատելովդ զնա։ Յաջողեսցիս թերևս սրբել ջնջել զձախողակ կարծիսն, զոր զրոյցք եղբօրն տպաւորեցին 'ի միտս այլոց վասն քո։ Այս աւանիկ դու այլ վերս նոր բանաս 'ի սրբոյի քում ատելովդ զնա՝ մահաբեր հոգւոյդ։

Այլ աղէ եկ դու ուսիր զարքունի Ճանապարհ զբարիոք վրէժինդրութիւն։ Յոյց աշխարհի անմեղութեամբ վարուց քոց և անարատութեամբ գնացիցդ, եթէ սուտ և անիրաւ ուրեմն էին զրոյցք նորա ընդդէմ քո։ Արդ դու ջնջեա անստգիւտ քաղաքավարութեամբդ զտպաւորեալ և զարմատացեալ զայդ խէթ մտաց ընդդէմ քո։ Բաբինութեամբք՝ որ դիմանարտքն իցեն յանցանացն զոր շփեցին զքեզ վայրախօսքն, տուր դու անկանել 'ի վերայ նոցա զանարգութիւն զատութիւն և զզրպարտութիւն նոցա։ Բասիկ քեզ օրինակ արդար և օրինաւոր վրէժինդրութեան։ Յաղթանակ կանգնեսցես 'ի վերայ չարութեան նոցա բարութեամբ վարուցդ և քոյին լուութեամբ. զայս արարեալ որպէս առաքեալ ասաց, կայծակունս հրոյ կուտեսցես 'ի գլուխս նոցա։ Զայս արա ըեալ 'ի քոյ կողմն կացցէ այնուհետև աշխարհ, և թողնամուն քում չմնասցէ ինչ այլ, բայց նշաւակութիւն և ամօթ երեսաց։ Իսկ եթէ սկսանիցիս դու ատել զնա, այդ վրէժինդրութիւն տկարաց է. այդ սինլքքոր և

digitised by A.R.A.R.@

չարաչար սիրտքանք յանցաւորաց են. և միանգամայն ա-
սել, այդ զովացումն և դիւր սրտի այնոցիկ է՝ որ յոյժ են
հիքացեալք և գեղ ինչ դարմանոյ չնորհիլն գտանել յա-
ռաքինութեան և յանմեղութեան։

Վասայն և զայս ամենայն փաստս 'ի մի կողմն եդեալ,
եկեսցուք մեք առ տիրական մասն։ Պատուիրան է քեզ
Յ Աստուծոյ սիրել զայնոսիկ որ լկեն զքեզ և հա-
լածեն և զրպարտեն. աղօթել վասն նոցա, աղաչել
զԱստուած վասն դարձին նոցա՝ շրջել զնոսա 'ի դառնու-
թենէ սրտից նոցա. հաստել 'ի նոսա հոգի խաղաղու-
թեան և զսիրոյ, և ընդ սուրբս ևս իւր դասել զնոսա։
Այս է ասելն, «Սիրեցէք զթշնամիս ձեր. բարի արա-
րէք առելեաց ձերոց. օրհնեցէք զանիծիչս ձեր. աղօթս
արարէք 'ի վերայ այնոցիկ որ չարչարեն զձեզ...։ Զա-
այս և ըստ գերագոյն հրահանգաց կրօնիս համարել քեզ
զչարչարանս որ 'ի նոցանէ, իբրու երախտիս. ընկալեալ
զայնոսիկ իբրև պատիժ արժանահաս գաղանի յանցա-
նաց. և հայել յայնոսիկ իբրև 'ի գին արքայութեանն
Աստուծոյ որ խոստացեալ է այնոցիկ որ բարեպաշտու-
թեամբ տարցին հալածանաց և զրպարտութեանց։

Այլ եթէ ոչ այսպէս, ասա ինձ ով սիրելի. զինչ ա-
պա անջրպետ կայցէ ընդ աստուածպաշտութիւն և ընդ
անաստուածութիւն. զինչ և ընդ քրիստոնէութիւն և
ընդ հեթանոսութիւն։ Այն ուրեմն իցեն ամենայնքն։
«Օ՜ինչ վարձք իցեն, ասէ տէրն, որ չնորհք իցեն.
զի և հեթանոսք, զի և մաքսաւորք, զի և մեղաւորք
սիրեն զսիրելիս իւրեանց, և ողջոյն տան բարեկամաց
իւրեանց...։ Այլ եթէ դու առաւելագոյս, ասէ, քան
զնոսա, յայնժամ նմանող լինիցիս Աստուծոյ, որ հաւա-
սարապէս բարերարէ արդարոց և մեղաւորաց, որ զարե-
գակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց, որ ածէ
անձրև 'ի վերայ ամենեցուն առ հասարակ. նմանող լի-
ցիս Աստուծոյ, ապա ուրեմն և ժառանգ արքայութեանն
Աստուծոյ։ Նմանող լինիցիս Աստուծոյ, և Աստուած
նմանող լինիցի քեզ. զի եթէ դու ներեսցես առելեաց
քոց, և Աստուած ներեսցէ քեզ. իսկ եթէ դու չթո-
ղուցուս նոցա, և ոչ հայրն քո երկնաւոր թողցէ քեզ
զյանցանս քո։ Այլ պատիւ անձինդ և փառք զինչ ի-
ցեն առ Աստուծոյն, (ես ընդ հարցանելս անդամ զար-

digitised by A.R.A.R.@

հուրիմ, և դու ընդ լսելդ զերկիր միայն նշմարես). Հա-
մայն և այնպէս մեղուցեալ ինչ արդեօք իցէ՞ քո երբէք
ընդդէմ Աստուծոյ, և առ ոսն կոխեալ զփառս և զպա-
տիւ նորա. և կամիցիս դու եթէ լուռ և անզգայ իցէ
Աստուած առ նշաւակութիւն փառաց իւրոց. իսկ դու
առ պատիւ անձինդ այնչափ ժրացեալ՝ զի և վրէժխնդ-
դիր ևս լինիցիս ընդդէմ եղբօրն։ Արդ առ ընկալ կա-
մակար զպատուհաս յանցանացդ՝ զոր յանցեար ընդդէմ
Աստուծոյ, և հատո զհատուցումն փառաց նորա. զքո
անարգիլդ նուիրեա փառացն Աստուծոյ, զոր անարգե-
ցեր. համբերեա նշաւակութեանդ, տուր ներումն եղ-
բօրն որ յանցեաւ քեզ։

Այլ ասես։ — Որ ապա թողցուք մեք զպատիւ
անձինն, զչուք վիճակին։ Երինաց աւետարանին այս
մեծապէս շքով ակն ածեմ, ասես. այլ սակայն և օրի-
նաց պատուոյն չիցէ՞ արժան երեսս առնել վրէժխնդիր
լինելով։

Օ՜ինչ իցեն, աղէ ասա, որ իցեն այդ օրէնք պա-
տուոյ. և զինչ այն պատիւ անձին իցէ, զոր չիցէ հնար
զրգռել, բայց միասելով զհոգին, և վտանգելով զյաւի-
տենական փրկութիւնն. այն որ միայն զՀնմարիտն պա-
տիւ և զփառս գիտէ տալ հոգւոյն։ Լաւ յաշխարհի,
զինչ կարծես, քան զատելն և զոխակալ լինելն և քան
զվրէժ խնդրելն, ոչ առաւելութիւն պատուոյ իցէ անո-
խակալութիւնն, անյիշաչարութիւնն, և ընդ չարին
բարւոյ փոխարինութիւնն. ոչ մեծ արդասիք իցեն այս
վերնական ոգւոյն։ Արքինութիւն և խնամատութիւն
և չարտաւորութիւն, չիցեն բաւական զՀնմարիտն պա-
տիւ և զփառս սաղրել բանաւոր արարածոյն, և որ ինչ
միանգամ զնարդկութիւնն անպատուէ՝ երբէք զոք 'ի
մարդկանէ պատուել ունիցի. և աւետարանին որ զնե-
րելն հրամայէ ոչ ահա բաղմութիւք կացին դիւցազունք
Հնմարիտք 'ի խրախոյս խնամատոյ և առաքինեաց։

Արդ ուրեմն, քաջ է, ասես. և ես աւադիկ անյիշա-
չար եմ այսուհետև առ եղբայրն. և հաշտութիւն մեր
ընդ միմեանս վախճան արար ամենայն գժտութեան և
ատելութեան։ Քաջ է։ Սակայն և զայն վայր մի 'ի
քնին առցուք, եթէ Հնմարիտ արդեօք իցէ հաշտու-
թիւնն։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆ Բ.

Ոչիք պատուիրան առաւել բացայայտ և անյերկուա-նալի քան զպատուիրան սիրոյն առ Եղբարս. սակայն և պատուիրան այլ չիք յորում ջանդիցին 'ի պահպանութեանն խաբանք և սկզբունք պատիրք առաւել քան 'ի սմա։ Յմենայն որ գամ մի ճշմարտաւալ յընկերին, ասէ եթէ ներեալ եմ նմա 'ի սրտէ և անդորրացեալ է 'ի խիղճ մտացն։ Այս սակայն չիք ինչ յաշխարհի առաւել դժուարագիւտ քան զճշմարտապէս ներումն. և դուն ուրեք հաշտութիւնն փոխեսցէ ճշմարտապէս զսիրտ, և հազիւ երբէք ճշմարիտ բարեկամութիւն հաստատեսցէ միւսանգամ։ Այս արդ 'ի քնին առցուք մեք զհաշտութիւնն եթէ 'ի ծագման իւրում, եթէ յընթացս իւր, և եթէ 'ի հետևանսն, և յայնժամ 'ի վերայ հասցուք ճշմարտութեան նորա։ Ըստ ծագմանն, քանզի միտ դիք աղաչեմ սիրելիք, ըստ ծագմանն առ 'ի լինել անկեղծ և ճշմարիտ, հարկ է հաշտութեանն զսկիզբն իւր ունել յաստուածային պատուիրանէ անտի սիրոյն, և 'ի քրիստոնէական սիրելութենէն առ Եղբարս. "Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս"։ Այս արդ մեք տեսանեմք, զի հասարակ կարգաւ 'ի մարդկայնոց ստի զգածմանց շարժառիթք և պատճառք գրաւեն ողջոյն զտեղին 'ի գործ մի որ է միայն գործ շնորհաց, այն է հաշտութիւնն ճշմարիտ։ Վասնզի տեսանեմք զի թշնամիք կամ խռովեալք հաշտին ընդ միմեանս 'ի թախանձանաց անտի միայն բարեկամացն իւրեանց, զի մի չարն ամենայն և և ամբոխեսցի ամենայնն, և զայրասցի ատելութիւնն, և յորդեսցեն աղէտք։ Հաշտին ընդ միմեանս, զի մի իբրև զնզովեալս 'ի բաց կացցեն նոքա վտարանդիք յայն ինչ ակմբից և 'ի կենակցութեանց, այնպէս անհաշտելիք մնալով ընդ եղբօրն։ Հաշտին ընդ միմեանս, սակայն 'ի պատճառս ակնածութեան և բարեմարդկութեան զոր ունին առ աւագս և առ իշխանաւորս. որ զայս ներողամտութիւն և զհաշտութիւն պատուիրեն և պահանջեն 'ի նոցանէ։ Հաշտին ընդ միմեանս, սակայն 'ի

digitised by A.R.A.R.@

պատճառս վարկին և համբաւոյն իւրեանց. զի իբրև այր բարեկիրթ և մեծանձն ծանիցեն մարդիկ զնոսա. և զի մի առակ նշաւակի լիցին աշխարհի 'ի տոյժ պատուոյն և շահուն իւրեանց։ Հաշտին ընդ միմեանս, ոչ 'ի սէր պատուիրանին, այլ 'ի սէր անձանց. որպէս զի հաշտութեամբ իւրեանց կարձեսցեն զլեզուս չարախօսաց իւրեանց և բամբասողացն։ Օ. Ինչ և այլ։ Հաշտութիւնք նոցա նմանատիպք իցեն թերևս հաշտութեանն Աւուղայ. քանզի և հաշտին այնպէս վեր 'ի վերոյ և գաղտապէս, զի ապա անքոյթք և առաւել յաջողաձեռինք մարթասցին վնասել թշնամւոյն իւրեանց. իբրու նինջ և նիրհ արկանելով 'ի վերայ տքնութեանց և պահակերութեանց նոցա։

Բ. յսոքիկ են բազում անգամ շարժառիթք հաշտութեանցն զոր տեսանեմք յաշխարհի. և զոր ասեմն անշուշտ է. քանզի և բազումք 'ի հրապարակագոյժ մեղաւորաց թէպէտ և ոչ նշան մի յանձինս բերիցեն զբարեպաշտութեան, սակայն և զօր ամենայն հաշտին նոքա ընդ եղբարս. նաև նոքա որ թուլացեալք են 'ի վարս և բուռն երբեք չառնեն անձանց 'ի լրումն առաւել հեշտընկալ պարտուց քրիստոնէութեան, տեսանես զի իբրև նահատակք հանդիսացեալք են նոքա 'ի կատարումն մեծի պատուիրանիս այսորիկ, որ առաւել դժուարին է քան զամենայն։ Բա՛լէ, զինչ իցէ պատահումն։ Այն ուրեմն նոքա նահատակք անձնացոյց կրից. և ոչ աստուածայնին սիրոյն, և 'ի քրիստոսական պատուիրանէ անտի հաշտութեան ընդ եղբօրն՝ զատեալ որոշեն զդիւցազնականն որ 'ի նմա և զմեծն առաջի Աստուծոյ և զդժուարին, այն է զանյիշաչարութիւնն և զսրտին փոփոխութիւն առ եղբայրն, և 'ի բաց թողեալ զայս՝ առնուն միայն յանձինս որ փառաւորն է յաչս մարդկան, այս է զարտաքնայարդար կերպարանս զբարեկրթութեան, զբաղաքավարութեան, զդովանին յաշխարհի։ Այս արդ եթէ 'ի մարդկայնոց ասի է ծագումն հաշտութեանն, և այսպիսի ինչ են շարժառիթք սկզբան սիրոյն, որպիսի ինչ այնուհետև իցեն արդեօք ընթացք ճանապարհի նորա։

Հաւասիկ ձեզ սիրելիք։ Բ. 'ի հաստել հաստատել զհաշտութիւն մի, նստին նախ ուշով 'ի քնին առնուլ

digitised by A.R.A.R.@

զքանն. ո՛վ, պատրաստութիւնք քանիցն յառաջէն յայնժամ քան զՀաշտութիւնն, քանի՞ հնարագիտութիւնք, քանի՞ յեղանակք, քանի՞ ծուփք մտաց և խորհրդածութիւնք, քանի՞ զգուշաւորութիւնք 'ի հաստատելն, քանի՞ շահախնդրութիւնք 'ի պահպանելն, և քանի՞ քայլք դանդաղաքայլք 'ի յորոշելն։

Այ՜, ձեր հաշտութիւնքդ չեն ուրեմն գործ սիրոյ, այլ գործ հնարագիտութեան և զգուշութեան և յաջողաձեռնութեան բարեկամաց ձերոց. ձեռնարկ աշխարհի է ուրեմն սէրդ այդ, և ոչ պիտառնութիւն կրօնի. դաշնադրութիւն իմն քաղաքական այնչափ զգուշութեամբ կռեալ, և ոչ պարտք հաւատոյն լրացեալ. համբուն ասել՝ գործ մարդոյ և ոչ գործ Աստուծոյ. խաղաղութիւն՝ որ յերկրէ աստի, և ոչ խաղաղութիւն որ 'ի յերկնից իջեալ. "Ոչ է իմաստութիւնս այս իջեալ 'ի վերուստ, այլ երկրաւոր և շնչաւոր,,։

Այս արդ պարզ ասել. աղէ յորժամ բարեկամք ձեր 'ի մէջ մտեալ այնպէս բազմադէմ հնարիմացութեամբք իւրեանց հաշտեցուցին զձեզ ընդ եղբօրն, արդեօք մարթացան նոքա նաև զսէրն շինեալ 'ի ձեզ միւսանգամ արծարծել 'ի ձեզ, և զկորուսեալն ձեր դանձ անդրէն տալ ժառանգել ձեզ։

Այո, յաջողեցան զառ 'ի մարդիկ զգայթակղութիւնն բառնալ 'ի միջոյ և զարտաքնայարդար զպարտս ընկերութեանն նորոգել 'ի ձեզ. այլ արդեօք փոխեցին զսիրտ ձեր, զոր 'ի ձեռին իւրում՝ունի միայն Աստուած։ Շինուցին արդեօք և զատելութիւնն, զոր ինքոցայ միայն է հնար շինուցանել։

Հաշտեցար ուրեմն դու ընդ եղբօրն, այլ տակաւին չսիրես զեղբայրն. և եթէ արդարև անկեղծութեամբ սիրեցեր դու զնա, զի՞նչ պէտք էին քեզ այնչափ միջնորդաց 'ի հաշտիլ ընդ նմա։ Սիրոյ շատ է ինքն միայն. ինքն ինքեան է միանգամայն և առաջնորդ և միջնորդ և թարգման։ Սիրոյ չեն պէտք այնչափ խորհրդոց և հնարիմացութեանց և դաշնադրութեանց. "Սէր չինողբ զիւրն. սէր ոչ գրգռի, ոչ խորհի զչար. սէր ամենայնի հաւատայ, ամենևին յուսայ, ամենայնի համբերէ,,։ Չեն պէտք սիրոյ այնչափ կանոնաց. ունի մի միայն զիւր կանոն. այս է մոռանալ զանիրաւութիւն, անյիշաչար լինել, սիրել զեղբայրն իբրև զանձն։

digitised by A.R.A.R.@

Այլ սակայն զիտեմ և ես և հաւանեալ եմ թէ էն էն արդարև և կանոնք խոհեմութեան յամենայնի, զոր պարտ է իմաստութեամբ պահել. զի մի յանկարծ՝ որ պէս պատահէ բազում անդամ՝ գնացք ինչ շուտափոյթք և խամք, և խորհուրդք ինչ թերակատարք և յանդգունք և արտաքոյ ժամանակին, ձախողակ գտցեն եղս. և թերևս առաւել ևս զայրացուսցեն զեղբայրն 'ի կամել քում հաշտել ընդ նմա և հաստատել զսէրն։ Սակայն և ասեմ, եթէ սիրոյ և շնորհաց պէտք են առաջին կանոն և ուղեցոյց լինել քեզ յամենայն 'ի գնացս յայսոսիկ. և ոչ մարդկայնոց ինչ և աշխարհայնոց և թելադրութեան մարմնոյ և արեան։ Արանգի և յորժամ ինքնին տէրն պատուիրեաց զհաշտելն, պարզապէս ասաց. "Երթ դու և հաշտեաց ընդ եղբօր քում.,։ Սէրն միայն, ասէ, լինիցի քեզ առաջին միջնորդ և կարապետ հաշտութեան քում. "Երթ դու և հաշտեաց.,։ Իսկ 'ի սիրել զեղբայրն չիցեն քեզ պէտք այլոց միջնորդաց. շատ իցէ քեզ սիրտ քո։ Այլ թէ ոչ, յայնպիսի սկզբանց հաշտութեան որ գլխովին մարդկայինքն իցեն, և յայնպիսի ընթացից հաշտութեանն որ ախտաւորքն իցեն, զինչպիսի և հետևանքն և պտուղք հաշտութեանն իցեն. բայց թէ վայրապար ինչ և խամրեալ. որպիսի մեք տեսանեմք զօրհանապազ 'ի հաշտութիւնս յաշխարհի։

Ունկն դիր աղաչեմ։ Այսես դու ինձ, եթէ հաշտեցայ ես աւադիկ ընդ եղբօր իմում. ներումն ետու նմա 'ի սրտէ։ Այլ սակայն հաստատեալ է քո 'ի մտի ոչ ևս այլ կամիլ տեսանել զնա, ոչ ևս այլ ինչ մի տուրևառ յապայս ունել ընդ նմա։ Այս այսպէս ապա անդորրացեալ քո 'ի խղճի, և կարծես եթէ ոչ ինչ այլ 'ի վերայ այնուհետև պատուիրէ քեզ աւետարանն 'ի բանիս յայսմիկ. և թէ հայրն խոստովանութեան քո չմարթի այլ ինչ առաւել պահանջել 'ի քէն։ Այլ ես ասեմ քեզ. անշուշտ չես դու տակաւին ներեալ եղբօր քում. ոչ սիրես զնա, որպէս պատուիրէ Քրիստոս. դեռ տաճես զատելութիւնն առ նա. տակաւին մեռեալ է քո, և 'ի մեղս ես տակաւին։ Այս թէ ոչ, աղէ դու ասա ինձ վայր մի։ Գուցէ երբէք ինչ քեզ երկիւղ և խէթ 'ի տեսանել քո զոք զոր սիրես. և եթէ երբէք այր ոք քո

digitised by A.R.A.R.@

թշնամի ՀՇմարտապէս փոխեալ և լեալ իցէ իբրև զմի 'ի սիրելի եղբարց քոց, տեսութիւն նորա զմի խէթ, զմի ատելութիւն, զմի տաղտկութիւն երբէք մարթասցի ծնանել 'ի քեզ։

Լսես դու ինձ, եթէ ներեցեր նմա և սիրես զնա. սակայն 'ի զգուշութիւն ընդդէմ նորոյ ինչ զրդռութեան ընդ նմա 'ի տեսութենէ նորա, լաւ ևս թուի քեզ միշտ 'ի բաց կալ 'ի նմանէ։ Այլ ապէ, մի ազգ սիրոյ իցէ այն երբէք, զի և տեսութիւն ևեթ սիրեցելոյն զրդռեսցէ զքեզ և յատելութիւն և 'ի ցասումն զրդռեսցէ միանգամ։ Սիրես դու զնա. այս է, ոչ ինչ կամիս ՀՇասել և չար առնել նմա. այլ այս չէ շատ։ Թէզ կրօնն և աւետարանն ինչ մի ևս այլ 'ի վերայ պատուիրէ՝ սիրել զնա։ Բանզի առ 'ի ոչ կամիլ միայն ՀՇասել թշնամւոյն շատ է արդեօք պատիւ անձին, կամ թէ անցաւութիւն ինչ, կամ չափաւորութիւն ինչ կրից, կամ ահ և երկիւղ, կամ պակասութիւն պարագայիցն։ Սակայն առ 'ի սիրել զթշնամին, պարտ է լինել քրիստոնեայ, պարտ է լինել աշակերտ աւետարանին։ Լաւ ահա այս է զի ոչ կամիս լինել ՀՇմարտապէս այնպիսի։

Լաւ արդ զի՞նչ ասես, արդեօք կամի՞ր դու զի և Լսուած սիրեսցէ զքեզ, այլ երբէք չկամեսցի տեսանել զքեզ. չկամեսցի առնել քեզ չար, սակայն միշտ և հանապազ մերժեալ և արտասահման պահեսցէ զքեզ յաստուածային երեսաց իւրոց։ Բանզի և զիտես իսկ դու քաջ, եթէ հաւասարակշիռ դատեսցէ զքեզ Լսուած, որպէս և դու վերեցար ընդ եղբօրն. "Որով դատաստանաւ, ասէ, դատիք, դատելոց էք. և որով չափով չափիք, չափեսցի ձեզ"։

Լաւ արդ քո՞ր նշան իցէ, որով և ծանիցուք մեք եթէ սիրես դու զեղբայրն։ Լսես դու սիրել զնա, այլ ոչ տեսանել։ Ոչ՞ ինչ այլ առաւելագոյն նշան ոխութեան քան զայս. յորժամ նորա և ոչ տեսութեանն անգամ հանդուրժեսցես դու։ Այս վերջին ծայր է դառնութեան և ատելութեան։ Ոչեն արդեօք յաշխարհի ատելութիւնք առաւել չափաւորք, որք և դիմակս զիւրեամբք առնուցուն զքաղաքականութեան, զմարդավարութեան, զպատշաճողութեան, և այնպէս քօղարկեն զինքեանս։ Այլ քոյդ յայն չափ հասեալ է, զի

և քողարկել չիք հնար. ոչ ակնածութեան երես առնել, ոչ պատշաճողութեան ինչ միտ դնել. և 'ի վերայ այսր՝ կամիցիս դու հաւատացուցանել մեզ եթէ քո չիք ինչ խէթ և ատելութիւն առ եղբայրն։ Այդ իցէ քո նշան անկասկածելի եղբայրական անկեղծաւոր սիրոյն, զոր Քրիստոսն աւանդեաց։ Իսկ յորժամ զՔրիստոս չիք շեմք, զքրիստոնեայ անուանն պանծացուցանեմք։ Այդ քրիստոնեայք վասն այնորիկ ինչ անուանեցան և եղեն, զի ոչ տեսցեն զմիմեանս և ոչ երեսասցին միմեանց. և աւ մեծայն ազգ տրոյ և առի առ հասարակ խափանեալ կայցէ 'ի նոսա։ Քրիստոնեայք. միոյ մարմնոյն անդամք. միոյ հօր որդիք. նորուն վարդապետի աշակերտք. նորուն արքայութեան ժառանգք. նորուն շինուածոյն քարինք։ Քրիստոնեայք. նոյն և մի հոգւոյն հաղորդք. նոյն և մի փրկութեան բաժանորդք. նոյն և մի արդարութեան մասնակիցք։ Քրիստոնեայք. 'ի նմին արգանդէ աւազանին երևեալք. 'ի նմին ջրոյ վերածնեալք. 'ի մի եկեղեցի խմբեալք. նովին գնով փրկանաւորեալք։ Այս ապա այսպիսիք գոլով, տաղտկացին 'ի տեսանել զմիմեանս, թաքթաքուր փախիցեն յիրերաց, չկամիցին և չկարասցեն բեռն բառնալ զմիմեանց։ Ո՞չ ահա և ողջոյն պաշտամունք կրօնին կապին զմեզ ընդ միմեանս. հաղորդութիւն սրբոյ զոր դաւանիմք, նոյն խորհուրդք, նոյն աղօթք, նոյն հացն սրբութեան, նոյն պատարագ. որոց առ հասարակ միաբան հաղորդիմք, իբրև մի գերդաստան, իբրև մի ընկերութիւն, իբրև մի մարմին, իբրև մի հոգի, իբրև մի սիրտ։ Այս դու կարծիցես յետ այսր ամենայնի սիրել զեղբայրն քո և զաստուածային զյօդակապն կրօնին պահել ընդ նմա, յորժամ նաև զմարդկային ընկերութեանն խզեալ է քո զկապ. և ոչ տեսութեան անդամ եղբօրն կարես հանդուրժել։

Բաւական է, և զիարդ այնուհետև զնոյն յոյս ակնկալութեան կարասցես ունել ընդ նմա, երանակից ընդ նմա լինել յաւիտեան յաղքայութեանն Աստուծոյ. իբրու այն որ քոյ երանութիւնդ լինիցի նորայն, և նորայն քո գլխովին, առ հասարակ միացեալք յԱստուած։ Զի դու այժմէն ուրեմն հրաժարեաց յաւետեացն խոստմանց, և յանխաբ յուսոյ հաւատոյն. մեկնեաց իբրև նզովեալ, իբրև զՀեթանոս և զմաքսաւոր 'ի հաղորդու-

digitised by A.R.A.R.@

թենէ հաւատացելոց. տեղի տուր 'ի սեղանոյն սրբութեան, որոշեա զքեզ յահագին խորհրդոյն, 'ի հասարակաց աղօթիցն, 'ի միաբանութենէ սրբոցն. և մի՛ ևս ուխտաւոր, և մի՛ ևս պտղաբեր, մի՛ ևս ընծայաբեր եկեսցես դու 'ի սուրբ եկեղեցի Աստուծոյ։ Վասնզի 'ի չհաշտելդ Ճշմարտապէս ընդ եղբօրն, չես հաշտեալ ընդ Աստուծոյ, չես հաշտեալ ընդ եկեղեցւոյ։

Այլ թերևս զարհուրեալ քո յահագին Ճշմարտութեանցս, հաստատեսցես այսուհետև 'ի միտս խաղաղութեամբ տեսանել զեղբայրն. և 'ի պատշաճողութեանց մասին և 'ի մարդկային բարեվայելչութենէն ոչ թերանալ երբեք։ Իսկ արդ կարծիցե՞ս դու այդուիկ, եթէ հաշտեցար Ճշմարտապէս ընդ եղբօրն, և ներեցեր նմա 'ի սրտէ, և սիրես զնա իբրև զանձն քո։

Այսպէս ուշիմ լեր. սէրն զոր աւետարանն պատուիրէ հաստատեալ կայ 'ի սրտի. չէ նա պատշաճողութիւն լոկ, չէ նա բարեվայելչութիւն արտաքնայարդար, և չէ արարողութիւն աշխարհի վայրապար։ Օ դաժանութիւն է նա սրտի անպատիր. սիրելութիւն է անկեղծաւոր կազմ և պատրաստ 'ի ցուցանել զնոյն և յարդեանց։ Իսկ բարեմարդկութիւնդ այդ և քաղաքավարութիւն կամ՝ որ զինչ և անուանեսցես, հրէական է և փարիսայական. չէ սէր քրիստոնէի, չէ հանդէս աշակերտի աւետարանին։ Այլ եթէ զայն միայն կալեալ է քո 'ի կանոն սիրոյն, չես դու առաջնորդեալ 'ի պատուիրանէն Քրիստոսի, "Սիրեսցես, ասէ, զընկերն. ոչ լոկ, այլ իբրև զանձն քո"։ Այլ զիտես, զի սէր անխաբ է. չէ վայրապար ինչ, չէ 'ի կեղծ։

"Այլ սիրեսցես, ասէ, զթշնամին քո"։ Օ խիզդ արդեօք։ Արդեամբք...։ "Խարի, ասէ, արա ատելոյն քում. օրհնեա զանիծիչն քո"։ Զէ շատ։ Այլ "Այլ աղօթս արա 'ի վերայ նորա"։ Տեսանե՞ս 'ի քանի՞ ինչ իրաց հաստատ զՃշմարտութիւն և զանկեղծութիւն սիրոյն։ Այլ ապա այս ամենայն էր աղագաւ։ Զհա քեզ միակ վախճան և միակ ուշ նպատակիդ 'ի սիրելն, ոչ յերկրաւորաց աստի ակնածութեանց և 'ի ընչաւոր ինչ խնամոյ, այլ առեալ տանի զքանն մինչև յաթոռն Աստուծոյ. "Օ՛ի եղիջիք, ասէ, որդիք հօր

digitised by A.R.A.R.@

ձերոյ որ յերկինս է ... : Այս է սէր աւետարանին, և այս է պատուէր Քրիստոսին :

Բանզի, քաջ միտ դիք աղաչեմ, ոչ արտաքին ինչ կապանօք ըստ աշխարհի միանան քրիստոնեայք ընդ միմեանս, այլ որ աստուածային յօդակապք են և ներքինք. այս է՝ հաւատ, յոյս, և սէր, և կրօն : Ընկերութիւն հաստեմք մեք յաշխարհի ողջ ներքին, ողջ սուրբ. այր սէրն միայն է նորա աներևոյթ կապանք : Եթէ զաշխարհին միայն կալցիս դու, և զայս չունիցիս, քաղաքացի ես բարի, այլ ոչ քաղաքացի երկնից. մարդ ես աշխարհիս այսորիկ, այլ ոչ հանդերձելոյ աշխարհին : Աշխարհ գոհ է զքէն, և արձակէ ազատ և չպահանջէ 'ի քէն այլ. սակայն չիք քո արարեալ ինչ մի արժանի յաչս Աստուծոյ զի բաժանորդ լինիցիս Աստուծոյ. քանզի ոչ կաս 'ի սէրն, և առանց սիրոյ չիք փրկութիւն :

Հաւասիկ ձեզ, սիրելիք, հաշտութիւնք կեղծք, հաշտութիւնք մարդկայինք. ոչ անկեղծք, և ոչ աստուածայինք. և զինչ օգուտ 'ի հաշտութեանց աստի, զոր հանապազօր տեսանեմք 'ի քրիստոնեայս, կենակցին միաբան, այլ չեն հոգիքն միացեալք ընդ միմեանս. խոստանան բարեկամութիւն փոխադարձ, այլ արդիւնք չեն 'ի միջի. մերձեալ են մարմնովք, սիրտք նոցա հեռացեալ մեկուսի են 'ի միմեանց : Երաւապէս ուրեմն ասացի, եթէ շինեալ չէ ատելութիւնն, անկեղծաւորք չեն հաշտութիւնքն. ներեն փնասուն, այլ չսիրեն զփնասողն. չվարին ընդ եղբօրն իբրև ընդ թշնամւոյն, սակայն և չհային երբէք 'ի նա իբրև յեղբայր : Այս 'ի վերայ այսր ամենայնի, աւա՜ղ, այնպէս 'ի նմին վիճակի յաճախեմք 'ի խորհուրդս եկեղեցւոյ, ցանկորդիմք 'ի հաղորդութեան աստուածայնոց, անդորրամիտք մերձենամք առ սեղանն սրբութեան, յատեան խոստովանութեան, խիղճ չհամարիմք 'ի խոստովանել զներդոյացեալն 'ի մեզ զծածուկ ատելութիւնն. չապաշաւեմք ընդ գայթակղութիւնն՝ տուեալ թերևս աշխարհի : Այս զիարդ ապա ոչ միացեալքս սիրոքն Քրիստոսի ընդ միմեանս կարասցուք մերձենալ առ ինքնաբուն սէրն Աստուած :

Ոչ աղբիւր սիրոյ հոգի սուրբ Աստուած, մինչև ոչ հեղցես 'ի սիրտ մեր զանմահարար վտակս աստուա-

digitised by A.R.A.R.@

ծային սիրոյդ, (քանզի չեն մեզ բաւական բանք բերա-
նոյ 'ի շարժել զսիրտ), երբեք արժանի չանրթասցուք
լինել տաճար և բնակարան աստուածութեան քո 'ի սէր
եղբօր, 'ի սէր թշնամւոյ։ Պ՝աղթեմք սրտեռանդն,
զՀուր սիրոյ քոյ բորբոքեա 'ի մեզ, տէր. որով և սեշ-
տիւ սիրեալ զեղբարս, և 'ի սէր քո միայն սիրեալ ՀՐՇ-
մարտապէս զթշնամիս, արժանասցուք զմայրիլ յանըս-
պառ աղբիւր սիրոյ քոյ 'ի Հանդերձեալն։

digitised by A.R.A.R.@

ԿԱՐՈՂ Խ·

ՓՈՐՁՈՒԹԻՒՆՔ

“Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ՝ի հոգւոյն փորձիլ ՝ի սատանայէ, և պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, ապա քաղցեաւ”։ 4 – 1՝2

Օ՛չիսոր ոչ զարմանացի ոք թերևս, եթէ որ “Ա՛ռ ՝ի լուծանել զգործս սատանայի, ըստ առաքելոյն, էջ յերկնից”, նոյն ինքն հպատակեաց զանձն փորձիլ ՝ի սատանայէ։ Ա՛յլ քանզի ամենայն տնօրինականքն վասն մեր կարգեցան և կատարեցան, նոյն և այս շնորհ առ ՝ի նմանէ պարգևեցաւ փորձանաւորացս ՝ի մեծ զօրավիգն։ Զանգի զկերս մարդոյ ՝ի փորձութիւնս քառակի նկատեցին հարք. մի զի ապիկարք յոյժ եմք ՝ի փորձութիւնս, հաճեցաւ զօրացուցանել զմեզ։ Զ՛ս միւս ևս զի վատասիրաք յոյժ եմք ՝ի փորձութիւնս, հաճեցաւ քաջալերութիւն զգեցուցանել մեզ։ Զ՛երրորդ անգամ զի և յանդգնութք եմք և անխորհուրդք ՝ի փորձութիւնս, հրահանգեաց զմեզ ՝ի զգուշութիւն։ Զ՛ չորրորդ անգամ զի յարուեստ կռուելոյ ընդ անմարմին թշնամւոյն անտեղեակք յոյժ եմք, ինքնին ուսոյց զմեզ։

Զ՛անգի նախ իւրովք փորձութեամբքն՝ մերոյն յաղթեաց և հզօրացոյց զմեզ։ Զ՛ս երկրորդ ինքն զփորձ առեալ ապէնիազն, օրինական քաջալերեաց։ Զ՛ երրորդ սուրբ սրբոց ինքն գոլով և ՝ի փորձութենէն ոչ ազատանալով, աչալուրջս յարդարեաց զմեզ. մի երբեք

digitised by A.R.A.R.@

յապահովի հանդերձ զանձն։ Եւ չորրորդ անգամ՝ նաև զարուեստս հոգևոր զինուորութեանն ուսոյց և զինս և պատկանաւորս 'ի յաղթել առաջի ընծայեաց։ Որպէս այր թագաւոր, որ ոչ միայն զզօրականն 'ի ձակատ հանցէ, այլ և ինքնին միջանուխ 'ի վտանգն շահատակեսցէ, և օրինակաւն ուսուցանէ նշան յաղթութեան կանգնել։

Ապէս և Քրիստոս միջանուխ 'ի մարտն. տակայն և օրինակաւն ուսոյց մի դիմադրաւ ինքնին լինել 'ի մարտ փորձութեան։ Քանզի ոչ ինքնին կամաւ, այլ "՝ 'ի հաւոյն վարեցաւ Յիսուս, ասէ, յանապատ փորձիլ 'ի սատանայէ ,,։ Պարձեալ և ոչ վայրապար, այլ յառաջագոյն պատրաստութեամբ զինուցն եմուտ 'ի հանդէսն, այս է ձնշմամբ և մեռելութեամբ մարմնոյն. քանզի ասէ, նախ "՝ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր ,,, ապա թոյլ եւ փորձողին մատչիլ առ ինքն։

Ո՞ւր 'ի մինչ պատրաստութիւն զինուց այսպիսի կալաւ յառաջ քան զհանդէս փորձութեանն։ Քանզի և օրինակ զայս տիրելիք, և ոչ այլազգ, պատրաստին մեզ շնորհքն Աստուծոյ 'ի փորձութիւնս մեր նիզակակիցք 'ի յաղթել. և ոչ 'ի յաղթել միայն, այլ և 'ի հաւատալ և աներկբայ եթէ չիք փորձութիւն երբեք անյաղթելի 'ի շնորհաց՝ յոյս հաւատով ապաւինեսցի մարդ։ Օ իմաստ ձշգրտիւ յայտնաբանեաց մեզ զայս երանելին Յովհաննէս, "՝ Այս է, ասէ, յաղթութիւն, որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր ,,։ Այս և զիրաւաբանութիւնն և զքաջալերն մերձ եդ. "՝ Ուր, ասէ, որդեակք՝ յաղթեցէք նմա. զի մեծ է որ 'ի ձեզն է, քան զայն որ յաշխարհին է ,,։

Աստի և զբան զայն զոր ասէպ լսեմք պատճառել է, թէ "՝ Ոկարեմ ես հանդուրժել փորձութեանս այսմիկ, ընդդէմ կալ կրիցս այսոցիկ, կռուել և յաղթել ցանկութեանս այսմիկ ,,. զայս բան ասեմ, քան ձայն տկարութեան՝ առաւել ևս ձայն անհաւատութեան կոչեցին հարքն սուրբք։ Քանզի և 'ի հաւատոյ է, եթէ յօդնութենէ շնորհացն Աստուծոյ մարթիցք մեք զամենայն։ "՝ Յամենայնի կարող եմ, ասէ, այնու որ զօրացուցն զիս ,,։ Եւ արդ մեք ունիցիմք հանապազ զօգնութիւն զայս Աստուծոյ 'ի փորձութիւնս։ Աստանօր է

digitised by A.R.A.R.@

կնձիոն զոր պարզել արժան է. և որ հիմն է սերկեան քարոզին մերոյ։

Շնմարտութեամբ գիտեմք 'ի հաւատոց, զի երբեք թոյլ չտայ Աստուած փորձիլ մեզ առաւել քան զբաւականն մեր. "Հաւատարիմ է, ասէ, Աստուած, որ ոչ արկանէ զմեզ 'ի փորձութիւն, առաւել քան զկարս մեր,,. որպէս զի ոչ միայն չընկնէսցուք 'ի փորձութենէն, այլ զի և պտղաբերեսցուք համբերութեամբ 'ի շնորհայն նորա. վասն այնորիկ զնովիմք ածէ, "Այլ արասցէ ընդ փորձութեանն և զելս (այսինքն զշնորհս) զի համբերել կարասցուք,,։

Վաղայայտ է այս ամենայն։ Այլ սակայն և մոլորութիւն մի տեսանելիք մեք ձարակեալ առ բազումս 'ի մարդկանէ. զի այնպէս իմն համարին եթէ այս շնորհք 'ի փորձութիւնս բաշխին մեզ ըստ չափուն զոր մեքս կամիմք, և յայնժամ՝ յորժամ և կամիմք։ Մոլորութիւն վտանգաբեր յոյժ, և ծնող բազում չարեաց։ Արդ 'ի վանել և 'ի հերքել զայս մոլորութիւն, 'ի կրկին ազգ բաժանեմք զփորձութիւնսն։ Առաջին փորձութիւնք կամաւորք. երկրորդ փորձութիւնք ակամայացեալք։

Առաջինն է յորժամ մեք ինքնին դիմագրաւ զանձինս արկանեմք 'ի նոյն ընդդէմ կամայն Աստուծոյ։ Երկրորդն է յորժամ 'ի հարկէ իմեմնէ պաշտաման մերոյ և վիճակին պաշարիմք 'ի նոյն։ Յառաջնումն մի երբեք ակնկալցուք օգնականութեանն Աստուծոյ 'ի փորձութեան՝ կալով մեր յառաքի մեղացն։ Այս է առաջին մասն։ Յերկրորդումն ընդ վայր ակնկալցուք մեք օգնականութեանն 'ի մարտին, յորժամ չիք մեր ձնմարիտ կամք և առաջադրութիւն բուռն առնել անձին, և զրահել զանձն ըստ օրինակին Յիսուսի նախապատրաստ զինուք մեռելութեան մարմնոյ։ Այս է երկրորդն։ Ունկն դնել աղաչեմ, լուսաւորութիւն մաղթելով առ 'ի Աստուծոյ։

digitised by A.R.A.R.@

ՄԱՄՆ Ա.

Պարտք անհրաժեշտ են հաստատեալ յառաջին օրինաց սիրոյն, պահպանել մարդոյ զանձն իւր, և թոյլ երբեք չէ 'ի վտանգ արկանել զփրկութիւն մեր։ Այս արդ չիք տարակոյս, եթէ վտանգեմք մեք զմեզ ինքեանս, և մեղանչեմք այնչափ անգամ, որչափ յանդգնեալք ինքնին արկանեմք զմեզ 'ի փորձութիւն։ Բանզի չիք ոք ամենևին ոյր ձարակ և լուցկիք չգուցեն փորձութեանց եթէ 'ի նեղքս իւր և եթէ արտաքոյ իւր։ Բանզի են 'ի նեղքս կիրք և ունակութիւնք անբարիք՝ զոր սանձել պարտ է. և են արտաքոյ իւր առարկայք և առիթք յորոց փախչել պարտ է, զի են աղբիւրք և պատճառք մեղաց։

Այս զոր աստուածայինն Պաւղոս նշանակեաց յաղագս զանազանութեան շնորհացն, որովք զարմանազան տնօրինէ Աստուած զդարձ և զփրկութիւն իւրաքանչիւր. սա պէս և պէսպիսութիւն է փորձութեանցն զոր անմարմին թշնամին զանազանաբար զարթուցանէ և զրդռէ 'ի մեզ ապականել և կորուսանել զՀոգիս։

Զիարդ գեղեցիկս զայս զանազանութիւն արտայայտեաց աստուածիմաստ Իսկեբերան, յասել անդ իւրում. "Այն ինչ որ փորձութիւն է վասն միոյն, չէ՞ փորձութիւն վասն միւսոյն. և որ ինչ վասն սորա պատճառք է գլորման, վասն նորա չիք և ոչ մի ինչ վտանգ։ Բաւական է, և որ 'ի մեծամեծ գայթագղութեանցն աշխարհի ոչ գլեցաւ, տեսանես զի 'ի դուշնաբէից ինչ կործանեցաւ.,,։

Արդ գիտել զվտանգն և ոչ փախչել 'ի նմանէ, այն է զոր ասացի դիմադրաւել 'ի փորձութիւն ընդդէմ կամացն Աստուծոյ. և ասեմ և հաստատեմ եթէ մի երբէք ակնկալցի յայնժամ քրիստոնեայն օգնականութեանն Աստուծոյ 'ի կռուել ընդ փորձութեանն և յաղթել։ Այլ մի ամենևին ժամանակի խնդրել զայն Աստուծոյ. քանզի անշուշտ ըստ հասարակ կարգի նախախնամութեան զլասցի նմա Աստուած։

digitised by A.R.A.R.@

Այս արդ աղէ ասա, յինչ իրաւունս յեցեալ խնդրես ցէ. թերևս ըստ արդարութեանն, այլ յայնժամ շնորհքն ոչ ևս շնորհք լինիցին, այլ պարտք 'ի հատուցանել։ Կամ երևս ըստ հաւատարմութեանն. այլ չիք ուրեք խոստացեալ Աստուծոյ զօգնութիւն իւր յայն առիթս։ Իսկ թերևս ըստ ողորմութեանն. այլ մարդ ինքնին յայնժամ խոչարկանէ այնմ յանդգնութեամբն, անարժան եղեալ ողորմութեանն Աստուծոյ. և այնպէս ապա անպատրաստ իրաւապէս կործանի 'ի փորձութեանցն զոր ինքնին հետամուտ խնդրեաց։ Արանզի և անսուտ է պատգամն աստուածային յահագին սպառնալիսն, եթէ "Որ սիրէ զվտանգ, 'ի նմին և կորիցէ"։

Այս անշուշտ յինչ ապա իրաւունս յեցեալ ո՞վ մարդ կամ որովք դիմաք ժողովեցիս սպասել օգնականութեանն Աստուծոյ և պահպանութեան 'ի չարէն, յորժամ դու կամաւոր դիմակրաւեսս զանձն 'ի նոցն, յորժամ դու մտադիր ունիս և պահես առ քեզ զպատճառն և զսկիզբն փորձութեան քո։ Զի թէ արդեօք վասն փառաց ինչ Աստուծոյ էր բանն, եթէ արդեօք պարտք ինչ էին հարկին, կամ թէ պատճառք ինչ սիրոյ եղբայրութեանն, կամ թէ դէպք ինչ յանկարծահաս, կամ թէ դարանակալութիւն ինչ յայն վտանգաւոր փորձութիւն պաշարեաց զքեզ, երբէք նախախնամութեանն Աստուծոյ շնորհք ոչ պակասեսցին 'ի քէն. նա հրաշագործեսցէ ևս յայնժամ 'ի պահել զքեզ. որպէս և զիտես իսկ 'ի ստուգագիր պատմութեանց, եթէ քանիք 'ի պարկեշտ կանանց և յողջախոհ երիտասարդաց բռնադատեալք 'ի փորձութիւն պահեցան ամբողջ 'ի շնորհացն Աստուծոյ։ Կամ թէ նոքին իսկ անապատասուն ներանձնացեալքն ազդեալք 'ի վերուստ և եղեալք յանապատիցն 'ի քաղաքս քաղաքս խառնակեցիկ որերոյն անարատ քաղաքավարութեամբ քարոզէին զապաշխարութիւն։ Այս այսօր իսկ հանապազ պաշտօնեալք եկեղեցւոյ ըստ հարկի պաշտամանն միջամուխք 'ի պէսպէս փորձութիւնս վասն բանին Աստուծոյ, ողջ անարատ պահին յօգնականութենէն Աստուծոյ։ Արանզի շնորհքն Աստուծոյ է ընդ այնպիսիսն, և մարտ եղեալ ընդ նոցա կռուի ընդ փորձութիւնսն, և նշան յաղթութեան կանգնէ։

Իսկ դու բնաւ իսկ ընդ հակառակն ինքնին անբռնա-

digitised by A.R.A.R.@

դատ արկանեմ զքեզ յանդգնութեամբ յայն ամենայն որ ինչ յաշխարհի վտանգաբեր է և մոլորեցուցիչ. ոչ յայլ ինչ պատճառ բանաւոր, քան թէ 'ի լրումն տալ վայրապար հետաքրքրութեանդ, լրումն տալ դժպատեհ ըղձիցն, լրումն տալ յանցաւոր կրկնդ, 'ի մէջ սանձարձակ ընկերութեանց, 'ի մէջ կասկածաւոր բարեկամութեանց լի գայթագղութեամբք, 'ի մէջ զուվողայն չարութեան, 'ի մէջ հոգեկործան զրուցաց և բարբանջանաց շրթանց լի ամենայն հրապուրանօք, յանդգնիմ ասել եթէ և հրեշտակային մաքրութեան աղարտիչ։ Եւ հանդերձ այսու ամենայնիւ անձնատուր 'ի զբօսանս անչափաւորս, դիմնդրաւեալ 'ի տեսութիւնս լկտիս, 'ի պրէջրանս, 'ի յայրատ հայեցուածս, հետաքրքիր ընդվայրասէր, և հեշտալուր 'ի նուագս պագշոտս, աներկիւղ յանդուգն 'ի վերծանութիւն հրապուրիչ վիպից առասպելաց, և ամբարշտութեան և անկրօնութեան մատենից։

Եւ ապա յայս ամենայն որ փորձութեամբք լի է և վտանգաւոր, ժամեսցիս դու երբէք, ով քրիստոնեայ, ակն ունել օգնականութեան շնորհայն Աստուծոյ անկործան միալքեզ 'ի վտանգսն և 'ի փորձութիւնսն. իբրու եթէ 'ի միջոյ հրոյ աղաղակեալ քեզ եթէ պահեա զիս, Աստուած, 'ի տոչորմանէ հրոյս այսորիկ՝ յոր ես ինքն զիս կամաւորապէս արկի։ Անիծեալ իցէ անմտութիւնն...։ Ապա եթէ յայսր ամենայնի վերայ տակաւին մտախոհ կարծեաք պնդեսցիս հասանել օգնականութեանն 'ի վերուստ, գոնեա դու վայր մի զմտաւ ածեալ և խելամուտ լիցիս ճշմարտութեանս. եթէ ընդ վայր ուրեմն 'ի սկզբանէ աշխարհի ցայսօր երկիւղածքն և առաքինիք խոյս տուեալ փախեան և փախչին 'ի գայթագղութեանց աշխարհի և 'ի վտանգաց և յառաթիլ մեղաց. ընդ վայր ուրեմն ճշնին նոքա անձնապահք լինել, և ընդ վայր ուրեմն արկանեն զանձինս ընդ լծոյ երկիւղին Աստուծոյ. և անմտացան անշուշտ և անմտանան այսպիսիք առ հասարակ 'ի խորհուրդս իւրեանց, թէպէտ և ոչ երկիւղածք միայն իցեն նոքա այլ և իմաստունք և հանճարեղք 'ի գիր և 'ի բան։ Զանգի անմտանան անշուշտ առ հասարակ, եթէ արդեաք նոյն իցէ օգնականութիւն շնորհայն Աստուծոյ վասն կամաւոր և վասն ակամայագեալ փորձութեանցն։

digitised by A.R.A.R.@

Դարձեալ և առ ինչ սպա այնչափ զգուշագոյնս առաքեալքն սուրբք և հարք սուրբք գիրս տային առ հեռաւոր աշակերտեալսն ամենայն երկիւղածութեան փոյթ ունել 'ի գնացս իւրեանց. խոյս տալ 'ի գայթակղութեանց, մեկնել յայն ինչ վայրաց, յայն ինչ կենսակցութեանց։ Զ. ինչ և քարոզք բանին, և որ առաւել 'ի նոսա աստուածայինն Սկեբերան այնչափ խնամով արգելոյր հաւատացելոց զտեսարանսն գայթագղութեան, և զայլն ևս, 'ի ներքս բերեալ նոցա զաւազանին երդումն, "Հրաժարել 'ի սատանայէ և յամենայն գայթագղութեանց աշխարհի"։

Զ. այս դարձեալ, եթէ օգնականութիւն շնորհացն Աստուծոյ հաւասարապէս բաշխեր և 'ի մէջ կամաւոր փորձութեանցն և 'ի մէջ ակամայիցն, որ պտուղ որ արգասիք էր յայնժամ շնորհացն Աստուծոյ, յորժամ զմեզ վասն այնորիկ արթունս և երկիւղածս և խոնարհս գործելոյ, անզգոյշս և քնեածս յարգարէր զմեզ և յանդգնունս և ամբարտաւանս։ Զանազի որպէս գեղեցիկս յոյժ ասաց մեծն Կիպրիանոս. "Զ. ինպէս իմն մեզ հոգևորականն ի ջանէ յերկնից զօրութիւն, զի զգոյշս և արթունս գործեսցէ զմեզ և երկիւղածս, ոչ զի յանդգնունս զմեզ սովորեցուսցէ և յանձնապաստանս"։

Նա՛ւբէ, քանիցն իցէ յանդգնութիւնն, վայր մի զմբտաւ ած, ո՞վ մարդ, և գտցես զայն 'ի ծայրն հասեալ յանդգնութեան. ընդէ՞ր. քանզի կամաւորապէս դիմադրաւեալն 'ի վտանգ, ոչ յայլ ոք յանդգնի՝ բայց յԱստուած առ 'ի փորձել զԱստուած. իսկ զառանցանք անհնարինք արարածոյն ընդդէմ արարչին է փորձել զարարիչն. քանզի որպէս հարքն ասացին որ փորձէ զԱստուած, և այնպիսին կշռակի ընդդէմ կքրի առաջին պարտուց հաւատոցն և կրօնից. "Մի, ասէ, փորձեսցես զտէր Աստուած քո"։ իսկ առաջին պատուհաս այնպիսւոյն է քանիլ 'ի ձեռացն Աստուծոյ։

Զ. արդ միտ դիր, քանիպատիկ իցէ փորձել զԱստուած, զոր 'ի գրոց սրբոց ժողովեն աստուածաբանք յերիս տեսակս։ Զառաջին յորժամ հրաշս խնդրեմք յԱստուծոյ առանց հարկի։ Զ այս գործեցին Փարիսեցիք առ տէրն, "Զ. յլք, ասէ, փորձէին զնա. և նշան յերկնից խնդրէին 'ի նմանէ"։ հրաշագործութիւն մի օ-

digitised by A.R.A.R.@

դերևոյթ ընդ երկինս փայլատակեալ խնդրէին 'ի Քրիս-
տոսէ. այլ էր ազազաւ. միայն 'ի փորձել զնա։ Որ և
մեծասաստ ձայնիւ զմեծութիւն մեղացն յայտնեաց,
"Զդ չար և հնացող նշան խնդրէ, մի տացի նմա,,։ Նա-
ղոք առ 'ի յերկնից նշանաւ փորձէին, առ 'ի խորոց եր-
կրի նշանաւ յամօթ առնէր զնոսա։

Երկրորդ անգամ յորժամ կամիմք սահմանափակ առ-
նել զամենակարողութիւնն Աստուծոյ։ Նա յայս իմաստ
սաստի կշտամբէր Յուդիթ զբնակիչսն Բեթիղուայ,
յորժամ 'ի տագնապ պաշարմանն Հոլոփեռնեայ՝ յու-
սահատք յերկնաւոր օգնութենէն, աւուրս ինչ միայն
սահմանեցին օգնութեանն զի յետ այնորիկ անձնա-
տուրք մատն լինիցին քաղաքին. "Ո՞վ էք դուք, ասէր,
որ փորձէք զԱստուած. և կարդեցէք սահման ողորմու-
թեանն Աստուծոյ,,։ Երրորդ անգամ, յորժամ երկմ-
տիմք առ Աստուած, և ոչ ուղղութեամբ և անկեղծու-
թեամբ գնամք ընդ նմա։ Օ այսօրինակ վարեցան
Հրեայք առ Քրիստոս. յորժամ ստիպաւ հարցանէին
զնա, ասել եթէ արժան իցէ նոցա հարկել կայսեր.
զորս և նշանակեալ Տէրն, ասէր. "Ո՞ի փորձէք զիս
կեղծաւորք,,. և պատկերաւ դահեկանի հարկին պա-
պանձեցուցանէր զփորձիչսն։

Նա արդ քրիստոնեայ, որ յանձնապաստան յանդգնի
տալ զանձն 'ի փորձութիւն, անմտութեամբ վստահ ե-
ղեալ 'ի ընորհսն Աստուծոյ, երից տեսակաց մեղացն
միանգամայն պարտաւոր կացուցանել զանձն։ Քանզի
առաջինն հրաշս խնդրէ առանց հարկի։ Ինքն բնաւին
անգործ 'ի պաշտպանել անձին, կամի զի Աստուած միայն
պահեսցէ զնա. ինքն զընորհս փախստեան 'ի վտանգէն
զոր ունի, ոչ 'ի բան տանի. և վստահք ընդունել Աս-
տուծոյ զընորհս յաղթութեան մարտին զոր ոչն ունի։

Յորժամ՝ 'ի հրացան բարկութեան պատուհասին Աղ-
դոմայ հաձեցաւ Աստուած փրկել զԱղոմ և զտուն նո-
րա. և յորժամ հրամայեաց նմա եղանել 'ի նզովեալ քա-
ղաքէն զի ապրեսցի, եթէ արդեօք հրամանին ստունդա-
նեալ Ղոմայ, ինդրեր յԱստուծոյ հրաշագործել, և
կալ անդէն և անկեղ 'ի հրոյն մնալ, զինչ ասէք. առ-
նոյր արդեօք զինդիրն ...։ Նա սակայն զնոյն մեք գոր-
ծեմք զօրհանապազ։ Կամիմք յայն ինչ վայրս ուր առ հա-

digitised by A.R.A.R.@

սարակ բոցակիզեն դայթագղութիւնք, կալ ինալ. և 'ի մանաւոր շնորհացն Աստուծոյ ամբողջ 'ի բոցոյն եւանել։ Կամիմք հետևել ընդ ամենայն, իմանալ զամենայն, տեսանել զամենայն, լսել զամենայն, լինել յամենայնի. և կամիմք զի Աստուած միայն 'ի վերուստ հովանի կացցէ մեզ, և անխոց յամենայն հարուածոցն պահեսցէ զմեզ...։ Ո՞ւցէ՞ ինչ յանդգնութիւն մեծ և քան զայս։

Այլ զինչ յայնժամ Աստուած. յայտ է եթէ որպէս առ Ղովտ, զնոյն հրամայէ մեզ. եւ 'ի քաղաքէդ զի ապրեսցիս. մի դարձցիս յետս, մի կացցես յամենայն սահմանս նորա. եւ 'ի Սոդոմայ, մեկնեաց 'ի չար ընկերութենէդ յայդմանէ, մի կար, հրաժեշտ տուր 'ի վտանգաւոր բարեկամութենէդ այսի. թող անդր 'ի բաց զպայթակղեցուցիչդ, հատ կտրեա 'ի քէն, թէպէտ աջոյ ակն իցէ քո, թէպէտ ձեռն աջոյ, կարձեա զանչափութիւն զբօսանացդ, կարձեա զանչափութիւն խաղացդ. խաղ որ ընդ գոյից տանդ և ընդ կենաց մարմնոյդ նաև զՏողիդ կորուսանէ։ Այլ 'ի Սոդոմայ, մի կացցես 'ի սահմանս նորա։

Ոչ և օգնական փորձանաւորացս մերն զօրագլուխ 'ի փորձութեան իւրում էտ զօրինակն։ "Արկ, ասէր փորձիչն, արկ զքեզ աստի վայր.,։ Մարթէր ինքնին արկանել զանձն և ամբողջ պահել. այլ կարկեաց զքերանն. "Գրեալ է, ասէ, մի փորձեսցես զտէր Աստուած քո.,։ Մարթէր հրաշագործել. այլ որպէս իմաստնաբանեաց Աւգոստինոս, "Անչնամին փրկութեան մերոյ չպարտի յաղթիլ յամենակարողութենէն Աստուծոյ, քան թէ յարթնութենէ և յարդարութենէ մարդոյն.,։ Մատչի և առ քեզ փորձիչն, և հրապուրէ դաւաճանն, եթէ արկ զքեզ 'ի վայր. մի զանգիտեր, վստահ լեր, հայեաց համարձակ ընդ ամենայն. զի այնչափ սանձ զպայաբանացն, խօսեաց համարձակ, լուր զամենայն. զի է քեզ քակել զբարեկամութիւնդ զայդ, առ իմէ՞ իցէ երկիւղդ, "Հրեշտակաց պատուիրեալ է 'ի պահել զքեզ.,։ Այլ դու մի լքցես զյաղթողական զէնդդ, մի դադարեսցիս 'ի բանէն. "Գրեալ է, մի փորձեսցես զտէր Աստուած քո.,։

Այսպա թէ ոչ ընդ առաջին յանցաւորութեանդ փոր-

digitised by A.R.A.R.@

ձելոյ զամենակարողութիւնն Աստուծոյ, երկրորդ անգամ յանցանիցես փորձելով և զողորմութիւնն Աստուծոյ. ոչ ըստ յանդիմանութեանն Յուդթայ չափ և սահման դնելով ողորմութեանն Աստուծոյ, այլ բնաւ իսկ ներհակաբար անդր քան զամենայն չափ և սահման ընդարձակելով զնա ընդդէմ կամացն Աստուծոյ։ Զանգի որպէս հարքն ասացին, ողորմութեանն Աստուծոյ դուռն բաց է վասն այնոցիկ՝ որ երբէք առանց հետամուտ լինելոյ փորձութեանն՝ պաշարեսցին 'ի փորձութիւն։ Իսկ դու անբռնադատ միջամուխ 'ի փորձութիւն արկանելով զանձն, անհանձար վստահութեամբ ակն ունիս ողորմութեանն. միթէ տեր և իշխանն իցես դու շնորհացն Աստուծոյ, և 'ի քո՞ ձեռս իցէ ունել զայն 'ի ժամու և 'ի տարաժամու. "Զի՞վ էք դուք, որ փորձէք զԱստուած.,։

Իսկ և երրորդ անգամ մարդ յանձնապաստան 'ի փորձութիւնս, փորձէ զԱստուած և կեղծաւորութեամբն. յորժամ հայցէ զօգնականութիւն շնորհացն 'ի փորձութեան զոր ինքնին սիրեաց և յորմէ չկամի հրաժեշտ տալ. և պատասխանի յայնժամ լուիցէ առ յԱստուծոյ. "Ի՞նչ փորձէք զիս կեղծաւորք.,։ Հայցէք դուք ինչ մի, այլ բերանով չափ միայն, իսկ սրտիւ անբակ յարեալ էք ընդ փորձութեանն։ Հայցէք դուք ինձ ածել տկարութեան ձերում և փրկել 'ի բռնութենէ և 'ի հաղթից փորձողին, և դուք ինքնին էք փորձիչք անձանց ձերոց։ Ի ձեզ դուք և ընդդէմ ձեր հարկանէք զհրապուրիչ և զվատանգաբեր սպասաւորութիւնդ. "Ի՞նչ փորձէք զիս կեղծաւորք։—Կորուստ քո աւադիկ 'ի քէն է Իսրայէլ.,։

Զայսպէս անհնարին յանցանէ մարդ կամաւորապէս դիմագրաւեալն 'ի փորձութիւն. և բնաւ իսկ անպատասխանի եղեալ առ Աստուծոյ և անմասն յօգնականութենէ շնորհացն կործանի 'ի փորձութեանն։ Զայս 'ի կամաւորն. իսկ և յակամայացեալ փորձութիւնն ընդվայր ակնկալցի մարդ շնորհացն Աստուծոյ 'ի կռուել և 'ի յաղթել, եթէ ջան ճշմարտապէս չդիցէ բուռն ինչ առնել անձին, և մանաւանդ մեռելութեամբ ինչ մարմնոյ ըստ օրինակին Արիստոսի, որպէս տեսցուք վաղվաղակի։

digitised by A.R.A.R.@

ՄԱՍ Բ.

Քանզի ամենայն ինչ մեր 'ի բարեաց մասին, 'ի շնորհացն Աստուծոյ է. ուստի և յաղթութիւն մեր 'ի պատերազմի փորձութեանն 'ի կեանս յայս՝ զոր ողջոյն փորձութիւն և պատերազմկոչեցին զիրք 'ի վերայ երկրի։ Այսն որոյ աղաչեմ; քաջիկ միտ դնել զիարդ ներգործեսցեն 'ի մարդ շնորհքն Աստուծոյ։ Զչզրտագոյնս զայս հետազօտեալ մեծն Կիպրիանոս հրահանգեաց այսպէս. "Օ՛օրութիւն Հոգւոյն սրբոյ, ասէ, ոչ ըստ մերում ինչ ընտրութեան սպասաւորէ, այլ ըստ իւրում կարգի և սահմանին"։ Օ՛օրութիւն Հոգւոյն, այն ինքն են շնորհք, քաջի 'ի մեզ, ասէ, սահմանաւոր ինչ կարգաւ՝ զոր ինքնին Աստուած կարգեաց եդ. և անքաժ յայնմանէն անօգուտ են շնորհք և անպտուղ։

Աստուտ է առաջս 'ի քրիստոնէական բարոյականին. յորմէ և հետևանք երբակի կարևորք յոյժ քաղին 'ի հրահանգ հոգւոյն. որով ամենայն պարտուց միանգամայն լրումն տամք 'ի գործել 'ի մեզ զմեծ գործն զայն զյաւիտենական փրկութիւն մերոյ զոր կամի Աստուած։ Ասացին, եթէ 'ի փորձութիւնս ակամայացեալս՝ որովք շուրջանակի լի են մեր այս կեանք, միշտ հաւատարիմ է Աստուած տալ զպարգև շնորհացն օժանդակ 'ի կռուել և 'ի յաղթել. սակայն և կամի զի այր այր իւրաքանչիւր ըստ վիճակի և ըստ գեղեցիկ վախճանի շնորհացն տուեալոց 'ի գործ վարեսցէ զպարգևն։ Այս է զոր ասաց Կիպրիանոս, "Օ՛օրութիւն Հոգւոյն ոչ ըստ մերում ընտրութեանն, այլ ըստ իւրում սահմանին քաջի"։

Այժ արդ դուք ինքնին գիտէք, սիրելիք, եթէ առ հաստակ մեք քրիստոնեայք աստուածապարգև զինուորութեան վիճակեալ եմք. մարտիկք եմք Քրիստոսի. և չէք որ զնշանագրեստ զինուորութեանն յանձին բարձեալ չբերիցէ անդստին յաւազանէ մկրտութեան։ Այսն այնորիկ և կոչեցին զիրք զկեանս՝ հանապազօրեայ մարտ և փորձութիւն. քանզի մարտ անդուլ կայ 'ի մեզ հոգւոյն ընդդէմ մարմնոյ, և մարմնոյն ընդդէմ

digitised by A.R.A.R.@

հոգւոյն. բանին ընդդէմ կրիցն, և կրիցն ընդդէմ բանին. հաւատոյն ընդդէմ զգայութեանց, և զգայութեանց ընդդէմ հաւատոյն. նեղբին մարդոյն ընդդէմ արտաքնոյն, և սորա ընդդէմ նորա. և համբուն մարտ անդուլ է անձին մարդոյ ընդդէմ անձին իւրոյ։

Զգոյ եթէ յաղթութեան փառացն իղձ լինիմք, աւասիկ մեծ վարդապետն, արի զօրաւորն աստուածայինն Պաւղոս ուսոյց և զինուորեաց զմեզ. վահան և սաղաւարտ ետ մեզ 'ի ձեռս զհաւատս, և զրահ և պատեան զարդարութիւնն, և սաղաւարտ զյոյսն, և զէն և սուսեր՝ զբանն Աստուծոյ, և վառեաց իբրև անպարտելի զօրականս։ Զգեցարուք, ասէ, այսուհետև, յորմէ հետէ 'ի քրիստոնէութիւն կոչեցարուք, զգեցարուք զզինուորութիւնն Աստուծոյ, առէք զվահանն հաւատոյ, և զսուսեր հոգւոյն, այլովքն հանդերձ։ Զասիկ որ 'ի մերն կողմանէ։

Իսկ զինչ և որ յաստուածակողմանէն։ Զանգի ո՞ր ոմն հետև 'ի մարտ դժուարին պատրաստեալ տեսանէ զմեզ Աստուած, պատրաստի և ինքն տալ մեզ զշնորհսն, ոչ զխաղաղութեան պատերազմին, այլ շնորհս զմարտելոյն, զպաշտպանելոյն, զյարձակմանն, զընդդիմահարութեանն։ Փորձութիւնքն են՝ անմարմին թշնամւոյն կրօնք և յարձակմունք 'ի վանել զմեզ և 'ի յաղթահարել. անդուստ և շնորհքն թիկունս տուեալ պատրաստելոցս՝ 'ի դիմի հարկանին 'ի վանել զնա և 'ի յաղթահարել. ուստի և առանց յօժարակամ պարտութեան 'ի մարտն, վստահ միայն 'ի շնորհսն լինել՝ խաբանք են. քանզի հակառակ է վախճանի շնորհայն և կամայն Աստուծոյ։

Զէք կամիք զի շնորհքն միայն մարտիցեն, իսկ մեզ քիրսն և աշխատութիւն հասցէ և ոչ մի։ Աստուած կամի, զի 'ի հանապազորդեան շարժման կալցին զմեզ շնորհքն. քանզի "ըստ սահմանին իւրում միայն և կարգի՝ սպասաւորէ զօրութիւն հոգւոյն"։ Զնդ անգործ կենաց չիք իմ մասն և բաժին, ասէ Քրիստոս. և իմ աշակերտ չմանաչեմ զյոյսն և զանկուսն. "Զքայութիւն իմ բռնաբարի, և բռունք յափշտակեն զնա"։ Զս յառաջինութեան 'ի մարտին մտի հանդէս. և փոխանակ խաղաղութեան՝ սուր առեալ բերի աշխարհի. "Զէ

եկի խաղաղութիւն արկանել յերկիր, այլ սուր ... Զ. յս մեր առաջին զինուորութեան հանդէս՝ ընդ դրօշակաւն Քրիստոսի զինուորելոցս։

Իսկ ապա երկրորդ անգամ՝ ի հանդիսին առաջին ձիգն և հանձար զօրականին է վատել և տկարացուցանել զթշնամին. քանզի միանգամ խնայելն ՝ի նա կորուստ է անձին և կործանումն։ Զ. արդ մեր թշնամին քան զամենայն ահագին՝ է մարմին մեր այս, մարմին մեզաց. որ այլ ինչ չիորհի, այլ ինչ չանասէ, բայց իղձս անսպատեհս. մարմին գերեալ ՝ի ցանկութենէ. մարմին ապստամբ միշտ յօրինացն Աստուծոյ. մարմին թշնամի՝ յորմէ հանապազ փորձիմք. "Զուրաքանչիւր ոք, ասէ, փորձի՝ առ յիւրոց ցանկութեանցն ձգեալ և պատրեալ..։ Թշնամի որչափ առաւել դրացի և ընտանի, այնչափ առաւել վտանգաւոր լի. որչափ առաւել սիրելի, այնչափ առաւել դժուարապարտելի. "Ո թշնամի զայս հզօր, ասէր Զերանն ոսկի, ձիգն մեծապէս թափեսցուք ՝ի վատել և ՝ի պարտել։ Զ. յլ զիմարդ. քրիստոնէական մեռելութեամբք. և յետ այնորիկ, ասէ, յաղթանակեսցեն ՝ի մեզ շնորհք ՝ի վերայ փորձութեանն...։

Զ. արդ ասա ինձ վայր մի, զիմարդ երբեք դու ով քրիստոնեայ, անմասն ՝ի մեռելութենէ աստի, և ՝ի դրգանս միշտ պաշտեալ զմարմին, և զհանձնայն նորա հանապազ կատարեալ, զիմարդ երբեք վատահ ՝ի շնորհսն մարթասցիս լինել՝ զայն միայն բաւական քեզ ՝ի փրկութիւն համարեալ, որ և ոչ խուն մի գիտութիւն զշնորհացն ունիցիս, և ոչ զառաջին տարերան ուսեալ ի ցեսս զհաւատոյն զոր ունիս։

Զանզի առաջին ներգործութիւն շնորհացն ՝ի վերայ քրիստոնէին ՝ի փրկութիւն, է շինջուցանել նորա զցանկութիւնն մեռելութեամբ մարմնոյ. իսկ դու ներհակաբար փոխանակ վատելոյ և զնա, ստուարագոյն և հաստահարուստ գործես զնա. փոխանակ գործակից շնորհացն լինելոյ ընդդէմ փորձութեանն, այժ տաս փորձութեանն ընդդէմ՝ շնորհացն։ Զարտաս երկուս միմեանց հակառակս խնդրես ՝ի քեզ. զիմարդ շնորհք և ցանկութիւն միանգամայն տիրասցին ՝ի քեզ։ Զ. գիտես իսկ դու անշուշտ, զիմարդ որ յամենայն վիճակէ, որ յամենայն հաստակէ առաքինիք և խնամատունք, զիմարդ

digitised by A.R.A.R.@

օրինակս մարտ եղեալ կռուեցան ընդ փորձութիւնս, զմի հնարս կալան նոքա 'ի կռուին. չգտին այլ, բայց զմարմնոյն մեռելութիւնն։ Ամենայն և յարբայական վիճակին Դաւիթ, թէպէտ և մարգարէ և սուրբ. թէպէտ և այր ըստ սրտին Աստուծոյ, սակայն և երկիւղած և խնայող այնչափ՝ զի և 'ի փորձութեան իւրում մեռելութեամբ մարմնոյ զինուորէր առ 'ի յաղթանակել. "Այս, ասէ, 'ի նեղել նոցա քուրձ զգենուի..." Ամենայն և առաքեալ մեծ, և երրորդ երկնից տեսող՝ Պաւղոս խաչակիր անձն. "Ա. յլ ես, ասէ, Ճնշեմ զնարմին իմ և հնազանդեցուցանեմ..."

Ա. յլ զիարդ, թերևս այլաբանն ինչ և հզօրագոյն ի-ցեն շնորհքն 'ի մեր ձեռս, քան 'ի Դաւթին և 'ի Պաւղոսին, կամ թէ հոգի առաւել եռանդուն իցէ մեր, կամ թէ մարմին առաւել կիրթ և համբոյր իցէ մեր քան Դաւթին և Պաւղոսին։ Ամենևս և հատարակաց թշնամին տկարագոյնս յարձակեսցի 'ի մեզ, քան 'ի նոսա և 'ի նմանիս նոցա. կամ թէ մեր կորով հարուստ ևս իցէ քան զառաջնոց դիւցազանցն քրիստոնէութեան, որ 'ի հալածանս, որ յանապատս, որ յօտարութեան, որ 'ի կուսութեան նահատակեցան. և որ 'ի բարեկրօն կեանս աշխարհի միայն առաքինացան։ Ա՞ռ 'ի նոցանէն վստահ երբեք եղև 'ի շնորհսն առանց մեռելութեան ինչ մարմնոյ։ Իսկ մեք անմանն 'ի մեռելութենէ. և զի՞նչ ասեմ մեռելութիւն. նա միշտ 'ի բերկրութեան կեանս և 'ի փափկութեան և 'ի մեղկութիւնս, չասեմ և 'ի հեշտախտութեան, բնաւ իսկ ժտիցիմք վրատահ և ապաստան միայն յօգնականութիւն շնորհացն լինել։ Դոքա այլ Ճանապարհ ոչ գտին՝ զհուր ցանկութեանն շիջուցանելոյ, բայց Ճնշմամբ մարմնոյ և սանձահարութեամբ զգայարանացն. իսկ մեք Ճարակ միշտ տուեալ հրոյն՝ անկէզ պահիցիմք 'ի բոցոյն։

Որ անդստին յարգանդէն սրբեցաւ մարմնաւոր հրեշտակն Յովհաննէս, և էր իսկ նմա ասել, եթէ "Շ նորհքն ընդ իս յղացան և ընդ իս ծնան...", հա-մայն և այնպէս ոչ յանձնապաստան ինչ 'ի շնորհսն միայն՝ բազմամեայ մեռելութեամբ 'ի խաչ զմարմինն հանէր յանապատ յամնայի. իսկ մեք աւասիկ 'ի մեղս յղացեալք, և 'ի մեղս կեցեալք, վստահութեամբ խոստա-

digitised by A.R.A.R.@

նայցեմք անձանց 'ի ընդհաց անտի յաղթութիւն առանց մարտի, մարտ առանց բռնութեան, բռնութիւն առանց սրբութեան, սրբութիւն առանց ապաշխարութեան, ապաշխարութիւն առանց ինչ մեռելութեան և առանց ինչ խստաբերութեան։ Այլ եթէ այս այսպէս, անշուշտ ուրեմն՝ որպէս Հերոնիմոս ասաց խաչազգեաց անձն, անշուշտ ուրեմն "Կեանք Յովհաննու ծիծաղելի էր, քան զարմանալի..։

Այլ մեք և զայն տեսցուք երկրորդ անգամ. զինչ մեռելութիւնն իցէ, և զինչ կարծեսցէ զնմանէ աշխարհ...։ Նա՛ւ, ամենեմ, քրիստոնեայք, ասել եթէ և հաղիւ ծանօթ անգամ իցէ աշխարհի այս առաքինութիւն, եթէ չիցէ արդեօք և յընչաց քերելի, եթէ չիցէ և գլխովին ատելի։ Սակայն և որ զինչ և իցէ իմաստ աշխարհի երկրաւոր և ընչաւոր, առաքելական պատգամն կայ և ունի անդրժելի զինիւքն, եթէ՝ որ Քրիստոսի հոգւոյն է, որ զնշանագրեստ հաւատոցն նոր յանձին բարձեալ բերէ՝ պարտի այնպիսին մեռանելով մեղացն 'խաչել զմարմինն, մեռանել կրիցն, մեռանել ամենայն դժպատեհ ցանկութեանցն, որ 'ի մարմնոյ, որ 'ի փառասիրութենէն, որ յարծաթասիրութենէն, և որ յայլ ամենայն կարեաց և ախտից աշխարհի. "Որ քրիստոսեանքն են, ասէ, զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին կարեօք և ցանկութեամբք հանդերձ..։ Քանզի և չիք վիճակ կենաց, որ ազատ 'ի փորձութեանց իցէ. և եթէ գոյ փորձութիւն, գոյ և մարտ. և եթէ գոյ մարտ, կամ նկուն լինել պարտ է, կամ յաղթել։ Յաղթես խաչելութեամբ և մեռելութեամբ կարեացն, և յաղթիս հետևեալով կարեացն։

Այս մեռելութիւն հոգևոր նեբքին մարդոյն՝ հարկ անհրաժեշտ է ամենայն քրիստոնէին։ Իսկ երկրորդ ըստ նմանէն է մեռելութիւն մարմնաւոր արտաքին մարդոյն, սանձահարութեամբ զգայարանացն, և ինչ ինչ Ճնշմամբ մարմնոյ ըստ ժամանակի, ըստ պիտոյից, և ըստ կարի իւրաքանչիւր. և արտաքինս այս զօրավիգն մեծապէս և պահապան կացցէ նեբքին մեռելութեան կրիցն և ցանկութեան։ Ա՛ստ որոյ և զայս մեռելութիւն մարմնաւոր, անդատին յառաքելոցն սրբոց ժամանակէ 'ի պահս սրբութեան քառասնորդացն ժողովեաց եկեղեցի

digitised by A.R.A.R.@

սուրբ յընդհանուրս քրիստոնէից պատուիրանաւ՝ 'ի փրկաւէտ օրինակէ քառասնօրեայ պահոց տեառն մերոյ։ Զ 'ի "Եթէ յայլ ժամանակս տարուոյն, ասէր մեծն Եւդոստինոս, պահս պահել խորհուրդ է, այլ քառասնորդացն պահք պատուիրան է ,,։ Եւ եթէ պահպանութիւն պատուիրանիս արդ նուազեալ է 'ի բազմադէմ պատճառաց, սակայն հոգի քրիստոնէական մեռելութեան ըստ նեղբին մարդոյն միշտ աննուազելի է յեկեղեցւոջ։

Անզի անմարթ է, սիրելիք, առանց ինչ մեռելութեան և Ճնշման՝ աստ միանգամայն և անդ հանգիստ ունել. զի "Քաքայութիւնն երկնից, ասէ, բռնաբարի և բռունք յափշտակեն զնա ,,. և նեղ և անձուկ է Ճանապարհն առ յաւիտենական հանգիստ։ Ընդուլ ունիմք թշնամի, ոչ մի, այլ երեք, մարմին և աշխարհ և սատանայ. և մարտ անդուլ ընդ սոսա նաև փորձութիւն անդուլ է մեզ մանաւանդ 'ի հզօրագունից անտի երից, այն է փառասիրութիւն, արծաթասիրութիւն և որկրամոլութիւն։ Եւ մեր զօրագլուխն հաւատոց միանգամայն և յերիցն յաղթութիւն քաջալերեաց զմեզ օրինակաւն։ Կարձեաց զորկոստութիւնն բանիւն, "Ես հացիւ միայն կեցցէ մարդ ,,։ Բդեղ զփառասիրութիւնն առ 'ի ցոյցս անիշատելի վայրանկմանն, բանիւն, "Զ 'ի փորձեսցես զտէր Աստուած քո ,,։ Ընդոտնեաց և զամենայն մեծութիւն աշխարհի միայն Աստուծոյ պաշտօն հարկանելով, բանիւն, "Զտէր Աստուած քո միայն պաշտեսցես ,,։

Եթէ երից այսոցիկ փորձութեանց՝ որ հզօրացեալք են 'ի մեզ՝ Ճգնեսցուք յաղթանակել ըստ աստուածային նախատպին, ապա և այլոցն ամենայնի դիւրեաւ յաղթեսցուք 'ի հնարից նորա. և 'ի մեզ ինքեանս արդիւնացուսցուք զերանաւէտ բանն, եթէ "Ամ յաղթէ, տաց նմա զպսակն կենաց ,,։

digitised by A.R.A.R.@

ԿԱՐՈՂԽԱ·

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

"Եւ 'ի Պրոբատիկէ աւազանին անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որ ակն ունէին ջրոցն յուզելոյ"։ Յովհ. Գ.

Եթէ ամենայն գիրք աստուածաշունչք 'ի վարդապետութիւն գրեցան մեզ և 'ի խրատ, հաւատամք եթէ և 'ի բազմախորհուրդ բնաբանիս գանձ բազում իմաստից ծածկեալ կայ մեզ, սիրելիք, 'ի շնորհաց աւետարանին։ Օ թէ զինչ աւազանն իցէ Պրոբատիկէն սքանչելագործն. զինչ հրեշտակին ի ջանել և յուզել ջրոցն. ոչք բազմահոյլ հիւանդքն, կուրաց, կաղաց, գօսացելոց զորս տեսանեմ անկեալ շուրջ զաւազանաւն. առ հասարակ ակն կալեալ էն բժշկութեան, այլ ոչ առ հասարակ հասանէն խնդրոցն։ Եւ առ ինչ միայն երեսուն և ութամեայ ախտակրեալն բժշկութիւն գտանէ անվրդով. և զնա միայն 'ի բազմութենէն տեսանէ և ընտրէ զառաւել յուսաբեկն, զանց զայլովքն արարեալ։

Եւ արդ զաւազանին Պրոբատիկեայ զօրինակ գիտեմք 'ի խորհուրդ սքանչելագործ աւազանին ապաշխարութեան, որ զմեղսն լուանայ, զխիղճն սրբէ, զախտացեալ հոգին բուժէ. որպէս վայելուչս երգէ եկեղեցի. "Ապաշխարութեան արտասուս աւազան լինի, և լուանայ զբազմութիւն մեղաց"։ Զ աւազանաւս այսուիկ անկեալ կան աւադիկ բազմութիւն հիւանդաց հաւա-

digitised by A.R.A.R.@

տացելոց կուրաց, կաղաց, գօսացելոց. առ հասարակ ամ-
ենին բժշկութեան. աւաղ, զի ոչ առ հասարակ հասա-
նեն ըղձին։ Որ միայն բազմամեայ ախտացեալն, այս է
բազմաժամանակեայ մեղաւորն գթով ակնարկեալ 'ի
Քրիստոսէ, "Կամիս ողջ լինել...", անդէն թօթափէ
զանկողին յանցանացն. նորափեռուր զարդարի 'ի հնու-
թենէն։

Բաբէ. մի միայն...։ Այլ ընդէր աստուածայինս
այս դեղ դարմանոյ ապաշխարութեան աբանչելագործն,
կենդանարարն, իբրև անգործ, անպիտան, ոչ ինչ աղ-
դեսցէ առ բազմահոյլ մեղաւորն որ մերձենանն առ
նա։ Զբդեաք ընդհանր աստուածայինն խորհրդոյս հոլով-
մամբ ժամանակին և դարուցն բազմաց կարգառու-
թեամբ վատեցեալ ինչ 'ի նորոգատուր ուժոյն և յաղդե-
ցութենէն։ Այլ արդեաք երախայրիք կենագործ արեանն
Քրիստոսի այն ինչ հեղլոյ յառաջին դարուն կորովիք
առաւել գտան 'ի դարձ մեղաւորաց 'ի սկզբան հաւա-
տոյս քան 'ի վերջնումն։ Զայլ չէն, եղբարք, աստուածայ-
ինքն իբրև զմարդկան. աստուածայինն միշտ անվատե-
լի է զօրութեամբ, միշտ նոյն, միշտ գործօն։ Այլ առ ինչ
ապա 'ի դարուս մերում, յորում այնչափ ախտք մեր և
հիւանդութիւնք հոգւոյ այնչափ ինն կարևոր յարդա-
բերեցին մեզ զդեղն ապաքինիչ. և յորում նեղողամիտ
գութ հարց խոստովանութեան, և չափաւորութիւն
տուելոց ապաշխարանացն, այնչափ ինն հեշտին գործե-
ցին մեզ զայն և ընտանի. և 'ի վերայ այսր գոգցես
վայրապար ամենևին և անազդակ իցէ մեզ դեղն։

Այլ ընդէր 'ի նախնին յայն երջանիկ ժամանակին, յո-
րում 'ի սրահս և 'ի գաւիթս մերոց տաճարաց անկեալ
գնէին ապաշխարողքն երկայն ժամանակաւ սպասեալք
ընդ Աստուծոյ հաշտութեանն, և գոգցես յայնժամ ոչ
ոք ինչաներ յաւազան անդր, և ոչ անդէն բժշկեր ոչ ու-
նելով նշան հիւանդութեան։ Իսկ այսօր յորժամ ոչ ոք
շատ ինչ սպասէ առ նուիրական աւազանաւս մերով, յոր-
ժամ և հրեշտակքն եկեղեցւոյ, հրեշտակք տեառն ամե-
նակալի քահանայք, չդանդաղեն ինչանել յաւազանն 'ի
բուժել և մերձին առ ախտացեալն դարման տանել ախ-
տին, և ընդէր ապա դեղ դարմանոյն փոխանակ ապաքինե-
լոյ, թուի ինն յերկարաձգել զախտն և զայրացուցանել։

digitised by A.R.A.R.@

Օ՜ ինչ պատճառքն իցեն . . . ։ Պատճառս աւադիկ գտանեմ՝ ես երրեակ տպաւորեալ յերիս ազգս հիւանդաց աւետարանին. կուրաց, ասէ, կաղաց, գօսացելոց։ Կոյրքն են մեղաւորքն, որ գնացեալ 'ի խոստովանութիւն յայտնել զխիղճ մտացն, ոչ որպէս արժանն է տեսանեն և ճանաչեն զանձինս զի կոյրքն են։ Կաղքն են մեղաւորքն, որոց պակասէ ուղղութիւն և անկեղծութիւն 'ի խոստովանել զյանցանս իւրեանց։ Իսկ երրորդ անգամ, գօսացեալքն են մեղաւորքն անշարժք և անզգայք, որ գնան 'ի խոստովանել և բնաւ իսկ անբաժք են 'ի ճշմարիտ ցաւոցն և 'ի զղջմանէն։ Պհաւասիկ երբակի խակութիւնք, որ անգործ և անպիտան յարդարեն զխոստովանութիւնս, չասացից եթէ և սեղանակապուտս։ Պակասութիւն լուսոյ 'ի քննութեան մեղացն։ Պակասութիւն անկեղծութեան 'ի խոստովանութեան մեղացն։ Պակասութիւն ցաւոց 'ի զղջմանն։ Պշաչեմ սիրելիք, լուսաւորութիւն մանաւոր խնդրել այսօր յՊստուծոյ առ 'ի քաջիկ միտ դնել կարևորագունի յոյժ քարոզիս, և քաղեսջիք դուք յայնժամ ձեզ հրահանգս մեծամեծս յոյժ 'ի փրկութիւն հոգւոց ձերոց։ Ցայսուք սկիզբն՝ առաջին վասն մտացն կուրութեան։

ՄԱՄՆ Ա.

Յամենայն պատուհասս աստուածասաստս որ առաւել սարսափելին է, է կուրութիւն մտաց։ Չիք ոք որ յամենայնի լուսաւորեալ իցէ, և չիք ոք որ գողցես յամենայնի մտախաբ ոչ իցէ։ Պարզ զրեա թէ հանապազ իբրև խորհուրդ ծածկեալ է նաև անձին իսկ իւրում. ընդ լոյս բանին և ընդ սիրտն միշտ 'ի մէջն առկայացեալ կայ անձնասիրութիւն, ուստի և զոր ինչ միանգամ տեսանեմք զանձանց մերոց, ընդ ստուերաձիգս ընդ այս իբրև ընդ աղօտ տեսանեմք։ Պ'իայն հաւատոցն աչք բաւական են փարատել զստուերն, և 'ի մութ յայն մատեան մտաց ընթեռնուլ յստակ զճշմարտութիւնն. որպէս առաքեալ ասաց. "Հաւատովք իմանամք զանարեւոյթսն,,։ Պյլ քանզի դժուարագիւտ է 'ի մարդիկ

digitised by A.R.A.R.@

այնչափ լոյս հաւատոյն, դժուարագիւտ է և Հանապազումն անձին։

Բ. յս պակասութիւն Հանապազման անձին 'ի մտացն կուրութենէ, որ մեզ անպտուղ գործէ զմեր խոստովանութիւնս՝ յերիս ինչ ունի զծագումն։ Դ. սխալ զի ոչ քաջիկ և ուշով քննեմք զանձինս։ Գ. երկրորդ զի ըստ թելադրութեան միայն կանխակալ կարծեացն քննեմք զանձինս։ Դ. երրորդ անդամ զի ոչ ըստ ամենայն պարտուց մերոց քննեմք զանձինս։ Դ. արդ միտ դիք. մեք 'ի քննութեան մերում չտամք մեզ ոչ բաւական ժամանակ և ոչ բաւական յուշ։ Բ. մեծայն կենաց քրիստոնէի պարտի լինել Հանապազօրեայ քննութիւն գործոցն, քննութիւն ցանկութեանցն, քննութիւն խորհրդոցն. քանզի սիրտ մեր զաղփաղփումն է և յեղյեղուկ, միշտ նորս իմն տպաւորութիւնս ծնանի 'ի մեզ. պարտ է ուրեմն և մեզ միշտ քննութեամբ Հանապազել զանձինս։ Ի նեղքս 'ի մեզ է վտանգն անդուլ և արագահաս, վտանգ ցանկութեանցն, վտանգ մախանայն, վտանգ երկիւղի, յուսոյ, վտանգ արտմութեան, խնծղանաց. վտանգ դառնութեան, ատելութեան, վտանգ սիրոյ։ Դ. եթէ և մեք անդուլ չարտեսիցեմք զմեր կիրսն, երբեք չտեսանիցեմք ոչ զբարկիղն նոցա, ոչ զմէջն, և ոչ զկատարածն։ Դ. տքա յօրացեալք և խռնեալք իբրև վիհ խորին խաւարին, անմատոյց գործեսցեն մեզ զսիրտն մեր. զորոյ միայն զվերին երեսս բաւական իցեմք նշմարել։

Ա՝ի ուրեմն պատրեսցուք սիրելիք զանձինս, ասել է թէ բարիոք յաջողեսցի մեզ կենագործ խոստովանութիւնս. ասել եթէ վայրկեանք քանի մի բաւական իցեն մեզ 'ի քննութիւն խղճի մտաց յետ այնչափ ունայնասիրութեամբ և այնչափ զբաղանօք անցուցանելոյ զաւուրս և զամիսս բազում։ Ցքննութեան մեզ պէտք են, եղբարք, 'ի վերայ ամենայն գործոց մերոց զօր ամենայն. և որպէս իմաստութեամբ խրատաբանէր աստուածայինն Պսկեբերան, Պատկառ կացցուք, ասէ, մերոյ վախճանին. և Հանապազօր զՀաշիւ զգործոց և զբանից և զխորհրդոց որովք միանգամ յանցեաք 'ի տունջեան, ընդ երեկս աւուրն անդբաղք 'ի գիշերի պահանջեսցուք յանձանց։ Դ. սովին ապա Հանձարեսցուք մեզ զդիւրութիւն քննութեան խղճի մտացն, և քաջ

digitised by A.R.A.R.@

այնուհետև պատրաստաք զտանելիքն մեք ըստ ժամանակին 'ի խոստովանութիւն, և այնպէս զկենաց պտուղն քաղեսցուք զնորա 'ի սրբութիւն հոգւոց մերոց և 'ի փրկութիւն։ Վասնզի բազմօրինակ զբաղանք առնելոյ մեր. ուստի և 'ի ժողովել զնա 'ի մեզ միւսանգամ չիք այլ ժամ բարեպատեհ քան զանդորրաւէտ ժամ գիշերոյն. որպէս ասէպ և աստուածային մարգարէն ջերմեռանդն աղդէ, եթէ "Գիշերի 'ի գիշերի զանուն քո տեր և պահեցի զօրէնս քո.., և թէ "Ի գիշերաց կանխէ հոգի իմ առ քեզ Աստուած.. և թէ "Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ Աստուած..։

Այս արդ եթէ զայսօրինակ քննութեան պէտք իցեն 'ի բարեկոչ խոստովանութիւն, ապէ դու ասա ինձ, ով հաւատացեալդ։ Երբէք դու մատեար առ հայր խոստովանութեան քո այսօրինակ պատրաստութեամբ։ Բայ. բէ. քոյ սմենայն կեանք գլխովին անձանաչողութիւն է անձինդ, թող թէ քննութիւն և գիտութիւն. կեանք լի հոգովք աշխարհականաք և զբաղանաք, լի բերկրութեամբք կենցաղականաք, լի յուզմամբ և շփոթիւք։ Երբէք դու խնդրեցեր քեզ վայրկեան մի անդորրութեան կեալ մենաւոր ընդ անձին քում, քննել վայր մի անաչառ զգնացս քո և ուղղել զնա, և թէ երբէք կամեցար առնել զայդ, ով թէ քանիսն անձկացար 'ի հոգի, քանի տաղտկացար 'ի սրտի, տաղնապ 'ի միտս, տաղնապ 'ի յիշողութեան։ Այս զիարդ իցէ քեզ կամել, զի սուղ ինչ պարապ ժամանակի յառաջ քան զխոստովանութիւնդ բաւական իցէ բազմազբաղ ընկղմելոյդ յաշխարհայինս աւուրս բազումս և ամիսս և տարիս, միջամուխ լինել քեզ 'ի խորս խորինս և 'ի խաւարին աղուցս սրտի քո. 'ի վեր բերել զգաղտնիս խղճի մտացդ և ճանաչել զանձն և յայտնել հօր խոստովանութեան քոյ։ Զիարդ իցէ քեզ կամել զի այնչափ մեղանչական ցանկութիւնք յուզեալք 'ի քեզ 'ի ծածուկ, այնչափ հեշտութիւնք դժպատեհք տեղի գտեալք 'ի մարմնիդ, այդչափ կեղակարծ դիտաւորութիւնք անքնին թողեալք 'ի քէն, այնչափ զրգանք քոյ յանցաւորք, այդչափ կիրք նորոգածինք 'ի քեզ որ վերս եղին 'ի հոգի, և ապա տեղի տուեալք 'ի սրտէդ 'ի մոռացօնս դարձան քեզ. զիարդ ասեմ հնար իցէ եթէ վերդ

digitised by A.R.A.R.@

այդ խորին 'ի վայրկեան մի ժամանակի յանդիման բացցի քեզ ակներև, և մարթասցիս դու մաքրել զկիրեղ մտաց քոց։

Բաբէ, և զինչ այլ տեսանեմք մեք զոր ամենայն յա-տենին խոստովանութեան, բայց զկոյրդ զայդոսիկ, որ ոչն տեսանէն և ոչն ճանաչէն զանձինս. "Լու էր անդ, ասէ, անկեալ բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց.,։ Բաբէ, և զինչ այլ լսեմք մեք անդանօր 'ի խոստովա-նեցուցանել զկոյրդ զայդոսիկ, բայց թէ նկարս իմն անտպաւորս, և 'ի վերին երեսս ստուերագրեալս, պատ-մութիւն զհրապարակագոյժն և զարտաքինն զմեղաւո-րաց, զկեղևանս զանկարգութեանցն նոցա, կամ թէ և անկմունս ևս բայց զմեծամեծսն միայն և զերևելիս. անկ-մունք որ ծնունդք էին առ 'ի նեբքս անբարեոյթ բիւրուց անկմանց, զոր չտեսանէն աչք կուրացդ այդոսիկ։ Կան և ասեն մեզ նոքա զթիւ ամացն իբրև զերեսուն և ու-թամեայ անդամալուծին, յորս անկեալ տուայտեցան 'ի հիւանդութեանց։ Կան և պատմեն մեզ զպատմութիւն կենաց իւրեանց. բայց չգիտեն պատմել մեզ զպատմու-թիւն սրտից իւրեանց։

Հաւադիկ առաջին թերութիւն 'ի քննութեան խղճի. զի քննեն միայն վայրկեան մի միայն յառաջ քան զխոստովանութիւնն. յորժամ զոր ամենայն փոքու իմն քննութեան պէտք էին նոցա 'ի պատրաստութիւն խոս-տովանութեան ըստ ժամանակին։

Իսկ երկրորդ թերութիւնն այն է, զի ոչ քննեմք զմեզ անաչառ։ Զինչ իցէ անաչառ քննեալն. ահաւա-սիկ քեզ։ Դիր 'ի մի կողմն զպատուիրանս Քրիստոսի, և 'ի միւսում զվարս քո. բաղդատեա զգործսդ ընդ այնմ զոր պատուիրէ աւետարան, կամ զոր թոյլ տայ, կամ զոր արգելու։ Լու 'ի բաղդատութենէ ասսի դու այժմէն դատեա զանձն քո, մինչ չև դատեալ քո յերկնաւոր դատաւորէն յաւուրն ահեղի։ Զայլ սակայն պատուիրա-նաց աւետարանին և աստուածային կանոնացն անձնա-սիրութիւն մեր ընդդէմ կարդէ զկանխակալ դատմունս իւր 'ի քննութեան խղճի, և ապականէ զնա։ Դատ-մունք կանխակալք պատիրք, բազմադիմակք, եթէ որ ըստ ազնուականութեան տոհմին, եթէ որ ըստ աւա-գութեան բարձին, եթէ որ ըստ առաջնորդութեան,

digitised by A.R.A.R.@

կամ՝ որ ըստ գահախնդրութեան, եթէ որ ըստ ընչաւէ-
տութեան կամ՝ որ ըստ սովորութիւն աշխարհի։ Որ ըստ
ազնուականութեան տոհմին է, չիք 'ի Քրիստոս և յա-
ւետարանի խտիր ընդ ազնուազգին և ընդ հողագործ
մշակն. զնոյն պատուիրանս հաւասարապէս քարոզէ աւե-
տարանն և մեծամեծաց և ռամկին։ Ազնուականութիւն
տոհմին ոչ միայն ազատ չառնէ 'ի պարտուցն, այլ և խո-
չընդոտն ևս լինի 'ի փրկութիւն անձանց. քանզի առա-
ւել դժուարին գործէ զլրումն պարտուց քրիստոնէու-
թեանն։

Զինչ ասէ անձնասիրութիւն։ Որչափ ազնուազգիք
ծնեալ եմք, ասէ, այնչափ և առանձնաշնորհութիւն
պարգևեալ է մեզ 'ի պահպանութեան ինչ ինչ դժուա-
րին օրինաց աւետարանին. չեմք մեք այնչափ պարտա-
կանք ատել զաշխարհ, բառնալ զիսան, այնչափ պնդա-
պահ լինել 'ի պահս զոր օրինադրէ եկեղեցի։ Թոյլ է
մեզ, ասէ, զոռոզանալ 'ի հրամանատարութիւնս մեր,
սրտնեալ քինահան լինել յանարգանս մեր. թոյլ է մեզ
և 'ի դէպս դէպս մերթ կեղծաւորել, մերթ խորամանկել. նաև հեշտութիւնք չեն մեզ այնչափ արգելեալք։
Այլ ապա ըստ այսոցիկ սկզբանց առնեն և զքննութիւն խղճին։

Իսկ որ ըստ առաջնորդութեանն է և գահախնդրութեան, հրահանգէ աւետարանն, եթէ "Ոչ գիտէք,
զի որ յանուան իշխանքն են ազգաց տիրեն նոցա և մե-
ծամեծք իշխեն նոցա։ Ոչ այնպէս իցէ և 'ի ձերում մի-
ջի, այլ որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել, եղիցի ամե-
նեցուն ծառայ. և որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել եղիցի
ձեր պաշտօնեայ.,։ Որ 'ի ցանկալ գահու, բայց առ 'ի
պաշտպան կալ հնազանդելոցն, սպաս հարկանել օգտա-
կար առաջնորդելոցն. մի ամբարտաւանել յառաջնոր-
դութեանն, այլ մանաւանդ յաւելուլ 'ի խոնարհութիւն
սրտի։ Այս է աւետարանն։ Այլ զինչ ասէ անձնասի-
րութիւնն. և չիցէ երբեք մեզ թոյլ յօրանալ գրգել
'ի բարձի առաջնորդութեան մերոյ, յոր ամբարձ զմեզ
Աստուած. ապա թէ ոչ, զինչ պէտք իցեն մեզ այնպիսի
առաջնորդութեան, յորժամ ամենեցուն ծառայ և պաշ-
տօնեայ հասանիցէ լինել մեզ առաջնորդացս։ Ոչ ահա
զպարտս վիճակին մերոյ և զբարձին պարտ է չափել 'ի

digitised by A.R.A.R.@

սովորութենէն, և ոչ 'ի հրահանգաց ինչ. յոր ինչ սովորեցան մեր նախորդք, 'ի նոցն ընթացուք և մեք։ Օ այս ասեն և չածեն զմտաւ եթէ զինչ պարտ էր առնել նախորդաց նոցա ըստ աւետարանին, և չարարին. և զնոցայն անձանց իւրեանց իբրև նոցուն յաջորդաց օրէնս կարգեն, իբրու զաւանդութիւնսն կալեալ զծերոց և զփարիսեցւոց ընդդէմ աւետարանին։ Այլ ապա ըստ սկզբանց այսոցիկ մնացին և նոքա 'ի քննութիւն խըղձին իւրեանց։

Իսկ որ ըստ ընչաւետութեանն է, հրահանգ այս է մեզ յաւետարանէն, եթէ չեմք մեք տեարք տիրապէս ընչից մերոց և ամենայն ստացուածոց, և որ էսն զնոցն կարող է և 'ի վայրկենի 'ի բաց առնուլ. և թէ մեր յաւելուածն 'ի գոյից՝ մասն և բաժին է աղքատաց. և մեր ընչաւետութիւնս զոր էտ մեզ Աստուած, չէ 'ի շռայլութեան սակս և փափկութեան կամ թէ ագահութեան, այլ սատար և առիթ պարտի լինել փրկութեան մերոյ ջամբելով 'ի պէտս կարօտելոց, և սերմանելով առատութեամբ, զի և առատս հնձեսցուք. և թէ միայն աւետարանն և ոչ աշխարհ պարտի զմեզ հրահանգել 'ի բարեվայելչութիւն վիճակի կենաց մերոց և 'ի չափաւորութիւն վայելից։

Իսկ անձնասիրութիւնն զայս ասէ։ Այլ զինչ բնաւ մեզ այնուհետև աւելի իցէ յընչաւետութենէս, յորժամ և անինչքն և աղքատք մեզ բաժանորդք կայցեն, և մեք չվայելեսցուք առատապէս, հանդիցուք, կերիցուք, արբցուք և ուրախ լիցուք հանապազօր։ Այլ սակայն և տացուք մեք ինչ մի և աղքատին, այնչափ զի մի սովամահ լինիցի. և ընդ՞էր համարեսցին մեզ մեղք շռայլութիւն յորժամ ըստ չափու եկամտիցն առատութեան զոր առաքէ մեզ Աստուած, զրկասցուք մեք յամենայն վայելս ըստ սովորութեան յաւիտենիս այսորիկ. զինչ խիղճ կայցէ 'ի բանիդ։ Օ այս խորհին, և ապա ըստ թելադրութեանցս այսոցիկ առնեն նոքա զքննութիւն խղճին, և այնպէս գնան 'ի խոստովանութիւն։ Իսկ որ ըստ սովորութիւն աշխարհի է, զայս քարոզէ աւետարանն, եթէ հանդերձեալ է մեզ դատիլ 'ի Քրիստոսէ ոչ ըստ սովորութիւն կարգելոց յաւիտենիս այսորիկ, այլ ըստ պատուիրանացն աւանդելոց 'ի Քրիստոսէ։

digitised by A.R.A.R.@

Այ թէ օրինակ քաղաքավարութեան մարդկան թէպէտ և համաշխարհական, ոչ արդարացուցանէ զյանցաւորութիւնն զոր օրէնք Աստուծոյ դատապարտեն։ Այս զի ընդ հակառակն ճանապարհ բազմութեանն լայն է որ տանի 'ի կորուստ, որպէս վճռեաց տէրն։ Աւետարանն զայս ասէ։ Այլ անձնասիրութիւնն զիարդ, ասէ, մեղք երբէք համարեսցի այն ինչ, զոր հասարակ հաւանութիւնն, զոր հասարակաց օրինակք վաւերական գործեն։ Այ զոր ամենեքին կամ բազմագոյնք առնեն, ես ընդէր յետնեալ գտայց քան զնոսա։ Հաւասիկ խմոյ վիճակիս վիճակակիցք, խմոյ հասակիս համատիք այսպէս զգենուն, այսպէս զարդարին, և զնոյն զարդ և զշնորհս յաւելուն 'ի վերայ բնաւորական գեղոյն զոր ետ արարիչն. և որ խիղճ կայցէ ինձ նմանող լինել նոցա։ Հաւասիկ խմոյ աստիճանին հաւասարողք հետամուտք և հնարագիւտք են աւագութեան հասանել եկեղեցական բարձի. առ ինչ և ես զնոյն չկալայց ճանապարհ։ Հաւասիկ առ հասարակ օրինակ զայս վարեն վաճառականք 'ի վաճառաշահս իւրեանց 'ի յարգել զարծաթն իւրեանց. առ իմ և ինձ չիցէ օրէն զնոյն օրինակ գործել. հասարակաց օրինակք՝ կանոնք են գնացից մերոց. կարդ մեր և սովորութիւն մեր՝ է աւետարանն մեր։ Յայսոսիկ սկզբունս հաստատեալ զանձինս, այնպէս անխիղճք առնեն վեր 'ի վերոյ զքննութիւնն. զայն ամենայն արհամարհեալ իբրև անտիկանս իմն և խղճահարականս, և այնպէս գնան 'ի խոստովանել. և անպտուղս գործեն և սոքա զխոստովանութիւնս իւրեանց։ Ոչիք ոք որ քննիցէ զվարս և զխիղճն ըստ լուսոյ հաւատոյն և ըստ հրահանգաց աւետարանին, և այնպէս յայտնեսցէ զմեղսն. ուստի և յեղանակէ անտի խոստովանութեանն որով մեղաւորս դաւանին զանձինս, յայտ առնեն եթէ և ոչ զմեղս իւրեանց զծանուցս ճանաչեն նոքա։

Խսկ երրորդ թերութիւնն 'ի քննութեան խղճի, զի ոչ քննեմք զանձինս 'ի վերայ ամենայն պարտուց մերոց։ Որ իցէ վիճակ կենացդ. արդեօք մարդ առանձին մենակեաց, եթէ անդամ կենակից հասարակութեան որ զինչ և իցէ. արդեօք այր տանուտէր և հայր զաւակաց, եթէ արդեօք պաշտօնատար քաղաքի և առաջնորդ։

Արդ մի միայն զանձնական մեղսդ քննեսցես, այլ

digitised by A.R.A.R.@

համբրէն 'ի վերայ կաց անձին քում, հաւատացեալդ դու։ Լիթէ երբէք տանուտէր հանդիպեցար դու, արդեօք զտուն քո քոյին աստուածպաշտութեամբդ դոր ծեցեր իբրև առտնին եկեղեցի Աստուծոյ իբրու զձիշմարիտ հաւատացեալ։ Ի գլուխ կացեալ որդւոց քոց և ընտանեաց, կրթեցեր յաղօթս առ Աստուած առաւօտին և երեկոյին, դաստիարակեցեր որպէս արժանն է՝ խրատուքդ և գեղեցիկ օրինակաւդ զորդիս քո, 'ի հաւատս ճշմարիտ, 'ի բարեպաշտութեան և յառաքինութեան և 'ի գործս քրիստոնէական պարտուց։ Յարբունս հասեալ որդիքն քո, յընտրութեան վիճակի նոցա առաւել զշնչն հոգւոյ նոցա խնդրեցեր, եթէ զառժամանակեայ օգուտ քո կամ զգերդաստանիդ։ Լաղեր դու արդեօք իբրև հովիւ խնամնակալու՝ որոց միանգամ 'ի տան քում՝ ծառայից և ընտանեաց, այլոլիքն հանդերձ։ Ա՞ւր գտցուք մեք որ 'ի քննութեան խղճի մանրամասին համար պահանջեսցէ յանձնէն ըստ թելադրութեան հաւատոց։

Պա եթէ առաջնորդ քաղաքի կամ պաշտօնատար կարգեալ է քո, քննեա զանձն քանիւ թերացեալ է քո 'ի պաշտամանդ 'ի միաս ընդ քև հպատակելոցն, որ ըստ յուլութեանդ իցէ կամ որ ըստ անմտադրութեան, որ ըստ տկարութեանդ իցէ կամ որ ըստ տարապայման զիջողութեանդ, որ ըստ անխոհեմութեանդ իցէ կամ որ ըստ սաստկապահանջ խստութեան. որ ըստ աչառութեանդ իցէ կամ որ ըստ շահախնդրութեան անձինդ, և որ այլ ևս։ Յորոց որչափ ինչ մեղք ծնանիցին կամ տոյժք հոգւոց և մարմնոց հնազանդելոցն, արդարադատն Աստուած զամենայն քեզ համարեսցի 'ի մեղս։ Իսկ եթէ անդամ ես դու կենակից ինչ հասարակութեան, քննեսցես զանձն եթէ արդեօք 'ի շինութիւն 'ի բարի օրինակ գտար դու ընկերացդ բարեզգեաց բարուքդ և անմեղանչական քաղաքավարութեամբդ ըստ քրիստոնէական կարգի։ Արդեօք զայնագղեցուցեր զոք սանձարձակ գնացիւքդ 'ի ցոփութիւնս, 'ի պագշոտութիւնս, կամ ապերասան ելեւաւդ 'ի շոգմոգութիւն, 'ի չարախօսութիւն, 'ի ստութիւն, 'ի բամբասանս, 'ի խեղկատակութիւն, 'ի յիշոցատուութիւն, ընդունայն երդմունս, 'ի թերահաւատութեան կամ յանհաւատու-

digitised by A.R.A.R.@

թեան զրոյցս, այլովքն հանդերձ։ Խաբէ, քանիսն ի-ցեն խոլք սրտի, և ո՞ոք միջամուխ լիցի 'ի նոսա։

Սոքա են աւադիկ բազմութիւն կուրաց աւետարանին. անկեալ կան առ ամն աւազանիս մերոյ և անբուժք լքեալք 'ի Քրիստոսէ։ Այլ զինչ այնուհետև զարմանք իցեն, եթէ քաղաքավարեալքն ըստ ունայնութեան կենցաղոյս, թէպէտ և հանապազօր դեղերին 'ի դատարկասուն կենակցութիւնս, թէպէտ և անկեալք 'ի վտանգս դժպատեհ բարեկամութեանց, թէպէտ և միշտ 'ի զուարճութիւնս թարթափեալք անչափաւոր խաղուց, թէպէտ և մոլեալք յունայնասիրութիւն զարդուց պճնութեանց, թէպէտ և 'ի կիրս գերեալք փառասիրութեան և հպարտութեան, թէպէտ և անժուժկալութեամբ անմաքուրք, և 'ի զեղխութիւնս շուայտեալք հանապազ ինձոյից և խրախճանաց, 'ի վերայ այսր յորժամ գան նոքա առ մեզ 'ի խոստովանութիւն 'ի բանալ զվերս հոգւոց իւրեանց, որովհետև կոյրք են, գոգցեա գտանեն և ոչ ինչ 'ի խոստովանել, կամ թէ հազիւ գտանեն ինչ մի ասել մեզ և ամբաստանել զանձանց, և զայն մի կամ երկու բառիւք. և ողջոյն զմիոյ տարւոյ զպատմութիւնն զաշխարհասէր կենացն՝ այնչափ ինն 'ի հանառօտ ժամանակի վճարեն, որ հազիւ բաւական իցէ 'ի պատմել զյանցաւորութիւնս զմիոյ միայն զաւուրն։ Այս պակասութիւն է լուսոյ արտասուելի ճանաչել զանձն 'ի քննութեան խղճի. որով առաջին՝ յոչ ինչ պիտանացու է խոստովանութիւն նոցա. "Խազմութիւն, ասէ, կուրաց,,։ Այլ է և երկրորդն՝ պակասութիւն անկեղծութեան 'ի խոստովանութեան մեղացն, զի կաղան 'ի գնացս. որպէս ասէ, "Խազմութիւն կաղաց,,։

ՄԱՍՆ Բ.

Ոչիք ինչ առաւել անբմբերելի մարդոյ, որպէս խոստովանել զանձն յանցաւոր։ Հպարտութիւն տիրացեալ 'ի բնութեանս ոչ թողու գիտակցութեան մերում առակել զմեզ այնպիսի՝ որպիսի եմքս. զի մի յանկարծ բնաւ

իսկ անարգք և արհամարհք երևիցիմք մեք։ Զ՝ան որոյ և բնաւորապէս բերիմք վեր 'ի վերոյ անցանել զներքին գիտակցութեամբն, և մեր կեանքս ողջոյն գոգցես է հանապազօրեայ ինն կեղծաւորութիւն. յամենայն գործս մեր միշտ իբրու յայլ մարդ կերպարանիմք մեք. և որ մերն երևի կենդանագիր չէ մեր։ Զ՝այս վիճակ է մարդոյ. ծնեալ նա միանգամ աղքատ հպարտ, չմարթի յերևանի հանել զանձն պանծանօք, բայց թէ ցուցանելով զանձն այլազգ քան զոր էն։

Զ՝ԼՐ առաւել արտասուելին է, զի և մինչև 'ի սրբարան և 'ի խորհրդական խոնարհութիւնս մեր միջամուխ 'ի ներքս մտանէ հպարտութիւնս մեր։ Զ՝ե է իսկ բազում անգամ խոստովանութիւն մեղացն մանաւանդ արուեստ և հնարագիտութիւն նզովելի առ 'ի քօղարկել զնոսա, քան եթէ խոստովանութիւն։ Զ՝անզի և մինչև առ դուրս ատենին Զ՝ըիստոսի ուր գնամք 'ի յայտնել զխիղճ մտաց առաջի երեսփոխանին Զ՝աստուծոյ քահանայի, նաև անդանօր ևս կեղծաւորիմք։ Զ՝այս բազմութիւն է կաղաց մեղաւորաց անկելոց առ Պլրոբատիկեայ աւազանին. կաղք զի ուղիղ չգնան 'ի Ճանապարհս տեառն, և ոչ ուղղութեամբ և պարզութեամբ սրտի մերձին 'ի լոգարանն սրբութեան առ 'ի մաքրիլ։ Զ՝անզի կիսով չափ միայն բանան զխիղճ մտացն, և կարծեն զայն շատ 'ի յայտնութիւն. բանին մեղք, զի այսպէս ասացից, բանին մեղք և ծածկի մեղաւորն։ Զ՝ըդ զայս պակասութիւն անկեղծութեան 'ի խոստովանութիւնս այսչափ սովորական, գտանեմք մեք առաջին 'ի բացայայտութիւնսն որ կիսամանեայք են և շիոթք։ Զ՝երկրորդ յառիթսն և 'ի պատճառս գործոցն զոր ծածկեմք։ Զ՝երրորդ 'ի տարակուսականսն ինչ, որ բազմադիմիք գոլով մեք զշահաւորն մեզ ընտրեմք զդէմսն։

Զ՝ արդ առաջին պակասիմք 'ի բացայայտութիւնս մեր, յորժամ 'ի պատրաստել զմեզ 'ի խոստովանութիւն, քան զքննութիւն մեղաց առաւել նստիմք 'ի խորհել եթէ որով հնարագիտ և քօղաձիգ եղանակաւ ասացուք մեք քահանային զմեղս։ Զ՝ամօթալի վիրօք մերովք յոյժ հարևանցի անցանեմք՝ երկոքումբք միայն բառիւք հաղիւ տալով քահանային ժամանակ 'ի խելամուտ լինել այնմ։ Զ՝ռեմք ասել զպարագայս ինչ, զոր

կամ ծանրացուցանեն զնոյն մեղն կամ որք փոխեն զտեսակ մեղայն և 'ի մեծ եղեռն դարձուցանեն զնոյն մեղն. իսկ և զայն ամենայն հանդամանսն որ առաւել առակեն զմեր սիրտն և զապականութիւն վարուց մերոց. ջանասք ծածկել. կամ պատ 'ի պատ բացատրութեամբք վարեմք զայնպիսի բառս, որ թէպէտև զմեր գործն յայտնեն, այլ ոչ և զմեր սիրտն։ Եւ կարեմք մեզ տերևս թզենւոյ իբրու զնախահայրն մեր՝ ծածկել զմերկութիւն մեր առաջի այնմ որում պարտ էր տեսանել զմեզ այնպիսի որ պիսի եմք։ Եւ կամ թէ զառաւելութիւն ինչ զմեր իբրու զաղնուատոհմութիւն, զբարձ աւագութեան, զփառաւորութիւն հանրաւոյն և զայլն ևս, որպէս թէ թեւացուցիչս մեղայ մերոյ առաջի արկանեմք 'ի խոստովանութեան մերում. զընդունայնութիւնս կենցաղոյս մեծ համարելով, որ բարձր առնեն առաջի մարդկան և պիղծս առաջի Աստուծոյ, և զորս ենն 'ի մեզ առանց մեր՝ այլոց դասելով քան զառնթ և զցաւ մեղայ որ մեր բունքն են։

Եւ վերջէ ուրեմն առ 'ի քօղարկել ողջոյն զմեծ անարգանսն վասն բազմաժամանակեայ չար ունակութեանցն ստէպ ստէպ փոխեմք զխոստովանահարս. որպէս զի միշտ նորոգալուր վկայս ունիցիմք մերոց վատթարութեանց և մի առակեսցի հնութիւն ապականութեան մերոյ։ Այր դու, ոչ 'ի բժշկութիւն վիրաց քոց երթաս առ ոտս հոգևոր բժշկին, և զիարդ ոչ անմտութիւն իցէ բանդ. զփորձն 'ի վարս քո և զծանօթն սրտին քո զբաղմամեայ բժիշկդ թողուլ և յանփորձն և յանծանօթն դիմել։ Այս ինձ, անմտանաս զնոյն անմտութիւնն առ մարմնոյ բժիշկս։ Այս ուրեմն չերթաս դու յապաքինութիւն վիրաւոր հոգւոյդ։ Եւ եթէ զվկայդ փոխես, փոխեցեր արդեօք և զՔրիստոս. միշտ անդանօր կայ Քրիստոս. միշտ երեսփոխան Քրիստոսի նստի անդ քահանայն ո՞ք և իցէ, եթէ հինն և եթէ նորն. Քրիստոս ճանաչէ զքեզ որչափ ոչ դու ինքն զքեզ. նա միշտ վկայ անելեւոյթ կայ անդանօր ծածուկ պատմութեան կենաց քոց, զոր 'ի սրտի քում ընթեռնու իբրու 'ի մատեանի մերկապարանոց առաջի նորա. և յորժամ դու պատ 'ի պատ զրուցիւքդ կարծես ծածկել զքեզ յանծանօթս 'ի նմանէ, նա ծիծաղի զծիծաղելի ճգամբ քո։

digitised by A.R.A.R.@

Ազգրիտ քեզ օրինակ առ զպատմութիւնն աստուա-
ծային. յորժամ կինն Յերոբովամու երբեմն ծպտեալ և
այլակերպեալ մտանէր առ մարգարէն Ա.քիա, կարծէր
խաբել զայրն Ա.ստուծոյ, անդուստ Ա.քիա վաղ ընդ
փոյթ խայտառակէր զհաղորդն. "Ա՝ուտ, մուտ ասէ կին
Յերոբովամայ, ընդէր ի՞նչ այդ՝ զի յանծանօթս լինիս.,,։
Ա՝վհոգի անարժան խմոյս տեսութեան, ասէ Ա.ստուած,
ցոյց զքեզ այնպիսի որպիսի եսդ, և որպիսի ես զքեզ
ճանաչեմ։ Ա.նմիտ, կարես խաբել զմարդ, այլ ոչ և զսրբ-
տագէտն քո։ Ա.յ առաւել ևս անմիտ յորժամ զբու-
նեալն 'ի քեզ զբազմամեայ ապականութիւն վարուցդ
խնդրես ծածկել 'ի մարդոյ, յորմէ միայն մարթասցիս
զու առնուլ զբժշկութիւն քո և զփրկութիւն. "Ա՝ընդէր
ի՞նչ այդ, զի յանծանօթս լինիս.,,։

Իսկ պակասիմք երկրորդ 'ի խոստովանութեան մե-
ղում, զի չասեմք զսկիզբն և զպատճառ գործոյն։ Սիրտ
մեր է սկիզբն և պատճառ, յորմէ գործք մեր ամենայն
առնուն զբարութիւն կամ զչարութիւն։ "Ա՝արդ բա-
րի, ինքեաց տէրն, 'ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ
զբարի. և մարդ չար 'ի չարէ բղխէ զչար.,,։ Սրպիսի
են 'ի ներքս 'ի մեզ գործք, այնպիսի երևին առաջի
Ա.ստուծոյ. 'ի ներքս 'ի սրտին է յարգ ամենայն գործոց
մերոց։ Սուրբ և անարատ է դշխոյն Ա.սթեր, թէպէտ
և ամենայն զարդուք փառաց արքայութեանն պրճ-
նայարդար է նա յաւուրս հանդիսից յարքունիս հե-
թանոսաց. քանզի ամենայն շուք աշխարհական պիղծ
է յաչս նորա, և սիրտ նորա ազատ է և մաքուր։ Յան-
ցաւոր է և պիղծ լինեալն Յեղաբէլ. կարկառեալն ընդ
պատուհանն 'ի զարդս լիտիս և 'ի պչրանս։ Ա՝նդ Սո-
ղոմոն յերևանի կացեալ յանդիման տիկնոջն Ա՝ապայ
ամենայն փառօք արքայութեանն և հոյակապ հանդեր-
ձանօք տաճարին, ոչ լինչ սրտնի Ա.ստուած. քանզի
յամենայնի յայնոսիկ ուշ նպատակի ունի զփառս Ա.ս-
տուծոյ Իսրայէլի, և չնորհապարտ զանձն ընծայէ
բազմապատիկ երախտեաց նորա։ Արտմոն Ա.ստուած
ընդ Ա.զեկիա Ճոխացեալ անձնացոյցն առաջի հրեշ-
տակացն Ա՝աբելնի ընդ բազմահարուստ գանձս
տաճարին իւրոյ։ Սիրտն է դատաւոր և սահմանիչ
ամենայն գործոց մարդոյ. և սակայն զայս սիրտ գող-

digitised by A.R.A.R.@

ցես երբէք ոչ յայտնեմք մեք 'ի խոստովանութեան մերում։

Լ. զի խոստովան լինիս, եթէ ինասեցեր բամբասանօք համբաւոյ եղբօր քո. այլ չասես եթէ և ընդ ամենայն բարիս և փառս նորա դժկամակ են միտք քո և սիրտ քո. և ամենայն դառնութիւնդ և ամենայն չարախօսութիւն լեզուիդ 'ի դձձել զնա, ծնունդք են անձնասիրութեանդ և փառասիրութեանդ և յաչաղանաց մախացող սրտի քո։

Լ. է դարձեալ զի խոստովան լինիս զսրտնութիւն քո և զանսիրելութիւն քո երբէք ընդ ամուսնոյդ. այլ չասես մեզ զպատճառն, եթէ որովհետև սիրտ քո զհետ զակատեալ է օտարին բերկրութեանց և աշխարհին հրապուրից և դժպատեհ կրից, վասն այնորիկ տաղտկանան և դառնանան քեզ առտնինքն։

Լ. զի դարձեալ խոստովան լինիս ունել քեզ ցանկութիւն անպատեհ և ապստամբութիւն ևս զդաս մարմնոյդ. այսչափ միայն խոստովան լինիս և զկայ առնուս։ Լ. առ իմ չասես մեզ զայն, եթէ ողջոյն քո սիրտ զակատեալ է զհետ անձինն՝ յորոյ 'ի սէրն հարեալ է քո, և ամենայն ջանք քո և խորհուրդք և ամենայն գնացք քո 'ի նա ուղղեալ են և նովաւ վարակեալ։ Լ. թէ 'ի մէջ առթից կեաս, որ զնոյն տածէն, և ամենայն վատթարութիւն կենացդ յայնց կրից առեալ է ծագումն։ Լ. եթէ զայս չյայտնես, և զիարդ այնուհետև հայր խոստովանութեան քո և բժիշկ հոգւոյ քոյ մարթասցի ճանաչել զվիճակ սրտի քո, և ըստ նմանէն զգեղեցիկ դարման բժշկութեան 'իվերայ ածել։

Լ. ամ՛բէ, ստէպ յոյժ պէտք են քահանային ճշնել և ինքնին գուշակել զվիճակ հոգւոյդ և յինչ ինչ սրտայայտութեանց որ եւանեն 'ի բերանոյդ՝ ճանաչել զխորս սրտիդ։ Պէտք են զի միայն տեսանելով զքեզ 'ի ծանօթս գայցէ բազմամեայ ախտաւորութեանդ. ըստ որում փրկիչն զերեսունևութամեան զանդամալոյծն։ "Օ՝նա իբրև ետես Յիսուս, ասէ ցնա, կամիս ողջ լինել։" Լ. այլ զինչ օգուտ. նա գուշակէ, դու չասես. քեզ ինքնին պարտ էր յայտնել. ուստի և հարկ իցէ այնուհետև քահանային ճշգրտիւ զննել զերակունս քո իբրև ճարտար բժիշկ, զի մի խարդաւանեսցի ինչ 'ի քէն

digitised by A.R.A.R.@

'ի պահուն, յորում պարտք նորա և գործ միակ այն է յառողջութիւն վերածել զախտացեալ հոգիդ։

Պակասիմք երրորդ անգամ 'ի խոստովանելն. զի չեմք անաչառք և 'ի տարակուսական միշտ զմերն խնդրեմք շահ. և առ 'ի հանդարտել զխիղճ մեր, գամն և հնարագիտութիւնս նիւթեմք 'ի հանդարտել և զխիղճ խոստովանահօրն։ ( )րինակ իմն. յորժամ հեռանալ չկամիմք յայն ինչ առթից մեղաց, չլուծանել զայն ինչ գայթակղական բարեկամութիւն, յորժամ չկամիմք միսանգամ յօդել սիրով զայն ինչ գայթակղեցուցիչ բաժանումն զամուսնաց 'ի միմեանց յորժամ չկամիմք դադարել յայն ինչ անիրաւ շահուց վաշխառութեանց։ Յայս ամենայն թէպէտ և տանջիմք ևս 'ի խղճէ, սակայն բիւրս իմն հնարիմք 'ի խոստովանութեան 'ի հանդարտել զխիղճն. առ իւրաքանչիւր դէպն յառաջ բերեալ կամ զանկարութիւն, կամ զանպատշաճութիւնս, կամ զազգակցութիւն, կամ զպէտս գերդաստանին, կամ զթեթևութիւն վտանգին, կամ զհովութիւն կրիցն, կամ զշուք պատուոյն մերոյ, կամ զկորուստ համբաւոյն, կամ զառժամայն հանդարտութիւն խղճին, կամ զնուազութիւն գայթագղութեան, կամ զթոյլտուութիւն օրինացն, կամ զհեղինակութիւն օրինակացն, և զայլն ևս։ Եւ այնչափ ինչ հնարիմք, և այնչափ ինչ ասեմք, մինչև և զխոստովանահայրն պատրել և հաւատարմացուցանել, և տալ նմա մի ևս այլ այնչափ պնդիլ 'ի վերայ պատուիրանին Քրիստոսի, եթէ հան 'ի քէն խլեա զակն գայթակղեցուցիչ, և հատ 'ի քէն ընկեա զձեռն գայթագղեցուցիչ։ Եւ այնպէս իբրու հանդարտեալ խղճիս եւանես յատենէ խոստովանութեանն, իբրև ըզխաբուսիկն Ա'եղբող'պաձուձասպատանս եղեալ 'ի վերայ մահճացն և լեարդ այծեաց և կծիկ մազոյ 'ի մնարան, ծածկեալ հանդերձիս, ոչ ցուցանես խոստովանահօր քում զշնմարիտն Դաւիթ, զքեզ ինքդ։

Ա. Յղենչ շահ օգտի, ասա ինձ անաչառ քրիստոնեայդ, զինչ շահ օգտի հոգւոյ քում յերբեակ խակութեանց աստի 'ի խոստովանութեանդ. միթէ հանդարտեցան խիղճք, միթէ զկորուսեալ խաղաղութիւնն եգիտ միւսանգամ հոգին, առ ինչ տակաւին քո ամբոխեալ ալեկոծեալ կայ սիրտ. առ ինչ տակաւին քո այնպէս

digitised by A.R.A.R.@

զառնացեալ են կեանք. արդեօք երբէք երբէք քո ոչ ձայն տայ գիտակցութիւն և կտտէ զքեզ վասն այնչափ կեղծաւորութեանցդ'ի խոստովանութեան, վասն այնպիսի լռութեանցն'ի կարևորսն։ Ո՞չ անմտութիւն է բանն, պահե՛լ'ի ծածուկ, տածե՛լ'ի ծոցիդ զորդունսն որ զքեզն կտտիցեն, և ոչ թօթափել միանգամ զնոսա արտաքս յերևան լուսոյն՝ զի սատակեսցին։ Ո՞չ անմտութիւն իցէ բանն, վայրիկ մի բուռն չառնել անձին քաջութեամբ և յաղթել անբանաւոր ամօթոյն, և զրկել միշտ զսիրտ քո'ի հանապազօրեայ խաղաղաւէտ անդորրութենէ անկեղծաւոր խոստովանութեան։

Օ՜ինչ երկիւղ իցէ, կամ՞ որ խէթ, այր դու, զի ոչ պարզ և անկեղծ ասես մեզ զպատմութիւն թշուառութեան հոգւոյդ։ Վերևս զի զյարդ բարեբաւութեան անձինդ կորուսցես առաջի մեր պատմութեամբդ'ի խոստովանութեան։ Յ՚ատեան խոստովանութենն՝ ատեան է միայն Յ՚ստուծոյ. անդանօր առ ոտս քահանայիդ յարդ անձինդ չմարթի ոչ նուազիլ և ոչ առաւելուլ. որ ինչ եսդ, այն ես առաջի Յ՚ստուծոյ։ Ո՞չ գիտես, եթէ անդանօր մեք նստիմք երեսփոխանք Քրիստոսի. անդ մեք ոչ տանիմք ընդ մեզ զմարդոյ ոչ զլսելիս, ոչ զզգայութիւնս, ոչ զմտնդութիւնս. ուստի և դու չմարթիս ասել մեզ անդանօր ինչ մի որ ընդոստուցանիցէ և խռովեցուսցէ զմեզ։

Բաբէ, մեք ինքնին բժիշկքս'ի մեր փորձոյ քաջ իսկ գիտակք եմք ապականութեան սրտի մարդոյ. և մեք ինքնին տանիմք'ի մեզ զաղբիւրս զնոցուն տկարութեանցն, ոյց աղագաւ զամօթի հարեալ է քո առաջի մեր։ Յ՚խտակիցք եմք, կարեկիցք եմք, գթամք և դորովիմք, նաև արտասուեմք ևս, որչափ առաւել դու զթըշուառութիւն հոգւոյդ բանաս առաջի մեր անկեղծութեամբ։ Մեք առաւել ճգնիմք վասն այնորիկ'ի նա խանձ փրկութեան հոգւոյ քոյ. մեք առաւել ևս մտաղթեմք առ Յ՚ստուած վասն քո, տալ քեզ շնորհս առատութեամբ այնչափ՝ որչափ առատացան մեղք։ Որ զփորձ առեալ եմք, կարող եմք և փորձանաւորացն օգնական լինել։ Ունիմք անփորձք, չլինիմք ոանհար, զտեղի ունիմք Քրիստոսի պաշտօնեայքս. նա բազում քաղցրութեամբ ընդունէր զմաքսաւորս, ժողովէր ըզ-

digitised by A.R.A.R.@

մեղաւորս։ Լ՝հաւասիկ քեզ գործ սպասաւորութեան մերոյ։

Լ՝այց և անկեղծութիւն՝ի խոստովանութեան միայնակ չէ բաւական սիրելիք՝ի թողութիւն մեղաց. պէտք են անհրաժեշտ և՝ի սրտէ ատել զմեղս, որով վրշտացուցաք զ՝ստուած, և զղջալ և ցաւել։

ՄԱՍՆ Գ.

Ո՝ր ցայս վայր լուայք վասն խոստովանութեան, ամենայն հանդերձանք են արտաքինք խորհրդոյ ապաշխարութեան. այլ զիղջ և ցաւ է հոգի նորա և ՀՇմարտութիւն նորա։ Ո՝օրութիւն խորհրդոյս բաւական է ընուլ զթերին զարտաքին խոստովանութեանն, արդեւլեալ յանկամաւոր խոչընդակէ. բայց ոչ զնեբքնոյն՝որով ատեամք զմեղս, յորում հաստատեալ է խորհուրդ ապաշխարութեան։ Ո՝ամենայնին զթերին ընու՝զիղջն և ցաւն. բայց թերին ցաւոյն երբէք ոչ ընանի՝ բայց՝ի ցաւոյն։

Լ՝ու սակայն չիք ինչ առաւել դժուարագիւտ՝ի մեղաւորս եկեալս՝ի խոստովանութիւն՝քան զցաւ ապաշաւանացն, որում միայն խոստացեալ է թողութիւն մեղաց։ Լ՝ու աւասիկ քեզ երրորդ ազգ հիւանդաց պրոբատիկեան աւազանին, առ որով անկեալ դնի բազմութիւն դօսացելոց, յորոց և ոչ մի ոք եդիտ բժշկութիւն՝ի Լ՝ուրիս տոսէ։ Դ՝օսացեալք են, քանզի դան առ մեզ յատեան խոստովանութեան, այլ սիրտ նոցա է ամենևին չորացեալ, և ցամաքեալ, և հոգի բոլորովին անզգայ, անշարժ յապաշաւանս, անշարժ՝ի զիղջ և՝ի ցաւ։

Լ՝ու քանզի կարի՝ վտանգաւոր են խաբանքն՝ի մասին յայսմիկ, յորժամ մարդ մեղաւոր՝ի խոստովանել իւրում համարի՝ի միտս ունել զցաւն՝որ բաւական իցէ յարդարութիւն մեղաւորի. վասն որոյ և կարևոր յոյժ է գիտել քաջ, յինչ հաստատեալ իցէ այս ցաւ մեղաց՝ սրբարարն և կենագործն։

Լ՝այս ցաւ, քաջ միտ դիք սիրելիք, այս ցաւ շարժումն է աստուածային շնորհացն, և ոչ բնութեան։ Լ՝այս շար-

digitised by A.R.A.R.@

ժուն յուզեալ'ի խորհուրդս մեր'ի գարշութենէ մեղաց մերոց, է անշուշտ գործ անհերևոյթ հոգւոյն Աստուծոյ, որպէս սահմանեցին հայքն սուրբք, որով ատեանք զմեղս։ Այլ հաւատոյ՝ որ ակնեարև ցուցանէ մեզ զթշնամանան՝ առ Աստուած՝ որ'ի մեղաց, և զթշուառութիւն հոգւոց մերոց։ Այ և սկիզբն նորոյ սիրոյն առ Աստուած, որ աղբիւրն է ամենայն արդարութեան։ Զ՚վ զիարդ գեղեցիկս'ի պրոբատիկեանն տպաւորեցաւ այս յուզումն և շարժումն խորհրդոց'ի մեղաւորն. "Հրեշտակ տեառն, ասէ, ըստ ժամանակին ինքանէր յաւաղանն, և յուզէր զջուրսն. և որ նախ'ի շարժումն ջուրցն ինքանէր, բժշկէր"։ Օ՚նոյն օրինակ հոգւոյն Աստուծոյ՝ աղբեր սիրոյն՝ պէտք են ինքանել'ի սիրտս մեր։ Բանց սիրոյ չէք ցաւ, սիրելիք, և առանց ցաւոց չէք թողութիւն մեղաց։ Օ՚այս շարժումն սքանչելագործ, զայս յուզումն կենարար պարտ է հոգւոյն ներգործել'ի մեզ և դարձուցեալ զսիրտ մեր առ Աստուած. այլ ամենայն շարժումն՝ որ յուզումն է մարդկային՝ բնաւ իսկ անպիտան է'ի բժշկութիւն հոգւոյ։ Օ՚շարժումն ուրեմն զայս զհոգւոյն Աստուծոյ'ի սիրտս մեր՝ մի երբէք սիրելիք, մի երբէք զանց արասցուք մաղթել սրտեռանդն, յորժամ պատրաստիմք'ի խոստովանել. "Դարձ՚ զմեզ տէր, և դարձցուք առ քեզ"։ Հոգին Աստուծոյ է աղբիւր սիրոյ, առ նա դիմեսցուք՝ արտասուօք առնուլ ըստէրն Աստուծոյ. "Վանդի սէրն Աստուծոյ, ասէ, սիրեալ է'ի սիրտս մեր՝'ի ձեռն Հոգւոյն սրբոյ՝ որ տուաւ մեզ"։ Այս թէ ոչ՝ այլն ամենայն որպէս ասացի՝'ի մարդկայնոց աստի շարժմանց ոչ բացցէ մեզ զդուռն ողորմութեանն Աստուծոյ, և ընդ նմին զդուռն արքայութեան։

Վանդի և տեսանեմք զբազմադոյնս յապաշխարողաց եկեալս առ մեզ՝ իբրև միջաբեկս և սրտաբեկեալս։ Այլ այս սրտաբեկութիւն ծնունդ է անձնասիրութեան, և չէք նորա մասն և բաժին ընդ հոգւոյն Աստուծոյ։ Այն և այլք՝ որ իբրու ցաւ ապաշխարութեան համարին զծածուկն զայն իւրեանց զշարժել և զվրդովել, որ ծնունդ է հպարտութեան, որ տագնապէ զնոսա և զիմամարտի առ'ի վեր հանել զմեզս առ նզովելի ամօթոյն իւրեանց։ Շ՚փոթեն սոքա զհպարտութիւն

digitised by A.R.A.R.@

իւրեանց ընդ ապաշաւանաց իւրեանց. զատելութիւն և զդիմամարտութիւն խոստովանութեան՝ ընդ ցաւոց մեղաց իւրեանց, հպարտք են և վարանամիտք, և կարծեն լինել զղջացեալս և ապաշաւեալս, և չեն։ Զ.յս յուզմունք նեղբինք և վարանմունք ամենայնիք առ 'ի հպարտութենէն՝ չեն չեն կենագործ յուզմունք ապաշխարութեան։

Այն և այլք 'ի մեղաւորաց, որ ցաւ ապաշխարութեան կարծեն զամբոխումն իւրեանց և զյուզումն, որ այն ինքն է ծնունդ միակ յահէ տանջանացն յաւիտենից։ Զոքա առաջի իւրեանց տեսանելով բացեալ զահագին գեհենն դժոխոցն հանդերձ ամենայն տանջանարանօքն, ատելի և գարշելի երևեցուցանեն անձանց զմեզս, ըստ որում միայն են արժանիք յաւիտենական պատուհասին, տագնապին միայն վասն երկիւղին. իսկ սէրն Զ.ստուծոյ՝ զոր դառնացուցին մեղքք՝ մոռացօնք են նոցա։ Զ'որեա եթէ տագնապել դոցա 'ի մեղն, ոչ այլ ինչ է՝ բայց ցանկալ նոցա, իցէ՞ թէ անպատուհաս մնայ ին մեղք։

Զ.յս տագնապել նոցա, որպէս խմաստութեամբ կրնքեաց աստուածայինն Զ.ագոստինոս, նհանջէ զնոսա 'ի մեղանչելոյ, այլ ոչ փոխէ զկամն. երկչոտս և ահաբեկս գործէ զնոսա, այլ ոչ ապաշխարողս յարդարէ. տայ երկնչել 'ի պատուհասէն, այլ ոչ տայ ատել զյանցանս. և գոգցես առ ոչինչ գրէին յանցանելն և զդառնացուցանելն զՍ.ստուած, եթէ ամենայն պատուհաս այն միայն էր նոցա՝ կորուսանել զսէրն Զ.ստուծոյ։

Զ.յլ սակայն և զայն գիտեմք առ հասարակ, եթէ սկիզբն խմաստութեան երկիւղ տեառն. և զի յոյժ պիտանացու է աչօք հաւատոյն տեսանել զգեհեան հրոյն և զիաւարն արտաքին, ուր լալ աչացն է և կրճտել ատամանց, և զի բարի է կենդանւոյն ինքանել 'ի դժոխս առ 'ի սանձ դնել ապերասան կրիցն կենագործ յիշատակաւն։ Այուրբ այս երկիւղ՝ պարգև է հոգւոյն Զ.ստուծոյ. իմ՞ չեն միտք 'ի բաց առնուլ 'ի մեղաւորէն զմիջնորդ զայս փրկութեան. աւանդեալ է 'ի Զ.Քրիստոսէ, քարոզեալ է յեկեղեցւոյ, անդուլ 'ի գործ առեալ է 'ի սրբոցն Զ.ստուծոյ. զոր և մեք յաճախ քարոզեմք ձեզ 'ի բեմն աստի 'ի զգաստութիւն մեղաւորաց։ Զ'անգի

digitised by A.R.A.R.@

դուշնաբեայ է թիւ հոգւոյն այնոցիկ ազնուականաց և վեհապունիցն, որ 'ի սիրոյն միայն Աստուծոյ ցաւեալք՝ դարձցին 'ի զգաստութիւն։ Այս կատարելոյն է վիճակ. առ տկարսն ներողութեան պէտք են. թող՝ գեթ երկիւղիւ գեհենոյն դարձցին առ Աստուած։

Այլ սակայն սէրն հոգի ճշմարիտ ապաշխարութեան և հիմն է նորա ողջոյն. քանզի միայն սէրն՝ որ գործեաց զմեզ մեղաւոր, նոյն բաւական է գործել զմեզ ապաշխարողս. սէրն՝ որ զսիրտ մեր ուծացոյց յԱստուծոյ, նա մարթի դարձուցանել զնա առ Աստուած։ Ոչ կարես, ո՛վ մարդ, միւսանգամ հաշտ լինել ընդ Աստուծոյ, թէ ոչ սկսանիցիս սիրել զԱստուած, գոնեա առաւել քան զայն արարածն՝ որ միանգամ օտարացուցին զքեզ յԱստուծոյ։

Զաւա չառնում՝ 'ի բաց 'ի սրտէ ապաշխարողացն զերկիւղ տանջանացն. այլ զյանցաւորն զայն և զմեղանչականն յօժարութիւն հոգւոյ դատապարտ առնեմ, յորում կան վարակեալք բիւրք ոմանք 'ի մեղաւորաց և դան առ մեզ 'ի խոստովանել. և յօժարեալք են նոքա, զի եթէ գեհեան չէր և չէին տանջանք յաւիտենականք, յօժարեալք են անշուշտ իբրև զանաստուածս քաղաքավարել յաշխարհի առանց հաւատոյ, առանց խղճի, առանց խորհրդոց. որք և զկրօնից հաւատոյն ճանաչեն նոքա ոչինչ այլ՝ բաց զսպառնալիս նորա և զահն, և 'ի ծածուկս սրտից իւրեանց դժկամակեալ սրտին. ընդէ՞ր, ասեն, այնչափ արդարութիւն կայցէ Աստուծոյ, իսկ ընդէ՞ր բնաւ ընդ փոքու հեշտութեանն, ընդ անհանդէպ ինչ բերկրութեան, գեհեան սպառնացեալ է Աստուած և հուր յաւիտենական։

Ո՛չ նուազունք են՝ որ զայս ասեն, մի կարծէք սիրելիք, և ո՛չ մտացածին ինչ է. նա ճշմարիտ է, և յաճախեալ ևս է։ Ի՞ր ահի յաւիտենական տանջանացն գան կուտին և խոնին առ մեզ յատեան խոստովանութեան. և վայրիկ մի աստանօր գարշին տեղի տան 'ի կրկին, և հեռացեալ մեկնին աստի՝ որպէս որ թողեալ լքցէ զգոյս ինչ իւր՝ որ տակաւին սիրելիք իցեն իւր, թէպէտ և մահարերք։ Ամենութիւն բերեալ ճշգրիտ զկնոջն Ղ ովտայ, չատեն զՈդոմ, միայն 'ի բոցակիզմանէ նորա երկնչին և 'ի ծծմբոյն. այլ սիրտ նոցա տակաւին կապեալ է ընդ Սոդոմայ։

digitised by A.R.A.R.@

Հոգի Ճշմարիտ աստուածպաշտութեան մեծապէս է յոյժ սիրելիք, և առաւել դժուարագիւտ, քան զոր կարծեմք. ամենայն հանդերձանք զոգեղէն արտաքնայարդարքը մերոյ պաշտամանն՝ բազում անգամ գնացեալ յանկչին յառաքինութիւնս սուտս։ Այլ որ ինչ միանգամ պատուհասին արժանիք են անչիջական հրոյն, մեք զայնոսիկ միայն համարիմք յանցաւորութիւնս առ Աստուած. իսկ զայլն ամենայն՝ որ միայն ընդդէմ կամաց են նորա, զրեմք առ ոչինչ։ Այլ եթէ կամիցիմք մանր գնել զխորս սրտից մերոց, քաջ իսկ տեսանեմք՝ զի և ոչ սկիզբն մի սիրոյ և ոչ սկիզբն մի շնորհաց տայ մեզ գործել ինչ մի. և մեր աստուածն՝ զոր պաշտեմքս և յորմէ երկնչիմքս, գերհեանն է միայն։

Այլ արդեօք խնդրեսցէ՞ ոք աստանօր, յորո՞ց Ճշգրիտ նշանաց մարթ իցէ զյուզումն աստուածային հոգւոյն՝ի խոստովանութեան որոշել՝ի կրից ամօթոյն՝ որ ծնունդն է հպարտութեան, կամ՝ի կրից երկիւղին՝ որ բնաւ իսկ ծառայական իցէ և գերեաց սեպհական։ Հաւասիկ քեզ նշանն տպաւորեալ յանդամալոյծն պրոբատիկեան. հարցանէ զնա Քրիստոս, «Կամիս ողջ լինել.», մինթէ մարթ ինչ էր տարակուսել ընդ կամն ողջութեան բազմամեայ տանջելոյն։ Սակայն զմեղաւորս հրաւանգէ Քրիստոս հարցմամբն. զի ինքնին նոքա անկեղծութեամբ վկայեսցեն, եթէ Ճշմարտապէս և՝ի սրտէ կամին ողջ լինել. մերկանալ զնոյն մարդն գործովք իւրովք և զգենուլ զնորն ուղղութեամբ վարուց բարեպաշտութեան. քանզի եթէ անկեղծութեամբ կամին ողջ լինել, ապա ուրեմն և անկեղծութեամբ ցաւեալ է նոցա՝ի վերայ մեղացն։

Այլ արդ հարցանեմ՝ քեզ ո՞վ հաւատացեալդ դու. յորժամ առ ոտս քահանային Աստուծոյ դիմեալ է քո՝ի խոստովանութիւն, «Կամիս ողջ լինել.», Արթիս անկեղծութեամբ վկայել զանձնէդ, եթէ Ճշմարտութեամբ կամիս խղել զկապանդ, որ տակաւին պնդեալ ունին զքեզ ընդ աշխարհի, ընդ մոլութիւնդ, ընդ այս ինչ դժպատեհ կիրսդ, ընդ այն ինչ մեղանչական առիթս, և դառնալ սրտիւ առ Աստուած և նոր կապանօք սիրոյն յօդել զքեզ ընդ Աստուծոյ։ Յուշ ածեալ քեզ զՃշմարիտ ապաշխարողն՝ որ՝ի հնումն և որ՝ի նո-

digitised by A.R.A.R.@

բուն. յուշ ածեալ զնոցուն բորբոքումն սիրոյն առ Աստուած, զՀեծութիւնն, զարտասուն, զՀառաչանն, զվեր'ի վայր շնորհազարդեալ սրտին ամբոխել'ի դառնալն ողջոյն առ Աստուած և 'ի փոխակերպիչն ՅԱստուած. զի յայնժամ իբրև սաստիկ հողմով և որոտմամբ ինքանէ հոգին աստուծոյ 'ի սիրտն, որպէս 'ի վերնատանն 'ի դասս առաքելոց։

"Կամիս ողջ լինել,, և հաստատուն առաջադրութեամբ ապաւինեալ է քո 'ի շնորհս Աստուծոյ, 'ի փոփոխութիւն վարուցդ, զարշիլ'ի մեղաց, հեռի կալ յառաքիցն, և 'ի սրտէ ցաւել, արտասուել սիրոփն Աստուծոյ ընդ առաջին յանցաւորութիւնդ. և զՀշմարտութիւն ցաւոցդ և զՀաստատութիւն առաջադրութեանդ ցուցանել և արդեամբք'ի նորոգութիւն կենացդ, և'ի կամաւոր մոռելութիւնս խաչակիրս վասն մեղացդ։

Հուսկ ուրեմն, եթէ Հշմարտապէս ցաւեալ է քո և հաստատութեամբ առաջադրեալ փոխել զվարս, պէտք են քեզ հետամուտ 'ի ձեռս բերել և միջնորդս և սատարս զօրաւորս'ի փրկութիւն անձինդ։ Առաջին 'ի սատարս փրկութեան'է ընտրութիւն հաւատարիմ առաջնորդի հոգւոյ և փորձ և առաքինի հօր խոստովանութեան, որ գործակից'ի բժշկութիւն հոգւոյդ եղիցի նա ընդ Քրիստոսի։ Ընտրութիւն արդարև դժուարին, սակայն և փութոյ պնդութեան պէտք են քեզ'ի նոյն. քանզի վասն յաւիտենական փրկութեան են բանքն։

Հարցանէ Քրիստոս, "Կամիս ողջ լինել,, . իմաստուն պատասխանին անդամալուծին յայտնաբանեաց՝ զոր զարդիս ասացի. եթէ առաջնորդի պէտք են. "Տէր, ասէ, ոչ զոք ունիմ, զի յորժամ ջուրքդ յուզիցին, արկցէ զիս յաւազանն. և մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն ինքանէ,,. ապա ուրեմն՝ եթէ ունէր զոք, ոչ ինքն դանդաղէր, և ոչ'ի բժշկութենէն անմասն ելանէր այնչափ ժամանակ։

Լու արդ աղէ ասա. քանզի դժուարին է ընտրութիւնդ, ելիր դու երբէք'ի խնդիր հաւատովքդ առ Աստուած՝ գտանել քեզ առաջնորդ հոգւոյդ զայր մի լցեալ հոգւովն Աստուծոյ, որ գիտասցէ ըստ ժամանակին արկանել զքեզ յաւազանն. այր մի փորձ, առաքինի,

digitised by A.R.A.R.@

լուսաւորեալ յԱստուծոյ, որ բաւական իցէ որոշել զբոլորութիւն 'ի բորոտութենէ, Ճանաչել զվէրս սրտի քո, և ջամբել քեզ զպատկանաւոր դեղն։ Աստ մի անշահասէր, որ ոչն խնդրեսցէ զիտել եթէ իցէս դու մեծ ըստ աշխարհի, այլ թէ իցէս դու մեղաւոր առաջի Աստուծոյ, որում առաւել ազդեսցէն մոլութիւնք քո, քան զփառաւոր անուանս շքոյ անձին քո. և որ 'ի գործ վարեսցէ զնեղողութիւն կամ զխստութիւն վնասոյ իւրոց՝ պատշաճեալ ոչ վիճակի Ճոխութեան կամ նուաստութեան մեղաւորացն, այլ չափու և վիճակի մեղայ նոցա։

Աստ մի նախանձախնդիր աստուծոյ. զոր ոչինչ բան բաւական իցէ դրդուեցուցանել զնա 'ի շաւղաց Ճշմարտութեան և 'ի սահմանել Աստուածային սպասաւորութեան իւրոյ. սակայն և ոչ խիստ և ոչ թոյլ։ Հուսկ ուրեմն, այր մի բարեգութ, որ զձէթ կակղութեան խառնեսցէ ընդ գինին զօրաւոր. և որ ոչ հանապազ իբրև զդատաւոր վարեսցի, այլ յուշ ածցէ և զհայրական իւր պաշտօն։ Վիտասցէ ըստ ժամանակին փոխել զձայնն. և ըստ հանձարաւոր առաքելոյն՝ ընդ ամենայնի ամենայն լինել, և զամենեսեան շահել 'ի Քրիստոս։

Աստ արդ հարցանեմ. իցէ՞ այնպիսի առաջնորդ հոգւոյդ՝ զոր ընտրեցեր։ Աւաղ, ո՞չ ահա որ առաւել անծանօթքն են քեզ, նոքա են միշտ քեզ առաւել յարմարաւորք. որք առաւել ներողամիտքն են, նոքա են առաւել ընդունակք 'ի խոստովանեցուցանել զքեզ։ Զոր որ միանգամ առաջին ընդ առաջ պատահէ քեզ, նմա անդէն անխորհրդաբար բանաս զվէրս սրտիդ. Ճշգրտիւ նմանեալ Ա՝ՀԲայի՝ ըստ աստուածային պատմութեանն. որ առաջին ընդ առաջ ելելոյ զևատացուցն հրաւէր կարդայր. "Լիստ, ասէ, առ իս. և լեր ինձ 'ի հայր և 'ի քահանայ"։ Օ՜նոյն օրինակ և դու ընտրես քեզ զնա 'ի հայր և 'ի քահանայ խոստովանութեանդ. և իբրև զԱ՝ՀԲա առեալ կարգես զնա պահապան և պաշտօնատարութերափիցն քոյ և դրօշելոցն և ձուլածոյից, զոր արարեր 'ի տան քում, և որոց նուիրեցեր զսիրտ քո։ Ա՞չ ահա դովին միայն ընտրութեամբդ յայտ արարեր, եթէ չկամիս դու ուրեմն ողջ լինել։

Հաւասիկ ձեզ լիով սիրելի եղբարք իմ, պա տձառք

digitised by A.R.A.R.@

ոյց աղագաւ չլինի ինչ մեզ պիտանացու փրկաւէտ խոր-
հուրդ ապաշխարութեան։ Լ՝հաւասիկ ձեզ, եթէ էր ա-
ղագաւ այնչափ դժուարագիւտք են յաւուրս մեր դարձք
մեղաւորաց. և էր աղագաւ յայնչափ բազմութենէ կու-
բացն, կաղացն, գօսայելոցն հազիւ զմին միայն գտանէ
Քրիստոս'ի բուժել. բազմահոյլք նոցուն աւադիկ ան-
կեալ կան առ մերոյս աւազանաւ, և ոչ ոք ելանէ ար-
տաքս իբրև Ձիմարիտ ապաշխարող. մերկանան մեզ ըգ-
վերս, բայց սրբարար ջուր աւազանիս, աւա՜ղ, ոչ յաջո-
ղի ապաքինել։ Լ՝ուղէր. քանզի և'ի ձերոց աղբերականց
յաւելուլ պարտ է'ի ջուրս աւազանին մերոյ։ Քանզի
և լուայք ապաքէն՝ որպէս յառաջագոյն եղի՝ զիաղդ ե-
կեղեցի ընդ երգելն և խրատէ զորդիս իւր, եթէ
"Լ՝ուրտասուս ապաշխարութեան աւազան լինի, և լուա-
նայ զբազմութիւն մեղաց,,։

Լ՝ս արդ դու ապաշխարող հոգի, յուշ ածցես քեզ
միանգամ, քանիսն խոստովանեալ է քո, և պակասեաց
քեզ արդեօք լոյս քննութեան խղճին, իբրու կուբացե-
լոցն մնօք. պակասեաց քեզ արդեօք անկեղծութիւն'ի
խոստովանութեանդ իբրև կաղացելոցն. պակասեաց
քեզ արդեօք ցաւ և զիղջ սրտի՝ իբրու գօսացելոցն. և
գոնեա յօրէ աստի դարձցիս առ Լ՝ստուած'ի բոլոր
սրտէ։

Լ՝ս սակայն երկայնմտութիւն քաղցրութեան քո,
ով Լ՝ստուած իմ, բազում եղև յոյժ'ի վերայ իմ, ապա-
շնորհ և բազմամեղ ծառայիս. զի ոչ յափշտակեաց զիս
մահ ցայսօր՝ իբրու զբազումս՝ յապականութեան կե-
նաց իմոց։ Խաբէ շնորհիս, զոր միայն մեծի ողորմու-
թեան քոյ'ի վերայ իմ գիտեմ զրաւական մեծ։ Հա-
ճեաց տէր բարեգթութեամբդ բանալ իմ առաջի ան-
արժանիս զդանձ առատութեան շնորհաց քոց։ Լ՝յժ-
մէն այսօր, ով Լ՝ստուած իմ, այժմէն կամիմ ատել'ի
սրտէ զմեղս, սիրել'ի սրտէ զքեզ միայն։ Լ՝յլ ինձ ա-
պիկար են կամքս, եթէ ոչ դու հզօրիչ իմ զօրա-
ցուսցես ողորմութեամբ քով, զի քև մենազինեալ մարտ
եղեալ կռուեցայց ընդ ապստամբութեան կրկնց, և
յաղթական եղեց շնորհիւ քով։ Տ՝ուր ինձ զխաղաղու-
թիւն սրտիս՝ զոր կորուսի մեղօք՝ սիրոյն արտասուօք
գտանել'ի քեզ։

digitised by A.R.A.R.@

ՔԱՐՈՉ ԽՐ.

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՏՕՆԻ ԾԱՂԿԱՁԱՐԴԻՆ

« Ասացէք դստեր Սիոնի : Ահաւասիկ թագաւոր քո գայ ինչ » .

Օ՝ աւետաբեր գալուստ փրկչին և զԹագաւորին անդստին՝ի կանուխ ժամանակաց նախաձայնէին ուխտաղրուժն Յ՝երուսաղէմի՝ պատգամք մարգարէից միանգամայն և երևմունք նահապետաց, և նուէրք ողջակիզաց, և փառաբանութիւնք օրինաց . նշանակքն ճշմարտութեան : Օ՝նոյն՝ի վերջէ և հրեշտակն անապատին՝ յայտնաբարբառ մատնանիշ առնէր . զի և բնաւ իսկ այնուհետև անպատասխանի մնայր Յ՝երուսաղէմ՝ի կամաւոր կուրութեանն, հիւրընկալութիւն անարժան՝ի ներքս բերելով իւրում Թագաւորին : Բ՝այց բա՛ռէ, այս գալուստ հանդերձեալ, մեծահրաշ, բերկրալից, անձկացեալն, դաւանեալն՝ի հարուստ դարուց, փոխանակ ցընծաւէտ հրճուանաց, աղմուկ առ հաստակ և շշուկ և տագնապ աւադիկ ածէ անշնորհ քաղաքին, "Ողղեցար, ասէ, քաղաքն ամենայն, և ասեն՝ ո՞վ իցէ սա ,, : Յառաջ վութեամբ հարկանի Յ՝երուսաղէմ. էր աղաղաւ . . : Օ՝ի մնանէ անդր յաղթանակաւ այսօր աստուածորդին Թագաւոր : Վ՝ահանայք և դպիրք և փարիսեցիք վկայք ականջալուրք և ականատեսք երգոցն ցնծութեան ռամիկ մարդկանն և մանրիկ մանկտոյն , ՝ի բիւրուց ծփանաց կրից յուղեալ կոծին . ահ երկիւղի , տագնապ սրտի , նախանձ ոգետանջ, տրտմութիւն հիւծիչ գրաւէ զնոսա :

digitised by A.R.A.R.@

[illegible]ուի ինն այնպէս՝ եթէ 'ի բռնաւորաց ոք մնանէ ա-
ւար հարկանել զ[illegible]ղուսաղէմ և Ճապաղիս յորդել ա-
ռեանց, և որպէս երբեմն՝ 'ի գերութիւն զքաղաքացիսն
վարել, քան թէ Թագաւոր հեզ և խաղաղարար փրկիչ
ժողովրդեան և սրբարար նոցուն հեղմամբ արեանն իւրոյ։
Իսկ նուազունք ոմանք յայնժամ յանմեղաց ընդառաջէն
Թագաւորին ընդունել սիրով զաստուածորդին։

Հաւասիկ ձեզ եղբարք իմ պատկեր Ճշգրիտ և որ
առ մեզ պատահման կրիցն յաւուրս յայսոսիկ։ Եզ ա-
ւադիկ անդստին յառաջին աւուրց քառասնորդացս պա-
հոց՝ երբէք ոչ դադարեցաւ եկեղեցի սուրբ աւետեաց
նախաձայնել, եթէ մերձ կայ ահա Թագաւորն փա-
ռաց, և զատիկ մեզ զենցի Քրիստոս։ Հրկարա-
ձգեալ սաղմոսանուագ փառաբանութեանց եկեղեցւոյ և
աղօթից զանազանութիւնք, ծնրադրութեամբք մաղ-
թանքն, ապաշխարութեան շարականքն, և այլ ևս
գեղեցիկ կրթանք, ձայնատուք մեզ լինէին գալստեան
նորա, և միանգամայն յարդարիչք հոգւոց մերոց. առնուլ
ընդունել զնա 'ի մեզ խորհրդով սրբոյ հաղորդու-
թեան 'ի մեծահրաշ յարութեանն. քանզի և ութ ա-
ւուրքք յառաջ՝ 'ի գալստեան կիրակէին երդեցաք իսկ
անձկով 'ի սուրբ եկեղեցիս, եթէ "Ուրախ լեր, ահա
գայ առ քեզ խոնարհ և հեզ արքայ,, . . . նստեալդ
յաթոռ սերոբէից, նիստ զթութեամբ 'ի մեր հոգիս,,։

Հաւ արդ ահա մերձ առ դուրս անձկացեալն մեր կայ
Թագաւոր. զինչ արդեօք յուզմունք յորդեցան 'ի գե-
ղեցիկ աւետեացս։ Հաբէ. յոյզք խռովութեան, յոյզք
միջաբեկութեան, յոյզք տրտմութեան։ Հայր այր ահա
տեսանէ, զի մերձ կան սարտք հատուցման քրիստոնէի 'ի
տիրահրաւէր պասեքին. և դառնայ հայի միանգամ 'ի
ներքինս խղճի մտայն. զիարդ ընդունել արժան իցէ
'ի հոգիս զԹագաւորն փառաց. քանզի զատիկ մեր զենաւ
Քրիստոս. զիարդ պատրաստեսցուք վերնատուն մի զար-
դարեալ ուտել զզատիկն։

Քանզի իւրաքանչիւր քննեալ զանձն գտանէ 'ի նմա
յանցաւորութիւնս բազումս բնաւորեալս, վերս և
խղճայթս բազումս հնացեալս, և տագնապի 'ի խորհրդ-
դեան. զանգիտէ՝ եթէ գայ Թերևս փրկիչն 'ի սրտմ-
տութիւն բարկութեան դատել մնանանդ և 'ի պատու-

digitised by A.R.A.R.@

հասել, քան թէ զինքն հեղ և քաղցր տալ նմա 'ի կերակուր։ Այլ նուազունք թուով հաւատարիմք հոգւով ընդառաջեն ժողովել զնա անձկանօք 'ի սիրտս իւրեանց։

Իսկ որ յոյժ արտասուելին է, զի թէպէտ և տագնապ հոգւոյն 'ի վերայ կայցէ և միջաբեկութիւն ամբոխեալ խղճին, 'ի վերայ այսր ժտին բաղումք մերձենալ առ Քրիստոս, և համարին ընուլ զպարտս օրինաց եկեղեցւոյ 'ի զատկին հաղորդեալք նմին անմաքրապէս։ Նմիտք, որ ոչն խորհին, եթէ այնպէս առ Քրիստոս մերձենալ՝ չէ ուտել զզատիկն տեառն քան թէ ուտել և ըմպել զդատապարտութիւն անձինն. «Դատաստան անձին իւրում, ասէ, ուտէ. զի ոչ խտրէ զմարմինն տեառն»։ Այլ արդ, սիրելիք իմ, քանիցն ուրեմն մեծ և կարևոր իցէ առաջարկութիւնս՝ յանդիմանն առաջի դնել ձեզ այսօր հրահանգս իմն ազգոյս և պատրաստութիւնս յընդունել արժանապէս զանմահ և զաստուածային խորհուրդն. որպէս զի մի եկեսցէ Քրիստոս այց առնել ձեզ՝ որպէս երբեմն Յրուսաղեմի՝ 'ի դատապարտութիւն ձեր և 'ի կործանումն, նախագոյժ լինելով եթէ «Լինամիք քո պատեսցեն և յատակեսցեն զքեզ»։ Որ ուրեմն իցեն պատրաստութիւնք մեր յարժանապէս ընդունելութիւն անմահական սեղանոյն. երկու ինչ 'ի գլխաւորացն և 'ի յոյժ կարևորացն առաջի եդից սիրելեացդ։ Այս ապա երբորդ զանհնարին յանցաւորութենէն բանս Ձառեցիոյ զանարժան զսեղանակապուտ հաղորդութեանցն։ Այս եղիցի մեզ այս ողջոյն 'ի նիւթ սերկեան քարոզիս։ Ընկնդրութիւն ուշով և անձկանօք խնդրեմ պտղաբեր կարևորագունի առաջարկութեանս։

ՄԱՄՆ Ա·

Այնչ չև սկիզբն տուեալ բանիս, զայն ինչ 'ի կարձոյ ազդեմ սիրելիք, եթէ 'ի յասել անդ իմում՝ զի բաղումք անմաքրապէս մերձենան առ Քրիստոս՝ պարտապանք եղեալք մարմնոյ և արեան տեառն ըստ առաքելական

digitised by A.R.A.R.@

ահագնաձայնութեանն, չէն իմ բանք վասն ամբարշտելոյն այնոցիկ, որ լիրբք և անպատկառք՝ նզովելին իւրեանց անհաւատութեամբ գնան մերձենան առ ոտն կոխել զարիւն նորոյ ուխտին անհնարին սեղանակապտութեամբ։ Չէն իմ բանք և վասն ապականելոյն այնոցիկ, որ ոչ՝ի մաքուր և յանկեղծաւոր հաւատոյ խորհրդոյն մերձին՝ի սեղանն սրբութեան, իբրու քաղարկեալ ահաւոր խորհրդոյն զանմաքուր հոգւոյն իւրեանց պղծութիւն. և ինդրեն մանաւանդ լինել ամբարիշտք՝ քան երևել անկրօնս։ Ո՛վ, շանթից պէտք էին այնպիսեաց քան կշտամբանաց. և եթէ կշտամբել ևս պարտ էր, զմեծի առաքելապետին արժան էր՝ի դէմն ածել նոցա, որ առ Ղնանիա և առ Սափիրա։ Զայլ սակայն յոյս իմ հաստատուն առ քեզ, ո՛վ տէր. եթէ և ոչ զոք յիմոց աստի ունկնդրաց այսօր տեսցեն աչք.քո իբրու յայդպիսեաց այտի հրէշից սոսկալեաց՝ որդւոց անիծից. և ոչ դարձեալ՝ի սոսա Զքար ոք ծածկեալ կայցէ աստանօր՝ի խորանն Իսրայելի։

Այլ արդ իմ բանք առ նոսա էն միայն, որ՝ի լրումն ողջոյն տարւոյն՝ զոր անցուցին՝ի բերկրութիւնս և՝ի մեղկ կեանս, և գնան առ ոտս հօրն խոստովանութեան իւրեանց մինչև մերձեալ առ սուրբ խորհուրդն. որոց թէպէտ և խիղճ մնայն ոչինչ ստգտանիցէ զնոսա յաղագս նենգութեան սրտի կամ կեղծաւորութեան ինչ. ՝ի վերայ այսր՝ յանցաւոր և պարտական կացուցանեն զանձինս մարմնոյ և արեանն տեառն։ Զանգի մերձին առ սեղանն սուրբ, տարեալ միանգամայն ընդ իւրեանս զգժպհի և զանկարգութեան զկիրսն, և խիղճ մըտաց այնպիսի, զոր յաւաղանին ապաշխարութեան՝ փոխանակ մաքրելոյ աղտեղեալ իցեն։ Զպա առ՝ի խելամուտ լինել, եղբարք, եթէ և ձեզ արդեօք զանգիտել պարտ իցէ կամ՝ ոչ, մի թերևս և դուք լինքնին իցէք՝ի պղծողաց անտի սրբութեանցն, շատ է գիտել, որ իցեն բուն և տիրական պատրաստութիւնք առ հաղորդութիւնն սուրբ. և զնոյն հրահանգն ապա այր այր մերձեցուցեալ յինքն՝ դատեսցէ զանձն։ Զդ ամենայն պատրաստութիւնք առ աստուածահրաշ գործն՝ պարագրեալ կան յայն հրահանգ աստուածայնոյն Պաւղոսի, որ ասէ. “Փորձեսցէ մարդ զանձն իւր, և

digitised by A.R.A.R.@

ապա 'ի հայել անտի կերիցէ և 'ի բաժակէն արբցէ ,, ։ Այլ արդ միտ դիր, զի հոգի մարդոյն 'ի փորձել զանձն՝ ոչ միշտ ճանաչէ զներքինս իւր. և զի փորձել զանձն՝ վեր 'ի վերոյ հասարակ կարգաւ ոչ այլ ինչ է, քայց հաստատիլ մնալ 'ի խաբանս և 'ի կուրութեան իւրում։ Սակայն և փորձն զոր ասասէն խնդրէ առաքեալն, ոչ այն չափ ինչ դժուարին է 'ի կատարումն. և նոքա միայն երկիցեն յանձնամանն խաղաւանաց 'ի խորհուրդս՝ որք միանգամ մտադիրն կամիցին 'ի խաբանս լինել։

Զանգի խնդրէ ասա դիտել նախ, իցէ՞ք դուք յանկեղծաւոր մտաց դարձեալք առ Աստուած. և 'ի կիրս ձեր հնացեալս ոչ միայն յօժարեալ իցէք այսուհետև, այլ զեթ և սկիզբն տուեալ ուղղութեան նոցա ապաշխարութեան ինչ կրթանօք։ Երկրորդ անգամ, եթէ այսուհետև նաև անձուկ մի վառեցար 'ի սիրտ ձեր միանալ ընդ Քրիստոսի, փորձ փորձելով ձեր զիսիսոխութեան ինչ վարուց, փորձ զսիրոյ ապաշխարութեան, փորձ զեռանդան բարեպաշտութեան. "Փորձեացէ, ասէ, մարդ զանձն իւր. և ապա 'ի հայել անտի կերիցէ և 'ի բաժակէն արբցէ ,, ։ Այլ արդ՝ առաջին 'ի փորձ փոխոխութեան վարուց. . . եթէ արդեօք այդպիսի վեր 'ի վերոյ ապաշաւանօքդ չգտեր դու միւսանգամ զկորուսեալ հնորհսդ զսրբութեան և զարդարութեան, եթէ տակաւին 'ի մահու կաս և 'ի մեղս, գիտեա զի 'ի սեղանոյն Քրիստոսի խափանեալ կաս։ Կենդանեաց է սեղանս այս, կենդանի պարտ է լինել հոգւոյն յաչս Աստուծոյ՝ առ 'ի կերակրել 'ի ամանէ։ Որդւոց հարազատաց է սեղանս այս, չէ օտարախորթիցն. թշնամիք անարժան են այնմ. ակն պատուական է սա և մարգարիտ աւետարանին. ոչ արկանի առաջի անմաքուր կենդանեաց։ Այլ արդ հայեաց 'ի քեզ, մերձիս դու առ սեղանն սուրբ և մաքուր խղճիւ. իցէ՞ քո սիրտ փոխեալ և յապաշխարութիւն յօժարեալ. իցէ՞ քո դարձն առ Աստուած ճշմարիտ և անկեղծ։ Զոյլ տուք ինձ 'ի ճշգրտութիւն բանիս, 'ի քնին մտանել վայր մի։ Այլ արդ յարուցեալ երթաս դու խոստովան լինել զմեղս քո առ ոտս քահանային։ Զքննեմ ես առ այժմ զքոյ ընտրութիւնդ վասն հօր խոստովանութեան քո, եթէ արդեօք 'ի խնդիր եղեալ իցէ՞ քո այնմ՞որ ոչն իցէ առա-

digitised by A.R.A.R.@

ւել խիստ և անաչառ։ Վասնզի և այդ խստութիւնդ՝ մերոյ պաշտամանս սիրոյ 'ի Ձեզ ոչ գայ. և որ առաւել խիստն է, չէ միշտ առաւել սուրբ և ոչ առաւել գիտնական։ Այլ զայն քննեմ ես, եթէ արդեօք խնդրեցէ՞ք քեզ հայր խոստովանութեան քո զայն որ առաւել աստուածապաշտն իցէ և առաւել գիտնաւոր և առաւել փորձ'ի դարձուցանել զմեղաւորս. որ զամենայն դեղ դարմանոյն հանդերձեսցէ քեզ՝ ուշ եդեալ քաջիկ քոյին պիտոյիցդ և կարեաց, որ ըստ վարուցդ, որ ըստ գնացիցդ յամենայնի, որ ըստ պաշտամանդ, որ ըստ կրիցդ. մինչ զի յետ խոստովանութեանդ մեկնեսցիս դու 'ի նմանէ անեղկևան ցնծութեամբ, և ոչ անստուգութեամբ ամբոխեալ խղճի և կիսակատար դարձի առ Աստուած որպէս յայլ խոստովանութիւնդ։ Ղառնումդարձեալ և զայն 'ի քնին, եթէ զիարդ իցէ՞ քո անաչառ քննութիւն խղճիդ'ի մեղսդ, որ բանիւ, որ գործով, որ խորհրդով. արդեօք ըստ լուսոյ հաւատոցդ՝ եթէ ըստ նախագրաւ դատմանց աշխարհի և ըստ կանխակալ թելադրութեան կրիցդ։ Վակայն հարցանեմ. ասա՛ ինձ՝ով սիրելի. գնաս դու անդ առ ոտս քահանային թողթափել թողուլ զմեղս քո. այլ արդեօք թողթափեցէ՞ր և զկիրս քո։ Այլանես յատենէն առեալ զարձակումն, այլ արդեօք ելանէ՞ս անտի և արդարացեալ։ Գնա՞ս դու արդեօք անդր Ճշմարիտ ցաւով մեղացդ գործեցելոց, և անկեղծ առաջադրութեան անձինդ յապագայս, նորոգել'ի կեանս հոգւոյդ և սրտիւ մերձենալ առ Աստուած և սիրել զնա 'ի վեր քան զամենայն. ընուլ զամենայն զպարտսդ այնուհետև որ առ Աստուած, որ առ ընկերն, որ առ անձն, որ առ ամենայն հպատակեալսդ։ Ի՞նչ հաստատեալ է քո արդեօք Ճշմարտութեամբ'ի բաց փախչել այնուհետև յառաքիչ այտի մեղաց, յայն ինչ բարեկամութենէդ, յայն ինչ մտերմութենէդ, որով յանցեաք բաղում անգամ, յատելութենէ այտի, յոխսակալութենէդ, 'ի չար սովորութենէ անտի վատնողական խաղուցն որ զտուն քո քակեաց, յանչափ զբօսասիրութենէդ որ զշուք քո կապտեաց։ Այս համբուն ասել, իցե՞ս դու այժմիկ նորաստեղծեալ արարած, կամ թէ զանո՞ւն միայն կենդանւոյ տարցիս դու յաչս մարդկան, մեռեալ գոլով քո աղդեամբք առաջի Աստուծոյ։

digitised by A.R.A.R.@

Լու իսկ արդեաք՝ 'ի տուն հոգւոյ քոյ մնեալ Քրիստոս անմահ հաղորդութեամբն՝ ասել որպէս Երբեմն առ Օ ակքէոս, եթէ "Այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ"։

Այլ զիարդ յաջողեսցի քեզ այս, ո՛վ սիրելի. որ յետ վերջ'ի վերոյ քննութեան խղճիդ խոստովանեալ քո և արձակեալ և հաղորդեալ, յանցանել աւուր սրբութեան զատկին, դու այն ես՝ որ ինչ էիրն։ Զեն ինչ ընդ օդս ասացեալ բանքս. քո ինքնին գոգցես միշտ ըզփորձն առեալ է'ի կեանս քո յաւուրս անցելոց զատկաց։ Ամբէ. զինչ պարտ իցէ կոչել զայդչափ փութով դառնալն յառաջին գնացան, և իցէ՞ այդ արժանապէս մաքրութեամբ ուտել և ըմպել'ի մարմնոյ և յարենէ որդւոյն Աստուծոյ, և ոչ մանաւանդ պարտապան լինել մարմնոյ և արեան տեառն։ Զասեմ ես եթէ մինչդեռ երբ'ի մարմնի ատտ, Ճաշակելով միանգամ յանմահական սեղանոյն, անմեղանչականք դարձցուք'ի լինել. այս երկնաւորին պահեալ կայ հանդերձեալ կենացն. այլ թէ արժան էր յետ ընդունելութեան աստուածային դեղոյն, ոչ ևս այնուհետև ծանրանալ'ի հիւանդութենէն իբրու զառաջինն, այլ յառողջութիւն անդր օրյօրէ վերաբառնալ։ Արժան էր, որպէս խրատաբանքը Աւերանն ասէի, յետ Ճաշակելոյ'ի սեղանոյն սրբութեան, արժան էր, ասէ, քեզ ո՛վ մարդ, առաւել հզօրանալ ընդդէմ հրապուրիչ զգայութեանցդ, առաւել արթնանալ'ի վտանգս, առաւել մեկուսի կալ'ի տեսութեանցդ, որ գերեցին Երբեմն զսիրտ քո, արժան էր քեզ առաւել վառիլ'ի սէր առաքինութեան և'ի լրումն պարտուցդ, արժան էր հնքեաց'ի վերջէ Աւերանն ասէի, արժան էր՝ արեանն Քրիստոսի որում հաղորդեցար՝ զոգի իւր և զիւղձս և զմարհուրդս ազդել հնչել'ի սիրտ քո, և յինքն զլսումն փոխակերպել զքեզ. զոր օրինակ, ասէ, արիւն թագաւորաց և ինքնակալաց խաղացեալ յերակունս որդւոյն արքայազարմից զքաջութիւն արութեան նախնեացն և զմեծանձնութիւնն հաղորդէ նոցա. 'ի նոյն և խնամս վեհս արժանիս զարմին նոցա հնչէ 'ի նոսա. սապէս և քեզ հաղորդելով Քրիստոսի՝ արժան էր սրատեր կենդանի լինել Քրիստոսի։ Ասանդի "Ան ուտէ, ասէ, զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի և ես'ի

digitised by A.R.A.R.@

նմա ,, . ես 'ի սրտի նորա օթեվան ինձ հաստատուն հանդերձեցից, և միութեամբ անքակտելի միացայց ընդ նմա։ Այսպ 'ի վերայ բերեն հարքն սուրբք, եթէ որ ընդունի զՔրիստոս հաղորդութեամբ, և ոչ պահէ զնա յինքեան, 'ի խաչ հանելով այնուհետև զմարմին իւր կարեաւք և ցանկութեամբք հանդերձ, և ոչ բնակէ 'ի նմա՝ սիրելով միշտ զնա 'ի վեր քան զամենայն, այնպիսին ուրեմն յայտ է՝ եթէ չընկալաւ երբէք զՔրիստոս հոգևորապէս 'ի հաղորդութեանն։

ՄԱՍՆ Բ.

" Փորձեսցէ մարդ զանձն, պատուիրեաց Աբրահամն, և ապա 'ի հացէ անտի կերիցէ ,, ։ Այս արդ փորձեալ ձեր առաջին զփորձ փոփոխութեան վարուցդ հանդերձ ապաշխարութեան կրթանօքն, փորձեցէք երկրորդ անգամ զանձինս, տեսէք անաչառ, որ պատճառք որ եռանդքն ածէ ձգէ զձեզ 'ի հաղորդութիւն անմահ սեղանոյն։ Արդեօք անձուկն ձեր և ցանկութիւն զոյնմանք ընդունելոյ զՔրիստոս և միանալոյ ընդ նմա, եթէ և այլ ինչ։ Բայց, նա աւանիկ բաղումք 'ի հաւատացելոց 'ի մերձենալ աւուրց զատկին յընդունելութիւն Քրիստոսի, աւուրք ցնծութեան հոգւոյ և բերկրապատար տօնախմբութեան, բաղումք ասեմ վարանին, դեղևին, միջաբեկին, փոխան ցնծութեան, տրտմաղգեացք են. թախծեալ գնան արդարև իբրու զպատանին զաւետարանին զմերձեցեալն առ Քրիստոս. քանզի լուաւ 'ի տեառնէ զմերկանալն յամենայնէ և այնպէս զհետ գնալ և միանալ ընդ նմա։ Այլ սակայն 'ի կարի մերձենալ աւուրցն, քանզի և խղձին յանձինս և անդատապարտ չմարթին կացուցանել զանձինս անսաստեալք եկեղեցւոյ օրինացն, զէթ միանգամ 'ի տարւոջն ընդունել զՔրիստոս, լրումն տալով պարտուց քրիստոնէութեանն, ապա իբրև բանի ձգին քարշին 'ի հարսանիս հոգևոր սեղանոյն, արդարև իբրև զկաղն զայնոսիկ, զիսեղն, զկոյրն զաւետարանին, ժողովեալս մուծեալս 'ի գուեհաց և 'ի փողոցաց. այս է 'ի հեշտալեաց աշխարհի և 'ի բազմադէմ կրից

digitised by A.R.A.R.@

նորա։ Ո՛վ անմահ Աստուած, և պէտք ինչ իցեն քրիս-
տոնէից մեծասքանչ հրամանաց առ 'ի մերձեցուցանել
զնոսա զէթ միանգամ յամին 'ի սեղան սրբութեան քո
և անմահական սիրոյ քոյ։ Ո՛վ, քանիցս իցէ խորին ընդ
դարս յետնոցս և ընդ առաջնոցն, յորժամ անդ նախնիք
մեր քրիստոնեայք զօրհնասպաղ կազմ էին և պատ-
րաստք ասպնջական Քրիստոսին լինել խորհրդոց։
Ա՛մթ ինչ էր արդեօք նախագուշակ լինել աւուրցս մե-
րոց՝ յորս սպառնալիք եկեղեցւոյ սահմանեալ կայցեն,
ոչ եթէ 'ի բաց քեցել վարել զթշնամիս իւր կամ զան-
հաւատս 'ի սեղանոյն սրբութեան, այլ առ 'ի ձգել
ածել զնոսին իսկ զհաւատացեալս, զորդիս իւր և
զհարազատս, 'ի նոյն սեղան։ Այլ այն զի՝ որ սեղան
առաւել բերկրական կայցէ առ մեզ հաւատացեալս.
որ քաջալերս մեզ առաւել քաղցր 'ի վշտալից կեն-
ցաղումս, որ մխիթար առաւել հզօրիչ 'ի պանդխտու-
թեան մերում տառապանաց 'ի հոգւոյս տրտմութեան.
որ դեղ դարմանոյ հանապազօրեայ բուժիչ ախտից
և թշուառութեանց մերոց, և որ մեզ տիեզերական
աղբիւր ամենայն բարեաց 'ի լրումն ամենայն պիտոյից
մերոց։

Այլ ասէք ինձ դուք. "Ճշմարիտ էն բանքդ, և ա-
մենաճշմարիտ, այլ սակայն որչափ մեծահրաշ է սե-
ղանն, այնչափ և դերակատար պատրաստութեանց
պէտք էն"։ — Այո՛ է։ Այլ զպատրաստութիւն զայդ,
սիրելիք ըստ կարի ձերում՝ որպէս կանխեցաք հրահան-
գեցաք նախ առ 'ի ձէնջ հոգացեալ, ինքնին այնուհետև
ընդունելութիւն խորհրդոյն մեծապէս արդասաւո-
րութեամբ կատարեսցէ 'ի սիրտս ձեր։ Անզի Ճաշա-
կելով միանգամ զՔրիստոս, որպէս ինքն ասաց, այ-
նուհետև կեայք 'ի Քրիստոս. "Որ ուտէն զիս, ասէ,
և նա կեցցէ վասն իմ"։ Ճաշակելով քո միանգամ զՔ-
ՔՔրիստոս, 'ի բաց առաւել յայնժամ քեցեսցես յաշխարհ
հէ զանձն, արհամարհեսցես զամենայն անցաւորս,
առաքինութեանց օթեվան յարդարեսցես զանձն։ Այլ
անշուշտ, ով սիրելի, ստէպ յայս սեղան մերձենալով
քո, նորոգածին Ճաշակ քաղցր կալցիս դու 'ի քեզ զա-
զօթից միաբանութեան. Ճաշակ քաղցր երբէք երբէք
զմիայնութեան քո և զլռութեան. և Ճաշակ քաղցր

digitised by A.R.A.R.@

զկատարման ամենայն պարտուց քրիստոնէութեան քո։
"Ճաշակեցէք, ասէ, և տեսէք, զի քաղցր է տէր"։ Զ-
պատուականի սեղանոյս առեալ քո զերկնաւոր զՀացն,
զօրացիս զանձելապէս 'ի Հոգիդ. զու ես այնուհետև
մարգարէն, որ զօրութեամբ հրաշագործեալ կերակրոյն
ընթացիս հացեալս մինչև 'ի լեառն Աստուծոյ 'ի Արա-
րատ, ուր և տեսութեանն արժանացիս Աստուծոյ։
Լսովաւ զօրացեալ 'ի դիմի հարցիս վանդաց, ապրեաց-
ցիս յառաթից մեղաց, յաղթեսցես և քումդ անձին։ Լու
համբուն ասել՝ միանգամ արժանապէս հաղորդութիւնն
արժանի յարդարեսցէ զքեզ և այլոց ևս նուագացն հա-
զորդութեան։ Որչափ առաւել հեռի կայցես 'ի նմանէ,
այնչափ առաւել հովացիս 'ի Քրիստոսէ. այնչափ առա-
ւել անձեսցին կիրք, այնչափ առաւել յօրացի 'ի քեզ
մարդն մեղաց, և այնչափ առաւել փոքրիկացի Քրիստոս
'ի սրտի քում։ Ուստի և պատեհականս այս հաղորդու-
թիւնք անպիտանք եղիցին հոգւոց այնոցիկ աշխարհա-
սիրացն, որ միայն յաւուրս հանդիսիս մեծի մերձեսցին
առ Քրիստոս բռնադատեալք 'ի հրամանէ։ Լու իսկ
թէ, որպէս անպատրաբերքը, նոյնպէս և անդատապարտք
արձակեսցին։ Յուշ 'ի դէպ ժամուս ինչ մի կամիմ
ածել սիրելիք։ Զանի արք աւագք և իշխանք մեծա-
մեծք, նաև գլուխք թագաւորք. քանի որեար և 'ի
հաւատացելոց բարեպաշտիւք և խաչակրօնք, աս-
տուածային նախանձու, կենդանի հաւատով յարու-
ցեալ հատին զանդունդս ծովուն մեծապէս վշտակրու-
թեամբ, տառապեցան և 'ի ցամաքի, մինչև գնալ հա-
սանել 'ի վայրս սրբութեան անօրինականաց փրկչին,
անդանօր երկիրպագանել համբուրել զհետս ոտից զՍ-
տուծոյ մարմնացելոյ։ Լու ահա լսէին նոքա անդ, ասա-
էրբեմն զերեսուն և եւթնամեայ անդամալոյծն բժշ-
կեաց տէրն. ասա նա յարոյց զՊաղարս. ասա նա շրջե-
ցաւ, քայլեաց 'ի վերայ ծովուն. ասա ասատեաց հողմոցն
և ալեաց, ասա ընկալաւ մկրտութիւն 'ի ձեռաց կարա-
պետին իւրոյ, և զՅորդանանու ջուրսն սրբեաց. ասա
այլակերպեալ երևեցաւ 'ի սուրբ լերինն. ասա նա ըն-
կալաւ քառեաց զմեղաւոր կին քաղաքին. ասա վարեաց
եհան նա զպղծողն տան հօր իւրոյ. ասա 'ի վերնատանն
բաշխեաց նա զմարմին իւր և զարիւն. և որ այլ ևս։

digitised by A.R.A.R.@

Եւ ապա յայս ամենայն պատմութիւնս ուխտաւորքն զերջանիկ երկիրն Թանային պատասուօք սիրոյն և հաւատոյն իւրեանց, և ոչ հանդարտէին Թողուլ մեկնիլ'ի վայրաց անտի. վայրք՝ անմահ յիշատակարանք գործոց և խորհրդոց և հրաշից աստուածորդւոյն։

Եւ արդ բարեբէ երգարք, որպէս աղաղակէր Խերանն ասկի, չէն մեզ պէտք հատանել անցանել զծով, չէն պէտք չարչարիլ'ի ցամաքի. ոչ ահա երջանիկ կարդայք դուք զայնոսիկ որ հասեալք տեսին զվայրսն զայնոսիկ, և որք յաւուրս փրկչին'ի քղանցս միայն հանդերձից նորա մերձենալ կարացին։ Այլ դուք այժմ ոչ տեսանէք զնա միայն, այլ և մերձիք, այլ և շօշափիք, այլ և ընդունիք'ի ներքս։ Ի միջի ձերում կայ, զոր կամ չընդունէք կամ չկամիք ընդունել. ահա հետք ոտից աստուածութեան նորա. ահա սուրբ և աստուածային յիշատակարանքն, զոր'ի տեսանել յայնչափ հեռաստան վայրաց ընթանային և ընթանան։

Կայք երգարք մերձեսցուք առ սեղանս սրբութեան. չէն այսոքիկ վայրք նուիրականք առ'ի կոխելոյ և ոչ ոտից աստուածորդւոյն. այլ ինքնին նա բովանդակ անձամբն միշտ կայ ասորէն։ Եւ ասասցուք և մեք ձեզ. ասա աւաղիկ Խրիստոս հաշտ առնել զանառակ որդին և'ի սեղան իւր բազմեցուցանել զնա, ասա նա բուժել զիւանդութիւն տեռատեսին՝ զապստամբն'ի հնարից դեղոց, ասա նա յանիրաւութենէն քաւել զմնաքսաւորն, և խաղաղութիւն յորդել'ի տուն հոգւոյ նորա, ասա նա զոր ամենայն յաղեցուցանել զբազմութիւն քաղցելոյն հրաշագործեալ հացիւն, զի մի նքթիցին'ի դժուարին ճանապարհին առաքինութեան։ Եւ առհասարակ շուրջ զսեղանովս կան յիշատակարանք արձանագիրք միոյ միոյ'ի հրաշից աստի տերունւոյն։

Եւ ապա այս ամենայն բարեմասնութիւնք ոչ հզօրացին, երգարք, վառեալ բորբոքեալ զսիրտս մեր, և անձկով տարփանն հառաչել միշտ առ Խրիստոս, ընդունել զնա ամենայն սիրով'ի հոգիս, մնաքրեալ և յարդարեալ իբրև'ի վերնատունն սուրբ զարդարեալ'ի վայելչապէս ճաշակուին գառին Աստուծոյ։ Ո՛վ որչափ մեծապէս է պարգևն. և դուք զպասէքին զպարտս, իբրու սպասարկութիւն համարիք դժուարաբառնալի։ Ա-

digitised by A.R.A.R.@

կոչունք է Ճշմարիտ սիրոյն և անՃառ մտերմութեանն Յիսուսի, և դուք իբրու պարտս ինն բարեմարդկութեան գրեք զսա։ Այս սեղան է որդւոց հարազատաց, և դուք իբրու 'ի ծառայից ոմանք և 'ի գերեաց այնպէս 'ի բացէ կայք 'ի սմանէ։ Այ՝ զ, եթէ օրէնք եկեղեցւոյ թողեալ էր զձեզ յազատութեան ձերում, և ոչ պատուիրանաւ ստիպեալ զձեզ, և յորդորակ միայն 'ի ներքս բերեալ էր ձեզ առ յիշատակէ հանդիսի աւուրն ըստ հարկի պիտոյից հոգւոյ իւրաքանչիւր հաղորդել աստուածային խորհրդոյս, ամէն ասեմ ձեզ, սեղանն Քրիստոսի 'ի բարեզարդութեանն անշուշտ խրթնացեալ էր առ սակաւութեան բազմականացն. և մեք պաշտօնեայքս Քրիստոսի զիսորանս սրբութեան տեսանէաք այսօր լրքեալ ամայի։

Իսկ արդ եթէ միայն 'ի բռնադատութենէ և առ ահի լցեալ է այսօր եկեղեցիս 'ի Ճաշակումն գառին Աստուծոյ, զինչ այն շնորհք իցեն պասեքական մեծահրաշ խորհրդոյն. ո՞չ ահա . . . (սոսկումն գնայ ընդ ոսկերս) . . . ո՞չ ահա խէթք անհնարինք այնուհետև իցեն յաղագս անարժան սեղանակապուտ հաղորդութեանց։ Այլ եթէ աստուածային առաքեալն առ իւրովք ժամանակաւքն բողոք առեալ ողբայր և զսխտից և զհիւանդութեանց կիրս և զյանկարծահաս մահուանս ընծայէր անարժան հաղորդութեանցն, "Այսն այսորիկ, ասէ, են իսկ 'ի ձեզ բազում հիւանդք և անխտաժէտք. և շատք ևս այն են որք և ննջեցեալք իսկ իցեն,,։ Արդ եթէ 'ի դարուն իւրում ողբայ առաքեալն, յորում ժամանակի աստուածային հաղորդութիւնն մարտիրոսս այնչափ յորդէր յեկեղեցի, քան սեղանակապուտս, և ընդ եկեղեցւոյն Կորնթոսի ողբայր՝ որ զարդարեալ էր մարգարէիւք և վարդապետօք և սքանչելագործ արարքք, և պատՃառս արկածից և պատուհասի գրէր զանարժանութեամբ հաղորդելն յայնժամ, մեք զինչ ասասցուք վասն պատՃառի մերոց պատուհասիցն՝ որ 'ի դժուարին ախտից մարմնոյ, և որ յարկածից արտաքնոց, և որ 'ի յանկարծահաս մահուանց. զինչ ասասցուք վասն մերոյ ժամանակիս անարժանիցն որ յեկեղեցւոյ և որ յաշխարհիկ կարգէ։ Այլ այր ապա յուշ անձին արասցէ, եղբարք իմ, անաչառ զկիրս նեղբէնս զհոգւոյն, քանզի և

digitised by A.R.A.R.@

"Եւ որ գիտէ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն որ 'ի նմա ,,. "Ասասցէ այր ուրեմն 'ի խորութիւն սրտի իւրոյ և բարձր եղիցի Աստուած ,,։

ՄԱՍՆ Գ.

Արդ ուրեմն եկեալ հասաք այժմ զվերջինն 'ի ներբս տալ սիրելեացդ զառաջարկութիւն քարոզիս, զանհնարին յանցաւորութիւն մեր ասեմ յանարժան հաղորդութենէն. "Ասասցէ, ասեմ, այր 'ի խորութիւն սրտի իւրոյ ,,։ Վասնզի եթէ գիտակ իցէ անարժան հաղորդութեանն իւրոյ, որպէս և է իսկ. զինչ այնուհետև ընորհք, որպէս ասացի, զինչ շուք արժանավայել իցէ մեծահրաշ հանդիսի պատէրին. մանաւանդ եթէ ո՞ր այն դատապարտութիւն մեծ ոչ իցէ այնպիսի հաղորդելոյն։ Եւնկն դիք վայր մի, աղաչեմ. զինչ Աստուած ինքնին սրտառուչ գանգատի 'ի բերանոյ մարգարէին. "Մի ինձ այլ, ասէ, մի ինձ յիշիցէք զաւուրս տօնիցն Իսրայելի ,,։ Եւ հանդարտեմ, ասէ, տեսանել զժողովուրդն զայն, որ յաւուրս տօնից իւրեանց մերձին առ ոտս սեղանոյ իմոյ՝ նուիրել զնուէրս իւրեանց. ոչ մերձին նոքա 'ի փառաւորել զանուն իմ։ ոչ հաճիմ 'ես ընդ խունկս նոցա և ընդ զոհս նոցա. և ոչ այդ ամենայն մոռացուցին ինձ զանօրէնութիւնս նոցա. քանզի "սրբութեան սեղանք իմ ամենայն լի են պղծութեամբք ,,։ "Եւ պղծեցան սրբութիւնք իմ, և զսուրբն 'ի պղծոյն ոչ ընտրէին. և զշաբաթս իմ պղծէին 'ի միջի նոցա ,,։ Եւ այս յայնժամ, յորժամ ատուերականք էին ամենայնն և օրինակք մերոյ սեղանոյս. քանիսն ուրեմն առաւել իցէ դատապարտութիւնն 'ի պղծել զշնմարտութիւնն։ Որ ձայն ահագին առաւել կայցէ, քան զոր աստուածայինն գուժեաց առաքեալ յաղագս անարժանութեամբ հաղորդելոյն. "Պարտական, ասէ, եղիցի մարմնոյ և արեանն տեառն ,,։

Վասնզի զոր օրինակ ողջակէզ պատարագի խաչին Վրիստոսի որ 'ի Գողգոթա, զօրհնապաղ նորոգի 'ի վերայ սեղանոյ մերոյ, այսպէս և որ միանգամ անարժանութեամբ մերձին 'ի նա մեղաւորք, միանգամ

digitised by A.R.A.R.@

'ի խաչ հանեն անձանց զորդին Աստուծոյ, որպէս կրնքեաց նոյն առաքեալ. և այն դժնդակագոյն ևս հանգամանօք քան զխաչելութիւն նորա յայնժամ 'ի Գողգոթա։

Անդի առաջին, եթէ գիտացեալ էր Հրէից ըզտէրն փառաց, որպէս վկայեաց առաքեալն, ոչ արդեօք 'ի խաչ հանէին զնա։ Անդի ոչ իբրև ընդ տէրն փառաց, քան թէ ընդ որդւոյն Արիամու և Յովսեփայ մոլեգնեցան նոքա. ոչ իբրու ընդ Աստուծոյ, քան թէ իբրև ընդ մարդոյ մոլորեցուցչի և թշնամւոյն Յովսեսի և օրէնացն նոքա։ Վասպէտ և աննեղելիք էին յանցանքն և անպատասխանելիք յաստուածագործ հրաշիցն տի, 'ի գերաշխարհիկ վարդապետութենէն, յամենամաքուր սրբութենէ տեառն Յիսուսի, 'ի լրմանէ ամենայն մարգարէութեանցն. 'ի վերայ այսր՝ շլացեալք նախանձու ոչինչ ընդհատ ցուցին զնա 'ի սուտ մեսիայիցն որ վայր մի յառաջ վեր 'ի վայր արարին զՀրեստասն, զի և 'ի խաչ հանելով զնա կարծէին մանաւանդ փառս տալ Աստուծոյ, պաշտպան կացեալ օրինացն Աստուծոյ և պաշտամանն նորա։

Այլ դու ինձ ով քրիստոնեայ, որ մերձիս 'ի սեղանս սրբութեան ընդունել զՔրիստոս, դու քաջ գիտես և ճանաչես զտէրն փառաց, քանզի և քոդք նշանակաց խորհրդոյն 'ի ծածկոյթ նորա յաչաց հաւատոյն քո ոչ ծածկեն զնա. գիտես զնա տէր փառաց անմահից, որդի բարձրելոյն Աստուծոյ, թագաւոր տիեզերաց, փրկիչ ազգի մարդկան. և զայս ամենայն գիտելով չափ գաս մնտիս առ նա առ 'ի թշնամանել զնա, մահ նմա առթել 'ի մարմնի քում, մահ առաւել դառնագէտ և խաչ առաւել անարգ քան զՈղգոթային։ Այո հարուածքդ՝ զոր հարկանես՝ ուշ նպատակի ունին զԱստուած. և չիք քեզ պատասխանի այլ 'ի չքմեղս լինել, բայց կոչելով զայդ քո յանցաւորութիւն՝ մարոսութիւն անլուր, մոլեգնութիւն դիւաբախ, յանդգնութիւն աստուածամարտ, քան զոր չիք ինչ այլ առաւել սարսափմամբ զմտաւ ածել։

Երկրորդ անգամ, յորժամ Հրեայքն 'ի խաչ հանին անարգանօք, Յիսուս չև էր փառաւորեալ։ Իսկ այսօր դու քրիստոնեայ 'ի վերնակէ փառաց նորա իբրու մեր-

digitised by A.R.A.R.@

կել ինչքեա զնա, տաս նմա ինչանել յաջմէ փառաց հօրն Աստուծոյ 'ի միւսանգամ անարգանս, 'ի միւսանգամ նշանակութիւն, անարժան հաղորդութեամբդ զորդին Աստուծոյ առ ոտն հարկանելով և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարելով։ Տէր Յիսուս 'ի լրման ամենայն չարչարանացն աղաղակէր, "Ամենայն ինչ կատարեալ է,,. և ասկայն 'ի փառաւորութեան իւրում մնայր նմա տակաւին նորոգ թշնամանք. և բան զԱղօթայ առաւել նախատալից մնայր նմա տակաւին 'ի վերայ սեղանոյ մերոյ. և խաչ նորա որ յայնժամ 'զի այսպէս ասել սկիզբն էր ցաւոց նորա և չարչարանաց ըստ ասացելոյն՝ եթէ "Ամենայն սկիզբն էր երկանց,,։

Յորորդ անգամ, 'ի խաչ հանեալ յայնժամ դահճաց զտէրն, գոնեա լրումն կանոց երկնաւոր հօր տային նոցա. և անպիտացեալ զնախկին դատակնիքն մահուն հատեալ 'ի դէմս առաջին մեղաւորին, եթէ "Պահու մեռանիցես,,, ապատարկու վճռոյն լինէին, որում և կամակատար հնազանդէր Արդէն անդատին 'ի մարդեղութենէն. ուստի և խաչահանուքն, դահիճք, քահանայք, դպիրք, փարիսեցիք գործակից ինն լինէին արդարութեանն Աստուծոյ. քանզի և էր իսկ այն ժամանակ յորում ըստ գրեցելոյն "Ամենեցուն ձեռք պարտէին լինել 'ի նա,,։ Այլ աստանօր դու թշնամանեա զնա 'ի ժամանակին, յորում լուծաւ դատակնիքն, և որ քեզ չէ գործակից. ոչ աստուածորդին այժմ կանաւորութեամբ զիմի՝ որպէս երբեմն՝ ողջակիզել 'ի ձեռաց քոց. դու ինքնին մնացեր միայնակ շաղախել զձեռն քո յարիւն ողջակիզին, և անհնարին յանցաւորութեամբդ հեղեալ այդ արիւն կուտեսցի միայնակ 'ի գլուխ քո։

Ղորրորդ անգամ, յանցանք խաչահանուացն պտղաբերք եղեն ամենայն մարդկան, հեղին զարիւն՝ որոյ հեղումն լուաց զմեր աղտն. զենին զգառն՝ որոյ ողջակէզն հաշտեցոյց զմեզ ընդ Աստուծոյ. 'ի մահ վարեցին զարդարն՝ որոյ թափուր եկաց գերեզմանն, քանզի 'ինքն ընկալաւ մահ 'ի յաղթութիւն. բացին զկողն՝ յորմէ էլեկեղեցի ազգաց և աղանց, և ուստի 'ի դուրս երևեցան ամենայն արդարք 'ի դարս իւրաքանչիւր. կանգնեցին խաչ՝ յաղթանակ տիեզերաց։ Այլ համբուն՝ յանցաւորութիւն բարեբախտիկ եղև նոցայն, զի գործ մեծ կա-

digitised by A.R.A.R.@

տարեցաւ փրկութեան աշխարհի։ Բայց դու այսօր քրիստոնեայ, որ դաս աստանօր 'ի խաչ հանել զնա 'ի վերայ սեղանոյս սրբութեան և պարտական մնաս մարմնոյ և արեան տեառն անմնաքրապէս մերձեցմամբ, զինչ շահ օգտի եղիցի տիեզերաց, աղէ ասա, 'ի սեղանակապուտ լինելոյդ. նա մանաւանդ ո՞ր աղէտք ոչ յորդեսցեն յայնմանէ 'ի վերայ աշխարհի, որպէս գուժեաց աստուածայինն Պաւղոս, ախտաժէտութիւնք դժուարինք, հիւանդութիւնք բազմօրինակք, մահունք յանկարծադէպք։ Յորոց յայսպիսեաց աստի խնայեսցես դու ինձ և զզանազան արկածս գաւառաց և քաղաքաց, ըզդաշտաց, զանդաստանաց, զօդոց և զեղանակաց. արկածք հասարակաց՝ սեղանակապուտ անմաքուր հաղորդութեանց պատուհաս, որովք զօրհնապաղ թշնամանի Քրիստոս։ Օ՛ի եթէ ընդ թշնամանն՝ որ յայնժամ 'ի Պողոթայ՝ որով և փրկագործութիւն կատարեր աշխարհի, այնչափ զարհուրեցան երկինք, սասանեցաւ երկիր, դղրդեցան տարերք, և զընդդէմն բնութեան գործեցին՝ չհանդուրժեալ անարգանաց արարչին. զինչ ոչ գործեսցեն այժմ ընդ նախատինս նորա. նախատինք մերկ, անպատճառք, անպարտակիրք, նախատինք անպտղաբերք՝ անբաժ յամենայն ուշոյ նպատակի ինչ բարեաց, բաց 'ի նախատելոյ։

Հինգերորդ անգամ, դպիրք և փարիսեցիք և քահանայք 'ի խաչ հանին զՅիսուս. քանզի նախանձու պայթէին ընդ փառս նորա. քանզի դառնապէս կշտամբեալ էին 'ի նմանէ, և վայս ահագինս 'ի վերայ վայրց առեալ էին 'ի նմանէ. և առաջի ժողովրդեանն՝ յորմէ ռաբբի ռաբբի երկայնաքղանց հանդերձիւք կոչիլ հեշտանային, նշաւակեալ խայտառակ լինէին։ Բայց դու ով քրիստոնեայ 'ի խաչ հանես զնա 'ի ժամանակին, յորում նա ինայօրէն զթայ 'ի քեզ. յորում զքոյ յանցանսդ չտեսանելոյն առնէ, 'ի ժամանակի՝ յորում մերձեալ քո տալ նմա ուխտանենգութեամբ զհամբոյրն, լուռ կայ հեզութեամբ, ոչ շանթէ, ոչ առակէ աստուածասաստ պատուհասիւն յանդիման հաղորդակցացդ զքոյդ անօրէնութիւն։ Բ. այսոքիւք, յուշ ածցես միանգամ և քանիսն եղեն առ քեզ պարգևք շնորհաց նորա բազմադէմք և անձառելիք յաւուրս կենաց քոց։

digitised by A.R.A.R.@

Հաւատացեալդ դու, զինք անապական արեանն Աստուծոյ, աշակերտ աւետարանին, 'ի յոյս ակնկալութեան երանաւէտ աւետեացն Հրաւիրեալ'ի նմանէ. քրիստոնեայդ, մարմին 'ի մարմնոյ նորա և ոսկր յոսկերաց նորա՝ միջնորդաւ անձառելի միաւորութեանն, դաշնադիր ընդ նմա անդրժելի 'ի լուսածնունդ մկրտութեանն. և ժամ 'ի վերայ այսր ամենայնի անմնաքուր հաղորդութեամբ 'ի խաչ հանել'ի քեզ զփրկիչն, զբարերարն, զկենագործիչն, զպարգևատուն. քանի դժոխքս բեր իցէ ապաշնորհութիւնն. իբր անձառելի յանցանքն, զոր և սրտառուչ'ի խորոց հոգւոյն դանդատէ. "Աթէ թշնամւոյն, ասէ, նախատեալ էր զիս, համբերէի արդեօք, կամ ատելւոյն մեծաբանեալ էր 'ի վերայ իմ, փախչէի արդեօք 'ի նմանէ. իսկ դու մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ, և ծանօթ իմ,, : Մարդ հաւասար իմ, քանզի իբրև մի մարմին և մի հոգի պարտ էր քեզ հաւասարել ընդ իս : Մարդ առաջնորդ իմ. քանզի զքեզ առանձինն ուշ նպատակի 'ի չարչարանս իմ զքեզ կալայ 'ի փրկութեան : Մարդ ծանօթ իմ. քանզի բիւրս ինն բարեաց և մտերմութեան առատաձեռնեալ է իմ քեզ : Այլ արդ գտանեմ ես այսօր փոխարէն, զինչ այլ. բայց թշնամանս և ոտնհարութիւնս. . . . : Ողջան դուրժեմ եղբարք յառաջ ևս խաղալ'ի սոսկալի ձաձիս. . . :

Հայր, աղաղակէր տէր Յիսուս'ի խաչին, հայր թող դոցա՝ իմոյ խաչահանուայն, զի ոչ գիտեն, զինչ գործեն : Այլ արդ 'ի վերայ սեղանոյս սրբութեան, աղէ ասա ով քրիստոնեայ, 'ի վերայ սեղանոյս այսորիկ սրբութեան՝ յորում դու առ ոտն հարկանես զարիւն որդւոյն Աստուծոյ, մարթասցի երբէք և վասն քո ներումն խնդրել'ի հօրէն. յորժամ դու ինքնին քաջ գիտես զինչ գործես : Այլ զիարդ անսերելի ոչ իցէ այս խաչահանութիւն մեր եղբարք. յորժամ և եկեղեցի սուրբ մեծ եղեռն առաւել ձանաչէ զայս յանցանս, իբրու որ զառաւել ահագին 'ի վերայ ածէ պատուհաս դատակնքան, եթէ "Որ ուտէ 'ի մարմնոյ տեառն և ըմպէ յարենէ նորա անարժանութեամբ, դատաստան և դատապարտութիւն անձին իւրոյ ուտէ և ըմպէ,, : Ասէ եթէ դատապարտեալ է. այլ թէ զդատապարտութիւն

digitised by A.R.A.R.@

անձին իւրոյ ուտէ և ըմպէ. այս ինքն է երկնաւոր կերակուրն զոր նա պղծէ, թոյն դժնդակ է նմա այնուհետև, և մեռեալ'ի ներքս միասնանայ ընդ նմա և ողջոյն զմարմինն Ճարակ և լուցկիք դնէ յաւիտենական հրոյն։ Զանգի այլ մեղք ոչ քակեն տապալեն զՀին հաստատութեան հոգւոյն, այլ խանգար գործեն միայն կարողութեանց ինչ նորա. իսկ այս մեղք թոյն մահաբեր է, որ եկեալ ընդ հոգւոյն խառնի, և ոչինչ թողու'ի նմա ողջ և քնաւ իսկ ապականէ. որպէս թէ ասել, եթէ խորհուրդք սրբութեան սեղանակապտեալք ոչ ևս յուսացուցանեն'ի զգաստութիւն և'ի դարձ։ Այլ, քանի՞ ահագին իցէ դատաստանն. և քանի՞ դողութեամբ անձնապահ պարտ իցէ լինել'ի դատաստանէ աստի։ Զանգի և հազիւ երբէք'ի խորոց աստի սեղանակապտութեան ելցէ'ի դուրս միանգամ անկեալն. ամբարշտութիւն, անհաւատութիւն, և խստութիւն սրտի բոյսք դառնութեան են մահաթոյն արմատոյն։ Զ վերայ այսր՝ քաւ չասեմ ես, եթէ արտասուք անբաւականք իցեն'ի լուանալ զանհնարին զմեղսն. այլ թէ ցամաքեալ կան արտասուք։ Ասեմ եթէ եկեղեցի անձեռն հաս իցէ արձակել զայս մեղս. այլ թէ հազիւ երբէք գտանիցին մեղաւորք, որ Ճշմարտապէս ապաշխարեսցեն։ Տեսէք ինձ միանգամ, քանի՞ արտասուելի կիրք իցեն'ի յիշատակի սեղանակապուտ աշակերտին. մահ նորա թշուառ և առաւել թշուառ և յոյս նորա յուսահատ. զգաստանայ, այլ ոչ ապաշխարէ. արտասուեաց թերևս, այլ ոչ լուաց զմեղսն. սրտառուչ մեղայ գոչէ մեղայ. անթողլի մնայ մեղքն։ Զանգի այն ինչ առեալ զսրբութեան հացն լրբութեամբ, և անդէն դիւաբաղխեալ մարմինն՝ տիրէ սատանայ որդւոյն կորստեան. "Յետ պատառոյն ասէ եմուտ'ի նա սատանայ,,. եմուտ և մահ առթեաց նմա. մահ առաւել դառնագոյժ, մեռանի ամայի լքեալ, մեռանի անապաշխար անարգեալ։ Զա աւանիկ և ոչ կարծեաց Յուդա մատնել զտէր իւր և զ'Աստուած, այլ զայր ոք արդար. և յընդունել զմարմին նորա, համարեցաւ ընդունել միայն զյիշատակ և զնշանակ սիրոյն նորա. 'ի վերայ այսր և սեղանակապտութեամբն դիւաբախեալ անարգեցաւ և անապաշխար և անդարձ անձին առնէր։ Զարաշուք դահիճքն յաջո-

digitised by A.R.A.R.@

ղին 'ի դարձ, 'ի խաչահանուացն նորա գտան, որոյ արիւնն զոր ինքեանք հեղին՝ զապաշխարութեանն արդասաւորեաց նոցա զչնորհն. բայց Յուդա որ 'ի վերնատանն գնա 'ի խաչ եհան, և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ և առ ոտն եհար, մերժեցաւ իբրև նզովեալ. նմա ոչ առաքելութիւնն, ոչ հրաշագործութիւնքն, ոչ ընդ տեառն կենակցութիւնն բաւական ինչ լինին 'ի փոխել զվճիռ դատապարտութեանն, կամ ժամանակ շնորհել նմա ապաշխարութեան։

Լրկիցուք սիրելիք, զարհուրեսցուք զի մի և մեք զՅուդային զանձամբ առցուք զդատապարտութիւն. "Փորձեսցէ, ասէ, մարդ զանձն իւր, և ապա 'ի հացէ անտի կերիցէ և 'ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խտրէ զմարմինն տեառն։ Լրհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսէսի, առ երկուք և երիւք վկայիւք մեռանէր. իսկ արդ որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զորդին Աստուծոյ առ ոտն եհար, և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ, որով և սրբեցաւն, և զհոգին շնորհաց թշնամանեաց. ահ մեծ է անկանել 'ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ,,։

Հաց կենաց է և հաց սրբութեան. մի մեռեալ հոգւով և մի շաղախեալ խղճիւ մատիցուք ճաշակել զնա։ Օ իրաց 'ի սրտէ և խոստովանութիւն անկեղծ սրբեսցէ զխիղճ մտաց մերոց 'ի մեռելոտի գործոց, մատչել մանրաբարեկ առ Աստուած կենդանի. 'ի նորն նորոգեսցուք մարդ. մի վայրապար մոցէ Քրիստոս 'ի սիրտս մեր. պահեսցուք անդրժելի զգանձս զայս երկնաւոր. պաշտպանեսցուք ընդդէմ թշնամւոյն, որ ճիգն անդուլ թափէ կողոպտել 'ի գանձէն։ Յարդարեսցուք զհոգիս տաճար արժանի, օթեվան մաքրեալ, պատրաստեսցուք վերնատուն մեծ զարդարեալ, յորում արասցէ Յիսուս ըզզատիկն սրբուք իւրովք հանդերձ։ Աղբիւր շնորհաց, աղբիւր անմահութեան է մարմինն Քրիստոսի. զրաւական յաւիտենական կենդանութեան մերոյ արիւնն Յիսուսի. պահ զգուշութեան ամենայնիւ կալցուք աչքերքն, մի թշնամին գաղտաբար մերձեալ պղտորեսցէ զյստակութիւնն. մի թոյն մահաւորթ ընդ անմահ-

digitised by A.R.A.R.@

արար հայրն խառնեսցէ։ Խոստովանիմք եթէ յանցեաք բազում անգամ. լայցուք սրտառուչ, անկցուք առաջի, պաղատեսցուք արտասուօք. “Յաստուածայրն քո կայ ծակունդ, ո՛վ տէր, 'ի սրովբէիցն անհպելին, անմարբաս պէս մերձեցաք՝ զոլ պարտական քում խորհրդոյ։ Շ ը նորհեա, աղաչեմք զքեզ տէր, հնորհեա վնոյն մաքրութեամբ 'ի թողութիւն մեղաց մերոց,,։

digitised by A.R.A.R.@

ԹՄԲՈՂ ԽՊՈ

Ի ՁԱՐՁԱՐԱՆՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

« Քրիստոսի չարչարիլն մարմնով, և դուք ՝ի նոյն միտս վառեցարուք » :

Օ՜ինչ լեցեալ նորատաքանչ պատահումս . . . : Ա՛վ հրաշալի և տեսիլ ահաւոր . . . : Ցեսանեմ, ասել ոչ բաւեմ. որչափ հայիմ, այնչափ առաւել լեզու իմ՝ի քիմն իմ կցի . . . : Այլ չիցէ՞ ինչ երբեք հնար խօսելոյ զահեղաշրաշ տեսարանէն . . . Այո՛ :

Ա՛ինչչև խօսեալ, նախ ես աղի արտասուօք յերեսս անկեալ, յողբ և՝ի հեծութիւն հատեալ, խոստովանիմ առաջի երկնի՝ որ խաւարաւ պատեցաւ այսօր, խոստովանիմ յարեգակն՝ որ զդէմսն քօղարկեաց այսօր, խոստովանիմ յերկիր, որ սարսեալ դողացաւ այսօր, նաև յարարածս ամենայն որ ակամատեաք եղէն հրաշիցն՝ խոստովանիմ՝ զի զդառնաղէտն զայն և զանագորոյն տեսանն, զոր այսօր ունիմն հռչակ հարկանել, ես ինքնին՝ ես ինքն որ քարոզեմն՝ առթեցի՝ի մահն Աստուծոյ. ես որ քարոզեմն, և առ հասարակ որ լսեմքս : Ա՛հ միաբան ամբարշտեալք հասուցաք նմա զնոյն . “՝Այս վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, և պատժեցաւ վասն մերոց անիրաւութեանց .,, : Ողորմեցարուք երկինք . . . ողորմեաց մեզ ով Աստուած Հայր . . . : Վանի՜ աննեղելի են յանցանքն : Խնայեա տեր, խնայեա՝ի ժողովուրդ քո :

Բա՛ռք, քանի՜ նոր և օտար են իրքն . . . . : Այն ինչ ձեռք թաթաւեալք՝ի ջերաջերմ արիւն Որդւոյն, դիմել

digitised by A.R.A.R.@

խնդրել Հնորհս 'ի հօրէն ... : Սակայն առաւել նոր և
չքնաղ՝ որ ոչ տեսաւ 'ի դարս, եթէ նոյն արիւն այն ինչ
հեղեալ վասն մեր մեղաց, գոչէ և վասն մերոյ փրկու-
թեան. "Այս զմեղս բազմաց վերացոյց. որ մնա-
դիւրն ծառայեաց բազմաց, և վասն անօրէնութեանց
նոցա մատնեցաւ ,, : Բաբէ, ոչ ծառայել միայն և
մատնիլ, այլ և մնադիւր : Դաջմիտ դիք, քանի խնդու-
թեամբ, զիարդ ժրագոյնս 'ի հաշիւ զաւուրսն արկա-
նէր Քրիստոս բոլորապտուղ կամաւորութեամբն :
Այս երկայնաձգեալ յոյժ թուէր ժամն, երբ գիրկս
խաչին արկանիցէ, երբ զվերջին շունչն ընչեսցէ.
"Մկրտութիւն մի, ասէ, ունիմ մկրտիլ. և զիարդ
փութամ, մինչև կատարեսցի ,, : Զոգցես իբրու զօրէ
հարսանեաց ուրախութեամբ բարբառէր. զիարդ փու-
թամ, մինչև կատարեսցի ,, : Ով, եթէ վեց աւուրքք
յառաջ տեսանէիր դու զնա, յԵլանել անդ Իւրուսաղէմ 'ի
Բրուսաղէմ 'ի վայր պատուհասին իւրոյ. զիարդ մեծա-
քայլս յառաջէր, զիարդ յառաջադէմ խաղայր և զկնի
զուղեկիցսն թողոյր. "Այս երթայր, ասէ, Յիսուս 'ի
Ճանապարհին առաջի քան զնոսա. և զարմացեալ էին
որ զհետն երթային և երկնչէին ,, : Յիսուս առաջի,
նոքա զկնի : Երբէք այնպէս 'ի կեանս մեծաքայլս չէն-
թացաւ, որպէս յայնժամ 'ի Ճանապարհին որ տանէր
'ի մահ :

Տեսէր զմտադիւրութիւն սիրոյն : Այլ նոյն սէր,
որում պարտ էր միութարութիւն մեծապէս լինել նմա,
նոյն եկաց մեծապէս ցաւ սրտին նորա. զիտելով չափ
զկիրս տմարդութեան զապաշնորհ մարդկանն : Բանզի
ոչ սիրելովն, և ոչ զմահ Ճաշակելովն առ սէր նոցա, օգ-
տեցոյց ինչ և յանկոյց զնոսա :

Այս է աւադիկ դառնութիւն Զոդոթայ տեսարա-
նին. այս է կնձիռն անլոյծ՝ ցաւագին ողբերգակ քեր-
թուածոյս. այս է ցաւն սայրասուր, և այս դառնաղէտ
չարչարանքն միածին Որդւոյն Աստուծոյ : Զիարդ
մեք արդեօք վայր մի խելամուտ լիցուք ցաւոցն սաստ-
կութեան, զիարդ խելամուտ և մերոյս տմարդու-
թեան ... : Զիարդ ... : Խնդրեսցուք Ճանապարհ,
մտցուք 'ի նեղքս 'ի սիրտ Յիսուսի ընդ խոցս և ընդ
փեռեկեալ վերսն : Ընդ 'ի խորս անձկութեանց սրտին,

digitised by A.R.A.R.@

անդ 'ի հնոցի անչափ վառեալ սիրոյն և աղեկեզ զթոյն, անդանօր միայն տեսանեմք, թէ քանիօն արժեաց նմա ապաշնորհ տմարդութիւնս. քանզի և անդ միայն տեսանեմք քանի սիրեաց նա զմարդկութիւնս։

Սակայն ով մեզ առաջնորդ և կարապետ 'ի ներքս անդ 'ի սիրտնորա, ով հորդեսցէ զՀանապարհն, ո մատնեցոյց արասցէ զշաւիղն՝ որ տանի 'ի սիրտն Յիսուսի։ Ո՞ այլ, բայց դու "Փայտ կենաց, որ փոխանակ մահացու պտղոյն զՔրիստոս պտղաբերեցեր,,։ Դու այն ինչ ջերմ, վառ և բորբոք, 'ի հուր սիրոյ խաչելոյն, որ 'ի քեզ հաձեցաւ զվերջինն փորձել զփորձ զսիրոյն։ Դու այն ինչ թացեալ պատուական և սուրբ արեամբն, և դու տակաւին տպաւորեալ 'ի քեզ վերբերեալ զայնչափ զվէրսն զանապական զաստուածացեալ մարմնոյն։ Դու մեզ, փայտ կենաց, ուստ, դու զմեզ խելամուտ արա, քանիօն սիրեաց զմեզ նա՝ որ ոչ սիրեաց զքեզ բայց վասն մեր։

Ո՛վ քառաթև, լուսածին, գերապանծ նիշ կառուցող կենացն ամենից. ով որ միշտ բաղկատարած առ քեզ զմիածին որդին ունիս. ով աստուածային բանին տեղի և զենարան, դու լսելի արա մեզ զգորովալի բարբառն Քրիստոսի, զոր բարբառեցաւ ընդ քեզ, յորժամ՝ 'ի քառաթևս քո վերամբարձեալ գիրկ ընդ խառն տարածեաց զաստուածային զբաղուկսն և զոտսն, յորժամ՝ 'ի ծոց քո զմիշապսակն հանգոյց զխոնջ զաստուածեղէն զգլուխն։ Ո՛վ քառաթև սուրբ, մեք քեզ երկիրպագանեմք. զի 'ի վերայ քո զենաւ գառն անարատ 'ի հաշտութիւն և 'ի բառնալ զմեղս մեր։ Քեզ երկիր պագանեմք, զի 'ի վերայ քո հեղեալ շիթք անապական արեանն, զաշխարհ հի լուսոյ զմեղս։ Ո՞ՐԵՔ քեզ երկիրպագանեմք, դու յօդնութիւն մեզ ժամանեա յերկս և 'ի մուտս։

ՄԱՄՆ Ա.

Բաղմագոյնք 'ի քրիստոնէից յառեն զակն 'ի խաչելեալն Յիսուս, իբրու 'ի տեսարան առաւել կարեկից ցաւոյն, քան եթէ իբրև 'ինպատակ անձառական սիրոյն։ Բ.ԼՐ այր կայ և վնեմ, հարուածս քանի ընկալաւ նա 'ի

digitised by A.R.A.R.@

թիկունսն, վերս քանի վիրաւորեցաւ յանդամն, չիթս քանիսն կայլակեաց յերակացն, և 'ի հաշուել անդ ըզ ցաւսն դառնութեան զնորա, համարի շատ ինչ բարեպաշտել առ նա։

Եւ՝ բրիստոնեայք, գոչէ աստուածայինն Աւգուստինոս։ Մի՛ տ դիք, զի ոչ մեռաւ Աստուած վասն մարդոյ, զի կարեկցութիւն միայն ընկալցի 'ի մարդոյ, այլ զի և զգութ սիրոյն առցէ 'ի մարդկանէ։ Ուստի և 'ի ձեր կարեկցութեան վշտին, յուզեցէք և զգութ սրտին ձերոյ առ նա։ Յորժամ լսեմք, ասէ, եթէ չարչարեցաւ նա վասն մեր, աղէ մեք զմի արդեօք սիրեմք 'ի Քրիստոս. միթէ զխաչակիր զանդամն, զբացեա՞լ զկողն, եթէ զսէրն։ Սիրեաց նա զմեզ, զի և մեք դարձցուք 'ի սիրել զնա։

Հանպա և մեք, եղբարք, ըստ գեղեցիկ հրահանգաց աստուածայնոյս այսորիկ, ոչ այլ արասցուք այսօր, բայց 'ի խնդիր ելեալ զնեսցուք 'ի Ձառ չարչարանացն տէրունւոյն զոր ինչ յերևան կացոյց նա 'ի սէրն իւր առ մեզ, զի և մեք յորդեսցուք զսէրն մեր առ նա. "Սիրեաց զմեզ, զի մեք դարձցուք 'ի սիրել զնա"։ Զնեսցէք, և տեսջիք 'ի չարչարանսն ամենայն զանբաւութիւն գթոյն, զանսահմանութիւն սրտին, զանչափութիւն սիրոյն առ մեզ. զի և մեք գոգցես բռնի այնուհետև ձգեսցուք 'ի սիրել զնա։ Ակիզբն արարէք խելամուտ լինել այնմ 'ի վերջին յայն բանիցն՝ զոր առ սիրելիս իւր բարբառէր նա մինչ չև դիմեալ 'ի մահն։

Երբև աստուածայինն կատարեցան ընթրիք, յորում իւրովք իսկ ձեռօքն 'ի գրաւական անլուր սիրոյն զմարմին իւր ջամբեաց 'ի կերակուր, և զարիւն իւր յըմպելի, յարուցեալ 'ի սեղանոյն՝ վայր մի զլուսալիր աչսն յաշակերտսն դարձուցեալ, Հանպա, ասէ, "Արդեակք իմիոքբ միւս ևս ժամանակ ընդ ձեզ եմ"։ Այս մեկնիմ 'ի ձէնջ, այլ դուք միացեալ կացէք ընդ միմեանս փոխանակաւ սիրոյն։ Այո, սիրեցէք զմիմեանս. և զամենայն բարի խնդրեցէք վասն միմեանց, զոր միանգամ ես խնդրեցի վասն ձեր։ "Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս"։ Այս գնամ, այլ ոչ թողում զձեզ. "Ոչ թողից զձեզ որբս, գամ առ ձեզ", միւսանգամ խնդալոյն տեսանել զձեզ։ Այս գնամ, այլ զաւանդ սիրոյն թո-

digitised by A.R.A.R.@

զումառ ձեզ. և զնոցն սէր տամ ես ձեզ՝ի կնիք և՝ի նշանագրեստ. «Յայսմ ծանիցեն զձեզ, եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս»։ Օ սիրոյ աղբիւրն զմիութարիչ զհոգին իմ՝ առաքեմ առ ձեզ. նա ուսուցէ ձեզ եթէ որպէս բնութեամբս եմ՝ի Հայր, սիրովս եմ՝ի ձեզ։ Մնացէք ողջամբ, կացէք՝ի խաղաղութեան. «Օ խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ»։ Զ՝ն արիք, տեսցէ աշխարհ, քանի քաղցր է ինձ մեռանել վասն աշխարհի։ Զ՝ն արիք և դուք ընդ առաջ մահու... «Զ՝ն արիք, գնասցուք աստի»։

Օ այս ասաց, և յոտս կացեալ իբրու՝ի գնալ. այլ չթողցեր սերն՝ի գնալ։ Որդեակք իմ, ասէր, բաժանիմք մարմնով, այլ ոչ և սրտիւ. «Կացէք յիս և ես՝ի ձեզ»։ Սէր հօր զոր սիրէ զիս՝ սիրէ և զձեզ։ Որպէս ես սիրեցի զձեզ իբրև որդեակս, զնոցն և դուք սիրեցէք զմիմեանս իբրև զեղբարս։ «Այս է պատուէր իմ, զի սիրիցէք զմիմեանս»։ Մի՝ ակնկալջիք սիրոյն յաշխարհէ. իմ՝էք դուք, և ձերոյ վարդապետին լինջիք վիճակակիցք։ Մի՝ երկնչիք յաշխարհէ. «Դաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի»։ Դուք բարեկամք էք իմ. և փոխարէն խնդրեմ ես՝ի ձէնջ ոչ այլ, բայց զի սիրիցէք զմիմեանս։

Օ բանն, որ առ նոսա, աւարտեաց. ապա յերկինս արգոյ կերպարանաւքն վերամբարձեալ. «Հայր, ասէ, հասեալ է ժամ. փառաւորեա զորդի քո, զի և որդի քո փառաւորեսցէ զքեզ»։ Այս մեռայց, դու փառաւորեսցիս, և աշխարհ փրկեսցի։ Բ՝սաց, և դիմէր՝ի մահ՝ի ծաղկի հասակին, ՝ի գեղեցիկ՝ի տիսն, ՝ի քաջառոյգ անդամն, յելս սկզբան փառաւորեալ կենացն։ Բաբէ, քրիստոնեայք, բաբէ մերում աւաղելի բնաւորութեանս. սպասել մնալ տիոցն լիութեան և ամացն ծանրութեան, և զայն տալ նուիրել Բ՝ստուծոյ։ Այնթէ նա առ սէր մեր ոչ մեռանի այնչափ առոյգ, այնչափ ժիր յարբունսն, ոչ մեռանի գոհ և խնդագին։

Բ՝սաց. և եղ հանդերձ աշակերտաւքն յայնկոյս ձորոյն Կեդրոնի՝ի լեառն Զիթենեաց։ Բ՝այս ձոր է զոր էանց երբեմն Դաւիթ, և այս լեառն Զիթենեաց յոր փախըստեայ ապաւինեցաւ Դաւիթ։ Սակայն զիա՞րդ տարօրինակք և դէպքն և իղձքն։ Բ՝ստանօր Դաւիթ յերեսաց

digitised by A.R.A.R.@

ապաստանք սրդուն ինդրեաց վայր անքոյթ. Քրիս-
տոս ասաց դիմէ երևել աշակերտին մատնչի։ Ապաստանօր
Դաւիթ յանդորրու կացոյց զկեանսն. ասաց Քրիստոս
դիմադրաւեաց մահու։ Ապաստանօր Դաւիթ սրտառուչ
հեղոյր արտասուս. ասաց Քրիստոս ինդու�եամբ եկն
և հրձնուանօք սիրոյն։

Դայ ապա'ի Դեթսեմանի գիւղ փոքրիկ առ լերամբն
Զիթենեաց։ Ինդ'ի պարտէզ մի մտանէ առեալ զերիս
մտերիմսն, զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս։
Ասուեալ գիշերն, խոր լռութիւնն, մեծի վարդապետին
անձկութիւնն, 'ի մեծ վարանս տարակուսի արկանէ
զնոսա։ Ի լոյս աղօտ լապտերին իւրեանց ակնարկեն
'ի դէմս վարդապետին՝ յանսովոր հարեալ'ի դալուկն։
Տեսանեն զնա յանկարծ 'ի խռովութեան ոգւոյ, 'ի հե-
ծութիւն ձայնի, 'ի նուաղումն սրտի։

Որդեակք իմ, ես 'ի խոր տրտմութեան այժմիկ մա-
հու սպասեալ մնամ. աղէ դուք արթուն կացէք ընդ իս.
"Ցրտում է հոգի իմ մինչև ցմահ. կացէք աստ և հըս-
կեցէք ընդիս"։ Անձկութիւն ծածուկ զսրտին յայտ-
նեալ և լուէ։ Ապա քարընկէց մի մեկնեալ'ի նոցանէ,
երեսն'ի գետին անկանի ողբաւոր'ի սաստիկ գրաւեալ
յանձկութենէն... պաղատի... "Հայր իմ, եթէ
հնար ինչ իցէ, անցցէ բաժակս այս յինէն"։ Երիցս
յոգւոց հանեալ, և երիցս անգամ պաղատախառն զնոյն
բարբառի։

Ո՛վ հրաշիցն. զինչ այս աղօթքն իցեն...։ Եթէ
երկինք չլսեն նմա, զինչ լինիցի նմա. և եթէ յանկարծ
լսեն, զինչ լինիցի մեզ։ Կամ սեր նորա դեղևեալ դըր-
դուեցաւ, կամ մեր փրկութիւնն 'ի մէնջ հեռացաւ։
Դա՛ւ, մի՛ քրիստոնեայք, մի՛ վարանել, մի՛ վհատիլ։

Այս անդք անձնատուչք եղեն դժոխքմբեր տերուն-
ոյն՝ 'ի չարչարազդեաց մարմնոյն, զոր անդուստ 'ի վե-
րուստ նախատեսեալ Յովք, "Ողն, ասէ, մթին զաբ
հուրեցուսցէ զնա, անձկութիւն և նեղութիւն հասցէ
նմա"։ Այս աղօթք, թէպէտ և լի ահիւ և երկիւղիւ,
թէպէտ և լի յոգւոցհանութեամբք և տագնապաւ,
այլ ոչ անբաժ յարիութենէ, չէ անմասն'ի քաջալերու-
թենէ. և դառնայ զեղու միւսանգամ առ սերն մեր։
"Այլ ոչ իմ կամք, ասէ, այլ քոյդ լիցին"։ Դառն է

digitised by A.R.A.R.@

այս մարմնոյս, և լի դառնութեամբ բաժակս, "Բայց ոչ որպէս ես կամիմ, հայր, այլ որպէս դու կամիս. արբից զսա, եղիցին կամք քո.,, ։ Այս մեռայց, դու փառաւորեսցիս, աշխարհ փրկեսցի։

Օ այս ասաց անձառելի մեծանձնութեամբն. և անդէն թոյլ ետ բովանդակ մարմնոյն'ի վերջինսն տագնապիլ. ելոյծ զանդամսն, դղրդեաց զներքինսն, ձնշեաց զսիրտն այնչափ ինն սաստկութեամբ ցաւոյն, զի և երակունք չհանդուրժեալ'ի կայնն, կայլակս արեանց ընդ քրտանց ողջ ընդ մարմնոն խաղացուցանէին. "Այլ էր, ասէ, 'ի տագնապի. և հոսէին 'ի նմանէ քրտունք իբրև զկայլակս արեանց, ոլորեն ոլորեն հեղեալ յերկիր.,, ։

Բաբէ. նաև 'ի վերջին տագնապին գտաւ անօգնական, և ոչ մի ոք 'ի մոերմացն յայնցանէ առընթեր, սիրոփել ինչ գնա, ընջել զքիրսն, սրբել զարիւնն։ Օ ինչ ասեմ...։ Վիշտ վտանգին, տագնապ տարակուսին, մութ պատկառանացն, խաւար ամենայն. առընթերակացութիւն՝ փոխան մոերմացն՝ օտար և դժխեմ առ դուրս հասեալ կայր։ Ընջէն մոերիմք, ոչ ննջէ Յուդա. ժամ եգիտ յանձկութեան պահուն, 'ի վերայ հասանէ ամբարիշան։

Օ տագնապ մահուն ջերանի Յիսուս, տապաստ յերկիր՝ 'ի վերայ երեսացն անկեալ գոգցես կիսակենդան. և ահա անդուստ շրջապատ զնովաւ խումբ բոլորեալ սիկարեանցն, դժոխերեան'ինոսա երես չարաշուք մատնը չին՝ առաջնորդ անօրէն ջոկատին։

Օ ի ձեզ ով սիկարեանք, առ ինչ անօրէն ձեպդ. աղէ՛ վայրիկ մի դուլ յանձկութեան պահուն....։ Այստ է աւադիկ Յիսուս նազովրեցի. նա որս է անպատսպար. չիք նմա ոչ վայր թաքստեան և ոչ դաշտ փախստեան, վայրիկ մի թոյլ՝ ոգի առնուլ'ի մահացու տագնապէն։.. Մի դուք այնչափ անագորոյնք, մի դուք զմարմին կիսամեռ կենդանի քարշեսջիք ընդ Երուսաղէմ։ Այլ դու վայր մի պատկառ կաց, Յուդա, երկնաւոր վարդապետին։... Օ ինչ բարբառդ իցէ ընդ օդս հնչեալ...։ Դայ մերձի մնա եղեռնաւորն. աչք ժպիրհք, երես լինեալ, այնպէս մնա դայ, զպիղծ շրթունսն հպեցուցանէ 'ի սրբութիւնն։

Խակ տերն զինչ. նաև բարեկամութեան անուամբն պատուէ. "Ողջ եկիր բարեկամ,,. և առ ինչ

digitised by A.R.A.R.@

եկիր։ Բ.սաց, և զաստուածային երեսն խոնարհէ՝ի համբոյր մատնութեանն։ Ա՛հ խորշի, ոչ ատեայ, ոչ կշտամբէ. նա և զխաղաղութիւն տայ նմա վասն համբուրին՝որ մարտ գրգռէ ընդ նմա։ Որպէս մայր գորովագութ՝ի մահ մերձելոյ զաւակին՝ զամենայն հնարս հնարի գէթ վայր մի պահել զնա՝ի կեանս, սապէս Քրիստոս մօտալուտ՝ի կորուստ տեսեալ զարտասուելին աշակերտ, խոնարհի առ նա մինչև՝ի վերջին գութ հայրական սիրոյն, թոյլ տայ համբուրել զաստուածային երեսն, յոր հազիւ ուրեմն ամենամաքուր շուրթն կուսի մօրն շուք ածեալ համարձակէր մերձենալ։

Բ.յլ մեք վայր մի, սիրելիք, զկայ առցուք աստանօր՝ի փարելի գրկախառնութեանն Յիսուսի ընդ մատնչին. որպէս զի այն ինչ նորա զգիրկն՝ի բաց հանեալ յամբարշտէն, մեք փոխանակ մտցուք՝ի հայրենի գրկախառնութիւնն, ՝ի համբոյր սրտառուչ սիրոյն, աչք՝ի յորդահոսանս արտասուաց գիրկ ընդ խառն լինել նմա՝ի զիրջ հատեալ Աշմարիտ ապաշխարութեան։ Բանզի այն գիրկ որ բացաւ յայնժամև Յուդային անգամ, կորոյս՝ի սպառ այնուհետև զիրաւունս փակելոյ երբեք առ մեզաւորս։ Հապա, արիք քրիստոնեայք, յայն գիրկ գորովալից դիմեալ հանդուսցուք զմեզ։ Ահեպ տուք գրկախառնութեանն, մի դեգերիք մինչև անցեալ դէպ ժամանակին....։

Բանզի խուժեցին աւադիկ ոխերիմք, պատեցան անօրէնք. շողան սուսերք, շկահեն զէնք, կոփեն բիրք, ամբոխ աղաղակին թանձրանայ, ձեռն արկանեն և ունին։

Օ՛ինչ իրք լցեն, Պետրէ, յոր վերայ շողայ սուրն. ո՞ւր է Յակոբոս, ո՞ւր է Յովհաննէս։ Վա՜հ, ահա տերն և վարդապետն՝ի մէջ զինուց և սուսերաց, ՝ի մէջ զօրականաց, սրիկայից...։

Բ.յլ զարհուրի և ոչինչ. յոտն յառնէ անվեհեր իբրև զառիւծ. "զո՞ խնդրէք. ես ինքն եմ Յիսուս Նազովրեցի,,. զիս կամիք, ահաւասիկ ես. կալարուք զվարդապետն, թողէք զաշակերտսն. "Եթէ զիս խնդրէք, թոյլ տուք դոցա երթալ,,։ Ո՛վ անվեհերութեան ոգւոյն, ո՛վ և գորովոյ սրտին։ Բարերար ունիմք զԱստուած, եղբարք, և գորովագութ, և տակաւին չճանաչեմք. ո՞վ

digitised by A.R.A.R.@

ոչ վստահասցի 'ի նա այսուհետև, յորժամ և 'ի մէջ այնչափ անձկութեանց, այնչափ տագնապին, չմոռանայ զիւրան՝ չքանել երբէք. նա փութաջան խնամակալու է սիրելեացն. "Թոյլ տուք դոցա երթալ,,։

Մնէք առ 'ի քէն յոմ երթիցուք, տէր. քաւ չմեկնիմք 'ի քէն, նա և ես մերձեսցուք առ քեզ սիրով. և եթէ երբէք անկաք 'ի սիրոյն, մերձեսցուք առ քեզ ապաշխարութեան արտասուօք։ Սիրտ դորովագութ է քո, տէր. և այնչափ, զի և որ թողեալ զքեզ 'ի վշտին փախըստական երթայ, դու զՀոգն ունիս զնորա անպատմելի սիրով։

ՄԱՍՆ Բ.

Բռաջին հաւաստիք սիրոյն Քրիստոսի 'ի Գեթսեմանի, ստուերագրութիւնք են այնոցիկ, որչափ ինչ տակաւին մնայ նմա ցուցանել յատեանս դատաստանի իւրոյ։ Բստանօր նորա անշուշտ անվեհերն այն և անսասանելի կերպարան, քաղցրահամբոյր հնչիւն ձայնին, հեզ և հանդարտ դէմքն, հանդէպ անպատումք կացին անձառելի սիրոյն։

Բրիք զննեցէք, զիարդ հեզահամբոյրն տէր գայ արդ 'ի պարտիզն ձգեալ պարանաւ ընդ պարանոցն 'ի մէջ փայլատականց սուսերաց և աշտեղից, 'ի մէջ շփոթից խառնամբոխ սիկարեանց, 'ի շաչիւն զինուց զօրականին։ Բնցեալ ընդ Կեդրոն, մերձ կան աւադիկ 'ի պատուարսն Երուսաղեմի։

Բստանօր 'ի ձայն փողոյն հուչակ ընդ ամենայն քաղաքն հարկանի, եթէ Յիսուս Նազովրեցի 'ի վերջն ուրեմն անկաւ 'ի ձեռս արդարութեան դատաստանին։

Լսեն զՀուչակն, ընդոստուցեալք առհասարակ 'ի նոքանէն փողոյն գիշերայնոյ 'ի դուրս վազեն 'ի յարկացն, եկանեն 'ի տանէն, խուժեն 'ի հանթիցն. կէսք 'ի տեսանել զնա յանցանելն առ դրամքն, կէսք 'ի զննել զնա 'ի լոյս ջահիցն 'ի պատուհանաց։

Եւ քրթմնջիւն էր առհասարակ, և շշնջիւն էր առհասարակ, 'ի հծծել, 'ի խօսել, 'ի հարցանել, 'ի խելա-

digitised by A.R.A.R.@

մուտ լինել. զինչ պատահարքն իցեն. իցէ արդեօք Յիսուսի նազովրացւոյ եղեռն այնպիսի, որ աղագաւ այնպէս հրապարակագոյժ քարշեն զնա յարգելան։

Պարանին առ հասարակ. դղրդի Երուսաղէմ։ Իսկ 'ի դարման և 'ի խափան և 'ի զօրավիգն հանդարտութեան վարանաց խուժանին, ո՞ ինձ բաւական իցէ ասանօր 'ի պատմել. քանի՞ յայնժամ չարարուեստ մենքենայք, քանի՞օն խաբանք, քանի՞ հնարիմացութիւնք ոչ խորամանկեցան վասն բանին. որ աղմուկ շփոթիւ ոչ յուզեցան, որ ձեպ ընդ ձեպ քննութիւնք դատաստանին ոչ կնքեցան, որ ամբոխմունք ատենից ոչ դաւաճանացեն յայնժամ։

Երթէ զփուրշիշ ամբաստանութեանն առաջի արկանեն, զլանան լսել զպատասխանին, կամ թէ լսեն եւս, առ 'ի նորոգածին փուրշիշ 'ի վերայ կապել նորա։ Երթէ լուէ, դատակնքեն զնա, զի անպատասխանի մնաց. և եթէ պատասխանի առնէ, դատակնքեն զնա, զի ժպրհեցաւ և ոչ լուռ եկաց։ Հարցումն առնեն դատաւորք քննողաբար համար տալ վասն վարդապետութեան իւրոյ. այլ եթէ ձշգրտէ նա զհամարատութիւնն, խնուն ըզբերանն ապտակելովն. "Այդպէս պատասխանի տաս քահանայպետիդ,,։ Երդմնեցուցանեն ասել պարզ և յստակ, իցէ՞ ինքն որդի Աստուծոյ։ Երթէ նա ժխտէ, յանցաւոր է մեծեղեռն յափշտակութեան փառաց աստուածութեանն։ Աստ եթէ խոստովան լինի, յանցաւոր է անսեթեւելի հայհոյութեանն. "Ուստի զհայհոյութիւն դորա,,։ Այսպէս առանց ինչ հաւաստեաց իրաւանց դատաստանին Կայիափա նախ դատակնքէ զնա իբրև մահապարտ. իսկ ապա՝ 'ի դատակնիքն անդր խնդրէ ըզկարծիս զդպրացն և զատենին. "Օ իմոյդ թուի ձեզ,,։ Ո՛վ զիմոյդ յայնժամ՞ 'ի հարստահարութիւն անմեղիս այսորիկ միաբան միաշունչ դաշնակցեցան առ հասարակ ատեանք, քաղաքականն, արքայականն, եկեղեցականն։

Այս և որ չէրն նորա դատաւոր օրինաւոր, նա և որ չուներ իսկ բնաւ առ իւր ատեան դատողական։ Օ ինչ պէտք, զինչ իրք էին Քրիստոսի ընդ Աստուծոյ. այլ՝ որ յաւուրսն յայնոսիկ ամենեւին անբաժ էր յիշխանութենէ իրաւանց։ Սակայն չէ՞ փոյթ. զի իբրև աներ գոլով Կայիափայ քահանայապետին, արժանի է զի առաջին վայելեսցէ

digitised by A.R.A.R.@

յանդիման իւր տեսանել զդձեալ՝ Լազովրեցին։ Բ.յլ և իշխէ նա առ փեսայն իւր յապահովել զկալանաւորն, պարապնդեալ զնա կրկին կապանօք, "Լու առաքեաց զնա Բ.ենա կապեալ առ Կայիափայ,,։

Զարձեալ ՝ի երաւունք կային արքային Հերովդի ՝ի վերայ Քրիստոսի, իշխել արհամարհել այսն առնել, առաքել զնա անդրէն առ Պիղատոս. ձորձ ՝ի նախատինս զնովաւ արկեալ սպիտակ՝ նշանագրեստ առն յիմարի։ Բ.յլ չէ փոյթ. շատ է եթէ թշնամիք պատուեալք զմի մեանս, զարձցին բարեկամք. զի փոյթ է եթէ ՝ի դատաստանի իւրում անարդեսցի անմեղն։

Զարձեալ զինչ իշխանութիւն էր դահճայն հանդիսանալ իբրև դատաւորս, և տանջանս և անարգութիւն ըստ կամի հաստատանել Քրիստոսի, կանուխ քան զսրիկայսն, ձորձ զգլխով արկանելով ծածկելով զերեսսն, փակելով զաչսն, և այպանօք կատակելով՝ իբրև կեղծ մարգարէ։ Կանուխ և քան զանագորոյնսն, որք զգառնասայր փշալից պսակն՝ անգութ հնարիմացութեամբ պատրաստեալ էին վարսել ՝ի գլուխն իբրու ծաղածանակ, իբրու սուտ թագաւորի։ Խաբէ, յոյց ձեռս անկար տէր, գոչէր ոմն ՝ի սրբոցն. և որ համբերութիւն այլ երբեք՝ բաց ՝ի քոյոյդ, բաւական էր այնչափ կրել և այնչափ լռել։

Բ.յլ է աստանօր կնճիռն դժուարալուծանելի. ո՞ որ արդեօք յայրատագոյնս և վատթարագոյնս վարեցաւ առ Յիսուս։ Բ.րդեօք որ դատապարտ առնէր զանպարտակիրն իբրև մեղապարտ, եթէ նա որ տանջէր զնա իբրև անմեղ։ Դատաւորն հռոմայեցի Պիղատոս քաջ իսկ գիտաց՝ եթէ մեղապարտն այն զոր առաջի կացուցին նորա դառնապէս զրպարտութեանցն նշաւակ եղեալ հարըստահարի. "Անզի գիտէր, եթէ առ նախանձու մատնեցին զնա,,։ Լաւ ոչ միայն Ճշգրտիւ գիտէր առանձինն, այլ և յայտնաբարբառ ևս հրատարակեալ զանմեղութիւն Լազովրեցւոյն, "Ո՞ զինչ չար, ասէ, արարեալ է դորա,,. նա և առաւել ևս հաստահիմն զբանն առնէ յաստենական քննութենէն. "Բ.ռաջի ձեր դատեցայ, և ոչ զինչ վնաս մահու արժանի գտի յառնս յայսմիկ,,։ Իսկ ապա զինչ. զանս և հարուածս դառնապէս տալ ընկալեալ նմա՝ ՝ի ներքս բերել ՝ի բանից անտի. "Խրատեցից զդա և արձակեցից,,։

digitised by A.R.A.R.@

Լեթէ անմեղ է, ո՞ դատաւոր անիրաւութեան, եթէ նախանձու որս է դա, ընդէ՞ր գանից և հարուածոց պարտ եղիցի. եթէ չստուգեցան յանցանք, առ իմ՞ պատուհաս, առ իմ՞ անօրէն վճիռն։ Ո՛վ անիրաւութիւնք. քանի՞ խոնեցան յայնժամ՝ ի մին յայն անիրաւ վճիռ դատաւորին, և քանի՞ հեշտին էր տեառն առակել զայնչափ անիրաւութիւն դատաստանին և զդատաւորին. այլ բնաւ իսկ լռէ համբերող փրկիչն. յայտ է զի ծարաւի է չարչարանացն և ամենայն անարգութեանց։ "Լդի, ասէ, պահապան բերանոց իմոյ. խուլ եղէ և խոնարհեցայ. լռեցի՝ ի բարութենէ. զի եղէ ես որպէս խուլ որ ոչ լսէ, և որպէս համր որ ոչ բանայ զբերան իւր, և ոչ գոն խօսք՝ ի բերան նորա"։

Հանսպա ձեռն՝ ի գործ անօրէնքն. այլ մեզ զիաՀրդ հանդուրժել՝ ի տեսիլ քստմնելի հարուածոցն մոլեաց՝ չասեմ՝ ի մարմին մարդոյ, այլ և ոչ գազանի՝ ի սպանդ վարելոյ։ Այն ինչ եղեալ անօրէն վճռոյն, ահա մոլեգնեալ յայսկոյս յայնկոյս խուճապեն դահիճք՝ ի խնդիր գործարանաց՝ գանից և հնարից տանջանաց։ Օ՜ իաՀրդ նոքա յապուրակի ունին առնուն որ ընդ առաջ եղանէ՝ ի ճահ հարուածոցն։ Կէսք առատակս ոլորեն, կէսք պարանս, կէսք առասանս երեքկնեն, կէսք ոզորս հանգուցեն, կէսք մականս շարժեն, կիսոց սարիք, կիսոց շղթայք՝ ի ձեռին՝ ՝ի մի հարուած տալ զբազումն։

Բազմահոյլք դահճաց յառաջ գան ըստ պիտոյից ժամուն. և անդուստ դու ունկն դիր լսել զչարարուեստ զՀծծիւն գաղտնի զզպրացն և զփարիսեցւոց ընդ ունկն դահճացն։ Բանզի լուան անզգամք զվճիռ դատաւորին հռոմայեցւոյ, զի յետ հրապարակադոյժ գանին հաստատեալ է յարձակուրդ թողուլ զԲրիստոս. լուան զայս, և զինչ մենքենայեն. խիթան անագորոյնքն եթէ ողջ արձակի, գան և հծծեն դրդեն զկալանաւորակապն՝ գանել ձաղկել այնչափ զի և ընդ հարուածովք գանին ընչասպառ արկցի նա։ Բ՚ծանթով անիրաւութեան կաշառեցին զբազուկսն, և սնդաղոյն ևս կորովացուցին, և եղևեալ մի զմիով դահճացն յորդեցին, ո՞ զբ՝ ի նոցանէն նախ սպանցէ զնա։

Լա՜ անդ էր սպա տեսանել, զի սաստկագոյնս այնպէս ամենայեալ չարաշուքքն՝ ի մնկակից գաղտնութենէն,

digitised by A.R.A.R.@

ձայն բարձեալ աղաղակի ընդդէմ ամենահեղն ողջակի-
զի, խուժեն առ հասարակ, ընդհարեալք՝ի վերայ քար-
չեն ձգեն զնա մինչև՝ի սիւն մի գաւթին. անդ մնեցեալն
կորզեալ՝ի թիկանց զհանդերձն, մերկ յոտից մինչև
ցգլուխ այնպէս առակեալ հոլանեն զԼ:ստուած։ Ո՛վ,
բաբէ, ողորմեցարուք ինձ աստանօր ո բարեկամք. ա-
ռէք զիս, տարայք զիս. մի տեսից, չհանդուրժեմ տե-
սանելոյն։

Ո՛վ երկին, ո՛վ երկիր, ո՛վ որ՝ի նոսա տարերաց բնու-
թիւն. ո՞մ արդ կայք, զի՞ յապաղեք, ցե՞րբ է անշար-
ժութիւնդ՝ի սրտմտել, ցե՞րբ երկայնամտութիւնդ՝ի
զնին կալ։ Լ:ւ իցէ՞ ձեզ ժամ տրտմագգեաց առաւել քան
զայս, ո՞ արարածք յորում որ զձեզ գոյացոյց արարիչն, որ
զձեզն զգեցոյց այնչափ զարդու, քօղ մի ծածկութի-
չունի վասն իւր՝ բայց զշար կուսական կերպի շառագ-
նութեանն, որ ողջ զվարդագոյն արիւնն՝ի վեր՝ի գեղ
դիտակին հրաւիրեալ քօղազարդէ։

Զ:յլ աւադիկ նա կապեալ՝ի սիւն անարգութեան՝
սպասեալ մնայ ընդունել՝ի մարդկանէ զդարձ փոխարի-
նի զմեծապէս սիրոյն առ նոսա։ Զ:ոչեա Լ:րեմիա,
"Յիմարեցան երկինք վասն այսորիկ, և սոսկացան յոյժ.,։
Կար զօրութեան իմոյ նուաղեաց, ո՞տայր ինձ վայր մի ողի
և շունչ խօսել ինչ վասն գերաշխարան տեսարանին...։
Ողխոստանամ սիրելիք յանգ զպատմութիւնս հանել.
սակայն ասացից, եթէ կարացից...։ Զ:ասցից եթէ յայ-
տասուաց յորդելոց ոչ հեկեկեսցի ձայն իմ, և՝ի ցաւոց
խուժելոց՝ ոչ մղձկեսցի սիրտ իմ...։ Զ:անզի ձեր այժմիկ
՝ի լսելիս հնչին աւադիկ կոփիւնք և բոմբիւնք հարուա-
ծոց գանիցն, շաչիւն շառաչիւն գործարանաց տանջա-
նացն։

Ո՛վ անդամք գերգք քան զբիւ ական փափկագոյն, ո՛վ
մարմինք անմեղութեան ծաղիկք՝ դրախտին Զ:ստուծոյ
հրաշակերտք յարգանդէ անախտ վերաբուսեալք կուսին
մօր...։ Ո՛վ քանիօն էին խոցքն, քանի՞ պալարքն, քանի՞
խղխայթքն, քանիօն կապուտակք արեանն...։ Յառաջ
նում՝ անդ գանին ողջ՝ի դալուկն հատանի մարմինն, սարսի
դողայ յոտից մինչև ցգլուխ, այլ ոչ թառաչ և հառաչ և ոչ
վայրիկ մի հեծութեան ձայն։ Ցեսանեմ զնա, "Իբրև
այր մի՝ի հարուածս, և զիտեմ համբերել ցաւոց,,։

digitised by A.R.A.R.@

Հաստատուն և անսասանելի իբրև զսիւնն՝ յորում կապեցաւ, և ընդ որով տեղատարափք իջանեն գանիցն ողջ ընդ զուարթածաղիկ իրանն, ընդ թիկունսն, ընդ կուրծսըն, ընդ լանջսն, ընդ ծոցն, ընդ կողսն յաջմէ և յահեկէ անգութ և անխնայ։ Ցեսանեմ զի և 'ի պալարացն պայթելոց յորդահոսանք այնուհետև վտակաց վարդագոյն արեան ողջ ընդ մարմինն իջեալ զերկիր ոռոգեն։ Կեղևեցան մորթք, հալեցան մարմինք, երևեցան ոսկերք։ . . . Որ բռնաբարութիւն ոչ գործեցաւ առ տեղեաւն . . . Բռնաբարեցան և օրէնք 'ի թիւ հարուածոցն. ոչ քառասուն միայն արբուցին, այլ և զհարիւրն, այլ և զհազարն. . . . "Օ թիկունս իմ, ասէ, հարին մեղաւորք, ընդ երկար արարին զանօրէնութիւնս իւրեանց ,,։

Այս սակայն չդլան տակաւին. . . . Այր նա արդէն այլակերպեալ ամենևին, տեսիլ մարդոյ չէր ինչ 'ի նմա. յոտից մինչև ցգլուխ երևէր նա ոչ այլ, բայց հմակ վերք. "Յոտից, ասէ, մինչև ցգլուխ չիք 'ի նմա առողջութիւն. վերք, այտուցն և հարուածք խղխայթեալք ,,։ Այս սակայն տակաւին հարկանեն. . . . Լեարդք և ջիղք արդէն եղծեալք, և մանրաթելք մկանանցն ողջ խանգրեալք, թամբք խղեալք, կողք բացեալք, և ոսկերք ընդ թիւ մնանեն. "Ջորացաւ, ասէ, որպէս խեցւոյ զօրութիւն իմ. և լեզու իմ 'ի քիմն իմ կցեցաւ, և թուեցին զամենայն ոսկերս իմ ,,։ Այս սակայն հարկանեն տակաւին։ Հեղձամղձուկ լինէին մոլեգինքն. զի քան ինքեանք 'ի տանջել, նա առաւել նահատակեր 'ի համբերել։ Հաւմայն և այնպէս Ճիգն թափեն ընդ հարուածովք մահացուցանել։ Իբրև առաջինքն ուժաթափին, երկրորդ կարգին փոխանակեն դահիճք, 'ի վեղ եկեալք առ հասարակ յաղթել անպարտելի արութեան փրկչին։ Ամէպտ և ողջ յարիւն թաթաւեալ ձեռքնոցա, ձորձք նոցա, երեսք նոցա, 'ի վերայ այսր ոչ դադարեն մոլիքն։ Ո՛վ մոլեգնութիւն անլուր, ո՛վ կիրք անագորոյն. ո՞ր կաղաղք զգայուեցին զվագերսն, ո՞ր բայոցք. ո՞ր անձաւք զամենի զազանսն. . . . "Ամենայն էր ժամն և իշխանութիւն խաւարին ,,։

Իսկ զինչ համբերողն փրկիչ խորհի 'ի ժամն. . . . Հաւասիկ ես, ո՛վ հայր. "Այս 'ի տանջանս պատրաստ

digitised by A.R.A.R.@

եմ, և ցաւք իմ առաջի իմ են։ Հար զորդին, այլ թող թշնամեացն, թող զի ընդ բոլորիցն յանցանաց ես կրեցիս պատուհաս. «Այս համբերեմ, ես արարիս, ես անսացիս, ես ընկալայ և ապրեցուցիս զձեզ»։ Արաշխաւոր միանգամ մնի վասն մարդկան ազգի, ես յանդորրու կացուցիս զնա։ Այս ինքն գրաւ վասն մեղաւորացդ, դուք խելամուտ 'ի սրտի ծանեարուք միայն զսէրն. «Այս ընկալայ, ես ապրեցուցիս զձեզ»։ Այսպէս համբերատար ոգին, այսպէս լուիկ հեզաբանեալ խօսի ընդ երկնաւոր հօրն 'ի նախատինսն, 'ի կոտանսն։ Անզի արդել կնքեաց յայնժամ զամենայն խորհուրդ ընդ մարդկան, և միայն ընդ միայն մխիթարի 'ի սէրն իւր վասն մարդկան։ Ո՛վ սէր, մեծ ես քան զամենայն սէր։

Իսկ զանհառելի սիրոյս զհաշակ կանուխ յայնժամ պտղաբերեաց, և նոյն ինքն որ դրժեաց սիրոյն նորա Պետրոս 'ի գաւթին Կայիափայ։ Ուստի և աստանօր թոյլ արասցուք սիրելիք ձերոյ ցաւոյն և մերոյն, և 'ի տրտմահաղորդ կարեկից տեսարանէն զոր ցայս վայր նկարեցաք՝ 'ի զնին գեղեցիկ յուսոյ մեղաւորացս վայր մի դարձուցուք զաչս։

Այնուհետև Պետրոս.... ոչ երբեք հանդարտեցար թողուլ զվարդապետն, և բացագոյնս զՀետ երթայիր։... Բա՛ղ, թուի թէ զկնի ընթանայր նորա ոչ այլ ինչ, բայց յուրանալ զնա։ Ուրանայ երեքկին, չէ՞ շատ, այլ և երդմնակուռ լինի ոչ գիտել, ոչ ճանաչել զնա. «Ես ճանաչեմ զայրն»։

Բա՛ռք անհառելի սիրոյ վարդապետին. զամենայն իսկ զինսան չլսելոյն չտեսանելոյն արարեալ, եցոյց քաջիկ երթեկ սակայն ինքն քաջ գիտէ և ճանաչէ զնա։ Հայեցուած մի ակն հայեցաւ 'ի նա, որ անջնջելի մնաց 'ի միտս նորա։ Յիշանել անդ ընդ սանդուղսն տեսանէ զՊետրոս 'ի խոնարհ 'ի գաւթին, և անբարբառ անքթիթ միայն հայի 'ի նա, և անցանէ. «Դարձաւ տէր և հայեցաւ 'ի Պետրոս»։ Ո՛վ հայեցուած սքանչելագործ։ Յայն 'ի մին հայեցուած աստուածային ակն, միանգամայն ամենայնին խելամուտ եղև Պետրոս։ Այն մին հայեցուած աստուածային եհար տապալեաց ողջոյն զբնութիւն, յոգւոց եհան դառնապէս 'ի սաստիկ ցաւոյն,

digitised by A.R.A.R.@

արձակեաց զսանձն, պատառեաց զթումբն, թոյլ արար յորդահոս ուղխից արտասուացն։ Եւ ապա յայն արտասուաց զամենայն աւուրս կենաց իւրոց երբեք ոչ ցամաքեցոյց զաչսն. "Եւ ելեալ արտաքս Պետրոս, ելաց դառնապէս"։ Իսկ թէ և մատնիչն ինքնին գիտէր զզօրութիւն արտասուացն այնոցիկ, և վստահէր 'ի վարդապետն. և 'ի վիճակին վայելէր իբրև զուրացողն։

Բայց բաւէ, քանիցս տարբերեցան խղճք երկոցուն աշակերտացն մեղուցելոց։ Յուդաս հարկանի միայն 'ի սաստիկ ցաւոյն, այլ յուսակտուր. Պետրոս 'ի զեղջ հատեալ անպայման անձնատուչոր, և բոլորովին վստահ է։ Յուդաս տխրամածեալ երկրապէշ 'ի խորհուրդս ծփայ մահահոտս. Պետրոս վերակնեալ յերկին 'ի խորհուրդս զուարթութեան ոգւոյն։ Յուդաս 'ի պարան մտաբերէ, 'ի խեղդան, 'ի մահ դառնութեան. Պետրոս անդորրաւէտ կեայ, խորհուրդք իւր 'ի կեանս հոգւոյն։ Միրտ բարի, հոգի պարզ, ձգի յեղակարծումն 'ի մեղանչել, ոչ կանուխ խորհրդածեալքան եթէ յաւիրշտակեալ. խռովի, այլ ոչ եքանի. խոնարհի, այլ ոչ սրբտաբեկի. երկնչի, այլ ոչ յուսահատի։ Եւս մեղայ..., լացիս ուրեմն։ Յանցեայ 'ի սէր վարդապետիս, հայցեցից ուրեմն ներումն, ուրացայ զնա Յիսուսաղէմ, դաւանեցից զնա ընդ ամենայն աշխարհ։ Ո՛վ Յիսուս, իմ վարդապետ երկնաւոր. այս զքեզ յուրանալ իմում միայն լեզուաւ, սիրտ իմ զելոյր, սիրտ իմ յիս զդողանի հարեալ սասանէր։

Եւ ապա Պետրոս յայս զիղջ սրտին իբրև տօթով խարուկեալ, փուքացաւ յարեաւ, որպէս զրեն վարդապետք, դէպ ուղիղ զիմէր 'ի մի միայն ապաստանարան փրկութեան իւրոյ՝ 'ի տուն ամենասուրբ մօր տեառն իւրոյ և վարդապետին։ Զոտս անկեալ մօրն և կուսի դառնապէս արտասուօք՝ 'ի հզօր բարեխօսութիւն առ միածին որդին՝ զթողութիւն մեղացն պաղատի. յորմէ և ողջոյն քաջալերեալ աներկմիտ հաւատով հաստատէր միսանգամ 'ի սէր և 'ի շնորհս Որդւոյն։

Եւ այս յայնժամ. իսկ և զարդիս մեզ մեղուցելոցս, սիրելիք, միակ ապաստանարան, միակ ապաւէն փրկութեան, Մարիամ։ Քանզի և անշուշտ, որպէս երկե

digitised by A.R.A.R.@

եկեղեցի, "Այս է միշտ անպաղարեալի բարեխօս աշխարհի, նա է դուռն երկնից, նա Ճանապարհ աղքայութեան, նա մայր փրկութեան ,, ։

Այլ և մեք մեղուցեալքս ընդ Պետրոսի դառնապէս արտասուօք ելցուք 'ի խնդիր Աստուծոյ. գտցուք անշուշտ զՀոգւոյ բարեխօսութիւնն, քանզի և բոլորովին մայր է ողորմութեան ։ Անկցուք առ ոտս, և մաղթեսցուք հաւատով ընդ երջանկին մեծի սրտեռանդն պաշտօնէին Աստուծոյ. "Աստ բեկեալք սրտիւ մատանց տատանումքն յոյս առեալ զարձի, զդէմն 'ի յերկիր եղեալ պաղատիցք մօրդ Յիսուսի. դու զօրաւոր փրկական կենաց խնամի երկնի ։ Խարձրասցի պատիւ քո մեզ, և ցուցցի փրկութիւն մեր քեզ ,, ։

ՄԱՄՆ Գ.

Խայց զարդիս վայր մի զմնաւ ածել աղաչեմ, սիրելիք, զի կենագործ չարչարանք և մահ տերունական ոչ իբրև համաշխարհական միայն շնորհ պարգևեցաւ վասն բոլորից մարդկան, քան թէ իբրև անհատաբար առն առն 'ի մէնջ յուցաւ անպատում երախտիք ։ Աստ 'ի երբեք կարծիցէք քրիստոնեայք, եթէ իցէ ոք յաշխարհի մարդ՝ թէպէտ և հիքացեալ և մուրիկ, թէպէտ և 'ի յոյժ սինլքքոլոյց, որ 'ի խաչելութեանն անյիշատակ թողեալ իցէ 'ի Քրիստոսէ ։

Այլ գնեցաք մեք աստուածային արեամբն իբրու հօտք խաչանց գունդագունդ, այլ մէն մի յոչխարաց անտի նկատեալ ուրոյն առանձինն՝ սիրեցաւ 'ի նմանէ նովին իսկ սիրովն, զոր սիրեաց նա զամենեսեան միահաղոյն ։ "Այս քանզի զմի մի 'ի մարդկանէ Ճանաչէր Քրիստոս, որպէս նրբագոյնս կշռեաց աստուածայինն Աւգոստինոս, Ճանաչէր և զիւրաքանչիւր զյանցանսն, ուստի և վասն միոյ միոյ 'ի նոցանէն մատոյց զանձն պատարագ Հօրն ։ Վասն որոյ և այր իւրաքանչիւր պարտական է նմա, որպէս եթէ ինքն միայնակ փրկեալ էր ,, ։ Յայս իմաստ՝ և յաստուածամերձից ոմն այլ յաւելու այսպէս. եթէ թէպէտ և չէր այլ ոք 'ի մարդկանէ յաշխարհի առ 'ի փրկ-

digitised by A.R.A.R.@

կել՝ բաց 'ի քէն միայնոյ, սակայն և այնպէս չարչարէր նա այնչափ 'ի սէր քո միայն, որչափ ինչ կրեաց 'ի սէր ամենայն մարդկան։ Այլ աւասիկ յայս խղճ երախտագէտ սրտի վառեալ աստուածայինն առաքեալ, այնպէս հայիմ, ասէ, 'ի խաչելեալն իմ տէր, որպէս եթէ վասն իմ միայնոյ 'ի խաչելեալ էր. "Որ սիրեացն զիս, ասէ, և մատնեաց զանձն իւր վասն իմ,,։

Այլ արդ քանզի հասաք աւադիկ 'ի վերջին պատկեր տեսարանի ցաւագին ողբերգութեանս, հապա արիք սիրելիք. սակայն եթէ սիրտ հանդուրժէ, գնասցուք 'ի Գողգոթայ, և յերթանն այր իւրաքանչիւր զայս ասաց ցէ, գնամ աւադիկ 'ի տեսանել զայն ինչ զոր Քրիստոս գործէ վասն իմ։ "Որ սիրեացն զիս, և մատնեաց զանձն իւր վասն իմ,,։

Մէք վայր մի յառաջ թողաք զՔրիստոս 'ի խոնարհ 'ի գաւթին. նա սպասեալ մնայր վճռոյ դատակնքոյն իւրոյ. իսկ անդուստ դատաւորն յետ բազմապատիկ ընդ երկար հարցափորձին գայ յերևան յատեան, և միանգամայն առ ոտն հարեալ զամենայն իրաւունս զաստուածայինն և զմարդկայինն, յետ այնչափ գձանաւք նշաւակելոյ զորդին Աստուծոյ 'ի զուգակշռութիւն յայն անարգաբար հաւասարութեան ընդ Բարաբբային, ընդ աւազակին, ընդ մարդասպանին, արձակէ զմահապարտն և դատապարտէ զարդարն։ Այս յետսամիտ զաչացու քաղաքականութեամբն՝ զի մի յաչաց ելցէ կայսերն, փոխանակէ զԱստուած ընդ մարդոյ տուեալ դատակնիք։

Այլ աւասիկ ձեզ բուն իսկ դատակնիք վճռոյն Պիղատոսի, որպիսի 'ի յոյժ վաղնջուց դիւանագրացն ժողովեաց մեզ Աղրիկսմիոս։

,, Օ Յիսուս Նազովրեցի պատուիրեցի ծողովրդեանն, պանարգեաց զայսոսիկ, և զսուտ մեղադրեալն, որպէս 'ի վայրենեաց աւազակաց ազգին Իսրայելոյ, առէջ ածէջ 'ի գաւառաց հայ վայր մահուան, և անդ էբրեալ սուտ արքայ յառակ նշանակէ 'ի մեջ երկուց աւազակաց հանէջ 'ի խաչ։

,, Հապա դու կալանաւորապէսդ Էրն պարբասպէսն պանալն,,։

Աստուածութիւն տարապարտ, ցուցակութիւն անպատճառ, դատաւոր անիրաւ, դատակնիք անիրաւագոյն. այլ զինչ շահ։

digitised by A.R.A.R.@

Ահաւասիկ խաչն . . . : Ո՛վ, որ քոյ 'ի խնդիր եղեալ իսկ էի մեծափափաք տենչմամբ, խաչ սուրբ, ահաւասիկ գքեզ 'ի մօտոյ աչք իմ ականեն : Ողջոյն ընդ քեզ փայտ կենաց, դու բազմաժամանակեայ իմոյ սիրոյն նպատակ, դու իմոյ ուղղոյս երջանիկ կատարած, դու կենաց իմոց գին սպատուական, դու հանգստեան մահուն իմոյ ասպնջական. "Յայնժամ ասացի, թէ ահաւասիկ գամ ես ,, :

Օ՜ սոյն խաչափայտ, զգործի մահուն, հեծան մեծ և ծանր, չարատանջ մարմնոփն յուս իւր բարձեալ, սիրոյ համբուրիւ զնա ընդգրկեալ, այնպէս քաջաքայլ եղանէ 'ի լեառն. "Ստանձնեալ իւրք զպարտական՝ զփայտն վրշտաց. որպէս զծաղիկ շուշանաց հովտաց. ուսով բարձեալ զգէնն կենաց ,, , որպէս երգեաց աստուածամերձն հոգի. եղանէ եղանէ և յոգւոց հանէ . . . Յրուսաղէմ, թողում գքեզ. "Վանդի բարձաւ 'ի դստերէն Սիոնի ամենայն վայելչութիւն նորա ,, :

Ա՜յլ դու քաղաք ամբարիշտ, եկեսցէ օր, գիտասցես քաջ ո՞վ իցէ նա զոր դու այսօր 'ի մահ առաքես : Տեսցես 'ի մօտոյ, դարձցի նա 'ի պատուարս քո, հասցէ իբրև դատաւոր, որ էլ այսօր արտաքս իբրև յանցաւոր : Ա՜խ աղէտիցն : Ա՜յո՛, հասցէ 'ի վերայ քո իբրև դատաւոր ահաւոր : Ա՜յլ զինչ . . . : Դարձեալ և նոյն աղէտք հանդերձեալք կանուխ այժմէն ցաւս յաւելուն գթած սրտին. "Դատերք Յրուսաղէմի, ասէ, մի լայք 'ի վերայ իմ: այլ լացէք 'ի վերայ անձանց և 'ի վերայ որդւոց ձերոց ,, : Մի՛ 'ի վերայ իմ, կանայք դորովակիզք, իմոյ մահուն արտասուակցորդք. իմ մտադիւր է զուարթութիւն դիմելոյ 'ի մահ : Օ՜այդ արտասուս պահեցէք դուք 'ի վերայ որդւոց ձերոց. "Օ՜ի եկեսցեն աւուրք, յորս ասիցէք, երանի՛ ամլոց որ ոչ ծնան, և ստեանց որ ոչ դիեցուցին ,, :

Ո՛վ հրաշից սիրոյն. նա յայն վշտամբեր 'ի վերջին քայլսն կենաց, յայնչափ անարգութեան անձին, 'ի մէջ այնչափ խառնամբոխ խուժանին ամբոխեաց, 'ի շաչիւն շառաչիւն զօրաց, 'ի դընդիւն ձիոց ամբակաց, 'ի խուժել բազմանոյլ չարաշուք դահձաց, նա անվրդով անսասան 'ի մի սէր սրտին՝ ոչ մերժէ զՅրուսաղէմ, ոչ սրտնի, ոչ ատեայ : Յրուսաղէմ անիրաւի, նա ախտակիցս է նման.

digitised by A.R.A.R.@

Երուսաղէմ դատապարտէ, նա արտասուէ վասն նորա. Երուսաղէմ խաչ պատրաստէ, նա 'ի զգաստութիւն հրաւիրէ զնա. "Ոստերք Երուսաղէմի, լացէք դուք 'ի վերայ անձանց և 'ի վերայ որդւոց ձերոց..։ Բռ հաստակ մոլին ընդդէմ միոյն. մին սիրող է ամենեցուն։

Այլ բաբէ աստանօր նորոյ տեսարանին...։ Հաւասիկ Մարիամ... ահաւասիկ մայր կենդանախարոյկ պատարագ մահակից ողջակիզեալ միածնին...։ Ի՛վ ժամ.. յորում աչք աչաց պատահեցին մօրն և որդւոյն։ Ի՛վ ժամ յորում և ոչ մին և ոչ միւսն հանդուրժէր տեսլեանն իրերաց...։ Մարիամ փութապէս քօղաածածուկ 'ի դէմսն՝ յարտօսր հատեալ ցաւագին տեսանէ և անցանէ. Յիսուս խոնարհեալ զլուսալիր բիբսն՝ անքթիթ 'ի խաչ անդր միայն ակնարկէ...։

Զայն տուք կանանց երամոյն... ո՛վ... որչափ կեցին յաշխարհի, կամ որչափ ինչ կեցցեն. ահաւասիկ ձեզ կին լի անչափ ցաւով, և լի անչափ արութեամբ։ Ի՛ր ոք ակնկալցի տեսանել երբէք 'ի մայր արութիւն այնչափ, մինչև ոչ գտցէ 'ի նմա ցաւ այնչափ...։ Լէգեէ, ոչ անկանի, ոչ նուաղի. "Կայր, ասէ, առ խաչին..։ Ի՛ր ոք դարձեալ ակնկալցի տեսանել երբէք 'ի մայր ցաւ այնչափ, մինչև ոչ գտցէ 'ի նմա սէր այնչափ։ Ցաւ ընդ անչափ սիրոյն անդանօր, և սէր ընդ անչափ ցաւոյն յայնժամ 'ի վէգ զմիմեանսն ելանէին 'ի գերաշխարան տեսանելոյն։ Լու թէպէտ տեսիլ յայնժամ այնպիսւոյ մօր յոգի զորդին հարկանէր, սակայն և անհրաժեշտ կամեցաւ զայն Յիսուս։ Կամեցաւ հաստատուն միշտ առընթեր իւր ունել զնա մինչև 'ի վեր 'ի վայրն կառափման, մինչև 'ի վերջին շունչն աւանդման։ "Կայր, ասէ, առ խաչին մայրն..։ Ո՞ր աղագաւ... որպէս զի ոչինչ այլ ունելով նա թողուլ մեզ 'ի խաչէն, թողցէ մեզ 'ի մանուն զմայրն. "Ահա մայր քո..։

Եւ արդ գայ հասանէ 'ի վայր Գողգոթային, զվերջին քայլն երագեալ Յիսուս ելանէ ընդ զառ 'ի վերն, հասանէ 'ի գլուխ լերինն...։ Ի՛վ լեառն խորհրդոյ, ո՛վ լեառն Աստուծոյ. "Լեառն պարարտ, լեառն մածեալ, լեառն ընդ.որ հաճեցաւ բնակել Աստուած...։

Ահաւասիկ լեառն, ահա օրն, ահա ժամանակն խորհրդոյն։ Աստանօր ահաւասիկ, ուր քառաթեն կան-

digitised by A.R.A.R.@

գնեսցի երկրորդին Պ.ամայ, աստանօր առաջնոյն անկեալ կան ոսկերք։ Պանդի և էր իսկ անշուշտ այն խորհուրդ անհաւելի նախախնամութեան, ասէր աստուածայինն Գրիգոր Նիսոն. "Օ՛ի անդանօր բարձրացեալ հովանի՝ի վերայ կանդնեսցի բժիշկն, ուրանօր անկեալ կայր հիւանդն։" Հաւասիկ լեառն, յորում մեծն այն հայր նահատակեցաւ՝ի հանդէս մեծի ողջակիզի որդւոյն. և այժմիկ աստանօր պատարագ բոլորանուէր մատչի Աստուծոյ որդւոյն։ Որ վերերորդ այսօր, յորում ամենայն զարդու ստեղծաւ աշխարհ. և օր է այս՝ յորում միւսանգամ՝ վերաստեղծի հրաշափառապէս։

Արդ եկն եկաց՝ի վայր մահուն, և դահիճք մոլեգնաբար զհանդերձն յուսոյն կորզեալ. Սակայն աստանօր ձահողակի լուել խնդ ապիկար լեզուի, զի վայելուչ և ամենայն զարդու ստեղծաւ աշխարհ. և օր է այս՝ յորում միւսանգամ՝ վերաստեղծի հրաշափառապէս։ Արդ եկն եկաց՝ի վայր մահուն, և դահիճք մոլեգնաբար զհանդերձն յուսոյն կորզեալ, "Հանին արտաքս իբրև ողջակեզ, կախեցին իբրև ըզխոյն Սաբեկայ ձգեալ զեղջերայն, տարածեցին՝ի սեղան խաչին իբր զպատարագ, բևեռեցին որպէս չարագործ, պնդեցին իբր զապստամբ, զխաղաղութիւնն երկնաւոր իբր զաւազակ, զանկապուտ մեծութիւնն Հօր իբր զտառապեալ, զառ՝ի քրովբէից պաշտեցեալն իբր զքամահեալ, զսահմանն կենաց՝ իբր զարժանաւոր սատակման մահու. զաւետարանին նկարիչ՝ իբր զհայհոյիչ օրինին. զտէր և զկատարումն մարգարէից՝ իբր զհամառօտիչ գրեցելոցն. զօրհնեալն իսկապէս՝ իբր զտարագրեալ, զկապոյ օրինին լուծիչ՝ իբր զայր՝ի նզովս գրեալ, զհաւորն երկնի և երկրի՝ իբր զհաւաստի պատժաւոր....։ Ո՛վ քաղցրութիւն և երկայնամիտ բարերարութիւն ողորմածիդ զթութեան...։

Պանիօն էին յայնժամ ողբք, կոծք սրտառուչք ախտակից որերոյն. արտասուք քանի՛ քամեցան սիրելեացն և բարեկամաց....։ Յիմարեցան և երկինք վասն այսորիկ. զարհուրեցան և զօրք երկնայինք ընդ անկարծելի տեսիլն. զարհուրեցան երկինք և քօղ առին զերեսօք. չըհանդուրժեաց տիւ և գիշերացաւ. անդունդք աղաղակեցին մեծապէս, և լոյս փայլման արեգականն արգելաւ. և որոտընդոստ՝ի վերուստ Հայրն ամենակալ վեր՝ի վայր զտիեզերս դղրդեր....։

digitised by A.R.A.R.@

Իսկ 'ի խաչէն զինչ յայնժամ ամենակալ Աստուծոյն. Փրքք աչացն մահահամբոյրքք վերակենալ ընդ երկինս կամի բարբառիլ.. զինչ... "Հայր Թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն,,...: Ո՛վ սէր անչափելի. ո՛վ անոխակալութիւն անձառելի...: Ո՛ինչչև մեռեալ ի-ցեմ, ով հայր իմ երկնաւոր, մինչչև զվերջին իմ շունչ քեզ աւանդեալ, այս յինէն քեզ վերջին հայցուածս արարուչ. Թող դոցա ամենեցուն՝ զոր ինչ այսօր ընդդէմ ինձ գործեցին ժողովուրդք և իշխանք, դատաւորք և քահանայք, հրեայք և հռովմայեցիք, ընտանիք և օտարք. Թող դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն:

Ո՛իայն լեզուն աղատ կայր 'ի համակ չարչարագեաց 'ի մարմնին՝ որպէս ասաց ոմն յաստուածամերձիցն. և միայն զլեզուն յայնժամ՝ 'ի գործ արկանէր 'ի սէր մարդկան: Այլ 'ի դժարս եղեալ, սակայն խնդագին այնուհետև աղաղակէր մարդասէրն. "Ա՛հա ամենայն ինչ կատարեալ է,,. կատարեցաւ սէրն, կատարեցաւ աւադիկ վերջին փորձ սիրոյն, առ զլրումն Ճշգրիտ տիպար անսահման զթոյն, կատարեցաւ պատկեր քաջի հովուին՝ որ զանձն եդ 'ի վերայ հօտին: "Ա՛մենայն ինչ կատարեալ է,,. Ինքեցան այսօր մարդարէութիւնք. 'ի գլուխ ելին այսօր պատգամքն. տեղի ետուն այսօր օրինակքն և ստուերքն, երևեցաւ Ճշմարտութիւնն:

"Ա՛մենայն ինչ կատարեալ է,,, քամեցաւ բաժակն մինչև ցմրուրն դառնութեան յատակին, հեղաւ արիւնն մինչև ցվերջին շիթն, հատուցաւ աստուածային արդարութիւնն մինչև ցյետին ընիսն...: Ոչ այլ ինչ մնաց, բայց տալ զկեանս: Հապա դուք, որդեակք իմ, առէք ըզվերջին իմ շունչ, և մահուամբ իմով դուք առէք զկեանս:

"Ա՛մենայն ինչ կատարեալ է. Հայր, 'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ,,.... Այլ ապա 'ի կիրս անչափ սիրոյն, խոնարհեցուցեալ զգլուխն 'ի նշան վերջին հնազանդութեան առ երկնաւոր հայրն խոնարհեցուցեալ զգլուխն լի աստուածային սիրովն աւանդէ զոգին:

Այս արդ զտիպ կենդանի չարչարագեաց տեառն Յիսուսի ցայս վայր տեսեալ, որչափ ինչ ասէր ինձ սիրտ իմասել ձեզ սիրելիք, ասացի. իսկ զարդիս քանզի անշնչացեալ մահացեալ 'ի մարմնի տեսանեմ զանմահն Ա՛ստ-

digitised by A.R.A.R.@

տուած, զինչ այլ մնայ ինձ ասել, բայց զոր տերն իմինք նին լուռ բարբառի առ ձեզ յանշնչացեալ բերանոյն. եթէ "Ձեզ ասեմ, իմ հաւատացեալ որդեակք, ձեզ ասեմ, դարձարուք, հայեցարուք յիս միանգամ և տեսէք. հայեցարուք միանգամ, զննեցէք քաջ. և շատ է... ։

Այլ անշուշտ սիրելիք, ո՞ ոք երբէք զակն իւր յառեալ հայեսցի միանգամայն ամենագութ փրկիչ, այնպէս անշնչացեալ՝ի խաչին լի արեամբ, լի վիրօք, և ոչ՝ի գթոյն և ոչ յաղեկեղ յարտասուացն փեռեկեսցի սիրտն, և գոչեսցէ սրտառուչ. "Ո՛վ տէր, ո՞ մահացոյց, որ անագորոյն անշնչացոյց զբարերարդ, զփրկիչդ, զտէրդ..... ։ Այո՛, և բիւրիցս ինձ աւա՜ղ... ես ինքն տէր, ես ինքնին գլխովին... ։ Այլ թո՛ղ ինձ բազմագութ տէր, թող ինձ. զի ոչ գիտացի, զոր գործեցի..... ։

Այանգի և նոյն դէպք ՃՀզբտիւ պատահեցին, սիրելիք, 'ի վայրիս, որպէս յերբեմն ժամանակս դէպք եռուն ցաւագինք, այն ինչ՝'ի նոյն մարտ պատերազմի հայր և որդի նահատակեալ՝'ի խառնամուխ լինել բորբոքեալ գոռոյն՝'ի շաչիւն՝'ի շկահիւն զինուց թշնամեացն, որդին յանդգնեաս՝'ի մահ վիրաւորեալ դիտապատ զիւրական հայրն արկանէ։ Իսկ՝'ի վՃար մարտին՝'ի ինդիր սիրեցելոյ հօրն ելեալ, յանկարծ՝'ի մէջ դիականցն յակն արկեալ տապատ զՀայրն և ծանուցեալ յիւրոց իսկ՝'ի փքնացն խոցեալ զնա, այլ յայլմէ որդին՝'ի ծփել խելացն քարշեալ զալաքն՝'ի կողից հօրն և՝'ի կող իւր գործեալ կշիռ, բա՛ռ, ո՛վ հայր իմ, գոչէր սրտառուչ, ո՛վ հայր իմ եթէ ես զքեզ սպանի, անշուշտ յանդգնեաս, սակայն և և ոչ անցցէ անպատուհաս... աւա՜ղ իմ չար բախտին.. դու ինձ կեանս ետուր, և ես զկեանսդ բարձի՝'ի քէն. արժանի եմ մահուն, զոր քեզ սադրեցի... ։ Օ՜այս ա՜սաց, և լի հեծութեամբ մինչև՝'ի սիրտն մխեալ զալաքն, 'ի գիրկս դիակնացեալ հօրն անկանէր տապատ։

Այո՛, սիրելիք. եթէ՝'ի խնդիր այսօր ելանէք սիրեցելոյ հօրն, գտանէք զնա՝'ի մէջ անկելոցն դիտապատ, արիւնաթաթաւ, վիրալից, և յոգւոց հանեալ գոչեսջիք. ո՞ զբևեռան, ով հայր իմ, վարսեաց՝'ի քեզ. ո՞ զսայրասուր փուշն մխեաց՝'ի քեզ. ո՞ այնչափ վիրօք ելից զքեզ... ։ Այլ ապա այր այր մեռ զնեսցէ, և ծանիցէ զգործ ձեռին իւրոյ... ։

digitised by A.R.A.R.@

Ո՛վ տէր իմ և Աստուած իմ, ո՛վ Յիսուս փրկիչ իմ... այդ աւադիկ վերջդ, զոր ես վիրաւորեցի զքեզ... տեսանեմ քաջիկ, տեսանեմ և ճանաչեմ... Այսչափ ուրեմն մեծամեծք են խոցուածք իմոյս մեղաց... Այսպէս ուրեմն վարեցայ ընդ քեզ անձկալի հայր իմ... Այսպէս ուրեմն՝ ի խոնել խուժել մոլեգին բնութեանս կրիցն բորբոքելոց մարտ եղեալ կռուեցայ ընդ քեզ... Այս ինքն խոցեցի զձեռսդ... ես ինքն զաստուածային կողդ կենարարիդ. ես ինքն բարձի զկեանս կենդանատուիդ... Ո՛հ զինձ հայր իմ, թող ինձ զի ոչ գիտացի զոր գործեցի... Զդ զի գիտեմ, պատրաստ եմ աւադիկ. աստուածային արեանդ հատուցից զարիւն իմ... Զբտասուեցից ցմահ՝ ի վերայ մեղաց իմոց. արտասուեցից՝ ի սէրքո՝ ի վերքան զամենայն... Գիտեմ, զի թողուս՝ ի հնարս կենարար արեանդ... Ո՛վ արիւն Աստուծոյ՝ փրկութիւն իմ... ո՛վ մահ կենարար, ո՛վ չարչարանք փրկչին իմոյ... Զբտասուեցից ո՛վ Աստուած իմ, ո՛վ բարութիւն անսահման, ո՛վ սէր անչափելի... Զբտասուեցից, և դու օրհնեսցես զիս աստուածազութ սիրովդ, որով մեռար վասն իմ։

digitised by A.R.A.R.@

ՔԱՐՈՉ ԽՕՍ.

Ի ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի և 'ի մեռեալս ազատ :

Ո՞՛չ ինչ այս մեծահրաշ սքանչելիք, որ առ հասարակ յապուշ կրթէ զբնութիւն և զմահ, զերկինս և զդժոխս. Յիսուս Քրիստոս յաղթողական փառաբն արտափայլէ 'ի գերեզմանէն, ոչ 'ի դամբնիս և 'ի պսակս զարդարեալ՝ որ ծաղկընկէց մրցանակք են երկրաւոր նահատակաց, այլ Հոխացեալ աւարաբ մեղաց և մահու, որ արժանի յաղթանակն է միայնոյն Աստուծոյ։ Ալ էր տեսեալ երկնից և երկրի զայսօրինակ սքանչելիս, և ոչ դժոխոց զկարելիսն առեալ հարուած, և ոչ աջոյ Բարձրելոյն զայսօրինակ հրաշագործեալ անպատում սքանչելիս։ Ցեսան ապաքէն մեռեալք ոգք 'ի ձայն մարդ գարէից թօթափեալք զքուն մահուն. Եւ ոյժ Ղ ազատոս զդիազարդիկ երիզապինդսն և 'ի ձայն Քրիստոսի յարուցեալ եկաց 'ի չորեքօրեայ թաղմանէն. այլ ոչ ուրեք լսելի եղև՝ զի մեռեալ ոք առանց ուրուք ձեռն տալոյ՝ զաղթայս մահուն խզեսցէ և 'ի գերեզմանէն արտաքս գայցէ. "Առանց օգնականի և 'ի մեռեալս ազատ,,. գերեզման ոչ միայն մատանեալ 'ի ժողովարանէն Հրէից, այլ և շուրջ պարփակեալ 'ի զօրականաց և յանագորոյն թշնամեաց. և ահա ինքնազօր իշխանութեամբն խզէ զկապանսն, փեռեկէ զկափարիչն վիմարդեայ, և ահա

digitised by A.R.A.R.@

բեկեալ խռովի զզօրականն. յայսմ է ահա մեծութիւն սքանչելեաց և անձառահրաշ հրաշագործութիւն. սքանչելիք 'ի հինգհարիւրոցն բերանոյ վկայեալք ըստ գրոց՝ որք միանգամայն տեսին յարուցեալ զՔրիստոս. սքանչելիք որք կարկեալ սանձահարեն զբերանս հակառակորդաց քրիստոնէութեան, ոյր վասն խռովի և ժողովարանն հրէական և վրդովեալ 'ի խորհուրդ մտանէ, և ոչ այլով իւիք քօղարկել կարացեալ զամօթ և զկորանս անձինն, ձեռն արկանէ յառաքեալսն և արգելու նոցա քարոզել զյարութիւն Փրկչին, և այնու լրումն տայ փառաց կրօնիցս և իւրում ամօթահար նշանակութեանն. սքանչելիք այնչափ ևս անսասանք՝ որչափ զի 'ի նորին հաստատութիւն եռուն զանձինս և նոքին իսկ առաքեալք՝ և որք զհետ նոցա վկայք անհամարք։

Զպա արդարապէս յաւուր յայսմիկ ընդէ եկեղեցի զարտօսր յաչաց, 'ի բաց դնէ զհանդերձսն սգոյ, և 'ի խնդութիւն զհեծութիւնսն փոխարկէ՝ և յերգս յաղթութեան զաւանս զլալահառաչ պաղատանսն՝ որովք հնչէին տաճարքն վեհավայրքն յառաջ քան զաւուրս զայսոսիկ։ Զայլ 'ի խնդութեան ասա պահուս քանի տրտմութիւն 'ի դէմս պաշտօնէից խորանին 'ի ծոցի ասա եկեղեցւոյ զհրէական ժողովարանն նկատելով և 'ի քրիստոնեայս՝ հեբրայեցիս խաչահանուս, որոց անհաւատ թուին յարութեանն սքանչելիք։ Զարդ զինչ ինչ առնել ելցէ ինձ այժմ։ եթէ զնոցա անհաւատութիւն յերեսս հարեալ պատկառեցուցից՝ սակաւս օժանդակեսցէ բանս ձեզ հաւատացելոց։ Զի եթէ ամենևին իսկ լքեալ թողից զնոսա անպատասխանի, այլ նովին իսկ և ևս խրոխտապանծ փքեսցին, և զմեր լռութիւն յաղթանակ անձանց համարեսցին։ Զի եթէ Քրիստոս չէ յարուցեալ՝ ընդունայն է հաւատքն մեր, ասէ առաքեալն։ Զմէ ապա հարցուք բուն. բայց զի առաքելոյն ունկնդիր խրատու՝ պարտապան զանձինս ընծայեցուսցուք անմտից և խնամտանց. բարբառեցայց որոց հաւատանն և որոց ոչն հաւատան, և երկոցուն իսկ ճահողակի զբանս յարմարեցից։ Զթէ յարուցեալ է Քրիստոս՝ ապա ստուգաճարհրաշ գործէ հաստատութիւն քրիստոսական կրօնիցս, որով և 'ի վրիպանս և 'ի ցնորս դանդաչէ անհաւատն։ Յարուցեալ է Քրիստոս, ապա ուրեմն և մեք յաւուր միում յարիցուք 'ի նորոգ

digitised by A.R.A.R.@

գատուր կեանս, որով և հաւատացեալն որ 'ի սէր աշխարհիս և աստի կենացս զակատեան է կոյր է և զաչացու. այսոքիկ իմաստք կրկին սերկեան ատենաբանութեանս. Յարութիւն Քրիստոսի խորհուրդ փառաց և յաղթութեան հաւատոց յամենապարտ կորանս անհաւատին. Յարութիւն Քրիստոսի խորհուրդ շնորհաց և փրկութեան 'ի սիրտս առն հաւատացելոյ։ Ընդ ապրացուք սկիզբն բանիս ուստի արժան է սկսանել։

ՄԱՍՆ Ա·

Ընդարձ 'ի սին իսկ աւուր արժան է մեզ յաչս դնել զԹշնամիս կրօնիցս. քանզի և յաւուր յայսմիկ ցուցանեն նոքա զվատութիւն մոլեգնութեան իւրեանց, և զյետասամտութիւն զբանականին. հաւանին ընդ մեզ ասել եթէ մեռաւ Քրիստոս 'ի վերայ խաչին. դարձեալ ոչ ընդդիմաբանեն եթէ յետ երից աւուրց թափուր և ունայն գտաւ գերեզման նորա. նա 'ի վերայ ևս ածեն զի թէ արդարև յարեաւ Քրիստոս, ապա և կրօնք քրիստոսականք գործ է ձեռին Աստուծոյ։ Օ՛ինչ ապա ածեն մեզ 'ի դէմս. զայն թէ իցէ՞ արդեօք Ճշմարտիւ յարուցեալ Քրիստոս. իցեՀն արժանահաւատ առաքեալքն որ զնոյն մեզ վկայեցին. չիցէ՞ մարթ արդեօք թէ խաբել իմն զմեզ հնարիցեն կամ թէ ինքեանք իսկ ըմբռնեալ իցեն 'ի պատրանս։ Ընդ զինչ առ այսոսիկ իցէ պատասխանել, բայց 'ի քնին առնուլ զանցս իրայն, և մանրախուզիւ զդէպս եկակոչել. և յայնժամ ապա տեսանիցէք դուք զի յանդգնեալքդ այդոքիկ 'ի կարծիս երկմտութեան զամենայն ինչ հանելով, անճնաղատ գտանիցեն և զաչացուս և անարդարս զանձինս յանդիմանեսցեն։

Առաջին ընդդիմաբանութիւն զոր արտաձգառեն անհաւատք հակառակ խորհրդոյ յարութեանն այս է. եթէ իցէ՞ ստուգիւ յարուցեալ Քրիստոս 'ի մեռելոց, և չէր մարթ առաքելոց 'ի պատիրս ինչ անկանել զիրացս. և զի արք տգէտք գոլով նոցա և թանձրամիտք ոչ ապաքէն զիւրին իմն էր խաբել զնոսա. որոց միոչ ապաքէն զիւրին իմն էր խաբել զնոսա. որոց մի-

digitised by A.R.A.R.@

անգամ ըմբռնեալ 'ի պատրանս՝ զայլս եւս 'ի նոյն ձգեցին, յորոց և լեզուագարեալ առասպելեացն յաղգաց յաղգս ձգեցան։ — Ա՛ռ՝ խնամատութեանն, մեգ որ այն ինչ Ճառագայթից արեգական յանդիմանեալ և փարատի. զի եթէ արդարև չև յարուցեալ Քրիստոսի՝ առաքեալքն համարէին զնա եղեալ 'ի գերեզմանէն, ո՞ որ արդեօք 'ի նոյն ցնորս արկ զնոսա. քանզի 'ի հաստատել անդ խարդաւանս ինչ գործեալ վասն իրացն, հարկ է ոչ միայն հնարաւոր ցուցանել զնոյն, այլ յայտնի առնել թէ յումմ՝ և զիարդ ծաւալեալ իցեն բարբանջքդ։ Զարդ ոյր ուրուք համարիցիք մեքենայեալ զիրագ։ Թերևս նոյն ինքն Քրիստոս որ 'ի կենդանութեանն զամենայն ինչ յօրինեալ կազմեաց. այլ տուք ինձ պատասխանի, զիարդ ապա Քրիստոս 'ի կենդանութեանն վեր 'ի վայր զիւրոյ յարութեանն զՃառս յեղյեղէր, և 'ի խնդրել փարիսեցւոց նշանս յերկնից ցուցանել նոցա, ոչ զայլ ինչ շնորհեաց նոցա՝ բայց զիւրոյ յարութեանն զքանչելիս, Ճշդագոյնս ժամադրեալ նոցա յառնել 'ի գերեզմանէն յետ երեքօրեայ թաղմանէն։ Զարդ զիարդ որ ոչն էր յառնելոց, կանխագոյն ամօք զիւրոյ յարութենէն Ճառէր. և որ ոչն կարէր յառնել՝ կանխագուշակ լինի այնմ՝ և ուեստ որոց ունկն էր 'ի լսել։ Ի հնարս մտանէր Քրիստոս պատրել զաշխարհս համօրէն, և յարուցեալ զինքն կարծեցուցանել անյարիրն 'ի մեռելոց. և սակայն գուշակէ զյարութիւնն ոչ առաքելոցն եւթ, այլ և դպրաց և քահանայից, և բովանդակ իսկ ժողովարանին, և իւրոց անագորոյն թշնամեացն. և զայն յառաջագոյն ժամանակաւ՝ զի զարթուսցէ զնոցա նախանձաւորութիւն և զմեղեգնութիւն, զի արթուն զնոսա և աչալուրջս գործեսցէ 'ի կարևոր զգուշութիւնն, զի մի արդեօք 'ի պատրանս ինչ ըմբռնեսցին. որով և նմին իսկ դժուարին նա մանաւանդ և անհնարին իսկ իցէ խաբել զնոսա։ Զարդարև ընդդիմախօսութիւն անհամբոյր, ուրովք հարկ է մեզ համարել զՔրիստոս խորախորհուրդ միանգամայն և պարզամիտ, նենգաւոր քան զամենայն դաւաճանս և խօթամիտ քան զամենայն խելացիսորս. Ճարտարիմաց զի հաւատարիմ եցոյց զյարութիւնն հաւկառակ խստապարանոցութեանն Հրէից, միանգամայն և յոյժ անմտացեալ՝ զի ինքնին խոչս և խութս յարու-

digitised by A.R.A.R.@

ցանէր իւրոց խորհրդոցն, և պառակտեսս սիրէր յաչս այնոցիկ զոր կամէին թակարդել։ Այս ընդդիմանալ նուաթիւն հակառակամարտ մնայ և պատերազմող ուղիղ լսելեաց, և 'ի զուր է մեզ յեղծումն նորին ժամանակաւոր լինել։

Արդ եթէ ոչ ինքն փրկիչն, ո՞ արդեօք ապա պատրեաց զառաքեալսն։ Արդ արժան է միւսանգամ 'ի նոյն կեղծիս վերադառնալ, ասելով. եթէ առ տգիտութեան առաքելոցն և առ խօթամիտ ապշութեանն, հաւատարիմ ցուցցա նոցա յարութիւնն Քրիստոսի նորին իսկ բանիւք միայն. մինչ զի չէր այլ ևս կարևոր մեքենաւորութիւնս հնարել. զի պարզմտութիւն նոցին շատ իսկ էր պատրել զնոսա։ Վերեալ ինձ յունկնդրացդ եթէ զյառաջքերեալսն 'ի բազմաց միւսանգամ յունկն ձեր յեղուցում. քանզի իրաւունք Աշմարտութեան զոյն պահանջին. կարի իսկ դիւրամատոյցք էին առաքեալքն 'ի պատրանս յարութեանն Քրիստոսի. այս իսկ է առարկուածն։ Այլ ասելի է, զի թէ և չէր աւետարանին զհակառակն վկայեալ բանիցդ, այլ մեծութիւն ևս իրացն 'ի ջատագովութիւն առաքելոցն մնանէր. ո՞ որ անդէտ իցէ թէ յոր պայմանս կային նոքա յայնժամ, և քանի զգուշութեան էր արժանի նոցին ակնկալիք. քանզի եթէ Քրիստոս ոչ յառնէր 'ի մեռելոց, 'ի զուր էր նոցա զհետ նորին գնացեալ, ընդ վայր թողեալ էին նոքա զամենայն վասն նորա. նա մնաւանդ զհետ կրթեալ առն դաւաճանի, և արժանիք այսր կատականաց ազգին համօրէն։ Իսկ եթէ յառնէր Քրիստոս, հաւատք 'ինմանէ հաստատեալք զտիեզերս պարագրէր, և առաքեալք քան զտիեզերասատատ աշխարհակալսն գերագոյնք քան զԱղեքսանդր և քան զԱլեսար, զհետ յաղթողական կառաց իւրեանց ձգէին զազգս և զթագաւորս։ Արդ յընդդիմամարտ յայս հանդէս փառաց և անարգութեան, չքեղ յաղթանակի և արհամարհ այպանաց, մարթ ինչ էր առաքելոց կալ անվրդով, և ոչ ինչ փոյթ ունել տեղեկագոյնս 'ի վերայ հասանելոց ստութեան կամ ստուգութեան յարութեանն։ Եթէ և կարի խօթամիտք էին առաքեալք, այլ ոչ անձամբ զանձինս պատրէին յայնպիսի դէպս՝ յոր ծանօթութիւն Աշմարտին կարևոր յոյժ էր վասն նոցա, և յին-

digitised by A.R.A.R.@

քեանց ձեռս էր անձնապահ լինել 'ի պատրանացն։ Ո՞չ և առօրեայ փորձ զնոցն մեզ հաւատալ, զի ուրանօր անձին շահու բանք իցեն, և խօթամիտքն անգամ խնամտունք գտանին, նա մանաւանդ գերածայրեալքն հանձարեղք քան զռամիկն գտան դիւրախաբք։ Ա՝ան որոյ եթէ և չէր աւետարանին ասացեալ ինչ թէ զիարդ առաքեալք հաւատս ընծայեցին յարութեանն Քրիստոսի, սակայն և այնպէս մնացն դատաստան գայր նոցին յօժանդակութիւն։

Ա.ԻԼ յանդգնին ասել եթէ կարի դիւրահաւանք գտան յարութեանն Քրիստոսի։ Այթէ արդարև այնպէս դիւրամատոյց գտան առաքեալք ընծայել հաւատս յարուցելոյն, զիարդ ապա յաւետել նոցա Ա՝արիմանց համարեցան զնոսա ցնորեալս՝ և ըստ սրբոյն Ղուկայ "Այրևեցան շաղփաղփութիւն բանքն նոցա և չհաւատային նոցա,,. զիարդ և սուրբն Պետրոս անձամբ իսկ 'ի տես գերեզմանին գնացեալ առաւել ընդարմանայր քան եթէ հաւաներ հրաշիցն. "Գնաց, ասէ, ընդ միտս զարմացեալ թէ զինչ եղև,,. զիարդ և յուղղոջն որ յԱմմաուս թէպէտ և տեսանել տեսանէին առնթեր զՔրիստոս, այլ տակաւին վիճէին զստուգութենէ յարութեանն, մինչ զի հարկ եղև ցուցանել նոցա որչափ ինչ մարգարէութիւնք 'ի Ա՝ովսիսէ և ցայն վայր նախաձառեալ էին զքանչելեացն. և ոչ և այնու շատացեալ՝ ցուցանէր նոցա զվերն և զտեղիս բևեռաց և ըստ ասից աւետարանին "Այս տակաւին չհաւատային,,։ Այս իցէ՞ այս դիւրահաւան մնաց ոչ օտարին հաւատալ բանից և ոչ անձին զլխովին. ոչ հաւատս ընծայել տեսողացն և ոչ աչաց իսկ իւրոց, և ոչ ձեռացն որ շօշափէինն զնա, և ոչ նմին իսկ Քրիստոսի որ հաւատարմացուցանէր նոցա, և համառօտ ասել մերժել միանգամայն զամենայն զգայութիւնսն՝ մինչև առնուլ Քրիստոսի ընդ նոսա զկերակուր, և մերկնել նոցա զբանս և զպատգամս մարգարէից։ Ա՝յս մանաւանդ ասելի է. այնչափ էր նոցա անձնապահ զգուշութիւն չըմբռնելոյ 'ի պատրանս, զի հրաշից պէտք եղեն 'ի հաւատարմացուցանել նոցա զկրն։ Յետ այսչափ երկմտութեանց և աչալուրջ հսկողութեան առաքելոց, եթէ տակաւին պարսաւաղէտք դարձուցեսցեն զնոսա, ասասցեն մեզ եթէ յո՞ր իրս

digitised by A.R.A.R.@

նուաղեալ գտան նոքա, 'ի կարի շրջահայեցութեա՞ն եթէ յանզգոյշ անփութութեան։ Այլ չբերէ ինչ դէմն Աշխարհութեան ասել եթէ 'ի պատրանս ինչ սահեալ իցեն առաքեալքն, զի չէ մարթ ցուցանել զնոսա անհոգացեալ կամ տարուբերեալ 'ի հաւատս. և զի չէ հնար դարձեալ հաստատել զի մենքենայեալ ինչ իցեն հնարք 'ի համոզակեր լինել նոցա եթէ յարուցեալ իցէ վարդապետն նոցա։ Այլ համարձակելի իցէ մեզ 'ի վերայ բերել զի հաւատք առաքելոց ոչ դիւրահաւանութիւն ինն էր և ոչ տկարութիւն և ոչ խոթամտութիւն. և եթէ ընծայեցին հաւատս վասն այն և եթէ՝ զի չկարէին յուրաստ լինել 'ի նմանէ, և համոզակեր հաւանութիւն նոցին յառաջ դայր 'ի յայտնի ընծայութենէ իրացն։

Օ այսօրինակ վանեալ 'ի բաց զընդդիմաբանութիւնդ, և ցուցեալ որպէս և խոստաբանեալ էի, զյարութիւնն Քրիստոսի 'ի քարընկէց կորանս անհաւատիցն, առ նոսա զբանս իմ դարձուցանեմ։ Շնորհեալ ձեզ առ վայր մի յամառութիւնդ 'ի չհաւատալ յարութեանն Քրիստոսի. նա և շնորհեցից ես ում փափաքէք. իբրու զի ձերդ անհաւատութիւն ցոյց իցէ ձերումդ դերածայրեալ հանձարոյ և նրբաշնին մտացդ. այլ այսու և եթէ դաշամբ զի և դուք ցուցջիք ինձ եթէ գուցէ՞ն և ձեր այնչափ ընծայութիւնք 'ի հաստատութիւն անհաւատութեանդ ձերում և անկրօնութեան և խառնակ գնացից, որչափ ինչ ընձեռեցան առաքելոց 'ի հաւատս յարութեանն Քրիստոսի. իցէ՞ և ձեր գնոցն աչալուրջ զգուշութիւնն յանձինս ձեր բերեալ 'ի ստուգութիւն իրացն որչափ ինչ նոքա. և նախ քան զյաւակնել մերժել զյարութեանն կարծիս գուցէ՞ և ձեր 'ի խոյզ և 'ի խնդիր անկեալ իրացն՝ որչափ ինչ արարին նոքա յառաջ քան զհաւատալն թէ արդարև իցէ՞ յարուցեալ։ Վանդի եթէ առաքեալք 'ի դիւրահաւանութեանն իւրեանց իմաստունք ցուցան քան զձեզ, և առաւել քան զձեզ ուղիղ բանիւն վարեցան, զիարդ իցէ ձեզ ապա արս խոթամիտս գնոսա համարել։ Այս յուղիղն եկեսցուք բան և զանկեղծս բարբառեսցուք. Առաքեալք ընծայեցին հաւատս յետ տեսանելոյն և լսելոյն և ընդ փորձ իսկ իրացն անցանելոյ. իսկ դուք զինչ ինչ

digitised by A.R.A.R.@

'ի զրութեանդ ձերում տեսէք, և զինչ և այժմդ տեսա-
նէք։ Եւ ձեզէն իսկ ապաքանեալ խոստովանիք եթէ
շուրջ պատեն զձեզ երկմտութիւնք և տարակոյսք, և
չկարէք և ոչ զքայլ մի յառաջել՝ զի տեսանէք առաջի
ձեր բացեալ զանդունդս խորոց։ Եւ առաքեալքն հաւատա-
ցին 'ի Քրիստոս, այս է յԱստուած մարդացեալ որ
զամն երիս բազմապատիկ սքանչելեօք հաւատարիմ ցու-
ցեալ էր զիւր աստուածութիւնն, մինչ զի չէր հնար
նոցա երկմտել զյարութենէ նորին, առանց 'ի տարա-
կոյս հատանելոյ և զայլոց հրաշից զորս սքանչելագոր-
ծեալն էր առաջի նոցա. զի որպէս բազմադէմ նշանք
նոյնպէս և մին միայն անհաս էր 'ի նորին զօրու-
թենէն. արդ և դուք ցուցէք ինձ թէ ո՞ զոր վարդապե-
տութեանդ ձերոյ էակց սկիզբն և հրահանգիչ, և զոր
նմին վկայք երաշխաւորեացին. ասացէք ինձ աղէ զիարդ
հաւատարիմք ձեզ ընծայեցան վարժապետքդ ձեր յան-
օրէնութիւնս. զիարդ ցուցին ձեզ եթէ հոգին ընդ
մարմնոյ վախճան առնուցու, եթէ Աստուած չհաճի ընդ
պաշտամունս ինչ կրօնից, և թէ կրօնք հաւատոց ան-
խտիրք են յաչս նորա. ո՞ւր են սքանչելիքն 'ի հաստատու-
թիւն անհերեթեթ կարծեացս։ Յետ բազում տարա-
կուսի և երկմտութեանց՝ ապա ուրեմն 'ի հաւատս եկին
աշակերտք. իսկ դուք և ժամանակի ոչ ակն կալայք 'ի
կշռել զիրան. և շատ իսկ թուին ձեզ մտացածինդ ձեր
դժուարութիւնք զինուորել ընդդէմ հաւատոց։ Եւ զի
առաքեալք երկմտեցին ընդ յարութիւնն Քրիստոսի,
թէ և շահաբեր էր նոցա հաւատալ այնմ; և 'ի մեկնու-
թիւնս մարգարէութեանցն ամրապնդեցան 'ի հաւատս.
իսկ դուք ընդ հակառակն յանհաւատութիւն հատա-
ռուք, զի հաճոյական ինչ էր ձեզ եթէ և քրիստոնէու-
թիւն յառասպելեացն էր համարի։ Եկայք ապա զոր
գերահանձարքդ՝ լուսաւորք աշխարհի, ասացէք մեզ
զպատճառսդ որ վասն անհաւանք գտանիք առաքեալ-
սիպ արանցն. և դուք որ զամենայն ինչ նկատէք, չտե-
սանիցէք զի 'ի դատապարտութիւն ձեզ եղիցի նոցին
արհամարհութիւն, և զի չմարթիք զվկայութիւն
նոցին աղարտել, առանց վեր 'ի վայր տապալելոյ և
զձերդ վարդապետութիւն. քանզի թէպէտ և դիւ-
րահաւանք էս լեալ իցեն աշակերտք, այլ կայ մնայ

digitised by A.R.A.R.@

ցուցանել եթէ և գահավէժ խորհրդով բերեալ իցեն իբրև զձեզ։

Բայց չէ շատ ասացեալս, և թէպէտ հզօրագոյնք իցեն ընծայութիւնքս, այլ ոչ կատարեալ է յաղթութիւնն։ Բանզի ասէ անհաւատն. խոստովան լինիմ եթէ առաքեալք չխաբեցին անձամբ զանձինս, և ոչ դարձեալ յայլոց պատրեցան. այլ չիցէ մարթ արդեօք ասել եթէ կամեցան նոքա պատրել զԺամանակակից մարդիկն և զաղգսն հանդերձեալս. և զինչ զարմանք իցեն եթէ և 'ի գործ արկեալ իցէ նոցա զխորհուրդս մնացն, որովհետև հաւատ յարութեանն Քրիստոսի յաւելոյր զփառս նոցա, և շահ օգտի անձանց վառէր զնոսա հաւատարիմ առնել զանցսն հեթանոսաց։

Յառաջ քան զկշռութիւն պատասխանւոյս, աղաչեմ զձեզ տեսարքք նկատել միանգամ զկամակոր շաւիղս անհաւատիցն։ Արտի և յառաջ արս խօթամիտս ցուցանէին զառաքեալսն, այնպէս զի և առանց իսկ պատճառաց հաւատս բերել յարութեանն Քրիստոսի. իսկ այժմ յանկարծոյն յարս դերահանձարս փոխեցան՝ մինչ զի մենքենայս հնարաւորել և զաշխարհ ամենայն որսալ 'ի հաւատս յարութեանն Քրիստոսի։ Արդ առատանօր ամբարշտութիւն անձամբ զանձն նշաւակեաց, և ամբարիշտք անձնամարտք միշտ 'ի նոցն յընդդիմաբանութիւնս դանդաչէին։

Բայց զի ամենևին իսկ անպատասխանի արասցուք զնոսա, նախ զայն առցուք 'ի քնին եթէ ունէին արդեօք առաքեալք 'ի մտի պատրել զազգս. յետ այսորիկ համարեալ թէ իցէ այնպէս, զիարդ 'ի նոցն յաջողեցին, և 'ի վերջէ զինչ ինչ պատահեցին 'ի քարոզելն նոցա յարուցեալ զՔրիստոս. այս երրեակ խնդիրքս որ լրումն տան յաղթանակի հաւատոցն և ամօթահար կորանաց թշնամեացն իւրոց։

Արդ հարցանեմ նախ՝ եթէ հնար ինչ էր առաքելոց զնել 'ի մտի պատրել զազգս մարդկան. կարծեմ զի չիք ոք որ ոչ ներեսցէ ասել, զի առ 'ի ձեռնարկս այսօրինակ խորհրդոց հարկ էր 'ի մեծամեծ պատճառաց ձգիլ յայն, և 'ի յաջողութիւն իրացն կարևոր էին ձեռնտուութիւնք։ Հարցէք ցխաբեբայս և ցհերետիկոսապետս, և տեսանէք զի 'ի կրից ինչ վարեալք բուռն հարին զմեծա-

digitised by A.R.A.R.@

մեծաց։ Այս չէ իսկ հարկ առ հեռաւորս խոյզ և ինդիր առնել. ոչ ապաքէն և նոքա որ ամենայնի հաւատան բայց յաւետարանէն, իցէ թէ նոքա առանց ինչ պատճառանաց զփառս կրօնիցս աղարտել նկրտիցին։ Այլ թէ ոչ վասն այսորիկ զի անհաւատութեամբն իւրեանց ըստ հաճոյից վարեալ աստի կենօքս՝ և 'ի հանդերձելումն չունիցին ինչ երկիւղ կասկածանաց. զամենայն բերկրութիւնս և զհաճոյս աշխարհի վասն անձանց համարին, և խեղաթիւրեալ իմն ազատութեամբ յանդգնին ընդոտնել զբանն մտաց և զաւետարանն և յոչինչ համարին զերկինս և զդժոխս։ Մեծ է արդարև ձեռնարկս, բայց մեծագոյն ևս պատճառն, այս է ախտիցն ցանկութիւն։

Այլ՝ որ պատճառք խրախուսեցին զառաքեալսն յայս ձեռնարկութիւն։ Արդեօք փոքք թէ մեծութիւնք. այլ այսոքիկ ժողովարանին էն բաժին՝ որ թշնամին էր Քրիստոսի և նորին աշակերտաց։ Սէր պատուոյ և հաճոյից. այլ ընդհակառակն կան մնան նոցա նախատինք և չարչարանք. զի այն ինչ հնչեալ աւետիս յարութեան փրկչին սպառնան ատեանք, կազմին տանջանարանք, Պաւղոս 'ի շղթայս, Յոհփանոս քարկոծեալ, Պետրոս 'ի խաչի բևեռեալ։ Զմ խմիք ակն ունին ապա առաքեալք, և զինչ անմտութիւն իցէ մատնել զանձինս տանջանաց և մահու՝ վասն հաճոյից ևեթ պատրելոյ զաշխարհս։ Այլ ասասցէ՝ որ թերևս, զի առ ձեռնպատրաստ յաջողութիւն գործոյն յորդոր եղև նոցա մենաբնակեալ զիսաբեպատիր ստութիւնն։ Այլ եթէ արդարև չէր յարուցեալ Քրիստոս, մնրթ ինչ էր խարդաւանացն մնալ 'ի ծածուկ և ոչ խոյտառակել։ Քանզի 'ի չգտանել մարմնոյ փրկչին 'ի գերեզմանին, ո՞ որ արդեօք գերեզմանակրկիտ անօրէնութեանն գտանէր պարտաւոր։ Առաքեալքն արդեօք. բայց տկարք և երկչոտք և անոք անօգնական, անինչք և անզէնք, ոչ բաւէին զպահապանսն երկիւղիւ ահաբեկել, և առաւել ևս առատաւոր կաշառովք զնոսա կուրացուցանել. և այս ճշմարտութիւն այնպէս իմն աներկբայելի է՝ զի և նոքին իսկ հրեայք ոչ վասն այսորիկ լսէին զառաքեալսն՝ որպէս զի ցուցցեն նոցա զգողացեալ մարմինն Քրիստոսի, զորմէ և ոչ իսկ ամբաստան լինէին զնոցանէ, այլ առ

digitised by A.R.A.R.@

արկելու նոցա ևեթ քարոզել զյարութիւնն։ Այս հրեից միայն հնար էր գողանալ զմարմին փրկչին. և յանելն զնա առ իւրեանս ոչ ապաքէն յարութեանն առասպելք անպատուական մերկանային, զի յայնժամ շատ իսկ էր նոցա եկեղեցուցանել զժողովուրդն և ասել նոցա. Հաւատայք դուք յարուցեալ զՔրիստոս, զի զնոցն բարբանջեն ապերասան աշակերտք նորա. այլ տեսէք միանգամ զի ասա իսկ է մարմին նորա մահացեալ. ծանեայք ապաքէն զիսաբեպատիրն որ կարծէր պատրել զմեզ. և զինչ առնել էր աւելի քան զայս 'ի կարկել զբերանս առաքելոցն և նշաւակ ամօթոյ կացուցանել զնոսա։ Այդ ձեզ մնայ տեսանել եթէ երբէք զանց զայսուիկ առնէին հրեայք զչարեալք և մոլեգնեալք՝ եթէ հնարաւոր միայն էր նոցա։ Հարկ 'ի վերայ կայ ասել՝ եթէ առաքեալքն անհանձարս և հակառակ իսկ բանի 'ի սոյն մտառեցին, անհանձարս զի անհնար էր յաջողելոյ ելից իրացն ակն ունել. և հակառակ մտաց զի ամենուստեք երկիւղ և ոչ ուստեք ակնկալութիւն, ամենայն ինչ նոցա ընդդիմամարտ և չէր ոք նոցին օգնական։ Այդ եթէ չէր մարթ առաքելոց զայսպիսի խորհրդոք գալ առանց մեծաց խոչընդակաց, ձեզ թողում տեսանել թէ զինչ կարծիս արժան իցէ ունել զայնոցիկ որք առաջի առնեն մեզ զսոյն իբրու ընդդիմախօսութիւն անլուծանելի։

Այլ սակայն համարեսցուք հակառակ ամենայն հաւաստեաց ասել, եթէ 'ի մտի եդեալ իցէ աշակերտաց պատրել զմեզ. տեսցուք ապա թէ զիարդ հնար էր նոցա առնել զայս. և ածցուք զառաքեալսն 'ի հանդէս՝ որպէս զպատմաբանս և որպէս զքարոզս յարութեանն Քրիստոսի։ Այս նախ որպէս պատմաբան յառաջ մատչի սուրբն Պետրոս վկայ ականատես գործոց փրկչին և նոցին չարակրութեանց. արդ յետ միանգամ ասելոյ եթէ խաչեցին զնա հրեայք, յաւելու ասել զայսոսիկ բանս արդարակշիռս. "Աստուած յարոյց զնա 'ի մեռելոց յաւուրն երրորդի, և երևեցաւ աւուրբք բազմօք այնոցիկ որք ընտրեցան վկայք Աստուծոյ..։ Յետ բազում ամաց զսոյն կրկնաբանեն գողգես և սուրբն Պաւղոս. զորոյ զբանսն կամակորեալ անհաւատից ասեն, "Եթէ մեռ Քրիստոս ամենեցուն քաջածանօթ եկայ, այլ անյայտ եկայ յա-

digitised by A.R.A.R.@

րութիւն նորա։ Այլ զիաւրդ ոչ մարթացան գուշակել զայս երկմտութիւն սուրբն Պուկաս և այլ աւետարանիչք և առաքեալք, զորմէ մարթ էր կասկածել և կարի պարզամտաց. զիաւրդ ապա առաքեալքն ոչ առին զայս 'ի միտ և ոչ զելի աղագս գտին ընդդիմադրութեանն։ Օ՞ինչ արդեւոյր նոցա ասել եթէ յելս 'ի զերեզմանէն երևեցաւ Որդին Աստուծոյ 'ի տանի Օստկին 'ի տաճարի անդ յանդիման բազմութեան ժողովրդոց. և թէ որչափ վկայք կացին մահուն, նոյնչափ և առաւել ևս յարութեանն, զինչ արդեւոյր զնոսա՝ եթէ ոչ անխառն նոցա ճշմարտասիրութիւն։

Այլ այդ չէ պարզութիւն՝ ասէ հակառակորդն՝ նա մանաւանդ խոհականութիւն և երկիւղ արդարացի. քանզի կարի անպատկառ լինէր յայնժամ ստութիւնն, և ինքեանք որպէս վկայս ստերդմունս յանդիմանեալք պատուհասէին։ Այլ տես եղբայր, զի ուրացութիւնդ այդ զյարութիւնն Քրիստոսի, հաստատէ զստուգութիւն յարութեանն Պաւղարու, և այլոց բազմապատիկ սքանչելագործութեանցն Փրկչին, որոց մերձ կան պահանջեալքն 'ի քէն նշանք յայտարարք, այս է զի 'ի Հրէաստանի և 'ի Գալիլեայ առաջի բազմութեանն գործեցան։ Այն երկիւղ որ անձնապահ արար զնոսա յասելոյ եթէ Քրիստոս յետ յարութեանն երևեցաւ բովանդակ քաղաքին Երուսաղէմացւոց, նոյն երկիւղ ապաքէն զգուշացուցանէր զնոսա քարոզել և զայլ նշանս արարեալս 'ի վարդապետէն իւրեանց. այլ զսոցանէ ինչ ոչ զանգիտեն հռչակ հարկանել եթէ առաջի անհամար վկայիցն հրաշագործեցան։ Հաւասիկ տեսարք, պատճառինդրութիւնք անհաւատից ոչ այլ իմիք գան պիտանացու, բայց 'ի խայտառակել զնոսա, յորժամ 'ինեղ անկեալք այլ և այլ պատճառս կարկատեն զնոյնօրինակ գործոց, նա մանաւանդ հակառակս իրեարաց և ընդդիմախօսս. զմի և զնոյն բան տալով երկչոտութեան և լպիրշ յանդգնութեան, շրջահայեցութեան և անխոհեմութեան, պարզութեան և նենգաւորութեան։ Այս 'ի սպառ անիրաւ և ընդունայն է ընդդիմաբանութիւնս այս անհաւատից։

Պարձեալ եթէ խոհականութիւն չներէ զինքնահրնար կեղծիս և զայսմանի ստութիւնս ծաւալել 'ի բնիկ

digitised by A.R.A.R.@

աշխարհս և 'ի ժամանակս մերձաւորս առ ահի 'ի վեր
եկանելոյ պատրանացն, իցէ թէ նոյն երկիւղ առաջի
կայցէ և յայլ յաշխարհս հեռաւորս և 'ի ժամանակս
տարանջատս, յորս ոչ ուրեք գտանիցին վկայք ճշմար-
տութեանն՝ որք զպատրանսն խայտառակել մարթասցին։
Հաւանին ասել, զի եթէ ասացեալ էր նոցա վասն
Քրիստոսի յետ յարութեանն երևեալ փառաւք՝ իբրու
սուտ վկայս դատապարտելին առաքեալք Յերուսաղէմ և
'ի Պաղեստինացւոց աշխարհին. այլ միթէ գոլոր ինչ
նոցն վասնզ վերահաս 'ի Հռովմ և Յասիա, Յալեքսանդրիա
և 'ի Պարթեւս. ոչ ապաքէն անպատուհաս մարթ էր
նոցա յետ բազում ամաց և 'ի մէջ այլազան ժողովրդոց
և հեռի 'ի Հրեաստանէ կարկատել ըստ մտի զվէպսն։
Այլ ջանանն բնաւ յանձն զայն ոճիր և զվատութիւն.
և պարզութիւն աւետարանչացն և ճշմարտասիրութիւն
յամենայն վէպս նոցա ակն յայտնի տեսանի։ Ի պատ-
մել նոցա զվէպս աստուածորդւոյն, և զանձանց զեր-
ութիւնս չպատկառեն ածել 'ի մէջ. պատմեն զփա-
խուստ իւրեանց 'ի մատնութեան գիշերին, և զլքանել
թողուլ զվարդապետին, զամօթապարտ և զանսաստ
թերահաւատութիւն, զվատութիւն իւրեանց 'ի կալա-
նաւորել Քրիստոսի և 'ի մատնելն 'ի ձեռս թշնամեաց.
ասեն զուրացութենէն Պետրոսի և զմատնութենէն
Յուդայի և չլռեն ամենևին որ ինչ մարթ էր ստուե-
րածս ածել զփառաւք վարդապետին. նովին անկեղծու-
թեամբ կարգեն զփառս նորա և զանարդանս, զվիշտսն և
զլքանչելիս, զարհամարհանս և զզօրութիւնն, զայլակերպ-
ութիւն և զաւանդումն հոգւոյն, զչարչարանս և զյաղ-
թութիւնն, զմահ խաչին և զյարութիւնն 'ի մեռելոց.
ոչ ուրեք անձանց չքմեղութիւն և ոչ գոլութիւն վար-
դապետին, ոչ թշնամեացն անէծս և ոչ ատելեացն տրը-
տունջս։ Արդարև պատմիչք արժանահաւատք, և ոչ
ուրեք գտանին որ ընդ աւետարանչաց գայցեն 'ի զու-
գակշիռս։ Այս արդարև անմիտ է անհաւատն՝ որ 'ի լուր
նոցին ոչ ամոքեսցի. որոց անկեղծութիւն հրաշացու-
ցանէ և զայնոսիկ որք ոչ ունին մատուցանեն վկայու-
թեանց նոցա։

Արդ ցուցցեն մեզ անհաւատք, եթէ որպիսի դաւոք
և նենգութեամբ հնար էր առաքելոցն քարոզչաց զյա-

digitised by A.R.A.R.@

բութիւնն Քրիստոսի հաւատել։ Այլ նախ ընդհան-
յուք նոցա ասել եթէ առաքեալք կարի պարզամիտք
ոմանք էին առ 'ի զնրբին դաւադրութիւնս հնարելոյ,
բայց ոչ և այնքան զի անբաւականք իցեն կարկատել
ինչ պատրանս խաբէութեան. և արք այնպիսիք որ 'ի
մտի եդեալ էին պատրել զաշխարհս համօրէն, անշուշտ
և զգուշութիւնս ինչ 'ի ներքս բերէին։ Այլ ընդէր իցէ
զի ոչ միայն որ ինչ ձեռնտու էր խորհրդոց իւրեանց
զանց առնէն զնոքօք, այլ և ամենևին իսկ զհակառակացն
բուռն հարկանեն։ Քանզի ուր արդեօք քարոզէն
զյարութիւնն Քրիստոսի, բայց Յերուսաղէմ՝ յանդի-
ման ժողովարանին, այս ինքն է 'ի մէջ դժնեադացն թշնա-
մեաց իւրեանց, 'ի մէջ ամբոխին մոլեգնելոյ որ 'ի պատ-
րաստի էր մահու դատել զնոսա՝ կարի յոյժ նպաստաւո-
րելով ինքեան պատրանացն յայտնութիւն։ Այլ երբ
արդեօք քարոզէն յարուցեալ զՔրիստոս. բայց եթէ
յետ քանի ինչ աւուրց մահու նորա, մինչ տակաւին
անմոռաց էր անարգութիւն չարչարանացն և կենդանիք
էին խաչահանուքն, առաջի կային տանջանարանքն և
Գողգոթա արիւնազանգ ծխէր և ջերաջերմ, և կա-
մէին իմն 'ի տեղիս անդ անարգութեան ամբառնալ
զյաղթանակս փառաց նորա։ Արդ որչափ և անզգոյշ
և անաջողաձեռն համարեսցին նենգաւորք, այլ չմարթէ
այսչափ խօթամիտս զնոսա կարծել։ Անշուշտ կացեալ
մնացեալ էր նոցա փարատելոյ մրրկին, և հանդարտելոյ
մոլեգնութեան ժողովրդեանն, և խաղաղելոյ մտացն
ամբոխելոյ. և առ այսոսիկ զգուշութիւնս իցէն ինչ
կարևոր միտք խորաշնինք։ Արդ զիարդ համարձա-
կեալ էր աշակերտաց Քրիստոսի զյարութենէ վար-
դապետին Ճառ արկանել, յորժամ բովանդակ Հրեաս-
տան ընդ մահ նորա վրդովեալ էր. մինչ դեռ առ զայ-
ցոյթ կատաղութեանն դեռ ևս մնչէին և դատաւորք
որ զնա մահու պարտաւոր դատեալ էին, և դահիճք որ
խաչեալն էին և ժողովուրդն որ ամբաստան լեալ էր
զնմանէ։ Հաղիւ ուրեմն առ ահին առաջի ժողո-
վրդեանն համարձակէին երևել, և զիարդ մարթ էր
նոցա պատրանս հնարել 'ի խաբել զնոսա։

Արդ իմ յանհաւատս անդ ապաստանեալ զգատս
առեմ. եթէ անդք յորոց վերայ հաստատեալ են կրօնք

քրիստոսականք առաժամայնք ինչ էին, և կամ մեք մեր-
ձաւորք ժամանակաւ Քրիստոսի մինչև ականատես լի-
նել կենաց նորա և հրաշից, հնար ինչ էր մեզ այնքան
լրիւ յանդգնել, և զայսօրինակ ընդդիմադրութիւնս
առաջի արկանել. և եթէ նոքա այսչափս յան-
դգնին յաւուրս մեր՝ ոչ վասն այնորիկ է զի հաւատք
ամ ըստ ամէ տկարանան, զի դէպք անցից այսչափ
դարուք 'ի մէջ հեռաւորք սակաւ ազդէն 'ի հոգիս, և
զի ընդ մէջ մեր և Քրիստոսի դարք քսան կան անջըր-
պետ։ Ուստի է արդ նոցա վիսութիւն, աստի յանդգնու-
թիւն 'ի հնարս այսպիսեաց ընդդիմաբանութեանց։
Իսկ արդ եթէ օժանդակութեամբ երկուց հազարից
ամաց 'ի սկզբանէ անտի կրօնիցս՝ չմարթացան անհա-
ւատք ձգել յիւրեանց մոլորութեանն աշակերտութիւն
բայց զսակաւս ևեթ, ապա զիարդ, աղէ ասա, առաքեալք
յետ սակաւ ինչ աւուրց մահուն Քրիստոսի խրախու-
սեն զյարութիւն նորա քարոզել, և հաւանեցուցանել
իսկ զբովանդակ աշխարհս։

Ա.ՅԼ յայտնագոյն քան զամենայն ընծայութիւնս 'ի
հաստատութիւն յարութեանն Քրիստոսի, այն անցք
են որք 'ի քարոզելոյ առաքելոցն պատահեցին. նշանք որք
'ի ծաւալելն ցուցան և աքանչելիք որք 'ի ձեռն առաքե-
լոցն գործեցան 'ի հաստատութիւն քարոզելեացն։ Այ-
աստանօր չեն մեզ պէտք զանհաւատիցն զընդդիմադրու-
թիւնս հերքելոյ. ինքնին իսկ առաքեալք բաւականք են
'ի հաւատարմացուցանել զվէպս իւրեանց։ Այ՝ինչն յուշ
ձեզ լիցին պայման եղկելի ձկնորսացս զկնի եղերական
մահու վարդապետին. յառեցէք զաչս ձեր և 'ի նա ինքն
Աստուածն մարդացեալ, որ հրաման տայր տարերաց
և մահու, և որ աքանչելագործութեամբքն հիացուցեալ
էր զբովանդակ Իրէաստան. և արդ մատնեալ մոլեգ-
նութեան հալածչաց իւրոց, դատապարտեալ մեռեալ
և թաղեալ, և 'ի նմին շիրմի ծածկեալ և անուն նորա
և փառք և իշխանութիւն. և ժողովարանն զուարթա-
ցեալ ընդ վրէժխնդրութիւնն և ընդ յաղթութիւն ան-
ձինն։

Այ 'ի խաբուսիկ խաղաղութեան անդ և անդորրու-
թեան, զինչ ձայնս արեղ իբրև զշառաչ շանթից կայ-
ծականց։ Յետ սակաւ պահուն Յիսուս որ մեռեալ և

digitised by A.R.A.R.@

անյիշատակն կարծէր, միանգամ գայ 'ի տեսիլ. տեսեալ էն զնա առաքեալք, և համարձակաձայն զնոյն վկայէն, և առ ամենոս ժողովրդեանն որ առ նոսա ընթացեալ էր յաւուր Պենտեկոստէի զայսօրինակ բարբառին. Լուարուք ժողովուրդ, այն Յիսուս զոր սպանէքն յարուցեալ է և մեք վկայեմք։ Ա.յլ դուք ոչ ընծայէք հաւատս մերոցս բանից, և ասէք թէ և դաւ է և ստութիւն առ 'ի զմեզ պատրելոյ։ Ա.յլ մեք հաստատեմք և ևս զի խօսակիցս իսկ և կենակիցք եղեաք ընդ նմա. իսկ դուք համարիք զսոյն առ աչօք ինչ տեսիլ ցնորական։ Հաւատարիմ առնեմք զի ոգիք առաւել քան զՀինգ հարիւր ականատեսք կացին նորա. այլ համարիք դուք զի և նոքա իբրև զմեզ խելայեղեալք իցեն և ցնորեալք։ Ա.պա քան զբանս և վկայութիւնս այլ ընծայութիւնս խնդրիցեք. այլ ոչ ինչ և յայնց չքաւորեսցուք. հրաշս կամիցիք և սքանչելիս որք առաւել քան զայլ ամենայն փաստս երաշխաւորեսցեն Հմարտութեանն. ահաւասիկ եմք, եթէ իցեն ձեր ախտացեալք բժշկեսցուք, եթէ դիւահարք՝ հանցուք զնոսա, համբոս և կոյրս և տացուք նոցա խօսել և տեսանել։ Կամիցիք 'ի կեանս կոչել զմեռեալս, կենդանացուսցուք և զնոսա. կամիցիք զի 'ի լեզուս խօսիցիմք, եկեսցեն ամենայն ազգք աշխարհի պարթևք և մարք և իլամացիք և յամենայն ծագաց երկրի, և բարբառեսցուք մեք նոցա և լսիցեն. և զայլ զոր և է նշանս և կամիցիք, ասացէք, և լիցի ձեզ 'ի մէջ շնորհեալ։ Ով ազգ 'ի լուսոյ բանին խաւարեալ՝ եթէ այսոքիւք ոչ կամիցիս Հանաչել զՀմարտութիւնն և զզօրութիւն յարուցելոյն Քրիստոսի և իւ արդեօք զնոյն ծանիցես։ Ա.րդ որ տայն մեզ կարողութիւն 'ի կենդանութիւն կոչել զմեռեալս 'ի գերեզմանէ, չիցէ՞ կարող անձամբն զանձն յարուցանել։

Լաստովան լիցուք ապա զի բարբառ զայսօրինակ զամենեցուն իսկ զմիտս գերեր 'ի հաւանութիւն. ցուցակութիւնքս այսոքիկ ամենևին իսկ անպատասխանի են, որք և զբովանդակ իսկ զաշխարհս հաւանեցուցին. և յետ այսորիկ անմարթ է ինձ բան մի ևս յաւելուլ առ 'ի զյաղթութիւն և զՀմարտութիւն կրօնիցս հաստատելոյ։ Յիսուս Քրիստոս յարուցեալ է 'ի մեռելոց, և անհաւատութիւն որ 'ի դիւականվարժոցս վարդապետեցաւ

digitised by A.R.A.R.@

չկարաց և չկարասցէ դրդուեցուցանել և կամ մթագնել զայս Ճշմարտութիւն։ Ա՝ սան որոյ և ամենայն որ ինչ արարաւ և ասացաւ 'ի Քրիստոսէ, և զոր հրամայեացն և ուսոյց յաւետարանի անդ, և սքանչելիք նորա և վարդապետութիւնք, ամենայնքն Ճշմարիտք են և սրբանուէրք։ Յարութիւն նորա սահմանեալ էր 'ի ցուցակութիւն առաքելութեանն իւրոյ. նա ինքն կանխագուշակ լեալ էր այնմ իբրու զգերագոյն հրաշիւ իւրոյ կարողութեանն, որ 'ի կնիք աւետարանական Ճշմարտութեանցն հաստատեալ էր և յասպաբանութիւն իւրոց թշնամեացն. և ըստ ասելոյ սրբոյն Գ՝ դոստինոսի "Յարուցեալ է Քրիստոս, ապա և ամենայն ինչ հաստատեալ,,։

Յարեաւ Քրիստոս. ապա ուրեմն զօրութիւնն այն մնաց որով պարծի անհաւատն՝ տկարութիւն է ամենևին. քանզի չկարէ հաստատ լինել այնմ զոր 'ի միտ էառ աշխարհ ամենայն, և չկարէ հաւատալ այնմ ում հաւատացին բովանդակ տիեզերքս։ Յարեաւ Քրիստոս. ապա անպատասխանի է անհաւատն և ապաքան ամենևին, չմարթի այլ ևս ցուցակութիւնս խնդրել յայտնագոյնս։ Ի զուր է նմին ասել եթէ աշխարհածանօթ հարկ էր լինել յարութեանն Քրիստոսի, և Գ՝ստուած ամենիմաստ ամենևին իսկ աներկբայս ցուցանելոց էր զայն 'ի հաւատալ։ Գ՝այլ ևս ասեմ, եթէ և անաստուածն զնոյն 'ի դէմս ածէր հակառակ էութեանն Գ՝ստուծոյ. քանզի հնար էր Գ՝ստուծոյ այնպէս յայտնագոյնս տալ ծանօթս զիւրոյ գոյութենէն, զի ոչ ոք յազգաց ընդդայն երկմտել կարասցէ. նա առաւել ևս վասն այսորիկ զի ամենայնի հիմն է, քան եթէ զյարութեանն բան. և սակայն են ոմանք որ ամենևին անգէտք են գոյութեանն Գ՝ստուծոյ։ Գ՝ս չէ մարթ ասել եթէ վասն գոյութեանն Գ՝ստուծոյ շատ իսկ առաջի կան ընծայութիւնք 'ի հաւանեցուցանել զայր մնացի. քանզի այս պատասխանի հակառակ էլանէ այնոցիկ որ մերժեն զյարութիւնն Քրիստոսի։ Քանզի և զայսմանէ բազմապատիկ ցուցակութիւնք գան՝ որք բարոյական և պատմական ստուգութեամբն բաւականք են 'ի դերել զմիտս ուղղադատից, և որք աներկբայելիք ևս են քան զայլ ամենայն աւանդս արտաքնոցն վիպաց։

digitised by A.R.A.R.@

Այս, ասէ անհաւատն, հաւատալ հաւատայի յարու-
ցեալ զՔրիստոս, եթէ երևեալ էր փառաւք հրեշտից։
Մարդիս եղբայր, և 'ի գլուխ քո ստես. զի ըստ քո
բանիդ հաւատարիմ ընծայելոց էին քեզ որ ինչ աշ-
խարհածանօթք գործեցան. ընդունելի իցեն քեզ ապա
սքանչելագործութիւնքն Քրիստոսի և առաքելոց արա-
րեալ յանդիման ժողովարանին 'ի Հրէաստանի և ընդ հա-
մարեն աշխարհս։ Պատկառեաց աղէ ընդ հակառակախօ-
սութիւնդ և ապաշաւեա ընդ անձնամատն մեղմեխանդ։
Հաւատայի, ասես, յարուցելոյն եթէ երևեալ էր ա-
մենեցուն, այս ինքն այնչափ արանց որչափ և քեզ հաճոյ
և կամ կարևորն թուէր. ապա ուրեմն այլ ամենայն ըն-
ծայութիւնք ոչ ինչ են և ոչ ինչ պիտանացու։ Այպաքէն
յիմար է որ ասէն, հարիւր պատճառաց գոն ինձ 'ի հա-
ւատալ յայս ինչ կամ յայն, այլ քանզի կամիմ զայլ
միւս ևս պատճառ և չգտանեմ, ապա ուրեմն զուր և
սուտ են առաջինքն. իբրու զի բացատական պատճառք
բաւականք իցեն զդրական ընծայութիւնսն աղաղատելոյ,
և այն որ չէն՝ զայն որ էն 'ի դերև հանելոյ, և կամ զի
ծանօթութիւն աշխարհաբարոյ անմեկին իցէ 'ի ճշմար-
տութենէ, և կամ՝ զի չէր հնար Քրիստոսի յառնել՝ ա-
ռանց և ամենեցուն իսկ երևելոյ։

Այլ ասես՝ թէ ոչ այլոք 'ի վիպասանից բաց յառա-
քելոց աւանդեցին մեզ զայսպիսի ահեղաքանչ հրաշից։
Այր արդարև և միշտ բացատական երկմտութիւնք, որ
պէս թէ վկայք անգոյք և մտացածինք աղաղատել ինչ
մարթիցին զբանս ճշմարիտ վկայիցն, և կամիս զի որք
չգոնն 'ի միջի՝ սուտ ցուցցեն զականատես և զականջա-
լուր վկայս իրացն։ Այսես՝ եթէ վկայեալ էին սքանչե-
լիքն 'ի ժամանակակից մարդկանէն, հաւատայիր և դու
իրացն, այլ չիցեն վկայութիւնք յայտնաբարբառք այն-
չափ որերոյն դարձ 'ի լուր և 'ի տես սքանչելեացն, և
այնչափ հաստատութիւն հաւատոց նոցա, մինչև ա-
ռեամբ չափ վկայել ճշմարտութեանն։ Այթէ ածեալ
էի քեզ և յարտաքնոցն վիպասանից ասել՝ թերևս ա-
սէիր եթէ ականջալուր ևեթ բանք են, և կամ՝ 'ի քրիս-
տոնէից ոմանց յաւելեալք առ յապա, և երկմիտ լինէր
քեզ վկայութիւնս։ Արթ է պատմագրաց պատրել և
խաբել, այլ՝ մերժել կարասցէ զվկայն որք վասն ակա-

digitised by A.R.A.R.@

նատես եղելութեանն գլխապարտ դատին. մարթ է 'ի գիրս սպրդել ինչ յանզգաստից, այլ անհնար է զմահ յանձն առնուլ վասն իրաց ինչ առանց Հոգւոյն 'ի վերայ հասանելոյ ստուգութեանն։ Բայց արդարև չգտաւ նիցին վկայք յարութեանն և յարտաքնոցն. Թողեալ զՅովսեպոս և զյոլովս 'ի բաբունեաց ոչք խօսեցան զնը-մանէ, և զինչ ասասցուք վասն այլոցն որ գրեցին զՀրաշալի հաստատութենէն այնոցիկ ոչք ետուն զան-ձինս 'ի վկայութիւն անցիցս. քանզի այս ինչ յայտնի է զի քրիստոնեայք ոչ վասն այլ իրիք 'ի մահ մատնէին, բայց զի խոստովանիցին զաստուածութիւնն Քրիստոսի 'ի յարութիւնն նորին ամրապնդեալք. վիպասանք, քերթողք և խնամատարք ամենեքեան վկայեն եթէ վասն այսորիկ միայն չարչարէին քրիստոնեայք. և թուի թէ ցարդ իսկ գոչիցեն, Յիսուս Քրիստոս յարուցեալ է, ապա և ամենայն ինչ հաստատեալ։

Այլ ասասանօր առ գերեզմանաւ փրկչին՝ որ տապա-նակն է նորոյ ուխտին թոյլ տուք առ վայր մի դադա-րել, առ 'ի զյետինս զայս հարցաքննել ձեզ խնդիր. թէ զինչ արդեօք 'ի գերեզմանի անդ առնէր Քրիստոս։ Պատասխան խնդրել զվրէժ յիւրոց թշնամեաց. և իբրու մարտադիր նահատակ յետ յաղթութեանս 'ի քուն հանգստեանն կազդուրէր՝ զի նորագատուր զօրու-թեամբն հզօրագոյն ելս և փառաւոր յելս 'ի գերեզ-մանէն երևեսցի։ Այս ինքն էր Սամփսոնն 'ի քուն 'ի մէջ պահակեցաց, առ 'ի պայծառագոյն ելս զյաղթու-թիւնն գործելոյ 'ի զարթնուլն 'ի սպառասպուռ ջախջա-խանս փղշտացւոցն։ Արձեալ զինչ ինչ առնէր Քրիս-տոս 'ի գերեզմանի անդ. բայց որպէս Յովնան յափշտա-կեալն 'ի կիտէն ըստ շուրջ զիւրև զծփանս ալեացն յո-ւրոց զերծանելոցն էր 'ի մօտոյ, ոչ 'ի փրկութիւն միայ եթէ քաղաքի և թագաւորի, այլ համօրէն ազգաց և թագաւորաց։ Այս ինքն էր Դանիէլն որ պարտաւոր ի ջանէր 'ի գուբն առիւծուց և յաղթանակաւ ելանէր անտի. որպէս զի գերեզման մահուն նշանակ փառացն համարեսցի որպէս կանխաձայնէր Դասայի։ Այս ուրեմն յարութիւնն Քրիստոսի խորհուրդ իմն է փառաց 'ի յաղթանակ կրօնից և յամօթ անհաւատից. արդ յա-ւելից ասել զի նոյն ինքն յարութիւնն խորհուրդ իմն է

digitised by A.R.A.R.@

ընդհաց և փրկութեան հաւատացելոց որ ամրասնդէ զհաւատս մեր 'ի յոյս հանդերձելոցն։

ՄԱՍՆ Բ.

Զիք ինչ այլ որ զհաւատս մեր թուլացուցանել մարթասցի և զերանդն սիրոյ նուազեցուսցէ՝ որպէս փափաք անցաւորիս և մոռացութիւն հանդերձելոցն կենաց։ Վանդի շաղեալ 'ի հաճոյս աշխարհիս և պատրեալ 'ի խաբուսիկ խոստմանցն անկանի 'ի մոռաց մերոց այս ճշմարտութիւն՝ եթէ երկիր յոր պանդխտիմք վայր է նժդեհութեան և հովիտ արտասուաց, և եթէ գոյ և այլ աշխարհ որում իբրև զհետ հայրենեաց պարտ է փափաքել։

Այսպա յարութեանն խորհուրդ արհամարհ ցուցանէ մեզ զաշխարհս և զկեանս յաւիտենից. և որպէս Պաւղոսն ասէ, զի թէ յարուցեալ է Քրիստոս ապա և մեք ամենեքին յառնելոց ենք 'ի կեանս, և ապա զվերինն խորհել արժան է մեզ և մի զայս որ յաշխարհիս է. բանք արդարև պարզախօսք այլ և ձեռնարկ հզօրագոյն։ Օ՛ի եթէ յարութիւնն Քրիստոսի երաշխաւոր է իմումն յարութեան, ապա չէ ինձ մարթ ընդ կեանս աշխարհիս պատաղել, և 'ի զգալիս անդ և 'ի բերկրալիս լինել անձնատուր. այլ մանաւանդ հարկ է ինձ առոսն հարկանել և զուսնայնութիւն և զամենայն ախտս ցանկութեանց։ Այսն որոյ և յարութեանն վարդապետութիւն կերպարանափոխս արար զաշխարհս և մեծամեծ հրաշս ներգործեաց. և նախ յառաքեալսն, որք յառաջն տկարք էին և երկչոտք, և 'ի մերձիլ թշնամեացն մատնատուք վարդապետին. այլ 'ի լսելն զյարութիւնն, ոչ ևս երկիւղ և ոչ երկմտութիւն, չիք ինչ որ նոցա զօրութեանն դիմակալեսցէ, և որք յառաջն երկրչէին մեռանել ընդ նմա, այժմ երկնչին մի գուցէ յապաղեսցէ մահն իւրեանց վասն նորա. գիտելով չարի զի ոչ առ այլ ինչ մեռանիցին՝ բայց յառնել ընդ նմին և որպէս գնա փառաք. այս էր ահա որ 'ի զառանց յաւիծս գնոսա փոխակերպեաց, որով զմահ յաչս եղեալ ընդդէմ

digitised by A.R.A.R.@

թենամեայն ոգորեցան, և յամենայնէ մերկացին զան-
ձինս։ Եթէ և մեր առաքելոցն շաւղաց զհետ գնա-
ցեալ էր արհամարհէաք անշուշտ զհաճոյս և զվիշտս
անցաւոր կենցաղոյս, և միանգամ զամենայն իսկ
բարիս զոր խոստանայն մեզ աշխարհ պատրողական։
Անդի եթէ արդարև հասանէ ինձ յառնել յաւուր
միում, և եթէ սերկեան յարութեանն Քրիստոսի
հանդէս երաշխաւորել իմումն յարութեան. հարկ է ինձ
'ի վեր քան զամենայն ինչ համարել զայս իմ անմահու-
թիւն և զամենայն ինչ առ սոյն մերձեցուցանել, և ոչ
ինչ իմիք ցանկալ և փափաքել յաշխարհիս բայց որ ընդ
իս անմահակիցն լինելոց է։ Զայս եղեալ հիմն հա-
ւատոցս՝ ապա ասեմ յանձն իմ. այս ճոխութիւնք ընչից,
այսոքիկ փառք մեծութեանց և զգայական հաճոյք որք
զերեն զմարդ յաստի կեանս, եկեսցէ՞ն արդեօք ընդ իս
'ի հանդերձեալն։ Ո՛չ, պատասխանէ մարգարէն. 'ի մե-
ռանել մարդոյ ոչ ինչ ամենևին յիւրոցն ընդ իւր տա-
նիցի, և փառք նորա և մեծութիւն ընդ նմին 'ի հող
խոնարհեսցին։ Ի զուր և հոգակապ շիրմաց և մահար-
ձանաց զանուանս նոցին յաղագս ազգս աւանդել. քան-
զի 'ի յարութեանն աւուր 'ի գոչել փողոյ հրեշտակա-
պետին տապաստ անկցին դամբանքն և գերեզմանք՝ մնո-
տի ապաւէնք զոր ամբարձ ունայնութիւն ամբարշտին
ընդդէմ ոչնչից՝ զորովք փարեցաւ 'ի կեանս իւրում։ Այ-
յսուհամ զինչ ինչ մնասցէ յայսքանեաց շքեղ հան-
դերձանացն։ Այլ եկցեն յարիցեն և աշխարհասերքն.
այլ իբրև զօրաւոր ամենահար 'ի պարտութենէն որ առ
անծանօթս ունելոյ զինքն թօթափէ յանձնէ զնշանակսն
պատուոյ և երթեալ խառնի 'ի դաս սինքզոր արանցն։
Այլ անդանօր ոչ էս պատիւ ոչ էս թագ և մեծութիւն
աշխարհի, այլ յարիցեն ընդ մեզ գործք մեր միայն. և
զինչ փոյթ է ինձ ապա զկենացս և զունայնութենէ
աշխարհիս, եթէ ոչ ինչ յայնցանէ գտանելոց են ընդ իս
'ի գերեզմանի և անդր էս քան զչիրիմ տապանիս։

Յոյս յարութեան տայ մեզ արհամարհել զկեանս էս
և զարեօքն. քանզի և հաստ ուստեք իցէ մեզ զօրութիւն
'ի տանել զարակրութեանց սակաւօրեայ կենացս, և
ուստի էր խրախոյս քաջալերութեան նահատակացն
քրիստոնէից. ահա 'ի Թատերս և 'ի կրկէսս հնոց զհա-

digitised by A.R.A.R.@

ւատս յարութեան լսեմ քարոզեալ. Յիսուս Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց, ապա և մեք ընդ նմա յարիցուք. ապա մատերուք դահիճք, կոտեցէք զմեզ բռնաւորք ծարաւիք արեանս մերոյ. այո բառնայք 'ի մէնջ զմահ կանացուս բայց ոչ և զանանցն զոր հուպ ընդ հուպ բերցուք 'ի ձեռս. ահա այս խորհուրդ վառէր բորբոքեր զնոսա 'ի վկայութիւն յարութեանն արեամբ չափ նահատակել։ Քանզի և զիաւրդ մարթ էր անսասան կալ նոցա 'ի տեսիլ տանջանարանացն և գեղոցայ. զիաւրդ հնար էր ոչ միայն չխռովել այլ և զուարթ դիմաք 'ի հուր և 'ի սուր և յանիւս և 'ի մանուլս զանձինս մատնել. զիաւրդ և որ 'ի կրկէսս ածէին ամենի գազանացն պատրաստեալ կերակուր, ոչ միայն ոչ յեռս նահանջէին, այլ և ինքնին իսկ դիմէին յարիւնազանգ ժանիս վագերց և առիւծուց. զիաւրդ և որ 'ի կաթսայս եռացեալս և 'ի սանս ջեռուցեալս տապակէին՝ զքաղցրանուագ զերգս վերառաքէին Քարձրելոյն. զիաւրդ մարթ իցէ զանվկանգ արիութիւն նոցին ընդ ընդաբոյս տկարութեան բնութեանս լծորդել։ Այլ այս ամենայն առ նոսա անցանէր, զի ամրապնդեալք էին 'ի հաւատս յարութեանն և անանհական կենդանութեան. դիտէին զի մարմինք նոցա թէպէտ և ցրուեալք և ցանեալք ցծագս աշխարհի, կամ յալս երկրի ծածկեալք և կամ յալիս ծովու խորասոյզք կամ թերևս յառիւծուց և յայլոց գազանաց մարմինս ընդխառնեալք, և մոխիր նշխարացն ընդ օդս ցանեալք, այլ սակայն յաւուր միում 'ի մի վայր ժողովելոց էին, և զի Աստուած որ արարիչն էր մարմնոց ոչ միայն անթերի դարձուցանելոց էր զմարմինս նոցա առ նոսա, այլ և գերահրաշ փառաւք պայծառացուցանել. որպէս ասէր և առաքեալն զի 'ի միասանգամ գալստեան տեառն նորոգելոց էին մարմինք 'ի նմանութիւն մարմնոյ փառաց Որդւոյն Աստուծոյ։ Այս զորօրինակ Քրիստոս յետ յարութեանն պահէր զտեղիս բևեռացն և զվերս տիգախոց կողին, որք ոչ ևս յանարգութիւն այլ 'ի փառս և 'ի յաղթութիւն նմին համարէին, այսպէս և մարմնոյս մասունք որովք չարչարեցաքն լիցին մեզ 'ի փառս և 'ի շքեղութիւն. զի ցուցցեն մարտիրոսք զսպիս տանջանացն և շղթայից, խոստովանողք և անապատականք զցոյցս խոտամբերութեանն և զա-

digitised by A.R.A.R.@

պաշխարութեան, և իւրաքանչիւր դաս սրբոց զիւրոց առաքինութեանցն զհանդէս։ Եվ զեղեցիկ և յուսա-զիր ձշմարտութեանս, որով միխիթարիմք 'ի հովտիս արտասուաց, որ ոչ միայն ուսուցանէ մեզ արհամարհել զառաջիկայ կեանս, այլ և մատամբ ցուցանէ մեզ զհանդերձեալն։

Բ. Ժամանակօք առաքելոյ էին ոմանք արք խօթամիտք որ հարցեալ վասն յարութեան մարմնոյ՝ կամէին իմն գիտել եթէ զիարդ միւսանգամ 'ի կեանս վերադառնայցեն մեռեալք։ Նմիտք, ասէր նոցա վարդապետն հեթանոսաց, չտեսանէք զհատս զայս ցորենոյ որ անկեալ 'ի հող թուի թէ մեռանի, այլ մեռանի նա 'ի նոր բոզատուր և յառոյգ կենդանութիւն, և որ յառաջն հատ մերկ, այժմ 'ի հասկս ատոքացեալ 'ի գեղ և 'ի զարդ պայծառացեալ. այս է ահա պատկեր կենաց մարդոյ. այն ինչ ծնեալ, բանի առ ոտս նորա գերեզման, թաղի 'ի միւսանգամ կենդանութիւն. առուակ իմն է որ առ վայր մի խոխոջեալ և ծածկի, այլ միւսանգամ բղխեսցէ անսպառելի. աստղ որ 'ի միջակէտ հասեալ երկնից անդրէն խոնարհի, այլ 'ի յառնելն միւսանգամ՝ անշիջանելի 'ի պայծառութեան իւրում մնասցէ։ Եւ յաւելու առաքեալն՝ զի թէ այսու կենաւքս միայն յուսացեալ էաք 'ի Քրիստոս, ողորմելի էաք քան զամենայն մարդիկ. քանզի զինչ օգուտ էր ինձ թէ 'ի դաղանամարտի լեալ էի յԵփեսոս և արեամբ չափ նահատակեալ, և զինչ պէտք ուղղութեանս ընդ ծով և ընդ ցամաք, զինչ և յաղթութիւնքս և մրցութիւնք եթէ չունէի յառնել 'ի նորափեստուր կեանս. "Օ զինչ օգուտ իցէ եթէ մեռեալք ոչ յառնեն,,։ Ի՞չ ապաքէն երջանկագոյնք քան զմեզ էին դասք անանոց անբանից. զի ոչ ինչ է որ նոցա հաձոյիցն դիմակալէ. ահա առիւծ զիւր կատաղութիւնն յաղեցուցանէ յանտառս և յանապատս, արծուի 'ի թևս հողմոց հերձու զամպս վերինս, և մանրաձգիք 'ի մեղմիկ օդս թևածեն և 'ի հոյզ ծաղկանց կերակրին. ապրդ եթէ նոյն անդոյութիւն առաջի կայ մեզ, ընդէ՞ր նովին ազատութեամբ չվայելեմք։ Եթէ 'ի վախճանի մահ անյարիր առաջի կայցէ, և քայլ մի ևեթ կենաց յորոշանէն 'ի գերեզման, ոչ է բաւական ժամանակ 'ի ծանօթութիւն դալ օրինաց և

digitised by A.R.A.R.@

առաքինութեանց։ Զ՝ասն որոյ ասէ սուրբն Աւգոստի-
նոս, չգտաւ ուրեք ազգ նա և 'ի դիցապաշտս անգամ
որ ոչ ընկալցի կեանս իմն հանդերձեալս. և այնչափ ինչ
է սէր մեր առ անձինս՝ զի չկարեմք հաւատալ եթէ յա-
ւուր միում հասանիցէ 'ի սպառ և յաւիտեան մեռանել.
և զդողանի հարկանիմք եթէ ոք յանկարծ ասասցէ մեզ
եթէ 'ի սպառ յանդոյութիւն դառնալոց եմք։ Զ՝ խիզդ
հաւատացիս, ասէր իմաստասէր ոք յեղս իւր յաստեացս,
եթէ հոգիս յետ ազատելոյ 'ի բանտէ մարմնոյս՝ կորն-
չիցի. միթէ զերի ոք նուազագոյն յազատութեանն
վայելիցէ 'ի խորտակել շղթայիցն կապանաց, և ա-
ռեգակն նուազեալ 'ի պայծառութենէն 'ի թօթա-
փել անդ զամպս մթագինս. և հոգի կաշկանդեալ 'ի
նիւթական մարմնոս, 'ի դտանել անդ զազատութիւն
դադարեսցի յանմահն լինելոյ։ Զ՝խտեմք զի 'ի բնու-
թեան ամենայն ինչ շարայարեալ կայ զօդիւք ան-
լուծանելեօք. այլ 'ի բաց բարձեալ զանմահութիւն հո-
գւոյն խզեսցի շղթայաշարն կապակցութիւն, դադա-
ռեսցէ դաշնակաւորն յարմարութիւն, չունիցին ինչ
էակք ընդ մարդոյ վերբերութիւն և ոչ մարդ ընդ Ա՝ս-
տուծոյ, և յ՝աստուած ինքնին չերևի անձառ իմաստու-
թիւն յառնելութեան անդ արարածոց, և առաքինու-
թիւն անմահն 'ի վարձուց դտանի։ Զ՝անզի զինչ ինչ
դուշակիցէ մերս հոգ և խնամք վասն հանդերձելոյն.
զի ոչ շատանամք գովաբանութեամբք ժամանակակից
մարդկանն, այլ կամիմք զի և ազգք հանդերձեալք ընդն
դրուատիս մեզ հնչեցուսցեն. սրանայ հոգին 'ի դարս
որ գալոց են, և կամիմք 'ի նոսին զանուանս մեր դրոշմել
և 'ի նոսին անմահանալ. կամիմք կեալ և գոլ յայն-
ժամ մինչ դադարեալ է մերս գոյութիւն. ցնորք ար-
դարև և ծփումն խելաց աւաղելի, որ բնաւ իսկ չանկա-
ներ 'ի միտս մարդոյն՝ եթէ չեր յանմահութիւն ձգակա-
տագրեալ։ Զ՝ զինչ այն պարգև զոր ետուն երկինք
զմահկանացու կեանսդ 'ի փշաբեր և յանիծապարտ եր-
կրիս, յորում՝ քիրտն և վաստակ եղին քեզ 'ի բաժին
ժառանգութեան, մինչդեռ այլք յարարածոց 'ի բեր-
կրալիսն յօրանան. զինչ այս Ա՝ստուծոյ, զինչ վախճան
մարդոյս։ Յաւիտենականութիւն, յարութիւն և
կեանք հանդերձեալք, դուք միայն զխորհուրդս զայս

digitised by A.R.A.R.@

կարէք պարզել և ցուցանել. և եթէ հաւատք անմահութեան հոգւոյ սուտ էր կամ կեղակարծ, ապաքէն չգտանէր այլ ճշմարտութիւն փարելի մարդկութեանս քան զայս ստութիւն։ Գոյութիւն Աստուծոյ, և անմահութիւն հոգւոյ գոչեն տիեզերքը, այս հաւատք են և այս բարբառ համօրէն արարածոց. արդի կեանս ոչ այլ ինչ է՝ բայց ստուերք և պատկեր հանդերձելոյն որ մնան. այլ զարթնուլն 'ի կեանս ապագայս սկիզբն է անսպառ կենդանութեան. յայնժամ կեցցուք մեք յորժամ մահ որպէս նոր ոմն Սամիսոն զսիւնս աշխարհիս թօթափելով՝ ընդ փլատակաւ նորին թաղեալ մնասցէ։

Այլ աղէ ունկնդիրք իմ հաւատացեալք, սերկեան տնանխմբութեանս խորհուրդ, տպաւորեսցէ 'ի միտս ձեր զ յոյս հանդերձելոյն կենաց, և զմիտս ձեր և զսիրտ 'ի վեր յերկինս ուղղեսցէ։ Արդարն 'ի կեանս յայսմ ըստ մարգարէին "Աղիւսի որպէս ծառ որ տնկեալ է 'ի գնացս ջուրց,,. եթէ բանական մտօքն ճոխացեալ էր ծառս, հարցաքանէ Աւետարանս, զինչ առնէր նա արդեօք. տեսանէ տեսանէր զվտակս ջուրց՝ գետահետեալ սրացեալ և ի ինքեանս վարեալ և զթօթափեալ տերևսն և զպտուղս. այլ ոչ թէ և ինքն զհետ հեղեղատար ուղխիցն ընթանայր. այլ թողեալ զնոսին, որպէս և էին, ինքն 'ի բարձունս անդ զոստն արձակէր։ Այս է ճշգրիտ պատկեր հաւատացելոյն. կայ նա առ եղերբ աշխարհի որ ուղխօրէն ընթանայ, և տեսանէ զաւուրս և զտարիս որք ընդ ալեացն հոսանաց վարեալ անհետանան, այլ ինքն միշտ անսասան և 'ի խնամն Աստուծոյ տեսչութեանն ապաստան, յերկինս զձեռս համբառնայ և 'ի յաւիտենականութիւն անդր զիղձս սրտին ուղերձէ։ Արանէ՛ մեզ եղբարք եթէ և մեր տենչք սրտից յայսոսիկ բերիցին 'ի գերահրաշ տնանխմբութեան աւուրս. և վկայք միանգամ որչափ ինչ չարչարեցաւ որդին Աստուծոյ առ 'ի զանմահութեան պսակն մեզ շնորհելոյ, և զմերսն ընդ նորա խառնել զվիշտս և զհեծութիւնս, որպէս զի որք ընդ նմա մարտակից եղեաք և պատերազմակից, ընդ նմին և փառաւոր յաղթութեանցն և պսակին լիցուք ժառանգորդք։

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

ՑՈՒՑԱԿ ԳԱՐՈԶԻՑ

Ա. Գարոզութիւն բանին Աստուծոյ 1
Բ. Խոկումն մահու. յառաջին աւուր մեծի պահոցն . 20
Գ. Փախուստ յաւելից մեզաց 38
Դ. Բամբասանք 60
Ե. Գայթակղութիւն 84
Զ. Զբօսանք և խաղք 106
Է. Անժուժկալութիւն 117
Ը. Դիւրք անբարիք և ինքասակարք 134
Թ. Աւետարան և Գրիստոնէայ 150
Ժ. Ճշմարտութիւն կրօնի 164
ԺԱ. Հաւատք մեռեալ 194
ԺԲ. Հաւատք կենդանի 212
ԺԳ. Խոնարհութիւն հիմն հաւատոյ 229
ԺԴ. Ողորմութիւն Աստուծոյ 251
ԺԵ. Փառք և պաշտօն Տիրամօրն . Ի տօնի Աւետեաց Կուսին . 269
ԺԶ. Վիճակ աշխարհական, և սրբութիւն նորա . . 287
ԺԷ. Սէր Ճոխութեան 306
ԺԸ. Կիրառութիւն Ճոխութեան 321
ԺԹ. Ունայնութիւն առօրեայ բարեաց 337
Ի. Դատապարտութիւն որդւոց 359
ԻԱ. Ողորմածութիւն 378
ԻԲ. Խնամատութիւն քրիստոնէական 398
ԻԳ. Բարկութիւն 413
ԻԴ. Հեղութիւն 429
ԻԵ. Դատողութիւն 446
ԻԶ. Նախանձ 466
ԻԷ. Անմտութիւն 486
ԻԸ. Յարգութիւն սրբոց տաճարաց 507
ԻԹ. Մահ 525
Լ. Գոն հանդերձեալ կեանք 547
ԼԱ. Յարութիւն մեռելոց 573
ԼԲ. Ընդհանրական դատաստան 589
ԼԳ. Յաղագս սակաւութեան ընտրելոց 619

digitised by A.R.A.R.@

ԼԴ. Յաւիտենականութիւն 643
ԼԵ. Արքայութիւն 654
ԼԶ. Սէր Աստուծոյ 672
ԼԻ. Ճշմարիտ պաշտօն Աստուծոյ 691
ԼԸ. Երկիւղ Աստուծոյ, և երկիւղ անձին . . . 715
ԼԹ. Սիրել զթշնամիս, և ներել 743
Խ. Փորձութիւն 766
ԽԱ. Խոստովանութիւն 782
ԽԲ. Հաղորդութիւն. Ի տօնի Ծաղկազարդին . . . 807
ԽԳ. Ի չարչարանս Քրիստոսի. ՅԱւագ ուրբաթու . . 827
ԽԴ. Զատիկ, Յարութիւն Տեառն 851

digitised by A.R.A.R.@

ՎՐԻՊԱԿՔ

Էջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
15	3	կինդանի	կենդանի
27	9	կերեալ	գերեալ
35	33	պատարաղմեցայ	պատերաղմեցայ
43	35	շղթայ. շար	շղթայս. շար
130	20	քաղաքավրութեամբ	քաղաքավարութեամբ
182	18	անձին ժուժկալութեան	սանձին ժուժկալութեան
207	33	դաւանեն	դաւանեն
224	13	առ 'ի բուժիլ և աՃիլ	առ 'ի բուժիլ և աՃիլ
225	36	զմոյն ունին	զնոյն ունին
265	10	զցնծութիւն դարձին	զցնծութեան դարձին
309	10	յօգտակարն. սէր բերկր. . . սէր մեծ".	յօգտակարն։ Սէր բերկր . . . Սէր մեծ".
345	38	դատակնիք բամբասանս	դատակնիք, և բամբասանս
411	29	շատ ինս	շատ ինչ
433	22	անցաւորութեան	անցաւութեան
440	31	որչափ	որ չափ
551	7	Նախախնամութեամբ	Նախախնամութեան
578	2	ընդ աւետարանչացն	ըստ աւետարանչացն
587	5	ընդ քրիստոնէականն	ըստ քրիստոնէականն
620	17	հաստատատեալ	հաստատեալ
631	31	դատապարտեսցէ	դատապարտեսցէ
641	38	աշխարհէ ասի	յաշխարհէ ասի
652	9	'ի վրայ	'ի վերայ
659	10	զամն բաղումս	ժամն բաղումս
662	8	հոգւոյն մարմնոյն	հոգւոյն և մարմնոյն
669	23	Ճանապահին, ոչ քաքրընդոան	Ճանապարհին, ոչ քարընդոան
671	19	'ի վիշտս մեր	'ի վիշտս ձեր
678	17	բնական ասպնջական	բաւական ասպնջական
716	34	հեպա միայն	հապա միայն
729	37	կշռեալ Ճշգրտի	կշռեալ Ճշգրտիւ
733	10	կեանք պատարաղմի	կեանք պատերազմի
779	1	զնարդ օրինակս	զնարդ օրինակաւ
812	25	առաջադրութեան	առաջադրութեամբ
818	11	'ի բարեզարդութեանն	'ի բարեզարդութենէն

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@